Ա.Կ.ԽՈՒԴՈՅԱՆ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԴՊՐՈՅՆԵՐԸ 1830-1920 Թ.ԱԿՏՆԵՐԻՆ

37
Խ-96

Ս. Կ. ԽՈՒԴՈՅԱՆ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ 1830-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով

2444

ԵՐԵՎԱՆ «ԼՈՒՅՍ» 1987

ՀԱՅԿ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԲԻԲԼԻՈԹԵԿԱ

ԳՄԴ 74.03
Խ 963

Հեղագիրը հրատարակության են երաշխավորել մանկավարժական գիտությունների դ-ր պրոֆ. Ա. Ե. Տեր-Ղևոնդյանը և մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Իսկանդյանը

Խուդոյան Ս. Կ.
Խ 963 Արևելահայ դպրոցները 1830—1920 թվականներին (ժամանակագրությունը՝ հավելյալ մանրամասնություններով). Եր.։ Լույս, 1987, 620 էջ։

Սույն աշխատությունն ասպին անգամ ընթերցողին հարուստ տեղեկություններ է հաղորդում Ռուսաստանյան կայսրության սահմաններում 1830—1920 թվականներին գործած հայկական դպրոցների մասին։ Երբեմն կյանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում ստալու նպատակով աշխատության մեջ համառոտ անդրադարձություններ են հաղորդվում նաև Երևանի նահանգում գործած պետական (ռուսական) և մասնավոր դպրոցների մասին։

Գիրքը նախատեսված է լուսավորության բնագավառի աշխատողների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հայ դպրոցի պատմությամբ։

4302000000 ԳՄԴ 74.03
Խ 702 (01) 1985 պատվերային 1987

Худоян Сурен Карапетович
ШКОЛЫ ВОСТОЧНЫХ АРМЯН В 1830—1920 ГГ.
(Хронология с дополнительными подробностями)
На армянском языке
Ереван «Луйс» 1987

© «Լույս» հրատարակչություն, 1987

Նվիրում եմ ծնողներիս
անմոռաց հիշատակին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1828 թվականին հայ ժողովրդի արևելյան հատվածը ռուսական քաղաքի զորքերի օգնությամբ ազատագրվեց պարսկական բարբարոսական սարկալության հիրանելերից և առհավետ իր բախտը կապեց ռուս մեծ ժողովրդի հետ։ Պատմական այդ իրադարձությունը բախտորոշ եղավ մեր ժողովրդի այդ հատվածի համար, մինչդեռ նրա արևմտյան հատվածը թուրք եղուզակների ձեռքով ոչնչացվեց կամ ցրվել եղավ ողջ աշխարհով մեկ։

Ռուսաստանի կազմի մեջ մտնելով՝ արևելահայերը ձեռք բերեցին տնտեսական, մշակութային ու ազգային զարգացման զգալի հնարավորություններ, չնայած այն բանին, որ ցարիզմը վարում էր իրեն հպատակ ժողովուրդների գաղութացման և ձուլման քաղաքականություն։

Ռուս ժողովուրդը, նրա առաջադեմ մարդիկ գորավիգ եղան հայ ժողովրդին։ Ռուսական առաջավոր գրականությունը, գիտությունը և հասարակական միտքը ուղղակի ու բարերար ազդեցություն ունեցան մեր գրականության, գիտության ու հասարակական-քաղաքական մտքի զարգացման վրա։

Ռուսաստանի հետ միավորվելը մեր ժողովրդին հասցրեց Հոկտեմբերյան փրկարար հեղափոխությանը, որի հովանու տակ յոթ տասնամյակ է ծաղկում ու փթթում է Սովետական Հայաստանը։ Իր ազատության ու երջանկության համար մեր ժողովուրդն ամենից առաջ պարտական է ռուս մեծ ժողովրդին, հանճարեղ Լենինին և նրա ստեղծած կոմունիստական կուսակցությանը, որի իմաստուն լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ աննախընթաց վերելք են ապրել Սովետական Հայաստանի տնտեսությունը, գիտությունն ու մշակույթը։

Ռուսաստանի կազմի մեջ մտնելը պայմանավորեց նաև հայ դպրոցի ու մանկավարժական մտքի արագ զարգացումը։

Ռուսաստանում հայ դպրոցներ են գործել դեռևս XVIII դարում, սակայն ռուսաստանյան կայսրության մեջ հայ կրթական կյանքը զգալի վերելք է ապրել 19-րդ դարի սկզբին ու հաջորդ տասնամյակների ընթաց-

քում։ Նշենք թեկուզ Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի Ս. Սահակի և Մ. Մաշտոցի անվան դպրոցը՝ հիմնված 1796-ին, Աստրախանի Աղաբաբյան դպրոցը՝ 1806-ին, Թրիգորիոպոլիսի Մանվել Դյումուշխանեցու դպրոցը՝ 1806-ին, հայ ժողովրդի համար բացառիկ նշանակություն ունեցած Մոսկվայի Լազարյան ճեմարանը՝ 1814-ին և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը՝ 1824-ին և այլն։ Ավելի ուշ կազմակերպվել են մեր թեմական միջնակարգ դպրոցները Երևանում՝ 1837-ին, Շուշում՝ 1838-ին, Աստրախանում՝ 1838-ին, Շամախում՝ 1844-ին, Նոր Նախիջևանում՝ 1881-ին, Էջմիածնի Գեորգյան ճեմարանը՝ 1874-ին։ Միջնակարգի դասընթացով են գործել նաև Թիֆլիսի Գայանյան (1869), Մուղնու (1849) և Հովհաննեսյան (1877), Երևանի Գայանյան (1866), Ալեքսանդրապոլի Արղությանյան (1871) և Վիճակային (1839), Շուշու Հոռիսիմյան (1876), Աստրախանի հայ օրիորդաց (1870), Վերին Ագուլիսի արական և իգական (1867), Բաքվի Հռիփսիմյան (1869) և արական (1877), Ղզլարի արական (1856) և իգական (1871), Թեոդոսիայի Խալիբյան (1858), Ախալցխայի Կարապետյան (1830) և Նշխարաբերյան (1870) ու մի շարք այլ դպրոցներ։

Շատ ավելի մեծ թիվ են կազմել հայկական միդասյան և երկդասյան եկեղեցական-ծխական դպրոցները, որոնք բացվել ու գործել են Երևանի, Վրաստանի, Աստրախանի, Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի, Ղարաբաղի և Շամախու թեմերում։ Այդ դպրոցները հիմնականում սպասարկել են հայ աշխատավոր մարդկանց երեխաներին, և, չնայած կրել են եկեղեցական-ծխական անուն, բայց փաստորեն եղել են աշխարհիկ ուսումնական հաստատություններ։ Դրանք նմանվել են ռուսական գեմստվոյական դպրոցներին։

Անպայմանով է եղել հայ դպրոցների գոյությունը։ Նրանցից շատերը կարճատև կյանք են ունեցել՝ գլխավորապես նյութական միջոցների աղքության պատճառով։ Ճիշտ է, կրթասեր հայ ժողովուրդը ոչինչ չի խնայել, որպեսզի մի կերպ պահպանի իր դպրոցները, բայց նրա հնարավորություններն էլ խիստ սահմանափակ են եղել։ Հայ շինականը իր վերջին կտակն է տվել դպրոցին, ուսուցիչներին ու աշակերտները երեկույթներ ու ցերեկույթներ են կազմակերպել, թատերական ներկայացումներ տվել այս կամ այն դպրոցի համար միջոցներ հայթայթելու նպատակով։ Եկեղեցիների, վանքերի ու այլ սրբավայրերի եկամուտների մի մասը հատկացվել է հայ դպրոցներին։ Այդ դպրոցների պահպանման գործում չափազանց մեծ դեր են խաղացել հայ բարեգործական, հատկապես կովկասի և Բաքվի հայ մարդասիրական ընկերությունները։ Քիչ չեն դեպքերը, երբ այս կամ այն քաղաքի կամ գյուղի դպրոցը պահպանելու համար կազմակերպվել են երիտասարդների, կանանց կամ խառը առանձին բարեգործական ընկերություններ։ Մի շարք նշանավոր դպրոցներ բացվել ու պահվել

են առանձին անձանց նվիրած գումարներով, նրանց անունով էլ կոչվել են։

Հայ հասարակական մտքի ականավոր շատ գործիչներ տարիներ շարունակ մեր ազգային դպրոցներում դասավանդել են առանց վարձատրության։ Այսպես, միայն Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցում 1869—1879 թվականներին 49 հոգի աշխատել են անվարձահատույց։ Դրանց թվում էին նշանավոր մտավորականներ Գրիգոր Աբծրունին, Պետրոս Սիմոնյանը, Սանփսոնս Պալասանյանը, Սեդրակ Մանդինյանը, Արշակ Նահապետյանը, Գայանե Հովհաննիսյանը, Սոֆիա Բաբայանը, Նիկոդայոս Խաչատրյանը, Հակոբ Տեր-Հովհաննիսյանը, Աբգար Հովհաննիսյանը, Աբիսուգում Հովհաննիսյանը և ուրիշներ։

Այլ դպրոցներում ձրի դասավանդել են հայ մեծ գրող ու մանկավարժ Ղազարոս Աղայանը, Պերճ Պռոշյանը, Պետրոս Շանշյանը, Խորեն Սահիսանեն, Մարգիս Բեկնազարյանը, Արիստակես Սեդրակյանը և շատ այլ նշանավոր մարդիկ։

Իրենց կրթաբարությամբ առանձնապես աչքի են ընկել նորբայազիցիները։ Հետաքրքիր է, որ նրանց միահամուռ որոշմամբ յուրաքանչյուր պտակագրությունից գանձվել է մի ռուբլի՝ հօգուտ տեղի դպրոցների։

1883 թվականին մահանում է Նոր Բայազետի բնակչուհի Անանա Փիլոյանը։ Նրա ժառանգները, հոգեհաց տալու փոխարեն, իրենց դպրոցին նվիրում են հինգ ռուբլի։ Դա այնուհետև սովորություն է դառնում բայազետցիների համար։

«Արձագանք» լրագիրը գրել է, որ Թիֆլիսում իր կյանքը մուրացկանությամբ անցկացրած Գոգի անունով մի հայ մահվան ժամին իր հավաքած 100 ռուբլին նվիրել է այնտեղի Զրկիենյան ծխական դպրոցին։

«Նովոյե օբոզրենիե» ռուսական լրագիրը 1884 թ. իր խմբագրականներից մեկում գրել է.

«... Զգտումը դեպի կրթություն այն ամենախոշոր հատկանիշներից մեկն է, որով զանազանվում են հայերը մեր երկրի մյուս ազգաբնակչություններից։ Մխական ուսումնարանները, նրանց պահպանության համար կատարվող կամավոր տուրքերը, ձրի ուսում տալը, դպրոցներին դրամ կտակելը կենսական նշանակություն են ստացել հայերի մոտ... Մի հայ կին յուր բոլոր հարստությունը՝ 700 ռուբլի բաժանել է յուր ամուսնու և ուսումնարանի մեջ, մարդուն՝ 300 ռ., իսկ ուսումնարանին 400 ռ. տալով...»։

Բերված օրինակները կարելի է բազմապատկել, ցույց տալու համար, թե ինչպես էին պահվում հայ դպրոցներն առանց պետությունից տրվող օգնության։ Ուստի զարմանալի չէ, որ այդ դպրոցներից շատերը կարճատև գոյությունից հետո փակվել են և նորից բացվել, երբ դրա համար նվազագույն հնարավորություն է ստեղծվել։

Հայերի կրթական կյանքում ալբի ընկնող դեր են խաղացել նաև պետական (ռուսական) և մասնավոր դպրոցները։ Ինչպես այդ, այնպես էլ հայկական դպրոցներում հայ երեխաները սիրով ու հետաքրքրությամբ ուսումնասիրել են նաև ռուս մեծ ժողովրդի լեզուն ու գրականությունը։

Ռուսական կայսրության մեջ եղած բոլոր հայ դպրոցներին ու Երևանի նահանգում գործած պետական (ռուսական) ու մասնավոր դպրոցներին է նվիրված երկար տարիների աքնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող սույն աշխատությունը, որն ստեղծելիս մեզ սգավորել է հայ շատ դպրոցներ անհայտությունից դուրս բերելու, դրանց պատմությունն ընթերցողի ուշադրությանը ներկայացնելու հայրենասիրական պարտքի գաղափարը։

Մեծ դեր են խաղացել նաև հետևյալ հանգամանքները.

1. Հանախ մեր մամուլի էջերում թղթակցություններ են հրապարակվում Սովետական Հայաստանում և նրանից դուրս գործող այս կամ այն դպրոցի մասին (հատկապես նրանց հոբելյանների կապակցությամբ), որտեղ որոշ տեղեկություններ են հաղորդվում նաև այդ դպրոցի նախասովետական շրջանի վերաբերյալ։ Սա, իհարկե, լավ է, բայց այդ տեղեկությունները երբեմն պատահական բնույթ են կրում և հիշա չեն ներկայացնում տվյալ դպրոցի անցյալը, նրա հիմնադրման, փակման ու վերաբացման թվականները։ Այդ տեղեկությունները երբեմն հիմնված են լինում տարեց մարդկանց հիշողությունների կամ էլ որևէ անատույգ փաստի վրա։

2. Մեր մշակույթի օջախների, մասնավորապես կրթական հաստատությունների նշանավոր տարեթվերի տոնակատարության կարևորությունը շատ մեծ է։ Դա ունի ոչ միայն պատմական, այլև հասարակական-դաստիարակչական խոշոր նշանակություն։ Բացի այդ, մեզ մոտ մի լավ սովորույթ է հաստատվել, որը պետք է ամեն կերպ խրախուսվի ու զարգացվի։ Դա որևէ դպրոցի հոբելյանը պաշտոնապես նշելու նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունն է (աշխատողներին խրախուսելը, դպրոցի ուսումնական բազայի ամրապնդման նպատակով լրացուցիչ միջոցների տրամադրում և այլն)։ Դա մեր ժողովրդի կյանքում տրվյալ դպրոցի խաղացած դերի հասարակական-պետական ճանաչման հիանալի մե է։

Բայց լինում են նաև դեպքեր, երբ մի շարք դպրոցների նշանավոր տարեթվերը գալիս ու անցնում են գրեթե անեկատ։ Դրա գլխավոր պատճառն այն է, որ չգիտեն, թե երբ է հիմնվել տվյալ դպրոցը, ինչպիսի ճանապարհ է անցել և ինչ դեր է խաղացել մեր ժողովրդի լուսավորության գործում։

3. Հայ դպրոցների վերաբերյալ մամուլում հրապարակված մեր մի քանի հոդվածներից հետո բազմաթիվ ընկերներ, դպրոցներ, ժողովրդական կրթության բաժիններ գրավոր ու բանավոր դիմել են մեզ՝ խնդրելով ստույգ տեղեկություններ հաղորդել այս կամ այն դպրոցի, նրա հիմնադրման թվականի ու հետագա ճակատագրի մասին։ Մենք, անշուշտ, հնարավորին չափ պատասխանել ենք նրանց, բայց դա գեռևս հարցի պատշաճ լուծում չէ։ Չէ՞ որ նման ձևով բոլոր դպրոցների մասին տեղեկություններ տալն անհնարին է։

4. Անցյալում հայ դպրոցի ճակատագիրը, հար և նման է եղել մեր ժողովրդի ճակատագրին։ Այլ կերպ էլ լինել չէր կարող։ Մեր ժողովրդի Մեծված ու հայածական վիճակը, նրա գլխով անցած արհավիրքները, ասար նվաճողների բռնությունները, սեփական կեղեքիչների սանձարձակությունները, հարկադրական տեղահանություններն ու գաղթականությունը, գոյատևման նրա ներքին մղումը, ազատության ու անկախության համար մղած համառ պայքարը իրենց ամուր դրոշմն են դրել հայ դպրոցների վրա։ Ուր էլ տարել է բախտը հայերին, և որքան էլ փոքրաթիվ են եղել նրանք, երբեք չեն մոռացել իրենց ազգապահպանման գլխավոր օջախների՝ ազգային կրթարանների ստեղծման ու պահպանման մասին։

Այդպես են ծնվել հայ դպրոցներն աշխարհի շատ երկրներում։

Իսկ ինչպես են նրանք ծնվել ու հարատևել Ռուսաստանյան կայսրության սահմաններում։ Որտե՞ղ են ստեղծվել այդ դպրոցները, ե՞րբ են հիմնվել, սովորողների ու սովորեցնողների ի՞նչ համակազմ են ունեցել և, վերջապես, ի՞նչ ճակատագրի են արժանացել. ահա հարցեր, որոնք իրենց պատասխանին են սպասում։

Այս ամենը նկատի ունենալով, մենք մեզ վրա վերցրինք Ռուսաստանյան կայսրության սահմաններում, այդ թվում նաև Հայաստանում ու ողջ Կովկասում հիմնված ու գործած բոլոր հայ դպրոցների վերաբերյալ եղած նյութերի ուսումնասիրության և դրանք մասնագիտական ընթերցողի ուշադրությանը ներկայացնելու թեև ծանր ու պատասխանատու, բայց ազնիվ պարտականությունը։

Մենք աշխատել ենք բաց չթողնել և ոչ մի դպրոց՝ որքան էլ կարճ եղած լինի նրա կյանքը։ Հնարավոր է, որ առանձին հայ դպրոցներ վրիպած լինեն մեր ուշադրությունից, թեև մեր խնդիրը իրականացնելու համար ստիպված ենք եղել թերթել և օգտագործել արխիվային ու տպագիր անհաշիվ նյութեր։

Հասկանալի է, որ շուրջ 90 տարվա ընթացքում Ռուսաստանյան կայսրության սահմաններում բացված ու գործած հայ դպրոցների լրիվ ցանկի ստեղծումը, նշված ժամանակամիջոցում այդ դպրոցների վերաբերյալ թեկուզ համառոտ տեղեկությունների հավաքումը որքան կա-

բնոր, նույնքան էլ դժվար աշխատանք է։ Սակայն մեզ սփոփել է այն բանի գիտակցումը, որ այդ աշխատանքի շնորհիվ ոչ միայն մեր ազգային շատ կրթարաններ դուրս են բերվում անհայտությունից, այլև առաջին անգամ մի գրքում ներկայացվում են մեր ժողովրդի արևելյան հատվածի բոլոր ուսումնական հաստատությունները։

Մեր աշխատանքն իր տեսակի մեջ եզակի է։ Նրանում Ռուսաստանյան կայսրության սահմաններում բացված ու գործած ամեն մի հայ դպրոցի մասին խոսվում է առանձին։

Մենք ավելի մեծ ուշադրություն ենք դարձրել այդ դպրոցների հիմնադրման, փակման ու վերաբացման թվականները պարզելու վրա, թեև ինչպես կտեսնեք, այդ բանը ոչ միշտ է հաջողվել։ Բերված են նաև համատոտ տեղեկություններ տարբեր թվականներին այդ դպրոցների գոյության աղբյուրների ու միջոցների, աշակերտական համակազմի, ուսուցիչների թվի վերաբերյալ։ Կան նաև այլ տեղեկություններ, որոնք մեր կարծիքով, անհրաժեշտ են այդ դպրոցների ընդհանուր վիճակն ու ճակատագիրը պարզելու տեսակետից։ Որպեսզի ընթերցողը գաղափար կազմի հայ դպրոցների կրթական բովանդակության մասին, մենք թվարկել ենք որոշ դպրոցներում անցած ուսումնական տարկանները։ Նշանավոր հայ դպրոցները ներկայացված են ավելի հանգամանորեն, թեև աշխատության բնույթը թույլ չի տվել նրանց մասին ավելի մանրամասն խոսել։

Հարկ է նշել, որ ոչ միայն մեր ընթերցողների, այլև մեզ համար մի տեսակ հայտնագործություն էր այն փաստը, որ սկսած 1830-ական թվականներից տարբեր ժամանակներում Ռուսաստանյան կայսրության սահմաններում բացվել ու գործել են շուրջ 1200 հայ դպրոցներ, այդ թվում՝ Աստրախանի թեմում՝ 86, Երևանի թեմում՝ 550, Ղարաբաղի թեմում՝ 121, Նոր Նախիջևանի թեմում՝ 55, Շամախու թեմում՝ 45, Վրաստանի և Իմերեթիայի թեմում՝ 339 դպրոց։ Դրանցից շատերի կյանքը, իհարկե, երկար չի տևել, բայց այդքան դպրոցներ բացելու երևույթը, չնայած նյութական սուղ միջոցներին, ցարիզմի վարած հետադիմական քաղաքականությանը, հետամնաց ուժերի դիմադրությանն ու արգելարգիլ այլ հանգամանքներին, վկայում է մեր ժողովրդի կրթասիրության, դեպի լուսավորությունն ունեցած չերմ սիրո, ազգային ինքնուրույնության հասնելու նրա բուռն ձգտման մասին։

Միայն այդ ամենով պետք է բացատրել այն փաստը, որ ոչ միայն Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում, Բեսարաբիայում ու Ղրիմում, Մոսկվայում ու Պետերբուրգում, Ուկրաինայում, այլև հեռավոր Անդրկասպյան ու Թուրքեստանյան մարզերում, նույնիսկ Ամուրաբիայի ափերին ապրող հայերը, որքան էլ քիչ է եղել նրանց թիվը, բացել ու պահել են իրենց ազգային դպրոցները։

Այս գիրքը կազմելու համար լայնորեն օգտագործել ենք հայ մամուլում հրապարակված նյութերը։ Օգտվել ենք նաև այլ աղբյուրներից։

Որպես կանոն, յուրաքանչյուր դպրոցի մասին խոսելուց հետո ցույց ենք տվել բոլոր այն աղբյուրները, որոնցում այս կամ այն ձևով հիշատակված է տվյալ դպրոցը։ Նշել ենք արխիվային ֆոնդերը, նրանցում պահվող գործերի համարները ու էջերը, ամսագրերի և թերթերի տարեթվերն ու համարները, տպագիր ու անտիպ աշխատությունը և այլն։

Աշխատությունը գրելիս հանդիպել ենք անհաղթահարելի թվացող բազմաթիվ դժվարություններ։

Պետք է նկատել, որ նախկինում շատ վատ է գրված եղել հայ դպրոցների վիճակագրությունը, իսկ 30-60-ական թվականներին առհասարակ վիճակագրություն չի եղել։ Այդ տասնամյակներում գործած հայ դպրոցների մասին մենք խոսում ենք պատահական գրությունների ու կենսագրերի և հետագայում կազմված փաստաթղթերի հիման վրա։ Ուստի և միշտ ու լրիվ գաղափար կազմել այդ տասնամյակներում գործած հայ դպրոցների վերաբերյալ շափազանց դժվար է։

1870-ական թվականներից սկսած որոշ չափով կարգավորվել է դպրոցների վիճակագրության գործը, բայց այն տարվել է առանց համակարգի ու անկանոն։ Տեղերից ուղարկված նյութերը լի են կիսատ-պռատ, հակասական ու խառնաշփոթ տեղեկություններով։

Խառնաշփոթություն կա նաև դպրոցների ու նրանց գտնված վայրերի անվանումների մեջ։ Շատ հաճախ միևնույն դպրոցը նույն կամ այլ տարիների ցուցակներում և փաստաթղթերում ցույց է տրված տարբեր անուններով, միևնույն վայրի այլևայլ անվանումներով և այլն։

Մեծ խառնաշփոթություն է տիրում հատկապես Թիֆլիս քաղաքի հայ դպրոցների հարցում։ Միևնույն դպրոցը տարբեր տարիների փաստաթղթերում հիշատակվում է մեկից ավելի, նույնիսկ մինչև 13 տարբեր անվանումներով։

Պետք է նշել, որ այդ քաղաքի գրեթե բոլոր հայ դպրոցների (Ներսիսյան, Գայանյան և Հովնանյան դպրոցներից բացի) հիմնադրման, անվանումների, գոյության ու գործունեության հետ բազմաթիվ հանելուկային հարցեր են կապված։ Չնայած թյուրիմացությունները պարզելու մեր բազում պրպտումներին ու կատարված ճշգրտումներին, այնուամենայնիվ մենք երաշխիք չունենք պնդելու, որ դրանք լիովին հաջողվել են մեզ։ Առանձին հարցեր երբեմն լուծվել են միայն ենթադրաբար։

Անցյալում մեր (հատկապես հայաբնակ) գյուղերից շատերը ունեցել են մեկից ավելի անուններ։ Եվ ահա արխիվային փաստաթղթերում այս կամ այն դպրոցը երբեմն նշվում է նույն գյուղի տարբեր անուններով։ Ինչպե՞ս իմանալ, որ խոսքը միևնույն գյուղի կամ բնակավայրի

մասին է։ Այդ գործում մեզ մեծ օգնություն են ցույց տվել նախասովետական և սովետական շրջաններում հրատարակված տեղեկատու աղբյուրները, մասնավորապես տարբեր տարիների կովկասյան օրացույցները, Զ. Կարկոտյանի «Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831—1931) շատ արժեքավոր աշխատությունը, Հայկական ՍՍՀ Գեներալ-սովետի հրատարակած «Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորիալ բաժանումը» տեղեկատու վիճակագրական գրքերը և այլն։ Չնայած գործադրված ջանքերին, բացառված չէ, որ այդ կապակցությամբ գրքում թյուրիմացություններ ու սխալներ լինեն, հատկապես Հայաստանից դուրս գտնվող բնակավայրերի խնդրում։ Այդ անցանկալի երևույթը ավելի է մեծանում նրանով, որ հրատարակված ու անտիպ աղբյուրներում Կովկասի հայաբնակ որոշ գյուղեր մերթ ցույց են տրվել մի նահանգում կամ գավառում, մերթ՝ մյուս նման փաստեր մեզ շատ են հանդիպել Նախկին Ելիզավետպոլի նահանգի Նախու և Արեշի, Գանձակի և Ղազախի գավառների, Վրաստանի և Իմերեթիայի թեմի բնակավայրերի, Կուբանի մարզի և Սևծովյան նահանգի, Երևանի նահանգի Հին Նախիջևանի ու Շարուր Դարալագյազի գավառների և այլ բնակավայրերի կապակցությամբ։

Ասացինք, որ տարբեր փաստաթղթերում հայ գաղթականները ցույց են տրվել տարբեր անուններով։ Այդ բանը հատկապես նկատելի է պետական մարմինների կողմից կազմված գրություններում ու ցուցակներում։ Այսպես, օրինակ, որոշ ցուցակներում հանդիպում են Շիրաբաթի, Զոլմակչու կամ Զանանաթի հայկական գաղթականները, առանց նույնիսկ նշելու գավառ ու նահանգ։ Պարզվում էր, որ Շիրաբաթը մեր Փարաքարն է, Զոլմակչին՝ Նորքը, իսկ Զանանաթը՝ Հին Նախիջևանի գավառի Ցոնա գյուղ։ Նման գյուղերի և բնակավայրերի թիվը հարյուրների է հասնում։ Եվ դժվար չէ պատկերացնել, թե որքան մեծ ջանքեր են պահանջվել այդ ամենը պարզելու և ճշտելու համար։ Առանձնապես մեծ թյուրիմացություններ կան հայ գաղթականների հիմնադրման թվականների խնդրում։ Շատ փաստաթղթերում նշված է, որ տվյալ գաղթականը հիմնվել է այսինչ թվականին, մինչդեռ նախորդ տարիների ու տասնամյակների փաստաթղթերից երևում է, որ այդ գաղթականը գոյություն է ունեցել ավելի վաղ ժամանակներում։ Եթե այս կամ այն պատճառով (նյութական սղության, ուսուցիչ չունենալու և այլն) գաղթականը ժամանակավորապես փակվել է և հետագայում վերաբացվել, ապա նրա վերաբացման թվականը ցույց է տրվել որպես հիմնադրման կամ բացման թվական։

Հայտնի է, որ ցարական կառավարությունը երկու անգամ (1885-ին և 1895—1905 թվականներին) փակել է հայ եկեղեցական-ծխական բոլոր

գաղթականները։ Տարօրինակ է, որ այդ գաղթականների վերաբացումից հետո նրանց հիմնադրման թվականը հաճախ ցույց է տրվել ոչ թե նախկինը, երբ գրանք առաջին անգամ բացվել են, այլ վերաբացման թվականը։ Այսպիսի խառնաշփոթությունները դժվարացնում են շատ գաղթականների հիմնադրման իսկական թվականները պարզելու գործը։

Զգալի թիվ են կազմում նաև այն գաղթականները, որոնց հիմնադրման թվականը մենք չենք կարողացել ճշտել։ Նման դեպքերում տեղադրված ենք եղել ցույց տալ այն թվականները, երբ այդ գաղթականները այս կամ այն փաստաթղթերում առաջին անգամ հանդիպել են մեզ։ Երբեմն էլ նրանց հիմնադրման հնարավոր թվականը նշել ենք մոտավոր հաշվումներով։

Անշափ շատ են հակասական տվյալները նաև գաղթականների տիպի (միգասյան, երկգասյան), աշակերտների և ուսուցիչների թվի վերաբերյալ։ Նույնիսկ միևնույն տարում կազմված տարբեր փաստաթղթերում նույն գաղթականի մասին նշված տվյալները հաճախ հակասում են իրար։ Այս ամենը պետք է բացատրել ոչ միայն հայ գաղթականների վիճակագրության անկանոն դրվածքով, որն ավելի է վատացել 1914—1920 թվականների ընթացքում, այլև այն բանով, թե ովքեր են կազմել այս կամ այն գաղթականին վերաբերող փաստաթղթերը։ Սովորաբար իշխանության մարմինները, որ մշտական հսկողության տակ են պահել հայ գաղթականները, վերջիններիս մասին տեղեկություններ են պահանջել ինչպես հայ հոգևոր իշխանություններից, այնպես էլ իրենց տեղական ներկայացուցիչներից, չվստահելով առաջինների հաղորդած տվյալներին։ Այդ անվստահությունը ավելի է աճել այն ժամանակ, երբ հայ գաղթականները պետության վերահսկողության տակ վերցնելու կամ բոլորովին փակելու խնդիր էր դրվել։

Քիչ չեն գրքում զետեղված այն գաղթականները, որոնց առթիվ մենք տեղադրված ենք եղել նշել, որ «այդ գաղթականի հետագա ճակատագիրը մեզ անհայտ է» կամ «այս գաղթականը հետագա տարիների փաստաթղթերում այլևս չի հիշատակվում» և այլն։

Ցավոք, այդպիսի գաղթականները շատ են։ Դա ևս վկայում է, թե որքան հեղհեղուկ է եղել հայ գաղթականների վիճակը։ Մեր ձեռքի տակ են արխիվներից և այլ աղբյուրներից վերցված բազմաթիվ փաստաթղթեր, հայ հոգևոր վարչություններին, պետական մարմինների կողմից կազմված կամ մամուլում հրապարակված հարյուրավոր ամսագրեր, տեղեկագրեր ու ցուցակներ, որոնցում ցույց են տրված տարբեր ժամանակներում գործած հայ բոլոր գաղթականները։ Եվ, այնուամենայնիվ, այդ փաստաթղթերում ու տեղեկագրերում չեն հանդիպում նախկինում բացված հայ գաղթականներից շատերը։

Մեզ մնում էր բավարարվել եղած կցկտուր տեղեկություններով և

տալ ծանոթություն, որ ավյալ դպրոցի հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։

Հնարավոր է նաև, որ առանձին փաստեր մեր ուշադրությունից վրիպած լինեն։ Նման աշխատություն պատրաստելիս այդպիսի դեպքերն անխուսափելի են։

Սրանք են մեր առջև ծառացած բազմաթիվ դժվարություններից մի քանիսը։

Ինչպես հայտնի է, անցյալում Ռուսաստանյան կայսրության մեջ եղած հայ համայնքները բաժանված են եղել 6 թեմերի՝ Աստրախանի, Երևանի, Ղարաբաղի կամ Արցախի, Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի, Շամախու, Վրաստանի և Իմերեթիայի (Թիֆլիսի), որոնք ենթարկվել են Էջմիածնի սինոդին և Ամենայն հայոց կաթողիկոսին։ Տվյալ թեմում եղած հայ դպրոցների ղեկավարությունն էլ հանձնարարված է եղել թեմական առաջնորդին, կոնսիստորիային և թեմական տեսչին։ Բնական է, որ այդ կարգով էլ տեղի է ունեցել հայ դպրոցների վիճակագրությունը։ Մենք նույնպես այդ դպրոցները դասավորել ենք ըստ թեմերի, խստորեն պահպանելով այբբենական կարգը*։

Թեմերի ներսում նշված են երկրամասերն ու մարզերը (Անդրկովկասից դուրս), նահանգներն ու գավառները և բնակավայրերը (գյուղերն ու քաղաքները)։

Կցանկանայինք ավելացնել նաև հետևյալը։ Որպեսզի ընթերցողը ավելի լրիվ գաղափար կազմի նախկին Երևանի նահանգի կրթական գործի դրվածքի մասին, այս գրքում առանձին ցուցակներով և ըստ գավառների ու բնակավայրերի նշել ենք այդ նահանգում բացված ու գործած պետական (ռուսական), ուղղափառ-եկեղեցական, հասարակական և մասնավոր դպրոցները։ Երևանի նահանգի մեջ էին մտնում նաև Հին Նախիջևանի և Սուրմալուի գավառները, ուրեմն՝ թվարկված են նաև նրանցում եղած պետական ու մասնավոր դպրոցները։

Առանձին նշված են նաև նահանգի ազգաբնակչության շրջանում գործած պետական ու մասնավորական դպրոցները։

Հայաստանում գործած պետական նշանավոր դպրոցներին նվիրել ենք հատուկ հոդվածներ։

Սովետական Հայաստանի կազմում գտնվող մի շարք շրջաններ նախկինում մտել են այլ նահանգների մեջ։ Դրանք են՝ Զանգեզուրի նախկին գավառը և Իջևանի, Շամշադինի, Դիլիջանի, Ստեփանավանի, Կալինինոյի, Ալավերդու ու Նոյեմբերյանի ներկա շրջանները, որոնցում գործած

* Որոշ խախտում ենք թույլ ավել Երևանի թեմի նկատմամբ։ Նկատի ունենալով այդ թեմի առանձնահատուկ տեղը հայերի կրթական կյանքում, մենք նրա դպրոցները տեղադրել ենք աշխատության սկզբում։

պետական ու մասնավոր դպրոցների վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած ավյալները թերի են, ուստի և գրքում չեն բերվում։ Այդ դպրոցների հարցում մենք սահմանափակվել ենք միայն Երևանի նահանգով։

Ընթերցողին կողմնորոշելու նպատակով անհրաժեշտ ենք համարում որոշ ծանոթություններ տալ սույն աշխատության մեջ հիշատակված դպրոցների տիպերի, անվանումների և կառուցվածքի վերաբերյալ։

Հայ եկեղեցու կառավարման մասին 1836 թ. կայսերահաստատ կանոններով հայերին թույլ է տրվել ունենալ երկու տիպի դպրոցներ՝ թեմական հոգևոր սեմինարիա՝ յուրաքանչյուր թեմում, և տարրական դպրոցներ՝ եկեղեցիներին ու վանքերին կից։

Թեմական հոգևոր սեմինարիաները հետագայում կոչվեցին թեմական հոգևոր դպրանոցներ, իսկ ավելի ուշ՝ թեմական հոգևոր դպրոցներ (կարճ՝ թեմական դպրոցներ)։

Յուրաքանչյուր թեմ կարող էր ունենալ միայն մի թեմական սեմինարիա կամ դպրոց, սակայն ցարական կառավարությունը այդպես էլ թույլ չտվեց, որպեսզի բոլոր թեմերն ունենան իրենց թեմական դպրոցը։

Թեմական դպրոցները համարվում էին հոգևոր միջնակարգ ուսումնական հաստատություններ, որոնց հիմնական խնդիրն էր հայկական տվյալ թեմի եկեղեցիների համար հոգևոր պաշտոնյաների, մասամբ նաև հայկական ծխական դպրոցների համար ուսուցիչների պատրաստումը։ Թեմական դպրոցներն ունեին 6-ամյա դասընթաց։ Նրանցում ընդունվում էին հայկական եկեղեցական-ծխական երկդասյա դպրոցների շրջանավարտները։ Տարբեր ժամանակաշրջաններում տարբեր են եղել նրանցում ավանդվող առարկաները։

Ճիշտ է, կաթողիկոսը և Էջմիածնի սինոդը մի քանի անգամ փորձ են արել մշակել թեմական դպրոցների ընդհանուր ուսումնական պլանները, սակայն դարձյալ վերոհիշյալ տարբերությունները մնացել են։ Դրա պատճառները շատ էին՝ տվյալ դպրոցի նյութական հնարավորությունները, համապատասխան դասատուների առկայությունը և այլն։ Իհարկե, բոլոր դեպքերում պատշաճ տեղ էր հատկացվում կրոնական և հայագիտական առարկաներին, ինչպես նաև ռուսաց լեզվին, Ռուսաստանի պատմությանն ու աշխարհագրությանը (այս երեք առարկաների անվանումը պարտադիր էր)։

Հայկական թեմական դպրոցներից դուրս են եկել ավելի մեծ թվով ուսուցիչներ, հայագետ-մասնավորականներ, հասարակական գործիչներ, քան հոգևորականներ։ Այդ դպրոցներից անհամեմատ ավելի մեծ համբավ է ունեցել և հայ ժողովրդին ավելի ակնառու ծառայություն է մատուցել Թիֆլիսի Ներսիսյան հոչակավոր դպրոցը։

Հայկական եկեղեցական-ծխական դպրոցները բացվում էին եկե-

ղեցիներին կից՝ հայաբնակ վայրերում։ Պահվում էին ավյալ վայրի բնակիչների, բարեգործական ընկերությունների և եկեղեցու միջոցներով, զանազան նվիրատվություններով և սովորողների ուսման վարձով։ Այդ դպրոցների ճնշող մեծամասնությունը մշտական կարիքի մեջ էր, իսկ շատերն էլ միջոցներ չունենալու պատճառով փակվում էին։ Պետությունը նրանց օգնություն ցույց չէր տալիս, չնայած ժողովրդից մեծ հարկ էր գանձվում։

Արդեն նշել ենք, որ դպրոցներում հիմնականում սովորում էին աշխատավոր մարդկանց երեխաները, հարուստները գերադասում էին իրենց տղաներին ու աղջիկներին ուսման տալ պետական դպրոցներում։

Եկեղեցական-ծխական դպրոցները միդասյան և երկդասյան էին, այսինքն՝ ունեին եռամյա և հնգամյա դասընթաց։ Կային տղաների, աղջիկների և խառը դպրոցներ։ Նրանցում ավանդվում էին կրոն, հայոց լեզու, ուսաց լեզու, թվաբանություն, վաճառագրություն, երգ, նկարչություն, իսկ աղջիկների դպրոցներում՝ նաև ձեռագործ։ Երկդասյան դպրոցներում ավելանում էին Հայաստանի աշխարհագրություն, հայոց պատմություն, Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն, բնագիտություն։ 1889 թվականին արգելվեց հայոց պատմության և Հայաստանի աշխարհագրության ավանդումը։

Մինչև 1885 թվականը գործում էին նաև մի քանի հայկական արական և իգական միջնակարգ դպրոցներ։

Ցարական կառավարության կարգադրությամբ 1886-ից հետո այդ դպրոցները վերածվեցին երկդասյան տարրական դպրոցների։ Շատ տարիներ հետո մեծ ջանքերի գնով հնարավոր եղավ Թիֆլիսի Դայանյան և Հովնանյան դպրոցներում վերականգնել միջնակարգի դասընթացը։

Ալեքսանդրապոլում գործել է Ս. Փրկիչ եկեղեցու վիճակային հոգևոր դպրոցը, որն իր դասընթացով թեմական դպրոցներից ցածր էր, իսկ երկդասյան ծխական դպրոցներից՝ բարձր։ Վիճակային է կոչվել, որովհետև ապասարկել է Ալեքսանդրապոլի հոգևոր շրջանի մեջ մտնող բնակավայրին։

Գործել են նաև մի քանի վանական դպրոցներ, որոնք բացվել են այս կամ այն վանքում։ Դրանք նույնպես տարրական դպրոցներ էին, ինչպես եկեղեցական-ծխական դպրոցները։

Բարձրագույնի իրավունքով էջմիածնում գործել է Գևորգյան ճեմարանը, որի մասին խոսվում է նրան նվիրված հոդվածում։

Երևանի նահանգում գործած պետական (ռուսական) դպրոցները բազմատիպ էին։ Կային բազաքային տարրական միդասյան և երկդասյան դպրոցներ՝ ուսման երեք և հինգ տարվա տևողությամբ, 1872 թ. կանոններով գործող բազաքային բարձր տիպի երեք և չորսդասյան դպրոցներ, գյուղական հասարակական (համայնքային) տարրական միդասյան և երկդասյան դպրոցներ, ռուս-թաթարական դպրոցներ և այլն։

Երևանի նահանգում գործել են նաև արական և իգական պրոգիմնազիաներ, կլասիկական գիմնազիաներ, ուսուցչական սեմինարիա։ Առևտրական միջնակարգ դպրոց է գործել Ալեքսանդրապոլում։

Պրոգիմնազիաները ոչ լրիվ միջնակարգ ուսումնական հաստատություններ էին, իսկ գիմնազիաները՝ լրիվ միջնակարգ։ Նրանց կրթական բովանդակությունն, սովորողների ազգային ու սոցիալական կազմի մասին խոսվում է աշխատության այն հոդվածներում, որոնք նվիրված են Երևանի նահանգում գործած պետական նշանավոր դպրոցներին։ Գործել են նաև ուղղափառ եկեղեցու ծխական տարրական միդասյան ու երկդասյան դպրոցներ, ադրբիջանական դպրոցներ։

Զգալի թիվ են կազմել մասնավոր դպրոցները։ Դրանք բացվում էին պետության թույլտվությամբ և աշխատում էին Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձության հաստատած կանոնագրությամբ, նրա թույլատրած դասագրքերով։ Մասնավոր դպրոցները լինում էին 3-րդ կարգի (միդասյան տարրականին հավասար) և 2-րդ կարգի (տարրական երկդասյանին հավասար)։ Նրանցում ուսուցումը տարվել է հիմնականում ռուսաց լեզվով։ Ավանդվել է նաև հայոց լեզու։

Կովկասում գործել են նաև ռեալական դպրոցներ, ռեալական պրոգիմնազիաներ ու գիմնազիաներ, որոնցում էս մեծ թվով հայեր են սովորել։ Եթե կլասիկական գիմնազիաներում գերակշռող տեղ էին գրավում հին լեզուները (լատիներենը, հունարենը), ապա ռեալական դպրոցներում ու գիմնազիաներում ավելի մեծ ուշադրություն էր դարձվում ռեալական կրթությանը, այսինքն նոր լեզուներին և ֆիզիկամաթեմատիկական ու բնագիտական առարկաներին։

Այս համառոտ թվարկումից նույնիսկ երևում է, թե որքան խառն է եղել Հայաստանում (նաև Կովկասում, Ռուսաստանում) կրթական կյանքի պատկերը։

Պետության կողմից բազմատեսակ ու բազմատիպ ուսումնական հաստատություններ էին ստեղծված, որպեսզի աշխատողների երեխաների մի մասին տարրական դրագիտություն տվող դպրոցներից անշրջանցելի հարուստների և ազնվականների երեխաների համար նախատեսված դպրոցները։

Հնարավոր թյուրիմացություններից խուսափելու նպատակով նշենք նաև, որ աշխատությունում խոսվում է միայն Ռուսաստանյան կայսրության սահմաններում բացված ու գործած և Էջմիածնի սինոդի ու Ամենայն հայոց կաթողիկոսի անմիջական իշխանության տակ գտնված հայ դպրոցների մասին։ Ներկա դեպքում նկատի չենք ունեցել նաև

Հնդկաստանում և Պարսկաստանում եղած հայ դպրոցները, որոնք ևս, հավանաբար, պետք է արևելահայ դպրոցների շարքը դասվեն։

Վերջում անհրաժեշտ ենք համարում մեր խորին շնորհակալությունը հայտնել բոլոր այն ընկերներին ու կազմակերպություններին, որոնք իրենց խորհուրդներով մեզ զգալի օգնություն են ցույց տվել այս աշխատությունը տպագրության պատրաստելիս։

Մեր աշխատության վերաբերյալ դիտողություններն ու խորհուրդները կընդունենք շնորհակալությամբ։

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ.

ՀՍՍՀ ՊԿՊԱ — Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ

ՎՍՍՀ ՊԿՊԱ — Վրացական Սովետական Սոցիալիստական Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ

ՍՍՀՄ ՊԿՊԱ — Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական կենտրոնական պատմական արխիվ (Լենինգրադ)

ֆ — ֆոնդ

ց — ցուցակ

գ — գործ

թ — թերթ

ԿՀԲԸ — Կովկասի հայ բարեգործական ընկերություն

ԵՐԵՎԱՆԻ ԹԵՄ

(Երևանի նահանգ, Կարսի մարզ և Զանգեզուրի գավառ)

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌ

(վիճակ)

Ալեքսանդրապոլի Ս. Փրկիչ եկեղեցու վիճակային դպրոց

Հայ նշանավոր դպրոցներից մեկն է, որի հետ կապված են պատմական մեծ հետաքրքրություն ներկայացնող իրադարձություններ։

1912-ին լույս է տեսել իրավաբանության դոկտոր Արսեն Ղլտճյանի «Պատմություն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր վիճակային դպրոցի (1840—1912)» գիրքը, ուր հեղինակը բավականաչափ հետաքրքիր տեղեկություններ է տալիս Ալեքսանդրապոլ քաղաքի առաջացման և զարգացման, նրա բնակիչների և հասարակական-քաղաքական կյանքի մասին։ Այնտեղ հանգամանորեն շարադրված է նաև դպրոցի 70 տարվա պատմությունը։

Այս դպրոցի սկզբնավորման պատմությունն այլ կերպ է շարադրված պրոֆ. Մ. Սանթրոսյանի «Արևելահայ դպրոցը 19-րդ դ. առաջին կեսին» գրքում (էջ 272—274)։

Ներկա գեպքում մենք օգտագործում ենք ինչպես հիշյալ գրքերը, այնպես էլ մամուլի էջերից և արխիվներից հավաքած նյութերը։

Ղլտճյանը հավաստի է համարում այդ դպրոցի գոյությունը 1840-ից, թեև հիշեցնում է նաև, որ Արարաջյանի ասելով («Արարատ» 1869, սեպտեմբեր) այն հիմնվել է 1839-ին։ Պրոֆ. Սանթրոսյանը Ալեքսանդրապոլի դպրոցական կյանքի սկզբնավորումը ցույց է տալիս 1833-ից (տիրացու Հ. Դավթյանի, ապա արեղա Հակոբ Շահ-Արաբյանի «մասնավոր» դպրոցները, որոնցից էլ, հավանաբար, ծնունդ է առել վիճակային դպրոցը)։

Ղլտճյանի ասելով դպրոցը կանոնավոր հունի մեջ է մտել 1860-ական թվականների վերջերից։ Մինչ այդ աշխատել է խալֆայական ոգով։ Աշակերտները սովորել են ծրի։ Դպրոցը պահվել է եկեղեցական եկամուտներով։

70-ական թվականներին այս դպրոցի բարգավաճման գործում խոշոր դեր են կատարել այնտեղ պաշտոնավորած Սարգիս Բենկնազարյանը, Ղազարոս Աղայանը և ուրիշներ։

1875—76 ուս. տարում այնտեղ ավանդվել են հայոց լեզու, ռուսաց լեզու (նախորդ տարիներում նաև գերմաներեն), թվաբանություն, հանրահաշիվ, ֆիզիկա, երկրաչափություն, ընդհանուր աշխարհագրություն, Ռուսաստանի աշխարհագրություն, ընդհանուր պատմություն, հայոց պատմություն, բնագիտություն, մարդաբանություն, նկարչություն, հայերենի վայելչագրություն, երգ, գրություն։

Դպրոցը 1873 թվականին ունեցել է 14 ուսուցիչ, 260 աշակերտ, 1875-ին՝ 280, 1879-ին՝ 816 (Ղլտճյանի մոտ՝ 850) աշակերտ։ 1885-ին դպրոցը փակվել է, վերաբացվելով 1886-ին՝ արդեն որպես ծխական երկդասյան դպրոց (հայերին արգելված էր ավելի բարձր տիպի դպրոցներ ունենալը՝ մի քանի թեմական դպրոցներից և Գևորգյան ճեմարանից բացի)։

1888-ին դպրոցն ունեցել է երեք պատրաստական խմբեր՝ իրենց դուզընթացներով և 2 դասարան, որոնցում սովորել են ընդամենը 367 հոգի։ 1894—95 ուս. տարում ունեցել է 9 ուսուցիչ, 387 աշակերտ (292 հոգի թոշակառու, 96 հոգի ձրիավարժ)։ 1896-ին նորից է փակվել, իսկ նրա փոխարեն այնտեղ կազմակերպվել է պետական քաղաքային դպրոց։ Վերաբացվել է 10 տարի հետո՝ 1905-ի վերջերին։ Փակումից առաջ մի քանի տարի այստեղ որպես տեսուչ է աշխատել հայ ականավոր մանկավարժ Հովհաննես Տեր-Միրաքյանը, իսկ վերաբացումից հետո՝ Տիգրան Թաշմաճյանը։ 1911—12 ուս. տարում դպրոցն ունեցել է ընդամենը 285 (տարեվերջին 253) աշակերտ։ Նույն թվականին տոնվել է դպրոցի 70-ամյակը։ Դպրոցը 1914-ին ունեցել է 12 ուսուցիչ, 295 աշակերտ։ Այս դպրոցի մասին հարուստ նյութեր կան պետական արխիվներում և հայ մամուլի էջերում։ Այդ նյութերը ցույց են տալիս, որ Ալեքսանդրապոլի վիճակային դպրոցը հանդիսացել է ազգային ազատագրական պայքարի և հեղափոխական խմորումների կարևոր կենտրոններից մեկը։ Շատ հետաքրքիր են 1870-ական թվականներին այս դպրոցի հետ կապված իրադարձությունները, որոնց մասին հանգամանորեն խոսվում է պրոֆ. Վ. Պարսամյանի «Հայ ազատագրական շարժումների պատմությունից» աշխատության մեջ։ 1919-ի նոյեմբերի 1-ից այն վեր է ածվել միջնակարգի։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 33, ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 56, Մ. Սաֆրոսյան, «Արևելահայ դպրոցը 19 դ. ս. կեսին», էջ 272-274; Ա. Ղլտճյան, «Պատմություն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր վիճակային դպրոցի (1840-1912)», Ալեքսանդրապոլ, 1912 թ.։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 31, թ. 12, գ. 43, թ. 14, գ. 50, թ. 63, գ. 182 թ. 7, գ. 314, թ. 60, գ. 492, թ. 116, ֆ. 7; ց. 1, գ. 167, թ. 1-56, «Արարատ», 1869, b. էջ 112-113, 1870, b. էջ 183—185։ 1876, էջ 190—191 և այլն։

«Փարք», 1890, N 4, էջ 62, «Արձագանք», 1884, 29 հուլիսի և 5 օգոստոսի։

Ալեքսանդրապոլի Ս. Նշան եկեղեցու արական ծխական դպրոց

«Արարատ» ամսագրի 1880 թ. N 4-ում հրապարակված հայկական հոգևոր դպրոցների ընդհանուր տեղեկագրում Ալեքսանդրապոլ քաղաքում ցույց է տրված 8 արական և 2 իգական ծխական դպրոց։ Դրանց թվում է, անկասկած, նաև Ս. Նշան եկեղեցու արական ծխական դպրոցը։ Արդեն այն պետք է հիմնված լինի 1870-ական թվականներին, եթե ոչ ավելի վաղ։ Պաշտոնական մի փաստաթղթում այդ դպրոցի հիմնադրման թվականը ցույց է տրված 1886-ը, սակայն դա թյուրիմացություն է, քանի որ այն նշված է 1885-ին գործած և այդ թվականին ցարական կառավարության կողմից փակված հայ դպրոցների ցուցակներում։ 1886-ը նրա վերաբացման թվականն է։

1888-ին եղել է միդասյան արական դպրոց՝ 101 աշակերտով։ Ըստ սոցիալական դրության՝ հոգևորականների զավակներ՝ 1, վաճառականների՝ 22, արհեստավորների՝ 65, երկրագործների՝ 13 հոգի։ Թոշակ են վայելել 70, ձրի են սովորել 31 հոգի։

Այս դպրոցը շարունակել է գործել մինչև 1896 թվականը, իսկ այդ թվականին նորից է փակվել։ Նրա շենքում բացվել է պետական դպրոց, որը գոյություն է ունեցել, հավանաբար, մինչև 1905 թվականը։ Հետագա տարիների փաստաթղթերում Ս. Նշան եկեղեցու արական դպրոցը չի երևում։ 1907—08 ուս. տարվա տեղեկագրում Ս. Նշան եկեղեցուն կից ցույց է տրված միայն Սահականուշյան իգական դպրոցը։

«Արարատ», 1880, N 4, էջ 170, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 29-35, ֆ. 7, գ. 120, թ. 1, ֆ. 56, գ. 50, թ. 61-64, գ. 199, թ. 17-23, գ. 37, թ. 47, գ. 182, թ. 44, «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 57-58։

Ալեքսանդրապոլի Ս. Նշան եկեղեցու օրիորդաց Սահականուշյան ծխական դպրոց

Բացվել է 1873 թ. մայիսի 20-ին։ Առաջին տարին այնտեղ ընդունվել են 50 հայ աղջիկներ։ Դպրոցի բացումը տեղի է ունեցել մեծ հանդիսավորությամբ։ Տեղի հոգևոր դպրոցի ուսուցիչ Մ. Արաքաջյանը զեկուցել է դաստիարակության նշանակության մասին, այդ դպրոցի տեսուչ Ս. Բեկնազարյանը հրապարակել է հոգևոր դպրոցի նվիրատու քաղաքացիների ցուցակը։ Արդյունքում օրիորդաց դպրոցի տեսուչ, հայ մեծ վիպասան ու մանկավարժ Ղազարոս Աղայանը հանձն է առել ձրի դասեր տալ նոր դպրոցում և նվիրել է նրան մի խոշոր գումարի գրականություն։

Դպրոցում ուսումը եղել է ձրի։

Դպրոցի գոյության ազբյուրներն են եղել նվերները, կտակները, վիճակախաղերից և թատերական ներկայացումներից ստացված եկամուտները։

1875-ին ունեցել է 55 աշակերտուհի։ 1885-ին փակվել է։ 1888-ին եղել է միդասյան, 194 աշակերտուհիներով։ 1894-ին ունեցել է 245 աշակերտուհի։ 1896-ին նորից է փակվել, վերաբացվել է 1905-ին, որպես թառամյա տարրական իգական դպրոց։

Դպրոցը 1907—08 ուս. տարում ունեցել է 3 ուսուցչուհի, 3 ուսուցիչ և 157 աշակերտուհի։ 1911-ին աշակերտուհիների թիվը հասել է 175-ի։ Եղել է 4-ամյա տարրական դպրոց։ 1913—14 ուս. տարում ունեցել է 6 ուսուցիչ և 184 աշակերտուհի։ 1919-ին գործել է որպես պետական դպրոց։

«Արարատ», 1873, 2, էջ 231-233, «Փորձ», 1880, № 4, էջ 63-65, ՀՍՍՀ ՊԿՊԱ, թ. 56, գ. 37, թ. 13, գ. 50, թ. 61—64, գ. 199, թ. 17—23, գ. 182, թ. 44, ֆ. 19, գ. 456, թ. 29-35, ֆ. 7, գ. 157, թ. 1-30, ֆ. 20, գ. 119, թ. 45-48, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 6, ֆ. 12, գ. 11, գ. 264, թ. 28։

Ալեքսանդրապոլի Ս. Աստվածածին եկեղեցու արական ծխական դպրոց

Անկասկած, այս դպրոցը նույնպես մտել է 1880 թվականի սկզբներին Ալեքսանդրապոլում գործած 8 արական ծխական դպրոցների ընդհանուր թվի մեջ։ Ուրեմն այն ևս պետք է հիմնված լինի 1870-ական թվականներին, թեև մի քանի փաստաթղթերում թյուրիմացաբար ցույց են տրված այդ դպրոցի հիմնադրման ավելի ուշ թվականներ (1886, 1887—88 և այլն)։ 1886-ը պետք է համարել նրա վերաբացման թվականը, քանի որ 1888-89 ուս. տարում նա արդեն ունեցել է երեք բաժանմունք և նույնիսկ շրջանավարտներ է տվել։ Այդ ուս. տարում այնտեղ սովորել են 184 հոգի, որոնցից հոգևորականների զավակներ՝ 4, վաճառականների՝ 30, արհեստավորների՝ 134, երկրագործների՝ 16 հոգի։ Թոշակառու՝ 129, ծրիավարժ՝ 55 հոգի։ Դպրոցի տեսուչն է եղել Հովհաննես Տեր-Միրաքյանը։

1894-ին եղել է երկդասյան դպրոց՝ 292 աշակերտով։ 1896-ին փակվել է կառավարության կողմից։ Չգիտենք, երբևէ այն վերաբացվել է, թե ոչ։ Մեզ հայտնի է հետևյալ փաստը։ 1907 թ. Ալեքսանդրապոլի Ս. Լուսավորիչ եկեղեցու հոգաբարձությունը դիմել է կաթողիկոսին և խնդրել նրան՝ կարգադրություն անել, որպեսզի իրենց քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու մոմավաճառության գումարները հատկացվեն Ս. Լուսավորիչ եկեղեցու ծխական դպրոցին, մանավանդ որ, ասված է այդ դիմումում, «անցյալ տարիներում էլ այդ արդյունքով օգտվել է Ս. Աստվածածնի տղայոց դպրոցը, որն այժմ գոյություն չունի։ Նրա շենքում շարունակել է գործել Արդության օրիորդաց հայտնի դպրոցը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 29-35, ֆ. 7, գ. 120, թ. 15, ֆ. 56, գ. 50, թ. 61-64; գ. 199, թ. 17-23, գ. 518, թ. 47, գ. 37, թ. 60, ֆ. 20, գ. 232, թ. 5, վիճ. տեղ. 1888-89 ուս. տ., էջ 58, մանկ. գիտ. ինստ. արխիվ Հ. Տեր-Միրաքյանի ֆոնդ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 47, գ. 865, թ. 28, թ. 76, «Արարատ», 1880, №4, էջ 170։

Ալեքսանդրապոլի Ս. Աստվածածին եկեղեցու Արդության օրիորդաց միջնակարգ դպրոց

Սա Ալեքսանդրապոլի առաջին իգական հայկական դպրոցն է։ Այն բացվել է 1871-ի հունվարի 30-ին, հատկապես այդ նպատակի համար Ղահրաման Երկայնաբազուկ Արդությանի կտակած բավականին խոշոր գումարով (40000 ռ.)։ Դպրոցի հիմնադրման գործում բացառիկ մեծ դեր են խաղացել տեղի ավ. քահանա Հովսեփ Կոստանյանցը և Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցի այն ժամանակվա տեսուչ, հայտնի հայ մանկավարժ Սարգիս Բեկնազարյանցը։ Դպրոցի առաջին կանոնադրության մեջ ասված է. «Ուսումնարանի նպատակն է Ալեքսանդրապոլի աղքատ հայ աղջկանց սկզբնական կրթություն տալ կարյաց գրության համեմատ» (ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 35, թ. 5)։ Առաջին տարին դպրոցն ունեցել է 60 աշակերտուհի, որոնցից 12-ը Արդության որդեգիրներ (սրանք ստանում էին ձրի ուսում, սնունդ և հագուստ) և 48 թոշակառուներ (յուրաքանչյուրը 8—20 ռ., ըստ կարողության)։

Ուսուցանվել են հայոց, ռուսաց և գերմաներեն լեզուներ (գերմաներենի ուսուցումը հավզագյուտ երևույթ էր այն ժամանակվա հայ դպրոցում), այդ լեզուների վարժեցողություն, հայոց պատմություն, աշխարհագրություն, բնական պատմություն, իրավաբանություն, ձեռագործություն, գծագրություն և երաժշտություն։

1873-ին ունեցել է 5 ուսուցիչ, 105 աշակերտուհի։ Տեսուչը եղել է Ղազարոս Ազայանը։

1881-ին Ալեքսանդրապոլում եղած 3 իգական դպրոցներում միասին սովորել են 350 աղջիկներ, աշխատել են 35 ուսուցիչ-ուսուցչուհիներ։ 1884-ին մտցնել է միջնակարգի դասընթացին։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է երկդասյան իգական դպրոց, ունենալով 204 աշակերտուհի։

Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձության տվյալներով Արդության դպրոցը 1890-ին նույնպես եղել է երկդասյան, ունենալով 250 աշակերտուհի։ Իսկ Ելիզավետպոլի և Երևանի նահանգների ու Կարսի մարզի ուսումնարանների դիրեկցիայի տվյալներով 1891-ին այն արդեն եղել է հինգդասյան միջնակարգ դպրոց (անհասկանալի է, թե ինչպես է մի տարվա ընթացքում այդպիսին դարձել)։

1895-ին նորից ցույց է տրված որպես երկդասյան դպրոց։ Ունեցել է 204 աշակերտուհի։ 1896-ին դարձյալ փակվել է, վերաբացվելով 1905-ին։

1906 թվականին էջմիածնի սինոդը որոշել է պահանջել Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձությունից վերադարձնելու այդ դպրոցի համար Արղությանի կտակած ավելի քան 51 հազար ռուբլին, որը 1903-ին իսկ է կառավարությունը։

Դպրոցը 1907—08 ուս. տ. ունեցել է 6 ուսուցիչ, 7 ուսուցչուհի և 311 աշակերտուհի։

1911—12 ուս. տարում եղել է 9-ամյա միջնակարգ դպրոց, ուր սովորել են 214 աղջիկ։

1913—14 ուս. տարում նույնպես եղել է վեցդասյան 9-ամյա դպրոց, ունենալով 16 ուսուցիչ և 180 աշակերտուհի։ 1919—20 ուս. տարում գործել է որպես միջնակարգ դպրոց։

Հայ դպրոցների երկրորդ ընդհանուր փակումից հետո Արղությանի դպրոցի շենքում կազմակերպվել է աղջիկների պետական դպրոց, որը գոյություն է ունեցել, հավանաբար, մինչև 1905 թվականը։

«Արարատ», 1869, Ա. էջ 20, 1870, Ժ. էջ 340—342, 1871, Ա. էջ 60—62, Դ. էջ 250—251, 1876, Դ. էջ 156—157, 1906, էջ 4, 1917, էջ 620։

Կ. Կոստանյան «Մի էջ Արղությանի օրիորդական դպրոցի պատմությունից», Թիֆլիս, 1911, ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 21, գ. 32, թ. 4, գ. 35, թ. 5, գ. 37, թ. 13, գ. 50, թ. 111, գ. 63, թ. 65, գ. 199, թ. 23, ֆ. 20, գ. 113, թ. 5, գ. 492, թ.116, գ. 232, թ. 5, գ. 182, թ. 44, թ. 48, գ. 398, թ. 82, ֆ. 7, գ. 120, թ. 1, գ. 157, թ.1-30, ֆ. 12, ց. 9, գ. 865, թ. 76, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28, «Տեղեկագիր Երևանի թեմի Կ. ծխ. դպրոցների 1911—12 ուս. տարի»։

Ալեքսանդրապոլի Ս. Լուսավորիչ եկեղեցու Խրիմյան ծխական արական դպրոց

Ալեքսանդրապոլի Ս. Լուսավորիչ եկեղեցու ծխական հոգաբարձությունը 1907 թվականին մի խնդրագիր է գրել կաթողիկոս Խրիմյանին անունով, ուր ասված է նաև. «Անցյալ 1906 թվի հունվարի 1-ից Ալեքսանդրապոլում 400-ի չափ դպրոցից դուրս մնացած տղաների համար, նրանց ծնողների պահանջմամբ, բացվեց հոգագործների թաղում երկրորդ աղաչյց ծխական դպրոցը, որտեղ բացման օրից մինչև օրս էլ սովորում են ամենաաղքատ դասակարգի որդիքը, գլխավորապես Ռոզա-գործենի» (ՀՍԱՀ, ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 518, թ. 76)։

Արխիվային մի այլ փաստաթղթում ևս այս դպրոցի հիմնադրման թվականը ցույց է տրված 1906-ը։

Վերոհիշյալ դիմումի մեջ նշված է, որ կաթողիկոսի 1905-ի մի կոնդակով այդ դպրոցի պահպանության համար հատկացվել է նույն քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում գտնվող «Ս. Աստվածածնի պատկերի արդյունքի (այսինքն մոմավաճառությունից ստացվող եկամուտների, Ս. Խ.) երկուերորդ մասը», սակայն այդ եկեղեցու հոգաբարձությունը հրաժարվում է հիշյալ գումարները տալուց, ուստի և դպրոցը գտնվում է նյութական ծանր պայմաններում, քանի որ այդ գումարները կազմում են նրա գոյության միակ աղբյուրը։ Հոգաբարձությունը խնդրում է կաթողիկոսին կարգադրություն անել, որպեսզի այդ գումարները Ս. Աստվածածին եկեղեցին անխափան վճարի Ս. Լուսավորչի դպրոցին։ Այդ կարգադրությունն, իհարկե, արվել է, մանավանդ, որ այդ դպրոցը Խրիմյանի անունով էր կոչվել։ Հավանաբար հենց դա էլ այն գլխավոր պատճառն է հանդիսացել, որ Ս. Աստվածածին եկեղեցուն կից նախկինում գործած և 1896-ին փակված ծխական դպրոցն այլևս չի կարողացել վերաբացվել։

Ս. Լուսավորչի դպրոցը 1907—08 ուս. տարում ունեցել է 6 ուսուցիչ և 240 աշակերտ։ 1912-ին այն եղել է խառը՝ երկսեռ դպրոց եռամյա դասընթացով։ Աշակերտների թիվը խիստ նվազել է, իջնելով 146-ի (17 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում ունեցել է 176, 1917-ին՝ 198 սովորող, գործել է նաև 1919-ին։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 518, թ. 76.77, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1-50, գ. 157, թ. 1-30, ֆ. 48, ց. 1, գ. 570, թ. 29, ֆ. 207, գ. 119, թ. 45-48, «Տեղեկագիր Երևանի թեմի ծխական դպրոցների 1911-12 ուս. տարվա»։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 11, գ. 264, թ. 291, «Արարատ», 1913, N8, էջ 687։

Ալեքսանդրապոլի Սեյլանյան օրիորդաց եկեղեցական ծխական դպրոց

1915-ին Ալեքսանդրապոլի Ս. Աստվածածին եկեղեցուն կից բացվել է Տիգրան Սեյլանյանի անվան օրիորդաց դպրոցը, այսինքն այն նույն եկեղեցու, որին կից վաղուց ի վեր բացվել ու գործում էր Արղությանի օրիորդաց հայանի դպրոցը։ Այս նոր դպրոցը տեղավորվել է Սեյլանյան ընտանիքի նվիրած երկհարկանի շենքում։ Այն ունեցել է երկամյա դասընթաց և, ըստ երևույթին, նախապատրաստական դեր է կատարել Արղությանի օրիորդաց դպրոցի համար։ Պատահական չէ, որ երկու դպրոցն էլ ունեցել են մի ընդհանուր հոգաբարձություն և մի շարք արխիվային փաստաթղթերում հիշատակվում են միասին։ Սեյլանյան դպրոցը 1916-ին ունեցել է 6 ուսուցիչ և 100 աշակերտուհի, իսկ 1917-ին՝ 7 ուսուցիչ և 104 աշակերտուհի։ Հավանաբար պահվել է Սեյլանյանների միջոցներով, Ս. Աստվածածին եկեղեցու հատկացումներով և մասամբ սովորողների ուսման վարձով։ Այդ դպրոցը 1919-ին գործել է։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 48, ց. 1, գ. 430, թ. 6, գ. 495, թ. 36, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1-56։

Ալեքսանդրապոլի «նախակրթարանք մանկանց»

Էջմիածնի սինոդի պահանջով Ալեքսանդրապոլի փոխանորդի կողմից ներակայացվել է 1873-ին և 1875-ին վիճակում գործող բոլոր հայ դպրոցների ցուցակը։

Այդ ցուցակից իմանում ենք, որ Ալեքսանդրապոլ քաղաքում, ծխական ու վիճակային դպրոցներից բացի, 1873 և 1875 թվականներին գործել են մի ամբողջ շարք նախակրթարաններ, որոնք, հիշտ է, պահվել են առանձին անձանց կողմից, այսինքն՝ կրել են մասնավոր բնույթ, բայց ենթարկվել են հայ հոգևոր իշխանություններին և, վերջին հաշվով, որոշ թվով երեխաների նախապատրաստել են ծխական դպրոցներում սովորելու համար։

Անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել այդ նախակրթարանների ցուցակը։

1. Սարկավագ Պետրոս Մատեոսյանի նախակրթարան — 50 երեխա
2. Դպիր Ավետիս Տեր-Ավագյանի նախակրթարան — 20 երեխա
3. Դպիր Պողոս Մալխասյանցի նախակրթարան — 25 երեխա
4. Դպիր Թադեոս Կարճիկյանի նախակրթարան — 32 երեխա
5. Դպիր Կարապետ Կրիմձյանցի նախակրթարան — 35 երեխա
6. Դպիր Մկրտիչ Վարպետյանի նախակրթարան — 20 երեխա
7. Դպիր Պողոս Տեր-Թաշչյանի նախակրթարան — 22 երեխա
8. Դպիր Ալեքսանդր Մխիթարյանի նախակրթարան — 35 երեխա
9. Դպիր Հարություն Շարբաթյանցի նախակրթարան — 20 երեխա
10. Մանուկ Ամատունու նախակրթարան — 45 երեխա
11. Դպիր Արսեն Կրիչյանցի նախակրթարան — 28 երեխա
12. Աստիճանավոր Պողոս Մալխասյանցի նախակրթարան — 30 երեխա
13. Դպիր Ազատ Թովմասյանի նախակրթարան — 16 երեխա
14. Դպիր Կարապետ Քրիշչյանցի նախակրթարան —14 երեխա
15. Դպիր Ազաչան Տեր-Կարապետյանի նախակրթարան — 10 երեխա

Ինչպես տեսնում ենք, այդ նախակրթարաններից շատերը աշակերտների թվով գրեթե չեն տարբերվել ծխական դպրոցներից։ Պետք է նշել նաև, որ հիշյալ դպրոցներից առաջին տասը էջմիածնի սինոդի կողմից իշխանությանը ներկայացված ցուցակում նշված են որպես ծխական դպրոցներ։

ՀՍԱԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 21, գ. 43, թ. 14-15։

Ալեքսանդրապոլի երկրագործների թաղի արական ծխական դպրոցներ

Ալեքսանդրապոլ քաղաքի երկրագործների թաղում 1883-ին գործել են երեք արական ծխական դպրոցներ, որոնք ցույց են տրված 1885-ին

փակված հայ դպրոցների ցուցակներում։ Հավանաբար, դրանք ևս մտել են 1880 թվականին Ալեքսանդրապոլում գործած 8 արական դպրոցների ընդհանուր թվի մեջ։ Ուրեմն այդ դպրոցները բացվել և գործել են դեռևս 1870-ական թվականներին։

Այս դպրոցների հետագա ճակատագրի մասին տեղեկություններ չկան։ 1907-ին Ս. Լուսավորիչ եկեղեցու հոգաբարձության կողմից կաթողիկոսին ուղղված և մեր կողմից վերևում հիշատակված դիմումի մեջ ասված է, որ 1906 թվականին հողագործների թաղում բացվել է երկրորդ ծխական դպրոցը՝ Ս. Լուսավորիչ եկեղեցուն կից։ Նշանակում է այնտեղ մինչ այդ մի դպրոց այդպես գործել է։

ՀՍԱԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 63, գ. 318, թ. 76, «Արարատ», 1880, № 4, էջ 179։

Ալեքսանդրապոլի երկրագործների թաղի իգական ծխական դպրոց

Քաղաքի երկրագործների թաղում 1884-ին գոյություն է ունեցել նաև աղջիկների ծխական դպրոց, որը նույնպես 1885-ին փակվել է։

ՀՍԱԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 63։

Ալեքսանդրապոլի Հողաբլուր թաղի ծխական դպրոց

Ալեքսանդրապոլ քաղաքի Հողաբլուր կոչված թաղամասում ևս 1884-ին գործել է մի ծխական դպրոց, որի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Նրա գոյության մասին մենք իմանում ենք միայն 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակից։ Հետագա ճակատագիրը նույնպես անհայտ է։ Գուցե այդ դպրոցը հետագայում բացվել և գործել է ոչ թե Հողաբլուր թաղի, այլ մի ուրիշ (ավելի շուտ այդ թաղամասում գտնվող եկեղեցու) անունով։

ՀՍԱԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 63։

Ալեքսանդրապոլի Միքայելյան փողոցի արական ծխական դպրոց

Այս դպրոցի գոյության մասին տեղեկություններ տվող միակ աղբյուրը 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակն է։ Այդ փողոցի անունով ծխական դպրոցի մենք այլևս չենք հանդիպել։ Չգիտենք, այն երբևէ վերբացվել է, թե՞ ոչ։ Հավանական է, որ վերբացված և գործած լինի ոչ թե այդ փողոցի, այլ մի ուրիշ անունով։

ՀՍԱԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 63։

Ալեքսանդրապոլի Միքայելյան փողոցի աղջիկների դպրոց

Այս դպրոցի պատմությունը հար և նման է Միքայելյան փողոցի տղաների դպրոցի պատմությանը։ Նրա գոյության մասին նույնպես խմանում ենք 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակից։

ՀՍԱ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 50, թ. 63։

Ալեքսանդրապոլի հայ կաթոլիկական հոգևոր դպրոց

Բացվել է 1858-ին. այնտեղ սովորել են հայ կաթոլիկների երեխաները, որոնց ավանդել են կրոն (հայ կաթոլիկական հավատի), թվաբանություն, հայերեն, ռուսերեն և լատիներեն։

1880-ին դրանց ավելացել են նաև՝ քերականություն, ճարտասանություն, աշխարհագրություն, ընդհանուր և սրբազան պատմություն, բարոյական և տնտեսական ասմվածաբանություն, երգեցողություն։ Այդ թվականին դպրոցում սովորել են 38 հոգի։ Դպրոցի հիմնական խնդիրն է եղել քահանայացուների պատրաստումը Անդրկովկասի հայ կաթոլիկական եկեղեցիների համար։ Դրա համար հարկ է եղել սովորել 7 տարի։ Օրական ունեցել են 2 դաս, յուրաքանչյուր դասը 3 ժամ տևողությամբ։ Այդ դպրոցը հիմնել և ղեկավարել է վարդապետ Ալեքսանդր Արարատյանը, որը, ինչպես նշել է «Փորձ» ամսագիրը, ապրել է ծայրահեղ աղքատության մեջ և «մի կուշտ փորով հաց չի կերել», բայց և չի հրաժարվել երեխաներին ձրիաբար կրթելու պարտականությունից։

Այդ ժամանակ Ալեքսանդրապոլում գոյություն է ունեցել նաև կաթոլիկական մի մասնավոր դպրոց, որը պահել է մի կաթոլիկ կին, ունենալով մինչև 20 աշակերտուհի։

Արարատյանի բացած դպրոցը հետագայում փակվել է։ «Մշակ» թերթը փակման տարեթիվը նշում է 1876-ը, որից հետո իբր «15 տարի ամբողջ Կովկասի 36 հազար հայ կաթոլիկները չունեին ոչ մի դպրոց»։ Սակայն մենք տեսանք, որ «Փորձ» ամսագրի հաղորդման համաձայն այդ դպրոցը 1880-ին դեռևս գործել է, ուր ավելացել են նոր ավանդվող առարկաներ։

1891 թ. Ալեքսանդրապոլում բացվել է հայ կաթոլիկների նոր դրպրոց, ունենալով 30 աշակերտ։ 1913-ին այդ դպրոցը ունեցել է 60 աշակերտ և 1919-ին ևս գործել է։

ՀՍԱ ԳԿԳԱ, ֆ. 19, գ. 1, գ. 33, թ. 5, ֆ. 207, գ. 112, թ. 45-48, «Փորձ», 1880, N4, էջ 67-68, «Մշակ» 1891, N110,

ՀՍԱ ԳԿԳԱ, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 32, «Մեղու Հայաստանի», 1859, N 30, էջ 393-395։

Ալեքսանդրապոլի մանկապարտեզներ

«Արձագանք» լրագրի մի հաղորդումից իմանում ենք, որ 1884 թվականին Ալեքսանդրապոլում գործել են մի շարք մանկապարտեզներ, որոնց սակայն թիվը նշված չէ։ Դրանք պահվել են մասնավոր կարգով։ Զգիտենք, արդյոք դրանք նույն այն նախակրթարաններ՞ն են, որոնք գործել են դեռևս 1873 և 1875 թվականներին և որոնց մասին արդեն խոսվից վերևում։

Այդ հաղորդագրությունից նաև երևում է, որ Նատալիա Հովհաննիսյանը (տիկին Տեր-Մարտիրոսյանց) 1884-ին Ալեքսանդրապոլում բացել է Ֆրեոբելյան մանկապարտեզ։ Նա եղել է բավականաչափ կրթված և իր գործի համար պատրաստված անձնավորություն։ Ավարտել է Թիֆլիսի Անանյան դպրոցը, Սոֆյա Բարայանի Ֆրեոբելյան մանկավարժական երկամյա դասընթացը, հաճախել է գոկտոր Բարայանի՝ «Առողջապահության մանկական հասակի» կոչվող մասնավոր դասընթացներին։ Աշխատակցել է Ս. Բարայանի հետ, իսկ այնուհետև փոխադրվել է Ալեքսանդրապոլ, ուր և հիմնել է այն ժամանակվա մանկավարժության պահանջներին համապատասխան մի կանոնավոր մանկապարտեզ։

«Արձագանք», 1884 թ., 21 հոկտեմբերի, էջ 597։

Աղբուլաղ (այժմ՝ Լուսաղբյուր, Սպիտակի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցը ցույց է տրված 1875-ին գործած դպրոցների ցուցակում (ունեցել է 20 աշակերտ)։ 1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 30 աշակերտ։ 1885-ին փակվել է, 1890-ին վերաբացվել։ 1893-ին նորից է փակվել «ծխականների չբավարարության» պատճառով։ 1895-ին վերաբացվել է, բայց կարճ կյանք է ունեցել։ Հաջորդ տարում փակվել է կառավարության կողմից։ Վերաբացվել է մեծ ուշացումով՝ 1913-ին։ 1918-19 ուս. տարում գործել է որպես միգասյան դպրոց։

ՀՍԱ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 4599, թ. 9—11, ֆ. 12, գ. 7, գ.865, թ. 29; ՀՍԱ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 30, թ. 31; գ. 50, թ. 61—64; գ. 199, թ. 17—23; ֆ.7, գ. 120, թ. 2, ֆ. 2, 75/207, գ. 5, թ. 55, «Արարատ», 1913, N 11, էջ 992։

Աղղուլա (այժմ՝ Բերքառատ, Արագածի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Աղղուլա գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է Ալեքսանդրապոլի վիճակում 1914-1917 թվականներին բացված հայկական եկեղեցական-ծխական դպրոցների տեղեկագրում։ Այս դպրոցը

1916—17 ուս. տարում գործել է, չունենալով գոյության մի հաստատուն աղբյուր և որևէ միջոց։ Այդ տարում ունեցել է 50 աշակերտ (5 աղջիկ), 1919-ին գործել է։

«Արարատ», 1917, № 8, էջ 672; ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 167, թ. 1—56; ֆ. 48, ց. 1, գ. 511, թ. 5։

Աղթիլիսա (այժմ՝ Կրաշեն, Ախուրյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Արխիվային տարբեր փաստաթղթերում այդ դպրոցի հիմնադրման տարեթվերը նշված են 1872, 1876, 1877 թթ.։ Առաջինը ավելի հավանական է, որովհետև 1875-ին Աղթիլիսայի դպրոցը փաստորեն գործել է՝ ունենալով 21 աշակերտ, իսկ 1876-ի մայիսին նրա մասին զրվատական հոդված է տպագրել «Արարատ» ամսագիրը։ Դպրոցը հիմնել և նրա առաջին ուսուցիչն է եղել Հովհաննի վանական դպրոցի նախկին սան Խաչատուր Տեր-Գևորգյանը, որն այդտեղ աշխատել է երկար տարիներ։

1875-76 ուս. տ. դպրոցն ունեցել է մոտ 40 աշակերտ, որոնց հետ հիշյալ ուսուցիչը պարապել է կրոն, հայոց լեզու, ազգային պատմություն, թվաբանություն, հայերենի վայելչագրություն և հայկական ձայնագրություն։

Հետաքրքրական է, որ դեռևս 1870-ին Աղթիլիսա գյուղում ապրել է ամն Կարապետ Մաթաիրոսյան, որը կույր լինելով հանդերձ, իր խրճիթում հավաքել է 20-ի չափ մանուկներ և նրանց մայրենի լեզու է սովորեցրել։ Դրանով իսկ նա նախադրյալներ է ստեղծել այդ գյուղի ծխական դպրոցի կազմակերպման համար։

Ծխական դպրոցը 1881-ին ունեցել է 1 ուսուցիչ, 40 աշակերտ։ Այն 1885-ին փակվել է, 1887-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է տղաների միդասյան դպրոց՝ 40 աշակերտով և 2 ուսուցչով, 1895-ին ունեցել է 46 աշակերտ։ 1896-ին նորից է փակվել և վերաբացվել 10 տարի հետո՝ 1905-ին, 1907—08 ուս. տարում ունեցել է 60 աշակերտ (6 աղջիկ)։ 1909-ին նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։

Ինչպես երևում է, հետագայում փակվել է և վերաբացվել 1913-ին։ Այդ թվականին եղել է եռամյա խառը (երկսեռ) դպրոց՝ 70 աշակերտով։ 1916—17 ուս. տ. գործել է, իսկ 1918—19-ին՝ ոչ։

ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 31; գ. 50, թ. 65; գ. 199, թ. 17; գ. 26, թ. 1, գ. 182, թ. 7; ֆ. 4, ց. 1, գ. 53, թ. 17—26; գ. 43, թ. 3—22; գ. 12, թ. 1; գ. 46, թ. 14; ֆ. 7, գ. 1, գ. 46, թ. 14, «Արարատ», 1870, էջ 307; 1876, էջ 192—194 վրա. տեղեկ. 1888—89 ուս. տարվա, էջ 61; ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; «Մեղու Հայաստանի», 1884, №17, «Արարատ», 1917, №8, էջ 672։

Ավդիբեկ (այժմ՝ Ծաղկաբեր, Սպիտակի շրջ.) գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 30 աշակերտ։ Ցույց է տրված նաև 1875-ի տեղեկագրում (25 աշակերտ)։

Հետագա տասնամյակների ցուցակներում այս դպրոցն այլևս չի երևում։ 1916—17 թվերին Ավդիբեկ գյուղում գործել է պետական միդասյան դպրոց։

ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 13—14; գ. 30, թ. 21; ֆ. 19, թ. 1, գ. 1521, թ. 2—7։

Արթիկ գյուղի (այժմ՝ Արթիկ քաղաք) ծխական դպրոց

Հիմնվել է 1872-ին։ Առաջին ուսուցիչն է եղել Թեոդորոս Վարդապետ Շիրակունին։

1875-ին ցույց է տրված որպես նախակրթարան՝ 26 աշակերտով։ 1881-ին ունեցել է 1 ուսուցիչ, 60 աշակերտ։ 1885-ին փակվել է։ Մոտ 20 տարվա ցուցակներում այլևս չի երևում։ Հայտնի է, որ 1905-ին նորից է բացվել։ Նպաստ է ստացել Բաքվի մշակութային միությունից։ 1911—12 ուս. տ. եղել է 4-ամյա խառը դպրոց՝ 68 աշակերտով (5 աղջիկ)։ 1913—14 ուս. տ. դարձել է 5-ամյա, ունենալով 99 աշակերտ (8 աղջիկ)։ 1916-ին նպաստ է ստացել Քեմի դպրոցական ֆոնդից։ 1917-ին գործել է, իսկ 1918—19-ին՝ ոչ։

ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 22, թ. 360; գ. 30, թ. 31; գ. 30, թ. 62; գ. 182, թ. 7; գ. 492, թ. 116; ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 10; ֆ. 422, գ. 1585, թ. 47; ֆ. 75/207, գ. 5, թ. 55։

«Նոր դպրոց», 1910, № 8—9, էջ 123, «Արարատ», 1916, էջ 7, 1917, էջ 671։

Արթիկ Նոր կամ Հայի Ղլինաթաղ (այժմ՝ Սուսեր, Թալինի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Այս գյուղի ծխական դպրոցն առաջին անգամ հանդիպում է 1913—14 ուս. տարվա ցուցակներում, «Արարատ» ամսագրից և Քեմական տեսչի մի զեկուցագրից իմանում ենք, որ այն այդ ուսումնական տարում էլ բացվել է։ Եղել է տարրական դպրոց։ Առաջին տարին այնտեղ սովորել են 35 տղաներ։ 1917-ին գործել է, ունենալով 60 աշակերտ (2 աղջիկ)։

1918—19 ուս. տարում գործած դպրոցների ցուցակում չկա։

«Արարատ», 1913, №12, էջ 1086; 1917, էջ 672;
ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 10, գ. 167, թ. 1-56, ֆ. 48, գ. 598, թ. 88։

Արխվալի Մեծ (այժմ՝ Մեծ Մանքաշ, Արթիկի շրջ.) գյուղի երկդասյան ծխական դպրոց

Հարուստ ու հետաքրքիր պատմություն ունի այս գյուղի ծխական դպրոցը։ Գյուղում կրթական գործը սկսվել է 1852-ից, կրելով տնային մասնավոր ուսուցման ձև։ Ծխական դպրոցը կազմել է այդ «տնային դպրոցի» անմիջական շարունակությունը և համեմատաբար ավելի կանոնավոր ընթացք է ստացել 1856-ից հետո, երբ ունեցել է իր համար կառուցված հատուկ շենք։

Եղել է առաջին գյուղական ծխական դպրոցը Շիրակի գաշտավայրում։ Հիմնադիրը և առաջին ուսուցիչն է եղել քահանա Մկրտիչ Աթանասյանը, որը նաև երեխաների ուսուցումը կազմակերպել էր իր տանը։ Այս դպրոցի 40-ամյա պատմությունը (1852—1892) ձեռագիր վիճակում պահվում է ՀՍՍՀ պետական պատմական արխիվում։

Դժվար է եղել Մեծ Արխվալի գյուղի ծխական դպրոցի ուղին։ Այն ևս հաճախ է փակվել ու վերաբացվել, հաղթահարելով պահպանելով իր գոյությունը մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը։

1870-ական թվականների դպրոցական տեղեկագրում այս դպրոցը չի երևում, սակայն մի փաստաթղթից մենք իմանում ենք, որ 1884-ին այն գործել է, իսկ 1885-ին փակվել կառավարության կողմից։

1886-ին վերաբացվել է, բայց ինչ-ինչ պատճառներով նորից է փակվել և վերաբացվել 1891-ին (այլ փաստաթղթերով՝ 1890-ին)։

1885-ին եղել է երկդասյան դպրոց՝ 89 աշակերտով (10 աղջիկ)։ Երկրորդ անգամ փակվել է 1896-ին, վերաբացվելով 10 տարի հետո՝ 1905-ի վերջերին։ 1907—08 ուս. տարում դպրոցն ունեցել է 2 ուսուցիչ, 79 աշակերտ և 9 աշակերտուհի։ Աթանասյանների օգնությամբ 1909-ին դպրոցի համար կառուցվել է նոր շենք։ Այդ ժամանակ դպրոցը սպասարկել է Մեծ և Փոքր Արխվալի գյուղերին։

Իր հիմնադրման թվականից 60 տարի անց, 1912-ին, այս դպրոցը նորից ձախողում է, այս անգամ արդեն, որքան էլ դա ցավալի է, նրա հիմնադրի հարազատների մեղքով։ Այդ մասին ահա թե ինչ ենք կարդում Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարության 1912 թվականի մի հայտարարության մեջ, որն ուղղված է Երևանի փոխթեմականին։

«Նորաշենի գործակալության Մեծ Արխվալի գյուղի եկեղեցու ծխական դպրոցը նույնպես ներկայումս փակ է, իսկ հաշիվները՝ խառը։ Ուստիս կարգադրել է Արթիկու գործակալին գնալ և քննել, որը ներկայումս հայտնում է, որ հիշյալ դպրոցի հոգաբարձության նախագահ Ղևոնդ քահանա Աթանասյանը հրաժարվում է հաշիվ տալուց և միևնույն ժամանակ հայտնել է, որ դպրոցը շինել են ինքը և իր եղբայրները,

ուստի նա ում ուզենա նրան կտա, և այդ հիմման վրա այնտեղ ես որոշված է բաց անել պետական դպրոց՝ նախկին ծխական դպրոցի շենքում» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, ց. 1, գ. 577, թ. 7)։

Եվ իհարկե, այդպես էլ լինում է։ Ծխական դպրոցի փոխարեն այնտեղ բացվում է պետական դպրոց։ Այդպիսի դպրոց բացված է եղել նաև գյուղասկզբին, բայց հայ դպրոցների վերաբացումը թույլ տալուց հետո այն փակվել է։

Հետագայում այս դպրոցին մենք այլևս չենք հանդիպում մինչև 1915 թվականը։ Այդ թվականին գյուղի հաստաբակությունը որոշել է վերաբացել իր ազգային դպրոցը, իսկ կաթողիկոսը կարգադրել է դպրոցական ֆոնդից նրան տալ նպաստ։

Դպրոցը 1917-ին գործել է, նպաստ ստանալով զանազան բարեգործական ընկերություններից, գործել է նաև 1919-ին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 46, թ. 19; գ. 58, թ. 16; գ. 120, թ. 1; գ. 172, թ. 5; ֆ. 56, գ. 50, թ. 64; գ. 199, թ. 19; գ. 182, թ. 7; ֆ. 19, ց. 1, գ. 380; ֆ. 48, ց. 1, գ. 577, թ. 7; ֆ. 75/207, գ. 5, թ. 55;
ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 12, գ. 865, թ. 29, «Արարատ», 1891, էջ 168, 1907, N12, էջ 892, 1916, էջ 7, 1917, էջ 672։

Արխվալի Փոքր (այժմ՝ Փոքր Մանքաշ, Արթիկի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Փոքր Արխվալի գյուղի ծխական դպրոցը բացվել է կաթողիկոս Երիմյանի հատուկ կոնդակով՝ 1896-ին, այսինքն՝ այն բանից հետո, երբ ցարական կառավարությունը փակել էր հայ ծխական դպրոցները, այդ թվում նաև Մեծ Արխվալի գյուղի դպրոցը։

Բանը այն է, որ հայ դպրոցները փակելու առաջին ամիսներին կառավարությունը պատրվակ էր բռնում (իհարկե, քողարկելով իր բուն նպատակը), որ իբր հայ դպրոցները կոչվում են եկեղեցական, բայց փաստորեն պահվում են ոչ թե եկեղեցական գումարներով, այլ բարբարվին ուրիշ աղբյուրներից ստացվող միջոցներով, ուրեմն չպետք է ենթարկվեն հայ հոգևոր իշխանությանը։ Վերջինիս հարցումներին կառավարական մարմինները պատասխանում էին, որ հոգևոր իշխանության կողմից նոր բացվող դպրոցները պետք է պահվեն բացառապես եկեղեցական գումարներով և չպետք է լինեն այն գյուղերում և վայրերում, որոնց դպրոցներն արդեն փակվել են։ Հայերը ստիպված դպրոցներ էին բացանում այն գյուղերում, որոնցում նախկինում դպրոցներ չկային։ Ահա այդ ձևով է բացվել նաև Փոքր Արխվալի գյուղի դպրոցը։ Եթե մինչև 1896 թվականը Մեծ Արխվալիի դպրոցում սովորում էին նաև Փոքր Արխվալիի երեխաները, ապա այժմ այդ գյուղերի դերերը փոխվել էին,

Մեծ Արխվալիի երեխաները Փոքր Արխվալիի դպրոցն էին հաճախում, բայց ոչ երկար ժամանակով...

Իհարկե, փակվեց նաև Փոքր Արխվալի գյուղի դպրոցը, որի վերաբացման և հետագա գոյության մասին մենք տեղեկություններ չունենք։ Գիտենք, սակայն, որ հայ դպրոցների ընդհանուր վերաբացումից, այսինքն 1905-ից հետո Մեծ Արխվալիի դպրոցը նորից ընդունել է իր հարևան գյուղի երեխաներին։

«Արարատ», 1896, էջ 589; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 863; թ. 54-55։

Բաբբուղի (այժմ՝ Բարձրաշեն, Անիի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Բաբբուղի գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է Ալեքսանդրապոլի վիճակում 1914—1917 թվականներին բացված հայկական եկեղեցական-ծխական դպրոցների տեղեկագրում։ 1916-17 ուս. տարում գործել է, ունենալով մի ուսուցիչ և 49 աշակերտ (9 աղջիկ)։

«Արարատ», 1917, N8, էջ 672; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 167, թ. 1-56։

Բայանդուր գյուղի (Ախուրյանի շրջ.). ծխական դպրոց

Հիմնվել է 1862-ին՝ տեղի քահանա Մելիքսեթեկ Մանուկյանի կողմից։ Մի շարք տարիներ հենց այդ Մանուկյանն էլ ավանդել է դպրոցում՝ հոգ տանելով նրա գոյության և ապահովության մասին։ Այդ դպրոցը 1869-ին գոյություն է ունեցել, գործել է նաև 1881-ին, իսկ 1882-ին փակվել է։ Այն չի նշված 1885-ի և 1888-ի տեղեկագրերում։

Ինչպես երևում է, Բայանդուր գյուղի ազգային դպրոցը այլևս չի վերաբացվել։ Այն ցույց չի տրված հետագա տարիների փաստաթղթերում, ինչպես նաև Ալեքսանդրապոլի գավառում 1917-ին գործած ծխական դպրոցների ցուցակում (հրապարակված «Արարատ» ամսագրում)։ Պատճառը հասկանալի է, 1888-ի հոկտեմբերին Բայանդուր գյուղում բացվել է զեմստվոյական երկդասյան պետական դպրոց, որը շարունակել է իր գոյությունը նաև հայ դպրոցների վերաբացումից հետո։ 1908-ին այս դպրոցի 137 սովորողներից 113-ը եղել են հայեր։

«Արարատ», 1869, թ. էջ 44, «Մեղու Հայաստանի», 1882, N 134, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 116, թ. 61; գ. 953, թ. 3-11;
«Циркуляр Кавказск. уч. округа за 1888 г.», стр. 453.

Բաշգյուղ Մեծ (Բաշքենդ I, այժմ՝ Սարալանջ, Արթիկի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Արխիվային փաստաթղթերը և տեղեկատու աղբյուրները մեծ շփոթություն են մտցնում նախկին Ալեքսանդրապոլի գավառի Բաշգյուղ և Բաշքենդ գյուղերի հարցում։ Նրանցում մենք հանդիպում ենք՝ Բաշգյուղ, Բաշգյուղ երկրորդ, Մեծ Բաշգյուղ (նույնը նաև՝ Բաշքենդ առաջին, Փոքր Բաշգյուղ), Բաշքենդ և այլ անուններ։ Ըստ որում Մեծ Բաշգյուղը կոչվում է նաև Բաշքենդ առաջին և, որ շատ տարօրինակ է, նաև Փոքր Բաշգյուղ (տե՛ս Զ. Կորկոտյանի «Խորհրդային Հայաստանի բնակչությունը», էջ 24)։ Ըստ Կորկոտյանի, այս գյուղը գտնվում է ներկա Արթիկի շրջանում (այժմ կոչվում է Սարալանջ)։ Մյուս Բաշգյուղը (դարձյալ Կորկոտյանի գրքում) ցույց է տրված նախկին Ազրարայի (ներկա Ղուկասյանի) շրջանում։ Այն կոչվել է նաև Բաշգյուղ երկրորդ և, դարձյալ տարօրինակ բան, Բաշգյուղ Մեծ (նույն տեղը, էջ 18)։ դժվար է գլուխ հանել այս խառնաշփոթությունից։

Այս քաոսից դուրս գալու համար մենք որոշեցինք հիմք ընդունել «Կավկազսկի կալենդարը»։ Այնտեղ Ալեքսանդրապոլի գավառում նշված են Բաշգյուղ և Բաշգյուղ երկրորդ գյուղերը։ 1915 թվականին դրանցից առաջինը ունեցել է 1229, իսկ երկրորդը՝ 391 բնակիչ։ Կորկոտյանի մոտ ևս Արթիկի շրջանի Բաշգյուղը միշտ ավելի շատ բնակիչ է ունեցել, քան Ազրարայի (կամ Ղուկասյանի) շրջանի Բաշգյուղը։ Հետևաբար դրանցից առաջինը հենց Մեծ Բաշգյուղն է, իսկ երկրորդը՝ Փոքր Բաշգյուղը։

Արթիկի շրջանի Բաշգյուղի Ս. Աստվածածին եկեղեցու ծխական դպրոցը, ըստ արխիվային մի փաստաթղթի, բացվել է 1906-ին (այս դպրոցը նախորդ տասնամյակների փաստաթղթերում չի հանդիպում)։ 1908-ին ունեցել է երկու ուսուցիչ, 68 աշակերտ (բոլորը տղաներ), որից եղել է արական դպրոց։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ 1911—12 ուս. տարում դարձյալ մնացել է արական ծխական դպրոց, ունենալով 41 աշակերտ։ 1913—14 ուս. տարում այն ցույց է տրված որպես երկսեռ դպրոց, ուր սովորել են 66 տղա և 14 աղջիկ։ 1914-ի երկու այլ փաստաթղթերում նշված է աշակերտների նույն թիվը՝ 80 հոգի։ 1917-ին գործել է, ունենալով 96 աշակերտ (29 աղջիկ)։ 1918—19 ուս. տարվա մի փաստաթղթում Բաշքենդ գյուղի դպրոցը նշված է որպես երկդասյան։

Զ. Կորկոտյան, «Խորհրդային Հայաստանի բնակչությունը», 1931, Երևան, էջ 18, 24, «Կավկազսկի կալենդար», 1915, էջ 97; «Հայկական ՍՍՀ վարչատերիտորիալ բաժանումը», 1955, էջ 25, 55։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1-30, գ. 167, թ. 1-156; գ. 172, թ. 56; 182, թ. 7; ֆ. 75/207, գ. 5, թ. 55; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 250, գ. 283, թ. 57., «Աբարաս», 1917, էջ 671։

Բաշգյուղ Փոքր (Ղուկասյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Այս գյուղի մասին խոսվեց նախորդ գյուղի (Մեծ Բաշգյուղի) կապակցությամբ։

Ներկա Ղուկասյանի շրջանի Բաշգյուղի (Բաշքենդի) ծխական դպրոցը մեզ հանդիպել է միայն երկու փաստաթղթերում՝ կազմված 1914-ին։ Երկուսում էլ նշված է, որ այդ թվականին այն ունեցել է 2 ուսուցիչ, 58 աշակերտ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 57;

Բզովդալ (այժմ՝ Բազում, Գուգարքի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Բզովդալ գյուղը ծխական դպրոց է ունեցել գեռևս 1882-ից առաջ, իսկ այդ թվականին փակվել է։ Այնուհետև այդ դպրոցին չենք հանդիպում մինչև 1913—14 ուս. տարին։ Այդ ուսումնական տարում եղել է 2-ամյա դպրոց՝ 40 աշակերտով (2 ազգիկ)։ 1918—19 ուս. տարում չի գործել։

Ֆ. «Մեղու Հայաստանի», 1882, № 134; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 11, ֆ. 56, գ. 498, թ. 20, ֆ. 48, ց. 1, գ. 698, թ. 88, ֆ. 75/207, գ. 5, թ. 55։

Բոզդոդան (այժմ՝ Սարակապ, Անիի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Բոզդոդան գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է Ալեքսանդրապոլի վիճակում 1914—1917 թվականներին բացված ծխական դպրոցների ցուցակում։ Մի բան հաստատ է, որ այն 1916-17 ուս. տարում գործել է, պահվելով գյուղի համայնքի միջոցներով։

Բոզդոդան գյուղում գործել է նաև պետական միդասյան դպրոց։

«Աբարաս», 1917, №3, էջ 672։

Բոզլոխուշ (այժմ՝ Մուսայելյան, Ղուկասյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

1883-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 30 աշակերտ։ 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում չկա, հավանաբար, մինչ այդ այն փակված է եղել։ Այս դպրոցի մասին այլ տեղեկություններ չունենք։ Այն չի երևում հետագա տարիների փաստաթղթերում։ Չկա նաև Ալեքսանդրապոլի վիճակի դպրոցների 1914—1917 թթ. ցուցակում (հրապարակված «Աբարաս» ամսագրում)։

«Աբարաս», 1883, №5, թ.,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, թ. 56, գ. 50, թ. 64,

Բողազքյասան (այժմ՝ Ջորակապ, Անիի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1913—14 ուս. տարվա ցուցակներում։ Նրան է երկամյա խառը դպրոց, ուր սովորել են 54 տղա, 8 աղջիկ։ Թեմական տեսուչը նույնպես հաստատում է 1913—14 ուս. տարում այդ դպրոցի բացված լինելը։ 1916-ին գործել է որպես եռամյա դպրոց։ 1917-ին նպաստ է ստացել թեմի դպրոցական ընդհանուր ֆոնդից, ունեցել է 85 աշակերտ։ 1918—19 ուս. տարում չի գործել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 9; ֆ. 48, գ. 398, թ. 88; ֆ. 75/207, գ. 5, թ.55;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 29; «Աբարաս», 1916, № 1-2, էջ 7; 1917, էջ 671։

Բուդդաշեն երկաթգծի կայարանին կից ավանի (այժմ՝ Բագրավան երկաթգծին կից ավան, Անիի շրջ.) ծխական դպրոց

Երևանի թեմի Ալեքսանդրապոլի գավառի հայ եկեղեցական ծխական դպրոցների 1916—17 ուս. տարվա ցուցակում երկու տարբեր դպրոցներ են ցույց տրված «Բուդդաշեն» և «Բոդդաշեն» կոչված գյուղերում։ Վերջիններ հավանաբար հենց Բուդդաշեն երկաթգծի կայարանին կից ավանն է, որի ծխական դպրոցը 1917-ին ունեցել է երկամյա դասընթաց (ուրեմն բացված է եղել 1—2 տարի դրանից առաջ)։ Ունեցել է մի ուսուցիչ և 60 աշակերտ (10 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1-56,

Բուղդաշեն (այժմ՝ Բագրավան, Անիի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1891-ին։ 1894-ին համալրվել է միդասյան արական դպրոց, իսկ 1895-ին ունեցել է 27 աշակերտ (2 աղջիկ)։ 1896-ին փակվել է։ Վերաբացվել է 1905-ին, ունենալով 33 աշակերտ (բոլորը տղաներ)։

Այս դպրոցի հետագա տարիների ճակատագիրը մեզ անհայտ է։ Միայն Երևանի թեմական տեսչի 1913-14 ուս. տարվա հաշվետվության մեջ նշված է, որ Բուղդաշեն գյուղի ծխական դպրոցը այդ ուսումնական տարում փակվել է (պատճառը չի ասված)։ Մի այլ փաստաթղթից երևում է, որ այդ դպրոցը 1913-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 27 աշակերտ։ 1915-ին Բուղդաշենի ծխական դպրոցին նպաստ է տրվել դպրոցական հատուկ ֆոնդից։ 1916-ին և 1917-ին գործել է՝ 49 աշակերտով (15 աղջիկ)։

1916—17 թվերին Բուղդաշեն գյուղում գործել է նաև պետական միդասյան դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 48-52; գ. 1521, թ. 6, ֆ. 7; գ. 120, թ. 2; ֆ. 48, գ. 598, թ. 88, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 865, թ. 29 և 76; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 29, «Արարատ», 1908, № 12, 1915, էջ 433, 1916, էջ 7, 1917, էջ 672։

Գյոզալդարա Հայ (այժմ՝ Գեղարդիր, Արագածի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

Հայ (կամ Նոր) Գյոզալդարա գյուղի ծխական դպրոցն առաջին անգամ հանդիպում է Ալեքսանդրապոլի վիճակում 1914-1917 թվականներին բացված հայկական եկեղեցական ծխական դպրոցների տեղեկագրում։ 1916—17 ուս. տարում գործել է, պահվելով տեղի ծխականների տուրքով։ Եղել է եռամյա դպրոց՝ 57 աշակերտով (3 աղջիկ)։ 1919-ին գործել է։

«Արարատ», 1917, №8, էջ 672; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1-56, ֆ. 48, ց. 1, գ. 511, թ. 5։

Գյորան (այժմ՝ Գոգարան, Սպիտակի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

Արխիվային մի փաստաթղթում բացման թվականը նշված է 1909-ը։ 1911-12 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց, ուր սովորել են 55 տղա, 6 աղջիկ։ 1913-14 ուս. տարում գործել է քառամյա, ունենալով 58 աշակերտ (2 աղջիկ), մի այլ փաստաթղթում՝ 64 աշակերտ։ 1917-ին գործել է, ունենալով 96 աշակերտ (16 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1-30; գ. 172, թ. 10, գ. 167, թ. 1-56; ֆ. 48, գ. 570, թ. 19, ֆ. 75/207, գ. 5, թ. 55, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 29; «Արարատ», 1917, №8, էջ 672;

Գյուլլիջա (այժմ՝ Սարահարթ, Սպիտակի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է։ Հավանաբար այդ թվականին էլ հիմնվել է, քանի որ չի հանդիպում նախորդ տարիների ցուցակներում։ Հիմնադրման տարում ունեցել է 30 աշակերտ (մի այլ տեղեկագրում՝ 22 աշակերտ)։ 1875-ին՝ 25 աշակերտ։ 1881-ին գործել է, ունենալով 40 աշակերտ։

Այս գյուղի ծխական դպրոցը հետագա տասնամյակների փաստաթղթերում այլևս չի երևում։ Հայտնի է, սակայն, որ 1916—17 թվերին Գյուլլիջա գյուղում գործել է պետական միդասյան դպրոց, որը և 1918—19 ուս. տարում ազգայնացվել է։ 1918—19 ուս. տարում այն գործել է որպես հայկական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 13-14, գ. 30, թ. 21, ֆ. 75/207, գ. 5, թ. 55, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47։

Դաղալու (այժմ՝ Եղնիկ, Թալինի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

1895-ի օգոստոսի վերջերին Բենիկ վարդապետը եղել է Դաղալու գյուղում և հորդորել գյուղացիներին՝ հիմնելու ծխական դպրոց։ Կաթողիկոսին ուղղված իր զեկուցագրում նա հայտնում է, որ Դաղալուի եկեղեցուն մոտ գտնվող կալատիրոջը (Հովհաննես անունով) «խնդրեցի ազատեցի, ստիպեցի և հորդորեցի» իր կալատեղը ձրիաբար տալ՝ դպրոցի շինք շինելու համար և ինձ «անսաց այրն այն»։

Այնուհետև վարդապետն ասում է, որ ժողովրդի հետ միասին գնացինք այնտեղ և դրեցինք դպրոցի հիմքը։

Ավարտվե՞լ է արդյոք այս շենքը և բացվե՞լ է արդյոք դպրոցը, մենք չգիտենք։ Հետագա տարիների փաստաթղթերում ևս Դաղալու գյուղի անունով դպրոց մեզ չի հանդիպել։ Այն ցույց չի տրված նաև Ալեքսանդրապոլի վիճակի դպրոցների 1914—1917 թթ. ցուցակում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 328, թ. 37։

Դահաուլի (այժմ՝ Գետք, Ախուրյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1871-ին։ 1873-ին ունեցել է 38, 1875-ին՝ 40 աշակերտ։ 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1887-ին։

1895-ի սկզբին եղել է միդասյան դպրոց՝ 34 աշակերտով (4 աղջիկ), 1896-ին փակվել է։ Վերաբացվել է 1905-ի վերջերին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 3 ուսուցիչ, 62 աշակերտ (12 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ 1913—14 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց, ուր սովորել են 54 տղա և 5 աղջիկ։ 1917-ին գործել է, իսկ 1918—19 ուս. տարում՝ ոչ։

Հայ դպրոցների երկրորդ փակումից հետո Դահաուլիի ծխական դպրոցի փոխարեն գործել է պետական դպրոց, որն իր գոյությունը պահպանել է նաև հետագայում։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ.13; գ. 43, թ. 225; գ. 50, թ. 64; ֆ. 7, գ. 165, թ. 1-56; ՎՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 78, ց. 11, գ. 140, թ. 64; «Արարատ», 1917 էջ 671։

Դանագիրմազ (այժմ՝ Նիգավան, Ապարանի շրջ.) գյուղի դպրոց

1918—19 ուս. տարում գործել է, լինելով միդասյան տարրական դպրոց։ Մինչ այդ Դանագիրմազ գյուղում գործել է 1912-ին բացված պետական (ռուսական) միդասյան դպրոց, որը և 1918-ին վեր է ածվել հայկականի։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 55; ֆ. 19, գ. 1521, թ. 6։

Դարբազ (այժմ՝ Դարպաս, Գուգարքի շրջ.) գյուղի տարրական դպրոց

1918-19 ուս. տարում գործել է, լինելով միդասյան տարրական դպրոց, իսկ թե երբ է հիմնվել, մեզ անհայտ է։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 55։

Դիրաքլար (այժմ՝ Կառնուտ, Ախուրյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Մեր կարծիքով միանգամայն թյուրիմացաբար «Արարատ» ամսագիրը Դիրաքլար գյուղը ցույց է տվել Կարսի մարզում, որտեղ այդ անունով գյուղ երբեք չի եղել։ Պաշտոնական տեղեկատու տվյալները միշտ էլ այն ցույց են տվել Աշնակի գավառում։

Այս դպրոցը առաջին անգամ հիշատակվում է 1913—14 ուս. տարվա ցուցակներում, և իրոք, այդ ուս. տարում էլ բացվել է։ Ունեցել է եռամյա դասընթաց, 70 աշակերտ (բոլորը տղաներ)։ Թեմական տեսչի հաշվետվության մեջ նույնպես ասված է, որ Դիրաքլար գյուղի դպրոցը բացվել է 1913—14 ուս. տարում։ 1917-ին գործել է, ունենալով 64 աշակերտ (14 աղջիկ)։ Այն ցույց չի տրված 1918—19 ուս. տարում գործած դպրոցների ցուցակում։ Նշանակում է քաղաքական ոչնպաստ պայմանների հետևանքով այդ դպրոցը ևս ժամանակավորապես դադարել է գործելուց։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 10; գ. 167, թ. 1-56, ֆ. 48, գ. 598, թ. 88; ֆ. 75/207, գ. 5, թ. 55, «Արարատ», 1913, N11, էջ 992, 1917, էջ 671։

Դուզքենդ Մեծ (այժմ Ախուրյան) գյուղի ս. Աստվածածին եկեղեցու ծխական դպրոց

Արխեվայլն մի փաստաթղթում նշված է, որ այս դպրոցը հիմնվել է 1888-ին։ 1896-ին գործել է, նույն թվականին էլ փակվել է, նրա փոխարեն բացվել է պետական դպրոց։ Վերաբացվել է 1906-ին՝ որպես արական ծխական դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ, 49 աշակերտ, որոնցից միայն մեկը՝ աղջիկ։

1908—09 ուս. տարուց նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ 1911—12 ուս. տարում եղել է քառամյա արական դպրոց՝ 67 աշակերտով։ 1913—14 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 50-ի (բոլորը տղաներ), մի այլ փաստաթղթի համաձայն, ընդհակառակը, այդ թիվը հասել է 100-ի (6 աղջիկ)։ 1917-ին նպաստ է ստացել հայ բարեգործական ընկերության կենտրոնական կոմիտեից։ Ունեցել է 84 աշակերտ (9 աղջիկ)։

1918—19 ուս. տարում չի գործել։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 530; գ. 172, թ. 10; գ 56; գ. 182, թ. 7; գ. 167, թ. 1-56, գ. 197, թ. 116; ֆ. 48, գ. 570, թ. 29; գ. 596, թ. 26; ֆ. 75/207, գ. 5, թ. 55; ՎՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 5717, թ. 6, ֆ. 13, ց. 11, գ. 261, թ. 29; ֆ. 12, ց. 7, գ. 866, թ. 158, «Արարատ», 1909, N1, էջ 101, 1917, էջ 671։

Եկանլար (Եգյանլար, այժմ՝ Արևշատ, Արթիկի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցը գործել է 1880-ական թվականների սկզբներից, գուցե 70-ական թվականներից։ 1884-ին «Նոր-Դարը» առաջարկել է Թիֆլիսի բարեգործական ընկերությանը՝ օգնություն ցույց տալ Եկանլար գյուղի Հայաբնակների դպրոցին։ Նույն թվականին «Մեղու Հայաստանի» լրագրում

գրվել է, որ տիրացու Հալաճյանցը իր համար տուն է շինել և այնտեղ գյուղի երեխաներին «կարդացնում» է։ Հոդվածագիր «Ալեքսանդրապոլցին» առաջարկում է նրա դպրոցը դարձնել հասարակական սեփականություն և այն ժամանակ միայն ցույց տալ օգնություն։

1885-ին այս դպրոցը ևս եկեղեցական ծխական մյուս դպրոցների հետ միասին փակվել է, ուրեմն այն չի համարվել մասնավոր դպրոց։ Հետագա տասնամյակների փաստաթղթերում այլևս չի երևում։ Հայտնի է, որ Եգյանլար գյուղում գործել է պետական դպրոց, որտեղ 1917 թ. սովորած բոլոր 50 երեխաներն էլ եղել են հայեր։

«Նոր-Դար», 1884, № 142, «Մեղու Հայաստանի», 1884, № 74։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 63, ֆ. 19, գ. 280, թ. 45։

Զարնջա (Թալինի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Զարնջա (Զարնջի) գյուղը նախկինում մտել է Ալեքսանդրապոլի գավառի մեջ։

Այդ գյուղի ծխական դպրոցը բացվել է 1913-ի վերջերին՝ գյուղի հասարակության որոշմամբ և կաթողիկոսի թույլտվությամբ։ Ինչպես երևում է, այն երկար կյանք չի ունեցել։ Այն չի ցույց տրված Ալեքսանդրապոլի վիճակի դպրոցների 1917-ի ցուցակում։

«Արարատ», 1913, № 12, էջ 1086։

Թոմարտաշ (այժմ՝ Վարդաբար, Արթիկի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման թվականը մեզ անհայտ է։

1884-ին գործել է, 1885-ին՝ փակվել։ Հետագա մի քանի տասնամյակների ցուցակներում ու տեղեկագրերում չի երևում։

Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարության 1912 թ. մի հայտարարության մեջ նշված է, որ Թոմարտաշ գյուղում մինչև 1910 թվականը գործել է եկեղեցական ծխական դպրոց, որն ունեցել է մինչև 180 աշակերտ-աշակերտուհի, իսկ 1911-ին «ժողովուրդը իր չբավորությունը պատճառաբանելով» այդ դպրոցը վեր է ածել պետականի, նրա շենքն ու գույքը «հանձնելով պետական դպրոցի վարչությանը»։

Հայտնի է, սակայն, որ Թոմարտաշ գյուղում պետական դպրոցը գործել է դեռևս 1908 թվականից (հավանաբար հետո փակվել է և նորից բացվել՝ ծխականի փոխարեն)։ Պետական (ռուսական) դպրոցը գործել է մինչև 1917 թ., իսկ 1918-ից գործել է հայկական։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 64; ֆ. 48, ց. 1, գ. 577, թ. 4; ֆ. 19, գ. 1521, թ. 2-7։

Թոփաղի (այժմ՝ Հացիկ, Ախուրյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1870-ի նոյեմբերին։ 1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 15 աշակերտ, 1875-ին՝ 20 աշակերտ, 1881-ին՝ 1 ուսուցիչ, 20 աշակերտ։ Հետագա երկու տասնամյակների ցուցակներում այլևս չի երևում։ Սակայն հայտնի է, որ 1905-ին այն վերաբացվել է, ունենալով 50 աշակերտ (բոլորը տղաներ)։

1907—08 ուս. տարում եղել է արական ծխական դպրոց, ուր սովորել են 65 տղա։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։

Հետագայում դպրոցը գտնվել է նյութական սուղ պայմաններում։ Այդ պատճառով հարց է հարուցվել, որպեսզի նրան նորից նպաստ տրվի Բաքվի հայ մշակութային միության կողմից, սակայն միությունը չի կարողացել բավարարել այդ պահանջը։ Այդ պատճառով 1909-ից հայկական դպրոցի փոխարեն Թոփաղի գյուղում բացվել ու գործել է պետական միդասյան դպրոց, որը 1918-ին ազգայնացվել է։

«Արարատ», 1871, Ա, էջ 58։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 13-14; գ. 30, թ. 21; գ. 182, թ. 7; գ. 492, թ. 116, ֆ. 19, գ. 1521, թ. 7։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1525, թ. 47։
«Արարատ», 1908, № 12, 1909, № 1, 80—81, «Նոր դպրոց», 1908, № 4, էջ 84։

Իմրխան (այժմ՝ Սարատակ, Արթիկի շրջ.) գյուղի ծխական դպրոց

1884-ին գործել է, 1885-ին՝ փակվել։ Հետագա երկու տասնամյակների փաստաթղթերում այս դպրոցին այլևս չենք հանդիպում։

Հայտնի է միայն, որ 1905-ի վերջերին այն վերաբացվել է, սակայն ինչ-ինչ պատճառներով նորից փակվել։ Վերաբացվել է 1913—14 ուս. տարում, լինելով եռամյա խառը դպրոց, ուր սովորել են 35 տղա, 18 աղջիկ։ Մի այլ փաստաթղթում սովորողների թիվը նշված է 53։ 1916-ին գործել է։ 1917-ին նպաստ է ստացել դպրոցական ընդհանուր ֆոնդից։ Այդ թվականին ունեցել է 83 աշակերտ (12 աղջիկ)։
1918—19 ուս. տարում չի գործել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 64; ֆ. 7, գ. 172, թ. 10; գ. 167, թ. 1-56; գ. 492, թ. 116; ֆ. 48, գ. 598, թ. 88; ֆ. 75/207, գ. 5, թ. 55; «Արարատ», 1913, էջ 1085, 1916, № 1-2, էջ 7; 1917, էջ 671։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 6; ֆ. 13, ց. 21, գ. 264, թ. 29։

Խլի Ղարաքիլիսա Փոքր (այժմ Ազատան, Ախուրյանի շրջ.) գյուղի արական ծխական դպրոց

Մի պաշտոնական փաստաթղթում նշված է, որ այս դպրոցը հիմնվել է 1883-ին, սակայն դա ճիշտ չէ, քանի որ այն ցույց է տրված դեռևս 1871-ին գործած դպրոցների ցուցակում (ունեցել է 30 աշակերտ)։ Գործել է նաև 1872-ին և 1873-ին։ 1875-ին ունեցել է 32 աշակերտ։ 1882-ին փակվել է։ Վերաբացվել է 1883-ին։ Դա առիթ է տվել այդ թվականը նրա հիմնադրման տարեթիվ համարելու։ 1884-ին գործել է, իսկ 1885-ին՝ փակվել։ 1887-88 ուս. տարում գործել է։ Չգիտենք, թե ինչու չի նշված 1888-89 ուս. տարում վիճակագրական տեղեկագրում։ 1890-ին եղել է միդասյան, իսկ 1894-ին՝ երկդասյան դպրոց՝ 70 աշակերտով (10 աղջիկ)։ 1896-ին նորից է փակվել, վերաբացվելով միայն 1905-ի վերջերին, որպես երկսեռ դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 140 աշակերտ, 22 աշակերտուհի և 3 ուսուցիչ։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ Ազգաբանագրագրի հոգեոր վարչության 1912-ի հոկտեմբերի զեկուցագրում նշված է, որ Խլի Ղարաքիլիսա գյուղի ծխական դպրոցը 1911-ին վեր է ածվել պետականի, իսկ նրա շենքն ու գույքը հանձնվել են պետական դպրոցի վարչությանը։ Մասնաց ծխական դպրոցը 1913—14 ուս. տարում նորից գործել է, ունենալով 115 աշակերտ (22 աղջիկ)։ Գործել է նաև 1917-ին՝ 239 աշակերտով (60 աղջիկ)։ 1919-ին նույնպես գործել է։

Փոքր Ղարաքիլիսա գյուղում պետական դպրոց է գործել դեռևս 19-րդ դ. վերջերից, բայց, ըստ երևույթին, այն փակվել է հայ դպրոցների վերաբացման կապակցությամբ և նորից բացվել 1911-ին։ 1917-ին եղել է երկդասյան։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 48-52; գ. 953, թ. 3-11; ֆ. 56, գ. 32, թ. 4; գ. 31, թ. 12; թ. 39; գ. 30, թ. 21; գ. 48, թ. 21; գ. 50, թ. 64; գ. 199; գ. 492, թ. 22; թ. 116; գ. 31, թ. 12; թ. 39; գ. 30, թ. 21; գ. 48, թ. 21; գ. 50, թ. 64; ֆ. 48, ց. 1, գ. 557, թ. 4; ֆ. 7, գ. 172, թ. 6-11; գ. 182, թ. 7; ֆ. 20, գ. 232, թ. 6; ֆ. 75/207, գ. 5, թ. 55; «Մեղու Հայաստանի», 1882, N 134; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 865, թ. 29 և 76; «Մուրճ», 1890, N 7, էջ 1021. «Արարատ», 1909, N 1, էջ 101; 1917, էջ 671։

Խլի Ղարաքիլիսայի (այժմ Ազատան, Ախուրյանի շրջ.) աղջիկների եկեղեցական ծխական դպրոց

1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում նշված է նաև Խլի Ղարաքիլիսայի աղջիկների դպրոցը, որը գործել է տեղի տղաների դպրոցից անջատ։ Այս դպրոցի հետագա ճակատագրի մասին մեզ ոչինչ հայտնի չէ։ Գիտենք միայն, որ 1894-ին Խլի Ղարաքիլիսայում եղել է մի երկսեռ դպրոց, որը և 1896-ին փակվել է։ Նշանակում է 1886-ի վերաբացումից հետո այդ դպրոցները միացել են։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 48-52; ֆ. 56, գ. 30, թ. 61-64.

Համամլու (այժմ Սպիտակ քաղաք) գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման մասին հակասական տեղեկություններ են տրված ժամանակի մամուլում։ Այսպես, «Արարատ» ամսագրի 1871 թվականի Թ համարում տպագրված մի թղթակցությունից կարելի է կռահել, որ Համամլուի դպրոցը հիմնվել է 1865 կամ 1866 թվականին, մինչդեռ նույն ամսագրի նույն թվականի ԺԸ համարում տպագրված մի այլ հոդվածում, որն, ի դեպ, գրված է առաջին հոդվածի հեղինակի դեմ, հաստատվում է, որ Համամլուի դպրոցը հիմնվել է հայանի դպրոցասեր շալալոյլեցի Գեորգ և Միքայել Խանազյանների կողմից 1852 թվականին՝ Ղարաքիլիսայի և Ջալալոյլու դպրոցների հետ միասին։

1871 թվականի սկզբներին կաթողիկոսին գրած մի գրության մեջ ինքը՝ Միքայել Խանազյանը ևս նշում է, որ Ղարաքիլիսայի և Համամլուի ուսումնարանները հիմնվել են «ի մենջ յեղբարց Խան-Ադանցյամեն 1852»։

Այս թվականն, իհարկե, ոչ մի կապված չի հարուցում։

1869-ին Միքայել Խանազյանը վերահաստատվել է այդ դպրոցների գլխավոր վերատեսուչ։ Ազգաբանագրագրի վիճակային փոխանորդի մի բողոք-հայտարարությունից իմանում ենք, որ Մ. Խանազյանը նույն պաշտոնում է եղել նաև 1876-ին։

Փոխանորդը հայտնում է, որ Համամլուի դպրոցը գտնվում է «արատավեալի գրության մեջ», մինչդեռ Խանազյանը դպրոցի գումարները տալիս է ավել զանազան մարդկանց և հույս չկա, որ կարողանա նրանցից հետ ստանալ։ Մեկ թվում է, որ փոխանորդի այս բողոքի մեջ զգալի դեր է խաղացել անձնական վիրավորանքը, քանի որ նրա իսկ խոստովանությամբ Խանազյանը հրաժարվել է նրան հաշիվ տալ դպրոցի եկամուտների ու ծախսերի մասին։

Այս դպրոցը 1870-ին ունեցել է 62, 1873-ին՝ 20, 1881-ին՝ 70 աշակերտ։

1881-ին փակվել է, հավանաբար վերաբացվելով 1883-ին։ 1885-ին նորից փակվել է, վերաբացվելով 1887-ին։ 1888-ին եղել է միդասյան դպրոց՝ 52 աշակերտով և 3 ուսուցչով։ Երրորդ անգամ փակվել է 1896-ին և վերաբացվել 10 տարի հետո՝ 1905-ին, որպես խառը (երկսեռ) դպրոց։

1907—08 ուս. տարում ունեցել է 97 աշակերտ, 20 աշակերտուհի։ 1911-12 ուս. տարում եղել է եռամյա տարրական դպրոց՝ 116 աշակերտով (16 աղջիկ)։ Այս դպրոցին զուգահեռ Համամլու գյուղում (կոչվել է նաև Սպիտակ) դեռևս 19-րդ դարի վերջերից գործել է պետական դպրոց։ Ալեքսանդրապոլի հոգևոր վարչությունը Նուլնիսկ 1912-ի հոկտեմբերին գրել է, որ 1911-ից Համամլուի ծխական դպրոցի շենքը հանձնվել է պետական դպրոցին, իսկ առաջինի համար վարձվել է «առանձին սենյակ»։ Ծխական դպրոցը 1914-1917 թթ. գործել է, ունենալով 60 աշակերտ (10 աղջիկ)։ Այն 1918-19 ուս. տարում եղել է երկդասյան։

«Արարատ», 1869, Ա, էջ 16 ; 1871 թ., ԺԹ; 1917, էջ 672; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 29, թ. 21; գ. 43, թ. 15; գ. 30, թ.21; գ. 50, թ. 65-68; գ. 21, թ. 97; գ. 111, թ. 87; գ. 33, թ. 21; գ. 199, թ. 17-23, գ. 132, թ. 7; ֆ. 157, թ. 30; գ. 172, թ. 10; ֆ. 20, գ. 113, թ. 3-6; ֆ. 48, գ. 577, թ. 4; ֆ. 75/207, գ. 3, թ. 55; «Վիճ. տեղեկ. 1888-89 ուս. տ.», էջ 60; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; ֆ. 12, գ. 1, գ. 865, թ. 28 և 76, «Մեղու Հայաստանի», 1882, N 134;

Համամլու գյուղի աղջիկների ծխական դպրոց

Համամլվեցի Ա. Տեր-Սիմոնյանը և իր կինը 1894-ի ամռանը հայտնել են կաթողիկոսին, որ մտադիր են իրենց հաշվով բաց անել աղջիկների միդասյան դպրոց տեղի աղքատ երեխաների համար և խնդրել են նրա օրհնությունն ու թույլտվությունը։

Կաթողիկոսը նույն թվականի սեպտեմբերի 17-ի կոնդակով օրհնել է նրանց «բարենպատակ ձեռնարկությունը» և թույլ է տվել բաց անել հիշյալ դպրոցը։

Անկասկած այդ դպրոցը բացվել է, բայց երկար կյանք չի ունեցել։ Հետագայում Համամլուի աղաներն ու աղջիկները սովորել են միասին։

«Արարատ», 1894, էջ 351։

Համզաչիման (այժմ՝ Մարգահովիտ, Գուգարքի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1869-ին։ Ըստ «Արարատ» ամսագրի 1870-ին այս դպրոցի բարեկարգության և արդյունավետ գործունության համար բավականաչափ խոշոր գումար է հավաքվել (նվիրատվության կարգով) Համզաչիմանի, Մեծ Ղարաքիլիսայի, Ալեքսանդրապոլի, Գրիգիջանի և այլ վայրերի բնակիչներից։ Սակայն 10 տարի անց «Մեղու Հայաստանին» գրել է, որ 1872-ին Համզաչիման գյուղում գործել է «շինական ուսումնարան», որը գտնվելով նյութական ծանր պայմանների մեջ, շուտով փակվել է։

Հավատալի է սակայն, որ 1873-ին, 1874-ին և 1875-ին այս դպրոցը գործել է։ 1873-ին ունեցել է մեկ ուսուցիչ, 40 աշակերտ։ Գործել է նաև 1881-ին, ունենալով 45 աշակերտ։ 1882-ին փակվել է, հավանաբար, հարմար շենք չունենալու պատճառով։

Թեմական տեսուչ Պ. Պողոսյանի հորդորանքով գյուղի հասարակությունը 1884-ին (մի այլ փաստաթղթում՝ 1890-ին) դպրոցի համար կառուցել է հատուկ շենք։ 1885-ին փակվել է և վերաբացվել միայն 1890-ին։ 1891-ին եղել է միդասյան արական դպրոց՝ 50 աշակերտով։ 1895-ին աշակերտների թիվը ավելացել է 10-ով։ 1896-ին նորից է փակվել, վերաբացվելով 1905-ին։ Եղել է երկսեռ դպրոց՝ 92 աշակերտով (18 աղջիկ)։ 1907—08 ուս. տարում ունեցել է երեք ուսուցիչ, 86 աշակերտ և 80 աշակերտուհի, իսկ 1910-ին՝ ընդամենը 100 աշակերտ և 2 ուսուցիչ։

Ալեքսանդրապոլի հոգևոր իշխանությունը 1912-ի հոկտեմբերին գրել է, որ «Համզաչիման գյուղում մինչև անցյալ ուսումնական տարին գոյություն է ունեցել հայոց ծխական դպրոց, իսկ անցյալ սեպտեմբերից միջոցների սղության պատճառով այլևս չի բացվել. այդ ժամանակ պետական դպրոցների տեսուչը, օգտվելով հանգամանքից, բաց է արել պետական դպրոց և բռնի կերպով գետնեղել է այն ծխական դպրոցի շենքում»։

Համզաչիման (Բոզլբենդ) գյուղում պետական դպրոց է գործել դեռևս 19-րդ վերջերից, սակայն, ըստ երևույթին, հայ դպրոցների վերաբացումը թույլ տալուց հետո այն փակվել է և նորից բացվել 1911-ին։ 1917-ին այն եղել է երկդասյան դպրոց, ունենալով 32 աշակերտ (բոլորը տղաներ)։

Համզաչիմանի հայկական ծխական դպրոցը 1915-ին գործել է, նպաստ ստանալով այդ նպատակով ստեղծված դպրոցական հատուկ ֆոնդից։ Գործել է նաև 1917-ին, ունենալով 124 աշակերտ (42 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 31, թ. 37; գ. 32, թ. 2-5; գ. 37, թ. 13; գ. 43, թ. 15, գ. 50, թ. 61-64, գ. 199, թ. 17-23; ֆ. 7, գ. 120, թ. 1; գ. 157, թ. 1-13; գ. 172, թ. 6-11, ֆ. 19, գ. 456, թ. 48; գ. 380, թ. 45; ֆ. 45, գ. 577, թ. 4; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 1585, թ. 47; ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 76; «Մեղու Հայաստանի», 1873, N 7, 1882, N 134, 1884, N 87; «Արարատ», 1871, ԺԱ, էջ 377; 1908, N 12; 1915, էջ 433; 1917, էջ 672, «Նոր դպրոց», 1910, N 3, էջ 871։

Հաջիղարա (այժմ՝ Լեռնապատ, Գուգարքի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Ղարաքիլիսայի գործակալության Հաջիղարա գյուղի դպրոցը հավանաբար հիմնվել է 1884-ից առաջ։ Համենայն դեպս հայտնի է, որ այդ թվականին թեմական տեսուչ Պ. Պողոսյանի հորդորանքով Հաջիղարա գյուղում կառուցվել է դպրոցական հատուկ շենք։

1896-ի սկզբներին գործել է, նույն թվականին էլ փակվել։ 1903-ին նրա շենքում բացվել է պետական դպրոց, որը գործել է մինչև 1917 թ. վերջերը։

1918—19 ուս. տարում Հաջիղաբայում գործել է հայկական տարրական դպրոց։

«Մեղու Հայաստանի», 1884, № 87։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 866, թ. 138։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, գ. 577, թ. 4; ֆ. 75/207, գ. 5, թ. 54; թ. 19; գ. 380, թ. 45։

Հաջիխալիլ (այժմ՝ Ծաղկաձորվիտ, Ապարանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1913-14 ուս. տարվա ցուցակներում։ Եղել է եռամյա խառը դպրոց, ունենալով մի դասարան և 35 աշակերտ (5 աղջիկ)։

Թեմական տեսչի զեկուցագրում նույնպես նշված է, որ այս դպրոցը բացվել է 1913-14 ուս. տարում։ Ունեցել է 35 աշակերտ։ Այն 1916-17 ուս. տարում գործել է, իսկ 1919-ին՝ ոչ։

Հաջիխալիլ գյուղում հայկական դպրոցի ուշ բացման պատճառն այն է, որ դեռևս մեր դարի սկզբից այնտեղ գործել է պետական դպրոց, որն իր գոյությունը պահպանել է մինչև 1917 թվականը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 10; ֆ. 48, գ. 598, թ. 88, ֆ. 75/207, գ. 5, թ. 55; ֆ. 19, գ. 380, թ. 45; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց.150, գ. 283, թ. 56;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 29; «Արարատ», 1917, էջ 671։

Հաջի Նազար (այժմ՝ Կամո, Ախուրյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

«Արարատ» ամսագիրը Հաջի Նազար գյուղը ևս թյուրիմացաբար ցույց է տվել Կարսի մարզում, մինչդեռ այնտեղ այդ անունով գյուղ չի եղել։ Այն գտնվել է Ալեքսանդրապոլի գավառում։

Ըստ «Արարատ» ամսագրի՝ այս գյուղի ծխական դպրոցը բացվել է 1913-ին։

Թեմական տեսուչը իր հաշվետվության մեջ նշել է, որ այդ դպրոցը բացվել է 1913-14 ուս. տարում։ Եղել է եռամյա երկսեռ դպրոց, ունենալով 71 աշակերտ (6 աղջիկ)։ 1916-ին ունեցել է 116 աշակերտ (8 աղջիկ)։ 1917-ին փակվել է։

1916—17 թվերին Հաջի Նազար գյուղում գործել է նաև պետական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 10, գ. 167, թ. 1-56; ֆ. 48, գ. 598, թ. 88, ֆ. 19, գ. 1371, թ. 6.
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 29, «Արարատ», 1913, № 11, էջ 992, 1917, էջ 671։

Հառիճավանքի (Ղփչաղ, այժմ՝ Հառիճ, Արթիկի շրջ.) գյուղի դպրոց

Հառիճավանքը եղել է հայ դպրության հնագույն օջախներից մեկը, ունենալով իր նշանավոր դպրոցը։ Սակայն հայ ժողովրդի եղերական պատմության ընթացքում այս դպրոցը ևս դադարել է գործելուց։

1850-ական թվականների սկզբին Ալեքսանդրապոլի մի խումբ երիտասարդներ կազմում են հատուկ ընկերություն, որն իր նպատակն է համարում Հառիճավանքի բարեկարգումը։ Այս գործը հաջողությամբ ավարտելուց հետո, այդ ընկերությունը 1857-ին (այլ աղբյուրներով 1855-ին կամ 1856-ին) Հառիճավանքին կից հիմնում է մի դպրոց, որի հիմնական խնդիրն էր հոգևորականների պատրաստումը։ Այդ մասին «Արարատ» ամսագիրը 1870-ի իր համարներից մեկում գրել է. «Հառիճի մենաստանի մահամերձ դրությունը օժանդակելու նպատակով սրանից քան տարի առաջ մի քանի ալեքսանդրապոլցի երիտասարդ խումբ, և ընկերական ճշմարիտ սիրով կապված՝ յուրյանց հանգանակով դրամական և այլ նյութական զոհաբերություններով շուրջ և կենդանացուցիչ պտակերը վերադարձրին իրեն։ Այսպես բոլոր վտանգը վանքից հեռացնելուց հետո այդ անձնվեր ընկերությունը ուսման ճաշակը առած լինելով, անհամբերությամբ երեք տասներորդ տարի է, որ հիմնած է այնտեղ ուսումնարան և հետևաբար նրա հետ կից մի հոյակապ ննջարան աշակերտաց համար, նրա մեջ արժանավոր եկեղեցականք պատրաստելու նպատակով...» («Արարատ», 1870 թ., 225)։ Ամսագրի այդ նույն համարում հրապարակվել են նաև Հառիճավանքի դպրոցն ընդունվելու կանոնները։

Դպրոցը եղել է գիշերօթիկ։ Սովորողները պարտավոր էին իրենց ապրուստի համար ամսական մուծել երկու ռուբլի։

1872-ին դպրոցն ունեցել է 63 աշակերտ, որոնցից 32 հոգի գիշերօթիկ, 31-ը՝ երթևեկ։

Հառիճի դպրոցը ավարտողներից ոմանք ուսուցչություն են արել ծխական դպրոցներում։ Այս դպրոցը ևս 1885-ին փակվել է, վերբացվելով 1886-ին։ 1888-ին եղել է երկդասյան դպրոց՝ 3 բաժանմունքով, ունեցել է 4 ուսուցիչ և 56 աշակերտ, որոնցից 23-ը՝ քահանաների որդիներ։

1890-ին ունեցել է 46 աշակերտ։ 1895-ին եղել է երկդասյան դպրոց՝ 96 աշակերտով։ 1896-ին փակվել է և վերաբացվել 1905-ին։ 1907—08 ուս. տարում եղել է խառը դպրոց, ունենալով 5 ուսուցիչ և 109 աշակերտ (12 աղջիկ)։ 1909-ից խոշոր գումարով նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից, այնտեղ արհեստագիտական ուսուցում մտցնելու համար։

1911—12 ուս. տարում ունեցել է 5-ամյա դասընթաց և 95 աշակերտ (5 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում դարձել է 6-ամյա դպրոց՝ 90 աշակերտով (18 աղջիկ)։ Մի այլ փաստաթղթում աշակերտների թիվը նշված է 96։ 1917-ին գործել է, ունենալով 136 աշակերտ (29 աղջիկ և 5 ուսուցիչ)։

1896-ի փակումից հետո Ղփշաղ գյուղում բացվել է պետական դպրոց, որը, ինչպես երևում է, գոյություն է ունեցել մինչև 1905-ը։

«Արարատ», 1870 թ., էջ 225, 1876; Ն. էջ 193; 1909, № 1, էջ 101; 1917, էջ 671, «Մեղու Հայաստանի», 1859, № 48, էջ 318-50, «Վիճ. տեղեկություններ 1888-89 ուս. տ.», էջ 62, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 38; ֆ. 56, գ. 50, թ. 65-68; գ. 237; գ. 30, թ. 31; գ. 199, թ. 17-23; ֆ. 7, ց. 1, գ. 120, թ. 1; գ. 157, թ. 30; գ. 163, գ. 171, թ. 10; թ. 7-11; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 8717, թ. 6; թ. 12; ց. 7, գ. 865, թ. 30; թ. 76; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 29։

Հոռոմ (Արթիկի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1868-ին։ Մի այլ փաստաթղթում հիմնադրման տարեթիվը նշված է 1875-ը, սակայն դա ճիշտ չէ, քանի որ 1873-ին Հոռոմ գյուղի դպրոցը փաստորեն գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ, 50 աշակերտ։ 1875-ին՝ 30, 1881-ին՝ նույնպես 30 աշակերտ։ 1885-ին փակվել է, 1887-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է աղաների միդասյան դպրոց՝ 59 աշակերտով։ 1890-ին աշակերտների թիվը իջել է 40-ի, 1895-ին՝ 49-ի։ 1896-ին նորից է փակվել, վերաբացվելով 1905-ին, որպես միդասյան արական դպրոց։

1907-08 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ, 43 աշակերտ (2 աղջիկ)։ 1913-14 ուս. տարում եղել է եռամյա երկսեռ դպրոց՝ 70 աշակերտով (12 աղջիկ)։ 1917-ին գործել է, ունենալով 155 աշակերտ (27 աղջիկ)։ 1918-ին չի գործել։

19-րդ դարի վերջերից Հոռոմ գյուղում գործել է նաև պետական դպրոց, որտեղ 1908-ին սովորած 129 աշակերտներից 128-ը եղել են հայեր։ 1917-ին այն եղել է երկդասյան դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 48-52; ֆ. 48-52; ֆ. 56, գ. 30, թ. 21; գ. 37, թ. 13-14; թ. 61-64; գ. 199, թ. 17-23; 492, թ. 116; ֆ. 7; ց. 1, գ. 157, թ. 1-30, գ. 182, թ. 7; գ. 120, թ. 2; ֆ. 75/207, գ. 5, թ. 55;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 8717, թ. 3;
«Վիճ. տեղ. 1888-89 ուս. տ.», էջ 61։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 116, թ. 62; գ. 253, թ. 3—11; գ. 1521, թ. 2—7։
«Արարատ», 1917, էջ 671։

Ձիթենաբով (Բազիրխանա) գյուղի (Անիի շրջան) ծխական դպրոց

Հիմնվել է 1868-ին։ 1875-ին ունեցել է 24 աշակերտ։ 1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 40 աշակերտ։ Գործել է նաև 1883-ին։ Մոտ երեք տասնամյակի վերաբերյալ տեղեկություններ չունենք։ 1907-ին վերաբացվել է։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց, ուր սովորել են 40 տղա, 5 աղջիկ, 1913—14 ուս. տարում՝ 58 տղա, 8 աղջիկ։ 1917-ին գործել է, ունենալով 108 աշակերտ (25 աղջիկ) և 2 ուսուցիչ։ 1918—19 ուս. տարում չի գործել։

«Արարատ», 1883, Գ. էջ 108, 1909, №1, էջ 101, 1917, էջ 672։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, գ. 570, թ.29; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 10; ֆ. 56, գ. 30, թ. 31; ֆ. 75/207, գ. 5, թ. 55։

Ղազանչի (այժմ՝ Մեղրաշեն, Արթիկի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Արխիվային մի փաստաթղթում այս դպրոցի հիմնադրման թվականը ցույց է տրված 1882-ը, սակայն դա ճիշտ չէ, քանի որ այդ դպրոցին մենք հանդիպում ենք դեռևս 1875-ին գործած հայ դպրոցների ցուցակում (ունեցել է 35 աշակերտ)։ 1885-ին փակվել է։ 1886—1891 թվականներին գործած հայ դպրոցների ցուցակում չի երևում, բայց քանի որ 1895-ին գործել է որպես երկդասյան դպրոց, ուստի այն պետք է վերաբացված լիներ տարիներ առաջ։

1896-ին նորից է փակվել, վերաբացվելով, հավանաբար, ավելի քան 10 տարի հետո՝ 1907—08 ուս. տարում։ Այս տարում ունեցել է 58 աշակերտ (բոլորը տղաներ), 1912-ին այն ցույց է տրված արդեն որպես խառը՝ երկսեռ դպրոց, ուր սովորել են 51 տղա և 9 աղջիկ։ 1913—14 ուս. տարում եղել է ֆառամյա դպրոց՝ 33 աշակերտով։

Այդ դպրոցին հանդիպում ենք նաև 1917 և 1919 թթ. ցուցակներում։ 1917-ին ունեցել է 96 աշակերտ (36 աղջիկ) և 3 ուսուցիչ։
1919-ին գործել է։

«Памятная книжка на 1904 г. Эриванской губернии» գրքում ցույց է տրված 1902—03 թվականներին Ղազանչի գյուղում գործած պետական (ռուսական) տարրական դպրոց։

Մեր կարծիքով դա թյուրիմացություն է։ Պետք է լինի Ղայդուլի-Ղազանչի (այժմ՝ Ղուկասյանի շրջ. Ղազանչի), քանի որ հաջորդ բոլոր տարիների ցուցակներում պետական դպրոց է ցույց տրված հենց այդ՝ Ղայդուլի-Ղազանչի գյուղում, իսկ Արթիկի շրջանի Ղազանչիում՝ ո՛չ։

ՀՍՍՀ, ֆ. 56, գ. 30, թ. 31; գ. 50, թ. 63; գ. 199, թ. 23; ֆ. 48, գ. 570, թ. 29; ֆ. 7, գ. 157, թ. 30; գ. 172, թ. 9; ֆ. 75/297, գ. 5, թ. 55;
ՎՍՀՍ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 863, թ. 29, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 29, «Աբրաամ», 1903, №1, էջ 85; 1917, էջ 671։
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 150, գ. 283, թ. 57։

Ղազարապատ (այժմ՝ Իսահակյան) գյուղի արական ծխական դպրոց

Մեծ վարպետի ծննդավայր Ղազարապատ գյուղի ծխական դպրոցի հիմնադրման առաջ թվականը հայտնի չէ։ Կաթողիկոսը 1889 թ. մարտի 22-ին կոնդակով հաստատել է «Շիրակի գավառի Ղազարապատ գյուղի Ալեքսանդրյան կենտրոնական արական եկեղեցական ծխական միդասյան ուսումնարանի» հոգաբարձությունն կազմը՝ բնակված Հարևան Սուվանովերդի, Ադին, Բարոլի, Զոփլի և Տավշանդշլաղ գյուղերի հասարակությունների կողմից։

Ղազարապատում կենտրոնական դպրոց բացելու փաստը ենթադրել է տալիս, որ այնտեղ ծխական դպրոց է գոյություն ունեցել ավելի վաղ։

Կենտրոնական դպրոցը Ալեքսանդրյան է կոչվել նրա հիմնադիր Ալեքսանդր Իսահակյանի անունով, որը և կաթողիկոսի կոնդակով նշանակվել է այդ դպրոցի պատվավոր հոգաբարձու։

Այս դպրոցը ցույց է տրված նաև 1890 թ. ցուցակներում։ Եղել է միդասյան արական ծխական դպրոց՝ 34 աշակերտով։

Չգիտենք, թե մինչև երբ է պահպանել իր գոյությունը։ Եթե մինչև 1895-ը գործել է, ապա հաջորդ տարում այն ևս փակվել է։

Ալեքսանդրապոլի փոխանորդի մի զեկուցագրից իմանում ենք, որ Ղազարապատ գյուղը 1908-ին դպրոց չի ունեցել։ Փոխանորդը գրել է. «Ղազարապատը Հարուտա գյուղ է և բանաստեղծ Ավ. Իսահակյանի հայրենիքը, որին պարտավորեցրել եմ հոգալ իրենց գյուղի համար»։ Այնուհետև նա ավելացրել է, որ Ավ. Իսահակյանի ջանքերով գյուղի հասարակությունը խոստացել է կառուցել դպրոցական շենք։

Փոխանորդը դիմել է Բաքվի հայ մշակութային միությանը, խնդրելով նպաստ տալ նաև Ղազարապատում բացվելիք դպրոցին, բայց այդ խնդրանքը չի բավարարվել։ Դպրոցն, իհարկե, բացվել է ու գործել։ 1917-ին ունեցել է երկամյա դասընթաց՝ 25 աշակերտով (5 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20, գ. 233, թ. 6; գ. 113, թ. 5; ֆ. 7, գ. 1, գ. 167, թ. 1—56; «Աբրաամ», 1889 թ., ժբ. էջ 572, 1909, №1, էջ 76 և 94։

Ղալթախչի (այժմ՝ Հարթագյուղ, Սպիտակի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Տարբերն պետական մարմինների կողմից Ղալթախչի գյուղի դպրոցի շենքը ընդունելու կապակցությամբ 1898-ին կազմված ակտից երևում է, որ այդ գյուղի դպրոցը գոյություն է ունեցել 1883 թվականից, սաներին տարիներին ունենալով 15—25 աշակերտ։

Նույն ակտից երևում է, որ դպրոցը 1885-ին փակվել է և այլևս չի բացվել, որի հետևանքով նրա գույքը ամբողջովին փչացել է, իսկ շենքը տրված է այնտեղ. «Ներկայումս իրենից ներկայացնում է քարերի կույտ»։

Դպրոցի չվերաբացվելու մասին ակտում կատարված նշումը իրականությանը չի համապատասխանում, քանի որ պաշտոնական փաստաթղթերի համաձայն Ղալթախչի գյուղի դպրոցը 1894-ին փաստորեն գործել է, 1895-ին եղել է երկդասյան դպրոց, իսկ 1896-ին նորից է փակվել։

Այս դպրոցի վերաբացման և հետագա շատ տարիների գործունեության մասին մեր ձեռքի տակ եղած վավերագրերը լռում են։ Գիտենք միայն, որ այն վերաբացվել է մեծ ուշացումով՝ 1913-ին։ 1917-ին գործել է, ունենալով 2 ուսուցիչ և 85 աշակերտ (3 աղջիկ)։ 1919-ին ևս գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 140, թ. 72; ֆ. 56, գ. 199, թ. 17—23; ֆ. 7, գ. 167, թ. 1—56; ՎՍՀՍ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 863, թ. 29 և 76; «Աբրաամ», 1913, №11, էջ 992; 1917, էջ 672։

Ղանլիջա Ներքին (այժմ՝ Վահրամաբերդ, Ախուրյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագիրը 1884-ի իր համարներից մեկում գրել է, որ Ներքին Ղանլիջա — Մարմաշեն գյուղում գործում է «Վահրամյան» ուսումնարանը, որը կառուցվել է 1860-ին՝ Ալեքսանդրապոլում։ 1884-ին այնտեղ սովորել են 50 երեխա՝ «մեծ մասամբ ուրիշ գյուղերից»։ Ալեքսանդրապոլում կազմակերպվել է այդ դպրոցին օգնող հատուկ ընկերություն։

Այս դպրոցը 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում չի երևում։ Մակայն նրա փոխարեն այդ ցուցակներում նշված է Մարմաշենի դպրոցը, որը 1884-ին գործել է և 1885-ին փակվել։ Կարծում ենք, որ ավելի զեկույցում խոսքը նույն դպրոցի մասին է։

Հետագա ավելի քան 20 տարվա փաստաթղթերում այս գյուղի դպրոցին այլևս չենք հանդիպում։ Գիտենք, որ այն նորից բացվել է 1906-ին, իսկ 1907—08. ուս տարում ունեցել է 35 աշակերտ (1 աղջիկ)։ Պահվել է Բաքվի Հայ մշակութային միության նպաստով։ Հավանաբար հետագայում դարձյալ փակվել է (Քեմական տեսչի կողմից փոխթեմակալին ներկայացված ցուցակում, ուր թվարկած են 1912-ին Ալեքսանդրապոլի շրջանում եղած բոլոր ծխական դպրոցները, այդ գյուղի դպրոցը չկա)։ Վերաբացվել է 1914-ին։ 1917-ին գործել է։

«Մեղու Հայաստանի», 1884, N9, «Արարատ», 1908, N12, ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56,գ. 182, բ. 9; ֆ. 48, գ. 1, գ. 570, բ. 29։
«Արարատ», 1909, N1, էջ 80; 1917, էջ 672։

Ղանլիջա Վերին (այժմ՝ Մարմաշեն, Ախուրյանի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Բայց կարծում ենք, որ «Մեղու Հայաստանի» լրագրի այն հաղորդումը, թե 1860-ին Ներքին Ղանլիջա-Մարմաշեն գյուղում հիմնվել է «Վահրամյան ուսումնարան», վերաբերվում է նաև այս գյուղին։ Այդ դպրոցը փաստորեն սպասարկել է հիշյալ երկու գյուղերին։ Վ. Ղանլիջա գյուղում 1873-ին գործել է առանձին ծխական դպրոց, որն ունեցել է 32 աշակերտ։ Ցուցչ է տրված նաև 1875-ի ցուցակներում (ունեցել է 23 աշակերտ)։ 1884-ին դպրոցի համար կառուցվել է նոր շենք։ Մեզ անհայտ պատճառներով այդ դպրոցը չի մտել 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակներում։ Ներքին և Վերին Ղանլիջա գյուղերի դպրոցների փոխարեն այդ ցուցակներում նշված է Մարմաշենի վանքի դպրոցը, որի մասին արդեն խոսեցինք։ Մի փաստաթղթում 1917-ին Վերին և Ներքին Ղանլիջաների ծխական դպրոցը ցույց է տրված միասին, ուրեմն երկու գյուղերն ունեցել են մի միացյալ դպրոց։ Մի այլ փաստաթղթում այդ թվականին ծխական դպրոց է ցույց տրված միայն Փոքր Ղանլիջա գյուղում։ Ունեցել է 91 աշակերտ (բոլորը տղաներ)։

«Մեղու Հայաստանի», 1884, N91։
ԼՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, բ. 13-14, գ. 48, բ. 21, գ. 50, բ. 61-64, ֆ. 7, գ. 167, բ. 1, «Արարատ», 1917, էջ 672։

Ղաչաղան (այժմ՝ Լեռնավան, Սպիտակի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

Ղաչաղան գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է Ալեքսանդրապոլի վիճակում 1914—1917 թվականներին բացված հայկական եկեղեցական ծխական դպրոցների տեղեկագրում։ 1916—17 ուս. տարում գործել է, պահվելով Քեմի դպրոցական ֆոնդի հատկացված նպաստով և գյուղի ծխականների տուրքով։ 1917-ին ունեցել է 62 աշակերտ (բոլորը տղաներ)։

«Արարատ», 1917, N8, էջ 672, ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 167, բ. 1—56։

Ղարաբոյա (այժմ՝ Խնկոյան, Սպիտակի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

1895-ին գործել է, լինելով միգասյան արական ծխական դպրոց։ 1896-ին փակվել է։ Վերաբացվել է մեծ ուշացումով՝ 1913-ին։ 1917-ին գործել է, ունենալով 72 աշակերտ (բոլորը տղաներ)։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 199, բ. 23, ֆ. 7, գ. 167, բ. 1-56,
ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, բ. 29 և 76, «Արարատ», 1913, էջ 992, 1917, էջ 672։

Ղարալ (այժմ՝ Կաթնաջուր, Սպիտակի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ հայտնի չէ։ Գիտենք միայն, որ 1879-ին և 1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 30—45 աշակերտ։ Այս դպրոցի տխուր պատկերը ևս տրված է «Մշակ» թերթում (1879 թ. N47)։ 1882-ին փակվել է։

Հետագա շատ տարիների ու տասնամյակների փաստաթղթերում Ղարալի դպրոցը այլևս չի հանդիպում։ Պատճառը չգիտենք, բայց չենք էլ կարող ասել, որ նա այդքան երկար ժամանակ փակ է մնացել։ Հայտնի է, որ 1908-ին գյուղի հասարակությունը որոշել է դպրոցի նոր շենք կառուցել։ 1916—17 ուս. տարում դպրոցը գործել է, ունենալով եռամյա դասընթաց և 70 աշակերտ (10 աղջիկ)։

1918—19 ուս. տարում գործել է որպես միգասյան դպրոց։

1912-ից Ղարալ գյուղում գործել է նաև պետական դպրոց։

«Մշակ», 1879, N47, «Մեղու Հայաստանի», 1882, N134։
ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 1585, բ. 47; ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, բ. 55; ֆ. 7, գ. 167, բ. 1; «Արարատ», 1909, N1, էջ 85։

Ղարաքիլիսա Մեծ (այժմ՝ Կիրովական քաղաք)
գյուղի արական ծխական դպրոց

Հայ ծխական հնագույն դպրոցներից մեկն է, որը հիմնվել է 1852-ին, ցայլաղլեցի Գեորգ և Միքայել Խանաղյան եղբայրների կողմից։

Դպրոցը 1870-ին ունեցել է 75, 1875-ին՝ 45, 1881-ին՝ 155 աշակերտ և 6 ուսուցիչ։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին

եղել է երկդասյան դպրոց՝ 116 աշակերտով և 4 ուսուցչով։ Այդ տարում փոխադրվել են հաջորդ դասարանները 55, մնացել են 48 և դպրոցն ավարտել են 16 հոգի։

1894-ին ցույց է տրված որպես միդասյան դպրոց՝ 139 աշակերտով։ Երկրորդ փակումը եղել է 1896-ին, վերաբացումը՝ 1905-ին (ունեցել է ընդամենը 25 աշակերտ)։

1807—08 ուս. տարում դարձել է երկսեռ, ունենալով 417 աշակերտ, որոնցից 220-ը՝ աղջիկներ։ 1911—12 ուս. տարում ունեցել է 5-ամյա դասընթաց, իսկ աշակերտների թիվը իջել է 371-ի (206 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում եղել է 6-ամյա դպրոց, ունենալով 477 աշակերտ (230 աղջիկ)։ 1917-ին գործել է։ Ունեցել է 12 ուսուցիչ և 479 աշակերտ (230 աղջիկ)։

1918—19 ուս. տարում գործել է որպես երկդասյան դպրոց։ 1919—20 ուս. տարում դարձել է գիմնազիա։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից վեր է ածվել երկրորդ աստիճանի աշխատանքային դպրոցի։

Անցած դարի վերջերից Մեծ Ղարաքիլիսայում գործել է նաև պետական երկդասյան դպրոց։ Այնտեղ 1908-ին սովորած 125 աշակերտներից 105-ը եղել են հայեր։

Գործել է նաև երկաթուղային պետական դպրոց, որտեղ 1917-ին սովորել են 54 ուս, 37 հայ և 6 վրացի երեխաներ։

«Արարատ», 1869, Ա, էջ 16—17, ԺԲ, էջ 396—397, 1917, էջ 671, ՀՍՍՀ ՊԿՊԱ ֆ. 56, գ. 23, թ. 21; գ. 30, թ. 21; գ. 50, թ. 63; գ. 111, թ. 87; գ. 182, թ. 7; գ. 199, թ. 17—23; ֆ. 7, ց. 1, գ. 58, թ. 37—410; գ. 157, թ. 1—30; գ. 163, թ. 6—11; գ. 120, թ. 1; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 95, թ. 2—11; ց. 22, գ. 1585, թ. 47; ֆ. 12, գ. 865, թ. 28 և 76; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. ա.», էջ 59։

Ղարաքիլիսա Մեծ (այժմ՝ Կիրովական քաղաք)
գյուղի իգական եկ. ծխական դպրոց

Հիմնվել է 1879-ին։ 1888-ին ունեցել է 6 ուսուցիչ, 42 աշակերտուհի։ 1885-ին փակվել է։ 1888-ին եղել է միդասյան դպրոց՝ 34 աշակերտուհիներով։ 1890-ին ունեցել է 40, 1894-ին՝ 88 սովորող։ Երկրորդ անգամ փակվել է 1896-ին, վերաբացվել 1905-ին, 1908-ին ունեցել է 4 բաժանմունք՝ 229 աշակերտուհիներով։

19-րդ դարի վերջերից Մեծ Ղարաքիլիսայում գործել է նաև աղջիկների պետական դպրոց։

«Արարատ», 1879, N10, էջ 412, 1909, N1, էջ 97։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 29—35, ֆ. 7, գ. 120, թ. 1, ֆ. 56, գ. 50, թ. 61—84, գ. 199, թ. 17—23; ֆ. 20, գ. 232, թ. 5; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. ա.», էջ 59; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխական դպրոցների 1911-12 թթ.», ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 50։

Ղափլի (այժմ՝ Գուսանագյուղ, Անիի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

Ղափլի (Ղափուլի) գյուղը եղել է Ալեքսանդրապոլի գավառի խոշոր գյուղերից մեկը՝ 1897-ին ունենալով 1466 բնակիչ։ Սակայն զարմանալի է, որ երկար ժամանակ այդ գյուղը իր դպրոցը չի ունեցել։ Միայն 1892-ին այնտեղ բացվել է ծխական դպրոց, որը մեկ տարի հետո՝ 1893-ի մայիսին էջմիածնի սինոդի որոշմամբ փակվել է։ Այդ որոշմամբ փակվել են նաև Երևանի թեմի շատ այլ դպրոցներ։ Իր որոշման մասին սինոդը հատուկ գրությամբ իրազեկ է դարձրել Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուին, առանց հայտնելու 22 ծխական դպրոց փակելու պատճառը։ Սինոդի գրության մեջ նշված է միայն, որ այդ դպրոցները փակվում են «մինչև ամենայն հայոց նորընտիր կաթողիկոսի (Խրիմյան Հայրիկի— Ս. Ն.) ժամանելը»։

Հետագայում Ղափլի գյուղում բացվել ու գործել է պետական դպրոց, իսկ ծխական դպրոցը վերաբացվել է երկու տասնամյակ հետո՝ 1913-ին՝ սեղի հասարակության որոշմամբ և կաթողիկոսի թույլտվությամբ։ 1917-ի ցուցակներում ցույց չի տրված։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 4559, թ. թ. 9, 10, 13։
«Արարատ», 1913, N12, էջ 1086, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 167։

Ղզլլոր (այժմ՝ Ղուկասյան, Ղուկասյանի շրջ.)
գյուղի դպրոց

Ղզլլոր գյուղում հայկական ծխական դպրոցի գոյությունը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1908-ին այնտեղ նման դպրոց բացելու փորձ է արվել, բայց ձախողվել է։

Հայտնի է, որ 1903 թվականից այդ գյուղում գործել է պետական (ռուսական) դպրոց։ Այնտեղ 1908-ին սովորել են 50 երեխաներ, բոլորը հայերը։ Նույնը նաև 1917-ին (54 երեխա)։ 1918-ին այն ազգայնացվել է։ 1918—19 ուս. տարում եղել է միդասյան տարրական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 55, ֆ. 19, ց. 1, գ. 953, թ. 8, գ. 386, թ. 45։
«Արարատ», 1909, N1, էջ 92։

Ղզլբիլիսա (այժմ՝ Կարմրավան, Ղուկասյանի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1913—14 ուս. տարվա տեղեկագրերում։ Այդ ժամանակ եղել է եռամյա արական դպրոց, ուր սովորել են 37 տղաներ։ Թեմական տեսչի զեկուցագրում նույնպես հաստատվում է այս դրդ-

բոցի 1913—14 ուս. տարում հիմնված լինելը։ 1917-ին գործել է, իսկ 1918—19 ուս. տարում չի գործել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 10; ֆ. 48, գ. 598, թ. 88; ֆ. 75/207, գ. 5, թ. 55; «Արարատ», 1917, էջ 672։

Ղշլաղ (այժմ՝ միացած Կիրովական քաղաքին) գյուղի ծխական դպրոց

Ղշլաղ գյուղի դպրոցը առաջին անգամ հանդիպում է 1896-ի ցուցակներից մեկում։ Նահանգապետը Կովկասի կառավարչապետին ուղարկած գրության մեջ հայտնել է, որ Երևանի նահանգի մի շարք գյուղերում (այդ թվում նաև Ղշլաղում) հայկական նոր դպրոցներ են բացվել այն բանից հետո, երբ կառավարությունը կարգադրություն է արել այդ դպրոցները հանձնել լուսավորության մինիստրությանը, իսկ շենքերկվելու դեպքում՝ դրանք փակել։

Հասկանալի է, որ փակվում է նաև Ղշլաղի դպրոցը, վերաբացվելով միայն 1907—08 ուս. տարում։ Այդ ժամանակ ունեցել է 2 ուսուցիչ, 93 աշակերտ (6 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ 1911-ին եղել է եռամյա խառը դպրոց, 1913-ին ունեցել է 1—3 ուսուցիչ, 144 աշակերտ (41 աղջիկ)։ 1917-ին գործել է, ունեցել է 5-ամյա դասընթաց, 7 ուսուցիչ և 235 աշակերտ (71 աղջիկ)։

1918—19 ուս. տարում չի գործել։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 866, թ. 158; ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 29;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, գ. 596, թ. 63, գ. 570, թ. 29; ֆ. 56, գ. 182, թ. 7, ֆ. 7, գ. 157, թ. 1—30, ֆ. 75/207, գ. 5, թ. 55., «Արարատ», 1917, էջ 672։
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 139, գ. 268, թ. 51։

Ղոնախղոան (այժմ՝ Ճիրակ, Ախուրյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 35 աշակերտ։ Ցույց է տրված նաև 1875-ի ցուցակներում (32 աշակերտ)։ Հետագա երկու տասնամյակների ցուցակներում չի երևում։

1895-ին եղել է միդասյան ծխական դպրոց, իսկ 1896-ին փակվել է։ Վերաբացվել է 1906-ին։ 1907—08 ուս. տարում եղել է արական դպրոց, ուր սովորել են 67 տղաներ։ 1913—14 ուս. տարում ունեցել է 4-ամյա դասընթաց, 86 աշակերտ։ 1917-ին գործել է, ունենալով 101 աշակերտ (22 աղջիկ), իսկ 1918—19-ին՝ ոչ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 13—14; գ. 20, թ. 21; գ. 182, թ. 7; ֆ. 7, գ. 172, թ. 10; ֆ. 75/207, գ. 5, թ. 55;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 865, թ. 29 և 76, «Արարատ», 1917, էջ 671։

Ղոնդաղասազ (այժմ՝ Ռյա-Թազա, Արագածի շրջ.) գյուղի դպրոց

1918—19 ուս. տարում գործել է, լինելով միդասյան տարրական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 55։

Ղոխդագիրման (այժմ՝ Հնաբերդ ավան, Արագածի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման թվականը մեզ անհայտ է։

1884-ին գործել է, 1885-ին՝ փակվել։ Հետագա տասնամյակների փաստաթղթերում այլևս չի երևում։ Հայտնի է, որ 1911-ից Ղոխդագիրման գյուղում գործել է պետական միդասյան դպրոց, որը և 1918-ին ազգայնացվել է։ Այն 1918—19 ուս. տարում գործել է որպես հայկական միդասյան դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ֆ. 50, թ. 63; ֆ. 75/207, գ. 5, թ. 55; ֆ. 19, գ. 1521, թ. 7։

Ղուլիջան (այժմ՝ Սպանդարյան, Արթիկի շրջ.) գյուղի դպրոց

Ալեքսանդրապոլի վիճակի հոգևոր փոխանորդը 1908-ին գրել է, որ Ղուլիջան գյուղը դպրոց չունի, բայց արդեն «հանգանակված է 435 ռ. նոր դպրոցի շենք կառուցանելու համար»։

Պետք է ենթադրել, որ այդ շենքը կառուցվել է, և դպրոցն էլ բացվել, բայց երկար կյանք չի ունեցել, քանի որ Ղուլիջան գյուղի դպրոցը առաջին անգամ ցույց է տրված Ալեքսանդրապոլի վիճակում 1914—1917 թվականների ընթացքում բացված դպրոցների ցուցակում։ 1917-ին ունեցել է 2-ամյա դասընթաց և 55 աշակերտ (5 աղջիկ)։

«Արարատ», 1909, № 1, էջ 86, 1917, № 8, էջ 672, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 1, գ. 157, թ. 1—56։

Ճզմլար (այժմ՝ Ցողամարգ, Ղուկասյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ալեքսանդրապոլի վիճակի հոգևոր փոխանորդը 1908-ին գրել է, որ Ճզմլար գյուղի ծխական դպրոցն ունի «հասարակ շենք», «երկու բաժանմունք մի սենյակում զետեղված», «մի ուսուցիչ տարրական կրթությամբ» և 32 աշակերտ (բոլորը տղաներ)։ Դպրոցը պահվել է թոշակա-

դրամով և մասնավոր նվիրներով։ Տարեկան ծախսը եղել է ընդամենը 80 ռուբլի։ Նախատեսվել է Բաքվի հայ մշակութային միությունից ևս ստանալ տարեկան 300 ռուբլի, բայց դա չի հաջողվել։ Դպրոցական նոր շենք կառուցելու համար պահանջվել է 300 ռուբլի, սակայն մշակութային միությունը հնարավորություն չի ունեցել հատկացնել այդ գումարը։

«Արարատ», 1909, № 1, էջ 97։

Ճլոխան (այժմ՝ Բենիամին, Ախուրյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ճլոխան գյուղի ծխական դպրոցը ևս առաջին անգամ հանդիպում է 1914—1917 թվականներին Ալեքսանդրապոլի վիճակում բացված հայկական եկեղեցական ծխական դպրոցների տեղեկագրում։ 1916—17 ուս. տարում գործել է, պահպանելով իր գոյությունը թեմի դպրոցական ֆոնդից ստացած նպաստով և գյուղի ծխական տուրքով։

«Արարատ», 1917, №8, էջ 672։

Մահմուդջուղ (այժմ՝ Պեմզաշեն քաղաքատիպ ավան) գյուղի եկեղեցական ծխական դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագրի 1884 թ. մի հոդվածում ասված է, որ Մահմուդջուղի վանքում 1860 թ. շինվել է «մի շքեղ դաստատուն յուր կարասիներով»։ Հետագայում, հավանաբար, այն փակվել է։ Նույն լրագիրը դեռևս 1869-ի սկզբներին գրել է, որ էջմիածնի սինոդը Դանիել քահանային նշանակել է Մահմուդջուղ գյուղի Աստվածամայր մատուռի միաբան, նրա վրա պարտավորություն դնելով այդ և մերձակա գյուղերից հավաքել մանուկներին, հոգ տանել «նոցա ուսման և մտավորական կրթության մասին»։

1883-ին գործել է, ունենալով 4 ուսուցիչ և 115 աշակերտ (եղել է ժամանակի գյուղական մեծ դպրոցներից մեկը)։ Հավանաբար, նախքան 1885-ը ինչ-ինչ պատճառներով փակված է եղել, քանի որ չի մտել այդ թվականին կառավարության կողմից փակված հայ դպրոցների ցուցակներում։

Մի փաստաթղթում նշված է, որ այս դպրոցը հիմնվել է 1891-ին, դա կնշանակի, որ Մահմուդջուղի նախկին դպրոցը երկար տարիներ չի գործել և վերաբացվել է միայն 1891-ին։ 1895-ի սկզբներին ունեցել է 38 աշակերտ (2 աղջիկ), իսկ հաջորդ տարում նորից է փակվել։ Վերաբացվել է 1905-ի վերջերին, ունենալով 43 աշակերտ։ 1908-ին չի գործել նյութական սղության պատճառով։ 1913—14 ուս. տարում եղել է

եռամյա խառը (երկսեռ) դպրոց՝ 69 աշակերտով (3 աղջիկ)։ 1917-ին գործել է, ունենալով 50 աշակերտ (5 աղջիկ)։

1918—19 ուս. տարում գործած դպրոցների ցուցակում չկա։

«Մեղու Հայաստանի», 1869, №5, էջ 34—35., 1884, №51, էջ 2—3։
«Արարատ», 1883, №5, 1908, №12., 1917, էջ 671։
ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 48—52; ֆ. 56, գ. 492, թ. 116; գ. 199, թ. 17—23; ֆ. 7, ց. 1, գ. 157, թ. 1—30; ֆ. 75/207, գ. 5, թ. 55;
ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 12, գ. 865, թ. 29 և 76; ֆ. 422, գ. 8717, թ. 6։

Մելիքքենդ (այժմ՝ Մելիքգյուղ, Արագածի շրջ.) գյուղի դպրոց

Նախկինում Մելիքքենդ գյուղը մտել է Ալեքսանդրապոլի գավառի մեջ։ 1912-ից Մելիքքենդ գյուղում գործել է պետական միդասյան դպրոց, որը և 1918-ին վեր է ածվել հայկականի։ 1918—19 ուս. տարում եղել է միդասյան տարրական դպրոց։

ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 55; ֆ. 19, գ. 1521, թ. 6։

Մաչթի (Մաջբթի, այժմ՝ Նոր Կյանք, Արթիկի շրջ.) գյուղի դպրոց

Ալեքսանդրապոլի վիճակի հոգևոր փոխանորդը 1908-ին գրել է, որ Մաչթի գյուղը ծխական դպրոց չունի, բայց ունի մեկ սենյակից բաղկացած դպրոցական շենք, և հասարակությունն էլ որոշել է նոր դպրոցական շենք կառուցել։ Դրանից կարելի է եզրակացնել, որ նախկինում այդ գյուղում ծխական դպրոց գործել է։ Այլ փաստաթղթերում այդ դպրոցը մեզ չի հանդիպել։ Չգիտենք նույնիսկ, արդյոք 1908-ից հետո այնտեղ ծխական դպրոց բացվել է, թե՞ ոչ։ Հայտնի է սակայն, որ Մաչթի գյուղում 1914-ին գործել է պետական միդասյան դպրոց, որի հիմնադրման թվականը մեզ անհայտ է։

«Արարատ», 1909, №1, էջ 54։

Մոլլա Գյոքչա (այժմ՝ Մարալիկ քաղաքատիպ ավան) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման թվականը մեզ անհայտ է։

1873-ին գործել է, ունենալով մեկ ուսուցիչ, 28 աշակերտ։ Հավանաբար այդ թվականին էլ բացվել է։ 1875-ին ունեցել է 40, 1881-ին՝ 35 աշակերտ։

Մոլլա Գյոքչա գյուղի հայկական ծխական դպրոցը այլևս չի երևվում հետագա շատ տասնամյակների փաստաթղթերում։ Հայտնի է, որ 1911-ից (գուցե և ավելի վաղ) այնտեղ գործել է պետական դպրոց, որը գոյություն է ունեցել մինչև 1917 թ. ներառյալ։ Հայկական ծխական դպրոցը նորից երևում է 1917-ին։ Ունեցել է 5-ամյա դասընթաց, 2 ուսուցիչ և 107 աշակերտ (24 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 13—14; գ. 30, թ. 21; ֆ. 19, ց. 1, գ. 1521, թ. 2—7; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; «Արարատ», 1917, էջ 672։

Մունջուղլի (այժմ՝ Միլքար, Արագածի շրջ.) գյուղի դպրոց

Մունջուղլի գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է Ալեքսանդրապոլի վիճակում 1914—1917 թթ. բացված հայ դպրոցների ցուցակում։ 1912-ից Մունջուղլի գյուղում գործել է պետական միգասյան դպրոց, որը և, հավանաբար, 1917-ին վեր է ածվել հայկականի՝ 30 աշակերտով (6 աղջիկ)։ 1918—19 ուս. տարում եղել է միգասյան տարրական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ., 75/207, գ. 5, թ. 55, ֆ. 19, գ. 1521, թ. 6, «Արարատ», 1917, էջ 672, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56։

Ցաղուրլի (այժմ՝ Մեղրուտ, Գուգարքի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման թվականը մեզ անհայտ է։

1882-ից առաջ գործել է և այդ թվականին փակվել։ 1884-ին դարձյալ գործել է, իսկ 1885-ին նորից փակվել։ Այնուհետև բացվել է միայն 1907-ին, որպես խառը դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է մեկ ուսուցիչ և 42 աշակերտ (6 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։

1912-ին եղել է խառը եռամյա դպրոց, ուր սովորել են 60 աշակերտներ (9 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում դարձել է քառամյա դպրոց՝ 87 աշակերտով (10 աղջիկ)։ 1917-ին գործել է, ունենալով 78 աշակերտ (21 աղջիկ), գործել է նաև 1919-ին։

«Մեղու Հայաստանի», 1882, № 134.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 61—64; գ. 182, թ. 7; ֆ. 48, գ. 570, թ. 29; գ. 511, թ. 6, գ. 596, թ. 63; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 572, թ. 10; ֆ. 75/207, գ. 5, թ. 55; «Արարատ», 1909, № 1, էջ 101; 1917, էջ 672։

Նալբանդ Նան՝ Նալբանդլու (այժմ Շիրակամուտ, Սպիտակի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1879-ին՝ կաթողիկոսի կոնդակով։ 1884-ին Նալբանդ գյուղի դպրոցի համար կառուցվել է հատուկ շենք։

Հետաքրքրական է, որ ընդամենը 18 տարի անց (1902-ին) այդ գյուղի ծխական դպրոցի համար կառուցվել է նոր շենք, որտեղ (ինչպես գրել է Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարությունը) «երբեք տարի հիշյալ դպրոցը գոյություն է ունեցել, իսկ 1905 թվից այդ դպրոցը վերածվել է պետականի, որը և մինչև օրս (1912 թ. —Ս. Խ.) պահպանում է իր գոյությունը նույն եկեղեցական շենքի մեջ՝ հայտնի չէ, թե ում թույլտվությամբ» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, գ. 579, թ. 4)։

Հայտնի է, որ Կովկասի հայկական բոլոր ծխական դպրոցները փակվել են 1896—1897 թվականներին և դրանց վերաբացումը թույլ է տրվել միայն 1905-ի օգոստոսին։ Զարմանալի է, որ Նալբանդ գյուղում 1902-ին գործել է հայկական ծխական դպրոց և նրա համար նույնիսկ կառուցվել է նոր շենք, քանի որ այդ տարիներին որոշ գյուղերում գործած հատ ու կենտ ազգային դպրոցները պահվել են իշխանություններից խիստ դաղտնի, այն էլ՝ մասնավոր տներում։

Ինչպես երևում է Նալբանդի դպրոցն էլ շատ երկար չի մնացել։ 1905-ին այն փակվել է և նրա փոխարեն բացվել է պետական դպրոց։ Այդ դպրոցում 1908-ին սովորել են 26 հոգի (բոլորը հայեր)։ Դպրոցն իր գոյությունը պահպանել է մինչև 1917 թվականի վերջերը։ Նալբանդ գյուղի ծխական դպրոցը ցույց է տրված Ալեքսանդրապոլի վիճակում 1914—1917 թվականներին գործած հայ դպրոցների ցուցակում։ 1917-ին ունեցել է եռամյա դասընթաց և 58 աշակերտ (6 աղջիկ)։

1918 ուս. տարում Նալբանդ գյուղում գործել է միգասյան տարրական դպրոց (հայկական)։

«Արարատ», 1879, № 10, էջ 413, 1917, էջ 672։
«Մեղու Հայաստանի», 1884, № 87.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, գ. 577, թ. 4; ֆ. 75/207, գ. 5, թ. 55; ֆ. 19, գ. 953, թ. 3—11; գ. 1521, թ. 2—7; ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56։

Նորաշեն գյուղի (Արթիկի շրջ.) ծխական դպրոց

Արխիվային մի փաստաթղթում հիմնադրման տարեթիվը նշված է 1882-ը, սակայն դա ճիշտ չէ, քանի որ Նորաշենի դպրոցը ցույց է տրված դեռևս 1875-ին գործած դպրոցների ցուցակում։ Այդ ժամանակ ունեցել է 1 ուսուցիչ և 26 աշակերտ։

Հավանաբար այն փակվել և վերաբացվել է 1882-ին։ 1883-ին գործել

է, ունենալով 45 աշակերտ։ 1885-ին նորից փակվել է, վերաբացվելով տարբերներ անց (90-ական թվականների սաստիկ կնճռին)։ 1896-ին նորից է փակվել։ Վերաբացվել է 1905-ին՝ որպես երկսեռ դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 3 ուսուցիչ և 75 աշակերտ (15 աղջիկ)։

1912-ին եղել է 4-ամյա խառը դպրոց, ուր սովորել են 71 տղա և 8 աղջիկ, 1913—14 ուս. տարում՝ 68 տղա, 7 աղջիկ։ 1916-ի հունվարին կամավորական կարգադրել է նպաստ տալ «Ալեքսանդրապոլի գավառի Նորաշեն գյուղի Հայոց եկեղեցական ծխական դպրոցին, ուր կրթվում են գաղթական որբեր ևս» («Արարատ», 1916, էջ 27)։ 1917-ին գործել է, ունենալով 2 ուսուցիչ և 90 աշակերտ (20 աղջիկ)։ 1918—19 ուս. տարում չի գործել։ 19-րդ դարի վերջերից Նորաշեն գյուղում գործել է նաև պետական միդասյան դպրոց, որը գոյություն է ունեցել մինչև 1917 թվականը։

ՀԱՄՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 30, թ. 31; գ. 199, թ. 23; գ. 182, թ. 7, ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 10; ֆ. 48, գ. 570, թ. 29; «Արարատ», 1883, N 5, 1908, N 12, 1909, N 1, էջ 92, 1916, էջ 27, 1917, էջ 672; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 79.

Որդնավ կամ Վարդաձոր գյուղի (այժմ՝ Ջրաշեն, Սպիտակի շրջ.) ծխական դպրոց

Հիմնվել է, հավանաբար, 1865-ին կամ 1867-ին՝ տեղի բնակիչ Բաղդասար Տեր-Բաղդասարյանի կողմից։ Դեռևս 1830-ական թվականների սկզբներին Բաղդասարյանի պապը Ալաշկերտից Արևելյան Հայաստան փոխադրվելիս իր հետ բերում է մի ավետարան, որը ունենալով բազմաթիվ ուխտավորներ, եկամտի աղբյուր է դառնում նրա բնատների համար։ Այդպիսի «եկամտաբեր ավետարանները» գտնվել են նաև այլ գաղթականների մոտ։ 1863-ին բոլոր այդ ավետարանները հավաքվում և էջմիածին են տարվում։ Վերոհիշյալ Տեր-Բաղդասարյանը գնում է էջմիածին և խնդրում իր պապի ավետարանը ետ տալ, խոստանալով իր մախսով Որդնավ գյուղում կառուցել դպրոցի երկսենյականոց մի շենք, իսկ ավետարանի ուխտավորներից ստացված եկամտով վճարել ուսուցչի աշխատավարձը։ Նրան ընդառաջում են, և նա կատարում է իր խոստումը։

Այս դեպքը վկայում է այն մասին, թե ինչպես են երբեմն ստեղծվել և պահպանվել մեր դպրոցները։

1871-ին գործել է։ 1872-ին ունեցել է 26, 1875-ին՝ 40, 1881-ին՝ 30 աշակերտ։ 1885-ին փակվել է։

Այս գյուղի ծխական դպրոցը հետագա տասնամյակների փաստաթղթերում այլևս չի հանդիպում։ «Արարատ» ամսագրում (1909 թ.)

նշված է, որ Որդնավ գյուղը ծխական դպրոց չունի, սակայն տեղի հասարակությունը որոշել է կառուցել դպրոցի նոր շենք, այն վերաբացելու նպատակով։ Եվ, իրոք, այն վերաբացվել է։ 1917-ին եղել է 2-ամյա արական դպրոց՝ 69 աշակերտով։

1916—17 թվականներին Որդնավում գործել է նաև պետական միդասյան դպրոց, որի բացման թվականը մեզ անհայտ է։

«Արարատ», 1870, ԺԹ. էջ 303—304, 1917, էջ 672, ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 7, գ. 31, թ. 12; գ. 30, թ. 21; ֆ. 56, գ. 37, թ. 13; գ. 43, թ. 15, ֆ. 19, գ. 1421, թ. 2—7; ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47։

Չիֆթալի (այժմ՝ Ջույգաղբյուր, Ղուկասյանի շրջ.) գյուղի դպրոց

1911-ից Չիֆթալի գյուղում գործել է պետական դպրոց, որը և 1918-ին ազգայնացվել է։ 1918—19 ուս. տարում եղել է միդասյան տարրական դպրոց։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 55; ֆ. 19, գ. 1521, թ. 7։

Զոռլի (այժմ՝ Լեռնագյուղ, Ղուկասյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցը մինչև 1908 թվականը եղած փաստաթղթերում և այլ աղբյուրներում ցույց չի տրված։ Կովկասի Հայոց բարեգործական ընկերության խորհուրդը 1908 թ. սեպտեմբերին որոշել է Ալեքսանդրապոլի գավառի Զոռլի գյուղի ծխական դպրոցին 200 ռ. նպաստ տալ։ Նշանակում է մինչև այդ գործել է։ Հավանաբար բացվել է 1907-ին կամ էլ 1908-ի սկզբին։ 1909-ին ունեցել է երկու բաժանմունք՝ 40 աշակերտով։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա խառը (երկսեռ) դպրոց, ունենալով 46 աշակերտ (3 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում ունեցել է 42 աշակերտ (2 աղջիկ)։ 1917-ին գործել է, ունենալով 60 աշակերտ (բոլորը տղաներ)։

«Նոր դպրոց», 1908, N3, էջ 84, ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 172, թ. 10, գ. 167, թ. 1—56, ֆ. 48, գ. 570, թ. 29, ֆ. 75/207, գ. 5, թ. 55, «Արարատ», 1917, էջ 672, ԿԶԲ ընկ. 1909 թ. անդեկագիրը, էջ 32։

Չոթուր (այժմ՝ Սարամեջ, Սպիտակի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Չոթուր գյուղի ծխական դպրոցը ևս առաջին անգամ հանդիպում է Ալեքսանդրապոլի վիճակում 1914—1917 թվականներին բացված հայկական եկեղեցական ծխական դպրոցների տեղեկագրում։ 1916—17 ուս. տարում գործել է, պահվելով գյուղի ծխականների տուրքով և թեմի դպրոցական ֆոնդից հատկացված գումարով։ Ունեցել է 70 աշակերտ (8 աղջիկ)։

«Արաքաս», 1917, №8, էջ 672; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 7, գ. 167, թ. 1—56։

Զրսիրլի (այժմ՝ Ջրառատ, Ախուրյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Արխիվային մի փաստաթղթում հիմնադրման տարեթիվը նշված է 1887-ը։ 1895-ին գործել է, լինելով միդասյան ծխական դպրոց։ 1896-ին փակվել է, վերաբացվելով 17 տարի հետո՝ 1911-ին։ 1912—13 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց, ուր սովորել են 84 տղա և 8 աղջիկ։ 1913—14 ուս. տարում դարձել է քառամյա, ունենալով 2 ուսուցիչ և 75 աշակերտ։ 1917-ին սովորողների թիվը իջել է 50-ի (4 աղջիկ)։

1918—19 ուս. տարում չի գործել։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30; ֆ. 56, գ. 199, թ. 23; ֆ. 48, գ. 570, թ. 29; ՎՍՍՀ ԳԿԳԱ, գ. 596, թ. 75, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 76, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 29։ «Արաքաս», 1917, էջ 671։

Պարնի Մեծ (Մեծ Բեբյանդ, այժմ՝ Մեծ Պարնի, Սպիտակի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Դեռևս անցած դարի 70-ական թվականներին Մեծ Պարնի գյուղում գործել է ծխական անվանված, բայց փաստորեն տիպիկ խալֆայական «Տեր-Թոդիկյանց» մի դպրոց, որի մասին «Մշակ» թերթը 1879 թ. գրել է. «... Մեծ Պարնի գյուղը ունի մի փառավոր եկեղեցի և մի գեղեցիկ դպրոց, որ իր ներքին և արտաքին դրությամբ շատ և շատ ստոր էր գյուղի ախոռներից, և որին «դպրոց» ասելը կատարյալ անամոթություն է» («Մշակ» 1879 թ. №645)։

Այնուհետև հոդվածագիրը տալիս է այդ դպրոցի զավեշտական և միաժամանակ ողբերգական պատկերը, որ այն ժամանակ բնորոշ էր հայկական շատ դպրոցների համար։ 1882-ին փակվել է։

Մեծ Պարնիի դպրոցին մենք այլևս չենք հանդիպում մինչև 1895 թ.։ Այդ թվականին այն գործել է, լինելով միդասյան արական դպրոց։

1896-ին փակվել է։ Վերաբացվել է 1905-ի վերջերին, որպես արական դպրոց։ Ինչպես երևում է, դարձյալ փակվել է, քանի որ այն ցույց է տրված 1914—1917 թթ. նոր բացված դպրոցների ցուցակում։ 1917-ին ունեցել է 91 աշակերտ (25 աղջիկ)։ 1911-ից Մեծ Պարնի գյուղում գործել է պետական երկդասյան դպրոց։

«Մշակ», 1879 թ., № 645, «Մեղու Հայաստանի», 1881, № 134, ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 199, թ. 21; գ. 492, թ. 116; ֆ. 75/207, գ. 5, թ. 55; ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 12, գ. 865, թ. 29 և 76., ֆ. 422, գ. 8717, թ. 6., «Արաքաս», 1909, №1, էջ 84, 1917, էջ 672։

Պարնի Փոքր (Փոքր Բեբյանդ, այժմ՝ Անուշավան, Արթիկի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Ցույց է տրված 1875-ին գործած դպրոցների ցուցակում (ունեցել է 35 աշակերտ)։

1884-ին գործել է, 1885-ին՝ փակվել։ Վերաբացվել է, հավանաբար, 1891-ից հետո, որովհետև մինչ այդ եղած ցուցակներում չի նշված։

1895-ին եղել է միդասյան դպրոց։ 1896-ին նորից փակվել է։ Վերաբացման և հետագա գոյության մասին մեր ձեռքի տակ եղած նյութերը լռում են։ Գիտենք, սակայն, որ 1912 թվականից Փոքր Բեբյանդ գյուղում գործել է պետական երկդասյան դպրոց, որը 1918-ին վեր է ածվել հայկականի։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 30, թ. 31; գ. 50, թ. 63; գ. 199, թ. 17—23; ֆ. 19, գ. 1521, թ. 7; ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 12, գ. 865, թ. 29, «Արաքաս», 1909, № 1, էջ 86։

Ջամշլու Մեծ (այժմ՝ Ալագյազ, Արագածի շրջ.) գյուղի դպրոց

Նախկինում Ջամշլու գյուղը մտել է Ալեքսանդրապոլի գավառի մեջ։

1902-ից Ջամշլու գյուղում գործել է պետական դպրոց, որը 1918-ին վեր է ածվել հայկականի։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 55։

Ջաջուռ (Ախուրյանի շրջ.) գյուղի եկեղեցական ծխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման մասին կան հակասական տվյալներ։ Ալեքսանդրապոլի գավառապետի պաշտոնական տեղեկագրում նշված է 1886-ը, սակայն դա ճիշտ չէ, քանի որ այդ դպրոցը մտել է 1885-ին փակված հայկական դպրոցների ցուցակում, հետևաբար գոյություն է ունեցել ավելի վաղ։

Երևանի թեմական տեսչի պահանջով այդ դպրոցի տեսչի կողմից ներկայացված տեղեկագրում նշված է, որ Ջաջուռի ծխական դպրոցը հիմնվել է 1878-ին։ Այս տեղեկությունն էլ հերքվում է մի այլ տեղեկագրով, ուր այդ դպրոցի հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1869-ը։ Հաստատապես հայտնի է, որ այն 1871-ին գործել է, ունենալով 28 աշակերտ։ Առաջին փակումից (1885) հետո վերաբացվել է 1886-ին, 1887—88 ուս. տարում գործել է, բայց չգիտենք, թե ինչու տեղ չի գտել 1888—89 ուս. տարվա հայ դպրոցների վիճակագրության մեջ։ 1894-ին եղել է միդասյան դպրոց՝ 50 աշակերտով։ 1896-ին կրկին փակվել է։ Վերաբացվել է 1906-ին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 3 ուսուցիչ, 95 աշակերտ (3 աղջիկ)։ 1909-ից նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ Ունեցել է «երեք սենյակից բաղկացած հարմարավոր շենք» («Արարատ»)։

1913—14 ուս. տարում եղել է եռամյա երկսեռ դպրոց՝ 93 աշակերտով (3 աղջիկ)։ 1917-ին եղել է քառամյա՝ 115 աշակերտով (15 աղջիկ)։ 1919-ին գործել է։

1916—17 թվերին Ջաջուռ գյուղում գործել է նաև պետական միդասյան դպրոց, որի բացման թվականը մեզ անհայտ է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ.7 և 48—52; գ. 46, թ. 17; գ. 172, թ. 6—11; գ. 1521, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ.7 և 48—52; գ. 46, թ. 17; գ. 172, թ. 6—11; գ. 1521, թ. 7; ֆ. 56, գ. 50, թ. 64; գ. 26, թ. 2; գ. 182, թ. 7, գ. 199; թ. 17—23; ֆ. 75/207; գ. 5, թ. 55; ֆ. 7, ց. 1, գ. 46, թ. 17; գ. 167, թ. 1—56; «Մուրճ», 1890, № 7, էջ 1021, «Արարատ», 1909, № 1, էջ 82 և 101, 1917, էջ 672։

Սամուրլի (Սամղի, այժմ՝ Սարապատ, Ղուկասյանի շրջ.) գյուղի դպրոց

Ալեքսանդրապոլի վիճակի հոգևոր փոխանորդը 1908-ին գրել է, որ Սամուրլի գյուղը դպրոց չունի, բայց գյուղի հասարակությունը «խոստանում է շենք կառուցանել, եթե կողմնակի նպաստ տրվի»։ Փոխանորդը նկատի ուներ Բաքվի հայ մշակութային միությունից տրվելիք նպաստը, որը և հատկացվել է 1908—09 ուս. տարվանից։ Նա ավելացրել է նաև. «Այս գյուղը չափազանց աղքատ լինելով, անհրաժեշտ կլինի շենքին նպաստել 500 ռ.», այսինքն՝ մշակութային միության միջոցներով կառուցել այդ գյուղի դպրոցի շենքը։

Մշակութային միությունը հնարավորություն է ունեցել այդ դպրոցի բացման ու պահպանության համար նշանակել տարեկան միայն 250 ռ. նպաստ։

Կարծում ենք, որ այդ ուսումնական տարում դպրոցը պետք է բացված լիներ, թեև նրա բացման ու հետագա գոյության մասին մենք այլ հավաստի տեղեկություններ չունենք։

«Արարատ», 1909, №1, էջ 94 և 101։

Սարալ (Սպիտակի շրջ.) գյուղի դպրոց

1918—19 ուս. տարում գործել է, լինելով միդասյան տարրական դպրոց։ Մինչ այդ Սարալ գյուղում գործել է պետական միդասյան դպրոց, որը և 1918-ին ազգայնացվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 55; ֆ. 19, գ. 1521, թ. 2—7։

Սարիար Մեծ (Ախուրյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Այս գյուղի դպրոցը հիմնվել է, հավանաբար, 1895-ի վերջերին, քանի որ չի մտել այդ թվականի սկզբներին կազմված հայ դպրոցների ցուցակներում։ 1896-ի մարտին Երևանի Նահանգապետը Կովկասի կառավարչապետին ներկայացրել է Նահանգի հայ դպրոցների լրացուցիչ մի ցուցակ, որտեղ նշված է նաև Մեծ Սարիարի ծխական դպրոցը։ Նահանգապետը գրել է, որ այդ դպրոցները բացվել են նախորդ ցուցակը ներկայացնելուց հետո, ուրեմն՝ 1895-ին։

1896-ին այս դպրոցը ևս փակվել է, վերաբացվելով 1906-ին, որպես միդասյան արական դպրոց՝ 60 աշակերտով։ Նյութական սղության պատճառով դպրոցը սկսել է հետաձգվել։ Նվազել է աշակերտների թիվը, 1907—08 ուս. տարում իջնելով 35-ի։ Ուսուցիչն էլ ունեցել է միայն «տնային կրթություն»։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ Ինչպես երևում է, հետագայում նորից փակվել է, քանի որ չի երևում 1911—12 ուս. տարիների տեղեկագրերում։ Թեմական տեսչի մի գեկուցագրում նշված է, որ այս դպրոցը բացվել է (պետք է լինի՝ վերաբացվել է) 1913—14 ուս. տարում, ունենալով 54 աշակերտ։ 1917-ին ունեցել է մի բաժանմունք՝ 60 աշակերտով (1 աղջիկ)։

1918—19 ուս. տարում չի գործել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց.7, գ.866, թ.138, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 29, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, ց. 1, գ. 598, թ. 88; ֆ. 75/207, գ. 5, թ. 54—55, ֆ. 7, գ. 167, թ. 1; «Արարատ», 1908, № 12, 1909, № 1, էջ 80, 1917, էջ 671—72։

Սարիբաշ (այժմ՝ Հայկասար, Արթիկի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհուրդը 1908 թ. սեպտեմբերին որոշել է այլ դպրոցների թվում նպաստ տալ նաև Ալեքսանդրապոլի գավառի Սարիբաշ գյուղի ծխական դպրոցին։ Նշանակում է այդ դպրոցը մինչև 1908 թ. սեպտեմբերը եղել ու գործել է, բայց թե

ե՞րբ է հիմնվել, դժվար է ասել. Նախորդ թվականների տեղեկագրերում ու արխիվային փաստաթղթերում այդ գյուղի դպրոցը ցույց չի տրված։ Հնարավոր է, որ այն բացված լինի 1907-ին, կամ էլ՝ 1908-ի սկզբին։

Հետագա տարիների փաստաթղթերում այդ դպրոցը չի երևում։

«Նոր դպրոց», 1908, N3, էջ 84։

Սոգյութլու (այժմ՝ Սառնաղբյուր, Անիի շրջ.) գյուղի ծխական դպրոց

1895-ի հուլիսին Սոգյութլու գյուղի հասարակության լիազորները դիմել են կաթողիկոսին, խնդրելով թույլ տալ իրենց գյուղում բացելու ծխական դպրոց։ Հնարավոր է, որ այն բացված լինի, բայց և շուտով փակված՝ հայ բոլոր դպրոցների հետ միասին։

Երևանի թեմի ծխական դպրոցների 1911—12 ուս. տարվա տեղեկագրում Սոգյութլու գյուղի ծխական դպրոցի բացման թվականը ցույց է տրված 1909-ը։ Դա հաստատում է նաև «Արարատ» ամսագիրը, ցույց տալով, որ այդ նպատակի համար Բաքվի հայ մշակութային միությունը 1909-ից սկսել է հատկացնել 300 ռուբլի։ 1911—12 ուս. տարում եղել է արական եռամյա դպրոց՝ 49 աշակերտով։ Սակայն 1912-ի վերջերին այն փակվել է, իսկ նրա փոխարեն նույն թվականին բացվել է պետական դպրոց։ Միական դպրոցը նորից ցույց է տրված 1914—1917 թթ. բացված դպրոցների ցուցակում։ 1917-ին ունեցել է 60 աշակերտ (9 աղջիկ) և մի ուսուցիչ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 328, թ. 20; ֆ. 7, ց. 1, գ. 157, թ. 1—30; գ. 163, թ. 4; գ. 167, թ. 1, գ. 172, թ. 4, ֆ. 48, ց. 1, գ. 377, թ. 7, գ. 570, թ. 29։
«Արարատ», 1909, N 1, էջ 90 և 101, 1917, էջ 672։

Սոնգյուղլու (Սոնղուրլի, այժմ՝ Հայրենյաց, Արթիկի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Այս գյուղի դպրոցը հայ հնագույն ծխական դպրոցներից է։ Այն հիմնվել է 1862-ին՝ տեղի քահանա Մելիքսեթեկի Գևորգյանցի կողմից։ Վերջինս եկեղեցու հարավային կողմում կառուցել է երկու սենյականոց մի շենք (7—8 տարի հետո ավելացրել է մի սենյակ ևս), ուր հավաքելով գյուղի երեխաներին՝ ձրիաբար սովորեցրել է գրել-կարդալ։ Նրա հորդորանքով գյուղում կազմվել է մի ընկերություն, որը նպատակադրել է միջոցներ հայթհայթել դպրոցի համար և ապահովել նրա հաստատությունը։

Այս դպրոցը 1869-ին և 1875-ին գործել է, բայց թե մինչև երբ է պահպանել իր գոյությունը, մենք չգիտենք։ Հետագա շատ տարիների փաստաթղթերում այն մեզ չի հանդիպել։

«Արարատ» ամսագիրը ևս 1909-ին նշել է, որ գյուղը դպրոց չունի, սակայն այն վերաբացելու համար Բաքվի հայ մշակութային միությունը որոշել է տարեկան հատկացնել 250 ռ.։ Իհարկե, դպրոցը բացվել է, բայց ինչպես երևում է, նորից է փակվել, քանի որ այն ևս ցույց է տրված 1914—1917 թթ. նոր բացված դպրոցների ցուցակում։ 1917-ին ունեցել է 3-ամյա դասընթաց և 53 աշակերտ (13 աղջիկ)։

«Արարատ», 1869, 2. էջ 139—140, 1909, N 1, էջ 88 և 101, 1917, էջ 672, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 21, գ. 30, թ. 13, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56։

Սպիտակ (այժմ՝ Լեռնանցք, Սպիտակի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Սպիտակ գյուղի ծխական դպրոցը նույնպես առաջին անգամ հանդիպում է Ալեքսանդրապոլի վիճակում 1914—1917 թվականներին բացված հայկական եկեղեցական ծխական դպրոցների տեղեկագրում։ 1916—17 ուս. տարում գործել է, պահպանելով իր գոյությունը հայ բարեգործական ընկերության նպաստով և գյուղի ծխականների տուրքով։ Ունեցել է եռամյա դասընթաց, 2 ուսուցիչ և 84 աշակերտ (14 աղջիկ)։

«Արարատ», 1917, N8, էջ 672; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56։

Սուվանվերդի (Սվանվերդի, այժմ՝ Լուսաղբյուր, Անիի շրջ.) գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 27 աշակերտ։ Հետագայում հավանաբար փակվել է, որովհետև «Մշակ» թերթի 1878-ի համարներից մեկում նշված է, որ այդ գյուղում դպրոց չկա։ Մեկ էլ այդ դպրոցը մեզ հանդիպել է 1914—1917 թթ. բացված ծխական դպրոցների ցուցակում։ 1917-ին ունեցել է 3-ամյա դասընթաց և 54 աշակերտ (4 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 13—14, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56։
«Մշակ», 1878, N16, «Արարատ», 1917, էջ 672։

Տավշանդշլաղ (այժմ՝ Շիրակավան, Անիի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Տավշանդշլաղ գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է Ալեքսանդրապոլի վիճակում 1914—1917 թվականներին բացված հայկական եկեղեցական ծխական դպրոցների տեղեկագրում։ 1916—17 ուս. տարում գործել է, պահվելով գյուղի ծխականների միջոցներով։ 1917-ին ունեցել է 2-ամյա դասընթաց և 60 աշակերտ (10 աղջիկ)։

Դեռևս 1986-ից սկսած Տավշանդշլաղ գյուղում գործել է պետական դպրոց, որը իր գոյությունը պահպանել է մինչև 1917 թվականը։

«Արարատ», 1917, թ. 672, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56։

Հայի Փամբ (այժմ՝ Լենինական, Արագածի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հայի Փամբ գյուղի ծխական դպրոցը ցույց է տրված Ալեքսանդրապոլի վիճակում 1914—1917 թվականներին բացված ծխական դպրոցների ցուցակում։ Այն 1916—17 ուս. տարում գործել է, ունենալով 48 աշակերտ (4 աղջիկ)։

«Արարատ», 1917 թ., էջ 672, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56։

Քեյթի Մեծ (այժմ՝ Քեթի, Ախուրյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Արխիվային մի փաստաթղթում այս դպրոցի բացման թվականը նշված է 1910-ը։ Նպաստ է տացել ԿՀԲԸ-ից։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա արական դպրոց՝ 50 աշակերտով (բոլորը տղաներ)։ 1913—14 ուս. տարում՝ 72 աշակերտ (աղջիկներ չկան)։ 1917-ին գործել է. ունեցել է 3-ամյա դասընթաց և 125 աշակերտ (21աղջիկ)։ 1918—19 ուս. տարում փակ է եղել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 172, թ. 10, գ. 167, թ. 1—56; ֆ. 75/207, գ. 5, թ. 55։ «Արարատ», 1917, էջ 672, ԿՀԲԸ-ի 1912 թ. տեղեկագիրք, էջ 50։

Քեշիշքենդ (այժմ՝ Գեղարոտ, Արագածի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ալեքսանդրապոլի գավառի Քեշիշքենդ, ներկայիս Արագածի շրջանի Գեղարոտ գյուղի արական ծխական դպրոցը բացվել է 1915-ին։ 1916—17 ուս. տարում ունեցել է մի ուսուցիչ և 40 աշակերտ (բոլորը տղաներ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, ց. 1, գ. 430, թ. 7։

Քյավթաղու (այժմ՝ Փանիկ, Արթիկի շրջ.) գյուղի հայ կաթոլիկական դպրոց

Հիմնվել է 1859-ին, ենթարկվել է կաթոլիկ հոգևորականությանը։ Ուսուցանվել են կրոն, թվաբանություն, աշխարհագրություն, հայերեն, ռուսերեն և լատիներեն լեզուներ։

Պահվել է Նահապետյան եղբայրների հաշվին։ 1861-ին ունեցել է 1 ուսուցիչ, 38 աշակերտ։ Այս գյուղի հետագա ճակատագրի վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած նյութերը բավարար չեն։ Գիտենք միայն, որ 1913-ին այն գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 23 աշակերտ։

1901-ից Քյավթաղու գյուղում գործել է նաև պետական դպրոց, որը 1917-ին եղել է երկդասյան։ 1917-ին այնտեղ սովորել են 138 հոգի (բոլորը հայեր)։ 1918-ին ազգայնացվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 33, թ. 5, գ. 380, թ. 45։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 32։

Քյափանակ Մեծ (այժմ՝ Մուսայելյան, Ախուրյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ալեքսանդրապոլի գավառապետի տվյալներով այս դպրոցը հիմնվել է 1889-ին, սակայն դա ճիշտ չէ, քանի որ այն մտել է 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում, ուրեմն գոյություն է ունեցել ավելի վաղ։

Մի այլ փաստաթղթում նշված է 1869-ը, որը մենք ավելի համանական ենք համարում։ Փակվելով 1885-ին, հավանաբար վերաբացվել է երկար տարիներ հետո, որովհետև չի երևում 1888—89 ուս. տարվա հայ դպրոցների վիճակագրության մեջ։ 1894-ին ունեցել է 60 աշակերտ (բոլորը տղաներ), իսկ 1896-ին նորից է փակվել։ Վերաբացվել է 1905-ին։ «Արարատ» ամսագիրը 1909-ին նշել է, որ Մեծ և Փոքր Քյափանակ գյուղերը դպրոց չունեն։ Սա զարմանալի է, քանի որ «Նոր դպրոց» ամսագրի 1908 թ. №3-ում հրապարակված ցուցակի և Կովկասի հայոց բարեգործական ընկերության 1909 թ. տեղեկագրի համաձայն Մեծ Քյափանակի ծխական դպրոցը այդ տարիներին գործել է, ունենալով երեք բաժանմունք և 70 աշակերտ։ Որի՞ն հավատանք։ Մենք ավելի հավատում ենք համարում բարեգործական ընկերության տեղեկագրի տվյալները, քանի որ այդ ընկերությունը 1908-ին, 1909-ին և հաջորդ տարիներին հատուկ գումար է հատկացրել հիշյալ դպրոցի պահպանության համար։ 1913—14 ուս. տարում եղել է քառամյա արական դպրոց, ուր սովորել են 73 տղաներ։

«Դպրոցի շենքը սեփական է, անհարմար, բաղկացած է երկու սենյակից, կահկարասիքը միջակ է, մինչև իսկ աղքատ... Դպրոցը չունի

գրադարան, ուսումնական պիտույքները խիստ անբավարար են»,— այսպես է գրել թեմական տեսուչը այդ դպրոցի մասին։ Այն 1917-ին գործել է, ունենալով 82 աշակերտ (15 աղջիկ)։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 19, գ. 456, թ. 48—52; ֆ. 56, գ. 26, թ. 3; գ. 50, թ. 61—64; գ. 199, թ. 17—23; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; ֆ. 48, գ. 596, թ. 76; ֆ. 75/207, գ. 5, թ. 55; «Արարատ», 1909, N1, էջ 82; 1917, էջ 671; ԿՀՊՀ-ի 1909 թ. տեղեկագիրը, էջ 32; «Նոր դպրոց», 1908, N3, էջ 84։

Օրթաքիլիսա (այժմ՝ Մայիսյան, Ախուրյանի շրջ.) գյուղի դպրոց

Մեզ մոտ եղած փաստաթղթերի համաձայն Օրթաքիլիսա գյուղում մինչև 1908 թվականը ծխական դպրոց չի եղել։ Ալեքսանդրապոլի փոխանորդ Մատթեոս վարդապետը ևս 1908-ին գրել է, որ այդ գյուղը ծխական դպրոց չունի։

«Գյուղացիները որոշել են հասարակական վճռով նոր դպրոցական շենք շինել» և «բացելու դեպքում խոստանում են աշակերտական թոշակադրամ և տուրք տալ»։ Փոխանորդը Բաքվի հայ մշակութային միությանը խնդրել է այդ նպատակի համար տարեկան հատկացնել 300 ռուբլի, բայց նրա խնդիրը մերժվել է։

Այսպես է գրել «Արարատ» ամսագիրը 1909-ի սկզբին։ Սակայն դրան հակասում է Բաքվի հայ մշակութային միության հաղորդագրությունը, որը հրապարակված է «Նոր դպրոց» ամսագրի 1908-ի N 4-ում։ Այնտեղ թվարկված են այդ միության կողմից բացված դպրոցները, այդ թվում նաև Օրթաքիլիսա գյուղի դպրոցը։ Ուրեմն այդ դպրոցը 1908-ին գործել է։

Օրթաքիլիսա գյուղում գործել է նաև պետական դպրոց, որի բացման թվականը մի փաստաթղթում ցույց է տրված 1912-ը։ Այս թվականը կասկածելի է, քանի որ այդ թվականին բացված դպրոցը չէր կարող 1914-ին երկդասյան լինել, ինչպես նշված է մի այլ պաշտոնական փաստաթղթում։ Ուրեմն, պետական դպրոց Օրթաքիլիսա գյուղում հիմնված պետք է լիներ ավելի վաղ, գուցե հետագայում փակված հայ դպրոցի փոխարեն։

«Արարատ», 1909, N1, էջ 80, «Նոր դպրոց», 1908, N4, էջ 84։

Ադրբեջանական գյուղերում գտնվող ու գտնված դպրոցների տարեցուցակ

Բնակավայրի անունը	Բնակավայրի նոր անունը (եթե փոխված է)	Երբվանից	Դպրոցի բացման թվականը	Դպրոցի տիպը 1912 թ.	Ծանոթություններ
1	2	3	1	5	6
Ագիմանդրապոլ գավառ					
1. Գավառական դպրոց	Լենինական	—	1847	—	1876-ից քաղաքային ուսումնարան
2. Քաղաքային ուսումնարան (բաց 1872 թ. կանոնների)	—	—	1876	հայկական	1914-ից քաղաքային քարեր տարրական ուսումնարան
3. Առնարական ուսումնարան	—	—	1902	ուղղափառ	
4. Ալպենյան իգական պրոգիմնազիա	—	—	1879	կլասիկական պրոգիմնազիա	
5. Ալեքսյան իգական գիմնազիա	—	—	1905	հիբրիկական գիմնազիա	1912-ից հայկական իգական գիմնազիա
6. Արական տարրական ուսումնարան	—	—	—	—	
7. Իգական տարրական »	—	—	—	—	
8. Իգական տարրական ուսումնարան Ս. Ասատուրյանի կողմից գրված Աբգարյան գպրոցի փոխարեն)			1895-ից հետո		1905-ին վերականգնվել է Կարս-Բյան հայկական դպրոցը
9. Ս. Փրկիչ Եկեղեցու կից (փակված հայ գպրոցի փոխարեն)	—	—	1896-ից հետո		1905-ին վերականգնվել է Ս. Փրկիչ Եկեղեցու հայկական գպրոցը
10. Ս. Նշան Եկեղեցու կից (փակված հայ գպրոցի փոխարեն)	—	—	1896-ից հետո		1905-ին վերականգնվել է ս. Նշան Եկեղեցու հայկական գպրոցում

Բնակավայրի անունը	Բնակավայրի նոր անունը (եթե փոխված է)	Շրջանը	Դպրոցի բացման թվականը	Դպրոցի տիպը 1914 թ.	Մանրամասնություն
1	2	3	4	5	6
1. Աղյաման	Գառնահովիտ	Քալինի	1912	միդպատյան	
2. Աղին	—	Անիի	1912	միդպատյան	
3. Աչաքիլիսա	Բալթար	Ամասիայի	1914-ին գործել է	ուղղափառ եկ. ծխ.	
4. Ավգիրեկ	Մազգաբեր	Սպիտակի	1912	միդպատյան	
5. Արխիվալի Մեծ	Մեծ Մանթաշ		1900 թ. գործել է	միդպատյան	
6. Բալանեզար	—	Ախուրյանի	1886	երկդպրյան	
7. Բեքյանց Մեծ	Մեծ Պարնի	Սպիտակի	1912	երկդպրյան	
8. Բեքյանց Փոքր (Փ. Պարնի)	Անուշավան	Արթիկի	1912	միդպատյան	
9. Բոզդոշան	Մարտակաց	Անիի		միդպատյան	
10. Բոզիքենդ (Բոզիգեզ)	Համզաչիման	Գուգարքի	1900 թ. գործել է	երկդպրյան	
11. Գահարլի	Գետք	Ախուրյանի	1899-ին գործել է	միդպատյան	
12. Գանգիրմազ	Նիգավան	Ապարանի	1912	երկդպրյան	
13. Գաշգալա	Քարաբերդ	Անիի			
14. Գարպաղ		Գուգարքի			
15. Գուզքենդ Մեծ	Ախուրյան	Ախուրյանի	1902	միդպատյան	
16. Եկանեյար	Արեշատ	Արթիկի	1912	միդպատյան	
17. Թոմարատաշ	Վարդաքար	Արթիկի	1902	միդպատյան	
18. Թոփազոլլուկ	Արեգիկ	Ախուրյանի	1904	երկդպրյան	
19. Թոփալլի	Հացիկ	Ախուրյանի	1909	միդպատյան	
20. Իլխաբի	Այգաբաց	Ախուրյանի	1910	երկդպրյան	
21. Համամլու	Սպիտակ քաղ.	Սպիտակի	1909 թ. գործել է	երկդպրյան	
22. Հաղիզարա	Լեռնապատ	Գուգարքի	1906	երկդպրյան	

1	2	3	4	5	6
23. Հաչի Խալիլ	Մազգահովիտ	Ապարանի	1899	երկդպրյան	
24. Հոռոմ		Արթիկի	1899 թ. գործել է	երկդպրյան	
25. Ղարաքիլիսա Մեծ	Կիրովական քաղ.		1897	երկդպրյան	
26. Ղարաքիլիսա Մեծ	Կիրովական քաղ.		1900 թ. գործել է	երկդպրյան	իգական
27. Ղարաքիլիսա Փոքր	Ազատան	Ախուրյանի	1902 թ. գործել է	երկդպրյան	
28. Ղարալ	Կաթնաղբյուր	Սպիտակի	1912	միդպատյան	
29. Ղայգուլի Ղազանչի	Ղազանչի	Ղուկասյանի	1903	միդպատյան	
30. Ղափլի	Գուսանաղբյուր	Անիի	—	միդպատյան	
31. Ղզլ—Ղոշ	Ղուկասյան	Ղուկասյանի	1902	միդպատյան	
32. Ղոբիս	Զորաշեն	Անիի	1909	միդպատյան	
33. Ղոխգաիրաման	Հեսարերդ	Արագածի	1911	միդպատյան	
34. Ղոնդաղաղ	—	Ապարանի	1900	միդպատյան	քրդական
35. Ղուրդբուլաղ	Կրասար	Ղուկասյանի	—	միդպատյան	
36. Ղփչաղ	Հատիճ	Արթիկի	1902	միդպատյան	
37. Մելիքգեղենդ	Մելիքգյուղ	Ապարանի	1912	երկդպրյան	
38. Մաչքիլի (Մաչքիլի)	Նոր Կյանք	Արթիկի	—	միդպատյան	
39. Մալլա Գյոքչա	Մարալիկ	Անիի	1902	միդպատյան	
40. Մանգուզի	Ծիլքար	Արագածի	1912	միդպատյան	
41. Մուսալլի	Լանջիկ	Անիի	1902	միդպատյան	
42. Նիկիտինո	Ֆիտլեստովո	Գուգարքի	1900	միդպատյան	
43. Նալբանդ	Շերակամուտ	Սպիտակի	1905	միդպատյան	
44. Նորաշեն		Արթիկի	1902	միդպատյան	
45. Շիլթափա	Մեծ Սեպասար	Ղուկասյանի	1908	միդպատյան	
46. Որդնավ	Ջրաշեն	Սպիտակի	1916 թ. գործել է	միդպատյան	
47. Չիֆթալի	Զուլգաղբյուր	Ղուկասյանի	1911	միդպատյան	
48. Ջարգան		Ապարանի	1912	միդպատյան	
49. Ջամուլլի	Ալագյազ	Ապարանի	1900 թ. գործել է	միդպատյան	

1	2	3	4	5	6
50. Սիսիանում	«Լոռի» հանգույցի սարեր մեջ ավան	1964-ին գյուղ Ոսկեվանք գյուղի մոտ, 1971-ի սեպտեմբերում մի նշան	1914-ին գործել է	—	հայկական
51. Սոլոնցիս	Սառնաբերդ	Ակի	1912	միջնական	
52. Վոսկեհանովկա	Լեռնահովիտ	Գուլաբի		միջնական	
53. Օրմանլիս	Մաքյան	Աղբյուրակ	1912	կրկնական	
54. Տավրզլուզ	Շիրակավան	Ակի	1896	երկդասյան	
55. Տավրեզլուզ	Շիրակավան	Ակի	1904	մեկդասյան	
56. Քյոսեմալ	Փանիկ	Աղբիկ	1901	երկդասյան	
57. Քյոսեմալու	Փանիկ	Աղբիկ		—	հայ կաթոլիկական

ԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԱՌ

Աղամզալու (այժմ՝ Մարմարաշեն, Մասիսի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Աղամզալու գյուղում ծխական դպրոց է հիմնվել, հավանաբար, 1871-ին կամ 1872-ին։ 1873-ին գործել է, ունենալով 31 աշակերտ։ Սովորողների թիվը 1876-ին եղել է 18, 1881-ին՝ 20 հոգի։

Այս դպրոցը 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում չկա։ Հավանաբար այն դրանից առաջ փակված է եղել։

Աղամզալուի դպրոցին այլևս չենք հանդիպում հետագա տասնամյակների տեղեկագրերում։ Դրա պատճառն այն է, որ այնտեղ բացված է եղել պետական դպրոց, որը 1917-ի կեսերին ունեցել է 31 աշակերտ (27 հայ, 2 ռուս, 2 ադրբեջանցի)։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 43, թ. 13; գ. 71, թ. 3; ֆ. 7, գ. 172, թ. 1; ՀՍՍՀ ԳԿԳԱ ֆ. 422, ց. 1, գ. 1585, թ. 46։

Աղբաշ Ներքին (այժմ՝ Արևշատ, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Երևանի գավառապետի պաշտոնական մի գրության մեջ նշված է, որ Աղբաշի ծխական դպրոցը հիմնվել է 1893-ին։ Դա, իհարկե, թյուրիմացություն է։ Հաստատապես հայտնի է, որ 1881-ին Աղբաշ գյուղում գործել է ծխական դպրոց, ունենալով մի ուսուցիչ և 25 աշակերտ։ Հավանաբար հիմնվել է հենց այդ թվականին, կամ էլ գուցե՝ 1880-ի աշնանը։ Այս ենթադրության համար հիմք է ծառայում հետևյալ փաստը։ Երևանի «Պսակ» թերթի 1880 թ. մարտի 28-ի համարում հրապարակված է Հովհաննես Հեթումի «Նամակ Դվինից» թղթակցությունը, ուր նաև ասված է. «Ես ժամանակին արծարծեցի «Մշակի» մեջ ուսումնարան բացելու հարկավորությունը գիցուք Գառնիբասարի գյուղերից Աղբաշ գյուղի մոտ, Գառնու գետի վրա. բայց այդ խնդիրը անուշադիր մնաց։ Այժմ թեմական տեսչին (Պ. Պռոշյանին, Ս.Խ.) կխնդրեի մտածել այդ հիշված՝ գյուղերից գոնե մեկում ուսումնարան բացելու վրա»։ Ուրեմն մինչև 1880-ի կեսերը Աղբաշում դպրոց չի եղել, հետևաբար, մեզ հայտնի դպրոցը բացվել է կամ 1880-ի երկրորդ կեսին, կամ էլ 1881-ին։

Այդ դպրոցը հաջողությամբ գործել է մինչև 1885 թվականի մարտ-ապրիլ ամիսները, որից հետո փակվել է։ Վերաբացվել է բավականին ուշացումով՝ 1890-ին։ 1895-ի սկզբին եղել է արական ծխական դպրոց՝ 40 աշակերտով, իսկ 1896-ին նորից է փակվել։ Երկրորդ անգամ վերաբացվել է 1905 թ. վերջերին՝ որպես միդասյան արական դպրոց։ 1913—14

ուս. տարում եղել է եռամյա խառը (երկսեռ) դպրոց, ուր սովորել են 43 տղա և 13 աղջիկ։

1909 թվականից Աղբաշ գյուղում գործել է նաև պետական միդասյան դպրոց, որի շրջանավարտներից ոմանք իրենց կրթությունը շարունակել են Դվինի պետական երկդասյան դպրոցում։ Աղբաշի պետական դպրոցը 1918-ի վերջերին ազգայնացվել է։

«Պսակ», 1880, N 3, ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 22—23, գ. 380, թ. 48, ֆ. 56, գ. 199, թ. 116, գ. 492, թ. 17—23, ֆ. 7, գ. 172, թ. 7, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 1585, թ. 46; գ. 8717, թ. 5; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 27։

Առինջ գյուղի (Աբովյանի շրջ.) եկ. ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է. 1873-ին գործել է, ունենալով մի ուսուցիչ, մի դասարան և 20 (մի այլ տեղեկագրում՝ 35) աշակերտ։

1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում չկա. կարծում ենք մինչև այդ այն արդեն փակված է եղել։

Ավելի ուշ Առինջ գյուղում գործել է պետական միդասյան դպրոց, որի մասին մեր ձեռքի տակ եղած միակ տեղեկությունը վերաբերում է 1914 թվականին։

Դիտենք նաև, որ 1915-ին այնտեղ գործել է հայկական ծխական դպրոց, որին նպաստ է տրվել Երևանի թեմի դպրոցական հատուկ ֆոնդից։ 1917-ին ունեցել է եռամյա դասընթաց և 48 աշակերտ (11 աղջիկ)։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 13, գ. 43, թ. 12, ֆ. 7, ց. 1, գ. 163, թ. 1, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, 1585, թ. 46, «Արարատ», 1915, էջ 433։

Ավան գյուղի (այժմ՝ Երևան քաղաքի թաղամաս) ծխական դպրոց

Առաջին անգամ հիշատակվում է 1906-ի սկզբներին բացված և վերբացված հայ դպրոցների ցուցակում։ Ինչպես երևում է հետագայում փակվել է և վերբացվել 1913-ին։

1913—14 ուս. տարում եղել է միայն՝ մի դասարանից բաղկացած դպրոց, ուր սովորել են 28 տղա, 7 աղջիկ։ 1915-ին նպաստ է ստացել Երևանի թեմի դպրոցական ընդհանուր ֆոնդից։ 1917-ին ունեցել է 70 աշակերտ (10 աղջիկ)։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 118, ֆ. 7, գ. 172, թ. 1, գ. 167, թ. 1—50, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 8, «Արարատ», 1913, էջ 992, 1915, էջ 423։

Արամուս գյուղի (Աբովյանի շրջ.) ծխական դպրոց

1884-ին գործել է, ունենալով մի դասարան։ 1885-ին փակվել է։ Այս դպրոցի մասին մեր ունեցած հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1907—08 ուս. տարվան։ Այդ ուս. տարում այն գործել է, լինելով միդասյան արական դպրոց։ Ունեցել է 1 ուսուցիչ և 47 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1915-ին նպաստ է ստացել Թեմի դպրոցական ընդհանուր ֆոնդից։ Հայտնի է, որ 1916-ին Արամուս գյուղում գործել է նաև պետական միդասյան դպրոց, որը 1918-ին ազգայնացվել է։ Հայկական դպրոցը ցույց է տրված 1918—19 ուս. տարում Հայաստանում գործած դպրոցների ցուցակում։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61, գ. 182, թ. 8; ֆ. 19, ց. 1, գ. 1521, թ. 2; ֆ. 73/207, գ. 5, թ. 52—55, «Արարատ», 1915, էջ 433։

Արտաշատ (այժմ՝ Վերին Արտաշատ, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Արտաշատ գյուղը եղել է Երևանի գավառի ամենամեծ գյուղերից մեկը։ 1873-ին ունեցել է 862, 1886-ին՝ 1069, 1914-ին՝ 1874 բնակիչ։

Այս գյուղի ծխական դպրոցի հիմնադրման ստույգ թվականը հայտնի չէ։ Ելնելով ժամանակի հայ մամուլի էջերում հրապարակված նյութերից, կարելի է մոտավոր հավանականությամբ նշել մի քանի թվականներ։

Գրիգոր վարդապետ Տեր-Ստեփանոսյանը, որ կաթողիկոսի հանձնարարությամբ շրջագայել է Երևանի գավառի Զանգիբասարի ու Գառնիբասարի գավառակների գյուղերը, 1869 թ. ապրիլի 12-ին Դվին գյուղից «Արարատ» ամսագրին հաղորդել է, որ այդ գավառակների հոգևոր առաջնորդ Մեսրոպ վարդապետ Սմբատյանը «աղջայնական ոգով վառված... լրացնում է ժողովրդական արդի ամենակարևոր պիտույքը, հաստատում է շատ գյուղերում դպրոցներ և նրանք բարեկարգում է հարատև արդյունավոր զարգանալու համար...» («Արարատ», 1869, Ա. էջ 22)։

Թեև Սմբատյանը «շատ գյուղերում» դպրոցներ է բացել, ապա կարելի է կարծել, որ նա ամենից առաջ պետք է դպրոց բացեր այնպիսի մեծ ու հարուստ գյուղում, ինչպիսին Արտաշատն էր։

Հետաքրքիր տեղեկություն ենք գտնում նաև Երևանում հրատարակված «Պսակ» թերթում։ Այդ թերթի 1880 թվականի մարտ և սեպտեմբեր ամիսների երկու համարներում հրապարակված են Հովհաննես Հեթումի «Նամակ Դվինից» թղթակցությունները։

Առաջին նամակում, ուր խոսվում է Դվին, Արտաշատ և այլ գյուղերի գյուղացիների ծայրահեղ հետամնաց կյանքի ու կենցաղի մասին, ասված է նաև.

«Այն օրից, երբ կարոտություն է զգացվել ամեն տեղ, ամեն անկյունում դպրոցներ բաց անելու, այն օրից մինչև այժմ Գառնիբասարի և Զանգիբասարի մհալների գյուղերում ոչինչ չէ շինված այդ վերաբերությամբ... Ես ժամանակին արժարեցի «Մշակի» մեջ ուսումնարան բացելու հարկավորությունը դեցուք Գառնիբասարի գյուղերից Աղբաշ գյուղի Գանում գետակի վրա... բայց այդ խնդիրը անուշադիր մնաց։ Այժմ թեմական տեսչին (Պ. Պողոշյանին, Ս. Ե.) կխնդրեի մտածել այդ հիշված գյուղերից գոնե մեկում ուսումնարան բացելու վրա. մասնացույց անելով նաև այն հանգամանքի վրա, որ Արտաշատում շինված կա չորս տարի սորանից առաջ մի հարմարավոր ուսումնարան, բայց դատարկ, անտեր բնակ է և, ինչպես լսվում է, այդ ուսումնարանի համար համամլուսցի հանգուցյալ Տեր-Հակոբ քահանայի օրով հավաքվել է 400—500 ռուբլի և հանձնվել այդ քահանայից ընտրված հոգաբարձուներին։ Ինչո՞ւ այդ ուսումնարանը չը բաց անել և չը հետաքրքրվել, թե ո՞ւր են արդյոք մնացել այդ փողերը, որ մի գյուղական ուսումնարանի համար մեծ նշանակություն ունի» («Պատգամ», 1880, N3, մարտի 28)։

Եվ այսպես, մեկը 1869-ին գրել է, որ Գառնիբասարի շատ գյուղերում դպրոցներ են հիմնվել և նույնիսկ ապահովվել է նրանց հետագա «հարատև արդյունավոր զարգացումը», իսկ մյուսը 1880-ին գրել է, որ ի սկզբանե այդ ուղղությամբ ոչինչ չի արվել... Ընդ որում երկուսն էլ իրենց նամակները ուղղարկել են Դվինից։ Ո՞ւմ հավատալ։

Մենք հակված ենք հավատալու առաջինին։ Կաթողիկոսի հատուկ պատվիրակը չէր կարող թյուրիմացության մեջ գցել էջմիածնի պաշտոնական օրգան «Արարատ» ամսագրին։ Բացի այդ, Հովհաննես Հեթում Թղթակիցը չի էլ նկատել, թե ինչպես Արտաշատ գյուղի օրինակով ինքը հակասել է իրեն։ Մի կողմից նա գրում է, թե այդ ուղղությամբ ոչինչ չի արվել, իսկ մյուս կողմից էլ նշում է, որ դեռ չորս տարի առաջ Արտաշատ գյուղում կառուցվել է «Մի հարմարավոր ուսումնարան», որ նույնիսկ հանգուցյալ Տեր-Հակոբ քահանայի օրոք —(ո՞վ գիտի, թե երբ) հավաքվել է մի պատկառելի գումար, և այն դրվել է հենց նույն քահանայի ժամանակ ընտրված հոգաբարձուների տրամադրության տակ, որոնց պարտականությունն էր ապահովել դպրոցի հարատևությունը։ Ուրեմն՝ եթե հիմնական պայմանները ակա էին, մնում էր լուծել չորրորդ հիմնական պայմանի հարցը՝ ուսուցիչների խնդիրը։ Հեթումը այդ մասին էլ գրում է իր երկրորդ նամակում՝ 1880-ի սեպտեմբերին։ Բայց մինչ այդ նշենք հետևյալը։ 1860-ական թվականներին և 70-ականի կեսերին հայ գյուղացիները, համարյա թե ամեն տեղ (բացառությունները քիչ են), դպրոցի համար հատուկ շենք չեն կառուցել, այդ նպատակով գումար չեն հավաքել կամ դպրոցի հոգաբարձություն չեն ընտրել, եթե իրենց մոտ չեն ունեցել դպրոց և չեն համոզվել նրա օգտակարության մեջ։ Հետագայում դրությունը զգալիորեն փոխվել է։ Շատ գյուղերում այդ ամենը ձեռնարկել են՝ տեսնելով հարևան գյուղերի օրինակը։

Ուրեմն, Արտաշատում նախօրոք դպրոց գործել է, և 70-ական թվականների կեսերին նրա համար հարմարավետ շենք է կառուցվել, կամ այլ միջոցառումներ են ձեռնարկվել։ Ցմոռանանք նաև, որ հայ դպրոցների հոգաբարձության կազմը ընտրվում էր տվյալ գյուղի հասարակության կողմից և, որպես կանոն, հաստատվում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի հատուկ կոնդակով։ Նման դեպքերում հոգաբարձուները բացարձակ անգործունության մատնվել չէին կարող, այն էլ, ինչպես նկարագրել է Հեթումը, երկար տարիներ։

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ Արտաշատի ծխական դպրոցն առնվազն 1869 թվականից, եթե ոչ ավելի շուտ, գործել է։ Համենայն դեպս, նույն Հովհաննես Հեթումի նամակները հիմք են տալիս ասելու, որ այդ դպրոցը 1875—76 թվականներին գոյություն է ունեցել։ Նույնիսկ թեմական տեսուչ Պ. Պողոշյանի կողմից այդ դպրոցն են ուղարկվել մի քանի ուսուցիչներ։

Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ Արտաշատի ծխական դպրոցը 1885-ին փակվել է։ Այն հետագա շատ տարիների փաստաթղթերում մեզ չի հանդիպել։ Ցույց չի տրված նաև 1896—97 թթ.։ 1905 թվականին քչերի հետ միասին, վերաբացվել է նաև Արտաշատի ծխական դպրոցը։ Սակայն, ինչպես երևում է, դարձյալ երկար կյանք չի ունեցել, քանի որ նրա շենքում բացվել և գործել է պետական միդասյան դպրոց, որի շրջանավարտների մի մասն իր ուսումը շարունակել է Դվինի պետական երկդասյան դպրոցում։ 1911-ին Արտաշատի պետական դպրոցը ևս դարձել է երկդասյան։ 1917-ին այնտեղ սովորել են 115 տղաներ ու աղջիկներ։ 1918-ին ազգայնացվել է, վերածվելով հայկական դպրոցի։

1914-ին բացվել ու գործել է նաև հայկական ծխական դպրոցը, որը 1917-ին ունեցել է եռամյա դասընթաց և 90 աշակերտ (10 աղջիկ)։

«Արարատ», 1869, Ա. էջ. 22, «Պատգամ», 1880, 28 մարտի և 6 սեպտեմբերի.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61, գ. 429, թ. 116, ֆ. 7, գ. 172, թ. 2, ֆ. 19, գ. 38, թ. 45, գ. 1521, թ. 2, գ. 1009, թ. 9—149, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 881, թ. 5։

Բաշ Գյառնի (այժմ՝ Գառնի, Արովյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Մակար կաթողիկոսը 1890 թ. հոկտեմբերի 8-ին կոնդակով թույլ է տվել Բաշ Գյառնի գյուղում բաց անել եկեղեցական ծխական դպրոց և հաստատել է հոգաբարձության կազմը։

Դպրոցն սկսել է գործել 1890-ի նոյեմբերի 15-ից։ Առաջին ուսուցիչն է եղել Գեորգ Շահինյանը։

Հաջորդ տարին՝ ուսուցիչ Ա. Աբրահամյանցի հետ գժտվելու պատճառով, հոգաբարձությունը դպրոցը փակում է, հայտարարելով, թե «այլևս չեն ցանկանում իրենց համար դպրոց ունենալ»։ Միայն թեմական տեսուչ Մեսրոպ Մելլանի եռանդուն ու վճռական միջոցառումների շնորհիվ հնարավոր է լինում պահպանել դպրոցը։ 1892-ին ունեցել է մի ուսուցիչ և 30 աշակերտ (դրանցից՝ հոգևորականի որդի՝ 1, ազնվականի՝ ոչ ոք, ասոհճանավորի՝ 1, վաճառականի՝ ոչ ոք, արհեստավորի՝ ոչ ոք, երկրագործի՝ 28)։ Դպրոցը պահվել է հիմնականում աշակերտներից գանձվող ուսման վարձով։ 1896-ին այն նույնպես փակվել է, իսկ թե երբ է վերբացվել, մենք չգիտենք։ Հայտնի է միայն, որ 1917-ին այն գործել է, ունենալով եռամյա դասընթաց և 108 աշակերտ (9 աղջիկ)։ Հայ դպրոցների ընդհանուր փակումից հետո Բաշ Գյառնիում բացվել ու գործել է պետական դպրոց։ 1916-ին այն եղել է երկդասյան, իսկ 1918-ին ազգայնացվել է։ Հայկական դպրոցը ցույց է տրված 1918—19 ուս. տարում Հայաստանում գործած դպրոցների ցուցակում։

1965 թ. մայիսի 22-ին տոնվեց այս դպրոցի 75-ամյակը։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 25, թ. 1—40, գ. 172, թ. 1, գ. 167, 1—56, ֆ. 75/267, գ. 5, թ. 52—55, ֆ. 19, գ. 330, թ. 45—52, գ. 1521, թ. 2։

Բաշգյուղի (այժմ՝ Ակուռք, Աբովյանի շրջ.) ծխական դպրոց

Հիմնվել է, հավանաբար, 1880-ական թվականների սկզբներին։ Հաստատապես հայտնի է, որ 1884-ին գործել է, ունենալով մի դասարան, իսկ 1885-ին փակվել է։

Կաթողիկոսը 1889 թ. փետրվարի 1-ի կոնդակով «Կոտեից գավառի Բաշ գեղջ միդասյան եկեղեցական ծխական արական ուսումնարանի» բացման թույլտվություն է տվել, իսկ նույն թվականի մարտի 1-ի կոնդակով հաստատել է դպրոցի հոգաբարձության կազմը։ Ուրեմն այդ թվականին դպրոցը վերբացվել է և շարունակել է գործել։ Հայտնի չէ՝ մինչև երբ։ Այն մեկ էլ երևում է 1905-ի վերջերին վերբացված դպրոցների ցուցակներում։ Ցույց է տրված որպես միդասյան արական դպրոց։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա արական դպրոց՝ 28 աշակերտով։ 1913—14 ուս. տ. ունեցել է 68 աշակերտ (3 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61, ֆ. 7, գ. 172, թ. 6, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 5, ֆ. 13, ց. 11, գ. 265, թ. 27, «Արարատ», 1889, ԺԲ էջ. 572, «Տեղեկագիր Երևանի թեմի 1911—12 ուս. տ. դպրոցներին»։

Բեգջազլու (այժմ՝ Ուտան, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հայ դպրոցների վերբացման թույլտվությունն ստանալուց անմիջապես հետո, այսինքն 1905-ի նոյեմբեր — դեկտեմբեր ամիսներին, Բեգջազլու գյուղի Ս. Սարգիս եկեղեցուն կից բացվում է երկսեռ ծխական դպրոց։ Այդպիսի արագությամբ դպրոցի բացումը հիմք է տալիս ենթադրելու, որ Բեգջազլու գյուղում առաջ էլ գոյություն է ունեցել դպրոց, որը 1905-ին միայն վերբացվել է, թեև նախորդ տասնամյակների ցուցակներում այդ դպրոցին չենք հանդիպում։

1912—13 ուս. տարում եղել է 4-ամյա խառը դպրոց, ուր սովորել են 126 տղա և 24 աղջիկ։ Հաջորդ տարում աշակերտների ընդհանուր թիվը իջել է 125-ի։

1914-ի փետրվարին ունեցել է 4 ուսուցիչ, 149 աշակերտ։ Դեռևս 1911-ի ապրիլին «Նոր դպրոց» ամսագրում գրվել է, որ Գառնիբասարի (Ղամարլվի) շրջանի ծխական դպրոցներից «Դպրոցական ընդարձակ և հարմար շենք ունեն միմիայն Բեգջազլվի և Նովրուզլուի դպրոցները (առաջինն ունի համարյա բոլոր հարմարությունները, նաև թատրոնական բեմ»)։ Երեք տարի հետո՝ 1914-ին «Արարատ» ամսագիրն էլ գրել է, որ Տիրուհի Աֆրիկյանը իր ծախսով Բեգջազլու գյուղում կառուցել է դպրոցական նոր շենք՝ արժանանալով կաթողիկոսի օրհնության կոնդակին։ Ենթադրում ենք, որ ավյալ դեպքում խոսքը վերևում նշված շենքի մասին է։

Այս դպրոցը 1917-ին ունեցել է քառամյա դասընթաց, 5 ուսուցիչ և 160 աշակերտ (41 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 623, թ. 3, գ. 492, թ. 116, ֆ. 7, գ. 172, թ. 7; գ. 167, թ. 1—56, ֆ. 19, գ. 162, թ. 12;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 3, ֆ. 13, ց. 11, թ. 27, «Նոր դպրոց», 1909, N 8—9, էջ 141, 1911, N 13—14, էջ 30, «Արարատ», 1914, էջ 202։

Գեղարդի վանական դպրոց

1873-ին Գեղարդի վանքին կից եղել է վանական դպրոց, ուր սովորել են 15 հոգի։ Դպրոցն ունեցել է իր պանսիոնը, այսինքն՝ եղել է գիշերօթիկ։

Հետագա տարիների աղբյուրներում այս դպրոցի մասին չի խոսվում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 13։

Գյամրեզ (այժմ՝ Կամարիս, Աբովյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հիշատակվում է 1906-ի սկզբներին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ Եղել է միդհայան արական ծխական դպրոց։ 1917-ին ունեցել է 45 աշակերտ (5 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 8.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 118, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56։

Գյոդակլու (այժմ՝ Մրգավան, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Գյոդակլու գյուղի դպրոցը մեզ առաջին անգամ հանդիպել է 1905-ի վերջերին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակներում։ Եղել է արական դպրոց։

Այս դպրոցի մասին նույնը պետք է ասել, ինչ ասվեց Բեգզալու գյուղի դպրոցի մասին։ Ենթադրում ենք, որ այն ավելի վաղ է գոյություն ունեցել։

Հետագա տարիների տեղեկագրերում չի երևում։ Պատճառն այն է, որ Գյոդակլու գյուղում գործել է պետական դպրոց, որը 1917-ին ունեցել է 54 աշակերտ (բոլորը հայ երեխաներ)։

1918—19 ուս. տարում չի գործել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 116, ֆ. 7, գ. 172, թ. 1, ֆ. 19, գ. 380, թ. 45, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 5։

Գողթ գյուղի (Աբովյանի շրջ.) դպրոց

Գողթ գյուղի միդհայան տարրական դպրոցը առաջին անգամ հանդիպում է Հայաստանի Հանրապետության ժողովրդական դպրոցների 1918—19 ուս. տարվա ցուցակում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 207, գ. 5, թ. 52—55։

Դալուլար (Բեյուր Դալուլար, այժմ՝ Դալար, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1881-ին ունեցել է 1 ուսուցիչ և 30 աշակերտ։ 1885-ին փակվել է։ 1896-ին նահանգապետը հայտնել է, որ այս դպրոցը պահվում է բացառապես հասարակության հաշվին։ Այդ թվականին էլ փակվել է։

Վերաբացվել է 1905-ի վերջերին՝ որպես միդհայան արական դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ, 60 աշակերտ (13 աղջիկ)։ 1912—18 ուս. տարում եղել է երկամյա խառը դպրոց, ուր սովորել են 36 տղա և 8 աղջիկ։

1913—14 ուս. տարում աշակերտների թիվը պակասել է, հասնելով 43-ի (7 աղջիկ)։ 1917-ին ունեցել է եռամյա դասընթաց և 49 աշակերտ (23 աղջիկ)։ Դեռևս մեր դարի սկզբից Բեյուր Դալուլար գյուղում գործել է նաև պետական դպրոց, որը 1917-ին ունեցել է 36 աշակերտ (բոլորը հայ երեխաներ)։

Դալուլարի դպրոցը 1918—19 ուս. տարում չի գործել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 866, թ. 158; ֆ. 422, ց. 1, գ. 1585, թ. 46; գ. 8717, թ. 5; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61, գ. 492, թ. 116, գ. 623, թ. 5, ֆ. 7, գ. 172, թ. 7; գ. 167, թ. 1—56; ֆ. 19, ց. 1, գ. 380, թ. 48։

Դավալու գյուղի (այժմ՝ քաղ. Արարատ) ծխական դպրոց

Երևանի գավառապետի մի տեղեկագրում նշված է, որ այս դպրոցը բացվել է 1892-ին, սակայն դա ճիշտ չէ։ Դավալուի հասարակությունը 1887-ի հոկտեմբերին որոշել է գյուղում բաց անել միդհայան արական դպրոց և նրա պահպանության համար հատկացնել «շորս խալվաթատեղի վարելահող և մարգագետին և տարեկան 600 ռ. փող»։ 1888-ի մարտին կաթողիկոսը հաստատել է այդ դպրոցի հոգաբարձության կազմը։ Նույն տարում էլ դպրոցը բացվել է։ 1894-ին ունեցել է 68, 1895-ին՝ 75 սովորող։ 1896-ին փակվել է և վերաբացվել 1905-ին՝ որպես եռամյա դպրոց։ 1907—1908 ուս. տարում ունեցել է 20, իսկ 1911—12 ուս. տարում՝ 67 աշակերտ (6 աղջիկ)։

1913—14 ուս. տարում եղել է քառամյա երկսեռ դպրոց, ունենալով 83 աշակերտ (5 աղջիկ), իսկ 1917-ին 5-ամյա՝ 201 աշակերտ (31 աղջիկ)։

Դավալու գյուղում գործել է նաև պետական երկդասյան դպրոց գեռևս 1897—98 թվերից սկսած։

«Արարատ», 1888, էջ 258.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 22—25, գ. 1521, թ. 2, գ. 116, թ. 37; ֆ. 56, գ. 111, թ. 128; գ. 199, թ. 17—23; գ. 623, թ. 7; թ. 8; ֆ. 7, գ. 172, թ. 7; գ. 167, թ. 1; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ժող. դպրոցների 1911—12 ուս. տ.»։

Դարղալու Վերին (այժմ՝ Այգեզարդ, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1910-ին՝ թեմական տեսուչ Տ. Թաշմաճյանի ջանքերով, սակայն չգիտենք, թե ինչու կաթողիկոսը բացման թույլտվություն տվել է 1913-ի օգոստոսին։ 1913—14 ուս. տարում ունեցել է մի դասարան՝ 52 աշակերտ (7 աղջիկ), 1917-ին՝ 44 աշակերտ (10 աղջիկ)։

«Նոր դպրոց», 1911, № 13—14, էջ 30, «Արարատ», 1913, № 10, էջ 876, ՀՍԱ ՊԿՊԱ. ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56;
ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27։

Դվինի (Արտաշատի շրջան) ծխական դպրոց

Հիմք կա ենթադրելու, որ Դվինում դպրոց կազմակերպվել է 1869-ից ոչ ուշ։ Գրիգոր վարդապետ Տեր-Ստեփանոսյանը, որ կաթողիկոսի հանձնարարությամբ շրջագայել է Երևանի գավառի Զանգիբասարի և Գառնիբասարի գավառակները, 1869 թ. ապրիլի 12-ին Դվինից հայտնել է «Արարատ» ամսագրին հետևյալը. «Այդ գավառակների հոգևոր առաջնորդ Մեսրոպ վարդապետ Սմբատյանը ազգասիրական ոգով վառված... լրացնում է ժողովրդական արդի ամենակարևոր պիտույքը, հաստատում է շատ գյուղերում դպրոցներ, և նրանք բարեկարգում է հարատև արդյունավետ զբաղանալու համար...» (Արարատ, 1869, Ա. էջ 12)։

Հայտիվ թե Գրիգոր վարդապետը այս ձևով նամակ գրեր Դվինից, ավելացնելով «Երևանի մայրաքաղաք հայոց», ապա այնտեղ նա հանդիպած չլիներ գործող դպրոցի։ Սակայն ցավն այն է, որ Դվինի ծխական դպրոցին հետագա տասնամյակների տեղեկագրում մենք չենք հանդիպում։ Հայտնի է, որ 1890-ին Հայ Դվին գյուղում (Դվին Այսորի գյուղի անունով) հիմնվել է միգասյան պետական դպրոց, որը շուտով դարձել է երկդասյան։

Այնտեղ սովորելու են եկել նաև հարևան գյուղերի երեխաները։ 1917-ին այս դպրոցում սովորել են 195 հոգի (145 հայ, 49 ասորի, 1 քուրդ)։

Պետական դպրոցի շենքի կառուցմանը մասնակցել են ենթակա շրջանի 14 գյուղեր։

Հայտնի է նաև, որ 1917-ին Դվինում գործել են երկու դպրոց՝ ծխական և պետական։ Ծխականի բացման տարեթիվը մենք չկարողացանք պարզել։

«Արարատ», 1896, Ա էջ. 22, ՀՍԱ ՊԿՊԱ. ֆ. 19, ց. 380, թ. 46—52։

Ելդովան (այժմ՝ Կոտայք, Աբովյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ելդովան գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է Հայաստանում 1919 թվականին գործած ծխական դպրոցների ցուցակում։ Թե ինչո՞ւ այդքան ուշ, մենք չգիտենք։ Հավանաբար Ելդովան գյուղի երեխաների մի մասը հաճախել է հարևան Արամուս և Շահաթ գյուղի դպրոցները։

ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 48, ց. 1, գ. 511, թ. 5։

Երևանի Գայանյան օրիորդաց միջնակարգ դպրոց

Հայ աղջիկների համար բացված հնագույն և անվանի դպրոցներից է, որը հիմնվել է 1866-ին՝ Երևանի Պողոս—Պետրոս եկեղեցու դավթում։

1867-ին ունեցել է ընդամենը 14 աշակերտուհի։ 1873-ին ունեցել է 3 ուսուցիչ, 48 աշակերտուհի։ Ինչպես գրել է «Մշակը». «1877 թ. մեծարգո Զևոնդ աղա Ղազարյանը կառուցեց մի գեղեցիկ շինություն՝ մի ընդարձակ դահլիճով, երկու սենյակներով և մի կարիդորով և նվիրեց Գայանյան դպրոցին»։ 1879-ին այն վերածվեց իգական միջնակարգ դպրոցի։ 1881-ին ունեցել է 12 դասատու և 103 աշակերտուհի։ 1885-ին փակվել է, 1886-ին վերաբացվել՝ արդեն ոչ որպես միջնակարգ, այլ երկդասյան դպրոց։ 1888—89 ուս. տարում ունեցել է 9 դասատու, 160 աշակերտուհի։

Հետաքրքրական է նշել, որ 1891-ին ցույց է տրված որպես 4-դասարանյան միջնակարգ, իսկ 1895-ին՝ դարձյալ երկդասյան դպրոց՝ 268 աշակերտուհիներով։ 1896-ին փակվել է, վերաբացվելով մոտ 10 տարի հետո՝ 1905-ին, որպես երկդասյան դպրոց։

1907—08 ուս. տարում ունեցել է 3 նախակրթական, 5 հիմնական դասարան, 10 ուսուցիչ և 197 աշակերտուհի։ 1913—14 ուս. տարում եղել է 9-ամյա միջնակարգ դպրոց, ուր սովորել են 208 աղջիկներ։

1919—20 ուս. տարում կոչվել է Գայանյան գիմնազիա։

1921-ին Գայանյան գիմնազիան դարձել է երկրորդ աստիճանի №1 դպրոց։ 1925-ին այն կոչվել է հայ ժողովրդի պանծալի զավակ Ալ. Մյասնիկյանի անունով։

ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 111, թ. 15; գ. 37, թ. 13—14, գ. 50, թ. 61; գ. 199, թ. 17—23; գ. 492, թ. 116; ֆ. 7, գ. 130, թ. 1; ֆ. 73, գ. 211; գ. 225; ֆ. 19, գ. 27, թ. 5։
ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 50; գ. 3997, թ. 7; գ. 2018, թ. 47; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 75, ֆ. 416, ց. 3, գ. 470, թ. 1, «Մշակ», 1879, № 95, «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 41, ԼԵՌ, «Երևանի թեմական գրա. պատմություն», էջ 532, «Մշակ», 1897, № 95։

Երևանի երեկոյան գրագիտական դասընթացներ

Երևանի օգտակար գիտելիքներ տարածող ընկերությունը 1909 թվականին քաղաքի հասակավոր բնակչության համար բաց է արել գրագիտական դասընթացներ (Խրիմյան դպրոցին կից)։ Այնտեղ անցել են կրոն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն և զրույցներ բնական գիտություններից։

Դասընթացները գործել են 1909—1913 թվականներին (զուցե նաև հետո)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 973, թ. 1—22։

Երևանի Ս. Զորավոր եկեղեցու արական ծխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման թվականը մեզ անհայտ է։ 1867-ին գրված պաշտոնական մի հաշվետվության մեջ նշված է, որ Երևան քաղաքում գործում են հայկական եկեղեցական ծխական արական չորս դպրոցներ, որոնցից մեկը, անկասկած, Ս. Զորավոր եկեղեցու դպրոցն է եղել։ Հաստատապես հայտնի է, որ այն 1869-ին գործել է, քանի որ «Արարատ» ամսագրի նույն թվականի մի համարում խոսվում է այդ դպրոցում անցկացված հարցաքննությունների մասին։ 1871-ին ունեցել է մի ուսուցիչ և 30 աշակերտ։

Հետագայում այս դպրոցի հետքերը չեն երևում։ Շատ ավելի ուշ Ս. Զորավոր եկեղեցուն կից կազմակերպվել է աղջիկների դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 77, թ. 8, ֆ. 56, գ. 32, թ. 3, «Արարատ», 1869, էջ 103։

Երևանի Ս. Զորավոր եկեղեցու աղջիկների Մարիամյան ծխական դպրոց

1895-ի կեսերին կաթողիկոսը հատուկ կոնդակով թույլ է տվել Ս. Զորավոր եկեղեցուն կից բաց անել օրիորդական դպրոց «որպես պատրաստական մաս Ս. Գայանյան դպրոցին»։

Ինչպես երևում է Երևանի նահանգապետի մի գրությունից, այս դպրոցը 1895-ի աշնանը, իրոք բացվել է։ 1895-ի նոյեմբերի 20-ին գրված այդ գրության մեջ նա Կովկասի գլխավոր կառավարչության գրասենյակի պետին հայտնում է, որ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կարգադրությամբ Երևանի Ս. Զորավոր եկեղեցուն կից բացվել է իգական եկեղեցական ծխական դպրոց, որը տեղավորված է ոչ թե եկեղեցուն կից շենքում, այլ մասնավոր վարձու տան մեջ։

Այս դպրոցի մասին նշված է նաև Երևանի նահանգի կառավարչի 1896 թ. մարտի 21-ի գրության մեջ, ուր ասված է, թե հայկական դրպրոցների ցուցակները կազմելուց և Կովկասի գլխավոր կառավարչի գրասենյակին ուղարկելուց հետո՝ «համարյա բոլոր դավառներում անցյալ տարի բաց են արվել Հայ Գրիգորյան եկեղեցական ծխական նոր դրպրոցներ»։ Այդ դպրոցների ցուցակում նշված է նաև Ս. Զորավորի իգական դպրոցը։

Այս դպրոցը ևս երկար կյանք չի ունեցել և շուտով փակվել է, վերաբացվելով միայն 1905-ի վերջերին։ Կոչվել է Մարիամյան օրիորդաց երկդասյան դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 6 ուսուցիչ, 165 աշակերտուհի։ 1911—12 ուս. տարում ունեցել է 5 դասարանյան կազմ, 7 ուսուցիչ և 214 աշակերտուհի։ 1913—14 ուս. տարում՝ 208 աշակերտուհի։ 1914-ի երկու տարբեր ցուցակներում ցույց է տրված 7 ուսուցիչ, 211 աշակերտուհի։ 1917-ին՝ 8 ուսուցիչ, 161 աշակերտուհի։ 1919-ին գործել է։

«Արարատ», 1895, N9, էջ 365;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 1090, թ. 62; գ. 866, թ. 158; ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 7; գ. 172, թ. 6; գ. 492, թ. 116; ֆ. 7, գ. 167, թ. 1; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպրոցների՝ 1911—12 ուս. տ.», ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 55։

Երևանի թեմական դպրոց

Երևանի թեմական դպրոցը պատվավոր տեղ է գրավում հայ նշանավոր ուսումնական հաստատությունների շարքում։ Այն աչքի ընկնող դեր է խաղացել մեր ժողովրդի կուլտուրական զարգացման գործում։ Ճիշտ է, այն համարվել և, իհարկե, հիմնականում հանդիսացել է հոգևոր դպրոց, որի գլխավոր խնդիրն է եղել հայ եկեղեցու սպասավորների պատրաստումը, բայց այնտեղից դուրս են եկել նաև ոչ քիչ թվով մշակույթի ու հասարակական կյանքի ակտիվ գործիչներ։

Երևանի թեմականը Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելուց հետո մեզ մոտ ստեղծված և պաշտոնական ճանաչում գտած առաջին ազգային ուսումնական հաստատությունն է, որն իր շուրջ 80 տարվա գոյության ընթացքում անցել է բավականաչափ բարդ ու դժվարին, բայց և մեծ ու հարուստ ճանապարհ։

Այս դպրոցի մանրամասն պատմությունը գրել է ականավոր գիտնական Լեոն՝ «Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի 1837—1912», Թիֆլիս։ 1888-ին Տփխիսում լույս է տեսել նաև «Հիսնամյակ հայոց հոգևոր թեմական դպրոցի Երևանայ» գիրքը, որը փաստագրական նշանակություն ունի։

Այդ դպրոցին մի առանձին ենթագլուխ է հատկացրել նաև պրոֆ. Մ. Հ. Սանթրոսյանը՝ «Արևելահայ դպրոցը 19 դ. առաջին կեսին» աշխատության մեջ։

Մենք կասմանափակվենք նրա մասին մի քանի համառոտ տեղեկություններ հաղորդելով, օգտագործելով ինչպես նշված գրքերը, այնպես էլ մեր ձեռքի տակ եղած արխիվային նյութերը։

Երևանի թեմական դպրոցը (սեմինարիան) հիմնվել է 1837-ին՝ ցարական կառավարության կողմից հայ եկեղեցու վերաբերյալ 1836-ին հաստատված «Կանոնների» («Պոլոժենիա») հիման վրա։ Սկզբնական շրջանում դպրոցը գտնվել է նյութական ծանր պայմանների մեջ։ Տված ուսումն էլ տարբական սահմաններից չի անցել։ Կառավարության կարգադրությամբ այդ դպրոցում պետք է սովորեին միայն հոգևորականների երեխաները, սակայն դպրոցը հաճախ ստիպված է եղել խախտել այդ կարգադրությունը և ընդունել նաև աշխարհականների երեխաներին, քանի որ միայն հոգևորականների սակավաթիվ երեխաների ուսման վարձով դպրոցի գոյությունը պահպանել անհնարին էր։

Ներսես Աշտարակեցին, որ խոսք դեմ էր 1836 թ. «Պոլոժենիային» և նրա հիման վրա ստեղծված թեմական սեմինարիաները համարում էր անօգտակար հայերի համար, 1849-ին կարգադրում է փակել Երևանի թեմական դպրոցը։ Այն վերաբացվում է միայն Աշտարակեցու մահից հետո՝ 1857-ի վերջերին։ Այդ ժամանակից սկսած աստիճանաբար կարգավորվում է դպրոցի կյանքը։ Մասամբ լուծվում է նրա նյութական ապահովության խնդիրը։ Նրա համար կառուցվում է նոր շենք, աստիճանաբար աշխատանքի են ընդունվում ավելի կրթված ու զարգացած մարդիկ, մտցվում է դպրոցի գնահատման հոգեբարձական կարգը, որը առաջադեմ ուժերի, մասնավորապես հայ վաթսունականների պայքարի արդյունքը էր։ Մասամբ հաղթահարվում է դպրոցի նեղ կաստայական ոգին, նրանում սովորելու իրավունք են ստանում նաև աշխարհական անձինք, գծագիրն ու փոխվում է նաև կրթության բովանդակությունը։ Ուժեղացվում են հայագիտական առարկաները, մուտք է գործում մանկավարժությունը, իսկ դա վկայում էր, որ դպրոցին տրվում է ոչ այնքան հոգևոր, որքան աշխարհիկ ուղղություն, նրան առաջադրելով հայ ազգային տարբական (ժխական) դպրոցների համար ուսուցչական կադրեր պատրաստելու խնդիրը։

Հետևհետև մուտք է գործում աշխարհաբարը, նեղելով գրաբարի գերիշխող տեղը ուսուցման մեջ։

Իհարկե, 60—70-ական թվականներին ևս դպրոցն ունեցել է իր վերելքի ու անկման տարիները, սակայն այդ բոլորով հանգերձ նա այլևս այն չէր, ինչ նախկինում էր՝ 30—40-ական թվականներին։ 1867-ին ունեցել է 100 սովորող։

Այս դպրոցի բարեկարգման գործում մեծ դեր են խաղացել Եվրոպայի և Ռուսաստանի համալսարաններում կրթված և ժամանակի հասարակական ու մանկավարժական առաջավոր գաղափարներով զինված մարդիկ։ Առանձնապես պետք է նշել հայ նշանավոր մանկավարժներ Խորեն Ստեփանեի, Մարգիս Բեկնազարյանի և այլոց բեղմնավոր ու օգտաշատ աշխատանքը այս դպրոցում։ Բավական է ասել, որ Ս. Բեկնազարյանը ամբողջ 10 տարի (1876—1886) հանդիսանալով այդ դպրոցի տնօրեն, մեծամեծ փոփոխություններ է մտցրել նրա կյանքում, դարձնելով այն ժամանակի պահանջներին բավարարող կանոնավոր ուսումնական հաստատություն։ Մի քանի տարի Երևանի թեմական տեսուչ է եղել նաև ականավոր մանկավարժ Սեդրակ Մանդինյանը։

1900—1920 թվականներին թեմական դպրոցը հանդիսացել է աշակերտական խմբումների և հասարակական տարբեր հոսանքների բախման կենտրոններից մեկը Երևանի նահանգում։

Դպրոցը եղել է միջնակարգ, ունենալով պատրաստական (տարբական) խմբեր և առաջինից վեցերորդ դասարաններ։ Երկար տասնամյակներ այս դպրոցին են ենթարկվել նաև Երևան քաղաքում եղած ժխական դպրոցները։

(Երևանի թեմական դպրոցին վերաբերող արխիվային նյութերը անչափ շատ են. այսուհետ պարզապես հեռաբաշխ չի թվարկել դրանք)։

Երևանի Կաթուղիկե Ս. Աստվածածին եկեղեցու Խրիմյան ժխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման թվականը մեզ անհայտ է։ Ինչպես երևում է Երևանի թեմական դպրոցի հոգաբարձության կողմից կաթողիկոսին ուղղված մի նամակից՝ Ս. Աստվածածնի դպրոցը 1884-ից սկսած ենթարկվել է թեմական դպրոցին և համարվել է նրա պատրաստական։ Հենց այդ պատճառով էլ դուրս է մնացել 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակից, թեև մեր ձեռքի տակ եղած մի քանի փաստաթղթեր վկայում են, որ թեմականի պատրաստական դասարանները ևս այդ ժամանակ փակվել են։ 1884-ին եղել է միդասյան արական դպրոց։ 1896-ի ընդհանուր փակումից այս դպրոցն էլ չի փրկվել, թեև շարունակել է մնալ թեմական դպրոցի նախապատրաստականը։

Վերաբացվել է 1905-ին, որպես երկսեռ դպրոց և կոչվել է Խրիմյանի անունով։ 1907—08 ուս. տարում ունեցել է երկու նախակրթարան, 84 աշակերտ և 43 աշակերտուհի։ 1911-ին դարձել է առանձին դպրոց։ 1913-ին ունեցել է 121 աշակերտ (31 աղջիկ), 1917-ին՝ 147 աշակերտ (49 աղջիկ), 6 ուսուցիչ։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 350, թ. 19; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 7; ֆ. 7, գ. 167, թ. 1—56; գ. 172, թ. 6; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 27; գ. 865, թ. 75; ֆ. 13 ց. 7, գ. 264, թ. 55, ՍՍՀՄ ՊԿՊԱ (Լեն.), ֆ. 811, ց. 150, գ. 483, թ. 55,
Լեռ. «Երևանի թեմական դպրոցի պատմ.», էջ 532.

Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու (Կոնդի) ծխական դպրոց

Երևան քաղաքի հնագույն հայկական դպրոցներից է։ Հավանաբար հիմնվել է 1867-ին։ 1869-ին ունեցել է 2 ուսուցիչ և 68 աշակերտ, 1879-ին՝ 65 աշակերտ։ 1885-ին փակվել է, թեև համարվել է Երևանի թեմական դպրոցի նախապատրաստականը։

Վերաբացվել է 1886-ին։

Երկրորդ անգամ փակվել է 1896-ին և վերաբացվել 1905-ի վերջերին։ 1907—08 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ունենալով 3 ուսուցիչ և 84 աշակերտ (14 աղջիկ)։ 1911—12 ուս. տարում՝ 4-ամյա դպրոց՝ 176 աշակերտով (6 աղջիկ)։ Տարօրինակ կերպով 1913—14 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 76 հոգու (մի այլ փաստաթղթում 1914-ի փետրվարին ցույց է տրված 120 հոգի)։ 1917-ին ունեցել է 70 աշակերտ (23 աղջիկ) և 4 ուսուցիչ։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 87, թ. 6; ֆ. 56, գ. 37, թ. 13; գ. 71, թ. 37; գ. 43, թ. 11; գ. 50, թ. 61; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 7; գ. 492, թ. 116; ֆ. 7, գ. 167, թ. 1—56;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 3; ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27;
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպ.», 1911—12, «Արարատ», 1870, թ. էջ 166։

Երևանի Նորքի թաղամասի արական եկ. ծխական դպրոց

Հիմնվել է 1860-ին՝ Ս. Սիմիոն եկեղեցու բակում, տեղի ավ. քահանա Պողոս Տեր-Ավետիսյանցի ջանքերով և ժողովրդի ակտիվ մասնակցությամբ։ Նույն Տեր-Ավետիսյանցը երկար տարիներ եղել է այդ դպրոցի վերատեսուչ և հոգաբարձության անդամ։ Ավանդվել են հետևյալ առարկաները. հայոց լեզու (ընթերցանություն և թարգմանություն գրաբարից աշխարհաբար), թերականություն, կրոնագիտություն, ազգային պատմություն, սրբազան պատմություն, եկեղեցական արարողություն, վայելչագրություն, ռուսաց լեզվով՝ ընթերցանություն թարգմանությամբ, թվաբանություն, բառագիտություն, վայելչագրություն։ 1870-ական թվականներին դպրոցը գտնվել է բավականաչափ բարեկեցիկ վիճակում, առանձնապես հաջող է տարվել հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության ուսուցումը։ 1873-ին ունեցել է 57 աշակերտ, 2 ուսուցիչ։

1885-ին փակվել է, 1886-ի՝ վերաբացվել։ 1888-ին ունեցել է 3

ուսուցիչ, 43 աշակերտ։ 1895-ին եղել է երկդասյան (մի այլ փաստաթղթի համաձայն՝ միդասյան) արական դպրոց 60 աշակերտով։ 1896-ին փրկվել է փակումից, որովհետև այն պահվել է բացառապես տեղի Ս. Սիմոն եկեղեցու եկամուտներով։ Սակայն 1898-ին այս դպրոցը ևս փակված է եկեղեցու եկամուտներով։ Սակայն 1898-ին այս դպրոցը ևս փակված է եկեղ., քանի որ այդ թվականին այլևս հայկական ոչ մի դպրոց (թեմական դպրոցներից բացի) չէր գործում։ Դրան ապացույց է նաև այն, որ հայկական դպրոցի փակումից հետո Նորքում բացվել է պետական դպրոց։ Վերաբացվել է 1905-ի վերջերին, որպես երկսեռ դպրոց (որտեղ է միացել տեղի աղջիկների դպրոցը)։ 1907—08 ուս. տարում ունեցել է 5 ուսուցիչ և 157 աշակերտ (30 աղջիկ)։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա տարրական դպրոց, ունենալով 4 ուսուցիչ, 60 աշակերտ և 30 աշակերտուհի։ 1913—14 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 75-ի (30 աղջիկ), 1917-ին հասել է 110-ի (48 աղջիկ)։

«Արարատ», 1871, թ. էջ 304, 1871—1872, թ. էջ 127—128; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 58, թ. 129—130; գ. 167, թ. 1—56; գ. 172, թ. 6, գ. 120, թ. 1; ֆ. 56, գ. 31, թ. 37; գ. 43, թ. 11; գ. 50, թ. 65; գ. 182, թ. 7; գ. 492, թ. 116; ֆ. 20, գ. 113, թ. 3—6; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 42,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 27; ֆ. 422, գ. 8717, թ. 5; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպրոց 1911—12»։

Երևանի Նորքի թաղամասի Ճողկաթյան օրիորդաց դպրոց

Հիմնվել է 1869-ին՝ տեղի հասարակության և ավ. քահ. Ա. Տեր-Ավետիսյանցի ջանքերով։ Առաջին ուսուցիչներն են եղել Մարգարիտ Տեր-Հովսեփյանցը և Սիրիդուխտ Մարկոսյանցը։ Առաջին տարիներին ունեցել է 24—30 աշակերտուհի։ Ուսուցանվել են հայոց լեզու, թարգմանություն գրաբարից աշխարհաբար, ազգային պատմություն, կրոն, ձեռագործ, վայելչագրություն և երգ։ 1871-ին ունեցել է 1 ուսուցչուհի, 10 աշակերտուհի, 1873-ին՝ 25 աշակերտուհի։ 1885-ին փակվել է, 1888-ին եղել է միդասյան ծխական դպրոց՝ 27 աշակերտուհիներով։ 1895-ին ունեցել է 20 աշակերտուհի։

Նորքի արական դպրոցի նման այս դպրոցը ևս 1896-ին չի փակվել, սակայն ոչ երկար ժամանակով, 1898-ին այն նույնպես փակված է եղել։

1905-ին վերաբացվել է տեղի արական դպրոցի հետ միացած։

1877-ին Մովսես Հարությունյանը Նորքում բաց է արել աղջիկների նոր դպրոց, հավանաբար մասնավոր։

«Արարատ», 1870—71 թթ., էջ 304; 1871—72 թթ., էջ 127—128; 18177, էջ 117—118, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 58, թ. 129—130; գ. 120, թ. 1; գ. 172, թ. 6—11; ֆ. 56, գ. 31, թ. 37; գ. 33, թ. 3; գ. 43, թ. 11; գ. 50, թ. 65—68; «Վիճ տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 42; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 866, թ. 158; գ. 865, թ. 75։

Երևանի Պողոս-Պետրոս եկ. ծխական դպրոց

Երևան քաղաքի հնագույն հայ դպրոցներից մեկն է։ Հիմնվել է 1860-ական թվականներին։ 1869-ին ունեցել է 2 ուսուցիչ և 33 աշակերտ, 1871-ին՝ 60, 1873-ին՝ 58 աշակերտ։

Մի զեկուցագրում նշված է, որ Պողոս-Պետրոս դպրոցը բացվել է 1878-ին, կնշանակի այն մինչ այդ փակված է եղել։ 1881—82 ուս. տարում ունեցել է 46 աշակերտ։ 1884-ին գործել է, իսկ 1885-ին փակվել։ Թեև համարվել է Երևանի թեմական դպրոցի պատրաստական։

1886-ի վերաբացումից հետո այլևս հայ դպրոցների ցուցակներում առանձին չի նշվել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 87, թ. 6; ֆ. 56, գ. 37, ց. 13, գ. 22, թ. 3; գ. 31, թ. 37; գ. 43, գ. 50, թ. 61; գ. 22, թ. 88; ֆ. 8, գ. 10, թ. 40; «Արարատ», 1869, էջ 106։

Երևանի Սահականուշյան օրիորդաց դպրոց

Հիմնվել է 1878 թ. (մի այլ փաստաթղթի համաձայն՝ 1877-ին) Կանգ թաղամասի Ս. Հովհաննես եկեղեցու բակում՝ ակնառավոր հայ մանկավարժ Ս. Բեկնազարյանի ջանքերով։ Երևանի մյուս ծխական դպրոցների նման (Գայանյան դպրոցից բացի) Սահականուշյան դպրոցը ևս ենթարկվել է տեղի թեմական դպրոցին, որի տնօրենն այդ ժամանակ նույն Բեկնազարյանն էր։

Առաջին ուսուցչուհին է եղել Հեղինե Տեր-Գրիգորյանը, որի մասին «Մշակ» թերթում գրված է հետևյալը. «Նույն օրից էլ (հիմնադրման օրից Ս. Ե.) օրիորդ Հեղինե Տեր-Գրիգորյանը ընդունեց վարժուհիության պաշտոնը, ցույց տվեց իր ջերմեռանդությունը դեպի ուսումը և կրթություն տարածելը կանանց սեռի մեջ, ցույց տվեց երեսեցիներիս իր ազնիվ զգացմունքը, որին մինչև այսօր էլ համակրում են և հուսալի է, որ օրիորդի ջերմեռանդ աշխատությունը ժամանակին փառք կպսակվի» («Մշակ», 1879 թ. № 95)։

Բացման տարում ունեցել է 35 աշակերտուհի։

Այս դպրոցը ևս 1885-ին փակվել է և 1886-ին վերաբացվել Գայանյան դպրոցի հետ միացած (Լեոն նշում է, որ այդ միացումը տեղի է ունեցել 1882—83 ուս. տարում, որ, իհարկե, սխալ է։ 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակներում Սահականուշյան դպրոցը ցույց է տրված առանձին)։

Գայանյան-Սահականուշյան դպրոցների տնօրենուհին է եղել հայ առաջին կին մանկավարժներից մեկը՝ Գայանե Հովհաննիսյանը (Մաակյանը), որը և նախադպրոցական դաստիարակության հիմքն է դրել Հայաստանում։

(Մշակ», 1879 թ., № 24 և 95, Լեո, «Պատմութ. Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի», էջ 290—292, «Էջմիածնայի հայոց հոգևոր թեմական դպրոցի Երևանայ», էջ 179 և այլուր։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 50,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61; գ. 22, թ. 88։

Երևանի Ս. Սարգիս եկեղեցու ծխական դպրոց

Երևանի Ս. Սարգիս եկեղեցու անունով ծխական դպրոց առաջին անգամ հանդիպում է Երևանի թեմի 1913—14 ուս. տարվա դպրոցների տեղեկագրում։ Այդ ուսումնական տարում էլ բացվել է՝ ստացած լինելով կաթողիկոսի հատուկ օրհնությունն ու թույլտվությունը։ Ճիշտ է, այդ դպրոցը թեև առանձին չի նշվել նախորդ տարեմտյակների ցուցակներում, բայց փաստորեն գոյություն է ունեցել ավելի վաղ ժամանակներից։ Հայտնի է, որ Ս. Սարգիս եկեղեցու բակում է գտնվել նաև Երևանի թեմական դպրոցը, որը դեռևս անցած դարի 60—70-ական թվականներին իր նախապատրաստականներն է ունեցել ինչպես սեփական շենքում, այնպես էլ Պողոս-Պետրոս և Ս. Հովհաննես եկեղեցիների կից։ 1885-ին այդ դպրոցները փակվել են։

Հետագայում որպես առանձին դպրոց վերաբացվել ու գոյություն է ունեցել միայն Ս. Հովհաննես եկեղեցու դպրոցը, իսկ մյուս երկուսի ճակատագիրը մեզ անհայտ է (ենթադրում ենք, որ դրանք մնացել են որպես թեմականի նախապատրաստականներ)։ Եվ միայն 1913—14 ուս. տարուց Ս. Սարգսի ծխական դպրոցը հիշատակվել է առանձին։ Եղել է միայն դպրոց՝ առանց սեփական շենքի ու դրադարանի, ունեցել է 51 աշակերտ, 17 աշակերտուհի։ Ցույց է տրված նաև 1914-ին կազմված երկու այլ ցուցակներում։ 1817-ին ունեցել է 83 սովորող (14 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 6; գ. 167, թ. 1—56; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 55, «Արարատ», 1913, № 11, էջ 876։

Երևանի Ս. Օհան եկեղեցու ծխական դպրոց

Պետական մարմինների կողմից 1914 թվականին կազմված երկու ցուցակներում Երևան քաղաքում ցույց է տրված հայկական ծխական դպրոց՝ Ս. Օհան (св. Иоанна) եկեղեցուն կից։ Ըստ այդ ցուցակների հիշյալ դպրոցը 1914 թվականին ունեցել է 4 ուսուցիչ և 92 աշակերտ։

Բանն այն է, որ Երևանում այդ անունով եկեղեցի, մեզ մոտ եղած տվյալների համաձայն, գոյություն չի ունեցել ո՛չ նախկինում, ո՛չ էլ 1914 թվականին։ Գոյություն է ունեցել Ս. Հովհաննես եկեղեցի և

նրան կից դպրոց (Կանդում), որը նույնպես նշված է վերևում հիշատակված պետական ցուցակներում։ Հայկական աղբյուրներից ոչ մեկում չենք հանդիպում Երևանում գործած Ս. Օհան եկեղեցու անունով դպրոց։ Որտեղի՞ց են պետական մարմինները վերցրել այդ դպրոցի մասին իրենց տվյալները, մենք չգիտենք։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27;
ՍՍՀՄ ՊԿՊԱ (Լեն.), ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 55.

Երևանի «համալսարան»

1919—20 թվականներին Երևանում համալսարան բացելու փորձ է արվել, փորձ, որը հենց սկզբից ձախողման էր դատապարտված։ Հայաստանի խորհուրդը (պառլամենտը) և մինիստրների խորհուրդը այդ մասին նույնիսկ հատուկ «Օրենքներ» են ընդունել։

Մի որոշման մեջ հանրային կրթության մինիստրին հանձնարարվել է «մշակել ուսանողների կողմից համալսարանին վճարելիք ուսումնավարձի քանակ ու ձևը»։

Ուրեմն այդ համալսարանը փաստորեն սպասարկելու էր հարուստների զավակներին և փակ էր լինելու բանվորների ու աշխատավոր գյուղացիների առջև։

Հանրային կրթության մինիստրը իր «շտապողական» նամակով դիմել է մինիստրների խորհրդին, խնդրելով որոշում ընդունել համալսարանը «առժամանակաց» Ալեքսանդրապոլ «տեղափոխելու» մասին, քանի որ «Երևան քաղաքում անհնար է գտնել շենքեր նույնիսկ բոլոր տարրական ու միջնակարգ դպրոցների կարիքները բավարարելու համար» (նույն տեղը, թ. 83)։

1920 թ. հունվարի 31-ին տեղի է ունենում այդ թերածին «համալսարանի» բացումը Ալեքսանդրապոլում։ Սակայն «դաշնակների համալսարանը» Ալեքսանդրապոլում մի քանի անկանոն պարապմունքներ ունենալուց հետո տեղափոխվում է Երևան (1920 թ. հունիսին), բայց այստեղ էլ չի կարողանում վերսկսել գաղափարությունները նույնիսկ իր միակ պատմա-լեզվաբանական ֆակուլտետում (Լ. Պ. Զարիբջանյան, Երևանի պետական համալսարան, Երևան, 1965, էջ 34)։

Լ. Պ. Զարիբջանյանը մի շարք փաստեր է բերում ապացուցելու, որ, իրոք, այդ «համալսարանը» Երևանում ոչ մի օր չի գործել։

Մեր ձեռքի տակ եղած փաստերը նույնպես այդ են ապացուցում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 67/199, գ. 40, թ. 36; գ. 39; թ. 71, գ. 41, թ. 83, 86, գ. 131, թ. 98, 99, 213, ֆ. 75/207, գ. 74, թ. 62, Լ. Պ. Զարիբջանյան «Երևանի պետական համալսարանը», Երևան, «Միտք» հրատարակչություն, 1965, էջ 31—35։

Զոհրաբլու (այժմ՝ Մրգանուշ, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Զոհրաբլու գյուղի հայկական ծխական դպրոցին հանդիպել ենք միայն մի անգամ։ Երևանի գավառի 2-րդ բաժնի (Ղամարլուի շրջ.) պետի 1905 թ. դեկտեմբերի 9-ի գրությունն մեջ (ուղղված Երևանի նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորին), նշված են այդ շրջանի այն դպրոցները, որոնք վերաբացվել են 1905-ին և գտնվել են հայ Գրիգորյան եկեղեցական իշխանությունների իրավասության տակ։

Այդ դպրոցների շարքում է նաև Զոհրաբլու գյուղի ծխական դպրոցը։

Այն փաստը, որ հայ դպրոցների վերաբացումը թույլ տալուց անմիջապես հետո բացվել է նաև Զոհրաբլուի դպրոցը, վկայում է, որ այն գոյություն է ունեցել մինչև 1896 թվականը։

Զոհրաբլուի ծխական դպրոցը չի հանդիպում նաև հետագա տարիների (1905-ից հետո) փաստաթղթերում ու տեղեկագրերում։

Գիտենք, որ 1911—1917 թթ. Զոհրաբլու գյուղում գործել է պետական (ռուսական) դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 162, թ. 122, գ. 1521, թ. 2, գ. 389, թ. 48.

Թազաքենդ (Թազագյուղ, այժմ՝ Այնթապ, Մասիսի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Երևանի նահանգապետի կողմից Կովկասի կառավարչապետի անունով 1896 թ. մարտին ուղարկված գրությանը կից ցուցակում նշված է նաև Երևանի գավառի Թազաքենդ գյուղի ծխական դպրոցը։

Թազաքենդ գյուղի ծխական դպրոցը հանդիպում է նաև 1906-ի սկզբներին Երևանի թեմում բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։

Սկզբում մենք հակված էինք կարծելու, որ խոսքը Կոտայքի (այժմ Արզնիի) շրջանի Թազագյուղի (Թազաքենդի) մասին է, քանի որ 1906-ի ցուցակում այն նշված է այդ շրջանի Գյամբեզ և Ավան գյուղերից անմիջապես հետո (բայց և Ներքին Ղամարլու գյուղից անմիջապես առաջ), սակայն հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդ ենթադրությունը սխալ է։

Բանն այն է, որ Երևանի թեմի եկեղեցական ծխական դպրոցների 1908—09 և 1913—14 ուս. տարիների ցուցակներում որոշակիորեն նշված է Զանգիբասարի շրջանի (այժմ՝ Մասիսի շրջան) Թազագյուղի (նաև Թազաքենդ) ծխական դպրոցը, իսկ Կոտայքի Թազագյուղի անունով ոչ մի փաստաթղթում դպրոց չի հանդիպում։

Ուրեմն հիշյալ Թազաքենդը ներկա Մասիսի շրջանի Թազագյուղն է (1970-ից՝ Ալենապ), որի ծխական դպրոցը հիմնվել է 1894-ին (նախորդ տարիների ցուցակներում այն չի հանդիպում)։

1896-ի վերջերին այս դպրոցը ևս փակվել է և վերաբացվել 1905-ին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ և 76 աշակերտ (17 աղջիկ)։ 1911-ին եղել է քառամյա երկսեռ դպրոց՝ 82 աշակերտով (15 աղջիկ), իսկ 1913—14 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 65-ի (15 աղջիկ), իսկ 1917-ին 54-ի (15 աղջիկ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 866, թ. 158; ֆ. 422, գ. 8717, թ. 8; ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27., ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 118; գ. 182, թ. 7; գ. 498, թ. 19; ֆ. 7, ց. 1, գ. 163, թ. 6; գ. 162, թ. 122; գ. 167, թ. 1—56։

Թամամլու (այժմ՝ Բուրաստան, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Թամամլու գյուղում ծխական դպրոց է գործել 1873-ից սկսած։ Առաջին տարին ունեցել է 16 աշակերտ։ Ուսուցիչն է եղել Հովհաննես Բեկզադյանցը։ Այդ դպրոցը մտել է 1875-ին էջմիածնի սինոդի կողմից Կովկասյան իշխանություններին ներկայացված հայ դպրոցների ընդհանուր ցուցակում, նշանակում է 1875-ին ևս այն գործել է։

Ցավոք, հետագա տասնամյակների ցուցակներից և ոչ մեկում այս դպրոցն այլևս չի երևում։ Հավանաբար այն երկար կյանք չի ունեցել։ Եվ առհասարակ մենք չկարողացանք պարզել, թե արդյոք մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը Թամամլու (Ղարհամզալու) գյուղը որևէ դպրոց ունեցե՞լ է, թե ոչ։ Այդ գյուղը չի հիշատակվում ո՛չ հայկական, ո՛չ էլ պետական (ռուսական) դպրոցներ ունեցող գյուղերի ցուցակներում։

Ինչպես երևում է, Թամամլուի երեխաների մի մասը սովորել է հարևան Ղուլլասար (այժմ՝ Դիմիտրով) գյուղում դեռևս 90-ական թվականների սկզբներին հիմնված պետական երկդասյան դպրոցում, որտեղ 1908-ին սովորած 153 աշակերտներից 90-ը եղել են հայ երեխաներ։ Հավանաբար Թամամլուի երեխաները սովորել են նաև հարևան Թոխանշալու (այժմ՝ Մասիս) գյուղի հայկական ծխական դպրոցում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 13, ֆ. 19, ց. 1, գ. 958, թ. 7, գ. 172, թ. 7։

Թեղրաբաղ (այժմ՝ Ջորաղբյուր, Աբովյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

1884-ին գործել է, ունենալով մի դասարան։ 1885-ին փակվել է։ Հետագա տարիների փաստաթղթերում այլևս չի երևում։ Հայտնի է, սա-

կայն, որ 1917-ին գործել է, ունենալով երկամյա դասընթաց, 3 ուսուցիչ և 55 աշակերտ (4 աղջիկ)։ Գործել է նաև 1919-ին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56, ֆ. 48, ց. 1, գ. 511, թ. 5։

Թոխանշալու (այժմ՝ Մասիս, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հարգելով Երևանի փոխթեմական հոգևոր եպիսկոպոսի միջնորդությունը, կաթողիկոսը 1913-ի օգոստոսին թույլ է տվել Թոխանշալու գյուղում բաց անելու եկեղեցական ծխական դպրոց, որը և նույն թվականին բացվել է։

1913—14 ուս. տարում եղել է երկամյա խառը դպրոց, ուր սովորել են 44 տղա, 12 աղջիկ։

1914-ի փետրվարին կազմված մի ցուցակում աշակերտների թիվը նշված է 24 հոգի։

«Արարատ», 1913, №10, էջ 876, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 7, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27։

Իմանշալու (այժմ՝ Մխչյան, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1876-ից առաջ կազմված ցուցակներում ցույց չի տրված։ Այդ թվականին ունեցել է 2 ուսուցիչ, 28 աշակերտ, 1881-ին՝ մի ուսուցիչ, 20 աշակերտ։ 1885-ին փակվել է և, հավանաբար, այլևս չի վերաբացվել։ Համենայն դեպս հետագա տասնամյակների ոչ մի ցուցակում ցույց չի տրված։ Բանն այն է, որ 1883-ին Իմանշալու գյուղում բացված է եղել պետությանը ենթակա, բայց տեղի հասարակության միջոցներով պահվող միդասյան դպրոց, որը գործել է մինչև 1918 թվականը, այսինքն՝ մինչև դպրոցների ազգայնացումը։ Հենց դա էլ, մեր կարծիքով, հայկական դպրոցի չվերաբացվելու հիմնական պատճառն է հանդիսացել։

Պետական դպրոցը եղել է երկդասյան, որտեղ 1917-ին սովորել են 106 հոգի (95 հայ, 11 ադրբեջանցի)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1585, թ. 46, գ. 2018, թ. 56։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 71, թ. 3, գ. 50, թ. 61; ֆ. 19, գ. 380, թ. 45—52։

Խոր Վիրապի Ս. Գրիգոր Լուսավորչի վանական դպրոց

1869-ին կաթողիկոսը հաստատել է մի խումբ ազգասերների կողմից կազմված Արտաշատյան ընկերությունը, որի հիմնական խնդիրն է համարել Խոր Վիրապի վանքի վերանորոգումը և հատկապես՝ այդ վանքի վանական դպրոցի կառուցումը և նրա գոյության ապահովումը։

Թե ինչ է արվել այդ դպրոցի համար, մենք չգիտենք, բայց գիտենք, որ 1876-ի ցուցակներում ցույց է տրված, որ այնտեղ եղել են ընդամենը 2 ուսուցիչ և... 3 աշակերտ (վանական անհատական ուսուցում)։

Մի այլ փաստաթղթից երևում է, որ 1870-ին գործել է Մանվել սարկավագ ժամկոչանի «Արտաշատյան մասնավոր դպրոց Խոր Վիրապայ», որն ունեցել է ընդամենը 6 աշակերտ։ Կիրառվել է անհատական ուսուցման համակարգը։

«Արարատ», 1870, ԺԱ, էջ 274—75, ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 71, թ. 3, գ. 23, թ. 12։

Զամարլու Ներքին և Վերին (այժմ՝ Արտաշատ քաղաք) գյուղերի ծխական դպրոցներ

Այս երկու գյուղերի դպրոցները մենք միասին դրինք հետևյալ պատճառներով.

1. Արխիվային փաստաթղթերում այս դպրոցները հանդիպում են «Ներքին Զամարլուի դպրոց», «Վերին Զամարլուի դպրոց», բայց ավելի հաճախ՝ «Զամարլուի դպրոց» անուններով, այնպես, որ երբեմն հնարավոր չէ պարզել, թե ո՞ր Զամարլուի մասին է խոսքը։

2. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր ընդգրկած ժամանակաշրջանի (1850—1920) տարբեր էտապներում այդ գյուղերից մեկում եղած դպրոցը սպասարկել է նաև մյուս գյուղի երեխաներին, հետևաբար, որոշ թվականներին այդ երկու գյուղերը միասին ունեցել են մի դպրոց։

Այսպես, օրինակ, Էջմիածնի սինոդի արխիվից երևում է, որ դեռևս 1870-ին Ներքին Զամարլու գյուղում գործել է հայկական եկեղեցական ծխական դպրոց, որտեղ սովորել են նաև Վերին Զամարլու գյուղի երեխաները։

1873-ին Զամարլուի դպրոցում (չի նշված Վերին, թե՞ Ներքին) սովորել են 18 երեխաներ, 1876-ին՝ 19, իսկ 1881-ին Ներքին Զամարլուի դպրոցն ունեցել է 3 ուսուցիչ, 40 աշակերտ։ Եղել է արական դպրոց։ 1885-ին Զամարլու դպրոցը փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։

1888-ին Զամարլուն ունեցել է կենտրոնական (մի քանի գյուղերի) երկդասյան արական դպրոց, որտեղ սովորել են 73 հոգի (հոգևորականների զավակներ՝ 8, վաճառականների՝ 14, արհեստագործների՝ 8, երկրագործների՝ 43)։

1894-ին այս դպրոցում սովորել են նաև 14 աղջիկներ (տղաներ՝ 100)։

1896-ին փակված հայ դպրոցների ցուցակում նշված է նաև Զամարլվի Ս. Սարգիս և Ս. Աստվածածին եկեղեցիների դպրոցը (կարելի է ենթադրել, որ դպրոցը կցված է եղել այդ երկու եկեղեցիներին, ինչպես նաև հնարավոր է, որ հիշյալ եկեղեցիներից յուրաքանչյուրն ունեցած լիներ իր դպրոցը)։

1905-ի վերջերին վերաբացվել է Վերին Զամարլու գյուղի ծխական երկսեռ դպրոցը։ Երկու-երեք ամիս անց վերաբացվել է նաև Ներքին Զամարլու գյուղի ծխական դպրոցը։ 1907—08 ուս. տարում Վերին և Ներքին Զամարլուների դպրոցները (տեղեկագրում ցույց է տրված միասին) ունեցել են 3 ուսուցիչ և 169 աշակերտ (44 աղջիկ)։ 1911—12 ուս. տ. Զամարլուի դպրոցը (ցույց չի տրված՝ Վերին, թե Ներքին) եղել է 5-ամյա, իսկ 1913—14 ուս. տ. ունեցել է 147 աշակերտ (45 աղջիկ)։ 1917-ին՝ 152 աշակերտ (56 աղջիկ) և 6 ուսուցիչ։ 1918—19 ուս. տարում չի գործել։

Հետաքրքրական է հետևյալ փաստը։ 1910 թվականին Զամարլուի դպրոցը գտնվել է նյութական ծանր պայմանների մեջ։ Դրությունից դուրս գալու համար դպրոցի հոգաբարձությունը կազմել է հասարակական մի համախոսական, որով պահանջվել է հատուկ «ծխական տուրք» դնել Զամարլուի սպիրտի, կոնյակի և օղու գործարանատերերի ու խանութպանների վրա։ Համապատասխան իշխանությունների կողմից հաստատվելուց հետո այդ տուրքը գանձվել է, և դպրոցը դուրս է բերվել նեղ վիճակից։

Վաղուց ի վեր Զամարլվում գործել է նաև պետական երկդասյան դպրոց, որը 1916-ին վեր է ածվել բարձր տարրական ուսումնարանի, իսկ 1917-ին ունեցել է 186 աշակերտ (179 հայ, 6 ադրբեջանցի, 1 ասորի)։

Գործել են նաև պետական (№2) և ռուս-թաթարական դպրոցներ։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 23, թ. 4; գ. 43, թ. 13; գ. 71, թ. 3, գ. 50, թ. 61; գ. 199, թ. 17; գ. 182, թ. 7; գ. 492, թ. 116; թ. 115; ֆ. 19, գ. 556, թ. 34, գ. 380, թ. 45—57, գ. 1521, թ. 27; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպրոց 1911—12 ուս. տ.»; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 5; թ. 8; գ. 1585, թ. 46; «Վեհ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 41, «Նոր դպրոց», 1912, № 15—16; էջ 47—48։

Զաշդա (այժմ՝ Վարդաշատ, Արարատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Զաշդա գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է Երևանի թեմի հայ դպրոցների 1916—17 ուս. տարվա տեղեկագրում։ Եղել է երկամյա երկսեռ դպրոց՝ մի ուսուցչով և 46 աշակերտով (5 աղջիկ)։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 7, գ. 1, գ. 167, թ. 1—56։

Ղարադաղլու (այժմ՝ Մրգավետ, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

«Նոր դպրոց»-ի մի հաղորդումից իմանում ենք, որ 1911-ին Ղարադաղլու գյուղում գործել է ծխական դպրոց, որը գտնվել է Ծաղրահեղ անբարվոք վիճակում։ Այնտեղ կարդում ենք. «Ղարադաղլուի դպրոցը մի փոքրիկ սենյակ է, հողե հատակով, խոնավ պատերով, և լուսավորվում է մի փոքրիկ պատուհանով։ Դպրոցում չկա դասարանական ոչ մի պարագա, չկա ո՞չ նստարան, ո՞չ սեղան, ո՞չ աթոռ, ո՞չ գրատախտակ և ո՞չ մի որևէ հարմարություն»։ Ունեցել է 16 աշակերտ, «որոնք մի կողմից իրենց մերկության և բոկոտն լինելու, մյուս կողմից՝ «դասարանի» ցրտության պատճառներով կուչ եկած անդադար դողդողում են և ձեռքները բերաններից չեն հեռացնում...»։

Այս դպրոցի մասին այլ տեղեկություններ մենք չունենք։

«Նոր դպրոց», 1911, №9—10, էջ 31։

Ճաթղռան (այժմ՝ Հրազդան, Արովյանի շրջ.) գյուղի դպրոց

Ճաթղռան գյուղում եկեղեցական ծխական դպրոցի գոյության մասին մենք տեղեկություն չունենք։ Ինչպես երևում է, այնտեղ գործել է միայն պետական (ռուսական) դպրոց, որը ցույց է տրված լուսավորության մինիստրությանը ենթակա դպրոցների 1914-ի ցուցակում։ Այս դպրոցը բացվել է 1912-ին։ 1918—19 ուս. տարում այն եղել է երկդասյան դպրոց։ Այդ թվականին արդեն ազգայնացված էր, այսինքն՝ գործել է որպես հայկական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 163; թ. 1—4, ֆ. 207, գ. 3, թ. 55։

Մեհրաբ Քուրդքենդ (Նորաշեն Ներքին, այժմ՝ Նորաշեն, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1911—12 ուս. տարվա տեղեկագրում։ Եղել է միայնակ, մի դասարանից կազմված խառը դպրոց, ուր սովորել են 35 տղա և 3 աղջիկ։ 1913—14 ուս. տարում դարձել է եռամյա դպրոց 50 աշակերտով (2 աղջիկ)։ Նահանգապետի կողմից ստորագրված մի ցուցակում աշակերտների թիվը 1914-ի փետրվարին ցույց է տրված 28 հոգի։ 1917-ին ունեցել է մի ուսուցիչ և 44 աշակերտ (17 աղջիկ)։

«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպրոցների՝ 1911—12 թթ.», ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 7; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27։

Ցուվա (այժմ՝ Շահումյան, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1876-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 13 աշակերտ։ Եղել է Ս. Գրիգոր եկեղեցուն կից։ Այս դպրոցի մասին մինչև 1905-ը այլևս տեղեկություններ չունենք։ Այդ թվականի վերջերին նորից է բացվել, սակայն հետագայում դարձյալ փակվել է, վերաբացվելով 1910-ին։ 1912—13 ուս. տարում եղել է 2-ամյա խառը դպրոց, ուր սովորել են 26 տղա և 3 աղջիկ, իսկ 1913—14 ուս. տարում՝ 50 տղա և 1 աղջիկ։ Մի այլ ցուցակում՝ 1914-ի փետրվարին՝ 29 աշակերտ։ 1917-ին ունեցել է եռամյա դասընթաց, մի ուսուցիչ և 83 աշակերտ (20 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 71, թ. 3; գ. 623, թ. 9, գ. 492, թ. 116; ֆ. 7, գ. 172, թ. 7; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 5; ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27; «Նոր դպրոց», 1911, №13—14, էջ 30։

Նովրուզլու (այժմ՝ միացած Արտաշատ քաղաքին) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1884-ին գործել է, իսկ 1885-ին՝ փակվել։ Մինչև 1905-ը այլևս տեղեկություն չունենք։ Այդ թվականին վերաբացվել է։ 1909-ին դպրոցի համար կառուցվել է հարմարավետ շենք։

1912—13 ուս. տարում եղել է երկամյա խառը դպրոց, ուր սովորել են 42 տղա և 2 աղջիկ։ 1914-ին ունեցել է 45 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1917-ին եղել է եռամյա՝ 71 աշակերտով (18 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, գ. 61—64; գ. 623, թ. 37; ֆ. 7, գ. 172, թ. 7; «Նոր դպրոց», 1909, №28—9, էջ 141, 1911, № 13—14, էջ 30։

Նորագավիթ գյուղի (այժմ՝ միացված Երևան քաղաքին) եկ. ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1873-ին ունեցել է 1 ուսուցիչ և 30 աշակերտ։ 1881-ին՝ 1 ուսուցիչ, 25 աշակերտ։ 1885-ին փակված հայկական դպրոցների ցուցակում չի մտել։ Հավանաբար դրանից առաջ այն արդեն փակված է եղել։

Այս դպրոցի մասին հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1905-ի վերջերին, երբ այն վերաբացվել է որպես միդասյան արական դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ, 50 աշակերտ (20 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց, ուր սովորել են 32

տղա, 28 աղջիկ (նահանգապետի ստորագրած ցուցակում՝ 1914-ի փետրվարին՝ 49 աշակերտ)։ 1917-ին ունեցել է 60 աշակերտ (20 աղջիկ)։

Նորագավիթ գյուղում 1901-ից մինչև 1905 թվականը գործել է պետական ռուսական դպրոց (փակված հայկական դպրոցի փոխարեն)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 13; գ. 43, թ. 12; գ. 182, թ. 7; ֆ. 7, գ. 167, թ. 1—56; գ. 172, թ. 6; գ. 492, թ. 116; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46; գ. 8717, թ. 5; ֆ. 13, գ. 7, գ. 364, թ. 27;

Շահաբ (այժմ Մայակովսկի, Արովյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ այս դպրոցը ցույց է տրված 1907—08 ուս. տարում Երևանի թեմում գործած հայ դպրոցների տեղեկագրում։ Ունեցել է 1 ուսուցիչ, 22 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 172, թ. 8; ֆ. 48, գ. 1, գ. 511, թ. 5։

Չիգդամլու (այժմ՝ Ազատավան, Արտաշատի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Չիգդամլուի դպրոցը հարուստ պատմություն ունի։ Այն հնագույն հայ ծխական դպրոցներից մեկն է, որը հիմնվել է 1859-ին՝ Ստեփանոս քահանա Վարդանյանցի կողմից։ Առաջին ուսուցիչն է եղել նշված քահանայի որդին՝ Մահակ քահանան (Երևանի թեմական դպրոցն ավարտած)։ 1873-ին ունեցել է 25 աշակերտ։ 1873—1884 թթ. ավել է ընդամենը 30 շրջանավարտ։ 1885-ին փակվել է կառավարության կարգադրությամբ։ Կաթողիկոսին ուղարկված մի համախոսական-որոշման մեջ ասված է, որ այդ գյուղի հասարակությունը 1886-ի սեպտեմբերի 27-ին «Միաձայն հոժար ցանկություն հայտնեց բանալ Չիգդամլու գյուղում կենտրոնական միգասյան դպրոց արական սեռի» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 111, թ. 28)։ Իհարկե, դա ոչ թե դպրոցի բացումն էր, այլ վերաբացումը՝ 1885-ի փակումից հետո։ Սակայն այդ ժամանակից դպրոցը ճանաչվել է որպես կենտրոնական, այսինքն՝ սպասարկել է նաև շրջակա գյուղերին։

1888—89 ուս. տարում եղել է միգասյան դպրոց, ունենալով մի ուսուցիչ և 20 աշակերտ։ Երկրորդ անգամ կառավարության հրամանով փակվել է 1896-ին, վերաբացվելով 1905-ի վերջերին։ Հետագայում դարձյալ փակվել է (պատճառը մեզ անհայտ է) և վերաբացվել 1910-ին՝ թեմական տեսուչ Տ. Թաշմանյանի ջանքերով։ 1912—13 ուս. տարում եղել է երկամյա ծխական դպրոց՝ 46 աշակերտով (8 աղջիկ)։ Այդ թվականին ուսանող ուսուցչություն է արել Կարապետ Այվազյանը։ 1914-ին ունեցել է 56 աշակերտ (12 աղջիկ), 1917-ին՝ 70 աշակերտ։

Մեր դարի սկզբից Չիգդամլու գյուղում գործել է նաև պետական միդասյան դպրոց, որտեղ 1917-ին սովորել են 66 հոգի (բոլորը հայեր)։

Չիգդամլու գյուղի ծխական դպրոցի 1859—1892 թվականների համառոտ պատմությունը մեզ հասել է վիճակում պահվում է Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվում (ֆ. 7, ց. 1, գ. 58)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 46, թ. 18; գ. 167, թ. 1—56, գ. 58, թ. 44—51; գ. 172, թ. 6—11; ֆ. 56, գ. 43, թ. 13; գ. 50, թ. 61—64; գ. 192, թ. 7; գ. 172, թ. 8; գ. 492, թ. 116, ֆ. 19, գ. 380, թ. 45—52, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8718, թ. 5; ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 43,
«Նոր դպրոց», 1911, N13—14, էջ 30։

Ջաֆարապատ (այժմ Արգավանդ, Էջմիածնի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ջաֆարապատ գյուղը նախկինում մտել էր Երևանի գավառի մեջ (չգիտք է այն շփոթել Հոկտեմբերյանի շրջանի Ջաֆարապատ, այժմ՝ Գեղարքունի գյուղի հետ)։

Առաջինում միգասյան եկեղեցական-ծխական արական դպրոց է բացվել 1905-ի վերջերին։ Այն 1907—08 ուս. տարում ունեցել է մեկ ուսուցիչ, 24 աշակերտ (4 աղջիկ)։ 1911—12 ուս. տարում ունեցել է միայն մի դասարան, ուր սովորել են 5 տղա, 19 աղջիկ։ Հաջորդ երկու տարիներին աշակերտների թիվն ավելի է նվազել։ 1917-ին ունեցել է 23 աշակերտ (7 աղջիկ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 8; գ. 492, թ. 116; ֆ. 7, գ. 172, թ. 6; գ. 167, թ. 1—56; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 5; ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27;
«Եկեղեցական Երևանի թեմի եկ. ծխ. դպրոց. 1911—12 թթ.»։

Ջրվեժ (Արովյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հիշատակված է 1905—1906 թվականներին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ Եղել է արական ծխական դպրոց։

1907—08 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ, 25 աշակերտ (4 աղջիկ)։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա դպրոց, ունենալով սակայն միայն մի դասարան, ուր սովորել են 35 տղա, 2 աղջիկ։ Դրեթե նույն թիվն է պահպանվել նաև հաջորդ երկու տարիներին։ 1917-ին ունեցել է քառամյա դասընթաց, 3 ուսուցիչ և 130 աշակերտ (47 աղջիկ)։

Մինչև 1905-ը Ջրվեժ գյուղում գործել է պետական ռուսական դպրոց։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. g. 22, գ. 8717, թ. 5; ֆ. 13, g. 7, գ. 264, թ. 27;
ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 56, գ. 182, թ. 8; ֆ. 7, գ. 172, թ. 7; գ. 167, թ. 1—56;
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ժող. դպրոց. 1911—12 ուս. տ.»։

Վարմազիար (այժմ՝ Արևաշատ, Էջմիածնի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Վարմազիար գյուղը նախկինում մտել է Երևանի գավառի մեջ. մենք այդպես էլ թողել ենք, թեև այժմ այն (Արևաշատը) գտնվում է Էջմիածնի շրջանում։

Այս գյուղի դպրոցին առաջին անգամ հանդիպում ենք 1905-ի ցուցակներում։

Ըստ պաշտոնական հաղորդման՝ այն բացվել է այդ թվականի հոկտեմբերին, լինելով արական ծխական դպրոց։

1907—08 ուս. տարվա ցուցակներում չկա։ 1911—12 ուս. տարում եղել է քառամյա դպրոց, ունենալով միայն 2 դասարան, ուր սովորել են 31 տղա, 3 աղջիկ։ 1913—14 ուս. տարում ունեցել է 41 աշակերտ (մի այլ փաստաթղթում 1914-ի փետրվարին ցույց է տրված 51 հոգի)։ 1917-ին աշակերտների թիվը իջել է 31-ի (3 աղջիկ)։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 3, ֆ. 13, g. 7, գ. 264, թ. 27,
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ժող. դպ. 1911—12 ուս. տ.»։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 264, թ. 6; գ. 167, թ. 1—56։

Փարաքար (Էջմիածնի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Պատմական, այդ թվում նաև պաշտոնական, որոշ փաստաթղթերում Փարաքար գյուղը նշված է Շիրաքաթ անունով և պատկանել է Երևանի գավառին (իսկ հետո՝ Էջմիածնի)։

Երևանի գավառապետի կազմած և վերադաս իշխանություններին ներկայացված տեղեկագրի համաձայն Փարաքարի (տեղեկագրում նշված է՝ Շիրաքաթ) եկ. ժող. դպրոցը հիմնվել է 1872-ին։

1873-ին ունեցել է 33 աշակերտ, 1876-ին՝ 1 ուսուցիչ, 25 աշակերտ, 1881-ին՝ 2 ուսուցիչ, 40 աշակերտ։ 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1889-ին։ 1895-ին հայ դպրոցների փակման նպատակով կազմված ցուցակներում նշված է, որ Շիրաքաթի դպրոցը պետք է մնա հայ եկեղեցու իրավասության տակ։ Չնայած դրան, հաջորդ տարում այս դպրոցը ևս փակվում է։ Այն վերաբացվել է 1905-ի վերջերին, որպես միդասյան տղայոց դպրոց. 1907—08 ուս. տարում եղել է միդասյան եկեղ-

դպրոց՝ 3 բաժանմունքով։ Ունեցել է իր սեփական շենքը՝ 3 սենյակից բաղկացած։ Աշակերտների թիվը՝ 68, որոնցից 20-ը՝ աղջիկ։ 1911—12 ուս. տ. եղել է հնգամյա երկսեռ դպրոց՝ 103 աշակերտով (45 աղջիկ) և 4 ուսուցչով։ 1913—14 ուս. տարում ունեցել է 101 աշակերտ (46 աղջիկ), 1917-ին՝ 74 աշակերտ (27 աղջիկ)։

1918—19 ուս. տարում չի գործել։

Հայ դպրոցների երկրորդ փակումից հետո Փարաքարում բացվել է պետական դպրոց, որը սակայն գոյություն է ունեցել մինչև 1905 թվականը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, g. 1, գ. 456, թ. 24; գ. 43, թ. 12; գ. 71, թ. 3; ֆ. 56, գ. 50, թ. 17; գ. 492, թ. 116; ֆ. 7, g. 1, գ. 120, թ. 11, գ. 163, թ. 6—11; գ. 182, թ. 7; գ. 167, թ. 1—56, գ. 172, թ. 6., ֆ. 75/207, գ. 5, «Նոր դպրոց», 1908, № 3, էջ 90։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, g. 7, գ. 863, թ. 73; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ժող. դպրոցների 1911—12 թթ.»։
«Նոր դպրոց», 1909, №10, էջ 88։

Քալարա (այժմ՝ Ղուկասավան, Մասիսի շրջ.) գյուղի ծխական դպրոց

1884-ին գործել է, ունենալով մի դասարան։ 1885-ին փակվել է։ Հաջորդ ավելի քան երկու տասնամյակների ցուցակներում չի երևում։ 1907—08 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ, 20 աշակերտ (բոլորը տղաներ), հետևաբար եղել է արական դպրոց։ Հավանաբար այդ տարում էլ վերաբացվել է։

Ցույց է տրված 1918—19 ուս. տարում Հայաստանում գործած դպրոցների ցուցակում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61; գ. 182, թ. 7։

Քանաքեռի Աբովյանի անվան դպրոց

Քանաքեռը մեր ուսումնասիր գյուղերից մեկն է եղել։ Պատահական չէ, որ այնտեղից դուրս է եկել հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը, որի անունով էլ կոչվել է Քանաքեռի ծխական դպրոցը (այս մասին հիշատակություն կա 1908, 1911—12, 1913—14 և այլ տարիների մի շարք փաստաթղթերում)։

Երևանի գավառապետի պաշտոնական տեղեկագրում Քանաքեռի դպրոցի հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1858-ը։

1868-ին այդ դպրոցի այն ժամանակվա վերատեսուչ Վախթանգ Փարսադանյանի հորդորանքով Քանաքեռի բնակիչները միաձայն որոշել են դիմենվաճառության և մասվաճառության կրպակների, ինչպես նաև եկեղեցու այգու և պարտեզի արդյունքը նվիրել դպրոցին՝ նրա գոյու-

թյունը հարատև դարձնելու համար։ Այդ գործը տեսրինելու նպատակով ընտրել են հոգաբարձուներ, որոնք և հաստատվել են կաթողիկոսի կողմից։ 1869-ին այնտեղ անց է կացվել աշակերտների հարցաքննություն։

1873-ին ունեցել է 1 ուսուցիչ և 50 (մի այլ փաստաթղթով՝ 55) աշակերտ։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է միդասյան ուսումնարան՝ 3 ուսուցչով և 52 աշակերտով։ 1895-ին աշակերտների թիվը հասել է 101-ի, որոնցից 28 աղջիկներ (հնարաբար եղել է երկսեռ դպրոց)։ Նույն թվականին հայ դպրոցների փակման նպատակով պատրաստված ցուցակներում նշված է, որ Քանաքեռի դպրոցը պետք է մնա հայ եկեղեցական իշխանությունների իրավասության տակ, սակայն, ժամանակավորապես, հաջորդ երկու տարիներում այս դպրոցը ևս փակվում է։

Վերաբացվել է 1905-ի վերջերին, որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1911—12 ուս. տարում եղել է հեղափոխ խառը դպրոց՝ 182 աշակերտով (66 աղջիկ)։

1913—14 թվականներին աշակերտների թիվը տատանվել է 175-ի և 165-ի միջև։ 1917-ին ունեցել է 168 աշակերտ (79 աղջիկ)։ 1919-ին գործել է։ 1918—19 ուս. տարվա ցուցակներում չի նշված, հավանաբար չի գործել։

1900 թվականների սկզբներից Քանաքեռում գործել է նաև պետական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 46, թ. 6; գ. 120, թ. 1; գ. 172, թ. 6; ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 23; գ. 380, թ. 17; ֆ. 56, գ. 50, թ. 17—19; գ. 43, թ. 11, գ. 31, թ. 37; գ. 117, թ. 54; ֆ. 75/207, գ. 5, թ. 52; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 511, թ. 21, ֆ. 12, ց. 7, գ. 856, թ. 75; ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27; «Արարատ», 1868—69, ժԱ, էջ 156., 1870, էջ 106; «ՎԲՀ. տեղ 1888—89 ուս. տ.», էջ 43, «Նոր դպրոց», 1909, №2, էջ 88, «Տեղեկագիր Երևանի թեմի եկեղց. ծխ. տարրական դպրոցների 1911—12 թթ.»։

Քանաքեռի աղջիկների եկ. ծխ. դպրոց

Արխիվային մի փաստաթղթում նշված է, որ Քանաքեռի միդասյան իգական ծխական դպրոցը հիմնվել է 1892-ին, սակայն Վրաստանի արխիվից հանված մի այլ փաստաթուղթ ապացուցում է, որ դեռևս 1881-ին Քանաքեռում գործել է աղջիկների դպրոց, որն ունեցել է 1 ուսուցչուհի և 16 աշակերտուհի։

Անկասկած այն հետագայում փակվել է և 1892-ին վերաբացվել, որը և սխալմամբ համարվել է նրա բացման տարեթիվ։

1895-ին միացած է եղել տեղի արական դպրոցին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 48, թ. 1; գ. 120, թ. 1;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 22, գ. 1585, թ. 50։

N/N	ԴՊՐՈՑԻ ՏԻՊԸ	ԱՆՈՒՆԸ	ԲԱՑՄԱՆ ԹՎԱՆՇԱՆԸ	ԵՐԲ ԵՎ ԻՆՉ ԴՊՐՈՑԻ է ՎԵՐԱԾՎԵԼ
1	Դավառական ուսումնարան	—	1832	1868-ից՝ արական պրոգիմնազիա
2	Արական կլասիկական պրոգիմնազիա	—	1868	1881-ից՝ արական գիմնազիա
3	Արական կլասիկական գիմնազիա	—	1881	1919-ից՝ հայկական արական գիմնազիա, 1921-ից՝ երկրորդ աստիճանի №2 դպրոց, այժմ՝ ե. Աբովյանի անվան միջնակարգ դպրոց
4	Ս. Նինայի անվան բարեգործական ընկերության օրիորդաց դպրոց	Ս. Հռիփսիմեի օրիորդաց դպրոց	1850	1884-ից՝ օրիորդաց պրոգիմնազիա
5	Ս. Նինայի անվ. բարեգ. ընկերության օրիորդաց պրոգիմնազիա	Ս. Հռիփսիմեի օրիորդաց պրոգիմնազիա	1884	1898-ից՝ օրիորդաց գիմնազիա
6	Ս. Նինայի անվան բարեգ. ընկ. օրիորդաց գիմնազիա	Ս. Հռիփսիմեի օրիորդաց կլասիկական գիմնազիա	1898	1919-ից՝ հայկական օրիորդաց գիմնազիա, 1921-ից՝ երկրորդ աստիճանի №1 դպրոց
7	Ուսուցչական սեմինարիա	—	1881	
8	Ուսուցչական սեմինարիային կից տարրական դպրոց	—	1882	
9	Երմանիա Տեր-Սարգսյանի մասնավոր (փաստորեն պետական) օրիորդաց պրոգիմնազիա	—	1906	1912-ից՝ օրիորդաց գիմնազիա

1	2	3	4	5
10	Ս. Տեր-Մարգսյանի օրիորդաց գիմնազիա	Այնքանդրյան օրիորդաց N2 գիմնազիա (Այնքանդր առաջինի անունով)	1912	1919-ից՝ օրիորդաց N2 գիմնազիա
11	Քաղաքային տարրական ուսումնարան (ըստ 1872 թ. կանոնների)	—	1880	1899-ից՝ քաղաքային բարձր տարրական ուսումնարան՝ Ա. Ս. Պուշկինի անվան
12	Քաղաքային բարձր տարրական ուսումնարան	Ա. Ս. Պուշկինի անվան	1899	1914-ից՝ լորդասյան
13	Առևտրական դպրոց	—	1912	
14	Տարրական ուսումնարան	Այնքանեանյան	1900	
15	Թափարաշ թաղի արքունական տարրական դպրոց	Թափարաշի	1904	
16	Ռուս-թաթարական երկդասյան արական ուսումնարան	—	1898	
17	Ռուս-թաթարական երկդասյան իգական ուսումնարան	—	1901	
18	Քաղաքային տարրական իգական դպրոց	—	1904	
19	Արական երկրորդ ուսումնարան	—		
20	Ռուս-թաթարական (մուսուլմանական) արական դպրոց	—	1913	
21	Ուղղափառ եկեղեցական ծխական երկդասյան դպրոց	Երևանի ուսումնական եկեղեցուն կից	1914-ին գործել է	
22	Երևանի բանտին կից տարրական դպրոց	—	1900-ին գործել է	
23	Վրաց Լեգարիատի եկեղեցական ծխական ուղղափառ դպրոց		1900-ին գործել է	

Երևանի գավառում

տարբեր տարիներին բացված ու գործած արհունական (պետական) եռաստիճան և ուղղափառ եկեղեցական դպրոցներ

№№	ԴՊՐՈՑԱՎԱՅՐԸ	ԴՊՐՈՑԱՎԱՅՐԻ ՆՈՐ ԱՆՈՒՆԸ	ՀԻՄՔԱՆԸ	Դպրոցի բացման թվականը	Ինչպես է կոչվել դպրոցը	Դպրոցի տիպը 1912-ին
1	Ագամզալու	Մարմարաշեն	Մասիսի	1905	գյուղական հասարակական	միդասյան
2	Ազրաշ Ներքին	Արևշատ	Արտաշատի	1909	»	»
3	Այնալու	Այգեստան	»	1906	»	»
4	Առինջ	»	Արովյանի	1910	»	»
5	Արաքսու		»	1916-ին գործել է	»	»
6	Արզաշար	Վերին Աբաշատ	Արտաշատի	1910	»	երկդասյան
7	Աբգեր		Արովյանի	1887	ուղղափառ եկեղ. ծխ.	միդասյան
8	Արթիկ	Գեղարդ	»	1910	գյուղ. հաս.	»
9	Բաշգյուղի	Գառնի	»	1890	»	երկդասյան
10	Բեյուրք Գալուլար	Գալար	Արտաշատի	1902	»	միդասյան
11	Բեյուրք Վեցի	Վեցի	Ակտաշատ	1883	»	երկդասյան
					»	միդասյան
12	Գյոգանլու	Մրգավան	Արտաշատի	1911		
13	Գյոլ Այսորի	Գյոլաասորի	Արարատի	1912-ին գործել է	ուղղափառ եկեղ. ծխ.	»
14	Գոգթ Հայկական	Գոգթ	Արովյանի	1912	գյուղական հասարակ.	միդասյան
15	Դավալու	բաղ. Արարատ	Արարատի	1898	»	երկդասյան
16	Դոխկուզ	Կանաչուտ	Արտաշատի	1902	»	միդասյան
17	Դվին Ասորի[1]	Վերին Դվին	»	1890	—	երկդասյան
18	Դվին Ասորի	Վ. Դվին	»	1912-ին գործել է	ուղղափառ եկեղ. ծխ.	միդասյան
19	Զոհրաբլու	Մրգանուշ	»	1911	գյուղ.	երկդասյան 1916-ին

[1] Դպրոցը կոչվել է Դվին Այսոր գյուղի անունով, բայց գտնվել է Հայ Դվին գյուղում։

№	1	2	3	4	5	6
20	Իմանշալու[1]	Միքյան	»	1883	»	Երկդասյան
21	Զարգիբի		—	1916-ին գործել է	»	1916-ին Միդասյան 1916-ին
22	Զամարլու Վերին	քաղ. Արտաշատ	—	1890	»	Երկդասյան
23	Զամարլու Քաթարական	»	—	1905	ռուս. Քաթարական	Միդասյան
24	Ղաշգա	Վարդաշատ	Արարատի	1916-ին գործել է	—	Միդասյան 1916-ին
25	Ղուլլաար Ներքին	Դիմիտրով	Արտաշատի	1877	ուղղափառ եկ. ծխ.	Երկդասյան
26	Նեչիլու (Նեչուլու)	—	Մասիսի	1916-ին գործել է	—	Միդասյան
27	Նորագավիթ	Միացվել է Երևան քաղաքին		1902-ին գործել է		չի գործել
28	Շիրաքաթ (Փարաքար)	Փարաքար	Էջմիածնի	1902-ին գործել է	»	չի գործել
29	Չաքմա (—գաշ)		—	1906		»
30	Չանախչի Ներքին	Սովետաշեն	Արարատի	1902	գյուղակ. հաս.	Միդասյան
31	Չիգդամլու	Ազատավան	Արտաշատի	1902-ին գործել է	»	»
32	Չոլմակչի (Նորք)	Երևանի Քաղամաս	—	1900-ին գործել է	սրական	»
33	Չոլմակչի (Նորք)	Երևանի Քաղամաս		1900 գործել է	իգական	»
34	Չաքգան	Հրազդան	Աբովյանի	1912	գյուղակ. հաս.	»
35	Չրվեժ	—	»	1902-ին գործել է	»	չի գործել
36	Ծիհանլու	Այգավան	Արարատի	1909	»	Միդասյան
37	Սաղաբակ	—		1899	»	»
38	Սեիդ Քեքանլու			1906	»	
39	Ուլուխանլու	Նարիմանլու	Մասիսի	1881	արքունական	Երկդասյան
40	Ուրմիա[2]		Արարատի		ուղղափառ եկ. ծխ.	Միդասյան
41	Քալաբա	Զուլալավան	Մասիսի	1910	գյուղ. հաս.	»
42	Քանաքեռ	Երևանի Քաղամաս	—	1900	»	չի գործել
43	Քեչիշվերան	Զովաշեն	Արարատի	1912	»	Միդասյան

[1] Դպրոցը կոչվել է Իմանշալու գյուղի անունով, բայց գտնվել է Զարգազլու գյուղում։
[2] Դպրոցը կոչվել է Ուրմիա գյուղի անունով, բայց գտնվել է Արագածյան գյուղում։

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՎԱՌ ԿԱՄ ՏԱԹԵՎԻ ՎԻՃԱԿ
(Ելիզավետպոլի նահանգ)

Ագարակ (Ղափանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Եղած փաստաթղթերից դժվար է որոշել, թե խոսքը որ Ագարակի մասին է, Ղափանի, թե՞ Մեղրու շրջանի։ Կարելի է կարծել և՛ այսպես, և՛ այնպես։ 1873-ի տեղեկագրում Ագարակ գյուղը ցույց է տրված Շվանիձորից անմիջապես առաջ (Մեղրու շրջան), իսկ 1875-ի տեղեկագրում՝ Կավարտ գյուղից հետո, Շիկահող գյուղից առաջ (Ղափանի շրջան)։

Այս դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1871-ին այն գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 18 աշակերտ։ 1875-ին ցույց է տրված որպես «մասնավոր կրթարան արական սեռի»։

Այս դպրոցը երկար տասնամյակներ այլևս չի հանդիպում։ Հավանաբար այն չի գործել։

Հայտնի է միայն, որ Ղափանի շրջանի Ագարակ գյուղում 1907-ին բացվել է միդասյան երկսեռ դպրոց, որի պահպանման ծախսերի մի մասը իր վրա է վերցրել «Արամազդ» ընկերությունը։

1912—13 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 92 աշակերտ (21 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում՝ 75 աշակերտ, հաջորդ տարում՝ 70 աշակերտ։ 1917-ին աշակերտների թիվը իջել է 52-ի (12 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 4, գ. 30, թ. 18, գ. 623, թ. 29, ֆ. 7, գ. 137, թ. 1-30, գ. 167, թ. 1—56; գ. 172, թ. 9; ֆ. 48, գ. 589, թ. 81; գ. 544; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 61։

Ալիլու (այժմ՝ Սալվարդ, Սիսիանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ալիլու գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է 1908-ին։ Այդ թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհուրդը, ի թիվս Զանգեզուրի գավառի այլ գյուղերի, նպաստ է տվել նաև Ալիլու (Ալելու) գյուղի ծխական դպրոցին։

«Նոր դպրոց», 1908, N3, էջ 85։

Ախլաթյան գյուղի (Սիսիանի շրջ.) արական ծխական դպրոց

Հիմնվել է 1889-ին։ Այդ թվականի օգոստոսի 6-ի կոնդակով կաթողիկոսը Երևանի թեմական խորհուրդ է տվել Զանգեզուրի գավառի Ախլաթյան գյուղում բաց անել միդասյան արական ծխական դպրոց և հաստատել է նրա հոգաբարձության կազմը։ 1894-ին ունեցել է 41, 1896-ին՝ 50 աշակերտ։ Այդ թվականին էլ փակվել է, վերաբացվել 1905-ին՝ որպես միդասյան արական դպրոց։

«Արարատ», 1889, թիվ, էջ 677, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 47, գ. 214, թ. 34, ֆ. 7, գ. 120, թ. 1, ֆ. 56, գ. 492, թ. 118, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 44 և 73, ֆ. 422, գ. 8717, թ. 8։

Առաջաձոր (Արջաձոր, Արջազուր) գյուղի (Ղափանի շրջան) ծխական դպրոց

Բացվել է 1907-ին, որպես միդասյան խառը դպրոց։ 1912—13 ուս. տարում ունեցել է 3-ամյա դասընթաց և 36 աշակերտ (7 աղջիկ)։

1913—14 ուս. տարում աշակերտների թիվն իջել է 32-ի։ Մասամբ պահվել է «Արամազդ» ընկերության նպաստով։ 1917-ին ունեցել է 33 աշակերտ (9 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 623, թ. 27; ֆ. 7, գ. 172, թ. 9; գ. 167, թ. 1—56; գ. 157, թ. 1—30; գ. 544, ֆ. 48, գ. 589, թ. 81; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 264, թ. 61;
«Նոր դպրոց», 1912, №15—16, էջ 53։

Բեխ գյուղի (Ղափանի շրջան) ծխական դպրոց

Այս դպրոցն առաջին անգամ հանդիպում է 1872-ին կազմված մի տեղեկագրում։ Հավանաբար հիմնվել է 1871-ին և սկզբում գործել որպես մասնավոր դպրոց։ Ունեցել է 1 ուսուցիչ և 13 աշակերտ։ Անցել են հայերեն ընթերցանություն, վարելագրություն և եկեղեցական երգեցողություն։ Պահվել է ծնողների հաշվին։

1875-ի տեղեկագրում ցույց է տրված որպես «մասնավոր կրթարան արական սեռի»։

Ըստ երևույթին երկար տարիներ փակված է մնացել, քանի որ ցույց չի տրվում մի շարք տասնամյակների ցուցակներում։

1914—15 ուս. տարում գործել է, սակայն, ինչպես երևում է, նյութական դժվարությունների պատճառով կանոնավոր ընթացք չի ունեցել՝ ուսումնական տարին սկսել է դեկտեմբերին, ավարտել՝ մայիսին։ 1917-ի տեղեկագրում ցույց չի տրված։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 31, թ. 19; գ. 30, թ. 18; ֆ. 48, գ. 589, թ. 82.

Բռնակոթ (Բրնաութ, նաև Փիրնաուտ) գյուղի (Սիսիանի շրջ.) արական ծխական դպրոց

Արխիվային տվյալների համաձայն Բռնակոթի ծխական դպրոցը հիմնվել է 1872-ին (հիշատակվում է նաև 1871-ը)՝ նույն գյուղացի Գևորգ Տեր-Հակոբյանցի կողմից։ Նա էլ հենց եղել է առաջին ուսուցիչը, ունենալով 25 աշակերտ։

1875-ին այն ցույց է տրված որպես «մասնավոր կրթարան արական սեռի»։ Դպրոցը կանոնավոր դարձնելու համար մի խումբ գյուղացիներ ընկերություն են կազմել և միջոցներ հայթայթել։ Այդ ընկերությունը թեմական տեսուչ Պ. Պռոշյանի օգնությամբ ու խորհրդով 1881-ին դպրոցի համար կառուցում է հատուկ շենք, որի հանդիսավոր բացումը կատարվում է 1882-ին։ Հետագայում այս թվականն էլ սխալմամբ համարվել է Բռնակոթի դպրոցի հիմնադրման տարեթիվ։

Շուտով վրա է հասնում հայ դպրոցների արշավիրքի տարին՝ 1885 թվականը, և փակվում է նաև Բռնակոթի դպրոցը։ Այն վերաբացվում է 1886-ին։ 1888—89 ուս. տարում եղել է միդասյան դպրոց՝ 58 աշակերտով և մեկ ուսուցչով (Հովհաննես Տեր-Գրիգորյան)։ Չգիտենք, թե ինչու 1891-ի մի ցուցակում Բռնակոթի գյուղը և նրա դպրոցը ցույց են տրված Շուշու գավառում։ Պետական դպրոցական իշխանությունների մի տեղեկագրի համաձայն Փիրնաուտ (Пирнаут) գյուղի ծխական դպրոցը եղել է միդասյան և պահվել է տեղական եկեղեցու և հարևան սրբավայրերի եկամուտներով։ Այն 1896-ին ունեցել է 2 ուսուցիչ և 80 աշակերտ։ Այդ թվականին էլ փակվել է դարձյալ պետության կողմից։ Վերաբացվել է 1906-ին։ 1911—12 ուս. տարում ունեցել է 5-ամյա դասընթաց և 152 աշակերտ (32 աղջիկ)։

1913—14 ուս. տարում եղել է երկսեռ տարրական (քառամյա) դպրոց՝ 113 աշակերտով (9 աղջիկ)։ Մի այլ փաստաթղթում 1914-ի կեսերին ցույց է տրված 183 աշակերտ։ 1917-ին ունեցել է 71 աշակերտ (12 աղջիկ)։

Բռնակոթի դպրոցը չի երևում 1918—19 ուս. տարիների ցուցակներում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 1, գ. 58; գ. 157, թ. 1—39; գ. 172; գ. 167, թ. 1—56; ֆ. 56, գ. 30, թ. 18; գ. 32, թ. 4; գ. 50, թ. 199; ֆ. 19, ց. 1, գ. 380; ֆ. 47, գ. 214, թ. 33; ֆ. 22/207, գ. 5; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 43 և 73; գ. 1090, թ. 45; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61; ֆ. 422, ց. 1, գ. 2997, թ. 6;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 64։
«Արձագանք», 1884, 22 սեպտեմբերի, «Նոր դպրոց», 1910, №12, էջ 109։

Դժվար է ասել, դա եղել է խալֆայակա՞ն դպրոց, ուր սովորել են նաև այլ երեխաներ, թե Հովհաննեսի պապը պարապել է միայն իր թոռնիկի հետ (անհատական ուսուցում)։ Եթե այդ տեղեկագրում նշված լիներ ուսուցիչ Հովհաննեսի տարիքը, ապա հնարավոր կլիներ մոտավորապես որոշել նաև նրա ուսումնառության տարիները։

Բնորոշ է նաև հետևյալ փաստը։ Տեղերից (այդ թվում նաև Տաթևի հայտարարությունից) ստացված տեղեկագրի հիման վրա էջմիածնում 1872-ի ապրիլի վերջերին կազմվել է Երևանի վիճակում (թեմում) գործած դպրոցների ցուցակը։ Այնտեղ արդեն մենք կարդում ենք՝ ծխական դպրոց «Գորիս գեղջ» (նշված է նույն ուսուցչի անունը)։ Ահա թե ինչպես Գորիս գյուղաքաղաքը մի այլ փաստաթղթում դարձավ Գորիս գյուղ (սա ցույց է տալիս, որ այն ժամանակ Գորիսը և՛ գյուղ է համարվել, և՛ գյուղաքաղաք. ուրեմն մենք լրիվ հիմք ունենք Գորիս գյուղի դպրոցի մասին այդ ժամանակներում հաղորդված տեղեկությունները վերագրելու Գորիս քաղաքի դպրոցին)։

Վրաստանի պետական պատմական արխիվի ֆոնդերից մեկում պահվում է 1873-ի հունվարի 1-ի տվյալներով Կովկասում գործած բոլոր հայ դպրոցների ցուցակը։ Այնտեղ նշված է նաև Գորիս գյուղի դպրոցը, որն ունեցել է մի ուսուցիչ և 30 աշակերտ։

Մեր ձեռքի տակ է էջմիածնի սինոդի կողմից կազմված նաև մի այլ տեղագրագիր, որտեղ դարձյալ նշված են 1873-ին Կովկասում գործած հայ դպրոցները։ Այնտեղ «Գերուսի» գյուղում ցույց է տրված երկու ծխական դպրոց (մեկում 20, մյուսում 17 աշակերտ)։ Միանգամայն հնարավոր է, որ նրանցից մեկը գործած լիներ Գորիս գյուղաքաղաքում, իսկ մյուսը՝ Գորիս գյուղում։

Գորիսի դպրոցին հանդիպում ենք նաև 1875-ի և 1876-ի տեղեկագրերում։

Այսպիսով, ամբողջովին հերքվում է Գորիսի ծխական դպրոցի հիմնադրման վերաբերյալ նախորդ վավերագրերում ցույց տրված թվականը։ Ցավում ենք, որ մեզ առայժմ չի հաջողվել պարզել այդ դպրոցի հիմնադրման ճիշտ թվականը։ Հնարավոր է, որ այն բացված լիներ 1869-ին կամ 1870-ին (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1873, №50)։

Գորիսի դպրոցի ճանապարհը նույնպես վարդաբույր ցողված չի եղել։ Ըստ երևույթին, հանդիպելով անհաղթահարելի դժվարություններ, այս դպրոցը ևս որոշ տարիներ գադարել է գործելուց։ Դա է պատճառը, որ մենք Գորիսի դպրոցին չենք հանդիպում 1883-ին փակված և 1888-ին գործած հայ դպրոցների ընդհանուր ցուցակներում։ Ինչպես երևում է, այն վերաբացվել է (և ոչ թե բացվել) 1890-ին։ Բայց եթե իրոք այն վերաբացվել է 1890-ին (ինչպես ցույց են տալիս վերևում նշված վավերագրերը), ապա ինչպե՞ս կարող էր այդ դպրոցը 1891-ին երկդասյան լինել, ունենալով 5 բաժանմունք (այդպես է ցույց տրված Երևանի և Ելիզավետպոլի նահանգների ուսումնարանների գիրկեցիայի 1891-ին կազմված ցուցակում)։ Կովկասյան ուս. օկրուգը ևս այն ներկայացրել է որպես երկդասյան դպրոց՝ 1890-ին։

Այստեղ, անկասկած, ինչ որ թյուրիմացություն կա։ 1896-ի սկզբներին Գորիսի երկդասյան երկսեռ դպրոցն ունեցել է 5 ուսուցիչ և 165 աշակերտ (25 աղջիկ)։ Նույն թվականի կեսերին փակվել է և վերաբացվել 1905-ին, որպես միդասյան արական դպրոց։

Երևանի թեմի դպրոցների 1911—12 ուս. տարվա տեղեկագրի համաձայն Գորիս քաղաքի եկեղեցական ծխական դպրոցը այդ ուսումնական տարում եղել է քառամյա խառը դպրոց, ուր սովորել են 44 տղա և 67 աղջիկ (ընդամենը 111 հոգի)։

1914-ին ունեցել է նույնքան աշակերտ և 5 ուսուցիչ։ 1917-ին ունեցել է 4-ամյա դասընթաց, 7 ուսուցիչ և 202 աշակերտ (107 աղջիկ)։ 1876-ից Գորիսում գործել է նաև, այսպես կոչված, «գյուղական նորմալ դպրոց», որը ենթարկվել է լուսավորության մինիստրությանը։ 1882-ին այն դարձել է երկդասյան ուսումնարան (գուցե հենց սա է պատճառը, որ հայկական դպրոցը դադարել է գործելուց և երկար տարիներ փակ է մնացել)։

«Մեղու Հայաստանի», 1873, № 50,
2002 ԿԿԱ, ֆ. 56, գ. 30, թ. 18; գ. 31, թ. 19; գ. 43, թ. 16; գ. 71, թ. 9; գ. 50; գ. 189, թ. 17—23; գ. 544, թ. 11; գ. 492, թ. 118; ֆ. 7, ց. 1, գ. 43, թ. 3—22; գ. 167, թ. 1; գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 6—11; գ. 120, թ. 1; ֆ. 47, գ. 214, թ. 31;
ՎՍՀ ԿԿԱ, ֆ. 422, գ. 5717, թ. 8; գ. 511, թ. 21; գ. 3997, թ. 6; ֆ. 13, գ. 264, թ. 61, գ. 2918, թ. 45, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 43 և 74, «Циркуляр», 1890, №10, էջ 599։

Գորիս գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման թվականը նույնպես մեզ անհայտ է։ Ինչպես ցույց տվեցինք Գորիս քաղաքի դպրոցի կապակցությամբ, 1873-ին Գերուսի գյուղում գործել է երկու ծխական դպրոց. հնարավոր է, որ դրանցից մեկը գործած լիներ Գորիս գյուղաքաղաքում, իսկ մյուսը՝ նույնանուն գյուղում։

Ճիշտ է, 1890-ական թվականների մի շարք փաստաթղթերում հանդիպում ենք Գորիս (Գերուսի) գյուղի դպրոցին, բայց կարծում ենք, որ դա վերաբերվում է Գորիս քաղաքի ծխական դպրոցին (Գորիս քաղաքը այն ժամանակ մեծ մասամբ նշված է որպես գյուղ)։

1905—1908 թվականներին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում նշված է նաև Փոքր Գերուսի գյուղի դպրոցը (Գորիս

քաղաքի դպրոցից բացի)։ Ըստ այդ ցուցակի Փ. Գերուսի գյուղի արական դպրոցը բացվել է (թե վերաբացվել) 1906-ի սկզբներին։

Երևանի թեմի եկեղեցական ծխական դպրոցների 1911—12 ուս. տարվա տեղեկագրում որոշակիորեն նշված են Գորիս քաղաքի, Գորիս գյուղի և Հին Գորիս գյուղի դպրոցները։ Տեղեկագրի այն հարցին, թե «Դպրոցը ե՞ր թվին է հիմնվել և ե՞ր թվին վերաբացվել», Գորիս գյուղի դպրոցի դիմաց նշված է 1905 թվականը։ Եթե ճիշտ է, որ այն վերաբացվել է 1905-ին (կամ նույնիսկ 1906-ի սկզբներին), ապա պետք է կարծել, որ այդ դպրոցը հայ դպրոցների ընդհանուր փակումից առաջ (1896 թ.) գոյություն է ունեցել։

1909-ին եղել է եռամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 100 տղաներ ու աղջիկներ։ 1911—12 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 60-ի (6 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում՝ 63-ի (մի այլ փաստաթղթում՝ 70-ի)։ Չգիտենք, թե ինչու 1917-ին ունեցել է միայն 18 աշակերտ (5 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 43, թ. 3—22; գ. 172, թ. 6—11; գ. 157, թ. 1—30; գ. 167, թ. 1—56; ֆ. 56, գ. 544, թ. 15; գ. 492, թ. 118;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 8; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61։

Գորիս Հին (Երիշևն, այժմ՝ Վերիշևն) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման ճիշտ թվականը մեզ անհայտ է։ Երևանի թեմի դպրոցների 1911—12 ուս. տարվա տեղեկագրում Հին Գորիս գյուղի ծխական դպրոցի բացման թվականը ցույց է տրված 1908-ը (մի այլ փաստաթղթում՝ 1905-ը)։

1911—12 ուս. տ. եղել է եռամյա արական դպրոց՝ 40 աշակերտով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 157, թ. 1—30, Մանկ. դիտ. ինստիտուտի արխիվ, 2. Տեր-Միսաքյանի ֆոնդ, գ. 20։

Գուդեմնիս (Ուջանաբաս) -Կաքավաբերդ գյուղերի ծխական դպրոց

Հիմնադրման թվականը մեզ հայտնի չէ։ Գիտենք, որ 1907—08 ուս. տարում Հին Նախիջևանի վիճակի Կաքավաբերդ գյուղում գործել է հայկական ծխական դպրոց, ունենալով 3 ուսուցիչ և 43 աշակերտ (22 աղջիկ)։

Ինչպես երևում է այս դպրոցը 1909-ին փոխադրվել է Մեղրու շրջանի Գուդեմնիս (Ուջանաբաս) գյուղը, բայց շարունակել է կոչվել Կաքավաբերդ գյուղի անունով։ Այդ թվականի մի փաստաթղթում այդպես էլ գրված է՝ «Հին Նախիջևանի վիճակի Կաքավաբերդի կենտրոնական դպրոց Կուտեմնիս գյուղում»։ Եղել է քառամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 59 տղա և 24 աղջիկ։

1913—14 ուս. տարում նույնպես ունեցել է քառամյա դասընթաց։ Սովորողների թիվը հասել է 96-ի (30 աղջիկ)։

Կաթողիկոսը 1914-ի մի կոնդակով կարգադրել է Տաթևի վիճակի Կուտեմնիս գյուղի ծխական դպրոցը կոչել «Կաքավաբերդի կենտրոնական ծխական Սահակ-Մեսրոպյան երկդասյան երկսեռ դպրոց»։

Դպրոցը հիմնականում պահվել է «Արամազդ» ընկերության միջոցներով։ 1917-ի ցուցակներում ցույց չի տրված։

Հետաքրքիր է հետևյալ փաստը։

«Նոր դպրոց» ամսագրի 1913 թ. №8—9-ում նշված են բազմաթիվ վայրեր, որոնցում այդ թվականին տեղվել է հայկական տառերի գյուտի 1500-ամյակը և հայ տպագրության 400-ամյակը։ Նշված բնակավայրերի թվում է նաև Կաքավաբերդը, որի մասին ասված է հետևյալը.

«Վերջինում (Կաքավաբերդում— Ս. Խ.), որ համարվում է հայկական խուլ անկյուններից մեկը, հանդեսը ուշագրավ է եղել թե իր ճոխությամբ և թե խորհրդակցության ժամանակ ընդունված բանաձևերով։ Այդ օրը որոշվել է Կաքավաբերդի նորակառույց դպրոցը և խորհրդակցությունն ընդունել է նախ՝ տարրական ուսումը շրջանում պարտադիր դարձնել և ապա՝ դպրոցն անվանել Սահակ-Մեսրոպյան։ Այս առաջարկների հետ միասին ընդունել են մի շարք բարեփոխություններ հատկապես զրկոցի վերաբերմամբ։ Ուսուցչական կազմը հանձն է առել դասախոսությունների միջոցով հասկանալի դարձնել ժողովրդի համար պարտադիր ուսման անհրաժեշտությունն ու նշանակությունը» (էջ 39)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 644, թ. 27, գ. 182, թ. 9, ֆ. 7, գ. 172, թ. 9, ֆ. 48, գ. 544
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61, «Մշակ», 1914, էջ 101, «Նոր դպրոց», 1913, №8—9։

Եղվարդ (Աղավնիդ, Ղափանի շրջան) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1907-ին, որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1912—13 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 47 աշակերտ (17 աղջիկ), 1913—14 ուս. տարում 31 աշակերտ (6 աղջիկ)։

Պահվել է հիմնականում «Արամազդ» ընկերության նպաստով։ Աշակերտները սովորել են ձրի։ 1917-ի ցուցակներում ցույց չի տրված։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 623, թ. 25, ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 172, թ. 9, ֆ. 48, գ. 589, թ. 81, գ. 544., ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 264, թ. 61։

Երիցվանիկ, Երիցավանք (Արծվանիկ, Ղափանի շրջ.)
գյուղի դպրոց

Արխիվային մի շարք փաստաթղթերում հայ դպրոց է ցույց տրված Զանգեզուրի գավառի կամ Տաթևի վիճակի Երիցվանիկ անունով գյուղում, սակայն նախասովետական ու սովետական շրջանի տեղեկատու աղբյուրները այդ անունով գյուղ չեն հիշատակում։ Դա, մեր կարծիքով, նույն Արծվանիկ գյուղն է, որն ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս եղել ու մնում է Ղափանի շրջանի խոշոր գյուղերից մեկը։ Արծվանիկ գյուղից մոտ 3 կիլոմետր հեռավորության վրա գտնվել է Երիցավանքը, որտեղ և բացվել ու գործել է այդ գյուղի ծխական (վանական) դպրոցը։

Երիցվանիկ գյուղի դպրոցը պետք է հիմնված լինի 1870-ից ոչ ուշ, քանի որ այն ցույց է տրված 1871-ի հունվարին եղած հայ դպրոցների ցուցակում։ Այդ տարում ունեցել է մի ուսուցիչ և 18 աշակերտ։ Ցույց է տրված նաև 1873, 1875 և 1876 թվականների տեղեկագրերում։ Վերջին թվականին ունեցել է 30 աշակերտ։

1876-ից հետո այս դպրոցի հետքերը այլևս չեն երևում։ Դրա փոխարեն հաջորդ տասնամյակներում հանդես է գալիս Արծվանիկ գյուղի դպրոցը, բայց արդեն ոչ թե հայկական, այլ «հասարակական»— զեմստվոյական, որը ենթարկվել է պետական ուսումնական վարչությանը։ Այնտեղ ուսուցումը հիմնականում տարվել է ռուսերենով։

Արծվանիկ գյուղի «հասարակական» (պետական) դպրոցի մասին մեր ունեցած տեղեկությունները աղքատիկ են։ Դիտենք, որ 1884-ին այն գործել է, ունենալով 2 ուսուցիչ և 46 աշակերտ։ Մի փաստաթղթից էլ իմանում ենք, որ այն 1885-ին ստուգման է ենթարկվել Ելիզավետպոլի նահանգի պետական դպրոցների տեսչի կողմից (նախասովետական շրջանում Զանգեզուրի գավառը մտել է Ելիզավետպոլի նահանգի մեջ, նաև եկեղեցական գործերով երբարկվել է Երևանի թեմին)։

ՎՈՍՄ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22, գ. 2867, թ. 8.
ՀՈՍՄ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 31, թ. 19, գ. 71, թ. 9, գ. 30, թ. 18, գ. 205.

Զեյվա (այժմ՝ Դավիթ-Բեկ, Ղափանի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1907-ին, որպես միգասյան երկսեռ դպրոց։ 1912—13 ուս. տարում եղել է 3-ամյա, ունենալով 41 աշակերտ (3 աղջիկ), 1913—14 ուս. տարում՝ 53 աշակերտ (3 աղջիկ)։ 1917-ի ցուցակներում չկա։ Պահվել է հիմնականում «Արամազդ» ընկերության նպաստով։

ՀՈՍՄ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 623, թ. 23; ֆ. 7, գ. 172, թ. 9; ֆ. 48, գ. 589, թ. 81; գ. 544.

Թազագյուղի (Ղուշչի, այժմ՝ Թասիկ, Սիսիանի շրջ.)
ծխական դպրոց

Հիմնադրման թվականը մեզ անհայտ է։ Դիտենք, որ 1909-ին գործել է, նպաստ ստանալով Բաքվի հայ մշակութային միությունից։

1913—14 ուս. տարում եղել է միգասյան խառը դպրոց, ուր սովորել են 28 տղա և 20 աղջիկ։

Գործել է նաև 1916-ին, 1917-ին ունեցել է 35 աշակերտ (10 աղջիկ)։

ՀՈՍՄ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 9, ֆ. 48, գ. 683, թ. 81։
ՎՈՍՄ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 264, թ. 61. ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 50, «Արարատ», 1916, №1, էջ 7։

Լիճք գյուղի (Մեղրու շրջան)
ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Վիճակագրական թերթիկներից մեկում նշված է, որ Լիճքի եկեղեցական ծխական երկսեռ դպրոցը վերաբացվել է 1907-ին, նշանակում է մինչև 1896-ը (հայ դպրոցների երկրորդ ընդհանուր փակումը) այն գոյություն է ունեցել և այդ թվականին փակվել է։ 1909-ին եղել է երկսեռ 2-ամյա, ուր սովորել են 68 տղա և 9 աղջիկ։ 1912—13 ուս. տարում աշակերտների թիվը նվազել է, հասնելով 50-ի (6 աղջիկ)։ 1913—14 ուս. տարվա փաստաթղթերում այս դպրոցը նշված է Լիճք-Տաշտուն գյուղերի անունով։ Եղել է քառամյա երկսեռ դպրոց, ունենալով 49 (մի այլ փաստաթղթում՝ 57) աշակերտ (5 աղջիկ)։ 1917-ին՝ 40 աշակերտ (7 աղջիկ)։

Պահվել է «Արամազդ» ընկերության նպաստով։

ՀՈՍՄ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 544, թ. 26; գ. 192, թ. 28—29; ֆ. 7, գ. 172, թ. 9; ֆ. 48, գ. 544։
ՎՈՍՄ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61։

Լոր գյուղի (Սիսիանի շրջ.) ծխական դպրոց

Էջմիածնի սինոդի մի գրությունից երևում է, որ Լոր գյուղի ծխական դպրոցը բացվել է 1892-ին, բայց նույն սինոդի կարգադրությամբ էլ 1893-ին փակվել է՝ «մինչև Ամենայն հայոց նորընտիր կաթողիկոսի (Խրիմյան Հայրիկի —Ս. Ռ.) ժամանելը»։ Հիշյալ գրության մեջ այդ (և 21 այլ դպրոցների) փակման պատճառը չի ասված։

Ինչպես երևում է «նորընտիր կաթողիկոսի» ժամանելուց հետո էլ Լոր գյուղի դպրոցը չի վերաբացվել, քանի որ չի հանդիպում հետագա շատ տարիների փաստաթղթերում։

Մի տեղեկագրում նշված է, որ նոր գյուղի դպրոցը բացվել է 1909-ին (դա, իհարկե, պետք է համարել նրա վերաբացման թվականը)։ Մի այլ տեղեկագրից իմանում ենք, որ այդ դպրոցը 1909-ին եղել է երկսեռ երկամյա ծխական դպրոց։ 1911—12 ուս. տարում ունեցել է 47 աշակերտ (7 աղջիկ), 1913—14 ուս. տարում՝ 45 աշակերտ և միայն մի աշակերտուհի (այլ փաստաթղթում աշակերտների թիվը ցույց է տրված 61 հոգի)։ 1916-ին գործել է, նպաստ ստանալով դպրոցական ընդհանուր ֆոնդից։ Գործել է նաև 1917-ին՝ 50 աշակերտով (3 աղջիկ)։

Ահմասարակ դպրոցն անկանոն է գործել։ Այսպես, 1914—15 ուս. տարին սկսել է նոյեմբերին, ավարտել՝ մայիսին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 4559, թ. 9, ֆ. 13, գ. 264, թ. 61,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 544, թ. 15, ֆ. 7, գ. 172, թ. 9, գ. 157, թ. 1—30, գ. 167, թ. 1—56; ֆ. 48, գ. 559, թ. 82։
«Արարատ», 1916, № 1, էջ 7, 1917, էջ 286։

Խլաթաղ (այժմ՝ Զորաստան, Ղափանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցին առաջին և վերջին անգամ հանդիպում ենք Տաքեի հաշորդության կողմից 1872-ի ապրիլին կազմված և սինոդին ներկայացված տեղեկագրում։ Ուսուցիչն է եղել Խոտանան գյուղացի Հովսեփ Պետրոսյանը, որն ունեցել է 12 աշակերտ։ Նա ավանդել է հայերեն ընթերցանություն, վայելչագրություն և եկեղեցական երգեցողություն։

Հետագա տարիների փաստաթղթերում Խլաթաղի դպրոցն այլևս չի երևում։ Չգիտենք նույնիսկ, թե ինչ հնարավորիր է ունեցել նա։ Կարծում ենք, որ այդ գյուղի երեխաները սովորել են հարևան Առաջաձոր և Երվենանց գյուղերի դպրոցներում։ Հնարավոր է նաև, որ Խլաթաղում բացված լինի պետական դպրոց, որի մասին մեր ձեռքի տակ հավաստի նյութեր չկան։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 31, թ. 15։

Խնձորեսկ (Խինզիրակ, Խինզարան, Գորիսի շրջ.) գյուղի արական ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1871-ին գործել է, ունենալով մեկ ուսուցիչ, 41 աշակերտ։ 1875-ին ցույց է տրված որպես սամանավոր կրթարան՝ արական սեռի, որը սակայն ենթարկվել է հոգևոր վարչությանը։ Հետագա երկու տասնամյակների տեղեկագրերում չի երևում, չնայած որ 1911—12 ուս. տարվա տեղեկագրում նրա հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1885-ը, որն, իհարկե, սխալ է։

1894—95 ուս. տարվա տեղեկագրից իմանում ենք, որ այն եղել է երկդասյան արական դպրոց՝ 60 աշակերտով։ Նշանակում է դրանից շատ առաջ գործել է։ Տարօրինակ է, որ 1894-ի և 1896-ի այլ տեղեկագրերում ցույց է տրված որպես միդասյան դպրոց՝ 100 աշակերտով։ Նույն թվականին էլ փակվել է կառավարության կողմից։ Վերաբացվել է 1906-ին, որպես միդասյան արական դպրոց, բայց չի երևում Երևանի թեմի 1907—08 ուս. տարվա դպրոցների ցուցակում։ 1909-ին եղել է երկամյա դպրոց՝ 152 աշակերտով։ 1913—14 ուս. տարում ցույց է տրված որպես քառամյա դպրոց՝ 3 ուսուցչով և 150 աշակերտով։

1917-ին՝ քառամյա դպրոց՝ 122 աշակերտով (23 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 4, գ. 30, թ. 18, գ. 452, թ. 118, ֆ. 47, գ. 214, թ. 31, գ. 544, թ. 12; ֆ. 7, գ. 120; գ. 172, թ. 9, գ. 157, թ. 1—39; գ. 167, թ. 1—56;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 611; թ. 21; գ. 5717, թ. 8; ֆ. 13, գ. 264, թ. 61; ֆ. 12, գ. 7, գ. 565, թ. 44։

Խոզնավար գյուղի (Գորիսի շրջ.) ծխական դպրոց

«Նոր դպրոց» ամսագրի 1908-ի N5-ում կարդում ենք. «Ղարաբաղի Խոզնավար գյուղում Կ. Հ. բարեգործական ընկերության նպաստով բացված դպրոցում սովորում են 100 աշակերտ-աշակերտուհի» (էջ 88)։

Ղարաբաղի թեմի դպրոցների բաղմաթիվ ցուցակներում Խոզնավար գյուղը և նրա դպրոցը ոչ մի անգամ մեզ չեն հանդիպել։ Ղարաբաղում այդպիսի գյուղ ցույց չի տրված նաև Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքում։ Նման գյուղ չի հիշատակված նաև վերջերս Ղարաբաղից ստացված մի ցուցակում։

«Կովկասյան կալենդարը»-ում Խոզնավար գյուղը ցույց է տրված միայն Զանգեզուրի գավառում (այն ժամանակ Ելիզավետպոլի նահանգ)։

Ուրեմն, «Նոր դպրոց»-ի հաղորդածը թյուրիմացություն է պարզապես։

Համարյա նույն ժամանակ (1909 թ.) կազմված մի տեղեկագրում հանդիպում ենք Գորիսի շրջանի Խոզնավար գյուղի դպրոցին, որը իհարկե, ենթարկվել է ոչ թե Ղարաբաղի, այլ Երևանի թեմական տեսչությանը։

Կովկասի հայոց բարեգործական ընկերության 1909 թ. տեղեկագրում նա Խոզնավար գյուղը ցույց է տրված Գորիսի շրջանում։

Խոզնավարի դպրոցը մեծ պատմություն չունի։ Այն չի հանդիպում 19-րդ դարի արխիվային փաստաթղթերում։ Հավանաբար հիմնվել է 1907 թվականին։ Ըստ վիճակագրի գործակալության տվյալների՝ այն 1909-ին ունեցել է մի բաժանմունք՝ 45 աշակերտով (8 աղջիկ)։

1910-ին փակ է մնացել, որովհետև ժողովուրդը չի կարողացել վրացնել դպրոցի ծախքը։

«Նոր դպրոց», 1908, № 5, էջ 88, 1910, № 12, էջ 109,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 544, թ. 13, ԿՀԲԿ-ի 1909 թ. տեղեկագիրը, էջ 32։

Խոտ գյուղի (Գորիսի շրջ.) ծխական դպրոց

1908-ին գործել է, իսկ 1909-ին եղել է 2-ամյա երկսեռ դպրոց։ Ուրեմն պետք է բացված լինի 1907-ից ոչ ուշ։ «Գոյություն ունենալը առաջիկա տարում անորոշ է, չկան հուսալի միջոցներ»— գրել է հոգաբարձությունը 1909-ին, չնայած այդ թվականին որոշ նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ Այս դպրոցը, ամենայն հավանականությամբ, մի քանի տարի փակված է մնացել։ Թեմական տեսչի մի զեկուցագրերից իմանում ենք, որ Խոտ գյուղի դպրոցը նորից բացվել է 1914—15 ուս. տարում։

«Նոր դպրոց», 1909, №1, էջ 90, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 544, թ. 21, ֆ. 48, ց. 1, գ. 598, թ. 81։

Խոտանան Վերին գյուղի (Ղափանի շրջ.) ծխական դպրոց

Բացվել է 1913-ի վերջերին։ 1914—15 ուս. տարում գործել է։ Մասամբ պահվել է Կովկասի ՀԲԸ նպաստով։ 1917-ին ունեցել է 36 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, գ. 598, թ. 80—81, «Աբրաամ», 1913, №11, էջ 984։

Ծավ գյուղի (Ղափանի շրջ.) ծխական դպրոց

Բացվել է 1906-ին, որպես միդասյան երկսեռ դպրոց։ Չգիտենք ինչու, մի տեղեկագրում բացման թվականը ցույց է տրված 1909-ը։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա դպրոց, ուր ուսանել են 36 տղա և 4 աղջիկ, 1913—14 ուս. տարում՝ 32 աշակերտ (21 աղջիկ), 1917-ին՝ 34 աշակերտ (11 աղջիկ)։

Պահվել է «Արամազդ» ընկերության նպաստով։ Երեխաները ուսման վարձ չեն վճարել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 623, թ. 21; ֆ. 7, գ. 1, թ. 9; գ. 167, թ. 1—56; ֆ. 157, թ.1—30; ֆ. 48, գ. 598, թ. 81։

Կալեր (Գյալուր) գյուղի (Մեղրու շրջ.) ծխական դպրոց

Մեղրու շրջանի Կալեր (Գյալուր) գյուղում 1909-ին գործել է 2-ամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 23 տղա, 12 աղջիկ։

1911—12 ուս. տարում այն եղել է եռամյա դպրոց՝ 1 դասարանով, ուր սովորել են 20 տղա, 5 աղջիկ։ 1913—14 ուս. տարում աշակերտների թիվը հասել է 30-ի (11 աղջիկ), 1915-ին՝ 35-ի։

Պահվել է «Արամազդ» ընկերության նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 544, թ. 24; ֆ. 7, գ. 172, թ. 8; ֆ. 48, գ. 544; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 11։

Կավարտ գյուղի (Ղափանի շրջ.) ծխական դպրոց

Հավանաբար հիմնվել է 1871-ին։ 1872-ի ապրիլին ունեցել է 1 ուսուցիչ, 20 աշակերտ, անցել են հայերեն ընթերցանություն և վայելչագրություն, եկեղեցական երգեցողություն, թերականություն, ռուսերեն ընթերցանություն և վայելչագրություն։ Դպրոցը պահվել է աշակերտների ծնողների միջոցներով։

1875-ի տեղեկագրում Կավարտ գյուղում ցույց է տրված «մասնավոր կրթարան արական սեռի»։

Այս դպրոցին այլևս չենք հանդիպում հետագա մի շարք տասնամյակների ցուցակներում։ Դիտենք միայն, որ այն նորից բացվել է 1911-ին, որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1912—13 ուս. տարում ունեցել է եռամյա դասընթաց և 61 աշակերտ (17 աղջիկ), 1917-ին՝ 56 աշակերտ (15 աղջիկ)։ Երկու բարեբարներից տարեկան 100 ռ. նպաստ է ստացել։ Նույն բարեբարները 1913-ին դպրոցի համար կառուցել են նոր շենք։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 31, թ. 19; գ. 30, թ. 18; գ. 623, թ. 19; ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 172, թ. 9; ֆ. 48, գ. 589, թ. 82; «Աբրաամ», 1913, №12, էջ 1083, 1914, էջ 295։

Կարճևան գյուղի (Մեղրու շրջ.) ծխական դպրոց

1873-ին ցույց է տրված որպես ծխական դպրոց՝ 26 աշակերտով, իսկ 1875-ին «մասնավոր ուսումնարան արական սեռի»։

1876-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 28 աշակերտ։

Հավանաբար երկար տարիներ փակ է մնացել, քանի որ չի երևում 80-ական թվականների ցուցակներում։ Այս ենթադրությունը հաստատ-

վում է նաև նշանով, որ 1895-ի ապրիլին Կարճևանի հասարակությունը որոշել է գյուղում բաց անել ծխական դպրոց, խնդրելով կաթողիկոսին հաստատել նորընտիր հոգաբարձության կազմը։ Սակայն 1896-ին վրա հասած հայ դպրոցների ընդհանուր փակումը խափանում է նաև այս դպրոցը, որին մեկ էլ հանդիպում ենք 1907—08 ուս. տարում։ Այդ ժամանակ ունեցել է 2 ուսուցիչ և 56 աշակերտ (22 աղջիկ)։

1909-ին եղել է երկսեռ եռամյա դպրոց, ուր սովորել են 48 տղա, 28 աղջիկ։ 1913—14 ուս. տարում դպրոցը քառամյա էր, ունենալով 50 (մի այլ փաստաթղթում՝ 96) աշակերտ, 1917-ին՝ 57 աշակերտ (21 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 5, գ. 30, թ. 19; գ. 43, թ. 17; գ. 71, թ. 9; գ. 328, թ. 25; գ. 498, թ. 19; գ. 182, թ. 9; ֆ. 7, գ. 172, թ. 9; գ. 167, թ. 1—56; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 264, թ. 28։

Կարմիր վանքի արական դպրոց

1871-ին այս դպրոցը գործել է, ունենալով 2 ուսուցիչ և 20 աշակերտ։ 1876-ին համարվել է գիշերօթիկ և ունեցել է ընդամենը 6 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 4; գ. 71, թ. 6։

Կոռնիձոր (Գերինզուր, Գերինձոր, Գորիսի շրջ.) գյուղի արական ծխական դպրոց

Դեռևս 19-րդ դարում Կոռնիձորը եղել է Զանգեզուրի խոշոր գյուղերից մեկը, իսկ 1915-ին նրա բնակիչների թիվը հասել է 2122 հոգու։

Աղքատիկ են արխիվային տվյալները Կոռնիձորի ծխական դպրոցի և առհասարակ կրթական վիճակի մասին։ Հայտնի է, որ դեռևս 1871-ին այնտեղ գործել է եկեղեցական ծխական դպրոց՝ մեկ ուսուցչով և 24 աշակերտով։ 1873-ին աշակերտների թիվը իջել է 20-ի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 4։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22։

Հալիձոր (Գորիսի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Երևանի թեմի 1911—12 ուս. տարվա տեղեկագրում նշված է, որ այս դպրոցը հիմնվել է 1908-ին։ Դա պետք է համարել ստույգ, քանի որ Հալիձորի դպրոցը նախորդ տարիների փաստաթղթերում չի երևում, իսկ մի այլ աղբյուրի համաձայն, 1908-ին նպաստ է ստացել ԿՀԲ ընկերությունից։ 1909-ին եղել է երկսեռ միամյա դպրոց, ուր սովորել են 32 տղա և 3 աղջիկ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30; ֆ. 56, գ. 544, թ. 19, «Նոր դպրոց», 1908, №3, էջ 85։

Հանդ Վերին (Փանուլի, Ղափանի շրջ.) գյուղի արական ծխական դպրոց

Հավանաբար հիմնվել է 1871-ին, այդ ժամանակ ունենալով մի ուսուցիչ, 17 աշակերտ։ 1873-ին գործել է, սակայն հետագա մի քանի տասնամյակների փաստաթղթերում այլևս չի երևում։

Վերաբացվել է երկար ընդմիջումից հետո՝ 1907-ին, որը և սխալմամբ համարվել է նրա հիմնադրման տարեթիվը։

1912—13 ուս. տարում եղել է միդասյան արական ծխական դպրոց՝ մի ուսուցչով և 34 աշակերտով։ 1914-ին աշակերտների թիվը իջել է 27-ի։

Այս դպրոցը մասամբ պահվել է «Արամազդ» ընկերության նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 511, թ. 21—22; ֆ. 13, գ. 264, թ. 61;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 4, գ. 192, թ. 48—49; ֆ. 7, գ. 172, թ. 9; գ. 157, թ. 1—30, ֆ. 48, գ. 589, թ. 81։

Ղարաբաբա գյուղի ծխական դպրոց

Թեմական տեսչի մի զեկուցագրում նշված է, որ 1914—15 ուս. տարում Ղափանի շրջանի Ղարաբաբա գյուղում բացվել է դպրոց։ Ցավոք, տեղեկատու աղբյուրները մեզ ոչինչ չեն ասում այդ գյուղի մասին։

«Կովկազսկի կալենդար»-ում նշված է Ղարաբաբա անունով մի գյուղ միայն, այն էլ Հին Նախիջևանի գավառում։ 1917 թվականի մի ցուցակում ևս Ղարաբաբա գյուղը և նրա դպրոցը ցույց են տրված Ղափանի շրջանում։ Եղել է երկամյա դպրոց՝ 27 աշակերտով (14 աղջիկ)։

Դպրոցը նպաստ է ստացել Կովկասի հայ բարեգործական ընկերությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ.48, գ. 598, թ. 80—81; ֆ. 7, գ. 1, գ. 167, թ. 1—56։

Ղարաքիլիսա (Սիսավան) գյուղի (այժմ՝ Սիսիան ավան) ծխական դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագիրը 1873 թ. համարներից մեկում գրել է, որ Սիսիանի ոչ մի գյուղում դպրոց չկա, իսկ «քահանաները իրենց գոմերի սաթյուռում սովորեցնում են մի քանի մոնթերի եկեղեցվո փոխերը»։ Հետագայում գրությունը, ըստ երևույթին, որոշ չափով փոխվել է։

Տաթևի հաջորդությանը ենթակա դպրոցների ցուցակում (կազմված 1875-ին) ցույց է տրված նաև Ղարաքիլիսա գյուղի արական «մասնավոր ուսումնարանը», որը համարվել է նաև ծխական դպրոց։ Այդ ժամանակ այնտեղ ուսուցչություն է արել Շուշու թեմական դպրոցում ուսում առած ջալալօղլիցի Գրիգոր Պողոսյանը։

Այս դպրոցին այլևս չենք հանդիպում հետագա տասնամյակների ցուցակներում։

Ելիզավետպոլի նահանգի Ղարաքիլիսա գյուղում (Նախկինում Ջանգեզուրը մտնում էր այդ նահանգի մեջ) 1882-ից սկսած գործել է միդասյան գյուղական հասարակական (շինական) դպրոց, որը եղել է մինիստրական գյուղական դպրոցի տիպի և ենթարկվել է պետական ուսումնական վարչություններին։

«Մեղու Հայաստանի», 1873, №20.
ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 5, գ. 30, թ. 19;
ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 55։

Ճակատեն (Զիկադին, Ղափանի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1876-ին գործել է, ունենալով մեկ ուսուցիչ և 30 աշակերտ։

1896-ին ունեցել է 1 ուսուցիչ և 50 աշակերտ։ Հաջորդ թվականին փակվել է։ 1910-ին և 1911-ին գործել է, որպես եռամյա խառը դպրոց՝ 36 աշակերտով (6 աղջիկ)։

1913—14 ուս. տարում ունեցել է միայն մի դասարան, ուր սովորել են 44 տղա և 8 աղջիկ։ 1914-ին աշակերտների ընդհանուր թիվն իջել է 30-ի։ 1917-ին եղել է եռամյա՝ 44 աշակերտով (14 աղջիկ)։ Կոմկասի ՀԲԸ այս դպրոցին նպաստ է տվել տարեկան 300 ռուբլի։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 71, թ. 9, ֆ. 47, գ. 214, թ. 36, ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 167, թ. 1—56; գ. 172, թ. 9, ֆ. 48, գ. 598, թ. 81;
«Նոր դպրոց», 1912, № 15—16, էջ 32, «Արարատ», 1910, էջ 796,
ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 61։

Մագրա (այժմ՝ Բարձրավան, Սիսիանի շրջ.)
գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցը բացվել է 1895-ի կեսերին, տեղի հասարակության որոշմամբ, սակայն 1896-ին կամ 1897-ին փակվել է։ Վերաբացվել է 10 տարի հետո՝ 1906 թվականին, լինելով միդասյան արական դպրոց։

Հետագա տարիների փաստաթղթերում Ջանգեզուրի գավառի Մագրա գյուղի դպրոցը այլևս չի հանդիպում։

Սակայն ուշագրավ է հետևյալ փաստը։ 1916-ի հունվարի 11-ին կաթողիկոսը կարգադրել է սինոդին դպրոցական ֆոնդի տոկոսներից նպաստ տալ «Երևանի թեմի Մագրա գյուղի դպրոցին տարեկան երկու հարյուր (200) ռուբլի»։ Նույն թվականի հունվարի 22-ի նիստում սինոդը՝ ի կատարումն կաթողիկոսի վերոհիշյալ կարգադրության, որոշել է «ուղարկել դպրոցական դրամագլխի տոկոսներից տարեկան 200 ռուբլի նպաստ Կարսի շրջանի Մագրա գյուղի հայոց եկեղեցական ծխական դպրոցին, Երևանի փոխթեմակալի միջոցով...» («Արարատ», 1916, էջ 16 և 19)։

Մեզ թվում է, որ այստեղ ինչ-որ թյուրիմացություն կա։ Բանն այն է, որ Կարսի մարզում Մագրա անունով գյուղ ցույց չեն տալիս ոչ «Կովկազսկի կալենդար»-ի տարբեր տարիների գրքերը, ոչ էլ հայ եկեղեցի ունեցող բնակավայրերի ցուցակները։ Տեղեկատու աղբյուրներում Մագրա անունով գյուղեր ցույց են տրված Նոր Բայազետի գավառում (Մեծ Մագրա, Փոքր Մագրա) և Ջանգեզուրի գավառում (ներկա Սիսիանի շրջանում՝ այժմ Բարձրավան և Ղափանի շրջանում)։

Նշված գյուղերից միայն Սիսիանի շրջանի Մագրա գյուղում է բացվել ու գործել հայկական— եկեղեցական ծխական դպրոց։

Մնում է ենթադրել, որ նպաստ տալու մասին կաթողիկոսի վերոհիշյալ կարգադրությունը և սինոդի որոշումը վերաբերում են այդ գյուղի դպրոցին, որը նյութական խիստ կարիքի մեջ է եղել։

«Արարատ», 1916, էջ 19 և 29, «Կովկազսկի կալենդար», 1907, էջ 289, 1915, էջ 153, «Արարատ», 1916, էջ 19 և 29, «Կովկազսկի կալենդար», 1907, էջ 289, 1915, թ. է; 153, Ջ. Կորկոտյան, «Ս. Հայաստանի բնակչությունը», էջեր 25, 38, 112 և 136։

Մալև (Մալվաշան, Մեղրու շրջ.)
գյուղի ծխական դպրոց

«Արարատ» ամսագրի 1913 թ. նոյեմբերի համարում գրված է, որ կաթողիկոսը նույն թվականի հոկտեմբերին Մալև գյուղի եկեղեցական ծխական հոգաբարձության անունով ուղարկել է մի կոնդակ, որով օրհնելով հոգաբարձությանը և գյուղի հայ ժողովրդին՝ թույլատրեց բանալ գյուղի եկեղեցու գավթում ծխական դպրոց»։

Եվ իրոք, 1913—14 ուս. տարում այն գործել է, ունենալով մի դասարան և 32 աշակերտ (8 աղջիկ)։ 1916-ին նպաստ է ստացել Երևանի թեմի դպրոցական ընդհանուր ֆոնդից։ 1917-ին չի գործել։

«Արարատ», 1913, № 11, էջ 997, 1916, էջ 7,
ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 7, գ. 172, թ. 9, 2. Կորկոտյան, «Խորհրդային Հայաստանի բնակչությունը», 1932, Երևան, էջ 65։

Մեղրի գյուղի ծխական դպրոցները

Մեղրին կրթական հարուստ պատմություն ունի և միշտ էլ հանդիսացել է գրագիտության տեսակետից համեմատաբար բարձր կանգնած վայրերից մեկը։ Այնտեղ խալֆայական ուսուցումը գոյություն է ունեցել վաղ ժամանակներից։

Մեղրու ծխական դպրոցի համառոտ պատմությունը գրված է դեռևս 1893-ին և ձեռագիր վիճակում պահվում է Հայկական ՍՍՀ պետական պատմական արխիվում (ֆոնդ 7, ցուցակ 1, գործ 56, թերթ 116—126)։ Հեղինակն է այդ դպրոցի ավագ ուսուցիչ Արշակ Թադևոսյանը։

Այնտեղ կարդում ենք.

«Դրագիտությունը Մեղրի գյուղում սկսվել է անհայտ ժամանակներից. մինչև 1869 թիվը գրագիտությունը եղել է բուն խալֆայական, իր բոլոր հակամանկավարժական օրենքներով։ 1869 թվին ուսուցիչ է գալիս Ներքին Ագուլեցի Սարգիս Մակարյանցը, որն իր ուսումն ավարտել է Ն. Ագուլիսի ուսումնարանում։ Սա բավականին փոփոխություններ է մտցրնում։ Սրա օրով մուտք են գործում զանգակը, դասացուցակը և դասամիջոցները։ Սա աշակերտներին սովորեցնելիս է եղել մայրենի լեզու, թվաբանություն, հայոց պատմություն, աշխարհագրություն, երգեցողություն և ռուսաց լեզու։

Դատելով ավանդված առարկաներից, կարելի է ասել, որ եղել է իսկական աշխարհիկ դպրոց։

Մեղրու դպրոցի հնագույն մի քանի տարիների վերաբերյալ Ա. Թադևոսյանի գրածը և արխիվային փաստաթղթերում նշված տվյալները հակասում են միմյանց։

Այսպես, օրինակ, Ա. Թադևոսյանը նշում է, որ 1874 թվին Մակարյանցը թողնում է Մեղրին..., մինչդեռ 1872 թ. ապրիլի 1-ին Տաթևի միաբանության կողմից կազմված և էջմիածնի սինոդին ուղարկված պաշտոնական տեղեկագրում Մեղրի գյուղում ցույց է տրված միայն մի ծխական (հոգևոր) դպրոց, որտեղ ուսուցչություն է արել մեղրեցի Ալեքսանդր Աղաբաբյանը (տարօրինակ է նաև, որ այս ուսուցչի անունը Ա. Թադևոսյանը բոլորովին չի տալիս, չնայած տարի առ տարի նշում է այդ դպրոցում աշխատած բոլոր ուսուցիչների անունները)։

Այդ տեղեկագրում ասված է նաև, որ Ա. Աղաբաբյանը իր կրթությունն ստացել է Մեղրու վանքում և զանազան մասնավոր անձանց մոտ։ Սրանից կարելի է եզրակացնել, որ Մեղրու վանքում դպրոց է գործել 1870-ական թվականներից առաջ։

Ա. Թադևոսյանը գրում է. «1880 թվին Մեղրիում երեք մասնավոր ուսումնարան է լինում. 1. Մաթևոս Շահյանցինը, 2. Ալեքսանդրա Վաչյանցինը և 3. Երմոգինոս Տեր-Պետրոսյանցինը։ Մինչև այդ Մեղրիի

հասարակությունն այնքան հասունացավ, որ 1881 թվին կարիք զգաց վերոգրյալ մասնավոր ուսումնարանները միացնել և մի ուսումնարան ունենալ։ Ուստի նույն տարվան հունվարի մեկից մինչև հունիսի վերջը վերոհիշյալ երեք ուսուցիչներին հավաքում են մի տեղ։ Այնուհետև նշվում է, որ 1882-ի վերջերին ավարտվում է Մեղրու ծխական դպրոցի շենքի կառուցումը և այդ թվականի դեկտեմբերի 26-ին աշակերտությունը փոխադրվում է այնտեղ։

Արխիվային փաստաթղթերը այլ կերպ են ներկայացնում Մեղրու դպրոցը 1870-ական թվականներին։

Կովկասի փոխարքայության պահանջով 1871 թ. նոյեմբերին կազմվել և փոխարքայությանն է ներկայացվել «Տեղեկագիր էջմիածնի հայ Գրիգորյան սինոդին ենթակա ուսումնական հաստատությունների մասին»։

Եթե այդ տեղեկագրում նշված դպրոցները ենթարկվել են էջմիածնի սինոդին, ուրեմն մասնավոր դպրոցներ լինել չէին կարող։ Դրանք սովորական ծխական կամ վանական դպրոցներ էին։

Հիշյալ տեղեկագրերում ցույց է տրված նաև Մեղրու դպրոցը, որն այդ տարում ունեցել է մի ուսուցիչ և 25 աշակերտ։ Նշված է նաև, որ այդ ուսումնական տարում դպրոցում ռուսաց լեզու չի ավանդվում։ Եթե իրոք, ինչպես գրում է Թադևոսյանը, Ս. Մակարյանը Մեղրու դպրոցը թողել է 1874-ին, ապա հարց է առաջանում՝ ինչո՞ւ նա 1869-ին այդ դպրոցում ավանդել է ռուսաց լեզու, իսկ 1871-ին՝ ոչ։

Մենք տեսանք, որ 1872-ին բոլորովին այլ անձավորություն է աշխատել այդ դպրոցում։ Սա արդեն, ի թիվս այլ առարկաների, ավանդել է նաև ռուսերեն ընթերցանություն և վարելագրություն։ Ունեցել է 27 աշակերտ։ Այս տվյալները մտել են նաև էջմիածնի սինոդի կողմից նույն թվականին կազմված տեղեկագրում։

Սինոդի կողմից 1873-ին կազմված և վերադաս իշխանություններին ներկայացված տեղեկագրերում ևս Մեղրիում ցույց է տրված մի դպրոց՝ «Մեղրի գյուղի ծխական դպրոցը»։ Ունեցել է 30 աշակերտ։ Ուսուցիչն է եղել Կարապետ Խաչիկյանը։

Տաթևի վիճակի փոխանորդությունը 1875-ի հունվարին կազմել և էջմիածնի սինոդին է ուղարկել մի տեղեկագիր, ուր նշված են վիճակի բոլոր ծխական և մասնավոր դպրոցները։ Այդ տեղեկագրում նույնպես Մեղրիում ցույց է տրված մի «եկեղեցական դպրոց արական սեռի»։ Ուսուցիչն է եղել Ագուլիսի հոգևոր դպրոցում ուսանած մեղրեցի Մինաս Տեր-Մինասյանցը։

Երևանի թեմական տեսչի 1876 թ. կազմած թեմի դպրոցների ցուցակում՝ Մեղրիում, իրոք, ցույց է տրված երեք դպրոց, բայց երեքի դիմաց էլ գրված է «ծխական» բառը։

Դրանցից մեկը տեղավորված է եղել «Մեծ Թաղի» Ս. Աստվածածին եկեղեցու գավթում, մյուսն ուղղակի՝ «մեծ թաղում», երրորդը՝ «ամենափոքր թաղումս»։

Առաջինն ունեցել է 1 ուսուցիչ և 31 աշակերտ, երկրորդը՝ 1 ուսուցիչ 30 աշակերտ, իսկ երրորդը՝ 1 ուսուցիչ, 21 աշակերտ։

Մեր կարծիքով սա մի ծխական դպրոց է, որի խմբերը, շենք չունենալու պատճառով, ցրված են եղել գյուղի տարբեր թաղամասերում և իրարից տարբերելու համար կոչվել են կամ այդ թաղամասի, կամ էլ տվյալ խմբի հետ պարապող ուսուցչի անունով։ Որ իրոք դա մի դպրոց է եղել, ապացուցվում է նաև նրանով, որ այդ երեք առանձին խմբերը միասին ունեցել են մի ընդհանուր հոգաբարձություն՝ ընտրված ամբողջ գյուղի հասարակության կողմից։

Ուրեմն դրանք մասնավոր դպրոցներ չէին, քանի որ հասարակությունը հոգաբարձություն էր ընտրում միայն ծխական դպրոցների համար։

1881-ին հայ մեծանուն վիպասան Բաֆֆին այցելել է Մեղրի և այնտեղի հասարակության հետ զրույցներ է ունեցել ազգային դաստիարակության ու դպրոցի նշանակության մասին։ Նա նույնիսկ ծանոթացել է այդ դպրոցի համար Շահչանի կազմած կանոնադրությանը, անհրաժեշտ շտկումներ մտցրել նրա մեջ և իր հետ տանելով Էջմիածին՝ ներկայացրել է կաթողիկոս Գևորգ 4-րդին։

Այդ ժամանակամիջոցում (1882-ին) գյուղի հասարակությունը ծխական դպրոցի համար կառուցել է հատուկ շենք, ուր միավորվել են վերևում նշված երեք դպրոցները կամ խմբերը։

Ստացվել է նաև կաթողիկոսի 1882 թ. նոյեմբերի 7-ի №444 կոնդակը, որով նա շնորհավորել է միավորված ծխական դպրոցի ու նրա շենքի բացումը։ Այս հանգամանքը թյուրիմացություն է առաջացրել Մեղրու ծխական դպրոցի հիմնադրման տարեթվի հարցում։ Պաշտոնական ճանաչում է գտել 1882-ը, թեև, ինչպես ցույց ավելցինք, Մեղրիում ծխական դպրոցներ են գործել դրանից 12—13 տարի առաջ։

1885-ին փակված հայկական դպրոցների ցուցակներում Մեղրու դպրոցը չի նշված, սակայն Ա. Թադևոսյանը դպրոցի համառոտ պատմության մեջ ասում է, որ «1885 թվի մարտի 1-ին ուսումնարանը ուերության հրամանով փակվում է»։ Այն վերաբացվում է 1886—87 ուս. տարում։ Պաշտոնական տվյալներով այս դպրոցը 1888—89 ուս. տարում եղել է երկդասյան (5 բաժանմունքով), ունեցել է 70 աշակերտ և 5 ուսուցիչ։ Դպրոցը պահվել է հասարակության միջոցներով, թոշակագրումներով և նվիրատվություններով։ Այդ ուս. տարում ավանդվել են հայոց լեզու, կրոն, ռուսաց լեզու, հայոց պատմություն և Հայաստանի աշխարհագրություն, Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն, թվաբանություն, բնական պատմություն, երգ, վայելչագրություն, գծագրություն։ 1891-ից դպրոցում մտցվել է տղաների և աղջիկների համատեղ ուսուցում։ 1896-ին դպրոցն ունեցել է 4 ուսուցիչ, 110 աշակերտ (20 աղջիկ)։ Նույն թվին նորից փակվում է և վերաբացվում միայն 1905-ին՝ որպես երկդասյան դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 5 ուսուցիչ, 160 աշակերտ (81 աղջիկ), 1911—12 ուս. տարում՝ 217 աշակերտ (125 աղջիկ)։

1913—14 ուս. տ. եղել է 6-ամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 79 տղա, 109 աղջիկ (մի այլ փաստաթղթում աշակերտների ընդհանուր թիվը ցույց է տրված 207 հոգի)։ 1917-ին ունեցել է 7-ամյա դասընթաց և 150 սովորող (81 աղջիկ)։

ՀԱԲԱ ԳԿԳԱ, ֆ. 7, ց. 1, գ. 34, թ. 116—126; գ. 120, թ. 1; գ. 172, թ. 9; ֆ. 56, գ. 30, թ. 18; գ. 31, թ. 19, գ. 32, թ. 4; գ. 43, թ. 17; գ. 71, թ. 9; գ. 50, թ. 4; գ. 199, թ. 23; գ. 182, թ. 9; գ. 492, թ. 116; ֆ. 47, գ. 214, թ. 32; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 64,
ՎԱԲԱ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 3997, գ. 7, գ. 8717, թ. 5; ֆ. 19, գ. 264, թ. 61; ֆ.12, գ. 1, գ. 865, թ. 44, «Մշակ», 1879, № 161,
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ժող. գգ. 1911—12 թթ.»։

Յայջի (այժմ՝ Հարժիս, Գորիսի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Երևանի թեմի հայ եկեղեցական ծխական դպրոցների 1916—17 ուս. տարվա ցուցակներում ծխական դպրոց է ցույց տրված Սիսիանի շրջանի Յայջի գյուղում։ Դա, իհարկե, թյուրիմացություն է, քանի որ տեղեկատու բոլոր աղբյուրները Զանգեզուրի Յայջի գյուղը ցույց են տալիս Գորիսի շրջանում։

Յայջի գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է վերոհիշյալ ցուցակներում։ Դրանցից իմանում ենք, որ այն 1917-ին եղել է երկամյա երկսեռ դպրոց՝ մի ուսուցչով և 50 աշակերտով (3 աղջիկ)։ Քանի որ այդ դպրոցը նախորդ տարիների տեղեկագրերում չկա, ապա պետք է կարծել, որ այն հիմնվել է 1915 կամ 1916 թվականներին։

ՀԱԲԱ ԳԿԳԱ, ֆ. 7, ց. 1, գ. 157, թ. 1—36։

Նորաշենիկ գյուղի (Ղափանի շրջ.) ծխական դպրոց

Հայ դպրոցների 1873 թվականի ընդհանուր ցուցակում նշված է նաև Նորաշենիկ գյուղի ծխական դպրոցը, որն ունեցել է 16 աշակերտ։ Ուսուցիչն է եղել Վարդան Տեր-Ավետիսյանը։

Դպրոցի հետագա ճակատագրի վերաբերյալ արխիվային փաստաթղթերը լռում են։

ՀԱԲԱ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 43, թ. 17։

Շաղաթ գյուղի (Սիսիանի շրջ.) արական ծխական դպրոց

1894-ի նոյեմբերին Շաղաթ գյուղի հասարակությունը որոշել է իրենց մոտ բաց անել ծխական դպրոց, ընտրել է հոգաբարձություն և խնդրել հողևոր բարձր իշխանությանը հաստատել իր որոշումը։ Նույն թվականի վերջերին դպրոցը բացվել է, սակայն չի մտել 1896-ին փակված հայ դպրոցների ցուցակում, որովհետև վերջինս վաղուց էր կազմված։ 1896-ին ունեցել է 1 ուսուցիչ, 50 աշակերտ։ 1897-ին կամ 1898-ին փակվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 5, գ. 328, թ. 23; ֆ. 47, գ. 214, թ. 34։

Շիկահող (Շխավուզ) գյուղի (Ղափանի շրջ.) ծխական դպրոց

1875-ի հունվարին կազմված մի տեղեկագրում Տաթևի հաջորդությունի Շիկահող գյուղում ցույց է տրված «մասնավոր կրթարան արական սեռի»։ Կից գրությունի մեջ այդպիսի դպրոցները նշված են որպես եկեղեցական դպրոցներ։

Շիկահողի դպրոցին այլևս չենք հանդիպում մինչև 1906 թվականը։ Գիտենք, որ այդ տարում այն բացվել է որպես միդասյան խառը դպրոց։ 1912—13 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 47 աշակերտ (11 աղջիկ), 1913—14 ուս. տարում՝ 32 աշակերտ (1 աղջիկ), 1917-ին՝ 66 աշակերտ (17 աղջիկ)։

Մասամբ պահվել է «Արարատ» և Կովկասի հայ բարեգործական ընկերությունների նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 19, գ. 683, թ. 27, ֆ. 7, գ. 172, թ. 9, գ. 167, թ. 1—56, ֆ. 45, գ. 589, թ. 81, «Նոր դպրոց», 1908, N3, էջ 85։

Ծինաթաղ (Ենենաթաղ, այժմ՝ Լեռնաշեն, Սիսիանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1913—14 ուս. տարում, ունենալով ընդամենը մի դասարան։ Եղել է արական դպրոց, ուր սովորել են 37 տղաներ։ 1916-ին գործել է, նպաստ ստանալով Թեմի դպրոցական ֆոնդից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 9, «Արարատ», 1913, N10, էջ 1916, էջ 7։

Ծինուհայր (Ծնոր, Գորիսի շրջ.) գյուղի արական ծխական դպրոց

Ծինուհայր գյուղի Կուսանաց Անապատ կոչվող վանքի դպրոցը գործել է 1873 և 74 թվականներին։ Ոմն քահանա Դավիթ, մի խումբ մանուկների հավաքած, սովորեցրել է մայրենի լեզու։ Նրա աշակերտների թիվը չի անցել 19—20-ից։

Հետագա տասնամյակների տեղեկագրերում ու փաստաթղթերում այդ դպրոցը հիշատակվում է ուղղակի Ծինուհայր գյուղի անունով։ Մի տեղեկագրից իմանում ենք, որ այն բացվել է 1892-ին։ Կնշանակի 1885-ից ի վեր այն փակ է մնացել։ 1893-ին սինոդի կարգադրությամբ «ժամանակավորապես» փակվել է՝ «մինչև նորընտիր կաթողիկոսի ժամանելը»։ Փակման պատճառը չի ասված։

1894-ին եղել է երկդասյան դպրոց, մի բան, որ կասկածի տակ է գնում 1892-ին նրա բացված լինելը։ Ինչպե՞ս կարող էր 2—3 տարվա դպրոցը երկդասյան լինել, այսինքն՝ ունենալ 5-րդ բաժանմունք։ Այդ թվականին ունեցել է 51 աշակերտ, իսկ 1896-ին՝ 2 ուսուցիչ և 70 աշակերտ։

Թեև Ծինուհայրի դպրոցը չի նշված 1896-ին կառավարության կողմից փակված հայ դպրոցների ցուցակում, այնուամենայնիվ չենք կասկածում, որ այն ևս փակվել է, եթե ոչ այդ, ապա հաջորդ 1—2 տարիներում։ Չպետք է մոռանալ, որ 1897—1898 թվականներին Կովկասում գրեթե ոչ մի հայկական ծխական դպրոց այլևս չէր գործում։ Բացի այդ, հայտնի է, որ Ծինուհայրի դպրոցը վերաբացվել է 1906-ին, որպես միդասյան արական դպրոց, ուրեմն մինչ այդ այն փակված է եղել։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 50 տղա, 10 աղջիկ։

1913—14 ուս. տարում 62 (մի այլ փաստաթղթի համաձայն՝ 114) աշակերտի դիմաց ունեցել է միայն 2 աշակերտուհի, իսկ 1917-ին՝ 53 աշակերտ և 6 աշակերտուհի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 47, գ. 214, թ. 35; գ. 544, թ. 20, ֆ. 56, գ. 43, թ. 17, գ. 182, թ. 9, գ. 30, թ. 18, գ. 492, թ. 118, ֆ. 7, գ. 120, թ. 2, գ. 157, թ. 1—30, գ. 167, թ. 1—56, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 4559, թ. 9, գ. 8717, թ. 5, ֆ. 13, գ. 264, թ. 61, «Նոր դպրոց», 1910, 12, էջ 169։

Ծիշկերտ գյուղի (Ղափանի շրջ.) ծխական դպրոց

Բացվել է 1906-ին, որպես միդասյան արական դպրոց։ 1912—13 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք, որոնցում սովորել են 29 տղա և միայն մեկ աղջիկ, 1913—14 ուս. տարում՝ 27 աշակերտ (2 աղջիկ),

1917-ին՝ 28 աշակերտ (4 աղջիկ)։ Մասամբ պահվել է «Արամազդ» ընկերության նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 623, թ. 15, ֆ. 7, գ. 172, թ. 9, գ. 157, թ. 1—30, գ. 167, թ. 1—56, ֆ. 48, գ. 589, թ. 81, գ. 544։

Ծվանիձոր (Շիրվանձոր, Աստազոր) գյուղի (Մեղրու շրջ.) արական ծխական դպրոց

Հիմնվել է, հավանաբար, 1871-ին, ունեցել է մի ուսուցիչ, 21 աշակերտ։ 1875-ին ցույց է տրված որպես «մասնավոր կրթարան արական սեռի»։

Մի քանի տասնամյակների վերաբերյալ տվյալներ չկան։

1907—08 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ, 52 աշակերտ (բոլորը տղաներ)։

1909-ին եղել է երկսեռ 2-ամյա դպրոց, ուր սովորել են 53 տղա և 2 աղջիկ։ 1911—12 ուս. տարում ունեցել է միայն մի դասարան, թեև համարվել է եռամյա տարրական դպրոց։ Ունեցել է 30 աշակերտ (բոլորը տղաներ)։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 1; գ. 43, թ. 17; գ. 544, թ. 29; գ. 182, թ. 9; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպ. 1911—12 ուս. տ.»։

Շրվենանց (Դայմադաղլու) գյուղի (Ղափանի շրջ.) ծխական դպրոց

Թեմական տեսչի մի տեղեկագրում նշված է, որ այս գյուղի ծխական դպրոցը բացվել է 1902-ին, մի բան, որ թիչ հավանական է, քանի որ այդ ժամանակ փակված էին հայկական բոլոր դպրոցները և իշխանության օրգանները թույլ չէին տալիս որևէ նոր դպրոց բացել։

Գիտենք, որ այս դպրոցը 1909-ին գործել է, գգալի նպաստ ստանալով Բաքվի հայ մշակութային միությունից։

1912—13 ուս. տարում Շրվենանցի դպրոցը եղել է քառամյա դասընթացով երկսեռ դպրոց, ուր սովորել են 130 տղա և 20 աղջիկ։ 1913—14 ուս. տարում աշակերտների ընդհանուր թիվը մնացել է նույնը՝ 150, իսկ աղջիկների թիվը գարձել է 31։ 1917-ին ունեցել է 143 աշակերտ (33 աղջիկ)։

Դպրոցի պահպանման համար Գասպար Տեր-Մարգարյանը տարեկան հատկացրել է 2300 ռ.։ Նույնի միջոցներով դպրոցի համար կառուցվել է 8—9 սենյակից բաղկացած մի շենք, որը եղել է լավագույնը Ղափանի շրջանի դպրոցական բոլոր շենքերից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 623, թ. 13; ֆ. 7, գ. 172, թ. 9; գ. 157, թ. 1—30; ֆ. 48, գ. 589, թ. 80—81; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 63, գ. 264, թ. 61;
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպրոց. 1911—12 թթ.»։

Պառավաթումբ (նաև Պոաթումբ, ավելի ուշ՝ Բարաբաթում, Ղափանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1907-ին, որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1911—12 ուս. տարում ունեցել է 40 աշակերտ (18 աղջիկ), 1912—13 ուս. տարում՝ 37 աշակերտ (8 աղջիկ)։ Պահվել է հիմնականում «Արամազդ» ընկերության նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 623, թ. 11; ֆ. 48, գ. 589, թ. 31; ֆ. 7, գ. 157, թ. 1—30;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 264, թ. 61։

Պղավերջ (Բաղաբուրջ, Ղափանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Արխիվային փաստաթղթերում այս գյուղը տարբեր անուններով է նշված՝ Բաղավերջ, Պագավեր, Պղավերջ և Բաղաբուրջ։

Մենք այստեղ բերում ենք Զ. Կորկոտյանի «Խորհրդային Հայաստանի բնակչությունը» գրքում (1932, Երևան) նշված հին անունով։

Դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1871-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 30 աշակերտ, իսկ 1876-ին՝ 1 ուսուցիչ՝ 12 աշակերտ։ Հետագա շատ տարիների և տասնամյակների փաստաթղթերում այլևս չի հանդիպում։

Գիտենք միայն, որ 1913—14 ուս. տարում գործել է որպես եռամյա դպրոց, ունենալով սակայն միայն մի դասարան, ուր սովորել են 23 տղա, 7 աղջիկ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, գ. 4; գ. 71, թ. 9;
«Նոր դպրոց», 1911, N9—10, էջ 32։

Սևաքար (Ղափանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1908-ին։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց, ուր սովորել են 32 տղա և 18 աղջիկ։ Չգիտենք, թե ինչու 1913—14 ուս. տարում ունեցել է միայն մի դասարան և 35 աշակերտ (13 աղջիկ), 1917-ին՝ 34 աշակերտ (18 աղջիկ)։ Պահվել է հիմնականում «Արամազդ» ընկերության նպաստով։ Երեխաներից ուսման վարձ չի գանձվել։

«Նոր դպրոց», 1912, N15—16, էջ 52,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 172, թ. 9, գ. 167, թ. 1—56, ֆ. 48, գ. 589, թ. 81։

Սրաշեն գյուղի (Ղափանի շրջ.) ծխական դպրոց

Այս գյուղի ծխական դպրոցը ևս առաջին անգամ հանդիպում է 1908-ին ՀԿԲ ընկերությունից նպաստ ստացած դպրոցների ցուցակում։ Քանի որ նախորդ տարիների փաստաթղթերում չի երևում, ուրեմն պետք է բացված լինի կամ 1907-ին, կամ էլ 1908-ի սկզբներին։

«Նոր դպրոց», 1908, N3, էջ 85։

Վահրավար գյուղի (Մեղրու շրջ.) ծխական դպրոց

Բացվել է 1913—14 ուս. տարում, լինելով երկամյա խառը դպրոց, ուր սովորել են 15 տղա, 8 աղջիկ (մի այլ փաստաթղթում աշակերտների ընդհանուր թիվը ցույց է տրված 27 հոգի)։ 1917-ին՝ 25 աշակերտ (10 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 9; գ. 167, թ. 1—56; ֆ. 56, գ. 498, թ. 9; «Ազրարաստ», 1913, էջ 977։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61։

Վանք գյուղի (Մեղրու շրջան) ծխական դպրոց

Մեղրու շրջանի Վանք գյուղի ծխական դպրոցը բացվել է 1908-ին և պահվել «Ազրամազդ» ընկերության նպաստով։ 1909-ին արտեղ սովորել են 40 տղա, 15 աղջիկ։ 1913—14 ուս. տարում եղել է եռամյա դպրոց, ունենալով 25 աշակերտ և 11 աշակերտուհի։ Հաջորդ տարում աշակերտների ընդհանուր թիվն իջել է 33-ի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 544, թ. 25; գ. 192, թ. 32—33; ֆ. 7, գ. 172, թ. 7;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61;
«Նոր դպրոց», 1913, N3, էջ 73—74։

Վաչագան (Վերին) գյուղի (Տաթևի հաջորդություն, Ղափանի շրջ.) ծխական դպրոց

Այս դպրոցին առաջին անգամ հանդիպում ենք 1872-ին կազմված մի ցուցակում, ուր նշված են Տաթևի հաջորդությունում եղած դպրոցները։ Ունեցել է 1 ուսուցիչ և 18 աշակերտ։ Հավանաբար երկար կյանք չի ունեցել, քանի որ ցույց չի տրված նույնիսկ 1875-ի ցուցակներում։ Նորից բացվել է 1908-ին, իսկ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա

խառը դպրոց՝ 43 աշակերտով (13 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում ունեցել է միայն մի դասարան, ուր սովորել են 38 տղա և 10 աղջիկ։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ 1917-ին ունեցել է 47 աշակերտ (36 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 31, թ. 19, ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 172, թ. 9, գ. 167, թ. 1—56, ֆ. 48, գ. 589, թ. 81, «Նոր դպրոց», 1912, N15—16, էջ 52։

Տաթևի վանքի դպրոց

Տաթևի վանքը հայ դպրության հնագույն և նշանավոր կենտրոններից մեկն է, որ դեռևս 10—15-րդ դարերում ունեցել է իր նշանավոր համալսարանը։ Հետագայում այդ վանքը դառնում է անշուք և կորցնում իր վաղեմի փայլը։

1852-ին էջմիածնի սինոդի որոշմամբ Տաթևի վանքին կից կազմակերպվել է մի դպրոց՝ հոգևորականների երեխաների համար։ 1871-ին այն համարվել է մասնավոր դպրոց, ուր ուսանելու են եկել Տաթև գյուղի 22 երեխաներ։ Այդ ժամանակ Տաթև գյուղն իր դպրոցը չուներ։

Դպրոցում ավանդվել են՝ հայերեն ընթերցանություն, վայելչագրություն, քրիստոնեական վարդապետություն, թերականություն, եկեղեցական երգեցողություն, ռուսաց լեզու և թվաբանություն (առնչերեն)։

Վանքի դպրոցը 1876-ին ունեցել է 1 ուսուցիչ և 35 աշակերտ։ 1885-ին փակվել է։

1888-ին այդ դպրոցը ցույց է տրված ոչ թե Տաթևի վանքում, այլ Տաթև գյուղում, որի մասին կխոսվի առանձին։

1894-ի մայիս ամսին կաթողիկոսը կարգադրել է Տաթևի վանքի եկամուտները թողնել իրեն՝ այնտեղ բացելու «ընծայարան ի կրթութիւն մանկանց շրջակայից»։ Չգիտենք այդ «ընծայարանը» բացվել է, թե ոչ։

Տաթևի վանքի դպրոցին մենք նորից հանդիպում ենք 1911—12 և 1913—14 ՅՎականներին։ 1911—12 ուսումնական տարում այն եղել է եռամյա երկսեռ դպրոց՝ 100 աշակերտով (20 աղջիկ)։ Մեզ թվում է, որ այս տվյալները վերաբերում են ոչ թե Տաթևի վանքի, այլ Տաթև գյուղի ծխական դպրոցին։

Ա. Ե. Մովսիսյան, «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության», Երևան, 1958, էջ 95—104. Մ. Հ. Սանդրոսյան, «Արևելահայ դպրոցը 19-րդ դ. առաջին կեսին», էջ 278։ «Ազրարաստ», 1871, դ. 232, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 31, թ. 19, գ. 50, ֆ. 7, գ. 1, գ. 167, թ. 1—56, թ. 65—68, ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 163, թ. 6—11, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 922, գ. 3997, թ. 7, ֆ. 13, գ. 264, թ. 61։ «Ազրարաստ», 1894, N7, էջ 228։

Տաթև գյուղի (Գորիսի շրջ.) ծխական դպրոց

Տաթև գյուղի ծխական դպրոցն առաջին անգամ մեզ հանդիպել է 1881-ի մի ցուցակում։ Այդ տարում ունեցել է 3 ուսուցիչ, 45 աշակերտ։ Անկասկած, 1885-ին փակվել է, վերաբացվելով 1886-ին։ 1888-ին եղել է միդասյան արական դպրոց՝ 72 աշակերտով։ 1894-ին աշակերտների թիվը իջել է 35-ի, 1896-ին՝ 52-ի։ 1896-ի փետրվարի վերջին այս դպրոցը փակումից փրկելու նպատակով տեղափոխվել է Տաթևի վանքի դպրոցի հին շենքը։ Եվ իրոք, Տաթևի հաշորդության բոլոր դպրոցները փակվել են կառավարության կողմից, իսկ այս դպրոցը շարունակել է գործել։ Մեկ տարի անց այն ևս փակվել է, վերաբացվելով 1906-ին։

1912—13 ուս. տարում եղել է քառամյա խառը դպրոց, ուր սովորել են 79 տղա և 7 աղջիկ։ 1914-ին աշակերտների թիվը հասել է 120-ի, իսկ 1917-ին իջել է 53-ի (բոլորը տղաներ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 338, թ. 31; գ. 544, թ. 17; գ. 623, թ. 35; ֆ. 47, գ. 214, թ. 35; ֆ. 47, գ. 214, թ. 36; ֆ. 7, գ. 120, թ. 2; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 3997, թ. 7, 1583, թ. 46; ֆ. 13, գ. 264, թ. 61; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 62.

Տեղ (Դըզ) գյուղի (Գորիսի շրջ.) ծխական դպրոց

1875-ի հունվարին կազմված մի տեղեկագրում Տեղ գյուղում ցույց է տրված «մասնավոր կրթարան արական սեռի», որը, մեր կարծիքով, նույն ծխական դպրոցն է։ Հետագա ավելի քան 15 տարիների ցուցակներում այս գյուղի դպրոցը ցույց չի տրված։

Լեռն 1888-ին եղել է Սյունիքում և գրել, որ «Տեղ անունով հայաբնակ գյուղը, որ ունի 600 տուն ժողովուրդ, հասկացողություն անգամ չունի, թե ինչ է դպրոցը» («Մշակ», 1888, թ. №120)։

Մի տեղեկագրից իմանում ենք, որ 1891-ին Տեղ գյուղում գործել է միդասյան արական դպրոց։

Հետագա տարիների փաստաթղթերում այլևս չի երևում։ Հավանաբար, նրա փոխարեն բացվել է պետական դպրոց։ 1974-ին տոնվել է այս դպրոցի 100 ամյակը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 17, գ. 30, թ. 18.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 7,
«Մշակ», 1888, №120։

Տոլորս (Դուլո՛ւս) գյուղի (Սիսիանի շրջ.) ծխական դպրոց

Այս դպրոցն առաջին անգամ հանդիպում է 1906-ին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ Հնարավոր է, որ մինչ այդ էլ (ավելի ճիշտ նախքան հայ դպրոցների երկրորդ ընդհանուր փակումը 1896—97 թվականներին) Տոլորս գյուղում գործած լինի ծխական դպրոց։

1906-ին այն եղել է միդասյան արական դպրոց։ Հավանաբար հետագայում դպրոցը փակվել է և վերաբացվել է 1913-ին, որի բացման մասին կա կաթողիկոսի՝ 1913 թ. հոկտեմբերի 4-ի կոնդակը։ 1913—14 ուս. տարում ունեցել է միայն մի դասարան, ուր սովորել են 38 տղա և 2 աղջիկ։ 1915-ին ցույց է տրված 105 աշակերտ, նպաստ է ստացել Բարվի մշակութային միությունից։

Ինչպես երևում է նախասովետական տարիներին Տոլորս գյուղը կոչվել է նաև Դուլուս, թեև տեղեկատու աղբյուրները այդ բանը չեն ցույց տալիս։

Պետական մարմինների կողմից 1914-ին կազմված երկու ցուցակներում հայկական ծխական դպրոց է ցույց տրված Զանգեզուրի գավառի Դուլուս գյուղում։ Ընդ որում Դուլուս գյուղը նշված է Սիսիանի շրջանի Լոր գյուղից հետո և Բանակոթ (Բրնաութ) գյուղից առաջ։

Կարծում ենք, որ այդ Դուլուսը նույն Տոլորսն է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 8, ֆ. 13, գ. 264, թ. 61, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 173, թ. 9; ֆ. 48, գ. 589, թ. 81; ֆ. 56, գ. 492, թ. 118; ՍՍՀՄ ՊԿՊԱ (Լենինգրադ), ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58; «Արարատ», 1913, №10, էջ 882։

Քարահունջ գյուղի (Գորիսի շրջ.) արական ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ հայտնի չէ։ 1871-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 23 աշակերտ։ Քարահունջ գյուղում 1874-ին ցույց է տրված «մասնավոր կրթարան արական սեռի»։ Միական դպրոցը, հավանաբար, երկար տարիներ փակ է մնացել, քանի որ մինչև 90-ական թվականների տեղեկագրերում ու ցուցակներում ցույց չի տրվում։ 1892-ին վերաբացվել է, բայց հաջորդ տարում սինոդի կարգադրությամբ նորից փակվել է՝ «մինչև նորընտիր կաթողիկոսի ժամանելը»։ Փակման պատճառը չի ասված։ Հայտնի է, որ այն 1894-ին գործել է, լինելով միդասյան արական դպրոց՝ 87 աշակերտով։ 1896-ի սկզբներին ունեցել է 1 ուսուցիչ, 80 աշակերտ։ Նույն թվականին փակվել է կառավարության կողմից և վերաբացվել միայն 1905-ին (մի այլ տեղեկագրում՝ 1907-ին)։

1912—13 ուս. տարում եղել է 3-ամյա խառը դպրոց, ուր սովորել են 53 տղա, 12 աղջիկ։ Հաջորդ ուս. տարում դարձել է քառամյա դպրոց, ունենալով 100 աշակերտ (24 աղջիկ), 1917-ին դարձյալ 100 աշակերտ (21 աղջիկ)։ Ունեցել է 8—9 սենյակից բաղկացած հարմար շենք։

Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 18, գ. 32, թ. 4, գ. 623, թ. 33, գ. 544, թ. 14, ֆ. 48, գ. 598, թ. 81, ֆ. 7, գ. 120, 2, գ. 157, թ. 1—30, գ. 167, թ. 1—56, «Նոր դպրոց», 1908, №4, էջ 83, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 4559, թ—9 գ. 511, թ. 21—22, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 43։

Քարաշեն գյուղի (Գորիսի շրջ.) ծխական դպրոց

Այս դպրոցի մասին եղած տեղեկությունները հակասական են։ Մի տեղեկագրում նշվում է, որ այն բացվել է 1910-ին, մի այլ տեղեկագրում ցույց է տրված, որ այդ դպրոցը 1909-ին գործել է և եղել է երկամյա։ Ուրեմն պետք է բացված լինի 1907—08 ուս. տարում ոչ ուշ։ «Նոր դպրոց» ամսագրի 1909 թ. №1-ում նշված է, որ «Քարաշենում դպրոց է բացված, դասավանդությունը սկսվել է սեպտեմբերի 20-ից (1908 թ.), հավաքված են 60 աշակերտ-աշակերտուհի։ Վերջինների թիվը 11-ի է հասնում»։ Մի այլ փաստաթղթի համաձայն այս դպրոցը 1912—13 ուս. տարում եղել է արական դպրոց, ուր սովորել են ընդամենը 38 տղաներ։ Հաջորդ ուս. տարում ունեցել է նաև 3 աղջիկ։

Նպաստ է ստացել Բաքվի հայկական մշակութային միությունից։

«Նոր դպրոց»-ի հիշյալ հաղորդումից իմանում ենք նաև, որ տեղի ուսուցչի ջանքերով Քարաշենում բացվել է նաև մեծահասակների երեկոյան դպրոց, ուր ժրիարար սովորել են 20—35 տարեկան 18 ազամարդ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 623, թ. 31, գ. 544, թ. 16. ֆ. 7, գ. 172, թ. 9, ֆ. 48, գ. 539, թ. 81։ «Նոր դպրոց», 1909 թ., №1, էջ 90։

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՎԱՌ

Ալիքուչակ (այժմ Քուչակ, Ապարանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի 1879 թ. օգոստոսի 17-ի №380 կոնդակով «Ապարանի վիճակի Ալիքուչակ գյուղում նոր դպրոց բանալու և կառավարելու համար» հաստատվել են հոգաբարձուներ։ Պետք է կարծել, որ այդ թվականին էլ բացվել է Ալիքուչակի դպրոցը, քանի որ

կաթողիկոսի կոնդակը ստացվում էր միայն այն դեպքում, երբ դպրոցի բացումը տվյալ հասարակության կողմից լրիվ նախապատրաստված էր և հոգաբարձական կազմն էլ ընտրված։

Տարօրինակ է, սակայն, որ այս դպրոցը հետագա շատ տարիների ու տասնամյակների փաստաթղթերում այլևս չի երևում։ Պատճառը մեզ անհայտ է։ Գիտենք միայն, որ 1907-ին Ալիքուչակ գյուղում բացվել է պետական միդասյան դպրոց, որը 1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, իսկ 1917-ին՝ 50 աշակերտ (բոլորն էլ հայեր)։

Ալիքուչակի հայկական ծխական դպրոցը նորից բացվել է 1908-ին։ Այս կապակցությամբ հարկ է նշել հետևյալ ուշագրավ փաստը։

Այլեքսանդրապոլի փոխանորդ Մաթևոս վարդապետը Բաքվի հայ մշակութային միությանն ուղղված 1908 թվականի իր զեկուցագրում խնդրել է լրացուցիչ գումարներ՝ իր վիճակի գյուղերում մի շարք նոր դպրոցներ բացելու համար։

Իր պատասխան նամակում հիշյալ միության դպրոցական սեկցիայի բյուրոն հայտնելով, թե որքան գումար է հատկացնում Ալիքսանդրապոլի վիճակի դպրոցներին, միաժամանակ գրել է, որ 500 ռուբլի էլ հատկացվել է Ապարանի Ալիքուչակ գյուղին։ «Այդ գյուղը Ձեր շրջանից դուրս է,— ասված է բյուրոյի նամակում,— սակայն եթե հնարավորություն ունեք բանակցելու, խնդրում ենք հոգ տանել, որ այդ գյուղում անպատճառ դպրոց բացվի։ Քաջ գիտենալով այդ շրջանի աղքատությունը և հետամնացությունը, բյուրոն որոշեց տալ 500 ռ., որ դպրոցը բացվի, եթե հարմիսկ գյուղական համայնքը չկարողանա դրամով նպաստել. սկզբունքով անպայման ցանկալի է, որ նրանք դրամական թեկուզ շնչին օգնություն հասցնեն դպրոցին» («Արարատ», 1909, №1, էջ 100)։

Ինչո՞ւ էր մշակութային միության դպրոցական բյուրոն այդքան շահագրգռված, որպեսզի Ալիքուչակ գյուղում անպայման հայկական դպրոց բացվի և ինչո՞ւ էր նա սկզբունքորեն անհրաժեշտ համարում այդ գյուղի համայնքի թեկուզ ամենաչնչին դրամական օգնությունը նոր բացվելիք դպրոցին։

Հավանաբար այդ հարցերի պատասխանը պետք է փնտրել Ալիքուչակում պետական դպրոցի գոյության փաստի մեջ։ Որպեսզի նորաբաց հայկական դպրոցը դիմանար առաջինի մրցակցությանը, պետք է ունենար նյութական համեմատաբար լավ ապահովվածություն (եթե մյուս բոլոր դպրոցներին մշակութային միությունը հատկացնում էր 200—250 ռուբլի, ապա Ալիքուչակի դպրոցին հատկացրել է կրկնակին)։

Իսկ գյուղացիների մասնակցությունը սկզբունքորեն անհրաժեշտ է եղել (չնայած նրանց ծայրահեղ չքավորությանը), որպեսզի ցարական չինովնիկները չկարողանային ասել, որ հիշյալ դպրոցը կազմակերպվում

է տեղի բնակչության կամքին հակառակ և բազմապիսի դժվարություններ ստեղծելին նրա համար։

Ըստ մշակութային միության նախագծումների Ալիքուշակի հայկական դպրոցը պետք է լիներ կենտրոնական և սպասարկեր նաև շրջակա գյուղերի երեխաներին։

Բաքվի հայ մշակութային միությունը շարունակել է Ալիքուշակի դպրոցին օգնել նաև հետագայում։ Այսպես, օրինակ, հաջորդ 1909 թվականին այդ դպրոցին հատկացվել է 250 ռ. նպաստ։ 1917-ին դպրոցը չի գործել։

«Արարատ», 1879, № 9, էջ 413, 1909, № 1, էջ 99—100, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ.19, ց. 1, գ. 380, թ. 43; ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 51։

Աղջաղալա (այժմ՝ Ծաղկալանջ, Էջմիածնի շրջ.) գյուղի ծխական դպրոց

1881-ին գործել է, ունենալով մի ուսուցիչ, 20 աշակերտ։ 1885-ին փակվել է։ Հետագա տասնամյակների փաստաթղթերում այլևս չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61—64։

Արմավիր քաղաքատեղի կամ Թափադիբի (այժմ՝ Հայկավան) գյուղի եկեղեցական ծխական դպրոց

Ինչպես երևում է հայոց կաթողիկոսի 1873-ի մայիսի 23-ի կոնդակից՝ հայկական հինավուրց Արմավիր քաղաքի տեղում գոյություն ունեցած համանուն գյուղի բնակիչները 1873 թվականին ընտրել են իրենց եկեղեցական դպրոցի հոգաբարձություն և այն ներկայացրել կաթողիկոսի հաստատմանը։ Վերջինս հատուկ կոնդակով ողջունել է «բարեպաշտ ժողովրդականաց հայոց բնակչաց Արմավիր քաղաքատեղոջ Արարատյան դաշտի» ցանկությունը՝ «զեկեղեցական դպրոց գեղջ որ Արմավիր՝ հառավել ևս ի բարեկարգության վերածելու» մասին և հաստատել է նորընտիր հոգաբարձության կազմը։

Այսպիսով, Արմավիր «քաղաքատեղի» ծխական դպրոցը՝ ինչպես տեսնում ենք, 1873-ից առաջ գոյություն է ունեցել, քանի որ այդ թվականին որոշում է կայացվել միայն նրա բարեկարգման մասին և ընտրվել է նոր հոգաբարձություն։ Բայց ե՞րբ է հիմնվել այդ դպրոցը, ցավոք, մենք չգիտենք։ Չգիտենք նաև, թե այն ինչ ճակատագիր է ունեցել հետագայում, քանի որ աղբյուրները նրա վերաբերյալ քաջ լռություն են պահպանում։

Մեսրոպ վարդապետ Սմբատյանցը «Արարատ» ամսագրի 1869 թվականի հոկտեմբերի համարում գրել է.

«... մեր հին Արմավիր երբեմն մեծահռչակ քաղաքը... գտնվել է մի փոքրիկ գյուղ, «Թափադիբի» անունով, որ է պարսկական բառ և նշանակե «բլրի ներքև»։

Թափադիբին (ներկա Հայկավանը) նախկինում կոչվել է նաև Փոքր Արմավիր։

Ուրեմն «Արմավիր քաղաքատեղոջ» եկեղեցական դպրոցը նույն Թափադիբի գյուղի դպրոցն է, որին, ինչպես նշեցինք, ուրիշ ոչ մի փաստաթղթում կամ գրավոր աղբյուրներում չենք հանդիպել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 223, «Արարատ», 1869, Զ., էջ 136։

Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվան արական ծխական դպրոց

Դեռ անցած դարի 40-ական թվականներին Աշտարակ գյուղում գոյություն է ունեցել խալֆայական դպրոց (Շապուհի դպրոցը), ուր, ինչպես հայտնի է, այցելել և բնբեփոխություններ է մտցրել հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը։ Այդ դպրոցի և Աբովյանի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Պերճ Պռոշյանը իր «Հուշիկներ»-ում։

Սակայն, ինչպես երևում է, անցած դարի 60-ական թվականների առաջին տարիներին Աշտարակում այլևս դպրոց չի եղել։

«Մեղու Հայաստանի» լրագրի 1869 թ. համարներից մեկում Աշտարակից ուղարկված թղթակցության մեջ ասվում է, որ չորս տարի առաջ (այսինքն 1865-ին) Աշտարակի բնակիչները Պերճ Պռոշյանի հորդորանքով իրենց մանուկներին հավաքում են մի սենյակի մեջ և կազմակերպում նրանց ուսուցումը իրենց վարձով։ 1868-ին Ս. Մարիամ եկեղեցու պարտեզում կառուցվում է դպրոցի շենք՝ 4 սենյակից բաղկացած։ Ընտրվում են հոգաբարձուներ։ Վերատեսուչ է նշանակվում Մ. Թոլուխանյանը, իսկ նրա օգնական՝ Ս. Շուխյանցը։ Վերջինս նշանակալի դեր է խաղացել Աշտարակի կրթական կյանքում։ Դպրոցը կոչվում է Ներսես Աշտարակեցու անունով։

Այնուհետև թղթակիցը հայտնում է, որ այդ դպրոցում սովորում են մոտ 80 աշակերտներ՝ «ոմանք Աշտարակից և ոմանք այլևայլ գյուղերից»։

Այս տեղեկություններից մի քիչ տարբերվում է մի այլ թղթակցի հոդվածը, որը հրապարակվել է «Արարատ» ամսագրի 1871 թ. ԺԱ հա-

մարում։ Նա գրել է, որ միայն 1876-ին՝ տեղացի Իսրայել Շահնազարյանցի ջանքերով Աշտարակի Ս. Աստվածածին եկեղեցու բակում կառուցվել է ծխական դպրոցի շենք, ուր գյուղի մի խումբ երեխաներ ուսուցիչ Ավետիք Արամյանցի մոտ սկսել են գրել-կարդալ սովորել։ Մեկ տարի անց՝ 1868-ին մի քանի բարերարների, այդ թվում Պերճ Պողոշյանի, օգնությամբ բարելավվում է դպրոցի վիճակը, ընտրվում է հոգաբարձություն, որը խոշոր գումար է հավաքում նրա գոյությունը հաստատուն դարձնելու համար։ Նույն ժամանակ դպրոցի առաջին տեսուչ է նշանակվում Սարգիս Շուխյանցը։

«Արարատ» ամսագրի նույն տարվա մի այլ հոդվածի համաձայն Աշտարակում 1871-ին գոյություն են ունեցել երեք տարրական դպրոցներ, որոնցից մեկը՝ աղջիկների («Արարատ», 1871, Դ. էջ. 250)։

Արխիվային տվյալներից երևում է, որ 1871-ին Աշտարակի Ամենափրկիչ եկեղեցուն կից կազմակերպվել է նոր ծխական դպրոց։

Չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ էջմիածնի սինոդի կողմից կազմված տեղեկագրերում ցույց է տրված, որ Աշտարակում 1872-ին, 1873-ին և 1881-ին եղել է միայն մի ծխական դպրոց, համապատասխանաբար ունենալով 40, 50 և 30 աշակերտ։

Սակայն հաստատապես հայտնի է, որ, իրոք, 1884-ին Աշտարակում եղել է միայն մի դպրոց, որը հայ բոլոր դպրոցների հետ միասին 1885-ին փակվել է։ Այն վերաբացվել է 1886-ին, իսկ 1888—89 ուս. տ. ունեցել է 3 բաժանմունք, 64 աշակերտ և 2 ուսուցիչ, 1890-ին՝ 40, 1895-ին՝ 90 աշակերտ։

1896-ին նորից է փակվել, վերաբացվելով 1905-ի վերջերին՝ որպես 3-ամյա երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 198 աշակերտ և 181 աշակերտուհի, 8 ուսուցիչ և 2 ուսուցչուհի։ 1910-ին սովորողների ընդհանուր թիվը հասել է 450-ի, 1913—14 ուս. տարում՝ 486-ի (200 աղջիկ), 12 ուսուցչով։

1918—19 ուս. տարում գործել է որպես երկդասյան դպրոց։ 1919—20 ուս. տարում դարձել է ազգային գիմնազիա (հավանաբար տեղի պետական ռուսական դպրոցի հետ միասին)։

1878-ից Աշտարակում գործել է նաև պետական «գյուղական նորմալ դպրոց», որը 1884-ին եղել է երկդասյան ուսումնարան, իսկ հետագայում վերածվել քաղաքային երկդասյան, ապա չորսդասյան դպրոցի։ 1917-ին այնտեղ սովորել են 115 հոգի (114 հայ, 1 ռուս)։ Դրանից բացի, հայ դպրոցների երկրորդ փակումից հետո Աշտարակի արական ծխական դպրոցի փոխարեն բացվել է պետական արական երկդասյան դպրոց, որը շարունակել է գործել նույնիսկ հայկական դպրոցի վերաբացումից հետո (հավանաբար մինչև 1918 թ.)։

«Արարատ», 1870—71, ԺԱ, էջ 874, 1871, Դ., էջ 250, «Նոր դպրոց», 1910, № 6—7, էջ 169, ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 77; գ. 37, թ. 13—14; գ. 43, թ. 11; գ. 50, թ. 61—64; գ. 199, թ. 17—23, գ. 182, թ. 14—23; ֆ. 7, ց. 1, գ. 58, թ. 94; գ. 172, թ. 8, ֆ. 19, գ. 456, թ. 19; գ. 280, թ. 46; ֆ. 20, գ. 232, թ. 4;

ՎՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21, գ. 1585, թ. 46, գ. 2018, թ. 44, գ. 8717, թ. 3, «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ., էջ 52»։

Աշտարակի օրիորդաց ծխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման տարեթվի վերաբերյալ եղած տվյալները հակասական են։ Արխիվային մի փաստաթղթի համաձայն այն հիմնվել է 1867-ին, մի այլ փաստաթղթի համաձայն՝ 1892-ին։ Փաստորեն այս երկու թվականներն էլ սխալ են։

Որոշ անճշտություն կա նաև Երևանի «Պսակ» թերթի 1880 թ. №9-ում տպագրված այն հոդվածում, ուր ասված է, որ Աշտարակում «շնորհիվ Սարգիս ավագ քահանայի վեց տարի սրանից առաջ սկզբնավորվել էր և մի օրիորդական ուսումնարան, որը դեռ տարին չլրացած ընդհատվել էր մինչև 1878 թ.։ Հարգելի քահանան հինգ տարվա ընդհատումից հետո միայն անցյալ տարվանից նորից սկսեց շարունակել՝ Վաղարշապատի օրիորդական ուսումնարանում ավարտած մի օրիորդի իբրև վարժուհի հրավիրելով»։

Այս տողերից կարելի է եզրակացնել, որ Աշտարակի աղջիկների դպրոցը հիմնադրվել է 1872—73 թվականներին և հինգ տարի փակ մնալուց հետո՝ վերաբացվել է 1878 կամ 1879 թվականներին։

Ավելի ստույգ տեղեկություն է տալիս «Արարատ» ամսագիրը։ Այս ամսագրի 1870 թ. հունիս ամսվա համարում կարդում ենք «Աշտարակայ Ս. Ամենափրկիչ եկեղեցւոյ բարեկրոն Սարգիս ավագ քահանայն՝ որ խնդրագրով իւրով ինքնայհօժար սիրով յանձնառու եղեալ նոյն եկեղեցւոյ մոտ եղած սենեկին մէջ օրիորդաց դպրոց բանալ, խոստանալով միանգամայն իր արդյունքն հոգալ նոցա հարկավոր եղած գրեանքը և այլ պիտոյքը, հատուկ օրհնութեան կոնդակով Նորին Ս. Օծութեան Վեհափառ Կաթողիկոսի թույլտվություն ստացավ իր ազգօգուտ և եռանդուն նպատակը և ջանքը ի գործ դնելու» (էջ 65)։

Կաթողիկոսին դիմում էին և նրա թույլտվությունն էին ստանում, երբ այս կամ այն դպրոցի բացման նախապատրաստական բոլոր աշխատանքներն ավարտված էին։ Ուրեմն պետք է կարծել, որ Աշտարակի օրիորդական դպրոցը հիմնվել է կաթողիկոսի թույլատրած տարում՝ 1870-ին։ Բացի այդ, նույն «Արարատ» ամսագիրը 1871-ին իր համարներից մեկում ցույց է տվել, որ Աշտարակում գործել են երեք ծխական դպրոցներ, որոնցից մեկը՝ աղջիկների։ Ուրեմն 1870-ին նրա բացված լինելը հավաստի է։

Աշտարակի օրիորդաց դպրոցը 1881-ին գործել է, ունենալով մի ուսուցչուհի և 40 աշակերտուհի։ Քանի որ այս դպրոցը չի մտել 1885-ին պետության կողմից փակված հայ դպրոցների ցուցակում, կարելի է ենթադրել, որ այն մինչ այդ ինչ-ինչ պատճառներով փակված է եղել և վերաբացվել է շատ տարիներ հետո՝ 1892-ին, որը և սխալմամբ նրա հիմնադրման տարեթիվն է համարվել։ 1895-ին ունեցել է 48 (մի այլ ցուցակում՝ 56) աշակերտուհի, իսկ 1896-ին դարձյալ փակվել է պետության կողմից։ Վերաբացվել է 1905-ին և շուտով միացել տեղի ծխական դպրոցին։

1896-ին փակված հայկական իգական դպրոցի փոխարեն Աշտարակում բացվել է պետական իգական դպրոց, որը հավանաբար, գործել է մինչև 1905 թվականը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 50, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 28, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 15—19; ֆ. 56, գ. 199, թ. 17—23; ֆ. 7, գ. 120, թ. 1, «Պռակ», 1880, N9, «Արարատ», 1871, Դ. էջ 250։

Բազարչուղ (այժմ՝ Արալի, Ապարանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Բազարչուղ գյուղի ծխական դպրոցը հիմնվել է 1879-ին, Կաթողիկոսի նույն թվականի օգոստոսի 17-ի կոնդակով հաստատվել է դպրոցի հոգաբարձության կազմը։

Ինչպես երևում է, հետագայում այն փակվել է և վերաբացվել 1906-ին։ 1911—12-ին եղել է եռամյա դպրոց, ուր սովորել են 32 տղա, 3 աղջիկ։ 1913—14 ուս. տարում ունեցել է 40 աշակերտ՝ բոլորը տղաներ։ Պահվել է Կոլկասի հայոց բարեգործական ընկ. նպաստով։ 1917-ին եղել է երկսեռ դպրոց՝ 51 աշակերտով (3 աղջիկ)։ «Արարատ», 1879, N 10, էջ 413։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 172, թ. 8, գ. 167, թ. 1—56, ԿՀԲ ընկ. 1909 և 1912 թթ. տեղեկագրքեր, «Նոր դպրոց», 1908, N3, էջ 85։

Բլխեր (այժմ՝ Շենավան, Ապարանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1879-ին։ Նույն թվականի օգոստոսի 17-ի կոնդակով կաթողիկոսը հաստատել է դպրոցի հոգաբարձության կազմը։

Հետագա ճակատագիրն անհայտ է, քանի որ չի հիշատակվում այլ փաստաթղթերում։

(«Արարատ», 1879, N10, էջ 414)։

Բյուրական գյուղի (Աշտարակի շրջ.) եկեղեցական ծխական դպրոց

1873-ի օգոստոսին Բյուրականի հասարակությունը ընտրել է հոգաբարձություն, հանձնարարելով նրան «ջանալ հաստատել ծխական ուսումնարան մեր գյուղումն»։ Նույն թվականին կաթողիկոսը հաստատել է հոգաբարձության կազմը և թույլատրել դպրոցի բացումը։ Ունեցել է 25 աշակերտ։ 1876-ին այն գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 27 աշակերտ։

Հետագա մի քանի տասնամյակների փաստաթղթերում այս դպրոցը այլևս չի երևում։ Մի տեղեկագրում նշված է, որ այն բացվել է 1908-ին, իսկ 1911—12 ուս. տարում եղել է քառամյա դպրոց, ունենալով, սակայն, միայն 2 դասարան։ Այնտեղ սովորել են 43 տղա և 7 աղջիկ։ 1913—14 ուս. տարում ունեցել է 43 աշակերտ (մի այլ փաստաթղթում՝ 1914-ի փետրվարին ցույց է տրված 65 հոգի)։ 1916-ին գործել է։

1917-ին ունեցել է 69 աշակերտ (5 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 292; գ. 43, թ. 13; գ. 71, թ. 5; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 8; գ. 167, թ. 1—56;

«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպրոց, 1911—12 թթ.»։ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27; «Արարատ», 1916, էջ 327։

Գեղոլու (այժմ՝ Մրգաշատ, Հոկտեմբերյանի շրջ.) գյուղի արական երկդասյան դպրոց

Հիմնադրման ստույգ տարեթիվը մեզ հայտնի չէ։ Պաշտոնական մի փաստաթղթում (էջմիածնի գավառապետի զեկուցագիրը) նշված է 1889-ը, սակայն դա թյուրիմացություն է, որովհետև 1888-ին այս դպրոցն արդեն գոյություն է ունեցել և եղել է երկդասյան՝ 3 ուսուցչով։ Այդպիսի դպրոց դառնալու համար այն պետք է շատ տարիներ առաջ հիմնված լիներ, ունենար հարմար շենք և բավարար միջոցներ։ Մի այլ պաշտոնական փաստաթղթում ցույց է տրված 1885-ը։ Ելնելով այն փաստից, որ Գեղոլուի դպրոցը 1888-ին եղել է երկդասյան, մենք կարծում ենք, թե այն ավելի հին պատմություն ունի։ Մեզ առայժմ հայտնի չէ այնպիսի փաստ, որ որևէ գյուղում առհասարակ գոյություն ունեցած չլինի միդասյան դպրոց և այնտեղ միանգամից բաց արած լինեն երկդասյան ուսումնարան։

1895-ին ունեցել է 65 աշակերտ։ 1896-ին փակվել է և վերաբացվել 1906-ի հունվարին։

1907—08 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ, 60 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1911—12 ուս. տ. եղել է եռամյա խառը դպրոց, ուր սովորել են 82 տղա և 8 աղջիկ։ 1913—14 ուս. տարում ունեցել է 67 աշակերտ

(1914 թ. փետրվար ամսվա մի փաստաթղթում ցույց է տրված 85 հոգի), իսկ 1917-ին՝ 99 աշակերտ (7 աղջիկ)։

Որոշ տարիներին (1902—1904 և այլն) Գեղարու գյուղում գործել է նաև պետական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 21; ֆ. 20, գ. 232, թ. 4; ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56; գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 8; ֆ. 56, գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 14—23; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 53, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 6, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 75; ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27; «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», էջ 90։

Դաղալու (այժմ՝ Եղնիկ, Թալինի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցն առաջին անգամ հանդիպում է Երևանի թեմի (էջմիածնի դավառ) 1894—95 ուս. տարվա դպրոցների ցուցակում։ Հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1894-ը։ 1896-ի սկզբներին ունեցել է ընդամենը 12 աշակերտ։ Նույն թվականին էլ փակվել է։ Հետագա տարիների փաստաթղթերում այլևս չի երևում։ Հայտնի է, որ 1912-ին Դաղալու գյուղում բացվել է պետական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 120, թ. 2;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 866, թ. 159։

Եղվարդ գյուղի (Նաիրիի շրջ.) եկեղեցական ծխական արական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Էջմիածնի դավառապետի պաշտոնական տեղեկագրում նշված է 1894-ը, սակայն դա բացարձակ թյուրիմացություն է, քանի որ Եղվարդում դեռևս 1871-ին գործել է արական ծխական դպրոց՝ ունենալով 1 ուսուցիչ և 28 աշակերտ։ Պահվել է աշակերտների թոշակով։ Գործել է նաև 1881-ին (1 ուսուցիչ և 30 աշակերտ), սակայն 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակներում չի նշված։ Հավանաբար մինչև այդ այն փակված է եղել։ Վերաբացվել է 1891-ին։ 1895-ին գործել է և, ինչպես, հայկական մյուս բոլոր դպրոցների հետ միասին փակվել է 1896-ին։

Վերաբացվել է 1905-ին, որպես միդասյան արական դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ, 43 աշակերտ։ 1911—12 ուս. տարում եղել է երկամյա տարրական դպրոց՝ 55 աշակերտով (բոլորը տղաներ)։ 1913 և 1917 թթ. տեղեկագրերում ցույց չի տրված։ Հավանաբար պատճառն այն է, որ Եղվարդ գյուղում գործել է պետական երկդասյան դպրոց, որը 1918-ին ազգայնացվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 31, թ. 43, գ. 43, թ. 12, գ. 132, թ. 43, գ. 37, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 8; ֆ. 75/207, գ. 5, թ. 54; 182, թ. 14—23; գ. 492, թ. 116; ֆ. 19, գ. 456 թ. 21; ֆ. 7, գ. 120, թ. 1; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպ. 1911—12 թթ.», ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 6; ֆ. 12, ց. 7, գ. 866, թ. 159; ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 2։

Զեյվա (Հայ կամ Վերին Զեյվա, Էջմիածնի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Պաշտոնական մի փաստաթղթում այս դպրոցի հիմնադրման տարեթիվը նշված է 1894-ը, սակայն դա սխալ է, որովհետև Հայ Զեյվա գյուղի դպրոցը դեռևս 1876-ին գործել է։ Հավանաբար երկար տարիներ փակ է մնացել, վերաբացվելով միայն 1894-ին։ Այդ թվականին ունեցել է 60 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1896-ին փակվել է։ Վերաբացվել է 1905-ին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ, 32 աշակերտ (2 աղջիկ)։ 1911-ին դպրոցը ինչ-ինչ պատճառներով փակվել է։ Գուցե պատճառն այն է, որ հայկական դպրոցը չի դիմացել 1905-ից այնտեղ գործած պետական դպրոցի մրցակցությանը։ Վերջինս 1914-ին եղել է երկդասյան, իսկ 1917-ին ունեցել է 82 աշակերտ (բոլորն էլ հայեր)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 17; գ. 380, թ. 45; ֆ. 56, գ. 71, գ. 953, թ. 8; գ. 380, թ. 47; գ. 492, թ. 116; գ. 182, թ. 7; ֆ. 7, գ. 120, թ. 2, ֆ. 75/207, գ. 5, թ. 52—55; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպ. 1911—12 թթ.»։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 6, ֆ. 12, ց. 7, գ. 866, թ. 159, 13, ց. 7, գ. 264, թ. 27; «Памятная книжка Эрив. губ. на 1914 г.», էջ 53—71։

Էջմիածնի Գևորգյան ճեմարան

Գևորգյան ճեմարանը հայ ամենանշանավոր բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկն է, որտեղից դուրս են եկել մեր ժողովրդի հասարակական կյանքի, գիտության, մշակույթի և արվեստի ականավոր շատ գործիչներ։ Նրանցից շատերը հետագայում դասավանդել են այստեղ։

Հիմնվել է 1874-ին Էջմիածնում՝ Գևորգ Դ. կաթողիկոսի ջանքերով, այդ պատճառով էլ հետագայում կոչվել է նրա անունով։ Այն հիմնվել է որպես բարձրագույն հոգևոր դպրոց, որը կազմված է եղել երկու բաժնից։ Առաջինը՝ դասարանական բաժինը, ունեցել է միջնակարգի դասընթաց (6 դասարանով), և հավասարեցված է եղել հայկական թեմական դպրոցներին։ Երկրորդը՝ լսարանական բաժինը, ունեցել է հոգևոր դասընթ-

թաց (Ա, Բ, Գ, լսարաններով) և ավել է հոգևոր բարձրագույն կրթություն։

Ճեմարանի առաջին կանոնադրության (ծրագրի) համաձայն՝ նրա հիմնական խնդիրը հայ եկեղեցու համար ուսյալ սպասավորների և միջանկյալ խնդիրը՝ հայ դպրոցների համար բարձրորակ ուսուցիչներ պատրաստելն էր։ Հետագայում ցարական իշխանությունները շատ ջանքեր են գործադրում ճեմարանը իր այս վերջին նպատակից զրկելու և այն զուտ հոգևորականներ պատրաստող ուսումնական հաստատություն դարձնելու համար, սակայն այդ բանը նրանց չի հաջողվում։ Առհասարակ պետք է ասել, որ ճեմարանը շատ անհանգստություն է պատճառել ցարական մարմիններին, որոնք այն դիտել են որպես «հայկական սեպարատիզմի» (իմա՝ ազգային ազատագրական պայքարի) և հեղափոխական խմորումների, հակացարական տրամադրությունների գլխավոր օջախներից մեկը։ Ցարական արխիվներում պահվող բազմաթիվ գործերն ու նյութերը ցույց են տալիս, թե ինչպիսի անհանգստությամբ ու աշալրջությամբ են նրանք հետևել ճեմարանում տեղի ունեցած իրադարձություններին, նրա դասախոսական կազմին և ուսանողությանը, ինչպիսի դաժան միջոցներ են գործադրել աշակերտական ամեն մի դժգոհություն ու խռովություն ճնշելու համար։ Եղել է նույնիսկ ժամանակ, երբ նրանք ճեմարանը փակելու պահանջ են առաջադրել։

Ճեմարանի հիմնադիրը, հայ բարձր հոգևորականությունն ու բոլոր հետադիմականները նույնպես համոզված էին, որ այդ ուսումնական հաստատությունը կդառնա «նորահնար եկամուտ (այսինքն՝ դրսից ներմուծված — Ս. Խ.) վնասակար մոլորությունների ու սովորությունների» դեմ պայքարելու, մեր ազգային կյանքից դրանք արմատախիլ անելու հզոր միջոց։ Դժվար չէ կռահել, թե ում և ինչի դեմ էին նիզակ հոնում հայոց հոգևոր «հայրերը», որոնք սակայն իրենց հաշիվներում մի քիչ սխալվել էին։ Իրականությունն այն է, որ ճեմարանից դուրս են եկել ինչպես հետադիմական, այնպես էլ առաջադիմական գործիչներ, ոչ քիչ թվով հեղափոխականներ։

Ճեմարանը հիմնականում գիշերօթիկ ուսումնական հաստատություն էր, այնտեղ սովորում էին ինչպես ռուսահայ, այնպես էլ տաճկահայ ու պարսկահայ երիտասարդներ։ Ուսանողներ էին ընդունվում նաև հայաբնակ այլ վայրերից։ Ճեմարանի առաջին ծրագիր-կանոնադրության մեջ նշված է, որ ամենալ ընդունվողները պետք է լինեն որը կամ ազգատ ընտանիքներից, և բոլորն անխտիր ուսանելու են ձրի, բայց հետագայում փոխվում է այս կարգը. ձրիավարժ աշակերտներից բացի, ընդունվում են նաև այնպիսիները, որոնցից գանձվում է ուսման վարձ՝ 200 ռուբլուց ոչ պակաս, ինչպես նաև 50—75 ռ. կանխավճար։ Հասկանալի է, որ այդպիսի գումար կարող էին վճարել միայն հարուստները։

Ցարի կողմից հաստատված կանոնադրության համաձայն ճեմարանը պետք է ամբողջովին ենթարկվեր կաթողիկոսին և պահվեր էջմիածնի միջոցներով ու նվիրատվություններով։ 80-ական թվականների վերջերին և 90-ական թվականներին Կովկասի գլխավոր կառավարչությունը և ուսումնական օկրուգի հոգաբարձությունը, կառավարական ավելի բարձր մարմինների հովանավորությամբ, ամեն ինչ անում են կաթողիկոսին այդ իրավունքից զրկելու և ճեմարանի վերահսկողությունը իրենց ձեռքը վերցնելու համար։ Այդ կապակցությամբ երկար ու հոսանուն գրագրություն է տեղի ունենում կառավարական համապատասխան մարմինների միջև, սակայն որոշակի հետևանք չի ունենում։

Ճեմարանի ուսումնական պլանը կազմված է բավականաչափ ընդարձակ. հասկանալի է, որ նրանում առյուծի բաժինը տրվել է կրոնական առարկաներին, որոնց թիվը հասել է 10-ի։ Դրանցից բացի ավանդվել են՝ փիլիսոփայություն (հոգեբանություն ու տրամաբանություն) և փիլիսոփայության պատմություն, ազգային պատմություն և աշխարհագրություն, ընդհանուր և Ռուսաստանի պատմություն ու աշխարհագրություն, թվաբանություն, բնագիտություն (ֆիզիկա) և տիեզերագրություն, բնական պատմություն, հայկաբանություն և հայոց մատենագրություն (գրականություն), ռուսերեն, ֆրանսերեն, լատիներեն, հունարեն, երբայերեն. գծագրություն ու նկարչություն, «ձայնագրություն հայոց» (երգ և նոտագրություն՝ գերազանցապես կրոնական)։

Հետագայում այս ուսումնական պլանը ենթարկվել է զանազան փոփոխությունների, ավելացել են որոշ առարկաներ (օր.՝ մանկավարժություն), սակայն հիմնականում նշված առարկաները պահպանվել են։

Հայտնի է, որ 80-ական թվականների վերջերին ցարական կառավարությունը խստագույնս արգելում է հայկական դպրոցներում հայոց պատմության և Հայաստանի աշխարհագրության ավանդումը։ Փորձ է արվում այդ իրավունքից զրկել նաև Գևորգյան ճեմարանին. ի վերջո, թույլատրվում է այդ առարկաները ավանդել միայն մասնագիտական բաժնում։

Ճեմարանում ուսուցումը երկար ժամանակ տարվել է հիմնականում դրաբարով, իսկ աշխարհաբարը թույլ է տրվել միայն որպես առանձին առարկա։ Շատ ավելի ուշ, հասարակական ուժերի ներգործության շնորհիվ և ժամանակի պահանջների համաձայն, աստիճանաբար ավելի լայն տեղ է տրվել աշխարհաբարով ուսուցմանը։

1874—1880 թվականներին ձևավորվել է ճեմարանի միայն դպրոցական բաժինը՝ 6 դասարանով (հետագայում՝ 4 դասարան), իսկ մասնագիտական կամ բարձրագույն բաժնի Ա լսարանը բացվել է 1880—81 ուս. տարում։ Հաջորդ տարիներում բացվել են նաև Բ և Գ լսարանները։ Ա լսարանն էին ընդունվում ինչպես ճեմարանի դպրոցական բաժնի շրջանավարտները, այնպես էլ թեմական դպրոցների լրիվ դասընթացը հաջողությամբ ավարտածները։

Գրեթե բոլոր ժամանակներում ճեմարանի սովորողների թիվը եղել է խիստ սահմանափակ։ Այսպես, օրինակ, 1895 թվականին, այսինքն՝ հիմնադրումից 20 տարի հետո, այնտեղ սովորել են ընդամենը 147 հոգի, որից դպրոցական բաժնում՝ 127, իսկ մասնագիտական (լսարանական) բաժնում... ընդամենը 20 հոգի (Ա լսարանում՝ 7, Բ լսարանում՝ 9, Գ լսարանում՝ 4 ուսանող)։ Նույնիսկ դպրոցական բաժնի առանձին դասարաններում նստած են եղել 15 և ավելի պակաս թվով սովորողներ։

Որոշ տարիների սաների թիվը հասել է 200—300 -ի։

Էջմիածնի ճեմարանի վարժոցը

1880 թվականին էջմիածնի ճեմարանին կից բացվել է վարժոց (ծխական դպրոց), որտեղ անց է կացվել ճեմարանի դպրոցական և լսարանական բաժինների ուսանողների մանկավարժական պրակտիկան՝ հայանի հայ մանկավարժ Սեդրակ Մանդինյանի ղեկավարությամբ։ Վարժոցն ունեցել է Ա, Բ և Գ բաժանմունքներ, որոնցում անցել են բարոյակրթություն, կրոն, զենական ուսումն, հայոց լեզու, ռուսաց լեզու (Գ բաժանմունքում՝ շաբաթական 6 ժամով), թվաբանություն, գրականություն և երգեցողություն։

1882—83 ուս. տարում վարժոցի երեք բաժանմունքներում սովորել են 120 երեխաներ։

Վարժոցի բացմամբ ավելի է ընդգծվել ճեմարանի մանկավարժական բնույթը։

«Արարատ», 1883, ժ. էջ 465 և 498։

Էջմիածնի ժառանգավորաց դպրոց

Հայաստանում եղած հնագույն դպրոցներից մեկն է, որը 303 թվականին հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը։ 406 թվականին (այլ աղբյուրներով 410-ին) Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը այն վերածում են առաջին հայ դպրոցի։

Կաթողիկոսի դիվանի փաստաթղթերում (ֆոնդ 57, գ. 300) կարդում ենք. «էջմիածնի ժառանգավորաց դպրոցը՝ սկսված փրկչյան 303 թվին շարունակի ցայսօր— 1875. ցրացումն ճեմարանին» (թերթ 2)։

1813-ին Ներսես Աշտարակեցին վերաբացում է ժառանգավորաց դպրոցը, որն իր գոյությունը պահպանում է նաև Գևորգյան ճեմարանը հիմնելուց հետո էլ։ 1872-ին ունեցել է 4 դասատու, 20 սովորող։ 1882-ին փակվել է Գևորգյան ճեմարանին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 300, թ. 3—5, Ա. «Արարատ», 1882, N8, էջ 235, Երիցյան, «Ներսիսյան դպրոցի 75-ամյա պատմություն», էջ 24—28, Մ. Հ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19-րդ դ. սկզբին», Երևան, 1965, էջ 9, 135 և այլն։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21։

Թալինի ծխական դպրոց

1895-ի օգոստոսին Բենիկ վարդապետը լինում է Թալինում և տեղեկանում, որ այնտեղի բնակիչների մի մասը համաձայնագիր է ստորագրել իրենց գյուղում արքունական դպրոց բացելու մասին։ Հաջորդ օրը վարդապետը ժողովրդին հավաքում է եկեղեցում և սկսում բացատրել ազգային ծխական դպրոցի նշանակությունն ու անհրաժեշտությունը։ Համոզվելով դրանում, գյուղացիները որոշում են Թալինում բաց անել միգասյան եկեղեցական ծխական դպրոց, ընտրում են հոգաբարձություն, հատկացնում են դրամական միջոցներ և հատուկ նամակով խնդրում են կաթողիկոսին՝ հաստատել իրենց դպրոցի բացումը։

Դպրոցն, իհարկե, բացվում է, բայց երկար կյանք չի ունենում, քանի որ 1896-ին փակվում է։ Ըստ երևույթին այս դպրոցը այլևս չի վերաբացվել, իսկ նրա փոխարեն 1900-ին Թալինում բացվել է պետական դպրոց։ 1908-ին պետական դպրոցի 105 աշակերտներից 104-ը եղել են հայեր։ Այս դպրոցը գործել է մինչև 1918 թվականը, որից հետո ապազգայնացվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 328, թ. 37; ֆ. 19, գ. 953, թ. 3—11; գ. 380, թ. 48—52; «Памятная книга Эрив. губ. на 1914 год», էջ 53—71։

Խաթունարխ Ներքին (այժմ՝ Գայ, Էջմիածնի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ հայտնի չէ։ Դիտենք միայն, որ 1884-ին գործել է, իսկ 1885-ին փակվել պետության կողմից։ Այս դպրոցի մասին հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1905-ին, երբ այն վերաբացվել է՝ լինելով միդասյան արական դպրոց։ 1907—08 ուս. տարում եղել է միդասյան դպրոց՝ 3 բաժանմունքով։ Ունեցել է 72 աշակերտ (7 աղջիկ) և մի ուսուցիչ, որն ավանդել է հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, գծագրություն և կրոն։ Դպրոցը իր սեփական շենքը չի ունեցել։ Պահվել է հասարակության և եկեղեցու միջոցներով, մասամբ նաև թաշակառաքով։

1911—12 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց՝ 85 աշակերտով և 3 ուսուցիչով։ Սպասարկել է նաև հարևան Վերին Խաթունարխ գյուղին։ 1913—14 ուս. տարում ունեցել է 46 աշակերտ (19 աղջիկ), 1917-ին՝ 55 աշակերտ (15 աղջիկ)։

1908-ին Ն. Խաթունարխում գործել է նաև խալֆա Հակոբ Մուրադյանի մասնավոր դպրոցը՝ 35 աշակերտով (3 աղջիկ)։ Այս դպրոցը պաշտոնապես թույլատրված է եղել պետության կողմից։

1899-ին Զորանկյաթա գյուղից Վերին Խաթունարխ է փոխադրվել 1890-ին հիմնված պետական միդասյան դպրոցը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61—64; գ. 182, թ. 14—23; գ. 492, թ. 116; ֆ. 7, գ. 167, թ. 1—56; գ. 172, թ. 7; «Նոր դպրոց», 1908, N3, էջ 91, «Տեղեկագիր Երևանի թեմի ծխ. դպ. 1911—12 թվականի համար», էջ 8—32։

Կարբի գյուղի (Աշտարակի շրջ.) ծխական դպրոց

Կարբի գյուղում դեռևս 1881-ին գործել է ծխական դպրոց, ունենալով 1 ուսուցիչ, 25 աշակերտ։ Հետագա տարիների փաստաթղթերում այդ դպրոցն այլևս չի երևում։ Հավանաբար այդ տարիներին չի գործել։ 1894-ին կաթողիկոս Խրիմյան Հայրիկը թույլ է տվել Կարբի գյուղում բաց անել ծխական դպրոց՝ նրա հիմնադրման ու պահպանության համար Աֆրիկյան եղբայրների կողմից հատկացվող ամենամյա միջոցներով։ Ինչպես երևում է Երևանի նահանգապետի մի գրությունից, այդ դպրոցը

1895-ին գործել է, իսկ 1896-ին նորից է փակվել։ Վերաբացվել՝ 1905-ի վերջերին, լինելով միդասյան արական դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 4 ուսուցիչ և 110 աշակերտ (30 աղջիկ)։ 1908—09 ուս. տարում համարյա լիովին պահվել է ԿՀԲ ընկերության հաշվին, ստանալով 900 ռ. նպաստ։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա երկսեռ դպրոց, որտեղ սովորել են 79 տղա, 11 աղջիկ։ 1913—14 ուս. տ. ունեցել է 118 աշակերտ (22 աղջիկ), 1917-ին՝ 133 աշակերտ (16 աղջիկ)։ 1896-ի փակումից հետո հայկական դպրոցի փոխարեն Կարբի գյուղում բացվել է պետական դպրոց, որը, հավանաբար, գոյություն է ունեցել մինչև 1905 թվականը։

«Արարատ», 1894, N7, էջ 228.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 866, թ. 159, ֆ. 422, գ. 1585, թ. 46, գ. 8717, թ. 5, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 7, գ. 492, թ. 116, ֆ. 7; գ. 157, թ. 1—30, գ. 172, թ. 8, «Նոր դպրոց», 1908, N3, էջ 85։

Կոշ գյուղի (Աշտարակի շրջ.) ծխական դպրոց

Բացվել է 1905-ի վերջերին, որպես միդասյան արական դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ, 43 աշակերտ։ 1913—14 ուս. տարում եղել է 3-ամյա խառը դպրոց, ուր սովորել են 20 տղա և 8 աղջիկ։ Որոշ տարիների նպաստ է ստացել Բաքվի մշակութային միությունից։

Այս դպրոցում ուսումնական տարին սկսվել է հոկտեմբերի 1-ից, ավարտվել՝ մայիսի 31-ին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 3—4, գ. 192, թ. 9, գ. 492, թ. 116, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 6, ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 139, գ. 268, թ. 51։

Հայթաղ (Էջմիածնի շրջ.) գյուղի դպրոց

Էջմիածնի շրջանի Հայթաղ գյուղի դպրոցը առաջին անգամ մեզ հանդիպել է 1919-ի հունվարին կազմված մի փաստաթղթում։ Դրանից հայտնի է դառնում նաև, որ դպրոցների առաջին շրջանի տեսուչը 1918-ի վերջերին այցելել է Հայթաղի դպրոցը և այն գտել անմխիթար վիճակում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 207, գ. 96, թ. 26.

Ղազնաֆար (այժմ՝ Արագած, Ապարանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ղազնաֆար գյուղի ծխական դպրոցը բացվել է 1879-ին։ Այն սպասարկել է նաև հարևան Շիրազլա (այժմ Վարդենուտ) և Թաքյալու (այժմ՝ Ծաղկաշեն) գյուղերի երեխաներին։

Այս դպրոցն այլևս չի հանդիպում մինչև 1909 թվականը։ Այդ տարում այն ունեցել է երկու բաժանմունք՝ 40 աշակերտով (14 աղջիկ)։ Պահվել է ԿՀԲ ընկերության նպաստով։ Երևանի նահանգապետի կողմից կազմված մի ցուցակի համաձայն 1914-ին այդ դպրոցն ունեցել է ընդամենը 12 աշակերտ։ Դա ցույց է տալիս նրա անկայուն վիճակը։

«Արարատ», 1879, 10, էջ 413.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 27, ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 831, ց. 150, գ. 283, թ. 55, ԿՀԲ ընկ. 1909 թ. տեղեկագիրը, էջ 33.

Ղալայճի (Ղալաչա) գյուղի դպրոց

Այս գյուղը նախկինում գտնվել է Ապարանի վիճակում և ապա շրջանում։ Ինչպես երևում է, այժմ այն գոյություն չունի։ Այդ գյուղի դպրոցը հիմնվել է 1879-ին։ Նույն թվականի օգոստոսի 17-ի կոնդակով կաթողիկոսը հաստատել է հոգաբարձուներ՝ «Ղալայճի գյուղում նոր դպրոցը բանալու և կառավարելու» համար։ Հետագա տարիների փաստաթղթերից չի երևում, թե այդ դպրոցը մինչև երբ է իր գոյությունը պահպանել։

«Արարատ», 1879, N 9, էջ 413.

Ղարաբուլաղ (այժմ՝ Երնջատափ, Ապարանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ամենայն հայոց կաթողիկոսի 1879 թ. հուլիսի 13-ի կոնդակով թույլատրվել է Ապարանի վիճակի Ղարաբուլաղ գյուղում կառուցել ծխական դպրոց, որի համար հաստատվել է գյուղի կողմից ընտրված հոգաբարձության կազմը։ Այս դպրոցը կառուցվել է նաև հարևան Աստվածընկալ (Ածընկալ) և Նորաշեն գյուղերի միջոցներով և սպասարկել է այդ գյուղերի երեխաներին։

«Արարատ», 1879, N 9, էջ 413.

Ղարաքիլիսա (այժմ՝ Հարթավան, Ապարանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ապարանի շրջանի Ղարաքիլիսա (Հարթավան) գյուղի եկեղեցական ծխական դպրոցը բացվել է 1909-ին։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա արական դպրոց, ուր սովորել են 25 հոգի (բոլորը տղաներ)։ 1913—14 ուս. տարում ունեցել է 42 աշակերտ։ Պահվել է ԿՀԲ ընկ.-յան նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 172, թ. 8, ԿՀԲ ընկ. 1909 և 1912 թթ. տեղեկագիրը։

Ղզլթամուր (այժմ՝ Ոսկեվազ, Աշտարակի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման թվականը մեզ հայտնի չէ։ 1879-ից առաջ կազմված ցուցակներում ցույց չի տրվում։ Հայտնի է, որ 1879-ի մարտ ամսին կաթողիկոսը հատուկ կոնդակով հաստատել է Ղզլթամուր գյուղի դպրոցի հոգաբարձական կազմը։ Հավանաբար այդ թվականին էլ դպրոցը հիմնվել է։

1882-ին այն գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 35 աշակերտ։ 1885-ին փակվել է։ Հետագա տարիների ցուցակներում ցույց չի տրված։ Երևանի նահանգապետի մի գրությունից երևում է, որ այդ դպրոցը վերաբացվել է 1895-ի վերջերին, փակվել՝ 1896-ին։ 1906-ի սկզբներին վերաբացվել է, որպես միդասյան արական դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ, 50 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա դպրոց՝ 70 աշակերտով (5 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 43-ի (1914-ի փետրվարին կազմված մի ցուցակում նշված է 97 հոգի)։ 1918-ին գործել է որպես երկդասյան դպրոց։ 1912-ից Ղզլթամուր գյուղում գործել է նաև պետական երկդասյան դպրոց, որը 1917-ին ունեցել է 80 աշակերտ (բոլորը հայեր)։

«Արարատ», 1879, N4, էջ 192.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 866, թ. 159; ֆ. 422, գ. 1585, թ. 46, գ. 8717, թ. 8, ֆ. 13, ց. 7, գ. 264, թ. 27;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61—64, գ. 182, թ. 7—9, գ. 432, թ. 118, ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 8; ֆ. 19, գ. 380, թ. 45; ֆ. 73/207, գ. 5, թ. 53; «Տեղեկագիր Երևանի թեմի դպ. 1911—12 թթ.»։

Ղուզիգիդան (այժմ՝ Այգեշատ, Հոկտեմբերյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1913—14 ուս. տարվա տեղեկագրում։ Եղել է երկամյա խառը դպրոց՝ մեկ դասարանով։ Ունեցել է 42 աշակերտ (7 աղջիկ)։ Ցույց է տրված նաև 1914-ի մի այլ ցուցակում՝ 50 աշակերտով։ 1917-ին ունեցել է 46 աշակերտ (8 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 8; գ. 167, թ. 1—56; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 27։

Ղուրդուղուլի (այժմ՝ Արմավիր, Հոկտեմբերյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ղուրդուղուլի գյուղի հասարակության կողմից կաթողիկոսին ուղղված մի նամակում հայտնվում է, որ սկսած 1867-ից այնտեղ գործում է ծխական դպրոց, որի համար ինքը՝ հասարակությունը կառուցել է երեք հարկանի շենք։ Դպրոցի ծախսերի մեծ մասը և երեխաներին ձրի ուսուցանելու գործն իր վրա է վերցրել տեղի Մովսես քահանան։

Դպրոցը 1873-ին ունեցել է 1 ուսուցիչ, 32 աշակերտ, 1876-ին՝ 18, 1881-ին՝ 30 աշակերտ։ 1885-ին փակվել է, բայց թե երբ է վերաբացվել, մեզ հայտնի չէ։

Այս դպրոցը մեկ էլ հանդիպում է 1911—12 ուս. տարվա ցուցակներում։ Հավանաբար այդ տարում էլ բացվել է, քանի որ ունեցել է ընդամենը 1 դասարան և 40 աշակերտ (13 աղջիկ)։ 1914-ին ունեցել է 51 աշակերտ։ Ղուրդուղուլի գյուղում գործել է նաև պետական ռուսական դպրոց, որը շարունակել է իր գոյությունը մինչև 1918 թվականը։ Այս դպրոցում սովորել են 131 հոգի (129 հայ, 2 ռուս)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 226; գ. 43, թ. 13; գ. 71, թ. 5; գ. 50, թ. 61—64; ֆ. 7, գ. 153, թ. 1—20; գ. 172, թ. 8; ֆ. 19, գ. 380, թ. 46,
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46; ֆ. 13, գ. 7, գ. 264, թ. 27,
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպ., 1911—12 ուս. տ.»։

Մաստարա (Թալինի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Նախասովետական շրջանում Մաստարա գյուղը մտել է էջմիածնի գավառի մեջ։ Այդ գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հիշատակվում է 1905-ի վերջերին Երևանի նահանգում բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ Նշանակում է մինչև հայ դպրոցների ընդհանուր փակումը, այսինքն՝ 1896—97 թվականները, այդ դպրոցը գործել է։ Եղել է արական ծխական դպրոց։

1914-ի փետրվարին ունեցել է 1 ուսուցիչ, 35 աշակերտ։

Մաստարա գյուղում 1912-ից գործել է նաև պետական երկդասյան դպրոց, որը 1917-ին ունեցել է 31 աշակերտ (բոլորը հայեր)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 116; ֆ. 19, գ. 380, թ. 45;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3717, թ. 6; ֆ. 13, գ. 7, գ. 264, թ. 27։

Մարգարա (Հոկտեմբերյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 25 աշակերտ։ 1885-ին փակվել է։

Հետագա տասնամյակների փաստաթղթերում Մարգարայի ծխական դպրոցն այլևս չի երևում։ Հավանաբար այն պատճառով, որ այնտեղ 1903-ից գործել է պետական միդասյան դպրոց։ Վերջինս 1917-ին ունեցել է 29 աշակերտ (բոլորը հայեր)։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61—64; ֆ. 19, գ. 380, թ. 45։

Մոլլաբայազետ (այժմ՝ Բամբակաշատ, Հոկտեմբերյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Էջմիածնի գավառապետը իր գավառի դպրոցների մասին 1895-ի հունվարին ուղարկած պաշտոնական տեղեկագրում նշում է, որ Մոլլաբայազետի հայկական եկեղեցական ծխական միդասյան դպրոցը հիմնվել է 1894-ին և ունի 42 աշակերտ։ Այս դպրոցը ցույց է տրված նաև Երևանի թեմի 1894—95 ուս. տարվա դպրոցների ցուցակում։ 1896-ին փակվել է։ Վերաբացվել է 1906-ի հունվարին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ և 50 աշակերտ (10 աղջիկ)։ 1911—12 ուս. տարում եղել է բառամյա երկսեռ դպրոց, ունեցել է 75 աշակերտ (9 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում դարձել է եռամյա, պակասել է նաև աշակերտների թիվը՝ 68։ 1915-ին նպաստ է ստացել Երևանի թեմի դպրոցական ընդհանուր ֆոնդից։ 1917-ին ունեցել է 75 աշակերտ (35 աղջիկ)։

1900-ական թվականների սկզբից Մոլլաբայազետ գյուղում հիմնվել է նաև պետական դպրոց, որն իր գոյությունը պահպանել է մինչև 1918 թվականը։ Եղել է երկդասյան դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 1, գ. 456, թ. 15—19, ֆ. 56, գ. 492, թ. 116; ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 167, թ. 1—56, գ. 72, թ. 6—11; գ. 120, թ. 2;
«Տեղեկագիր Երևանի թեմի ծխ. դպ. 1911—12 թթ.»։

Մուղնի (Աշտարակի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Մուղնի գյուղի ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ «Արարատ» ամսագրի 1917 թվականի սեպտեմբեր-դեկտեմբերի միացյալ համարում հրապարակված է էջմիածնի սինոդի մի որոշումը, որտեղ խոսվում է Մուղնու Ս. Գևորգ եկեղեցու ծխական դպրոցի մասին։ Պետք է նկատի առնել, որ այդ դպրոցը գոյություն է ունեցել նաև նախորդ տարիներին։ 1919-ին գործել է։

«Արարատ», 1917, N9—12, էջ 703, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, ց. 1, գ. 511։

Շահրիար Մեծ (այժմ՝ Նալբանդյան, Հոկտեմբերյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Դեռևս 1869-ին Մեծ Շահրիար գյուղի հասարակությունը որոշում է կայացրել իր եկեղեցու սրահում կազմակերպել ծխական դպրոց և ընտրել է հոգաբարձություն։ Կաթողիկոսը հաստատել է հոգաբարձության կազմը և թույլ է տվել Շահրիարի եկեղեցու գումարների տոկոսները հատկացնել դպրոցի շենքի կառուցմանն ու նրա պահպանմանը։ Հավանաբար դպրոցը բացվել է 1870-ին։

Տարօրինակ է եղել այս դպրոցի ճակատագիրը։ Ըստ երևույթին այն երկար կյանք չի ունեցել, սուղ միջոցների և այլ հանգամանքների պատճառով մեկ բացվել, մեկ էլ փակվել է։ Առաջին անգամ մենք նրան հանդիպում ենք «Արարատ» ամսագրի 1870 թ. համարներից մեկում, իսկ 1873-ի տեղեկագրում և 1888—89 ուս. տարվա վիճակագրական ամփոփ գրքում այդ դպրոցն այլևս չի երևում։ 1895-ին ներկայացված մի պաշտոնական փաստաթղթում նշվում է, որ այդ դպրոցը բացվել է 1892-ին։ 1894-ին եղել է միգտասյան արական դպրոց՝ 37 աշակերտով։ 1896-ին փակվել է։ Վերաբացվել է 1906-ի հունվարին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ, 64 աշակերտ (7 աղջիկ)։ 1913—14 ուս. տարվա ցուցակներում չկա։ 1918-ին գործել է։

Այս դպրոցի անկանոն գոյության գլխավոր պատճառներից մեկն այն է, որ 1894-ին նույն գյուղում բացվել է նաև ուղղափառ եկեղեցական ծխական դպրոց, որտեղ ուսուցումը տարվել է ռուսերենով։ Նույնպիսի դպրոց գործել է նաև Փոքր Շահրիար գյուղում։

«Արարատ», 1870, N11, էջ 275; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 15—19; գ. 380, թ. 47; ֆ. 7, գ. 120, թ. 2; ֆ. 56, գ. 199, թ. 17—23, գ. 182, թ. 14—23, ֆ 73/207, գ. 5, թ. 52—55, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 6։

Զամբրլու (այժմ՝ Քասախ, Ապարանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1879-ին։ Նույն թվականի օգոստոսի 17-ին կաթողիկոսը հաստատել է դպրոցի հոգաբարձության կազմը։

Հետագա տարիների փաստաթղթերում այլևս չի երևում։

«Արարատ», 1879, N9, էջ 413։

Սաչլու (այժմ՝ Նորաշեն, Ապարանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Այս գյուղի ծխական դպրոցը բացվել է 1879-ին՝ կաթողիկոսի հատուկ կոնդակով։ Հետագա շատ տարիների ցուցակներում այլևս չի երևում, հավանաբար փակվել է նյութական սղության կամ էլ ուսուցիչ չունենալու պատճառով։

Հայտնի է նաև, որ Սաչլու գյուղում նորից ծխական դպրոց է բացվել 1911-ի սեպտեմբերին, երկու բարերարների՝ եպիսկոպոս Նահապետի և այնքանաղբատցի Տեր-Պետրոսյանի նվիրած գումարներով։ Գյուղի հասարակությունը մեծ ուրախությամբ է ընդունել դպրոցի բացումը և ի նշան երախտագիտության որոշել է դպրոցն անվանել «Կոստանդինյան» (Տեր-Պետրոսյանի մահացած եղբոր անունով)։

1911—12 ուս. տարում եղել է արական դպրոց՝ 44 աշակերտով։ 1913—14 ուս. տարում այնտեղ սովորել են 36 տղա։ 1914-ի մի ցուցակում աշակերտների թիվը ցույց է տրված 40 հոգի։

«Արարատ», 1879, N10, էջ 412, «Նոր դպրոց», 1911, N27—28, էջ 37, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 8; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպ. 1911—12 թթ.», ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 27։

Սարդարապատ (այժմ՝ Հոկտեմբեր, Հոկտեմբերյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Երևանի վիճակի ծխական դպրոցների 1872-ի ցուցակում նշված է, որ մի շարք վայրերի (Վաղարշապատ, Օշական, Աշտարակ և այլն), այդ թվում նաև Սարդարապատի դպրոցի մասին անհրաժեշտ տեղեկություններ չեն ստացվել։ Կնշանակի այդ դպրոցը հիշյալ թվականին գործել է, իսկ թե ե՞րբ է հիմնվել, մենք չգիտենք։ Այդ մասին արխիվային փաստաթղթերը լռում են։ 1873-ին գործել է, ունենալով 40 աշակերտ, 1881-ին՝ 25 աշակերտ։

Այս դպրոցն այլևս չի հանդիպում մինչև 1907—08 ուս. տարին։ Այդ տարում ունեցել է մեկ ուսուցիչ և 40 աշակերտ (3 աղջիկ)։

Հետագա մի քանի տարիների տեղեկագրում չի երևում։ Դուցե պատճառն այն է, որ 1907-ից Ստարոբազարում գործել է պետական երկդասյան դպրոց, ուր 1917-ին սովորել են 30 հայ երեխաներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 31, թ. 38; գ. 43, գ. 50, թ. 64; գ. 182, թ. 7, ֆ. 19, գ. 380, թ. 45, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46։

Վաղարշապատի արական ծխական դպրոց

Մեր հնագույն ծխական դպրոցներից է։ Հիմնվել է 1840-ին (այլ տվյալներով՝ 1842-ին և 1846-ին)։

1872-ին ունեցել է 2 ուսուցիչ, 35 աշակերտ, 1873-ին՝ 3 ուսուցիչ, 75 աշակերտ, 1874-ին՝ 2 ուսուցիչ, 60 աշակերտ, 1881-ին՝ 3 ուսուցիչ, 70 աշակերտ։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է երկդասյան դպրոց՝ 143 աշակերտով։ 1890-ին ունեցել է 108 աշակերտ։ 1895-ին եղել է այն ժամանակվա խոշոր դպրոցներից մեկը՝ աշակերտների թիվը հասել է 210-ի (մի այլ փաստաթղթով՝ 245-ի)։ 1896-ին կառավարության հրամանով նորից է փակվել, վերաբացվելով մոտ 10 տարի հետո՝ 1905-ին, որպես երկսեռ երկդասյան դպրոց (նրան էր միացել տեղի աղջիկների դպրոցը)։ 1908—09 ուս. տարում եղել է երկսեռ երկդասյան դպրոց, ուր սովորել են 260 տղա, 210 աղջիկ։ Ունեցել է 13 դասատու, 1911—12-ին՝ 423 աշակերտ (248 տղա, 175 աղջիկ)։ 1912—13 ուս. տարում ցույց է տրված որպես արական դպրոց, ուր սովորել են 222 տղա և միայն 17 աղջիկ։

1913—14 ուս. տարում եղել է լրիվ երկսեռ դպրոց, ունենալով 396 աշակերտ (175 աղջիկ)։ 1914-ի մի այլ ցուցակում ցույց է տրված 13 ուսուցիչ և 435 աշակերտ, 1917-ին՝ 16 ուսուցիչ, 375 աշակերտ (160 աղջիկ)։

1918—19 ուս. տարում գործել է որպես երկդասյան դպրոց։ 1919—20 ուս. տարում Վաղարշապատում բացվել է հայկական գիմնազիա։

Վաղարշապատում գործել է նաև պետական միդասյան դպրոց, որը 1917-ին ունեցել է 50 աշակերտ (բոլորը հայեր)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 15—19; գ. 380, թ. 46; ֆ. 7, գ. 130, թ. 1; գ. 167, թ. 1—56; գ. 172, թ. 7; ֆ. 56, գ. 43, թ. 11; գ. 50, թ. 61; գ. 199, թ. 17; 23, գ. 192, թ. 12; գ. 182, թ. 7—9; գ. 492, թ. 16; ֆ. 20, գ. 222, թ. 4; ֆ. 75/207, գ. 5, թ. 52—55, «Արարատ», 1878, ԺԲ. էջ 457, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21; գ. 8717, թ. 6; ֆ. 13, թ. 11, գ. 264, թ. 27;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 51, «Տեղեկագիր Երևանի թեմի հկ. ծխ. դպ. 1912—13 ուս. տ.»։

Վաղարշապատի Ս. Հռիփսիմյան օրիորդաց դպրոց

Այս դպրոցը հիմնվել է 1872-ի փետրվարի 1-ին։ Այն կոչվել է Վաղարշապատի Ս. Հռիփսիմյան օրիորդաց դպրոց, որի փաստական հիմնադիրը և առաջին տեսուչն է եղել Վահան Բաստամյանը։

Տեսնելով դպրոցի մեկ տարվա հաջողությունները, Վաղարշապատի քնեկիչները 1873-ի մայիսին սկսել են նրա համար հատուկ շենք կառուցել՝ «գյուղի եկեղեցու գավթում»։ Այսպես է գրել «Արարատ» ամսագիրը (1873, էջ 191—192), առանց սակայն նշելու, թե որ եկեղեցու մասին է խոսքը։ Բանն այն է, որ «Արարատ» ամսագրի նույն տարվա (1873 թ.) հաջորդ մի քանի համարներում և «Մեղու Հայաստանի» լրագրի 1873 թ. №37-ում խոսվում է Վաղարշապատի Ս. Գայանյան օրիորդաց դպրոցի մասին։ Ըստ որում այդ դպրոցի մասին խոսում է Հռիփսիմյան օրիորդաց դպրոցի տեսուչ Վահան Բաստամյանը, որը եղել է միաժամանակ Էջմիածնի Ս. Գայանյան վանքի (եկեղեցու) վանահայրը։ Ուրեմն, կարելի է կարծել, որ տվյալ դեպքում խոսքը ոչ թե երկու տարբեր օրիորդական դպրոցների, այլ միայն մի դպրոցի մասին է, որը կոչվել է Հռիփսիմյան և Գայանյան անուններով։

Նույն Վ. Բաստամյանը «Արարատի» 1873 թ. օգոստոսի համարում գրել է, որ Ալեքսանդրապոլի «մի քանի բարեպաշտ և ազգասեր պարոնները իմանալով, որ սկսել եմ Ս. Գայանյան վանքում շինել փոքր դպրոց՝ բարեհաճել էին հոժար կամքով ժողովել յուրյանց մեջ և հանձնել ինձ հարյուր և չորս ռուբլի 40 կ-ի նպաստ նույն շինուվյան» (էջ 313)։

Այս տողերը ևս հաստատում են մեր կարծիքը։ Անկասկած, Բաստամյանի այս տողերը վերաբերում են նույն թվականի մայիսին Հռիփսիմյան դպրոցի համար սկսված շենքի կառուցմանը։

Հռիփսիմյան օրիորդաց դպրոցը 1873-ին ունեցել է 50 աշակերտուհի, 1876-ին՝ 2 ուսուցչուհի, 20 աշակերտուհի, 1881-ին՝ 4 ուսուցիչ, 50 աշակերտուհի։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է միդասյան դպրոց՝ 44 աշակերտուհիներով։ 1890-ին ունեցել է 52, 1895-ին՝ 71 աշակերտուհի։ 1896-ին դարձյալ փակվել է։ 105-ի վերաբացումից հետո միացել է տեղի տղաների դպրոցին։ 1912—13 ուս. տարում ցույց է տրված որպես առանձին իգական դպրոց 9 ուսուցիչներով և 195 սովորողներով։ 1913—14 ուս. տարում նորից միացել է արական դպրոցին։

Մեր դարասկզբից Վաղարշապատում գործել է նաև առանձին պետական իգական դպրոց։

«Մեղու Հայաստանի», 1873, № 37, «Արարատ», 1873, էջ 117, 190—192, 313, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 15—19, գ. 380, թ. 45, ֆ. 56, գ. 71, թ. 3, գ. 50, թ. 7, «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 51,
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 59։

Տամշլու (այժմ՝ Մոավյան, Ապարանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ապարանի շրջանի Տամշլու (Նաև՝ Տամշլո՞ւ) գյուղի եկեղեցական ծխական դպրոցը բացվել է 1879-ին։ Հավանաբար այս դպրոցն էլ արժանացել է Սաշլուի և այլ գյուղերի դպրոցների ճակատագրին, որովհետև հետագա տարիների ցուցակներում այլևս չի երևում։

Հայտնի է, որ այն նորից բացվել է 1909-ին՝ ԿՀՔ ընկ. նյութական օժանդակությամբ։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 37 տղա և 3 աղջիկ։ 1913—14 ուս. տարում դարձյալ ունեցել է 40 աշակերտ (բոլորը տղաներ), 1919-ին գործել է։

«Աբարաս», 1879, N10, էջ 413, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 172, թ. 8, ֆ. 48, գ. 1, գ. 598, թ. 87,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 27։

Փարպի (Աշտարակի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1879-ին՝ կոչվել է Ղազար Փարպեցու անունով։ 1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 25 աշակերտ։ 1885-ին փակվել է։ Վերաբացման թվականը մեզ անհայտ է, բայց անկասկած է, որ այն գործել է մինչև 1895—96 թվականները և նորից փակվել։ 1905-ի վերջերին վերաբացվել է։ Այն եղել է երկսեռ միդասյան դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ և 56 աշակերտ (11 աղջիկ)։ 1911—12 ուս. տարում եղել է քառամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 49 տղա և 18 աղջիկ։ 1913—14 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 60-ի (14 աղջիկ)։ Մի այլ փաստաթղթում 1914-ի փետրվարին ցույց է տրված 75 աշակերտ, 1917-ին՝ 69 աշակերտ (5 աղջիկ)։ 1919-ին գործել է։

Մեր դարասկզբին Փարպի գյուղում գործել է նաև պետական դպրոց։

«Աբարաս», 1879, N6, թ. 277,

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46; գ. 8717, թ. 6, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 27, ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 182, թ. 8; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61—64, գ. 182, թ. 7, գ. 492, թ. 116, «Նոր դպրոց», 1909, N10, էջ 83—84, «Տեղեկագիր Երևանի թեմի ծխ. դպ. 1911—12 թթ.»։

Քյորփալու (այժմ՝ Արշալույս, Էջմիածնի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Պաշտոնական մի փաստաթղթում նշված է, որ այս դպրոցը հիմնվել է 1894-ին, սակայն դա բացարձակ թյուրիմացություն է։ Մեր ձեռքի տակ

եղած հավաստի աղբյուրները վկայում են, որ Քյորփալու գյուղի դպրոցը դեռևս 1876-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 19 աշակերտ։ Կարծում ենք, որ այդ կամ նախորդ թվականին էլ նա հիմնվել է (1873-ի և 1874-ի ցուցակներում չի նշված)։ 1881-ի վերջին ունեցել է 40 աշակերտ։ 1885-ին փակվել է, հավանաբար վերաբացումը տեղի է ունեցել 1894-ին, որը և սխալմամբ համարվել է նրա բացման կամ հիմնադրման տարեթիվը։ Այս դպրոցը մտել է 1895-ի հունվարին էջմիածնի գավառապետի կողմից կազմված և վերադաս օրգաններին ներկայացված՝ գավառի տարրական դպրոցների ցուցակում, սակայն անհասկանալի պատճառներով չի նշված այդ նույն թվականին փակված հայ դպրոցների ցուցակում։ Իհարկե, դա դեռևս չի նշանակում, որ այդ դպրոցը շարունակել է գոյություն ունենալ։ Դպրոցը 1905-ի վերջերին վերաբացվել է, կեղծանակի մինչ այդ այն փակ է եղել։

1911—12 ուս. տարում եղել է եռամյա տարրական երկսեռ դպրոց, ունենալով 2 ուսուցիչ և 93 աշակերտ։ 1913—14-ին աշակերտների թիվը իջել է 72-ի (21 աղջիկ)։ 1914-ի փետրվարին ցույց է տրված 86 աշակերտ, 1917-ին՝ 97 (36 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 71, թ. 4; գ. 492, թ. 116; ֆ. 7, գ. 120, թ. 2; գ. 172, թ. 7; ֆ. 19, գ. 456, թ. 15—19; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46, գ. 8717, թ. 6, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 27; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպ. 1911—12 ուս. տ.»։

Օհանավանք (այժմ՝ Օհանավան, Աշտարակի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Օհանավանքի ծխական դպրոցը բացվել է 1910-ին։ 1911—12 ուս. տարում ունեցել է ընդամենը մի դասարան, որտեղ ընդգրկված են եղել 34 տղա, 6 աղջիկ։ 1913—14 ուս. տարում ունեցել է 53 աշակերտ (2 աղջիկ)։

Մի այլ փաստաթղթում (1914-ի փետրվար) նշված է 56 աշակերտ, 1917-ին՝ 60 (10 աղջիկ)։

Պահվել է հայ բարեգործական ընկերության կողմից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30, գ. 172, թ. 8, ֆ. 48, գ. 537, «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպ. 1911—12 թթ.», ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 1, գ. 264, թ. 27։

Օշականի Մեսրոպ Մաշտոցի անվան դպրոց

Օշականի եկեղեցական ծխական դպրոցը բացվել է 1860-ին (մի այլ փաստաթղթի համաձայն՝ 1859-ին) Էջմիածնի սինոդի թույլտվությամբ և այն ժամանակ Էջմիածնի գավառի հոգևոր գործակալ Մեսրոպ վարդապետ Սմբատյանցի ջանքերով։ 1869-ին այնտեղ Օշականից և շրջակա գյուղերից սովորել են 30 երեխաներ։ Ամփոփվել են՝ քերականություն, ազգային պատմություն, հայոց լեզվի վարժեցագրություն, ռուսաց լեզու և վարժեցագրություն, կրոնագիտություն և երգեցողություն։

Այս դպրոցի ուսուցիչ Գևորգ Մորիկյանցը 1871-ին գրել է. «Եկեղեցոյս հարավային դռան հանդեպ կգտնվի նորաշեն Մեսրոպբյան ուսումնարանը, երկհարկյան շինուած. ունի ընդարձակ պատշգամբներ հյուսիսային և հարավային կողմերին. խիստ զվարճալի տեղ է այս ուսումնարանը, վանդի հարավային կողմից մոտ է Քասախ գետի ձորաբերանը, որտեղից գետի թաղցր խոխոջյունը և թռչնաց ոգեշարժ երգերը մեկ ուրիշ աշխույժ կնվիրեն աշակերտաց անմեղ սրտերին և անուշ զեփյուռն էլ յուր կենսացուցիչ զովությունը նոցա բաշխելի չի դադարիլ։ ունի բավականաչափ աշակերտք, նույնպես և ուսուցիչ» («Արարատ», 1871, Ա էջ 59)։

1872-ին ունեցել է 30, 1873-ին՝ 40, 1876-ին՝ 30 և 1881-ին՝ 30 աշակերտ։

Այս դպրոցը ևս 1885-ին փակվել է։ 1888-ին դեռևս վերաբացված չի եղել. այն վերաբացվել է միայն 1891-ին, իսկ 1896-ին դարձյալ փակվել է։ Երկրորդ վերաբացումը տեղի է ունեցել 10 տարի հետո՝ 1905-ին։ Եղել է երկսեռ միդասյան դպրոց։

1908—09 ուս. տարեկզրին դպրոցն ունեցել է 6 բաժանմունք, 164 աշակերտ (25 աղջիկ)։ Տարեվերջին 153 աշակերտներից դպրոցն ավարտել են 11 հոգի (7 աղջիկ), փոխադրվել են 104 հոգի (82 և կես տոկ.), վերաքննություն են ստացել 11 հոգի (7 ու կես տոկ.), մնացել են 27 հոգի (10 տոկոս)։ 1912-ին դպրոցն ունեցել է 225 աշակերտ (38 աղջիկ), 1913—14-ին՝ 270 աշակերտ (54 աղջիկ)։ Եղել է 6-ամյա դպրոց։

1914-ին դրվել է դպրոցի նոր շենքի հիմքը, սակայն այն ավարտվել է միայն սովետական իշխանության առաջին տարիներին։ 1919-ին գործել է։

Անցած դարի վերջերից Օշականում գործել է նաև պետական երկդասյան դպրոց։

Այստեղ խոսվեց Օշականի ծխական դպրոցի մասին, սակայն մենք այն հաստատ համոզմանն ենք, որ այդ գյուղի կրթական կյանքի պատմությունը գալիս է հնագույն ժամանակներից։ Միանգամայն հավանական է, որ ինքը՝ Մաշտոցը Օշականում բաց արած լինի դպրոց, իսկ եթե դա

չի եղել, ապա ամեն մի կասկածից վեր է, որ այդպիսի դպրոց բացվել է Մաշտոցին այնտեղ թաղելուց հետո։ Ուրեմն կրթական գործը Օշականում պետք է սկզբնավորված լինի ավելի քան մեկ ու կես հազարամյակ առաջ։

«Արարատ», 1869, Գ. էջ 83, 1871, Ա. էջ 59,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 13—14; գ. 43, թ. 11, գ. 50; թ. 61—64; գ. 132, թ. 43; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 14—23; գ. 492, թ. 116; ֆ. 19, ց. 1, գ. 116, թ. 39; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 8;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 52, «նոր դպրոց», 1909, N10, էջ 82, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21; գ. 1585, թ. 46; գ. 8717, թ. 5; ֆ. 12, գ. 865, թ. 75; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 27։

Ցափնա (Ափնագեղ, Ապարանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

«Արարատ» ամսագրի համաձայն Ամենայն հայոց կաթողիկոսը 1879-ի սպտեմբերի 17-ի հատուկ կոնդակով հաստատել է Ցափնա գյուղում դպրոց կառուցելու և կառավարելու համար ընտրված հոգաբարձության կազմը։ Ուրեմն այդ թվականին էլ դպրոցը հիմնվել է։ Սակայն նրա հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։

«Արարատ», 1879, N9, էջ 414։

Էջմիածնի գավառում տարբեր ժամանակներում բացված ու գործած պետական (ռուսական), ուղղափառ եկեղեցական և ճեմարանական դպրոցները

N	Բնակավայրը	Բնակավայրի նոր անունը	Շրջանը	Դպրոցի բացման թվականը	Ինչպես է կոչվել դպրոցը	Դպրոցի տիպը 1912-ին
1	Ապարակ	—	Աշտարակի	1906	Գյուղական-հասարակական	չի գործել
2	Ալիբեկլու	Աթաբեկյան	Էջմիածնի	1907	»	միդասյան
3	Ալիքուշակ	Քուլակ	Ապարանի	1907	»	»
4	Ազատնաստան	—	Էջմիածնի	1912	»	»
5	Աշտարակ	քաղ. Աշտարակ		1879	քաղ. տարր. ուսումն. ըստ 1872-ի կանոնների	1914-ից քաղաք. տարրական ուսումնարան
6	Աշտարակ	»	»	1902-ին գործել է	Գյուղ. նորմալ ուսումն. (ապրկան)	երկդասյան
7	Աշտարակ	»	—	1902-ին գործել է	տարրական իգական	չի գործել
8	Քաղ-Ապարան	Ապարան	Ապարանի	1902	նորմալ ուսումնարան	երկդասյան

№	1	2	3	4	5	6
9	Գեղչու	Մրգաշատ	Հոկտեմբերյանի	1899	Գյուղական հաս.	չի գործել
10	Դագալու	Ղզնիկ	Թալինի	1912	»	միդասյան
11	Դանագիրմազ	Նիգավան	Ապարանի	1902	»	չի գործել
12	Դոգա (ռուսական աղբյուրներում՝ Sno)	—	Էջմիածնի	1885	»	երկդասյան
13	Ղզվարդ	—	Նոյեմբերի	1902-ին գործել է	»	երկդասյան
14	Ջերմա Հայ	—	Էջմիածնի	1902	»	երկդասյան
15	Թալին Հայ	—	Թալինի	1899-ին գործել է	»	եռակոմպլեկս
16	Թալիշ	Արուճ	Աշտարակի	1912	»	միդասյան
17	Թաքիա	Բազմաղբյուր	»	1906	»	»
18	Եաթունաբիս Ներքին	—	Էջմիածնի	1911	»	երկդասյան
19	Եզնաուզ	Արագած	»	1916-ին գործել է	»	միդասյան
20	Կարբի	—	Աշտարակի	1902-1905-ին գործել է	տարրական	չի գործել
21	Հաչիլար	Մրգաստան	Էջմիածնի	1916-ին գործել է	»	միդասյան
22	Հաչիզարա	Այգեշատ	»	1902-ին գործել է	»	»
23	Ղարաչորան	Արագյուղ	Նոյեմբերի	1902	Գյուղական—տրամաբ դպրոց	»
24	Ղարխուն Վերին	Ջրառատ	Էջմիածնի	1885	»	»
25	Ղզլքամուր	Ոսկեվազ	Աշտարակի	1900-ին գործել է	»	երկդասյան
26	Ղամլու	Կարմրաշեն	Թալինի	1912	»	միդասյան
27	Ղուրդուզուլի	Արմավիր	Հոկտեմբերյանի	1885	»	երկդասյան
28	Մարգարա	—	»	1902	»	միդասյան
29	Մաստարա	—	Թալինի	1912	»	»
30	Մոլլաբայազետ	Բամբակաշատ	Հոկտեմբերյանի	1900 գործել է	»	1916-ին եղել է երկդասյան
31	Մոլլա—Ղասում	Ջավուն	Ապարանի	1902-ին գործել է	»	չի գործել
32	Մուզնի	—	Աշտարակի	1912-ին գործել է	»	միդասյան
33	Շահրիար Մեծ	Նալբանդյան	Հոկտեմբերյանի	1894	»	երկդասյան
34	Շահրիար Փոքր	Նոր Արտագերս	»	1899-ին գործել է	ուղղափառ եկ. ծխական	միդասյան

№	1	2	3	4	5	9
35	Տարիֆաբաթ (Ղարխուն Ներքին)	Արաքս	Էջմիածնի	1910	գյուղական հասարակ.	»
36	Ջորանքարա[1]		Նոյեմբերի Հուրդուզու	1890	»	»
37	Վաղարշապատ	քաղ. էջմիածին	—	1899-ին գործել է	ուղղափառ եկեղ. ծխական	երկդասյան
38	Վաղարշապատ	—	Էջմիածնի	1902-ին գործել է	տարրական իգական	չի գործել
39	Մամաքար	—	Էջմիածնի	1903 գործել է	գյուղակ. հաս.	երկդասյան
40	Մարգարապատ	Հոկտեմբեր	Հոկտեմբերյանի	1900-ին գործել է	»	»
41	Օշական	—	Աշտարակի	1899-ին գործել է	գյուղական	չի գործել
42	Փարպի	—	»	1902-ին գործել է	»	չի գործել
43	Քյալագյարիս	Շենավան	Հոկտեմբերյանի	1900	»	երկդասյան

[1] 1899-ին Ջորանքարա գյուղի պետական դպրոցը փոխադրվել է Վերին Եաթունաբիս գյուղը, իսկ հետագա տարիներին գործում նշվել է Ջորանքարա գյուղի անունով։ Այս գյուղը գտնվել է նախկին էջմիածնի գավառում՝ Վաղարշապատից 8 վերստ հեռավորության վրա, այժմ այն չի հիշատակվում տեղեկատու աղբյուրներում։

ԿԱՐՍԻ ՄԱՐԶ

Ագարակ գյուղի ծխական դպրոց

Կարսի մարզում գոյություն են ունեցել Ագարակ (ռուսերեն մի աղբյուրում՝ Акряк) անունով հայաբնակ երկու գյուղեր, մեկը (ավելի մեծը)՝ Կաղզվանի, մյուսը՝ Օլթիի գավառներում։

1885-ին փակված դպրոցների ցուցակում նշված է նաև Կարսի մարզի Ագարակ (Ագրակ) գյուղի ծխական դպրոցը, որը նախորդ տարիներին գործել է, բայց 1885-ի սկզբներին փակվել է ուսուցիչ չունենալու պատճառով։

Ներկա դեպքում մենք դժվարանում ենք ասել, թե այդ դպրոցը ո՞ր Ագարակ գյուղում է գործել, Կաղզվանի՞ գավառի, թե՞ Օլթիի։ Կարելի է կարծել, որ այն կարող էր բացված լինել ավելի մեծաթիվ բնակչություն ունեցող գյուղում, որպիսին, ինչպես նշեցինք, եղել է Կաղզվանի գավառի Ագարակ գյուղը։

Այդ ենթադրության համար որոշ հիմք է հանդիսանում այն փաստը, որ Բաքվի հայ մշակութային միությունն իր ծախսերով 1908 թվականին Օլթիի շրջանի Կոմկաս և Ագարակ գյուղերի համար բաց է արել մի ծխական դպրոց՝ Ագարակ գյուղում. նշանակում է մինչ այդ այնտեղ դպրոց չի եղել։ Իսկ թե ինչո՞ւ 1885-ից առաջ Ագարակ (Կաղզվանի՞) գյուղում գործած դպրոցի մասին ոչինչ չի ասվում հետագա տարիների արխիվային փաստաթղթերում, մենք չգիտենք։

Կոմկաս և Ագարակ գյուղերի արական ծխական դպրոցը 1911—12 ուս. տարում ունեցել է 3-ամյա դասընթաց և 30 աշակերտ։ 1913—14 ուս. տարում սովորողների թիվն իջել է 26-ի (մի այլ փաստաթղթով՝ 20-ի)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12, ֆ. 7, գ. 167, թ. 1—30, գ. 172, թ. 6—11, «Նոր դպրոց», 1909, N 1, էջ 89,
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 71։

Արազի գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցը առաջին անգամ հանդիպում է 1913—14 ուսումնական տարվա փաստաթղթերում։ Այդ ժամանակ այն եղել է եռամյա խառը դպրոց, ուրեմն բացված պիտի լինի նշված թվականից առնվազն 2—3 տարի առաջ։ 1913—14 ուս. տարում ունեցել է 36 աշակերտ, որոնցից 3-ը աղջիկներ (մի այլ փաստաթղթում 1914-ին ցույց է տրված 40 աշակերտ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 6—11, ֆ. 56, գ. 495, թ. 20։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 20, ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 71։

Արդահան քաղաքի հայկական եկեղեցական ծխական դպրոց

Մի շարք աղբյուրների համաձայն այս դպրոցը դեռևս 1886-ին գործել է, թեև սխալմամբ նրա բացման թվականը նշված է 1887-ը։ 1888—89 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք։ 1896-ին փակվել է, 1906-ին վերաբացվել։ 1913—14 ուս. տարում եղել է եռամյա երկսեռ դպրոց՝ 127 աշակերտով (67 աղջիկ)։ 1917-ին ունեցել է 195 սովորող (95 աղջիկ)։

1889-ից Արդահանում գործել է նաև պետական տարրական դպրոց, ուր սովորողների մեծ մասը եղել են հայ երեխաներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 43, թ. 3—22; գ. 120, թ. 2, գ. 167, թ. 1—56; գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 6—11; ֆ. 56, գ. 199, թ. 17—23;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 8։

Արդահանի հայ կաթոլիկների ծխական դպրոց

Հիմնվել է 1899-ին։ Ըստ երևույթին, աշխատել է պետական դպրոցի ծրագրով, քանի որ այնտեղ հայ երեխաներից բացի սովորել են նաև այլ ազգությունների երեխաներ։ Այսպես, 1900 թվականին այնտեղ սովորող 79 աշակերտներից 62-ը եղել են հայեր, իսկ 17-ը՝ այլազգիներ։

«Циркуляр по управлению Кавказского учебного округа за 1901 г.», приложение №9, էջ 20—21։

Արմուտլու գյուղի ծխական դպրոց

Կարսի մարզի Արմուտլու գյուղի ծխական դպրոցը 1881-ին գործել է, լինելով միդասյան արական դպրոց, ուր սովորել են 20 հոգի։ 1884-ին ունեցել է մի դասարան՝ երկու պատրաստական բաժանմունքով։ 1885-ին փակվել է։ Հետագա տասնամյակների փաստաթղթերում այլևս չի երևում։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12։

Բագարան (Բագրան) գյուղի ծխական դպրոց

1884-ից առաջ գործել է, այդ թվականին փակվել է նյութական սղության պատճառով։ Թե երբ է նորից բացվել ու գործել և արդյո՞ք գոյություն ունեցել է 90-ական թվականներին, մենք չգիտենք։ Մի փաստաթղթից հայտնի է, որ այն վերաբացվել է 1906-ին։

1908-ին տեղի ուսուցիչները կազմակերպել են նաև երեկոյան դասընթացներ՝ մեծահասակների համար։

1911—12 ուս. տարում եղել է արական եռամյա դպրոց, ուր սովորել են 42 տղաներ։ 1913—14 ուս. տարում՝ դարձյալ 42 աշակերտ (2 աղջիկ)։ 1917-ին՝ 40 աշակերտ (15 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13, ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 167, թ. 1—56, գ. 172, թ. 6—11, «Նոր դպրոց», 1909, N1, էջ 91։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 20, ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 71։

Բայբուրդ գյուղի ծխական դպրոց

Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը 1908-ին նպաստ է հատկացրել նաև Կարսի մարզի Բայբուրդ գյուղի ծխական դպրոցին, որը նախորդ տարիների փաստաթղթերում չի երևում։ Հավանաբար հիմնվել է 1907 կամ էլ 1908-ի սկզբին։

«Նոր դպրոց», 1908, N3, էջ 85։

Բայկարա գյուղի ծխական դպրոց

1884-ին ունեցել է մի պատրաստական դասարան։ Եղել է արական դպրոց։ 1885-ին փակվել է։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։

Բայրախտար (Բարախտար) գյուղի ծխական դպրոց

1884-ից առաջ գործել է. այդ թվին փակվել է ուսուցիչ չունենալու և նյութական նեղության պատճառով։

Հայտնի է նաև, որ 1910-ին նորից է բացվել, հաջորդ տարում լինելով եռամյա խառը դպրոց՝ 42 աշակերտով (5 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում նույնպես 42 աշակերտ (7 աղջիկ)։ Մի այլ փաստաթղթում 1914-ին ցույց է տրված 45 աշակերտ, իսկ 1917-ին՝ 74 (22 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 167, թ. 1—56, գ. 172, թ. 6—11։ ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 71։

Բաշքյոյ գյուղի ծխական դպրոց

Կարսի մարզի Կաղզվանի գավառի Բաշքյոյ (նաև Բաշգյուղ) գյուղի ծխական դպրոցը 1881-ին գործել է, ունենալով մի ուսուցիչ և 70 աշակերտ։ 1884-ին փակվել է ուսուցիչ չունենալու պատճառով։ Հետագա շատ տարիների փաստաթղթերում այս դպրոցին այլևս չենք հանդիպում։ Մեկ էլ այն երևում է 1908-ին Կովկասի հայոց բարեգործական ընկերությունից նպաստ ստացած դպրոցների շարքում։ 1912-ին եղել է եռամյա երկսեռ դպրոց՝ 60 աշակերտով (7 աղջիկ)։ Շարունակել է պահվել ԿՀԲ ընկ. նպաստով։

ՊՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13, «Նոր դպրոց», 1908, N3, էջ 85, ԿՀԲ ընկ. 1912 թ. տեղեկագիրք, էջ 32։

Բաշ-Ճիրակ գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1878-ին՝ Կարսի առաջնորդ Ազվանյանցի ջանքերով։ Դրպրոցի գոյությունը ապահովելու համար գյուղի բնակիչները հատկացնում են մի դուման և 16, 5 օրավար հող, սակայն հետագա տարիներին դրպրոցը նյութական մեծ զրկանքներ է կրել։ Առաջին ուսուցիչն է եղել ալեքսանդրապոլցի Կարապետ Առաքելյանը։ Երկար տարիներ այնտեղ բեղմնավոր աշխատանք է կատարել Հովհաննես Տեր-Բարսեղյանը, որը և այս դպրոցի համառոտ պատմության (1892 թ., ձեռագիր) հեղինակն է։

1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1886-ի նոյեմբերին։ 1888—89 ուս. տարում եղել է արական միդասյան դպրոց՝ 68 աշակերտով և 2 ուսուցչով։ 1896 և հաջորդ տարիների ցուցակներում չկա։ 1913—14 ուս. տարում եղել է քառամյա տարրական երկսեռ դպրոց՝ 88 աշակերտով (27 աղջիկ) և 2 ուսուցչով։ 1917-ին ունեցել է 136 աշակերտ (76 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 58; գ. 167, թ. 1—56, գ. 172; ֆ. 56, գ. 50; գ. 199; գ. 156, թ. 16, 1888—89 ուս. տ. վիճ. տեղ.», էջ 67։

Բաշ-Ծորագյալ (Կարսի մարզ) գյուղի ծխական դպրոց

1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 50 աշակերտ։ 1882-ին փակվել է ուսուցիչ չունենալու պատճառով։ 1884-ին գործել է, կոչվելով Ս. Սահակյան արական ուսումնարան։ Բաղկացած է եղել երկու պատրաստական և մի հիմնական դասարաններից։ 1885-ին նորից փակվել է։ Վերաբացվել է 1889-ին, իսկ 1895-ին եղել է երկդասյան արական դպրոց՝ 41 աշակերտով։ 1896-ին երկրորդ անգամ փակվել է։ Վերաբացման թվականը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1913-ին գործել է՝ ունենալով 2 ուսուցիչ և 96 աշակերտ։

«Մեղու Հայաստանի», 1882, № 134,
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 20;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12; ֆ. 7, գ. 120, թ. 12;
«Циркуляр Кавказск. уч. ок. за 1901 г.», приложение №9, стр. 15։

12—2521

Բաշ-Քյադիկլար (Կարսի մարզ) գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման մասին կան հակասական տվյալներ։ Երևանի Թեմի եկ. ծխ. դպրոցների տեսչի պահանջով 1892-ին դպրոցից գրավոր հայտնել են, որ այն հիմնվել է 1888-ին, սակայն այս տվյալը ճիշտ չէ, քանի որ Բաշ-Քյադիկլարի դպրոցը 1884-ին գոյություն է ունեցել, իսկ 1885-ին փակված է եղել ուսուցիչ չունենալու պատճառով։ Մենք ավելի հավատում ենք համարում 1883-ը, որը և նշված է Երևանի Թեմի եկ. ծխ. դպրոցների 1911—12 ուս. տարվա տեղեկագրում։ 1888—89 ուս. տարում եղել է տղաների միդասյան դպրոց, ուր սովորել են 32 հոգի։ 1894-ին եղել է երկդասյան խառը դպրոց և ունեցել է 167 սովորող, 1896-ին փակվել է։ 1906-ին վերաբացվել է, որպես խառը դպրոց։ 1911—12-ին եղել է քառամյա երկսեռ դպրոց՝ 73 աշակերտով։ (Ինչպես տեսնում է բնՔերցողը, 1894-ի համեմատությամբ աշակերտների թիվը պակասել է ավելի քան 2 անգամ։)

Մասամբ պահվել է ԿՀԲԸ-ի նպաստով։ 1913—14 ուս. տարում՝ 95 աշակերտ (18 աղջիկ), 1917-ին՝ 110 աշակերտ (30 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 46, թ. 16; գ. 157, թ. 1—30; գ. 167, թ. 1—56; գ. 120, թ. 2; ֆ. 56, գ. 50, թ. 11—30; ֆ. 7, գ. 172, թ. 6—11; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 91, ց. 3, գ. 424; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 70, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 8, «Циркуляр за 1901 г.», 15.

Բերնա գյուղի արական ծխական դպրոց

Բերնա գյուղի Մնսրոպյան արական դպրոցը 1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 30 աշակերտ։ 1884-ին ունեցել է մի դասարան՝ երկու պատրաստական բաժանմունքով, 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1887-ին՝ տեղի հայ հասարակության համախոհ որոշմամբ։

1894-ին եղել է միդասյան արական դպրոց՝ 40 աշակերտով։

1896—1898 թվականների փակումից հետո երկար տարիներ չի գործել։ Վերաբացվել է միայն 1910-ին, լինելով եռամյա արական դպրոց, ուր սովորել են 42 տղաներ։ 1913—14 ուս. տարում՝ 30 աշակերտ (3 աղջիկ)։ 1917-ին 50 աշակերտ (10 աղջիկ)։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 11—13; գ. 156, թ. 1; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 6—11; գ. 120, թ. 2։
«Մուրճ», 1890, N7, էջ 1021։

Բենկի Ահմեդ գյուղի Ներսիսյան արական դպրոց

1878-ին Կարսի շրջանում ճանապարհորդած Կյուրեղ վարդապետը կ. վ. Ս. ստորագրությամբ «Արարատ»-ում հրատարակած իր հոդվածաշարում այս գյուղի մասին գրել է. «Ուսումնարան չունին. մի վարժապետ քանի չափ աշակերտներ կը վարժե հայերեն բնՔերցանություն։ Սոքա ևս կպատրաստվին ուսումնարան մը շինել...» («Արարատ», 1879, N8, էջ 363)։

Թե երբ է կառուցվել այդ դպրոցը, մենք չգիտենք, բայց հայտնի է, որ 1881-ին այն գործել է, ունենալով մի ուսուցիչ և 35 աշակերտ։ 1884-ին ունեցել է մի դասարան՝ երկու պատրաստական բաժանմունքով։ 1885-ին փակվել է, վերաբացվելով 1886-ին։ 1888—89 ուս. տարում եղել է արական միդասյան դպրոց՝ 2 ուսուցչով և 30 աշակերտով։ 1894-ին ունեցել է 39 աշակերտ։ 1896-ին փակվել է (իսկ նրա փոխարեն 1898-ին կազմակերպվել է պետական դպրոց, ուր 1900-ին 60 սովորողներից 31-ը եղել են հայեր)։

Վերաբացվել է, հավանաբար, 1906-ին, իսկ 1907—08 ուս. տարում ունեցել է 44 աշակերտ և 4 աշակերտուհի։ 1911—12 ուս. տարում եղել է 5-ամյա խառը դպրոց, ուր սովորել են 50 տղա և 5 աղջիկ։ 1913—14-ին դարձել է քառամյա՝ 55 աշակերտով (22 աղջիկ)։ 1917-ին 44 աշակերտ (բոլորը տղաներ)։

«Արարատ», 1879, N8, էջ 353.
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12; գ. 156, թ. 29; գ. 199, թ. 13—17; գ. 182, թ. 9; ֆ. 7, գ. 172, թ. 6—11; գ. 120, թ. 2; գ. 157, թ. 1—30; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 66, «Циркуляр», 1901, էջ 20—21։

Բերդուս գյուղի ծխական դպրոց

«Նոր դպրոց» ամսագիրը 1909 թ. իր առաջին համարում հաղորդել է, որ Շիրակի Բերդուս գյուղում բնակվում են մոտ 60 տուն հայեր, որոնք ունեն իրենց նորաբաց դպրոցը՝ 60 աշակերտով։

Թեմական տեսուչ Թ. Եզմայլյանը 1913—14 ուս. տարվա տեղեկագրում նշել է, որ այդ թվականին նպաստ չունենալու պատճառով փակվել է Կարսի շրջանի Բերդուս գյուղի դպրոցը։ Հիմք ընդունելով Եզմայլյանի հաղորդածը, մենք Բերդուս գյուղի դպրոցը դրել ենք Կարսի մարզի դպրոցների ցանկում։

Այս գյուղում 1898-ից գործել է պետական դպրոց։

«Նոր դպրոց», 1909, N1, էջ 89, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 46, գ. 596, թ. 88։

Բուեկ գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցը 1884-ից առաջ գործել է, այդ թվականին փակվել է ուսուցիչ չունենալու և նյութական սղության պատճառով։ Հետագա տարիների փաստաթղթերում այն այլևս չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։

Բուլանըխ գյուղի ծխական դպրոց

Արխիվային տվյալներով այս դպրոցը հիմնվել է 1910-ին, իսկ հաջորդ տարում եղել է եռամյա դպրոց՝ 55 աշակերտով։

1913—14 ուս. տ. ունեցել է ընդհանրապես 38 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 157, թ. 1—30, գ. 172, թ.6—11։

Գյադիկ Սաթլմիշ գյուղի Սահակ-Մեսրոպյան դպրոց

Արխիվային տվյալների համաձայն այս դպրոցը հիմնվել է 1908-ին, իսկ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց, ուր սովորել են 46 տղա և 2 աղջիկ։ 1913—14 ուս. տարում եղել է արական դպրոց՝ 37 աշակերտով։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 72, թ. 6—11; ֆ. 48, ց. 1, գ. 598, թ. 81; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 246, թ. 20։

Գյուլանթափ գյուղի ծխական դպրոց

1884-ին գործել է, լինելով մի պատրաստականից բաղկացած արական ծխական դպրոց։ 1885-ին փակվել է։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է, քանի որ շատ տարիների փաստաթղթերում այլևս չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12։

Գոռշ գյուղի ծխական դպրոց
(Կարսի մարզ)

Երևանի նահանգապետի մի գրությունից երևում է, որ Կարսի մարզի Գոռշ գյուղում 1891-ին գործել է հայկական եկեղեցական ծխական դպրոց։ Տեղեկատու աղբյուրներում այդ անունով գյուղ Կարսի մարզում մենք չգտանք, Հնարավոր է, որ այն ունենա նաև այլ անուն։ Այդ դպրոցը այլ փաստաթղթերում չի երևում։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 180, թ. 105։

Գյոդալի (Գերմալի՞) գյուղի ծխական դպրոց

Կարսի մարզի Գյոդալի (Գերմալի) գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է 1908-ին։ Այդ տարվա սեպտեմբերին Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը որոշել է նպաստ տալ Գյոդալի գյուղի դպրոցին, որը հավանաբար բացվել է 1907-ից ոչ շուտ։

«Նոր դպրոց», 1908, N3, էջ 85։

Դիգոր գյուղի ծխական դպրոց

1908-ին գործել է։ Եղել են նաև երեկոյան դասընթացներ՝ մեծահասակների համար։

Այս գյուղում 1891-ից գործել է պետական դպրոց, որտեղ 1900-ին սովորել են 27 հայ երեխաներ (41 աշակերտից)։

«Նոր դպրոց», 1909, N1, էջ 9։

Դոլբանտ գյուղի ծխական դպրոց

1884-ից առաջ գործել է, այդ թվականին փակվել է ուսուցիչ չունենալու և նյութականի պատճառով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։

Զարդանես գյուղի Ս. Լուսավորիչ եկեղեցու ծխական դպրոց

Հիմնվել է 1908-ին, իսկ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց, ուր սովորել են 20 տղա և 5 աղջիկ։

Դպրոցը 1913—14 ուս. տարում ունեցել է 37 աշակերտ (6 աղջիկ) և պահվել է ԿՀԲ ընկերության միջոցներով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 6—11;
«Նոր դպրոց», 1909, N1, էջ 90, ԿՀԲ-ի 1909 և 1912 թթ. տեղեկագրերը։

Զրչի գյուղի ծխական դպրոց

Կաղզվանի գավառի Զրչի գյուղում 1884-ից առաջ գործել է ծխական դպրոց, որը, սակայն, այդ թվականին փակվել է ուսուցիչ չունենալու և նյութական սուղ պայմաններում գտնվելու պատճառով։ Թե երբ է վերաբացվել, անհայտ է։ Գիտենք, որ 1908-ին գործել է։ Այդ և Կաղզվանի գավառի մի շարք այլ գյուղերում, որոնք դպրոցներ են ունեցել, 1908 թվա-

կանից բացվել են նաև մեծահասակների երեկոյան դասընթացներ, որոնցում սովորել են զգալի թվով գյուղական երիտասարդներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։
«Նոր դպրոց», 1909, №1, էջ 91։

Թեքենես (Թիքենիս) գյուղի ծխական դպրոց

Դպրոցը 1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 30 աշակերտ։ 1884-ին փակվել է ուսուցիչ չունենալու պատճառով։ Հետագա տասնամյակների փաստաթղթերում այն այլևս չի երևում։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։

Խան գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցը 1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 50 աշակերտ։ 1884-ին բաղկացած է եղել մի պատրաստական դասարանից։ 1885-ին փակվել է։

Հետագա տասնամյակների փաստաթղթերում այլևս չի հիշատակվում։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։

Խար գյուղի ծխական դպրոց

1884-ից առաջ գործել է. այդ թվականին փակվել է ուսուցիչ չունենալու պատճառով։ Դպրոցի ճակատագիրն անորոշ է, քանի որ չի երևում շատ տարիների փաստաթղթերում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։

Ծպնի գյուղի ծխական դպրոց

1884-ից առաջ գործել է. այդ թվականին փակվել է ուսուցիչ չունենալու պատճառով։

Այս դպրոցին մեկ էլ հանդիպում ենք 1908-ին, երբ այն նորից բացվել ու գործել է։ Ուսուցիչները կազմակերպել են նաև երեկոյան դասընթացներ՝ մեծահասակների համար։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։
«Նոր դպրոց», 1909, №1, էջ 91։

Կաղզվան քաղաքի Ս. Թարգմանիչների անվան արական դպրոց

Հայկական ՍՍՀ պետական պատմական արխիվի մեկնույն ֆոնդում պահվող տարբեր փաստաթղթերում այս դպրոցի հիմնադրման տարբեր թվականներ են նշված՝ 1879-ը, 1881-ը և այլն։ Մենք հիմք ենք ընդունում առաջինը, նկատի ունենալով, որ 1881-ին այն արդեն ունեցել է 2 բաժանմունք, որոնցում սովորել են 50 երեխաներ։

Կարսի մարզապետի մի հաղորդումից երևում է, որ Կաղզվանի հայկական դպրոցը 1881-ին եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 100 տղա և 30 աղջիկ։

1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է միդասյան արական դպրոց՝ 80 աշակերտով։ 1894-ին եղել է երկդասյան և ունեցել է 178 սովորող, որոնցից 43-ը աղջիկ։

1896-ին նորից է փակվել և վերաբացվել 1906-ի սկզբներին՝ որպես երկսեռ դպրոց (անտարակույս այս դպրոցին է միացել տեղի հայ աղջիկների դպրոցը, որը նույնպես 1896-ին փակվել էր)։

1907—08 ուս. տարում ունեցել է 102 աշակերտ և 60 աշակերտուհի, 4 ուսուցիչ և 2 ուսուցչուհի։ 1911—12-ին եղել է 5-ամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 176 հոգի (88 աղջիկ)։ 1917-ին ունեցել է 5 ուսուցիչ, 212 աշակերտ (120 աղջիկ)։

Այս դպրոցը պահվել է ուսուցիչների և աշակերտների ուժերով կազմակերպվող ներկայացումներից, երեկույթներից և վիճակախաղերից ստացվող եկամուտներով, ինչպես նաև հասարակության կամավոր նվիրներով։

1913—14 ուս. տարում ունեցել է 6 ուսուցիչ, 88 աշակերտ, 77 աշակերտուհի։ 1892-ից Կաղզվանում գործել է նաև պետական երկդասյան դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 1, գ. 157; գ. 46, թ. 3—22; գ. 120, թ. 2; գ. 167, թ. 1—56; գ. 172, թ. 6—11, ֆ. 56, գ. 50, թ. 11, գ. 199, թ. 17—23, գ. 182, թ. 9,
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 91, գ. 3, գ. 424; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 2018, թ. 45;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 68, «Նոր դպրոց», 1909, №6—7, էջ 140, «Циркуляр... за 1901 г.», էջ 6—8։

Կաղզվան քաղաքի օրիորդաց դպրոց

Հիմնվել է 1881-ին (ըստ «Մեղու Հայաստանի» լրագրի՝ 1884-ին)։ 1885-ին փակվել է։ 1888-ին եղել է միդասյան իգական դպրոց՝ 42 սովորողներով։ 1894-ին եղել է երկդասյան դպրոց՝ 43 սովորողներով։ 1896-ին փակվել է։ Հայկական դպրոցների երկրորդ վերաբացումից հետո

միացել է տեղի արական դպրոցին, ուր 1913—14 ուս. տարում 165 սովորողներից 77-ը աղջիկներ են եղել։ Վերջնականապես փակվել է թուրք չարդարարների ձեռքի ուժով։

«Մեղու Հայաստանի», 1884, N83, ՀՍՀԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 11—13, ֆ. 7, գ. 46, թ. 20, գ. 120, թ. 2, գ. 172, թ. 6—11, «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 63։

Կաղզվան քաղաքի գիշերային հոգևոր ուսումնարան

1884-ին գործել է, կոչվելով Կաղզվան քաղաքի հասակավոր երիտասարդների գիշերային ուսումնարան՝ բաղկացած մի դասարանից։ 1885-ին փակվել է։ Այս դպրոցին այլևս չենք հանդիպում հետագա տարիների փաստաթղթերում։

ՀՍՀԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։

Կարմիր վանքի դպրոց

1884-ից առաջ գործել է. այդ թվականին փակվել է ուսուցիչ չունենալու պատճառով։ Շատ տարիների փաստաթղթերում այլևս չի երևում։ Գիտենք միայն, որ 1913-ին գործել է՝ ունենալով մի ուսուցիչ և 18 աշակերտ։

ՀՍՀԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։ ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 20։

Կալդոս Ագարակի հայկական դպրոց

Բաքվի հայ մշակութային միությունից 1909 թվականին նպաստ ստացած հայ դպրոցների ցուցակում նշված է նաև Կալդոս Ագարակի դպրոցը, որն առաջին անգամ է հանդիպում մեզ։

Տեղեկատու աղբյուրներում մենք չգտանք «Կալդոս Ագարակ» անունով բնակավայր։ Կարելի է միայն ենթադրաբար ասել, որ այն գտնվել է կամ Կարսի մարզում, կամ էլ Թիֆլիսի նահանգում, քանի որ հիշյալ ցուցակում նշված է Կարսի մարզում եղած Գեսատուկ Սաթլմիշ ու Շատևան գյուղերից հետո և Թիֆլիսի գավառում եղած Դուռնուկ գյուղից առաջ։

«Տելեմաքից հաշիվ Բաքուս հայոց կուլտուրական միության 1909 թ.», N3, Բաքու, 1911, էջ 33 (ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 51)։

Կարսի Ս. Լուսավորչի անվան արական միջնակարգ դպրոց

Պաշտոնական մի փաստաթղթում նշված է, որ այս դպրոցը հիմնվել է 1879-ին, սակայն դա ճիշտ չէ, քանի որ դեռևս 1869-ին այն գոյություն ուներ։ «Արարատ» ամսագրի մի հոդվածից կարելի է եզրակացնել, որ այդ դպրոցը հիմնված պետք է լինի 1868-ի սկզբներին։ 1881-ին ունեցել է 8 ուսուցիչ, 165 աշակերտ։ 1884-ին բաղկացած է եղել 6 դասարանից՝ 3 նախապատրաստական և 3 հիմնական։ Ունեցել է 242 աշակերտ։ Լեզուներից բացի ավանդվել են նաև հայրենագիտություն, ընդհանուր աշխարհագրություն, Ռուսաստանի աշխարհագրություն, հայոց պատմություն, ռուսաց պատմություն, ընդհանուր պատմություն, բնական պատմություն և բնագիտություն։

1885-ին դպրոցը փակվել է, վերբացվել է 1886-ի հոկտեմբերին, որպես երկդասյան արական դպրոց։ 1888—89 ուս. տարում ունեցել է 313 աշակերտ և 7 ուսուցիչ, 1894-ին՝ 346 աշակերտ։ 1896-ին դարձյալ փակվել է։ Վերբացվել է 1905-ի վերջերին, որպես երկսեռ երկդասյան դպրոց։ Տարօրինակ է, որ այս դպրոցը տարեցտարի հետադիմել է։ Այսպես, 1905—06 ուս. տարում ունեցել է 16 դասարան, 22 ուսուցիչ, 950 աշակերտ, 1906—07 ուս. տարում՝ համապատասխանաբար՝ 15, 17 և 693, 1907—08 ուս. տարում՝ 13,16 և 642, 1908—09 ուս. տարում՝ 12, 13 և 545։ Հետզհետե իջել է նաև աշակերտների առաջադիմությունը։ 1909-ին եղել է երկդասյան դպրոց, ունենալով 5 բաժանմունք։ 1913—14-ին աշակերտների թիվը իջել է 358-ի (177 աղջիկ), 1917-ին՝ 461 աշակերտ (182 աղջիկ)։

«Մեղու Հայաստանի», 1884, N 54, ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 91, ց. 3, գ. 424, «Արարատ», 1869, թ. էջ 42—43; 1906, էջ 35;
ՀՍՀԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 11; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 9; ֆ. 7, գ. 172, թ. 6—11; գ. 120, թ. 2; գ. 492, թ. 116; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 2890, թ. 81, գ. 8717, թ. 7, «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 65—66,
«Նոր դպրոց», 1909, N10, էջ 84—86, 1911, N25—26, էջ 21։

Կարսի հայ աղջիկների Հռիփսիմյան (Շուշանիկյան) դպրոց

Հայ աղջիկների համար բացված հնագույն դպրոցներից մեկն է, որը ամենայն հավանականությամբ հիմնվել է 1868-ին։ 1869-ի ապրիլին այս դպրոցում անց է կացվել սովորողների հրապարակային քննություն, որի մասին մեծ գովեստով է խոսվում «Արարատ» ամսագրի նույն թվականի համարներից մեկում։ Անցել են՝ հայոց լեզու, թվաբանություն, աշխարհագրություն և երգ։ 1879-ին դպրոցի համար կառուցվել է հատուկ շենք։ Դպրոցը 1881-ին ունեցել է 10 դասատու և 69 աշակերտուհի, 1884-ին՝ 94 աշակերտուհի։

1885-ին փակված հայ դպրոցների ընդհանուր ցուցակում այս դպրոցը նշված է «Շուշանիկյան» անունով։ Այդ ցուցակից իմանում ենք, որ մինչև փակումը (1884 թ.) դպրոցը բաղկացած է եղել 4 դասարանից (3 պատրաստական և մեկ հիմնական)։

Վերաբացվել է 1886-ին, 1888—89 ուս. տարում ունեցել է 6 ուսուցիչ, 148 աշակերտուհի։ Եղել է երկդասյան դպրոց։ 1894-ին ունեցել է 169 աշակերտուհի։ 1896-ին նորից է փակվել, վերաբացվելով 10 տարի հետո՝ 1906-ի հունվարին։ Հետագայում միացել է Ս. Լուսավորչի անվան արական դպրոցին։

Կարս քաղաքում գործել է նաև 1881-ին հիմնված պետական միդասյան իգական դպրոց, որը պահվել է քաղաքի միջոցներով և աշակերտուհիների ուսման վարձով։ 1890-ին նրա փոխարեն կազմակերպվել է Մարիամյան չորսդասյան օրիորդական ուսումնարան, որտեղ 1901-ին սովորել են 245 հոգի (171-ը հայ աղջիկներ)։ 1919—20 ուս. տարում վեր է ածվել հայկական օրիորդաց գիմնազիայի։

«Արարատ», 1869, թ. (հունիս), էջ 42—43; 1879, №8, էջ 369; ֆ. 7, գ. 120, թ. 2; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 120, թ. 2; ֆ. 56, գ. 50, գ. 11—13; գ. 199, թ. 17—23; ֆ. 73, գ. 225, «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 65,
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 50; գ. 2018, թ. 42; գ. 2890, թ. 84։

Կարսի Ս. Աստվածածին եկեղեցու ծխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1905-ը։ 1911—12 ուս. տարում եղել է 5-ամյա խառը դպրոց, ուր սովորել են 303 տղա և 172 աղջիկ (ընդամենը 475 հոգի)։

Կարս քաղաքում գործել է նաև 1880-ից հիմնված պետական 3-դասյան ուսումնարան, որտեղ 1901-ին սովորել են 297 հայեր (աշակերտների ընդհանուր թիվը՝ 507)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 1, գ. 157, թ. 1—30;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 37, «Циркуляр..., за 1901 г.», էջ 3։

Կարսի հայ կաթոլիկական եկեղեցական ծխական դպրոց

Հիմնվել է 1880-ին (մի այլ փաստաթղթով՝ 1898-ին, սակայն այս տվյալը ճիշտ չէ, քանի որ այդ դպրոցը 1894-ին փաստորեն գոյություն ունեցել է, ուր սովորել են 42 հոգի)։ Եղել է երկսեռ դպրոց։ 1900-ին շարունակել է գործել։ Այնտեղ սովորել են բացառապես հայ երեխաներ՝ 154 հոգի։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 91, գ. 1, գ. 424; «Циркуляр..., за 1901 г.», էջ 20—24։

Կարսի հայ կաթոլիկական գրագիտական դպրոց

Հիմնվել է 1856-ին, եղել է տարրական դպրոց, ուր միայն գրագիտություն են սովորեցրել։ 1895—96 թվականներին այն գեռևս գոյություն է ունեցել։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 91, գ. 3, գ. 424։

Կարսի հայկական մասնավոր դպրոց

Այս դպրոցը մենք դնում ենք հայկական դպրոցների շարքում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այնտեղ սովորել են բացառապես հայ երեխաներ և, իհարկե, ավանդվել է հայոց լեզու։

Հիմնվել է 1899-ին՝ որպես 3-րդ կարգի մասնավոր դպրոց։ Այդ թվականին ունեցել է 96, իսկ 1900-ին՝ 87 աշակերտ (բոլորը հայեր)։

«Циркуляр... за 1901 г.», էջ 20—21։

Համզաքյար (Համզագարակ) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հիշատակվում է 1906-ին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ Եղել է միդասյան արական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 432, թ. 118; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 8։

Զորերվան գյուղի (Կարսի մարզ) ծխական դպրոց

1884-ին եղել է արական հոգևոր ուսումնարան՝ մեկ պատրաստական դասարանով։ 1885-ին փակվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 19։

Ղարա Մահմուդ (Կարա Մահմեդ) գյուղի ծխական դպրոց

1884-ից առաջ գործել է։ Այդ թվականին փակվել է ուսուցիչ չունենալու և անբավարար պայմանների պատճառով։

Հետագա տասնամյակների փաստաթղթերում այլևս չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։

Ղըզլ-Չախչախ գյուղի ծխական դպրոց

Երևանի թեմական տեսչին ուղարկված մի զեկուցագրում այս դպրոցի հոգաբարձությունը գրում է, որ «մեր խնամոց տակ գտնված ուսումնարանն իսկապես բացվել է 1882 թվին և մեր դպրոցների վերջին փակումից հետո՝ վերաբացվել է 1886 թվի վերջերում» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 46, թ. Թ): Սակայն էջմիածնի սինոդի մի տեղեկագրից երևում է, որ այդ դպրոցը գեռևս 1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 20 աշակերտ։ Գործել է նաև 1884-ին (2 պատրաստական դասարանով), իսկ 1885-ին փակվել է ցարական կառավարության կողմից։ 1888-ին եղել է միդասյան արական դպրոց, ուր սովորել են 35 հոգի։ 1896-ին նորից փակվել է կառավարության կողմից։

Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է, քանի որ այն չի հանդիպում հաջորդ տարիների դպրոցական տեղեկագրում։ Դուցե դա բացատրվում է նրանով, որ Ղըզլ-Չախչախ գյուղում 1898-ին գործել է պետական դպրոց, որտեղ 1909-ին սովորել են 2 ռուս և 47 հայ երեխաներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 46, թ. 9; ֆ. 56, գ. 50, թ. 13; գ. 156, թ. 32;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47, «Վեհ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 69։

Ղարավանք (Թանահատ, Թանատի) գյուղի ծխական դպրոց

Կարսի մարզի Ղարավանք գյուղի ծխական դպրոցը 1884-ից առաջ գործել է, իսկ այդ թվականին փակվել է՝ ուսուցիչ չունենալու և նյութական սղության պատճառով։

Հետագա տարիների փաստաթղթերում այլևս չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։

Ղոշավանք գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1870-ին՝ վարդապետ Գ. Գրիգորիսի ջանքերով։ 1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 20 աշակերտ։ 1884-ին փակվել է՝ ուսուցիչ չունենալու պատճառով։ Վերաբացվել է, հավանաբար, 1886-ին, իսկ 1888—89 ուս. տարում եղել է միդասյան տղայոց դպրոց, ուր սովորել են 30 հոգի։

Այս դպրոցը երկար տարիներ փակ է եղել և նորից բացվել է 1911-ին, որպես եռամյա արական դպրոց, ուր սովորել են 29 տղաներ։

1913—14 ուս. տ. ունեցել է 32 աշակերտ (3 աղջիկ)։

«Արարատ», 1870, N6, էջ 218—219.

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 20; ՀՍՍՀ ՊԿՊԱ ֆ. 56, գ. 50, թ. 13; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 6—11; «Վեհ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 71։

Ճալա գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1868-ին։ 1884-ին փակվել է՝ ուսուցիչ չունենալու պատճառով։ Վերաբացվել է 1887-ին։ 1896-ին դարձյալ փակվել է, վերաբացվել 1906-ին, որպես միդասյան արական դպրոց։

1907—08 ուս. տարում ունեցել է 55 աշակերտ, 4 աշակերտուհի և 2 ուսուցիչ, 1911—12 ուս. տարում՝ 50 աշակերտ (2 աղջիկ)։

1913—14 ուս. տարում եղել է երկամյա խառը դպրոց՝ 46 աշակերտով (7 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 43, թ. 3—22; գ. 157, թ. 130; գ. 172, թ. 6—11; ֆ. 56, գ. 50, թ. 13; գ. 182, թ. 9; գ. 492, թ. 118։

Մավրակ (Աջամ-Մավրակ) գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու ծխական դպրոց

Արխիվային փաստաթղթերի համաձայն այս դպրոցը հիմնվել է 1908-ին, սակայն դա ճիշտ չէ, քանի որ ԿՀԲ ընկերության տվյալներով այն 1909-ին ունեցել է 3 բաժանմունք, ուրեմն պետք է հիմնված լինի 1906—1907 թվականներին։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց՝ 54 աշակերտով (3 աղջիկ)։

1913—14 ուս. տարում դարձել է քառամյա դպրոց, ուր սովորել են 60 տղա և 2 աղջիկ։ Մասամբ պահվել է ԿՀԲԸ-ի նպաստով։ 1917-ին ունեցել է 45 աշակերտ (4 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 1, գ. 157, թ. 1—30, գ. 172, թ. 6—11,
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 20; ԿՀԲԸ-ի 1909 և 1912 թթ. տեղեկագիրը։

Մացրա (Մազրա) գյուղի ծխական դպրոց

Արխիվային մի շարք փաստաթղթերում հանդիպում է Կարսի Մացրա գյուղի դպրոցը, մինչդեռ տեղեկատու աղբյուրները Կարսի մարզում այդ անունով գյուղ ցույց չեն տալիս։ «Կավկազսկի կալենդար»-ում այդ մարզում ցույց է տրված Մացրա անունով գյուղ, որը և մենք հիմք ենք ընդունել։

Այս գյուղի ծխական դպրոցի հիմնադրման թվականը մեզ հայտնի չէ։ Գիտենք, որ այն 1916—17 ուսումնական տարում գործել է, լինելով

Հոամյա երկսեռ դպրոց։ Այդ ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ և 88 աշակերտ (20 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—36։

Նախիջևան (Նախչվան) գյուղի (Կաղզվանի շրջան) ծխական դպրոց

1884-ից առաջ գործել է, իսկ այդ թվին փակվել է՝ ուսուցիչ չունենալու պատճառով։

Այս դպրոցի մասին հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1908-ին, երբ այն վերաբացվել է։ Դպրոցի ուսուցիչները երեկոյան դասընթացներ են կազմակերպել նաև գյուղի հասակավորների համար։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։
«Նոր դպրոց», 1909, N1, էջ 91։

Ճաղևան գյուղի ծխական դպրոց

1884-ին գործել է, լինելով մի պատրաստական դասարանից բաղկացած արական ծխական դպրոց։ 1885-ին փակվել է։

Հավանաբար երկրորդ անգամ փակվել է 1897-ին կամ հաջորդ տարում և վերաբացվել միայն 1908-ին։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ 1911—12 ուս. տարում եղել է հոամյա խառը դպրոց, թեև 24 աշակերտից միայն մեկն է եղել աղջիկ։ 1913—14 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ և 81 աշակերտ (13 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 6—11;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 20; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 52։

Չալեխ գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցը ևս առաջին անգամ հանդիպում է 1906-ին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։

Հետագա տարիների փաստաթղթերում այլևս չի հանդիպում։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 8։

Չանղլի գյուղի ծխական դպրոց

1884-ին գործել է, լինելով մի պատրաստականից բաղկացած արական ծխական դպրոց։ 1885-ին փակվել է։ Հետագա տասնամյակների փաստաթղթերում այլևս չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13։

Չուրուկ գյուղի ծխական դպրոց

1884-ին գործել է, ունենալով մեկ պատրաստական դասարան։ 1885-ին փակվել է։

Հետագա ճակատագիրը անհայտ է, քանի որ չի երևում շատ տասնամյակների փաստաթղթերում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12։

Պարգետ (փոքր) գյուղի ծխական դպրոց

1884-ին եղել է մի պատրաստականից կազմված արական դպրոց։ 1885-ին փակվել է։

Հետագա մի քանի տասնամյակների փաստաթղթերում այլևս չի երևում։ Գիտենք միայն, որ 1913-ին գործել է, ունենալով մեկ ուսուցիչ և 36 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12;
ՎՍՍՀ ՊԿՊԱ ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 20։

Ջերմալի (Ջիրմալի) գյուղի Հայկազյան արական դպրոց

1881-ին գործել է, ունենալով մեկ ուսուցիչ, 25 աշակերտ։ 1884-ին ունեցել է մի դասարան՝ երկու պատրաստական բաժանմունքով։ 1885-ին փակվել է։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1555, թ. 47.,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12։

Սարիղամիշ (Ներքին) գյուղի ծխական դպրոց

Արխիվային մի փաստաթղթում այս դպրոցի հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1885-ը, սակայն դա կասկածելի է։ Հավանաբար բացվել է 1886-ին, իսկ 1888-ին եղել է միդասյան արական դպրոց, ուր սովորել են 15 հոգի։ Այդ թվականի մարտին կաթողիկոսը հաստատել է նրա հոգաբարձության կազմը։

1894-ին եղել է միդասյան խառը դպրոց՝ 44 աշակերտով (21 աղջիկ)։ 1896-ին փակվել է, վերաբացվել, հավանաբար 1906-ին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 78 աշակերտ, 52 աշակերտուհի, 3 ուսուցիչ և 2 ուսուցչուհի։

1911—12 ուս. տարում եղել է քառամյա խառը դպրոց, ուր սովորել են 68 տղա, 56 աղջիկ։

1913—14 ուս. տարում ունեցել է 138 աշակերտ (69 աղջիկ)։ 1917-ին գործել է։ 1897-ից Սարիղամիշում գործել է նաև պետական տարրական դպրոց, ուր 1900-ին 42 սովորողից 29-ը եղել են հայ երեխաներ։

«Վիճ. տեղ., 1888—89 ուս. տ.», էջ 69, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 199, թ. 17—23, գ. 182, թ. 9; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 6—11; գ. 120, թ. 1։ «Արարատ», 1888, էջ 258, 1917, №1, էջ 18։

Սթանան գյուղի ծխական դպրոց

1884-ին գործել է որպես արական ծխական դպրոց՝ մի պատրաստական դասարանով։ 1885-ին փակվել է։ Հավանաբար վերաբացվել է 1889-ին, քանի որ այդ թվականի հոկտեմբերի 3-ի №494 կոնդակով կաթողիկոսը հաստատել է Սթանան գյուղի եկեղեցական ծխական դպրոցի հոգաբարձության կազմը։ Անկասկած, 1896-ին նորից փակվել է ցարական կառավարության կողմից, իսկ վերաբացման վերաբերյալ, ցավոք, տեղեկություններ չկան։ Սթանան գյուղը գտնվել է Կարսի մարզում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12, «Արարատ», 1889, ԺԲ, 684։

Ուզուն-Քիլիսա գյուղի ծխական դպրոց

1881-ին գործել է, ունենալով 24 աշակերտ։ 1884-ին փակվել է ուսուցիչ չունենալու պատճառով։ Վերաբացվել է 1890-ին Կարսի առաջնորդ Հուսիկ վարդապետի նախաձեռնությամբ։ Ժողովուրդը ջերմ մասնակցություն է ունեցել դպրոցի բացման և նյութական ապահովության ստեղծելու գործում։ 1894-ին եղել է միդասյան արական դպրոց և ունեցել է 56 աշակերտ։ 1896-ին փակված հայկական դպրոցների ցուցակում (Կովկասի փոխարքայի ֆոնդ) նշված է, որ այս դպրոցը հավանաբար պետք է մնա եկեղեցական իշխանությունների իրավասության տակ։ Այնուամենայնիվ 1896-ին այն ևս փակվում է։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։ 1911—12, 1913—14 ուս. տարիների ցուցակներում չկա։ Պաշտոնական մի փաստաթղթում (1891 թ.) Ուզուն-Քիլիսա գյուղը և նրա դպրոցը ցույց են տրված Սուրմալուի գավառում, բայց դա, մեր կարծիքով, թյուրիմացություն է, քանի որ տեղեկատու աղբյուրները ցույց են տալիս միայն մի Ուզուն-Քիլիսա, այն էլ Կարսի մարզում ու Կարսի գավառում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, գ. 120, թ. 2; ֆ. 7, գ. 1, գ. 58; ֆ. 422, գ. 3997, թ. 8; գ. 1585, թ. 47; ֆ. 12, գ. 7, գ. 865; թ. 5; «Циркуляр.... за 1901 г.», приложение №9, էջ 15։

Ուղուզլու (Ուղուզլի) գյուղի ծխական դպրոց

1884-ից առաջ գործել է. այդ թվականին փակվել է ուսուցիչ չունենալու և նյութական սղության պատճառով։

Գիտենք նաև, որ 1909-ին նորից է բացվել։ Նպաստ ստանալով Բաքվի հայ մշակութային միությունից։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց՝ 48 աշակերտով (8 աղջիկ)։

1913—14 ուս. տարում ունեցել է 81 աշակերտ (10 աղջիկ), 1917-ին՝ 140 աշակերտ (34 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 56, գ. 50, թ. 12; ֆ. 7, գ. 157, թ. 4—60; գ. 172, թ. 6—71; գ. 167, թ. 1;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 11, գ. 264, թ. 20։

Փալտրվան գյուղի ծխական դպրոց

Մինչև 1884-ը գործել է (Քե երբվանի՞ց, չգիտենք), իսկ այդ թվականին փակվել է ուսուցիչ չունենալու պատճառով։ Հավանաբար վերաբացվել է 1886-ին, իսկ 1888—89 ուս. տարում եղել է արական միդասյան դպրոց, ուր սովորել են 32 տղաներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12։
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 70։

Փիրվալի գյուղի արական ծխական դպրոց

Դպրոցի հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1884-ը, սակայն դա ճիշտ չէ, քանի որ այդ դպրոցը 1881-ին գործել է, ունենալով 25 աշակերտ, իսկ 1884-ին ունեցել է երկու նախապատրաստական դասարան, որեմն պետք է հիմնված լիներ ավելի վաղ։ 1885-ին փակվել է։ 1888-ին եղել է տղաների միդասյան դպրոց, ուր սովորել են 63 հոգի։ 1894-ին եղել է երկդասյան, բայց սովորողների թիվը իջել է 50-ի։ Այս դպրոցը 1896-ին չի փակվել, բայց նրա կյանքը նույնպես երկար չի եղել։ Նոստով փակվել է։ 1905-ին վերաբացվել է, իսկ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց՝ 67 աշակերտով (5 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում՝ 95 աշակերտ (20 աղջիկ)։ Մի այլ փաստաթղթում նշված է 103 աշակերտ։ Մասամբ պահվել է ԿՀԲԸ-ի նպաստով։ 1917-ին ունեցել է 132 աշակերտ (32 աղջիկ)։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 91, գ. 3, գ. 424; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 75; գ. 167, թ. 1; ֆ. 422, գ. 1585, թ. 47; ֆ. 13, գ. 264; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 67; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 6—11; գ. 120, թ. 2։

Ռեդիկլար Ներքին (Ռատիկլար) գյուղի ծխական դպրոց

1884-ից առաջ գործել է, այդ թվականին փակվել է, ուսուցիչ չունենալու և նյութական անբավարար պայմանների պատճառով։

Այս գյուղի դպրոցի մասին հաջորդ տեղեկությունը մենք իմանում ենք 1913—14 ուս. տարվա մի զեկուցագրից, ուր նշված է, որ այն եղել է տիրուցուական դպրոց և այդ ուսումնական տարում փակվել է՝ «նպաստ չունենալու պատճառով»։ 1914-ին նորից գործել է, ունենալով 30 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13; ֆ. 48, ց. 1, գ. 598, թ. 88; ՍՍՀՄ ՊԿՊԱ. ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 71։

Քիրս (Քերս) գյուղի ծխական արական դպրոց

1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 25 աշակերտ։ 1884-ին ունեցել է մի պատրաստական դասարան։ 1885-ին փակվել է։ Մեկ էլ երևում է 1908-ին, երբ նպաստ է ստացել ԿՀԲ ընկերությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12; «Նոր դպրոց», 1908, N3, էջ 85։

Քյուրուկդարա գյուղի ծխական դպրոց

Քյուրուկդարա գյուղը Կարսի մարզի Հայաբնակ խոշոր գյուղերից մեկն է եղել։ 1914-ին նրա բնակիչների թիվը հասել է 1425 հոգու։

Արխիվային մի փաստաթղթում նշված է, որ այս գյուղի ծխական դպրոցը հիմնվել է 1882-ին, թեև 1888-ից առաջ կազմված ցուցակներից և ոչ մեկում այդ դպրոցը չի հիշատակվում։ 1888—89 ուս. տարում գործել է, լինելով միդասյան արական դպրոց՝ 47 աշակերտով։ 1897-ին փակվել է։

Վերաբացվել է 1906-ին, իսկ 1911—12 ուս. տարում եղել է քառամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 50 տղա և 3 աղջիկ։

1913—14 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 32-ի (6 աղջիկ)։

Քյուրուկդարա գյուղում գործել է նաև պետական դպրոց, որի պատճառով էլ պետական մարմինների ու տեղի հարուստների կողմից մեծ հալածանքների է ենթարկվել հայկական դպրոցը։

Այս ամենը հաստատել է Երևանի թեմական տեսուչ, հայ նշանավոր մանկավարժ Թադևոս Խշմայլանը, որը տեղում լինելուց հետո թեմի հոգևոր վարչությանը գրավոր հայտնել է հայկական դպրոցի ծանր վիճակի մասին։ Դպրոցը, գրել է նա, «... չի սկսում ուսուցումը մեր սեփական շենքի մեջ, վախենալով հակառակորդների հարձակումներից։ Տանուտեր Աբրամը իր արբանյակներով շարունակ սպառնալիքներ է կարդում հայկական դպրոցի հոգաբարձության և ուսուցչի հասցեին։ Սրանից մոտ 10 տարի առաջ հակառակորդները տանուտերի ղեկավարությամբ հարձակվել են ծխական դպրոցի վրա և ցրել աշակերտներին...

Ժողովրդի անկեղծ համակրանքը նկ. ծխական դպրոցի կողմն է։ Նա որոշել է ամեն կերպ պահպանել այդ դպրոցի գոյությունը (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, գ. 558, թ. 58).

Իհարկե, ժողովուրդը ցանկանում էր պահպանել իր ազգային դպրոցները, լավ իմանալով, թե որքան կարևոր են դրանք իր ներկայի ու ապագայի համար։

«Кавказский календарь», 1915 թ., էջ 150; «Վիճակագրական տեղեկատու 1888—89 ուս. տ.», էջ 71; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 75; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 20; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 6—11; ֆ. 48, ց. 1, գ. 558, թ. 2 և 58։

Օլթի քաղաքի արական հոգևոր դպրոց

1884-ին գործել է, լինելով 2 նախապատրաստականից բաղկացած արական դպրոց, 1885-ին փակվել է։ Հետագա երկու տասնամյակներին այս դպրոցի ճակատագիրը մեզ անհայտ է։ Գիտենք միայն, որ 1906-ին վերաբացվել է, որպես միդասյան երկսեռ դպրոց, իսկ 1907—08 ուս. տարում ունեցել է 99 աշակերտ (46 աղջիկ)։ 1911—12 ուս. տարում՝ 96 աշակերտ (52 աղջիկ)։ Եղել է եռամյա դպրոց։ 1913—14 ուս. տարում ունեցել է 105 աշակերտ (57 աղջիկ)։

1886-ից Օլթիում գործել է նաև պետական միդասյան տարրական դպրոց, ուր 1900-ին եղած 108 աշակերտներից 89-ը եղել են հայեր։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 11—13; գ. 182, թ. 12; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 6—11; գ. 492, թ. 118; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 8; գ. 2018, թ. 46; ֆ. 12, գ. 11, գ. 264, թ. 20; «Циркуляр... за 1901 г.», էջ 20—21։

Օխնագուլի գյուղի ծխական դպրոց

1884-ից առաջ գործել է, իսկ այդ թվականին փակվել է ուսուցիչ չունենալու կամ նյութական նեղության պատճառով։

Այս դպրոցի մասին այլ տեղեկություն չունենք, բացի նրանից, որ 1913—14 ուս. տարում գործել է, լինելով եռամյա խառը դպրոց, ուր սովորել են 50 հոգի (12 աղջիկ), 1917-ին՝ 95 աշակերտ (33 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 13; ֆ. 7, գ. 172, թ. 6—11; գ. 167, թ. 1—56; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 20։

Օրթաքեղիկլար գյուղի ծխական դպրոց

1884-ին ունեցել է մի պատրաստական դասարան, եղել է արական ծխական դպրոց։ 1885-ին փակվել է։

Հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1906-ին, երբ այն վերաբացվել է։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց՝ 37 աշակերտով (5 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում՝ 33 աշակերտ (8 աղջիկ), 1917-ին՝ 53 աշակերտ (13 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿԳԱ, ֆ. 56, գ. 50, թ. 12; ֆ. 7, գ. 157, թ. 1—30; գ. 172, թ. 6—11; գ. 167, թ. 1—56;
ՀՍՍՀ ՊԿԳԱ, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 20։

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԳԱՎԱՌ

Ագուլիսի (Վերին) հոգևոր միջնակարգ դպրոց

Վերին Ագուլիսում ծխական դպրոց է գործել դեռևս 1849-ից։ Այդ դպրոցի հիմնադիր Հայրապետ Քալանթարի մահախոսականում ասված է.

«Նա կովկասահայ մանկավարժության առաջին ռահվիրաներից մեկն էր։ Երկար տարիներ գործել է մանկավարժական ասպարեզում. նախ՝ Վերին Ագուլիսում, ապա Բաքվում և ունի մեր երկրում բազմաթիվ աշակերտներ։

Հանգուցյալը 1849 թվականին վերադառնալով Էջմիածնի ժառանգավորաց դպրոցից, հիմնում է դպրոց և մտցնում առաջին անգամ դասարանական նստարաններ և սեղաններ դպրոցի մեջ, գործադրելով ուսուցման նոր, ավելի դյուրամատչելի եղանակներ։ Նա կարողանում է ոգևորություն մտցնել դպրոցական գործի մեջ և հավաքում է իր ուսումնարանում մինչև 80 աշակերտ» («Նոր դպրոց», 1911, №11—12, էջ 31)։

Այնտեղ ասված է նաև, որ Քալանթարը «1862-ին հիմք է դնում օրիորդական դպրոցի»։

Նույն մահախոսականում կարդում ենք.

«Եվ որովհետև Ագուլիսում չկար նաև տղաների ուսումնարան, ուստի Հայրապետ Քալանթարը ձեռնարկեց և այդպիսի դպրոցի հիմնարկության, որը բացեց 1864 թվի փետրվար ամսից» (նույն տեղը)։

Միևնույն անձնավորության մասին գրված նույն մահախոսականի այս հակասական տվյալներից կարելի է եզրակացնել միայն, որ Քալանթարի՝ 1849-ին բացած արական դպրոցը ինչ-ինչ պատճառներով փակվել է և վերաբացվել 1864-ին։

Հայտնի է նաև, որ դեռևս 1850-ին կաթողիկոս Ներսես Աշտարակեցին հատուկ կոնդակով թույլ է տվել Վ. Ագուլիսի Թովմա առաքյալի վանքում բանալ հոգևոր դպրոց, սակայն դպրոցի բացումը ձգձգվել է (գուցե այն պատճառով, որ այդ վանքում գործել է ուսուցական առևտրական ուսումնարան, իհարկե, Վ. Ագուլիսի վաճառականների ցանկությամբ)։ Կարող է պատահել նաև, որ Աշտարակեցու թույլատրած դպրոցը հենց Քալանթարի հիմնած դպրոցն է եղել և փակվել է՝ վանքում առևտրական դպրոց հիմնելու պատճառով։

Այլ, ավելի հաստատուն տվյալների համաձայն, Վերին Ագուլիսի ծխական, ապա միջնակարգ հոգևոր ուսումնարանը բացվել է 1867-ի սեպտեմբերին՝ թեմական տեսուչ, հայ նշանավոր գրող Պերճ Պռոշյանի անմիջական ու ակտիվ մասնակցությամբ։ Ուրեմն Քալանթարի դպրոցն ու այս դպրոցը իրար հետ կապ չեն ունեցել, մանավանդ որ, ըստ մահախոսականի, Քալանթարի դպրոցը շարունակել է գործել մինչև 1870 թվականը։

Կարելի է կարծել նաև, որ Քալանթարի դպրոցը կրել է մասնավոր բնույթ։

Նոր բացված դպրոցի կանոնադրությունը գրել է ինքը՝ Պռոշյանը։ Կանոնադրության համաձայն դպրոցը պետք է ունենար՝ նախակրթարան (այստեղ ուսման տարիների թիվը անորոշ էր՝ մինչև երեխաները ձեռք կբերեին այնքան գիտելիքներ, որ կարողանային անցնել առաջին երկրորդ և երրորդ դասարաններ)։ Յուրաքանչյուրում ուսումը երկու տարի էր։ Այն ժամանակվա պայմաններում սա փաստորեն միջնակարգ դպրոց էր, որպիսին և պաշտոնապես համարվում է հետագայում։ Ուսումնական դասընթացը բավականաչափ ընդարձակ է եղել։ Առաջին տարում այնտեղ սովորել են 110 հոգի։ 1871-ին ունեցել է 5 ուսուցիչ, 120 աշակերտ, 1881-ին՝ 7 ուսուցիչ, 125 աշակերտ։ 1885-ին փակվել է, վերաբացվել՝ 1886-ին։ 1888-ին եղել է երկդասյան տղաների դպրոց՝ 92 աշակերտով։ 1894-ին ունեցել է 128 աշակերտ։ 1896-ին նորից է փակվել, վերաբացվելով 1905-ի վերջերին՝ որպես երկսեռ դպրոց։ Մինչև վերաբացումը հայկական դպրոցի փոխարեն Վ. Ագուլիս գյուղում բացված է եղել պետական արական դպրոց, որը գործել է նաև հետագա տարիներին։ Հայկական դպրոցը 1907—08 ուս. տարում ունեցել է 177 աշակերտ (94 աղջիկ)։ 1911-ին մեծ շուրջ նշվում է այս դպրոցի 44-ամյակը։ Աշակերտներն ու աշակերտուհիները հայերեն և ռուսերեն լեզուներով արտասանել են ուրախավորներ ու արձակ հատվածներ։ Տեղի է ունեցել հրավառություն։ 1913—14 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 164-ի։ 1908—09 ուս. տարուց եղել է երկդասյան դպրոց՝ ունենալով 3 բաժանմունք։ 1915-ին գործել է։ 117-ին խոշոր գումարներ է տուցել որպես նվեր։ Ունեցել է 157 աշակերտ (87 աղջիկ)։

«Մեղու Հայաստանի», 1858, №29; Պ. Պռոշյանց «Վերին Ագուլյաց երկու տեսակ ուսումնարանների բացվելը և կանոնադրությունը». Մոսկվա, 1868 թ.; «Արարատ»,

1871, ԺԼ, էջ 375—376, 1917, էջ 274; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 496, թ. 10; ֆ. 56, գ. 71, թ. 7; գ. 50, թ. 64; գ. 199, թ. 23; գ. 182, թ. 8; գ. 111, թ. 11;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարի», էջ 46; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 20; գ. 8717, թ. 8; գ.1585, թ. 50; ֆ. 12, գ. 1870, թ. 4; գ. 885, թ. 32 և 77; «Նոր դպրոց», 1909, № 2, էջ 85, 1911, № 11—12, էջ 31։

Ագուլիսի (Վերին) Հայկանուշյան օրիորդաց ուսումնարան

Վերին Ագուլիսի տղաների դպրոցի կապակցությամբ արդեն ասվեց, որ, ըստ Հայրապետ Քալանթարի մասին հրապարակված մահախոսականի, այդ անխոնջ մանկավարժը Ագուլիսում «1862 թվին հիմք է դնում օրիորդաց դպրոցի։ Այդ ժամանակ հայ իրականության մեջ իգական սեռի համար դպրոցներ չկային։

«Իգական սեռի կրթությունն առաջին անգամից խորթ էր թվում ազուլիսցիներին, բայց շատ շուտով նա ժողովրդականություն ստացավ, և նոր դպրոցի նկատմամբ առաջացավ ջերմ համակրանք և կազմակերպվեց օգնություն։ Այդ դպրոցի առաջադիմությամբ սկսեցին հետաքրքրվել նաև Ագուլիսից դուրս տեղերում, և գալիս էին այցելուներ ծանոթանալու դպրոցի կազմակերպության և աշակերտուհիների պատրաստության հետ» («Նոր դպրոց», 1911, № 11—12, էջ 31)։

Այսպես է գրված կովկասահայ աղջիկների դպրոցների առաջնեկի և նրա հիմնադրի մասին։ Ասված է նաև, որ նրա հիմնադրած տղաների և աղջիկների դպրոցները գոյություն են ունեցել մինչև 1870 թվականը՝ «Երբ Հայրապետ Քալանթարը իր ամուսնու (կնոջ.— Ս. Խ.) հետ հրավիրվեց ուսուցչական պաշտոնի Բաքվի մարգասիրական ընկերության ուսումնարանում» (նույն տեղը, էջ 31)։

Ինչ խոսք, հարգանքի և երախտագիտության խոր զգացումով պիտի հիշել այն մարդուն, որը, արհամարհելով տիրող խավարը և սնոտիապաշտ շրջապատը, հայ իրականության մեջ հայ աղջիկների համար բաց է արել առաջին ազգային դպրոցը։ Սակայն մեզ թվում է, որ Հ. Քալանթարի բացած դպրոցները մանավոր բնույթ են կրել, քանի որ 1867 թ. հոկտեմբերի 20-ին մեծ հանդիսավորությամբ Վերին Ագուլիսում բացվել է Հայկանուշյան օրիորդաց նշանավոր ծխական դպրոցը՝ Պերճ Պոռչյանի և ուրիշների եռանդուն ջանքերով։ Այդ դպրոցի կանոնադրությունը ևս մշակել է հայ մեծ վիպասանն ու մանկավարժը։ Եթե Քալանթարի հիմնած դպրոցները ծխական լինեին, ապա հազիվ թե հարկ լիներ Վերին Ագուլիսում նոր ծխական դպրոցներ բացել։ Հավանաբար հենց այս նոր դպրոցների բացման պատճառով էլ Քալանթարի դպրոցները դադարել են գործելուց։

Հայկանուշյան օրիորդաց դպրոցի առաջին տեսուչու պաշտոնում

բնաբվել է տիկին Եղիսաբեթ Տեր-Մկրտչյանը, իսկ նրա օգնական՝ Թագուհի Հախնազարյանը։ Այս հայ կանանց անունները ևս պետք է երախտագիտությամբ հիշել, քանի որ այն ժամանակներում պարզապես խիզախություն էր հիմնել ու պահել աղջիկների դպրոց։

Աղջիկների դպրոցը առաջին տարին ունեցել է 46, 1873-ին՝ 88, 1881-ին՝ 97 աշակերտուհի։

1885-ին փակվել է ցարական կառավարության կողմից, իսկ 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է երկդասյան դպրոց, ուր սովորել են 105 աղջիկ (ազնվականների՝ 2, ատիճանավորների՝ 3, վաճառականների՝ 66, արհեստավորների՝ 26, երկրագործների՝ 8)։ Թոշակ են վճարել 69, ձրի են սովորել 36 հոգի։

Դպրոցը 1894-ին ունեցել է 152 աշակերտուհի։ 1896-ին փակվել է երկրորդ անգամ, վերաբացվել է 1906-ին, 1908-ին եղել է խառը դպրոց, ուր սովորել են 182 տղա և աղջիկ։ Ունեցել է 5 բաժանմունք։ Ա բաժանմունքում պարապել են «դասարանական» սիստեմով, մյուսներում՝ առարկայական։

Այս դպրոցի երկրորդ փակումից (1896 թ.) հետո Վերին Ագուլիսում բացվել է աղջիկների պետական դպրոց, որը գործել է մինչև 1905 թ.։

«Նոր դպրոց», 1903, № 2, էջ 83—87, 1911, № 11—12, էջ 31։
«Արարատ», 1871, ԺԼ, էջ 375—376, Պ. Պոռչյան «Վերին Ագուլյաց երկու տեղից ուսումնարանների բացվելը և կանոնադրությունքը»։

Ագուլիսի (Ներքին) կամ Դաշտ գյուղի արական ծխական դպրոց

Հիմնվել է 1857-ի մայիսի 2-ին (մի այլ փաստաթղթով՝ 1856-ին)։ 1873-ին ունեցել է 80, 1876-ին՝ 36, 1881-ին՝ 45 աշակերտ։ 1885-ին փակվել է, 1866-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է միդասյան ուսումնարան՝ 4 ուսուցչով և 39 աշակերտով։ Ավանդվել են կրոն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն և գծագրություն։ 1895-ին ունեցել է 2 բաժանմունք՝ արական (44 աշակերտ) և իգական (38 աշակերտուհի)։ Երկրորդ անգամ փակվել է 1896-ին, վերաբացվել է 1905-ի վերջերին, որպես երկսեռ երկդասյան դպրոց։ Մինչև վերաբացումը, նրա փոխարեն Ն. Ագուլիս գյուղում բացված է եղել և գործել է պետական դպրոց։

Հայկական դպրոցը 1908-ին ունեցել է 5 բաժանմունք։ 1909-ին տոնվել է դպրոցի 50-ամյակը։ Այդ ժամանակ եղել է երկսեռ խառը դպրոց։ 1912-ին եղել է եռամյա խառը դպրոց 52 աշակերտով (28 աղջիկ)։ 1915-ին գործել է, ունենալով 3 ուսուցիչ և 66 աշակերտ։ 1917-ին՝ 79 աշակերտ։ Մեկական դպրոցի երկրորդ փակումից հետո Ներքին Ագուլիսում բացվել է միդասյան պետական դպրոց, որը, ըստ երևույթին, գոյություն է ունեցել մինչև 1905 թվին։

«Մեղու Հայաստանի», 1858, № 50, էջ 395; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 1, գ. 450, թ.

5—12; ֆ. 50, գ. 43, թ. 16; գ. 50, թ. 61—64; գ. 111, թ. 77; գ. 199, թ. 17—23; գ. 18, թ. 8; գ. 492, թ. 116, ֆ. 7, գ. 172, թ. 6—11, «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 45; «Նոր դպրոց», 1908, №5, էջ 89; 1909, №5, էջ 83; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46; գ. 8717; թ. 6; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 150, գ. 283, թ. 56։

Ագուլիսի (Ներքին) կամ Դաշտ գյուղի օրիորդաց դպրոց

1881-ին ունեցել է 3 ուսուցիչ, 40 աշակերտուհի։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։

1888-ին եղել է միդասյան իգական դպրոց՝ 31 աշակերտուհիներով։ 1894-ին ունեցել է 38 աշակերտուհի։ 1896-ին փակվել է և վերաբացվել 1905-ին՝ տղաների դպրոցի հետ միասին։ 1911—12 ուս. տարում այնտեղ սովորել են 24 աղջիկներ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 50; ֆ. 12, գ. 865, թ. 77; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 47; «Տեղեկագիր Երևանի թեմի եկող. ծխ. դպր.», ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 13; ֆ. 56, գ. 111, թ. 77։

Ագա (Վերին) գյուղի (Օրդուբադի գավառ) ծխական դպրոց

Պաշտոնական մի տեղեկագրում հիմնադրման տարեթիվը նշված է 1892-ը, սակայն դա ճիշտ չէ, քանի որ այս դպրոցը 1873-ին և 1876-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ, 27 աշակերտ, իսկ 1881-ին՝ 30 աշակերտ, 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1892-ին։ 1895-ին ունեցել է 60 աշակերտ (2 աղջիկ)։ 1986-ին փակվել է երկրորդ անգամ (նրա փոխարեն բացվել է պետական դպրոց)։ Վերաբացվել է 1905-ին։ 1913-ին եղել է 87 աշակերտ, 1917-ին՝ 74 (12 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 1, գ. 456, թ. 5—13; ֆ. 56, գ. 43, թ. 15; գ. 50, թ. 62; գ. 71, թ. 7; ֆ. 7, գ. 172, թ. 6—11; գ. 120, թ. 2; գ. 167, թ. 1։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46; գ. 8717, թ. 9; գ. 18760, թ. 4; ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 31 և 77; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 150, գ. 283, թ. 56։

Ալահի գյուղի ծխական դպրոց

Նախիջևանի գավառի Ալահի գյուղի բնակիչները 1893 թ. նոյեմբերի սկզբին որոշել են իրենց գյուղում բաց անել միդասյան ծխական դպրոց։ Ալահենցիների այդ որոշումը համարելով «հրաշք», Հին Նախիջևանի վիճակի հոգևոր փոխանորդը հատուկ նամակով դիմել է Երևանի թեմական տեսչին, խնդրելով հաստատել հիշյալ գյուղի դպրոցը և այնտեղ հրավիրված ուսուցչին։ Թեմական տեսուչը դեկտեմբերի 15-ին հաստատել է և՛ մեկը, և՛ մյուսը։ Դպրոցը բացվել է և սկսել է գործել։ Սակայն շատ չանցած տեղի է ունեցել նոր հրաշք։ Նույն վիճակի հոգևոր փոխանորդը,

որ ալահենցիների այդ որոշումը «հրաշք» էր համարում, փորձել է փակել այդ դպրոցը։ Ալահենցիները դիմադրել են և 1894-ի մարտի 17-ին նոր որոշում են ընդունել բացված դպրոցը պահելու մասին, խոստանալով իրենց վրա վերցնել նրա բոլոր ծախսերը։ Այդ որոշումն ուղարկելով թեմական տեսչին, վիճակի փոխանորդը միաժամանակ պահանջել է մերժել այն։ Նա գրել է, որ դեռ երեք տարի առաջ Բիստ և Ալահի գյուղերի բնակիչները որոշել են մի միացյալ կենտրոնական դպրոց պահել Բիստ գյուղում, սակայն ինքը «չիմանալով» այդ մասին, իր առաջին նամակով խնդրել է հաստատել Ալահի գյուղում դպրոց բաց անելու որոշումը։ Մինչդեռ, գրել է նա, «Ալահենցիք երեսուն տուն ժողովուրդ լինելով բնավին չեն կարող դպրոց պահել»։ Իրենք, գյուղի բնակիչները՝ 32 հոգու ստորագրությամբ խոստանում էին հոգալ դպրոցի բոլոր ծախսերը, իսկ նրանց հոգևոր պետը, որն ի պաշտոնե կոչված էր ամեն կերպ խրախուսել ու պաշտպանել հայ համայնքի այնքան բուռն արտահայտված կրթական ձգտումները, գտնում էր, որ նրանք դպրոց պահել չեն կարող և պետք է այն փակել։

Եվ, հավանաբար, այդպես էլ եղել է, քանի որ Ալահի գյուղի նորաբաց դպրոցը այլևս չի երևում հետագա շատ տարիների փաստաթղթերում։ Հոգևոր պետի ջանքերով Ալահի գյուղի երեխաները զրկվել են իրենց հարազատ գյուղի դպրոցում կրթություն ստանալու հնարավորությունից։ Եվ եթե նրանցից ոմանք կարող էին հաճախել Բիստ գյուղի դպրոցը, ապա մյուսները պետք է շարունակեին խարխափել տգիտության ճիրաններում։

Ալահի գյուղի դպրոցը մեկ էլ երևում է 1917-ին։ Այդ ժամանակ նա ունեցել է եռամյա դասընթաց, 2 ուսուցիչ և 50 աշակերտ (17 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 21, թ. 1—8; գ. 167, թ. 1—56։

Ալլապատ գյուղի ծխական դպրոց

Հին Նախիջևանի վիճակի Ալլապատ գյուղը 1909-ին ունեցել է հայկական եկեղեցական ծխական երկսեռ դպրոց, եռամյա դասընթացով։ Սովորել են 44 տղա, 12 աղջիկ։ Նույն թվականին նրա շենքը հանձնվել է պետական միդասյան դպրոցին, որը գոյություն է ունեցել մինչև 1917 թվականը։ 1918-ին ազգայնացվել է, ունենալով 51 աշակերտ։

Ինչպես երևում է, Ալլապատի հայկական դպրոցը գործել է նաև 1909-ից առաջ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 544, թ. 33; ֆ. 48, գ. 577, թ. 2; ֆ. 19, ց. 1, 1521, թ. 2—7; գ. 380, թ. 47։

Աստապատ (Թազաքենդ) գյուղի ծխական դպրոց

Թազաքենդ (Աստապատ) գյուղը Հին Նախիջևանի ամենախոշոր հայաբնակ գյուղերից մեկն էր, որի բնակիչների թիվը 1915-ին եղել է 3592 հոգի։

Աբխիզային փաստաթղթերում Աստապատի ծխական դպրոցի հիմնադրման տարբեր թվականներ են ցույց տրված։ Մեկում նշված է 1877-ը, երկրորդում՝ 1886-ը և այլն։ Սակայն այդ թվականները հավաստի չեն, քանի որ Աստապատի դպրոցը դեռևս 1873-ին գործել է, ունենալով 24 աշակերտ (տես. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 206)։ 1881—84 թվականներին նույնպես գործել է, իսկ 1885-ին մտել է փակված հայ դպրոցների ցուցակում։ Վերաբացվել է 1886-ի վերջերին։ 1888-ին եղել է միդասյան արական դպրոց՝ 61 աշակերտով և 2 ուսուցչով։ 1895-ին ունեցել է 30 աշակերտ։ 1896-ին փակվել է ցարական կառավարության կողմից, վերաբացվելով միայն 1905-ին։ 1912—13 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ունենալով 2 ուսուցիչ և 115 աշակերտ (32 աղջիկ)։ Նույն թիվն է ցույց տրված 1914-ին, 1917-ին՝ 154 աշակերտ (62 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 5—13; ֆ. 56, գ. 23, թ. 206; գ. 111, թ. 83; գ. 192, թ. 46—47; ֆ. 7, գ. 167, թ. 1—56; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 48; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 56;

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, 1585, թ. 46, գ. 3997, թ. 8; գ. 8717, թ. 9; գ. 18760, թ. 4; ֆ. 12, գ. 865, թ. 31 և 76; ֆ. 13, գ. 264, թ. 28; «Кавказский календарь 1915 г.», վիճ. բաժին, էջ 185։

Բիստ գյուղի (Գողթնա գործակալություն) ծխական դպրոց

Բացվել է 1892-ին։ 1895-ին մի շարք ցուցակներում ցույց է տրված որպես միդասյան ծխական դպրոց՝ 33 աշակերտով։ 1896-ին փակվել է։ Վերաբացվել է, հավանաբար, 1905—1906 թվականներին։ Հին Նախիջևանի հոգևոր կառավարության վկայության համաձայն Բիստ գյուղի ծխական դպրոցը մինչև 1909 թվականը գործել է, ունենալով միայն 13 աշակերտ։ 1909-ին այն փակվել է, չդիմանալով 1906-ից այնտեղ բացված պետական դպրոցի մրցակցությանը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 865, թ. 31 և 77; ֆ. 422, գ. 4559, թ. 9;

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 199, թ. 17—23; ֆ. 7, գ. 120, թ. 2; ֆ. 48, ց. 1, գ. 577, թ. 2։

Գժաձոր գյուղի ծխական դպրոց

Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհուրդը 1908 թ. սեպտեմբերի 24-ին որոշել է, ի թիվս բազմաթիվ այլ դպրոցների, 200 ռ. նպաստ տալ նաև Հին Նախիջևանի գավառի Գժաձոր գյուղի ծխական դպրոցին։ Ուրեմն այդ դպրոցը պետք է բացված լինի 1907-ին (դրանից առաջ եղած փաստաթղթերում այն ցույց չի տրվում) կամ էլ 1908-ի առաջին ամիսներին։

Հետագա տարիների փաստաթղթերում ևս այդ դպրոցը մեզ չի հանդիպել։

«Նոր դպրոց», 1908, №3, էջ 85։

Գյուլթափա (նաև Քյուլթափա՞) գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 13 աշակերտ։

1891-ին ցույց է տրված որպես միդասյան արական դպրոց։ 1896-ին փակվել է և, ինչպես երևում է, այլևս չի բացվել, քանի որ չի երևում մինչև 1917 թվականը եղած փաստաթղթերից ոչ մեկում։ Հայտնի է սակայն, որ 1909-ից Գյուլթափա գյուղում գործել է պետական դպրոց, որը գոյություն է ունեցել մինչև 1917 թվականը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 204; ֆ. 48, գ. 577, թ. 2; ֆ. 19, ց. 1, գ. 1521, թ. 2—7;

ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 8։

Գոմեր (Գեմյուր) գյուղի ծխական դպրոց

Հին Նախիջևանի հայոց հոգևոր կառավարության մի գրությունից կարելի է կարծել, որ Գոմեր գյուղում ծխական դպրոց է գործել 1896-ից (այսինքն՝ հայ դպրոցների երկրորդ փակումից) առաջ։ Այդ գրության մեջ նշվում է, որ 1905-ից Գոմեր գյուղի ծխական դպրոցի շենքում է տեղավորված պետական դպրոցը։ Հավանաբար, միաժամանակ գործել է նաև ծխական դպրոցը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, գ. 577, թ. 2։

Գորադիս գյուղի (այժմ՝ Հորադիս, Ազիզբեկովի շրջան) ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1911—12 ուս. տարվա տեղեկագրում։ Նշել է երկամյա արական դպրոց, այդ տարում ունենալով միայն մեկ դասարան և 30 աշակերտ։

1916—17 թվերին Գորադիս գյուղում գործել է պետական դպրոց։ Գուցե հայկական դպրո՞ցն է վերածվել պետականի։

«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. գպ.-ի 1911—12 ուս. տ.», ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 1521, թ. 2։

Դաշտ (նաև Պարադա՞շտ, Փորադա՞շտ) գյուղի ծխական դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագիրը 1860թ. իր երկու տարբեր համարներում գրել է Օրդուբադի գավառի Դաշտ գյուղաքաղաքի հայկական դպրոցի մասին։ Այնտեղ նշված է, որ Մատթեոս կաթողիկոսը 1859 թ. դեկտեմբերի 14-ի կոնդակով հաստատել է Դաշտ գյուղաքաղաքի հայկական դպրոցի բացումը և շնորհակալություն է հայտնել պարոն Մկրտիչ Զաքարյանին՝ հիշյալ դպրոցի շենքը կառուցելու և նրա ուսուցչի վարձատրությունը իր վրա վերցնելու համար։

Հետագա տարիների փաստաթղթերում Դաշտ անունով գյուղ կամ գյուղաքաղաք մեզ չի հանդիպել։ «Կավկազսկի կալենդարը» Հին Նախիջևանի գավառում ցույց է տալիս Պարադաշտ անունով գյուղ, որը 1914-ին ունեցել է 476 հայ բնակիչ։

Արխիվային մի գործում, ուր նշված են Հին Նախիջևանի վիճակի մեջ մտնող հայկական գյուղերում 1909 թվականին գործած դպրոցները, ցույց է տրված նաև Քարադաշտ գյուղի ծխական դպրոցը։

Երևանի թեմի 1917 թ. հայ դպրոցների ցուցակում նշված է Փորադաշտ գյուղի դպրոցը։

Կարծում ենք, որ բոլոր դեպքերում միևնույն գյուղի և նրա դպրոցի մասին է խոսքը։

1859 թվականին հիմնված դպրոցը հետագա շատ տարիների փաստաթղթերում և տեղեկագրերում այլևս չի երևում։ 1909-ին եղել է երկսեռ եռամյա դպրոց, ուրեմն՝ պետք է վերբացված լինի 1906-ից ոչ ուշ։

1917-ին ունեցել է մի ուսուցիչ և 59 աշակերտ (17 աղջիկ)։

«Մեղու Հայաստանի», 1860, № № 15 և 50, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 544, թ. 30; ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56։

Երնջակի Ս. Կարապետ վանքի (Ապրակունիս գյուղի) հոգևոր ծխական դպրոց

Այս դպրոցը հիմնված պետք է լինի 1860-ական թվականների վերջերին։ Ավանդվել են կրոն, հայոց, ռուսաց և պարսից լեզուներ, թվաբանություն, երգ և վայելչագրություն։ 1871-ին ունեցել է 2 ուսուցիչ և 35 աշակերտ։

Մի շարք փաստաթղթերում դպրոցը նշված է նաև Ապրակունիս գյուղի անունով։ 1885-ին փակվել է։ Հավանաբար վերբացվել է 1889-ից ոչ շուտ, որովհետև մինչ այդ եղած ցուցակներում չի մատնանշված։ 1894-ին եղել է միդասյան արական դպրոց՝ 28 աշակերտով։ Մինչև 1895-ը գոյություն է ունեցել, սակայն այդ թվականին, ինչպես նշված է Կովկասի

կառավարչապետի գրասենյակի կողմից հայ դպրոցների փակման համար նախապատրաստված ցուցակներից մեկում, «վերբացվել է»։

Վերբացվել է 1907-ին։ 1912—13 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ, 26 աշակերտ (1 աղջիկ), 1917-ին՝ 44 աշակերտ (10 աղջիկ)։ 1895-ից Ապրակունիս գյուղում գործել է նաև պետական դպրոց, որը իր գոյությունը պահպանել է մինչև 1917 թվականը (1908-ին այնտեղ սովորել են 74 հոգի, որոնցից 54 հայեր)։

«Արարատ», 1871, ժԶ, էջ 360—361; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 4559, թ. 9; գ. 1, գ. 511, թ. 21—22; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 77; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 4; գ. 192, թ. 44—45; ֆ. 7, գ. 120, թ. 2; ֆ. 19, գ. 953, թ. 3—11; գ. 1521, թ. 2—7։

Զնաբերդ (Ազնաբերդ, Ազնաբուրդ) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մի փաստաթղթում նշված է 1881-ը, սակայն դա ճիշտ չէ, քանի որ այդ դպրոցը 1873-ին և 1876-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 22 աշակերտ։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերբացվել։ 1887—88 ուս. տարում գործել է, 1890—91 ուս. տարում եղել է միդասյան արական դպրոց, ուր սովորել են 25 տղաներ։

Մինչև 1896-ի մարտ ամիսը գործել է, իսկ հետո փակվել կառավարության կողմից։ Նրա փոխարեն բացվել է պետական դպրոց, որը գործել է մինչև 1917 թվականը։ Այդ դպրոցում 1908-ին սովորել են 50 հոգի (բոլորը հայեր)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 207; գ. 43, թ. 15; գ. 71, թ. 6; գ. 50, թ. 61—64; գ. 111, թ. 73; ֆ. 7, ց. 1, գ. 43, թ. 13; ֆ. 19, գ. 953, թ. 9; գ. 1521, թ. 5; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 8; ֆ. 12, ց. 7, գ. 866, թ. 159; «Մուրճ», 1890, № 7, էջ 1021։

Թմբուլ գյուղի արական ծխական դպրոց

Բացվել է 1868-ին՝ նույն գյուղի Ս. Հովհաննես եկեղեցու գավթում։ 1870-ին ունեցել է 35 աշակերտ, 1 ուսուցիչ։ 1881-ին գործել է, ունենալով 30 աշակերտ։ 1885-ին փակվել է։ 1886-ին եղել է միդասյան դպրոց Ա, Բ, Գ բաժանմունքներով։ 29 աշակերտից 10-ը մնացել են նույն բաժանմունքներում, ավարտել են 4 հոգի։ 1894-ին ունեցել է 23 աշակերտ։ Դպրոցը նորից փակվել է 1896-ին։ Չգիտենք, թե երբ է վերբացվել, բայց հայտնի է, որ այն 1917-ին գործել է։

«Արարատ», 1870 թ., էջ 380—409; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 505, թ. 76; ֆ. 422, գ. 1552, թ. 46; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 53, գ. 23, թ. 202; գ. 50, թ. 61—64; գ. 199, թ. 17—23; ֆ. 7, գ. 120, թ. 1; «ՎԻՀ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 50 և այլն; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 365, թ. 76։

Խալխալ գյուղի արական ծխական դպրոց

1871-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 25 աշակերտ։ Հավանաբար երկար տարիներ փակ է եղել և վերաբացվել է միայն 1912-ին, ունենալով 31 աշակերտ (16 աղջիկ)։ Նույնքան աշակերտ է ցույց տրված 1914-ին։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22, ֆ. 13, գ. 264, թ. 28,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 4; գ. 192, թ. 40—41, ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 56։

Հանդամեջ (Ներքին) գյուղի իգական ծխական դպրոց

Նախիջևանի գավառի Ներքին Հանդամեջ գյուղի հասարակությունը 1893 թ. հոկտեմբերի 7-ի համախոսական-դիմումով Երևանի թեմական տեսչին հայտնել է, որ իրենց գյուղում դպրոց չկա, ուստի տղաներին ուղարկում են զանազան դպրոցներում սովորելու, «բայց իգական սեռի մանկտիք մնացած են զուրկ դաստիարակությունից, որը ցավալի երևույթ է ապագային»։

Դիմումի մեջ ասված է նաև, որ իրենք վարձել են Վերին Ագուլիսի բնակչուհի՝ «տիբերոդ կարգի վարժուհի տիկին Մարթա Դասպարյան—Նարինեանցին», որը իրենց աղջիկներին սովորեցնում է «ձեռագործություն և ընտանեկան դաստիարակություն»։ Նրանք թեմական տեսչից խնդրել են հաստատել իրենց դպրոցը, ուսուցչուհուն և ընտրված հոգաբարձուհուն։

Դպրոցը, իհարկե, բացվել ու գործել է, բայց, ինչպես երևում է պետական իշխանության մարմիններից ծածուկ, քանի որ այն չի մտել հիշյալ մարմինների կողմից 1895-ի սկզբներին կազմված հայ դպրոցների ընդհանուր ցուցակում։ Երևանի նահանգապետը ևս իր մի գրությամբ Կովկասի կառավարչապետին հայտնել է, որ մի շարք գյուղերի հայկական ծխական դպրոցներ (այդ թվում նաև Ներքին Հանդամեջ գյուղի դպրոցը) բացվել են նշված ցուցակները կազմելուց հետո, այսինքն՝ 1895-ի վերջերին։

1896-ին այս դպրոցը ևս փակվել է։ Թեմի դպրոցների հետագա տարիների ցուցակներում այն չի հիշվում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 49, թ. 1;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 868, թ. 159։

Հանդամեջ (Ներքին) գյուղի արական ծխական դպրոց

«Մշակ» լրագիրը 1886-ի ապրիլին գրել է.

«Հանդամեջ գյուղից մեզ գրում են... այստեղի ժողովուրդը վաղուց է, որ ուզում է ունենալ մի այնպիսի քահանա, որը կարողանար համ քահանայություն անել, համ էլ՝ ուսուցչություն գյուղի ուսումնարանում, քանի որ գյուղացիք անկարող են առանձին վարժապետ վարձել...

Այժմ, ինչպես երևում է, գյուղի ուսումնարանը դեռ երկար ժամանակ փակված կմնա, քանի որ Օրդուբադի նոր քահանան սարքված կլինի քահանայություն անել և Հանդամիջի ժողովրդի համար»։

Այս տողերը վկայում են, որ Հանդամեջ գյուղում ծխական դպրոց է գործել 1886 թվականից տարիներ առաջ և փակվել է գոյության միջոցների պակասության պատճառով։ Հավանաբար այդ դպրոցը երկար տարիներ փակված է մնացել և վերաբացվել է միայն 1895-ի վերջերին, իսկ 1896-ին դարձյալ փակվել է։

1905 թվականից վերաբացված և հետագայում գործած հայ դպրոցների ցուցակներում Ներքին Հանդամեջ գյուղի դպրոցը այլևս մեզ չի հանդիպել։ Այնտեղ չի գործել նաև պետական դպրոց։

«Մշակ», 1886, 29 ապրիլի, էջ 2, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 49, թ. 1, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց 7, գ. 866, թ. 159։

Ղարախանբեկլու գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1871-ին գործել է, ունենալով մի ուսուցիչ և 25 աշակերտ։ 1873-ին ունեցել է 20, 1876-ին՝ 19 աշակերտ։

Հետագա շատ տարիների փաստաթղթերում այս դպրոցն այլևս չի երևում։ Հայտնի է սակայն, որ հայ դպրոցների երկրորդ ընդհանուր բացումը թույլ տալուց անմիջապես հետո, այսինքն՝ 1905-ին, այս դպրոցը վերաբացվել է։ Դրանից կարելի է ենթադրել, որ այն մինչև 1986 թ. գործել է։

1911—12 ուս. տարում ունեցել է ընդամենը մի դասարան, ուր սովորել են 30 տղա և 10 աղջիկ։ 1912—13 ուս. տարում աշակերտների ընդհանուր թիվը հասել է 63-ի (26 աղջիկ) Նույն թիվն է ցույց տրված նաև 1914-ին։ 1917-ին ունեցել է եռամյա դասընթաց, մի ուսուցիչ և 60 աշակերտ (23 աղջիկ)։

Ղարախանբեկլուն եղել է Նախիջևանի գավառի խոշոր հայաբնակ գյուղերից մեկը։ 1915-ին ունեցել է 1172 բնակիչ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 4; գ. 43, թ. 15; գ. 71, թ. 6; գ. 23, թ. 203; գ. 192, թ. 34։ ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—58, ՎՍՍՀ ՊԿՊԱ, 422, գ. 511, թ. 21—22, գ. 8717, թ. 3։ «Տեղեկագիր Երևանի թեմի եկեղեցական ծխական դպրոցների 1911—12 ուս. տարվա»։

Ղուզնուտ գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1887-ին կազմված մի ցուցակում։ Ցույց է տրված որպես միդասյան ծխական դպրոց։ 1891-ին գործել է։

Հետագա տարիների փաստաթղթերում չի հանդիպում, հավանաբար այն պատճառով, որ 1896-ից Ղուզնուտ գյուղում բացված է եղել պետական դպրոց։ Ուրեմն նույն թվականին էլ բոլոր հայ դպրոցների հետ միասին փակվել է նաև Ղուզնուտի ծխական դպրոցը։ Պետական դպրոցը գործել է մինչև 1917 թվականը, ունենալով 96 աշակերտ (բոլորը հայեր)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 11, գ. 140, թ. 64; ֆ. 422, գ. 3997, թ. 8;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 953, թ. 3—11; գ. 1521, թ. 2—7։

Մեծոփ (Բաղամլու) գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 9 աշակերտ։

Հետագա շատ տարիների ու տասնամյակների փաստաթղթերում և տեղեկագրերում այս դպրոցը մեզ այլևս չի հանդիպել։ «Նոր դպրոց» ամսագրից իմանում ենք միայն, որ ԿՀԲ ընկերությունի խորհուրդը 1908 թ. սեպտեմբերի 24-ի որոշմամբ նպաստ է հատկացրել նաև Հին Նախիջևանի գավառի Բաղամլու գյուղի ծխական դպրոցին։ Ուրեմն այն պետք է բացված լինի 1907-ին կամ էլ 1908-ի սկզբին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 208, «Նոր դպրոց», 1908, N 3, էջ 35։

Մնսրոպավան գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է, հավանաբար, 1907-ին։ Հաստատ հայտնի է, որ այդ թվականին նրա համար կառուցվել է հատուկ շենք։

1911—12 ուս. տարում եղել է միայնյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 20 տղա և 4 աղջիկ։ 1913—14 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 27-ի (5 աղջիկ), 1917-ին բարձրացել 37-ի (14 աղջիկ)։

«Արարատ», 1907, N11, էջ 869,
«Տեղեկագիր Երևանի թեմի եկեղեցական ծխական դպրոցների 1911—12 թ.»
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 9; գ. 167, թ. 1—56; ֆ. 56, գ. 498, թ. 19։

Ցարդմջա (նաև Երամչա՛) գյուղի ծխական դպրոց

1872-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 20 աշակերտ, 1881-ին՝ 1 ուսուցիչ, 18 աշակերտ։ Հետագա շատ տարիների փաստաթղթերում այս դպրոցն այլևս չի երևում։

«Նոր դպրոց» ամսագրից իմանում ենք, որ ԿՀԲ ընկերության խորհուրդը 1906 թ. սեպտեմբերին նպաստ է հատկացրել նաև Երամչայ (Նույն Ցարդմջան է) գյուղի ծխական դպրոցին։

Ցարդմջա գյուղի ծխական դպրոցը 1909-ին գործել է, լինելով երկսեռ համայնք դպրոց։

20-րդ դարի սկզբներից այստեղ գործել է նաև պետական դպրոց, որը 1917-ին ունեցել է 48 աշակերտ (բոլորը հայեր)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 205, գ. 544, թ. 35, ֆ. 57, գ. 284, թ. 17; ֆ. 48, գ. 177, թ. 2; ֆ. 19, գ. 380, թ. 47; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1555, թ. 46; «Նոր դպրոց», 1909, N 3, էջ 85։

Նազարաբադ (Նազարապատ) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ այդ դպրոցը հանդիպում է 1905—1906 թվականներին բացված ու վերաբացված դպրոցների ցուցակում։ 1908-ին նպաստ է ստացել ԿՀԲ ընկերությունից։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է, քանի որ այդ դպրոցին այլևս չենք հանդիպում համապատասխան փաստաթղթերում ու տեղեկագրերում։ Հավանաբար պատճառն այն է, որ 1907—1917 թվականներին Նազարաբադ գյուղում գործել է պետական միդասյան դպրոց։ Վերջինս 1917-ին ունեցել է 31 աշակերտ (բոլորը հայեր)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 8; «Նոր դպրոց», 1908, N3, էջ 85;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 953, թ. 3—11; գ. 1521, թ. 2—7; գ. 380, թ. 47։

Նախիջևանի (Հին) արական հոգևոր դպրոց

Հիմնվել է 1850-ական թվականներին։ Հավանաբար հետո փակվել է և նորից բացվել 1869-ին։ 1871-ին ունեցել է 60, 1876-ին՝ 45, 1881-ին՝ 46 աշակերտ։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է միդասյան դպրոց՝ 66 աշակերտով։ 1891-ին՝ երկդասյան դպրոց։ 1894-ին արական և իգական միացյալ դպրոցը ունեցել է 130 սովորող։ 1896-ին նորից է փակվել, վերաբացվելով 1905-ին։ 1907-ին և 1908-ին ունեցել է 5 ուսուցիչ, 1 ուսուցչուհի, 116 աշակերտ և 88 աշակերտուհի։ 1913-ին՝ 10 ուսուցիչ, 266 աշակերտ (140 աղջիկ), մի այլ փաստաթղթում՝ 280 աշակերտ։ 1915-ին գործել է։ 1917-ին սովորողների թիվը իջել է 209-ի (93 աղջիկ)։

1837-ից Նախիջևանում գործել է նաև պետական գավառական դպրոց, որը 1879-ին դարձել է քաղաքային ուսումնարան։ 1910-ին այնտեղ սովորել են 150 հայ երեխաներ։

«Մեղու Հայաստանի», 1859, N 11, էջ 83—84։
ՀՍՍՀ ԿԿԳԱ, ֆ. 7, ց. 1, գ. 43, թ. 3; ֆ. 56, գ. 32, թ. 3; գ. 71, գ. 50, թ. 61—64; գ. 111, թ. 714; գ. 999, թ. 17/23; գ. 192, թ. 38; գ. 544, թ. 31, գ. 182, թ. 14; ֆ. 19, գ. 456, թ. 5—13։
«Վիճ. տեղեկ. 1888—89 ուս. տարի», էջ 45։ ՎՍՍՀ ԿԿԳԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21; գ. 1585, թ. 46; գ. 3997, թ. 7; գ. 8717, թ. 6; գ. 2018, թ. 34; ֆ. 12, գ. 865, թ. 26; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28, «Նոր դպրոց», 1912, N 15—16, էջ 39։

Նախիջևանի եկեղեցական ծխական իգական երկդասյան դպրոց

Դպրոցը հիմնվել է 1872-ին, որպես իգական դպրոց։ 1873-ին ունեցել է 1 ուսուցիչ, 20 աշակերտուհի, 1877-ին՝ 3 ուսուցիչ, 28 աշակերտուհի, 1881-ին՝ 25 աշակերտուհի, 1885-ին փակվել է, 1886-ին վերբացվել։ 1888-ին եղել է միդասյան՝ 35 աշակերտուհիներով, 1890-ին՝ երկդասյան, 1894-ին եղել է երկսեռ դպրոց՝ 130 աշակերտներով (46 աշակերտուհի)։ 1896-ին նորից է փակվել։ 1913-ին եղել է 5-ամյա խառը դպրոց, ունենալով 185 սովորող (33 աղջիկ)։

ՀՍՍՀ ԿԿԳԱ, ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 5—13; ֆ. 56, գ. 43, թ. 15; գ. 111, թ. 74; գ. 50, թ. 61—64; գ. 199, թ. 17—23; ֆ. 7, գ. 172, թ. 6—11;
«Արարատ», 1878, N 11։ «Վիճ. տեղեկ. 1888—89 ուս. տարվա», էջ 45։ ՎՍՍՀ ԿԿԳԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 50; գ. 3997, թ. 7։

Նախիջևանի ս. Երրորդության եկեղեցու ծխական դպրոց

Հին Նախիջևանում, արական և իգական հոգևոր դպրոցներից բացի, 1873-ին գործել է նաև ծխական դպրոց, որտեղ այդ ժամանակ սովորել են ընդամենը 10 երեխաներ։

Հավանաբար դա ս. Երրորդության եկեղեցուն կից 1871-ին հիմնված դպրոցն է, որի մասին տեղեկություններ է հաղորդում «Մեղու Հայաստանի» լրագիրը 1873-ի իր համարներից մեկում։ Այնտեղ նշված է նաև, որ այդ դպրոցը «աղա կառավարիչներին» պատճառով հասել է իր «ցանկալի նավահանգիստը», այսինքն՝ փակվել է։

ՀՍՍՀ ԿԿԳԱ, ֆ. 56, գ. 43, թ. 15;
«Մեղու Հայաստանի», 1873, N 5։

Նասիրվաղ գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպել է Երևանի Նահանգի հայ դպրոցների 1914 թվականի ցուցակում։ Ունեցել է 1 ուսուցիչ և 50 աշակերտ։

ՎՍՍՀ ԿԿԳԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28; ՍՍՀՄ ԿԿԳԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 57։

Նորս գյուղի ծխական դպրոց

Ցարական իշխանությունների կողմից 1894-ի վերջերին կազմված հայ դպրոցների ցուցակում նշված է, որ Հին Նախիջևանի հայաբնակ Նորս գյուղի ծխական դպրոցը հիմնվել է 1892-ին։ Այս տվյալը սխալ է, քանի որ հայ հոգևոր իշխանությունների կազմած փաստաթղթերից երևում է, որ Նորս գյուղում ծխական դպրոց է գործել դեռևս 1873-ին։ Հավանաբար հետագայում այն փակվել է և վերաբացվել 1892-ին, որը և թյուրիմացաբար համարվել է նրա հիմնադրման թվականը։ Գործել է ս. Երրորդության եկեղեցուն կից։ Ըստ պաշտոնական տվյալների 1894-ին ունեցել է 400 ռ. ծախս, որից 350 ռ. եկեղեցու գումարներից և 50 սովորողների ուսման վարձից։ Այդ թվականին ունեցել է 90 աշակերտ։

1896-ին փակվել է ցարական իշխանությունների կողմից, վերբացվելով ուղիղ 10 տարի հետո՝ 1906-ի ապրիլ-մայիս ամիսներին։ Մինչև այդ փակված հայկական դպրոցի փոխարեն բացվել ու գործել է պետական դպրոց, որը նույնպես փակվել է 1906-ին՝ հայկական դպրոցի վերբացման կապակցությամբ։ Ծխական դպրոցը 1908-ին նպաստ է ստացել ԿՀՔ բնակերությունից, բայց, ինչպես երևում է, չի կարողացել երկար պահպանել իր գոյությունը, քանի որ հետագա տարիների փաստաթղթերում այդ դպրոցին այլևս չենք հանդիպում։ Հայտնի է, սակայն, որ 1907-ին Նորս գյուղում նորից բացվել է պետական միդասյան դպրոց, որը շարունակել է գործել մինչև 1917—18 թվականները։ Անկասկած, այն բացվել է հայկական ծխական դպրոցի փոխարեն։

ՀՍՍՀ ԿԿԳԱ, ֆ. 57, գ. 284, թ. 1—7; ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 5—13; ֆ. 56, գ. 199, թ. 17—23;
ՎՍՍՀ ԿԿԳԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 27—32 և 71—78; ֆ. 422, գ. 8717, թ. 2—9;
«Նոր դպրոց», 1908, N3, էջ 85;
«Помятная книжка Эриванской губернии», 1902, стр.95; 1914, отдел первый, стр. 53—71:

Ծըխմահմուդ գյուղի ծխական դպրոց

Ճանապարհորդ Քաջբերունին, որ 1875-ին եղել է Նախիջևանի գավառում, 1876-ի վերջերին գրել է, որ Ծըխմահմուդ գյուղի ծխական դպրոցը «կենդանի է մոտ 15 տարի», հետևաբար, ըստ Քաջբերունու, այն պետք է հիմնված լինի 1860 կամ 1861 թվականին։ «Արարատ» ամսագրի 1871-ի մի համարում նշված է, որ այդ դպրոցը հիմնվել է 1865-ին՝ երկու ուսումնասեր երիտասարդների ջանքերով։ Տեսնելով դպրոցի օգուտը, ժողովուրդը նրա պահպանությունը ամբողջովին իր վրա է վերցրել և դրել ապահով դրության մեջ։ 1870-ին դպրոցն ունեցել է մի ուսուցիչ և մոտ քառասուն աշակերտ։ 1871-ին՝ 60 աշակերտ։ Ավանդվել

են հայոց և ռուսաց լեզուներ։ 1876-ին ունեցել է 3 ուսուցիչ, 47 աշակերտ։ 1885-ին փակվել է և վերաբացվել 1886-ին՝ որպես միդասյան արական դպրոց։ 1888-ին ունեցել է 20 աշակերտ և 2 ուսուցիչ. 1894-ին՝ 28 աշակերտ։ Կրկին անգամ փակվել է 1896-ին և վերաբացվել 1905-ին։ 1913—14 ուս. տարում այն արդեն քառամյա խառը դպրոց էր, ունեցել է 82 աշակերտ՝ 53 տղա, 29 աղջիկ։ 1915-ին գոյություն չունեցել է, 1917-ին՝ ունեցել է 86 աշակերտ։

Հայ դպրոցների երկրորդ փակումից հետո (հավանաբար մինչև 1905-ը) Շերխամհմուդ գյուղում գործել է պետական դպրոց։

«Փորձ», 1877, № 2, էջ 316;
«Արարատ», 1871, թ. էջ 123—25; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարի», էջ 49; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 4; գ. 50, թ. 61—64; ֆ. 7; գ. 172, թ. 6—11, գ. 111, թ. 85; գ. 120, թ. 1; գ. 167, թ. 1—56;
«Մեղու Հայաստանի», 1869, № 25;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21; գ. 8717, թ. 9; գ. 18760, թ. 4; ֆ. 12, գ. 865, թ. 6։

Շուռութ (Շուռուտ) գյուղի ծխական դպրոց

1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 25 աշակերտ։ Հավանաբար երկար տարիներ փակ է եղել։ 1908-ին գործել է, մասամբ պահվելով ԿՀԲ ընկերության նպաստով։ 1909-ին եղել է եռամյա երկսեռ դպրոց 57 աշակերտով (5 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում ունեցել է 54 աշակերտ (14 աղջիկ)։ 1917-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1583, թ. 46, «Նոր դպրոց», 1908, № 3, էջ 85,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 544, թ. 30, ֆ. 7, գ. 172, թ. 8, ԿՀԲԸ-ի 1909 թ. տեղեկագիր, էջ 33։

Զախդամլու գյուղի (Նախիջևանի գավառ) ծխական դպրոց

Ելիզավետպոլի ու Երևանի նահանգների և Կարսի մարզի ժողովրդական դպրոցների դիրեկտորի կողմից 1891-ին կազմված և Կովկասի ուսումնական օկրուգին ներկայացված մի ցուցակում Հին Նախիջևանի գավառում ցույց է տրված նաև Զախդամլու գյուղի հայկական արական դպրոցը։

Սակայն «Կովկաղսկի կալենդարում» (1915 թ.), ուր բերված են Կովկասում եղած բոլոր բնակավայրերը, մենք Զախդամլու անունով գյուղ չգտանք ոչ միայն Նախիջևանի գավառում, այլև ողջ Կովկասում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 9։

Զագրի գյուղի (Նախիջևանի գավառ) ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը արխիվային մի պաշտոնական փաստաթղթում նշված է 1890-ը։ 1895-ին ունեցել է 50 աշակերտ (8 աղջիկ)։ 1896-ին փակվել է։ Հետագա տարիների ցուցակներում չի երևում։ Պատճառն ըստ երևույթին այն է, որ հայկական դպրոցի փակումից հետո Զագրի գյուղում բացվել են պետական երկու դպրոց՝ արական և իգական։ 1908-ին արական դպրոցում սովորած 124 աշակերտներից 68 հոգի եղել են հայ երեխաներ։ Այդ դպրոցները գործել են մինչև 1917 թ. ներառյալ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 5—13; գ. 953, թ. 3—11; գ. 1521, թ. 2—7; գ. 990, թ. 4—7; ֆ. 56, գ. 199, թ. 17—23;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 865, թ. 76։

Ջաուկ գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1867-ին։ 1872-ին ունեցել է 1 ուսուցիչ և 38 աշակերտ։ 1885-ին փակվել է և վերաբացվել 1886-ին։ 1888—89 ուս. տարում եղել է միդասյան դպրոց՝ 17 աշակերտով և 2 ուսուցչով։ 1894-ին դարձյալ եղել է միդասյան արական դպրոց 53 աշակերտով։

Հետագա տարիների փաստաթղթերում այն չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 46, թ. 7; գ. 120, թ. 1; ֆ. 56, գ. 32, թ. 4; գ. 50, թ. 61—64; ֆ. 30, գ. 232, թ. 4; գ. 111, թ. 83; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարի», էջ 49;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22, գ. 3997, թ. 8։

Ջուլֆայի հայկական ծխական դպրոց

Արխիվային տվյալների համաձայն հիմնվել է 1887-ին։ 1891-ին եղել է միդասյան արական դպրոց։ 1895-ին ունեցել է 56 աշակերտ (9 աղջիկ), 1896-ին փակվել է, վերաբացվել 1905-ի վերջերին։ 1913-ին ունեցել է 63 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 5—13; ֆ. 56, գ. 199, թ. 17—23;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 8; գ. 8717, թ. 8; ֆ. 13, գ. 264, թ. 28;

Ջուղա (Հին) գյուղի (Նախիջևանի գավառ) ծխական դպրոց

Հիմնվել է 1868-ին։ 1885-ին փակվել է և վերաբացվել 1887-ին։ Հավանաբար 1896-ին նորից է փակվել, որովհետև հայտնի է, որ 1905-ին այն վերաբացվել է։ 1913—14 ուս. տարում եղել է երկսեռ քառամյա դպրոց, ունենալով 2 ուսուցիչ և 62 աշակերտ (23 աղջիկ), 1917-ին՝ 154 աշակերտ (62 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 46, թ. 15, գ. 172, թ. 8, գ. 157, թ. 1—56, ֆ. 56, գ. 199, թ. 26—27, գ. 544, թ. 30,
«Մուրճ», 1890, № 7, էջ 1021, «Նոր դպրոց», 1911, № 21—22, էջ 35։

Սուլթանբեկ (այժմ՝ Բարձրունի, Ազիզբեկովի շրջան) ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է ԿՀԲ ընկերության 1909 թ. տեղեկագրում։ Այդ թվականին ունեցել է երկու բաժանմունք, որեմն պետք է բացված լինի 1907-ին։ Եղել է երկամյա արական դպրոց՝ 20 աշակերտով։ Ցույց է տրված նաև Երևանի թեմի դպրոցների 1911—12 ուս. տ. տեղեկագրում, այս անգամ արդեն մի բաժանմունքով և 30 աշակերտով։ Որեմն գտնվել է նյութական խիստ կարիքի մեջ։ Որոշ տարիների ընթացքում է ստացել ԿՀԲԸ-ից։ Այս գյուղում գործել է նաև պետական միդասյան դպրոց։

Տեղեկագիր ԿՀԲ ընկերության 1909 թ. գործունեության, էջ 33;
«Տեղեկագիր Երևանի թեմի եկեղեցական ծխական դպրոցների 1911—12 թթ.»;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 1521, թ. 2—7։

Տանակերտ (Տնակերտ) գյուղի (Օրդուբադի գավառ) արական ծխական դպրոց

Պաշտոնական մի փաստաթղթում այս դպրոցի հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1892-ը, սակայն դա ճիշտ չէ, քանի որ այլ պաշտոնական փաստաթղթերի համաձայն 1873-ին և 1876-ին այն գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 25 աշակերտ, իսկ 1881-ին՝ 25 աշակերտ։ Ցույց է տրված նաև 1887—88 ուս. տարում գործած հայ դպրոցների ցուցակում։ 1891-ին եղել է միդասյան արական, իսկ 1895-ին՝ խառը (երկսեռ) դպրոց՝ 78 աշակերտով (38 աղջիկ)։ 1896-ին փակվել է և վերաբացվել 1905-ին։ 1913-ին եռամյա տարրական երկսեռ դպրոց էր 46 (մի այլ փաստաթղթում՝ 57) աշակերտով։

1915-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 5—13; ֆ. 56, գ. 43, թ. 16; գ. 71, թ. 6; գ. 199, թ. 17—23; ֆ. 7, գ. 172, թ. 6—11;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46; գ. 3997, թ. 9; գ. 18760, թ. 4, գ. 8717, թ. 3; ֆ. 12, գ. 865, թ. 31 և 77; ֆ. 13, գ. 264, թ. 28;
«Մուրճ», 1890, № 7, էջ 1021։

Ցղնա (Զանգանաբ) գյուղի արական ծխական դպրոց

Արխիվային փաստաթղթերում ցույց են տրված հիմնադրման տարբեր թվականներ՝ 1860, 1862, 1865 և այլն։ Մենք ավելի հավանական ենք համարում 1862-ը։ Այդ դպրոցի համառոտ պատմության մեջ նշվում է, որ վանեցի Բաղդասար Բրիշչյանը իր կրթությունն ստանալով Կոստանդնուպոլսում, ապա Լիմ անապատում, 1862-ին գալիս է Ցղնա և ժողովրդի խնդրանքով մնում է այնտեղ ուսուցչական պաշտոնով, բաց անելով տղաների դպրոց։ Դասավանդել է հայոց լեզու, եկեղեցական երգեցողություն և մի քիչ էլ թվաբանություն։ Այդ դպրոցում փոփոխարար Բրիշչյանն աշխատել է մի քանի տասնամյակ։ 1864-ից դասավանդվում է նաև սուրաց լեզու (ուսուցիչ՝ սեղացի Բաղդասար Տեր Օհանյան)։ 1868-ին կառուցվում է դպրոցական հատուկ շենք։ «Իբրև մշտնջենավոր ապրյուր դպրոցիս, սույն թվականին (1868-ին — Ս. Խ.) հասարակությունը կանգնեցնել է տալիս հրապարակում հասարակական կշիռ և յուր դրամով լինում է երեք սենյակ յուր ներքնահարկով, որի արդյունքը սեփականացնում են դպրոցին, որքան գոյություն ունենա....»,— այսպես է գրում Ցղնայի դպրոցի համառոտ պատմության հեղինակ, 1891-ից այնտեղ ավագ ուսուցչի պաշտոնով աշխատած Բարդուղիմեոս Հարությունյանը (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 58, թ. 101—108)։

Դպրոցը 1876-ին ունեցել է 2 ուսուցիչ, 63 աշակերտ։

Դպրոցի առաջին փակումը տեղի է ունեցել 1885-ին։ Վերաբացվել է 1886-ին, որպես երկդասյան արական դպրոց։

1888—89 ուս. տարում եղել է միդասյան, ունեցել է 60, իսկ 1890-ին՝ երկդասյան՝ 65 (մի այլ փաստաթղթում՝ 82 աշակերտով)։ 1896-ին նորից է փակվել և վերաբացվել 1905-ին։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա երկսեռ դպրոց՝ 73 աշակերտով (36 աղջիկ) և 2 ուսուցչով։ Հաջորդ տարում աշակերտների թիվը հասել է 81-ի։ 1917-ին գործել է։

Հայ դպրոցների երկրորդ փակումից հետո Ջանաբաբ (Ցղնա) գյուղում գործել է պետական դպրոց (հավանաբար մինչև 1905 թ.)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 120, թ. 1; գ. 58, ֆ. 56, գ. 43, թ. 16; գ. 32, թ. 3; գ. 71, թ. 7, գ. 192, թ. 56—57; գ. 111, թ. 88; գ. 50, գ. 199, գ. 182, թ. 8, ֆ. 19, գ. 456, թ. 10; ֆ. 20, ց. 1, գ. 113, թ. 3—6; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46; գ. 511, թ. 21; «1888—89 ուս. տարի. վիճ. տեղ.», գ. 18760, թ. 4; գ. 3997, թ. 9; ֆ. 12, գ. 865, թ. 77; «Տեղեկագիր Երևանի թեմի եկեղեցական ծխական դպրոց. 1911—12 ուս. տարի»։

Ցղնա գյուղի օրիորդաց դպրոց

Ցղնայի արական ծխական դպրոցի պատմությանը նվիրված մի փաստաթղթի (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 58) համաձայն այնտեղի աղջիկների դպրոցը հիմնվել է 1888-ին։ Սակայն այդ տեղեկությունը ճիշտ չէ, քանի որ Ցղնայի աղջիկների դպրոցը նշված է 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում։ Նշանակում է այդ դպրոցը գոյություն է ունեցել 1884-ին և գուցե դրանից էլ առաջ։ 1885-ին այն փակվել է և վերաբաց-

վել, հավանաբար, 1886-ին։ 1888—89 ուս. տարում ունեցել է 20 աշակերտուհի, որոնք սովորել են Ա և Բ բաժանմունքներում։ 1894-ին նրան է նրկդասյան դպրոց՝ 40 սովորողներով։ 1896-ին փակված դպրոցների ցուցակում չի նշված, հավանաբար մինչև այդ ինչ-ինչ պատճառներով փակված է եղել կամ էլ հետո է փակվել։ Վերաբացվել է 1905-ին՝ տղաների դպրոցի հետ միացած։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 58; գ. 120, թ. 1; ֆ. 36, գ. 50, գ. 159, ֆ. 13, գ. 456, թ. 10; 1888—89 ուս. տ. վիճ. տեղ., Մանկավարժական գիտ. խնամատար տրիբունալ, Հ. Տ. Միրաքյանի ֆոնդ, գ. 20։

Ռուոմիս (նաև Ռամի՞ս, Ռուումլե՞կ) գյուղի ծխական դպրոց

Տարբեր տարիների արխիվային փաստաթղթերում հանդիպում ենք Հին Նախիջևանի գավառի Գաղթնա շրջանի Ռամիս և Ռուումիս (Նաև Ռուումլեկ) գյուղերի դպրոցներին, բան որում միևնույն փաստաթղթում այդ երկու գյուղերը միաժամանակ երբեք չեն նշվում։ Տեղեկատու աղբյուրներում հիշատակված է միայն Ռուումիս գյուղը, իսկ Ռամիսը՝ ոչ։ Կարծում ենք, որ ներկա դեպքերում մենք գործ ունենք նույն գյուղի և դպրոցի հետ, ուստի և նրանց վերաբերող նյութերը այստեղ բերում ենք միասին։

Մի տեղեկագրի համաձայն Ռուումլեկ գյուղի ս. Հովհաննես եկեղեցու դպրոցը հիմնվել է 1890-ին և 1895-ի հունվարին ունեցել է 42 աշակերտ (4 աղջիկ)։ Մի այլ տեղեկագրի համաձայն Ռամիսի դպրոցը հիմնվել է 1891-ին և 1894—95 ուս. տարում ունեցել է 32 աշակերտ (15 աղջիկ)։ Մի երրորդ փաստաթղթում նշված է, որ Ռուումիս գյուղի ծխական դպրոցը տեղի ս. Հովհաննես եկեղեցուն կից է, բայց հիմնականում պահվում է բնակիչների հաշվին։ Այս տեղեկությունը վերաբերում է 1896-ի մարտին։ Նույն թվականին էլ դպրոցը փակվում է։

Շատ տարիներ այս դպրոցը այլևս չի երևում։ Ռամիսի դպրոցը նորից բացվել է, հավանաբար, 1913—14 ուս. տարում որպես եռամյա խառը դպրոց, բայց ունեցել է միայն մի դասարան, ուր սովորել են 19 տղա, 16 աղջիկ։ Ռուումիսի դպրոցը 1914-ի փետրվարին ունեցել է մի ուսուցիչ, 41 աշակերտ, 1917-ին՝ 34 աշակերտ (16 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 120, թ. 2, գ. 172, թ. 9, ֆ. 19, գ. 456, թ. 5—13։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 866, թ. 159, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28։

Փառակա գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1890-ին, 1891-ին նշված է որպես միդասյան արական դպրոց։ 1894-ին ունեցել է 40 աշակերտ։ 1896-ին փակվել է, 1905-ի վերջին վերաբացվել։

1907—08 ուս. տարում ունեցել է 91 աշակերտ (35 աղջիկ), իսկ 1913—14 ուս. տարում եղել է եռամյա դպրոց՝ 78 աշակերտով (22 աղջիկ)։ 1916-ին դպրոցի համար կառուցվել է նոր շենք։

1917-ին Փառակա գյուղում գործել է նաև պետական միդասյան դպրոց։

«Արարատ», 1890, N10, էջ 583; 1916, էջ 631;
«Լուսաբեր», 1890, N10, էջ 560։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 5—13, գ. 1521, թ. 2—7, ֆ. 56, գ. 199, թ. 17—23, ֆ. 7, գ. 172, թ. 6—11, գ. 182, թ. 8.
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 8, գ. 8717, թ. 8։

Քաղաքիկ (Քյալաքի՞) գյուղի (Օրդուբադի գավառ) ծխական դպրոց

Հայերեն գրված փաստաթղթերում գրեթե ամենուր հանդիպում ենք Քաղաքիկ անունով գյուղի (Ագուլիսի շրջան), իսկ ռուսերեն գրված փաստաթղթերում այդ գյուղը համարյա չի երևում (բացի երկուսից, որոնցում գրված է Кагакик)։ Նրանցում մենք հանդիպում ենք Калаки, Кялаки անունով գյուղի՝ նույն Նախիջևանի գավառում։ Տեղեկատու մի աղբյուրում կա միայն Калаки գյուղը, իսկ Քաղաքիկ (Кагакик) անունով գյուղ ցույց չի տրվում։ Ենթադրում ենք, որ դա միևնույն գյուղն է։ Այս դպրոցի հիմնադրման թվականը մեզ անհայտ է։ Մի փաստաթղթում նշված է 1892-ը, սակայն դա սխալ է, քանի որ Քաղաքիկ գյուղում հայկական ծխական դպրոց է գործել դեռևս 1873-ին։ 1876-ին ունեցել է 1 ուսուցիչ, 27 աշակերտ։ Գործել է նաև 1881-ին և ունեցել է 22 աշակերտ։

Հավանաբար մինչև 1885-ը չի կարողացել պահպանել իր գոյությունը, քանի որ չի մտել այդ թվականին փակված հայ դպրոցների ցուցակում։

Վերաբացվել է 1892-ին։ 1895-ին ունեցել է 40 աշակերտ (20 աղջիկ)։ 1896-ին նորից է փակվել և վերաբացվել 11 տարի հետո՝ 1907-ին։

1908-ին ունեցել է 3 բաժանմունք՝ 50 աշակերտ-աշակերտուհիներով։ 1912—13 ուս. տարում եղել է քառամյա խառը դպրոց, ուր սովորել են 15 տղա և 24 աղջիկ։ 1917-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 15; գ. 71, թ. 7; գ. 623, թ. 1; գ. 199, թ. 17—23; ֆ. 19, գ. 456, թ. 11;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46, գ. 18760, թ. 4; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 31 և 76; ֆ. 13, գ. 264, թ. 28;
«Նոր դպրոց», 1908, N 5, էջ 88—89; «Արարատ», 1912, էջ 582—83։

Օրդուբադ քաղաքի ծխական դպրոց

Որքան տարօրինակ է, բայց փաստ է, որ Օրդուբադի հայկական ծխական դպրոցը մեզ հանդիպում է շատ ուշ՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագրում։ Եղել է եռամյա խառը դպրոց, ունենալով միայն մեկ դասարան, ուր սովորել են 16 տղա, 17 աղջիկ։ Բացի դա պետք է բացատրել նրանով, որ այնտեղ 1854-ից գործել է քաղաքային տարրական արական ուսումնարան։ Վերջինս 1914-ից արդեն եղել է 4-դասարանյան բարձր տարրական ուսումնարան, ուր 1917-ին սովորել են 58 հոգի։

Ծխական դպրոցը 1917-ին գործել է, ունենալով 20 աշակերտ (8 աղջիկ)։

«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպր. 1911—12 թթ.»,
ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 7, գ. 172, թ. 8; գ. 167, թ. 1—56; ֆ. 56, գ. 498, թ. 19, ֆ. 19, գ. 1, գ. 1521, թ. 27—122։
ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 13, գ. 264, թ. 28, գ. 2018, թ. 45, ֆ. 422, գ. 18760, թ. 4։

Երևանի նահանգի Հին Նախիջևանի գավառում տարբեր ժամանակներում բացված ու գործած պետական (ռուսական), նահանգական և ուղղափառ եկեղեցական դպրոցներ

№	Անվանումը	Դպրոցի բացման թվականը	Դպրոցի տիպը 1912-ին
	Նախիջևան քաղաքում		
1	Գավառական ուսումնարան	1837	1879-ից քաղաքային ուսումնարան
2	Քաղաքային ուսումնարան (քան. 1872 թ. կանոնների)	1879	1914-ից քաղաքային չորսդասյան բարձր տարրական ուսումնարան
3	Ռուս—թաթարական արական դպրոց	1894	երկդասյան
4	Ռուս—թաթարական արական գյուղ «Անդրիեն» մենքերերին կից	1909	միդասյան
5	Ռուս—թաթարական իգական դպրոց	1906	երկդասյան
6	Երկաթուղային տարրական դպրոց	անհայտ է	երկդասյան
7	Ռուս—թաթարական իգական դպրոց	1912-ին գործել է	միդասյան
	Երկաթե տարրական դպրոց (փակված հայ դպրոցի փոխարեն)	1902-ին գործել է	չի գործել

№	Անվանումը	Դպրոցի բացման թվականը	Դպրոցի տիպը 1912-ին
	ՀԻՆ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԳԱՎԱՌՈՒՄ		
1	Արդանուշ	1895	միդասյան
2	Գյուլիս Ներքին (Դալար)	1899-ին գործել է	չի գործել
3	Գյուլիս Վերին արական երկդասյան դպրոց	1899-ին գործել է	երկդասյան
4	Գյուլիս Վերին իգական միդասյան դպրոց	1899-ին գործել է	չի գործել
5	Գնեաբյուրթ (Զնաբերդ)	1902-ին գործել է	միդասյան
6	Գյոլ Վերին	1902-ին գործել է	չի գործել
7	Գրադյոզ Մագրա	1907	միդասյան
8	Գրիբաթթ (Գլյուկատ)	1909	»
9	Դարնք	1910	»
10	Դրազ	անհայտ է	միդասյան
11	Բանանյուր	1899-ին գործել է	միդասյան
12	Բիլլավ	1895	միդասյան
13	Բիստ	1906	միդասյան
14	Բարագիս	անհայտ է	միդասյան
15	Գեմջյուր	1904	երկդասյան
16	Գեմաձոր	1908	միդասյան
17	Գիգին—Արմաչու	1898	միդասյան
18	Լուկ	1895	միդասյան
19	Նեհար	1895	միդասյան
20	Կարմաչին	1906	միդասյան
21	Կիվրախ	1889	1899-ին՝ երկդասյան
22	Գինչար	անհայտ է	միդասյան
23	Ղազանչի—Միլախ	1896	միդասյան
24	Ղարաշուլ (Թուլգան գյուղ)	1905	միդասյան
25	Ղարաբաղլար		միդասյան
26	Ղուլիբեկդիգի	1882	երկդասյան
27	Ղոզնուտ	1896	միդասյան
28	Մահմուդ	1900-ին գործել է	տարրական
29	Միլախ	1900-ին գործել է	տարրական
30	Նաչի	1894	միդասյան
31	Նամխանա	1895	երկդասյան
32	Նարիմյա	անհայտ է	
33	Նագարբաղ	1907	միդասյան
34	Նեհրամ	1885	երկդասյան

№	2	3	4
35	Նորս	1902-ին գործել է	միգասյան
36	Եահքեաբ	1889	երկդասյան
37	Եբիմահմուդ	1900-ին գործել է	
38	Եահմուդ—Եահբաղ	1896	երկդասյան
39	Ջանանաբ (Ցղնա)	1900	չի գործել
40	Ջաղրի	1885	երկդասյան
41	Ջաղրի	1902-ին գործել է	միգասյան իգական
42	Ջամալդի	անհայտ է	միգասյան
43	Ջուլֆա հին	1902-ին գործել է	չի գործել
44	Վանանդ	1895	երկդասյան
45	Սեա	1909	միգասյան
46	Սուլթանթեկ	1905	միգասյան
47	Քյաղլար		
48	Քյուլթափա (Գյուլթափա)	1906	միգասյան
49	Օգրին	1906	միգասյան
50	Օրգու

կութային միության և գյուղի հասարակության ծախսերով։ Ըստ երևույթին երկար կյանք չի ունեցել, քանի որ չի երևում 1911—12, 1913—14 և մյուս տարիների տեղեկագրերում։

«Նոր դպրոց», 1908, N3, էջ 88։

Ախտա Ներքին (այժմ՝ քաղ. Հրազդան) գյուղի ծխական դպրոց

Ըստ արխիվային տվյալների՝ դպրոցը հիմնվել է 1905—06 ուս. տարում։ Եղել է երկսեռ դպրոց։ Այն հանգամանքը, որ հայ դպրոցների վերաբացումը թույլատրելուց անմիջապես հետո (1905-ի նոյեմբերին) Ն. Ախտայում դպրոց է բացվել, հիմք է տալիս ենթադրելու, որ այդ դպրոցն այնտեղ ավելի վաղ է գործել և 1905-ին միայն վերաբացվել է։ 1907—08 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ, 80 աշակերտ (6 աղջիկ), 1911—12 ուս. տարում աշակերտների թիվը հասել է 120-ի (48 աղջիկ)։ 1912—13 ուս. տարում ունեցել է 89 սովորող, 1913—14 ուս. տարում՝ 102-ը (8 աղջիկ)։ Մասամբ պահվել է ԿՀԲ ընկերության նպաստով։

1897-ից Ն. Ախտա գյուղում գործել է նաև պետական միդասյան դպրոց։ Ծխական դպրոցը 1917-ին ունեցել է եռամյա դասընթաց, երկու ուսուցիչ և 95 աշակերտ (16 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 36, գ. 117, թ. 48, գ. 182, թ. 9, գ. 492, թ. 116; ֆ. 7, ց. 1, գ. 67, թ. 1—56, գ. 172, թ. 6, ԿՀԲ ընկ. 1909 և 1912 թթ. տեղեկագրերը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 6։

Արզաքյանց (այժմ՝ Արզական, Հրազդանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Արզաքյանցը եղել է Երևանի նահանգի խոշոր գյուղերից մեկը։ 1915-ին ունեցել է 1764 բնակիչ, բայց երկար ժամանակ չի ունեցել իր սեփական դպրոցը (ոչ հայկական, ոչ էլ պետական)։ Արզաքյանցի երեխաների մի մասը հաճախել են Ալափարս գյուղի դպրոցը (հնարավոր է նաև այլ գյուղի դպրոցներ)։

Արզաքյանցի եկեղեցական ծխական դպրոցն առաջին անգամ հանդիպում է Երևանի թեմի հայ դպրոցների 1916—17 ուս. տարվա տեղեկագրում։ Եղել է երկամյա երկսեռ դպրոց՝ մի ուսուցչով և 92 աշակերտով (10 աղջիկ)։ Քանի որ մինչև 1914 թվականի տեղեկագրերում այդ դպրոցը չի հանդիպում, կարելի է կարծել, որ այն հիմնվել է 1915 կամ 1916 թվականին։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56, ֆ. 48, ց. 1, գ. 511, թ. 5։
«Կավկազսկի կալենդար», 1913, էջ 90։

Բջնի գյուղի (Հրազդանի շրջ.) ծխական դպրոց

Բջնին 1915-ին ունեցել է 2336 բնակիչ, այսինքն եղել է Երևանի նահանգի խոշոր գյուղերից մեկը։ Բայց զարմանալի է, որ այդպիսի մեծ գյուղը անցած դարում իր սեփական դպրոցը չի ունեցել։ Ավելին, նրա ծխական դպրոցն առաջին անգամ երևում է թեմի ծխական դպրոցների 1916—17 ուս. տարվա ցուցակում։ Ունեցել է ընդամենը երկամյա դասընթաց, 2 ուսուցիչ և 103 աշակերտ (20 աղջիկ)։ Հավանաբար բջնեցիները դպրատասել են օգտվել հարևան գյուղերի դպրոցներից, քան ունենալ սեփականը։ Ճիշտ է, Բջնիում գործել է պետական միդասյան դպրոց, բայց դա էլ շատ վաղուց չի հիմնվել։ Այդ դպրոցն առաջին անգամ հանդիպում է 1916-ին գործած պետական դպրոցների տեղեկագրում։ Ծխական դպրոցը 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 157, թ. 1—56, ֆ. 48, ց. 1, գ. 511, թ. 5։
«Կավկազսկի կալենդար», 1915, էջ 99։

Գյոզալդարա Ներքին (այժմ՝ Վարդենիկ, Մարտունու շրջ.) գյուղի ծխական դպրոց

Մի շարք աղբյուրների համաձայն Գյոզալդարա գյուղում ծխական դպրոց է բացվել 1908-ին՝ Կովկասի հայ բարեգործական ընկերության, Բաքվի հայ մշակութային միության և իրենց՝ գյուղացիների ծախսերով։ Սակայն մեզ թվում է, որ Գյոզալդարայում հայկական դպրոց պետք է գոյություն ունեցած լինի ավելի վաղ ժամանակներից։ Այս ենթադրության համար հիմք է ծառայում հետևյալ հանգամանքը։

Ինչպես հայտնի է, 1885-ին փակվել են հայկական դպրոցները (ծխական)։ Այդ դպրոցների փակումից անմիջապես հետո կառավարությունը նախագծում է նրանց փոխարեն Երևանի նահանգում բաց անել 27 զեմստվոական նորմալ դպրոցներ։ Այդ ծրագիրն, իհարկե, չի իրականանում։ Շատ գյուղերի բնակիչներ հրաժարվում են իրենց միջոցներով պետական դպրոց պահել։ Կառավարությանը հաջողվում է բաց անել միայն 7 դպրոց, դրանցից մեկը Գյոզալդարա գյուղում։ Այդ գյուղում այդպիսի արագությամբ պետական դպրոց կազմակերպելու հանգամանքն էլ հենց ստիպ է տալիս կարծելու, որ մինչ այդ այնտեղ գործելիս է եղել հայկական ազգային դպրոց։

Պետական դպրոցում 1887-ին սովորել են 29 հայ երեխաներ։ Այս դպրոցը պահպանել է իր գոյությունը մինչև 1918 թվականը։ 1908-ին բացված հայկական ծխական դպրոցը շուտով փակվել է և նորից բացվել 1911-ին։ Ունեցել է 45 աշակերտ։ 1912—13 ուս. տարում եղել է արական

ծխական դպրոց, ուր սովորել են 50 տղա։ Աշակերտների նույն թիվն է պահպանվել նաև 1914-ին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 193, թ. 52—53;
«Նոր դպրոց», 1908, N5, էջ 88;
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպր. 1911—12 թթ.»;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28։

Դոմաշեն գյուղի (Սևանի շրջ.) ծխական դպրոց

Պաշտոնական մի տեղեկագրի համաձայն այս դպրոցը հիմնվել է 1909-ին։ 1911—12 ուս. տարում ունեցել է մի դասարան՝ 51 աշակերտով (7 աղջիկ), իսկ 1912—1913 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 40-ի (բոլորը տղաներ)։ 1913—14 ուս. տարում եղել է եռամյա մի դասարանով տարրական դպրոց, ուր սովորել են 60 հոգի (3 աղջիկ)։ 1914-ի փետրվարին աշակերտների թիվը ցույց է տրված 40 հոգի։ Մասամբ պահվել է ԿՀԲ ընկերության նպաստով։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 117, թ. 50; ֆ. 7, գ. 172, թ. 6; ֆ. 48, գ. 511, թ. 5;
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպր. 1911—12 թթ.»;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28։

Զոլախաչ (այժմ՝ Զոլաքար, Մարտունու շրջ.) գյուղի ծխական դպրոց

Նոր Բայազետի գավառի Զոլախաչ գյուղի ծխական դպրոցը բացվել է 1908-ին՝ Կովկասի հայ բարեգործական ընկերության, Բաքվի հայ մշակութային միության և գյուղի հասարակության ծախսերով։ 1913—14 ուս. տարում եղել է եռամյա մի դասարանով տարրական դպրոց, ուր սովորել են 53 տղա և միայն մի աղջիկ։ 1916-ին գործել է, որոշ օգնություն ստանալով թեմի դպրոցական ընդհանուր ֆոնդից։ 1917-ին ունեցել է մի ուսուցիչ, 82 աշակերտ (3 աղջիկ)։

1919-ին գործել է։

«Նոր դպրոց», 1908, N5, էջ 88;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 6; գ. 167, թ. 1—56; ֆ. 48, ց. 1, գ. 511, թ. 5
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28; «Արարատ», 1916, էջ 7։

Կաքավաբերդի ծխական դպրոց

Երևանի թեմական վարչության արխիվային ֆոնդի մի գործից իմանում ենք, որ Մաղկանոցի շրջանի Կաքավաբերդ գյուղում 1914—1916

թվականներին գործել է եկեղեցական ծխական դպրոց, ունենալով մի ուսուցիչ և 40 աշակերտ (1 աղջիկ)։

Դժվարանում ենք ասել, թե Մաղկանոցի շրջանի (կամ Նոր Բայազետի նախկին գավառի) ո՞ր գյուղն է կրել այդ անունը, քանի որ նախաստվերական և սովետական շրջանների տեղեկատու շատ աղբյուրներում այդ անունով գյուղ մենք չենք գտել։

Արխիվային մի շարք փաստաթղթերից հայտնի է միայն, որ Կաքավաբերդ անունով գյուղ գոյություն է ունեցել Երևանի թեմի Հին Նախիջևանի վիճակում, Այդ և Տաթևի վիճակի մեջ մտած (այժմ Մեղրու շրջանի) Գուդեմնիս գյուղերի միացյալ դպրոցի մասին խոսվում է Զանգեզուրի գավառի դպրոցների հետ միասին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, ց. 1, գ. 430, թ. 10։

Ղարանլուղ Ներքին (այժմ՝ Մարտունի քաղաքատիպ ավան) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1881-ի մարտ ամսին։

Այդ առթիվ «Պսակ» թերթը իր 1881 թ. N15-ում գրել է.

«Նոր Բայազետի գավառի հարավ-արևելյան կողմը գտնվում է գյուղորեից մի խումբ, որ կոչվում է Նոր Ալաշկերտ։ Այդ մասում քանեն ավելի հայ գյուղորեից մեջ ուսում, գիտություն, ուսումնարան բառերը կարելի է հաստատապես ասել, որ լոկ և գրեթե անծանոթ հնչյուններ են տեղացիների վերաբերմամբ։

Նոցա գաղթականության օրից սկսյալ, որ ամբողջ կես դար հաշվում է, դպրոց չի եղել։

1-ին անգամ Ներքին Ղարանլուղ գյուղի տնատեր Մնացական Մելիք-Շահամյանցը սրանից ամիս ու կես առաջ (այսինքն՝ 1881 թ. մարտի սկզբից) յուր իսկական բնակարանի մի հարմարավոր շինությունը նվիրելով այդ նպատակին, վարձեց և բավականաչափ տեղյակ մի ուսուցիչ, սկիզբ դնելով նոր ուսումնարանի կարգադրությանը։

Այս դպրոցը 1884-ին գործել է, իսկ 1885-ին փակվել՝ հայկական մյուս դպրոցների հետ միասին։

Հետագա տարիների ու տասնամյակների փաստաթղթերում այլևս չի հանդիպում։ Գուցե պատճառն այն է, որ Ներքին Ղարանլուղ գյուղում գործել է պետական տարրական դպրոց, որը 1908-ին ունեցել է 40 աշակերտ։ Սա 1917-ին եղել է երկդասյան դպրոց, 79 աշակերտով (բոլորը հայեր)։

«Պսակ», 1881, N 15; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61—64; ֆ. 19, ց. 1, գ. 380, թ. 47; գ. 953, թ. 5։

Ղարանլուղ Վերին (այժմ՝ Գեղահովիտ, Մարտունու շրջ.) գյուղի ծխական դպրոց

Վերին Ղարանլուղ գյուղի ծխական դպրոցը բացվել է 1908-ին՝ Կովկասի հայ բարեգործական ընկերության, Բաքվի հայ մշակութային միության և գյուղի հասարակության ծախսերով։ 1919-ին գործել է։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 50; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, գ. 511;
«Նոր դպրոց», 1908, № 5, էջ 88։

Ղշլաղ (այժմ՝ Արծվաքար, Կամոյի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Նոր Բայազետի գավառի Ղշլաղ գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է Երևանի թեմի դպրոցների 1913—14 ուս. տարվա տեղեկագրում։ Ինչպես երևում է այդ ուս. տարում էլ այն բացվել է։ 1913-ի հուլիսին կաթողիկոսը օրհնության կոնդակ է ուղարկել Ղշլաղի բնակիչ Ներսեսին, որն իր միջոցներով ծխական դպրոցի համար կառուցել է հատուկ շենք։

Դպրոցը 1913—14 ուս. տարում ունեցել է ընդամենը մի դասարան, ուր սովորել են 29 տղա և մի աղջիկ։ 1914-ին աշակերտների թիվը հասել է 39-ի, 1917-ին՝ 51-ի (7 աղջիկ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 6; գ. 167, թ. 1—56; «Արարատ», 1913, № 8, էջ 582;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28։

Ղուլալի (այժմ՝ Կարմիր Գյուղ, Կամոյի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1908-ին՝ Կովկասի հայ բարեգործական ընկերության և Բաքվի հայ կուլտուրական ընկերության կողմից։ Պահվել է այդ ընկերությունների և հասարակական միջոցներով։ 1911—12 ուս. տարում ունեցել է միայն մեկ դասարան, ուր սովորել են 43 տղա, 7 աղջիկ։ 1913—14 ուս. տարում գարձյալ ունեցել է մի դասարան՝ 58 աշակերտով (9 աղջիկ)։ 1916-ին գործել է, նպաստ ստանալով թեմի դպրոցական ֆոնդից։ 1917-ին՝ 53 աշակերտ (8 աղջիկ)։

«Նոր դպրոց», 1908, № 5, էջ 88;
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպր. 1911—12 թթ.»;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 6, գ. 167, թ. 1—56; «Արարատ», 1916, էջ 7։

Ցայլի գյուղի (այժմ՝ Զովաբեր, Սևանի շրջ.) ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է Երևանի թեմի ծխական դպրոցների 1913—14 ուս. տարվա տեղեկագրում։ Այդ ուս. տարում էլ հիմնվել է։ Եղել է միայնակ դպրոց՝ մեկ դասարանով։ Ունեցել է 56 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 6; «Արարատ», 1913, № 11, էջ 395;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28։

Նորադուզ գյուղի (Կամոյի շրջ.) երկսեռ ծխական դպրոց

Հիմնվել է 1907-ին («Նոր դպրոց»-ում նշված է 1908-ը)։ 1911—12 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ և 108 աշակերտ (16 աղջիկ), իսկ 1912—13 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 83-ի (11 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում ունեցել է 2 դասարան՝ 100 աշակերտով (14 աղջիկ)։ Մասամբ պահվել է ԿՀԲ ընկերության նպաստով։ 1917-ին ունեցել է նույնպես դասընթաց, 83 աշակերտ (11 աղջիկ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 192, թ. 18—19; ֆ. 7, գ. 172, թ. 6; գ. 167, թ. 1—56; ֆ. 48, գ. 1, գ. 511, թ. 5;
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպր. 1911—12 թթ.»; ԿՀԲ ընկերության 1909 և 1912 թթ. տեղեկագրերը։

Նոր Բայազետի (այժմ՝ Կամո քաղաք) Մեսրոպյան արական ծխական դպրոց

Նոր Բայազետի կրթական կյանքի 40-ամյա պատմությունը (1852—1892 թթ.) ձեռագիր վիճակում պահվում է Հայկական ՍՍՀ պետական պատմական արխիվում։ Այն գրվել է 1892 թվականին՝ տեղի երկսեռ դպրոցների այն ժամանակվա ավագ ուսուցիչ Ս. Փիլոյանցի կողմից։ Ձեռագրում բավականաչափ հետաքրքիր տեղեկություններ կան նաև Նոր Բայազետ քաղաքի մասին։

Փիլոյանցը գրել է. «1829 թվին ռուս-տաճկական պատերազմից հետո Հին Բայազետից 300 հայ ընտանիք գաղթեցին այստեղ՝ Նոր Բայազետ և հետևեալ պաբսիկներին հեռացնելով, իրանք բռնեցին նրանց տեղը, կազմելով մի գյուղ յուր նախկին Քիավառ կամ Գավառ անունով մինչև 1850 թիվը, երբ ռուս կառավարության կարգադրությամբ Քիավառը բաղաքների կազմին անցնելով՝ կոչվեցավ Նոր Բայազետ։

Դպրոցականների առաջնորդն էր բայազետցի Մկրտիչ աղա Արծրունին, որը մեծ հեղինակություն ուներ ժողովրդի վերա, որը և իրավամբ համարվում է քաղաքիս հիմնադիրը։ Մկրտիչ Արծրունու մահվանից հե-

տու նրա տեղն անցավ յուր եղբայր Բարսեղ աղան, որի անունը նորբայազետցին պատկանելով է հիշում։ Նա իբրև քաղաքի ամենաառաջին մարդը վայելում էր անխախտ բոլորի սերն ու հարգանքը։ Նա յուր ժամանակի մեծ մարդն էր ամբողջ գավառի մեջ» (տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 58, թ. 53—91)։

Փիլոյանցն իրավացի է։ Իրոք, Բարսեղ Արծրունին եղել է շատ հայրենասեր և հարգված մի անձնավորություն, որն իրեն ամբողջովին նվիրել է ժողովրդին ծառայելուն։ Նա աշխի է ընկել նաև Հին Բայազետում։ Պրոֆ. Վ. Պարսամյանը իր «Հայաստանը 19-րդ դարի առաջին կեսին» աշխատության մեջ պատմում է, որ դեռևս 1829 թվականին ռուսների կողմից նվաճված Բայազետը Թուրքերից պաշտպանելու գործում ցուցաբերած խիզախության համար ռուսական կառավարությունը Բարսեղ Արծրունուն պարգևատրել է «Արիության համար» արծաթե մեդալով (էջ 76)։

Ահա այս Արծրունին, որ զրկված է եղել իր զավակներն ունենալու բախտավորությունից, գիշեր-ցերեկ մտածել է նոր Բայազետի երեխաներին կրթության տալու և երջանկացնելու մասին։

Փիլոյանցը նշել է, որ մինչ ծխական դպրոցի հիմնումը նոր Բայազետում գործել են զանազան տիրացուների կողմից բացված խալիֆայական վարժոցներ, որոնց Բարսեղ Արծրունին փակել է տվել, իսկ նրանց աշակերտներին հավաքել է իր հիմնած դպրոցը։ Այդ դպրոցի առաջին ուսուցիչներն են եղել «տեղացի դպիր» Վարդան Աղիշյանը, որ «վաղուց աշակերտներ էր պահում», և Էջմիածնի ժառանգավորաց դպրոցի սան վաղարշապատցի Հակոբ Տեր-Ավետիքյանը։

«Նոր Բայազետը քաղաք դառնալով,— գրել է Փիլոյանցը,— տեղափոխված էր Տաճկաստանից գաղթած ժողովրդի դատաստանատները կառավարել ռուս և ռուսագետ (ռուսերեն իմացող,— Ս. Խ.), վրացի և օտարերկրյա հայ ծառայողներով։ Թե օրենք և թե պետական լեզուն հասկացող չկար, ուստի անհրաժեշտ կարիք էր զգացվում տեղացի մանուկներից պատրաստել ապագա ծառայողներ, ինչպես են գրագիրներ, թարգմաններ և այլ պաշտոնակատարներ, որպեսզի գորանով թե վարչական կանոններին ծանոթանային և թե բողոքող ու պատասխանատու (պատասխան տվող,— Ս. Խ.) ժողովրդի մեծամասնությունը անգիտակցաբար հաճախ տուգանքի ու պատժի չենթարկվեր։ Ռուսումնարանը վերոհիշյալ կարիքներին բավականություն չէր տալիս։ Հարկավոր էր մի հմուտ ուսուցիչ ռուսաց լեզվի համար, որը լիապես տիրապետած լիներ պետական լեզվին։ Այդ հանգամանքը ուշադրության առնելով Բ. Արծրունին հրավիրեց դանձակեցի Հարություն Աղիբեկյանցին ռուսաց լեզվի ուսուցիչ, որն ավարտել էր քաղաքական (քաղաքային —Ս. Խ.) ուսումնարանի դասընթացը» (թ. 4)։

Ահա թե որպիսի ազնիվ ու մարդասիրական նպատակ է հետապնդել իր հայրենակիցների հոգսերով տարված Արծրունին, որոշելով ինչ գնով էլ լինի ուժեղացնել ռուսաց լեզվի ուսուցումը իր հիմնած դպրոցում։ Նա դրանով էլ չի բավարարվել։ Հետապնդելով նույն նպատակը, նա հասել է այն բանին, որ 1855 թվականին (այլ փաստաթղթերով՝ 1854 թ.) Նոր Բայազետում բացվել է նաև պետական (ռուսական) միդասյան դպրոց, որի պատվավոր վերահսկիչն է նշանակվել ինքը։ Պետական դպրոցը չորսդասյա (7-ամյակի) դասընթացով անխափան գործել է մինչև 1918 թվականը։

Պետական դպրոցը 1860-ին ունեցել է 80, 1873-ին՝ 108, 1879-ին՝ 165 աշակերտ։ 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1886-ին, իսկ 1888-ին եղել է երկդասյան՝ 205 աշակերտով (հոգևորականների տղաներ՝ 11, վաճառականների՝ 37, արհեստավորների՝ 22, երկրագործների՝ 135)։ Ուսման վարձ են վճարել 161 հոգի, ձրիավարժ՝ 44 հոգի։ 1894-ին սովորողների թիվը հասել է 234-ի։ 1896-ին նորից է փակվել, վերաբացվելով միայն 1905-ի վերջերին։ Այն ժամանակ արդեն եղել է երկսեռ դպրոց, որը 1907-ին ունեցել է 9 ուսուցիչ և 323 աշակերտ (173 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում ունեցել է 6-ամյա դասընթաց և 309 սովորող, որոնցից 180 աղջիկ։ Չգիտենք, թե ինչու 1918—19 ուս. տարում դարձել է միդասյան տարրական դպրոց։

Նոր Բայազետի պետական դպրոցը 1918-ին ազգայնացվել է, իսկ 1919—20 ուս. տարում վեր է ածվել հայկական գիմնազիոնի։

«Մեղու Հայաստանի», 1869, № 11.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 58, գ. 172, գ. 120, թ. 1, ֆ. 56, գ. 32, թ. 3, գ. 43, թ. 12, գ. 50, գ. 182, գ. 129, գ. 492, թ. 116, ֆ. 19, ց. 1, գ. 65, թ. 42, գ. 5, թ. 6, 10 և 27, ֆ. 73, գ. 225։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21, գ. 1585, թ. 46, գ. 2618, թ. 25, գ. 8717, թ. 3։
«Վիճակագրական տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 63։

Նոր Բայազետի (այժմ՝ Կամո քաղաք) Հոիփսիմյան օրիորդաց դպրոց

Հիմնվել է 1867-ին նույն Բարսեղ Արծրունու ջանքերով։ Առաջին ուսուցչուհին է եղել Գայանե Թաղեոսյանը, որին մեծ դժվարությամբ հաջողվել է հավաքել 20 աշակերտուհիներ և նրանց տալ տարրական գրագիտություն։ 1872-ին աշակերտուհիների թիվն իջել է 10-ի, իսկ 1873-ին բարձրացել 56-ի։ 1877-ին ունեցել է 2 ուսուցիչ, 49 աշակերտուհի։ Եղել է տղաների դպրոցին կից։ 1879-ին այս դպրոցի համար կառուցվել է առանձին շենք՝ 2 դասասենյակով և թատրոնի գահլիճով։ Այդ ժամանակից էլ կոչվել է Ս. Հոիփսիմյան ուսումնարան, ունենալով 63 աշակերտուհի։ 1881—82 ուս. տարում արդեն երկդասյա էր՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ բաժանմունքներով, ուներ 3 ուսուցիչ, 45 աշակերտուհի։ 1885-ին փակվել է,

վերաբացվել հաջորդ թվականին։ 1888—89 ուս. տարում ուներ 83 աշակերտուհի։ 1893-ին եղել է երկդասյան դպրոց՝ 89 սովորողներով։ 1896-ին կրկին փակվել է և վերաբացվել միայն 10 տարի հետո՝ 1906-ին, որպես երկսեռ դպրոց։ 1911—12 ուս. տարվա տեղեկագրում Ն. Բայազետ քաղաքում նշված է միայն Հռիփսիմյան դպրոցը, որն ունեցել է 118 տղա և 148 աղջիկ, լինելով 5-ամյա երկդասյան դպրոց։

Հայ դպրոցների երկրորդ փակումից (1896 թ.) հետո Ն. Բայազետում բացվել է նաև աղջիկների պետական դպրոց, որը, քան երևույթին, գոյություն է ունեցել մինչև 1905 թվականը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 58; գ. 120, թ. 1; գ. 172; ֆ. 56, գ. 43, թ. 13; գ. 50, թ. 63; գ. 199, թ. 22; ֆ. 75/207, գ. 3; 1888—89 ուս. տարվա վիճ. տեղ., էջ 62; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 6; գ. 1583, թ. 50; գ. 511, թ. 20; «Աբարաս», 1878, ԺԲ, էջ 457; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպր. 1911—12 թթ.»։

Նոր Բայազետի մեծահասակների կիրակնօրյա դպրոց

Կովկասի հայ բարեգործական ընկերության Նոր Բայազետի մասնաճյուղը իր միջոցներով քաղաքի հասարակավոր բնակչության համար բացել և պահել է կիրակնօրյա դպրոց, որտեղ 1909 թվականին սովորել են 80 հոգի։ Չկարողացանք պարզել, թե երբ է հիմնվել և քանի տարի է պահպանել իր գոյությունը այդ դպրոցը։

Այս դպրոցի մասին նշված է ընկերության 1909 թ. գործունեության տեղեկագրում, իսկ 1912 թ. տեղեկագրում այն այլևս չի հիշատակված։

Հարկ է նշել, որ այդ ընկերության Նոր Բայազետի մասնաճյուղի անդամ է եղել նաև ականավոր հեղափոխական, մանկավարժ Հովհաննես Սարուխանյանը։

«Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերության 1909 թ. գործունեության», էջ 33, 53, Թիֆլիս, 1910։

Զրուչը (այժմ՝ Վարսեր, Սևանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Զրուչը գյուղի ծխական դպրոցը ևս առաջին անգամ հանդիպում է Երևանի թեմի դպրոցների 1916—17 ուս. տարվա տեղեկագրում։ Եղել է երկամյա երկսեռ դպրոց, ունենալով մի ուսուցիչ և 55 աշակերտ (12 աղջիկ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56։

Զիրուխլու (այժմ՝ Դովագյուղ, Սևանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Զիրուխլու գյուղին և նրա դպրոցի տխրահռչակ պատմությանը ընթերցողը ծանոթ է հայ մեծ վիպասան Մուրացանի «Առաքյալը» հանրահայտ վիպակից։ Անցած դարի արխիվային փաստաթղթերում մեզ չի հանդիպել այդ գյուղի դպրոցի վերաբերյալ որևէ հիշատակություն։

Ավելի ուշ շրջանի փաստաթղթերից երևում է, որ այնտեղ հայ եկեղեցական ծխական միդասյան արական դպրոց է բացվել 1907-ին։ Ունեցել է 80 աշակերտ։ Գտնվել է անկանոն վիճակում, պարապմունքներն սկսվել են դեկտեմբերին և ավարտվել մարտին։ Պահվել է ԿՀԲ ընկերության դրամական օժանդակությամբ։ 1911—12 ուս. տարում ունեցել է մի ուսուցիչ և 100 աշակերտ (10 աղջիկ), իսկ 1912—13 ուս. տարում միայն 30 աշակերտ (3 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում ավելի քիչ՝ 47 հոգի։ 1915-ին՝ գարձյալ 50 աշակերտ։ 1919-ին գործել է։

1916—17 թվականներին Զիրուխլու գյուղում գործել է պետական միդասյան դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 117, թ. 38; գ. 182, թ. 9; ֆ. 7, գ. 172, թ. 6; գ. 167, թ. 1—56; ֆ. 48, գ. 537; գ. 511, թ. 5; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 56; «Նոր դպրոց», 1908, N 3, էջ 85; էջ 90, 1910, N 2, էջ 56; «Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպր. 1911—12 թթ.»։

Ջրաղացներ գյուղակի ծխական դպրոց

Նոր Բայազետի գավառի Ջրաղացներ գյուղակի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է Երևանի թեմի ծխական դպրոցների 1913—14 ուս. տարվա տեղեկագրում։ Եղել է միդասյան դպրոց՝ մեկ դասարանով։ Ունեցել է 32 սովորող (2 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 172, թ. 6; «Աբարաս», 1914, էջ 101։

Ռնդամալ (այժմ՝ միացած Հրազդան քաղաքին) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1876-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 27 աշակերտ, 1881-ին՝ 40 աշակերտ։ 1884-ին նույնպես գործել է, իսկ 1885-ին՝ փակվել։ Հավանաբար այս դպրոցը երկար տարիներ չի գործել և վերաբացվել է միայն 1905-ին։ 1907—08 ուս. տարում եղել է երկսեռ ծխական դպրոց, ունենալով 2 ուսուցիչ և 70 աշակերտ (7 աղջիկ)։ 1911—12 ուս. տարում եղել է երկսեռ ծխական դպրոց՝ ունենալով 2 ուսուցիչ և 83 աշակերտ (6 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում ունեցել է 2 դասարան, ուր սովորել են 95 տղա, 6 աղջիկ (մի այլ փաստաթղթում՝ 71 աշակերտ)։

1917-ին ունեցել է քառամյա դասընթաց, 2 ուսուցիչ և 115 աշակերտ (12 աղջիկ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 71, թ. 5; գ. 50, թ. 61—64; գ. 117, թ. 42; գ. 182, թ. 9; գ. 492, թ. 116; ֆ. 7, գ. 172, թ. 5; գ. 167, թ. 1—56;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 8717, թ. 6; «Տեղեկագիր Երևանի թեմի ծխ. դպր. 1911—12 թթ.», ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 56։

Սևանի կղզու գիշերօթիկ դպրոց

1909-ին Սևանի կղզու մենաստանում բացվել է գիշերօթիկ երկդասյան դպրոց։

«Արարատ», 1909, № 10—11, էջ 785։

Սոլակ գյուղի (Հրազդանի շրջ.) ծխական դպրոց

Հիմնվել է 1876-ին՝ տեղի հասարակության ընդհանուր որոշմամբ։ Կաթողիկոսը նույն թվականի սեպտեմբերի 20-ի իր կոնդակով հավանություն է տվել այդ դպրոցի բացմանը և հաստատել է հոգաբարձության կազմը։ Ավանդվել են հայոց լեզու, կրոն, եկեղեցական ձայնագրություն։ 1881-ին ունեցել է մի ուսուցիչ, 55 աշակերտ։

1884-ին եղել է միդասյան արական դպրոց, 1885-ին փակվել է։ Արխիվային մի փաստաթղթում նշվում է, որ այս դպրոցը բացվել է 1890-ին։ Դա, իհարկե, վերաբացման տարեթիվն է։ Երկրորդ վերաբացումը տեղի է ունեցել 1907-ին, որտեղ այս դպրոցը ևս 1896-ին կամ հաջորդ երկու տարիներին փակվել է։ 1911—12 ուս. տարում եղել է քառամյա արական դպրոց, բայց ունեցել է միայն մի դասարան, ուր սովորել են 28 տղա։ 1912—13 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 26-ի։ Նշվում է 1914-ի մի ցուցակում ևս՝ 50 աշակերտով։ 1917-ին ունեցել է քառամյա դասընթաց, 81 աշակերտ (15 աղջիկ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 21, թ. 99—102; գ. 50, թ. 61—64; գ. 117, թ. 44; ֆ. 7, գ. 172, թ. 5; գ. 167, թ. 1—56; ֆ. 48, գ. 511, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47;
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպրոցն. 1911—12 թթ.», ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 56։

Վալի-Աղալու (այժմ՝ Զորագյուղ, Մարտունու շրջ.) գյուղի ծխական դպրոց

Նոր Բայազետի գավառի Վալի-Աղալու գյուղի հասարակության որոշմամբ 1894 թ. նոյեմբերին այդ գյուղում բացվել է միդասյան արական եկ. ծխական դպրոց։ 1896-ին կամ հաջորդ տարում փակվել է, վերաբացվել է 13 տարի հետո՝ 1909-ին, ունենալով 1 ուսուցիչ, 45 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1914-ի փետրվարին աշակերտների թիվը նույնն է եղել։ Պահվել է ԿՀԲ ընկերության նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 228, գ. 192, թ. 22—23։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 56։

Ցամաքաբերդ (Հրազդանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է Երևանի թեմի 1907—08 ուս. տարվա դպրոցների ցուցակում։ Եղել է երկսեռ միդասյան դպրոց, ուր սովորել են 36 տղի (6 աղջիկ)։ Ինչպես երևում է, հետագայում փակվել է և վերաբացվել 1913-ին։

1913—14 ուս. տարում ունեցել է միայն մեկ դասարան, 56 աշակերտ (բոլորը տղաներ), 1917-ի՝ 46 աշակերտ (4 աղջիկ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 9, ֆ. 7, գ. 172, թ. 6, «Արարատ», 1913, էջ 995։
«Նոր դպրոց», 1908, N3, էջ 85 և 90։

Փաշաքենդ (այժմ՝ Մարմարիկ, Հրազդանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1873-ին։ 1884-ին գործել է, իսկ 1885-ին՝ փակվել։ Հավանաբար երկար տարիներ չի գործել, վերաբացվելով միայն 1895-ի վերջերին։ 1896-ին փակվել է։ Վավերագրերում ցույց են տրված վերաբացման տարբեր թվականներ՝ 1904, 1905, 1906 և 1908։ Ավելի հավաստի է 1905-ը (հիմք՝ այդ թվականին վերաբացված հայ դպրոցների, այդ թվում նաև Փաշաքենդի դպրոցի մասին Երևանի թեմի առաջնորդի ներկայացրած տեղեկագիրը)։

1907—08 ուս. տարում այնտեղ սովորել են 108 տղա և 8 աղջիկ։ 1912—13 ուս. տարում ունեցել է 80 աշակերտ (12 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում եղել է եռամյա դպրոց՝ 2 դասարանով, որտեղում սովորել են 88 տղա, 8 աղջիկ։ 1916-ին կաթողիկոսը օրհնության կոնդակ է ուղարկել այդ գյուղի դպրոցի շինարարության հանձնաժողովի անդամներին՝ «1915 թ. ընթացքում միահամուռ ջանքերով դպրոցական շենքը սկսելու և վերջացնելու առթիվ»։ Մասամբ պահվել է ԿՀԲ ընկ. նպաստով։ 1917-ին՝ երկամյա, 97 աշակերտով (34 աղջիկ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 192, թ. 24—25, գ. 50, թ. 64, գ. 182, թ. 9, գ. 492, թ. 116, ֆ. 7, գ. 172, թ. 6, գ. 167, թ. 1—56։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 6, ֆ. 12, ց. 7, գ. 866, թ. 159։
«Նոր դպրոց», 1908, N 5, էջ 88, «Արարատ», 1916, N 6, էջ 454։

Քաղսի (Հրազդանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Գիտենք միայն, որ այս դպրոցը ևս 1884-ին գործել է, իսկ 1885-ին՝ փակվել։ Հետագա տասնամյակների տեղեկագրերում ու փաստաթղթերում չի երևում։ Ավելի ուշ Քաղսի գյուղում գործել է պետական (ռուսական» դպրոց։

1919-ին Վերին Քաղսի և Ներքին Քաղսի գյուղերում ցույց են տրված առանձին ծխական դպրոցներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61—64, ֆ. 48, ց. 1, գ. 511, թ. 5։

Քարվանսարա (Աթաբեկյան, այժմ միացված Հրազդան քաղաքին) գյուղի ծխական դպրոց

Ըստ աբխիվային տվյալների այս գյուղի ծխական դպրոցը հիմնվել է 1907-ին, ունենալով 52 աշակերտ։ 1911-ին ունեցել է 1 ուսուցիչ և 40 աշակերտ (1 աղջիկ), իսկ 1912-ին՝ 35 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1913—14 ուս. տարում եղել է քառամյա դպրոց 2 դասարանով, որոնցում սովորել են 71 տղա, 9 աղջիկ (1914-ի փետրվարին ցույց է տրված 95 աշակերտ)։ 1916-ին գործել է, որոշ նպաստ ստանալով թեմի դպրոցական ֆոնդից։

1917-ին ունեցել է քառամյա դասընթաց, մեկ ուսուցիչ և 60 աշակերտ (10 աղջիկ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 117, թ. 40, գ. 182, թ. 9, ֆ. 7, գ. 172, թ. 6.
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպրոցների, 1911—12 թթ.»։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28, «Աբրաամ», 1916, էջ 7։

Քոլաղրան (այժմ՝ Ծովինար, Մարտունու շրջ.) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1908-ին, 1911—12 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ, 47 աշակերտ, իսկ 1912—13 ուս. տարում՝ 32 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1913—14 ուս. տարում եղել է երկամյա դպրոց՝ մեկ դասարանով։ Ունեցել է ընդամենը 12 աշակերտ (1914-ի փետրվարին ցույց է տրված նույնիսկ 7 աշակերտ)։ 1916-ին նպաստ է ստացել թեմի դպրոցական ընդհանուր ֆոնդից։ 1917-ին ունեցել է եռամյա դասընթաց, մեկ ուսուցիչ և 50 աշակերտ (4 աղջիկ)։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 192, թ. 26—27, ֆ. 7, գ. 172, թ. 6, գ. 167, թ. 1—56։
«Տեղեկագիր Երևանի թեմի ծխ. եկ. դպր. 1911—12 թթ.»։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 192, թ. 26—27, ֆ. 7, գ. 172, թ. 1, գ. 167, թ. 1—56, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 1, գ. 264, թ. 28, «Աբրաամ», 1916, էջ 7։

Օրդաքլու (այժմ՝ Լճաշեն, Սևանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1907-ին։ Եղել է երկսեռ ծխական դպրոց, ունենալով 41 աշակերտ։ 1911—12 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ, 51 աշակերտ (6 աղջիկ), 1912—13 ուս. տարում՝ 37 աշակերտ (3 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում եղել է եռամյա դպրոց՝ մեկ դասարանով, ուր սովորել են 35 հոգի (բոլորը տղաներ)։ Մի այլ փաստաթղթերում ցույց է տրված 37 աշակերտ։ 1919-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 192, թ. 54—85, գ. 182, թ. 9, ֆ. 7, գ. 172, թ. 6։
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպ. 1911—12 թթ.», ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 253, թ. 56, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 48, ց. 1, գ. 511, թ. 5։

Նոր Բայազետի գավառում տարբեր ժամանակներում բացված ու գործած պետական հասարակական և ազգային եկեղեցական դպրոցներ

№	Բնակավայրը	Բնակավայրի ներկա անունը (եթե փոխվել է)	Շրջանը	Դպրոցի բացման թվականը	Ինչպես է կոչվել դպրոցը	Դպրոցի տիպը 1912-ին
1	Աղյուսան Ներքին	Ն. Գեհաշեն	Մարտունու	1917-ին գործել է	—	—
2	Այգեքանդրովկա	Զկալովկա	Սևանի	1902	գյուղ. ուս.	միգասյան
3	Ախտա Ներքին	Հրազդան գ.	—	1884	»	»
4	Ագպիրիր	Լճափ	Կամոյի	1907	»	»
5	Բասարգեչար	Վարդենիս	Վարդենիսի	1890	»	երկգասյան
6	Բշնի		Հրազդանի	1916-ին գործել է		միգասյան
7	Գյոգչայդարա	Վարդենիկ	Մարտունու	1885	»	երկգասյան
8	Գյոլ	Լիճք	Մարտունու	1909	»	միգասյան
9	Գոմաձոր	—	Սևանի	1905	»	միգասյան
10	Դալիգաբրդաշ	Մարտիրոսան	Կամոյի	1897	»	երկգասյան
11	Ելենովկա	գ. Սևան	Սևանի	1885	»	»
12	Ելենովկա			1917-ին գործել է	(իպական)	
13	Երանոս	—	Մարտունու	1916-ին գործել է		միգասյան
14	Զոգ	—	Վարդենիսի	1884		
15	Ծաղկունք	—	Սևանի	1907	»	միգասյան

1	2	3	4	5	6	7
16	Կոստանդնո-նովկա (Դա-բաշիշաղ)	քաղ. Ռազկա-ձոր		1900	»	միդասյան
17	Զարանդուղ Ներքին	Մարտունի	Մարտունու	1904	»	երկդասյան
18	Մագրա Մեծ	—	Վարդենիսի	1900	»	միդասյան
19	Նագաժդինո	Շորժա	Կրասնոսելսկի	1902-ին գործել է	»	
20	Նոր Բայազետ	բ. Կաժո	—	1854	քաղաքային ուսումնարան	1914-ից բարձր տարրական ուսումնարան (4 դասյան)
21	Նոր Բայազետ	քաղ. Կաժո	—	1902-ին գործել է		միդասյան
22	Նոր Բայազետ		—	1902-ին գործել է	տարրական իգական	միդասյան
23	Նովո Միխայլովկա	Կրասնոսելսկ	Կրասնոսելսկի	1900-ին գործել է	ուղղափառ եկ. ծխ. դպ.	
24	Շահրիզ	Գեղամական	Սևանի	1916-ին գործել է	տարրական դպ.	—
25	Չիրուխլու	Ծովագյուղ	Սևանի	1916-ին գործել է		—
26	Սեմյոնովկա	—	Սևանի	1902-ին գործել է	տարրական դպ.	միդասյան
27	Սուրբոյ Ֆան-տան	Ֆանտան	Հրազդանի	1912-ին գործել է		
28	Քազաք	—		1908-ին գործել է		

ՇԱՐՈՒՐ—ԴԱՐԱԼԱԳՅԱԶԻ ԳԱՎԱՌ

Ազատեկ գյուղի (Ագիզբեկովի շրջ.) ծխական դպրոց

Ազատեկ գյուղի ծխական դպրոցի մասին մեզ կարևոր տեղեկություններ է հաղորդել «Արձագանք» շաբաթաթերթը։ Քաջերունու «Դպրոցական գործը Շարուր-Դարալագյազի գավառում» հոդվածում, որը հրապարակված է թերթի 1887 թ. № 8-ում, ասված է. «Ազատեկ գյուղ։ Մինչև 1859 թվականը գյուղի տիրացուները գոմերի մեջ պահում էին մոնթեր։ Բայց հիշյալ թվականին գյուղի ծխատեր քահանա Սիմեոն Կոստանդյանը յուր սենյակում ժողովեց մինչև 30 աշակերտ Ազաղեքից, Փոռից, Մարտիրոսից, Փաշալուից, Կորագիզից, Ղոյթուղից և Բաշաբյանգից, պարապեցրեց նրանց հետ «այբուբենարան, ժամագիրք, գործք առաքելոց և Ջամշյանի թերականություն»։

Ուրեմն այդ դպրոցը մեր հնագույն ծխական դպրոցներից մեկն է, որի 125 ամյակը լրացավ 1984-ին։

Հիշյալ Սիմեոն Կոստանդյանը իր հիմնած դպրոցում աշխատել է երկար տարիներ։ 1871-ին ունեցել է 40 աշակերտ։ Սակայն 1874-ին նա թողել է դպրոցը՝ աշակերտների անկանոն հաճախելու և ուսման վարձը չվճարելու պատճառով։

Մոտ երկու տարի դպրոցը փակ է մնացել։ 1876ին այդ դպրոցի ուսուցիչ է նշանակվել Ս. Խաչ վանքի տիրացու Հակոբը, իսկ նրա օգնական՝ Սիմեոն Կոստանդյանի որդին՝ Մկրտիչը։ Վերջինս բավականաչափ պատրաստված է եղել, քանի որ ավանդել է «Մայրենի լեզու, եկեղեցական և ազգային երգեցողություն, վայելչագրություն, պատմություն հայոց և ռուսերեն»։

1877-ի փետրվարին երկուսն էլ հրաժարվել են ուսուցչությունից՝ ցածր վարձատրության պատճառով։ Դպրոցը նորից փակվել է, բայց թե երբ է վերաբացվել, հայտնի չէ։ Քաջերունու հոդվածի համաձայն Ազատեկի դպրոցը 1887-ին գործել է, բայց մինչև ե՞րբ, դարձյալ անհայտ է։ Հետագա տարիների փաստաթղթերում այդ դպրոցը մեզ այլևս չի հանդիպել։

Դիտենք սակայն, որ Ազատեկ գյուղում 1914-ին գործել է պետական միդասյան դպրոց։ Դուցե հենց նա էլ փոխարինել է ծխական դպրոցին։

«Արձագանք», 1887, № 2 և 8.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 163, թ. 1—4։

Արփա (այժմ՝ Արեգի, Եղեգնաձորի շրջ.) գյուղի եկեղեցական ծխական դպրոց

Շարուր-Դարալագյազի գավառի Արփա գյուղում 1889-ին հիմնվել է միդասյան արական ծխական դպրոց, որը սակայն չի երևում հետագա տարիների ու տասնամյակների փաստաթղթերում և տեղեկագրերում։

Հայտնի է, որ 1902-ից Արփա գյուղում գործել է պետական միդասյան դպրոց, որտեղ 1908-ին սովորել են 40 հայ երեխաներ։ Այդ դպրոցը ցուցց է տրված նաև պետական դպրոցների 1914 և 1917 թվականների ցուցակներում։ 1917-ին ունեցել է 34 աշակերտ (բոլորը հայեր)։ Հաջորդ տարում ազգայնացվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 43, թ. 3—22; գ. 46, թ. 21; գ. 163, թ. 1—4; ֆ. 19, ց. 1, գ. 593, թ. 4; գ. 1521, թ. 2—7; գ. 380, թ. 47։

Ալաքլու (Ալմալու, այժմ՝ Խնձորուտ, Ագիգբեկովի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ալաքլու (Ալմալու) գյուղի հայկական ծխական դպրոցն առաջին անգամ հանդիպում է Երևանի թեմի հայ դպրոցների 1916—17 ուս. տարվա տեղեկագրում։ Ունեցել է մի բաժանմունք, մի ուսուցիչ և 35 աշակերտ (15 աղջիկ)։

Ալաքլու գյուղում ազգային դպրոցի ուշ բացման հիմնական պատճառը եղել է այն, որ այդ գյուղում դեռևս 1897 թվականից բացվել ու գործել է պետական դպրոց։ Վերջինս 1912-ին եղել է միդասյան։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56։

Բաշքենդ (այժմ՝ Վերնաշեն, Եղեգնաձորի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Բաշքենդ գյուղում ուսումնական գործի գոյության մասին մեզ որոշ տեղեկություն է տալիս «Արձագանք» լրագիրը։ Այդ լրագրի 1887-ի համարներից մեկում գրված է, որ Մալիշկա գյուղի առաջին ուսուցիչ տիրացու Հակոբ Մաթևոսյանը «իր ուսումը ստացել է Բաշքենդի քահանայի մոտ 1853 թ.»։

Ուրեմն դեռևս 1853 թվականին (ամենայն հավանականությամբ դրանից էլ առաջ) Բաշքենդ գյուղում գործել է դպրոց (իհարկե խալֆայական)։

Այնուհետև նույն թերթից իմանում ենք, որ վերոհիշյալ Հակոբ Մաթևոսյանը ընդամենը մի ամիս աշխատելով Մալիշկայի դպրոցում, վերադարձել է Բաշքենդ և, օծվելով քահանա, մնացել է այնտեղ։ Եթե Բաշքենդի նախկին քահանան, որի մոտ իր ուսումն էր ստացել հիշյալ Մաթևոսյանը, ինչ-ինչ պատճառներով այլևս չի դասավանդել, ապա անկասկած, նրա գործը շարունակել է քահանայության պաշտոնում նրան փոխարինած իր նախկին աշակերտը։ Լրագրի համաձայն վերջինս մինչև 1887 թ. աշխատել է դպրոցում։

Այս դպրոցի հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։ Արխիվային փաստաթղթերում և այլ աղբյուրներում այն մեզ չի հանդիպել։ Սակայն դժվար է ենթադրել, որ այն ընդմիշտ փակվել է և հետագա տարիներին այլևս չի գործել։ Այն փաստը, որ Բաշքենդ գյուղում 1905-ին բացվել է պետական (ռուսական) դպրոց, վկայում է, որ դրանից առաջ այնտեղ գործել է հայկական դպրոց, որի շենքում էլ, հավանաբար, բացվել է պետական դպրոցը։ Վերջինս եղել է միդասյան և գործել է մինչև 1917—18 թվականները։

«Արձագանք», 1887, էջ 101—105։

Գնիշիկ (Եղեգնաձորի շրջ.) գյուղի եկեղեցական ծխական արական դպրոց

Հիմնվել է 1887-ի նոյեմբերի 20-ին։ Եղել է միդասյան արական ծխական դպրոց։ 1888—89 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ, 35 աշակերտ։ 1891-ին ցույց է տրված որպես միդասյան արական դպրոց։ Հետագա տարիների ցուցակներում այլևս չի հանդիպում։

Հայտնի է, որ Գնիշիկ գյուղում 1912-ից գործել է պետական միդասյան դպրոց։

«Մուրճ», № 7, էջ 1020;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 46, թ. 22; գ. 43, թ. 3—22, գ. 163, թ. 1—4; ֆ. 20, գ. 232, թ. 6;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարի», էջ 45;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 8։

Էրդափին (այժմ՝ Եղեգիս, Եղեգնաձորի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1910-ին, 1912—13 ուս. տարում եղել է միդասյան երկսեռ դպրոց, ունենալով 30 աշակերտ (3 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում ունեցել է եռամյա դասընթաց և 39 աշակերտ (4 աղջիկ)։ Ցույց է տրված նաև 1914-ի մի այլ ցուցակում (40 աշակերտ)։ Պահվել է ԿՀԲ ընկ. նպաստով։ 1917-ին ունեցել է մի ուսուցիչ, 49 աշակերտ (7 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 192, թ. 42—43; ֆ. 7, գ. 172, թ. 8; գ. 167, թ. 1—56;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28; ԿՀԲ ընկ. 1912 թ. տեղեկագիրը, էջ 32։

Ղոյթուր (այժմ՝ Գետափ, Եղեգնաձորի շրջ.) գյուղի ծխական դպրոց

«Արձագանք» շաբաթաթերթում տպագրված՝ Քաջբերունու «Դպրոցական գործը Շարուր-Դարալագյազի գավառում» հոդվածից իմանում ենք, որ Փոռ գյուղի դպրոցի նախկին ուսուցիչ Մարգիս Հասրաթյանը մի տարի՝ 1866 թվականին ուսուցչություն անելով Ղոյթուր գյուղում, հաջորդ՝ 1867 թվականին գնացել է Մարտիրոս գյուղը, որտեղ և մահացել է։

Ուրեմն 1866-ին Ղոյթուր գյուղում դպրոց է գործել։ Հավանաբար ինքը՝ Հասրաթյանն էլ այն հիմնել է և իր հեռանալով խափանել է նրա հետագա գոյությունը։ Այդ գյուղի դպրոցի մասին մեզ այլ տեղեկություններ չեն հանդիպել։ Գիտենք, որ Ղոյթուր գյուղից որոշ թվով երեխաներ սովորել են Ազատեկի դպրոցում։

«Արձագանք», 1887, №8։

Ղուշչիբիլագ (Ղուշչի, այժմ՝ Կեչուտ, Ազիզբեկովի շրջ.) գյուղի հայկական ծխական դպրոց

Էջմիածնի սինոդի մի գրությունից իմանում ենք, որ Շարուր-Դարալագյազի գավառի Ղուշչիբիլագ գյուղում 1892-ին բացվել է հայկական եկեղեցական ծխական դպրոց, որը նույն սինոդի կարգադրությամբ 1893-ին փակվել է՝ «Մինչև ամենայն հայոց Նորընտիր կաթողիկոսի ժամանելը»։ Փակման պատճառը չի նշված (այդ դպրոցի հետ փակվել են Երևանի թեմի նաև 21 այլ դպրոցներ)։ Ինչպես երևում է այս դպրոցը այլևս չի բացվել, քանի որ չի երևում հետագա տարիների փաստաթղթերում։ Հայտնի է, որ Ղուշչի-Դեմուրչի գյուղերի համար 1900-ից բացվել ու գործել է պետական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 4959, թ. 9, 10, 13։

Մարտիրոս գյուղի (Ազիզբեկովի շրջ.) ծխական դպրոց

«Արձագանք» շաբաթաթերթի 1887 թվականի մի քանի համարում հրապարակվել է Քաջբերունու «Դպրոցական գործը Շարուր-Դարալագյազի գավառում» հոդվածը։ Այդ հոդվածից իմանում ենք, որ Փոռ գյուղի դրպրոցի նախկին ուսուցիչ Մարգիս Հասրաթյանը մի տարի ուսուցչություն անելով Ղոյթուր գյուղում, 1867-ին գնացել է Մարտիրոս գյուղը, որտեղ և շարունակել է իր մանկավարժական աշխատանքը։ Այնտեղ էլ նա մահացել է։

Քաղբերունու հոդվածից իմանում ենք նաև, որ սկսած 1873-ից Մարտիրոս գյուղում ուսուցչություն է արել Ռաշբենդ գյուղացի Դավլաթը, որը հավաքել է 10—15 երեխա և սովորեցրել։ Գյուղի հասարակությունը շատ գոհ է եղել հիշյալ ուսուցչից և հույս է հայտնել, որ «սրանից հետո էլ երևի նույնը կլինի»։ Ուրեմն Դավլաթի դպրոցը մինչև 1887 թվականը գործել է։ Այն գործել է նաև 1890-ին, քանի որ այդ թվականին կաթողիկոսը հաստատել է Փաշալու և Մարտիրոս գյուղերի միդասյան ծխական դպրոցների հոգաբարձության կազմը։ Չենք կասկածում, որ այն շարունակել է գործել նաև հետագա տարիներին։

Մարտիրոսը եղել է ժամանակի խոշոր հայաբնակ գյուղերից մեկը՝ 1914-ին ունենալով 1500-ից ավելի բնակիչ։

«Կովկազսկի կալենդար», 1915, էջ 155։
«Արձագանք», 1887, N8։
«Աբարաս», 1890, N12, էջ 697։

Մալիշկա գյուղի (Եղեգնաձորի շրջ.) ծխական դպրոց

Ըստ «Արձագանքի» Մալիշկա գյուղում դպրոց է գործել 1853 թվականից։ Առաջին ուսուցիչն է եղել տիրացու Հակոբ Մաթևոսյանը, որը հավաքելով գյուղի 15 երեխաների, սովորեցրել է այբբենարան, ժամագիրք և սաղմոս։ Յուրաքանչյուր աշակերտից ստացել է «1 բեռ (10 փութ) ցորեն, վառելիք և հերթական ուտելիք»։ Սակայն այս տիրացուն պարապել է միայն մի ամիս։ 1854—57 թթ. պարապել է տիրացու Հարությունը։

Հետագայում հավանաբար այս դպրոցը փակվել է և վերաբացվել միայն 1873-ին։ Երեք տարի հետո դարձյալ փակվել է։

1875 թ. Մալիշկայում բացվել է նաև կենտրոնական գիշերօթիկ դրպրոց, ուր այդ գյուղի երեխաներից սովորել է միայն մի հոգի։ Հավանաբար այս դպրոցն էլ երկար տարիներ փակ է մնացել, վերաբացվելով 1891-ին (ավելի ճիշտ՝ 1890-ին), որը և սխալմամբ նրա հիմնադրման տարեթիվն է համարվել։ 1895-ին եղել է միդասյան արական դպրոց՝ 25 աշակերտով։ 1896-ին փակվել է։ Վերաբացման և հետագա տարիների գործունեության վերաբերյալ տեղեկություններ չունենք։ Շատ տարիների տեղեկագրերում այն ցույց չի տրված։ Գիտենք միայն, որ ծխական դպրոցի փակումից տարիներ հետո (1907-ին) կառավարությունը Մալիշկա գյուղում բաց է արել պետական դպրոց։

1918—19 ուս. տարում այն վեր է ածվել ազգային դպրոցի։

1976 թ. տոնվեց Մալիշկա գյուղի դպրոցի 100-ամյակը։ Դա, իհարկե, թյուրիմացություն է, քանի որ, ինչպես տեսանք, Մալիշկայում դպրոց է գործել դեռևս 1853—57 թվականներին։

«Արձագանք», 1887, էջ 162; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 120, թ. 1; 163, թ. 1—4; ֆ. 75/207, գ. 5, թ. 52; «Աբարաս», 1890, N 12, էջ 697; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 30 և 76։

Խաչիկ գյուղի (Եղեգնաձորի շրջ.) ծխական դպրոց

Այս դպրոցի համառոտ պատմությունը ձեռագիր վիճակում պահվում է պետական արխիվում։ Ըստ այդ ձեռագրի, Խաչիկ գյուղի դպրոցը հիմնվել է 1870-ին (սկզբում որպես խալֆայական դպրոց)։ Նույնն է հաստատում նաև «Արձագանք» լրագիրը, ուր նշված է, որ «մինչև 1870 թ. Խաչիկ գյուղը դպրոց չի ունեցել»։ Նույն լրագիրը հայտնում է, որ «Նորաբաց դպրոցում նստարաններ չկային։ Յուրաքանչյուր աշակերտ գետնի վրա պատի տակ ձգում էր շորի կամ խոտի կոտոր և վրան ծալապատիկ նստում։ Դասարանի ծայրում գրած էր մահճակալ լուր անկողնով։

Դաս սովորելը կատարվում էր դասատան մեջ անձայն, ըստ որում աշակերտները դասամիջոց չունեին։ Առավոտ գալով կմնային դասատնում մինչև կեսօր, ապա կերթային ճաշելու և իսկույն կվերադառնային և կուսանեին մինչև երեկո։ Առանձնակի դուրս կերթային իբրև հարկավորություն համար։ Այս դեպքում էլ կարգ ու կանոն կային. դասատան դռան մոտ պատից կախված էր փոքրիկ տախտակ, մի երեսի վրա գրած՝ գնա, մյուսի վրա՝ մնա։ Հարկավորություն ունեցող աշակերտը դուրս գնալու համար այլևս թույլտվություն չէր խնդրիլ, այլ ուղղակի կկանգներ, գլուխը կխոնարհեցներ վարժապետին և փոքրիկ տախտակը կդարձներ այնպես, որ գնա երեսը կնայեր պատին, ապա վերադառնալով տախտակը նորից կդարձներ, որով հերթ կբանար մյուս աշակերտաց համար։

... Ուսուցանվում էր միայն հայոց լեզու հետևյալ գրքերով և գներով (ամսական). այբբենարան մի կանոն սաղմոս՝ 25 կոպեկ, ութ կանոն սաղմոս և ժամագիրք՝ 35 կոպեկ, Նարեկ և Գործք առաքելոց՝ 50 կոպեկ, քերականություն՝ 80 կոպեկ...» («Արձագանք», 1887, էջ 105)։

Ահա այսպիսին էին խալֆայական դպրոցները։

Արխիվային փաստաթղթերը հաստատում են Խաչիկ գյուղի դպրոցի գոյությունը նաև 1871 և 73 թվականներին։ Ունեցել է 30 աշակերտ։ Դպրոցը սկսում է կարգավորվել, երբ այնտեղ ուսուցչության է գալիս Գաբրիել Հովհաննիսյանը, իսկ հասարակությունն էլ ընտրում է հոգաբարձություն։ Հովհաննիսյանի հեռանալուց հետո դպրոցը փակ է մնում 1880—1887 թթ., 1887-ին վերաբացվելուց հետո գոյություն է ունենում միայն երկու տարի, դարձյալ փակվում է և նորից վերաբացվում 1892—93 ուս. տարում (մի այլ փաստաթղթի համաձայն 1891-ին գործել է)։ Դպրոցը չի ունեցել իր սեփական շենքը։ Առհասարակ նրա ընթացքը եղել է շատ անկանոն։

Հարկ է նշել, որ 1893-ից սկսած մինչև 1918—19 ուս. տարվա բոլոր պաշտոնական ցուցակներում (մեր ձեռքի տակ եղած) Խաչիկի ծխական դպրոցի մասին ոչինչ չի ասվում։ Հայտնի է, որ 1910 թվականից (մեր կարծիքով ավելի վաղ ժամանակներից) Խաչիկ գյուղում գործել է պետական միդասյան դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 58; ֆ. 57, գ. 284, թ. 1—7; գ. 163, թ. 1—4;
ֆ. 56, գ. 32, թ. 4; գ. 43, թ. 16; ֆ. 19, ց. 1, գ. 1521, թ. 4;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 9;
«Արձագանք», 1887, էջ 105;
«Մուրճ», 1890, N7, էջ 1020; «Памятная книжка Эриванской губернии на 1914 год», էջ 53—71։

Խանլղլար (Խանղլար, Խանլուղլար) գյուղի եկեղեցական ծխական արական դպրոց

1870-ական թվականների փաստաթղթերում Խանլղլար (Խանլուղլար, Խանղլար) գյուղը ցույց է տրված Երևանի Նահանգի Հին Նախիջևանի գավառում, իսկ 1880-ից՝ Շարուր-Դարալագյազի գավառում։ Նույնը նաև 1915-ին։ Մենք վերջինում էլ թողել ենք։

Խանլղլար գյուղի հայկական արական ծխական դպրոցի մասին առաջին տեղեկությունը մեզ հանդիպում է 1875-ին կազմված մի պաշտոնական տեղեկագրում, որտեղ նշված են 1873-ին գործած հայ եկեղեցական-ծխական դպրոցները։ Այդ թվականին Խանլղլարի դպրոցն ունեցել է մեկ ուսուցիչ, 26 աշակերտ։

Եթե այս տեղեկությունը ճիշտ է, ապա չգիտենք, թե ինչո՞ւ Խանլղլարի դպրոցը չի հիշատակվում 1873-ին կազմված և Էջմիածնի սինոդին ներկայացված մի այլ ցուցակում, որտեղ թվարկված են այդ թվականին Նախիջևանի գավառում գործած հայ դպրոցները։

Մեզ թվում է, որ Խանլղլարի դպրոցը հիմնվել է կամ 1873-ի վերջերին, կամ էլ 1874-ին և այդ պատճառով էլ չի մտել 1873-ի կեսերին կազմված հիշյալ ցուցակում։

Այդ դպրոցը 1876-ին գործել է, ունենալով 23 աշակերտ։ 1881-ին աշակերտների թիվը հասել է 55-ի (դարձյալ մի ուսուցիչ)։ 1885-ին փակվել է, վերաբացվելով 1886-ին։ 1891-ին եղել է միդասյան դպրոց, 1895-ին ունեցել է 35 աշակերտ, իսկ 1896-ին դարձյալ փակվել է։

Հավանաբար, վերաբացվել է 1906-ին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 83 աշակերտ (7 աղջիկ)։ 1911—12 ուս. տարում եղել է նոսմյա դպրոց՝ 98 աշակերտով (5 աղջիկ)։ 1913-ին աշակերտների թիվն իջել է 83-ի (աղջիկներ՝ 15 հոգի), 1914-ին՝ 75-ի։ 1917-ին ունեցել է 4 ուսուցիչ և 77 աշակերտ (23 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 13; գ. 71, թ. 5; գ. 50, թ. 61—64; գ. 199, թ. 17; գ. 182, թ. 8; ֆ. 7, ց. 1, գ. 35, թ. 1; գ. 167, թ. 1—56; գ. 172, թ. 7; գ. 120, թ. 1; ֆ. 19, ց. 1, գ. 116, թ. 31—33;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 1585, թ. 46; գ. 3997, թ. 9; ֆ. 12, գ. 865, թ. 30 և 76;
ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 28;
«Մեղու Հայաստանի», 1884, N 76,
«Մուրճ», 1890, N 7, էջ 1020,
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպր. 1911—12 թթ.»։

Խանդլղար գյուղի իգական ծխական դպրոց

Խանդլղարի աղջիկների դպրոցի ուսուցիչ Ե. Թարվերդյանը 1891-ին Երևանի թեմական տեսչին ուղարկած գրության մեջ հայտնում է, որ այդ դպրոցի բացման կոնդակն ինքն ստացել է 1887-ի ապրիլի 15-ին և անմիջապես սկսել է ուսուցումը։ Եվ, իրոք, 1887—88 ուս. տարում գործած հայ դպրոցների ցուցակում նշված է նաև Խանդլղար գյուղի իգական ծխական դպրոցը (արական դպրոցից բացի)։

Դպրոցն ունեցել է իր հիմնադրի (Ե. Թարվերդյանի) միջոցներով կառուցված երեք սենյակից բաղկացած մի շենք։ Ուսուցիչը պարապել է առանց վարձատրության, իսկ աշակերտուհիներից էլ ուսման վարձ չի գանձվել։ 1891-ին աշակերտուհիների թիվն եղել է 25։ Հավանաբար, այս դպրոցն էլ արական դպրոցի հետ միասին 1896-ին փակվել է, եթե, իհարկե, մինչև այդ այն շարունակել է գործել։ Մենք արդեն տեսանք, որ 1907-ից Խանդլղարում գործել է երկսեռ դպրոց։ Այնտեղ 1899-ին գործել է նաև պետական դպրոց։ Այն հավանաբար գործել է մինչև 1907 թվականը, այսինքն՝ մինչև հայկական դպրոցի վերաբացումը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 35, թ. 1—4; ֆ. 19, ց. 1, գ. 116, թ. 32;
«Մուրճ», 1890, N7, էջ 1020։

Ս. Խաչ վանքի (Եղեգնաձորի շրջ.) գիշերօթիկ դպրոց

Ըստ «Արձագանքի»՝ այս վանքի դպրոցը հիմնվել է 1875-ին, բայց երկար կյանք չի ունեցել։ Այն եղել է գիշերօթիկ և ունեցել է միայն 8 աշակերտ։ Յուրաքանչյուր գիշերօթիկ աշակերտ պետք է վճարեր տարեկան 36 ռուբլի, կամ էլ՝ «վեց ամսվա համար... մի բեռ (10 փութ) ցորենի արյուր՝ 3 ռ. 50 կոպ. արժողությամբ, կես փութ յուղ՝ 3 ռ., քառորդ փութ պանիր՝ 1 ռ., քառորդ փութ ձեթ՝ 1 ռ., քառորդ փութ բրինձ և ձավար, մի ոչխար՝ 2 ռ, վառելափայտ՝ 1 ռ., գրչանք, թուղթ, թանաք՝ 50 կոպ., դպրոցի ծառային՝ 3 ռուբլի և ուսուցչին՝ 6 ռուբլի»։

«Արձագանք», 1887, էջ 104։

Վարմազիար գյուղի (նախկին Շարուրի շրջ.) ծխական դպրոց

Պաշտոնական մի տեղեկագրի համաձայն Վարմազիար գյուղի ծխական դպրոցը հիմնվել է 1893-ին։ Մի այլ տեղեկագիր ևս հաստատում է նույն թվականը։ 1894-ին եղել է միգրասյան արական դպրոց՝ 31 աշակերտով (այլ տեղեկագրում ցույց է տրված 47 աշակերտ)։ 1896-ին փակվել է։ 1907—08 ուս. տարում ունեցել է 28 աշակերտ (3 աղջիկ)։ 1913-ին եղել է երկամյա խառը դպրոց՝ 30 աշակերտով (3 աղջիկ)։ 1914-ին ունեցել է 41 սովորող, 1917-ին՝ 70 (18 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 2; ֆ. 56, գ. 199, թ. 13—23; ֆ. 7, գ. 172, թ. 6—11; գ. 182, թ. 8; գ. 120, թ. 2; գ. 167, թ. 1—56;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 865, թ. 76; ֆ. 13, ց. 11, գ. 11, գ. 264, թ. 28։

Ուլիա Նորաշեն գյուղի եկեղեցական ծխական դպրոց

Հիմնվել է 1865-ին։ 1885-ին փակվել է։ 1888-ին եղել է արական միգրասյան դպրոց՝ 2 ուսուցչով և 46 աշակերտով։ Դասավանդել են հայոց լեզու, ուսաց լեզու և դրանց վարչագրություն, թվաբանություն, երգ, գծագրություն և կրոն։

1894-ին եղել է երկդասյան արական դպրոց՝ 51 աշակերտով։ 1896-ին նորից է փակվել կառավարության կողմից։ Վերաբացվել է, հավանաբար, 1908-ին։ Այդ տարում նպաստ է ստացել ԿՀԲ ընկերությունից։ 1911-ին եղել է երկամյա երկսեռ դպրոց, ունենալով ընդամենը 19 աշակերտ (? աղջիկ)։ 1914-ին աշակերտների թիվը հասել է 50-ի, 1917-ին՝ 112-ի (32 աղջիկ)։

1906—1917 թվականներին Ուլիա Նորաշեն գյուղում գործել է նաև պետական միդասյան դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 2; գ. 953, թ. 3—11; գ. 1521, թ. 2—7; ֆ. 56, գ. 50, թ. 61—64, գ. 199, թ. 17—23, ֆ. 7, ց. 1, գ. 120, թ. 1, գ. 172, թ. 6—11;
«Վիճ. անդ. 1888—89 ուս. տարվա», էջ 44;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 9, ֆ. 12, գ. 865, թ. 76; ֆ. 13, գ. 264, թ. 28;
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպր. 1911—12 թթ.», «Արարատ», 1908, N 11, էջ 983; «Նոր դպրոց», 1908, N 3, էջ 85։

Փաշալու (այժմ՝ Զառիթափ, Ազիզբեկովի շրջ.) գյուղի ծխական դպրոց

«Արարատ» ամսագրի 1890 թ. 12-րդ համարի «պաշտոնական բաժնում կարդում ենք.

«Կոնդակ Վեհափառն Հայրպետի աղդիս 8 հոկտեմբերի ընդ. համարով 415 յանուն յաջորդին Նախիջևանի, որով հաստատած է ի պաշտոն հոգաբարձության վասն միդասեան եկեղ. ծխական դպրոցաց աղայոց Փաշալու և Մարտիրոս գիւղօրէից զբարեկրոն Ստեփաննոս քահանայն Տեր-Ստեփանոսեանց, զերեցփոխան եկեղեցւոյ և Մարտիրոսեցի յարգելի Սիմեոնն Արզումանեանց, իսկ անձնափոխանորդ վերջնոյս զփաշալուեցի պատուելի Ստեփան Քոչարեանց» (էջ 619)։

Այս տողերից հետևում է, որ Փաշալու և Մարտիրոս գյուղերում գոյություն են ունեցել առանձին-առանձին եկեղեցական ծխական միդասյան արական դպրոցներ (տեքստում ասված է «ծխական դպրոցաց»), որոնց համար սակայն ընտրված և կաթողիկոսի կողմից հաստատված է եղել մի ընդհանուր հոգաբարձություն։

Կաթողիկոսի այս կոնդակից կարելի է եզրակացնել նաև, որ Փաշալու գյուղի դպրոցը գոյություն է ունեցել 1890-ից առաջ, քանի որ այդ թվականին հաստատվել է միայն նրա հոգաբարձության կազմը, առանց նշելու դպրոցի նորաբաց լինելը (ինչպես արվում էր նման դեպքերում)։

Փաշալու գյուղում 1897 թվականին հիմնվել և մինչև 1917 թվականը գործել է պետական երկդասյան դպրոց, իսկ այդպիսի դպրոցները բացվում էին 1895—1897 թվականներին փակված հայ դպրոցների շենքերում և պահվում էին նրանց եկամուտներով։

«Արարատ», 1890, № 12, էջ 697։

Փոռ գյուղի (Ազիզբեկովի շրջ.) ծխական դպրոց

«Արձագանք» շաբաթաթերթը 1887-ին գրել է, որ «Փոռի եկեղեցու գավթում դեռևս 1850—51 թվականին շինված էր ծխական դպրոցի համար մի սենյակ, որ վերջին տարիներս վերանորոգվեցավ» (էջ 121)։ Հավանաբար այդ թվականն էլ պետք է համարել նրա հիմնադրման տարին։ Եթե հատկապես ծխական դպրոցի համար թեկուզ մի սենյականոց շենք է կառուցվել, ապա այն պետք է օգտագործվեր։

Շաբաթաթերթը հաղորդում է նաև, որ 1855-ին այնտեղ ուսուցչության է հրավիրվել մահտեսի Սարգիս Հասրաթյանը, որը, հավաքելով 40—50 աշակերտների, նրանց հետ պարապել է «այբբենարան, ժամագիրք, սաղմոս, Գործք առաքելոց, Ջամշյան քերականություն և վարելչագրություն հայոց»։ Այդ դպրոցում նա «ժրաջանությամբ վարեց իր պաշտոնը 10 տարի՝ այսինքն, մինչև 1865 թվականը» (121)։ Նրա հեռանալով Փոռի դպրոցը խափանվում է և վերաբացվում միայն 1872-ին՝ նույն Հասրաթյանի աշակերտ Պողոս Ստեփանյանի կողմից։ 1877-ի ապրիլից այնտեղ աշխատել է Ենոք Բարայանը, որն ավանդել է հայոց և ռուսաց լեզուներ։ Ունեցել է 28 աշակերտ։ Նրան 1878-ին փոխարինել է Հակոբ Տեր-Գրիգորյանը։

«Արձագանքում» ասված է, որ այդ դպրոցի շենքը վերջին տարիներին վերանորոգվել է, հետևաբար դպրոցը մինչև 1887 թվականը գործել է։ Ինչպես երևում է, այն հետագայում փակվել է, քանի որ երկու տարբեր աղբյուրներից իմանում ենք, որ կաթողիկոսի թույլտվությամբ 1890-ին Փոռ գյուղում հիմնվել է հայկական եկեղեցական ծխական արական միդասյան դպրոց։ Անկասկած, այս դպրոցը ևս 1895—96 թվականներին փակվել է։ Տավոք, այդ դպրոցի վերաբացման և հետագա գոյության մասին մեզ տեղեկություններ չեն հասել։ Այդ գյուղը չի նշված նաև պետական դպրոցներ ունեցող գյուղերի ցուցակում։

«Արձագանք», 1887, № 8,

«Արարատ», 1890, № 7, էջ 409,

«Циркуляр Кавказского учебного округа», 1891, № 10, էջ 560.

ՀԱՎԵԼՎԱԾ

Նարատ-Կարալայազի գավառում տարբեր ժամանակներում բացված ու գործած պետական, եռատարեկան և ուղղափառ եկեղեցական դպրոցները

№	Բնակավայրի անունը	Բնակավայրի նոր անունը (եթե փոխված է)	Շրջանը	Դպրոցի բացման թվականը	Դպրոցի տիպը 1912-ին
1	Ագատեկ		Ազիզբեկովի	—	միդասյան
2	Ալաչաղ (Ալաչյաղ)	Նենոռուտ	Եղեգնաձորի	1906	միդասյան
3	Ալաքլու (Ալմալու)	Ազավնաձոր	Եղեգնաձորի	1897	երկդասյան
4	Այնաղուր (Այնաձոր)	Արևնի	»	1904	երկդասյան
5	Արփա		»	1902	միդասյան
6	Բաշնորաշեն	—	—	1885	երկդասյան
7	Բաշքենդ	Վերնաշեն	Եղեգնաձորի	1905	միդասյան
8	Գեղնաղ	—	Ազիզբեկովի	1906	միդասյան
9	Գեղչիկ	—	Եղեգնաձորի	1912	միդասյան
10	Գոմաղ	—	Ազիզբեկովի	1902-ին գործել է	չի գործել
11	Դարվիշլար (մոտ է Ալաքլու գյուղի համայնքի մեջ)	—	—	1906	միդասյան
12	Նյոփին	—	Եղեգնաձորի	1909	միդասյան
13	Ենգիջա	Գանձակ	Եղեգնաձորի	1882	երկդասյան
14	Զեյթա	—	Ազիզբեկովի	1899-ին-երկդասյան	միդասյան
15	Թումասլու	—	—	1906	միդասյան
16	Խանլղլար	—	—	1899-ին գործել է	չի գործել
17	Խաչիկ	—	Եղեգնաձորի	1910	միդասյան
18	Հասանքենդ	Շատին	Եղեգնաձորի	1916-ին գործել է	միդասյան
19	Հեր-Հեր	—	Ազիզբեկովի	1908	չի գործել
20	Ղազալչա	—	Եղեգնաձորի	1908	միդասյան
21	Ղուշչի-Գեմուրչի	Կեչուտ	գ. Ջերմուկ	1900-ին գործել է	չի գործել
22	Մաղիչկա	—	Եղեգնաձորի	1907	միդասյան
23	Ջիվա	—	Եղեգնաձորի	1916-ին գործել է	միդասյան
24	Ռինդ	—	Եղեգնաձորի	1916-ին գործել է	միդասյան
25	Ջուլ	Արտավան	Ազիզբեկովի	1904	միդասյան
26	Մարալու	—	—	1909	միդասյան
27	Ուլիա-Նորաշեն	—	—	1906	միդասյան
28	Փաշալու	Ջաուրիթաք	Ազիզբեկովի	1897	երկդասյան
29	Քեշիշքենդ	Եղեգնաձոր	Եղեգնաձորի	1898	երկդասյան
30	Քյոթանլու	Կարմրաշեն	Ազիզբեկովի	1916-ին գործել է	միդասյան

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳԱՎԱՌ

Ալեթլու գյուղի եկեղեցական ծխական դպրոց

Հիմնվել է 1879-ին։ Նույն թվականին էլ գյուղացիները դպրոցի համար կառուցել են հատուկ շենք։ Հավանաբար հետագայում փակվել է և վերաբացվել է 1894-ին՝ ունենալով 65 սովորող (մի այլ տեղեկագրի համաձայն՝ 73 սովորող)։ Եղել է երկսեռ դպրոց։ 1896-ին փակվել է։ Վերաբացման թվականը մեզ հայտնի չէ։ Գիտենք, որ 1913—14 ուս. տարում գործել է որպես երկամյա խառը դպրոց՝ 51 աշակերտով (9 աղջիկ)։ 1917-ին՝ եռամյա, 113 սովորող (43 աղջիկ)։

«Արարատ», 1879, № 6, էջ 876,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 36—38; ֆ. 7, գ. 167, թ. 1—56; գ. 120, թ. 2; գ. 172, թ. 6—11;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 666, թ. 159։

Ալի Ղամարլու (Ալիղամար) գյուղի ծխական դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագիրը դեռևս 1873 թ. հաղորդել է, որ Հմայակ վարդապետը Սուրմալուի գավառի մի շարք գյուղերում (այդ թվում նաև Ալիղամարում) հիմնել է ծխական դպրոցներ, սակայն «տեղերի քահանաների դիմադրության պատճառով դրանք փակվել են»։ Նոր դպրոցը բացվել է 1881-ին, ունենալով 45 աշակերտ, բայց նրա հիմնադրումը ձևակերպվել է 1882-ին։

Այս դպրոցը 1884-ին գործել է, իսկ 1885-ին փակվել։ Վերաբացվել է 1892-ին։ 1895-ի սկզբին եղել է միդասյան ծխական դպրոց՝ 50 աշակերտով (10 աղջիկ)։ 1896-ին դարձյալ փակվել է։ Հավանաբար բացվել է 1906-ին։ 1907—08 ուս. տարում եղել է երկսեռ տարրական դպրոց, ուր սովորել են 21 աղա և 13 աղջիկ։ 1917-ին՝ քառամյա, 194 աշակերտ։

19-րդ դարի վերջերից Ալի Ղամարլու գյուղում կազմակերպվել է նաև պետական դպրոց, որը գործել է մինչև 1917-ը։

«Մեղու Հայաստանի», 1873, № 16; «Արարատ», 1882, № 6, էջ 161;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 456, թ. 36—38; ֆ. 56, գ. 182, թ. 7—9; ֆ. 7, գ. 120, թ. 2, գ. 167, թ. 1—56;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46; ֆ. 12, գ. 865, թ. 76։

Ալիղշաղ գյուղի ծխական դպրոց

1884-ին գործել է։ 1885-ին փակվել է։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է, քանի որ արխիվային փաստաթղթերում այն այլևս չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 62։

Աղվերիս (Հախվերիս) գյուղի ծխական դպրոց

1872-ին գործել է, իսկ 1873-ին՝ փակվել։ 1884-ին նույնպես գործել է, 1885-ին՝ փակվել։

Այս դպրոցին մեկ էլ հանդիպում ենք Երևանի թեմի 1907—08 ուս. տարվա դպրոցների ցուցակում, որից և իմանում ենք, որ այն եղել է երկսեռ տարրական դպրոց, ուր սովորել են 40 աղա և 10 աղջիկ։

«Մեղու Հայաստանի», 1873, № 16։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 62; գ. 182, թ. 7—9։

Արալբխ-Բաշքենդ գյուղի ծխական դպրոց

Երևանի գավառապետի տվյալներով այս դպրոցը հիմնվել է 1884-ին, սակայն մեզ անհայտ պատճառներով չի մտել 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում։ 1895-ին այն գործել է, բայց նորից չի մտել 1896-ին փակված դպրոցների ցուցակում։ Այս դպրոցի հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։ Հավանաբար այն չի բացվել, քանի որ հայ դպրոցների ընդհանուր փակումից հետո Արալբխ-Բաշքենդ գյուղում կազմակերպվել է պետական դպրոց։ Վերջինս 1917-ին ունեցել է երկդասյան դասընթաց։ 1908-ին այնտեղ սովորած բոլոր 32 հոգին եղել են հայեր։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 46; գ. 116, թ. 40; գ. 953, թ. 3—11; գ. 1521, թ. 2—7, ֆ. 56, գ. 50, թ. 61—64; գ. 199, թ. 17—23։

Բլուր գյուղի ծխական դպրոց

1872-ին գործել է, իսկ 1873-ին փակվել։ Այն մեկ էլ հանդիպում է Երևանի թեմի 1907—08 ուս. տարվա դպրոցների ցուցակում, որից և իմանում ենք, որ այն եղել է երկսեռ տարրական դպրոց, ունենալով 2 ուսուցիչ և 70 աշակերտ (13 աղջիկ)։

1911—12 ուս. տարում եղել է երկամյա խառը դպրոց՝ 60 աշակերտով (11 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում ունեցել է 35 աշակերտ, 29 աշակերտուհի, 1917-ին՝ քառամյա՝ 310 աշակերտով (130 աղջիկ)։

«Մեղու Հայաստանի», 1873, № 16։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 7—9; ֆ. 7, գ. 172, թ. 7; գ. 167, թ. 1—56;
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպր. 1911—12 թթ.»։

Բհաղու գյուղի ծխական դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագրի 1873 թ. համարներից մեկում նշված են «Սուրմալուի նահանգի» հայկական այն գյուղերը, որոնցում վարպետ Հմայակը ծխական դպրոցներ է բացել։ Դրանց թվում է նաև Բհաղու գյուղի դպրոցը, որը սակայն նույնպես փակվել է «տեղերի քահանաների դիմադրության պատճառով»։

«Մեղու Հայաստանի», 1878, N 16։

Գյուլլուջա գյուղի ծխական դպրոց

Երևանի գավառապետի տվյալներով այս դպրոցը հիմնվել է 1885-ին։ Իհարկե, նույն թվականին էլ փակվել է։ Վերաբացման տարեթիվը մեզ հայտնի չէ, սակայն գիտենք, որ 1895-ին գոյություն է ունեցել։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։ 1890-ական թվականների վերջերից Գյուլլուջա գյուղում գործել է երկդասյան պետական դպրոց։ Վերջինս 1917-ին ունեցել է 179 աշակերտ (բոլորը հայեր)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 46; գ. 116, թ. 38; գ. 380, թ. 46։

Դաշբուռուն (Տաշբուռուն) գյուղի ծխական դպրոց

Երևանի գավառապետի տվյալներով Դաշբուռուն գյուղի ծխական դպրոցը հիմնվել է 1890-ին։ Սակայն դա ճիշտ չէ, քանի որ այդ դպրոցը գեռևս 1872-ին գործել է, իսկ 1873-ին փակվել։ 1879-ին և 1881-ին նույնպես գործել է, ունենալով 40 աշակերտ, իսկ 1885-ին փակվել է։ 1890-ին վերաբացվել է, իսկ 1895-ին եղել է երկդասյան խառը դպրոց՝ 113 սովորողներով (7 աղջիկ)։ 1896-ին նորից է փակվել, վերաբացվելով 10 տարի հետո՝ 1905-ին։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա երկսեռ դպրոց՝ 118 աշակերտով (17 աղջիկ)։ 1913-14-ին դարձել է քառամյա, բայց աշակերտների թիվը նվազել է, իջնելով 92-ի։ 1917-ին՝ 180 աշակերտ (30 աղջիկ)։

Դաշբուռուն գյուղում գործել է նաև պետական երկդասյան դպրոց։ 1908-ին այնտեղ սովորած բոլոր 48 հոգին եղել են հայեր։

«Մեղու Հայաստանի», 1873, N 16; «Արարատ», 1873, ե., էջ 323, ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 19, ց. 1, գ. 456, թ. 46; ֆ. 56, գ. 50, թ. 61—64; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 7—9; ֆ. 7, գ. 172, թ. 6—11; գ. 120, թ. 11; «Տեղեկատու Երևանի թեմի դպր. 1911—12 թթ.»; ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 422, գ. 1585, թ. 46; ֆ. 12, գ. 865, թ. 76;
«Циркуляр», 1890, N 10, էջ 559։

Էվջիլար գյուղի արական ծխական դպրոց

Հիմնվել է 1879-ին։ Այդ թվականի փետրվարին կաթողիկոսը հաստատել է Էվջիլար գյուղի դպրոցի հոգաբարձության կազմը։ Նույն թվականին դպրոցի համար կառուցվել է հատուկ շենք։ 1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 40 աշակերտ։ 1885-ին փակված դպրոցների ցուցակներում չկա, հավանաբար մինչ այդ արդեն փակված է եղել։ Վերաբացվել է 1889-ին, իսկ 1895-ին եղել է միդասյան արական դպրոց։ 1896-ին փակվել է։ Վերաբացման թվականը մեզ անհայտ է։ 1911—12 ուս. տարում եղել է երկամյա խառը դպրոց, ուր սովորել են 56 տղա, 11 աղջիկ։ 1913—14 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 45-ի (10 աղջիկ)։ 1917-ին ունեցել է 116 աշակերտ (21 աղջիկ)։

Էվջիլար գյուղում գործել է նաև պետական դպրոց, որտեղ 1908-ին սովորել են 50 հոգի՝ բոլորը հայեր։

«Արարատ», 1879, N 4, էջ 192; N 6, էջ 276;
ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 56, գ. 199, թ. 17—23; ֆ. 7, գ. 172, թ. 7; ֆ. 19, գ. 953, թ. 3—11; ՀՍՍՀ ՊԿՊԱ ֆ. 56, գ. 199, թ. 17—23; ֆ. 7, գ. 172, թ. 7; ֆ. 19, գ. 953, թ. 3—11; գ. 167, թ. 1—56;
«Տեղեկագիր Երևանի թեմի եկ. ծխ. դպր. 1911—12 թթ.»։

Թեջրլու գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1879-ին։ Նույն թվականին էլ նրա համար կառուցվել է հատուկ շենք։ 1884-ին գործել է, 1885-ին՝ փակվել։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։ Թեջրլու գյուղում մինչև 1917 թվականը գործել է պետական դպրոց։

«Արարատ», 1879 թ., N 4, էջ 192; N 6, էջ 276;
ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 56, գ. 50, թ. 62; ֆ. 19, գ. 1521, թ. 7։

Իգդիրի հոգևոր ծխական երկդասյան արական դպրոց

«Նոր դպրոց» շաբաթաթերթը 1911-ի N37—40-ում գրել է. «Որքան մենք կարողացանք իմանալ 50-ից ավելի տարիների կյանք ունի Իգդիրի ծխական դպրոցը և այդքան ժամանակվա ընթացքում նա եղել է միշտ խառնս։ Ուրեմն կարող ենք ենթադրաբար ասել, որ Իգդիրի դպրոցը հիմնված պետք է լինի 1860—61 թվականներից ոչ ուշ։ Սակայն պատմական տրխիվային տվյալները այդ դպրոցի հիմնադրման տարեթիվը ցույց են տալիս 1869-ը (Երևանի գավառապետի տեղեկագրում՝ 1871-ը)։ Ճիշտը,

իշարկի, 1869-ին է։ Ճիշտ չէ նաև հոդվածագրի այն պնդումը, թե այդ դպրոցը հենց սկզբից եղել է խառը, այսինքն՝ երկսեռ։

«Աբարատ» ամսագրում տպագրված են դպրոցի 1869—1872 թվականների ելքի և մուտքի հաշիվները, որոնցից իմանում ենք, թե ինչ ազբյուրներով է այն պահվել և ինչպիսի ծախսեր է ունեցել։ Այսպես, 1872-ին դպրոցը, մասնավոր անձանց փոքր նվիրատվություններից բացի, եկամուտ է ունեցել՝ հարստանքավորներից, կշեռքի, մատավաճառության և դինեվաճառության արդյունքներից և այլն, շհաշված աշակերտների ուսման վարձը։ Դպրոցին որոշ գումար էին նվիրում Իգդիրի ուխտավորները, վաճառականները և այլ անձինք։ 1869-ին հայոց լեզվի ուսուցչին վճարվել է 48 ռուբլի, ռուսաց լեզվի ուսուցչին՝ 100 ռ. 13 կոպեկ։ 1872-ին ռուսաց լեզվի ուսուցչին վարձ չի տրվել, նշանակում է տվյալ տարում դպրոցում ռուսաց լեզու չի ավանդվել։ Այդ թվականին դպրոցում ավանդվել են՝ ազգային պատմություն, աշխարհագրություն, կրոնագիտություն, թվաբանություն և քերականություն։ 1870-ին դպրոցն ունեցել է 3 ուսուցիչ, 131 աշակերտ, 1881-ին՝ 7 ուսուցիչ, 175 աշակերտ։ 1885-ին այն փակվել է։ 1888-ին եղել է երկդասյան դպրոց՝ ունենալով 146 աշակերտ և 6 ուսուցիչ։ Ավանդվել են՝ Հայաստանի աշխարհագրություն, ռուսաց լեզու, ռուսաց պատմություն և Ռուսաստանի աշխարհագրություն, կրոն, գրականություն, վաղելագրություն և երգ։ 1895-ին ունեցել է 278 աշակերտ, լինելով երկդասյան՝ 4 բաժանմունքով դպրոց։ 1896-ին նորից փակվել է կառավարության կողմից, վերաբացվելով 1905-ի վերջերին՝ որպես երկսեռ ծխական դպրոց։

1913-ին ունեցել է 5-ամյա դասընթաց։ Այդ թվականին այնտեղ սովորել են 137 տղա և 138 աղջիկ։ 1917-ին ունեցել է 7 ուսուցիչ, 277 աշակերտ (143 աղջիկ)։

1890-ական թվականներից Իգդիրում գործել է նաև պետական երկդասյան դպրոց, որտեղ 1908-ին սովորած 350 հոգուց 340-ը եղել են հայեր։

«Աբարատ», 1873, Դ. էջ 110—111; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 12, գ. 132, թ. 43, գ. 50, թ. 66; գ. 23, թ. 147; գ. 199, թ. 17; գ. 182, թ. 5; գ. 492, թ. 116. ֆ. 7. գ. 172, թ. 6, ֆ. 19, ց. 1, գ. 953, թ. 3—11; գ. 116, թ. 40;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 53,
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46; գ. 8717, թ. 6; ֆ. 12, գ. 865, թ. 36 և 76։

Իգդիրի Ս. Շուշանիկյան օրիորդաց միդանյան դպրոց

Հիմնվել է 1872-ին։ 1881-ին գործել է, ունենալով 6 ուսուցիչ և 70 աշակերտուհի։ 1885-ին փակվել է, 1886-ին վերաբացվել։ 1888-ին ունեցել է 43 աշակերտուհի։ 1894-ին եղել է երկդասյան դպրոց, ունենալով 90

աշակերտուհի։ 1896-ին փակված դպրոցների ցուցակում չկա, հավանաբար մինչ այդ այն միացված է եղել տեղի արական դպրոցին և նրա հետ փակվել է։ Վերաբացվել է 1905-ին՝ արական դպրոցի հետ միասին։ 1913-ին երկսեռ դպրոցում սովորող աղջիկների թիվը եղել է 138։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 65—68, գ. 111; ֆ. 7, գ. 172, թ. 6—11; գ. 120, թ. 1;
«Վիճ. տեղեկ. 1888—89 ուս. տարվա», էջ 52;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 50։

Իգդիր-Մավա գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1876-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 25 աշակերտ։

Հետագա մի քանի տասնամյակների փաստաթղթերում այդ դպրոցն այլևս չի երևում, բայց դժվար թե այդքան ժամանակ այն փակված մնար։ Այդ ենթադրությունը ավելի հավանական է դառնում նրանով, որ հայ դպրոցների երկրորդ վերաբացումը թույլ տալուց անմիջապես հետո, այսինքն՝ 1905-ի վերջերին, վերաբացվել է նաև այդ դպրոցը։

1907—08 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 64 տղա, 23 աղջիկ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 71, թ. 5, գ. 182, թ. 7—9; գ. 492, թ. 116;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3717, թ. 6։

Խալֆալու գյուղի ծխական դպրոց

Այս գյուղում ևս 1872-ին գործել է ծխական դպրոց, որը 1873-ին փակվել է։ Վերաբացման թվականը չգիտենք, բայց գիտենք, որ այն 1884-ին գործել է և 1885-ին դարձյալ փակվել, այս անգամ արդեն կառավարության կողմից։ 1912-ից Խալֆալու գյուղում գործել է պետական միդասյան դպրոց։

«Մեղու Հայաստանի», 1873, N 16։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 62, ֆ. 19, ց. 1, գ. 1521, թ. 2—7։

Խոշ-Խաբար գյուղի ծխական դպրոց

1872-ին գործել է, իսկ 1873-ին՝ փակվել։ Այն նորից հանդիպում է Երևանի թեմի 1907—08-ուս. տարվա դպրոցների ցուցակում։ Եղել է երկսեռ տարրական դպրոց, ուր այդ ուս. տարում սովորել են 38 տղա, 12 աղջիկ։

1917-ին եղել է երկամյա երկսեռ դպրոց՝ մի ուսուցչով և 50 աշակերտով (11 աղջիկ)։

«Մեղու Հայաստանի», 1873, № 16։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 7—9, ֆ. 7, ց. 1, գ. 167, թ. 1—56։

Կեչեղու (Կեչիոլու) գյուղի ծխական դպրոց

Պետական մարմինների կողմից 1890—1891 թվականներին կազմված երեք տարբեր փաստաթղթերում նշված են Սուրմալուի գավառի Կեչեղու (Կեչիոլու) գյուղը և նրա հայկական եկեղեցական ծխական դպրոցը։ Տեղեկատու մի շարք աղբյուրներում Սուրմալուի գավառում այդ անունով գյուղ մենք չգտանք։ Կա Գեչղու (այժմ՝ Հոկտեմբերյանի շրջանի Մրգաշատ) գյուղ, որը նախկինում մտել է Էջմիածնի գավառի մեջ։ Տեղեկատու աղբյուրներում ցույց է տրված նաև Կեչիլու գյուղը, որը մտել է Հին Նախիջևանի գավառի մեջ։

1890-ի փաստաթղթերում Կեչեղու գյուղի ծխական դպրոցը ցույց է տրված որպես երկդասյան, իսկ 1891-ի փաստաթղթերում՝ միդասյան տարական դպրոց։ Հիմնվել է 1887-ին։ 1890-ին ունեցել է ընդամենը 29 աշակերտ՝ բոլորը տղաներ։ Նրա տարեկան բյուջեն կազմել է 600 ռուբլի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 113, թ. 3—6, գ. 232, թ. 3—6;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 3997, թ. 8։

Կողբ գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1873-ին։ Հետագայում փակվել է և նորից բացվել 1880-ին, 1884-ին գործել է։ 1885-ին փակվել է՝ վերաբացվելով հաջորդ տարում, 1888-ին կոչվել է «Երզնկյան տղայոց երկդասյան ուսումնարան», ուր սովորել են 75 հոգի։ 1895-ին գտնվել է շատ աղքատ ու անկանոն վիճակում։ Հաջորդ տարում փակվել է՝ դարձյալ կառավարության կողմից։ Վերաբացվել է 1905-ին որպես երկսեռ դպրոց։ 1912—13 ուս. տարում ունեցել է 4 ուսուցիչ, 112 աշ. (40 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում եղել է 5-ամյա դպրոց՝ 125 աշ-ով (58 աղջիկ)։ 1917-ին ունեցել է 103 աշ. (34 աղջիկ)։

«Մեղու Հայաստանի», 1873, № 16, «Արարատ», 1880, էջ 43,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 61—64, գ. 192, թ. 48—9, գ. 111, թ. 83, գ. 182, թ. 7—9, գ. 328, թ. 46, գ. 49, թ. 116, ֆ. 7, գ. 172, թ. գ. 167, թ. 1—56, «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 54։

Փանիկ գյուղի ծխական դպրոց

1872-ին այստեղ գործել է ծխական դպրոց, որը սակայն 1873-ին փակվել է։ Թե ե՞րբ է վերաբացվել, մենք չգիտենք։ Բայց հայտնի է, որ այն 1881-ին և 1884-ին գործել է, իսկ 1885-ին նորից փակվել։

Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։

«Մեղու Հայաստանի», 1873, № 16։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 62;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46։

Փորք (Порк) գյուղի ծխական դպրոց

Սլիկավենտպոլի և Երևանի նահանգների դպրոցների դիրեկտորի կողմից 1891-ին կազմված մի ցուցակում հայ դպրոցների թվում նշված է նաև Փորք (Порк) գյուղի դպրոցը, իսկ այդ գյուղը ցույց է տրված Սուրմալուի գավառում։

Տեղեկատու աղբյուրներում մենք այդպիսի գյուղ չգտանք ո՛չ Սուրմալուի գավառում, ո՛չ էլ առհասարակ Հայաստանում ու Կովկասում։ Կա (Пор) անունով գյուղ Շարուր-Դարալագյազի գավառում, բայց ներկա դեպքում խոսքը այդ գյուղի մասին չէ։ Իհարկե, այստեղ ինչ-որ թյուրիմացություն կա, սակայն քանի որ վերոհիշյալ ցուցակում Սուրմալուի գավառում է ցույց տրված այդ գյուղը և նրա դպրոցը, մենք էլ այդպես թողնում ենք։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 8։

Քյուլփա գյուղի եկեղեցական ծխական դպրոց

Սուրմալուի գավառապետի տեղեկագրի համաձայն, այս դպրոցը հիմնվել է 1880-ին։ Մի այլ փաստաթուղթ ապացուցում է այդ բանը, ցույց տալով, որ այն 1881-ին գործել է՝ ունենալով 40 աշակերտ։ Բայց չգիտենք ինչո՞ւ չի մտել 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում։ 1886-ին գործել է։ 1895-ին ունեցել է 70 աշակերտ (5 աղջիկ), լինելով միդասյան դպրոց։ 1896-ին նորից փակվել է, 1906-ի սկզբներին վերաբացվել՝ որպես աբական ծխական դպրոց։ 1914-ին ունեցել է 112 աշակերտ։

19-րդ դարի վերջերից Քյուլփա գյուղում գործել է նաև պետական դպրոց, որը 1917-ին ունեցել է 121 աշակերտ (119 հայ, 2 թուրք)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 426, թ. 36—38; գ. 116, թ. 38; գ. 380, թ. 46; ֆ. 56, գ. 119, թ. 17—23;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 46; գ. 8217, թ. 6; ֆ. 12, գ. 865, թ. 30 և 76; ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 28։

ՀԱՎԵԼՎԱԾ № 7

Երևանի նահանգի Սուրմալուի գավառում տարբեր ժամանակներում բացված ու գործած պետական և ազգային-եկեղեցական դպրոցները.

№№	Բնակավայրի անունը	Դպրոցի բացման թվականը	Դպրոցի տիպը 1912-ին
1	Ագարակ	1905	միգասյան
2	Ալիկիրիկ	1902-ին գործել է	միգասյան
3	Ալիգամալու	1897	միգասյան
4	Ալիքուլակ	1905	միգասյան
5	Արալիխ-Բաշքենդ	1884	միգասյան
6	Գեղալու	1916-ին գործել է	միգասյան
7	Գյուլլուջա	1885	միգասյան
8	Դաշտուտուն	1902-ին գործել է	միգասյան
9	Էվշիլար	1902-ին գործել է	միգասյան
10	Իգդիր	1897	միգասյան
11	Իգդիր-Մամա	1905	միգասյան
12	Խալիֆալի	1912	միգասյան
13	Ղզել-Ջաքիր	1895	միգասյան
14	Մալալու	1906	միգասյան
15	Յուլի	1906	միգասյան
16	Սարմալու	1900	միգասյան
17	Քյուլալա	1917-ին գործել է	միգասյան
18	Քյուլիա	1897	միգասյան
19	Քյուլլուկ	1897	միգասյան
20	Օրգով	1910	միգասյան

Երևանի նահանգի ապրիլյանական բնակչության շրջանում գործած պետական (ռուսական) տարրական դպրոցները 1916 թվականին
(ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 19, գ. 221, թ. 109)

№	ՎԱՅՐԸ	ԴՊՐՈՑԸ ԻՆՉՊԵՍ Է ԿՈՉՎԵԼ	Բացման թվականը	Սովորողների թիվը 1916 թ.		Ընդամենը
				Տղա	Աղջիկ	
1	2	3	4	5	6	7
	Երևանի գավառ					
1	Արիկ		1910	9	—	9
2	Երևան քաղ.	ռուս-թաթարական, արական	1897	134	—	134
3	» »	ռուս-թաթարական, իգական	1901	—	29	29
4	» »	մուսուլմանների համար	1913	32	—	32
5	Զամալու	ռուս-թաթարական, արական	1905	22	—	22
6	Սաղարակ		1899	9	—	9
7	Վեղի	ռուս-թաթարական, արական	1883	62	—	62

1	2	3	4	5	6	7
8	Ուլուխանլու	արքունական, արական	1881	124	—	124
	ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՎԱՌ					
9	Կաբուտան		1906	19	—	19
10	Շաբիֆաբաթ		1910	7	5	12
11	Չորանքյարա		1890	21	—	21
12	Բիլանի—Աբալիխ		1910	22	—	22
	ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԳԱՎԱՌ					
13	Զաբաչուղ		1906	17	1	18
14	Կոյաբ		1906	8	—	8
15	Յուլի		1896	30	—	30
16	Նախիջևան քաղ.	ռուս-թաթարական, արական	1894	85	—	85
17	» »	» » իգական	1906	—	74	74
18	» »	» » մանկական	1909	50	—	50
19	Նեհրաբ		1856	48	—	48
20	Շախբաղաղ (Մախմաղ)		1896	40	—	40
21	Շահթախտա (Կիվբախ) գյուղերի		1889	64	—	64
22	Վանանդ		1896	39	—	39
	ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՎԱՌ					
23	Ազգիրիբ		1907	12	—	12
24	Մագրու		1902	24	—	24
	ՇԱՐՈՒՐ—ԴԱՐԱԼԱԳՅԱԶԻ ԳԱՎԱՌ					
25	Ալագյոզ		1906	11	—	11
26	Բաշնորաշեն		1885	90	6	96
27	Դավրիշլար		1908	15	—	15
28	Նեղիշա		1882	13	—	13
29	Թամալու		1908	29	—	29
30	Ղազուչիկ		1908	18	—	18
31	Ջուլ		1904	19	—	19
32	Սարաչլու		1909	18	2	20
	ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳԱՎԱՌ					
33	Ագարակ		1906	15	1	16
34	Ալիքուլակ		1912	10	—	10
35	Արալիխ—Բաշքենդ		1884	45	—	45
36	Կոլտուկ		1902	11	—	11
37	Մալալու		1906	17	—	17
	Ընդամենը 37 դպրոց			1151	150	1301

Երևանի նահանգում 1914-ին գործած մանկական դպրոցները

	ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ԴՊՐՈՑԻ ՏԵՍԱԿԸ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
1	Երևան քաղ.	մեկդասեան	«Ջամի» մզկիթին կից
2	»	մեկ մեկ	Նույնը
	ԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԱՌ		
3	Ղամարլու	մեկ մեկ	
4	Նեքիլու Ներքին	»	
5	Շորլու-Մահմեդալար	»	
6	Ուլուխանլու	»	
	ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԳԱՎԱՌ		
7	Նախիջևան քաղ.	մեկ մեկ	«Ջամի» մզկիթին կից
8	Օրգու

Սուրմալուի գավառ

82.	Պապիկ	70	աշակերտ
83.	Ալեքի	120	»
84.	Նաջաֆլի և Ղզլ-Ղշլաղ	60	»
85.	Իգդիր	220	»
	ընդամենը	470	աշ.

քաղ. Ալեքսանդրապոլ

86.	Ալեքսանդրապոլ	450	աշ.
	ընդամենը	450	աշակերտ

Ահա այն ամենը, ինչ կարողացանք իմանալ վերոհիշյալ ցուցակից։ Միայն այստեղ նշված 36 բնակավայրերի դպրոցականական դպրոցներում սովորել են 2427 երեխաներ։

Էջմիածնի շրջանում գործել են հետևյալ գաղթականական դպրոցները.

1.	Վաղարշապատում	7	դպրոց	1143	աշակերտ
2.	Ալիբեկլու գյուղում	1	»	88	»
3.	Ներքին Այնալու »	1	»	73	»
4.	Հայ Զեյվա »	1	»	80	»
5.	Քյորփալու »	1	»	158	»
6.	Սամաղար »	1	»	117	»
7.	Հայքաղ »	1	»	101	»
8.	Հաջիլար »	1	»	49	»
9.	Ֆրանկանոց »	1	»	102	»
10.	Մարգարա »	1	»	63	»
11.	Գրամփա »	1	»	95	»
	Ընդամենը	17	»	2099	»

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 19, ց. 1, գ. 248, թ. 13 և 15։

Պետական նշանավոր դպրոցները Հայաստանում 1830—1920 թվականներին

Ընդունած ցարիզմի հետապնդած ռեակցիոն նպատակներին, կայսրության սահմաններում ապրող այլազգիների շրջանում բացված պետական ռուսական դպրոցները մեծ չափով նպաստել են այդ ժողովուրդների կուլտուրական զարգացման և լուսավորության գործին, նրանց հասարակական-քաղաքական զարթոնքին։ Նույնն է տեղի ունեցել նաև հայերի հետ։ Ուսումնասիրելով ռուսաց լեզուն, հայ երիտասարդները և մասավորականության ներկայացուցիչները հազորդակից են դարձել ռուսական առաջավոր կուլտուրային, գրականությանը, հասարակական-քաղաքական մտքին։ Նրանք հետաքրքրություն են ստացել շփվելու ռուս մեծ ժողովրդի հետ, կարդալու Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի, Տոլստոյի, Գորկու և ռուս գրականության մյուս հսկաների ազատատենչ երկերը, ոգեորվել են Բելինսկու, Դերժենի, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի հեղափոխական անմահ գաղափարներով։ Ռուսաց լեզուն, ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայերի լավագույն զավակներին հնարավորություն է տվել կարդալու Հանճարեղ Լենինի ստեղծագործությունները և լծվելու կոմունիստական կուսակցության մղած հերոսական պայքարին։

Նկատի ունենալով ռուսական դպրոցների խաղացած մեծ դերը հայ ժողովրդի կուլտուրական ու հասարակական զարգացման գործում, մենք նպատակահարմար համարեցինք այստեղ համառոտ տեղեկություններ տալ Երևանի նահանգում բացված ու գործած դպրոցներից առավել նշանավորների մասին։ Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ այդ դպրոցներում հայ սովորողները բացարձակ մեծամասնություն են կազմել։

Ալեքսանդրապոլի օրիորդաց Օլգինյան գիմնազիան

1879-ին Ալեքսանդրապոլում հիմնվել է օրիորդաց պրոգիմնազիա՝ առաջին տարում ունենալով միայն նախապատրաստական դասարան։ Տարի առ տարի բացվել են հաջորդ դասարանները, և 1883-ին այն արդեն եկել է չորսդասյան պրոգիմնազիա։ 1883—84 ուս. տարում ունեցել է 62 սովորող և 11 դասատու։ Այլ տարկաների թվում հատուկ ուշադրություն է դարձվել նաև նկարչության, երգի ու պարի ուսուցմանը։ 1890-ին ունեցել է 81 աշակերտուհի։

1905—06 ուս. տարվանից (մի այլ փաստաթղթում նշված է 1907-ից) դարձել է գիմնազիա, կոչվելով Ալեքսանդրապոլի օրիորդաց Օլգինյան գիմնազիա։

1907—08 ուս. տարում ունեցել է 376 աշակերտուհի, որոնցից հայեր՝

239, ռուսներ՝ 127, այլազգիներ՝ 10։ Ըստ սոցիալական դրության ազնվականների ու ատիճանավորների աղջիկներ՝ 103, պատվավոր քաղաքացիների և առևտրականների՝ 98, քահանաների՝ 13, քաղաքացիների և արհեստավորների՝ 107, գյուղացիների՝ 10, այլք՝ 45։

1912-ին ունեցել է 440 սովորող։

1919 թ. ապրիլի 2-ին գրված պաշտոնական մի փաստաթղթում կարդում ենք. «1918 թվին տաճիկների կողմից Ալեքսանդրապոլի գրավումից հետո, ամեն ինչից զրկված բնակիչները փախչելով ապաստան գտան Թիֆլիսում։ Նկատի ունենալով, որ զանազան պատճառներով Ալեքսանդրապոլի նախկին գիմնազիայի աշակերտուհիները չկարողացան ընդունվել Թիֆլիսի միջնակարգ դպրոցները, աշակերտուհիների ծնողները դիմում են Թիֆլիսում հավաքված դասատուներին՝ խնդրելով բաց անել գիմնազիան։

Եվ, հիրավի, գիմնազիան բացված է և այժմ Ալեքսանդրապոլի գիմնազիան գործում է մի խումբ դասատուների գիմնազիա անվան տակ (երևի պայմաններն են այդպես թելադրել—Ս. Ա.)։

Գիմնազիայում սովորում են 111 աշակերտուհիներ, որոնցից 82 հայեր, իսկ 28-ը այլ ազգերի են պատկանում»։

Այնուհետև նշվել է, որ գիմնազիայի դասատուները գտնվում են նյութական անչափ ծանր պայմանների մեջ, և հարց է հարուցվել Հայաստանից նրանց օգնություն ցույց տալու մասին, նկատի ունենալով, որ «հիշյալ գիմնազիան համախմբել է Ալեքսանդրապոլի աշակերտուհիներին, հնարավորություն է տալիս նրանց շարունակելու իրենց ուսումը, ապահովելով նրանց դպրոցական տարին կորցնելուց, մյուս կողմից ցանկալի համարելով մանկավարժական կազմի պահպանումը, որպեսզի Ալեքսանդրապոլ վերադառնալուց հետո հեշտությամբ հարթվի գիմնազիայի կյանքը» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 67/199, գ. 40, թ. 14)։

Այսպես, ուրեմն, Օլգինյան գիմնազիան 1918-ին փակվել է և մի խումբ դասատուների ջանքերով վերաբացվել Թիֆլիս քաղաքում, ընդգրկելով Թուրքական սրից այնտեղ փախած փոքրաթիվ աշակերտուհիներ։

Ի դեպ նշենք, որ նույն վիճակում է գտնվել նաև Կարս քաղաքի իգական գիմնազիան, որը նույնպես 1918-ի մարտին տեղափոխվել է Թիֆլիս, սակայն այդ թվականի հուլիսի 3-ից դադարեցրել է իր գոյությունը՝ մենշևիկյան կառավարության հանրային կրթության մինիստրի հրամանով։ Որոշ ժամանակ անց այդ գիմնազիան վերաբացվել և գործել է «Կարսի դասատուների գիմնազիա» անվան տակ։

Դարձյալ հարց է հարուցվել այդ գիմնազիայի դասատուներին նյութական օգնություն ցույց տալու մասին։

Մենք չգիտենք, բավարարվե՞լ են այդ խնդրանքները, թե՞ ոչ, բայց դատելով համանման բազմաթիվ գիմումներին տրված մերժողական պա-

տասխաններից, պետք է կարծել, որ մերժվել են նաև հիշյալ գիմնազիաների վերաբերյալ միջնորդություն-խնդրանքները։

1919 թ. փետրվարին, Ալեքսանդրապոլից Թուրքերի հեռանալուց անմիջապես հետո, Օլգինյան գիմնազիայի ուսուցչական և աշակերտական կազմը վերադարձել է իր հարազատ քաղաքը։ 1919-ի մարտի 1-ից գիմնազիան նորից սկսել է գործել։ Այն համարվել է պետական ուսումնական հաստատություն և ֆինանսավորվել է պետական բյուջեից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 2018, թ. 4—5; ֆ. 12, գ. 1, գ. 968, թ. 21, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 67/199, գ. 40, թ. 14, 17, 198, «Отчет о состоянии учебных заведений Кавказского учебного округа за 1907 г.», «Памятная книжка Эриванской губернии на 1912 г.», стр. 74—75.

Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարան
(Коммерческое училище)

Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանը հիմնվել է 1902 թվականին՝ որպես միջնակարգ մասնագիտական դպրոց։ Այդ թվականի սեպտեմբերի 22-ին տեղի է ունեցել նրա հանդիսավոր բացումը, որի առթիվ Կովկասի կառավարչապետին ուղղված հեռագրում Ալեքսանդրապոլի քաղաքագլուխն այն բնութագրել է որպես «միջնակարգ կրթության առաջին և միակը սպասված օջախ, որը կոչված է նպաստելու առևտրական կապերի զարգացմանը Թուրքիայի, Թուրքիայի և Պարսկաստանի միջև»։

Պահվել է սովորողների ուսման վարձով և քաղաքի միջոցներով, ենթարկվելով, սակայն, ցարական ֆինանսների մինիստրությունը։ Առաջին տարում ունեցել է 196 սովորող։ Ուսումը տևել է 10 տարի՝ 3 պատրաստական և 7 հիմնական դասարաններով։ 1907—08 ուս. տարում ունեցել է 415 սովորող՝ 328 հայ, և 21 դասատու՝ 11-ը հայ։ Հետագայում բացվել է նաև 8-րդ հիմնական դասարանը։

Ուշագրավ է հետևյալ փաստը։

Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձու Թուղլիֆը 1914-ի հունվարին առաջարկել է Ալեքսանդրապոլ քաղաքում հիմնել արական գիմնազիա և այդ մասին հայտնել է Ալեքսանդրապոլի քաղաքային դումային, խնդրելով իրեն իրազեկ դարձնել, թե ինչ պայմաններ ու միջոցներ կարող են տրամադրվել այդ գիմնազիային։

Քաղաքային դուման հունվարի 21-ին քննարկել և ընդունել է հոգաբարձուի առաջարկը։ Սակայն դումայի և նրա դպրոցական հանձնաժողովի անդամ Պյոտր Բեբուրովը լուրջ առարկություններ է ունեցել և այդ առթիվ հատուկ նամակ է ուղարկել օկրուգի հոգաբարձուին։

Մասնավորապես նա գրել է.

«Ալեքսանդրապոլ քաղաքում արդեն գոյություն ունի միջնակարգ ուսումնական հաստատություն՝ առևտրական ուսումնարանը, որը ուսում-

նական գործի պատշաճ դրվածքի դեպքում կարող է լիովին բավարարել տեղական բնակչության կարիքը։

Նշված ուսումնարանի սովորողների թիվը, նրա հիմնադրման օրվանից (1902 թ.) մինչև այժմ՝ չի հասել 400-ի, չնայած այն բանին, որ ուսումնարանն ունի միջնակարգ ուսումնական հաստատության լրիվ դասընթաց՝ նախապատրաստական դասարանով և նյութապես լիովին ապահովված է քաղաքի կողմից։

Առևտրական ուսումնարանի աշակերտների թիվը չավելանալու պատճառը ոչ միայն ուսման բարձր վարձն է, այլև ավելի շատ այն, որ Ալեքսանդրապոլում չկան միջնակարգ կրթություն ստանալու ցանկություն ունեցող բավական թվով աշակերտներ, քանի որ քաղաքի բնակչությունը, որի մեծամասնությունը պատկանում է առևտրական ու արհեստավորական դասերին, անբարենպաստ տնտեսական պայմանների պատճառով, ամեն տարի տեղափոխվում են այլ տեղեր. այժմ՝ բնակիչների մոտ կեսը բացակայում է քաղաքից և ապագայում նույնպես չի կարելի սպասել քաղաքի բնակչության ավելացում։

... Նկատի ունենալով վերոհիշյալը, ես համոզված եմ, որ Ալեքսանդրապոլում արական գիմնազիա բաց անելու օրվանից պետք է փակվի առևտրական ուսումնարանը, և դա ցանկալի չէ քաղաքի բնակչության մեծամասնությանը, քանի որ առևտրական ուսումնարանը, ունենալով ռեալական դպրոցի ծրագիր, ավելի է հարմավոր Ալեքսանդրապոլ քաղաքին՝ մարդկանց տեղական գործունեության պատրաստելու համար, իսկ գիմնազիան մատչելի է միայն ճարուստ մարդկանց և արտոնյալ դասերին, որպիսիք, ի դեպ, շատ փոքրաթիվ են մեր քաղաքում։

Ալեքսանդրապոլ քաղաքն ավելի շատ կարիք ունի ոչ թե նոր միջնակարգ ուսումնական հաստատության, որպիսին արդեն գոյություն ունի քաղաքում, այլ նոր տարրական դպրոցների և արդեն եղած տարրական դպրոցների դասընթացի բարձրացման ու այդ դպրոցների համար սեփական շենքեր կառուցելու։

Հայտարարելով վերոհիշյալի մասին, խոնարհաբար խնդրում եմ ձեզ գերազանցությունը թույլ տալ հայտնելու ձեզ Ալեքսանդրապոլ քաղաքում գյուղատնտեսական միջնակարգ ուսումնարան հիմնելու անհրաժեշտության մասին՝ 1883 թ. սեպտեմբերի 27-ին հաստատված կանոնադրության համաձայն, կամ էլ հողագործական ուսումնարան՝ 1878 թ. մայիսի 30-ի կանոնադրության համաձայն, որոնց մեծ կարիք ունի ինչպես քաղաքը, այնպես էլ ամբողջ գավառը՝ ավելի քան 200000 բնակչությամբ, և որին սպառնում է տնտեսական քայքայումը։

Չէ որ կործանումից մի ամբողջ գավառ փրկելը ավելի կարևոր է պետական շահերի տեսակետից, քան մի բուռ հարուստների համար արական գիմնազիա բացելը, որոնք առանց քաղաքային հասարակական գանձարկղի օգնության էլ կարող են իրենց երեխաներին և՛ գիմնազիական, և՛ բարձրագույն կրթության տալ» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 202, թ. 3—4)։

Այս հանգամանքներ և ուշագրավ փաստաթղթի հեղինակը միանգամայն առողջ ու ճիշտ մոտեցում է հանդես բերել Ալեքսանդրապոլ քաղաքի կրթական կարիքների և պահանջների հարցում։ Իրոք, կլասիկական գիմնազիաները միայն հարուստների երեխաների համար էին և ոչ մի չափով չէին համապատասխանում բնակչության ճնշող մեծամասնության շահերին։

Պետրոս Բերուրովը իրավացի էր։ Ալեքսանդրապոլը ավելի շատ տարրական դպրոցների և ռեալական կրթության կարիք ուներ, ինչպես և Հայաստանի մյուս բոլոր բնակավայրերը։ Նրա պահանջած գյուղատնտեսական ուսումնարանը կարող էր անհամեմատ ավելի օգտակար լինել քաղաքի ու գավառի աշխատավոր մարդկանց համար, քան կլասիկական գիմնազիան, որից նրանք ոչ մի օգուտ չունեին։

Բայց ո՞ւմ համար էր ասված այդ ամենը, և ով պետք է հոգ տաներ մի ամբողջ գավառ (ու բազմաթիվ այլ գավառներ) տնտեսական քայքայումից և անխուսափելի կործանումից փրկելու մասին...

Եվ ինչո՞ւ պիտի զարմանալ, որ այդքան հիմնավոր ու պատճառաբանված նամակից հետո էլ ուսումնական օկրուգի հոգաբարձուն, որը ցարիզմի «լուսավորական» քաղաքականության հլու կամակատարն էր, արհամարհելով նամակում բերված փաստերն ու արված առաջարկները, շարունակել է իր «մտահղացումները» իրականացնել։

1914-ի հունիսի 4-ին նա հատուկ գրությամբ Ալեքսանդրապոլի քաղաքային դումային հայտնել է, որ Կովկասի փոխարքայի առաջ «միջնորդություն է հարուցվել Ալեքսանդրապոլ քաղաքում արական գիմնազիա բացելու մասին» (նույն տեղը, թ. 2)։

Այդ գիմնազիան, իհարկե, չի բացվել։ Պատճառը, մեր կարծիքով, համաշխարհային պատերազմի սանձազերծումն էր։

Նախորդ տարիների համեմատությամբ 1914-ին առևտրական ուսումնարանի աշակերտների թիվը պակասել է. ունեցել է 391 սովորող։

«Հիմնարկվել է 1921 թ.» —ասված է Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական արխիվի ուղեցույցում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 1, գ. 132, թ. 57, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 1, գ. 132, թ. 55—57, ֆ. 20, ց. 1, գ. 202, թ. 2—4, «Լուսաբեր», 1966 թ., էջ 100։ «Նոր դարագլուխ», 1908, № 2, էջ 106, «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», стр. 42.

Երևանի արական գիմնազիա

1832-ին Երևանում հիմնվել է գավառական դպրոց՝ առաջին պետական ուսումնական հաստատությունը նոր ազատագրված Արևելյան Հայաստանում։

1843—1848 թվականներին գավառական դպրոցի տեսուչն է եղել հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը։

1862-ին այդ դպրոցի (ուսումնարանի) նախապատրաստական, առաջին, երկրորդ և երրորդ դասարաններում սովորել են 130 հոգի, որոնցից հայեր՝ 100, մահմեդականներ՝ 22, ուսներ՝ 8 հոգի։

Գավառական դպրոցը 1868-ին վերածվել է չորսդասյան արական պրոգիմնազիայի, որտեղ 1875-ին սովորել են 320 հոգի, այդ թվում 270 հայեր։

1879-ին Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձությունը մտադրվում է Երևանի պրոգիմնազիան դարձնել վեցդասյան։ Այդ առթիվ հոգաբարձությունը հարցում է անում Երևանի քաղաքային դումային։

Հետաքրքիր է վերջինիս ուղարկած պատասխանը։

Քննարկելով հոգաբարձության առաջարկը, քաղաքային դուման, ելնելով քաղաքի պահանջներից ու տնտեսական դրությունից, գտել է, որ «կլասիկական կրթությունը», որպես «կյանքի շքեղություն», սաղական է «ավելի բազմամարդ, ավելի ինտելիգենտ և հարուստ քաղաքի համար, քան Երևանն է, որտեղ կյանքի առաջին հարցը հանդիսանում է քաղաքացիների տնտեսական կացության բարելավումը, որը կարող է տեղի ունենալ միայն մեր երկրամասի բնական հարստությունների օգտագործումը հնարավոր դարձնող կրթության միջոցով» (ՎԱՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1158, թ. 1)։

Այսպիսով, քաղաքային դուման անօգտակար էր համարում կլասիկական կրթությունը և խնդրում էր պրոգիմնազիայի փոխարեն բաց անել ռեալական դպրոց։ Դումայի գրության մեջ նույնիսկ թվական տվյալներով ցույց է տրված, որ պրոգիմնազիայի շրջանավարտների մեծ մասը ո՛չ կարող է ուսումը շարունակել, ո՛չ էլ որևէ օգտակար գործ կատարել։

Սակայն կլասիկական կրթության երկրպագուները, բոլորովին հաշվի չառնելով քաղաքային դումայի միանգամայն խելացի ու հիմնավոր առաջարկը, հատուկ զեկուցագիր են ներկայացնում Կովկասի փոխարքայի խորհրդին, խնդրելով թույլ տալ ընդարձակելու Երևանի (նաև Ելիզավետպոլի ու Թեմիր—Խան Շուրայի) պրոգիմնազիաների դասընթացը։

Ընթերցողներին հավանաբար հայտնի է, թե ինչ էին իրենցից ներկայացնում կլասիկական գիմնազիաները ու պրոգիմնազիաները։ Հիշեցնենք միայն, որ նրանցում առաջի բաժին էր հատկացվում հին հունարենին ու լատիներենին և եկեղեցական-սլավոնական լեզվին։ Այսպես, օրինակ, եթե հիշյալ երեք լեզուներին գիմնազիայում հատկացնում էին շաբաթական 124 ժամ (միայն լատիներենին՝ 49 ժամ), ապա ֆիզիկամաթեմատիկական բոլոր առարկաներին միասին հատկացնում էին միայն 37 ժամ։ Ժամանակակից լեզուները (ֆրանսերենն ու գերմաներենը) նույնպես հարգի չէին։ Էլ չենք ասում «տեղական լեզուներիս» մասին, որոնց գիմնազիայի 1—4-րդ դասարաններում հատկացվել է միայն 6 ժամ։

Փոխարքայի խորհուրդը որոշել է պրոգիմնազիայի դասընթացը ընդարձակելու փոխարեն, այն վերածել «լրիվ կլասիկական գիմնազիայի»։ Փոխարքան հաստատել է այդ որոշումը և կարգադրել՝ այն «կատարել»։

Չնայած այդպիսի կարգադրությանը, այն անմիջապես չի իրականացվել։ Հարցը գնացել է ավելի վերև, քննության է առնվել Կովկասյան կոմիտեում, այնուհետև պետական խորհրդում և արդարադատության մինիստրի միջոցով ներկայացվել կայսեր հաստատմանը։

Վերջապես 1881 թ. ապրիլի 30-ին հետևել է թագավորի հատուկ հրամանագիրը՝ Երևանի պրոգիմնազիան լրիվ 8-դասյան կլասիկական գիմնազիայի վերածելու մասին։

Ընթերցողը չի կարող չնկատել, թե ինչպիսի դժվարությամբ էին կազմակերպվում (նույնիսկ վերակազմվում) ուսումնական հաստատությունները ցարիզմի օրոք։

1881-ի սեպտեմբերից կազմակերպվել է գիմնազիան-առաջին պետական միջնակարգ դպրոցը Հայաստանում։

Գիմնազիայի դիրեկտոր է նշանակվել Վ. Բրաժնիկովը, որն այնքի է ընկել իր հայատյացությամբ։ Նա հատուկ դեր է խաղացել 1883-ին Երևանի հայ մտավորականության դեմ ցարական իշխանությունների կազմակերպած հալածանքի և նրանցից շատերին բանտ նետելու ու աքսորելու գործում։ Նա հրահրել է գիմնազիայի հայ, ռուս և ադրբեջանական ուսանողների ընդհարումներ (այդ ամենի մասին խոսվում է Թ. Խ. Հակոբյանի «Երևանի պատմությունը 1879—1917 թթ.» գրքում)։

1884-ին գիմնազիան ունեցել է 245 սովորող և 17 դասատու։ 1890-ին՝ ավելի թիչ՝ 223 սովորող, այդ թվում հայեր՝ 141, ուսներ՝ 49, ադրբեջանցիներ՝ 29, վրացիներ՝ 7, այլազգիներ՝ 6։

1902-ին ունեցել է երկու նախապատրաստական և 9 հիմնական դասարաններ (մեկը զուգընթաց), որոնցում սովորել են 476 հոգի (հայեր՝ 270, ուսներ՝ 102, ադրբեջանցիներ՝ 50, վրացիներ՝ 22, հրեաներ՝ 6, այլազգիներ՝ 17)։ Ըստ սոցիալական դրության՝ ազնվականներ՝ 198, հոգևորականների զավակներ՝ 15, պատվավոր քաղաքացիների և առաջին գիլդիայի առևտրականների որդիներ՝ 31, քաղաքային այլ դասերի զավակներ՝ 185, գյուղացիներ՝ 35, կուլակների և սորին ատրճանավորների զավակներ՝ 7, օտարերկրացիներ՝ 5 հոգի։

Պաշտոնական այս թվերից դժվար չէ տեսնել, թե ում համար էին ստեղծված և ում էին ծառայում ցարական գիմնազիաները։

Հետաքրքիր են նաև հետևյալ տվյալները։

Կովկասի գիմնազիաների և այլ ուսումնական հաստատությունների սարքին դասարաններում թույլատրված էր տեղական լեզուների ոչ պարտադիր ուսուցում, այն էլ հատուկ վարձատրությամբ։ 1905-ին Երևանի արական գիմնազիայի նախապատրաստական և առաջին ու երկրորդ դա-

տարաններում սովորող 126 հայերից կամավոր կերպով իրենց մայրենի լեզուն ուսումնասիրել են 126 հոգի՝ 100 տոկոսով, 25 ադրբեջանցիներից բոլոր 25 հոգին էլ ուսումնասիրել են ադրբեջաներենը։

Պարտադիր չեն համարվել նաև նոր լեզուները՝ ֆրանսերենն ու գերմաներենը, մարմնամարզությունը, երգը և նկարչությունը։

Քննված գրան, Երևանի գիմնազիայում բոլոր աշակերտները ուսումնասիրել են նոր լեզուները, ըստ որում նրանց ճնշող մեծամասնությունը ուսումնասիրել է և՛ ֆրանսերեն, և՛ գերմաներեն։ 476 սովորողներից մարմնամարզություն են անցել բոլորը, երգ՝ 194 հոգի (40,8 %), նկարչություն՝ 272 հոգի (57,1 տոկոս)։

Հետաքրքիր է նաև նշել, որ իր գոյության 25 տարիների ընթացքում (1881—1905 թթ.) Երևանի արական գիմնազիան տվել է ընդամենը 269 շրջանավարտ, տարեկան միջին թվով մոտ 13 հոգի։

Պետք է նշել, որ տարբեր տարիների գիմնազիայի սովորողների թիվը զգալի տատանումներ է տվել։ Այսպես, 1907-ին այնտեղ սովորել են 562, 1909-ին՝ 476, 1910-ին՝ 590, 1912-ին՝ 669 հոգի և այլն։ Զգալի թիվ են կազմել նաև անբավարար առաջադիմության և այլ պատճառներով մեղավորները՝ տարեկան 50—70 հոգի։

1917-ի աշնանից գիմնազիան ազգայնացվել է։

Որպեսզի մյուս դպրոցների կապակցությամբ նորից չանդրադառնանք դրան, այստեղ մի քանի խոսքով նշենք, թե ինչպես է տեղի ունեցել դպրոցների ազգայնացումը։

Անդրկովկասի պետական դպրոցների ազգայնացումը սկսվել է 1917-ի աշնանից։ Տարրական դպրոցների նախապատրաստական և առաջին դասարաններում մտցվել է մայրենի լեզվով ուսուցում։ Ազգային փոքրամասնությունների համար բացվել են առանձին դպրոցներ կամ էլ զուգահեռ դասարաններ։ Նույնը նաև ավելի բարձր տիպի հանրակրթական դպրոցների ստորին դասարաններում։ Իսկ ազգային խառը կազմ ունեցող բարձր դասարաններում մտցվել է ազգային առարկաների (մայրենի լեզվի ու գրականության, տվյալ ժողովրդի պատմության ու աշխարհագրության) պարտադիր ուսուցում։

Արխիվային մի փաստաթղթում ասված է, որ 1917-ի սեպտեմբերի վերջից անց է կացվել արական գիմնազիայի նախապատրաստական դասարանի կրտսեր բաժանմունքի ազգայնացում։ Բացվել են՝ մի ռուսական բաժանմունք՝ 49 աշակերտով, երկու հայկական բաժանմունք՝ յուրաքանչյուրը 46-ական աշակերտով և մի մուսուլմանական բաժանմունք՝ 32 աշակերտով։

Երևանի արական գիմնազիան 1918-ին ունեցել է 922 սովորող, որոնցից հայեր՝ 587, ադրբեջանցիներ՝ 172, ռուսներ՝ 106, վրացիներ՝ 37, այլազգիներ՝ 20 հոգի։

Այն 1920-ին կոչվել է հայոց առաջին գիմնազիա։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո արական գիմնազիան վերանվանվել է երկրորդ աստիճանի N2 դպրոց, որը հետագայում (1925-ից) կոչվել է հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունով։

Որքան մեզ հայտնի է, սա Հայաստանում եղած դպրոցներից միակն է, որ իր հիմնադրման օրվանից մինչև այժմ անխափան գործում է։

Երևանի արական գիմնազիան մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի հասարակական ու կուլտուրական զարգացման գործում։

1982-ին մեծ շուքով տոնվեց այս նշանավոր դպրոցի 150-ամյակը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1158, թ. 1—2, 13, 15, 20—21, 48, 52—53, գ. 2018, թ. 134, ֆ. 12, ց. 1, գ. 3, թ. 76, գ. 969, թ. 21, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 52, թ. 22, գ. 174, թ. 102, ֆ. 75/207, գ. 5, թ. 1, ֆ. 1, գ. 139, թ. 72; «Отчет о состоянии учебных заведений Кавказского учебного округа за 1907 год».

Երևանի Հոփփսիմյան օրիորդաց գիմնազիա

1850-ին Ս. Նինայի անվան կանանց բարեգործական ընկերության Երևանի վարչության կողմից և նրա միջոցներով Երևանում հիմնվել է Հոփփսիմյան օրիորդաց դպրոցը։ Թեև այն պետական դպրոց չէր, բայց ենթարկվում էր պետական դպրոցների իշխանություններին և գործում էր նրանց հաստատած ծրագրերով, պատվանդել են ռուսաց լեզու, աշխարհագրություն, ընդհանուր և ռուսաց պատմություն, թվաբանություն, հայոց լեզու, գեղագրություն, ձեռագործ, պարսկերեն և կրոն (ուղղափառ, հայ Գրիգորյան և դուրսի՝ ընթերցանություն)։

Դպրոցը 1861-ին ունեցել է ընդամենը 21 աշակերտուհի և 6 ուսուցիչ-ուսուցչուհի։

1884-ին կազմված է եղել նախապատրաստական և երեք հիմնական դասարաններից։ Ունեցել է 74 աշակերտուհի և պանսիոն՝ 50 հոգու համար։ Աշակերտուհիներն ըստ ազգության եղել են՝ հայուհիներ՝ 41, ռուս աղջիկներ՝ 24, վրացուհիներ՝ 6, ադրբեջանուհիներ՝ 3։

Աշակերտուհիների մեծ մասից գանձվել է ուսման բավականաչափ մեծ վարձ՝ տարեկան 36-ից մինչև 150 ռուբ. (վերջին գումարը վճարել են պանսիոնատում ապրողները)։

1883-ին այս դպրոցն այցելած օկրուգային տեսուչը գրել է, որ նրա բոլոր աշակերտուհիները «ռուսերեն շատ լավ են խոսում, այնպես, որ այս հաստատությունը լիովին տեղի ունեցած դպրոցի տեսք ունի...»։

1884-ի մարտին տեղի ունեցած հատուկ խորհրդակցությունն արձանագրել է, որ դպրոցի դասընթացը գրեթե հավասար է կառավարական

«իգական գիմնազիաների ու պրոգիմնազիաների դասընթացին», ուստի և հարց է հարուցել, որպեսզի Հռիփսիմյան դպրոցը վերածվի պրոգիմնազիայի։

Նույն հարցով Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուին է դիմել Ս. Նինայի անվան բարեգործական ընկերության խորհուրդը, որի կենտրոնը Թիֆլիս քաղաքն էր։

Այս խորհրդի նամակում ասված է. «Երևանի Ս. Հռիփսիմեի իգական ուսումնական հաստատության վարչությունը նկատի ունենալով, որ այդ հաստատությունում սովորող օրիորդները 1875-ից սկսած անցնում են օրիորդաց պրոգիմնազիաների գիտությունների դասընթացը և թեև, դասընթացն ավարտելուց հետո ստանում են ատեստատներ, սակայն այդպիսիք նրանց ոչ մի իրավունք չեն տալիս և դրանք ստացողները չեն կարող լինել գյուղական ուսուցչուհիներ, որ Երևանում չկա իգական այլ ուսումնական հաստատություն, որտեղ կարողանային ընդունվել Ս. Հռիփսիմեի դպրոցի դասընթացն ավարտած օրիորդները՝ իրենց հետագա կրթությունը շարունակելու համար, և որ Ս. Հռիփսիմեի դպրոցը, նպատակ ունենալով դատիարակել անապահով ազնվականների ու ատիճանավորների երեխաներին, դրանց թողնելով կրթության կես ճանապարհին, նրանց ծնողներին դրեթե ոչ մի օգուտ չի տալիս, խնդրել է խորհրդին միջնորդել ձերդ գերազանցության առջև՝ թույլ տալու առաջիկա սեպտեմբերից այդ հաստատությունում բաց անելու չորրորդ դասարան և այդ հաստատությունն ավարտած օրիորդներին ընծայելու գյուղական ուսուցչուհու իրավունք (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 73, թ. 1—2)։

Ուսումնական օկրուգի հոգաբարձուն թույլ է տվել Հռիփսիմյան դպրոցը 1884—85 ուս. տարվա սկզբից վերածել ժողովրդական լուսավորության մինիստրության օրիորդաց պրոգիմնազիայի։ Այդ պրոգիմնազիայի մանկավարժական խորհրդի նախագահ է նշանակվել Երևանի արական գիմնազիայի դիրեկտոր Բրաժնիկովը, որը 1886-ի ապրիլին Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուին ուղղված նամակում հայտնել է, որ պրոգիմնազիան գտնվում է նյութական ծանր պայմանների մեջ, «և եթե մինչև այժմ այն իր եռադասյան կազմով բավարարում է ծրագրի պահանջները, ապա միայն ուսուցիչների և ուսուցչուհիների բարոյական հատկանիշների, իսկ գլխավորը՝ նրանց անշահախնդրության ու նվիրվածության շնորհիվ» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 73, թ. 18)։

Այնուհետև նա թվարկել է այն դասատուներին, որոնք բոլորովին ձրի կամ էլ շնչին վարձատրությամբ են աշխատել այդ պրոգիմնազիայում։ Նշելով նաև, որ պետական գանձարանից ու Երևանի նահանգի զեմստվային միջոցներից պրոգիմնազիային խոստացված գումարները չեն ստացվում և հույս էլ չկա, որ դրանք կստացվեն, Բրաժնիկովը լավագույն ելքը

գտել է ... պրոգիմնազիան իր նախկին վիճակին վերադարձնելու, այսինքն՝ սովորական իգական դպրոց դարձնելու մեջ։

Անցնում է մի ամբողջ տարի, պրոգիմնազիայի ֆինանսավորման հարցը այդպես էլ չի լուծվում։ Այն շարունակում է իր գոյությունը մի կերպ պահպանել Ս. Նինայի ընկերության հատկացրած միջոցներով։

1887 թ. մայիսի 29-ին Երևանի նահանգապետը ուսումնական օկրուգի հոգաբարձուին գրել է, որ ինքը «չի կարող համաձայնվել» պրոգիմնազիան իր նախկին վիճակին վերադարձնելու վերաբերյալ Բրաժնիկովի առաջարկին և հույս է հայտնել, որ հոգաբարձուն չի ընդառաջի այդ «խիստ անցանկալի» «ծայրահեղ միջոցառումներ»։ Նա առաջարկել է որոշ չափով բարձրացնել ուսման վարձը (որն առանց այդ էլ շատ բարձր էր) և պահպանել պրոգիմնազիան։

Պրոգիմնազիան, այնուամենայնիվ, շարունակել է գործել։ 1890-ին ունեցել է 99 աշակերտուհի, այդ թվում՝ հայուհիներ՝ 56, ռուս աղջիկներ՝ 36, վրացուհիներ՝ 2, այլազգիներ՝ 5։

1893-ին պրոգիմնազիան դարձել է չորդասյան, իսկ 1898-ին վեր է ածվել իգական գիմնազիայի, կոչվելով «Երևանի Հռիփսիմյան օրիորդաց գիմնազիա»։

1904-ին գիմնազիայում բացվել է 8-րդ լրացուցիչ դասարան՝ երկու բաժանմունքով՝ ռուսաց լեզվի և մաթեմատիկայի։ Այդ դասարանի խնդիրն էր գիմնազիայի սովորողներին նախապատրաստել մանկավարժական գործունեության։ Հենց այդ նպատակով այնտեղ, այլ առարկաներից բացի, ավանդվել են նաև մանկավարժություն, դիդակտիկա և տարրական ուսուցման մեթոդիկա։

Գիմնազիան 1907—08 ուս. տարում ունեցել է 447 աշակերտուհի, որոնցից՝ հայուհիներ՝ 263, ռուս աղջիկներ՝ 165, ադրբեջանուհիներ՝ 1, այլազգիներ՝ 18։ Ըստ սոցիալական դրության՝ ազնվականների ու ատիճանավորների աղջիկներ՝ 239, հոգևորականների՝ 9, պատվավոր քաղաքացիների և առևտրականների՝ 146, քաղաքացիների ու արհեստավորների՝ 42, կուլակների՝ 1, գյուղացիների՝ 2, այլք՝ 8։

Դա ազնվականական գիմնազիա էր, որի դռները գրեթե բոլորովին փակ են եղել աշխատավորների, հատկապես գյուղացիների երեխաների համար։

1917—18 ուս. տարում ունեցել է 526 սովորող, որոնցից հայուհիներ՝ 352, ռուս աղջիկներ՝ 119, վրացուհիներ՝ 15, ադրբեջանուհիներ՝ 11, լեհուհիներ՝ 8, հույն աղջիկներ՝ 5, հրեուհիներ՝ 3, ասեթինուհիներ՝ 4, ասորիներ՝ 3, գերմանուհիներ՝ 3, չեխուհի՝ 1 հոգի։

1918-ին ազգայնացվել է։

1921-ին այս գիմնազիան վերանվանվել է երկրորդ ատիճանի №3 դպրոց՝ որտեղ մտցվել է տղաների ու աղջիկների համատեղ ուսուցում։

Հոիփսիմյան գիմնազիան իր գոյության ավելի քան 70 տարիների ընթացքում մեծ դեր է խաղացել հայ և այլազգի աղջիկների կրթության գործում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 33, թ. 2, ֆ. 20, ց. 1, գ. 73, թ. 1—5, 8—9, 18—19, 23—24, գ. 62, թ. 28, գ. 149, թ. 6, ֆ. 75/207, գ. 5, թ. 20,
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 1, գ. 969, թ. 21, «Отчет о состоянии учебных заведений Кавказского учебного округа за 1907 год».

Երևանի Ալեքսանդրյան օրիորդաց № 2 գիմնազիա

Տնային ուսուցչուհու կոչում ունեցող Երմոնիա (Եվգինե) Մկրտչի Տեր-Սարգսյանցը 1906 թ. ապրիլի 8-ին դիմել է Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուին, խնդրելով իրեն թույլ տալ Երևան քաղաքում բաց անելու իգական պրոգիմնազիա՝ 1870 թ. մայիսի 24-ի կանոններին համապատասխան։ (Այդ կանոնները վերաբերում էին ժողովրդական լուսավորության մինիստրությանը ենթակա օրիորդաց գիմնազիաներին ու պրոգիմնազիաներին)։

Իր դիմումի մեջ Ե. Տեր-Սարգսյանցը նշել է նաև, թե ինչ պայմաններով է բացվելու պրոգիմնազիան, պատրաստակամություն հայտնելով միաժամանակ, որ բացման թույլտվություն ստանալուց հետո նա անհապաղ պետական բանկը կմուծի 3 հազար ռուբլի՝ «ապահովելու բացվող պրոգիմնազիան»։

Օկրուգի հոգաբարձուն գրավոր հարցում է արել Երևանի նահանգապետին, թե արդյոք նա որևէ առարկություն չունի՞ այդ պրոգիմնազիան բաց անելու առթիվ։

Ստանալով դրական պատասխան, հոգաբարձուն Ե. Տեր-Սարգսյանցին թույլ է տվել «Երևան քաղաքում բացել օրիորդաց շորսդասյան պրոգիմնազիա...» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 163, թ. 2)։

Կազմվել է 6 հոգուց բաղկացած հոգաբարձական խորհուրդ, որը և բացվելիք պրոգիմնազիայի վարիչ է ընտրել նրա հիմնադիր ու անօրեն Ե. Տեր-Սարգսյանցին։

Պրոգիմնազիան համարվել է պետական ուսումնական հաստատություն և լիովին ենթարկվել է իգական պրոգիմնազիաների պետական կանոններին։

1906-ին բացվել են պրոգիմնազիայի նախապատրաստական դասարանի երեք բաժանմունքները, առաջին և երկրորդ դասարանները, իսկ հաջորդ երկու տարիներին՝ նաև երրորդ ու չորրորդ դասարանները։ 1907—08 ուս. տարում ունեցել է 123 աշակերտուհի՝ 117 հայ, 4 ռուս և 2 այլազգիներ։ Ըստ սոցիալական դրության՝ աղնվականների ու բարձր աստիճանավորների աղջիկներ՝ 20, հոգևորականների՝ 3, առևտրականների՝ 90, քաղաքացիների և արհեստավորների՝ 8, գյուղացիների՝ 2։

Ուրեմն այդ «մասնավոր» պրոգիմնազիան նույնպես գրեթե բացառապես ազնվականների ու առևտրականների երեխաների համար էր։ 1910-ին և 1911-ին թույլ է տրվել բաց անել 5-րդ և 6-րդ գիմնազիական դասարանները, իսկ 1912-ին 7-րդ դասարանի բացմամբ այն դարձել է լրիվ դասընթացով գիմնազիա։ Կոչվել է «Երևանի Ալեքսանդր Առաջին կայսեր անվան օրիորդաց № 2-րդ գիմնազիա»։ Նորից վարիչ է հաստատվել Ե. Տեր-Սարգսյանցը։

Ցույց տված համաշխարհային ավերիչ պատերազմին, գիմնազիայի աշակերտուհիների թիվը գնալով ավելացել է՝ 1913-ին՝ 310, 1916-ին՝ 340, իսկ 1917-ին՝ 360 սովորող։

1917—18 ուս. տարվա 360 աշակերտուհիներից եղել են՝ հայեր՝ 329, ռուսներ՝ 20, վրացուհիներ՝ 8, լեհուհիներ՝ 3 հոգի։

1921-ին վեր է ածվել երկրորդ աստիճանի № 5 դպրոցի, որի վարիչը շարունակել է մնալ Ե. Տեր-Սարգսյանցը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 163, թթ. 1—3, 12, 16, ֆ. 5, գ. 3, թ. 26, գ. 8, թ. 9, գ. 128, թ. 10, ֆ. 122, գ. 19։

Երևանի ուսուցչական սեմինարիա

1879-ին Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուն Կովկասի փոխարքայության խորհրդի առաջ հարց է հարուցել, որպեսզի Երևանի նահանգի «հայ բնակչության շրջանում» հիմնվի ուսուցչական սեմինարիա՝ «հայկական գյուղական դպրոցների ուսուցիչներ պատրաստելու համար» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 3, ց. 1, գ. 51, թ. 15)։ Այդ կապակցությամբ նա Երևանի և Ելիզավետպոլի դպրոցների դիրեկտորներին խնդրել է հաղորդել, թե վերջինս որքա՞ն է նպատակահարմար գտնում այդ սեմինարիայի բացումը։

Ուսումնարանների դիրեկտորն իր հերթին հատուկ գրությամբ դիմել է Երևանի ոստիկանապետին, հայտնելով, որ մտադրություն կա 60 հայ աշակերտների համար Երևան քաղաքում, «որպես երկրամասի հայ բնակչության կենտրոնի», բաց անել ուսուցչական սեմինարիա։ Նա խնդրել է հայտնել, թե Երևանում հնարավո՞ր է գտնել այնպիսի տուն, որն ունենա 8 մեծ սենյակ սեմինարիայի և 6 սենյակ նրա դիրեկտորի բնակարանի համար (այն ժամանակվա Երևանի պայմաններում վե՞ց սենյակ դիրեկտորի բնակարանի համար...)։ Նա խնդրել է հայտնել նաև, թե Երևանի հայ բնակչությունը իր վրա չի՞ վերցնի սեմինարիայի շենքի համար պահանջվող վարձի գոնե մի մասը։

Ոստիկանապետը Երևանում գտնում է այդպիսի միայն մի շենք, որի մասին և հաղորդում է ուսումնարանների դիրեկտորին։

Երկար գրագրություններից ու բանակցություններից հետո Երևանի

ուսուցչական սեմինարիան, վերջապես, 1881 թ. հոկտեմբերին բացվում է, ունենալով մի նախապատրաստական և մի հիմնական դասարան։ Ուսումնական պարապմունքներն սկսվել են նոյեմբերի 1-ից։ Առաջին տարում ունեցել է 36 սովորող՝ հայեր՝ 23, ազգբեջանցիներ՝ 6, ասորիներ՝ 7։

1882-ին սեմինարիային կից բացվում է նաև տարրական դպրոց՝ ուսանողների մանկավարժական պրակտիկան անցկացնելու համար։ 1883-ին բացվել է սեմինարիայի 3-րդ՝ վերջին դասարանը։ 1884-ին ունեցել է 67 ուսանող և 76 աշակերտ։ Այդ թվականին էլ տվել է առաջին շրջանավարտները՝ 5 հոգի։ 1885-ին ավարտել են 9, 1886-ին՝ 14, 1887-ին՝ 6, 1888-ին՝ 10 հոգի, ընդամենը 5 տարում՝ 44 հոգի։ Դրանցից միայն 28 հոգի են մեկնել գյուղական դպրոցներում աշխատելու։

1888 թ. հաշվետվության մեջ ասված է, որ այդ թվականի սեպտեմբերի մեկից սեմինարիան փոխադրվել է Երևանի բնակիչ Հաջի-Համիդի երկհարկանի քարե տունը, որը, բակում կառուցված երեք սենյականոց փայտիկ տան հետ միասին, ունեցել է մոտ 30 սենյակ, մի մեծ դահլիճ, նկուղ, պահեստ, ընդարձակ բակ, այգի և երկու նախասրահներ։ Ուսումնական նպատակով օգտագործվել է մոտ 10 սենյակ, մյուսները օժանդակ դեր են կատարել։ Ընդ որում դիրեկտորը զբաղեցրել է 6, նրա ծառաները՝ մեկ և սեմինարիայի քարտուղարը 2 սենյակ (իհարկե, ձրի)։ Այդին և նախասրահները մշակել են պետական թոշակառու սաները։

Սեմինարիան ունեցել է կազմատուն և հյուսնոց, որոնցում իրականացվել է սաների աշխատանքային ուսուցումը։

Այդ թվականին սեմինարիան ունեցել է 11 ուսուցիչ, մի բժիշկ և 83 սովորող, իսկ փորձնական տարրական դպրոցում՝ 66 աշակերտ։

Ինչպես երևում է, սեմինարիայի դիրեկտոր Յակով Սուշչևսկին եղել է բավականաչափ կիրթ ու զարգացած անձնավորություն։ Լինելով մանկավարժության մասնագետ և ավանդելով այդ առարկան, նա ուսուցիչներից պահանջել է սովորողների նկատմամբ լինել ուշադիր և հարգալից, որքան հնարավոր է խուսափել պատժի միջոցներից։ Սովորողներից պահանջել է հարգել միմյանց և փոխադարձաբար լինել զիջող ու ընկերասեր, ծնողների ու դաստիարակների նկատմամբ հանդես բերել խոր հարգանք և հնազանդություն։

«Ամեն մի հարմար առիթով,— գրել է նա 1888-ի հաշվետվության մեջ,— սաներին բացատրվում է առաջիկայում նրանց որպես ժողովրդական ուսուցիչներ աշխատելու նշանակությունը, կարևորությունն ու պատասխանատվությունը և ներշնչվում է, որ տարրական դպրոցում դրվում է երեխաների հետագա մտավոր ու ֆիզիկական ողջ զարգացման հիմքը, ուստի և ուսուցչի ամեն մի քայլը, նրա ամեն մի հնարքը և նույնիսկ ամեն մի խոսքը, որոնք վճռական ազդեցություն են ունենում երեխաների բնավորության ու ապագա կյանքի վրա, պետք է անբասիր լինեն» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 3, ց. 8, գ. 129, թ. 76—91)։

Ուսանելի մարդիկ են, որոնք մինչև այժմ էլ լիովին պահպանել են իրենց թարմությունը։

Եվ պատահական չէ, որ կարգապահական ու այլ խախտումները սեմինարիայում այնքան էլ մեծ թիվ չեն կազմել։ Այսպես, ամբողջ մի տարվա ընթացքում արձանագրվել են հետևյալ խախտումները. դաստիարակների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի 2, դասերի ժամանակ շաքաճճիության 5, ընկերներին խոսքով վիրավորելու 13, իրար ծեծելու 9, անհարգելի պատճառով դասերը բաց թողնելու 13, պանսիոնատից ինքնակամ դուրս գալու 4, զրպարտության 1, գողության 3, խարելու 3, ծուլության 3, ծխելու 1, ծառաներին վիրավորելու 1 դեպք (նույն տեղը)։

Նույն դիրեկտորը 1892 թվականին կազմել է սեմինարիայի դաստիարակների համար հատուկ կանոններ, որոնք հաստատվել են Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուի կողմից՝ դրանք անշեղորեն կիրառելու համար։

Նկատի ունենալով, որ այդ կանոնները որոշ հետաքրքրություն են ներկայացնում նաև այժմ, հատկապես մեր դիշերօթիկ դպրոցների համար, այսուհետև համառոտակի շարադրում ենք դրանց գլխավոր կետերը։

Ըստ այդ կանոնների, դաստիարակները, հերթականությամբ, պետք է մշտապես լինեին սաների հետ՝ սկսած տվյալ օրվա ժամը 8-ից մինչև հաջորդ օրվա ժամը 8-ը։ Իրենց հերթապահության ժամանակ նրանք պետք է, անհրաժեշտության դեպքում, օգնեին սաներին դասերը պատրաստելու գործում, օգտվեին նրանց ընդհանուր սեղանից և նրանց հետ քնեին նույն սենյակում։ Նրանք պարտավոր էին հետևել սաների կանոնավոր հագնվելուն և մաքրությանը, օգնեին գրադարանից ընթերցանության գրքեր ընտրելուն, հսկեին ընթերցանության ընթացքը և ստուգեին կարգապահ յուրացման աստիճանը։ Նրանք պետք է խստորեն հետևեին, որպեսզի սաները ձեռք չբերեն նրանց առողջությանը և վարքին վնաս պատճառող սովորություններ, հսկեին սեմինարիայի կարգուկանոնին՝ մինչև դասերն սկսելը, ընդմիջումներին և դասերից հետո։ Դաստիարակները պետք է հետևեին սովորողների երաժշտական պարապմունքներին, աշխատանքին՝ այգում, պարտեզում և արհեստանոցներում։ Թույլ չտալով ոչ մի շեղում սահմանված ռեժիմից։ Նրանք պանսիոնատի հատուկ մատյանում պետք է գրանցեին սովորողների կողմից իրենց պարտականությունների կատարումից շեղումներ թույլ տալու բոլոր դեպքերը, կարգապահության բոլոր խախտումները, իսկ ծայրահեղ դեպքերում դրանց մասին իրազեկ դարձնեին դիրեկտորին։ Տոն և կիրակի օրերին նրանք պետք է կազմակերպեին խմբական երգեր, զանազան խաղեր, զրոսանքներ քաղաքից դուրս և այլն։

Աղջիկների համար սահմանվել է օրվա այսպիսի ռեժիմ.

Առ. ժ. 5—30-ին վերկաց և աղոթք.

Ժամը 6-ից մինչև 7—30՝ դասերի պատրաստում.

7—30-ին՝ թեյ.

8-ից մինչև 2—30՝ դասեր.

2—30-ին՝ ճաշ.

3—30-ին երաժշտական պարապմունքներ, աշխատանք այգում և արհեստանոցներում, որից հետո դասերի պատրաստում մինչև երեկոյան 8—30-ը.

8—30-ին երեկոյան թեյ.

9-ին՝ քուն։

1890-ին սեմինարիան ունեցել է ընդամենը 69 սովորող (հայեր՝ 40, թաթարներ՝ 12, ռուսներ՝ 5, վրացիներ՝ 5, այլազգիներ՝ 7)։

1902 թվականին սեմինարիայում լուրջ վեճեր են առաջացել նրա սովորողների կողմից տեղական լեզուները ուսումնասիրելու հարցի կապակցությամբ։ Այդ հարցը մի քանի անգամ քննարկվել է մանկավարժական խորհրդում, որի արձանագրություններից իմանում ենք հետևյալը։

Սեմինարիայի հայ աշակերտները խիստ բողոքել են տեղական լեզուների նկատմամբ եղած արհամարհական վերաբերմունքի առթիվ և պահանջել են հնարավորություն տալ ավելի խորն ու հանգամանորեն ուսումնասիրելու իրենց մայրենի լեզուն։ Այս պահանջը դիտվել է որպես հայերի սեպարատիստական ձգտումների արտահայտություն և դատապարտվել։

Սեմինարիայի դիրեկտորն ասել է, որ ինքը չի կարող «թույլ տալ, որպեսզի սեմինարիայում տեղական լեզուներն ավանդվեն որպես հատուկ կրթական առարկաներ՝ նրանց դասընթացում գրականություն և այլ բաներ մտցնելով», ուստի և պետք է «անտեսել հայ սովորների կողմից մանկավարժական խորհրդի որոշմանը չենթարկվելու փաստը»։

Արնուհետև դիմելով կրոնուսույց Աթանասյանին, դիրեկտորը նրանից պահանջել է «ազդել ... հայ աշակերտների վրա և նրանց ուղղներում վերականգնել լիակատար հանգստություն..., բացատրելով նրանց, որ սեմինարիան ինչ-որ սեպարատիստական ձգտումների տեղ չէ, այլ կոչված է համերաշխ աշխատանքով հարստացնելու նրանց գիտելիքներով և բարոյական այն հակացություններով, որոնք ապագա ուսուցչին անհրաժեշտ են ժողովրդի օգտին ծառայելու և հայրենիքի ու գահի նկատմամբ ունեցած իրենց պարտքը ազնվորեն կատարելու համար» (ՀԱՍՀ ՊԿՊՌ, ֆ. 20, ց. 1, գ. 148, թ. 6)։

Լրջորեն առարկելով գահի այս երկրպագուին, ուսուցիչ Աթանասյանը նշել է, որ ոչ միայն աշակերտները, այլ ինքը ևս համաձայն չէ տեղական լեզուների ուսուցման վերաբերյալ մանկավարժական խորհրդի ընդունած որոշմանը (1902-ի նոյեմբերի 5-ին մանկավարժական խորհուրդը որոշել էր սեմինարիայում մտցնել տեղական լեզուների տարրական դասընթաց՝ նահանգի դպրոցներում ռուսաց լեզվի ուսուցմանը օժանդակելու նպատակով)։

Ընդունելով, որ, իրոք, տեղական լեզուները պետք է նպաստեն ռուսաց լեզվի հաջող ուսուցմանը, Աթանասյանը միաժամանակ ընդգծել է, որ տեղական լեզուների դերը չպետք է սահմանափակել այդքանով, որ նրանք պետք է լինեն նաև ընդհանուր «կրթական միջոց»։ «Նրա կարծիքով,— մատած է արձանագրություններից մեկում,— տեղացին, որն ուսումնասիրում է ուրիշի լեզու, չպետք է թողնի մայրենի լեզվի ուսումնասիրությունը» (նույն տեղը)։

Հարցի լուծումը թողնվել է այնպես, ինչպես նոյեմբերի 5-ի նիստում որոշել էր մանկավարժական խորհուրդը։

Հետագա տարիներին, ինչպես երևում է, սեմինարիայի վիճակը այնքան էլ նախանձելի չի եղել։ Այնտեղ առանձնապես ցածր մակարդակի վրա է գտնվել ուսումնական աշխատանքը։ Եվ պատահական չէ, որ Երևանի նահանգի մասին գրված պաշտոնական մի զեկուցագրում նշելով ուսուցչական կադրերի խիստ պակասը, դժգոհությամբ ասվել է նաև, որ «Երևանի ուսուցչական սեմինարիան ի վիճակի չէ լրացնել այդ պակասը, քանի որ վերջին երկու տարում նա տվել է միայն երկու ուսուցիչ»։

Երկու տարում ... երկու ուսուցիչ։ Կարո՞ղ է լինել անարտահայտ վիճակի ավելի ցայտուն ապացույց։

1907—08 ուս. տարում ունեցել է 71 սովորող, որոնցից՝ ռուսներ՝ 38, հայեր՝ 19, ադրբեջանցիներ՝ 13, այլք՝ 1։ Ըստ սոցիալական դրության՝ ազնվականների տղաներ՝ 3, հոգևորականների՝ 2, քաղաքացիների ու արհեստավորների՝ 11, կազակների՝ 9, գյուղացիների՝ 46։

Բավականաչափ հետաքրքիր ու բնորոշ են այս տվյալները։ Տղաների ու աղջիկների գիմնազիաների և պրոգիմնազիաների մասին խոսելիս մենք կոնկրետ թվերով ցույց տվեցինք, որ նրանցում գրեթե բացառապես սովորել են ազնվականների, աստիճանավորների և առևտրականների տղաներն ու աղջիկները, իսկ գյուղացիները շատ շնչին տոկոս են կազմել։ Ուսուցչական սեմինարիայում տեսնում ենք հակառակ պատկերը։ Ոչ մի աստիճանավորի ու առևտրականի երեխա չի եղել, իսկ գյուղացիների և արհեստավորների երեխաները կազմել են սովորողների ավելի քան 80 տոկոսը։ Ուրեմն ուսուցչի ծանր ու չարքաշ աշխատանքին ձեռնամուխ էին լինում հիմնականում աշխատավոր մարդկանց զավակները, մանավանդ, որ նրանց առաջ փակ էին գիմնազիաների դռները։

1914-ին սեմինարիայում սովորել են 125 տղաներ (այնտեղ աղջիկներ չէին ընդունում)։

1917—18 ուս. տարում ունեցել է 112 սովորող, որոնցից հայեր՝ 55, ադրբեջանցիներ՝ 23, ռուսներ՝ 20, ասորիներ՝ 8, հույներ՝ 6 հոգի։

Հայաստանի խորհրդի 1918 թ. օգոստոսի 22-ի որոշմամբ Երևանի ուսուցչական սեմինարիան փակվել է։ Չի ասված, թե ինչու Հավանաբար այն այլևս չի վերաբացվել։

1921-ին նրա շենքում բացվել է Երևանի ժողովրդական (հետագայում՝ պետական) համալսարանը։

Երևանի ուսուցչական սեմինարիայի անմիջական ժառանգորդն է հանդիսանում 1930-ին բացված և մինչև օրս հաջողությամբ գործող Ն. Օստրովսկու անվան ռուսական մանկավարժական ուսումնարանը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 3, ց. 1, գ. 51, թ. 7, 15, 17—18, 20, գ. 12, թ. 4, գ. 7, թ. 3, գ. 56, թ. 3, գ. 129, թ. 76—94, ֆ. 20, ց. 1, գ. 148, թ. 5—6, գ. 119, թ. 29—30; ֆ. 75/207, գ. 5, թ. 9, ֆ. 67/199, ց. 1, գ. 7, թ. 1։ ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 1, գ. 696, թ. 21, «Отчет о состоянии учебных заведений Кавказского учебного округа за 1907 г.», «Памятная книжка Эриванской губернии на 1912 г.», стр. 14—15; на 1914 г., стр. 74.

Երևանի Պուշկինյան քաղաքային ուսումնարան

Այս ուսումնարանի տեսուչ Մ. Զեղդինիձեն 1901 թվականին գրել է. «Նահանգական քաղաք Երևանը միակ քաղաքն է Կովկասում, որտեղ մինչև 1899 թ. չի եղել 1872 թ. մայիսի 31-ի կանոնների համաձայն քաղաքային ուսումնարան։ Դա պետք է բացատրել միայն այն բանով, որ նրա բնակչությունը դեռևս ներշնչված չէր ուսման օգտակարության և անհրաժեշտության գիտակցությամբ, ուստի և իրենց երեխաների ուսուցման և դաստիարակության ողջ հույսն ու հավատը թողել էր կառավարությանը, ինքը դրանում հանդես չբերելով ոչ մի ակտիվ մասնակցություն» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 630, թ. 60)։

Դժվար չէ նկատել, որ այս տեսուչը խեղաթյուրել է իրողությունը՝ քաղաքային դպրոց չունենալու մեղքը վերագրելով երևանցիների «տգիտությանը»։ Նա կեղծել է նաև, պնդելով, թե իբր երևանցիները իրենց երեխաների ուսման ու դաստիարակության ամբողջ հույսը դրած են եղել կառավարության վրա։ Նրան քաջ հայտնի էր, որ երևանցիները, ինչպես և ողջ հայությունը ցարական կառավարությունից այդ ուղղությամբ լավ բան չէին սպասում։ Պետական դպրոցի ստեղծման ու պահպանման գործին չմասնակցելը հայերի բողոքի ու դժգոհության ձևերից մեկն էր։ Դա էր իսկական պատճառը, և ոչ թե կրթության ու դաստիարակության նշանակությունը չգիտակցելը։

Անցյալ տասնամյակների ընթացքում երևանցիները իրենց կրթության շատ ապացույցներ էին տվել և հենց այդ պատճառով չէին հաշտվում ազգային դպրոցները փակելու փաստի հետ։ Մի՞թե երևանցիները չէին, որ տեսչի այդ տողերը գրելուց երկու տարի հետո, 1903-ին, ցարական կառավարության դեմ ուղղված հայ ժողովրդի հուժկու բողոքի, ցույցերի ու խռովությունների առաջին ազդանշանը տվեցին։

Հայերը դեմ չէին ռուսական դպրոցների ստեղծմանը, բայց և չէին ցանկանում հրաժարվել իրենց ազգային դպրոցներից։

Եվ պատահական չէ, որ երևանցիները որոշում ընդունելով քաղաքային բարձր տիպի դպրոց կազմակերպելու մասին, այդ դպրոցը կոչել են ոչ թե ցարի կամ նրա մերձավորներից մեկի, այլ ռուսական պոեզիայի հանճարի՝ Ա. Ս. Պուշկինի անունով։ Այդ դպրոցը (ուսումնարանը) կազմակերպվել է 1899-ին, հենց այն տարում, երբ լրացել է Պուշկինի ծննդյան 100-ամյակը։ Դրանով երևանցիները նշանավորել են մեծ բանաստեղծի հոբելյանը, արտահայտելով իրենց անսահման սերը նրա նկատմամբ։

Երևանի քաղաքային դումայի որոշմամբ և լուսավորության մինիստրության թույլտվությամբ դեռևս 1880-ին կազմակերպված քաղաքային տարրական ուսումնարանը 1899-ին վերակազմվել է Ա. Ս. Պուշկինի անվան հայոց քաղաքային ուսումնարանի՝ ըստ 1872 թ. կանոնների։ Ուսումնարանի պաշտոնական բացումը տեղի է ունեցել 1899-ի սեպտեմբերի 27-ին, հետևյալ կառուցվածքով. նախապատրաստական դասարան (անդրպանների համար), առաջին դասարան՝ առաջին և երկրորդ բաժանմունքներով, երկրորդ դասարան՝ երրորդ (կամ կրտսեր) բաժանմունքով։ Հետագա տարիներին բացվել են երկրորդ դասարանի չորրորդ և երրորդ դասարանի հինգերորդ ու վեցերորդ բաժանմունքները։ 1901-ին ունեցել է 145 սովորող։ Առաջին շրջանավարտները տվել է 1903-ին։

Դպրոցը ամբողջովին պահվել է քաղաքի միջոցներով. դրա համար տարեկան հատկացվել է 3 հազար ռուբլի, խոշոր մի գումար, որպիսին չի տացել հայկական դպրոցներից գրեթե ոչ մեկը։ Այս փաստը ևս ցույց է տալիս, թե որքանով էր իրավացի այդ դպրոցի տեսուչը՝ երևանցիների կողմից ուսման նշանակությունը «չգիտակցելու» մասին իր դատողություններով։

Անհետաքրքիր չէ նաև այդ տեսչին բնութագրող մի այլ փաստ։

1901-ի աշնանը վերադասին գրած իր մի զեկուցում նա ցանկություն է հայտնել իր ղեկավարած ուսումնարանին կից բաց անելու նաև «կերակրոցյա դպրոց», ուր ձրի պետք է կրթություն ստանային բանվոր ու չքավոր դասին պատկանող այլ երեխաներներ։

Միանգամայն ողջունելի նախաձեռնություն։

Մեզ հայտնի է, որ 19-րդ դարի վերջերին և 20-ի սկզբին նման շատ

դպրոցներ են գործել Ռուսաստանի բազմաթիվ քաղաքներում։ Այդպիսի մի դպրոցում դասավանդել է նույնիսկ Ն. Կ. Կրուպսկայան։

Կիրակնօրյա դպրոցներից շատերը ոչ միայն լուսավորում էին բանվորներին, այլև հանդիսանում էին մարքսիստական-հեղափոխական գաղափարների տարածման լավագույն օջախներ։ Եվ հենց այդ պատճառով ցարական կառավարությունն անողոքաբար հետապնդում էր այդ դպրոցները։

Բայց ո՞վ զարմանք...

Երևանի նահանգապետը, որին հարցում է արվել, թե արդյոք նա չի՞ առարկում այդպիսի դպրոցի բացմանը, ոչ միայն չի առարկել, այլև գրել է, որ այդ դպրոցին «նա վերաբերվում եմ խիստ համակրանքով և ցանկանում եմ, որ այն լայն հաջողություն ունենա» (նույն տեղը, գ. 652, թ. 5)։

Ի՞նչ էր պատահել։ Մի՞թե ցարական սատրապի հոգում խիղճ էր արթնացել։

Ոչինչ էլ չէր պատահել և ոչինչ էլ չէր փոխվել։ Սատրապը մնացել էր սատրապ, բայց մի թիչ խորամանկացել էր։

Գաղտնիքը պարզվում է, երբ ծանոթանում ենք վերոհիշյալ տեսչի զեկույցին։ Այնտեղ նա գրել է.

«Հետևելով Երևան քաղաքի բանվորական և շքավոր դասակարգի կյանքին ... ես չէի կարող չնկատել այն տխուր և դրա հետ միասին սովորական երևույթը, որ այդ դասակարգի բնակչության մեծամասնությունը, օգտակար զվարճալիք չունենալու պատճառով, տոն և կիրակի օրը լավագույն դեպքում անց է կացնում աննպատակ, սովորաբար գուբանների և տարբեր հեռախոշերում։ Կիրակի և տոն օրերը, դրանք օրեր են, երբ ավելի հեշտ ու վաղ են արտահայտվում բանվոր դասակարգի վիճակը բնութագրող, եթե նրանք զրկված են խելացի զվարճալիքներից։ Ընկնելով փչացած և կասկածելի անձանց ազդեցության տակ և հրապուրվելով զանազան շարպնա զրպմուներով, նրանք հեշտությամբ են ներգրավվում նման թափառ կյանքի մեջ և խաղաղ բնակիչներից վեր են ածվում հասարակության վնասակար անդամների, առաջացնելով այն հետամնաց մասսան, որի շրջանում ավելի հաճախ են տեղի ունենում ամեն տեսակի հանցագործություններ[1]։ Այդպիսի մութ անձանց շարքերը ամեն տարի լրացվում են անող սերնդով, որը, այս կամ այն պատճառով, չի կարողացել մուտք ունենալ ուսումնական հաստատությունները։

Հասարակական այդպիսի արատի դեմ պայքարելու վատահելի միջոցներից մեկը իրավամբ համարվում է դպրոցը» (նույն տեղը, թ. 16)։

Ահա թե ինչու էր նահանգապետը «ամբողջ հոգով» ողջունում նման դպրոցի կազմակերպումը։ Եվ ինչո՞ւ պիտի նա դեմ լիներ, երբ հիշյալ դպրոցի խնդիրն էր լինելու պայքարել «բանվոր դասակարգի վնասակար բնագրերի» ու «չարաշահ զրպմունքների» դեմ, երբ նրա տերերը խոստանում էին «մոլորված» բանվորներին դուրս բերել «փչացած ու կասկածելի անձանց ազդեցության տակից»։

Ցարական իշխանությունն էլ այդ էր ցանկանում։

Ահա թե ինչ էր իրենից ներկայացնում առաջին հայացքից բարի թվացող գործը, որն այդպիսի եռանդով ձեռնարկել էին քաղաքային ուսումնարանի տեսուչն ու Երևանի նահանգի ժողովրդական դպրոցների գլխավորը։ Նրանց նույնիսկ հաջողվել էր «կիրակնօրյա դպրոցում» ձրի դասավանդելու համար քաղաքի տարբեր դպրոցների 16 ուսուցիչ-ուսուցչուհիների համաձայնություն ստանալ։ Չենք բացառվում, որ այդ ուսուցիչներից շատերն իրենց համաձայնությունն են տվել բանվորներին կրթելու և լուսավորելու անկեղծ ու ազնիվ մղումով։

Տեսչի այդ նամակն ուղարկվել է Երևանի քաղաքագլխին, խնդրելով միջոցներ քաղաքային դումայի առաջ՝ միջոցներ հատկացնելու հիշյալ դպրոցի պահպանման համար։

Մենք չգիտենք, այդ միջոցները հատկացվե՞լ են, և դպրոցը բացվե՞լ ու գործե՞լ է, թե ոչ։ Գիտենք, որ Երևանում մեծահասակների գրագիտական դասընթացներ են գործել 1909—1913 թվականներին՝ հայկական Խրիմյան դպրոցին կից։

Պուշկինյան ուսումնարանը 1901-ին ունեցել է 157, իսկ 1907-ին՝ միայն 88 սովորող։ 1901-ին ավելի շատ աշակերտներ ունենալը պետք է բացատրել այն բանով, որ այդ ժամանակ փակված հայ դպրոցների սովորողների մի մասը ընդունվել է Պուշկինյան ուսումնարանը։

1907-ի 88 աշակերտներից 63-ը եղել են հայեր, 11-ը՝ ռուսներ և վրացիներ, 10-ը ադրբեջանցիներ և 4-ը այլազգիներ։

1909-ին սովորողների թիվն իջել է 60-ի, որոնցից հայեր՝ 33, ռուսներ՝ 10, ադրբեջանցիներ՝ 10, ասորիներ՝ 6, այլք՝ 1։

1912-ին ունեցել է 150, իսկ 1914-ին՝ 84 սովորող (նվազման պատճառը եղել է պատերազմը)։ Հանդիսացել է չորսդասյան բարձր տարրական քաղաքային դպրոց։

Երևանի Ա. Ս. Պուշկինի անվան միջնակարգ դպրոցը շարունակում է հաջողությամբ գործել նաև այժմ։ 1980-ին լրացավ նրա 100-ամյակը։

Հարկ է նշել, որ Երևանի Պուշկինյան դպրոցի տիպի չորսդասյան քաղաքային դպրոցներ են գործել նաև Ալեքսանդրապոլում (1876-ից), Աշտարակում (1879-ից) և Նոր Բայազետում (1854-ից)։

ՀՍՍՀ ԳԱԳԱ, Ֆ. 19, ց. 1, գ. 630, թ. 60, գ. 652, թ. 5, 16, գ. 146, թ. 1, գ. 202, թ. 2, գ. 553, թ. 16, Ֆ. 53, գ. 473, թ. 2—3, Ֆ. 12, գ. 11, թ. 11; «Памятная книжка Эриванской губернии на 1914 г», стр. 74—75.

[1] Ընդգծումները մերն են (Ս. Ա.)։

Մասնավոր դպրոցները Երևանի նահանգում (1830—1920 թթ.)

Հայկական և պետական դպրոցներից բացի, տարբեր ժամանակներում Հայաստանի քաղաքներում և գյուղերում բացվել ու գործել են նաև մասնավոր դպրոցներ, որոնք որոշակի դեր են խաղացել հայ, ռուս, ազգաբնակչության և այլ ազգերի երեխաների կրթության գործում։

Մասնավոր դպրոցները բացվում էին բացառապես իշխանության վերադաս մարմինների, Կովկասում ուսումնական օկրուգի հոգաբարձուի թույլտվությամբ։ Եղել են նաև առանց իշխանության թույլտվության բացված մասնավոր դպրոցներ, որոնք, սակայն կառավարությունը համարել է ապօրինի և անմիջապես փակել է, պատասխանատվության ենթարկելով այդպիսի դպրոց բացողներին։ Նման «գաղտնի» դպրոցներ են բացվել հատկապես այն ժամանակ, երբ փակվել են հայկական ազգային դպրոցները (1885 և 1895—1905 թվականներին)։

1879-ին հրապարակվել են Կովկասի ուսումնական օկրուգի մասնավոր դպրոցների վերաբերյալ հատուկ կանոններ։ Ըստ այդ կանոնների մասնավոր դպրոցները կարող էին լինել բաց և փակ (պանսիոնատով, 11 տարեկանից ոչ բարձր աղաների ու աղջիկների համար), առաջին կարգի (վեցդասյան), երկրորդ կարգի (եռդասյան) և երրորդ կարգի (երկդասյան կամ միդասյան)։ Առանձին դեպքերում թույլատրվել է բացել նաև մասնավոր գիմնազիա կամ պրոգիմնազիա։ Այսպես, օրինակ, 1916-ին Թիֆլիսում գործել են Սոֆյա Արզումյան Երկայնաբազուկի բացած օրիորդաց մասնավոր գիմնազիան, Լիսիցյանի (հավանաբար խոսքը Ստեփան Լիսիցյանի մասին է) արական պրոգիմնազիան, Երևանում՝ Նադեժդա Շչերբանինայի երկսեռ պրոգիմնազիան և այլն։

Մասնավոր դպրոց բացելու ցանկություն ունեցողներն ուսումնական օկրուգին ներկայացնում էին գիմում, որտեղ պետք է նշված լիներ, թե ինչ տիպի դպրոց են ուզում բացել, տեղեկանք կրթության, քաղաքական ու բարոյական բարեհուսության մասին, բացվող դպրոցում ավանդելիք առարկաները, սովորողների թիվը և այլն։ Եղել որում անպայման պետք է լիներն ռուսաց լեզու, Ռուսաստանի աշխարհագրություն և պատմություն։ Հայերի բացած դպրոցներում ավանդվում էին նաև հայոց լեզու և հայ-լուսավորչական կրոն։ Մյուս առարկաների (մաթեմատիկա, աշխարհագրություն, պատմություն և այլն) ուսուցումը տարվում էր ռուսաց լեզվով։

Մասնավոր դպրոցները ենթարկվում էին պետական դպրոցական իշխանություններին։ Վերջիններս հաճախ ձգձգում էին նման դպրոցներ բացելու թույլտվություն տալը, շատերին էլ պարզապես մերժում էին։ Այլ հանգամանքներից բացի, մերժման գործում մեծ դեր էր խաղում դիմողների քաղաքական բարեհուսության վերաբերյալ իշխանությունների մարմինների, հատկապես ժանդարմերիայի ունեցած անբարենպաստ կարծիքը։ Այսպես, օրինակ, Երևանի բնակիչ Արտաշես Հակոբյանը 1876-ին ցանկություն է ունեցել Ալեքսանդրապոլում բաց անել մասնավոր տարրական դպրոց՝ «տղաների դասախարակության և նրանց միջնակարգ ուսումնական հաստատությունների առաջին և երկրորդ դասարաններն ընդունվելու համար նախապատրաստելու նպատակով» և այդ խնդրով դիմել է Երևանի նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորին։ Վերջինս մերժել է Հակոբյանի խնդրանքը՝ նկատի ունենալով նրա մասին ժանդարմական վարչության հայտնած բացասական կարծիքը։[1]

Նման օրինակներ կարելի է շատ բերել։ Հատկապես մերժում էին ստանում փակված հայ դպրոցների նախկին ուսուցիչները, որոնք ցանկանում էին մասնավոր դպրոց պահելու միջոցով մի կերպ քարշ տալ իրենց գոյությունը և, իհարկե, նաև հայության կրթություն տալ հայ երեխաների գոնե մի մասին։

Տարբեր ժամանակներում զգալի թիվ են կազմել Կովկասի տարբեր վայրերում հայերի բացած մասնավոր դպրոցները։ Այսպես, միայն Թիֆլիս քաղաքում 1916 թվականին եղած ավելի քան 40 մասնավոր դպրոցներից 23-ը բացել ու պահել են հայերը։ Այստեղ տալիս ենք դրանց ցուցակը, նկատի ունենալով, որ նրանցում սովորել են գերազանցապես հայ երեխաներ։

1. Սոֆյա Վասիլի Արզումյան — Երկայնաբազուկի մասնավոր իգական գիմնազիա.
2. Լիսիցյանի մասնավոր արական պրոգիմնազիա։
Մասնավոր տարրական դպրոցներ
3. Երանուհի Ստեփանի Հարությունյանի.
4. Սաթենիկ Հայրապետի Ջամալյանի.
5. Եկատերինա Ստեփանի Բուզգանյանի.
6. Դարյա Գրիգորի Ջավարյանի.
7. Վասիլա Զոհրաբի Զոհրաբյան — Վարդանյանի
8. Եկատերինա Սպանդարյանի.
9. Ելենա Ավետիքի Զորզանյանի.
10. Եկատերինա Գարրիելի Ղուլիջանյանի.
11. Ստեփան Գևորգի Մելիք—Բախտամյանի.
12. Ելենա Ստեփանի Մելիք—Բեգլարյանի.
13. Հովսեփ Սերգոյի Մելիք—Ջանանյանի.
14. Նատալյա Զոհրաբի Միրզոյանի.
15. Օրբել Կոստանի Օրբելյանի.
16. Աստղիկ Հովսեփի Հովսեփյանի.
17. Աննա Զաքարի Սիմոնյանի.
18. Վասիլա Բարեհի Սմբատյանի.
19. Էմմա Համասարի Տեր-Դավթյանի.

[1] ՀՍՍՀ ԳԱԳԱ, ֆ. 19, ց. 1, գ. 5, թ. 50։

20. Վասվասա Հովհաննեսի Տեր-Հովսեփյան—Ավագյանի.
21. Իվան Զաքարի Տեր-Մոսեփանյանի.
22. Նինա Հովսեփի Չարիչյանի.
23. Աստատուրա Լոռի Չերքեզյանի։

Հայերի բացած բազմաթիվ մասնավոր դպրոցներ են գործել նաև Կովկասի այլ վայրերում։ Ցավոք դրանց մասին մեր ունեցած տվյալները ազգատիպ են, ուստի և այստեղ չեն հիշատակվում։

Հարկ է նշել նաև, որ կառավարական մարմինները երբեմն անտեղյակայության պատճառով, իսկ ավելի հաճախ գիտակցաբար, հայկական եկեղեցական ծխական դպրոցները ներկայացրել են որպես մասնավոր դպրոցներ (դրանք փակելու, կամ էլ իրենց իրավասության տակ վերցնելու նպատակով)։ Այդ պատճառով հաճախ դժվար է լինում պարզել, իրոք, խոսքը մասնավոր դպրոցների, թե հայկական ազգային դպրոցների մասին է։ Երբեմն էլ այդ գործում շփոթություն են մտցրել հայ հոգևոր իշխանությունները։ Այսպես, էջմիածնի սինոդի արխիվային ֆոնդի մի փաստաթղթում 1875-ին հայկական մասնավոր դպրոցներ են ցույց տրված.

Հին Նախիջևանի վիճակում՝ 11 (այդ թվում՝ Նախիջևանում, Խաչիկ, Շիմահմուդ, Մալիշկա և այլ գյուղերում).

Նուխու հաջորդությունում՝ 12

Ատարխան Բաղամում՝ 2

Տարեի հաջորդությունում՝ 12 (այդ թվում Քարահունջ, Տեզ, Խնձորեսկ, Բանակոթ, Շիկահող, Ագարակ, Շվանիձոր, Կարմնան և այլ գյուղերում)։

Հայտնի է, որ այդ բնակավայրերում գործել են նաև հայկական եկեղեցական ծխական դպրոցներ։ Վերջիններից շատերը սկզբում համարվել են մասնավոր (հաճախ՝ խալֆայական) դպրոցներ, իսկ ավելի ուշ դարձել են եկեղեցական ծխական։

1850-ական թվականներից մինչև 1920 թվականը Երևան և Արևելանդրապոլ քաղաքներում, ինչպես նաև Նահանգի մի շարք այլ բնակավայրերում բացվել ու գործել են զգալի թվով մասնավոր դպրոցներ։ Արխիվային փաստաթղթերից բաղված տվյալների համաձայն դրանց թիվը հասնում է 47-ի (համապատասխան նյութերի բացակայության պատճառով չեն նշված Երևանի Նահանգի մեջ մտած Սուրմալվի ու Շարուր—Դարալագյազի գավառների և Նախիջևան քաղաքի մասնավոր դպրոցները)։ Այստեղ բերում ենք այդ 47 դպրոցների ցուցակը։ Դրանցից ավելի նշանավորների մասին կխոսվի առանձին։

Մասնավոր դպրոցներ Երևանի նահանգում (1850—1920 թթ.)

Հմ թվ.	Վայրը	Ում դպրոցն է եղել	Դպրոցի անվանումը	Դպրոցի տարիքը	Երբ է բացվել	Մինչև երբ է գործել	Մանրամասն
1	2	3	4	5	6	7
1.	Ագլաբանդարապատ	Ագլաբանդար Արարատյանի Սուրբ Մարգարեն մասնավոր դպրոց	անհայտ է	1865	1907	փակման թվականը անհայտ է
2.	»	Տեր-Մարկոսյանի	3-րդ կարգի	հայտնի չէ	1865-թվ. գար. մեջ է	փակման թվականը անհայտ է
3.	»	Տեր-Գրիգորյանի	անհայտ է	հայտնի չէ	1885-թվ. գար. մեջ է	փակման թվականը անհայտ է
4.	»	Տիկին Վիկտորիա (Գրաբարի)	անհայտ է	1887-թվ. Բարձրագույն	անհայտ է	1904-ին փոխադրվել է Ալեքսով
5.	»	Ալամ Խանումյանի	3-րդ կարգի	1896	1908	
6.	»	Յարալի Բաղրյանի	3-րդ կարգի	1896	1898	
7.	»	Վարդան Շահազիզյանի	անհայտ է	1903	անհայտ է	
8.	»	Աստվածատրի Մարկոսի	3-րդ կարգի	1905	1910-թվ. գար. մեջ է	փակման թվականը անհայտ է
9.	»	Սայադովայի	2-րդ կարգի	1910	1909-թվ. գար. մեջ է	
10.	»				անհայտ է	
11.	»					
12.	Երևան	Զաքար Տեր-Զաքարյանի	Խոխանոցի դպրոցական	1856	1859	

ՄԱՍՆԱՎՈՐ.— 1870-ական թվականներին Ալեքսանդրապոլ քաղաքում գործել են (բացի սրանց նշվածներից) 15 մասնավոր դպրոցներ, որոնցում ասում էին մի քանի հարյուր հայ աղջիկներ։ Այդ պատճառով նրանց մասին

1	2	3	4	5	6	7
13.	Երևան	Սոֆիա Ալեքսանդրովնա Սատայանիչի	3-րդ կարգի	1877	1908	
14.	»	Պետրոս Շաղամի	3-րդ կարգի	1879	1890	
15.	»	Կոնստանտին Կամենարակովի	3-րդ կարգի	1880	1886-ին գործել է	փակման թվականը հայտնի չէ
16.	»	Լևոն Թուտիկյանի	2-րդ կարգի	1882	անհայտ է	
17.	»	Զինաիդա Շուլգինայի	անհայտ է	անհայտ է	1883	
18.	»	Առաքել Բաքալյանցի	3-րդ կարգի	1884	1905-ին գործել է	փակման թվականը անհայտ է
19.	»	Մանգեն Մանգենյանի	3-րդ կարգի	1886	անհայտ է	
20.	»	Գևորգ Ազատյանի	3-րդ կարգի	1886	անհայտ է	
21.	»	Վերգինե (Եվանեհուս) Տեր-Մարությանի	3-րդ կարգի	1887	1888	
22.	»	Ստեփան Հովհաննիսյանի	3-րդ կարգի	1888	1891-ին գործել է	փակման թվականը անհայտ է
23.	»	Քաթան Քաթանյանի	անհայտ է	1890	անհայտ է	
24.	»	Կոնստանտին Տեր-Զաքարյանցի	3-րդ կարգի	1893	1901-ին գործել է	փակման թվականը անհայտ է
25.	»	Դեմիրի Պապովի	3-րդ կարգի	1894	1916-ին գործել է	փակման թվականը անհայտ է
26.	»	Եվանեհուս (Եղջերաթ, նույն ինքը Վերգինե) Տեր-Մարությանի	3-րդ կարգի քիմիական	1896	անհայտ է	
27.	»	Հայկանուշ Սաֆարյանի	երթևեկ ուղիների մի-զասյան գրասրոց	1896	1918	1903-ին փոխադրվել է Ալեքսանդրապոլ, 1904-ին՝ նորից Երևան
28.	»	Անահիտ Նավասարդյանի	անհայտ է	1900	1901-ին գործել է	փակման թվականը անհայտ է
29.	»	Անահիտ Կիրակոսյանի	անհայտ է	1900	1905-ին գործել է	1908-ի դեկտեմբերում ցույց չի տրված
30.	»	Մամիկոն Կուլի բեկ Կեկերլինսկու	անհայտ է	1901	1905-ին գործել է	փակման թվականը անհայտ է
31.	»	Մարգարիտ Եմանբարյանի	անհայտ է	1902	1905-ին գործել է	փակման թվականը անհայտ է
32.	Երևան	Նատալիա Շերբանենկոյի (Հարության գեղ՝ Բոչվանի)	1902-ին 3-րդ կարգի 1906-ին 2-րդ, 1907-ից՝ պրոֆիմինիմում	1902	Հոկտեմբեր 1918 թ.	1908-ին անցել է [illegible]
33.	»	Կոնստանտին Իվանովի	3-րդ կարգի	1903	1913	
34.	»	Մատրյանա Պավլենովայի	3-րդ կարգի	1904	1915-ին գործել է	փակման թվականը անհայտ է
35.	»	Նադեժդա Շերբանենկայի (Բոչվանի)	3-րդ կարգի	1908	անհայտ է	
36.	»	Զաֆարբեկովի	3-րդ կարգի	1909-ին գործել է	1910	
37.	»	Մամեկովի	3-րդ կարգի	անհայտ է	1910-ին գործել է	փակման թվականը անհայտ է
38.	»	Ռասիեևայի	3-րդ կարգի	անհայտ է	1910-ին գործել է	փակման թվականը անհայտ է
39.	»	Շաստովի	3-րդ կարգի	անհայտ է	1910-ին գործել է	փակման թվականը անհայտ է
40.	»	Իվան Կլաչովի	2-րդ կարգի	1912	1914	
41.	Վերին Ագուլիս	Գրիգոր Հարությունյանի	անհայտ է	անհայտ է	1851-ին գործել է	փակվել է կառավարության կողմից
42.	Զանգեզուր	Գևորգ Շահիևի	3-րդ կարգի	1886	անհայտ է	
43.	Վաղաշեն	Վարդանիկ Միհեևսյանի (Սիկանի)	3-րդ կարգի	1896	անհայտ է	
44.	Նոր Բայազետ	Արշամ Տեր-Հակոբյանցի	3-րդ կարգի	1896	1899	
45.	Մեծ Զարգիլիսա	Զանանովի	3-րդ կարգի	1909-ին գործել է	1910	
46.	Զանգեզուր	Հայկանուշ Սաֆարյանի	3-րդ կարգի	1910	1913	
47.	Քյոթանլու (Էմիրածանի գավառ)	Միքայել Իլյանի	3-րդ կարգի	անհայտ է	1910-ին գործել է	փակման թվականը անհայտ է

Ինչպես նշեցինք վերևում, անհրաժեշտ ենք համարում որոշ տվյալներ հաղորդել Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքներում գործած մի քանի մասնավոր դպրոցների մասին, նկատի ունենալով նրանց գոյության տարիներն ու ժամանակաշրջանը և խաղացած դերը մասաղ սերնդի ուսման գործում։

Երևանի Զաքար Տեր-Զաքարյանի մասնավոր դպրոցը

Այս դպրոցը գոյություն է ունեցել 1856—1859 թվականներին։ Նրա անօրենն է եղել Երևան քաղաքի բնակիչ Զաքար Տեր-Զաքարյանը, որը մինչև այդ վարել է Երևանի նահանգային բժշկի գրագրի պաշտոն։ Նահանգապետին ուղղված իր գիտումի մեջ նա հայտնել է, որ ինքը 1842—46 թթ. սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի հոգևոր բաժնում, սակայն հիվանդության պատճառով չի ավարտել նրա դասընթացը, դուրս գալով լաբորդ՝ բարձր դասարանից։ Այնուհետև քննություն է տվել Թիֆլիսի առևտրական դիմնազիայի լրիվ դասընթացի ծավալով և ստացել ավարտական վկայական։ «Այժմ դժվարանալով իմ ընտանիքի գոյությունը պահպանել,— գրում է նա,— ես ցանկանում եմ ինձ մոտ բաց անել դպրոցական նախապատրաստական մասնավոր պանսիոն տասը տղաների համար՝ նպատակ ունենալով նրանց նախապատրաստել ընդունվելու Երևանի գավառական դպրոցի երկրորդ դասարանը, դասավանդելով նրանց կարդալ ու գրել ռուսերեն և հայերեն, թվաբանության շորս նախնական գործողությունները և երկու լեզուների քերականության առաջին մասը»[1]։

Տեր-Զաքարյանը խնդրում է նահանգապետին՝ միջնորդել Կովկասյան ուսումնական շրջանի հոգաբարձուի առաջ՝ թույլ տալու բացել վերոհիշյալ դպրոց-պանսիոնը։ Իր ներկայացրած ծրագրի մեջ Տեր-Զաքարյանը ավելի որոշակի է նշել հիմնվելիք դպրոցի բովանդակությունը. 1. ռուսաց և հայոց լեզուներից ընթերցանություն. 2. համառոտ կատեխիզիս, սրբազան և եկեղեցական պատմություն, հայ-գրիգորյան հավատ, 3. երկու լեզուների քերականության առաջին մասը, 4. թվաբանություն մինչև տասնորդական կոտորակները, 5. աշխարհագրություն համառոտ տեսությունն և 6. մաքրագրություն։

Այսպես կոչված «նախապատրաստական» դասարանի համար վատ ծրագիր չէ, այն գրեթե լիովին հավասար էր այն ժամանակվա տարրական դպրոցների դասընթացին։

Նահանգապետը միջնորդել է[2], իսկ ուսումնական շրջանի հոգաբարձուի ներկայացմամբ փոխարքան Տեր-Զաքարյանին թույլ է տվել բաց

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20, գ. 1, գ. 10, թ. 2—3։
[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20, գ. 1, գ. 10, թ. 18։

անել նշված մասնավոր դպրոցը՝ «քրիստոնեական և մուսուլմանական բնակչության արական սեռի երեխաներին տեղական լեզվի գրագիտություն, իրենց հավատի աղոթքների, դրանից բացի, ռուսաց լեզվով կարդալու, գրելու, խոսելու և թվաբանության առաջին չորս կանոնները սովորեցնելու համար»[1]։

Երևանի գավառական դպրոցի տեսուչ Կովալյովը Քութայիսի ժողովրդական դպրոցների դիրեկցիային ուղղված մի զեկուցագրում[2] հայտնում է, որ Տեր-Զաքարյանի մասնավոր դպրոցը բացվել է 1856-ի կեսերին, շենքը օրինակելի է, զեկավարությունը լավ, «բոլոր առարկաները դասավանդվում են բավականաչափ հաջող», աշակերտների թիվն է 21 և այլն։

Տեր-Զաքարյանի դպրոցի հացերին սված այս գովեստները մեզ ավելի հասկանալի կդառնան, եթե մենք ծանոթանանք, թե ովքեր են սովորել այնտեղ և ինչպիսի ուսման վարձ են վճարել։

Նույն զեկուցագրից իմանում ենք, որ այդ դպրոցում սովորող 21 աշակերտներից 4-ը՝ խաների, 6-ը՝ ազնվականների, 4-ը՝ չինովնիկների, 3-ը՝ հոգևորականների, 2-ը՝ մելիքների և 2-ը հարուստ քաղաքացիների զավակներ են եղել։ Նրանք ուսման վարձ են վճարել տարեկան 48 և 36 ռուբլի (ըստ ուսման տարիների)։

Այս բոլորից դժվար չէ կռահել, թե ում է սպասարկել Տեր-Զաքարյանի մասնավոր դպրոցը։

Սակայն խաների ու մելիքների որդիների համար ստեղծված այդ դպրոցը նույնիսկ չի կարողանում երկար ժամանակ պահպանել իր գոյությունը։

Քութայիսի և Երևանի նահանգների ուսումնարանների դիրեկցիայի մի գրությունից իմանում ենք, որ 1859 թ. դեկտեմբերին «նահանգական քարտուղար Տեր-Զաքարովը, աշակերտների թիվը պակասելու պատճառով, փակել է իր կողմից Երևան քաղաքում պահվող նախնական դպրոցը»[3]։

Ուրեմն այն ժամանակվա աղաներն էլ այնքան գլուխ չունեին ուսման հետ, որ իրենց որդիներին հանում էին այդչափ գովաբանված դպրոցից։

Ծանոթություն.— Իր՝ «Երևանի պատմությունը (1801—1879 թթ.)» աշխատության մեջ պրոֆ. Բ. Խ. Հակոբյանը գրել է. «50-ական թվականներին գավառական դպրոցի տեսչի միջոցով Երևանում 25 պատանիների համար մասնավոր դպրոց բացելու հայց են ներկայացրել Երևանի բնակիչ Զաքարիա Տեր-Զաքարովը և Կորգանովը, օրենք երկուսն էլ ունեին բավարար կրթության։ Տեսչի հաղորդած միջնորդությունը հարցվում է, և Կովկասյան ուսումնական օկրուգը Զաքարիա Տեր-Զաքարովին և Կորգանովին թույլատրում է (1856 թ. սեպտեմբերին) Երևանում բացելու իրենց մասնավոր դպրոցը, չորսքանչյուրը

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20, գ. 1, գ. 10, թ. 17։
[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 86, թ. 30—31։
[3] Նույն տեղը, ֆ. 20, գ. 1, գ. 10, թ. 19։

25 տղաների համար։ Սակայն հաջող չէ, թե արդյոք նրանք բացեցին դպրոցներ, թե ոչ, իսկ եթե բացեցին, ապա ինչքան ժամանակ գոյություն ունեցան դրանք»[1]։

Ինչպես այդպես ցույց ենք տվել, Զաքար Տեր-Զաքարյանի դպրոցը բացվել և գործել է։

Ինչ վերաբերում է Կորգանովի (Ղորղանյանի) դպրոցին, ապա մեր ձեռքի տակ եղած նյութերը այլ բան են ասում։ Իրոք, Երևանի գավառական դպրոցի ուսուցիչ Կորգանովը 1855-ի հոկտեմբերին դիմել է այդ դպրոցի տեսչին, խնդրելով նրան միջնորդել, որպեսզի իրեն թույլ տրվի Երևան քաղաքում բաց անելու նախնական արական դպրոց՝ քրիստոնեական և մուսուլմանական բնակչության 25 երեխաների համար՝ «Ներանց տեղական լեզուների գրագիտության, իրենց հավատի աղոթքների, գրանից բացի, ռուսաց լեզվի ընթերցանության, գրության և խոսակցության ու թվաբանության առաջին չորս կանոնների ուսուցման համար»[2]։

Տեսուչը միջնորդել է Քութայիսի նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորի, իսկ վերջինս՝ Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուի առաջ։

1856 թ. հունվարի 18-ին ուսումնական օկրուգի հոգաբարձուն պատասխանել է, որ գոյություն ունեցող օրենքների համաձայն գավառական դպրոցի ուսուցիչը չի կարող մասնավոր դպրոց բացել։ Այնպես որ մասնավոր դպրոց բացելու համար Կորգանովը կամ պետք է հրաժարվի ծառայությունից, կամ էլ այդպիսի դպրոց բացելու մտադրությունից[3]։

Այլ կերպ ասած, Կորգանովը մերժում է ստացել, ուստի և չէր կարող իր ցանկացած դպրոցը բացել։

Երևանի Սոֆյա Ստասյուկևիչի մասնավոր դպրոց-պանսիոնը

Երևանի հնագույն մասնավոր դպրոցներից երկարատև կյանք է ունեցել Սոֆյա Ստասյուկևիչի գիշերօթիկ դպրոցը, որը հիմնվել է 1877 թվականին։

Դեռևս 1876 թ. Երևանի բնակչուհի, այրի Սոֆյա Ալեքսանդրովնա Ստասյուկևիչը դիմել է Երևանի-Ելիզավետպոլի ժողովրդական ուսումնարանների դիրեկտորին, խնդրելով միջնորդել Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի առաջ՝ իրեն թույլ տալու Երևան քաղաքում բաց անելու մասնավոր տարրական դպրոց տղաների համար։

1 Բ. Ա. Հակոբյան, «Երևանի պատմությունը (1801—1873 թթ.)», Երևան, 1959, էջ 509։
2 ԶՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 5, թ. 15։
3 Նույն անդր, թ. 17։

1877 թ. փետրվարի 16-ի գրությամբ՝ հոգաբարձուն հայտնում է, որ Ս. Ստասյուկևիչին թույլատրում է բաց անել այդ դպրոցը, հաստատելով միաժամանակ ներկայացված պլանը (ծրագիրը)։ Ըստ այդ ծրագրի դպրոցը պետք է ունենար առաջին ու երկրորդ նախապատրաստական բաժանմունքներ և առաջին դասարան։ Առաջին նախապատրաստականում անցել են կրոն, ռուսաց լեզու, հայոց լեզու, թվաբանություն, մաքրագրություն (գեղագրություն), երգ և սենյակային մարմնամարզություն։ Երկրորդ նախապատրաստականում այդ առարկաներին ավելացել է զծագրությունը, իսկ առաջին դասարանում՝ աշխարհագրությունը և նկարչությունը։

Սրագրում նշված է նաև, թե ամեն մի բաժանմունքում ու դասարանում ինչ պետք է սովորեն և իմանան աշակերտները։ Այսպես, օրինակ, առաջին դասարանում (ուսման 3-րդ տարի) աշակերտները պետք է կարողանային ռուսաց լեզվով կարդալ ու գրել բավականաչափ լավ, ազատ պատմել կարդացածը, բանավոր և գրավոր թարգմանություններ կատարել ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն։ Քերականությունից պետք է անցնեին դերանունները և բայը։

Հայոց լեզվից՝ լավ կարդալ և գրել կարդացածը առանց սխալի։

Թվաբանությունից՝ ամբողջական թվերով չորս գործողություններ 1—1000-ի սահմաններում. անվանական և վերացական թվերով լուծել խնդիրներ բանավոր և գրավոր։

Աշխարհագրությունից — ընդհանուր ծանոթություն մայրցամաքներին, օվկիանոսներին, լճերին, գետերին, լեռներին և այլն։

Նկարչությունից — կարողանալ նկարել մարդու և կենդանիների օրգանիզմի մասերը օրիգինալից։

Որպես ձեռնարկներ օգտագործվել են՝ ռուսաց լեզվից՝ Ուշինսկու և Պաուլսենի, հայոց՝ լեզվից՝ Տեր-Ղևոնդյանի և Տեր-Հակոբյանի, թվաբանությունից՝ Պաուլսենի, Մալինինի և Բուրենինի, Եվտուշևսկու և Վիլենսի, աշխարհագրությունից՝ Սմիռնովի դասագրքերը[2]։

Ստասյուկևիչի դպրոցը գործել է մի քանի տասնամյակ անընդմեջ և հանդիսացել է երրորդ կարգի մասնավոր դպրոց։ Այն փակվել է 1908-ի սեպտեմբերին։

Կցանկանայինք այստեղ նշել ցարական բյուրոկրատիայի անհոգությունը ցուցադրող հետևյալ փաստը։

Դեռևս 1886 թվականին այրի Ստասյուկևիչը, որպես երկարամյա մանկավարժ և հիվանդ կին, դիմում է ներկայացնում իրեն կենսաթոշակ նշանակելու մասին։ Նրա խնդիրքը 10 տարի շարունակ դառնում է անպատասխան գրագրությունների առարկա և, ի վերջո, 1896 թվականին մերժվում

1 ԶՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 402, թ. 3։
2 ԶՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 5, թ. 48։

է լուսավորության մինիստր Դելյանովի կողմից, հետևյալ պատճառաբանությամբ. «Քանի որ տիկին Ստասյուլևիչը ոչ կրթական ցենզով, ոչ մանկավարժական գործունեության բնույթով չի համապատասխանում այն պայմաններին, որոնք սահմանված են օրենքով թոշակ նշանակելու համար, ապա ես հնարավոր չեմ համարում որևէ քան ձեռնարկել վերոհիշյալ միջնորդությունը բավարարելու համար»[1]

Նույն մինիստրի գրության մեջ նշված է, որ Ստասյուլևիչը ավելի քան 30 տարի զբաղվել է մանկավարժական գործունեությամբ և, այնուամենայնիվ, դա բավարար հիմք չի տալիս նրան կենսաթոշակ նշանակելու։

Ահա ու հիվանդ վիճակով նա հարկադրված է լինում շարունակել աշխատանքը, պահպանելով իր մասնավոր դպրոցը մինչև այն ժամանակ (1908 թ.), երբ այլևս բոլորովին ուժասպառ է լինում և ստիպված փակում է այն։

1914 թ. գրված նրա դիմումից[2] երևում է, որ մինչև այդ ժամանակն էլ լուծված չի եղել Ստասյուլևիչի կենսաթոշակի հարցը։

Հառամյալ կին, մոտ կես դար (գրանից 30 տարի միայն Երևանում) մանուկների կրթության ու դաստիարակության ազնիվ գործին նվիրվելուց հետո, ցարական օրենքների և չինովնիկների անմարդկային վերաբերմունքի շնորհիվ մնացել էր անօգ և անել վիճակում։

Երևանի Լևոն Թուսիկյանի մասնավոր պրոգիմնազիան

Երևանի բնակիչ Լևոն Թուսիկյանը 1882 թ. նոյեմբերի 26-ին դիմում է ներկայացրել Ելիզավետպոլի և Երևանի նահանգների ժողովրդական դպրոցների դիրեկտորին, հայտնելով, որ ինքը ցանկանում է 1883 թ. հունվարի 1-ից Երևան քաղաքում բաց անել մասնավոր պրոգիմնազիա, ուստի և խնդրում է համապատասխան թույլտվություն։ Նա հայտնել է միաժամանակ, որ ինքն ավարտել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, ինչպես նաև հանձնել է այդ ֆակուլտետի թեկնածուական աստիճանի քննությունները։

Դիմումի հետ միասին Թուսիկյանը ներկայացրել է նաև բացվելիք պրոգիմնազիայի կանոնադրությունը, որի հիմնական կետերը բերում ենք այստեղ, նկատի ունենալով, որ պրոգիմնազիան հենց այդ կանոնադրությամբ էլ գործել է։

Կանոնադրության մեջ նշված է, որ պրոգիմնազիայի նպատակն է

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ֆ. 19, ց. 1, գ. 402, թ. 22։

[2] Նույն տեղը, թ. 28։

տեղական բնակչության մեջ կրթության տարածումը և պատանեկության նախապատրաստումը միջնակարգ ուսումնական հաստատությունները մտնելու համար։ Հատուկ ուշադրություն է դարձվելու սաների դաստիարակությանը։ Դասավանդվող առարկաներն են լինելու կրոն, լեզուներ՝ ռուսերեն, լատիներեն, հունարեն, գերմաներեն, ֆրանսերեն, հայերեն և թաթարերեն (հայերի և թաթարների համար), մաթեմատիկա, աշխարհագրություն, ընդհանուր և ռուսական պատմություն, գծագրություն, նկարչություն և մարմնամարզություն։ Իր դասընթացով և ուսուցման ծավալով պրոգիմնազիան հավասար է լինելու պետական պրոգիմնազիաներին, ավելացրած նաև տեղական լեզուների դասավանդումը։ Պրոգիմնազիան ունենալու է դասուսուցման դասարաններ, որոնցում դասուսույցի ղեկավարությամբ աշակերտները պատրաստվելու են հաջորդ օրվա դասերին։ Ծանկացողների համար պրոգիմնազիայում բացվելու է առնետրական բաժանմունք։

Մասնավոր պրոգիմնազիայի ղեկավարությունն իրագործելու է նրա հիմնադիրը՝ Պետերբուրգի կայսերական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճանի դասընթացն ավարտած Լևոն Թուսիկյանը և նրա օգնականը, որը նրա կողմից հրավիրվում է ուսումնական վարչության գիտությամբ։

Յուրաքանչյուր դասարան պետք է բաղկացած լինի ոչ պակաս 10 և ոչ ավելի 40 աշակերտից։

Պրոգիմնազիա ընդունվում են բոլոր դասերի ու կրոնների պատկանող երեխաներ, որոնք կարող են լինել պանսիոներներ, կիսապանսիոներներ և երթևեկներ։ Ուսման վարձից կարելի է հեշտությամբ տեսնել, թե ինչպես էին իրագործում «ամեն դասից» պրոգիմնազիա ընդունելու կանոնադրական կետը։

Երթևեկ աշակերտներից յուրաքանչյուրը պետք է տարեկան վճարեր 80—100 ռ. վարձ։ Պանսիոներները, այդ գումարից բացի, պետք է վճարեին նաև 160 ռ., իսկ կիսապանսիոներները՝ 80 ռուբլի։ Պանսիոներները պետք է վճարեին նաև 20 ռ. մահճակալի և վերմակի համար։ Դասագրքերի համար աշակերտները պետք է մուծեին ևս 10 ռ., փոխադրածախս՝ 75 ռ. և այլն։ Հիմանդության հետ կապված ծախսերը նույնպես ծնողներն էին կատարում։[1]

Ասած չկա, իսկապես, որ պրոգիմնազիայի դռները լայնորեն բաց էին «բոլոր դասերի» երեխաների համար, միայն, իհարկե, թղթի վրա և ոչ իրականության մեջ։

Ազնվականական այսպիսի ուսումնական հաստատության համար թույլտվություն ստանալն այնքան էլ դժվար չէր։ Եվ, չնայած դրան, այ-

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ֆ. 19, ց. 1, գ. 410, թ. 9—12։

նուամենայնիվ, ուսումնական օկրուգի հոգաբարձուն Թուսիկյանին թույլ է տալիս բաց անել ոչ թե պրոգիմնազիա, այլ պրոգիմնազիական դասընթացով երկրորդ կարգի արական մասնավոր ուսումնարան[1]։

1883 թ. հունիսի 20-ին Թուսիկյանը հայտնում է ժողովրդական դպրոցների դիրեկտորին, որ թույլտվությունը ապրիլի վերջերին ստանալու պատճառով չի կարողացել անմիջապես բացել իր դպրոցը և որ այն անպայման կբացի սեպտեմբերի 1-ից։

Եվ, իրոք, Թուսիկյանի դպրոցը նշված ժամկետին բացվում է։ Կովկասի ուսումնական օկրուգի 1884 թ. հաշվետվության մեջ հիշատակված է նաև Երևանի Լ. Թուսիկյանի երկրորդ կարգի արական մասնավոր դպրոցը[2]։

Մեզ հայտնի չէ, թե մինչև ե՞րբ է իր գոյությունը պահպանել այս դպրոցը, և ինչպիսին է եղել նրա հետագա ճակատագիրը։

Երևանի Առաքել Բաբայանի մասնավոր դպրոցը

Քանաքեռ գյուղի բնակիչ Առաքել Արտեմի Բաբայանը, նպատակ ունենալով իրեն նվիրել ուսուցչական աշխատանքի, 1884 թվականին քննություն է տալիս Երևանի գիմնազիայում և ստանում քաղաքային, ծխական և տարրական դպրոցների ուսուցչի կոչում[3]։ Դրանից հետո նա դիմում է դպրոցական իշխանություններին, խնդրելով իրեն թույլ տալ Երևան քաղաքում բացելու 3-րդ կարգի մասնավոր տարրական ուսումնարան՝ իր պանսիոնով[4]։

Նահանգապետը Երևանի նահանգի ուսումնարանների դիրեկտորին հայտնել է, որ այդպիսի ուսումնարան բացելու համար արգելքներ չկան, քանի որ ինքը՝ Ա. Բաբայանը հավանություն ստանալի վարք ունի, դատի կամ քննության տակ չի եղել և դատապարտելի արարքների մեջ չի նկատվել[5]։ Այդ հիման վրա ուսումնարանների դիրեկտորը միջնորդում է[6] Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի առաջ, իսկ վերջինս թույլատրում է Բաբայանին բաց անելու իր ծրագրած մասնավոր ուսումնարանը[7]։

Այդ նույն՝ 1884 թվականին ուսումնարանը բացվել է։ 1886-ին այն երկու անգամ ստուգման է ենթարկվել Երևանի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ Պասխալովի կողմից։ Առաջին ստուգման ժամանակ

1 ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 19, ց. 1, գ. 410, թ. 6։
2 Циркуляр по управлению Кавказск. уч. округом, за 1884 г., № 7, стр. 174.
3 ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 19, ց. 1, գ. 415, թ. 2։
4 Նույն տեղը, թ. 1։
5 ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 20, տ. 1, գ. 78, թ. 2։
6 Նույն տեղը, թ. 1։
7 Նույն տեղը, թ. 3։

առաջարկվել է Բաբայանին փոխել դպրոցի շենքը, իսկ երկրորդ ստուգման ժամանակ արձանագրվել է, որ այդ դպրոցը գտնվում է բավարար վիճակում[1]։

Բաբայանի ներկայացրած և ուսումնական օկրուգի կողմից հաստատված կանոնագրության համաձայն այդ դպրոցում պետք է անցնեին կրոն, աստված լեզու, հայոց լեզու (հայերի համար պարտադիր), թվաբանություն, նախնական տեղեկություններ աշխարհագրությունից և պատմությունից, բնագիտություն, գծագրություն (նկարչություն), մաթեմատիկան սկսած է։

1888-ի հունիսին Բաբայանը հայտնում է դպրոցական իշխանություններին, որ բնականկան պատճառներով ստիպված է փոխադրվել ապրելու Ելիզավետպոլ քաղաքը և հունիսի 12-ից փակում է Երևանում ունեցած իր մասնավոր դպրոցը։ Սակայն, ըստ երևույթին, նշված ժամկետին նա չի փակել իր դպրոցը, քանի որ այն փակելու մասին երկրորդ անգամ գրավոր հայտարարություն է ներկայացրել 1889-ի հունվարի 12-ին։ Հունվարի 14-ին Բաբայանի դպրոցը փակվել է[3]։

Մի քանի ամիս անց, 1889-ի սեպտեմբերին Բաբայանը նորից է դիմում, խնդրում իրեն թույլ տալ Երևան քաղաքում վերաբացելու իր 3-րդ կարգի մասնավոր դպրոցը։ Ստանալով համապատասխան թույլտվություն, 1889-ի հոկտեմբերի 1-ից նա նորից բաց է անում իր դպրոցը, ունենալով բնակիչներ 10 աշակերտ[4]։

Դրանից հետո Բաբայանի մասնավոր դպրոցը երկար տարիներ գոյություն է ունեցել։ 1901 թվականին այն գտնվել է Յարսկի փողոցի №35 տանը, իսկ 1904-ին՝ Մալյարնայա փողոցի Մելիք Քիշմիրյանի տանը[5]։ Ունեցել է 18 աշակերտ (4 աղջիկ)[6]։

1908 և հետագա տարիների մասնավոր դպրոցների ցուցակներում Առաքել Բաբայանի դպրոցը այլևս չի նշվում։ Հավանաբար մինչև այդ այն արդեն փակված է եղել։

Երևանի Վերգինե Տեր-Մարությանի մասնավոր դպրոցը

Երևանի բնակչուհի օրիորդ Վերգինե (նույն ինքը՝ Ծվանետա) Հովսեփի Տեր-Մարությանը, որ ունեցել է տարրական դպրոցի ուսուցչուհու

1 ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, ց. 1, գ. 2867, թ. 10 և 34։
2 ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 19, ց. 1, գ. 415, թ. 5։
3 ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 19, ց. 1, գ. 415, թ. 11, ֆ. 20, ց. 1, գ. 78, թ. 4։
4 Նույն տեղը, թ. 19։
5 Նույն տեղը, թ. 20, գ. 459, թ. 30։
6 Նույն տեղը, ֆ. 19, ց. 1, գ. 1419, թ. 2։

կոչում, 1887 թ. սեպտեմբերին խնդիր է ներկայացրել՝ Երևանում աղջիկների մասնավոր դպրոց բաց անելու թույլտվություն ստանալու մասին։ Համապատասխան միջնորդությունների հիման վրա ուսումնական օկրուգը նրան թույլատրում է բացել երրորդ կարգի դպրոց, որը բացվել և գործել է ընդամենը մեկ տարի։ 1888-ի հոկտեմբերին Տեր-Մարությանը՝ «ընտանեկան պատճառներով»[1] փակում է իր դպրոցը։

Տարիներ անց, Եվանեսա (Շողակաթ) Հովսեփի Տեր-Մարությանը (ամուսնու ազգ. Տեր-Խաչատրյան), 1896-ի սեպտեմբերին նոր դիմում է ներկայացնում, այս անգամ արդեն խնդրելով թույլ տալ Երևան քաղաքում բաց անել երրորդ կարգի իգական միդասյան մասնավոր դպրոց։

Տեր-Մարությանին մասնավոր դպրոց բացելու իրավունք տալու կապակցությամբ Երևանի և Ելիզավետպոլի ուսումնարանների գիրեկտորին ուղղված իր միջնորդագրում Նահանգական դպրոցական տեսուչը գրում է.

«Պարտք եմ համարում Ձերդ գերազանցությանը զեկուցել, որ հաշվի առնելով Երևանի Նահանգում աղջկական տարրին կարգի իգական դպրոցների լիակատար բացակայությունը, կարելի կլինի, իմ կարծիքով, խնդրատուին թույլ տալ նման դպրոցի բացումը...»։

Եվ, իրոք, ուսումնական օկրուգի հոգաբարձուն, տեսնելի այդ խոստման հիման վրա, 1896-ի մայիսի 2-ին տիկին Տեր-Խաչատրյան-Տեր-Մարությանին թույլ է տալիս Երևան քաղաքում բացել աղջիկների երրորդ կարգի ուսումնական հաստատություն[2]։

Մենք չգիտենք, Տեր-Մարությանին հաջողվե՞լ է արդյոք բացել և պահպանել իր դպրոցը, բայց, ինչ էլ որ եղած լինի, մենք բարձր ենք գնահատում հայրենասեր այդ կնոջ մատնեղացումը՝ թեկուզ և ծանր պայմաններում հայ երեխաներին ուսուցանել իրենց մայրենի լեզուն։

Հայկանուշ Սաֆարյանի մասնավոր դպրոցները Երևանում, Ալեքսանդրապոլում և Ջուլֆայում

Երևանի բնակչուհի օրիորդ Հայկանուշ Մարկոսի Սաֆարյանը 1896-ի հունիսի 8-ին խնդրագիր է ներկայացրել՝ Երևան քաղաքում երթևեկ աղջիկների միդասյան դպրոց կազմակերպելու թույլտվություն ստանալու համար։

[1] Циркуляр по управл. Кавказским учебным округом за 1888 г., стр. 454.
[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 461, թ. 3։
[3] Նույն տեղը, թ. 4։

Դիմումին կից ներկայացված ուսումնական պլանում և կանոնագրության մեջ Սաֆարյանը նշել է, որ իր դպրոցն են ընդունվելու միայն 7—12 տարեկան աղջիկներ, նրանց միջնակարգ իգական դպրոցների նախապատրաստական և առաջին դասարաններն ընդունվելու համար նախապատրաստելու նպատակով։

Մյուս մասնավոր դպրոցների համեմատությամբ այստեղ ուսման վարձը բավականին չափավոր է նշանակվել՝ 3—5 ռ. ամսական։ Աշակերտուհիների ընդհանուր թիվը 80-ից չպետք է գերազանցեր։

Առարկաներ. ռուսաց լեզու, հայոց լեզու, թվաբանություն, գծագրություն և նկարչություն, ձեռագործ։

Ստանալով համապատասխան թույլտվություն, Հ. Սաֆարյանը 1896 թ. նոյեմբերի 1-ից բաց է անում իր դպրոցը, ուր առաջին տարին ընդունվում են 28 աղջիկներ, որոնցից 5 հոգի, ծայրահեղ աղքատության պատճառով, ազատվում են ուսման վարձից։

1901 թվականի սկզբներին ուսումնական վարչությունը հատուկ հարցում է ուղարկում բոլոր մասնավոր դպրոցներին, պահանջելով հայտնել, թե ավյալ դպրոցում սովորողների մեջ քանի հոգի են պատկանում ուղղափառ եկեղեցուն և որտե՞ղ է տեղավորված դպրոցը։

Այդ հարցումին Հայկանուշ Սաֆարյանը պատասխանում է, որ իր դպրոցում ուղղափառ եկեղեցուն պատկանող երեխաներ չեն սովորում, իսկ դպրոցը տեղավորված է Ցարսկի փողոցի № 32 տանը։

1903 թվականի հոկտեմբերին, հատուկ թույլտվություն ստանալով, Սաֆարյանը իր մասնավոր դպրոցը Երևանից փոխադրում է Ալեքսանդրապոլ և տեղավորում Բոլշայա Սլոբոդկա փողոցի №15 տանը։

1904-ի օգոստոսին Սաֆարյանը գրում է, որ Ալեքսանդրապոլի կլիմայական պայմանները նպաստավոր չեն իր համար և խնդրում է թույլ տալ իր դպրոցը նորից փոխադրել Երևան։ Այս անգամ նրա դպրոցը տեղավորվում է Ցարսկի և Աստաֆյան փողոցների վրա գտնվող № 31 տանը։

1907-ի կեսերին Սաֆարյանը փակում է իր դպրոցը և փոխադրվում Թիֆլիս՝ մշտական բնակության։ Սակայն դրանով չի ավարտվում նրա դպրոցի պատմությունը։

1910-ին Հ. Սաֆարյանը խնդրում է իրեն թույլ տալ մասնավոր դպրոց բացելու Ջուլֆայում։

Այդ կապակցությամբ գրված մի միջնորդագրում ուսումնարանների գիրեկտորը հայտնում է, որ Հայկանուշ Մարկոսովնա Սաֆարյանը (ամուսնու կողմից՝ Սիմոնյան) «1896-ից մինչև 1907 թվականը Երևան քաղաքում պահել է III կարգի մասնավոր ուսումնարան և միշտ էլ ուսուցման մեջ հասել է բավարար արդյունքների»։

Նույն թվականի դեկտեմբերի 28-ին Սաֆարյանը Ջուլֆայում բաց է անում իր դպրոցը, որտեղ ընդունվում են 8 հոգի առաջին և 3 հոգի երկրորդ դասարաններում։ Այս դպրոցը, բաց երևույթին, գոյություն է ունեցել մինչև 1913 թվականը, որից հետո փակվել է։

1916 թ. հունիսին Հ. Սաֆարյանը նորից է խնդրում թույլ տալ մասնավոր դպրոց բացել Երևան քաղաքում։ Իր դիմումի մեջ նա հայտնում է, որ «1897-ից մինչև 1913 թվականը նա պահել եմ երբոլոր կարգի երկսեռ մասնավոր ուսումնարան Երևան քաղաքում, Ալեքսանդրապոլում և Ջուլֆայում» և խնդրում է արտացոլել իր դիմումի պատասխանը։

Չնայած դրան, նրա գործը ձգձգվում է մի ամբողջ տարի և միայն 1917 թ. օգոստոսին նրան թույլ են տալիս նորից դպրոց բացել Երևան քաղաքում։

Մենք քիչ ավելի կանգ առանք Հայկանուշ Սաֆարյանի մասնավոր դպրոցի վրա, որպեսզի ընթերցողը տեսնի, թե որքան եռանդուն ու ակտիվ գործունեություն է ծավալել մի հայ կին՝ իրեն ամբողջովին նվիրելով երեխաների կրթության և դաստիարակության վեհ գործին։ Ուր որ տարել են նրան հանգամանքները, նա չի մոռացել դպրոցը, երեխաներին[1]։

Դ. Մ. Պոպովի մասնավոր դպրոցը Երևանում

Դմիտրի Միխայլովիչ Պոպովի 3-րդ կարգի մասնավոր դպրոցը բացվել է 1894-ին և ոչ թե 1901-ին կամ 1902-ին, ինչպես կարծում է Թ. Խ. Հակոբյանը[2]։ 1904-ին դպրոցն ունեցել է 15, 1908-ին՝ 29, իսկ 1909-ին՝ 21 աշակերտ։ 1910-ին գործել է։

Արխիվային փաստաթղթերից երևում է, որ Դ. Մ. Պոպովը դեռ երիտասարդ տարիքում ընդունել է հայ-գրիգորյան դավանություն և տասնամյակներ շարունակ դասավանդել է հայոց լեզու։

Ուշագրավ է հետևյալ փաստը։

1918 թ. հրահանգ է իջեցվել այն մասին, որ հայկական հանրապետությունում աշխատողները պետք է տերապետեն պետական լեզվին՝ հայերենին, իսկ օտարազգիները, նրա ցանկանում են աշխատել հիմնարկներում կամ դպրոցներում, պետք է քննություն հանձնեն հայերենից։

1919-ին դաշնակների պարլամենտը նույն ոգով հատուկ օրենք է ընդունել։ Դրա համար ստեղծվել է հանձնաժողով՝ Մ. Աբեղյանի նախագահությամբ։

Այդ հրահանգի (նաև օրենքի) համաձայն պարտավոր էր քննություն հանձնել նաև ռուսազգի Դ. Մ. Պոպովը, որն այդ ժամանակ աշխատելիս է եղել Երևանի արական գիմնազիայում։

Այդ կապակցությամբ Պոպովը արդարացի դժգոհություն է հայտնել։ Արական գիմնազիայի մանկավարժական խորհրդին ուղղված իր դիմումի մեջ նա գրել է, որ Գորիի ուսուցչական սեմինարիան ավարտելիս նա հատուկ քննություն ու փորձնական դասեր է տվել հայոց լեզվից և ստացել համապատասխան վկայական։ «Բացի այդ, նա ամբողջ 38 տարի հայոց լեզու է ավանդել Երևանի արական գիմնազիայում և այդ առարկայի մեջ իրեն համարում է այնքան փորձված ու գիտուն, որ իր համար վիրավորական է համարում 38 տարի ուսուցչություն անելուց հետո հատուկ հանձնաժողովի միջոցով ստուգվել այդ առարկան գիտենալու մեջ»,— ասված է մանկավարժական խորհրդի արձանագրությունում։

Քննարկելով այդ հարցը, մանկավարժական խորհուրդը Պոպովի բողոքը համարել է արդարացի և որոշել է հարց հարուցել համապատասխան մարմինների առաջ՝ Պոպովին հաստատելու «Հայկական ազգային առարկաների դասատու», նրա նկատմամբ չկիրառելով վերոհիշյալ օրենքը։

Մեզ հայտնի չէ, թե մինչև երբ է գոյություն ունեցել Դ. Մ. Պոպովի մասնավոր դպրոցը[1]։

Երևանի Նադեժդա Շչերբանինայի մասնավոր պրոգիմնազիան և դպրոցը

Երևանում տեղավորված զորամասի հրամանատարի կին Նադեժդա Գիորգիևնա Շչերբանինան (հայրական գծով՝ Բոլկովան) 1903 թ. հունիսի 3-ի իր դիմումով խնդրել է թույլ տալ Երևան քաղաքում բացելու երրորդ կարգի մասնավոր իգական դպրոց՝ մասնագիտական բաժանմունքով և արական դպրոց՝ իր պանսիոնով։

Ուսումնական օկրուգի հոգաբարձուն հայտնել է, որ մի անձը չի կարող միաժամանակ երկու մասնավոր դպրոց ունենալ։ Դրանից հետո Շչերբանինան խնդրել է թույլ տալ բացելու խառը (երկսեռ) դպրոց, որպիսի իրավունք և ստացել է։

---

[1] Հայկանուշ Սաֆարյանի մասնավոր դպրոցների մասին տես՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 459, թ. 1—45, գ. 995, թ. 1—30, գ. 1419, թ. 2—4 և այլն։

[2] Տես՝ Թ. Խ. Հակոբյան, «Երևանի պատմությունը (1879—1917 թթ.)», էջ 417։

[1] Դ. Մ. Պոպովի և նրա մասնավոր դպրոցի մասին նյութերը տես՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. գ. 199, թ. 14, ֆ. 207, գ. 3բ, թ. 27, ֆ. 67/199, գ—40, թ. 56—57։

1903 թ. հոկտեմբերի սկզբին նա բաց է տրել իր դպրոցը, ուր սկզբում ընդունվել են ընդամենը 4 տղա և 5 աղջիկ։ Այն տեղավորված է եղել Բերության փողոցի № 30 տանը։

1906-ին Շչերբանինայի դպրոցը դառնում է երկրորդ կարգի, իսկ 1907-ին՝ արական պրոգիմնազիա՝ պետական պրոգիմնազիաների իրավունքով։ 1909-ին նա պրոգիմնազիային կից բաց է անում ուսկական բաժանմունքներ, դրանով իսկ հրաժարվելով իրենց չարդարացրած կլասիկական գիմնազիաների ու պրոգիմնազիաների սկզբունքից։ Այդ շեղումը կյանքի պահանջն էր։

Հետաքրքրական է նշել, որ վերջիվերջո Շչերբանինային հաջողվել է ունենալ երկու ուսումնական հաստատություն՝ մասնավոր տարրական դպրոց և պրոգիմնազիա։ Երկու դպրոցում աշխատել են 23 ուսուցիչներ։

1909-ի հունվարի 1-ի տվյալներով նրա պրոգիմնազիայում սովորել են 320, իսկ տարրական դպրոցում՝ 40 հոգի։ Մասնավոր պրոգիմնազիայի համար այդ թիվը բավականաչափ պատկառելի էր, ուստի և չի կարելի ասել, որ Շչերբանինայի «աշակերտների թիվը դանդաղ էր ավելանում», ինչպես կարծել է Թ. Խ. Հակոբյանը[1]։ Դպրոցը բացել է 9 աշակերտով և ընդամենը 5 տարվա ընթացքում այդ թիվը հասցնել 360-ի՝ այն ժամանակվա պայմաններում հազվագյուտ երևույթ էր։ 1910-ին այնտեղ սովորել են 395 հոգի, իսկ երրորդ կարգի արական դպրոցում՝ 45 հոգի։

Մի փաստաթղթից երևում է, որ Շչերբանինայի պրոգիմնազիան մինչև 1920 թ. կեսերը գործել է։ Այդ թվականի հուլիսին տեղի է ունեցել Երևանի արական առաջին գիմնազիայի մանկավարժական խորհրդի նիստ, որը քննարկել է Շչերբանինայի պրոգիմնազիայի աշակերտներին իրենց գիմնազիայի համապատասխան դասարաններն ընդունելու հարցը։ Որոշվել է. եթե լուսավորության նախարարությունը վերջնական որոշում ընդունի այդ դպրոցը փակելու մասին, այն ժամանակ նրա աշակերտներին ընդունել գիմնազիա[2]։

Ալեքսանդրապոլի Ալեքսանդր Արաբաջյանի (Արաբաջևի) մասնավոր դպրոցը

Այս դպրոցը մեծ և հարուստ պատմություն ունի։ Նրա հիմնադիրը և տնօրենն է եղել Ալեքսանդրապոլի բնակիչ Ալեքսանդր Հովհաննեսի Արաբաջյանը (Արաբաջևը), որի անունով էլ հենց կոչվել է դպրոցը։

1 Թ. Խ. Հակոբյան, «Երևանի պատմություն», 1879—1917 թթ., էջ 419։

2 Ն. Շչերբանինայի մասնավոր պրոգիմնազիայի մասին նյութերը տես՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ ֆ. 19, գ. 740, թ. 124, գ. 1149, թ. 50։ Ֆ. 7, ց. 1, գ. 6, թ. 50։

Հայաստանի և Վրաստանի պետական պատմական արխիվներում պահպանվել են հարուստ նյութեր Արաբաջյանի մասնավոր դպրոցի վերաբերյալ։

Իր զեկուցագրերից մեկում ինքը՝ Արաբաջյանը գրում է, որ 1858 թ. ավարտելով Ալեքսանդրապոլի գավառական դպրոցի լրիվ դասընթացը, մեկուկես տարի տեղի հոգևոր դպրոցում դասավանդել է ռուսաց լեզու և թվաբանություն, իսկ այնուհետև 4 տարի աշխատել է Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանի Մեծ Ղարաքիլիսա գյուղի դպրոցում, ավանդելով ռուսաց լեզու, թվաբանություն և աշխարհագրություն[1]։

Մի այլ փաստաթղթում, որտեղ գրված է Մեծ Ղարաքիլիսա գյուղի դպրոցի պատմությունը, նշվում է, որ այդ դպրոցում Արաբաջյանը ավանդել է «հայոց և ռուսաց լեզու, հայոց պատմություն և թվաբանություն»[2]։

Ինչո՞ւ իր ներկա գիմումի մեջ Արաբաջյանը լռում է այդ առթիվ և չի գրում հայոց լեզվի ու հայոց պատմության ավանդման մասին։ Ըստ երևույթին, նա հարկադրված է դա անել, որպեսզի կարողանար պետական դպրոցական իշխանություններից առանց դժվարության մասնավոր դպրոց բացելու թույլտվություն ստանալ։

Իր հերթին այս փաստը մեկ անգամ ևս ցույց է տալիս, թե իշխանությունը դեռևս 60-ական թվականներին ինչպիսի վերաբերմունք էր ցուցաբերում հայոց լեզվի և հայոց պատմության դասավանդման նկատմամբ։

1865 թ. Արաբաջյանը գիմում և պաշտոնական թույլտվություն է ստանում Ալեքսանդրապոլում բացելու մասնավոր դպրոց։ Նույն թվականի մայիսի 1-ին (մի այլ տվյալով՝ 15-ին) բացվում է այդ դպրոցը, որը տեղավորվում է տեղական հարուստ Հ. Տիգրանյանի տանը[3]։

Արաբաջյանն իր դպրոցի նպատակն է համարել «ժողովրդի մեջ հաստատել կրոնական ու բարոյական հասկացություններ և տեղացիների մեջ տարածել սկզբնական օգտակար գիտելիքներ»[4]։ Նրա դպրոցում սկզբից մինչև վերջ ուսուցումը տարվել է ռուսաց լեզվով, բացի հայոց լեզվից և կրոնից։

1874 թվականին ինչ-ինչ պատճառներով Ա. Արաբաջյանը գիմում է Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուին, խնդրելով նրանից թույլտալ շարունակելու դպրոցի պահպանումը։ Հոգաբարձուն ուսումնարանների Երևանի տեսչությունից խնդրում է Արաբաջյանից պահանջել նրա դպրոցի ուսումնական պլանը և այն ուղարկել իրեն։

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 401, թ. 21։

2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 58, թ. 30։

3 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 401, թ. 5, 21, 54, «Արարատ», 1871 թ., № 5, էջ 305։

4 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 401, թ. 54։

1875 թ. հունվարին Արաբաջյանը ներկայացնում է իր դպրոցի ուսումնական պլանը, որը միաժամանակ նրա ուսումնական ծրագիրն էր։ Սկզբում Արաբաջյանը հայտնում է, որ իր դպրոցն ունի մի դասարան՝ երկու բաժանմունքներով, որոնք տեղավորված են երկու առանձին սենյակներում։ Աշակերտների թիվն է 40։ Նրանք ընդունվում են 8—10 տարեկան հասակից։ Դպրոցը նպատակ ունի տղաներին նախապատրաստել տեղի գավառական դպրոցի 2-րդ դասարանը կամ այլ համապատասխան ուսումնական հաստատություն ընդունվելու համար։ Ուսման տևողությունն է 4—6 տարի։ Դպրոցում դասավանդում են եղբայրներ Ալեքսանդր ու Սարգիս Արաբաջյանները և կրոնի դասատու տեր Մարտիրոս Տեր-Պողոսյանը[1]։

Դպրոցի ուսումնական պլան-ծրագրից երևում է, որ յուրաքանչյուր բաժանմունքում երեխաները սովորել են 2 տարի, իհարկե, ամեն տարի ուսումնասիրելով ստահնանաբար բարդացող դասընթացը առաջ լեզվից։ Նա մանրամասն նշել է, թե յուրաքանչյուր բաժանմունքում առաջ լեզվից ինչ են անցնելու։

Նույն ձևով նշված է անցնելիք նյութը հայոց լեզվից և թվաբանությունից, ինչպես և կրոնից։ Հայոց լեզվից օգտագործվել են հայկական դպրոցների համար եղած դասագրքերը։

1875-ի հունիսին Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուն հայտնում է Երևանի տեսչությանը, որ իրեն կից հոգաբարձական խորհուրդը, հանգամանորեն ուսումնասիրելով և քննարկելով Արաբաջյանի կողմից պահվող տարրական դպրոցի ուսումնական պլանը (ծրագիրը), այն ճանաչեց լիովին համապատասխան դպրոցի նպատակին, ուստի և ինքը Արաբաջյանին թույլ է տալիս պահել Ալեքսանդրապոլում բացված նրա դպրոցը[2]։

Սակայն շուտով Արաբաջյանի ու նրա դպրոցի գլխին ամպեր են կուտակվում։ Երևանի նահանգապետը 1875-ի հուլիսի 1-ի իր գրությամբ ուսումնական շրջանի հոգաբարձուին հայտնում է, որ Ալեքսանդրապոլի բնակիչ Ալեքսանդր Արաբաջը, որին թույլատրված է բաց անել մասնավոր տարրական դպրոց, հաղորդակից է այդ քաղաքում հայերի կողմից կազմակերպված գաղտնի կազմակերպությանը[3], որը քաղաքական հանցավոր նպատակներ է հետապնդում։ Այդ հիման վրա հոգաբարձուն Երևանի պրոգիմնազիայի տեսչին կարգադրում է «անհապաղ փակել Արաբաջյանի մասնավոր դպրոցը, արգելելով նրան զբաղվել ամեն տեսակի մանկավարժական գործունեությամբ»։

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 401, թ. 5։
2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 401, թ. 14։
3 Խոսքը, անկասկած, Ա. Կրիայանի հիմնած «Բարենպաստակ ընկերության» մասին է։

Նույնպիսի կարգադրություն է արել նաև Երևանի նահանգապետը։ Արաբաջյանի դպրոցը փակվում է։ Այն փակ է մնում 1875 թ. սեպտեմբերից մինչև նոյեմբերի վերջերը։ Այդ ժամանակ Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազը Երևանի նահանգապետին հայտնում է, որ գործի մանրամասն ուսումնասիրությունից պարզվել է, որ հիմք չկա Արաբաջյանին համարելու Ալեքսանդրապոլում հայտնաբերված գաղտնի միության մասնակից, ուստի և դադարեցվում է նրա հետապնդումը[2]։ Այդ հիման վրա նահանգապետն էլ իր հերթին հայտնում է Երևանի դպրոցների տեսչին, որ եթե Ա. Արաբաջը ցանկանում է, ապա այժմ ոչ մի արգելք չկա նրա մասնավոր դպրոցը բացելու համար[3]։

Ըստ երևույթին Արաբաջյանի դպրոցը այս դեպքերից անմիջապես հետո վերաբացվել է։

1880 թ. Արաբաջյանը դիմել է Երևանի և Ելիզավետպոլի նահանգների ժողովրդական դպրոցների դիրեկտորին, խնդրելով ճանաչել իր ծառայությունները մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում և միջնորդել ուր հարկն է, որպեսզի իրեն՝ Արաբաջյանին շնորհվեն այն իրավունքներն ու արտոնությունները, որոնցից օգտվում են գավառական դպրոցների ծառայողները[4]։

Մեզ հայտնի չէ, արդյոք, Արաբաջյանի այս խնդիրը հարգվե՞լ է, թե ոչ։

Երեք տարի անց, 1883 թվականին, նա նորից է դիմում, այս անգամ խնդրելով թույլ տալ, որպեսզի իր կողմից պահվող միգիայան տարրական ուսումնարանը վերածվի երկդասյան քաղաքային ուսումնարանի, նրան շնորհելով կառավարական ուսումնարանների իրավունքները։

Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուն Երևանի և Ելիզավետպոլի նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորին հայտնում է, որ Արաբաջյանի ներկայացրած ուսումնական պլանը ընդգրկում է միայն քաղաքային դպրոցների առաջին չորս տարիների դասընթացը և բոլորովին դուրս է թողել այդ դպրոցների 5-րդ և 6-րդ տարիների դասընթացը։ Բացի այդ, Արաբաջյանը թույլ է տվել կառավարական ծրագրերից որոշ շեղումներ, պակասեցնելով թվաբանության, բնագիտության, ռուսաց պատմության ժամերը և ուսումնական նյութը, դրա փոխարեն ավելացնելով հայոց լեզվի ժամերը (սահմանված 2 ժամի փոխարեն՝

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 401, թ. 15։
2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 401, թ. 19։
3 Նույն տեղը, թ. 18։
4 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 21։

6 ժամ), որի հետևանքով նրա դպրոցը չի կարող ճանաչվել կամ վերակազմվել որպես քաղաքային դպրոց։

Հոգաբարձուն պարզաբանել է նաև, որ մասնավոր դպրոցի ուսուցիչներին կարող են շնորհվել կառավարական քաղաքային դպրոցների ուսուցիչների իրավունքներ, եթե՝ 1. խնդրատուն իրոք կստեղծի 1872 թ. կանոններին համապատասխան քաղաքային դպրոց և կարճ ժամանակում կապացուցի, որ ընդունակ է այդպիսի դպրոցը կառավարելու. 2. այդ դպրոցի բոլոր ուսուցիչները կունենան քաղաքային դպրոցի ուսուցչի կոչում և 3. տնօրենը կհամաձայնվի, որպեսզի նրա դպրոցի ուսուցիչները նշանակվեն գավառական վարչության կողմից[1]։

Այսպիսով, Արաբաջյանը լրիվ մերժում է ստանում։

1884 թ. մայիսին Արաբաջյանը նոր դիմում է ներկայացնում։ Նա գրում է, որ իր մասնավոր տարրական ժողովրդական դպրոցը 18 տարի շարունակ տալիս է այնպիսի շրջանավարտներ, որոնք հաջողությամբ ընդունվում են քաղաքային դպրոցների երկրորդ դասարանի բարձր բաժանմունքը և երրորդ դասարանի կրտսեր բաժանմունքը, իսկ իր ընդհանուր մակարդակով բարձր է կանգնած ժողովրդական տարրական դպրոցներից։ Այդ հանգամանքը, գրում է նա, իմ ուսումնարանին իրավունք է տալիս լինելու 3-րդ կարգի մասնավոր ուսումնական հաստատություն։ Նա հայտնում է, որ ինքը չի պահանջել, որպեսզի իր դպրոցը հավասարեցնեն քաղաքային դպրոցներին, այլ միայն խնդրել է, պաշտոնական թույլտվություն՝ այն միգասյանից երկդասյան մասնավոր դպրոց կոչելու՝ ըստ ներկայացված ուսումնական պլանի։

Արաբաջյանը միաժամանակ ավելացնում է, որ իր դպրոցը 18 տարում ավել է 236 շրջանավարտ, որոնք բոլորն էլ ընդունվել են պետական համապատասխան ուսումնական հաստատությունները, իսկ նրանցից մի քանիսն արդեն ավարտել են համալսարանների զանազան ֆակուլտետները, մինչդեռ ինքը մինչև այժմ ուսումնական վարչության կողմից չի արժանացել այն իրավունքներին, որոնք ինքը վաստակել է սեփական աշխատանքով։ Նա խնդրում է նորից վերանայել իր դպրոցը երկդասյան վերակոչելու և իր ծառայությունները արժեքավորելու հարցը[2]։

Ըստ երևույթին, Արաբաջյանի ջանքերը դարձյալ ապարդյուն են անցել, իսկ նրա խնդրանքը անհետևանք է թողնվել։ Ուսումնական վարչությունը ոչ մի կերպ չէր կարող համաձայնվել առարկաների ժամերի այն բաշխմանը, որ առաջարկում էր Արաբաջյանը։ Չլսված ու չտեսնված

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 401, թ. 26—27։
2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 401, թ. 41—42։

բան էր, որ պետական վերահսկողության տակ գտնվող մասնավոր դպրոցներում հայոց լեզվին հատկացվեր շաբաթական 6 ժամ։ Ի պատիվ Արաբաջյանի պետք է ասել, որ նա իր երկրորդ խնդրանքում նույնպես ոչ մի քայլ չի նահանջել նախապես առաջարկված պլանից և պահանջել է իր դպրոցը վերակազմել միայն այդ պլանի համաձայն։ Բնական է, որ նա պետք է նորից մերժում ստանար։

Նա ձգտում էր բարձրացնել իր դպրոցի կարգը, իր համար արտոնություններ ու իրավունքներ էր հայցում, շիմանալով սակայն, որ հենց նույն ժամանակ նոր որոգայթ էր հյուսվում իր դպրոցի շուրջը...

Կովկասի ուսումնական օկրուգի նոր հոգաբարձու Յանովսկին քննում է արխիվային փաստաթղթերը և լույս աշխարհ հանում Արաբաջյանի դպրոցի գործը։ 1884-ի սեպտեմբերին, երբ նույն Յանովսկու ջանքերով, արդեն լուծված էր հայկական ծխական դպրոցների փակման հարցը, նա Երևանի նոր նահանգապետին հայտնում է, որ դեռևս 1875-ին՝ հայերի կողմից Ալեքսանդրապոլում հիմնված «քաղաքականապես հանցավոր գաղտնի միությանը» հաղորդակից լինելու պատճառով, կարգադրություն է արվել անհապաղ փակել Արաբաջյանի դպրոցը, մինչդեռ պարզվել է, որ այդ դպրոցը մինչև այժմ էլ շարունակում է իր գոյությունը։ Յանովսկին պահանջել է իրեն հայտնել, թե կատարվե՞լ է արդյոք Արաբաջյանի դպրոցի փակման մասին եղած կարգադրությունը և ինչի՞ հիման վրա է նա շարունակում պահել իր դպրոցը[1]։

Ամբողջ շաբաթ ամիս արխիվներում պրպտումներ կատարելուց հետո, նահանգապետի գրասենյակը պարզում է եղելությունը և հոգաբարձուին հայտնում Արաբաջյանի դպրոցի փակման ու վերաբացման ամբողջ պատմությունը։ Նահանգապետը հայտնում է միաժամանակ, որ Արաբաջյանը շարունակում է պահել իր դպրոցը, որ նա լավ վարքի տեր է և գոտի ու դատապարտության չի ենթարկվել[2]։ Դրանից հետո միայն հոգաբարձուն Արաբաջյանին և նրա դպրոցը հանգիստ է թողնում։

Շատ տարիներ հետո, իր մանկավարժական գործունեության 25—ամյակի կապակցությամբ, Արաբաջյանը արժանանում է շատ համեստ պարգևի, ստանում է արծաթյա մեդալ՝ «За усердие»։

1905 թվականին, հեղափոխական իրադարձությունների ներգործմամբ, դպրոցական իշխանությունները հարկադրված են լինում հիշել նաև Արաբաջյանին ու նրա դպրոցը։ Այդ տարին լրացած է լինում Արաբաջյանի մասնավոր դպրոցի 40-ամյակը, և ահա այդ կապակցությամբ առաջանում է նրա հիմնադրի ու տնօրենի բազմամյա աշխատանքը արժեքավորելու հարցը։

1 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1722, թ. 12։
2 Նույն տեղը, թ. 13—14։

Արաբաջյանից պահանջում են համառոտ տեղեկություններ իր և իր դպրոցի մասին, որոնք և նա ներկայացնում է։ Նա հայտնում է, որ 40 տարվա ընթացքում իր ուսումնարանում սովորել են արական սեռի 2040 երեխաներ[1], որոնցից 172 հոգի բոլորովին ձրի։ Ավելին, նրանցից ծայրահեղ չքավորները տնօրենից ձրի ստացել են դասագրքեր և այլ ուսումնական ձեռնարկներ։

Արաբաջյանի դպրոցը պահվել է բացառապես սովորողների կողմից մուծվող ուսման վարձով։ Ամբողջ 40 տարվա ընթացքում նա ոչ մի կոպեկի օգնություն չի ստացել ոչ պետական գանձարկղից, ոչ էլ որևէ այլ անձից։ Լատ որում, այլ մասնավոր դպրոցների համեմատությամբ, այստեղ ուսման վարձն էլ բավականին չափավոր է եղել՝ 20 ռ. տարեկան։ Գուցե դա է եղել հիմնական պատճառը, որ այդ դպրոցում համեմատաբար շատ աշակերտներ են ընդգրկվել, որոնց զգալի մասը արհեստավորների ու գյուղացիների երեխաներ։

Ըստ ազգությունների այդ 2040 աշակերտները բաշխվել են այսպես. հայեր՝ 1870, ռուսներ՝ 68, ազրբեջանցիներ՝ 72, վրացիներ՝ 8, հրեաներ՝ 12, մնացածները՝ քրդեր, հույներ, թուրքեր (Թուրքիայից) և այլն։

Շշմարիտն ասած, Արաբաջյանի դպրոցը իրենից իսկական ինտերնացիոնալ օջախ է ներկայացրել։ Նա իր աշակերտների մեջ ոչ մի խտրականություն չի դրել, ո՛չ ազգային, ո՛չ էլ կրոնական։ Հայ լուսավորչականների կողքին սովորել են նաև հայ կաթոլիկների երեխաներ (34 հոգի), մի բան, որ հայ եկեղեցական ծխական դպրոցներում բացառված էր։

Ըստ սոցիալական դրության աշակերտները ներկայացրել են հետևյալ պատկերը. ազնվականների երեխաներ՝ 128, հոգևոր կոչման՝ 205, պատվավոր քաղաքացիների և առաջին գիլդիայի առևտրականների՝ 62, քաղաքային դասի (մանր առևտրականների, արհեստավորների և այլն)՝ 1308, գյուղացիների՝ 337։

Բնորոշ է, սակայն, որ աշակերտների այդ պատկառելի թվից 40 տարվա ընթացքում գպրոցի լրիվ դասընթացն ավարտել են ընդամենը 412 հոգի կամ մոտ 20 տոկոսը։

Հետաքրքրական է նշել նաև, որ 40 տարվա ընթացքում Արաբաջյանի դպրոցում արձանագրվել է աշակերտների հիվանդության միայն 85 դեպք, իսկ մահացության՝ 7[1]։

Ինչպես երևում է, Արաբաջյանի մահից հետո նրա դպրոցը այլևս

[1] Մասնավոր դպրոցի համար դա շատ պատկառելի թիվ է, որն ինքնբերաբերության վկայում է այդ ուսումնական հաստատության բեղմնավոր գործունեությունը հայ և այլազգի երեխաների կրթության ու դաստիարակության առաջարկում։ Սաացվում է, որ յուրաքանչյուր տարի Արաբաջյանի դպրոցում սովորել են միջին հաշվով 51 երեխա։ Դա հազվագյուտ բան էր մասնավոր դպրոցներում։

չի գործել։ 1907 թվականից հետո եղած փաստաթղթերում այդ դպրոցը այլևս չի հիշատակվում։

Արաբաջյանի կողմից նշված և մեր կողմից այստեղ բերված տվյալների հիման վրա նրան 1907 թ. պարգևատրում են Ս. Սատանիսյանի երրորդ աստիճանի շքանշանով, որը, սակայն, տեղ է հասնում այն ժամանակ, երբ պարգևատրվածն արդեն մահացած էր։ Շքանշանը հետո են վերադարձնում, իսկ Արաբաջյանի կնոջից ու որդուց պահանջում են նրա արժեքը՝ 15 ռուբլի։

Շատ հետաքրքիր ու բնորոշ է, որ երբ մարդը կենդանի էր և երկար տարիներ շնորհակալ գործ էր կատարում մանուկներին կրթելու ու դաստիարակելու ուղղությամբ, ցարական չինովնիկները հոգ չէին տանում նրա աշխատանքը ըստ արժանվույն գնահատելու մասին, իսկ մեռած մարդու շքանշանի արժեքը գանձելու հարցով շտեսնված դրագրություն են ծավալում կառավարական տարբեր օրգանների միջև, սկսած Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուից, վերջացրած Երևանի նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորով և ծանդարմական վարչություններով։ Այս դրագրությունը տևում է մոտ 3 տարի և հայտնի չէ, թե ինչով է վերջանում։

Այսպիսին է Ալեքսանդրապոլի Ա. Արաբաջյանի մասնավոր դպրոցի համառոտ պատմությունը։ Ավարտելով այն, կցանկանայինք մեկ անգամ ևս նշել հարգանքի արժանի այդ ազնիվ մարդու, լուսավորության ու կրթության անխոնջ մշակի մեծ վաստակը իր ընտրած սուրբ գործում։

Պրուս-Ժուկովսկայայի մասնավոր դպրոցը Ալեքսանդրապոլում

Էմիլիա Կարլովնա Ժուկովսկայան (նույնը նաև Վիլյամս) կրթական լուսավորական բավականին ակտիվ գործունեություն է ծավալել Անդրկովկասում։ Թեռնս 1887-ից սկսած նա մասնավոր դպրոց է պահել Թիֆլիսում։ 1904-ին նա դիմել է Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուին, հայտնելով, որ ընտանեկան պատճառներով ինքը տեղափոխվելու է Ալեքսանդրապոլ, ուստի և խնդրում է թույլ տալ այնտեղ փոխադրել նաև իր դպրոցը։ Նրան թույլ են տալիս, և դպրոցը փոխադրվում է Ալեքսանդրապոլ։ Դա 3-րդ կարգի դպրոց էր։

Զբաղարարվելով դրանով, Ժուկովսկայան 1907-ին դիմում է և խնդրում իրեն թույլ տալ Ալեքսանդրապոլում բաց անելու երկրորդ կարգի արական դպրոց։ Հավանաբար այդ դպրոցը ևս նա բացել է։

Հանդիսանալով Կովկասի կանանց Թիֆլիսի ընկերության Ալեք-

[1] 2002 ՊԿՊԱ, ֆ. 19, գ. 401, թ. 54 և 77։

սանդրապոլի բաժանմունքի նախագահը, Ժուկովսկայան հոգ է տարել նաև կանանց կրթության մասին։

1910-ին նա իշխանության համապատասխան օրգաններից խնդրել է թույլ տալ վերոհիշյալ ընկերության գծով Ալեքսանդրապոլի կանանց համար բաց անելու կիրակնօրյա դպրոց։

Այդ կապակցությամբ Երևանի նահանգապետին ուղղված իր գրության մեջ նա նշել է, որ Ալեքսանդրապոլի կանանց ճնշող մեծամասնությունը գուրկ է տարրական գրագիտությունից։ Այդ թերությունն արդեն զգում են իրենք՝ կանայք, հատկապես նրանք, ովքեր ցանկանում են ընդունվել արհեստագիտական դպրոց՝ կար ու ձև սովորելու, բայց անգրագիտության պատճառով չեն ընդունվում։

«Ահա թե ինչու մենք դիմում ենք Ձերդ պայծառափայլությանը, խոնարհաբար խնդրելով Կովկասի կանանց Թիֆլիսի ընկերության Ալեքսանդրապոլի մասնաճյուղին՝ թույլ տալ Ալեքսանդրապոլ քաղաքում բաց անելու կիրակնօրյա դպրոց կանանց համար, նրանում նաև հայերեն դասավանդելու իրավունքով, նկատի ունենալով, որ հասարակ ժողովրդի կանանց մեծ մասը ուսերեն չգիտի» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 798, թ. 19)։

Նախագահությունը թույլ է տվել, սակայն դժվարություններ են առաջացել այդ դպրոցի ուսումնական պլանի ու ծրագրերի խնդրում։

Ալեքսանդրապոլի պետական ու հայկական դպրոցների մի քանի ուսուցչուհիներ իրենց պատրաստակամությունն են հայտնել այդ դպրոցում ավանդելու ծրիաբար։

Ձևնք կասկածում, որ այդ դպրոցը բացվել ու գործել է, բայց, դրժբախտաբար, նրա վերաբերյալ մեր ձեռքի տակ բավարար նյութեր չունենք։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 1419, թ. 2—3, գ. 953, թ. 1—2, գ. 798, թ. 2—21։

ԱՍՏԱՐԱԽԱՆԻ ԹԵՄ

Այս թեմի մեջ մտել են՝ Աստրախանի, Սեձոյան (Կուրանի) և Սաավրոպոլի նահանգները, Աստրխասպյան, Դաղստանյան, Թերեքյան և Թաուրեսանյան մարզերն ու Սոչիի օկրուգը

ԱՆԴՐԿԱՍՊՅԱՆ ՄԱՐԶ

Աշխաբադ (Ասխաբաթ) քաղաքի հայկական եկեղեցական ծխական դպրոց

Աշխաբադ (հայկական աղբյուրներում հաճախ գրվել է նաև Ասխաբաթ) քաղաքում ժամանակին ապրել են զգալի թվով հայեր։ Նրանք դեռևս 1886-ին իրենց երեխաների համար բաց են արել հայկական եկեղեցական ծխական դպրոց՝ նրա բոլոր ծախսերը վերցնելով իրենց վրա։ Մինչդեռ, հաշիվ իր տասնամյա գոյությունը բոլորած, այս դպրոցը ևս, հայկական մյուս բոլոր տարրական դպրոցների հետ միասին, 1896-ին փակվել է։

Այն վերաբացվել է 1905-ին։ 1908—09 ուս. տարում եղել է երկսեռ երկդասյան դպրոց՝ 215 սովորողներով (65 աղջիկ)։ Հետագայում դպրոցն ընկել է նյութական ծանր պայմանների մեջ և ստիպված է եղել բավարարվել 4-ամյա դասընթացով։ 1913—14 ուս. տարում այնտեղ սովորել են 124 հայ տղաներ ու աղջիկներ։ Ունեցել է 6 ուսուցիչ։ 1911-ին այդ դպրոցի ավագ ուսուցիչն է եղել Գ. Հայկունին։

«Մշակ», 1886, №106։
Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (հետագայում՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆոնդ 56, գործ 679, թերթ 74—75; գործ 182, թերթ 46; գործ 492, թերթ 262; «Նոր դպրոց», 1908, № 3, էջ 89; № 5, էջ 60; 1911, № 7—8, էջ 33։

Աշխաբադ (Ասխաբաթ) քաղաքի հայկական տարրական դպրոց

Բացվել է 1903 թ. նույն քաղաքի հայ կանանց բարեգործական ընկերության և նրա ղեկավար Շուշանիկ Մամիկոնյանի եռանդուն ջանքերով։ 1901 թ. հիմնված այդ ընկերությունը սկզբում բաց է անում մի մանկապարտեզ, որի բազայի վրա էլ ստեղծվում է տարրական դպրոց։ 1908 թ. մանկապարտեզն ու դպրոցն ունեցել են 170—180 սաներ, որոնցից 85 հոգի թոշակ են վճարել, իսկ մնացածները սովորել են ձրի։ Դպրոցը եղել է երկսեռ, ունեցել է 4 ուսուցիչ և 4 բաժանմունք։ Չորրորդ

բաժանմունքն ավարտողները ընդունվել են գիմնազիայի երկրորդ դասարանը։ Ուսուցումը տարվել է ռուսաց լեզվով, բացի հայերենից և կրոնից։

1909—10 ուս. տարուց այն վեր է ածվել պրոգիմնազիայի։ Այս դպրոցում աշխատել է հայտնի գրականագետ և հրապարակախոս, սովետական առաջին դասագրքերի հեղինակ Հ. Սուրխաթյանը։

«Նոր դպրոց», 1908 թ., № 3, էջ 89, 1909 թ., № 6—7, էջ 141, «ՀՍՍՀ ԳԿԳԱ ուղեցույց», էջ 154։

Կրասնովոդսկ քաղաքի հայկական դպրոց

Անդրկասպյան Կրասնովոդսկ քաղաքում հայկական ծխական դպրոց է բացվել 1906-ի հունվարին։ 1908—09 ուս. տարում եղել է երկսեռ երկդասյան դպրոց՝ 87 աշակերտով (40 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում դարձել է միդասյան դպրոց՝ եռամյա դասընթացով։ Սովորել են 48 տղա, 26 աղջիկ։ Դասատուներ՝ 3 հոգի։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 492, թ. 202; գ. 182, թ. 46; գ. 679, թ. 70—71; «Նոր դպրոց», 1908; №5, էջ 59։

Ղըզըլ—Արվադ քաղաքի հայկական դպրոց

Աստրախանի թեմի Ղըզըլ-Արվադ քաղաքի (այժմ Թուրքմենական ՍՍՀ) հայկական դպրոցը բացվել է 1906-ին, ունենալով 2 ուսուցիչ և 34 աշակերտ։

1908-ին և 1911-ին գործել է։ 1913—14 ուս. տարում այն եղել է երկսեռ միդասյան դպրոց՝ երկու բաժանմունքով։ Սովորել են 17 տղա, 12 աղջիկ։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 679, թ. 72—73; գ. 182, թ. 46;
«Նոր դպրոց», 1908, № 5, էջ 56, № 6, էջ 76; 1911 թ., № 11—12, էջ 35։

Մերվ քաղաքի հայկական տարրական դպրոց

Անդրկասպյան Մերվ քաղաքում 1905-ին հիմնվել է հայկական միդասյան երկսեռ դպրոց, որը 1906—07 ուս. տարում ունեցել է 3 ուսուցիչ, 83 աշակերտ։ 1913—14 ուս. տարում ունեցել է 4-ամյա դասընթաց և 125 սովորող (60 աղջիկ)։

1915-ին ցույց է տրված որպես առանձին արական դպրոց, ուր սովորել են 86 տղաներ։ 1916-ին դարձյալ երկսեռ դպրոց՝ 137 աշակերտով (5—6 աղջիկ)։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 679, թ. 76—77, գ. 795, թ. 196, ֆ. 52, ց. 3, գ. 492, թ. 5; «Նոր դպրոց», 1908, №5, էջ 60, №6, էջ 76։

Մերվ քաղաքի հայկական իգական դպրոց

Այս դպրոցը սկզբում եղել է տեղի հայկական արական դպրոցի հետ միասին (բացվել է 1905-ին)։ 1915 թվականին ցույց է տրված որպես հայ աղջիկների առանձին դպրոց, ուր սովորել են 50 հոգի։

1916-ին նորից միացել է արական դպրոցին։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 679, թ. 76—77, գ. 975, թ. 196։

Զարջոուի հայկական դպրոց

Զարջոու գյուղում (այժմ Թուրքմենական ՍՍՀ քաղաքներից) նախկինում ապրել են մեծ թվով հայեր, որոնց սպասարկել է Աստրախանի հայկական թեմի հոգևոր վարչությունը։

Զարջոու գյուղի հայկական դպրոցը բացվել է 1906-ին՝ լինելով երկսեռ ծխական դպրոց։ 1908—09 ուս. տարում այնտեղ սովորել են 24 տղա և 21 աղջիկ։ 1913—14 ուս. տարում ունեցել է երկու բաժանմունք, մի ուսուցիչ և 31 աշակերտ (19 աղջիկ)։

«Նոր դպրոց», 1908, № 5, էջ 61, № 6, էջ 76, ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 679, թ. 1—2; գ. 182, թ. 46։

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՆԱՀԱՆԳ

Աստրախանի Աղաբաբյան դպրոց

Հայ նշանավոր դպրոցներից մեկն է, որը հիմնվել է 1806-ին (այլ աղբյուրներում հիշատակվում են նաև 1804-ը և 1810-ը)։ Հիմնադիրն է եղել Աստրախանի հայ վաճառական Նիկողայոս Աղաբաբյանը։

Սկզբում եղել է գերազանցապես ազգային դպրոց, ուր առարկաների զգալի մասն ավանդվել է սովորողների մայրենի լեզվով՝ հայերենով, իսկ հետագայում, Աղաբաբյանի ու նրա որդու մահից հետո, աստիճանաբար կորցրել է իր ազգային կերպարանքը, ի վերջո դառնալով սովորական գավառական ուսումնարան։

1860-ական թվականների սկզբներին Աստրախանի հայերը մեծ ջանքեր են գործադրել Աղաբաբյան դպրոցն իր նախկին վիճակին վերադարձնելու, այսինքն ավանդման լեզվով և աշակերտների համակազմով

ազգային դպրոց դարձնելու համար։ Նրանց դիմում-խնդրանքները բազմիցս քննարկվել են կառավարական բարձր շրջաններում, սակայն բացասական նկատառումներով դրական լուծում չեն ստացել։

Զեկանորեն համաբվելով հայկական, Ադաբաբյան դպրոցն արդեն գիմնազիական դասընթացով շարունակել է գործել նաև 20-րդ դարի առաջին տասնամյակներին։

Ադաբաբյան դպրոցի մասին հանգամանորեն գրված է պրոֆ. Մ. Սանթրոսյանի «Արևելահայ դպրոցը 19-րդ դ. առաջին կեսին» աշխատության մեջ։

Մ. Հ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19-րդ դ. առաջին կեսին», էջեր՝ 327—337։ ՍՍՀՄ ԳԱԳԱ (Լենինգրաց), ֆ. 821, ց. 140, գ. 54, թթ. 1—78; գ. 53; VI, թ. 5։ «Դպրոց», 1875—1876, № 3։

Աստրախանի հոգևոր թեմական դպրոց

Աստրախանը Ռուսաստանի հայաշատ քաղաքներից մեկն է։ Այնտեղ հայերը վերաբնակվել են շատ վաղուց, ինչպես նաև Պետրոս Առաջինի ժամանակ և հենց նրա անմիջական հորդորանքով ու հովանավորությամբ։ Նրանցից շատերը զբաղվել են առևտրով՝ տնտեսական կապեր հաստատելով Ռուսաստանի և Արևելքի մի շարք երկրների հետ։

Աստրախանը եղել է նաև հայկական վեց թեմերից մեկի կենտրոնը, որտեղ 1838-ին կազմակերպվել է թեմական հոգևոր դպրոց կամ սեմինարիա։ Դրանից առաջ նրան նախորդել է դեռևս 20-ական թվականներից (ըստ պրոֆ. Մ. Սանթրոսյանի՝ 1817-ից) այնտեղ գործած հոգևոր ուսումնարանը։

Թեմական դպրոցը գտնվել է բավականաչափ խղճուկ վիճակում։ Բավական է նշել, որ 1842-ին այն ունեցել է 2 ուսուցիչ և միայն 9 աշակերտ (չպետք է մոռանալ, որ այն ժամանակ թեմական դպրոցներում կարող էին սովորել միայն հոգևորականների զավակները)։

1848-ին փակվել է էջմիածնի սինոդի (փաստորեն՝ Ներսես Աշտարակեցու) կարգադրությամբ, թեև մեր ձեռքի տակ եղած պաշտոնական մի տեղեկագրից երևում է, որ 1842-ից հետո այնտեղ այլևս ոչ մի ուսուցիչ և աշակերտ չի եղել, հետևաբար այն արդեն ինքնաբերաբար փակվել է։

Պետք է նշել, որ թեմական դպրոցները, ինչպես նաև հայկական եկեղեցական ծխական դպրոցները, ստեղծվում էին ցարական կառավարության կողմից 1836-ին հաստատված կանոնադրության համաձայն։

Աստրախանի թեմական դպրոցը վերաբացվել է Աշտարակեցու մահից երկու տարի հետո՝ 1859-ին, սակայն երկար կյանք չի ունեցել։ Ճիշտ է, 1873-ի մի տեղեկագրում հիշատակվում է այդ դպրոցը, բայց

փաստորեն այն եղել է ոչ թե թեմական, այլ հոգևոր ծխական ուսումնարան։ Արխիվային մի շարք փաստաթղթերից կարելի է եզրակացնել, որ Աստրախանի թեմական դպրոցը դեռևս 1860-ական թվականներից դադարել է այդպիսին համարվել, քանի որ չի ունեցել ցարական իշխանությունների կողմից հաստատված կանոնադրություն։

«Արարատ» ամսագիրը 1873 թ. իր համարներից մեկում գրել է, որ «Աստրախանայ վիճակն մինչև ցայդ չուներ հատուկ թեմական դպրանոց», իսկ հիմա տեղի հոգևոր առաջնորդը և ծխական դպրոցների հոգաբարձությունը մտադրվել են բաց անել այդպիսի դպրոց. ստացվել է կաթողիկոսի հատուկ կոնդակ-թույլտվություն։

«Արարատի» այդ տարվա մի այլ հաղորդումից երևում է, որ նույն թվականին Աստրախանի թեմական դպրոցը վերաբացվել է։ Իհարկե, գործել երկար կյանք չի ունեցել, քանի որ կառավարությունը այն չի ճանաչել որպես թեմական դպրոց։

1890-ական թվականների կեսերից սկսած բազմիցս փորձեր են արվել վերաբացել Աստրախանի թեմական դպրոցը, նույնիսկ նրա համար Աստրախանում կառուցվել է հոյակապ մի շենք։ 1906-ին բացվում են թեմական դպրոցի երկու նախապատրաստական դասարաններ, իսկ հիմնական դասարանների բացումը տեղի է ունենում ավելի ուշ։ Այնուամենայնիվ, մինչև 1917-ը դպրոցը չի ունեցել լրիվ միջնակարգի դասընթաց։

ՍՍՀՄ ԳԱԳԱ, ֆ. 821, ց. 140, գ. 54, թ. 3—78; գ. 49 I, թ. թ. 1—2, 15, 19, ց. 139, գ. 238, թ. 1—134; ՀՍՍՀ ԳԱԳԱ, ֆ. 56, գ. 43, թ. 10։

Մ. Հ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19-րդ դ. առաջին կեսին», էջ 287—289։ «Արարատ», 1873, էջ 109—110, էջ 305, 1917, էջ 620։

Աստրախանի Ս. Առաքելոց Պողոս-Պետրոս եկեղեցու արական ծխական դպրոց

Հիմնվել է, հավանաբար, 1867-ին, կամ էլ 1868-ին։ 1869-ին ունեցել է 2 ուսուցիչ և 37 աշակերտ։ Նույն թվականին էլ միացվել է Աստրախանի մյուս երկու ծխական դպրոցներին, իսկ նրա փոխարեն բացվել է աղջիկների ծխական դպրոց։

«Արարատ», 1869—1870, ԺԱ. էջ 282; 1870—1871, էջ 105։

Աստրախանի Ս. Աստվածածնոր ավագ եկեղեցու արական ծխական դպրոց

Այս դպրոցը հիմնվել է 1868 թ. փետրվարի 11-ին՝ կաթողիկոս Գեորգ Դ-ի կարգադրությամբ (այդ թվականին կաթողիկոսը եղել է

Աստրախանում և կարգադրել է ծխական դպրոցներ բացել տեղի հայկական երկու եկեղեցիներին կից)։

Հաստատապես հայտնի է, որ հիշյալ դպրոցը 1869-ին գործել է։ 1870-ին աշակերտների թիվը եղել է 40 (որոնցից 36-ը ձրիավարժ), 1872-ին՝ 31։

1885-ին մի հրաշքով փրկվել է հայ դպրոցների ընդհանուր փակումից (ինչպես և Աստրախանի մյուս հայկական դպրոցները)։ 1888-ին եղել է միդասյան դպրոց՝ 33 աշակերտով։

1906—07 ուս. տարում Աստրախանում եղել է ընդամենը մի հայկական դպրոց՝ երկսեռ, 5 դասարանով, 124 աշակերտ-աշակերտուհիներով և 11 ուսուցչով։

«Արարատ», 1870, ԺԱ, էջ 282; Ժ. էջ 338, Դ. էջ 247; 1873, էջ 38; «Մեղու Հայաստանի», 1869, № 17; «Դպրոց», 1875—1876, № 3, էջ 95—99; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ.56, գ. 23, թ. 40; գ. 30, թ. 15; ֆ. 52, գ. 3, գ. 214, թ. 4; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 33; «Նոր դպրոց», 1908, № 6, էջ 76։

Աստրախանի Ս. Կատարինե կույսի եկեղեցու Ս. Գեորգյան արական ծխական դպրոց

Հիմնվել է 1867-ին։ Կոչվել է «ս. Գեորգայ բաշամարտիկ զորավարի» (Մարզպետունու) անունով։

Այս դպրոցը 1869-ին ունեցել է 2 ուսուցիչ, 35 աշակերտ, 1871-ին՝ 41 աշակերտ։ Այդ թվից թոշակ է վճարել միայն մի հոգի, մնացածները սովորել են ձրի։ Դրանցից 29 հոգի (առավել աղքատները) ստացել են նաև ձրի ուսումնական պիտույքներ։ 1872-ին աշակերտների թիվը իջել է 20-ի։

Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։

«Արարատ», 1870, ԺԱ, էջ 282; 1871, Ժ. էջ 338; Դ. էջ 247; 1873, Ա. էջ 38։

Աստրախանի հայկական կիրակնօրյա դպրոց

Ռուսաստանում եղած կիրակնօրյա դպրոցների օրինակով 1883-ին նման դպրոց է բացվել նաև Աստրախանի հայ պատանիների համար։ Այնտեղ ձրիաբար պտրպտել են տեղի հայկական դպրոցների ուսուցիչները։ Այդ թվականին աշակերտների թիվը մեծ չի եղել՝ ընդամենը 7—10 հոգի։

«Մեղու Հայաստանի», 1884, № 17։

Աստրախանի օրիորդաց ծխական դպրոց

Աստրախանի հայ օրիորդաց դպրոցը բացվել է 1870-ի ապրիլի 1-ին՝ Պողոս-Պետրոս եկեղեցուն կից։ Այն պահելու համար տեղի կանանցից կազմվել է բարերարուհիների ընկերություն՝ 22 հոգուց բաղկացած։ Նրանցից յուրաքանչյուրը հօգուտ դպրոցի տարեկան մուծել է 10 ռուբլի։

Սկզբնական 5 տարիներին դպրոցը տեղավորված է եղել Գ. Պապովյանի նվիրած տան մեջ, իսկ հետո, հավանաբար, նրա համար կառուցվել է հատուկ շենք։ Առաջին տարում ունեցել է 4 դասատու և 42 աշակերտուհի, որոնցից 36-ը՝ ձրիավարժ։ 1874-ին ունեցել է 3 դասարան (նախապատրաստական, առաջին և երկրորդ), 88 աշակերտուհի։ Ուսանվել են՝ կրոնագիտություն, հայերեն, ռուսերեն, թվաբանություն, աշխարհագրություն, ազգային պատմություն և ձեռագործ։ Դպրոցը պահվել է ժողովրդի նվիրատվություններով։ Ուսումնական գործը ավելի լավ վիճակում է գտնվել, քան արական դպրոցներում։ Աշակերտուհիները ցույց են տվել բավականաչափ բարձր առաջադիմություն, հատկապես հայոց լեզվից։

1884-ին եղել է միջնակարգ դպրոց, այն ժամանակվա համար հազվագյուտ մի երևույթ։

Այս դպրոցը ևս (ինչպես նաև Աստրախան քաղաքի մյուս հայկական դպրոցները) զարմանալի կերպով դուրս է մնացել հայ դպրոցների առաջին (1885-ի) ընդհանուր փակումից, սակայն հետագայում վեր է ածվել երկդասյան դպրոցի, քանի որ ցարական իշխանությունները հայերին թույլ չէին տալիս երկդասյանից բարձր դպրոցներ ունենալ (չհաշված մի քանի թեմականները)։

1888-ին այնտեղ սովորել են 91 հայ աղջիկներ, որոնցից 74-ը ձրիավարժ։ 1895-ին փակվել է։

Աստրախանի հայերը ստիպված են լինում բավարարվել տարրական երկսեռ դպրոցով։

«Արարատ», 1870—1871, Դ. էջ 104—106; Ժ. էջ 338, 1873, էջ 290—91; «Դպրոց», 1873—76, № 3, էջ 100—102, «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 83, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 40, թ. 28; գ. 43, թ. 9; գ. 50, թ. 15, ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 129, գ. 228, թ. 68 և 88; գ. 140, գ. 534, թ. 1—81։

Աստրախանի հայ չքավորների արհեստագործական դպրոց

1875-ին Աստրախանում կազմակերպվել է հայ չքավորների արհեստագործական դպրոց և հայ տնանկների աղքատանոց։ Արհեստագոր-

ծական դպրոցը գործել է մի քանի տասնամյակ, տարեկան ունենալով մինչև 20 սովորող։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 52, ց. 3, գ. 214։

ԴԱՂՍՏԱՆԻ ՄԱՐԶ

Թեմիր Խան Շուրա քաղաքի հայկական ծխական դպրոց

1870-ական թվականներին Դաղստանի մարզային կենտրոն Թեմիր-Խան Շուրա քաղաքում ապրել են մոտ հազար հայեր։ Նրանք ունեցել են իրենց ծխական արական դպրոցը, որի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1885-ին փակվել է, իսկ 1888-ին եղել է միդասյան՝ ընդամենը 14 աշակերտով։ Գործել է նաև 1891-ին։ Վերաբացվել է 1906-ին, ունենալով 2 դասարան և 20 աշակերտ։ 1913—14 ուս. տարում եղել է միդասյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 13 տղա և 13 աղջիկ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 16; գ. 795, թ. 196; գ. 492, թ. 202; «Վիճ. տեղ.» 1888—89 ուս. տ., էջ 90; «Նոր դպրոց», 1908, № 6, էջ 76;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 9; գ. 3997, թ. 17։

Պետրովսկ քաղաքի հայկական դպրոց

Դաղստանի մարզի Պետրովսկ քաղաքում հայկական արական ծխական դպրոց է գոյություն ունեցել գեռևս 1888 թվականին։ Այդ ժամանակ այնտեղ սովորել են 12 հայ տղաներ, մեծ մասամբ վաճառականների որդիներ։ Դպրոցն ունեցել է Ա և Բ բաժանմունքներ, որոնցում ուսուցանվել են հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, վայելչագրություն, երգեցողություն և կրոն։ Դպրոցում աշխատել են 3 ուսուցիչ։

1891-ին եղել է միդասյան դպրոց։ Այս դպրոցը ևս 1896-ին կամ դրանից առաջ փակվել է և վերաբացվել 1905-ին։ 1907-ին եղել է միդասյան երկսեռ դպրոց՝ 3 բաժանմունքով։ Ունեցել է 3 ուսուցիչ, 35 աշակերտ (16 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում այնտեղ սովորել են 36 հայ տղաներ ու աղջիկներ։

«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 90; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 42; գ. 679, թ. 5—6; գ. 182, թ. 11; գ. 590, թ. 2; գ. 492, թ. 202;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 3, գ. 3997, թ. 17։

ԹԵՐԵՔՅԱՆ (ՏԵՐՍԿԻ) ՄԱՐԶ

Գեորգիևսկ քաղաքի հայ աղջիկների դպրոց

Մակար կաթողիկոսը 1889 թ. հոկտեմբերի 25-ի № 533 կոնդակով հաստատել է Թերեքի մարզի Գեորգիևսկ քաղաքի հայ աղջիկների եկեղեցական ծխական միդասյան դպրոցի հոգաբարձության կազմը։ Անկասկած, այդ թվականին էլ այն բացվել է, իսկ 1896-ին՝ մյուս հայ դպրոցների հետ միասին փակվել։

Հետագա շատ տարիների փաստաթղթերում այս դպրոցը այլևս չի հիշատակվում։ Գիտենք, որ 1910-ին Գեորգիևսկ քաղաքում նորից հայկական դպրոց է բացվել, այս անգամ, հավանաբար, երկսեռ։

«Արարատ», 1889, ԺԲ. էջ 685։

Գրոզնի քաղաքի հայկական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է, գիտենք միայն, որ 1905-ին այն վերաբացվել է։ Կարծում ենք, որ մինչև 1896-ի հայ դպրոցների բնդհանուր փակումը այս դպրոցը եղել և գործել է, թեև չի նշված 1895-ի սկզբին կազմված տեղեկագրում։ 1906—07 ուս. տարում ունեցել է 2 դասարան, 2 ուսուցիչ և 42 աշակերտ։

1913—14 ուս. տարում եղել է միդասյան խառը դպրոց, ուր սովորել են 25 տղա և 22 աղջիկ։ 1915-ին ցույց է տրված որպես առանձին արական դպրոց, ուր սովորող տղաների թիվը հասել է 43-ի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 44—45; գ. 492, թ. 202; գ. 795, թ. 195,
«Նոր դպրոց», 1908, № 6, էջ 76; 1911, № 9—10, էջ 32;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 6; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 39։

Գրոզնի քաղաքի հայ աղջիկների դպրոց

Գոյություն է ունեցել տեղի տղաների դպրոցի հետ միացած, սակայն 1915-ին ցույց է տրված որպես առանձին իգական դպրոց, ուր սովորել են 51 հայ աղջիկներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 44—45, գ. 795, թ. 195։

Էդեսիա գյուղաքաղաքի հայկական արական դպրոց

Էդեսիայից ուղարկված և «Արարատ» ամսագրի 1884 թ. № 12-ում տպագրված մի նամակում կարդում ենք.

«Էդեսիան գտնվում է Մոզդոկ քաղաքից 35 վերստ հեռավորությամբ մի գտափվայր տեղում։ Գյուղը բաղկացած է 500 տնից, բոլորը հայեր են և գաղթել են Ղուբայի և Գարբրանդի նահանգներից խաների ժամանակներում՝ 1797 թվականին»։ 1915-ին այնտեղ ապրել են 4340 հայեր։

Արխիվային փաստաթղթերում էդեսիան մեկ ցույց է տրված Թերեքի մարզում, մեկ էլ՝ Ստավրոպոլի նահանգում։ Մենք այն թողնում ենք առաջինում։ Էդեսիայի արական դպրոցը հիմնվել է 1865 թվականին, սակայն շենքի փոքրության պատճառով չի կարողացել բոլոր ցանկացողներին ընդունել։ 1885-ին տեղի բնակիչների ջանքերով նրա համար կառուցվել է նոր շենք։

Դպրոցը 1881-ին ունեցել է 1 ուսուցիչ, 46 աշակերտ։ 1888—89 ուս. տարում եղել է միդասյան՝ 2 ուսուցչով և 60 աշակերտով։ Երեք բաժանմունքներում անցել են հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, գծագրություն (նկարչություն), վայելչագրություն, երգեցողություն և կրոն։

1895-ին գործել է, իսկ 1896-ին՝ փակվել՝ հայկական բոլոր դպրոցների հետ միասին։ Վերաբացվել է 1905-ին։ 1908—09 ուս. տարում եղել է արական երկդասյան դպրոց՝ 140 աշակերտով։ 1913—14 ուս. տարում՝ քառամյա դպրոց՝ 163 աշակերտով։ 1915-ին ունեցել է 3 ուսուցիչ և 166 աշակերտ։

«Արարատ», 1884, № 12, էջ 563, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 5452, թ. 179; գ. 1555, թ. 49; գ. 6717, թ. 3; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 39; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50 թ. 16; գ. 199, թ. 17—23; գ. 492; թ. 42; գ. 579, թ. 19—20; գ. 795, թ. 195; գ. 182, թ. 44, «Кавказский календарь», 1915, стр. 212.

Էդեսիայի հայ աղջիկների դպրոց

Բացվել է 1908-ին, ունենալով մեկ բաժանմունք և 36 աշակերտուհի։ 1911—12 ուս. տարում կազմված է եղել 3 բաժանմունքից, ունենալով 5 ուսուցիչ և 57 աշակերտուհի։ 1915-ին աշակերտուհիների թիվը բարձրացել է 88-ի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 44; գ. 679, թ. 19—29; գ. 795, թ. 195; «Նոր դպրոց» 1909, №10, էջ 81; 1911, № 21—22, էջ 23;

Խնուշ քաղաքի հայկական դպրոց

Աստրախանի թեմի Խնուշ քաղաքում 1908—09 ուս. տարում գործել է հայկական միդասյան երկսեռ դպրոց, որի 3 բաժանմունքներում սովորել են 62 տղա և 7 աղջիկ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 45։

Կիսլովոդսկ քաղաքի հայկական դպրոց

Հիմնվել է 1912-ին, լինելով միդասյան երկսեռ դպրոց, ուր 1913—14 ուս. տարում սովորել են 8 տղա և 15 աղջիկ։ Մի այլ փաստաթղթում նշված է 38 աշակերտ (23 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 22—24; ֆ. 52, ց. 3, գ. 485։

Ղարաջալիլ գյուղի ծխական դպրոց

Ղարաջալիլը Թերեքյան մարզի հայաբնակ գյուղերից է, ուր 1906—07 ուս. տարում գործել է հայկական երկսեռ դպրոց։ Այն պահվել է ծխական տուրքերի և անհատների նվիրած գումարների հաշվին։ 1911-ին գործել է։ 1913—14 ուս. տարում ունեցել է եռամյա դասընթաց և 26 սովորող (բոլորը ձրիաբարձ)։

«Նոր դպրոց», 1903, № 6, էջ 76; 1911, № 9—10, էջ 33; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 48—49; գ. 590, թ. 19; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17։

Ղզլար քաղաքի հայկական արական միջնակարգ դպրոց

Ղզլարը եղել է Ռուսաստանի հայաբնակ մի քաղաք, որի բնակչությունը 1873-ին կազմել է 9176 շունչ, բոլորն էլ հայեր։ Այնտեղ հայկական դպրոց գոյություն է ունեցել շատ վաղուց՝ դեռևս 18-րդ դ. վերջերին։ (Տե՛ս Ա. Գ. Աբրահամյանի «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» Ա գիրք, էջ 402)։ Ինչպես երևում է, հետագայում այդ դպրոցը փակվել է։

Ըստ պրոֆ. Սանթրոսյանի՝ Ղզլարի դպրոցը հիմնվել է անցած դարի 30-ական թվականների վերջերին, սակայն իր գոյությունը շարունակել է ընդհատումներով (նյութական սղության պատճառով)։

Տեղացի Հովհաննես Քանանյանի ծախսով 1856 թ. նոյեմբերի 1-ին Ղզլարում բացվում է նոր դպրոց, որը, հավանաբար, նույնպես երկար կյանք չի ունենում։ Ղզլարեցի հայերը 1867—1870 թթ. հավաքում են այն ժամանակվա համար բավականաչափ խոշոր գումար (9 հազար սուրլի) և հատկացնում նոր դպրոցի կառուցմանը։

1871-ին ավարտվում է հոյակապ շենքի կառուցումը, ուր և տեղափոխվում է 1867-ից գործող արական ծխական դպրոցը։ Այնտեղ ընդդրկվում է 160 երեխա՝ «մեծ մասը չքավոր ծնողների զավակներ»։

(«Արարատ» 1871, գ. էջ 183)։

1874-ին Ղզլարում եղել են 2 այլ հայկական դպրոցներ ևս (մասնավոր)։

Ծխական դպրոցը 1873-ին արդեն ունեցել է 9 ուսուցիչ և 140 աշակերտ, իսկ 1875-ին՝ 4 դասարանյան կազմ (մեկը նախապատրաստական), 150 աշակերտ և համարվել է հոգևոր միջնակարգ դպրոց (տե՛ս «Դպրոց» ամսագիր, 1875 թ., № 8)։ Այնտեղ ավանդվել են պատրաստական դասարանում՝ հայոց լեզու և գրավարժություն՝ Ն. Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու» և Ավետիքյանի «Նկատողական ուսումն» դասագրքերով, ռուսաց լեզու և գրավարժություն՝ Ուշինսկու «Родное слово» դասագրքով (ա. մաս), առաջին դասարանում՝ հայոց լեզու, քերականության ա. մաս՝ Տեր-Հակոբյանի «Ընթերցարան» և Պալասանյանի «Քերականություն» դասագրքերով, ռուսաց լեզու, թարգմանություն, Տեր-Ակոպովի ձեռնարկով, թվաբանություն (ա. մաս) առանց դասագրքի, կրոն, սրբազան պատմություն և նոր կտակարան, վայելչագրություն։ Երկրորդ դասարանում՝ հայոց լեզու, քերականության մնացած մասը՝ ըստ Պալասանյանի, ռուսաց լեզու, քերականություն՝ ըստ Իվանովի քերականության դասագրքի, ընդհանուր պատմություն՝ Իլովայսկու համապատասխան դասագրքով, աղգային պատմություն՝ Չերքեզյանի և Գևորգ Արծրունու «Պատմություն հայոց» դասագրքով, աշխարհագրություն՝ ընդհանուր գիտելիք ֆիզիկական, մաթեմատիկական և քաղաքական աշխարհագրության, կրոն, թվաբանություն (բ. մաս)։ Երրորդ դասարանում՝ հայոց լեզու՝ կրավոր շարադրություն և գրականության համառոտ պատմություն՝ Պալասանյանի «Պատմություն գրականության» դասագրքով, ռուսաց լեզու՝ բ. մասը քերականության և թարգմանություն՝ Իվանովի քերականության դասագրքով և Ուշինսկու «Детский мир» դասագրքով (2-րդ գիրք), կրոն, թվաբանություն (լրիվ) և սկզբնական գիտելիք երկրաչափության, նաև մասնավոր առմարապահություն, ընդհանուր պատմություն՝ միջին և նոր դար, աշխարհագրություն՝ (ընդարձակ) քաղաքական և բնական։

Ինչպես տեսնում ենք, Ղզլարի դպրոցը բավական ընդարձակ ծրագիր է ունեցել։ Իհարկե, դրանով նա դեռ չէր կարող լիարժեք միջնակարգ դպրոց համարվել, բայց երկդասյան ծխական դպրոցներից էլ շատ բարձր էր։

Կարևորն այն է, որ այս դպրոցում ուսումնական գործը լավ հիմքերի վրա է դրված եղել։ «Դպրոց» ամսագրի խմբագիրը, որ գնացել էր Ռուսաստանի հայաշատ քաղաքները՝ Գևորգյան հեմարանի համար տվիրատուներ ընտրելու, գրում է. «Ես այնու առավել մեծ վստահությամբ կարող եմ գովել Ղզլարու հոգևոր միջնակարգ ուսումնարանը որ՝ տեսել էի շատ ազգային-եկեղեցական ուսումնարաններ, տեսա նաև Վլադիկավկազի, Մոզդոկի, Ստավրոպոլու, Արմավիրի, Նոր Նախիջևանի և Աստրախանի ուսումնարանները, բայց ոչ մի տեղ չտամ Ղզլարի ուսումնարանի նմանը մանկավարժական ուղղությամբ, արտաքին բարեվայելչությամբ, ներքին բարեկարգությամբ, ուսման առաջադիմությամբ, աշխատասերներ և բարեմիտ հոգաբարձությամբ, ուսուցիչների ընտիր խմբով, դասագրքերի հաջողակ ընտրությամբ և, վերջապես, ուսումնական պարագաների հարստությամբ» («Դպրոց», 1875, № 8, էջ 264)։

1885-ի փակումից առաջ ևս եղել է արական միջնակարգ դպրոց՝ երեք դասարանյան կազմով և 128 աշակերտով, իսկ վերաբացումից հետո դարձել է երկդասյան։ 1888-ին ունեցել է 115 աշակերտ։ 1895-ին գործել է։ Երկրորդ փակումը տեղի է ունեցել 1896-ի սկզբներին։ Վերաբացվել է 1905-ին։ 1906—07 ուս. տարիներին ունեցել է 5 դասարան, 169 աշակերտ։ 1913—14 ուս. տարում եղել է երկդասյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 71 տղա, 126 աղջիկ։ Ունեցել է 10 ուսուցիչ։ 1916-ին՝ 120 տղա, 79 աղջիկ։

«Փորձ», 1881, № 2, էջ 93; «Մեղու Հայաստանի», 1858, № 149, էջ 588, 1884, № 28; Ս. Հ. Ռանիրոսյան, «Արևելահայ դպրոցը 19-րդ դ. առաջին կեսին», էջ 109 և 290—292, «Արարատ», 1871, գ. էջ 185; գ. էջ 117—118; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 136; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 81; ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, 50, թ. 16; գ. 40, թ. 31; գ. 23, գ. 679, թ. 46—47; գ. 199, թ. 11—23; «Նոր դպրոց», 1908, № 6, էջ 76; ՎՍՍՀ ՊԿՀ, ֆ. 422, գ. 5717, թ. 5։

Ղզլարի հայկական Մարիամյան օրիորդաց միջնակարգ դպրոց

Հիմնվել է 1871-ին՝ տեղի հայ հասարակության ակտիվ մասնակցությամբ ու միջոցներով, այդ նպատակի համար վարձված հատուկ շենքում։ 1874-ին դպրոցն ունեցել է 91 աշակերտուհի, 10 ուսուցիչ, իսկ 1884-ին՝ 700 աշակերտուհի (այսպես է հաղորդել «Մեղու Հայաստանի» լրագիրը 1884-ի իր համարներից մեկում, թեև այդ թիվը մենք անհավանական ենք համարում, քանի որ պաշտոնական մի տեղեկագրի համաձայն այս դպրոցը 1881-ին ունեցել է միայն 65 աշակերտուհի)։

1885-ին այս դպրոցը ևս փակվել է։ 1888-ին եղել է երկդասյան՝ 58 աշակերտուհիներով, 1891-ին՝ միդասյան, 1895-ին՝ երկդասյան։ 1896-ին փակվել է երկրորդ անգամ։ Վերաբացվել է 1905-ին։

1906—07 ուս. տարում ունեցել է 4 դասարան, 165 աշակերտուհի։ Տղաների և աղջիկների դպրոցներում աշխատել են 15 ուսուցիչ-ուսուցչուհիներ։ Հետագայում միացել է տղաների դպրոցին, ուր 1912—13 ուս. տարում սովորել են 90 տղա և 160 աղջիկ։

«Արարատ», 1871, գ. էջ 188, 1875, գ. էջ 117—18; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 136; ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 40, թ. 31; գ. 50, թ. 65—68; գ. 23, թ. 48; գ. 199, թ. 17—23; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 81; «Նոր դպրոց», 1908, № 6, էջ 76; ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 49; գ. 5717, թ. 5; գ. 3997, թ. 25; ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 59; «Մեղու Հայաստանի», 1884, № 28։

Մոզդոկ քաղաքի հայկական ծխական արական դպրոց

Մոզդոկը եղել է Ռուսաստանի հայաբնակ քաղաքներից մեկը։ Այնտեղ միշտ էլ բնակչության ճնշող մեծամասնությունը կազմել են հայերը։ Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը նշում է, որ Մոզդոկում փոքրիկ հայ դպրոց է գործել դեռևս 18-րդ դարի վերջերին։ Սակայն, ինչպես երևում է, այդ դպրոցը երկար կյանք չի ունեցել։

Ըստ «Արարատ» ամսագրի, Մոզդոկի արական ծխական դպրոցը հիմնվել է 1868-ին՝ տեղացի Գրիգոր Թուշմալյանցի կողմից կառուցված մի հոյակապ շենքում։ Նրա անունով էլ կոչվել է «Գրիգորյան»։ «Նոր դպրոց» ամսագրում նշված է, որ Մոզդոկի ծխական դպրոցը գոյություն ունի 1862-ից։ Հավանաբար այն ժամանակից գոյություն ունեցած դպրոցը 1868-ին փոխադրվել և դեռևս նվիրված շենքում, կամ գուցե 1862-ին գործած դպրոցը փակվել է և վերաբացվել 1868-ին։

Մոզդոկի ծխական դպրոցների հարատևությունը ապահովելու նպատակով տեղի մի խումբ բնակիչներ 1873-ին կառուցել են մոմի գործարան, որի եկամուտները հատկացվել են հիշյալ դպրոցներին։

Մոզդոկի դպրոցը Աստրախանի թեմի լավագույն դպրոցներից մեկն է եղել։ Այդ մասին հիացմունքով է խոսվում «Դպրոց» (1875 թ. № 9) և «Նոր դպրոց» (1909 թ., № 6—7, 1910 թ., № 8—9) ամսագրերում։

Երկար տարիներ եղել է միդասյան տարրական դպրոց, ուր ավանդվել են կրոն, հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն, աշխարհագրություն և վայելչագրություն՝ ավելի ընդարձակ ծրագրով, քան այլ ծխական դպրոցներում։

1873-ին ունեցել է 160 աշակերտ, 3 ուսուցիչ, 1881-ին՝ 100 աշակերտ, 4 ուսուցիչ։ 1885-ին դպրոցը փակվել է և վերաբացվել 1886-ին։ 1891-ին եղել է երկդասյան դպրոց։ Երկրորդ անգամ փակվել է 1896-ին, վերաբացվել 1905-ին։

Վերաբացվելուց հետո Մոզդոկի արական և իգական դպրոցները միացվել են և կոչվել եկեղեցական ծխական հնգամյա դասընթացով երկսեռ դպրոց։ 1909—10 ուս. տարում դպրոցն ունեցել է վեցամյա դասընթաց։ Դպրոցում ուսումը տարվել է ձրի։ Այդ ուս. տարվա վերջին դպրոցն ունեցել է 114 աշակերտ՝ 69 աղջիկ (57,9 տոկոս), 45 տղա (42,1 տոկոս)։ Դպրոցում սովորել են մեծ մասամբ աշխատավորների երեխաները (114 հոգուց 92-ը)։ Ունեցել է 7 ուսուցիչ, որոնցից 4-ը ավարտած են եղել Ներսիսյան դպրոցը։ Ուսուցիչների թվում է եղել հայտնի մանկական գրող Հայրապետ Հայրապետյանը։

Դպրոցում մեծ ուշադրություն է դարձվել արտադասարանական ընթերցանություններ։ Գործել է քառաձայն երգեցիկ խումբ։

1913—14 ուս. տարում ունեցել է 5—ամյա դասընթաց։ Աշակերտների թիվը՝ 105 (59 աղջիկ)։ 1915-ին սովորողների թիվն աճել է, հասնելով 118-ի (69 աղջիկ)։ Աշխատել են 6 ուսուցիչ և 3 ուսուցչուհի։ Գործել է նաև սովետական շրջանում։

Ա. Գ. Աբրահամյան, «Համառոտ տրվագիծ հայ գաղթավայրերի պատմության», «Հայրենիք», 1964, Ա. գիրք, էջ 402։

«Արարատ», 1869, Բ., էջ 121—122, 1873, էջ 465, «Դպրոց», 1875, № 9, էջ 309 և հետ։ 1875—1876, № 4, էջ 136։

«Նոր դպրոց», 1909, № 6—7, էջ 137—140; 1910, № 8—9, էջ 113—114; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 36, գ. 30, թ. 16; գ. 199, թ. 17—23; գ. 492, թ. 47; գ. 697, թ. 17—18; գ. 795, թ. 195;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 49, գ. 8717, թ. 2; գ. 3997, թ. 25։

Մոզդոկ քաղաքի Ս. Նունեյան օրիորդաց հայկական երկդասյան դպրոց

Մանկական գրող Հ. Հայրապետյանը «Նոր դպրոցում» (1909 թ., № 6—7) գրել է, որ Մոզդոկի օրիորդական դպրոցը գոյություն է ունեցել անցած դարի «90-ական թվականների առաջին կեսից»։ Սա, իհարկե, թյուրիմացություն է։

Մոզդոկի հայ աղջիկների դպրոցը հիմնվել է 1871-ին՝ տեղի հայ բնակչության ընդհանուր որոշմամբ։ Այս դպրոցի կազմակերպման գործում որոշակի դեր է խաղացել նաև հայ գեներալ Լորիս Մելիքովը, որը հատուկ գրությամբ հոգևոր իշխանություններին իրազեկ է պահել Մոզդոկի բաղաքացիների վճռի մասին և խնդրել է հաստատել այդ դպրոցի բացումը։

Այս դպրոցը գործել է նաև 1881-ին, ունենալով 6 ուսուցիչ, 62 աշակերտուհի։

Մի այլ փաստ ևս հերքում է Հայրապետյանի գրածը։ Մոզդոկի օրիորդական դպրոցը ցույց է տրված 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակներում։ Վերաբացվել է, հավանաբար, 1886-ին, իսկ 1888—89 ուս. տարում արդեն եղել է երկդասյան դպրոց՝ ունենալով 56 աշակերտուհի (մեծ մասամբ վաճառականների և հոգևորականների աղջիկներ՝ 46 հոգի)։ Մոզդոկի օրիորդաց դպրոցի հոգաբարձու Պետրոս Գյանջումյանցը, իր կնոջ կտակի համաձայն, Կիսլովոդսկում ունեցած սեփական տան տարեկան վարձը՝ 600 ռուբլի, տասը տարի ժամանակով նվիրել է հիշյալ դպրոցին։ Զգիտենք ինչո՞ւ 1891-ին իջել է միդասյանի։ 1895-ին եղել է երկդասյան։ Երկրորդ անգամ փակվել է 1896-ին և վերաբացվել 1905-ին։ Այդ տարում արդեն աշակերտուհիների մեծամասնությունը կազմել են աշխատավորների երեխաները։ 1909—10 ուս. տարում եղել

է երկամյա տարրական դպրոց՝ 60 աշակերտուհիներով (այլ փաստաթղթերում ցույց է տրված տղաների դպրոցի հետ միացած)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 16, գ. 50, թ. 16, գ. 199, թ. 17—23, գ. 182, թ. 44, «Նոր դպրոց», 1909, № 6—7; էջ 137—140, 1910, № 8—9, էջ 113, «ՎԻՀ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 86; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 865, թ. 39 և 77, ֆ. 422, գ. 1585, թ. 49, գ 3997, թ. 25, «Արարատ», 1888, Գ. էջ 194։

Վլադիկավկազի հայկական արական դպրոց

Հիմնվել է 1871-ին, ունեցել է մի ուսուցիչ և մոտ 30 աշակերտ, 1881-ին՝ 2 ուսուցիչ, 35 աշակերտ։ 1885-ին փակվել է, վերաբացվել 1886-ին։ 1888—89 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 30 աշակերտ։ Անցել են հայոց լեզու, թվաբանություն, երգեցողություն և կրոն։ 1891-ին գործել է, 1895-ին եղել է միդասյան։ 1896-ին կրկին անգամ փակվել է։ Վերաբացվել է 1905-ին։ Նրան միացած է եղել տեղի հայ աղջիկների դպրոցը։ 1908—09 ուս. տարում եղել է միդասյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 56 տղա, 60 աղջիկ։

1912—13 ուս. տարում ունեցել է 103 սովորող։ Մի քանի տարի այս դպրոցի ավագ ուսուցիչն է եղել սովետահայ մանկավարժ և ժողովրդական կրթության գործիչ Մարուքե Դուրգարյանը։

1915-ին դպրոցն ունեցել է 6 ուսուցիչ և 100 սովորող, որոնցից 55-ը՝ աղջիկ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 5452, թ. 178; գ. 1585, թ. 49; գ. 8717, թ. 2; գ. 3997, թ. 25; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 39; «Դպրոց», 1875, №6, էջ 193;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, գ. 199; գ. 795, թ. 198, գ. 492, թ. 202; գ. 182, թ. 44; «ՎԻՀ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 89; «Նոր դպրոց», 1913, № 6, էջ 67—70։

Վլադիկավկազի հայկական իգական դպրոց

Հիմնվել է 1882-ին։ 1885-ին փակվել է։ 1888—89 ուս. տարում եղել է միդասյան՝ 3 բաժանմունքով և 48 աշակերտուհիներով։ 1891-ին գործել է։ 1895-ին եղել է միդասյան դպրոց։ 1896-ին նորից է փակվել։ 1905-ին վերաբացվել է տեղի հայ տղաների դպրոցի հետ միացած։ 1908-ին երկսեռ դպրոցում սովորել են 60, իսկ 1915-ին՝ 55 հայ աղջիկներ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 5452, թ. 178; գ. 3997, թ. 25; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 39; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, գ. 199; գ. 795, թ. 198; գ. 182, թ. 44; 1888—89 ուս. տ. վիհ. տեղ., էջ 89։

Պյատիգորսկի հայկական արական դպրոց

Աբխիզային փաստաթղթերում նշված են հիմնադրման երկու տարբերակներ՝ 1887-ը և 1888-ը։ 1888—89 ուս. տարում վիճակագրական տեղեկագրի համաձայն այն եղել է միդասյան արական դպրոց՝ 12 աշակերտով։ Այդ ուս. տարում 12 հոգին էլ մնացել են առաջին բաժանմունքում (հավանաբար երկրորդ բաժանմունք բացելու հնարավորություն չունենալու պատճառով)։

1895-ին եղել է երկսեռ դպրոց։ 1896-ին կամ հաջորդ երկու տարիներին փակվել է, 1905-ին՝ վերաբացվել։ 1908—09 ուս. տարում եղել է միդասյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 35 տղա և 36 աղջիկ։ 1913-ին ասվել է դպրոցի հիմնադրման 25-ամյակը։

1915-ին ցույց է տրված որպես առանձին արական դպրոց, ուր սովորել են 60 հայ տղաներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 21—22, գ. 182, թ. 44, գ. 492, թ. 47, գ. 795, թ. 195, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 5452, թ. 180, գ. 8717, թ. 2; գ. 12, ց. 7, գ. 865, թ. 77, «ՎԻՀ. տեղ. 1888—89 ուս. տ», էջ 91, «Նոր դպրոց», 1908, № 5, էջ 77, «Արարատ», 1913, №2, էջ 112։

Պյատիգորսկի հայկական իգական դպրոց

Ըստ աբխիզային տվյալների՝ հիմնվել է 1888-ին, եղել է երկսեռ, սակայն դա ճիշտ չէ։ 1888—89 ուս. տարվա վիճակագրական տվյալների համաձայն այն համարվել է «օրիորդաց միդասյան ուսումնարան», արդեն այդ ժամանակ ունենալով Ա, Բ և Գ բաժանմունքներ։ Հետևապես, հիմնադրված պետք է լինի 1888-ից 2 տարի առաջ՝ 1886-ին (1885-ին փակված դպրոցների ցուցակում չկա)։

1891-ին եղել է միդասյան իգական դպրոց։

1895-ի ցուցակներում նշված է, որ պետք է մնա հոգևոր իշխանությունների իրավասության տակ։ Սակայն հետո այն ևս փակվում է և 1905-ին վերաբացվում՝ հայ տղաների դպրոցի հետ միացած։

1915-ին ցույց է տրված որպես առանձին իգական դպրոց, ուր սովորել են 50 հայ աղջիկներ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 5452, թ. 180; գ. 3997, թ. 25; գ. 12, ց. 7, գ. 865, թ. 57; «ՎԻՀ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 91; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, գ. 199; գ. 679, թ. 21—22; գ. 795, թ. 195; ֆ. 52, ց. 3, գ. 492։

Անդիժան քաղաքի հայկական դպրոց

Անդիժան քաղաքում (այժմ՝ Ուզբեկական ՍՍՀ-ում) հայկական դպրոց է հիմնվել 1910-ին։ 1913—14 ուս. տարում եղել է եռամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 38 տղա և 24 աղջիկ։ Դպրոցն ունեցել է 4 ուսուցիչ և պահվել է աշակերտների ուսման վարձով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 5, գ. 679, թ. 9—10; «Արարատ», 1910, էջ 796։

Կոկանդ քաղաքի հայկական դպրոց

Ֆերղանայի մարզի Կոկանդ քաղաքում (Ուզբեկական ՍՍՀ) հայկական դպրոց է բացվել 1909-ին (այլ տվյալներով՝ 1911-ին)։ 1913—14 ուս. տարում այն եղել է երկսեռ եռամյա դպրոց, ուր սովորել են 35 տղա և 30 աղջիկ։ Ունեցել է 3 ուսուցիչ։

Դպրոցը 1915-ին ևս գործել է, ունենալով 82 աշակերտ, որոնցից 42-ը աղջիկ։ Ունեցել է 1 ուսուցիչ և 2 ուսուցչուհի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 11—12; գ. 795, թ. 197; «Նոր դպրոց», 1909, N10, էջ 88, 1913, N2, էջ 72—73։

Տաշքենդի հայկական դպրոց

Բացվել է 1908-ին՝ տեղի հայ բնակչության միջոցներով։ Առաջին տարին այնտեղ սովորել են 25 տղա և աղջիկ։ 1909-ին ունեցել է 2 ուսուցիչ և 49 աշակերտ։

1915-ին ունեցել է 2 ուսուցիչ, 36 աշակերտ (18 աղջիկ)։

«Նոր դպրոց», 1909, N 1, էջ 99, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 795, թ. 197; ՍՍՀՄ ՊԿՊԱ ֆ. 821, գ. 139, գ. 254, թ. 780; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 52, գ. 3, գ. 471, թ. 1—87.

Սամարղանդ քաղաքի հայկական դպրոց

Ասորախանի թեմի առաջնորդը 1905-ի նոյեմբերին հաղորդել է կաթողիկոսին, թե այդ թվականին որ քաղաքներում են բացվել հայկական դպրոցներ։ Դրանց թվում է նաև Սամարղանդ քաղաքի հայկական դպրոցը, ուր 1906—07 ուս. տարում սովորել են 57, 1907—08 ուս. տարում՝ 80 հայ երեխաներ։ 1913—14 ուս. տարում եղել է եռամյա (միդասյան) երկսեռ դպրոց՝ 81 աշակերտով։

Զարմանալի կերպով 1915-ին աշակերտ-աշակերտուհիների ընդհանուր թիվը իջել է 38-ի։ Դասավանդել են 2 ուսուցիչներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 42; թ. 201; գ. 679, թ. 13—14; գ. 795, թ. 197; «Նոր դպրոց», 1908, N 5, էջ 61, N 6, էջ 76; 1911, N 9—10, էջ 32։

Քիրքի քաղաքի հայկական դպրոց

Արխիվային մի փաստաթղթից իմանում ենք, որ Ամուդարիայի ափին գտնվող բուխարական Քիրքի քաղաքում վաղուց ի վեր բնակվել են հայ վաճառականներ, որոնք 1917-ին կազմել են 50 տնից բաղկացած մի գաղութ։ Նրանք ունեցել են իրենց «ծխական դպրոցը՝ սեփական հարմար շենքով»։ Այն հիմնված է եղել 1910-ին և 1913—14 ուս. տարում ունեցել է ընդամենը 16 աշակերտ (տղաներ և աղջիկներ)։ Որոշ տարիների աշակերտների թիվը հասել է մինչև 25-ի։

Սխական ժողովը որոշել է 1917-ի աշնանից Քիրքիում բացել նաև մի հայկական մանկապարտեզ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 2, գ. 1, գ. 410, թ. 16; ֆ. 56, գ. 679, թ. 15—16; «Արարատ», 1910, էջ 796։

ՍԵՎԾՈՎՅԱՆ ՆԱՀԱՆԳ

ԿՈՒԲԱՆԻ ՄԱՐԶ

Անապա քաղաքի հայկական ծխական դպրոց

Կուբանի մարզի Անապա քաղաքի հայկական դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Դպրոցը 1906—07 ուսումնական տարում գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 31 աշակերտ։ Հետագա տարիների ցուցակներում չի նշված։

«Նոր դպրոց», 1908, N 6, էջ 76։

Արմավիր քաղաքի հայկական արական ծխական դպրոց

Արմավիր ավանը և ապա՝ քաղաքը հիմնել և ծաղկեցրել են հայերը՝ սկսած 1839 թվականից։ 1875-ին այնտեղ եղած մոտ 600 ընտանիքներից ավելի քան 580-ը եղել են հայեր և միայն 25-ը՝ ռուսներ։ Արմավիրում առաջին դպրոցը հիմնվել է 1845-ին՝ մոդոնցի Դավիթ Ուլուխանյանցի ծախսերով։ Այն եղել է պետական գավառական դպրոց,

ուր սովորել են գրեթե բացառապես հայ երեխաներ։ Այնտեղ դասավանդվել են նաև հայոց լեզու և հայ լուսավորչական կրոն։

Մի ժամանակ արմավիրցիների ճնշող մեծամասնությունը գրեթե ամբողջովին մոռացած է եղել մայրենի՝ հայոց լեզուն և խոսել է չերքեզերեն։ Այս երևույթի դեմն առնելու համար տեղից ընտրվել է 3—4 ընդունակ երեխա և ուղարկվել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում ուսանելու։ Ավարտելուց հետո նրանք վերադարձել են Արմավիր, զբաղվել քահանայությամբ և միաժամանակ հայոց լեզու դասավանդել հայ երեխաներին։

Արմավիրի հայկական արական ծխական դպրոցը բացվել է 1863-ին (մի այլ աշխատության համաձայն՝ 1865-ին, պահվել է եկեղեցու եկամուտներով և աշակերտների թոշակագրամով (1875-ին 70 սովորողից 25—30-ը թոշակ են տվել, մյուսները սովորել են ձրի)։ Դպրոցը եղել է միդասյան՝ բաղկացած երկու բաժանմունքից՝ պատրաստական և առաջին։ Ավանդվել են հայոց և ռուսաց լեզուներ (ամեն օր), երկու լեզվի վայելչագրություն, թվաբանություն և կրոն։ Դպրոցը գտնվել է տնտեսական և ուսումնական խղճուկ վիճակում։ 1881-ին ունեցել է 5 ուսուցիչ, 68 աշակերտ։ Փակվել է 1885-ին, վերաբացվել՝ 1886-ին։ 1888-ին եղել է միդասյան՝ 70 աշակերտով։ 1896-ին դարձյալ փակվել է։ Վերաբացվել է 1905-ին, որպես եռամյա դպրոց։ 1906—07 ուս. տարում ունեցել է 100 աշակերտ։

1913—14 ուսումնական տարում այն եղել է եռամյա արական դպրոց՝ 74 աշակերտով (մոտ 50 հոգի ձրիավարժ)։ 1915-ին՝ 87 աշակերտ։

«Մեղու Հայաստանի», 1863, № 36, էջ 320—322.

«Դպրոց», 1875, № 11—12, էջ 394—405; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 48; գ. 50, թ. 16; գ. 199, թ. 17—23; գ. 492, թ. 45, գ. 67, թ. 26—27; «Վիճակ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 87; Ф. А. Щербина «История Армавира и черкесогаев», Екатеринодар, 1916, էջ 135; «Նոր դպրոց», 1908, № 6, էջ 76; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 2; գ. 1585, թ. 49.

Արմավիրի հայկական օրիորդաց դպրոց

Հիմնվել է 1868-ին (այլ աշխատության համաձայն՝ 1865-ին) և պահվել հասարակության հաշվին (տարեկան 500 ռուբլի), ինչպես նաև եկեղեցուց և թոշակագրամներից ստացվող գումարներով։ Շենքով և այլ հարմարություններով ավելի լավ է ապահովված եղել, քան տղաների դպրոցը։ 1875-ին ունեցել է 2 դասարան՝ 30 աշակերտուհի (25 հայ և 5 ռուս)։ Ավանդվել են՝ հայ կրոն, հայոց լեզու՝ ընթերցանություն և բառագիտություն ռուսերենի հետ, ռուսերեն՝ ընթերցանություն, երկու լեզվի վայելչագրություն, թվաբանություն, աշխարհագրություն, ձեռագործություն, պար, երաժշտություն (դաշնամուրով)։ 1881-ին ունեցել է 6 ուսուցիչ, 76 աշակերտուհի։ 1885-ին փակվել է։ 1888-ին եղել է միդասյան՝ 121 աշակերտուհիներով։ 1896-ին նորից փակվել է։ Վերաբացվել է 1905-ին որպես 5-ամյա դպրոց։

1906—07 ուս. տարում ունեցել է 250, 1908—09 ուս. տարում՝ 319 աշակերտուհի։ 1913—14 ուսումնական տարում աշակերտուհիների թիվը եղել է 309։ Բնիկ արմավիրցիները (195 հոգի) ուսման վարձ չեն վճարել, ձրիավարժ են եղել նաև «օտարաքաղաքացի 114 աշակերտուհիների մոտավորապես կեսը։ 1915-ին՝ 319 աշակերտուհի։

«Դպրոց», 1875, № 11—12, էջ 405—407; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 46; գ. 50, թ. 16; գ. 199, թ. 17—23; գ. 679, թ. 26; ֆ. 52, գ. 492; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ.1585, թ.49; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 87;
«Նոր դպրոց», 1908, № 6, էջ 76; 1911, № 9—10, էջ 34.

Աֆոմասևսկի (Աֆանասևսկի) ագարակի հայկական ծխական դպրոց

Կուբանի մարզի Աֆոմասևսկի (այլ փաստաթղթում՝ Աֆանասևսկի) ագարակի հայկական միդասյան արական դպրոցը 1908—09 ուս. տարում գործել է, ունենալով 32 աշակերտ։ Գործել է նաև 1915-ին (30 աշակերտ)։ 1916-ի օգոստոսին կաթողիկոսը Աստրախանի հայոց թեմի առաջնորդին թույլ է տվել «Աֆանասևսկի հայկական գյուղում հայոց եկեղեցական ծխական դպրոց բանալ» («Արարատ», 1916, էջ 638)։ Մենք չգիտենք՝ արդյոք սա նույն Աֆանասևսկի ագարա՞կն է, թե մի այլ գյուղ։ Եթե նույնն է, ապա ինչո՞ւ դպրոցի բացման թույլտվությունը տրվել է այդքան մեծ ուշացումով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 50; գ. 795, թ. 198; «Արարատ», 1916, էջ 638։

Դուբինկա գյուղի հայկական ծխական դպրոց

Կուբանի մարզի Մայկոպի գավառի Դուբինկա գյուղի հայերը այնտեղ են եկել 1881-ին՝ Թուրքիայից։ 1912-ին կազմել են 30 ծուխ, շուրջ 300 շունչ։ Այնտեղի հայկական ծխական դպրոցը բացվել է 1912-ին։ 1913—14 ուս. տարում գործել է եռամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 52 հայ տղաներ և աղջիկներ։

«Նոր դպրոց», 1912, № 15—16, էջ 51;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 36—37.

Եկատերինոդարի (այժմ՝ Կրասնոդար) հայկական Մեսրոպյան հոգևոր դպրոց

Եկատերինոդար քաղաքը եղել է Կուբանի մարզային կենտրոնը։ Այնտեղի հայկական Մեսրոպյան արական ծխական դպրոցը բացվել է 1863-ին, որպես երկսեռ դպրոց։ Պահվել է տեղի հայ հասարակության և Նոր Նախիջևանի մարդասիրական ընկերության միջոցներով։ Ինչպես երևում է, հետագայում փակվել է և վերաբացվել 1872-ին, քանի որ այդ թվականին գրվել է Եկատերինոդարի հայկական երկսեռ դպրոցի բացման մասին։

1873-ին ունեցել է 3 ուսուցիչ, 30 աշակերտ, 1881-ին՝ 33 աշակերտ։

Այս դպրոցը ևս 1885-ին փակվել է կառավարության կողմից, վերաբացվելով, հավանաբար, 1887-ին։ 1888-ին եղել է միդասյան ուսումնարան՝ 23 աշակերտով և 2 ուսուցչով։ 1891-ին եղել է խառն (երկսեռ) դպրոց։ 1896-ին փակված հայկական դպրոցների ցուցակում չի նշված։ Այն թողնվել է հայ հոգևոր իշխանության՝ իրավասության տակ, բայց հետո՝ 1897-ին, այնուամենայնիվ, փակվել է։ Վերաբացվել է 1905-ին։

1908—09 ուս. տարում եղել է երկսեռ երեգասյան դպրոց, ուր սովորել են 80 տղա, 83 աղջիկ։ 1913—14 ուս. տարում ունեցել է 5 բաժանմունք։ Աշակերտների թիվը՝ 176, որից 105-ը՝ աղջիկներ։ Ունեցել է 7 ուսուցիչ։ 1915-ին ցույց է տրված որպես առանձին արական դպրոց՝ 116 աշակերտով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 5452, թ. 183; գ. 1585, թ. 49; գ. 8717, թ. 2; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 77; «Արարատ», 1869, գ., էջ 63, 1872, էջ 417; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 16; գ. 492, թ. 43; գ. 679, թ. 28; գ. 795, թ. 196; գ. 182, թ. 44; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 92;

«Դպրոց», 1875—1876; № 4, էջ 136.

Եկատերինոդարի հայ օրիորդաց դպրոց

Հիմնվել է 1870-ի նոյեմբերին՝ սկզբում ունենալով միայն նախապատրաստական դասարան։ 1871-ին կազմակերպվել է նաև առաջին դասարան, ուր սովորել են 10 հոգի։ 1885-ին փակվել է։ 1888-ին եղել է միդասյան, ունենալով ընդամենը 11 աշակերտուհի և 1 ուսուցչուհի։ 1896-ին փակված դպրոցների ցուցակում չկա։ Հավանական է, այն նախօրոք արդեն փակված է եղել։ Վերաբացվել է 1905-ին՝ տեղի տղաների դպրոցի հետ միացած։ 1908—09 ուս. տարում երկսեռ դպրոցում սովորել են 83 աղջիկներ։ 1915-ին ցույց է տրված որպես առանձին՝ իգական դպրոց՝ 131 աշակերտուհիներով։

«Արարատ», 1871, Գ. էջ 249—50; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 50, թ. 16; գ. 795, թ. 196; գ. 182, թ. 44; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 92։

Լաբինսկայա գյուղի (ստանիցայի) հայկական դպրոց

Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը 1907-ի իր մի կոնդակով հաստատել է Լաբինսկայա գյուղի դպրոցի ներքնատիր հոգաբարձության կազմը։ Կարելի է ենթադրել, որ այդ դպրոցը գործել է 1907 թվականից էլ առաջ։

1910-ին եղել է միդասյան երկսեռ դպրոց։ 1913—14 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ և 23 սովորող (8 աղջիկ)։

«Արարատ», 1907, № 6, էջ 498; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 32—33; «Նոր դպրոց», 1908, № 4, էջ 65։

Բազդոլ գյուղի ծխական դպրոց

Կաթողիկոս Գևորգ Ե-ի կոնդակով օրհնվել է 1912 թ. Զերնոմորյան նահանգի Բազդոլ (Раздольная) գյուղի հայկական ծխական դպրոցի բացումը։

«Արարատ», 1912 թ., էջ 1066։

Խոյթա (Գոյթա) գյուղի հայկական ծխական դպրոց

Բացվել է 1912-ին։ 1913—14 ուս. տարում եղել է միդասյան (եռամյա դասընթացով) երկսեռ ծխական դպրոց, ուր սովորել են 30 հայ երեխաներ (6 աղջիկ)։ 1916-ին ևս գործել է, ունենալով 70 աշակերտ (14 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 689, թ. 58—89, գ. 795, թ. 198, «Արարատ», 1912, էջ 1063, 1916, էջ 185։

Կազարմա գյուղի հայկական դպրոց

Բացման տարեթիվը մեզ անհայտ է։ 1915-ին գործել է։ Այդ թվականին այնտեղ ապրել են ավելի քան 350 հայեր։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 795, թ. 198, ՍՍՀՄ ՊԿՊԱ, թ. 821, ց. 150, գ. 284, թ. 62։

Կարտլոյ գյուղի հայկական դպրոց

Բացման տարեթիվը մեզ անհայտ է։ 1915-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 25 աշակերտ (բոլորը տղաներ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 795, թ. 198։

Կրաևակ-Բաբուշևակ գյուղի ծխական դպրոց

1912 թ. կաթողիկոս Գևորգ Ե-ն հատուկ կոնդակով հաստատել է Զևրնամորյան նահանգի Կրաևակ—Բաբուշևակ գյուղում հայկական ծխական դպրոցի բացումը։

«Արարատ», 1912 թ., էջ 1066։

Կուշինկա գյուղի հայկական դպրոց

Մայկոպի գավառի Կուշինկա գյուղում 1912-ին ապրել են 30 հայ ընտանիքներ, որոնք այնտեղ են եկել 1881-ին Թուրքիայից։ Այս գյուղի հայկական ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1915-ին գործել է՝ ունենալով մի ուսուցիչ և 27 աշակերտ (բոլորը աղջիկներ)։

«Նոր դպրոց», 1912, №15—16, էջ 51;
ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 795, թ. 198։

Մարատուկ (Մերթուկ) գյուղի հայկական դպրոց

Կուբանի մարզի Մայկոպի գավառի Մարատուկ (Մերթուկ) գյուղի հայերը ևս 1881-ին այստեղ են եկել Թուրքիայից։ 1912-ին կազմել են 30 տուն։ Թե երբ են իրենց ազգային դպրոցը բացել, մենք չգիտենք։ Հայտնի է միայն, որ 1915-ին այն գործել է։

«Նոր դպրոց», 1912, № 15—16, էջ 51;
ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 795, թ. 198։

Մայկոպ քաղաքի հայկական դպրոց

1905-ին Մայկոպ քաղաքում բացվել է հայկական միդասյան երկսեռ դպրոց։ 1906—07 ուս. տարում այնտեղ սովորել են 52 հայ տղաներ ու աղջիկներ։ 1913—14 ուս. տարում այդ դպրոցն ունեցել է եռամյա դասընթաց, 3 ուսուցիչ և 54 աշակերտ (36 աղջիկ)։

1915-ին սովորողների թիվը զգալի չափով նվազել է՝ իջնելով 32-ի (18 աղջիկ)։ 1919-ին ևս գործել է։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 202; գ. 679, թ. 30—31; գ. 795, թ. 196;
«Նոր դպրոց», 1908, № 6, էջ 76; 1912, №15—16, էջ 51; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 6։

Նովոռոսիյսկ քաղաքի հայկական դպրոց

Նովոռոսիյսկ քաղաքի հայկական ծխական դպրոցը 1906—07 ուս. տարում գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 26 աշակերտ։ 1908-ին նյութական սղության պատճառով փակվել է և վերաբացվել 1910-ի օգոստոսին։ Պահվել է ԿՀԲ ընկերության Նովոռոսիյսկի ճյուղի միջոցներով։

«Նոր դպրոց», 1908, № 6, էջ 76; 1910, № 3, էջ 87; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, թ. 6, գ. 17; «Արարատ», 1908, էջ 946; 1910, էջ 1011։

Շափշուղ գյուղի ծխական դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագիրը 1885-ի սկզբներին գրել է. «Շափշուղից գրում են, որ այնտեղ, Ս. Կարապետ նորաբաց դպրոցում ուսանում են մոտ քառասուն երեխաք»։

Չի նշված, թե որ գավառում կամ նահանգում է գտնվում այդ Շափշուղ գյուղը։ «Կավկազսկի կալենդարի» 1915 թ. գրքում բերված են Կովկասի բոլոր բնակավայրերը։ Այնտեղ նշված են նաև Շափշուղ անունով երեք տարբեր բնակավայրեր՝ Կուբանի նահանգի Եկատերինոդարի և Թամանի ու Սևծովյան՝ Տուապսեի գավառներում։ Հավանաբար, հենց այս բնակավայրերից մեկն էլ այն Շափշուղն է, որտեղ բացվել և գործել է հայկական եկեղեցական ծխական դպրոց։

«Մեղու Հայաստանի», 1885, № 17;
«Կավկազսկի կալենդար», 1915, էջ 269։

Շիբեկ ագարակի հայկական երկսեռ դպրոց

Մեզ մոտ եղած արխիվային տվյալների համաձայն Կուբանի մարզի Շիբեկ ավանում 1908—09 ուս. տարում գործել է հայկական միդասյան երկսեռ դպրոց, որի 4 բաժանմունքներում սովորել են 16 տղա և 11 աղջիկ։ Եթե այդ ուսումնական տարում դպրոցն ունեցել է 4 բաժանմունք, ուրեմն այն պետք է բացված լիներ առնվազն երեք տարի առաջ՝ 1905—06 ուս. տարում։

Ինչպես երևում է, այդ դպրոցը ինչ-ինչ պատճառներով փակվել է, քանի որ 1911-ի սեպտեմբերին կաթողիկոսը թույլ է տվել Շիբեկ ագարակում բացելու երկսեռ եկեղեցական-ծխական դպրոց։

1913—14 ուս. տարում եղել է քառամյա դպրոց՝ 55 աշակերտով (23 աղջիկ)։ Պահվել է սովորողների թոշակագրքույկով։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 52; գ. 679, թ. 34—35;
«Արարատ», 1911, № 9, էջ 715։

Պոստիկ գյուղի ծխական դպրոց

Արխիվային մի գործում, որտեղ թվարկված են Աստրախանի թեմի մեջ մտած հայկական դպրոցները, եկեղեցական-ծխական դպրոց է ցույց տրված նաև Կուբանի նահանգի Բեզիմյանի շրջանի Պոստիկ հայաբնակ գյուղում։ Այդ դպրոցը 1909—10 ուս. տարում գործել է, իսկ թե երբ է հիմնվել և մինչև երբ է պահպանել իր գոյությունը, մեզ անհայտ է։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 52 ց. 3, գ. 471, թ. 1—87։

Սարովա գյուղի հայկական ծխական դպրոց

Կուբանի մարզի Եկատերինոդարի շրջանի Սարովա գյուղի հայկական դպրոցն առաջին անգամ ցույց է տրված 1909 թվականին Կովկասի հայոց ուսուցչական միության կողմից անցկացված վիճակագրության մեջ։

Այս դպրոցի մասին այլ տեղեկություններ չկան։

«Նոր դպրոց», 1909, № 4, էջ 106։

Տուապսե քաղաքի հայկական ծխական դպրոց

Տուապսե քաղաքի հայկական ծխական դպրոցը բացվել է 1916-ի հոկտեմբերին՝ տեղի հայերի որոշմամբ և կաթողիկոսի թույլտվությամբ։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17, «Արարատ», 1917, էջ 8։

Ուշդերե գյուղի հայկական ծխական դպրոց

1913-ի հունվարին կաթողիկոսը Աստրախանի թեմի առաջնորդին թույլ է տվել՝ Չերնոմորյան (Սևծովյան) նահանգի Ուշդերե գյուղում բացելու հայկական եկեղեցական-ծխական միդասյան դպրոց։

«Արարատ», 1913, № 2, էջ 106։

Քյուրուտուրե գյուղի հայկական ծխական դպրոց

Բացվել է 1909-ին։ 1913—14 ուս. տարում եղել է միդասյան արական ծխական դպրոց՝ եռամյա դասընթացով։ Ունեցել է 68 աշակերտ (23 աղջիկ)։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 40—41; ֆ. 52, ց. 3, գ. 485։

ՍՈՉԻԻ ՕԿՐՈՒԳ

Աղլեր ավանի հայկական դպրոց

1911-ին Սոչիի օկրուգի Աղլեր ավանում բացվել է հայկական եկեղեցական-ծխական միդասյան երկսեռ դպրոց։

«Արարատ», 1911, № 8, էջ 618։

Գալտախոր գյուղի հայկական ծխական դպրոց

Գալտախոր գյուղում 1911-ին բացվել է հայկական արական ծխական դպրոց։ 1913—14 ուս. տարում այն ունեցել է 3 բաժանմունք, որոնցում սովորել են 40 հայ երեխաներ։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 64—65։

Գորոդ գյուղի հայկական ծխական դպրոց

Գորոդ կոչվող գյուղում 1912-ին բացվել է հայկական եկ. ծխական միդասյան երկսեռ դպրոց, ուր 1913—14 ուս. տարում սովորել են 31 տղա և 14 աղջիկ։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 54—55։

Գրաեկա գյուղի ծխական դպրոց

Գրաեկան Սոչիի շրջանի հայաբնակ գյուղերից է, ուր 1908-ին գործել է միդասյան ծխական դպրոց։ Ունեցել է 3 բաժանմունք, 1 ուսուցիչ։

«Նոր դպրոց», 1909, № 3, էջ 93։

Դեռ-Սիմոն գյուղի ծխական դպրոց

Դեռ-Սիմոն գյուղում 1912-ին բացվել է հայկական միդասյան երկսեռ դպրոց, որը 1913—14 ուս. տարում ունեցել է քառամյա դասընթաց։ Սովորել են 32 հայ տղաներ ու աղջիկներ։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 56—57; ֆ. 52, ց. 3, գ. 485։

Զեփանոս գյուղի ծխական դպրոց

Զեփանոսը Սոչիի շրջանի հայաբնակ գյուղերից է։ 1908-ին այնտեղ գործել է միդասյան ծխական դպրոց՝ ունենալով 3 բաժանմունք և 1 ուսուցիչ։

«Նոր դպրոց», 1909, № 3, էջ 93։

Ներքին Լոո գյուղի ծխական դպրոց

Լոոն Սոչիի շրջանի հայաբնակ գյուղերից է։ 1908-ին այնտեղ գործել է միդասյան երկսեռ ծխական դպրոց՝ ունենալով 3 բաժանմունք, 1 ուսուցիչ և 40 աշակերտ։ Հավանաբար, հետագայում փակվել է, քանի որ 1912-ին նորից թույլ է տրվել Ն. Լոո գյուղում բաց անել ծխական դպրոց։ 1915-ին աշակերտների թիվը եղել է 55 (բոլորը տղաներ)։

«Նոր դպրոց», 1909, № 3, էջ 93; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 50; գ. 795; էջ 198; «Արարատ», 1912, էջ 291։

Վերին Լոո գյուղի ծխական դպրոց

Վերին Լոոն ևս Սոչիի շրջանի հայաբնակ գյուղերից է։ 1912-ին այնտեղ ևս բացվել է հայկական դպրոց։ 1913—14 ուս. տարում այն եղել է 4-ամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 31 տղա, 17 աղջիկ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 50—51, «Արարատ», 1912, էջ 291։

Խրիստոֆորովո գյուղի ծխական դպրոց

Սոչիի շրջանի հայաբնակ գյուղերից է։ Այնտեղի միդասյան արական ծխական դպրոցը հավանաբար, բացվել է 1906-ին։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք, 45 աշակերտ։ Հավանաբար, հետագայում փակվել է, քանի որ կաթողիկոսը 1913-ի հունվարին թույլ է տվել Խրիստոֆորովո գյուղում բաց անել հայկական եկեղեցական-ծխական դպրոց։ 1913—14 ուս. տարում ունեցել է 50 աշակերտ։ 1915-ին դարձել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 65 տղա, 27 աղջիկ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 53; գ. 679, թ. 62—63; գ. 795։
«Արարատ», 1913, № 2, 107, «Նոր դպրոց», 1909, № 67, էջ 142։

Կորոպտեզ գյուղի հայկական ծխական դպրոց

Սոչիի շրջանի Կորոպտեզ հայաբնակ գյուղում 1908-ին գործել է միդասյան արական ծխական դպրոց։ 1913—14 ուս. տարում ունեցել է 30 աշակերտ։

«Նոր դպրոց», 1909, № 3, էջ 92;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 42—43։

Կուբանսկ գյուղի ծխական դպրոց

Կուբանսկը Սոչիի շրջանի հայաբնակ գյուղերից է։ 1908-ին այնտեղ գործել է երկսեռ ծխական դպրոց՝ ունենալով 3 բաժանմունք, 2 ուսուցիչ և 50 աշակերտ։ 1909-ին նույնպես գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 48;
«Նոր դպրոց», 1909, № 3, էջ 93; №6—7, էջ 142։

Կովալևսկ գյուղի հայկական ծխական դպրոց

Սեծովյան նահանգի Սոչիի օկրուգի Կովալևսկ հայաբնակ գյուղը 1915-ին ունեցել է 722 բնակիչ։ Այնտեղի ծխական դպրոցի հիմնադրման թվականը մեզ անհայտ է։ Գիտենք միայն, որ 1909—10 ուսումնական տարում գործել է որպես միդասյան արական դպրոց՝ 32 աշակերտով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 52, ց. 3, գ. 471, թ. 1—87;
«Կավկազսկի կալենդար», 1915, էջ 143։

Միխելրիպշ գյուղի ծխական դպրոց

Միխելրիպշը Սոչիի շրջանի հայաբնակ գյուղերից է։ 1908—09 ուս. տարում այնտեղ գործել է հայկական ծխական երկսեռ դպրոց՝ 40 աշակերտով։ Ինչպես երևում է, այս դպրոցը ևս հետագայում փակվել է, քանի որ 1912-ին հետևել է կաթողիկոսի հրամանը այդ գյուղում դպրոց բացելու մասին։ 1913—14 ուս. տարում եղել է 3-ամյա արական դպրոց՝ 50 աշակերտով։ 1915-ի ցուցակում Միխելրիպշ գյուղը նշված է, բայց դպրոցը՝ ոչ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 49; գ. 679, թ. 60—61;
«Արարատ», 1912, էջ 291։

Ներքին Շիլովկա գյուղի հայկական դպրոց

Ջերնոմորյան (Սևծովյան) նահանգի Ներքին Շիլովկա գյուղում 1908—09 ուս. տարում գործել է հայկական միդասյան երկսեռ դպրոց՝ ունենալով 4 բաժանմունք և 44 սովորող (4 աղջիկ)։ Ուրեմն այդ դպրոցը բացված պետք է լինի 1905—06 ուս. տարուց ոչ ուշ։ Ըստ երևույթին, հետագայում փակվել է և վերաբացվել 1912-ին։

1913—14 ուս. տարում ունեցել է 34 սովորող։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 50; գ. 679, թ. 58—59; «Արարատ», 1912, էջ 291։

Նոր Շեն (Նորաշեն) գյուղի ծխական դպրոց

Նոր Շենը Սոչիի շրջանի հայաբնակ գյուղերից է։ 1908-ին այնտեղ գործել է միդասյան ծխական դպրոց՝ ունենալով 4 բաժանմունք, 2 ուսուցիչ և 46 աշակերտ (13 աղջիկ)։

«Նոր դպրոց» ամսագրի 1911 թ. համարներից մեկում նշված է, որ արդեն 6 տարի է, ինչ Սոչիի շրջանի Նորաշեն գյուղում գոյություն ունի ծխական դպրոց, որը սակայն գտնվում է նյութական ծանր դրության մեջ։ Ուրեմն, կարելի է եզրակացնել, որ այդ դպրոցը բացվել է 1905—06 ուս. տարում։

1915-ի ցուցակում այս դպրոցը չի նշված։

«Նոր դպրոց», 1909, № 3, էջ 93; 1911, № 11—12, էջ 35; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 50; գ. 795, թ. 195—198։

Պողխրերտովո գյուղի ծխական դպրոց

Պողխրերտովոն Սոչիի շրջանի հայաբնակ գյուղերից է։ 1908—09 ուս. տարում այնտեղ գործել է հայկական երկսեռ ծխական դպրոց՝ 1 ուսուցչով, 43 աշակերտով։ 1915-ին գործել է՝ ունենալով 25 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 50; գ. 795, թ. 198։

Սոչի քաղաքի հայկական երկսեռ դպրոց

1911 թվականի հոկտեմբերին կաթողիկոսը հատուկ կոնդակով թույլ է տվել «Սոչիում կրկին երկու սեռի դպրոց բանալու»։

Եթե այդ դպրոցը կրկին անգամ էր բացվելու, ուրեմն այն գոյություն է ունեցել նաև նախկինում, բայց ինչ-ինչ պատճառներով փակվել է և վերաբացվել 1911-ին։

1913—14 ուս. տարում եղել է եռամյա դպրոց, ուր սովորել են 35 տղա և 22 աղջիկ։ 1915-ին գործել է։

«Արարատ», 1911, № 11, էջ 288.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 53—55, գ. 795, թ. 197։

Վերխովսկի-Միշեգի գյուղի ծխական դպրոց

Աստրախանի թեմի հայ դպրոցների 1909—10 ուս. տարվա տեղեկագրում հայկական եկեղեցական-ծխական դպրոց է ցույց տրված նաև Սոչիի օկրուգի Վերխովսկի-Միշեգի գյուղում։ Այդ ուս. տարում եղել է երկսեռ միդասյան դպրոց՝ 37 սովորողներով (4 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 52, ց. 3, գ. 47, թ. 1—87։

Ովա գյուղի (Հովագյուղի) հայկական արական դպրոց

Ջերնոմորյան նահանգի Ովա գյուղում (մի այլ փաստաթղթում՝ Հովագյուղ) 1908—09 ուս. տարում գործել է հայկական միդասյան արական դպրոց՝ ունենալով 3 բաժանմունք և 40 աշակերտ։ Ուրեմն այն պետք է բացված լինի 1906—07 ուս. տարուց ոչ ուշ։ Հավանաբար, հետո փակվել է, որովհետև նշված է 1916-ին նոր բացված դպրոցների ցուցակում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 51;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17, «Արարատ», 1916, էջ 320։

ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ՆԱՀԱՆԳ

Ս. Խաչ քաղաքի արական ծխական դպրոց

Ստավրոպոլի նահանգի Ս. Խաչ քաղաքը եղել է հայաբնակ քաղաքներից մեկը։ Այնտեղ 1873-ին բացվել է արական ծխական դպրոց, որտեղ սովորել են ընդամենը 14 հայ երեխա։ 1881-ին ունեցել է 2 ուսուցիչ, 42 աշակերտ։ 1885-ին փակվել է, մինչ այդ եղել է երկսեռ հոգևոր դպրոց։ Վերաբացվել է 1886-ին, 1888-ին եղել է միդասյան արական ծխական դպրոց՝ ունենալով 4 ուսուցիչ և 59 աշակերտ։ 1898-ին նորից է փակվել 1905-ին՝ վերաբացվել։ 1913—14 ուս. տարում եղել է երկսեռ 3-ամյա դպրոց, ուր սովորել են 53 տղա և 25 աղջիկ։ 1915-ին աղջիկների թիվը հասել է 39-ի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 11; գ. 679, թ. 68—69; գ. 50, թ. 16; գ. 199, թ. 17—28; գ. 735, թ. 195; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 136; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 92;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 865, թ. 78, գ. 1585, թ. 49; ֆ. 422, գ. 2018, էջ 251։

Ս. Խաչ քաղաքի հայ աղջիկների դպրոց

Հիմնվել է 1883-ին։ 1885-ին փակվել է և վերաբացվել 1886-ին։ 1888-ին կոչվել է Ս. Խաչ քաղաքի «Օրիորդաց միգասյան դպրոց»՝ ունենալով 3 բաժանմունք (Ա, Բ, Գ) և 36 աշակերտուհի։ 1905-ին վերաբացվել է տեղի արական դպրոցի հետ միացած։ 1915-ին երկսեռ դպրոցում սովորել են 39 հայ աղջիկներ։

«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 91; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 679, թ. 68—69, գ. 795, թ. 195; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 251։

Ստավրոպոլ քաղաքի հայկական ծխական դպրոց

Հիմնվել է 1849-ին, սակայն հետագայում փակվել է և վերաբացվել 1861-ին։ 1873-ին ունեցել է 49 աշակերտ։ 1874—75 ուս. տարում աշակերտների թիվը տատանվել է 18—25-ի միջև։ Ավանդվել են՝ կրոն, հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն և վայելչագրություն։

Հաջորդ տարում աշակերտների թիվը զգալիորեն ավելացել է՝ հասնելով 49-ի, իսկ 1881-ին նորից իջնելով 17-ի։

1885-ին փակվել է, վերաբացվել է, հավանաբար, 1886-ին։ 1888—89 ուս. տարում իր երեք բաժանմունքներում ունեցել է ընդամենը 11 աշակերտ։

1896-ին նորից է փակվել, իսկ 1905-ին վերաբացվել որպես երկսեռ միգասյան դպրոց, որտեղ 1913—14 ուս. տարում սովորել են 20 տղա, 16 աղջիկ։ 1915-ին ցույց է տրված որպես առանձին արական դպրոց, որի աշակերտների թիվը եղել է 35 հոգի։

Մ. Հ. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը XIX դ. առաջին կեսին, էջ 294;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 5452, թ. 183; գ. 1585, թ. 49; գ. 8717, թ. 3;
«Դպրոց», 1875, № 9—10, էջ 312—13; 1875—1876 թթ., № 4, էջ 135;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 48; գ. 43, թ. 19; գ. 50, թ. 16; գ. 199, թ. 17—23; գ. 769, թ. 66—67; գ. 795, թ. 195։
«Մեղու Հայաստանի», 1861, № 49, էջ 582; 1884, № 77։

Ստավրոպոլի հայկական օրիորդաց դպրոց

Ստավրոպոլի Մարիամյան օրիորդաց դպրոցը հիմնվել է 1872-ի սեպտեմբերի 8-ին՝ 20 աշակերտուհիներով։ Այն տեղավորված է եղել արական դպրոցի վարձովի շենքում, բայց համարվել է առանձին դպրոց։ 1873-ին ունեցել է 43 աշակերտուհի, 3 ուսուցիչ, 1881-ին՝ 16 աշակերտուհի։ 1885-ին փակվել է, 1888-ին եղել է միգասյան օրիորդական դպրոց՝ 15 աշակերտուհիներով, որոնցից 13-ը՝ վաճառականների աղջիկներ։ Այդ աշակերտուհիներից փոխադրվել են Ա բաժանմունքից Բ բաժանմունք՝ 5 հոգի, ավարտել են 2 հոգի, մնացել են նույն դասարանում 3 հոգի։ Երկրորդ անգամ փակվել է 1896-ին։ 1905-ին վերաբացվել է տղաների դպրոցի հետ միացած։ 1915-ին ցույց է տրված որպես առանձին իգական դպրոց, որտեղ սովորել են 45 հայ աղջիկներ։

«Դպրոց», 1875, № 9—10, էջ 312—13; 1875—1876, № 4, էջ 135; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 9; գ. 50, թ. 16; գ. 199, թ. 17—23; գ. 679, թ. 66; գ. 795, թ. 195; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տ.», էջ 88; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 5452, թ. 183; գ. 2997, թ. 23; գ. 4585, թ. 43։
«Մեղու Հայաստանի», 1873, № 12։

ԴԱՐԱԲԱԳԻ ԹԵՄ

Այս թեմի մեջ մտնում էին Նուխու հաջորդությունը և Շուշվա գավառը

ՆՈՒԽՈՒ ՀԱՋՈՐԴՈՒԹՅՈՒՆ

(Նուխու, Արեշի և Կարյագինի գավառներ)

Ամիրվան գյուղի ծխական դպրոց

«Դպրոց» ամսագիրը, ընդհանուր թվով, ցույց է տալիս Նուխու գավառի 11 գյուղերում 11 ծխական դպրոցի ակայությունը 1875-ին։

Կարծում ենք, որ այդ դպրոցներից մեկը եղել է Ամիրվան գյուղում։ Հաստատապես հայտնի է, որ այդ դպրոցը 1884-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 39 աշակերտ։ 1885-ին փակվել է, վերաբացվել է 1886-ին։ 1888-ին կոչվել է «Ս. Գևորգյան տղայոց միգասյան ուսումնարան», որտեղ սովորել են ընդամենը 15 երեխա։ Գործել է նաև 1891-ին։ Չգիտենք, գոյություն ունեցե՞լ է մինչև 1896-ը։ Եթե այո, ապա այն ևս կառավարության կողմից փակվել է այդ կամ հաջորդ երկու տարիներին։ Վերաբացվել է 1907-ին՝ լինելով 3 բաժանմունքով երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում սովորել են 45 հոգի (14 աղջիկ)։ 1913—14 ուս. տարում ևս ունեցել է 45 աշակերտ։

«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 138; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 60; գ. 149, թ. 19; գ. 343, թ. 31; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 106; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 433, գ. 1, գ. 2890, թ. 128; գ. 3997, թ. 6; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 283, թ. 57։

Արեշ գյուղի ծխական դպրոց

1871-ի ապրիլին «Արարատ» ամսագրում տպագրված մի հոդվածում նշվում է, որ, օրինակ վերցնելով Նուխու գավառի Նիժ գյուղի հաստատակամությունից, հարևան գյուղերի բնակիչները ևս սկսել են հոգ տանել իրենց մոտ դպրոց բացելու մասին։ Եվ ահա, Արեշ գյուղի «...քանի մի ազգասեր ուսման եռանդով վառված ի գլուխ հանեցին իրենց դիտավորությունը դպրոցի բացման համար և արժանացան Վեհափառ Կաթողիկոսի օրհնության...» («Արարատ», 1871, Ա. էջ 58)։

Դժբախտաբար, այս դպրոցի մասին այլ տեղեկություններ չունենք և չգիտենք, թե ինչպիսին է եղել նրա հետագա ճակատագիրը։

Պետք է նշել, որ Նուխու գավառում (և ամբողջ Կովկասում) Արեշ անունով գյուղ չկաներ 1907 և 1915 թվականներին հրապարակված տեղեկատու աղբյուրներում։

Բեգլարքենդ գյուղի ծխական դպրոց

Տարբեր թվականների փաստաթղթերում Բեգլարքենդ գյուղը նշված է Նուխու և Արեշի գավառներում։

Բեգլարքենդ գյուղի ծխական դպրոցը հիմնվել է 1862-ին։ 1873-ին այն գործել է՝ ունենալով 37 աշակերտ։ Գործել է նաև 1881-ին և ունեցել է 42 աշակերտ։

Հավանաբար, մինչև 1885-ը արդեն փակված է եղել, քանի որ չի մտել այդ թվականին փակված հայ դպրոցների ցուցակում։ Վերաբացվել է 1888-ին։ Այդ տարում նրա երեք բաժանմունքներում սովորել են 36 հոգի։ Հետագա տարիների փաստաթղթերում չի հանդիպել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8; գ. 149, թ. 142;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 1585, թ. 49;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 106։

Գալբալ (Ղալբա՞լ) գյուղի ծխական դպրոց

Էջմիածնի սինոդի կողմից 1873-ին կազմված և Կովկասի փոխարքայությանը ներկայացված հայ դպրոցների ցուցակում նշված է նաև Նուխու գավառի Գալբալ (Ղալբա՞լ) գյուղի ծխական դպրոցը, որին այլ տարիների փաստաթղթերում այլևս չենք հանդիպել։ Հիշյալ թվականին ունեցել է ընդամենը մի ուսուցիչ և 7 աշակերտ։

Մեր ձեռքի տակ եղած տեղեկատու աղբյուրներում Գալբալ (Ղալբալ) անունով գյուղ չկաներ ո՞չ Նուխու գավառում, ո՞չ էլ ամբողջ Կովկասում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8։

Դաշբուլաղ գյուղի ծխական դպրոց

Նուխու գավառի Դաշբուլաղ հայաբնակ գյուղը եղել է ժամանակի ամենախոշոր գյուղերից մեկը։ 1915-ին նրա բնակիչների թիվը հասել է 2630-ի։

Այս գյուղում դեռևս 1873-ին գործել է հայկական ծխական դպրոց՝ ունենալով մի ուսուցիչ և 24 աշակերտ։ 1875-ին նույնպես գործել է։ Հետագա մի շարք տարիների փաստաթղթերում այլևս չի երևում։

1882 թվականի փետրվարին էջմիածնի սինոդի կազմած և Կովկա-

սի ուսումնական շրջանի հոգաբարձությանը ներկայացված հայ դպրոցների ցուցակում նշված է նաև Ղարաբաղի Թեմի Նուխու գավառի Դաշ գյուղի հայկական եկեղեցական ծխական դպրոցը, որն ունեցել է մի ուսուցիչ և 25 աշակերտ։

Տեղեկատու աղբյուրներում Դաշ անունով գյուղ չգտանք ո՛չ Ղարաբաղի Թեմում, ո՛չ էլ ամբողջ Կովկասում։ Մեր կարծիքով, դա նույն Դաշբուլաղ գյուղն է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 49։

Թաղասեր (Թղասեռ) գյուղի ծխական դպրոց

Նախկին Կարյագինի գավառի (Ելիզավետպոլի նահանգ) Թաղասեր (Թղասեռ) գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է նահանգի վարչության կողմից 1914 թվականին կազմված և Պետերբուրգ ուղարկված մի տեղեկագրում։ Այդ տարում դպրոցն ունեցել է մի ուսուցիչ և 35 աշակերտ։

Հավանաբար այդ կամ նախորդ տարում էլ հիմնվել է, քանի որ դրանից առաջ եղած փաստաթղթերում չի երևում։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61։

Խոշկաշեն Անապատի (գյուղի) ծխական դպրոց

1870 թվականին գործնական քայլեր են կատարվել Նուխու հաջորդության մեջ եղած Խոշկաշեն հայաբնակ գյուղում կենտրոնական ծխական դպրոց բացելու համար։

«Արարատ» ամսագիրը հաղորդել է, որ Նուխու հաջորդության փոխանորդ Արիստակես վարդապետի հորդորանքով Խոշկաշեն գյուղի ժողովուրդը շտեսնված եռանդով ձեռնամուխ է եղել իրենց գյուղի դպրոցի շենքի կառուցմանը՝ միայն մեկ օրում փոխադրելով այնտեղ «յոթ հարյուր սայլ քար և կիսով շափ ավազ և այլ կարևոր նյութեր...»։

Նշանակում է մինչ այդ դպրոցը գործել է՝ սպասարկելով նաև հարևան գյուղերի երեխաներին, կամ էլ բացվել է նույն՝ 1870 թվականին։ Եթե կենտրոնական դպրոցի համար հատուկ շենք է կառուցվել, ապա այն պետք է երկար տարիներ գործած լինի։

Չգիտենք, թե ինչո՞ւ այս դպրոցը չի երևում հետագա տարիների փաստաթղթերում։

«Արարատ», 1870, էջ 244—245։

Կախ-Ավանի հայկական արական դպրոց

Տարբեր աղբյուրներում Կախ-Ավանը ցույց է տրված տարբեր գավառներում (Նուխու, Արգվինի, Զանգեզուրի)։ Մենք այն թողել ենք Նուխու գավառի մեջ։

«Մեղու Հայաստանի» լրագիրը 1885-ի սկզբներին գրել է, որ Կախ (Կախ-Ավան) գյուղում ապրում են գաղթական հայեր, և այնտեղի քահանա Հովհաննեսը եկեղեցու բակում գտնվող մի անչափահաս երեխաներին ուսուցանում է մայրենի լեզու։ Նա Թիֆլիսից ստացել է դասագրքեր և գրենական պիտույքներ։

Հավանաբար այս դպրոցը 90-ական թվականներին գործել է, քանի որ գյուղի հասարակությունը այդ ժամանակ բաց է արել նաև օրիորդաց դպրոց։ Անկասկած, այն փակվել է հայկական բոլոր դպրոցների հետ միասին և վերաբացվել 1906-ին։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք՝ 82 աշակերտով (24 աղջիկ), 1914-ին՝ 4 ուսուցիչ, 55 աշակերտ։

«Մեղու Հայաստանի», 1885, № 7;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 165, թ. 16; գ. 543, թ. 30; գ. 182, թ. 14—23; գ. 952, թ. 203;
«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 84, 1909, № 8—9, էջ 141, 1911, № 9—10, էջ 32։

Կախ գյուղի հայկական օրիորդաց Ս. Մարիամյան դպրոց

1894 թվականի հունվարին Կախ գյուղի հասարակության որոշմամբ բացվել է այդ գյուղի Ս. Մարիամյան օրիորդական ծխական դպրոցը, որը, անկասկած, 1896 կամ 1897 թվականներին փակվել է կառավարության կողմից։ Վերաբացվել է, հավանաբար, 1906-ին՝ տեղի արական դպրոցին միացած։ Արական դպրոցում 1908—09 ուս. տարում սովորել են 24 աղջիկներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 165, թ. 16, գ. 543, թ. 30, գ. 182, թ. 14—23։

Կենդոկ գյուղի ծխական դպրոց

Արեշի գավառի Կենդոկ գյուղի հայկական եկեղեցական-ծխական դպրոցի հիմնադրման թվականը մեզ անհայտ է։ Գիտենք միայն, որ 1914-ի կեսերին այն գործել է՝ ունենալով մի ուսուցիչ և 37 աշակերտ։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 57։

Կեմրակուշ գյուղի ծխական դպրոց

Նախկին Կարյագինի գավառի Կեմրակուշ գյուղի հայկական ծխական դպրոցը նույնպես հիշատակված է Ելիզավետպոլի նահանգական վարչության կողմից 1914-ին կազմված և Պետերբուրգ ուղարկված տեղեկագրում։ Ունեցել է մի ուսուցիչ և 20 աշակերտ։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 130, գ. 283, թ. 58։

Հադրութ գյուղի (Կարյագինի գավառ) Ս. Թարգմանիչների միդասյան դպրոց

Հադրութի դպրոցի համառոտ պատմությունը գրի է առնված 1913-ին նույն դպրոցի ուսուցիչ Ս. Տեր-Գասպարյանի կողմից (տե՛ս «Նոր դրպրոց», 1913, №№ 3 և 5)։ Նա նշում է, որ Հադրութցիների մոտ ուսման ձգտումը վազուց է եղել, սակայն «այդ կարիքը բավարարել են զանազան տիրացուները իրենց խալիֆայական ուսումնարաններով...»։ Այդ գյուղում կանոնավոր դպրոցի հիմք է դրել Հովհաննես Տեր-Գրիգորյանը (հետագայում՝ վարդապետ), 1879-ին։ Դա եղել է եկեղեցական-ծխական արական դպրոց, որի առաջին ուսուցիչն է եղել հայտնի Ալեքսանդր Աբրահամյանը։ Աշակերտների թիվը հասել է 60-ի (մեծ մասը Հադրութից, մի քանիսն էլ հարևան գյուղերից)։ Դպրոցի երկու բաժանմունքներում ուսուցանվել են հայոց լեզու, ռուսաց լեզու, կրոն, թվաբանություն, երգ, գծագրություն և վայելչագրություն։ Հետո ավելանում է նաև 3-րդ բաժանմունքը, ուր թվարկված առարկաներից բացի, անցնում են նաև հայոց պատմություն։ Դպրոցը սեփական շենք չի ունեցել, տեղափոխվել է տնից տուն, 1884-ի վերջերին փակվել է և վերաբացվել 1886-ին։ 1888—89 ուս. տարում ունեցել է 60 աշակերտ՝ իր 3 բաժանմունքներում։ 1896-ին նորից է փակվել։ Նրա փոխարեն շարունակել է գործել 1881-ից Հադրութում բացված պետական երկդասյան (6-ամյա) դպրոցը։ Միասկան դպրոցը վերաբացվել է 1906-ի փետրվարին՝ ունենալով 4. բաժանմունքում 34 աշակերտ (շրջանի 9 գյուղերից)։ 1908—09 ուս. տարում աշակերտների թիվը հասնում է 87-ի։ 1909—10 ուս. տարվանից տղաների և աղջիկների դպրոցները միանում են, և մացվում է խառը ուսուցում։ 1911—12 ուս. տարում եղել է երկդասյան դպրոց, ուր սովորել են 60 տղա, 104 աղջիկ։ 25 տարվա ընթացքում (1879—1912 թթ., չհաշված փակված տարիները) դպրոցում աշխատել են 25 ուսուցիչ և 12 ուսուցչուհի (37 հոգի), սովորել են 480 տղա և 350 աղջիկ։ 1913-ին

դպրոցի համար կառուցվել է նոր շենք՝ «Հին հանդստարան» կոչվող հողամասի վրա։ 1915-ին ունեցել է 180 աշակերտ։

«Նոր դպրոց», 1913, № 3, էջ 65—71; № 5, էջ 54—62; «Վեհ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 101; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 12; գ. 492, թ. 122; «Աբրահամ», 1913, № 4, էջ 301։

Հադրութի Մարիամյան օրիորդաց դպրոց

Հիմնվել է 1890-ի սեպտեմբերին։ Առաջին ուսուցչուհին է եղել Շուշու Մարիամյան դպրոցն ավարտած օրիորդ Հ. Մալխասյանը։ Երկու միացյալ բաժանմունքներում սովորել են 50 աղջիկներ։ Ուսումնական առարկաները նույնն են եղել, ինչ տղաների դպրոցում. ավելացել է միայն ձեռագործը։ Այդ դպրոցը հաճախել են նաև շրջակա գյուղերից աղջիկներ։ 1893—94 ուս. տարվանից դարձել է երկդասյան դպրոց՝ 4 բաժանմունքով (հաջորդ տարին ունեցել է 5 բաժանմունք)։ 1896-ին նորից փակվել է, իսկ նրա փոխարեն բացվել է աղջիկների պետական դպրոց։ Աղջիկների հայկական դպրոցը վերաբացվել է 1906 թ. հունվարին, որպես միդասյան դպրոց (3 բաժանմունքով)։ 1907—08 ուս. տարում ունենում է 4 բաժանմունք, որոնցում սովորում են 114 աղջիկներ։ 1908—09 ուս. տարում երկդասյան էր։ 1909—10 ուս. տարվանից տղաների ու աղջիկների դպրոցների որոշ խմբեր միացվում են, և անց է կացվում խառն ուսուցում։ Հետագայում միացվում են բոլոր խմբերը։

«Աբրահամ», 1890, № 12, էջ 696; 1894, № 7, էջ 227; «Նոր դպրոց», 1913, № 3, էջ 65—71; № 5, էջ 54—62;

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 122, թ. 1; գ. 543, թ. 13; գ. 492, թ. 122 և 201; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 17, գ. 865, թ. 73։

Հավարիկ գյուղի ծխական դպրոց

Նուխու փոխանորդ Աբստակես վարդապետի հորդորանքով Արեշի գավառի հայկական գյուղերում 1870-ին կազմվել է դպրոցական ընկերություն, որը որոշել է Հավարիկ գյուղում բաց անել եկեղեցական-ծխական դպրոց՝ ընդգրկելով նրանում երեխաներ հարևան բոլոր գյուղերից։ Դպրոցը նույն տարում բացվել է։ Պահվել է նշված ընկերության հաշվին 1873-ին ունեցել է 10 աշակերտ։

Հետագայում այս դպրոցը փակվել է՝ վերաբացվելով 1888-ին՝ Քյանդակ, Հավարիկ և Մաղրզա գյուղերի համայնքների համախոս վճռով՝ որպես կենտրոնական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 3; գ. 53, թ. 6, գ. 149, թ. 15։

Ղայաբաշի գյուղի ծխական դպրոց

Նուխու հաջորդության Արեշի գավառի հայաբնակ Ղայաբաշին եղել է ժամանակի ամենախոշոր գյուղերից մեկը։ Անցած դարի 70-ական թվականներին նշվել է, որ այն «բազմամարդ գյուղ» է։ 1915-ին այդ գյուղն ունեցել է 3138 բնակիչ։ Այն գտնվել է իր շրջակա մի շարք հայկական գյուղերի կենտրոնում։ Այդ պատճառով էլ դեռևս 1869-ին որոշվել է Ղայաբաշի գյուղում բացել մի կենտրոնական դպրոց, որը պետք է սպասարկեր նաև հարևան գյուղերի երեխաներին։ Հիմքեր կան ենթադրելու, որ այդ դպրոցը 1870-ին բացվել է, քանի որ նրա բացման համար ձեռնարկվել և իրագործվել են մի շարք գործնական միջոցառումներ։

Ինչպես երևում է, հետագայում այս դպրոցը փակվել է և վերաբացվել 1887-ին, որը և սխալմամբ նրա հիմնադրման տարեթիվն է համարվել։

1888—89 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 59 աշակերտ, կոչվել է «Ս. Ներսիսյան տղայոց միջնակարգ դպրոց»։ 1891-ին գործել է որպես միդասյան արական դպրոց։ 1896-ին փակված հայ դպրոցների ցուցակներում չկա։ 1906-ին նորից է բացվել։ 1908-ին ունեցել է 1 բաժանմունք և 45 աշակերտ (11 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 149, թ. 68; գ. 543, թ. 32; գ. 182, թ. 14—23; գ. 492, թ. 210; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 107;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 8։

Ճալեթի վանքի, ապա՝ Ճալեթ գյուղի ծխական դպրոց

Նուխու գավառի Ճալեթ գյուղի մոտ է գտնվել նույնանուն վանքը (Ճալեթի վանք), որտեղ դեռևս 1830-ական թվականներին դպրոց է գործել։ Չգիտենք՝ կարողացե՞լ է արդյոք այդ դպրոցը անընդմեջ իր գոյությունը պահպանել, բայց գիտենք, որ Ճալեթի վանքում 1873-ին վանական դպրոց է գործել։ Ունեցել է ընդամենը 17 աշակերտ։ Այն գոյություն է ունեցել նաև 1884-ին, իսկ 1885-ին փակվել է։

Հետագա ավելի քան երկու տասնամյակների վերաբերյալ տեղեկություններ չունենք։ Հայտնի է, որ 1908-ին այն նորից է բացվել, այս անգամ արդեն որպես Ճալեթ գյուղի միդասյան երկսեռ դպրոց։ Ունեցել է 70 աշակերտ (10 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8; գ. 50, թ. 30; գ. 543, թ. 29; գ. 182, թ. 14—23;
Լեռ. «Ղաբաբաղի թեմական դպրոցի պատմություն», էջ 182։

Մարզուգի գյուղի ծխական դպրոց

Նախկին Արեշի գավառի Մարզուգի գյուղի հայկական եկեղեցական ծխական դպրոցի հիմնադրման թվականը նույնպես մեզ անհայտ է։ Հայտնի է միայն, որ 1914-ին այն գործել է՝ ունենալով մի ուսուցիչ և 23 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 150, գ. 283, թ. 57։

Մեջիլիս գյուղի ծխական դպրոց

Նուխու գավառի Մեջիլիս գյուղի ծխական դպրոցը 1873-ին գործել է՝ ունենալով ընդամենը 6 աշակերտ։ Այլ տարիների փաստաթղթերում այդ դպրոցը այլևս չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8։

Նեմեթապատ (Նամեթաբադ) գյուղի ծխական դպրոց

Արեշի գավառի Նեմեթապատ (Նամեթաբադ) գյուղի ծխական դպրոցը 1873-ին գործել է՝ ունենալով 11 աշակերտ։ Գործել է նաև 1875-ին։ Հետագա տարիների փաստաթղթերում այլևս չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8։

Նիժ (Նաև Նի՛ջս) գյուղի ծխական դպրոց

Նուխու գավառի հայաբնակ Նիժ գյուղում, ինչպես պատմում է Լեռն, ծխական դպրոց բացելու փորձ է արվել դեռևս 1858-ին։ Սակայն, դժբախտաբար, ինչ-ինչ պատճառներով այն խափանվել է։

Նիժ գյուղի ծխական դպրոցը հիմնվել է 1868-ին կամ 1869-ին՝ Աբրամակես վարդապետի և տեղացի Գալուստ Յուզբաշյու ջանքերով՝ «ուտիախաս մանկանց դաստիարակության համար»։

Ինչպես երևում է, ուտիախաս հայ բնակչության մեջ կրթության տարածումը մեծ դիմադրության է հանդիպել, և ծնողները դժվարությամբ են իրենց երեխաներին դպրոց ուղարկել։ Հիմնականում դրանով պետք է բացատրել այն փաստը, որ Նիժ գյուղի ծխական դպրոցը 1873-ին ունեցել է միայն 18 աշակերտ, իսկ 1877-ին՝ 21 աշակերտ։

Այդ դպրոցը ևս 1885-ին փակվել է՝ վերաբացվելով 1886-ին։ 1888-ին կոչվել է «Նիժ գյուղի Ս. Մեսրոպյան տղայոց միդասյան ուսումնարան», ուր սովորել են 25 տղաներ։ 1895-ին գործել է, իսկ 1896-ին նորից է փակվել։ Վերաբացվել է 9—10 տարի հետո՝ 1905-ին։ 1908—09 ուս.

տարում եղել է երկդասյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 287 տղաներ և աղջիկներ։ Գործել է նաև 1911 ու հետագա տարիներին։ 1914-ին ունեցել է 7 ուսուցիչ և 250 աշակերտ։

Աղ. «Գասմ. Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի», 1914, էջ 223; «Արարատ», 1869, Գ. էջ 81—82; 1870, էջ 141; 1878, ԺԲ, էջ 458; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8; գ. 50, թ. 68; գ. 199, թ. 17—23; գ. 543, թ. 30; գ. 149, թ. 10; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 105; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 2890, թ. 128; ֆ. 12, գ. 865, թ. 44; «Նոր դպրոց», 1911, № 31—32, էջ 31։

Նիժ գյուղի աղջիկների դպրոց

1895-ի օգոստոսին կաթողիկոսը թույլ է տվել Նիժ գյուղում բաց անել աղջիկների դպրոց, որը կարողացել է գործել ընդամենը մի քանի ամիս։ Այն ևս փակվել է ցարական կառավարության կողմից՝ վերաբացվելով 10—12 տարի հետո՝ տեղի արական դպրոցի հետ միացած։

«Արարատ», 1895, № 9, էջ 265։

Նուխու արական հոգևոր դպրոց

Ըստ Լեոյի՝ այս դպրոցը պետք է հիմնված լիներ 1838-ին՝ Շուշու թեմական դպրոցի հետ միաժամանակ։ Սկզբում այն եղել է ծխական, իսկ հետո, ինչպես երևում է, դարձել է հոգևոր դպրոց։ Դա, հավանաբար, տեղի է ունեցել 1860-ականի սկզբներին, քանի որ «Արարատ» ամսագիրը 1870-ի ԺԲ համարում գրել է, թե «Հոգևոր դպրոցը տասն տարիից ի վեր շարունակվում է անընդհատ...» (էջ 305)։

Ըստ երևույթին Նուխու հոգևոր դպրոցը գտնվել է համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններում և կանոնավոր վիճակում, քան գավառի մյուս դպրոցները։ Այն 1873-ին ունեցել է 4 ուսուցիչ և 114 աշակերտ։ 1884-ին աշակերտների թիվը հասել է 224-ի։ 1885-ին փակվել է հայկական բոլոր դպրոցների հետ միասին՝ վերաբացվելով 1886-ին։ Վերաբացումից հետո աշակերտների թիվը նվազել է՝ 1888-ին իջնելով 144-ի։

1891-ին եղել է եռդասյան դպրոց, բայց 1895-ին նորից իջել է երկդասյանի։ Կարծում ենք պատճառն այն է, որ ցարական կառավարությունը հայերին արգելում էր մի և երկդասյան դպրոցներից ավելի բարձր տիպի դպրոցներ ունենալը։

Դպրոցը 1896-ին նորից է փակվել, վերաբացվելով 10 տարի հետո՝ 1905-ին։ 1908—09 ուս. տարում եղել է երկդասյան արական դպրոց՝ 4 հիմնական և երկու զուգընթաց բաժանմունքներով, որոնցում սովորել

են 239 հոգի։ 1910-ին ունեցել է նաև 6-րդ բաժանմունք և 10 ուսուցիչ (աղջիկների դպրոցի հետ միասին)։ Գործել է նաև հետագա տարիներին։

«Արարատ», 1870, ԺԲ, էջ 305; Լեո «Գասմ. Ղարաբաղի թեմական դպրոցի», 1914, էջ 225; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 44; գ. 3997, թ. 6; ֆ. 422, գ. 511, թ. 21—22; գ. 2018, թ. 32; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 31, թ. 15; գ. 37, թ. 8; գ. 50, թ. 60; գ. 199, թ. 17—23; գ. 543, թ. 27; գ. 492, թ. 201; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 104; «Նոր դպրոց», 1910, № 8—9, էջ 110—111։

Նուխու արական ծխական դպրոց

Բացվել է, հավանաբար, 1868-ին։ 1873-ին գործել է՝ ունենալով մեկ ուսուցիչ, 27 աշակերտ։ 1874-ին, ըստ վիճակագրական տեղեկագրի, Նուխի քաղաքում ցույց է տրված երկու արական ծխական դպրոց, որոնցում սովորել են 118 տղաներ։ Դրանցից մեկը այսպես կոչված հոգևոր դպրոցն էր, որի մասին արդեն խոսվեց, իսկ մյուսը՝ ծխական դպրոցը, որի հետագա գոյության մասին տպագիր և ձեռագիր փաստաթղթերում այլևս ոչ մի հիշատակություն չկա։ Կարծում ենք, որ այն փակվել է, կամ, ավելի ճիշտ, միացել է տեղի արական հոգևոր դպրոցին։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8; «Արարատ», 1869, № 4, էջ 82; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 138։

Նուխու Ս. Մարիամյան օրիորդաց միջնակարգ դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1873-ին գործել է՝ ունենալով 18 աշակերտուհի, 1875-ին նույնպես գործել է։ 1881-ին ունեցել է 5 ուսուցիչ, 33 աշակերտուհի, 1884-ին՝ երկու դասարան, 1 ուսուցիչ և 82 աշակերտուհի։ 1885-ին փակվել է։ 1888-ին եղել է երկդասյան դպրոց՝ 4 բաժանմունքով, ունեցել է 67 աշակերտուհի։ 1891-ին եղել է շրջդասյան միջնակարգ դպրոց, 1896-ին դարձյալ փակվել է, 1905-ին վերաբացվել։ 1908—09 ուս. տարում եղել է երկդասյան իգական դպրոց՝ 5 հիմնական և 2 զուգընթաց բաժանմունքներով։ Ունեցել է 355 աշակերտուհի։

Այս դպրոցում աշխատել է վաստակաշատ ուսուցիչ Արամ Տոնյանը։

«Դպրոց», 1875—76, № 4, էջ 138; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8; գ. 50, թ. 60; գ. 199, թ. 17—23; գ. 543, թ. 27; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 103; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 1, գ. 3997, թ. 6; գ. 1555, թ. 52։

Զաղբենդ գյուղի ծխական դպրոց

Ըստ թեմական տեսչի կազմած մի տեղեկագրի, այս դպրոցը բացվել է 1908-ին՝ ունենալով 1 բաժանմունք և 45 աշակերտ (25 աղջիկ)։ 1909-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 32; «Նոր դպրոց», 1909, № 6—7, էջ 142։

Ջանաղրուլաղ գյուղի ծխական դպրոց

Արխիվային փաստաթղթերում Ջանաղրուլաղ հայաբնակ գյուղը ցույց է տրված ինչպես Նուխու, այնպես էլ Արեշի գավառներում։ Այդ գյուղում 1873-ին գործել է հայկական ծխական դպրոց՝ 7 աշակերտով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8։

Սուր գյուղի ծխական դպրոց

Ելիզավետպոլի նահանգական վարչության կողմից 1914 թ. կազմված և Պետերբուրգ ուղարկված տեղեկագրում, ուր թվարկված են նահանգում գործած բոլոր հայ լուսավորչական եկեղեցական-ծխական դպրոցները, նշված է նաև Կարյագինի գավառի Սուր գյուղի ծխական դպրոցը՝ մի ուսուցչով և 44 աշակերտով։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 150, գ. 283, թ. 56։

Սուլթան Նուխի գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1886-ի հոկտեմբերին՝ լինելով արական միդասյան դպրոց։ 1888—89 ուս. տարում ունեցել է 1 ուսուցիչ և 31 աշակերտ։ 1895-ին գործել է, իսկ 1896-ին՝ փակվել։ Վերաբացվել է երկար տարիներ հետո՝ 1914-ին։ Հավանաբար մինչ այդ Սուլթան Նուխի գյուղում բացված է եղել պետական դպրոց։ 1914-ին ունեցել է մի ուսուցիչ, 34 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 149, թ. 15; գ. 199, թ. 17—23; «Մուրճ», 1890, № 6, էջ 1024; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 105; «Արարատ», 1914, էջ 201;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 3997, թ. 7; ֆ. 12, գ. 865, թ. 44 և 73։

Վարդաշեն գյուղի արական ծխական դպրոց

Հայ եկեղեցական-ծխական հնագույն դպրոցներից մեկն է։ Նրա հիմնադրման թվականը մեզ անհայտ է։ Գիտենք սակայն, որ 1861-ին

գործել է։ Այդ ժամանակ այնտեղ ավանդվել են հայոց լեզու, սրբազան պատմություն, եկեղեցական արարողություն և վայելչագրություն։

1873-ին ունեցել է 78 աշակերտ, որ մի պատկառելի թիվ է այն ժամանակվա գյուղական դպրոցի համար։ 1880-ական թվականներին այն եղել է արդեն երկսեռ դպրոց։ 1884-ին ունեցել է 65 աշակերտ, որոնցից 9 աղջիկ։ 1885-ին փակվել է, իսկ 1886-ին վերաբացվել որպես արական միդասյան դպրոց՝ Ս. Սահակյան անունով։ Խիստ պակասել է նաև սովորող տղաների թիվը՝ 47։ 1896-ին նորից փակվել է՝ վերաբացվելով 1905-ին՝ որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք, որոնցում սովորել են 66 տղա և 42 աղջիկ, 1912-ին դպրոցի համար կառուցվել է նոր շենք։ Գործել է նաև 1916-ին և հետագա տարիներին։

Հմ. «Վարաբաղի թեմական դպրոցի պատմություն», էջ 279; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 44; ֆ. 422, գ. 511, թ. 21—22; գ. 3997, թ. 6; գ. 2890, թ. 128; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 8; գ. 43, թ. 8; գ. 50, թ. 60; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 23; գ. 543, թ. 30 «Արարատ», 1878, ԺԲ, էջ 458; 1916, էջ 628; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 104; «Նոր դպրոց», 1912, №17—18, էջ 50։

Վարդաշեն գյուղի օրիորդաց դպրոց

Կրթասեր վարդաշենցիները չեն բավարարվել միայն արական դպրոցով։ Գրիգորիս վարդապետի հորդորանքով և օգնությամբ նրանք իրենց գյուղում 1878-ին բացել են նաև աղջիկների դպրոց, որն այն ժամանակվա հայ գյուղի համար մի բացառիկ երևույթ էր։

Այս դպրոցը մի քանի տարի իր գոյությունը պահպանելուց հետո, ի վերջո, միացվել է արական դպրոցին։ Արդեն նշել ենք, որ 1884-ին Վարդաշենում գործել է երկսեռ դպրոց, ուր սովորել են նաև 9 աղջիկ։ Գյուղական երկսեռ դպրոցը նույնպես այն ժամանակվա պայմաններում մի արտակարգ երևույթ էր, որը վկայում է վարդաշենցիների առաջադիմության մասին։

Հետագայում վարդաշենցիները անհրաժեշտ են համարել նորից բացել աղջիկների առանձին դպրոց, որ կարող էին սովորել ավելի մեծ թվով աղջիկներ, քան կային արական դպրոցում։ Կաթողիկոսը 1895-ի սեպտեմբերին թույլ է տվել բաց անել այդ դպրոցը, բայց մի քանի ամիս հետո կառավարությունը փակել է այն։

Հայ դպրոցների վերաբացումից հետո Վարդաշենի աղջիկները նորից սովորել են տղաների հետ միասին։ 1908—09 ուս. տարում դպրոցի 108 աշակերտներից 42-ը աղջիկներ էին։ Նույնպիսի տվյալներ կան նաև 1911—12 ուս. տարվա վերաբերյալ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 22, թ. 154; «Արարատ», 1895, № 9, էջ 365, մեջբերված տողերը նշված են Վարդաշենի արական դպրոցի կապակցությամբ։

Քյանդակ գյուղի ծխական դպրոց

Դեռևս 1870 թվականից Քյանդակ գյուղի երեխաները այցելել են հարևան Հավարիկ գյուղի ծխական դպրոցը։ Քյանդակ գյուղի հասարակությունը մասնակցել է Հավարիկի դպրոցի բացմանն ու պահպանմանը։ Այն եղել է մի շարք գյուղերի կենտրոնական դպրոց։

Քյանդակի ծխական դպրոցը բացվել է 1908-ին՝ ունենալով 2 բաժանմունք, 64 աշակերտ (7 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայոց մշակութային միությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 31; գ. 149, թ. 15;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 50; «Նոր դպրոց», 1908, № 4, էջ 83։

Քյուրդաղ (Դուդուկչի) գյուղի ծխական դպրոց

Ելիզավետպոլի նահանգի Կարյագինի գավառի Քյուրդաղ (Դուդուկչի) գյուղում 1906-ին բացվել է հայկական եկեղեցական-ծխական դպրոց։ Հետագա տարիների փաստաթղթերում այդ գյուղի դպրոցը ցույց չի տրվում։

ՎՍՀՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 7։

ՇՈՒՇՎԱ ԳԱՎԱՌ

Ազոխ գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցը բացվել է 1908-ին՝ ունենալով 1 բաժանմունք և 49 աշակերտ (12 աղջիկ)։ Պահվել է Բաքվի հայոց մշակութային միության (ՀԿՄ) նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 18; գ. 182, թ. 14—23;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 189, գ. 268, թ. 50։

Ամարաս վանքի դպրոց

Լեոն նշում է, որ Վարանդա գավառակի Ամարասի վանքի դպրոցը հիմնվել է 1857-ին։ Այն գործել է նաև 1861-ին, բայց երկար կյանք չի ունեցել և 1860-ական թվականների կեսերին արդեն չի գործել։ Այս վանքը գտնվում է Ղարաբաղի Սոս գյուղի մոտ, որտեղ շատ տաճամյակներ հետո միայն ստեղծվել է եկեղեցական-ծխական դպրոց։

Լեո, «Պատմություն Ղարաբաղի թեմական դպրոցի», էջեր 156, 226—227, 275, 277 և այլն։

Ավետարանոց (Հինախչի) գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 25 աշակերտ։ Երկար կյանք չի ունեցել։ Թեմական տեսչի մի տեղեկագրում նշված է, որ այս դպրոցը գոյություն է ունեցել 1890-ական թվականներին։ 1895-ին «Հայտնաբերվելը» է իշխանությունների կողմից և հաջորդ տարում փակվել։ Վերաբացվել է 1906-ին, որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 28 աշակերտ (9 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6; գ. 543, թ. 11; գ. 492, թ. 200;
ՎՍՀՀ ՊԿՊԱ, ֆ. 244, գ. 8717, թ. 7; ֆ. 12, ց. 7, գ. 1090, թ. 39 և 43։

Ավտուռ (Թաքիր) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1906-ին՝ լինելով միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք՝ 54 աշակերտով (22 աղջիկ)։ Պահվել է Բաքվի հայ մշակութային միության նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 4; «Նոր դպրոց», 1908, № 4, էջ 83։

Առաքել գյուղի ծխական դպրոց

Թեմական տեսչի մի տեղեկագրի համաձայն այս դպրոցը պետք է հիմնված լինի 1890-ի սկզբներին, սակայն չգիտենք, թե ինչո՞ւ չի մտել 1896—1898 թվականներին փակված հայ դպրոցների ցուցակներում։

Բայց այդ դպրոցի փակված լինելու փաստը հաստատվում է նրանով, որ այն 1906-ին վերաբացվել է։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 40 աշակերտ (8 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 15; գ. 182, թ. 14—23; գ. 402, թ. 201;
ՎՍՀՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 7։

Աշան (Գեշան) գյուղի ծխական դպրոց

Աշան գյուղում 1873-ին գործել է ծխական դպրոց՝ ունենալով 31 աշակերտ։ Չենք կարող ասել, այն փակվել է, թե ոչ։ Գիտենք, որ 1884-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 30 աշակերտ։ 1885-ին փակվել է։

1886-ի սեպտեմբերին Ղարաբաղի Աշան, Ղզալա, Սպիտակ և Եմիշյան գյուղերի բնակիչները ընդհանուր վճիռ են կայացրել Աշան գյուղում կենտրոնական արական միդասյան ծխական դպրոց բացելու մասին և խնդրել են կաթողիկոսի թույլտվությունը։ Նույն թվականին դպրոցը բացվել է։ Սակայն տասը տարի անց այն նորից է փակվել և վերաբաց-

վել է 1907-ին, որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք, որոնցում սովորել են 38 տղա և 15 աղջիկ։ 1915-ին ունեցել է 2 ուսուցիչ և 82 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6; գ. 50, թ. 60; գ. 149, թ. 59; գ. 543, թ. 6; գ. 182, թ. 14—23; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 150, գ. 283, թ. 58։

Բալլուջա գյուղի ծխական դպրոց

Ղարաբաղի խաչեն գավառի Բալլուջա (Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքում՝ Պալլուջա) գյուղում ծխական դպրոց է գործել դեռևս 1873-ին՝ ունենալով մի ուսուցիչ և 18 աշակերտ։

Հետագա շատ տարիների փաստաթղթերում այդ դպրոցն այլևս չի երևում։

Հայտնի է, որ Բալլուջա գյուղում նորից ծխական դպրոց է բացվել 1890-ին։ Գյուղի հասարակության և թեմական առաջնորդի խնդրանքով կաթողիկոսը հատուկ կոնդակով թույլ է տվել բացել այդ դպրոցը, որը գործել է մինչև 1895 թվականը։ Հայ մյուս դպրոցների հետ միասին կառավարությունը փակել է նաև այդ դպրոցը։ Այն վերաբացվել է մեծ ուշացումով՝ 1907-ին՝ բաթվարնակ Աբրահամ Նասիբյանի միջոցներով։ Այդ առիթով կաթողիկոս Երիմյան Հայրիկը Նասիբյանի անունով ուղարկել է օրհնության կոնդակ։

Եղել է երկսեռ միդասյան դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 95 աշակերտ (15 աղջիկ)։ 1915-ին՝ 82 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 19; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 1090, թ. 43; «Արարատ», 1890, № 12, էջ 698; 1907, № 9, էջ 749; Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 154; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 150, գ. 283, թ. 58; «Նոր դպրոց», 1908, № 4, էջ 83։

Բանզուր գյուղի ծխական դպրոց

Արցախի Բանզուր գյուղի դպրոցը 1873-ին գործել է՝ ունենալով մի ուսուցիչ և 40 աշակերտ։ Հավանաբար երկար կյանք չի ունեցել, որովհետև ցույց չի տրված հետագա շատ տարիների փաստաթղթերում։ Հայտնի է, որ 1895-ին Բանզուր գյուղում նորից է բացվել ծխական միդասյան դպրոց՝ արժանանալով կաթողիկոս Երիմյանի հատուկ օրհնության կոնդակին։

1896-ին փակվել է և վերաբացվել 1906-ին՝ որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 78 աշակերտ (21 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 7; գ. 543, թ. 14; գ. 182, թ. 14—23; «Արարատ», 1895, էջ 444; «Նոր դպրոց», 1909, №6—7, էջ 142։

Գանձասարի վանական դպրոց

Գանձասարի վանքում դպրոց է գործել 19-րդ դարի 20—30-ական թվականներին։ Այդ մասին հիշատակում են Ս. Ջալալյանը՝ «Մեղու Հայաստանի» լրագրի 1856 թվականի համարներում տպագրված իր ճանապարհորդական նոթերում և Լեոն՝ Ղարաբաղի թեմական դպրոցի պատմությանը նվիրված իր գրքում։ Այստեղ պարապել է «Հովսեփ գիտնական վարժապետ-վարդապետ Տեր-Ավագյան Արցախեցին», որի մանկավարժական ձիրքն ու համբավը տարածված են եղել ողջ Ղարաբաղում։

Լեոն, վկայակոչելով Մեսրոպ Թաղիադյանին, նշում է, որ վարդապետ Հովսեփ Տեր-Ավագյանին և սրա աշակերտ Պողոս վարդապետ Ղարաբաղցուն «Շուշու հարուստները բերել էին տվել իրանց տղաներին և աղջիկներին ուսում տալու համար» (էջ 84)։

Հայտնի է, որ Պողոս Ղարաբաղցին աշխատել է նաև Էջմիածնում, ուր նրան աշակերտել է Մեսրոպ Թաղիադյանը, իսկ Թիֆլիսում նրա աշակերտների թվում են եղել Խ. Աբովյանն ու Ս. Նազարյանը։

Ինչպես երևում է, Գանձասարի վանական դպրոցը որոշ ժամանակով փակված է մնացել (հավանաբար հիշյալ «մեծ մանկավարժ» Հովսեփ Տեր-Ավագյանի վախճանվելուց հետո՝ 1847 թ.), իսկ հետագայում վերաբացվել է թեմի առաջնորդ Բաղդասար Ջալալյան միտրոպոլիտի ցանքերով։

Լեոն նշում է, որ վերջին անգամ Գանձասարում վանական դպրոց է բացվել 1857-ին։ Այն «տարրական գրագիտության մի հիմնարկություն էր՝ անխտիր թե հոգևորականների և թե աշխարհականների համար» (էջ 226)։

Այս դպրոցը գործել է նաև 1861-ին, բայց, հավանաբար, երկար կյանք չի ունեցել։ Հետագա տարիների փաստաթղթերում այն չի երևում։

Լեոն, «Ղարաբաղի թեմական դպրոցի պատմություն», էջեր 85, 144, 226, 275, 277 և այլն։ «Մեղու Հայաստանի», 1858, № 17, էջ 131—134։

Գիշի (Կիշի) գյուղի ծխական դպրոց

Գիշի, Հոլոդի և Մուշկապատ գյուղերի հասարակությունների միացյալ վճռով 1888-ին Գիշի գյուղում բացվել է կենտրոնական ծխական դպրոց, որը սակայն 1896—1897 թվականներին փակվել է կառավարության կողմից։ Վերաբացվել է 1907-ին՝ լինելով միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք, որոնցում սո-

վորել են 28 տղա, 27 աղջիկ։ 1915-ին աշակերտների թիվը իջել է 39-ի։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 149, թ. 112; գ. 543, թ. 8; գ. 182, թ. 14—23; Մ. Բաբխուդարյան, «Արցախ», էջ 120;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58։

Գիտշի վանքի դպրոց (Վարանդայի գավառակ)

Լեոն նշում է այս դպրոցի գոյությունը 1860-ական թվականների առաջին տարիներին։ Այն պահել է Առաքել վարդապետ Կոստանցյանը։
Հետագա տարիների վավերագրերում այս դպրոցը չի հիշատակվում։

Լեո, «Զարաբաղի թեմական դպրոցի պատմություն», էջ 275։

Գյուլյաթաղ գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 34 աշակերտ։ Հետագա տարիների փաստաթղթերում մեզ չի հանդիպել։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 7։

Գյուվնեղ (Կյուռեի)-Ճարտար (Արեգդեմ Ճարտար) գյուղի ծխական դպրոց

1884-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 66 աշակերտ։ 1885-ին փակվել է և վերաբացվել 1887-ին։ 1888—89 ուս. տարում կոչվել է Ս. Գրիգորյան տղայոց միգասյան ուսումնարան։ 1894-ին գործել է, իսկ 1896-ին նորից է փակվել, վերաբացվելով 1906-ին, որպես երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 80 աշակերտ (12 աղջիկ), 1915-ին՝ 70 աշակերտ։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 60; գ. 149, թ. 48; գ. 199, թ. 17—23; գ. 543, թ. 9; գ. 182, թ. 14—23; գ. 422, թ. 201; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 101;
ՎՍՀՍ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 7; ֆ. 52, ց. 7, գ. 865, թ. 43; Մ. Բաբխուդարյան, «Արցախ», էջ 117։

Դամիրջիլար (Դամիրչիլար, Զրաղացներ) գյուղի ծխական դպրոց

Բաքվի հայ մշակութային միությունի միջոցներով պահված հայ դպրոցների ցուցակում նշված է նաև Շուշու գավառի Դամիրչիլար գյուղի դպրոցը։ Այդ ցուցակը հրապարակված է «Նոր դպրոց» ամսագրի 1908 թ. № 4-ում (էջ 84)։ Ուրեմն 1908-ին այն գործել է, իսկ ե՞րբ է բացվել, չգիտենք։ Նախորդ տարիների փաստաթղթերում այդ դպրոցը ցույց չի տրված։ Այն չի նշված նաև Արցախ թեմի դպրոցների 1909 թ. ցուցակում։ Պատճառն անհայտ է։

«Նոր դպրոց», 1908, № 4, էջ 84, 1909, № 4, էջ 106։

Դաճրազ և Միրիշանլու գյուղերի ծխական դպրոց

1873-ին գործել է, ունենալով 19 աշակերտ, բայց մինչև ե՞րբ է իր գոյությունը պահպանել, ասել չենք կարող։ Գիտենք, որ այդ դպրոցը նորից բացվել է 1908-ին։ Դպրոցը գտնվել է Դահրազ գյուղում, սակայն նրա ծախսերը հոգացել են նաև հարևան Միրիշանլու գյուղի բնակիչները, որոնց երեխաները նույնպես այդ դպրոցն են հաճախել։
1908—09 ուս. տարում ունեցել է 66 աշակերտ, որոնցից 23 հոգի աղջիկներ։ 1917-ին Միրիշանլու գյուղում ևս բացվել է ծխական դպրոց։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6; գ. 543, թ. 3; «Արարատ», 1917, էջ 678։

Դահրավ (Ղայաբաշի) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1907-ին, որպես միգասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 35 աշակերտ (12 աղջիկ)։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 20։

Դաշբուլաղ գյուղի ծխական դպրոց

Շուշու գավառի Դաշբուլաղ գյուղի (նույնանուն հայաբնակ գյուղ է ունեցել նաև Նուխու գավառը) ծխական դպրոցը հիմնվել է 1888-ին՝ Դաշբուլաղ, Դահրավ, Պարեցիք, Խանձք և Մեհտիշլեն գյուղերի համայնքների միացյալ որոշմամբ և կաթողիկոսի հատուկ կոնդակով։ Եղել է կենտրոնական դպրոց, որ սովորել են վերոհիշյալ գյուղերից եկած երեխաներ։ Առաջին տարին ունեցել է ընդամենը 25 աշակերտ։
Գործել է մինչև 1895 թվականը, այդ տարում ունենալով 26 աշակերտ։ 1896-ին փակվել է կառավարության կողմից։ Հավանաբար նրա փոխարեն բացվել է պետական դպրոց։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 149, թ. 81; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 103; Մ. Բաբխուդարյան, «Արցախ», էջ 159։

Դոնավարզ (Քեշիշքենդ, այժմ՝ Կարմիր գյուղ) գյուղի ծխական դպրոց

Ստույգ հայտնի է, որ Դոնավարզ գյուղի ծխական դպրոցը 1884-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 35 աշակերտ։ 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1888-ին՝ Դոնավարզ, Խաշմազ, Հարավ և Քոռասնի գյուղերի հասարակությունների միացյալ որոշմամբ, որպես կենտրոնական ծխական դպրոց։ 1888—89 ուս. տարում եղել է միդասյան արական դպրոց, ուր սովորել են 43 աշակերտ։ 1894-ին 65 աշակերտներից 60-ը թոշակ են վճարել։ 1895-ի վերջերին Քեշիշքենդ (Դոնավարզ) գյուղի ծխական դպրոցի գոյության մասին հայտնվել է Կովկասի կառավարչապետին, իսկ 1896-ին այն փակվել է։ Վերաբացվել է 1906-ին։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 61 աշակերտ (33 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայոց մշակութային միությունից։ 1915-ին ունեցել է 40 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 201; գ. 50, թ. 60, գ. 143, թ. 138; գ. 543, թ. 11; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 99;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 7, ֆ. 12, ց. 7, գ. 1090, թ. 43; Ս. Բաբխուդարյան, «Արքսախ», էջ 131, ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58։

Երից Մանկանց վանքի դպրոց (Զրարերդի գավառակ)

Լեոն նշում է, որ այս դպրոցը գոյություն է ունեցել 1860-ական թվականների առաջին տարիներին։ Այն պահել է Ներսես վարդապետ Միրզա-Ավագյանը։

«Մեղու Հայաստանի» լրագրի մի հաղորդումից երևում է, որ այդ դպրոցը շարունակել է գործել նաև 80-ական թվականներին։

Հետագա տարիների վավերագրերում այն չի նշված։

Լեո, «Զարարատի թեմական դպրոցի պատմություն», էջ 275;
«Մեղու Հայաստանի», 1885, № 70։

Թաղավարդ (Ներքին) գյուղի արական ծխական դպրոց

1884-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 63 աշակերտ։ 1885-ին փակվել է՝ վերաբացվելով 1888-ին։ 1888—89 ուս. տարում կոչվել է «Ս. Մեսրոպյան տղայոց միդասյան ուսումնարան», ուր սովորել են 30 հոգի։ 1894-ին ունեցել է 40 աշակերտ։ 1896-ին փակվել է, վերաբացվել է 1906-ին, որպես երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 80 աշակերտ (12 աղջիկ)։

Դպրոցը պահվել է մասամբ բարերարների, մասամբ էլ գյուղացիների ծախսերով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 60; գ. 143, թ. 121; գ. 199, թ. 17; թ. 23; գ. 492, թ. 201; գ. 543, թ. 10; գ. 182, թ. 14—23; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 100; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 7; գ. 3997, թ. 7; «Նոր դպրոց», 1909, № 2, էջ 89; Ս. Բաբխուդարյան, «Արքսախ», էջ 89։

Թաղլար գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1881-ին այս գյուղի դպրոցը գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ, 45 աշակերտ։ 1885-ին փակվել է, վերաբացվելով 1886-ին։ 1887—88 ուս. տարում գործել է, հաջորդ ուսումնական տարում իր 3 բաժանմունքներում ունեցել է 50 աշակերտ։ 1896-ին նորից է փակվել՝ վերաբացվելով 1906-ին։ 1907—08 ուս. տարում վեր է ածվել երկդասյան դպրոցի, ուր սովորել են 127 հոգի (17 աղջիկ)։ 1911-ին և հետագա տարիներին նույնպես գործել է։ Պահվել է ԲՀԿ ընկերության նպաստով։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 7; գ. 8717, թ. 8; գ. 1585, թ. 49; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 60; գ. 199, թ. 17—23; գ. 543, թ. 17; գ. 149, թ. 33; գ. 492, թ. 201; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 101; «Մուրճ», 1890, № 7, էջ 1024; «Նոր դպրոց», 1908, № 4, էջ 83, 1911, № 9—10, էջ 32։

Իսեկեցիք գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 12 աշակերտ։ Հետագա տարիների ցուցակներում չի երևում։

Թեմական տեսչի տեղեկագրի համաձայն այն նորից բացվել է 1908-ին՝ ունենալով 3 բաժանմունք և 47 աշակերտ (2 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 7; գ. 543, թ. 18; գ. 782, թ. 14—23;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 52։

Իսպահանջուղ գյուղի ծխական դպրոց

1914-ի հունիսին կազմված պաշտոնական տեղեկագրերում նշված է նաև Շուշու գավառի Իսպահանջուղ (Испаганджук) գյուղի հայկական եկեղեցական-ծխական դպրոցը՝ մի ուսուցչով և 30 աշակերտով։ Համանաբար այդ ժամանակ էլ այն բացվել է, քանի որ ցույց չի տրվում նախորդ տարիների և ոչ մի փաստաթղթում։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 60։

Խածարերդ (Խցարերդ) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1908-ին՝ ունենալով 2 բաժանմունք և 39 աշակերտ (4 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 32; գ. 182, թ. 14—23։

Խանքյանդ ավանի ծխական դպրոց

Այս դպրոցի մասին նույնպես տվյալները հակասական են։ Ըստ «Մուրճ» ամսագրի՝ 1887-ին այն գործել է, իսկ ըստ արխիվային փաստաթղթերի այդ դպրոցը բացվել է 1888-ին՝ Խանքյանդ, Խնածախ, Կարկաժան, Փահլուլ և Ջամիլլա գյուղերի համայնքների միացյալ որոշմամբ։ Կոչվել է «Ս. Գևորգյան տղայոց միդասյան ուսումնարան»։ 1888—89 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք, 1 ուսուցիչ և 30 աշակերտ (ուրեմն պետք է բացված լինի 1886-ից ոչ ուշ)։

Կաթողիկոսը Խանքյանդ գյուղի ծխական դպրոցի հոգաբարձության կազմը հաստատել է 1890-ին։ Դպրոցը 1894-ին ունեցել է 35 աշակերտ։ 1895-ին պատահաբար դուրս է մնացել կառավարության կողմից կազմված հայ դպրոցների ընդհանուր ցուցակից, բայց մի քանի ամիս անց ցարական ոստիկանությունը հայտնաբերել է նաև այս դպրոցը, որը նույնպես արժանացել է հայ մյուս դպրոցների ճակատագրին։

Արժե հիշատակել հետևյալ փաստը։

Խանքյանդ գյուղի հայկական դպրոցը փակելուց հետո, կառավարությունը բանագրավում է շենքը և այնտեղ բաց անում պետական դրպրոց։ Այս դպրոցի ծախսերը պարտադիր կարգով հոգում էին գյուղի բնակիչները, որոնք և ցանկություն են հայտնում, որպեսզի իրենց զավակներին ուսուցանեն հայոց լեզու և կրոն։ Այդ հիման վրա Ղարաբաղի Թեմի հոգևոր առաջնորդը հատուկ նամակով 1901 թ. սեպտեմբերի 27-ին դիմում է պետական դպրոցների տեսչին՝ խնդրելով նշանակել այդ դպրոցում հայոց լեզվի և կրոնի ուսուցիչ։ Խնդիրը մերժվում է։

Խանքյանդի հայկական ծխական դպրոցը վերաբացվել է փակումից 11 տարի անց՝ 1907-ին։ 1908—09 ուս. տարում եղել է միդասյան երկսեռ դպրոց՝ 2 բաժանմունքով։ Դրանցում սովորել են 52 տղա և 20 աղջիկ։ 1914-ին՝ 54 աշակերտ։

«Մուրճ», 1890, № 6, էջ 1024, «Վիճ. անդ. 1888—89 ուս. տարվա», էջ 102; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 1090, թ. 43; «Արարատ», 1890, № 12, էջ 698; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 4, գ. 132, թ. 31, գ. 3, գ. 182, թ. 14—23; գ. 543, թ. 19; գ. 149, թ. 104; Մ.Բարխուդարյան, «Արցախ», էջ 151—152։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 150, գ. 283, թ. 58։

Խանձաձոր (Աղջանքենդ) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1908-ին՝ ունենալով 1 բաժանմունք և 40 աշակերտ (9 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 19, գ. 182, թ. 17—23։

Խաչմազ գյուղի (Շուշու գավառ) ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 27 աշակերտ։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։ Հավանաբար այն փակվել է, քանի որ 1883-ից Խաչմազ գյուղում գործել է պետական դպրոց։

Հայտնի է նաև, որ 1888-ից Դոնավարդ գյուղի ծխական դպրոցը գարձել է կենտրոնական՝ սպասարկելով նաև Խաչմազ, Հարավ և Քոասնի գյուղերի երեխաներին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 45, թ. 7; Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 99—100; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 2018, թ. 21—56։

Խանապատ գյուղի ծխական դպրոց

1884-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 32 աշակերտ։ 1885-ին փակվել է։ Հետագա ավելի քան երկու տասնամյակի մասին տեղեկություններ չունենք։ Գիտենք, որ 1908-ին այն նորից բացվել է, եղել է միդասյան երկսեռ դպրոց՝ 47 աշակերտով (15 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 60; գ. 543, թ. 22; գ. 182, թ. 14—23։

Խնուշինակ (Խունքշինակ) գյուղի ծխական դպրոց

Խնուշինակ գյուղում 1873-ին գործել է ծխական դպրոց, ուր սովորել են 14 երեխաներ։ Հետագա տասնամյակների փաստաթղթերում չի հիշվում։ Սակայն այն հանգամանքը, որ այս դպրոցը 1905-ին նորից է բացվել (այն բանից անմիջապես հետո, երբ ստացվել է հայկական դպրոցների վերաբացման կայսերական թույլտվությունը), մեզ առիթ է տալիս մտածելու, որ Խնուշինակ գյուղի դպրոցը հայ դպրոցների երկրորդ մասսայական փակումից առաջ (1896 թ.) գոյություն է ունեցել։ 1905-ին բացվել է որպես երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 56 աշակերտ (18 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6; գ. 543, թ. 8, գ. 182, թ. 14—23; գ. 492, թ. 200; Մ.Բարխուդարյան, «Արցախ», էջ 118։

Մովատեղ (Զովախիտ, Քոչիզ) գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 21 աշակերտ։ Չգիտենք, մինչև ե՞րբ է պահպանել իր գոյությունը։ Հայտնի է, որ այն նորից բացվել է 1908-ին՝ լինելով միդասյան երկսեռ դպրոց։ Այդ թվականին ունեցել է մի բաժանմունք և 35 աշակերտ (17 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայոց մշակութային միությունից։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6; գ. 543, թ. 10; գ. 182, թ. 14—23։
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 50։

Կաղարծի (Կղայծի) գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 29 աշակերտ։ Չգիտենք, թե մինչև երբ է պահպանել իր գոյությունը։ Հայտնի է, որ այն նորից բացվել է 1906-ին՝ լինելով միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 59 աշակերտ (16 աղջիկ)։ 1915-ին ունեցել է 55 աշակերտ։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6; գ. 543, թ. 7; գ. 182, թ. 14—23, գ. 492, թ. 201; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 7; Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 111; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58։

Կուսապատ գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 18 աշակերտ։ Այն գոյություն է ունեցել մինչև 1880-ի նոյեմբեր ամիսը։ Փակվել է միջոցներ չունենալու պատճառով։ Ըստ երևույթին երկար տարիներ փակ է մնացել, քանի որ չի նշված այդ տարիների ցուցակներում, մանավանդ, որ 1883-ից այնտեղ գործել է պետական դպրոց։ Նախանը 1906-ին նորից է բացվել, իսկ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք՝ 53 աշակերտով (24 աղջիկ)։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 7; գ. 543, թ. 22; գ. 182, թ. 14—23; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 49; գ. 2018, թ. 30։

Հացի գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 20 աշակերտ։ Հավանաբար երկար տարիներ փակ է մնացել և նորից բացվել 1894-ի սեպտեմբերին՝ տիկին Եղիսաբեթ Սարգսյանի միջոցներով։ Կաթողիկոսի թույլտվությունը ստացվել է 1893-ի վերջերին։ Չնայած դրան, ցարական ոստիկանությունը փակել է այդ դպրոցը՝ այն համարելով մասնավոր։

Վերաբացվել է 1906-ին։ 1908—09 ուս. տարում, ունեցել է 3 բաժանմունք և 48 աշակերտ (10 աղջիկ)։ 1911-ին գործել է։ Այդ թվականին համագյուղացի Ջիվանշիր Ղազյանցի միջոցներով դպրոցի համար կառուցվել է նոր շենք։ 1915-ին ունեցել է 44 աշակերտ։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6; գ. 528, թ. 19; գ. 543, թ. 4; «Նոր դպրոց», 1911, № 33—34, էջ 34; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58։

Հղորդի գյուղի ծխական դպրոց

1888—89 ուս. տարում գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 27 աշակերտ։ Հավանաբար այդ թվականին էլ հիմնվել է, որովհետև նախորդ տասնամյակների և 1887—88 ուս. տարվա տեղեկագրերում չի նշված։ Հետագա տարիների փաստաթղթերում չի հանդիպում մինչև 1906 թվականը, երբ այն նորից է բացվել։

Եղել է միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 45 աշակերտ (17 աղջիկ)։

«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 102;
ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 8; գ. 182, թ. 14—23; գ. 492, թ. 201։

Ղալաղշլաղ գյուղի (Շուշու գավառ) ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 28 աշակերտ։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 7;
Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 401։

Ղարաչինար (Աղջա-Ղալա) գյուղի ծխական դպրոց

1871-ին Ղարաչինար գյուղի հասարակությունը դիմել է կաթողիկոսին, խնդրելով կարգադրություն անել իրենց գյուղում բաց անելու հոգևոր ծխական դպրոց։ Հավանաբար, դպրոցն այդ թվականին էլ հիմնվել է։

Հավատի է, որ այն 1873-ին գործել է՝ ունենալով 45 աշակերտ։ Գործել է նաև 1881-ին՝ ունենալով 1 ուսուցիչ և 25 աշակերտ։ Հետագա տասնամյակների տեղեկագրերում ու փաստաթղթերում այլևս չի հիշվում։

«Արարատ», 1871, № 11, էջ 373; ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 7; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 1585, թ. 49;
Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 244։

Ղավախան գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 20 աշակերտ։ Հավանաբար երկար տարիներ փակ է մնացել։ Գիտենք, որ 1906-ին նորից է բացվել՝ լինելով միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 42 աշակերտ (10 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 7; գ. 182, թ. 14—23։

Ղզղալա (Կարաբեկն) գյուղի ծխական դպրոց

1873-ին այստեղ գործել է ծխական դպրոց՝ ունենալով 29 աշակերտ։ 1881-ին նույնպես գործել է՝ ունենալով 25 աշակերտ։ Հետագայում փակվել է։ Մենք տեսանք, որ Ղզղալա գյուղը մասնակցել է Աշան գյուղի կենտրոնական ծխական դպրոցի բացմանն ու պահպանմանը՝ 1886—1896 թվականներին։ Իր սեփական դպրոցը կրկին անգամ նա ունեցել է 1905-ից սկսած։ 1908—09 ուս. տարում այն եղել է միդասյան երկսեռ դպրոց՝ 3 բաժանմունքով, որոնցում սովորել են 40 տղա և 10 աղջիկ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6; գ. 149, թ. 59; գ. 543, թ. 6, գ. 182, թ. 14—23; գ. 492, թ. 201; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 49։

Ղուզե Ճարտար գյուղի ծխական դպրոց

Այս գյուղի ծխական դպրոցի մասին տեղեկություններ կան 1914-ին կազմված պաշտոնական տեղեկագրերում։ Այն կազմվել է իշխանության օրգանների կողմից։ Շուշու գավառի հայկական ծխական դպրոց ունեցող գյուղերի թվում նշված է նաև Ղուզե Ճարտար (Гузей Чертаз) գյուղը։ Դպրոցն ունեցել է մի ուսուցիչ և 30 աշակերտ։ Հավանաբար 1914-ին էլ այն բացվել է, քանի որ ցույց չի տրված նախորդ տարիների տեղեկագրերում և այլ նյութերում։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61։

Մատաղես գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1908-ին, որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 1 բաժանմունք և 56 աշակերտ (22 աղջիկ)։ Պահվել է Բաքվի հայոց մշակութային միության նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 24; գ. 182, թ. 14—23;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 50։

Մարաղա գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 31 աշակերտ։ 1881-ին ունեցել է 32 աշակերտ։ Նշված է 1882-ին պետական իշխանություններին ներկայացված հայ դպրոցների ընդհանուր ցուցակում, հետևաբար գործել է նաև այդ թվականին։ Հետագա տարիների փաստաթղթերում այս դպրոցն այլևս չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 7;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 49։

Մարդակերտ գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1908-ի սկզբին, որպես միդասյան իգական դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 2 բաժանմունք և 60 աշակերտուհի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 23; գ. 182, թ. 14—23։

Մեծ Շեն (Ուլտ Կարաբեկ) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1907-ին՝ որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 56 աշակերտ (27 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայոց մշակութային միությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 23; գ. 182, թ. 14—23;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 50։

Մյուրիշեն (Միրիքենդ) գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 12 աշակերտ։ Հետագայում փակվել է և նորից բացվել միայն 1906-ին՝ որպես երկսեռ միդասյան դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք, որոնցում սովորել են 69 երեխաներ (27 աղջիկ)։ 1915-ին սովորողների թիվը իջել է 53-ի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6; գ. 543, թ. 3; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58։

Մշկապատ (Մջկապատ) գյուղի ծխական դպրոց

Ինչպես տեսանք, Մշկապատ գյուղը 1888—89 թվականներին մասնակցել է Գիշի գյուղի ծխական դպրոցի բացմանն ու պահպանմանը։

Իր սեփական դպրոցը նա ունեցել է 1906-ին։ 1908—09 ուս. տարում այդ դպրոցի երկու բաժանմունքներում սովորել են 26 տղա և 6 աղջիկ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 7;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 12; գ. 182, թ. 14—23; գ. 149, թ. 112, գ. 492, թ. 201, թ. 112;
Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 112։

Մոխրաթաղ (Նոր) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1907-ին՝ որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 2 բաժանմունք և 63 աշակերտ (20 աղջիկ)։ Մասամբ պահվել է Բաքվի հայոց մշակութային միության նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 23; գ. 182, թ. 14—23;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 50։

Նախիջևանիկ գյուղի ծխական դպրոց

Շուշու գավառի Նախիջևանիկ գյուղի ծխական դպրոցը 1895-ին գործել է, սակայն պատահաբար չի մտել փակվող հայ դպրոցների ցուցակում։ Նույն թվականի հոկտեմբերին իշխանությունների կողմից «հայտնաբերվել» է և 1896-ին՝ փակվել։ Հետագա տարիների շատ փաստաթղթերում այլևս մեզ չի հանդիպել։ Հավանաբար նրա փոխարեն բացվել է պետական դպրոց։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 1090, թ. 43։

Նինգի (Նենգի) գյուղի ծխական դպրոց

Շուշվա գավառի Նինգի (Նենգի) գյուղի հասարակության որոշմամբ 1890-ին այնտեղ բացվել է միդասյան արական եկեղեցական-ծխական դպրոց։ 1896-ին փակվել է և վերաբացվել 12 տարի հետո՝ 1908-ին։ 1908—09 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 38 տղա և 34 աղջիկ։ 1915-ի պաշտոնական մի փաստաթղթում Ջամիաթ (որ նույն Նենգին է) գյուղի ծխական դպրոցում ցույց է տրված ընդամենը 24 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 122, թ. 22; գ. 543, թ. 7; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 253, թ. 58։

Նորագյուղի (Ռեշիշքենդ) ծխական դպրոց

1895-ին գործել է, նույն թվականի վերջերին «հայտնաբերվել» է իշխանությունների կողմից և 1896-ին փակվել։ Վերաբացվել է 1908-ին, որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 2 բաժանմունք և 47 աշակերտ (15 աղջիկ)։ Մասամբ պահվել է Բաքվի հայոց մշակութային միության միջոցներով։ 1914-ին ունեցել է 60 աշակերտ և մի ուսուցիչ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 1090, թ. 39 և 43; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 21; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 50; Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 164։

Նորշեն (Նենիքենդ) գյուղի ծխական դպրոց

Դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1881-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 45 աշակերտ։ 1884-ին աշակերտների թիվն ավելացել է երկուսով։ 1885-ին փակվել է։

Այս դպրոցի մասին հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1906-ին, երբ այն վերաբացվել է։ 1908—09 ուս. տարում ունեցել է 2 բաժանմունք և 60 աշակերտ (18 աղջիկ)։ Մասամբ պահվել է Բաքվի հայոց մշակութային միության նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 5; գ. 492, թ. 201;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 7։

Շաղախ (Սարիշեն) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1908-ին։ 1908—09 ուս. տարում ունեցել է 1 բաժանմունք և 46 աշակերտ (4 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայոց մշակութային միությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 15; թ. 182, թ. 14—23;
Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 64։

Շեն (Ներքին) գյուղի ծխական դպրոց

Ներքին Շեն գյուղում 1873-ին գործել է ծխական դպրոց, ուր սովորել են 31 հոգի։

Հետագա տարիների ցուցակներում ու տեղեկագրերում այս դպրոցն այլևս չի հանդիպում։ Մ. Բարխուդարյանը գրում է, որ Ներքին Շեն գյուղի բնակիչները փոխադրվել են Շուշի։ Ըստ երևույթին հենց այդպես է առաջացել Շուշու Նոր թաղը և նրա Ս. Հովհաննես—Մկրտիչ եկեղեցուն կից դպրոցը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 7;
Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 146։

Շուշու թեմական հոգևոր դպրոց

Շուշու թեմական դպրոցի մանրամասն պատմությունը գրել է ակնառավոր գիտնական-պատմաբան Լեոն։ Այդ դպրոցի մասին բավականաչափ մանրամասն է խոսվում նաև պրոֆ. Մ. Հ. Սանթրոսյանի «Արևելահայ դպրոցը XIX դ. ա. կեսին» աշխատության մեջ, ինչպես և այլ գրքերում ու հոդվածներում։ Այդ պատճառով մենք այստեղ կսահմանափակվենք միայն մի քանի համառոտ տեղեկություններով։

Ինչպես մյուս թեմական հոգևոր դպրոցների, այնպես էլ Շուշու թեմականի հիմնական խնդիրն է եղել հայ եկեղեցու սպասավորների պատրաստումը։ Սակայն հայ հասարակական կյանքի զարգացման ընթացքում և նրա թելադրանքով թեմական դպրոցները աստիճանաբար հեռացել են իրենց հիմնական խնդրից ու ավելի ու ավելի մոտեցել աշխարհիկ նպատակների իրականացմանը։ Այդ դպրոցներից են գալիս եկել մեր ծիսական տարբերակի դպրոցների ուսուցիչների մեծ մասը, հայ մշակույթի ու հասարակական մտքի շատ գործիչներ։

Մեր ասածը լիովին վերաբերում է նաև Շուշու թեմականին, որը հանդիսացել է հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում այնքան նշանավոր դեր խաղացած փոքրաթիվ ուսումնական հաստատություններից մեկը և իր որոշակի տեղն ունի մեր ազգային առաջընթացի պատմության մեջ։ Նրանում լիովին իրենց արտացոլումն են գտել հայ հասարակական կյանքի հակասությունները, առաջավոր ու հետադեմ ուժերի գաղափարական պայքարը, հին ու նոր մանկավարժության ջատագովների բախումները և այլն։ Այս դպրոցը ևս ենթարկվել է կառավարության հետապնդումներին, գտնվել է իշխանության մշտական հսկողության և սպառնալիքների տակ, բայց և պատվով է ծառայել հայ ժողովրդի լուսավորության ու առաջընթացի ազգանվեր գործին։

Գնալով Շուշու թեմականը ձևոք է բերել աշխարհիկ բովանդակություն (ինչպես, բոլորովին չաղավաղելով իր հոգևոր ուղղությունից) և դարձել թեմի միակ ազգային միջնակարգ դպրոցը։ Այնտեղ տարբեր ժամանակներում բեղմնավոր ու արդյունավետ աշխատանք են կատարել ականավոր մանկավարժներ, գրողներ ու հասարակական գործիչներ։ Դրանց թվում էին Պետրոս Շանշյանը, Գերշ Պողոսյանը, Խորեն Սանփանեն, Սեդրակ Մանդինյանը, Համբարձում Առաքելյանը, Լևոն Սարգսյանը, Արշակ Չիլինգարյանը, Ավետիք Տեր-Պողոսյանը և ուրիշներ։

Շուշու թեմականն էլ է ունեցել իր վերելքի ու վայրէջքի շրջանները, իր հաջողություններն ու անհաջողությունները, իր բարեկամներն ու չարակամները։ Ինչպես հայ մյուս դպրոցներին, այնպես էլ այս դպրոցին մշտական ուղեկից են եղել կարիքը և նյութական միջոցների սղությունը, նրա առաջ ևս կանգնած է եղել գոյության և հարատևման հարցը։

Շուշու թեմականը բացվել է 1838-ի հունիսի 22-ին։ «Դա աղքատության մեջ ծնված մի փոքրիկ հիմնարկություն էր» (Լեո), որ չի ունեցել հույնիսկ իր սեփական շենքը, այլ տեղավորված է եղել մի մասնավոր մարդու տանը։ Սկզբում ունեցել է մոտ 20 աշակերտ։ Առաջին ուսուցիչները հանձն են առել այնտեղ պարապել առանց վարձատրության։ Անցել են հայոց լեզու, ռուսաց լեզու, պարպակերեն, թվաբանություն, «օրենք աստվածային», «սրբազան պատմություն» և երգեցողություն։

Ներսես Աշտարակեցու կարգադրությամբ 1852-ի նոյեմբերին փակվում է նաև Շուշու թեմական սեմինարիան։ Նրա վերաբացումը կաթողիկոսը թույլատրում է երեք տարի հետո՝ 1855-ի նոյեմբերին։

1860-ին դպրոցը հանձնվում է Շուշու հասարակության կողմից բնակված հոգաբարձությանը։ Այսպիսով, իրականանում է դպրոցական կյանքում ժողովրդի մասնակցության ապահովման դեմոկրատական սկզբունքը, որ հայ իրականության մեջ առաջ քաշել ու պաշտպանում էին Մ. Նալբանդյանը, Ս. Նազարյանը, Գ. Շանշյանը և ուրիշներ։ Սահմանափակվում էին հոգևոր իշխանության իրավունքները։ Այդ սկզբունքը իր արտահայտությունն է գտնում նաև Շուշու թեմական դպրոցի՝ 1861-ին կազմված ու կաթողիկոսի կողմից հաստատված կանոնադրության մեջ։ Այս ամենը 60-ական թվականների հայ հասարակական շարժման արդյունք էին, առաջավոր ուժերի հաղթանակը հետադեմ ուժերի նկատմամբ։

Կանոնադրության լրիվ տեքստը բերված է Լեոյի գրքում (էջ 253—264)։

Հոդաբարձությանը հաջողվում է գգալի չափով բարելավել դպրոցի նյութական դրությունը, բայց նրա ուսումնական աշխատանքը դեռևս մնում էր անբավարար վիճակում։

Դպրոցը մեծ փոփոխություններ է ենթարկվում, երբ Մատթեոս կաթողիկոսը, շուշեցիների խնդրանքով, 1863-ին այդ դպրոցի տեսուչ է նշանակում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում տարիներ առաջ հռչակված և առաջավոր գաղափարներով տոգորված Պետրոս Շանշյանին։ Վերջինիս օգնականն է եղել Գերշ Պողոսյանը, որն այնտեղ դասավանդել է հայոց լեզու, հայ գրականություն և ազգային պատմություն։

Շանշյանի և Պողոսյանի ջանքերով թեմական դպրոցը սկսում է ծաղկել, դառնում է եղեսյան՝ իր երկու ծիսական դպրոցներով։ Փոխվում է նաև դպրոցի անունը։ Այն կոչվում է «Եղիշյան ազգային հոգևոր դպրոց» — 5-րդ դարի հռչակավոր պատմիչ Եղիշեի անունով։ Սրանց ջանքերով է նաև, որ բացվում է Շուշու օրիորդաց դպրոցը։

Ինչպես նշել ենք, այդ դպրոցում է աշխատել նաև «Հայկական աշխարհ» ամսագրի խմբագիր Խորեն Ստեփաննն։ Շատ կարճ է տևել նրա տնօրենությունը՝ ընդամենը մի տարի։ Անբարյացակամ մարդկանց խարդավանքների պատճառով նա հրաժարվել է այդ պաշտոնից և Շուշում հիմնել է իր մասնավոր դպրոցը։ Լեոն շատ մռայլ գույներով է նկարագրել Ստեփաննին և նրա տնօրենությունը (էջ 368—375)։ Մեր ձեռքի տակ եղած արխիվային նյութերը հակառակն են ասում։ Մի մեծ խումբ շուշեցիներ և քաղաքի գեղուհատը հատուկ նամակ-համախոհականներով դիմել են կաթողիկոս Գևորգ IV-ին և աղերսել նրան իրենց մոտ թողնելու Ստեփաննին, մանրամասն նշելով վերջինիս բարեմասնությունները, նրա հարուստ գիտելիքները, հայրենասիրությունը և ազգասիրությունը, ուսուցման և դաստիարակության մեջ ցույց տված եռանդն ու վարպետությունը և այլն։

Ինչպես երևում է, Լեոն ճիշտ է այն բանում, որ Խորեն Ստեփաննն անբարեհամբույր, չափազանց դյուրագրգիռ բնավորություն է ունեցել, հաճախ գործել է իր իսկ քարոզած սկզբունքներին հակառակ։

Իր ամսագրում նա հանդես է եկել ծեծի դեմ, բայց իրականում ինքը ևս ծեծել ու պատժել է աշակերտներին։ Այս հանգամանքը նշված է նաև Բաքվում Ստեփաննի գործունեության հետ կապված որոշ փաստաթղթերում։ Արնուամենայնիվ, այս բոլորով հանդերձ, Ստեփաննն եղել է իսկապես հմուտ մանկավարժ, մանկավարժության տեսության գիտակ մի մարդ, ջերմ հայրենասեր և նշանավոր հասարակական գործիչ։ Նա ավանդել է հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն։

1877—78 ուս. տարում Շուշու թեմականի տեսուչ է եղել փիլիսոփայության դոկտոր, հետագայում Երևանում հրատարակվող «Պասկ» թերթի խմբագիր և հայտնի հասարակական գործիչ Վասակ Պապաջանյանը։ Լեոն խիստ դրականորեն է խոսում Պապաջանյանի այդ տարվա գործունեության մասին, ընդգծելով այն շանքերը, որ նա գործադրել է դպրոցի ուսումնական ու մանկավարժական կյանքը բարելավելու ուղղությամբ։ Բայց նրան էլ վիճակված չէր երկար ժամանակ մնալու այդ դպրոցում։ Էջմիածնի սինոդի միանդամայն անհիմն պատճառաբանությամբ և ցուցումով Պապաջանյանն ազատվում է տեսչի պաշտոնից։

Շուշու թեմականում կարճատև, բայց բեղմնավոր գործունեություն է ունեցել նաև հայ ականավոր մանկավարժ Սեդրակ Մանդինյանը։ Նրա շնորհիվ առաջին անգամ թեմականում ավանդվել է մանկավարժություն, իսկ չորրորդ դասարանն ավարտողներից կազմվել է մանկավարժական հատուկ դասարան, որը տեղի ծխական դպրոցների համար պատրաստել է ուսուցիչներ։

1881—82 թվականներին թեմականում ուսուցչի, ապա նաև տեսչի պաշտոն է վարել անվանի գրող ու մանկավարժ Ղազարոս Աղայանը, որը նույնպես ինչ-ինչ պատճառներով ստիպված է եղել հեռանալ այդտեղից։

Այնուհետև դպրոցի կյանքում սկսվում ու շարունակվում է անհաջողությունների և անկման երկարատև մի շրջան, որը մանրամասնորեն նկարագրված է Լեոյի գրքում։ Այդ շրջանը հիմնականում բնութագրվում է հայերի ու հայ դպրոցների նկատմամբ վարված մեծապետական քաղաքականության ուժեղացմամբ, հայ առաջադեմ ուժերի (հատկապես ուսուցչության) և կղերականության ու սրանց գաղափարական զինակիցների միջև ծավալված սուր, անհաշտ պայքարով, վերջիններիս կողմից թեմական դպրոցի նկատմամբ բռնած թշնամական դիրքով և այլն։ Հայ հեռադեմ կղերականությունը և պահպանողականները իրենց վերջին հիպերն էին գործադրում թույլ չտալու եկեղեցու և կրոնի հիմքերը խարխլող նոր գաղափարների, հասարակական-քաղաքական առաջատար ոգիների մուտքը աշակերտության մեջ։ Ահա թե ինչու օգտագործելով ի վերուստ իրենց տրված իրավունքները, կաթողիկոսների անմիջական օգնությամբ ու հովանավորությամբ, նրանք չեն խորշում ամենաստոր միջոցներից՝ մանկավարժական անձնակազմի լավագույն ներկայացուցիչներին (տեսուչ Լեոն Սարգսյան, ուսուցիչներ Պետրոս Մելքումյան, Ստեփան Դեմուրյան և ուրիշներ) ստիպելու թողնել դպրոցը, իսկ նրանց փոխարեն այնտեղ նստեցնելու հեռադեմ հոգևորականներին։

Այս գրությունը շարունակվում է գրեթե մինչև 1903 թվականը, երբ կառավարության հրամանով փակվում է նաև Շուշու թեմական դպրոցը։ Պատճառը հայ դպրոցների և եկեղեցական կալվածքների բռնագրավման ժամանակ շուշեցիների և թեմականի սաների կողմից կառավարությանը և նրա զորքերին ցույց տված ակտիվ դիմադրությունն էր, նույնիսկ դիմված ընդհարումը։

Դպրոցը վերաբացվել է 1905-ի աշնանը։ Այն ավելի բարեկարգ տեսք է ստացել 1908—10 թվականներին՝ տեսուչ Ամենոնք Տեր-Պողոսյանի օրոք և նրա շանքերով։

1913-ին բավականաչափ մեծ շուքով տոնվել է դպրոցի 75-ամյակը, որի առթիվ և գրվել է Լեոյի գիրքը՝ «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի՝ 1838—1913»։ Այդ գրքից էլ մենք հիմնականում քաղել ենք այս դպրոցի մասին այստեղ շարադրված նյութերը։

Իհարկե, քիչ չեն նաև Ղարաբաղի թեմական դպրոցին վերաբերող արխիվային և տպագիր նյութերը, որոնց մի մասը ևս մենք օգտագործել ենք այստեղ։

Ինչպես տեսանք, Շուշու թեմականը իր գոյությունը պահպանել է մեծ տարուբերումներով։ Ունեցել է անկման ու վերելքի շրջաններ։ Դա

իր ազդեցությունն է ունեցել նաև նրա կառուցվածքի, աշակերտության թվական կազմի և ուսումնական ու դասատվարակչական աշխատանքի վրա։ Եղել են ժամանակներ, երբ նա քիչ բանով է տարբերվել սովորական ծխական դպրոցներից, եղել են նաև ժամանակներ, երբ ունեցել է 6 դասարանյան կազմ՝ ընդհուպ մոտենալով միջնակարգ դպրոցին։ Որոշ ժամանակ ունեցել է նաև 7-րդ՝ մանկավարժական դասարան։ Իր գոյության վերջին տարիներին այն գործել է որպես լրիվ միջնակարգ դպրոց՝ ավելի շատ աշխարհիկ ուղղությամբ, քան հոգևոր։

Տարբեր ժամանակներում տատանվել է նաև դպրոցի աշակերտների թիվը։ Այսպես, 1870-ին ունեցել է 158, 1893-ին (Լ. Մարգսյանի տեսչության ժամանակ)՝ 492, 1908—09 ուս. տարում՝ 374 աշակերտ և այլն։ Նյութականի տեսակետից էլ Շուշու թեմականը ունեցել է իր լավ և վատ ժամանակները։ Հիմնականում պահվել է եկեղեցական գումարներով, իրեն հատկացված զանազան աղբյուրների եկամուտներով, իր օգտին կատարված հանգանակություններով, շուշեցիների և այլ վայրերի հայերի նվիրատվություններով և այլն։ 1913-ին մոսկվարնակ դարբրազգի վաճառական Բաղդասար Արզումանյանը դպրոցին նվիրում է մի խոշոր գումար (երկու հարյուր հազար ռուբլի), որի տոկոսներով էլ պետք է ծածկվեր նրա տարեկան ծախսերի մի զգալի մասը։ 1917-ին գործել է որպես լրիվ միջնակարգ դպրոց։

Շուշու թեմական դպրոցը տվել է մեծ թվով մտավորականներ, հայ հասարակական-քաղաքական կյանքի աչքի ընկնող գործիչներ և այլն։

1830-ին Շուշի քաղաքում հիմնվել է նաև պետական եռադասյան գավառական դպրոց, որը հետագայում վերածվել քաղաքային չորսդասյան ուսումնարանի։

Շուշում գործել է նաև ռազմական դպրոց, որի աշակերտների ճնշող մեծամասնությունը կազմել են հայերը։

Անշափ հետաքրքիր է Շուշու այդ դպրոցների աշակերտական շարժումների, նրանցում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների պատմությունը, որին մենք, դժբախտաբար, այստեղ անդրադառնալու հնարավորություն չունենք։

Լեո, «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի — 1838—1913», 1914, Թիֆլիս (692 էջ)։

Մ. Հ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին», էջ 412—418։

«Արարատ», 1871, Բ. էջ 295—301; 349—351; 1873, Ը. էջ 310—312; 1888, Բ. էջ 866—885; 1893, էջ 866—885;

«Նոր դպրոց», 1909, № 1, էջ 89; № 6—7, էջ 149; 1913, № 4, էջ 52—64; № 5, էջ 63—72; № 6, էջ 61—63; № 7, էջ 11—18 և այլն։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 43, թ. 5; գ. 37; թ. 89 և այլն։

ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, ց. 1, գ. 2018, թ. 31։

Շուշու Մարիամյան օրիորդաց դպրոց

Հայ աղջիկների համար բացված հետագույն դպրոցներից մեկն է, որը, փաստորեն, կանանց կրթության սկիզբն է դրել Ղարաբաղում։

Երկար չի եղել այդ դպրոցի կյանքը, բայց անչափ հետաքրքիր է նրա սկզբնավորման ու զարգացման գոյության պատմությունը, որը շարադրված է Պերճ Պռոշյանի «Ղարաբաղու Տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացումը» գրքույկում (Շուշի, 1864 թ.) և Լեոյի «Պատմություն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի— 1838—1913» մեծարժեք աշխատության 290—302 էջերում։

Ընթերցողին հանձնարարելով այդ աշխատությունները՝ մենք այստեղ կբավականանանք Ղարաբաղի աղջիկների կրթության առաջնեկի մասին միայն մի քանի տեղեկությունների հաղորդումով։

Ղարաբաղի Մարիամյան օրիորդաց դպրոցը ծնունդ է առել այն ժամանակ, երբ նույնիսկ Կովկասի վարչական ու կուլտուրական կենտրոն Թիֆլիս քաղաքում նոր էր սկիզբ առնում հայ աղջիկների կրթության գործը։

Այս համոզմունքով է, որ սկիզբ է դրվել Շուշու օրիորդաց դպրոցին, որի կանոնադրությունը նույնպես մշակել են Ճանշյանն ու Պռոշյանը։ Դա դեմոկրատական ուղղությամբ կազմված մի կանոնադրություն է, որի հետ կարող է համեմատվել նրանից 3—4 տարի հետո կազմված Վերին Ագուլիսի օրիորդաց դպրոցի կանոնադրությունը, որի հեղինակը նույնպես Պերճ Պռոշյանն է։

Այնտեղ նշված է, որ «1. Շուշվայ Հայ տիկնանց միաբանությունը, շարժված լուսավորության սիրովը և աղջկանց կրթության վսեմ նշանակությամբը ընտանեկան կենաց համար, որից կախյալ է ինչպես յուրաքանչյուր մարդոյ երջանկությունը, այնպես և ազգի բարօրությունը, հաստատում է Շուշիումը օրիորդաց Ուսումնարան ամեն կարգի աղջկանց համար»[1] (ընդգծումները մերն են — Ս. Խ.)։

Դպրոցի նպատակն էր «պատրաստել լուսավորյալ վարժապետուհիք և լուսավորյալ մայրեր» (էջ 293)։ Այնտեղ ուսուցումը պետք է տարվեր մայրենի լեզվով՝ հայերենով։ Ուսուցվելու էին, կրոնական առարկաներից բացի, հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, հայոց պատմություն, աշխարհագրություն, ձեռագործություն, վայելչագրություն, նկարչություն և երգեցողություն։

Կարելի է ասել, որ այս դպրոցը գլուխ բերելու գործում Ճանշյանից ու Պռոշյանից ոչ պակաս դեր է խաղացել մի հոյակապ անձնավորություն, խելոք ու խիզախ մի կին, որի անունն ու հիշատակը պետք է

[1] Լեո, «Ղարաբաղի հոգևոր դպրոցի պատմությունը», էջ 293։

սրբությամբ պահպանեն բոլոր դարաբաղցիք։ Անցած դարի 60-ական թվականների Շուշում այդպիսի կնոջ գոյությունն ու գործունեությունը արժանի են դրան։

Այդ խելոք ու հայրենասեր կնոջ անունն է Մարիամ Հախումյան։ Առաջադեմ մարդ է եղել նաև նրա ամուսինը՝ Համբարձում Հախումյանը, որը ոչ միայն բոլոր միջոցներով օժանդակել է իր կնոջ ձեռնարկումների իրագործմանը, այլև շատ բան է արել շուշեցիներին բացատրելու աղջիկների կրթության կարևորությունը։ Բարեբախտաբար այդ ժամանակ Ղարաբաղի թեմի հոգևոր առաջնորդի պաշտոնում գտնվել է մի մարդ, որը, խիստ տարբերվելով իր ժամանակի հետադեմ շատ հոգևորականներից, պաշտպանել և օգնել է աղջիկների դպրոցի կազմակերպմանը։ Դա Ստեփանոս արքեպիսկոպոսն էր, որը, ինչպես գրել է Պոռշյանը, «Ղոնդ է հանդիսանում հինգերորդ դարու հայ տիկնանց ազգասիրության հոգին ավելի ընդարձակելու Շուշվոյ տիկնանց մեջ», իսկ Լեոն ավելացնում է՝ «... առանց որի հաղիվ թե կարող կլիներ իրականանալ այդպիսի մի շարժում Շուշու մեջ» (էջ 295)։

Հենվելով ժամանակակիցների վկայությունների վրա, Լեոն նշում է, որ Հախումյանների ընտանիքում աղջիկների ուսուցում է անցկացվել նրանց համար հատուկ դպրոց բացելուց դեռ մի քանի տարի առաջ, սակայն ոգևորվելով Շուշում Շանշյանի ու Պոռշյանի ներկայությունից և նրանց ղեկավարած թեմական դպրոցի հաջողություններից, տիկին Մարիամ Հախումյանը միտք է հղանում աղջիկների մի կանոնավոր դպրոց հիմնելու մասին։

Խորհրդակցելով Շանշյանի ու Պոռշյանի հետ, նա այդ մասին լայն բացատրական աշխատանք է տանում տեղի կանանց շրջանում։ Նրան հաջողվում է դգալի թվով կանանց համոզել աղջիկների դպրոց բացելու անհրաժեշտության մեջ և նրանց համաձայնությունը վերցնել՝ զառնալու դպրոցին օժանդակող կանանց ընկերության անդամ։ Այդ ընկերության յուրաքանչյուր անդամ, որ համարվելու էր օրիորդաց դպրոցի հոգաբարձուհի, պարտավոր էր տարեկան 6 ռուբլի վճարել հօգուտ իրենց դպրոցի։ Հոգաբարձուհիների թիվը հասնում էր մինչև 40-ի։

Նախապատրաստական բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո Մարիամ Հախումյանը դիմում է թեմական առաջնորդին՝ խնդրելով թույլատրել օրիորդաց դպրոցի բացումը։ Թեմական առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսից ստացվում է այսպիսի պատասխան.

«Բարեպաշտուհի տիկին.

Ընդունելով ձեր առաջարկությունը Շուշվոյ քաղաքի տիկնանց կողմանե օրիորդաց ուսումնարան բանալու համար, ուրախ սրտով գովում եմ ձեր և մյուս բարեպաշտուհի տիկնանց ազգասիրական ճիգն այսպիսի ամենահարկավոր ազգային լուսավորության և հառաջադիմության միջոցը հառաջ տանելու համար. ուստի և խնդրելով ամենակալ Արարչից ձեր ձեռնարկությանը հաջողություն, հաստատում եմ այդ ուսումնարանը համաձայն կարգադրության նորին «Ղարաբաղու Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարան» անվամբ և տալիս եմ իրավունք բանալ այդ ուսումնարանը մեծով փութով։

Ղարաբաղու Եղիշյան Ազգային Հոգևոր դպրոցի տեսուչ պ. Շանշյանցն ևս հարգելով իմ առաջարկությունն ընկալավ սիրով տեսչությունն օրիորդաց ուսումնարանում և պատրաստ է կատարել ամենայն հոժարությամբ» (Լեո, էջ 295—296)։

Եվ իրոք, «փութով» բացվում է այդ դպրոցը։ Այդ տեղի է ունենում 1864-ի ապրիլի 7-ին։

Դա եղել է մի մեծ տոնախմբություն շուշեցիների համար։ Պոռշյանը հիանալի է նկարագրել հանդիսավոր այդ օրվա արարողությունը, որն այսօր էլ հուզում է ընթերցողին։

Դպրոցի համար տեր և տիկին Հախումյանները հատկացրել են իրենց սեփական տնից 5 սենյակ՝ բոլոր հարմարություններով։

Դպրոցի տեսուչի է ընտրվում նրա հիմնադիրը՝ տիկին Մարիամ Հախումյանը, իսկ վերակացուհու պարտականությունը ստանձնում է կույս Եղիսաբեթ Սիմոնյանը։

Մեկ տարում դպրոցը բավականաչափ առաջադիմություն է ցույց տալիս, ոգևորություն պատճառելով իր աշակերտուհիներին և նրանց ծնողներին։ Ուսուցիչների մեծ ժամն էլ այնտեղ աշխատել է ձրիաբար։

Սակայն ի՞նչ ճակատագիր է ունեցել այնքան մեծ շուքով ու հանդիսավորությամբ բացված և հաջողությամբ սկսված դպրոցը։

Լեոն ասում է, որ դպրոցը իր գոյությունը պահպանել է նաև 1865-ին և դրանից էլ հետո, բայց մինչև ե՞րբ, հայտնի չէ։ «Մեղու Հայաստանի» լրագրերը 1884-ին գրել է, որ այդ դպրոցը մի քանի տարի հետո փակվեց, որ նա «զոհ եղավ խարդախ մարդոց ինտրիգներին»։

Ուրեմն սև ուժերը դեռ շատ էին ուժեղ, և նրանց դեմ պատերազմելը այնքան էլ հեշտ չէր։ Այդ ուժերին էլ հաջողվում է խափանել Ղարաբաղի օրիորդաց դպրոցների առաջնեկի գոյությունը։

Լեո, «Ղարաբաղի թեմական դպրոցի պատմությունն», էջ 290—302; «Մեղու Հայաստանի», 1884, № 90։

Շուշու Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոց

Ինչպես երևում է Շուշու Մարիամյան օրիորդաց դպրոցի խափանումից հետո, այնտեղի աղջիկներից ոմանք սովորել են տղաների հետ միասին։ «Դպրոց» ամսագրի համաձայն 1874—75 թվերին Շուշում գործել են երկու երկսեռ ծխական դպրոցներ (արականից բացի)։ Անկա-

կած, այս հանգամանքը ևս դայլայլել է հետաքրքրաշարժ ու նախապաշարված մարդկանց։ Նրանք ամեն ինչ արել են խափանելու աղջիկների ուսուցումը, այն էլ տղաների հետ միասին։

1876-ին վարդապետ Արիստակես Սեդրակյանի ջանքերով Շուշում բացվել է աղջիկների առանձին դպրոց՝ Հռիփսիմյան անվամբ։ Այդ դպրոցը 1877-ին ունեցել է 4 ուսուցիչ և 70 աշակերտուհի։ 1881-ին աշակերտուհիների թիվը հասել է 120-ի։

Ինչպես նշել է Լեոն, բացումից մոտ մեկ տարի հետո Հռիփսիմյան դպրոցը իր ճակատագիրը կապել է տեղի թեմական դպրոցի հետ, լինելով նրան կից։

1884-ին այս դպրոցը եղել է բավականաչափ պատկառելի մի ուսումնական հաստատություն՝ իր 13 ուսուցիչ-ուսուցչուհիներով և 171 աշակերտուհիներով։ Ունեցել է միջնակարգի դասընթաց։ Հայ մյուս դպրոցների հետ միասին այն ևս 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1886-ի հոկտեմբերին՝ որպես երկդասյան իգական դպրոց։ Տեսուչն է եղել Մովսես Սամվելյանը, ուսուցիչները՝ Գաբրիել Գյուլիքեխյանը, օրիորդ Եկատերինա Մելիք-Սարգսյանը, Զարուհի Արզումանյանը, Ելենա Առաքելյանը, Գալիլյա Հովակիմյանը և Նարիման Փիրումյանը։

1888-ին ունեցել է 199 աշակերտուհի, որոնք ըստ սոցիալական դրության բաժանվել են այսպես. հոգևորականների աղջիկներ՝ 17, ազնվականների՝ 23, ծառայողների՝ 19, վաճառականների՝ 123, արհեստավորների՝ 16, երկրագործի՝ 1։ Դժվար չէ նկատել, որ դպրոցը բացառապես բարձր խավերին է պատկանել։ 1891-ին եղել է 4-դասյան դպրոց։

1896-ին փակվել է, 1906-ի փետրվարին վերաբացվել։ 1908—09 ուս. տարում ունեցել է 5 բաժանմունք, որոնցում սովորել են 218 հոգի, որոնցից 29՝ տղաներ։

Լեո, «Ղարաբաղի թեմական դպրոցի պատմություն», էջ 385—86, «Մեղու Հայաստանի», 1885, № 63; «Դպրոց», 1875—76, № 4, էջ 133. «Արարատ», 1878, ԺԹ, էջ 458; ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 60; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 14—23; ֆ. 19, գ. 5, թ. 85; գ. 492, թ. 122 և 201; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 2890, թ. 124; գ. 1858, թ. 52; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 98; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58.

Շուշու կույսերի մենաստանին (Կուսանաց Անապատին) կից ծխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1873-ին գործել է որպես երկսեռ դպրոց, ուր սովորել են 12 տղա, 20 աղջիկ։

1884-ին ունեցել է 1 ուսուցիչ և 50 աշակերտ (բոլորը տղաներ), իսկ 1885-ին փակվել է։ 1891-ին եղել է երկսեռ դպրոց։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6, գ. 50, թ. 60, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 3997, թ. 6։

Շուշի քաղաքի հոգևոր ծխական դպրոց

Դատելով այն փաստերից, որ բերում է Լեոն Ղարաբաղի թեմական դպրոցի պատմությանը նվիրված իր գրքում, կարելի է ենթադրել, որ առաջին ծխական դպրոցը Շուշիում հիմնվել է 1861-ի վերջերին կամ էլ 1862-ի սկզբներին։ Այն կից է եղել թեմական հոգևոր դպրոցին և համարվել է նրա պատրաստականը։ 1871-ին ունեցել է 105 աշակերտ։ Կարծում ենք, որ սա 1874-ին Շուշում գործած երեք ծխական դպրոցներից մեկն է։ Այդ դպրոցները միասին 1877-ին ունեցել են 4 ուսուցիչ, 108 աշակերտ։

Լեո, «Ղարաբաղի թեմական դպրոցի պատմություն», էջ 275—277։ «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 138; «Արարատ», 1871, Ե., էջ 298, 1876, ԺԹ, էջ 458։

Շուշի քաղաքի ագուլեցոց ծխական դպրոց

Լեոն նշում է, որ Շուշու թեմական դպրոցի նորընտիր հոգաբարձությունը դեռևս 1860-ական թվականների սկզբին որոշում է կազմակերպել քաղաքի չորս եկեղեցիների, այդ թվում նաև «ագուլեցոց» կոչվող եկեղեցուն կից բացել ծխական դպրոցներ, բայց այդ որոշումը ձախողվել է՝ հարմար շենքերի բացակայության պատճառով։ Եթե, իրոք, այդպիսի որոշում կայացվել է, ապա պետք է ենթադրել, որ հոգաբարձությունը պիտի ջանար հարմար շենք գտնել և նշված դպրոցները բացել։ Այս ենթադրությանը որոշ հիմք է տալիս մանավանդ այն փաստը, որ քաղաքի Վերին Թաղի և «մեղրեցոց» կոչվող եկեղեցիները 70—80-ական թվականներին ունեցել են իրենց դպրոցները։ Դժբախտաբար, մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերը, տասնյակ տարիների տեղեկագրերն ու ցուցակները ոչինչ չեն ասում ագուլեցոց եկեղեցու դպրոցի մասին։

Միայն Ղարաբաղի թեմական տեսչի մի տեղեկագրից իմանում ենք, որ ագուլեցոց Ս. Աստվածածին եկեղեցուն կից երկսեռ ծխական դպրոց է բացվել 1908 թվականին։ Կարելի է գարմանալ՝ մի՞թե իրոք հոգաբարձության որոշումը և այդ եկեղեցու թաղամասում ապրող բնակչության ցանկությունը հնարավոր է դարձել իրականացնել միայն 40 տարի հետո։ Մենք կասկածում ենք դրանում, բայց, ցավոք, փաստեր չունենք այդ կասկածը փարատելու համար։

Այս դպրոցը 1908—09 ուս. տարում ունեցել է երկու բաժանմունք և 42 աշակերտ (19 աղջիկ)։ 1915-ին՝ 67 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 26; գ. 182, թ. 14—23; Լեո, «Ղարաբաղի թեմական դպրոցի պատմություն», էջ 275; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58.

Շուշու հայ բողոքականների դպրոց

Այս դպրոցը հիմնվել է Հավանաբար 1865-ին՝ Դորպատի համալսարանում ուսուցչական ցեղ ձեռք բերած Ա. Աբրահամյանի կողմից։ Սակայն որոշ ժամանակից հետո Աբրահամյանին արգելվում է պահել այն, քանի որ ինքը պատանեկիս է եղել բաղելյան ընկերության գործակալների խմբին և հայության մեջ բողոքականություն է քարոզել։

«Մեղու Հայաստանի», 1886, № 7 և 53։

Շուշու մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցու արական դպրոց

Լեոի վկայությամբ Շուշու մեղրեցոց Թաղի եկեղեցուն կից դպրոցը բացելու որոշում է կայացվել դեռևս 1860-ականի սկզբներին, բայց այն հնարավոր չի եղել իրագործել՝ շենքային անհարմարության պատճառով։ Չգիտենք նույնիսկ, թե երբ է բացվել այդ դպրոցը, բայց գիտենք, որ 1873-ին այն գործել է՝ ունենալով 26 աշակերտ։ Հավանաբար գոյություն է ունեցել ընդհատումներով։ 1884-ին ունեցել է 1 ուսուցիչ, 40 աշակերտ, իսկ 1885-ին փակվել է պետության կողմից։ Վերաբացման թվականը մեզ անհայտ է։ Գիտենք միայն, որ 1895-ին գործել է և 1897-ին նորից փակվել պետության հրամանով։ Վերաբացվել է 1907-ին, իսկ 1908—09 ուս. տարում ունեցել է 2 բաժանմունք և 70 աշակերտ, շարունակելով մնալ որպես միդասյան արական դպրոց։ 1915-ին նա գործել է՝ ունենալով 3 ուսուցիչ և 126 սովորող։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6; գ. 50, թ. 60; գ. 543, թ. 25;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 1090, թ. 44; Լեո, «Ղարաբաղի թեմական դպրոցի պատմություն», էջ 275; «Արարատ», 1913, № 2, էջ 112; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58։

Շուշու Նոր կամ Վերին թաղի Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու Թադևոսյան արական ծխական դպրոց

Այս եկեղեցուն կից նա ծխական դպրոց բացելու մտադրություն է եղել դեռևս 1860-ականի սկզբներին, բայց մեզ հայտնի չէ, թե երբ է այն իրագործվել։ Գիտենք, որ 1884-ին Շուշու Վերին Թաղի Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցուն կից գործել է ծխական դպրոց, որը և 1885-ին փակվել է կառավարության կողմից։ Ինչպես երևում է, երկար տարիներ այն փակ է մնացել, քանի որ չի հիշատակվում մինչև 1906 թվականը կազմված հայ դպրոցների ցուցակներում։ Մ. Բաբխուդարյանը ևս իր «Արցախ» գրքում (հրատարակված 1895-ին) այս եկեղեցուն կից դպրոց չի նշում։ Այդ դպրոցը Նորից հանդիպում է 1906-ին վերաբացված դպրոցների ցուցակներում։ 1908—09 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց՝ երկու պատրաստական դասարաններով, ուր սովորել են 70 տղա և 30 աղջիկ։

Այս դպրոցի բարերարն է եղել ոմն Թադևոսյան, որը և իր սեփական միջոցներից հոգացել է դպրոցի բոլոր ծախսերը։ Դպրոցը 1915-ին գործել է՝ ունենալով 3 ուսուցիչ և 123 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 7; գ. 50, թ. 60; գ. 182, թ. 44—53; գ. 543, թ. 25; գ. 492, թ. 122 և 201; «Նոր դպրոց», 1909, № 1, էջ 88; Մ. Բաբխուդարյան, «Արցախ», էջ 146—148; «Արարատ», 1910, էջ 107; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58։

Շուշու տիրացու Գայանե Դանիելյանի երկսեռ դպրոց

1873-ին գործել է մասնավոր շենքում՝ եկեղեցու զավթում, տեղ չունենալու պատճառով, սակայն մտցվել է ծխական դպրոցների ցուցակում։ Ունեցել է 5 աշակերտ և 10 աշակերտուհի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6։

Շուշու «Մարիամ-Ղուկասյան» օրիորդաց միջնակարգ դպրոց

Շուշեցի չորս հարուստ եղբայրներ, ծանր ապրելով իրենց սիրասուն քրոջ՝ Մարիամի կորուստը, որոշել են արժանվույն կերպով հավերժացնել նրա հիշատակը։ Դրա համար նրանք հարմար են գտել իրենց հարազատ ծննդավայրում հիմնել օրիորդաց մի դպրոց և այն կոչել իրենց քրոջ անունով։

Այդ նպատակով նրանք դիմել են կաթողիկոսին, խնդրել են նրա թույլտվությունը և միաժամանակ առաջադրել են այն պայմանները, որոնք պիտի պարտադիր կերպով պահպանվեին հիշյալ դպրոցի հիմնադրման և հետագա գոյության ընթացքում։

Ամենից առաջ նրանք հայտնել են, որ Շուշեցի Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ Ղուկասյանները իրենց հանգուցյալ քրոջ հիշատակը հավերժացնելու նպատակով ինքնահոժար կամքով էջմիածնի և ամենայն հայոց կաթողիկոսի տրամադրության տակ են դնում երկու հարյուր հազար ռուբլի և Շուշում գտնված իրենց սեփական տունը՝ քառասուն հա-

չար ուրբոլու արժողությամբ՝ Շուշում «Մարիամ-Ղուկասյան» անունով օրիորդաց դպրոց հիմնելու համար։ Այդ տան մեջ պետք է տեղավորվեր դպրոցը, իսկ նվիրաբերված գումարի տոկոսներով պահվեր այն։

Այնուհետև նրանք նշել են, որ իրենց դպրոցը պետք է լինի հայկական, այնտեղ բոլոր առարկաների ուսուցումը պետք է անպայման տարվի հայոց լեզվով, ուսաց լեզվից, Ռուսաստանի պատմությունից և աշխարհագրությունից բացի։ Դպրոցի կանոններում ասված է նաև, որ այն պետք է սկզբում ունենա վեցամյա դասընթաց, իսկ հետո՝ աստիճանաբար վերածվի Թիֆլիսի Գայանյան կամ Հովհաննյան դպրոցների տիպի դպրոցի՝ միջնակարգի դասընթացով։

Կաթողիկոսը ընդունել է Ղուկասյան եղբայրների առաջադրած բոլոր պայմանները, օրհնել է նրանց մարդասիրական քայլը և պատվիրել է շուտափույթ կերպով բացել «Մարիամ-Ղուկասյան» օրիորդաց դպրոցը։ Մի այլ կոնդակով նա հաստատել է այդ դպրոցի հոգաբարձության կազմը։

1912 թ. մայիսի 21-ի համարում «Баку» թերթը գրել է, որ մամուլի հաղորդումների համաձայն, Շուշու թեմական դպրոցի հետագա գոյության համար միջոցներ հայթայթելու նպատակով թեմի առաջնորդ վարդապետ Զավենը ուղևորվել է Պետերբուրգ, Մոսկվա և Բաքու։ Ընդառաջելով նրան, Պետերբուրգում պետական խորհրդի անդամ Պ. Օ. Ղուկասովը և Բաքվում նրա եղբայր Ա. Օ. Ղուկասովը խոստացել են, իրենց հանգուցյալ քրոջ հիշատակը հավերժացնելու նպատակով, Շուշու հայկական օրիորդաց դպրոցին նվիրել այնտեղ գտնված իրենց մեծ տունը՝ ընդարձակ այգիով, և խոշոր գումար, որի տոկոսներով հնարավոր լինի ոչ միայն պահել դպրոցը, այլև ավելացնելով դասարանների թիվը՝ դարձնել այն միջնակարգ ուսումնական հաստատություն։ Դպրոցը, գրել է թերթը, պետք է կոչվի «Մարիամյան-Ղուկասյան»։

Այս հաղորդումը խիստ անհանգստացրել է իշխանության մարմիններին։ Այդ առթիվ տեղի ունեցած երկարատև գրագրությունն ի վերջո ավարտվել է նրանով, որ Ղուկասյան եղբայրների ցանկացած դպրոցը բացվել է։ Իր գոյության երրորդ տարում (1915-ին) այն եղել է բավականաչափ խոշոր ուսումնական հաստատություն՝ ունենալով 11 ուսուցիչ-ուսուցչուհի և 320 աշակերտուհի։ Նշանակալից է նաև, որ 1917-ին այն արդեն ունեցել է լրիվ միջնակարգի դասընթաց։ Այս փաստերը վկայում են, որ «Մարիամ-Ղուկասյան» դպրոցը, այնուամենայնիվ, բացվել ու գործել է Շուշու աղջիկների դպրոցի բազայի վրա, քանի որ նոր բացված դպրոցը չէր կարող ընդամենը 4—5 տարվա ընթացքում միջնակարգի դասընթաց ունենալ։

«Արարատ», 1913, № 8—9, էջ 685—86; 1916, էջեր 307—312, 323, 627, 784;

1917, էջ 620; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58; ց. 139, գ. 58, թ. 93—95, «Баку» (օրաթերթ), 1912, № 109։

Շուշու հայկական մասնավոր դպրոցներ

Նպատակահարմար ենք գտնում այստեղ հիշատակել Շուշի քաղաքում գործած նաև մասնավոր դպրոցները, նկատի ունենալով, որ մեր եկեղեցական-ծխական դպրոցները մեծ մասամբ ստեղծվում էին այդ դպրոցների բազայի վրա, կամ էլ նույնիսկ սկզբնական շրջանում առանձին անհատների (հիմնադիրների կամ ուսուցիչների) անունով էին հանդես գալիս։

Շուշու քաղաքային պետական ուսումնարանի տեսչի մի զեկուցագրից իմանում ենք, որ 1881-ին այդ քաղաքում, բացի թեմական ու աղջիկների ծխական դպրոցներից, գործել են նաև մի շարք հայկական մասնավոր դպրոցներ։

Դրանք են.

1. Ա. Բաղդասարյանի մասնավոր դպրոցը՝ 29 աշակերտով։
2. Ա. Պարոնյանի դպրոցը՝ 40 աշակերտով։
3. Ա. Տեր-Գրիգորյանի դպրոցը՝ 30 աշակերտով։
4. Ա. Տեր-Հովհաննիսյանի դպրոցը՝ 35 աշակերտով։
5. Վ. Շախունցի դպրոցը՝ 30 աշակերտով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 5, թ. 85։

Շուշիքենդ (Շոշու) գյուղի ծխական դպրոց

Արցախի թեմի Շուշիքենդ գյուղի հասարակության համախոհ որոշմամբ 1894 թ. հունվարին բացվել է տեղի ս. Գրիգորյան եկեղեցական ծխական դպրոցը, որի մասին, դժբախտաբար, այլ տեղեկություններ չունենք։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 165, թ. 11;
Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 131։

Պտրեցիք (Բաղարա) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1881-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ, 35 աշակերտ։ Ինչպես նշել ենք, Պտրեցիք գյուղը 1888—96 թվականներին մասնակցել է Դաշբուլաղ գյուղի կենտրոնական ծխական դպրոցի բացմանն ու պահպանմանը։ 1907-ին Պտրեցիքում նորից է դպրոց բացվել, իսկ 1908—09 տարում այն ունեցել է 3 բա-

ժանմունք։ Այդ ուս. տարում այնտեղ սովորել են 45 հոգի, որոնցից 8 աղջիկ։

ՀՍՀԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 60; գ. 149, թ. 81; գ. 543, թ. 21։

Ջրակույս գյուղի ծխական դպրոց

Թեմական տեսչի տեղեկագրի համաձայն այս դպրոցը բացվել է 1908-ին՝ ունենալով 3 բաժանմունք։ Այս տեղեկությունը մեզ կասկածելի է թվում, որովհետև այդ թվականին բացված դպրոցը նույն ուսումնական տարում հազիվ թե երեք բաժանմունք ունենար։ Այն պետք է բացված լինի 1906-ից ոչ ուշ։

Ունեցել է 50 աշակերտ (12 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայոց մշակութային միությունից։

ՀՍՀԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 18; գ. 182, թ. 14—23; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 139, գ. 268, թ. 50։

Ռև (Շալվա) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1906-ին, որպես միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք և 38 աշակերտ (6 աղջիկ)։

ՀՍՀԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 21։

Սարով գյուղի ծխական դպրոց

Ղարաբաղի Սարով գյուղում ծխական դպրոց գործել է 1873-ից մինչև 1881 թ-ը։ 1873-ին ունեցել է 17 աշակերտ։ Ուսուցիչ չունենալու պատճառով 1881-ին փակվել է։ Ինչպես երևում է, հետագայում նորից բացվել ու գործել է, քանի որ, մի հաղորդման համաձայն, մինչև 1904—05 թվականները ունեցել է հոյակապ դպրոցական շենք՝ կառուցված տարվա ինների միջոցներով՝ ավելի քան 15 000 ռ. արժողությամբ։

Այդ շենքը ավերակ է դարձել ազգամիջյան կոտորածների ժամանակ։ Հայկական դպրոցի փոխարեն Սարովում բացվել է պետական դպրոց։

ՀՍՀԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 7; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 49; «Նոր դպրոց», 1911, № 13—14, էջ 35—36։

Սարուշեն գյուղի ծխական դպրոց

Ղարաբաղի Սարուշեն գյուղի դպրոցի բացման ու գոյության մասին մեր ձեռքի տակ եղած նյութերը հակասում են միմյանց։

Ըստ «Մուրճ» ամսագրի՝ Սարուշենում դեռևս 1887—88 ուս. տարում գործել է ծխական դպրոց, որը հաջորդ տարում արդեն ունեցել է երեք բաժանմունք (ուրեմն պետք է հիմնված լինի 1886-ից ոչ ուշ)։ Սակայն արխիվային նյութերը այլ բան են ասում։

Բաքվարնակ Գրիգոր Այվազյանը հատուկ նամակով դիմել է կաթողիկոսին, խնդրելով նրանից իրեն թույլ տալ Շուշու գավառի Սարուշեն գյուղում բաց անելու ծխական դպրոց, խոստանալով այդ դպրոցն ապահովել շենքով և ամեն տարի նրա օգտին վճարել 300 ռուբլի։

Կաթողիկոսը գովել է Այվազյանի այդ մտադրությունը և 1888-ի օգոստոսի 23-ի կոնդակով թույլ է տվել բաց անել Սարուշենի դպրոցը։ Հասկանալի է, որ առաջին տարին բացված դպրոցը չէր կարող միանգամից 3 բաժանմունք (Ա, Բ, Գ) ունենալ, մինչդեռ նույն հոդևոր իշխանությունների կողմից հրապարակված մի տեղեկագրի համաձայն Սարուշենի դպրոցը 1888—89 ուս. տարում արդեն այդքան բաժանմունքներ է ունեցել։

Այս հակասական դրությունից դուրս գալու համար կարելի է երկու ենթադրություն անել. կամ Սարուշենում մի դպրոց արդեն եղել է, իսկ Այվազյանը բաց է արել երկրորդը, մի քան, որ քիչ հավանական է, կամ էլ՝ վերոհիշյալ Այվազյանը դեռևս երկու տարի առաջ բացել է Սարուշենի դպրոցը և հետո միայն խնդրել է կաթողիկոսի թույլտվությունը։ Մենք հակված ենք երկրորդի կողմը։ 1888—89 ուս. տարում Սարուշենի «Ս. Գրիգորյան տղայոց միդասյան ուսումնարանում» սովորել են 35 հոգի։ 1890-ին հիշյալ Գ. Այվազյանը դպրոցի համար կառուցել է հարմարավետ շենք։ 1894-ին դպրոցում սովորել են «մոտ 60 աշակերտ և աշակերտուհի», ինչպես գրել է Մ. Բարխուդարյանը իր «Արցախ» գրքում։ 1894-ին գործել է, 1896-ին այդ դպրոցը ևս փակվել է՝ վերաբացվելով 1906-ին։ 1908—09 ուս. տարում եղել է միդասյան երկսեռ դպրոց՝ 3 բաժանմունքով, որոնցում սովորել են 44 տղա և 18 աղջիկ։ 1915-ին աշակերտների թիվը իջել է 48-ի։

«Մուրճ», 1890, № 7, էջ 1024; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 100; ՀՍՀԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 149, թ. 74—76; գ. 543, թ. 10; գ. 182, թ. 14—23; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 43; գ. 1090, թ. 42; ֆ. 422, գ. 8717, թ. 7; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 150, գ. 283, թ. 58; Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 102։

Սեյտիշեն գյուղի ծխական դպրոց

Հակասական տվյալներ կան նաև այս դպրոցի մասին։ Արխիվային մենաստանի գործում ցույց են տրված նրա բացման երկու թվականներ՝ 1886-ը և 1888-ը։ Ավելի հավանական է առաջինը, քանի որ 1888—89 ուս. տարում դպրոցն արդեն ունեցել է 2 բաժանմունք (37 աշակերտ)։ Այդ դպրոցի պահպանությանը ակտիվ մասնակցություն են ունեցել Տեր-Անդրեասյան-Սարամյան 3 եղբայրները, որոնք ի հիշատակ իրենց ծնողների՝ տարեկան 150 ռ. հատկացրել են իրենց ծննդավայրի դպրոցին՝ արժանանալով կաթողիկոսի գովասանական կոնդակին։

Հետագա շատ տարիների փաստաթղթերում այս դպրոցը այլևս չի երևում։ Միայն 1915 թ. պաշտոնական մի տեղեկագրում նշված է Սեիդ-Բեյլի գյուղի ծխական դպրոցը, որը նույն Սեյտիշեն գյուղն է և նրա դպրոցը։ Այդ տարում ունեցել է մի ուսուցիչ և 45 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 149, թ. 161—163, թ. 165;
«Վիճ. անդ. 1888—89 ուս. տարվա», էջ 103, ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58։

Սգենք (Ներքին) գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 31 աշակերտ։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 7։

Սոս գյուղի ծխական դպրոց

Սոս գյուղի մոտ է գտնվում Ամարաս վանքը, որտեղ դեռևս 1857-ին ստեղծված է եղել վանական դպրոց։ Դա որոշ հիմք է տալիս այդ գյուղի դպրոցի պատմությունը ևս սկսելու նշված թվականից, թեև վանական դպրոցի փակումից հետո անցել են շատ տասնամյակներ, մինչև որ Սոս գյուղը կարողացել է իր համար նոր դպրոց հիմնել։ Այդ տեղի է ունեցել 1908-ին։ Դպրոցը եղել է միդասյան, երկսեռ՝ 36 աշակերտով (9 աղջիկ)։ 1911-ին գործել է և պահվել Բաքվի մշակութային միությանը նպաստով։

Լեո, «Ղարաբաղի դպրոցի պատմություն», էջեր 156, 222—227, 275—277; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 9; գ. 182, թ. 14—23;
«Նոր դպրոց», 1911, № 31 և 32, էջ 29։

Սպիտակաշեն գյուղի ծխական դպրոց

Ղարաբաղի Սպիտակաշեն (Սպիտակ Շեն) գյուղի ծխական դպրոցը հիմնվել է 1917-ին։ Այդ թվականի հոկտեմբերին կաթողիկոսը հատուկ կոնդակով պատվիրել է բաց անել հիշյալ դպրոցը։

«Արարատ», 1917, № 9—10, էջ 685—86։

Վաղաճաս (Վաղուճաս, Կոզլու) գյուղի (Ջիվանշիրի գավառ) ծխական դպրոց

«Նոր դպրոց» ամսագրից իմանում ենք, որ 1910-ին այս գյուղում գործել է միդասյան երկսեռ դպրոց, որի մասին այլ տեղեկություններ չունենք։

«Նոր դպրոց», 1910, № 1, էջ 92։

Վանք գյուղի ծխական դպրոց

Հայ եկեղեցական ծխական ու վանական դպրոցների 1873-ի մի ցուցակում դպրոց է ցույց տրված նաև Ղարաբաղի Թեմի Վանք գյուղում։ Բանն այն է, որ Աբցախում (որը մտնում էր Ելիզավետպոլի նահանգի մեջ) գոյություն է ունեցել Վանք անունով երկու գյուղ՝ մեկը Դիզակի կամ Ջիբրայելի (Ջաբրայելի) գավառում՝ Սպիտակ խաչ կոչվող վանքի մոտ, իսկ մյուսը՝ Վարանդայի գավառում՝ Դանձասարի վանքից ոչ հեռու։

Մենք դժվարացանք պարզել, թե տվյալ դեպքում ո՞ր գյուղի մասին է խոսքը։ Դպրոցը մեծ չի եղել, այն ունեցել է ընդամենը մի ուսուցիչ և 9 աշակերտ։ Հավանաբար, հենց նշված երկու վանքերից մեկում էլ գործել է։

«Նոր դպրոց» ամսագիրը ևս 1913-ի № 3-ում, հրապարակելով մի թղթակցություն Վանք գյուղի դպրոցի մասին, չի նշում, թե ո՞ր գավառի Վանք գյուղի մասին է խոսքը։ Այդ թղթակցությունից երևում է, որ Վանք գյուղի դպրոցը վերաբացվել է մի քանի տարի առաջ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 7; «Նոր դպրոց», 1913, № 3, էջ 73։

Վարազաբուն (Արանզամին) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1884-ին գործել է՝ ունենալով 2 ուսուցիչ և 78 աշակերտ։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է արական միդասյան դպրոց՝ 67 աշակերտով։

Շարունակել է գործել նաև 1891-ից հետո։ 1895-ի սկզբներին դուրս է մնացել փակվող հայ դպրոցների ցուցակից, բայց նույն թվականի վերջերին հայտնաբերվել է և 1896-ին փակվել։ Վերաբացվել է 1907-ին։ 1908—09 ուս. տարում ունեցել է 2 բաժանմունք, որոնցում սովորել են 42 հոգի (13 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայոց մշակութային միությունից։ 1915-ին ունեցել է 78 աշակերտ։

ԼՈՒԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 60; գ. 149, թ. 26; գ. 543, թ. 2;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 99;
ՎՈՒԱ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 3997, թ. 6; ֆ. 12, ց. 7, գ. 1090, թ. 39 և 43.
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58։

Վերին Շեն (Վերիշեն) գյուղի ծխական դպրոց

1873-ին գործել է՝ ունենալով 15 աշակերտ։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է, քանի որ համապատասխան փաստաթղթերում այլևս չի երևում։

ԼՈՒԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8։

Տագ գյուղի ծխական դպրոց

Ջոհանված խառնաշփոթություն գոյություն ունի նախկին Շուշու գավառի Տագ և Տող (Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքում՝ Դող) գյուղերի և նրանց դպրոցների վերաբերյալ։ Հայերեն կազմված փաստաթղթերում և տպագրված նյութերում այդ երկու գյուղերը միմյանցից տարբերելը ոչ մի դժվարություն չի ներկայացնում, սակայն բոլորովին այլ է գրությունը ռուսերեն գրված աղբյուրներում, որոնք, ի դեպ, բավականաչափ շատ են։

Նախ ասենք, որ ռուսերեն տեղեկատու աղբյուրներում («Կավկազսկի կալենդար» 1907 և 1915 թթ.) նշված է միայն Տագ գյուղը, իսկ Տող (Դող) գյուղը բոլորովին բացակայում է։ Ընդ որում, ըստ Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքի Տագ գյուղը 1894—95 թվականներին այնքան էլ մեծ չի եղել, ունեցել է ընդամենը 35 ծուխ և 269 բնակիչ։ Մինչդեռ «Կավկազսկի կալենդար», 1907 թ., գրքի համաձայն 1897-ի սկզբին Տագ գյուղն ունեցել է 2849 բնակիչ (բոլորը հայեր)։ Նույն «կալենդարի» համաձայն 1915-ին Տագ գյուղում ապրել են 3500 հայեր։

Այս տվյալները ցույց են տալիս, որ այն եղել է ժամանակի խոշոր գյուղերից մեկը։

Ռուսերեն ձեռագիր փաստաթղթերում հաճախ դժվար է տարբերել Tar է գրված, թե Tor։ Բացի այդ, գրեթե բոլոր փաստաթղթերում հանդիպել ենք Tor գյուղի ծխական դպրոցին և միայն երկու փաստաթղթում՝ Tar գյուղի դպրոցին։ Մինչդեռ, մեր կարծիքով, դժվար թե մեծաթիվ բնակչություն ունեցող Տագ գյուղը իր դպրոցը չունենար։ Վերևում նշված երկու փաստաթղթերը, որոնցում ցույց է տրված նաև Տագ գյուղի ծխական դպրոցը (իսկ Տող գյուղի դպրոցը չկա), կազմված են բավականաչափ զգույշ և պատասխանատու կերպով։ Դրանցից առաջինը կազմված է 1895-ին Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձությունում և ներկայացված է Կովկասի գլխավոր կառավարչությանը։ Այդ փաստաթղթով որոշվել է հայ դպրոցների հետագա բախտը՝ թողնել հայ հոգևոր իշխանության իրավասության տակ, թե՞ ենթարկել պետական դպրոցական օրգաններին։ Թողնելու կամ չթողնելու միակ չափանիշը հայ դպրոցների պահպանության աղբյուրներն են։ Եթե այս կամ այն դպրոցի դիմաց գրված էր (ի դեպ տեղեկությունները հավաքված էին բացառապես պետական իշխանության տեղական օրգանների միջոցով), որ այն պահվում է տվյալ գյուղի կամ վայրի եկեղեցու եկամուտներով, ապա այդ դպրոցը (իհարկե, առժամանակ) թողնվում էր հայ հոգևոր իշխանությանը, իսկ բոլոր այլ աղբյուրներով պահվող դպրոցները բռնագրավվում էին։

Ինչ-որ բարձր իշխանավորի ձեռքով այդ ցուցակում եղած յուրաքանչյուր դպրոցի դիմաց գրված է, պե՞տք է թողնել հայ հոգևոր իշխանությանը, թե ոչ։ Կա նաև «неизвестно» մակագրությունը, երբ այս կամ այն դպրոցի գոյության աղբյուրը հնարավոր չէր եղել պարզել կամ էլ անորոշ էր մնացել։

Կարծում ենք, որ նման ցուցակում մի գյուղի դպրոցը մյուս գյուղի դպրոցով շփոթել հնարավոր չէր։ Ուրեմն այս ցուցակում խոսքը, իրոք, Տագ գյուղի ծխական դպրոցի մասին է։ Գրված է, որ այն գործում է Տագ գյուղի Սուրբ Սահակյան եկեղեցուն կից և պահվում է այդ եկեղեցու գումարներով ու աշակերտների ուսման վարձով (ի դեպ, Մ. Բարխուդարյանը չի նշում Տագ գյուղի եկեղեցու անունը, իսկ Դող գյուղի եկեղեցին, ըստ նրա գրքի, կոչվել է «Սուրբ Հովհաննես»։ Այս ևս ապացույց է, որ վերոհիշյալ ցուցակում խոսքը ոչ թե Դող, այլ Տագ գյուղի դպրոցի մասին է)։

Տագ գյուղի դպրոցի դիմաց իշխանավորի ձեռքով գրված է «неизвестно», չնայած դա չի խանգարել, որպեսզի դաժանաբար փակվեն նաև այդ մակագրությանն արժանացած հայ դպրոցները։

Մյուս փաստաթուղթը կազմվել է գարնանը 1895 թվականին, առաջինի հիման վրա։ Նրանում մտցվել են բոլոր այն հայ դպրոցները, որոնք պետք է հանձնվեին կառավարական օրգաններին, իսկ հակառակ դեպքում փակվեին, ինչպես և տեղի է ունեցել։ Դրանց թվում էր նաև Տագ գյուղի Սուրբ Սահակյան եկեղեցու ծխական դպրոցը։

Այս երկրորդ փաստաթուղթը Կովկասի գլխավոր կառավարչությու-

նը պաշտոնապես ուղարկել է էջմիածին՝ կարգադրելով այնտեղ նշված դպրոցները անհապաղ հանձնել պետական ուսումնական վարչությանը։

Փակվել է նաև Տագ գյուղի ծխական դպրոցը։

Ասացինք, որ վերոհիշյալ ցուցակները կազմվել են 1894—95 թվականներին։ Հետևաբար այդ թվականներից առաջ Տագ գյուղի ծխական դպրոցը գործել է։ Իհարկե, այն պետք է բացված լինի 1889-ից հետո, քանի որ հայ դպրոցների 1888—89 ուս. տարվա վիճակագրական տեղեկագրում (հրատարակված էջմիածնում) այդ դպրոցը չի նշված։ Կարող է պատահել, որ այդ գյուղի դպրոցը գոյություն ունեցած լինի մինչև 1885 թվականը։ Բայց մեր ուսումնասիրած արխիվային բազմաթիվ փաստաթղթերում և տպագիր աղբյուրներում այն մեզ չի հանդիպել։ Ճամն այն է, որ այդ դպրոցը չի հանդիպում նաև 1905 թվականից հետո կազմված շատ տարիների փաստաթղթերում ու հրատարակված աղբյուրներում (հիշեցնենք, որ հայ դպրոցների երկրորդ ընդհանուր փակումը տեղի է ունեցել 1895—97 թվականներին, իսկ վերաբացումը 1905 և հետագա տարիներին)։

Մնում է ենթադրել, որ Տագ գյուղի հայկական ծխական դպրոցը փակելուց հետո այնտեղ բացվել է կառավարական դպրոց։ Միայն պաշտոնական մի տեղեկագրում, կազմված պետական օրգանների կողմից 1914 թվականին, նորից ցույց է տրված Տագ գյուղի հայկական դպրոցը՝ 3 ուսուցիչներով և 158 աշակերտներով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 73։
Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջեր 66, 73—75, 440 և 447։
«Кавк. календарь». 1907, էջ 304, 1915, էջ 185; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58։

Տող (Դո՞ղ) գյուղի ծխական դպրոց

Այս գյուղի մասին բավականաչափ խոսվեց Տագ գյուղի դպրոցի կապակցությամբ, ուստի և կրկնելը ավելորդ ենք համարում։

Տող (Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքում՝ Դող, Դող Ավան) գյուղի ծխական դպրոցը ամենայն հավանականությամբ բացվել է 1873-ին՝ ունենալով մի ուսուցիչ և 12 աշակերտ։ 1881-ին ունեցել է 40 աշակերտ։ 1885-ին փակվել է։

Չգիտենք թե ինչու այս դպրոցը երկար տարիներ այլևս չի երևում արխիվային փաստաթղթերում և տպագիր աղբյուրներում։ Այն նորից երևում է 1906-ի սկզբին վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ Այն փաստը, որ հայ դպրոցների երկրորդ վերաբացումը թույլ տալուց (1905-ի օգոստոսին) ընդամենը մի քանի ամիս հետո բացվել է նաև Տող գյուղի ծխական դպրոցը, թույլ է տալիս ենթադրելու, որ այդ դպրոցը գործել է

մինչև 1894—95 թվականները, այսինքն՝ մինչև հայ դպրոցների երկրորդ ընդհանուր փակումը։ Հավանաբար նրա փոխարեն բացվել և մինչև 1905 թվականը գործել է պետական դպրոց։ Միական դպրոցը եղել է երկդասյան երկսեռ դպրոց, ունենալով 4 բաժանմունք և 70 աշակերտ (10 աղջիկ)։ 1911-ին գործել է։ Այդ թվականին դպրոցի ուսուցիչների և աշակերտների ուժերով կազմակերպվել են թատերական ներկայացումներ, որոնք որոշ եկամուտ են բերել դպրոցին։ 1915-ին ունեցել է 35 աշակերտ։

Գործել է նաև հետագա տարիներին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 43, թ. 274; ց. 50, թ. 60; ց. 199, թ. 17—23, ց. 543, թ. 16; ց. 492, թ. 201; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1585, թ. 49; ց. 8717, թ. 8; «Նոր դպրոց», 1911, № 9—10, էջ 32։

Տումի գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1908-ին՝ լինելով միդասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 2 բաժանմունք և 45 աշակերտ (25 աղջիկ)։ 1911-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 543, թ. 32;
«Նոր դպրոց», 1911, № 9—10, էջ 32։

Փիրջամալ (Փիր-Ճամալ) գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցը ևս 1873-ին գործել է (հավանաբար նույն թվականին էլ բացվել է)՝ ունենալով 15 աշակերտ։ Այդ դպրոցի առաջին ուսուցիչն է եղել Մանասե Ներսիսյանը։

Հետագայում փակվել է։ Շատ տարիների փաստաթղթերում այլևս չի հիշվում։ Նորից բացվել է 1908-ի սեպտեմբերին։ Եղել է երկսեռ ծխական դպրոց՝ ունենալով 60 աշակերտ (12 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայոց մշակութային միությունից։ 1915-ին ունեցել է 60 աշակերտ և մեկ ուսուցիչ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 43, թ. 6; ց. 543, թ. 1;
Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 128; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 159, գ. 283, թ. 58։

Քարինտակ (Դաշալթի) գյուղի ծխական դպրոց

Դպրոցը բացվել է 1908-ին՝ լինելով միգասյան երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 2 բաժանմունք, 41 աշակերտ (10 աղջիկ)։ Պահվել է Բաքվի Հայոց մշակութային միության նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 21; գ. 182, թ. 14—23;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 50։

Քյաթուկ (Նոր Քյաթո՛ւկ, Աղդարա) գյուղի ծխական դպրոց

Քյաթուկ գյուղի դպրոցը 1873-ին գործել է՝ ունենալով 27 աշակերտ։ Հետագա մի շարք տասնամյակների փաստաթղթերում չի հիշատակվում, հավանաբար չի գործել։ Նորից բացվել է 1907-ի նոյեմբերին։ 1908—09 ուս. տարում եղել է միգասյան երկսեռ դպրոց՝ 50 աշակերտով (15 աղջիկ)։ 1915-ին ունեցել է մի ուսուցիչ և 58 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6; գ. 543, թ. 1—2; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58։

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄ

Այս թեմի հայ հոգևոր վարչությունը սպասարկել է Եկատերինոսլավի, Տավրիկյան, Բեսարաբիայի ու Խերսոնի նահանգների և Մոսկվա ու Պետերբուրգ քաղաքների հայերին (Նոր Նախիջևանի և Քիշնևի վիճակներ)

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՎԻՃԱԿ

Եկատերինոսլավի նահանգ, Խարկով, Մոսկվա և Պետերբուրգ քաղաքներ

Թոփտի գյուղի Ս. Սարգիս եկեղեցու արական ծխական դպրոց

Թոփտի գյուղը եղել է Եկատերինոսլավի նահանգի հայաբնակ խոշոր գյուղերից մեկը, որն ունեցել է երկու եկեղեցի և տարբեր տարիների բացված չորս դպրոց։

Այդ դպրոցներից հնագույնը Ս. Սարգիս եկեղեցու արական դպրոցն է, որը հիմնվել է 1860 թվականին։ Այն 1877-ին ունեցել է 3 ուսուցիչ և 55 աշակերտ։ 1887-ին գործել է։

1895—96 թվականներին ցարական կառավարությունը բռնի ուժով երկրորդ անգամ փակել է հայկական բոլոր եկեղեցական, ծխական դպրոցները։ Բացառություն են կազմել միայն Նոր Նախիջևանի թեմի հայ դպրոցներից մի քանիսը, որոնք անցնելով լուսավորության մինիստրության տնօրինության տակ շարունակել են գործել պետական ծրագրով։

Թեմական տեսչի մի գրությունից իմանում ենք, որ այս դպրոցը ևս չի փակվել։

1912—13 ուս. տարում եղել է 5-ամյա արական դպրոց, ուր սովորել են 182 տղաներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 19; գ. 590, թ. 47; ՍՍՀՄ ՊԿՊԱ (Լենինգրադ), ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 9; «Դպրոց», 1875—1876, N 4, էջ 193; «Արարատ», 1878, ԺԲ, էջ 456։

Թոփտի գյուղի Ս. Սարգիս եկեղեցու իգական դպրոց

Հիմնվել է 1908-ին։ 1912—13 ուս. տարում եղել է 4-ամյա իգական դպրոց՝ 75 աշակերտուհիներով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 590, թ. 47։

Թոփտի գյուղի Ս. Փրկիչ եկեղեցու արական դպրոց

Հիմնվել է 1908-ին։ 1912—13 ուս. տարում եղել է 5-ամյա արական դպրոց՝ 162 աշակերտով։

ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 590, թ. 43։

Թոփտի գյուղի Ս. Փրկիչ եկեղեցու իգական դպրոց

Հիմնվել է 1904-ին։ 1912—13 ուս. տարում եղել է իգական միդասյան դպրոց՝ 87 աշակերտուհիներով։

ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 590, թ. 43։

Խարկով քաղաքի հայկական դպրոց

«Բաքու» ռուսական թերթը 1914 թ. հունվարի 9-ի համարում տպագրված «Հայերը Խարկովում» հոդվածում գրել է.

«Խարկովում մշտապես բնակվող հայերի թիվը այժմ հասնում է մի քանի հարյուր ընտանիքի, բայց այդ թիվը անընդհատ աճում է։ Այստեղ հայ բնակչությունն իր ճնշող մեծամասնությամբ Տաճկահայաստանից եկածներ են, որոնք, շտանելով Աբդուլ Համիդի ռեժիմը, գրեթե ոտաբոբիկ հասել են Ռուսաստան, ինչպես իրենք են անվանում, «սպիտակ թագավորի երկիրը»։

Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդի կողմից էջմիածնի ուսումնական հանձնաժողովին ուղարկած մի գրությունից իմանում ենք, որ 1903-ին Խարկովում գործել է հայկական ծիսական դպրոց, թեև մի այլ փաստաթղթում նշվում է, որ այդ դպրոցը հիմնվել է 1906-ին։ 1909-ին այն եղել է եռամյա երկսեռ դպրոց, իսկ 1913—14 ուս. տարում ունեցել է 30 սովորող (15 աղջիկ)։ Ուսանողներից բացի այնտեղ ավանդել է 42 տարվա մանկավարժական աշխատանքի փորձ ունեցող Սրապիոն Տեր-Խաչատրյան-Սամվելյանը։ 1916-ին գործել է՝ ունենալով 47 սովորող (25 աղջիկ)։

«Բաքու», 1914, հունվարի 9, № 4։
ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 193, թ. 1, գ. 679, թ. 7—8, ֆ. 52, ց. 3, գ. գ. 485 և 492։

Մոսկվայի Լազարյան ճեմարան[1]

Մոսկվայի Լազարյան ճեմարանը հիմնվել է 1814 թվականին[2], հայանի հայ վաճառական և գործարարատեր Հովհաննես Լազարյանի կտակած և նրա եղբոր՝ Հովակիմ Լազարյանի լրացուցիչ հատկացրած գումարներով՝ «հայ ազգի ազքատ երեխաներին դաստիարակելու և ուսուցանելու համար[3]։ Ճեմարանի համար կառուցվել է ուսումնական հատուկ շենք՝ իր հանրակացարանով և այլ բաժանմունքներով՝ Մոսկվայի Մյասնիցկի թաղամասի 3-րդ նրբանցքի[3] վրա, որը հետագայում վերանվանվել է և այժմ էլ կոչվում է Армянский переулок *(Հայկական նրբանցք)։ 1829 թվականին Լազարյանները ճեմարանին կից հիմնում են հատուկ տպարան, որը մեծ դեր է խաղացել հայագիտությանը վերաբերող արժեքավոր աշխատությունների հրատարակման գործում։*

Զարմանալի հետաքրքիր է ճեմարանի զարգացման պատմությունը, որի վրա սակայն այստեղ մանրամասն կանգ առնել չենք կարող։ Նշենք միայն, որ սկզբնական 12—13 տարիների ընթացքում այն հանդիսացել է չորսդասյան մի ուսումնարան՝ ուսման 6 տարվա տևողությամբ։ Նախապատրաստական դասարանում սովորել են 2, 2-րդ դասարանում՝ 2, 3-րդ դասարանում՝ 1 և 4-րդ դասարանում՝ 1 տարի։

Ունենալով այսպիսի կառուցվածք և իր վրա կրելով Մոսկվայի համալսարանի անմիջական և բարերար ազդեցությունը, Լազարյան ուսումնարանը իր սաներին պատրաստում էր համալսարանական կրթության համար։ Այդ շրջանում ուսումնարանի շրջանավարտներից շատերը մեծ հաջողությամբ հանձնել են քննությունները և ընդունվել Մոսկվայի համալսարանը։

Սկզբում ուսումնարանը նախատեսված է եղել 30 ձրիավարժ հայ երեխաների համար, սակայն մի քանի տարի հետո նրա «աշակերտների թիվը, հոգաբարձուի խնամքի տակ գտնվող երեսուն սաներից բացի,

---

[1] *Մոսկվայի հայկական Լազարյան ճեմարանի մասին գրվել ու հրատարակվել են բազմաթիվ գրքեր ու հոդվածներ, ինչպես նախասովետական, այնպես էլ սովետական շրջաններում (հայերեն և ռուսերեն)։ Ահա թե ինչու այստեղ այդ հնչակավոր ուսումնական հաստատության մասին խոսվելու է խիստ համառոտակի։ Նշվել են նրա հիմնադրման ու զարգացման հանգուցային մոմենտները։*

[2] *Ճեմարանի հիմնադրման թվականը սովորաբար համարվել է 1815-ը, սակայն մի շարք հետազոտողներ ապացուցում են, որ այն փաստորեն սկսել է գործել 1814-ից։*

[3] *Տե՛ս* П. Гидуляков, «Материалы для истории Лазаревского института восточных языков», Москва, 1914, стр. 5—7.

[3] *Տե՛ս* Собрание высочайших указов и актов, относящихся до Московского Лазаревых института восточных языков.
Գումար բարձրացուցի հրամայական և արձանագրությանց, վերաբերելոց առ հայկական Լազարյան ճեմարանն արևելյան լեզվաց, որ ի Մոսկվա։
Санк-Петербург, 1839, էջ 24։

նշանակալի չափով մեծանում է իրենց հաշվին ապրող գիշերօթիկ և երթևեկ սաներով, առանց ազգի և հավատի խտրության»[1]։

Ոգեորված այդ ամենով, Լազարյանները մտադրվում են իրենց ուսումնարանը դարձնել ճեմարան (академия) և այդ տարիով ներկայացնում են հատուկ դիմում-խնդիր, որը մերժվում է լուսավորության մինիստրության կողմից։ Դրանից հետո, 1823 թ. ներկայացվում է նոր դիմում՝ ուսումնարանը «Հայկական Լազարյան գիմնազիա» վերանվանելու մասին, սակայն այդ դիմումը ևս մնում է անարդյունք։

Վերջապես, երկարատև ջանքերից հետո, 1828 թվականի մարտին հետևում է բարձրագույն հրաման, որով ուսումնարանը անվանում է Մոսկվայի Արևելյան լեզուների հայկական Լազարյան ճեմարան (Армянский Лазаревых институт восточных языков)։

Այդ ժամանակ ճեմարանի առաջ դրվում են երեք տարբեր խնդիրներ՝ նպաստել հայերի լուսավորության զարգացմանը, դառնալ Ռուսաստանում արևելյան լեզուների տարածման կենտրոն և հանդիսանալ հանրակրթական դպրոց բոլոր սովորողների համար, անկախ նրանց դավանանքից ու ազգային պատկանելությունից։

Մի ուսումնական հաստատության համար դժվար է միաժամանակ ծառայել երեք հավասարազոր նպատակների՝ լինել և՛ մեկը, և՛ մյուսը, և՛ երրորդը։ Բնական է, որ դրանցից մեկը կամ մյուսը պետք է առաջնանար։ Եվ, իհարկե, առաջին է նախնական հիմնական նպատակը, որ առաջադրել էին նրա հիմնադիրները՝ լինել բացառապես հայ երեխաների կրթության ու լուսավորության օջախ։

1834 թվականի հունիսին հաստատված կանոնադրության համաձայն Ռուսաստանի բոլոր ուսումնական հաստատությունները բաժանվել են երկու կատեգորիայի։ Առաջին կատեգորիայի մեջ մտել են և բարձրագույն ուսումնական հաստատություն են համարվել բոլոր համալսարանները, Պետերբուրգի գլխավոր մանկավարժական ինստիտուտը, լիցեյները, ռազմական, հոգևոր, բժշկական ակադեմիաները և մի քանի այլ ուսումնարաններ և ինստիտուտներ։

Երկրորդ կատեգորիայի մեջ մտել են բոլոր մնացած ինստիտուտները, ուսումնարանները և զանազան մասնագիտական դպրոցները՝ հավասարվելով գիմնազիաներին և համարվելով միջնակարգ դպրոցներ։

1837 թվին երկրորդ կարգի ուսումնական հաստատությունների շարքին է դասվել նաև Լազարյան ճեմարան-ինստիտուտը՝ պահպանելով իր նախկին անվանումը։

Լազարյան ճեմարանի շրջանավարտները կարող էին ընդունվել համալսարան և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ։

[1] Семидесятипятилетие Лазаревского института восточных языков, исторический очерк Г. И. Кананова, Москва, 1891, стр. 97.

1837 թվականից ճեմարանում ուժեղացվում է արևելյան լեզուների (բացի հայերենից, նաև՝ արաբերենի, թուրքերենի և պարսկերենի) պարտադիր ուսումնասիրությունը։ Դրա փոխարեն իջեցվում է հանրակրթական առարկաների գիմնազիական դասընթացի մակարդակը։

Լազարյան ճեմարանի 1836 և 1837 թվականների գործունեության մասին թագավորին ներկայացված հաշվետվություններից և առհասարակ այդ ճեմարանի նկատմամբ ցուցաբերած ուշադրությունից պարզվում է, թե ինչ սպասելիքներ ուներ նրանից ցարական կառավարությունը։

Գրաֆ Բենկենդորֆը, որ կայսեր հրամանով նշանակված էր ճեմարանի գլխավոր կառավարչապետ, 1836 թվականին նրան ուղղված իր զեկուցագրում նշում էր, որ Լազարյան ճեմարանը, գոյություն ունենալով 21 տարի՝ առանց պետական որևէ օգնության, կարող է համարվել պետության մեջ եղած ամենաօգտակար հաստատություններից մեկը, քանի որ այն իր մեջ ամենցնում է այնպիսի սերմեր, որոնց շնորհիվ «ուսումն ու քաղաքականությունը ասիական ժողովուրդների հետ մերձենալով, քաղում են իրենց պտուղները»։ Դրանից բացի «հայ պատանեկությունը, կրթվելով այդ հաստատության մեջ, ավելի շատ է միանում բնիկ ռուսների հետ»[1]։

Պետք է նշել, որ այս ոգով էլ կազմված է եղել Լազարյան ճեմարանի նանոնադրությունը, որը հաստատվել և հրատարակվել է 1830 թվականին։

Ինչպես բոլոր ուսումնական հաստատություններից, նույնպես և Լազարյան ճեմարանից պահանջվում էր մատաղ սրտերում ամենցնել բարեպաշտություն ասածը նկատմամբ, անձնվեր ծառայություն կայսերական գահին և սեր դեպի ցարական Ռուսաստանը։

Լազարյան ճեմարանը, գտնվելով ցարական կառավարության և նրա բարձր պաշտոնեության ամենախիստ վերահսկողության տակ, ինչպես նաև իր ներսում ունենալով միապետությանը հավատարիմ հոգաբարձուների, պրոֆեսորների և դասատուների մի ստվար խումբ, չէր կարող շեղվել իր համար գծված հիմնական ուղուց։

Վերոհիշյալ խնդիրներից երևելով՝ ճեմարանը պետք է կազմակերպեր արևելյան լեզուների տեսական ու գործնական ուսումնասիրության, փոքրված թարգմանիչների, հայկական դպրոցների համար ուսուցիչների և հայ եկեղեցու համար «կրթված սպասավորների» պատրաստման գործը։

Պետք է նշել սակայն, որ անկախ ցարական իշխանության սպասելիքներից, Լազարյան ճեմարանն իր ավելի քան հարյուր տարվա գոյու-

[1] «Собрание высочайших указов и актов...», стр. 70—72.

թյան ընթացքում, հատկապես այն տարիներին, երբ նրանում աշխատել են առաջավոր գաղափարներով զինված մարդիկ, խոշոր դեր է խաղացել հայ կուլտուրական-մտավորական կադրերի պատրաստման, հայ ժողովրդին ռուս ժողովրդի կուլտուրային հաղորդակից դարձնելու, այդ ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու, հայագիտությունն ու արևելագիտությունը զարգացնելու ասպարեզում։ Դրան են նպաստել նաև այն գրքերից շատերը, որոնք հրատարակվել են ճեմարանի միջոցով, մասնավորապես հայ-ռուսերեն մեծ բառարանը։

Ճեմարանի դասընթացը բաժանված է եղել ըստ կարգերի, որոնք ընդգրկել են բարձր, միջին, ցածր և նախապատրաստական դասարաններ։ Այնտեղ կրոնական առարկաներից բացի դասավանդվել են՝

1. Բարոյաքաղաքական առարկաներ՝ արամաբանություն, բարոյագիտություն, քաղաքական պատմություն (политическая история) և վիճակագրություն։

2. Ֆիզիկա-մաթեմատիկական գիտություններ՝ թվաբանություն, երկրաչափություն, եռանկյունաչափություն, հանրահաշիվ, բնագիտություն (ֆիզիկա) և բնական պատմություն։

3. Բանասիրական գիտություններ՝ քերականություն, ճարտասանություն, պատմություն, աշխարհագրություն և հնէաբանություն։

4. Լեզուներ՝ ա) եվրոպական՝ ռուսերեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, բ) ասիական՝ հայերեն, արաբերեն, տաճկերեն, պարսկերեն։

5. «Գեղեցիկ արվեստներ»՝ վայելչագրություն, պատկերահանություն (նկարչություն), ձևագործություն (черчение планов), կաքավ (танцевание), երաժշտություն։

Ինչպես երևում է այստեղ թվարկված առարկաներից, Լազարյան ճեմարանն ունեցել է բավականաչափ ընդարձակ և հարուստ բովանդակություն, իր մեջ միավորելով ինչպես հին՝ կլասիկական, այնպես էլ նոր կրթության տարրերը, իհարկե՝ առաջինի գերակշռությամբ։ Ճեմարանի կրթական բովանդակությունը պայմանավորված է եղել նրա առաջ դրված այն խնդիրներով, որոնց մասին խոսվեց վերևում։

Դասավանդման հիմնական լեզուն եղել է ռուսերենը։ Որպեսզի աշակերտները հմտանան օտար լեզուների մեջ, բոլոր վերակացուները նշանակվել են օտարերկրացիներ, որոնք երեխաների հետ խոսել են օտար լեզվով, ուղղել նրանց սխալները։ Սահմանված են եղել տարբերակ փոխադրական և ամփոփական քննություններ։

Դիշերօթիկ աշակերտներից միայն նրանց են թույլ տվել կիրակի և տոն օրերին տուն գնալ (անպայման նրանց հետևից եկող տարեց մարդու ուղեկցությամբ), ովքեր ունեցել են գերազանց վարք և լավ առաջադիմություն։ Անկարգություն արողներին և թույլերին զրկել են այդ իրավունքից։

Ուսումնական տարին տևել է 11 ամիս. մեկ ամիս (հուլիսին) տրվել է հանգիստ։ Պարապմունքները տեղի են ունեցել ամեն օր, առավոտյան 8-ից մինչև 12-ը և հետճաշյա՝ 2-ից մինչև 6-ը։

Ճեմարանում մտցված է եղել խստագույն ռեժիմ։ Առավոտյան ժամը 5-ին կամ հինգն անց կեսին աշակերտները պարտավոր էին վեր կենալ, իսկ ժամը 6-ին գնալ աղոթելու։ Ժամը 7—8-ը հատկացվում էր դասերի կրկնությանն ու նախաճաշին։ Այնուհետև՝ 8—12-ը դասեր, 12-ից մինչև 2-ը՝ ճաշ, հանգիստ և մարմնամարզական վարժություններ, 2—6-ը՝ հետճաշյա դասեր, 6-ին՝ նախընթրիք, հանգիստ և գրոսանք, 7-ին՝ դասերի սերտում, 8-ին՝ ընթրիք և ապա՝ երեկոյան աղոթքներ։

Ճեմարանն ունեցել է իր գրադարանը և մի շարք առարկայական կաբինետներ։

1836-ին ճեմարանն ունեցել է 29 դասախոսներ և դաստիարակներ, 89 ուսանողներ, որոնցից 36 հոգի ապրել են ճեմարանի հաշվին, իսկ 54 հոգի ուսման վարձ են վճարել։

Իր գոյության առաջին 25-ամյակում, այսինքն՝ մինչև 1839 թվականը, ճեմարանը տվել է ընդամենը 533 շրջանավարտ, որոնց մի մասը շարունակել է իր ուսումը Մոսկվայի համալսարանում, իսկ մնացածները անցել են պետական ծառայության կամ իրենց նվիրել են ուսուցչական աշխատանքի հայկական դպրոցներում։

Ճեմարանի ուսանողները հիմնականում եղել են Հայաստանից և Վրաստանից, ինչպես նաև Պարսկաստանից, Թուրքիայից և Հնդկաստանից։ Ճեմարանում սովորել են նաև ռուս և այլ ազգությունների պատկանող ազնվականների զավակներ։

Ճեմարանի կանոնադրության համաձայն Ներանում ընդունվել են գերազանցապես ազնվականների ու չինովնիկների երեխաները, թեև, ինչպես նշվեց սկզբում, նրա հիմնադիրները այն հիմնել էին բացառապես «հայ ազգի աղքատ երեխաների» համար։

Նշված տարիների ընթացքում ճեմարան են այցելել և նրա գործունեությունը վերահսկել հարյուրավոր պետական բարձր պաշտոնյաներ, այդ թվում ինքը՝ Նիկոլայ Առաջինը, նրա որդին՝ Ալեքսանդրը (հետագայում Ալեքսանդր 2-րդ կայսր), բազմաթիվ մինիստրներ, ֆելդմարշալներ, գեներալներ և այլն։

Սրանց այցելությունները, անշուշտ, նպատակ ունեին պարզել, թե որքանով է ճեմարանն արդարացնում պետության հույսերը, և նրանում չե՞ն թափանցել արդյոք ճորտատիրության ու ինքնակալության դեմ ուղղված գաղափարներ։

Իհարկե, ճեմարանն ունեցել է նաև այնպիսի այցելուներ, որոնց

մոտիկից է հետաքրքրել այդ ուսումնական հաստատության կյանքը, հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը, վիճակը և այլն։ Այդպիսի պատվավոր այցելուների թվում են եղել «Խելքից պատուհասի» տարանցավոր հեղինակ և հայ ժողովրդի բարեկամ Ա. Ս. Գրիբոյեդովը, ռուս հանճարեղ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինը, հայանի գրող Ժուկովսկին, գեկաբրիստ Ա. Մուրավյովը, վրաց լեզվի պրոֆեսոր, ռուսական գիտությունների ակադեմիայի անդամ Բրոսսեն, գերմանական հայանի գրող ու գիտնական Ա. Հումբոլտը, Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանների ռեկտորներ, բազմաթիվ պրոֆեսորներ, ակադեմիկոսներ և ռուսական ու արտասահմանյան քաղաքական շատ գործիչներ։

Այն ժամանակվա ռուսական և արտասահմանյան մամուլը հիացմունքով է արտահայտվել Լազարյան ճեմարանի մասին, ընդգծելով այն դերը, որ նա կոչված էր խաղալու հայերի մտավոր զարգացման, հայ և ռուս ժողովուրդների կյանքին ու պատմությանը արևմտյան երկրներին ծանոթացնելու գործում։

«Մոսկովսկի Վեդոմոստին» 1817 թվականի իր համարներից մեկում գնահատելով Լազարյանների ճեռնարկման քաղաքական նշանակությունը, միաժամանակ նշում էր, որ «Ռուսաստանը, իբրև զավակատեր մայր, աճեցնելով իր ծոցում (հայերի) որբացած մանուկներին նույնպիսի ինքնությամբ, որով ոգեշնչված է իր արյունակից զավակների նկատմամբ, նրանց մեջ, իր կաթի հետ միասին, կներարկի իր խիզախությունն ու իր ոգին»[1]։

«Սեներնի արխիվը» 1823 թվականին գրում էր. «Շատ բարեգործություններից բացի, որ կատարել է Լազարյանների գերդաստանը, նրանց կողմից հիմնված է նկարագրվող արևելյան ուսումնական հաստատությունը Մոսկվայում։ Մարդկության այս մեծահոգի սերբագործությունը պատկանում է պատմությանը։ Գիտության այս սերմնարանի հիմնադիրները նվաճել են ժամանակակիցների հարգանքի և գալիք սերունդների շնորհակալության իրավունքը»[2]։

Ֆրանսիայում հրատարակված «Ուղեցույց Մոսկվայի» գրքում, մանրամասն խոսելով Լազարյան ճեմարանի հիմնադրման ու նշանակության մասին, հեղինակը միաժամանակ գրում է.

«Ռուսաստանի վաղեմի կապերը Հայկական թագավորության հետ պատկանում են հեռագույն դարերին։ Լեզուների իմացումը կարծես թե ազգակցական կապերի մեջ է գնում նույնիսկ ամենահեռավոր երկրների բնակիչներին։ Ֆրանսիական բանահյուսությունը ունի միայն առանձին հատվածներ արևելյան մի քանի գրողների գործերից, բայց դեռ չկա դիրք՝ «Արևելյան գրադարան» անունով։ Այն սպասում ենք Լազարյան ինստիտուտի սաներից։ Հիմնվելով ռուսաց լեզուն, հայկական բարբառները՝ նրանք կտան մեզ նաև արևելյան պոեզիայի ոճի վերծանությունն ու ծաղիկները»[1]։

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իտալիայում, Հնդկաստանում տպագրված շատ գրքերում ու ամսագրերում Լազարյան ճեմարանը բնութագրվել է որպես բնդհանուր օգտակարություն ունեցող գիտության օջախ։ Այդ կապակցությամբ խոսելով նաև հայոց լեզվի ու գրականության մեծության և դրանց ուսումնասիրման պատմական ու քաղաքական բացառիկ նշանակության մասին, ֆրանսիացիները հաղորդում էին, որ, նկատի ունենալով այդ ամենը, իրենց կառավարությունը Փարիզի համալսարանում հիմնել է հայոց լեզվի և գրականության ամբիոն։

Այսպես ուրեմն, մեծ սպասելիքներ ունեին Լազարյան ճեմարանից ոչ միայն հայերը, այլև Ռուսաստանը, Եվրոպայի ու Ասիայի շատ երկրներ։

Հետագա տասնամյակները նոր փոփոխություններ են բերում ճեմարանին։

1848-ին ճեմարանի համար հաստատվում է նոր կանոնադրություն, որը գործում է ամբողջ 20 տարի։ Ըստ այդ կանոնադրության՝ ճեմարանն ունենում է 6 գիմնազիական և երկու լիցեյական դասարաններ՝ 8 տարվա բնդհանուր դասընթացով։ Այդպիսով, ճեմարանի առաջ դրվում է և՛ հանրակրթական, և՛ մասնագիտական կրթություն տալու պահանջ, մի բան, որի իրականացումը կապված էր մեծ դժվարությունների հետ։ Դրա հետևանքով զգալի շափով իջնում է ճեմարանի հանրակրթական մակարդակը, իսկ նրա շրջանավարտների համար դժվարանում է համալսարան ընդունվելը։ Ասենք, երկու տարում արևելյան լեզուների մասնագետներ պատրաստելը ևս հեշտ բան չէր։

Դրությունը այդպես շարունակվում է մինչև 1868 թվականը, երբ կայսեր հրամանով ճեմարանում մտցվում է լրիվ կլասիկական գիմնազիայի դասընթաց, լիցեյական դասարանները փակվում են, իսկ արևելյան լեզուները՝ հանվում[2]։ Փաստորեն ճեմարանը դառնում է սովորական միջնակարգ դպրոց՝ հեռանալով իր հիմնական նպատակից ու խնդիրներից։

Այդ բանը կատարվում է ճեմարանի հոգաբարձուի և դասախոսների մեծ մասի կամքին հակառակ, առաջացնելով նրանց և հայ մտավորա-

[1] «Собрание высочайших указов и актов», էջ 198։
[2] Նույն տեղը, էջ 206։

[1] Նույն տեղը, էջ 207։
[2] Տե՛ս «Тридцатилетие специальных классов Лазаревского института восточных языков», Москва, 1903, стр. 2.

կանոնների աչքի ընկնող ներկայացուցիչների օրինական դժգոհությունը։ Իշխանության օրգանները ևս շատով զգում են նման ռեֆորմի անանպատակահարմարությունը և երկու տարի հետո նորից վերականգնվում են լիցեյական դասարանները։ Սակայն պարզվում է, որ երկու տարին խիստ անբավարար է արևելյան լեզուներին տիրապետող մարդիկ պատրաստելու համար։ Այդ պատճառով մշակվում և կայսեր հաստատմանն է ներկայացվում ինստիտուտի նոր կանոնադրությունը։ Այն հաստատվում է 1872 թ. դեկտեմբերի 16-ին։

Այդ նոր կանոնադրության համաձայն Լազարյան ճեմարանը (ինստիտուտը) ունենում է երկու իրարից անկախ, ինքնուրույն դասընթաց՝ գիմնազիական և լիցեյական կամ մասնագիտական։ Վերջինում ուսման տևողությունը սահմանվում է երեք տարի՝ օտար լեզուների ուսուցումը ավելի ուժեղացնելու նպատակով։ Հատուկ կամ մասնագիտական դասընթացների դասընթացն ավարտողները իրենց իրավունքներով հավասարեցվում են համալսարանի համապատասխան ֆակուլտետն ավարտածներին, այսինքն՝ համարվում են բարձրագույն կրթություն ստացողներ։ Ճեմարանի պրոֆեսորներն ու դասախոսները ևս ստանում են համալսարանի դասախոսների իրավունքներ։ Մասնագիտական դասընթացներում ուսումնասիրել են հայ գրականություն, արաբական գրականություն, պարսկական գրականություն, թուրք-թաթարական լեզու, վրացերեն, ռուս գրականություն և Արևելքի պատմություն։

1872 թ. կանոնադրությամբ ճեմարանը գործել է տասնյակ տարիներ։ Ճեմարանի կառուցվածքը համարյա անփոփոխ է մնացել մինչև 1918 թվականը, չնայած նրա ուսումնական գործում և կյանքում տեղի ունեցած առանձին փոփոխություններին։

Ճեմարանի երկու բաժինների ուսանողական համակազմը ուսումնասիրելիս, ամենից առաջ աչքի են ընկնում դրա զգալի զիգզագանման տատանումները, երևույթները տարբեր տարիների ու տասնամյակների ընթացքում։ Մի տարի տեսնում ենք համակազմի աճ, մյուս տարում՝ նկատելի նվազում, հաջորդ տարում՝ նորից բարձրացում և այլն։ Այսպես, եթե 1865-ին գիմնազիական դասարաններում սովորել է 151 հոգի, իսկ 1879-ին՝ 256 հոգի, ապա 1882-ին այդ թիվը իջել է 216-ի, 1889-ին բարձրացել 273-ի և այլն։

Նույնը նաև մասնագիտական դասարաններում։ 1871-ին՝ 7 հոգի, 1874-ին՝ 20, 1875-ին՝ 15, 1877-ին՝ 57, 1881-ին՝ 15, 1886-ին՝ 33, իսկ 1889-ին՝ 27 հոգի։

Այս երևույթը կարող էր ունենալ մի շարք պատճառներ, որոնց մեջ, բատ երևույթին, թերևս չեն խաղացել ճեմարանի նյութական պայմանները։ Զգալի թիվ են կազմել նաև նրանք, ովքեր չտաքդիմելու պատճառով հեռացել, կամ էլ այլ պատճառներով թողել են ճեմարանը։

Գոյություն ունի այն թյուր կարծիքը, որ իբր Լազարյան ճեմարանի գոնեքը բաց են եղել ամեն դասի զավակների համար, որ այնտեղ դասակարգության սկզբունքը, եթե նույնիսկ եղել է, ապա շատ թույլ է արտահայտվել։

Այդպես կարծողները մոռանում են, որ ճորատատիրական ու ցարական Ռուսաստանում ոչ դասային գիմնազիա կամ բարձրագույն դպրոց պահելը բացառված էր։ Նույնը կարելի է ասել նաև Լազարյան ճեմարանի մասին։ Այդ ճեմարանը երկրում օրենքի ուժ ստացած կարգից դուրս մնալ չէր կարող, որքան էլ այն իր յուրահատուկ կողմերով տարբերվեր կայսրության մեջ եղած մյուս ուսումնական հաստատություններից։

Իրական փաստերն էլ այդ են վկայում։

Իհարկե, դասակարգություն ասելով, չպետք է հասկանալ, որ իբր մի որևէ ուսումնական հաստատությունում միայն մի դասի պատկանողներ էին սովորում։ Դասակարգության սկզբունքն արտահայտվում էր նաև նրանում, որ միջնակարգ ու բարձրագույն դպրոցներում սովորում էին գրեթե բացառապես աղնվականների, հոգևորականների, չինովնիկների և առևտրականների, այսինքն՝ բոլոր շահագործողների ու կեղեքիչների երեխաները, իսկ աշխատավոր մարդկանց երեխաների համար դրանց դռները փակ էին։ Եվ եթե բախտի պատահական բերումով աշխատավորների հատուկենտ որդիք ընկել են այդ ուսումնական հաստատությունները, դրանով վերջիններս չէին դադարում դասային լինելուց։

Այդպես էր նաև Լազարյան ճեմարանում, չնայած նրա հիմնադիրների՝ «հայ ազգի աղքատ երեխաներին դաստիարակելու և ուսուցանելու» նախնական նպատակին։ Նույնիսկ Լազարյան ճեմարանին գումար կտակած անձանցից շատերը իրենց կտակում նշում էին, որ այդ գումարի տոկոսներով պետք է ճեմարանում ուսանող պահվի «աղքատ աղնվականներից» կամ «առևտրական դասի որբացած» զավակներից։

Ահա և թվական տվյալներ։

Ճեմարանի 75-ամյակին նվիրված գրքում բերված են նրա աշակերտական համակազմին վերաբերող ընդհանուր ազգուսակներ։ Նրանցից մեկում նշված է նաև սովորողների սոցիալական կազմը։

Այսպես, ճեմարանի գիմնազիական բաժնում 1884—85 ուս. տարում սովորած 242 ուսանողներից եղել են՝ աղնվականների ու չինովնիկների զավակներ՝ 101, հոգևորականների՝ 21, քաղաքային դասի՝ (իհարկե, մեծ մասամբ առևտրականների)՝ 94, գյուղական դասի (կուլակների)՝ 22 հոգի։

1888—90 ուս. տարում այդ բաժնում սովորած 273 ուսանողից 88-ը

[1] «Семидесятилетие Лазаревского института...», таблица № 2.

ազնվականների և չինովնիկների, 21-ը՝ հոգևորականների, 132-ը՝ «քաղաքային դասի», 21-ը՝ «գյուղական դասի» գավակներ էին։

Մոտավորապես նույն վիճակն է եղել նաև մյուս տարիներին։

Մի՞թե այսքանից հետո կարելի է պնդել, որ այնտեղ դասակարգություն չի եղել, կամ այն շատ թույլ է արտահայտվել։

Վերևում նշված աղյուսակներից դժվար է ճշգրիտ գաղափար կազմել Ճեմարանի ուսանողության ազգային կազմի վերաբերյալ։ Բանն այն է, որ նրանցում ուսանողությունը ցույց է տրված ոչ թե բուն ազգությունների, այլ ըստ դավանանքների։

Ուրեմն բերվող տվյալները կարող են միայն մոտավոր գաղափար տալ։

Դժբախտաբար մեր ձեռքի տակ եղած աղբյուրներում այդպիսի տվյալներ կան միայն գիմնազիական բաժնի վերաբերյալ, իսկ հատուկ բաժնում սովորողների ազգային պատկանելության մասին ոչ մի տվյալ չկա։

Գիմնազիական բաժնում բոլոր տարիներին սովորողների ճնշող մեծամասնությունը կազմել են հայ-գրիգորյան հավատացյալները, կամ պարզապես հայերը։ Ապա գալիս են ուղղափառ (պրավոսլավ) եկեղեցուն պատկանողները, որոնց մեջ, ռուսներից բացի, մտնում էին նաև վրացիները։ Ուրեմն այդ դավանանքին պատկանողների ընդհանուր թվից հնարավոր չէ իմանալ, թե քանիսն էին ռուսներ և քանիսը՝ վրացիներ։ Թեև շատ աննշան թիվ են կազմել այլ դավանանքներին պատկանողները, բայց հնարավոր չէ իմանալ (հրեաներից բացի), թե որ ազգությանն են պատկանել հռոմեա-կաթոլիկական, լյութերական կամ մահմեդական դավանանքի ուսանողները։

Ահա մի քանի տվյալներ։

1873-ի հունվարի 1-ին գիմնազիական բաժնում եղած 183 սովորողներից 101-ը պատկանել է հայ-գրիգորյան, 75-ը՝ ուղղափառ, 1-ը՝ հռոմեա-կաթոլիկական, 4-ը՝ լյութերական-ռեֆորմատորական, 1-ը՝ հրեական և 1-ը՝ մահմեդական դավանություններին[1]։

Աննշան տատանումներով համանման պատկեր է եղել նաև մյուս տարիներին։

Տրամաբանությունն ասում է, որ գիմնազիական բաժնի սովորողների դավանանքային (ազգային) պատկանելության այդ հարաբերակցությունը պետք է պահպանված լինի, թեկուզ մոտավոր չափով, նաև Ճեմարանի բարձրագույն կամ հատուկ դասարաններում, որոնց ուսանողների ազգային կազմի վերաբերյալ, ինչպես ասացինք, մեր ձեռքին տվյալներ չունենք։ Սակայն, ծանոթանալով 1874—1902 թվականների

[1] «Семидесятипятилетие Лазаревского института...», табл. № 2.

կամ 29 տարվա ընթացքում Ճեմարանի հատուկ դասարաններն ավարտածների ցուցակին, տեսնում ենք բոլորովին այլ պատկեր։

Այդ տարիների ընթացքում Ճեմարանի հիշյալ դասարաններն ավարտել է ընդամենը 186 հոգի (երբեմն նույնիսկ տարեկան 1,2 կամ 3 հոգի), որից հայեր միայն 18 հոգի՝ տասը տոկոսից էլ պակաս[1]։

Այս փաստը վկայում է, որ Ճեմարանն ամբողջությամբ վերցրած և հատկապես բարձրագույն կրթություն տվող իր դասարաններով շատ էր հեռացել իր հիմնադիրների նախանպատակից։ Այն զգալի չափով դարձել էր հայ երեխաներին կրթություն տվող օջախ լինելուց։

Եթե այս առումով Ճեմարանը մասամբ է միայն իրականացրել իր հիմնադիրների առաջադրած խնդիրը, ապա նա անվիճելի մեծ դեր է խաղացել հայագիտության և արևելագիտության զարգացման, հայ, ռուս, վրացի և այլ ազգերի երեխաների համատեղ ուսուցման, հայ հասարակական մտքի ու մշակույթի առաջընթացի գործում։

Այդ նշանավոր ուսումնական հաստատությունից են դուրս եկել այնպիսի ականավոր գիտնականներ, ինչպիսիք են Մկրտիչ Էմինը, Սմբատ Շահազիզը, Թաֆայել Պատկանյանը, Երվանդ Շահազիզը, Առաքել Բաշինջաղյանը, Սեդրակ Մանդինյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Գրիգոր Խալաթյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Վահան Տերյանը և շատ ու շատ այլ նշանավոր գիտնականներ, գրողներ ու հասարակական գործիչներ։

Ճեմարանի դասախոսների մեջ աչքի էին ընկնում ականավոր հայագետներ Մկրտիչ Էմինը, Ստեփանոս Նազարյանը, Գրիգոր Խալաթյանը և ուրիշներ։

Այնտեղ կարճ ժամանակով ուսուցչություն է արել հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, որի դասերը անջնջելի տպավորություն են թողել նրա աշակերտների վրա։

Իր բեղմնավոր գործունեությամբ Լազարյան Ճեմարանը դարձել էր Մոսկվայի և թովանդակ Ռուսաստանի ամենանշանավոր ուսումնական հաստատություններից մեկը և մեծ համբավ էր ձեռք բերել աշխարհի տարբեր երկրներում արևելագիտության հարցերով զբաղվող գիտական հաստատությունների ու գիտնականների աչքում։ Ահա թե ինչու Ռուսաստանի ականավոր կովկասագետ ու արևելագետ գիտնականները այնքան մտահոգված էին Լազարյան Ճեմարանի վերակառուցման, նրա գործունեության էլ ավելի բարելավման խնդրով։ Ինքին հասկանալի է, որ այդպիսի մտահոգություն էին հանդես բերում ամենից ավելի հայ մտավորականության առաջավոր ներկայացուցիչները։

Լազարյան Ճեմարանի հարցը մի քանի անգամ քննարկվել է ժա-

[1] «Тридцатилетие специальных классов...», стр. 90—108.

մանակավոր կառավարության տարբեր օրգաններում, սակայն որևէ բիչ թե շատ հիմնավոր լուծում չի տացել։

Այսպես, 1917 թ. մայիսի 27-ի իր նիստում, քննարկելով Հաղարյան ճեմարանի կառավարման վերաբերյալ նախկինում գոյություն ունեցած օրենսդրությունը, Մինիստրների խորհուրդը որոշել է միայն «խմբագրական փոփոխություն մտցնել նրա կետերից մեկում։ Սահմանվել է, որ ճեմարանի հոգաբարձուն պետք է ընտրվի Մոսկվայում ու Պետերբուրգում ապրող հայ-գրիգորյան դավանանքի պատկանողների կողմից և լուսավորության մինիստրի ներկայացմամբ՝ հաստատվի ժամանակավոր կառավարության կողմից»[1]։

Սա էր ընդամենը ժամանակավոր կառավարության մտցրած «դեմոկրատական» փոփոխությունը, այն էլ, իհարկե, հաստատման իրավունքը իրեն վերապահելով։

Լուսավորության մինիստր Ա. Մանուիլովը, ձեռականորեն ընդունելով, որ Հաղարյան ճեմարանը հանդիսանում է «հայկական ազգային ուսումնական հաստատություն», միաժամանակ ուժի մեջ էր թողնում ցարական կառավարության կողմից ճեմարանի մասին հաստատված օրենքներն ու կանոնագրությունները։ Օրինակ, կառավարությանն ուղղված մի գրության մեջ նա նշում էր, որ 1841 թ. կանոնագրության հիման վրա ճեմարանի անմիջական կառավարումը պետք է վերապահել հոգաբարձուին։ Պետք է ստեղծվեր նաև, այսպես կոչված, ճեմարանի «հասարակական կոմիտե», որի նախագահը լիներու էր կառավարության կողմից հաստատված հոգաբարձուն։ Ուրեմն այդ կոմիտեն գործելու է հոգաբարձուի թելադրանքով։

Այսպես կիսատ-պռատ, շատ բանով անորոշ ու մշուշապատ էին ճեմարանի վերաբերյալ հիշյալ կառավարության միջոցառումները։

Այդ ժամանակ քննարկման նյութ է հանդիսացել նաև Հաղարյան ճեմարանի վերակառուցման հարցը։ Այդ առթիվ ստեղծվել է նաև հատուկ հանձնաժողով, որի նախագահն է եղել ակադեմիկոս Ն. Մառը։ Արտակարգ բարեխղճությամբ ու հոգատարությամբ ուսումնասիրելով Հաղարյան ճեմարանի վերաբերյալ հրապարակված և արխիվներում պահվող նյութերը, ականավոր գիտնականը կազմել և հանձնաժողովի քննարկմանն է ներկայացրել շատ հանգամանալից մի զեկուցագիր՝ իր եզրակացություններով ու առաջարկներով։

Ցավոք այստեղ հնարավոր չէ ավելի մանրամասն կանգ առնել այդ նշանավոր և շատ տեսակետներից անչափ հետաքրքիր զեկուցագրի մեկնաբանությունների ու դրույթների վրա, բայց դրանցից մի քանիսը մենք կնշենք։

[1] ՍՍՀՄ ՊԿՊԱ (Լենինգրադ). ֆ. 733, ց. 226, գ. 289, թ. 1։

Առանձնապես հետաքրքիր է այն գնահատականը, որ ակադեմիկոս Մառը տվել է Հաղարյան ճեմարանին։

Նրա զեկուցագրում ասված է.

«Պատմականորեն առաջացած մշակույթի օջախներով այնքան աղքատ Ռուսաստանի համար Հաղարյան ինստիտուտը ինքնին հազվագյուտ արժեք է ներկայացնում։

Չգիտեմ, թե Արևելյան լեզուների Հաղարյան ինստիտուտի, որպես այդպիսին, լիկվիդացմանը ինչպես կվերաբերվեր Մոսկվան, որը առանձնահատուկ սիրով է վերաբերվում իր գիտնականներին և գիտա-ուսումնական հաստատություններին, առավել ևս այնպիսի յուրօրինակ հաստատությանը, ոչն այժմ զբաղեցնում է մեզ, բայց հայ ժողովրդի համար Ռուսաստանում Մոսկվայի արևելյան լեզուների Հաղարյան ինստիտուտը այնքան կարևոր է, եթե ոչ ավելին, որքան Վենետիկի հայկական գիտական միաբանությունը Եվրոպայում։

Եվ այժմ, ինչպես և իր կյանքի ամենապայծառ շրջաններում, Հաղարյան ինստիտուտը վերին աստիճանի լուսավոր ձգող կետ է հայ ժողովրդի հոգևորական մեծամասնության համար։ Ստորությունի մեջ տեղավորված այդպիսի լուսավոր կոլոսուրական կետեր ինձ հայանի արևելյան ժողովուրդների մոտ ես չգիտեմ»[1]։

Այնուհետև նշելով, որ Հաղարյան ճեմարանը «շատ բան է կրել մասնավորապես ժողովրդական լուսավորության մինիստրությունից»[2], մասնավորապես ժամանակ, որ անհրաժեշտություն է զգացվել պաշտպանել նրան «լիակատար աղավաղումից», Մառը միաժամանակ ընդգծել է, որ «Հաղարյան ինստիտուտում առկա է ռուսների հետ համատեղ գործ է, որ «Հաղարյան ինստիտուտում առկա է ռուսների հետ համատեղ կոլոսուրական աշխատանքը... շնորհած հարուցված արգելքներին»[2]։

Սա շատ կարևոր վկայություն է։ Այն մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ ցարական իշխանությունների մեքենայությունները և այլազգի ժողովուրդների նկատմամբ նրանց վարած հալածական քաղաքականությունը ոչ մի կերպ չեն ազդել ռուս և հայ մտավորականների բարեկամության, գիտության ու լուսավորության ասպարեզում նրանց համագործակցության վրա։

Եվ Մառը հանդես է գալիս Ռուսաստանի ժողովուրդների միավորման և ոչ թե նրանց անջատման օգտին։ Հենց այդ տեսանկյունով էլ նա կատեգորիկ կերպով մերժում է Հաղարյան ճեմարանը լիկվիդացիայի ենթարկելու կամ էլ նրա դիմնազիական ու մասնագիտական բաժինները իրարից անջատելու առաջարկները։

«Այդ յուրօրինակ հաստատությունը բաժանելու փորձ անելու հա-

[1] ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 733, ց. 226, գ. 289, թ. 10—11։
[2] Նույն տեղը, թ. 11։

մար պետք է ոչ մի պատկերացում չունենալ ոչ միայն նրա պատմական, այլև իրական անհրաժեշտության մասին»,— գրել է Նա։

Իսկ ո՞րն է նրա պատմական նշանակությունը։

Հայերը, ասում է Մառը, միշտ էլ իրենց հայացքը ուղղել են դեպի Ռուսաստանը, ձգտել են ամուր դաշինք կնքել ռուսների հետ և «այդ դաշինքի ամենաբեղմնավոր արտահայտություններից մեկը հանդիսանում է մեր ուսումնական հաստատության հիմնումը, որը երկկողմանի շահերին ծառայելու նպատակ է ունեցել։

Եվ այն հիմնվել է 1812 թվականի թշնամական հարձակումից հետո, հայ եկեղեցու ունեցվածքների թաղամասում, որը խնայվել է ֆրանսիացիների կողմից՝ Նապոլեոնին մոտիկ ու սիրելի հայ Մամելյուկ Ռուստամի միջնորդությամբ։

Իրենք՝ հայ-մոսկվիչները, հին մայրաքաղաքի այդ մասը փրկել են հրդեհից, երբ «ֆրանսիացիները և ուրիշները» ֆրանսիացիների հանկարծակի հեռանալով սկսել են հրդեհել այդ թաղամասի տները։

Նույնիսկ այն ժամանակ, երբ մեր ուսումնական հաստատությունը հենց նոր հիմնված՝ «Հայկական Լազարյան գիմնազիա» անունով, խնդիր ուներ հայ երեխաներին տալու նախնական կրթություն, այն միաժամանակ հանդիսացել է գիտելիքներ տարածող, ուր հայերի նոր սերունդը մոտեցել և հարազատացել է ռուսների հետ, այն այնուհետև սկսել է ծառայել նաև արտասահմանյան հայերին ռուսական կուլտուրային հաղորդակից դարձնելուն և նրանց միջոցով ռուսական ազդեցության տարածմանը արտասահմանյան հայ բնակչության մեջ՝ Պարսկաստանում և Թուրքիայում...»[1]։

Այսքան բարձր գնահատելով Լազարյան ճեմարանի դերն ընհանրապես և հայ-ռուսական հարաբերությունների ու բարեկամության զարգացման գործում մասնավորապես, ակադեմիկոս Մառը շարունակում է.

«Ստեղծված լինելով հայերի նախնական կրթության համար, ինստիտուտը մի կողմից ամել է, հայ ժողովրդի կուլտուրական աճի հետ միասին, երբեմն էլ այդ աճման վրա ունեցել է բացառիկ ազդեցություն. բավական է ասել, որ Լազարյան ինստիտուտը 50-ական թվականներին հսկայական դեր է խաղացել ռուսահայերի գրական լեզվի ստեղծման գործում։ Առաջնեցի հետ միասին ամել են և լուսավորական պահանջմունքները, որոնցով հայերը գիմել են ինստիտուտին, և նրանում հայերը սովորել են տեսնել ու մինչև օրս էլ հակված են տեսնելու որպես իրենց մայրենի լեզվի, մայրենի գրականության ու հարազատ պատմության գիտական ուսումնասիրության օջախի, որքան էլ հենց այդ

[1] ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 733, ց. 226, գ. 289, թ. 11—12։

բնագավառը ընկած էր ինստիտուտում վերջին տասնամյակների ընթացքում[1]։

Ականավոր գիտնականը ևս իր ժամանակին ընդգծել է, որ վերջին տասնամյակների ընթացքում հայագիտական առարկաները ընկած վիճակում են եղել Լազարյան ճեմարանում, մինչդեռ հենց դրանք պետք է լիներին նրա գլխավոր խնդիրը։

Քննարկելով ակադեմիկոս Մառի զեկուցումը՝ հանձնաժողովը լիովին համաձայնվել է նրա դրույթներին և ընդունել է նրա առաջարկները։

Ահա այդ առաջարկներից մի քանիսը։

1. Լազարյան ճեմարանի հատուկ դասարանները չբաժանել նրա գիմնազիայից՝ նկատի ունենալով նրա դարավոր կապը։

2. Ճեմարանի հատուկ դասարանները դարձնել չորսամյա դասընթացով բարձրագույն դպրոց՝ ինչպես «Հայաստանի գեղեցիկ ու մեռած» լեզուների, այնպես էլ քրիստոնեական ու մուսուլմանական Արևելքի կուլտուրական լեզուների՝ սիրիերենի, վրացերենի, արաբերենի, պարսկերենի և Թուրքերենի, նաև բոլոր այդ երկրների պատմության ու մշակույթի տեսական ու գործնական ուսումնասիրության համար։

3. Ամրապնդել Լազարյան բարձրագույն դպրոցի կապը նրա գիմնազիայի հետ՝ վերջինում (հանրակրթական կրթության ապահովման հետ միասին) մտցնելով նաև արևելագիտական գիտելիքներ, որով պայմաններ կստեղծվեն, ցանկության դեպքում, գիմնազիան ավարտելուց հետո ընդունվելու Լազարյան բարձրագույն դպրոցի երկրորդ կուրսը։

Կային մի քանի այլ կետեր ևս։

Մենք այստեղ չենք քննարկում այն հարցը, թե որքան ժամանակին ու տեղ էին այդ առաջարկները, բայց չենք կարող նորից ու նորից չգծել այն բացառիկ ուշադրությունը, որ ակադեմիկոս Մառը հանդես է բերել Մոսկվայի հայկական ուսումնական հաստատության նկատմամբ։

Իհարկե, այդ առաջարկները մնացին օդից կախված։ Բուրժուական ժամանակավոր կառավարությունը ի վիճակի չէր այդպիսի հարցեր լուծելու։

Լազարյան ճեմարանի իսկական վերակառուցումը իրականացվեց Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո։

Հայկական գործերի կոմիսար Վ. Ավանեսովի և կոմիսարի տեղակալ, մեծ բանաստեղծ Վահան Տերյանի նախաձեռնությամբ ու անմիջական մասնակցությամբ մշակվում է Լազարյան ճեմարանի նոր կանոնադրություն, որը 1919 թ. մարտի 4-ին հրապարակվում է որպես ժողկոմսովետի դեկրետ՝ հեղափոխության մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի առաջարկությամբ։

[1] ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 733, ց. 226, գ. 289, թ. 15

Իր «Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը» գրքում Ս. Ալիխանյանը իրավացիորեն ընդգծել է այն հանգամանքը, որ «...սովետական երկրի համար այնքան ճակատագրական այդ պահին հեղափոխության հանձարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը ժամանակ է գտել զբաղվելու սովետահայ դպրոցի ստեղծման, հայ մշակույթի զարգացման հարցերով» (էջ 77—78)։

Իրոք որ, դա նշանակալի երևույթ էր. հեղափոխության առաջնորդի ձեռքով էր դրվում սովետահայ առաջին դպրոցի հիմքը, այն էլ սովետական երկրի մայրաքաղաք Մոսկվայում։

Դեկրետի համաձայն Լազարյան ճեմարանը վերանվանվում է Մոսկվայի հայկական ինստիտուտ, որը կոչված է հոգալու «Հայկական աշխատավորական մասսաների կուլտուր-լուսավորական կարիքները» (Նույն տեղում, էջ 76)։

Դեկրետում ասված էր, որ հայկական ինստիտուտը կազմված է առաջին և երկրորդ աստիճանի միասնական աշխատանքային դպրոցից, որտեղ դասավանդումը տարվում է հայերեն լեզվով, և պատմա-բանասիրական ու սոցիալ տնտեսագիտական ֆակուլտետներից, որտեղում դասավանդումը տարվում է ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն լեզուներով» (Նույն տեղը, էջ 76)։

Ահա և լենինյան իմաստուն ազգային քաղաքականությունը գործադրության մեջ։

Հայկական ինստիտուտի կոմիսար է նշանակվում բոլշևիկ Գ. Մաքինցյանը, որն ավելի ուշ դարձավ Հայկական ՍՍՀ-ի լուսժողկոմ։

Լազարյան ճեմարանի մասին հրապարակված աշխատությունները ու հոդվածները, ինչպես նաև արխիվային նյութերը անչափ շատ են, ուստի մենք կբավարարվենք նրանցից միայն մի քանիսի նշումով, որոնք և օգտագործել ենք։

А. П. Базянц, Лазаревский институт в истории отечественного востоковедения, Москва, 1973.

Մ. Հ. Մանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին», Երևան, 1964

Ա. Հ. Իգնատյան, Լազարյան ճեմարան, Երևան, 1969

Ս. Ս. Ալիխանյան, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը, Երևան, 1958

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 733, ց. 226, գ. 289, թթ. 1—27 և այլն։

Նիվիթ գյուղի արական ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը հայտնի չէ, բայց 1873-ին գործել է՝ ունենալով 35, իսկ 1877-ին՝ 15 աշակերտ։ Գործել է նաև 1887-ին։

Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 19;

«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 139; «Արարատ», 1878, մթ, էջ 456; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 9։

Նոր Նախիջևանի Ս. Աստվածածին եկեղեցու արական ծխական դպրոց

1867-ին հայոց կաթողիկոս Գևորգ Դ. այցելում է Նոր Նախիջևան և խորհուրդ է տալիս բոլոր եկեղեցիներին կից կազմակերպել ծխական դպրոցներ։ Հենց այդ թվականին էլ կազմակերպվում է այս դպրոցը։ 1873-ին այդ դպրոցն ունեցել է 38, իսկ 1876-ին՝ 40 աշակերտ՝ մեծ մասամբ չքավոր ընտանիքներից։ Դպրոցի ներքին ծախսերը և չքավոր աշակերտների օգնության գործը իր վրա է վերցրել նույն դպրոցի հոգաբարձու, տեղացի Հովհաննես Մարկոսի Պոպովը, որը այնտեղ իր հաշվին կառուցել է նաև մի ազգային հիվանդանոց։

Դպրոցում ավանդվել են՝ հայոց լեզու, կրոնագիտություն, ռուսաց լեզու և թվաբանություն։ Նոր Նախիջևանի ծխական դպրոցների հոգաբարձությունը 1877-ին գրել է կաթողիկոսին, որ քաղաքի Ս. Աստվածածին, Ս. Համբարձման և Ս. Թեոդորոսի ծխական դպրոցները գտնվում են հին ու խարխուլ շենքերում, ուստի մտադիր են քաղաքի կենտրոնում վարձել մի հարմար շենք և հիշյալ երեք դպրոցները կենտրոնացնել այնտեղ։

Մենք չգիտենք, իրականացե՞լ է այս մտադրությունը, թե ոչ, բայց «Մեղու Հայաստանի» լրագիրը 1886-ի համարներից մեկում նշել է, որ Ս. Թեոդորոսի և Ս. Համբարձման եկեղեցիներին կից դպրոցները գտնվում են «խղճուկ վիճակում»։

«Արարատ», 1876, թ, էջ 69;

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 19; գ. 22, թ. 36;

«Մեղու Հայաստանի», 1886, № 35։

Նոր Նախիջևանի «Արվեստական դպրոց»

Հիմնվել է 1880-ի սեպտեմբերի 28-ին, որի հիմնադիրն ու առաջին տնօրենն է եղել հայ նշանավոր բանաստեղծ և մանկավարժ Ռափայել Պատկանյանը։

Դպրոցի կանոնադրությունը, որ մշակել էր Ռ. Պատկանյանը, նշում էր, որ դպրոցի «նպատակն է սովորեցնել կանոնավոր արվեստներ, կոշկակարություն, դերձակություն, հյուսնություն, արծաթագործություն, ոսկեզօծություն, դարբնություն, մատակարարելով աշակերտաց նաև նախակրթական կարևոր ուսմունք։ Արվեստագետ վարժապետները, բացի աշակերտաց վերոհիշյալ արվեստները սովորեցնելն, պարտավոր են նաև ծանոթացնել նոցա նույն արվեստից մեքենաների շինվածքին, կազմությանը, որպեսզի ո՞րքան կարելի է, արձակել դպրոցեն զարգացած արվեստագետներ»։

Դպրոցը բացվել է շաբաթ տարվա դասընթացով, ունեցել է նաև նախակրթարան, ուր ընդունվել են գրել-կարդալ չիմացող երեխաները։

Արհեստ սովորեցնող առարկաներից բացի դպրոցում ավանդվել են նաև կրոն, հայոց լեզու, ռուսաց լեզու, համառոտ պատմություն հայոց, թվաբանություն, սկզբունք երկրաչափության, «առաջին մասն պարզ հաշվակալության», «սկզբնական տեղեկություններ տիեզերագնացության վրայ. տեղեկություններ աշխարհիս հինգ մասանց վրայ և մանրամասն տեղեկություններ Ռուսաստանի աշխարհագրության վրայ, գեոգրաֆություն, նկարչություն և սկզբնական գծագրություն, իսկ մարմնամարզություն և երգեցողություն ըստ նկատողության հոգարարձական խորհրդարանի» (նույն տեղը, էջ 158)։

Իր բազմադարյան գոյության ընթացքում հայ ժողովուրդը առաջին անգամն է ունեցել այս բնույթի և այդքան ընդարձակ ծրագրով ուսումնական հաստատություն, ուր այնքան հմտորեն միացված են եղել աշակերտների միտքն ու ձեռքը։

Այս դպրոցը գոյություն է ունեցել մինչև 1919 թվականը, այնուհետև փակվել է։

«Փորձ», 1880, № 10, էջ 139—165։
ՀՍՍՀ ԳԱԳԱ-ի «Ուղեցույց», էջ 103։

Նոր Նախիջևանի Գոգոլյան օրիորդաց դպրոց

1881-ին Նոր Նախիջևանում գործել է Գոգոլյան օրիորդաց դպրոցը, որտեղ, «Արձագանք» լրագրի ասելով, ուսումնական գործը դրված է եղել վատ հիմքերի վրա։ Դասավանդումը տարվել է ոչ թե հայերեն գրական լեզվով, այլ տեղական բարբառով։

Հիմնադրման տարեթիվը և հետագա ճակատագիրը մեզ անհայտ են։

«Արձագանք», 1885, № 5։

Նոր Նախիջևանի թեմական դպրոց

Մանր ու երկարատև է եղել այդ դպրոցի ծնունդը։ Դեռևս 1869—70 թվականներին, երբ շաբաթի բերումով կամ, ավելի ճիշտ, ժամանակի ու տիրակալների քմահաճույքով գերեզման էր դրվում տակավին պատանեկան տարիքին չհասած Թեոդոսիայի Խալիբյան դպրոցը, միտք է հղանում նրա փոխարեն հարություն տալու մի այլ դպրոցի, որի ազգային հիմքերը, ըստ կարծեցյաց, պիտի ավելի ամուր, իսկ գոյությունը՝ ավելի տևական լինեին։ Սակայն այդ մտահղացումը իրականություն դարձնելու համար հարկ է եղել հաղթահարել շուրջ տասներկու տարվա երկար ու տատասկոտ մի ճանապարհ։

Արևելքի նկատմամբ վարվող իր քաղաքականության շահերից ելնելով՝ ռուսական կառավարությունը անհրաժեշտ է համարել նվաճել ամենայն հայոց կաթողիկոսի և նրա միջոցով ողջ հայության համակրանքը։ Դրան հասնելու միջոցներից մեկն էլ համարվել է հայերին որոշ թվով ազգային դպրոցներ բացելու թույլտվություն տալը։ Այդ դպրոցները ևս, կառավարության կարծիքով, պետք է նպաստեին տերության վերոհիշյալ քաղաքականության իրականացմանը, այսինքն, դառնային արևելյան երկրներում Ռուսաստանի ազդեցության տարածման վստահելի միջոց։

Նոր Նախիջևանի թեմականն էլ պիտի լիներ հայերին թույլատրված խիստ սահմանափակ թվով միջնակարգ հոգևոր դպրոցներից մեկը։

Խալիբյան դպրոցի փակման կապակցությամբ կայսեր հրամանով ստեղծված կառավարական հատուկ հանձնաժողովը, երկար վեճերից հետո, որոշում է թույլ տալ, որպեսզի Թեոդոսիայում բացվի հայկական հոգևոր սեմինարիա և այն դրվի հայոց կաթողիկոսի իշխանության տակ։ Այդ ուղղությամբ շատ ջանքեր էր թափել նաև ինքը՝ կաթողիկոսը, որը Խալիբյան դպրոցի փոխարեն թեմական հոգևոր դպրոց բացելու թույլտվության խնդրանքով բազմիցս դիմել էր կառավարությանը և կայսրին։ Նման հարց էին բարձրացրել նաև Նոր Նախիջևանի հայերը, պնդելով միաժամանակ, որ այդ դպրոցը պետք է բացվի իրենց քաղաքում և ոչ թե Թեոդոսիայում։

Կայսրը նույնիսկ 1871-ին ստորագրել էր այդ դպրոցի թույլտվության հրամանը։ Սակայն գտնվել են մարդիկ, որոնք խափանել են այդ հրամանի կատարումը։

Այդ ամենը ընթացել է այսպես։

Իմանալով կայսերական թույլտվության մասին, Նոր Նախիջևանի հասարակությունը դիմում է կաթողիկոսին և խնդրում ազգային դպրոցը բացել իրենց քաղաքում, խոստանալով միաժամանակ ամեն կերպ օգնել այդ ազգօգուտ հիմնարկին։ Կաթողիկոսը համաձայնվում է և այնտեղ ուղարկում դպրոցի կանոնագրության նախագիծը, որպեսզի նորնախիջևանցիները քննարկեն և հայտնեն իրենց կարծիքը։

Նոր Նախիջևանի քաղաքային վարչության ժողովը (դուման) 1874-ի իր նիստում հավանություն է տալիս այդ նախագծին և նորից խնդրում կաթողիկոսին՝ փութացնել դպրոցի բացումը։

Վերջինս իր հերթին պահանջում է շուտափույթ կերպով ընտրել ուսումնարանի հոգաբարձություն և նախապատրաստել նրա բացումը։ Քաղաքային վարչությունը և քաղաքի հասարակությունը ընտրում են հոգաբարձության կազմը, իսկ դպրոցի տեսուչ են առաջադրում Գրիգոր Աղափիրյանին։

Ստանալով կաթողիկոսի հաստատումը՝ որոշվում է դպրոցը բացել 1875-ի փետրվարի 2-ին։ Այդ մասին իրազեկ է դարձվում Նկատերինոսլավի նահանգապետին։ Վերջինս արգելում է դպրոցի բացումը, պատճառաբանելով, որ նրա կանոնադրությունը չի հաստատված կառավարության կողմից։

Սկսվում է թաշչուկների նոր շրջան։ Նահանգապետի արգելքի մասին նորնախիջևանցիները հայտնում են կաթողիկոսին, վերջինս հեռագրում է ներքին գործոց մինիստրին, որից ստանում է բացասական պատասխան։ Մինիստրը գրում է, որ չի կարող թույլ տալ սեմինարիայի բացումը, մինչև որ բարձրագույնս չհաստատի նրա կանոնադրությունը։

Կաթողիկոսը մի նոր նամակ է ուղարկում մինիստրին, բացատրելով, որ ինքը կարգադրել է Նոր Նախիջևանում բացել ոչ թե հոգևոր սեմինարիա, այլ չորսդասյան հոգևոր ուսումնարան, որը լինելու է ապագա սեմինարիայի նախապատրաստական բաժանմունքը։ Նա գրել է, որ այդպիսի դպրոցի բացման իրավունքը իրեն է պատկանում, իսկ նրա կանոնադրությունը կառավարության հաստատմանը ենթակա չէ, խնդրելով միաժամանակ կարգադրություն անել նահանգապետին, որպեսզի արգելքներ չհարուցի դպրոցի բացմանը։ Սակայն մինիստրը չի շտապում այդ կարգադրությունն անելու։ Ինչպես երևում է, նրա հանձնարարությամբ այդ գործով զբաղվում է մինիստրության այլազգային հոգևոր գործերի դեպարտամենտի բաժնի կառավարիչ Էդվոլը (մեր կարծիքով, սա հայտնի Կարապետ Եդլանն է, որը 60—70-ական թվականներին բիրան չի արել, որպեսզի հայ դպրոցների հարցը դրական լուծում ստանա կառավարական բարձր մարմիններում)։

Ահա այս անգամ էլ Էդվոլը օգնում է գործին։ Նա պատրաստում և մինիստրին է ներկայացնում մի փաստաթուղթ, ուր նշված են հայ զբաղոցների բացման ու պահպանման խնդրում պետական օրենքներով հայ եկեղեցական իշխանություններին տրված իրավունքները։ Միայն դրանից հետո, հարցի լուծումը ձգձգելով ամբողջ 9 ամիս, թույլ է տրվում նոր Նախիջևանում բացել չորսդասյան եկեղեցական ուսումնարան, բայց ոչ հոգևոր սեմինարիա։

1875-ի սեպտեմբերին վերջապես տեղի է ունենում այդ դպրոցի բացումը։ Չորս տարի հետո, 1879-ին, կաթողիկոսը ներքին գործոց մինիստրությանը հայտնում է հիշյալ դպրոցը թեմականի վերածելու իր մտադրության մասին, դրա հետ միասին ներկայացնելով իր կողմից մշակված «Ընդհանուր կանոնների» նախագիծը։

Գործը նորից ձգձգվում է։ «Ընդհանուր կանոնների» նախագիծը մինիստրությունում լուրջ փոփոխությունների է ենթարկվում և ուղարկվում

էջմիածին։ Դպրոցի բացումը շուշացնելու նպատակով կաթողիկոսը անփոփոխ ընդունում է այն և վերադարձնում Պետերբուրգ։

1880-ի հունիսի 27-ին հետևում է կայսերական հրամանը, որով թույլատրվում է նոր Նախիջևանի հոգևոր դպրոցը վերածել թեմական հոգևոր սեմինարիայի, ներքին գործերի մինիստրին թողնելով նրա «Ընդհանուր կանոնների» հաստատումը։

Վերջապես նորնախիջևանցիներին հաջողվում է իրենց քաղաքում ունենալ մի միջնակարգ դպրոց, թեկուզև «հոգևոր սեմինարիա» անունով։

«Ընդհանուր կանոնների» հիման վրա մշակվում է դպրոցի կանոնադրությունը, որը և հաստատվում է կաթողիկոսի կողմից 1881-ի հուլիսի 24-ին։

Նոր Նախիջևանի թեմական հոգևոր սեմինարիան բացվում է 1881-ի նոյեմբերին, առաջին տարում ունենալով երկու դասարան (առաջին ու երկրորդ) և նախակրթարան՝ երեք բաժանմունքով (ստորին, միջին և բարձր)։ Այդ տարում ունեցել է ընդամենը 152 աշակերտ, որոնցից սեմինարական բաժնում՝ 41 հոգի։

Հաջորդ ուսումնական տարիներին բացվել են մյուս դասարանները։ 1886—87 ուստարում բացվել է վերջին՝ 6-րդ դասարանը։

Դպրոցի տարբեր դասարաններում ամենազվել են հետևյալ առարկաները. կրոն, հայերեն, ռուսերեն, լատիներեն, հունարեն, ֆրանսերեն, թվաբանություն, աշխարհագրություն, ընդհանուր պատմություն, հայոց պատմություն, Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն, բնագիտություն, տիեզերագիտություն, բնական պատմություն, գծագրություն (նկարչություն), երգեցողություն և գեղագրություն։

Հետաքրքրական է նշել, որ 1884—85 ուս. տարում դպրոցի 211 աշակերտներից փոխադրվել են ընդամենը 100 հոգի, իսկ 86 հոգի մնացել են նույն դասարանում։ Մյուսները վերաքննություն են ստացել կամ էլ հեռացվել են վատ առաջադիմության պատճառով։ Աշակերտների այդ թվից թոշակ են վճարել 161 հոգի, 50 հոգի սովորել են ձրի։

Մեծ ձգձգումներով է լուծվել նաև դպրոցի շենքի կառուցման հարցը։ Այդ հարցը կառավարության առաջ բարձրացվում է 1884-ին, բայց թույլտվություն ստացվում է միայն հինգ տարի հետո՝ 1889-ին։

Նոր Նախիջևանի թեմականն էլ, հայկական մյուս դպրոցների նման, ունեցել է իր վերելքի ու վայրէջքի տարիները։

Մեր մամուլում և արխիվներում բավականաչափ շատ են նրան վերաբերող նյութերը, որոնք հատուկ ուսումնասիրության են կարոտ։ Նշենք միայն, որ չնայած մեր դարի առաջին տասնամյակում այն հանդիսացել է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի բավականաչափ ընդարձակ թեմի միակ ազգային միջնակարգ դպրոցը, բայց այնքան էլ նախանձելի վիճակում չի գտնվել։ Մշտապես զգացել է նյութական միջոցների պակաս։

Աշակերտների թիվն էլ շատ մեծ չի եղել։ 1906—07 ուս. տարում ունեցել է ընդամենը 297 աշակերտ, իսկ 1908—09 ուս. տարում դրանից էլ քիչ՝ 273։ Աշակերտների վերջին թվից 151 հոգի թոշակ են վճարել, իսկ 122 հոգի սովորել են ձրի։ Դրանցից տարվա ընթացքում մաղվել են (թույլ առաջադիմության և թոշակ վճարել չկարողանալու պատճառով) 43 հոգի, դպրոցն ավարտել են ընդամենը 10 հոգի, հաջորդ դասարաններն են փոխադրվել 159 հոգի, իսկ 61 հոգի (26,5 %) մնացել են նույն դասարաններում։

Կարելի է ասել, որ դպրոցը ունեցել է այն ժամանակվա համար բավականաչափ որակյալ ուսուցչական կազմ։ 14 ուսուցիչներից 7-ը ավարտած են եղել Թբիլիսիի և արտասահմանյան բարձրագույն դպրոցները, 4-ը՝ Գեորգյան ճեմարանի լրիվ դասընթացը և միայն 3-ը՝ միջնակարգ դպրոցները։

Այդ տարիներին դպրոցն ունեցել է 6 հիմնական և 2 պատրաստական դասարաններ։ 1915-ին աշակերտների թիվը մնացել է գրեթե անփոփոխ՝ 275 հոգի, իսկ ուսուցիչների թիվը հասել է 18-ի՝ ավելանալով 4 հոգով։ 1917-ին եղել է լրիվ միջնակարգ։

ՍՍՀՄ ԳԿԳԱ, ֆ. 821, ց. 140, գ. 50, թ. 1—85; գ. 55, թ. 1—105; թ. 151—193; («Ճանապարհորդություն թեմական հոգևոր դպրոցի վիճակին Հայոց Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի», 1882, Նոր Նախիջևան) և այլն, ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 795, թ. 212 և այլն; «Արարատ», 1871, էջ 369, 1892, Ա, էջ 27—49; 1893, Ա, էջ 77—92; 1895, էջ 71—75; 1897, № 1, էջ 85—86, 1917, էջ 519 և այլն։ «Արձագանք», 1885, № 5; «Նոր դպրոց», 1909, № 3, էջ 94; № 8—9, էջ 136, 139 և այլն։

Նոր Նախիջևանի Ս. Թեոդորոս եկեղեցու արական ծխական դպրոց

Հիմնվել է 1863-ին։ 1873-ին ունեցել է 50 աշակերտ, 1877-ին՝ 4 ուսուցիչ, 28 աշակերտ։ 1886-ին գործել է, բայց դադարել է անընդհատ գոյություն ունենալուց։ 1906-ին այդ դպրոցը վերարացվել է, ուրեմն մինչև 1895—96 թվականները (այսինքն՝ մինչև հայ դպրոցների ընդհանուր փակումը) այն գոյություն է ունեցել։

1912—13 ուս. տարում եղել է 3-ամյա երկսեռ դպրոց, ու սովորել են 37 տղա և 46 աղջիկ։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 590, թ. 27; գ. 43, թ. 19; գ. 22, թ. 36;
«Արարատ», 1878, ԺԹ, էջ 456։
«Մեղու Հայաստանի», 1886, № 35։

Նոր Նախիջևանի Ս. Լուսավորիչ եկեղեցու արական ծխական դպրոց

Դեռևս 1794-ին Նոր Նախիջևանի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից գործել են սուրբ Սահակյան և սուրբ Մեսրոպյան անունով երկու դպրոցներ, որոնց և այդ թվականին մեծ գումար է կտակել Հնդկաստանի հայ վաճառական Մասեհ Բաբաջանյանը։ Դրանցից մեկը շարունակել է գործել նաև 1860—70-ական թվականներին, որպես արական ծխական դպրոց։ 1877-ին ունեցել է 4 ուսուցիչ և 30 աշակերտ։

Հետագայում այս դպրոցի հետքերը չեն երևում։ Հավանաբար պատճառն այն է, որ հիշյալ եկեղեցուն կից 1882-ին բացվել է իգական դպրոց։

«Մասյաց աղավնի», 1861, էջ 138։ «Դպրոց», 1875—76, № 4, էջ 139, «Արարատ», 1878, ԺԹ, էջ 456։

Նոր Նախիջևանի Ս. Լուսավորիչ եկեղեցու Հռիփսիմյան օրիորդաց դպրոց

Հիմնվել է 1882-ին։ Առաջին տարին դպրոցն ունեցել է 6 ուսուցիչ, 2 պատրաստական դասարանով, որոնցում սովորել են 103 հայ աղջիկներ։ 1885-ին «Արձագանքը» նշել է, որ այդ դպրոցում սովորում են շատավոր աշակերտուհիներ, և այդ պատճառով այն գտնվում է նյութական նեղ դրության մեջ։

1886—87 ուս. տարում բացվել է դպրոցի 5-րդ բաժանմունքը։ 1888—89 ուս. տարում դպրոցն անցել է քաղաքի «Հայուհյաց խնամատար ընկերության հոգատարության ներքո»։ Մինչև 1895-ը ավել է 40 շրջանավարտ։ Դպրոցը գործել է նաև 1909—10 ուս. տարում։

«Նոր դպրոց», 1910, № 1, էջ 93։
«Արձագանք», 1884, № 5։

Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի ժառանգավորաց (ապա՝ ծխական) դպրոց

Վ. Բարխուդարյանի ասելով, դեռևս 1780-ական թվականների վերջերին Նոր Նախիջևանից ոչ հեռու գտնվող Սբ. Խաչ վանքում բացվել ու գործել է վանական դպրոց։ Ինչպես երևում է, այդ դպրոցը հետագայում փակվել է և նորից բացվել 1868-ին՝ Նոր Նախիջևանի մարդասիրական ընկերության կողմից։ Այդ ընկերությունը կազմվել է 1846-ին՝ տեղի «անուսումն և դատարկաշրջիկ տղայոց մեկ բանին ուսումն և կրթություն տալու» նպատակով («Արարատ», 1869, Դ. էջ 63), հաստատվել

է կաթողիկոսի կողմից 1867-ին։ Դպրոցը եղել է գիշերօթիկ, առաջին տարին ունենալով միայն 8 աշակերտ (հոգևորականների զավակներ) և պահվել է ընկերության 170 անդամների անդամավճարների ու մասնավոր նվիրատվությունների հաշվին։ Սկսած 1870 թվականից, դպրոցն ունեցել է նաև 10 թոշակառու աշակերտներ, որոնք տարեկան մուծել են դպրոցի գանձարկղը 120—150 ռուբլի։ Դպրոցը եղել է նյութապես ապահովված և կարողացել է վարձել որակյալ ուսուցիչներ՝ բարձր աշխատավարձով։ Այն կառավարվել է ընկերության կողմից ընտրված և կաթողիկոսի կողմից հաստատված հոգաբարձության միջոցով, ունեցել է նաև հոգևոր տեսուչ։ 1874-ին դպրոցն ունեցել է երեք դասարան՝ յուրաքանչյուրը ուսման երկու տարով և 30 աշակերտ (12 ձրիավարժ, 8 թոշակառու, 10 երթևեկ). ուսուցիչներ՝ 4 հոգի։ Դպրոցն ավարտողները հիմնականում ուսուցչություն են արել հայկական ծխական դպրոցներում։

1885-ին գործել է՝ ունենալով 15 գիշերօթիկ և «մի քանի երթևեկ աշակերտներ։ Հետո դարձել է ծխական դպրոց՝ գործելով նաև մեր դարի առաջին տասնամյակներին։ 1909-ին այնտեղ դրոցական ճոխ հանդես է կազմակերպվել։

Վ. Բ. Բարխուդարյան, «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն», Երևան, 1967, էջ 406։

«Արարատ», 1869, Գ. էջ 63—64; 1871, Գ. էջ 190—192; 1874. Է. 271—273; 1875. Է. էջ 277;

«Մեղու Հայաստանի», 1885, № 89;

«Նոր դպրոց», 1909, № 2, էջ 89, № 3, էջ 93։

Նոր Նախիջևանի Ս. Համբարձման եկեղեցու արական ծխական դպրոց

Հիմնվել է 1867-ի նոյեմբերի 1-ին՝ Գևորգ Դ. կաթողիկոսի հորդորանքով։ 1868-ին ընտրվել է դպրոցի առաջին հոգաբարձությունը։ Դպրոցը պահվել է ժողովրդի միջոցներով և նվիրատվություններով։ Դպրոցում սովորել են մեծ մասամբ «որդիք ամենաթշվառ եւ ոչին աղքատաց, որք հազիվ հաց զօրական ապրուստ յուրյանց գտանեն տաժանական աշխատութեամբ» («Արարատ», 1869, Զ. էջ 134)։ 1869-ին դպրոցը ունեցել է 60 աշակերտ։ Ավանդվել են՝ հայերեն ընթերցանություն, քրիստոնեական վարդապետություն՝ ըստ Մսերյանի գրքի, սուրբ գրոց պատմություն, հայերեն քերականություն՝ Ա. մասն, ռուսերեն ընթերցանություն, թվաբանություն, հայոց և ռուսաց գեղագրություն։ 1873-ին ունեցել է 38 աշակերտ։

1877-ին մտադրություն է եղել այն միացնել քաղաքի մյուս երկու

ծխական դպրոցներին, բայց չգիտենք, իրականացվե՞լ է արդյոք այդ մտադրությունը, թե ոչ։

Գիտենք, որ 1886-ին այս եկեղեցուն կից դպրոցը գործել է առանձին և գտնվել է անբարենկարգ վիճակում, 1902-ին փակվել է կառավարության կողմից՝ վերաբացվելով 1906-ին։ 1912—13 ուս. տարում եղել է 4-ամյա արական դպրոց, ուր սովորել են 76 տղաներ։

«Արարատ», 1869, Զ. էջ 134—135; 1875, էջ 192—193; ՀՍԳԱ, ֆ. 56, գ. 43, թ. 19; գ. 590, թ. 13;

«Մեղու Հայաստանի», 1886, № 35։

«Նոր դպրոց», 1910, № 1, էջ 92—93։

Նոր Նախիջևանի Ս. Նիկողայոս եկեղեցու արական ծխական դպրոց

Այս դպրոցը հիմնվել է 1872-ին։ Կաթողիկոսին ուղղած իրենց դիմումի մեջ Նոր Նախիջևանի Ս. Նիկողայոս եկեղեցու ծխականները, խնդրելով հաստատել դպրոցը բացելու մասին իրենց համախոսական որոշումը, միաժամանակ գրում են, որ եթե բացվի այդ դպրոցը, ապա իրենց երեխաները այլևս անտեր-անտիրական չեն թափառի փողոցներն ու հրապարակները, հաղորդակից կդառնան «հոգեպարար կաթին գիտության, որ միակ աղբյուրն է բարոյականության և բարօրության մարդկության»։ Անհայտ է, թե մինչև երբ է պահպանել իր գոյությունը։

ՀՍԳԱ, ֆ. 56, գ. 23, թ. 222։

Նոր Նախիջևանի Ս. Նիկողայոս եկեղեցու Սանդխտյան օրիորդաց դպրոց

Հիմնվել է 1895-ին։ Հավանաբար հաջորդ երկու—երեք տարիներին փակվել է, քանի որ հայտնի է, որ այն վերաբացվել է 1906-ին։

1912—13 ուս. տարում եղել է 3-ամյա իգական դպրոց, ուր սովորել են 78 աղջիկներ։

«Արարատ», 1895, էջ 316։

ՀՍԳԱ, ֆ. 56, գ. 590, թ. 31։

«Նոր դպրոց», 1919, № 1, էջ 92—93։

Զալդր գյուղի արական ծխական դպրոց

Այս գյուղի ծխական դպրոցը հիմնվել է 1867-ին։ 1873-ին ունեցել է 80 աշակերտ (հազվագյուտ երևույթ այն ժամանակվա գյուղերի համար)։ 1875-ի հոկտեմբերին տեղի հայ հասարակության ջանքերով ու

միջոցներով այդ դպրոցի համար կառուցվել է մի գեղեցիկ շենք։ 1877-ին ունեցել է 135 աշակերտ։ Դպրոցը հիշվում է նաև 1887-ի պաշտոնական մի ցուցակում։

Այս դպրոցի մասին թեմական տեսչի մի տեղեկագրում նշված է, որ «փակ մնացած չէ»։ Պետք է ենթադրել, որ խոսքը 1896—1905 թվականների մասին է, երբ հայ դպրոցները փակ մնացին, իսկ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի հայ դպրոցներից մի քանիսը շարունակեցին պահպանել իրենց գոյությունը՝ մինիստրության իրավասության տակ անցնելով։

1912—13 ուս. տարում եղել է արական 6-ամյա դպրոց, որտեղ սովորողների թիվը հասել է 485-ի։

«Արարատ», 1875, էջ 316—318; 1876, Գ. էջ 116; 1878, ԺԲ, էջ 456; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 19; գ. 590, թ. 35; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 8։

Զալդր գյուղի հայկական իգական դպրոց

Հիմնվել է 1895-ին և տեղի արական դպրոցի նման նույնպես չի փակվել՝ անցնելով լուսավորության մինիստրության իրավասության տակ։ 1912—13 ուս. տարում եղել է քառամյա իգական դպրոց, ուր սովորել են 130 աղջիկներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 590, թ. 39։

Պետերբուրգի Կարապետ Եզյանի դպրոցը

Մենք գիտակցաբար այս դպրոցը մացրեցինք հայկական դպրոցների շարքը, թեև այն բացվել ու գործել է մասնավոր կարգով։ Դրա համար մեզ հիմք է ծառայել դպրոցի տնօրեն Կարապետ Եզյանի հայտարարությունը, որը հրապարակվել է «Հյուսիսափայլ» ամսագրի 1859 թ. № 8-ում։

Նախքան այդ հայտարարությանն անցնելը, կցանկանայինք երկու խոսք ասել իր՝ Կարապետ Եզյանի մասին։

«Հյուսիսափայլի» հայտարարությունից երևում է, որ Եզյանը այն ժամանակ ունեցել է արևելյան լեզվագիտության մագիստրոսի գիտական աստիճան։

Այլ աղբյուրներից մեզ հայտնի է, որ նա զբաղվել է գիտական-հասարակական գործունեությամբ և միաժամանակ, որպես արևելագիտության նշանավոր մասնագետ, հանդիսացել է ցարական ներքին գործոց մինիստրության պատասխանատու պաշտոնյա։ Եղել է մի ժամանակ, երբ Արևելքի ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի նկատմամբ

ցարական կառավարության կողմից տարվող քաղաքականության մշակման գործում նա վճռական դեր է խաղացել։ Նա քիչ բան չի արել կառավարական բարձրագույն օրգաններում հայերի շահերը պաշտպանելու համար։

Այս հայասեր և հայրենասեր մարդու կյանքն ու գործունեությունը կարոտ են հատուկ ուսումնասիրության։ Անշուշտ հետաքրքիր ու հայրենասիրական ջերմությամբ է գրված իր կողմից բացվելիք դպրոցի մասին հայտարարությունը, ուր մի շարք հարցեր շոշափելուց հետո, ասում է.

«Քննելով Հայոց ազգի այժմեան դրությունը, պարմանում է մարդ նորա կեանքի ողբալի հանգամանաց վերայ. այն հանգամանաց, որ հարկավ պիտի շատ վնասակար ներգործություն ունենան նորա ապագայի վերայ։ Ամենայն տեղ յայտնապես երևում է, որ օտար նիւթերը բռնությամբ մտանում են մեր ազգի մեջ և նորա բնական և բարոյական գրությունը հասուցանում են ծանր ու անբաժանելի վերքեր. Հայք ոչինչ տեղ մի ամուր արգելք դեմ չդրեցին այդ օտար ազդեցությանը և մինչև ցայժմ ոչինչ հնարք չպատրաստեցին իւրեանց ազգայնությունը պահպանելու համար. սորա պատճառը ոչ թե այն էր, որ նոցա մեջ չկար ազգասիրական հոգի. ո՞չ, այլ ինձ թուի՝ թե նորա պարզ տեղեկություն չունենին՝ թե ինչ է ազգայնությունը, որ հարկ էր պաշտպանել իրրև մի սուրբ բան, իւրեանց նախնիքից ավանդած»։

Դրա համար, ասում է նա, ես մտադրվել եմ հիմնել մի այնպիսի վարժարան, որը այստեղ ուղարկված հայ պատանիներին «հայկական դերդաստանի մեջ» (ակնարկում է իր ընտանիքը), պատվաստի ազգային հատկություններ և միաժամանակ պատրաստի հայասիրաններ և այլ մասնագիտական ուսումնական հատատություններ մտնելու համար։

Հետաքրքիր են Եզյանի նաև այն տողերը, ուր նա հայտնում է, որ նման լուրջ ու ծանր պատասխանատվություն հաշվողությամբ կատարելու համար, նա մի քանի տարի հատկացրել է իր անձնական պատրաստության բարձրացմանը։ «Ահա այդ պատրաստությունը, այդ ջանքը վերջացան 1859 թվականի մեջ. իմ վարժարանիս դռները սիրով բացվում են իմ մատաղ ու սիրելի հայրենակիցների համար. բոլոր հոգեոր և մասնավոր կարգությունս ընծայում եմ իմ ազգիս» («Հյուսիսափայլ», 1859, № 8, էջ 333—335)։

Մեծ չի եղել Կ. Եզյանի պանսիոն-դպրոցի սաների թիվը՝ ընդամենը 10 հոգի, սակայն կարևորն այն է, որ իր այդ հայրենասիրական նախաձեռնությամբ նա համարյա առաջիններից մեկն է եղել (Աբովյանից և մի քանի ուրիշներից հետո), որ օրինակ է տվել մյուսներին։

Կ. Եզյանի պանսիոն-դպրոցի մասին մեր ունեցած տեղեկությունը-

ները շատ աղքատիկ են։ Դիտենք, որ այն բացվել ու գործել է, իր սաներին նախապատրաստելով գիմնազիաներում սովորելու համար։ Անկասկած, ուսումնասիրված առարկաների մեջ ծանրակշիռ տեղ են գրավել հայագիտական առարկաները՝ հայոց լեզուն, գրականությունը և պատմությունը, որոնց լավագույն գիտակ էր ինքը՝ Եղյանը։ Եվ պատահական չէ, որ այդ պանսիոնից դուրս են եկել լավագույն հայրենասեր գործիչներ, հայագետներ։

Ահա մի հետաքրքիր օրինակ, որի մասին պատմվում է 1904 թվականին Թիֆլիսում հրատարակված «Լույս» օրացույց հանդեսում։ Այնտեղ ասված է, որ «Արձագանք» լրագրի և «Փորձ» ամսագրի ապագա խմբագիր Աբգար Հովհաննիսյանի ծնողները ուշիմ պատանուն 1860 թվականին Թիֆլիսից ուղարկում են Պետերբուրգ՝ գիմնազիական, ապա համալսարանական կրթություն ստանալու։ Նրանց ազգական, պետերբուրգաբնակ հայտնի հարուստ Մկրտիչ Սանասարյանը, որի կտակած կապիտալով հիմնվել ու պահվել է Էջմիածնի հռչակավոր Սանասարյան վարժարանը, գերադասում է գիմնազիայի փոխարեն իր ազգականի որդուն տալ Կ. Եղյանի պանսիոնը։ Այստեղ հիմնավոր պատրաստություն ստանալուց հետո, Ա. Հովհաննիսյանը հեշտությամբ ընդունվում է Պետերբուրգի գիմնազիան։

«Աբգար Հովհաննիսյանի գրական ուղղությունը,— ասված է «Լույսում» հրապարակված նրա մահախոսականում,— մասամբ կարող է բացատրվել նաև այն ազդեցությամբ, որ անշուշտ ունեցավ նրա վրա Կ. Եղյանը» (Ե. Թոփչյան, «Լույս» օրացույց ճանդես, 1904, Թիֆլիս, էջ 563)։

Այո, մեծ է եղել Կ. Եղյանի ազդեցությունը ապագա հայագետի ու հրապարակախոսի վրա։ Անկասկած, նա նման ազդեցություն է ունեցել նաև իր մյուս սաների վրա, որոնց մասին, ցավոք, մենք տեղեկություններ չունենք։

Մենք չգիտենք նաև, թե մինչև ե՞րբ է պահպանել իր գոյությունը Կ. Եղյանի պանսիոնը։ Բայց այն փաստը, որ այդ ջերմ հայրենասերի ջանքերով հիմնվել ու պահվել է հիշյալ պանսիոնը, որը հայ պատանիներին հայեցի կրթություն է տվել հեռավոր Պետերբուրգում, ինքնին շատ նշանակալից է։

«Լյուսիսփյալ», 1859, № 8, էջ 332—335 և այլ աղբյուրներ։

Պետերբուրգի հայկական դպրոց

«Արարատ» ամսագրի 1908 թ. հոկտեմբերի համարում կարդում ենք. «Պետերբուրգի հայ բարեգործական ընկերությունը մայրաքաղաքի

հայոց եկեղեցու բակում բաց է արել առաջին հայկական դպրոցը, մանկական պարտեզի բաժանմունքով»։

Այդ դպրոցի մասին 1913 թ. իր համարներից մեկում գրել է նաև «Բակու» թերթը։ Այնտեղ ասված է. «Պետերբուրգի հայերը հիմնել են բարեգործական ընկերություն, որը պահում է եկեղեցական-ժխական դպրոց ոչ հարուստ հայերի երեխաների համար»։ Մակայն թերթի նույն հաղորդումից իմանում ենք, որ դպրոցը քիչ աշակերտներ է ունեցել, ուստի և մտադրություն է եղել նրա փոխարեն Պետերբուրգում բաց անել հաշարան հայ ուսանողների համար։

Չգիտենք, իրականացվե՞լ է այս մտադրությունը, թե ոչ։

1788 թվականին Պետերբուրգի հայկական տպարանը լույս է ընծայել ռուս-հայերեն բառարան և ռուսաց լեզվի դասագիրք հայ երեխաների համար։ Այս փաստից կարելի է կարծել, որ դեռևս 18-րդ դարում Պետերբուրգում տեղի է ունեցել հայ երեխաների ուսուցում, գոյն և գործել է հայկական դպրոց։

«Արարատ», 1908, № 10, էջ 947.
«Բակու», 1913, № 209։

Սալա (Մեծ) գյուղի արական դպրոց

Եկատերինոսլավի Նահանգի Մեծ Սալա գյուղը նոր նախիջևանից ոչ հեռու գտնվող հայաբնակ խոշոր գյուղերից մեկն է եղել։ Այժմ էլ այնտեղ հիմնականում հայեր են ապրում։

Այդ գյուղի ազգային դպրոցը բացվել է 1860-ականի կեսերին։ 1873-ին գործել է՝ ունենալով 3 ուսուցիչ և 100 աշակերտ։ Ցույց է տրված նաև 1877-ի ու 1887-ի պաշտոնական փաստաթղթերում։ Գործել է նաև հետագա տարիներին։ 1910-ին ունեցել է 4 նախապատրաստական խմբեր և երկու դասարան՝ 6 ուսուցչով։ Այդ ժամանակ ուսումնական ու վարչական գծով այն ենթարկվել է Ռոստովի շրջանի ժողովրդական (պետական) դպրոցների տնօրին, բայց ղեկավարվել է դեռևս Մակար կաթողիկոսի կողմից 1880-ական թվականների վերջերին հաստատված հայկական-եկեղեցական դպրոցների ծրագրերով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 56, գ. 43, թ. 19; ՍՍՀՄ ՊԿՊԱ. ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 9; «Դպրոց», 1875—76, № 4, էջ 139; «Արարատ», 1878, ԺԹ, էջ 456; «Նոր դպրոց», 1910, № 2, էջ 86։

Սալա (Մեծ) գյուղի հայկական օրիորդաց միդասյան դպրոց

Մեծ Սալան, եկեղեցուն կից եղած տղաների դպրոցից բացի, ունեցել է նաև օրիորդաց միդասյան դպրոց, որը գտնվել է գյուղի կենտրոնում։ Այդ դպրոցը 1909—10 ուս. տարում իր չորս բաժանմունքներում

ունեցել է 120 աշակերտուհի։ Դրադարանը բաղկացած է եղել 300 կտոր զանազան գրքերից. ստացել է «Հասկեր», «Աղբյուր», «Նոր դպրոց»։ Բոլոր ուսուցչուհիները ունեցել են միջնակարգ կրթություն։

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։

«Նոր դպրոց», 1910, № 2, էջ 86։

Սալա (Փոքր) գյուղի ծխական դպրոց

Փոքր Սալա գյուղը ևս եղել է Եկատերինոսլավի նահանգի հայաբնակ գյուղերից մեկը։ Այնտեղ եկեղեցական ծխական արական դպրոց է հիմնվել 1867-ին։ 1873-ին ունեցել է մի ուսուցիչ և 35 աշակերտ։ Ցույց է տրված նաև 1877 և 1882 թթ. ցուցակներում։ Դպրոցը 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1887-ին։ Նոր Նախիջևանի թեմի բոլոր հայ դպրոցների հետ միասին այս դպրոցը ևս վերաբացումից հետո, բռնությամբ խլվել է հայ դպրոցական իշխանություններից և ենթարկվել պետական դպրոցական իշխանություններին։ Այդպես էլ մնացել է մինչև ցարիզմի տապալումը։

ԼՈՒՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 19; «Դպրոց», 1873—76, № 4, էջ 139; «Արարատ», 1878, ԺԹ, էջ 456; 1882, № 8, էջ 258; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 9։

Տագանրոգ քաղաքի հայկական դպրոց

Տագանրոգի հայկական դպրոցի բացման թվականը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1910-ին այն գործել է, քանի որ այդ թվականին կաթողիկոսը օրհնության կոնդակ է ուղարկել Տագանրոգի երկու հայերի՝ տեղի հայ եկեղեցուն և դպրոցին խոշոր գումար նվիրելու առթիվ։

«Արարատ», 1910, էջ 493։

ՏԱՎՐԻԿՅԱՆ ՆԱՀԱՆԳ

Արմյանսկ քաղաքի հայկական ծխական դպրոց

Դեռևս 1880-ական թվականների սկզբներին հայ հարուստ Հարություն Աբաբյանը 30 հազար ռուբլու խոշոր գումար է կտակել Արմյանսկում իր և կնոջ անունով՝ Աբաբյան-Գայանյան երկսեռ դպրոց հիմնելու համար։ Կտակի համաձայն՝ Աբաբյանի կնոջ մահից հետո այդ գումարը 33 տարով պետք է մնար բանկում, որից հետո նրա տոկոսաբեր շահույթով հիմնվեր հիշյալ դպրոցը։

Մենք չգիտենք, թե ինչով է վերջացել այդ դպրոցի հարցը, բայց գիտենք, որ 1887-ին Արմյանսկում գոյություն է ունեցել հայկական երկսեռ դպրոց։

Արմյանսկի հայկական դպրոցի վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած հաջորդ տվյալը վերաբերում է 1903-ին։ Գիտենք նաև, որ այն մինչև 1915 թվականը գործել է։

«Մեղու Հայաստանի», 1884, № 29։
ԼՈՒՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 154, թ. 80; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 10։

Եվպատորիայի հայկական եկեղեցական-ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1861-ի կեսերին գործել է՝ ունենալով 10 աշակերտ։ Դպրոցի հոգաբարձության տեղեկություններից իմանում ենք, որ այն գործել է նաև 1897-ից մինչև 1915 թվականը և գտնվել է լուսավորության մինիստրության վերահսկողության տակ։

ԼՈՒՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 154, թ. 11;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 1, թ. 6։

Թեոդոսիայի հայկական արական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1861-ին գործել է՝ ունենալով 38 աշակերտ։ 1873-ին ունեցել է 3 ուսուցիչ, 43 աշակերտ։ 1877-ին աշակերտների թիվը իջել է 12-ի։ 1912—13 ուս. տարում եղել է 4-ամյա խառը դպրոց, ուր սովորել են 30 տղա և 32 աղջիկ։

1915-ին ևս դպրոցը գործել է։

«Դպրոց», 1875—76, № 4, էջ 138; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 1; «Արարատ», 1878, ԺԹ, էջ 457; ԼՈՒՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 154, թ. 13; գ. 590, թ. 65, գ. 43, թ. 18։

Թեոդոսիայի հայկական օրիորդաց դպրոց

Պատմական գիտությունների դոկտոր Վ. Միքայելյանն իր մի հոդվածում գրել է. «1859—60 թվականներին Դ. Այվազովսկին, հակառակ կաթողիկոսի սպառնալից արգելքների, Թեոդոսիայում աղջիկների դպրոց է բացում...»։

Մեզ անհայտ է Այվազովսկու բացած այդ դպրոցի գոյությունը։ Չգիտենք նաև, թե որքան հավատալի է նրա մասին Վ. Միքայելյանի գրածը, քանի որ այդ առթիվ ոչինչ չենք գտել Այվազովսկու Խալիբյան դպրոցի պատմությանը նվիրված ծավալուն գրքում, ինչպես նաև նրա

ձեռքով կազմված և վերադաս մարմիններին ուղարկված նոր Նախիջևանի թեմի հայ դպրոցների ցուցակներում։

Գիտենք միայն, որ 1873-ին Թեոդոսիայում գործել է հայ աղջիկների դպրոց՝ ունենալով մի ուսուցիչ և 27 աշակերտուհի։ Հետագա տարիների փաստաթղթերում այլևս չի հիշվում։ Հավանաբար միացել է տեղի արական դպրոցին, քանի որ 1887-ի մի տեղեկագրում Թեոդոսիայի դպրոցը ցույց է տրված որպես երկսեռ դպրոց։ Նույնը նաև 1912-ին։

Վ. Միքայելյան, «Ղրիմահայ ծխական դպրոցները» («Մատենական մանկավարժ», 1970, № 10, էջ 66); «Դպրոց», 1875—76, № 4, էջ 138; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 18; գ. 590, թ. 55; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 10։

Թեոդոսիայի Խալիբյան ազգային դպրոց

Թեև կարճ, բայց փոթորկահույզ է եղել այս նշանավոր դպրոցի կյանքը։ Եթե մենք փորձենք այստեղ շարադրել նրա թեկուզ համառոտ պատմությունը, ապա դրա համար էջեր կպահանջվեին։ Նկատի ունենալով ներկա աշխատության բնույթը, մենք կսահմանափակվենք այդ դպրոցի մասին միայն մի քանի տեղեկությունների հաղորդումով։

Հիշեցնենք, որ նրա բավականաչափ սուղ պատմությունը գրված և հրատարակված է դեռևս 1880 թվականին՝ «Պատմություն Խալիբյան ուսումնարանին ազգիս հայոց (1858—1871)» ընդհանուր խորագրով։ Այդ պատմության հեղինակն է դպրոցի հիմնադիր, տեսուչ և տնօրեն Գաբրիել Այվազյանը (Այվազովսկին)։

Թեոդոսիայի (Ֆեոդոսիայի) Խալիբյան դպրոցը հիմնվել է 1858-ին։ Նրա հիմնադիր Գաբրիել Այվազյանը (հռչակավոր ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրը) եղել է ժամանակի զարգացած ու գիտուն անձնավորություններից մեկը։ Բավական է միայն նշել, որ նա ազատ տիրապետել է ավելի քան 12 լեզուների, խոսել ու գրել է, հայերենից և ռուսերենից բացի, նաև խազերեն, ֆրանսերեն, լատիներեն, հունարեն, գերմաներեն, անգլերեն, տաճկերեն, պարսկերեն, արաբերեն և եբրայերեն («Փորձ», 1880, № 4, էջ 133)։ Նա հիմնավոր կրթություն էր ստացել Վենետիկի Ս. Ղազար վանքի Մխիթարյանների մոտ, նրանց ազդեցությամբ էլ դարձել կաթոլիկ հոգևորական՝ վարդապետի կոչումով։ Սկզբում աշխատել է Փարիզի Մուրատյան վարժարանում, սակայն, գժտվելով Մխիթարյանների հետ և ընդունելով հայ-լուսավորչականություն, նա և մի քանի այլ անձինք Փարիզում հիմնել են Հայկազյան վարժարանը, որը երկար կյանք չի ունեցել՝ նյութական սուղ պայմանների պատճառով։

Նախնական բանակցություններ վարելով ռուսական կառավարության հետ, Գ. Այվազյանը 1857-ին գալիս է իր ծննդավայրը՝ Թեոդոսիա (Ֆեոդոսիա) քաղաքը և հաջորդ տարում այնտեղ հիմնում է Խալիբյան դպրոցը։ Այն Խալիբյան (Խալիպյան) է կոչվել Նոր Նախիջևանի հարուստ Հարությունյան Խալիպյանի անունով, որը դպրոցի շենքի կառուցման համար հատկացրել է 50 հազար ռուբլի, բայց, ինչպես ինքն է գրել հետագայում, փաստորեն ծախսել է 150 հազարից ավելի։

Մանրամասնությունների մեջ չմտնելով, ընթերցողին հիշեցնենք, որ այս Խալիբյանի դեմ «Հյուսիսափայլում» բազմիցս հանդես է եկել մեր անմահ Միքայել Նալբանդյանը՝ մերկացնելով նրա խարդախություններն ու ստոր գործերը։ Նալբանդյանը նշել է, որ նոր Նախիջևանի բնակչությանը կեղեքողը և եկեղեցական-ծխական հասարակական գումարները հափշտակողը «բարերար» է հռչակվել, որն իբր իր սեփական միջոցներից խոշոր գումար է տրամադրել Թեոդոսիայի դպրոցի կառուցման և պահպանման համար։ Իրականում դա ժողովրդից գողացված հակալական գումարի մի փոքր մասն է միայն, որը Խալիբյանի կողմից հրամցվել է որպես «նվեր»՝ ոգեղ մարդկանց աչքը թոզ փչելու և «բարերարի» համբավ ձեռք բերելու նպատակով։

Ընթերցողին, իհարկե, լավ հայտնի է նաև Գաբրիել Այվազյանի (Այվազովսկու) անունը, որը անցած դարի երկրորդ կեսի հայ հասարակական շարժման կրթա-հետազոտական ուղղության պարագլուխներից և առավել ակտիվ գործիչներից էր, Միքայել Նալբանդյանի և Ստեփանոս Նազարյանի գաղափարական ամենատեսչ հակառակորդներից մեկը։ Գ. Այվազյանն իր ողջ հասարակական-քաղաքական գործունեության ընթացքում եղել և մնացել է որպես հետագիմ գաղափարների ջերմ պաշտպան ու ջատագով, առաջադիմության ու հասարակական կյանքի արմատական բարեփոխումների կատաղի թշնամի։

Այս բոլորով հանդերձ, չի կարելի չնշել Գ. Այվազյանի կողմից Թեոդոսիայի ազգային դպրոցի կազմակերպման դրական նշանակությունը և այն պայմանների կարևորությունը, որոնք նա առաջադրել էր ռուսական կառավարությանը՝ որպես իր դպրոցի ստեղծման անհրաժեշտ նախապայման։

Դեռևս Փարիզում եղած ժամանակ մտադրվելով Ռուսաստանի հարավային որևէ քաղաքում բաց անել հայկական ազգային դպրոց և այդ առթիվ ռուսական դեսպանության միջոցով բանակցություններ վարելով ցարական կառավարության հետ, Այվազյանը առաջադրել էր հետևյալ պայմանները։

ա) Ուսումնարանում ապահովել հայ-լուսավորչական կրոնի և հայոց լեզվի կատարյալ ազատություն;

բ) ուսումնարանի դասընթացն ավարտած հայերին հավանավորել՝ որտեղ էլ նրանք գտնվելիս լինեն;

գ) ուսումնարանում տրվող կրթությունը չենթարկել կողմնակի ոչ մի ազդեցության, «... քանի որ Ռուսաստանում գաղափարների ազա-

տությունը կաշկանդելը,— ինչպես բացատրեց Այվազովսկին,— միակ պատճառն է, որ Թուրքահայերը չեն գիմում Ռուսաստանում գտնվող հասատատությունները. նրանք իրենց երեխաներին ուղարկում են այնտեղ, ուր դաստիարակումը ազատ է և ազգային» (լուսավորության մինիստրին ներքին գործերի մինիստրի հղած նամակից. ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 140, գ. 55, թ. 81):

Բավականաչափ խիստ պահանջներ էին։ Եվ չնայած դրանց մեկ կային նաև Ռուսաստանի ճնշված ժողովուրդների լուսավորության նկատմամբ ցարիզմի քաղաքականության անհերկմիտ քննադատություն ու կշտամբանք, այնուամենայնիվ ցարը համաձայնվում է Այվազյանի առաջադրած պայմաններին։ Դրա պատճառն այն է, որ ցարական կառավարությունն էլ իր սպասելիքն ուներ այդ դպրոցից։ Նա ցանկանում էր, որպեսզի այդ դպրոցն ընդունվեն տաճկահայերի երեխաներ, որոնց միջոցով և ծրագրում էր իր ազդեցությունը տարածել Թուրքիայի ու արևելյան այլ երկրների վրա։ Այլ կերպ ասած, ցարական կառավարության մտահղացմամբ, Այվազյանի դպրոցը որոշակի դեր էր խաղալու այդ կառավարության արևելյան քաղաքականության մեջ։

Հանուն այդ նպատակի ցարը ոչ միայն թույլ է տվել հիշյալ դպրոցը կազմակերպել, այլև բավականաչափ առատորեն սիրաշահել է Այվազյանին։ Նա, առանց էջմիածնի սինոդի կարծիքը հարցնելու, հաշվի չառնելով նույնիսկ, որ այդ պահին ամենայն հայոց կաթողիկոսի գահը թափուր էր (Ներսես Աշտարակեցին վախճանվել էր, իսկ նոր կաթողիկոս դեռևս չէր ընտրվել), իր միահեծան կամքով Այվազյանին նշանակել է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմի կառավարիչ, ազատելով այդ պաշտոնից Մատթեոս Վեհապետյանին (այս հանգամանքը հենց սկզբից Այվազյանի դեմ տրամադրեց Նոր Նախիջևանի նշանավոր հայերից շատերին, հատկապես Վեհապետյանի կողմնակիցներին, այդ թվում նաև Միքայել Նալբանդյանին)։ Բացի այդ, Այվազյանի համար դյուրություն ստեղծելու նպատակով ցարը կարգադրում է թեմի առաջնորդարանն ու կոնսիստորիան Քիշնևից փոխադրել Նոր Նախիջևան, իսկ դպրոցը բացել Այվազյանի ծննդավայր Թեոդոսիայում։ Այս երևույթն էլ խոշոր դժգոհություններ առաջացրեց Նոր Նախիջևանում։ Վերջինիս բնակիչները գտնում էին, որ Նոր Նախիջևանը ավելի հայաշատ քաղաք է, քան Թեոդոսիան, ուստի և պահանջում էին դպրոցը բացել իրենց մոտ, մանավանդ որ այն հիմնվելու և պահվելու էր Խալիբյանի կողմից հատկացված ժողովրդական գումարներով։

Դպրոցը բացելու խնդրագրի հետ Այվազյանը ներկայացրել էր նաև նրա կանոնադրությունը, որը հաստատվել է կայսեր կողմից։ Այստեղ ևս կառավարությունը թույլ է տվել այնպիսի գիծումներ, որոնք այլ պայմաններում նա երբեք չէր անի։

Այսպես, սահմանվել է, որ.

1. Ուսումնարանը լինելու է մասնավոր, ուր դաստիարակվելու են բացառապես հայ երեխաներ՝ խտրություն չդնելով նրանց ծննդավայրի, ծագման ու դավանանքի միջև։

2. Ուսումնարանը ազատ է լինելու լուսավորության մինիստրության հսկողությունից և գտնվելու է վարդապետ Այվազյանի, իսկ նրանից հետո՝ թեմի առաջնորդի իշխանության տակ։

3. Ուսումնարանի դասատուների, դասագրքերի և դաստիարակման եղանակների ընտրությունը ամբողջովին պատկանելու է Այվազյանին։

4. Ուսումնարանում ավանդվելու են ռուսերեն, ֆրանսերեն, հայերեն և տաճկերեն, ինչպես նաև այն գիտությունները, որոնք ավանդվում են պետական գիմնազիայում, կամ էլ անհրաժեշտ են վաճառականությամբ զբաղվելու համար։

Ռուսահպատակ հայերի համար պարտադիր չէ տաճկերենը, իսկ տաճկահպատակ երեխաների համար՝ ռուսերենը։

5. Ուսումը տարվելու է հայոց լեզվով, մասամբ նաև ռուսերենով և ֆրանսերենով։

6. Ուսումնարանն ունենալու է վեց դասարան։ Նրա բոլոր աշակերտները ապրելու են ուսումնարանում և լինելու են թոշակառու, կիսաթոշակառու և ձրիավարժ։

7. Ուսումնարանի ուսումնական մասը ղեկավարելու է մանկավարժական ժողովը՝ վերատեսուչ Գ. Այվազյանի նախագահությամբ, իսկ անտեսական մասը՝ առանձին խորհուրդը, որի նախագահը նույնպես վերատեսուչն է։

Բավականաչափ արտոնյալ պայմաններ էին։

Ահա այդ կանոնների համաձայն էլ 1858 թ. հոկտեմբերի 12-ին բացվել է Խալիբյան դպրոցը, որը ամբողջ չորս տարի գտնվել է մասնավոր շենքում և միայն 1862 թ. աշնանը հնարավորություն է ունեցել փոխադրվել իր համար կառուցված եռահարկ հիանալի շենքը։

Առաջին տարվա սկզբում դպրոցն ունեցել է 58 աշակերտ, իսկ տարվա ընթացքում դրանց թիվը հասել է 66-ի, որոնցից 42 հոգի թոշակառու։ Ամենաշատ աշակերտներ ունեցել է 1861—62 ուս. տարում՝ 137 հոգի (87 թոշակառու), իսկ հաջորդ երկու տարիներին սովորողների թիվը նվազել է, 1863—64 ուս. տարում իջնելով 92-ի։

Դա բացատրվել է դպրոցի նյութական միջոցների սղությամբ։ Ահա թե ինչու որոշ ժամանակից հետո դպրոցը բոլորովին հրաժարվել է ձրիավարժ և կիսաթոշակառու աշակերտներ ընդունել, իսկ մյուսներից պահանջել է 250 ռ. տարեկան վարձ, 50 ռ. հանգերձանքի համար և ճանապարհածախս։

Նյութական ծանր պայմանների պատճառով դպրոցը դեպի անկում էր գնում։ Էջմիածին ուղարկած իրենց բազմաթիվ բողոքներում ժողովրդի ներկայացուցիչները նշում էին, որ դպրոցի միջոցները վատնվում են և պահանջում էին անհապաղ ստուգում կատարել։ Կաթողիկոսը մարդ է ուղարկում ստուգելու և՛ դպրոցի, և՛ եկեղեցական գումարների հարցը, բայց Այվազյանին հաջողվում է կառավարության միջոցով խափանել այդ ստուգումը։ Կառավարությունն ինքն է նշանակում հատուկ հանձնաժողով, հետապնդելով երկու նպատակ. առաջինը՝ առներևույթ ցույց տալ, որ ինքը վերահսկում է դպրոցական և եկեղեցական գումարների ծախսմանը ու դրանով հանգստացնել ժողովրդին և երկրորդը՝ ինչ գնով էլ լինի պաշտպանել Այվազյանին և նրան հակադրել կաթողիկոսին ու հայ հոգևոր իշխանությանը։

Եվ իրոք, կառավարական հանձնաժողովը, Պետերբուրգից գալով Թեոդոսիա, Այվազյանին հղում է մի նամակ, ուր նաև ասված է. «Ամենայն հայոց կաթողիկոսը անցյալ տարի նշանակել է Ձեր կառավարությանը ենթակա թեմի ստուգում։ Այդ ստուգումը անց է կացվել առանց անհրաժեշտ անկողմնապահության և Ձեզ դերապատվության օրինական իրավունքների հարգման, քանի որ ստուգողները մշտապես զուրս են եկել իրենց վրա դրված հանձնարարության սահմաններից և խառնվել են թեմի վարչական կառավարման գործերին»։

Չնայած այս բացահայտ հավանավորությանը և Այվազյանի ինքնասիրությունը շոյող խոսքերին, հանձնաժողովին վերջվերջո չի հաջողվում թաքցնել իրողությունը։ Պետերբուրգ ուղարկած իրենց զեկուցագրերում, ամեն կերպ մեղմելով իրական պատկերը, հանձնաժողովը անուղղակիորեն տեղված է լինում նշել, որ դպրոցի դրամական հաշիվները գտնվում են խիստ անկանոն վիճակում, «չխոսելով արդեն անձամբ վարդապետ Այվազովսկու կողմից առանց հսկողության ծախսված գումարների մասին»[1] (նույն տեղը, թ. 55—58)։

Հանձնաժողովի նախագահ Կավելինը, որը սկզբում ուժգնանալ էր անում Այվազյանի առաջ, ներքին գործերի մինիստրին ուղղված իր մի զեկուցագրում հարկադրված է եղել գրել հետևյալը. «Վերևում բերված օրինակներից կարելի է եզրակացնել, որ կամ գործը տարվել է ոչ բարբոքվի մաքուր, կամ էլ չիմանալով, թե ինչպես անել, որ ծախսերի արդյունքները համընկնեն եկամուտների հետ, բոլոր այդ տեղեկությունները կազմվել են ինչպես հարմար է եղել։ Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դեպքում Այվազովսկին արժանի է նախատինքի» (նույն տեղը, թ. 77)։

Իհարկե, հանձնաժողովի այս զեկուցագիրը հայտնի էր միայն կառավարական վերնախավին, իսկ ժողովուրդը ոչինչ չգիտեր այդ մասին։ Ահա թե ինչու Այվազյանը, օգտվելով այդ բանից, շատ տարիներ հետո գրած իր դպրոցի պատմության մեջ փորձել է ամեն ինչ ներկայացնել վատ գույներով։ Նա գրել է. «Եվ թեպետ հանձնաժողովն առ Ռատիկանն ներքին Գործոց տված տեղեկագիրը (այն, որի մասին խոսեցինք վերևում,— Ս. Խ.) հայտնի չէ մեզ, բայց հետևանքներն կարելի է հաստատությամբ մակարկել, թե նախ՝ ուսումնարանին ընդհանուր կառավարությանը, բարեկարգությանը, ոճոյն և ընթացքին ամենայն կերպով հավանություն ցուցանել է. երկրորդ՝ մինչև ցայժմ եղած ծախքերուն մեջ չափազանցություն կամ վատնողություն ամենևին չէ գտած...» (ընդգծումը մերն է,— Ս. Խ.)։

Կառավարությունը էլի շարունակում էր պաշտպանել Այվազյանին։ Բայց նոր նախիջևանից Պետերբուրգ գնացող բողոքները և կաթողիկոսի համառ պահանջները՝ Այվազովսկուն թեմի առաջնորդի պաշտոնից ազատելու մասին, հանգիստ չէին տալիս ցարական մինիստրներին, և հենց նաև իրեն՝ ցարին։ Իրենց կամքին հակառակ, նրանք ի վերջո ստիպված են եղել տեղի տալ և Գաբրիել Այվազյանին ազատել ինչպես թեմի կառավարչի, այնպես էլ նրա «մասնավոր» դպրոցի տեսչի պաշտոններից։

Դա տեղի է ունենում 1865-ի կեսերին։ Դրանից հետո դեռ երկար ժամանակ կառավարական բարձր ոլորտներում բազմիցս քննարկվել է Խալիբյանի դպրոցի հետագա գոյության խնդիրը։ Այդ հարցով զբաղվել են ներքին ու արտաքին գործերի մինիստրությունները, լուսավորության մինիստրությունը, պետական կանցլերը և ինքը՝ թագավորը։

Վերջինիս հրամանով ստեղծվել են չորս տարբեր «հատուկ» հանձնաժողովներ՝ մինիստրներից կամ նրանց տեղակալներից կազմված։ Այդ հանձնաժողովները ամենայն մանրամասնությամբ քննարկել են Խալիբյանի դպրոցի հարցը։ Արտահայտվել են ամենատարբեր, մեկը մյուսին հակադիր կարծիքներ։ Արտաքին ու ներքին գործերի մինիստրները անհրաժեշտ են գտել պահպանել Խալիբյան դպրոցը և այն ծառայեցնել կառավարության արևելյան քաղաքականությանը, նրա պահպանման համար պետական գանձարանից տրամադրելով որոշ գումար։ Լուսավորության մինիստրը կտրականապես առարկել է դրան և պահանջել է անհապաղ փակել այդ դպրոցը, պատճառաբանելով, որ այն չի արդարացրել կառավարության կողմից նրա վրա դրված հույսերը։

Չնայած երկարատև ու սուր բանավեճերին, գործը վերջանում է նրանով, որ պետական կանցլերից և երեք մինիստրներից կազմված հանձնաժողովը, նկատի ունենալով, որ Խալիբյան ուսումնարանը «չհասավ ենթադրվող նպատակին՝ այն է,— ազգեցիկ հայերի երեխաներին մեր կողմը գրավելուն», իսկ այժմ էլ «արագորեն դեպի անկում է գնում»,

[1] ՍՍՀՄ ԿԿՊԱ (Լենինգրադ), ֆ. 821, ց. 140, գ. 55, թ. 1։

1869-ի մարտի 30-ի իր նիստում որոշում է փակել այդ դպրոցը, իսկ նրա փոխարեն Թեոդոսիայում բացել հայկական հոգևոր սեմինարիա, որը պիտի ենթարկվի ամենայն Հայոց կաթողիկոսին։ Որոշման այս մասը ձեռական նշանակություն ուներ և հայերին հանգստացնելու համար էր միայն, քանի որ, ինչպես տեսանք, իրականում հիշյալ հոգևոր սեմինարիայի բացման կայսերական թույլտվությունը ստացվել է այդ որոշումից 11—12 տարի հետո՝ 1881-ին։

Չի կատարվել նաև հանձնաժողովի մյուս որոշումը՝ Օդեսա քաղաքի գիմնազիաներից մեկին կից «աղքատիկ թուրքահայերի երեխաներին» համար հայկական ուսումնարան կազմակերպելու մասին։

Այդ դպրոցները չեն բացվում, բայց Խալիբյան դպրոցը փակվում է, գոյություն ունենալով ընդամենը 10—11 տարի։

Խալիբյան դպրոցի շենքում հետագայում կառավարությունը վարձակալական հիմունքներով բաց է անում ուսուցչական ինստիտուտ։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 50, թ. 1—85; գ. 55, թ. 1—105;
«Արարատ», 1871, ԺԱ, էջ 369; «Փորձ», 1880, № 4, էջ 132—139։
Գ. Այվազյանի «Պատմություն Խալիբյան ուսումնարանին ազգիս Հայոց», Տփխիս, 1880։

Կերչի հայկական ծխական դպրոց

Մի փաստաթղթում հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1862-ը, սակայն դա հիշատ չէ, քանի որ մի այլ հավաստի աղբյուրից գիտենք, որ այն 1861-ի կեսերին գործել է՝ ունենալով 10 աշակերտ։ 1875-ին եղել է երկսեռ դպրոց՝ ունենալով ընդամենը 15 սովորող։ Հավանաբար գոյություն է ունեցել ընդհատումներով, որովհետև մի շարք տարիների ցուցակներում ցույց չի տրված։ Հայտնի է, որ 1905-ից այն գործել է։ 1915-ին նույնպես գոյություն է ունեցել, սակայն գտնվել է պետական դպրոցական իշխանությունների իրավասության տակ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 19; գ. 154, թ. 22; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 1 և 6։ «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 139։

Հին Ղրիմի հայկական ժողովրդական արական դպրոց

Այս դպրոցը, ինչպես գրում է «Արարատ» ամսագիրը», Հին Ղրիմում գոյություն է ունեցել այնտեղ հայերի վերարնակվելուց ի վեր։ Սակայն մինչև 60-ական թվականների կեսերը եղել է խալֆայական-տիրացուական դպրոց և «ըստ օրինակի ազգային մյուս դպրոցաց շատ հոգեմաշ դժվարությամբ դանազան շրջաններ է ունեցել», երբեմն էլ խափանվել է նյութական նեղությունների պատճառով։

Մի այլ, ավելի հավաստի աղբյուրից երևում է, որ այս դպրոցը 1861-ի կեսերին գործել է որպես եկեղեցական ծխական դպրոց՝ ունենալով 25 աշակերտ։

Ժողովրդի շահերով 1868-ից սկսած դպրոցի նյութական, ուստի նաև ուսումնական գործը սկսում է բարելավվել, երբ դպրոցն ունենում է իր հոգաբարձությունը։ Այդ ժամանակ այնտեղ ուսուցչություն են արել Սահակիանոս Պապյանը և Գեորգ Մոմճյանը։ Ունեցել է 40 աշակերտ։

1873-ին ունեցել է 25 աշակերտ, 1877-ին՝ 2 ուսուցիչ, 32 աշակերտ։ Այս դպրոցը գործել է մինչև 90-ական թվականների առաջին կեսը, որ սովորել է նաև ապագա գրականագետ Հ. Սուրխաթյանը։ Հավանաբար Ղրիմի մյուս դպրոցների հետ միասին այս դպրոցը ևս 1897-ից անցել է պետական դպրոցական տեսչության իրավասության տակ։ 1906—07 ուս. տարում ունեցել է 26 աշակերտ (8 աղջիկ)։ Եղել է 3-մյա դպրոց։ 1910-ին գործել է։ Այդ տարում կաթողիկոսը կարգադրություն է արել Հին Ղրիմի Ս. Խաչ վանքի հասույթից տեղի դպրոցին նպաստ տալու մասին։

«Արարատ», 1871—72, Ե, էջ 203—205; 1878, ԺԹ, էջ 457; 1910, էջ 582։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, «Ուղեցույց», էջ 154, ֆ. 65, գ. 43, թ. 18;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 1 և 6։

Հին Ղրիմի հայկական իգական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1873-ին գործել է՝ ունենալով 3 դասատու և 12 աշակերտուհի։ 1877-ի վիճակագրության մեջ ցույց չի տրված։ Ամենից ավելի հավանական է, որ այն միացել է տեղի արական դպրոցին, որը 1877-ի մի ցուցակում ցույց է տրված որպես երկսեռ դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 18։
«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 138։

Ղարասուբազար քաղաքի հայկական ծխական դպրոց

Տավրիկյան նահանգի (Ղրիմ) Ղարասուբազար քաղաքում հայերը դպրոց են ունեցել հին ժամանակներից։ Տեղի ծխական դպրոցը հիմնվել է 1816-ին (Վ. Միքայելյան, «Ղրիմահայ ծխական դպրոցները», «Սովետական մանկավարժ», 1970, № 10, էջ 65)։

Պատասխանելով նոր նախիջևանի և Բեսարաբիայի թեմական հարցմանը՝ Ղարասուբազարի հայկական դպրոցի հոգաբարձությունը 1915-ին գրել է, որ պետական դպրոցական իշխանությունները «միջամտել են 1837 թվից մինչև օրս Ղարասուբազարի հայոց դպրոցական

գործերի մեջ» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 154, թ. 31)։ 1861-ին գործել է՝ ունենալով 56 աշակերտ։

1873-ին դպրոցն ունեցել է 44 աշակերտ, 1877-ին՝ 4 ուսուցիչ և 64 աշակերտ։ Դպրոցի համար հատուկ շենք է կառուցվել 1878-ին։ 1887-ին հիշվում է որպես երկսեռ դպրոց։

1896-ին եղել է երկսեռ քառամյա դպրոց, պահվել է տեղի հայ բնակիչների և եկեղեցու միջոցներով։

1897-ին հոգևոր իշխանություններից դպրոցն անցել է լուսավորության ministրության իրավասությանը և շարունակել է պահպանել իր գոյությունը։ 1906—07 ուս. տարում ունեցել է 49 աշակերտ (25 աղջիկ)։ Եղել է 4-ամյա դպրոց։ Վերևում բերված վկայություններից երևում է, որ այն 1915 թվականին դեռևս գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 18; գ. 154, թ. 31; գ. 108, թ. 16;
«Արարատ», 1878, ԺԲ, էջ 457; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 140, գ. 53, թ. 1 և 9,
«Նոր դպրոց», 1908, № 6, էջ 77։

Մելիտոպոլ քաղաքի հայկական ծխական դպրոց

Տեղի հայկական դպրոցի բացման տարեթիվը նույնպես մեզ անհայտ է։ 1861-ին այն գործել է, իսկ 1873-ին ունեցել է 1 ուսուցիչ, 10 աշակերտ։ Հիշվում է նաև 1877-ի ցուցակներում։ 1884-ին եղել է միդասյան երկսեռ դպրոց։ Պահվել է տեղի հայ բնակչության և եկեղեցու միջոցներով։ Ինչպես երևում է, մի քանի տարի չի գործել, քանի որ 1888-ին դրվել է Մելիտոպոլում ծխական դպրոց բացելու հարցը։ Այդ նպատակով տեղացի երկու հայ վաճառականներ նվիրել են Մելիտոպոլի մոտ գտնվող իրենց տունը՝ 11 հազար ռուբլու արժողությամբ։ Էջմիածնի սինոդը հրամայել է ընդունել այդ նվերը և վերաբացել դպրոցը։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 140, գ. 53, թ. 1; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 138;
«Արարատ», 1878, ԺԲ, էջ 457; 1888, էջ 388; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 108, թ. 16,
գ. 43, թ. 18։

Յալթայի հայկական ծխական դպրոց

Այս դպրոցի հոգաբարձության 1915-ի զեկուցագրերից իմանում ենք, որ Յալթայի հայկական եկեղեցական ծխական դպրոցը հիմնվել է 1908 թ. հոկտեմբերի 26-ին։

1912—13 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց, ուր սովորել են 19 տղա և 13 աղջիկ։

1915-ից հետո նրա ճակատագիրը մեզ անհայտ է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 154, թ. 4, գ. 590; թ. 59։
«Նոր դպրոց», 1911, № 9—10, էջ 32։

Նոգայսկ քաղաքի հայկական եկեղեցական ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը անհայտ է։ 1861-ին գործել է՝ ունենալով 26 աշակերտ։ 1863-ին տեղի հայերը հավաքել են ոչ մեծ մի գումար և 10 տարվա ընթացքում այն շահեցնելով գործրել են պատկառելի գումար, որով և ապահովել են իրենց դպրոցի նյութականը։ 1873-ին եղել է երկսեռ ծխական դպրոց։ 1877-ին ունեցել է 2 ուսուցիչ և 25 աշակերտ (15 աղջիկ)։ Հետագա տարիների փաստաթղթերում չի հիշվում։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 140, գ. 53, թ. 1; «Դպրոց», 1875—1876, № 5, էջ 138;
«Արարատ», 1869, Ե, էջ 108—109; 1878, ԺԲ, էջ 457; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 19։

Պերեկոպի հայկական եկեղեցական ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Գ. Այվազովսկու մի զեկուցագրից իմանում ենք, որ այդ դպրոցը 1861-ին գործել է՝ ունենալով 25 աշակերտ։ Օդեսայի ուսումնական օկրուգի հոգաբարձուն այդ թվականի սկզբին կարգադրել է Պերեկոպի հայկական ծխական դպրոցը վերցնել ուսումնական վարչության իրավասության տակ, սակայն Այվազովսկին բողոքել է այդ կարգադրության դեմ և թույլ չի տվել այն իրագործել։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 140, գ. 53, թ. 1 և 6։

Սևաստոպոլ քաղաքի հայկական դպրոց

Հիմնվել է 1906-ին՝ տեղի հայկական Ս. Աննա աղջիկանոց կից։ 1912—13 ուս. տարում եղել է միդասյան խառը դպրոց՝ 3 բաժանմունքով։ Սովորել են 15 տղա և 10 աղջիկ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 590, թ. 67։

Սիմֆերոպոլի հայկական երկսեռ դպրոց

Մի փաստաթղթում նշված է, որ այս դպրոցը հիմնվել է 1863-ին, սակայն Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի այն ժամանակվա կառավարիչ Գ. Այվազովսկու պաշտոնական հաղորդումից երևում է, որ դեռևս 1861-ի կեսերին Սիմֆերոպոլում գործել է հայ եկեղեցական-ծխական դպրոց՝ 35 աշակերտով։ Դրանից էլ առաջ հայկական եկեղեցու գավթում գործել է մասնավոր դպրոց։ Առաջին հայ դպրոցներից մեկն է, ուր տղաներն ու աղջիկները սովորել են միասին, միևնույն դասարանում։ 1876-ին այս դպրոցում ավանդվել են կրոնագիտություն, սուրբ գրոց և ազգային պատմություն, աշխարհագրություն, թվաբանության չորս գոր-

ծողություն, հայերեն և ռուսերեն, ձեռագործ։ Դպրոցը եղել է միդասյան՝ 3 տարվա դասընթացով, ունեցել է 90 աշակերտ։ Նրա այն ժամանակվա տեսուչ Նահապետ Թափչյանը «Գերմանացի պ. Կորֆին ընթացքով և լուր բաղմամյա փորձերով նոր այբբենարան մի գրեց իբրև դասատետր վարժանքաց՝ և նույն ընթացքին համեմատ երկու հատոր ընթերցարան, որք դեռ տպված չեն» («Արարատ», 1876, է, էջ 272—273)։ Իր կազմած այբբենարանի և դասագրքերի սկզբունքներով էլ սովորեցրել է Թափչյանը, և, ինչպես համոզում է «Արարատ»-ի հոդվածագիրը, մեծ հաջողություններ է ունեցել։ Այդ տարվա հարցաքննության ժամանակ աշակերտները լավ առաջադիմություն են ցույց տվել հայոց և ռուսաց լեզուներից։ Տարեվերջի հանդեսին, ուր ներկա են գտնվել ծնողները և շատ այլ հայեր, աշակերտները կարդացել են մի ճառ այն մասին, թե «որչափ վնասակար է մեր լեզուին մեջ օտար բառեր խառնելը և ծնողաց իրենց որդվոց հետ հայերեն չխոսիլը» (նույն տեղը)։

1873-ին և 1875-ին ցույց է տրված հայ արական և իգական առանձին դպրոցների գոյությունը Սիմֆերոպոլում։ Առաջինն ունեցել է 3 ուսուցիչ, 48 աշակերտ, երկրորդը՝ 4 ուսուցիչ, 67 աշակերտուհի։ 1877-ի վիճակագրության մեջ ցույց է տրված միայն արական դպրոցը, ուր սովորել են նաև 56 աղջիկներ։ 1887-ին այն հիշվում է որպես երկսեռ դպրոց։

Այս դպրոցը ևս, Կովկասից դուրս գտնվող հայկական մյուս դպրոցների հետ, անցած դարի 90-ական թվականների կեսերից անցել է պետական վերահսկողության տակ և այդ վիճակում շարունակել է իր գոյությունը մինչև 1917 թվականը։

1909—10 ուս. տարում դպրոցն ունեցել է երկու նախակրթարան և երեք դասարան։ Պարտադիր ծրագիր չի ունեցել. դասատուները պարապել են հին ծրագրերով և դրանք փոփոխել են իրենց հայեցողությամբ, աշխատելով աշակերտներին պատրաստել պետական դպրոցներն ընդունվելու համար։ Այդ թվականին ունեցել է 83 աշակերտ՝ 39 տղա, 44 աղջիկ (տարեվերջին աշակերտների թիվը հասել է 97-ի)։ Մեծ մասը սովորել է ձրի, դպրոցից ստանալով նաև հագուստ և տաք նախաճաշ։

1912—13 ուս. տարում եղել է 5-մյա խառը դպրոց, ուր սովորել են 53 տղա և 31 աղջիկ։

Այս դպրոցի մասին մեր ձեռքի տակ եղած վերջին տեղեկությունը վերաբերում է 1915-ին։ Դրանից իմանում ենք, որ այն շարունակել է մնալ լուսավորության մինիստրության ենթակայության տակ և ղեկավարվել է պետական դպրոցական դիրեկցիայի նշանակած տեսչի միջոցով։

«Մեղու Հայաստանի», 1859, N 45, էջ 358։
«Արարատ», 1876, ժ, էջ 272—273; 1878, ԺԹ, էջ 457;

«Դպրոց», 1875—1876, N 4, էջ 138;
«Նոր դպրոց», 1911, N 5—6, էջ 30—31;
ԼՍՄՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 18; գ. 154, թ. 60; գ. 590, թ. 51;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 140, գ. 53, թ. 1 և 9։

Սիմֆերոպոլի հայկական օրիորդաց դպրոց

Այս դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1873-ին այն գործել է որպես առանձին իգական դպրոց, ուր սովորել են 67 հայ աղջիկներ։ Մինչ այդ աղջիկները սովորել են տղաների հետ միասին։ 1875-ին դպրոցը շարունակել է գոյություն ունենալ, իսկ 1877-ից, ինչպես երևում է, միացել է տեղի արական դպրոցին, ուր սովորել են 56 աղջիկներ։

ԼՍՄՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 19, գ. 154, թ. 60։

Սուբաշի գյուղի հայկական դպրոց

Այս գյուղի դպրոցի բացման թվականը մեզ անհայտ է։ Գիտենք սակայն, որ 1910-ին գործել է. այդ թվականին կաթողիկոսը կարգադրություն է արել Հին Ղրիմի Ս. Խաչ վանքի եկամուտներից Սուբաշի գյուղի դպրոցին նպաստ տալու մասին։

«Արարատ», 1910, էջ 587։

Օրբազար քաղաքի ծխական դպրոց

Տավրիկյան նահանգի Օրբազար քաղաքի հայկական դպրոցը գործել է 1873-ին՝ ունենալով 2 ուսուցիչ, 15 աշակերտ։ Պահվել է տեղի հայ բնակիչների միջոցներով։ 1877-ին աշակերտների թիվը հասել է 30-ի։ Հետագա շատ տարիների փաստաթղթերում չի երևում։ Հայտնի է, սակայն, որ այն 1906—07 ուս. տարում գործել է՝ ունենալով 22 աշակերտ (12 աղջիկ)։

ԼՍՄՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 18;
«Դպրոց», 1875—1876, N 4, էջ 138;
«Արարատ», 1878, ԺԹ, էջ 457; «Նոր դպրոց», 1908, N 6, էջ 77։

ՔԻՇՆԵՎԻ ՎԻՃԱԿ

ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ

Ակերման քաղաքի Մեսրոպյան արական դպրոց

Թեմական առաջնորդին ուղղված պատասխան գրության մեջ Ակերմանի հայկական արական դպրոցի հոգաբարձությունը 1915-ին գրել է. «Ինչպես երևում է դպրոցի սակավաթիվ գործերից, Ակերմանի հայ եկեղեցական-ծխական դպրոցը բացվել է 1831-ին՝ հայոց արքեպիսկոպոսի (անունը չիք) կարգադրությամբ» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 154, թ. 1)։ Հաստատապես հայտնի է, որ այս դպրոցը 1856-ին և 1861-ին գործել է՝ ունենալով 65 աշակերտ։

1870-ին Ակերմանի հայ հասարակությունը զգալի միջոցներ է տրամադրում այս և օրիորդաց դպրոցների հարատևությունը ապահովելու համար։ 1873-ին դպրոցն ունեցել է 34, 1877-ին՝ 35 աշակերտ։ 1882-ին գործել է։ 1897-ին այն բռնի կերպով վերցվել է լուսավորության մինիստրության իրավասության տակ և այդ վիճակում շարունակել իր գոյությունը մինչև 1915 թվականը, երբ նորից ու նորից հարց է բարձրացվել թեմի հայ դպրոցները հայ եկեղեցուն վերադարձնելու մասին։

«Մեղու Հայաստանի», 1859, № 11, էջ 83;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 154, թ. 20; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 1; «Արարատ», 1870, ԺԲ, էջ 306; 1878, ԺԲ, էջ 456; 1882, էջ 311—313։

Ակերմանի հայկական Հռիփսիմյան իգական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է, բայց 1870-ին այն գոյություն է ունեցել։ 1873-ին այս դպրոցն ունեցել է 25 աշակերտուհի և 2 ուսուցիչ։ 1877-ին աշակերտուհիների թիվն իջել է 18-ի։

1885-ին «Արձագանք»-ը նշել է, որ Ակերմանում կա 160 հայ ընտանիք, որոնք սկսել են իրենց երեխաներին ուղարկել պետական գիմնազիաները։

«Արարատ», 1870, ԺԲ, էջ 305—306; 1878, ԺԲ, էջ 456;
«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 139; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 19; «Արձագանք», 1885, № 10։

Հնչեստ քաղաքի (Բեսարաբիա) հայկական ծխական արական դպրոց

Հիմնվել է 1857-ին։ 1877-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ, 11 աշակերտ։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։

«Մեղու Հայաստանի», 1859, № 13, էջ 342;
«Արարատ», 1878, ԺԲ, էջ 456։

Հնչեստ քաղաքի հայկական իգական դպրոց

1877-ին գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 7 աշակերտուհի։

«Արարատ», 1878, ԺԲ, էջ 456։

Քիշնևի հայկական արական դպրոց

Պրոֆ. Մ. Սանթրոսյանը նշում է, որ Քիշնևում հայկական դպրոցի գոյությունը պետք է հաշվել առնվազն 1833-ից։ Հետագայում այդ դպրոցը խափանվել է և վերաբացվել 1856-ին։ 1861-ին գործել է, իսկ 1867-ին գտնվել է նյութապես համեմատաբար բարվոք վիճակում՝ շնորհիվ բազմաթիվ հայ նվիրատուների։ Աշակերտների մի մասին տրվել է ծրի հաղորդում։ 1875-ին ունեցել է 2 ուսուցիչ, 14 աշակերտ։ 1877-ին խափանված է եղել։

Այս դպրոցի մասին մեր ձեռքի տակ եղած հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1905-ին։ Ունեցել է 2 ուսուցիչ, 24 աշակերտ (10 աղջիկ)։ Թեմական տեսչի հաղորդման համաձայն 1909 թվականին այն եղել է նոսմյա երկսեռ դպրոց։ Գործել է նաև 1911-ին և հետագա տարիներին։

Մ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19-րդ դ. ա. կեսին», էջ 307; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 1; «Արարատ», Դ, էջ 52; 1878, ԺԲ, էջ 456; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 137; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 544, թ. 2; գ. 43, թ. 17; գ. 30, թ. 31; «Նոր դպրոց», 1908, № 6, էջ 87, 1911, № 9—10, էջ 32։

Քիշնևի հայկական օրիորդաց դպրոց

Այս դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ հայտնի չէ, հավատի է սակայն, որ այն 1867-ի սկզբներին գոյություն է ունեցել։ Թեև Քիշնևը հայկական արական դպրոցի հետ միասին ունեցել է մի ընդհանուր վերատեսուչ, սակայն գտնվել է մի այլ շենքում և համարվել է առանձին դպրոց։ Այդ ժամանակ դպրոցի վերատեսուչն է եղել Հովհաննես Կոյլավյանցը։ Այստեղ դասավանդել են հայոց լեզու, ռուսաց լեզու և կրոն։ 1873-ին ունեցել է 3 ուսուցիչ, 13 աշակերտուհի։ Արական դպրոցի նման այս դպրոցը ևս 1877-ին խափանված է եղել, բայց հայտնի է, որ այն նորից բացվել է 1878-ին։ Հետագայում միացել է տեղի արական դպրոցին, որ 1909-ին սովորել են նաև աղջիկներ։

«Արարատ», 1868, Դ, էջ 52, 1878, ԺԲ, էջ 456, «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 137, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 544, թ. 2, գ. 43, թ. 17, գ. 22, թ. 68, գ. 30, թ. 31։

Ֆոքշան (Մոլդավիա) քաղաքի հայկական դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագիրը 1873-ի իր համարներից մեկում հաղորդել է, որ Մոլդավիայի Ֆոքշան քաղաքում կազմակերպվել է «Հայաստան» ընկերություն, որի նպատակն է «բանալ մի երկրորդական հայ դպրոց», այսինքն՝ միջնակարգ։ Բացվե՞լ է արդյոք այն, մենք չգիտենք։ Կարելի է միայն ենթադրել, որ այն պետք է բացված լինի, քանի որ հիշյալ ընկերության ստեղծման միակ նպատակը այդ է եղել։

«Մեղու Հայաստանի», 1873, № 17։

ԽԵՐՍՈՆԻ ՆԱՀԱՆԳ

Գրիգորիոպոլիս քաղաքի հայկական արական դպրոց

Գրիգորիոպոլիսը հայերի հիմնած և հայաբնակ քաղաք է եղել։ Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը գրում է, որ 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո հայերին թույլ է տրվում Թուրքիայի մնացած տերիտորիաներից փոխադրվել և բնակություն հաստատել Ռուսաստանին անցած բնակավայրերում։ Եվ ահա, 4000 հոգի գաղթում են և «Դնեստր գետի հովտում հայերը հիմնում են Գրիգորիոպոլիս հայկական քաղաքը և նրա մոտիկ հայաբնակ գյուղերը» («Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության», գիրք Ա, էջ 378, 379)։

Ռուսական արքունիքի օգնությամբ այստեղ մի շարք շենքեր են կառուցվում, դրանց թվում նաև հայկական դպրոց (1794-ից հետո)։ Հավանաբար, հետագայում այս դպրոցը փակվել է, որովհետև մեր ձեռքի տակ եղած մի փաստաթղթում նշված է, թե Գրիգորիոպոլիսի դպրոցը հիմնվել է 1814-ին։ Պրոֆ. Սանթրոսյանը ցույց է տալիս այդ դպրոցի բացման տարբեր թվականներ (1807, 1814, 1820 և այլն)։

1915-ին Գրիգորիոպոլիս քաղաքի հայկական երկսեռ դպրոցի հոգաբարձությունը թեմական առաջնորդին գրել է հետևյալը. «Ժողովրդական (իմա՝ կառավարական — Ս. Խ.) դպրոցների ինսպեկտորներն ու դիրեկտորները միջամտում են քաղաքիս հայոց դպրոցի գործերում, պահանջներ ու կարգադրություններ անում գրելթ նրա գոյության օրից, որ ահա 100 տարի է» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 154, թ. 3)։ Այս տողերից կարելի է ենթադրել, որ այդ դպրոցը, իրոք, հիմնվել է 1814—1816 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում։ 1861-ին գործել է՝ ունենալով 30 աշակերտ։ 1875-ին ունեցել է 3 ուսուցիչ և 18 աշակերտ։ 1877-ի վիճակագրության մեջ ցույց չի տրված։ 1879-ին և 1887-ին գործել է։

Այս դպրոցը ևս 1896—1898 թվականների ընդհանուր փակումից

փրկվել է՝ լուսավորության մինիստրության իրավասության տակ անցնելով։

Դպրոցը պահվել է հաղարյանների կտակած գումարներով։ 1906—07 ուս. տարում ունեցել է 3 ուսուցիչ, 31 աշակերտ (15 աղջիկ)։

1912—13 ուս. տարում եղել է 4-սմյա խառը դպրոց, ուր սովորել են 15 տղա և 6 աղջիկ։ 1915-ին շարունակել է գործել։

Ա. Գ. Աբրահամյան, «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության», Երևան, 1964, Ա գիրք, էջ 379 և 402։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 590, թ. 63; գ. 154, թ. 3; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 140, գ. 55, թ. 1; Մ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոց 19-րդ դ. ա. կեսին», էջ 308—309; «Դպրոց», 1875—76, № 4, էջ 137;

«Արարատ», 1878, ԺԲ, էջ 457; 1879, № 7, էջ 322։

Գրիգորիոպոլիս քաղաքի հայկական օրիորդաց դպրոց

Հիմնվել է 1868-ին՝ տեղի հայ բնակչության ջանքերով և միջոցներով։ 1870-ին հասարակության ներկայությամբ տեղի է ունեցել այդ դպրոցի աշակերտուհիների հարցաքննություն, որի ընթացքում «գովելի յառաջադիմություն ցուցանելով օրիորդք Հայոց լեզվի մեջ՝ մեծ խնդություն պատճառեցին թե ծնողաց և թե այլոց զգայուն սրտերուն», այսպես է գրում «Արարատ» ամսագրում տեղի ավագ քահանա Շահինյանցը, 1871 թվականին։

1873-ին ունեցել է 18 աշակերտուհի, 1877-ին՝ 3 ուսուցիչ, 16 աշակերտուհի։ Ցույց է տրված նաև 1887-ի պաշտոնական մի ցուցակում։

Հետագա ճակատագրի մասին տեղեկություններ չունենք։ Հավանական է, միացել է տեղի արական դպրոցին, որտեղ 1906—07 և 1912—13 ուս. տարիներին սովորել են նաև աղջիկներ։

«Արարատ», 1871, ԺԲ, էջ 397—398; 1878, ԺԲ, էջ 457; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 17; գ. 190, թ. 63; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 140, թ. 9։

Ոդեսայի հայկական երկսեռ ծխական դպրոց

Օդեսայի հայկական դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Կարծում ենք, որ նա սկզբնավորվել է 1850-ականի վերջերին։ Հավատի է, սակայն, որ այդ դպրոցը 1861-ին գործել է՝ ունենալով 25 աշակերտ։ 1873—75 թվականներին եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 40 հայ տղաներ և աղջիկներ (առանձին դասասենյակներում)։ 1877-ին եղել է արական դպրոց՝ 35 աշակերտով։ Գործել է նաև 1885-ին՝ գտնվելով սակայն ոչ բարվոք վիճակում։ 1887-ին նորից դարձել է երկսեռ դպրոց, ուր տղաներն ու աղջիկները սովորել են միասին։

1897-ին վերցվել է լուսավորության մինիստրության իրավասության տակ։ 1906—07 ուս. տարում ունեցել է 2 ուսուցիչ և 32 սովորող (18 աղջիկ)։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 1; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 137; «Արարատ», 1878, ԺԹ, էջ 457; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 18; «Արձագանք», 1885, № 10; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 9; «Նոր դպրոց», 1908, № 6, էջ 77։

Օդեսայի հայ կաթոլիկների դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1858-ին գործել է՝ լինելով Ս. Լուսավորիչ եկեղեցուն կից։

«Մեղու Հայաստանի», 1859, № 44, էջ 350.

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄ

Այս թեմն ընդգրկում էր Բաքվի
նահանգը և Դաղստանի մարզի մի մասը

ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳ

Ավանաշեն գյուղի ծխական դպրոց

Ավանաշեն գյուղում 1873-ին գործել է ծխական արական դպրոց, ուր սովորել են 31 հայ երեխաներ։ Հավանաբար, այդ թվականին էլ հիմնվել է, քանի որ նախորդ տարիների տեղեկագրերում չի հիշատակվում։ Այնուհետև երկար տարիներ փակ է եղել՝ վերաբացվելով միայն 1887-ին։ Մակայն, ըստ երևույթին, նորից է փակվել, ապա վերաբացվել 1895-ին։ Հաջորդ տարում նորից է փակվել՝ վերաբացվելով 1905-ին։ 1911—12 ուս. տարում եղել է 4-ամյա արական դպրոց՝ 72 աշակերտով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 5; գ. 324; գ. 338, թ. 29; գ. 572, թ. 7։

Բաքվի հայկական Մեսրոպյան ծխական երկդասյան դպրոց

Հիմնվել է 1869-ին՝ տեղի հայ բնակչության և Շամախու թեմի հոգևոր տեսուչ Անդրեաս եպիսկոպոսի ջանքերով։ Դպրոցի հոգաբարձության անդամ Ջ. Մելիքյանը 3 սենյակից բաղկացած իր սեփական տունը երկու տարով ձրի տրամադրել է դպրոցին՝ արժանանալով կաթողիկոսի օրհնությանը։ Ավանդվել են՝ կրոնագիտություն, հայոց և ուսաց լեզուներ, ազգային պատմություն, թվաբանություն, հայոց և ուսաց լեզուների վայելչագրություն։

1873-ին ունեցել է 4 ուսուցիչ, 89 աշակերտ, 1884—85 ուս. տարում՝ 170 աշակերտ։ 1885-ի մարտի 5-ին փակվել է։ Վերաբացվել է 1886-ի սեպտեմբերին։ 1888—89 ուս. տարում այս դպրոցը եղել է երկդասյան՝ ունենալով 138 աշակերտ և 7 ուսուցիչ։ 1896-ին դարձյալ փակվել է։ Վերաբացվել է 1906-ին։ 1911—12 ուս. տարում եղել է արական 6-ամյա դպրոց։

1914-ին ունեցել է 8 ուսուցիչ և 237 աշակերտ։ 1916—17 ուս. տարում գործել է։

«Արարատ», 1869, Բ, էջ 43; 1876, Ա, էջ 34; 1878, ԺԹ, էջ 455; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 31, թ. 32; գ. 37, թ. 115; գ. 48, թ. 2; գ. 50, թ. 65; գ. 572, թ. 2; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 45; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 24; ֆ. 422, գ. 8717, թ. 6, գ. 1585, թ. 49; «Մեղու Հայաստանի», 1885, № 20։

Բաքվի հայկական Հոիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոց

Հայ աղջիկների համար բացված հնագույն դպրոցներից մեկն է։ Այն հիմնվել է 1869-ի հունիսի 14-ին (մի այլ փաստաթղթում նշված է 1870-ը) և պահվել է Բաքվի մարգասիրական ընկերության հաշվին։

1872-ին ունեցել է նախապատրաստական և առաջին դասարաններ, որոնցում միասին սովորել են 36 հայ աղջիկներ։ Նախապատրաստականում անցել են հայոց լեզվի ընթերցանություն և վայելչագրություն, քրիստոնեական վարդապետություն, ռուսաց լեզվի ընթերցանություն և վայելչագրություն, թվաբանության առաջին մասը, ձեռագործություն և երգեցողություն։ Առաջին դասարանում անցել են հայոց լեզվի քերականություն, թարգմանություն գրաբարից աշխարհաբար, քրիստոնեական վարդապետություն և սրբազան պատմություն, ազգային պատմություն, ռուսաց լեզվի ընթերցանություն, թարգմանություն և վայելչագրություն, ռուսաց լեզվով՝ թվաբանություն, աշխարհագրություն և բնական գիտություն, ձեռագործություն և երգեցողություն։

Սովորողների առաջադիմության ընդհանուր պատկերը վկայում է, որ այդ տարում այս դպրոցի ուսումնական գործը այնքան էլ մխիթարական վիճակում չի գտնվել։ Բավական է նշել, որ նախապատրաստական դասարանի բոլոր 28 աշակերտուհիներն էլ տարեվերջին մեկ կամ մի քանի առարկայից ունեցել են «1» և «2» դնահատականներ։ Ամենից ավելի կա են մնացել հայոց, ռուսաց լեզուներից և թվաբանությունից։

Սակայն 1875-ի մի զեկուցագրում նշված է, որ այդ դպրոցը գտնվում է «յառաջգիմ և ի բարեկարգ դրության ըստ ամենայնի...» («Արարատ», 1876 թ., Ա. էջ 34)։ Այդ թվականին ունեցել է 70 աշակերտուհի, իսկ 1877-ին նրանց թիվն իջել է 48-ի։ 1882-ին ունեցել է 7 ուսուցիչ, 62 աշակերտուհի։ 1884-ին եղել է երկդասյան դպրոց։

1885-ին փակվել է։

Վերաբացվել է 1886-ի սեպտեմբերին՝ Բաքվի մարդասիրական ընկերության շնորհում, գործելով մնալով որպես երկդասյան իգական դպրոց։

1888—89 ուս. տարում ունեցել է 137 աշակերտուհի։ Ըստ սոցիալական դրության նրանք բաժանվել են այսպես. հոգևորականների աղջիկներ՝ 6, ազնվականների՝ 7, աստիճանավորների (ծառայողների)՝ 10, վաճառականների՝ 73, արհեստավորների՝ 30, երկրագործների՝ 3։ Թշակ են վճարել 89, ձրի են սովորել 48 հոգի։ Փոխադրվել են հաջորդ դասարանները՝ 87, մնացել են 43 հոգի։

Այդ ուսումնական տարում Բաքու քաղաքի բոլոր հայ դպրոցներում աշխատել են 12 ուսուցիչ-ուսուցչուհիներ։

1896-ի երկրորդ փակումից առաջ ունեցել է 250 աշակերտուհի։

Վերաբացվել է 1906-ին։ 1908—09 ուս. տարում եղել է իգական երկդասյան դպրոց, ուր սովորել են 368 հայ աղջիկներ։ 1911—12 ուս. տարում գործել է յոթնամյա դպրոց, սակայն աշակերտուհիների թիվը նվազել է, իջնելով 287-ի։ Երկու տարի հետո՝ 1914-ին, աշակերտուհիների թիվը նկատելիորեն աճել է, հասնելով 399-ի (ուսուցիչներ՝ 14)։ 1917-ին գործել է որպես իգական միջնակարգ դպրոց։ Այս դպրոցն ունեցել է մանկավարժական ուղղություն։

«Մեղու Հայաստանի», 1869, N26; 1885, N 20; ԼՍՍՀ ԳԳԱ, ֆ. 56, գ. 23, թ. 142; գ. 31, թ. 32; գ. 48, թ. 3; գ. 572, թ. 3; գ. 324, թ. 31; գ. 23, թ. 278; գ. 50, թ. 18, գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 24;
«Արարատ», 1876, Ա, էջ 34; 1878, ԺԷ, էջ 455; 1917, N 2, էջ 92, էջ 620;
ՎՍՍՀ ԳԳԱ, ֆ. 422, գ. 511, թ. 20; գ. 1585, թ. 52; գ. 2890, թ. 66; գ. 3997, թ. 17; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 74; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 24;
«Վիճ. տեղ. 1888—89, ուս. տարվա», էջ 114—115;
ՍՍՀՄ ԳԳԱ (Լենինգրադ), ֆ. 921, ց. 150, գ. 283, թ. 45։

Բաքվի Ս. Աստվածածին եկեղեցու իգական ծխական դպրոց

Շամախու թեմի հայ դպրոցների 1896-ի վիճակագրական տեղեկագրքում Բաքու քաղաքում, Հոիփսիմյան իգական հայանի դպրոցից բացի նշված են երկու իգական դպրոցներ ևս։ Դրանցից մեկը եղել է Ս. Աստվածածին եկեղեցուն կից, մյուսը՝ Բաքվի «Շամախուեցվոց» կոչվող թաղամասում։

Ս. Աստվածածին եկեղեցու իգական դպրոցի հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1894-ը։ Մեր կարծիքով այդ թվականը ամենահավանականն է, քանի որ նախորդ տարիների տեղեկագրերից և ոչ մեկում այս դպրոցը չի երևում։ Սակայն տարակուսանք է առաջացնում մի հանգամանք. ինչպե՞ս պատահեց, որ 1894-ին բացված դպրոցը երկու տարվա ընթացքում՝ 1896-ին դարձավ երկդասյան (այդպես է ցույց տրված տեղեկագրում), այսինքն՝ 5-ամյա դպրոց։ Մնում է միայն մի ենթադրություն անել։ Հայտնի է, որ հայ դպրոցները հափշտակելու նպատակով կառավարական բարձր օրգանները և նրանց տեղական մարմինները 1894-ին եռանդուն գործունեություն էին ծավալել բոլոր հայ դպրոցների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ հավաքելու ուղղությամբ։ Այս երևույթը աննկատ չի մնացել նաև տեղական հայ մամուլի կողմից։ Ղղալով, որ հայ դպրոցների գլխին մի նոր փորձանք է պատրաստվում, Բաքվի (ինչպես նաև այլ տեղերի) հայերը պետական մարմինների կողմից արդեն կատարված հաշվառումից հետո, մտածում են նոր դպրոցներ բացել, հույս ունենալով, որ եթե արդեն հաշվի առնված դպրոցները փակվեն, ապա նոր բացված և պետության աչքից «վերիպած» դպրոցները կշարունակեն գոյություն ունենալ։ Մեր կարծիքով, այդպիսի դպրոցներից մեկն է նաև Բաքվի Ս. Աստվածածին եկեղեցուն կից կազմակերպված

Երկդասյան դպրոցը, որի խմբերը, ամենայն հավանականությամբ, նախապես անջատվել են Հռիփսիմյան իգական դպրոցից և փոխադրվել այլ շենք։ Միայն այդ դեպքում դպրոցը կարող էր միանգամից կազմակերպվել որպես երկդասյան, առանց անցնելու հաջորդական բոլոր աստիճանները։ (Այս տողերը վաղուց արդեն գրված էին, երբ հետագա պրպտումների ընթացքում գտանք մեր ենթադրությունը հաստատող մի փաստաթուղթ։ Այնտեղ ասված է, որ Հռիփսիմյան դպրոցի «ստորին երեք բաժանմանց զուգընթացը» 1894—95 ուս. տարուց բաժանվելով նրանից՝ կազմվել է առանձին իգական դպրոց)։

Իհարկե, 1894—95 թվականներին (պետական հաշվառումից հետո) բացված հայ դպրոցները ևս «անկատ» չեն մնում և շուտով փակվում են։ Այդ ճակատագրին է արժանացել նաև այս դպրոցը։ Վերաբացվել է միայն 1906-ին։ 1907—08 ուս. տարում եղել է երկդասյան իգական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 324, թ. 57; գ. 371, թ. 5; գ. 518, թ. 45։

Բաքվի հայկական միջնակարգ հոգևոր դպրոց

Հիմնվել է 1877-ին՝ Բաքվի մարդասիրական ընկերության կողմից՝ կաթողիկոսի հատուկ կոնդակով։ Դպրոցի կազմակերպման ոգեշնչողը և առաջին դիրեկտորը եղել է հայ անվանի մանկավարժ, «Հայկական աշխարհ» ամսագրի խմբագիր Եղուն Ստեփաննն։

Այս դպրոցը հենց սկզբից ստեղծվել է որպես միջնակարգ ուսումնական հաստատություն (հավանաբար ունենալով միայն բարձր խմբեր)՝ «Հայ պատանեկության ուսման ձգտումը և կարիքը բավարարելու համար, այսուհետև նրանց տրամադրելով գիտությունները և առարկաները ուսումնասիրելու ավելի լայն ասպարեզ»,— ասված է կաթողիկոսի կոնդակում։

Առաջին տարում դպրոցն ունեցել է ընդամենը 20 աշակերտ։

Արխիվային փաստաթղթերից երևում է, որ 1878-ի կեսերին Ե. Ստեփաննն ետ է կանչվել Էջմիածին, որից հետո այս դպրոցի ունեցած ճակատագիրը մեզ անհայտ է, քանի որ հետագա տարիների տեղեկագրերում այն այլևս չի երևում։ Մի՞թե Ստեփանեի գնալով դպրոցն էլ խափանվել է։ Ենթադրում ենք, որ այն կարող է միացված լինել տեղի Մեսրոպյան արական դպրոցին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 904, թ. 19—32։

Բաքվի՝ Գրիգոր Լուսավորչի անվան դպրոց

«Մեղու Հայաստանի» թերթը հաղորդել է, որ Բաքվի հայերը 1864 թ. բացել են Գրիգոր Լուսավորչի անվան ուսումնարան։ Ունեցել է երկու դասարան։ Դասավանդվել է նաև ֆրանսերեն։ Պահվել է մարդասիրական ընկերության հաշվին։

Չգիտենք թե ինչո՞ւ, հետագա տասնամյակների փաստաթղթերում այս դպրոցը այլևս չի հիշվում։ Գիտենք միայն, որ 1906—07 ուս. տարում Բաքվում նորից գործել է Գրիգոր Լուսավորչի անվան միդասյան արական դպրոց։

«Մեղու Հայաստանի», 1866, № 23, 1867, № 15;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 518, թ. 45։

Բաքվի եկեղեցական աղքատանոցի արական դպրոց

1906—07 ուս. տարում Բաքվի Հայկական եկեղեցական աղքատանոցի շենքում գործել է միդասյան արական դպրոց։ Հետագա տարիների փաստաթղթերում այս դպրոցին այլևս չենք հանդիպել, թեև այն կարծիքին չենք, որ այն փակվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 518, թ. 45։

Բաքվի եկեղեցական աղքատանոցի իգական դպրոց

1906—07 ուս. տարում Բաքվի Հայկական եկեղեցական աղքատանոցի շենքում գործել է նաև միդասյան իգական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 518, թ. 45։

Բաքվի մարդասիրական աղքատանոցի արական դպրոց

1906—07 ուս. տարում Բաքվի մարդասիրական աղքատանոցի շենքում գործել է միդասյան արական դպրոց։ Դա, իհարկե, նույն քաղաքի եկեղեցական աղքատանոցի հայկական արական դպրոցը չէ, քանի որ երկուսն էլ առանձին ցույց են տրված միևնույն փաստաթղթում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 518, թ. 45։

Բաքվի մարդասիրական աղքատանոցի իգական դպրոց

1906—07 ուս. տարում Բաքվի մարդասիրական աղքատանոցի շենքում գործել է նաև միդասյան իգական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 518, թ. 45։

Բաքվի «Շամախու» թաղի սրական ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը անհայտ է։ Գիտենք, որ 1884-ին գործել է։ Այդ թվականին Բաքվում կազմակերպվել է հատուկ պարահանդես «հօգուտ Շամախվո ճանապարհի հայոց երկսեռ դպրոցների»։

«Մեղու Հայաստանի», 1884, № 89, 1885, № 20։

Բաքվի «Շամախու» թաղի օրիորդաց դպրոց

1884-ին գործել է՝ լինելով մի դասարանից կազմված երկսեռ դպրոց, ուր սովորել են 14 հայ աղջիկներ։ 1885-ին փակվել է և վերաբացվել 1895-ին՝ որպես միդասյան իգական դպրոց։ 1896-ի սկզբներին ունեցել է 22 աշակերտուհի։ Հաջորդ տարում փակվել է կառավարության կողմից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 17; գ. 324, թ. 61;
«Մեղու Հայաստանի», 1884, № 34; 1885, № 20։

Բաքվի հայ բողոքականների դպրոց

«Նոր դպրոց» ամսագրի մի հաղորդումից իմանում ենք, որ 1911-ին Բաքու քաղաքում գործել է հայ բողոքականների դպրոց։

«Նոր դպրոց», 1911, № 3—4, էջ 36։

Բաքվի Ա. Տեր-Ղուկասյանի հիմնած դպրոցը

«Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիր Ս. Մանդինյանը 1860 թ. № 50-ում տպագրված «Ազգային հրավեր» ծավալուն հոդվածում թվարկել է այդ ժամանակ տարբեր վայրերում գործած հայ դպրոցները։ Այնտեղ նշված է նաև «աղնիվ Ալեքսէյ Տեր-Ղուկասյանցի» միջոցներով և նրա կողմից Բաքվում բացված դպրոցը։

Մանդինյանի հոդվածում չի նշված, թե այդ դպրոցը երբ է հիմնվել։ Այնուամենայնիվ, այն եղել է Բաքվի ամենահին հայկական դպրոցը։

«Մեղու Հայաստանի», 1860, № 50։

Բաքվի հայկական ձայնագրության դպրոց

Բաքվաբնակ քահանա Ղազարոս Հովսեփյանը 1912-ի վերջերին դիմել է կաթողիկոսին և խնդրել թույլ տալ Բաքու քաղաքում բացելու հայկական ձայնագրության և հոգևոր երաժշտության դպրոց՝ ներկայացնելով նաև այդ դպրոցի ծրագիրը։ 1912-ի դեկտեմբերին կաթողիկոսը հատուկ գրությամբ Շամախու թեմի առաջնորդին կարգադրել է թույլ տալ Հովսեփյանին բացելու այդ դպրոցը։ Որքան մեզ հայտնի է, սա հայ երաժշտական մասնագիտական առաջին դպրոցն է եղել Անդրկովկասում։

«Արարատ», 1913, № 1, էջ 5։

Բաքվի հայ-լյութերական դպրոց

Արխիվային մի փաստաթղթից երևում է, որ 1891-ին Բաքվում գործել է հայ-լյութերական երկսեռ դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 17։

Բաքվի հայ կանանց արհեստագիտական դպրոց

Բաքվի հայ մշակութային միության առաջին միջոցառումներից մեկը եղել է այնտեղի հայ կանանց համար արհեստագիտական դպրոց բացելը։ Այն հիմնվել է 1906-ին, ունենալով 4 բաժանմունք՝ կար ու ձևի, դուպպագործության, ասեղնագործության և հանրակրթական։ 1912-ին դպրոցում սովորել են 100 հոգի։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 139, գ. 268, թ. 31; «Նոր դպրոց», 1908, № 4, էջ 83։

Գանձա (նաև՝ Գանձակ) գյուղի ծխական դպրոց

Բաքվի նահանգի Գեոքչայի գավառի Գանձա (Գանգա, նաև Գանձակ) գյուղում 1889-ին բացվել է հայկական կենտրոնական միդասյան դպրոց, որը սպասարկել է նաև հարևան Թոփիշեն գյուղի երեխաներին։ 1895-ին ունեցել է 36 աշակերտ։ Այդ թվականին էլ փակվել է կառավարության կողմից, վերաբացվելով երկար տարիներ հետո՝ 1911-ին։ Այդ տարում եղել է 3-ամյա խառը (երկսեռ) դպրոց՝ 37 աշակերտով (5 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 324, գ. 572, թ. 8; «Արարատ», 1890, № 1, էջ 53, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 1, գ. 865, թ. 74; արքեպիս. Մեսրոպ Սմբատյան, «Նկարագիր Շամախու թեմի», 1896, Տփխիս, էջ 551։

Գիրք գյուղի արական ծխական դպրոց

Շամախու թեմի Գիրք[1] (Գիրկ, Կիրք) գյուղի արական ծխական դպրոցը հիմնվել է 1870-ին և հանդիսացել է հայկական գյուղական հնագույն

1 Արքեպիսկոպոս Մես. Սմբատյանն իր «Նկարագիր Շամախու թեմի» գրքում հետաքրքիր տեղեկություն է հաղորդում այս գյուղի «Գիրք» անվան վերաբերյալ։ Նա գրել

դպրոցներից մեկը։ 1871-ին ունեցել է 48, 1873-ին՝ 42 աշակերտ։ 1877-ին չի գործել նյութական դժվարությունների պատճառով։ Հավանաբար հետագայում նորից բացվել է, իսկ 1883-ին դարձյալ փակվել նյութականի պատճառով։ Երկին վերաբացվել է 1887-ին, իսկ 1888-ին եղել է միգասյան դպրոց՝ 44 աշակերտով։ 1896-ին փակվել է, դրանից առաջ ունենալով 46 աշակերտ։ Երրորդ վերաբացումը տեղի է ունեցել 1905-ին։ 1908—09 ուս. տարում ունեցել է մեկ ուսուցիչ և 62 աշակերտ՝ լինելով արդեն երկսեռ դպրոց։ Այդ տարում այնտեղ սովորել են 19 հայ աղջիկներ։ 1908-ին բաբվարենց հարուստ Ա. Ղորղանյանը նվիրաբերել է 10.000 ռուբլի, որպեսզի այդ գումարով Դիրք գյուղում բացվի գյուղական երկդասյան դպրոց։ Այդ նպատակի համար նա տարեկան հատկացրել է նաև 1500 ռուբլի։ Դպրոցը պիտի կոչվեր Ղորղանյանի հոր անունով։ 1911—12 ուս. տարում եղել է 4-ամյա խառը դպրոց՝ 98 աշակերտով (28 աղջիկ)։ Շարունակել է գործել նաև հետագա տարիներին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 115; գ. 31, թ. 32; գ. 572, թ. 9; գ. 30, թ. 9; գ. 324; գ. 23, թ. 280; գ. 21, թ. 72; «Աբարաս», 1871, Գ, էջ 102; 1878, ԺԲ, էջ 457; 1908, № 1, էջ 100; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 117; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 22; գ. 8717, թ. 7; «Մեղու Հայաստանի», 1884, № 32; արքեպ. Մես. Սմբատյան, «Նվաքապիր Շամախւոյ թեմի», էջ 551։

Գյուրջևանի գյուղի իգական ծխական դպրոց

Գյուրջևանը եղել է Շամախու թեմի հայաբնակ խոշոր գյուղերից մեկը։ 1914-ին ունեցել է 1743 բնակիչ, բայց զարմանալի է, որ չի ունեցել իր դպրոցը։ Միայն 1914 թվականին այնտեղ բացվել է իգական եկեղեցական ծխական դպրոց։

«Баку», 1 июня, 1915 г., № 115;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 139, գ. 11, թ. 85։
«Կովկազսկի կալենդար», 1915, էջ 114։

Դերբենտ քաղաքի հայկական երկսեռ դպրոց

Դաղստանի մարզի Դերբենտ քաղաքի հայկական արական դպրոցը հիմնվել է 1873-ին՝ ունենալով 1 ուսուցիչ և 18 աշակերտ։ Սկզբում այն կրել է մասնավոր բնույթ։ Տեղի երիտասարդ քահանա Արսեն Ղազարյանը իր տանը հավաքել է մի խումբ երեխաներ և նրանց սովորեցրել հայոց և ռուսաց լեզուներ, հայոց պատմություն, թվաբանություն և վայելչագրություն։ Սակայն թեմական տեսուչ Սահակ վարդապետի ջանքերով 1875-ին այդ դպրոցի համար կառուցվում է հատուկ շենք, ուր համատեղ սովորում են տղաներ ու աղջիկներ։ 1884-ին եղել է երկդասյան երկսեռ դպրոց, իսկ 1885-ին փակվել է, 1886-ի վերաբացումից հետո դարձել է միգասյան՝ 20 աշակերտով։ 1891-ին գործել է։ 1895-ին ունեցել է 25 աշակերտ։ 1896-ին նորից փակվել է՝ վերաբացվելով 1906-ին։ 1908—09 ուս. տարում եղել է խառը դպրոց՝ 92 աշակերտով (51 աղջիկ)։ Թեև 1911—12 ուս. տարում դարձել է քառամյա դպրոց, այնուամենայնիվ աշակերտների թիվը նվազել է՝ իջնելով 65-ի (44 աղջիկ)։ 1914-ին գործել է՝ ունենալով 72 աշակերտ և 4 ուսուցիչ։

«Աբարաս», 1876, Ա, էջ 24; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 134; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 5; գ. 182, թ. 24; գ. 324; գ. 572, թ. 4; գ. 50, թ. 17—19; գ. 199, թ. 17—23; գ. 518, թ. 45; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 116; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 9; գ. 3997, թ. 17; ֆ. 12, գ. 865, թ. 74; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 13։

Դերբենտ քաղաքի հայկական օրիորդաց Մարիամյան դպրոց

Հիմնվել է 1873-ին՝ ունենալով 14 սանուհի։ Սակայն, հավանաբար, շուտով փակվել է և վերաբացվել 1879-ին։ Այս թվականին կաթողիկոսը հաստատել է այդ դպրոցի հոգաբարձության կազմը։ 1881-ին այնտեղ սովորել են 24 հայ աղջիկներ։ 1885-ին փակվել է։ 1888-ին եղել է միգասյան դպրոց՝ 24 սովորողներով։ 1896-ին ունեցել է 35 աշակերտուհի։ Նույն թվականին էլ փակվել է և վերաբացվել 1906-ին՝ արական դպրոցի հետ միացած, որտեղ 1908—09 ուս. տարում 92 սովորողից 51 հոգի աղջիկներ են եղել։

«Աբարաս», 1875, № 5, էջ 234; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 5; գ. 48, թ. 3; գ. 518, թ. 45; գ. 324, գ. 50, թ. 17—19; գ.199, թ. 17—23; գ. 182, թ. 24; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 116; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 432, գ. 1585, թ. 32; «Դպրոց», 1875—76, № 4, էջ 134։

Զարգարան գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1894-ին։ 1896-ին ունեցել է 32 աշակերտ։ 1897-ին կամ 1898-ին փակվել է։ Վերաբացվել է 1905-ին։ 1907—08 ուս. տարում փակ է մնացել՝ դրամական միջոցների սղության պատճառով։ 1908—09 ուս. տարում ունեցել է 51 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1911—12 ուս. տա-

է. «Գյուղատեղը ծոցավոր լինելու պատճառով անվանել են Դիրկ. բլրակներով շրջապատված երեք կողմից, իսկ առաջը բաց, բայց հոյասրա գիրկերիցիք անվանում են Գիրք. իրը գրքերով և գրագրագրքերով լիքը, իսկ ուրիշ տեղացիք նոցա կրքուս և կովարար բնավորությանը ուսանելով, նոցա բնակավայրը անվանում են Կիրք...» (էջ 551)։

ում եղել է 3-ամյա խառը արական դպրոց՝ 36 աշակերտով։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 324; գ. 182, թ. 24; գ. 572, թ. 7; գ. 518, թ. 45; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 5; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 52։

Թոփիշեն գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1910-ին։ 1911—12 ուս. տարում եղել է 3-ամյա խառը դպրոց՝ 45 աշակերտով (5 աղջիկ)։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 572, թ. 8։

Լենքորանի Ս. Գայանյան իգական դպրոց

Հիմնվել է 1876-ին՝ տեղի հայ հասարակության որոշմամբ և փոխեպիսկոպոս Գևորգ վարդապետ Սուրենյանի ջանքերով։ Ուսումը ձրի է եղել։ Դպրոցը պահվել է հայ հասարակության գումարներով և զանազան նվիրատվություններով։ Այդ տարին դպրոցն ունեցել է մի ուսուցչուհի, իսկ հաջորդ տարին՝ 2 ուսուցիչ։ 1884-ին եղել է խառը դպրոց՝ 15 աղջիկ, 15 տղա։ 1885-ին փակվել է։ Հավանաբար այլևս չի բացվել, քանի որ 1888—89 ուս. տարվա վիճակագրական տեղեկություններում, 1896-ին փակված հայկական դպրոցների ցուցակում և հետագա տարիների փաստաթղթերում չի նշված։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 21, թ. 70; գ. 50, թ. 66; գ. 22, թ. 31; «Արարատ», 1878, թ., էջ 356։

Լենքորանի հայկական արական ծխական դպրոց

1877-ի վիճակագրական տվյալներով այդ ժամանակ Լենքորանում գոյություն է ունեցել նաև հայկական արական ծխական դպրոց՝ 25 աշակերտով և 2 ուսուցչով։ Հավանաբար այս դպրոցը հետագայում միացել է այնտեղի իգական դպրոցին, որովհետև 1884-ի վերջերին աղջիկներն ու տղաները սովորել են միասին։

1895-ին գործել է որպես առանձին արական դպրոց։ 1896-ին նրա գոյության հարցը քննվել է անորոշ վիճակում, բայց չենք կասկածում, որ հաջորդ երկու տարում այն ևս փակվել է կառավարության կողմից։

«Արարատ», 1878, ԺԲ, էջ 458; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66; գ. 21, թ. 70; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 865, թ. 74։

Խաչմազ գյուղի ծխական դպրոց

Զուրայի գավառի Խաչմազ (նաև՝ Խաչմազլու՞) գյուղի ծխական դպրոցը հիմնվել է 1875-ին։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 12 աշակերտ։

Խաչմազ և Քիլվար գյուղերի դպրոցների կազմակերպման գործում այլի ընկնող դեր է խաղացել Շամախու այն ժամանակվա թեմական տնտես Սահակ վարդապետը։ Այս դպրոցը 1881-ին ունեցել է 1 ուսուցիչ, 10 աշակերտ։ 1885-ին փակվել է՝ վերաբացվելով 1895-ին։ Այն նորից փակվել է կառավարության կողմից 1896-ի փետրվարին։ Վերաբացվել է 1906-ին։

1911—12 ուս. տարում եղել է երկամյա խառը դպրոց՝ 38 աշակերտով (10 աղջիկ)։

«Արարատ», 1876, Ա, էջ 34; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 115; գ. 23, թ. 423; գ. 21, թ. 16—17; գ. 324, գ. 50, թ. 17—19; գ. 572, թ. 10; գ. 182, թ. 24; գ. 518, թ. 45; գ. 338, թ. 19; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 871, թ. 9; գ. 1585, թ. 49։

Հնդար գյուղի ծխական դպրոց

Շամախու թեմական իշխանությունների կողմից կազմված և էջմիածնի սինոդին ներկայացված մի ցուցակում Հնդար գյուղում 1874-ին ցույց է տրված մասնավոր կրթարան՝ մեկ ուսուցչով և 23 աշակերտով։ Տեղերից ստացված նման ցուցակների հիման վրա էջմիածնի սինոդը կազմել է 1873-ին գործած հայ դպրոցների ընդհանուր տեղեկագիր, որտեղ Հնդար գյուղի դպրոցը ցույց է տրված որպես ծխական դպրոց։ Իհարկե, ներկա դեպքում ճիշտ է թեմական իշխանությունների հաղորդած տեղեկությունը, քանի որ այն ժամանակներում հայկական մասնավոր ու ծխական դպրոցների միջև մեծ տարբերություն չի եղել։ Ծխական դպրոցներից շատերը սկզբում գործել են որպես մասնավոր կրթարաններ։

Շամախու թեմի դպրոցների 1871 և 1872 թվականների ցուցակներում Հնդար գյուղի դպրոցը չի հիշվում, ուրեմն այն հիմնվել է 1873 կամ 1874 թվականներին։ Հայտնի չէ, թե այդ դպրոցը մինչև երբ է կարողացել պահպանել իր գոյությունը։ Հայտնի է, որ 1895-ին Հնդար գյուղում նորից դպրոց է հիմնվել՝ ունենալով ընդամենը 23 աշակերտ։

1896-ին փակվել է պետության կողմից, վերաբացվելով 12 տարի հետո՝ 1908-ին։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա խառը դպրոց՝ 39 աշակերտով (3 աղջիկ)։

Հնդարին մոտ գտնվող Գյուրջևան հայարնակ գյուղը, Մ. Բարխու-

դարյանի ասելով, 1893—94 թվականներին ունեցել է արքունի դպրոց՝ 36 աշակերտով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 5; գ. 48, թ. 2; գ. 324, թ. 81; գ. 572, թ. 7; Մ. Սմբատյան, «Շամախի...», էջ 551։

Ղալակա գյուղի արական ծխական դպրոց

Ղալական եղել է Բաքվի նահանգի Գեոկչայի գավառի հայաբնակ խոշոր գյուղերից մեկը։ 1914-ին այնտեղ բնակվել են 2466 հայեր, որոնք բավականաչափ շուտ են զգացել ազգային դպրոց ունենալու անհրաժեշտությունը։ Ղալակայի հայկական արական ծխական դպրոցը հիմնվել է 1870-ին, որը 1871-ին ունեցել է 46, իսկ 1873-ին՝ 55 աշակերտ։ 1877-ին դպրոցը չի գործել՝ ուսուցիչ չունենալու պատճառով։

«Արարատ» ամսագրի 1883 թ. մի համարում նշված է Շամախու թեմի Գեոկչայի գավառի Ղալաշա գյուղի ծխական դպրոցը, որը, հոդվածագրի ասելով, բացվել է 1872-ին՝ տեղի քահանա Ներսես Մարկոսյանի ջանքերով։ Տեղեկատու աղբյուրներում Բաքվի նահանգում Ղալաշա անունով գյուղ չի ցույց տրված։ Անկասկած, ներկա դեպքում խոսքը Ղալակա գյուղի և նրա դպրոցի մասին է։ Սակայն մեր տվյալների համաձայն, այդ դպրոցը բացվել է ոչ թե 1872, այլ 1870 թվականին։ 1883-ին ունեցել է 62 աշակերտ։ Ուսուցիչն է եղել Կարապետ Տեր-Հակոբյան Մեհրաբյանցը։ 1885-ին փակվել է՝ վերաբացվելով 1888-ին։ Եղել է միդասյան արական դպրոց՝ 31 աշակերտով, հիմնականում երկրագործների երեխաներ։ 1896-ի փակումից առաջ ունեցել է 44 աշակերտ։ Նույն թվականին փակվել է՝ վերաբացվելով 1905-ին։

1907—08 ուս. տարում գործել է որպես արական դպրոց, իսկ 1911—12 ուս. տարում եղել է 4-ամյա խառը դպրոց, ուր սովորել են 76 տղա և 18 աղջիկ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21, գ. 3997, թ. 17, գ. 8717, թ. 9, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 74, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 115, գ. 324, թ. 165, գ. 23, թ. 278, գ. 21, թ. 32, գ. 21, թ. 72, գ. 30, թ. 9, գ. 572, թ. 9, գ. 182, թ. 24, գ. 518, թ. 45, գ. 338, թ. 19, «Արարատ», 1870, գ. էջ. 102, 1878, № 11, 1882, Դ., էջ 326, «Վիճ. տեղ. 1885—89 ուս. տարվա», էջ 117։

Ղաջար գյուղի ծխական դպրոց

Բաքվի նահանգի (Շամախու հայոց թեմի) Ղաջար գյուղի հայկական եկեղեցական ծխական դպրոցի բացման թվականը մեզ անհայտ է։ Գիտենք միայն, որ 1916-ին այն գործել է, քանի որ 1917-ի հունվարին հետևել է կաթողիկոսի օրհնության կոնդակը բարվարեակ Գ. Արուչյանցի անունով՝ Բաքվի Հոխփսիմյան և Ղաջար գյուղի ծխական դպրոցներին 25 հազար ռուբլի նվիրելու առթիվ։

«Արարատ», 1917, № 2, էջ 92։

Ղուբա քաղաքի (Շամախու թեմ) արական ծխական դպրոց

Հիմնվել է 1870-ին։ 1873-ին ունեցել է 3 ուսուցիչ և 37 (մի այլ տեղեկագրում՝ 19) աշակերտ։ 1877-ին՝ 2 ուսուցիչ, 40 աշակերտ։ 1881-ին՝ 40 աշակերտ։ 1884-ին եղել է երկդասյան դպրոց։ 1885-ին փակվել է, իսկ 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին դարձյալ եղել է երկդասյան՝ 73 աշակերտով, 1894-ին՝ միդասյան։ 1896-ին երկսեռ դպրոց էր՝ 82 սովորողներով (17 աղջիկ)։ 1897-ին փակվել է, վերաբացվել՝ 1906-ին։ 1908—1909 ուս. տարում ունեցել է 3 ուսուցիչ, 65 աշակերտ (35 աղջիկ)։

1911—12 ուս. տարում եղել է 4-ամյա երկսեռ դպրոց, որտեղ սովորել են 21 տղա և 17 աղջիկ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22; գ. 1585, թ. 49; գ. 3997, թ. 17, գ. 8717, թ. 8; գ. 7, գ. 865, թ. 74; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, թ. 30; գ. 37, թ. 115; գ. 48, թ. 2; գ. 32, թ. 281; գ. 572, թ. 5; գ. 50, թ. 6; «Արարատ», 1876, Ա, էջ 33; «Մշակ», 1886, № 95։

Ղուբայի հայկական ծխական իգական դպրոց

Բացվել է 1871-ին։ Ըստ երևույթին, երկար կյանք չի ունեցել. այն չի երևում 1875—1885 թվականների վիճակագրական տեղեկագրերում։ Հետագայում վերաբացվել է։ 1888-ին եղել է միդասյան օրիորդական դպրոց՝ 13 սովորողով։ 1896-ի սկզբներին միացած է եղել տեղի արական դպրոցին, ուր սովորել են 17 աղջիկներ։ Այդ թվականի կեսերին արականի հետ միասին փակվել է։

Վերաբացվել է 1906-ին։ 1907—08 ուս. տարում գործել է որպես միդասյան դպրոց։

Մեհ. արքեպ. Սմբատյան, «Նկարագիր Շամախոյ թեմի», Թիֆլիս, 1897, էջ 539; «Վիճ. տեղ 1888—89 ուս. տարվա», էջ 115; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 324, թ. 65; գ. 48, թ. 2; գ. 518, թ. 45; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 17։

Մադրասա գյուղի ծխական դպրոց

Շամախու թեմի ծխական դպրոցների 1911—12 ու. տարվա տեղեկագրերում նշված է, որ Մադրասա գյուղի արական ծխական դպրոցը հիմնվել է 1870-ին։ Սակայն մենք չգտանք այդ թվականը հաստատող

որևէ ապացույց։ Մեր ձեռքի տակ են այդ թեմի 1871—1872 թվականների տեղեկագրերը, որոնցում Մադրասա գյուղի դպրոցը չի երևում։ Թեմի հոգևոր իշխանության կողմից 1874-ին կազմված տեղեկագրում Մադրասա գյուղին վերագրվում է մասնավոր կրթարան, թեև էջմիածնի սինոդի կազմած և Կովկասի իշխանություններին ներկայացված ցուցակներում Մադրասայի դպրոցը հիշատակված է որպես ծխական դպրոց։ Այդ ցուցակները կազմված են 1875-ին, բայց ցույց են տալիս 1873-ին եղած ու գործած հայկական ծխական դպրոցները բոլոր թեմերում։ Մենք ավելի հավատում ենք համարում թեմական իշխանության տեղեկագիրը։ Մեր կարծիքով Մադրասայի դպրոցը մինչև 1877-ը շարունակել է մնալ որպես մասնավոր կրթարան։ Այդ թվականի սկզբներին տեղի հայ հասարակությունը որոշել է գյուղում ծխական դպրոց բացել և ընտրել է հոգաբարձություն։ Նույն թվականի մարտի 2-ի կոնդակով կաթողիկոսը հաստատել է դպրոցի բացումը և հոգաբարձության կազմը։

1881-ին ունեցել է 1 ուսուցիչ, 91 աշակերտ։ 1884-ին եղել է միդասյան դպրոց, 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1886-ին։ 1888-ին ունեցել է 2 ուսուցիչ, 93 աշակերտ։ Մ. Մմբատյանը 1895-ին այնտեղ ցույց է տվել 2 ուսուցիչ և 77 աշակերտ։ 1896-ի սկզբներին երկդասյան արական դպրոց էր՝ 112 աշակերտով։ Չգիտենք, թե ինչպես է դուրս մնացել փակման ենթակա հայ դպրոցների ցուցակից, բայց գիտենք, որ վաղ թե ուշ (եթե ոչ 1896-ին, ապա հաջորդ երկու տարիներին) բոլոր հայ դպրոցների հետ միասին փակվել է նաև այս դպրոցը։ Վերաբացվել է 1905-ին։ 1906—07 ուս. տարում գործել է որպես միդասյան արական դպրոց։

1911—12 ուս. տարում եղել է 5-ամյա խառը (երկսեռ) դպրոց՝ 288 աշակերտով (81 աղջիկ)։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 43, թ. 5; գ. 48, թ. 2; գ. 572, թ. 6; գ. 324, գ. 21, թ. 131; գ. 50, թ. 17—18; գ. 182, թ. 24; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 118; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 5; գ.1585, թ. 49։

Մադրասա գյուղի իգական ծխական դպրոց

Մադրասա գյուղի իգական ծխական դպրոցը հիմնվել է 1882-ին։ 1884-ին «Մեղու Հայաստանի» լրագիրը հղված է հրապարակել Մադրասա գյուղի երկսեռ դպրոցների հաջողությունների մասին։ Ինչպես երևում է 1885-ի փակումից հետո երկար տարիներ չի վերաբացվել, քանի որ 1895-ին գրվել է Մադրասա գյուղում աղջիկների նոր դպրոցի բացման մասին։ Այդ տարում ունեցել է 26 աշակերտուհի։ Երկրորդ անգամ փակվել է 1897-ին։ Վերաբացվել է 1905-ին՝ որպես միդասյան

իգական դպրոց։ 1911—12 ուս. տարում միացված է եղել տեղի արական դպրոցին։

«Արարատ», 1883, № 6, էջ 276, «Մեղու Հայաստանի», 1884, № 1, ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 324, գ. 572, թ. 6, գ. 518, թ. 45։

Մեյսուրի (Մեյսարա) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1894-ին, եղել է միդասյան արական դպրոց։ Դեռ ծլարձակման շրջանում մահվան է դատապարտվել՝ փակվելով 1896-ին ցարական իշխանությունների կողմից։ Վերաբացվել է 14 տարի հետո՝ 1910-ին։ 1911—12 ուս. տարում եղել է 4-ամյա խառը դպրոց՝ 36 աշակերտով (10 աղջիկ)։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 324, թ. 6; գ. 572, թ. 6; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17։

Շամախու թեմական հոգևոր դպրոց կամ սեմինարիա

Շամախին, որպես թեմի կենտրոն, կարող էր ունենալ իր թեմական հոգևոր դպրոցը կամ սեմինարիան։ Եվ, իրոք, այնտեղ եղած առաջին հայ դպրոցը այդպես էլ կոչվել է, սակայն մինչև վերջն էլ պաշտոնական ճանաչում չի գտել պետության կողմից։

Այդ դպրոցը հիմնվել է 1844-ին (մի այլ տվյալով՝ 1843-ին) Շիրվան թեմի առաջնորդ Մ. Վեհապետյանի ջանքերով։ 1846-ին փակվել է Ներսես Աշտարակեցու կարգադրությամբ։ Վերջինս այն չի համարել լրիվ հայկական դպրոց, քանի որ հիմնվել էր 1836 թ. կայսերահաստատ «կանոնների» համաձայն։ Վերաբացվել է միայն 1858-ին՝ Ներսեսի մահից հետո։

Թեմական տեսչի կողմից կաթողիկոսին ներկայացված ցուցակից երևում է, որ 1873-ին Շամախու թեմական դպրոցը ունեցել է 73 աշակերտ, իսկ էջմիածնի սինոդի կողմից նույն թվականի հունվարի 13-ին Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուին ուղարկված տեղեկագրում այդ դպրոցի սովորողների ընդհանուր թիվը ցույց է տրված 185 հոգի։ Զարմանալի տարբերություն կա նույն թվականին կազմված և պաշտոնական բնույթ կրող երկու փաստաթղթերում։

1874-ին ունեցել է 7 ուսուցիչ, 124 աշակերտ, 1895-ին՝ 6 ուսուցիչ, 117 աշակերտ, 1877-ին՝ 3 ուսուցիչ, 79 աշակերտ։

Այս թվերից դժվար չէ նկատել, որ դպրոցը շարունակել է մնալ անանխանձելի վիճակում։ 1881-ին աշակերտների թիվը հաղիվ հասել է 100-ի, իսկ ուսուցիչներինը՝ 4-ի։

1885-ին դպրոցը փակվել է։

Վերաբացվել է 1886-ին։ 1888—89 ուս. տարվա վիճակագրական

տեղեկագրերում (հրատարակված Վաղարշապատում) նշված է արդեն ոչ թե որպես թեմական, այլ միայն՝ տղայոց երկդասյան ուսումնարան՝ 147 աշակերտով։

1896-ին նորից է փակվել, վերաբացվելով 1905-ին, որպես երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում եղել է երկդասյան դպրոց, ուր սովորել են 63 տղա և 55 աղջիկ։

1911—12 ուս. տարում ունեցել է քառամյա դասընթաց և 123 աշակերտ (63 աղջիկ)։ 1913-ին բացվել են երկու լրացուցիչ դասարաններ, և դպրոցը նորից համարվել է թեմական։ Այս հանգամանքը բավականաչափ անհանգստացրել է կառավարական մարմիններին և երկարատև գրագրությունների պատճառ դարձել։

1917-ին մի խումբ բարերարներ Շամախու թեմական դպրոցին կտակել են խոշոր գումար՝ 100 հազար ռուբլի։ Այդ թվականին դեռևս չի ունեցել լրիվ միջնակարգի դասընթաց։

ՍՍՀՄ ԳԿԳԱ, ֆ. 821, գ. 49, թ. 13—14; ց. 139, գ. 11, թ. 71—75; Մ. Հ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19 դարի ա. կեսին», էջ 283—284; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 23, թ. 266; գ. 48, թ. 2; գ. 50, թ. 17; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 24; գ. 572, թ. 4; «Մեղու Հայաստանի», 1858, N 18, էջ 133—140; «Դպրոց», 1875—1876, N 4, էջ 134; «Արարատ», 1878, ԺԲ, էջ 455; 1914, էջ 619; 1917, էջ 57, էջ 619։

ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 49; գ. 3997, թ. 17; ֆ. 12, գ. 865, թ. 74; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 113։

Շամախու հայ ավետարանականների օրիորդաց դպրոց

«Մշակ» թերթի 1884-ի համարներից մեկում տպագրված նամակում հայտնվում է, որ այդ թվականին Շամախիում բացվել է հայ ավետարանականների օրիորդաց դպրոց։

«Մշակ», 1884, N 21։

Շամախու հայ բողոքականների դպրոց (Ս. Համբարձումյանի)

Հիմնվել է 1842-ին՝ Շամախու հայ բողոքական համայնքի երեխաների համար։ Հիմնադիրը եղել է հայ բողոքական Սարգիս Համբարձումյանը։ Դպրոցի բացումը թույլատրված է եղել Կովկասյան ուսումնական վարչության կողմից։ Այնտեղ ավանդվել են՝ այբբենարան, «պստիկ սաղմոս», մեծ սաղմոս, «պստիկ ավետարան», մեծ ավետարան, քերականություն գրաբար լեզվով, թվաբանություն, գեղագրություն, ռուսերեն և կրոնաբարոյական խրատաբանություն։

Հայ հոգևորականության և տեղի հայ լուսավորչական համայնքի

բողոքների հիման վրա՝ Բաքվի նահանգապետի հրամանով այս դպրոցը, որպես բողոքականություն տարածող, փակվում է։

Այս դպրոցի մասին ավելի հանգամանորեն խոսվում է Մ. Հ. Սանթրոսյանի «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի ա. կեսին» գրքում (էջ 284—286)։

Շամախու հայ լյութերական դպրոց

1891-ին գործել է՝ լինելով խառը երկսեռ դպրոց։

ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 17։

Շամախու Ս. Սանդխտյան օրիորդաց դպրոց

Հիմնվել է 1869-ին, թեև հետագայում կազմված մի տեղեկագրում հիշվում է 1867-ը։ Առաջին տարին ունեցել է ընդամենը 12 աշակերտուհի։ 1870-ին Շամախիում կազմակերպվել է մի ընկերություն, որը նպատակ է ունեցել ապահովել օրիորդական ուսումնարանի գոյությունը։ Այս դպրոցի 1873 և 1874 թվականների հաշվետվությունից երևում է, որ այդ ժամանակ հիշյալ ընկերությունը ունեցել է «անփոփոխ անդամներ» 7 հոգի, «տարեկան անդամներ» 30 հոգի և «խնամակալ կանայք» 24 հոգի։ Սահմանված է եղել, որ անփոփոխ անդամները պարտավոր են օրիորդաց դպրոցի օգտին մուծել 100-ական ռուբլի, տարեկան անդամները՝ ամեն տարի 10-ական ռուբլի, խնամակալ տիկնայք՝ տարեկան 5-ական ռուբլի։

Այդպիսով հավաքվել է մի պատկառելի գումար (չհաշված նվիրատվությունները), որով ապահովվել է դպրոցի հարատևությունը։

1873-ին դպրոցն ունեցել է մեկ նախապատրաստական և մեկ առաջին դասարան, 4 ուսուցիչ և 41 աշակերտուհի, որոնցից 9-ը ձրիավարժ։ 1874-ին ունեցել է 67, 1877-ին՝ 53 աշակերտուհի։ Ավանդվել են՝ կրոն, «քերականության սկզբունք՝ առանց ձեռնարկի», հայոց պատմություն, ռուսաց լեզու, թվաբանություն, աղգային և եկեղեցական երգեցողություն, հայոց և ռուսաց վայելչագրություն, ձեռագործություն։

1881-ին ունեցել է 5 ուսուցիչ, 40 աշակերտուհի։

1885-ին դպրոցը երկդասյան էր։ Նույն թվականին փակվել է։ 1886-ին՝ վերաբացվել։ 1888—89 ուս. տարում համարվել է միդասյան, թեև ունեցել է Ա, Բ, Գ, Դ, Ե բաժանմունքներ։ 1896-ի սկզբներին, այսինքն՝ երկրորդ փակումից առաջ, դարձյալ եղել է երկդասյան։ Այդ թվականին փակվել է և վերաբացվել 10 տարի հետո՝ 1905-ի վերջերին։

1907—08 ուս. տարում գործել է որպես միդասյան իգական դպրոց։

«Մեղու Հայաստանի», 1869, N 47, էջ 330—331; 1873, N 17; «Արարատ», 1871,

Դ. էջ 245—246; 1873, Ե. էջ 189—190; 1875, Դ. էջ 154—155; 1876, ԺԲ. էջ 455; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ.56, գ. 43, թ. 3; գ. 50, թ. 17—19; գ. 199, թ. 17—23; գ. 338, թ. 19; գ. 324, թ. 25; գ. 518, թ. 52; գ 572, թ. 4; գ. 23, թ. 166; «Վիհ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 113; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 1585, թ. 49։

Սաղյան գյուղի վանական դպրոց

Հիմնվել է, հավանաբար, 1867-ին կամ 1868-ին՝ Սաղյան գյուղի Ս. Ստեփանոս վանքին կից։ Հիմնադիրն է եղել Շամախու Թեմի հոգևոր տեսուչ Անդրեաս արքեպիսկոպոսը, իսկ առաջին ուսուցիչը՝ սարկավագ Ավետիս Փինաջյանը։ Ուսուցանվել են՝ հայոց և ռուսաց լեզուներից՝ ընթերցանություն և վայելչագրություն, կրոնագիտություն, թվաբանություն, երգեցողություն։

1873-ին ունեցել է 25 աշակերտ։ 1877-ին դպրոցը չի գործել՝ նյութական միջոցների պակասության և ուսուցիչ չունենալու պատճառով։ 1881-ին գործել է՝ ունենալով 26 աշակերտ։ 1885-ին հայկական մյուս դպրոցների հետ միասին փակվել է։ 1888-ին եղել է երկդասյան արական դպրոց՝ 41 աշակերտով (36 հոգի գյուղացիների զավակներ)։ 1891-ին եղել է միդասյան արական դպրոց։ 1896-ին փակված դպրոցների ցուցակում չի նշված, բայց հայտնի է, որ 1905-ին վերաբացվել է։ 1907—08 ուս. տարում գործել է որպես միդասյան արական դպրոց։ 1911—12 ուս. տարում եղել է երկսեռ 4-ամյա դպրոց՝ 38 աշակերտով (17 աղջիկ)։

«Արարատ», 1869, Դ. էջ 80; 1878, ԺԲ. էջ 455; 1907, № 1, էջ 7; «Վիհ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 116; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 5; գ. 50, թ. 65—68; գ. 199, թ. 17—23; գ. 518, թ. 45; գ. 572, թ. 5; գ. 23, թ. 229; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 49; գ. 3697, թ. 17; գ. 8717, թ. 6։

Վանքաշեն գյուղի ծխական դպրոց

1873-ին Վանքաշեն գյուղում գործել է ծխական դպրոց, ուր սովորել են 40 հոգի։ Հավանաբար, այդ թվականին էլ հիմնվել է, քանի որ նախորդ տարիների տեղեկագրերում չի հիշատակվում։ Թե մինչև երբ է գործել, մենք չգիտենք, այնքան, որքան համապատասխան վավերագրերն ու տեղեկագրերը այդ հարցի պատասխանը չեն տալիս։ Ըստ երևույթին, երկար տարիներ փակված է մնացել։

Հայտնի է, որ այն վերաբացվել է 1910-ին, իսկ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա արական դպրոց՝ 40 աշակերտով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 5; գ. 572, թ. 10; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17։

Քարքանջ գյուղի ծխական դպրոց

Այս գյուղի հետաքրքիր նկարագրությանը մենք հանդիպում ենք «Արարատ» ամսագրի 1871 թ. 7-րդ համարում, ուր տպագրված է Շամախու Թեմի այն ժամանակվա առաջնորդ արքեպիսկոպոս Դանիելի՝ Թեմի գյուղերը կատարած այցելությունների համառոտ հաշվետվությունը։

Այս նույն Դանիելը գրում է, որ դեռևս 1865-ին լինելով Քարքանջ գյուղում՝ «... կանչեցի ինձ մոտ ժողովուրդն՝ և հորդորեցի, որ հանձն առնեն և եկեղեցու շրջապատումն պարիսպ շինեն, և մի փոքրիկ ծխական ուսումնարան շինեն։ Փառք աստծոյ, այս օրհնյալ ժողովուրդն իմ խրատին անսալով՝ յուրաքանչյուր մարդ ակամայ ցույց տալ իրան հավանություն մանավանդ ուսումնարանի համար. այս տեղս բացվեց ստորագրություն, շատերն գրվեցան գրամ, շատերն խոստացան բար բերել, և շատերն էլ խոստացան մշակություն անել շինելոյ ժամանակ։ Միայն իմ ցավս ուսումնարանն էր, որ կարողանամ այս տեղս հաստատել իրան ամենատեսակ հարմարության և օդոյ ու ջրոյ պատվականության համար»։

Նա հայտնում է, որ գյուղն այն ժամանակ ունեցել է 122 տուն հայ բնակիչներ։

Այսպիսով, Քարքանջում ծխական դպրոց բացելու գործնական քայլեր արվել են դեռևս 1865-ին։ Բայց մեզ հայտնի չէ, թե երբ է կառուցվել նրա շենքը, և երբ է բացվել այդ դպրոցը և առհասարակ բացվե՞լ է, թե ոչ։ Այդ գյուղի դպրոցը չի երևում 1860—1870-ական թվականների տեղեկագրերում։

«Մեղու Հայաստանի» լրագրից իմանում ենք, որ 1883-ին Քարքանջ գյուղում գործել է մի դպրոց, որը պահվել է դիրեկցիայի կողմից։ Հավանաբար, դա նույն արքունական դպրոցն է, որի մասին իր «Նկարագիր Շամախվոյ Թեմի» գրքում (1895 թ.) գրել է արքեպիսկոպոս Մեսրոպ Սմբատյանը։ Նա նշել է, որ «Քարքանջն ունի արքունի դպրոց 45 աշակերտոք, կից մեր եկեղեցվոյ»։

Որոշ աղբյուրներից հայտնի է, որ տեղի հայկական երկսեռ դպրոցը բացվել է 1911-ին՝ ունենալով 85 աշակերտ։

«Արարատ», 1871, է. էջ 230։ «Մեղու Հայաստանի», 1884, № 1,
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 572, թ. 10։

Քելբանդ (Քյալբանդ) գյուղի ծխական դպրոց

Գեոկչայի գավառի (Քելբանդ (մի այլ փաստաթղթում՝ Քյալբանդ) գյուղի հայ ծխական դպրոցի բացման թվականը մեզ անհայտ է։ Գի-

տենք միայն, որ 1910-ին այն վերաբացվել է, որի մասին հայ հոգևոր իշխանությունները հայտնել են Կովկասի փոխարքայի գրասենյակին։ 1911—12 ուս. տարում եղել է 3-ամյա խառը դպրոց՝ 18 աշակերտով (2 աղջիկ)։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17; ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 572, թ. 9։

Քեշխուրդե գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1895-ին։ 1896-ին ունեցել է 28 աշակերտ։ Նույն թվականի փետրվարին փակվել է կառավարության կողմից։ Վերաբացվել է 13 տարի հետո՝ 1910-ին։ 1911—12 ուս. տարում եղել է 3-ամյա խառը դպրոց՝ 50 աշակերտով (7 աղջիկ)։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 324, գ. 338, թ. 19; գ. 572, թ. 8, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17։

Քիլվար գյուղի ծխական դպրոց

Շամախու թեմի Քիլվար և այլ գյուղերի հայկական դպրոցների կազմակերպման գործում մեծ դեր է խաղացել թեմական ուսուց. Սահակ վարդապետը։ 1875-ին կաթողիկոսին ուղղված իր զեկուցագրում նա նկարագրել է այն խղճուկ վիճակը, որի մեջ գտնվել են հիշյալ թեմի գյուղերի հայ բնակիչները։ Մասնավորապես Քիլվար գյուղի մասին գրել է, որ այնտեղ ապրում են 74 տուն հայեր, որոնք «... վարին ընդ միմիանս ի լեզու և ի տարազ կենցաղավարութեան տաճկաց» («Արարատ», 1875, Ա. էջ 34)։

Այս զրկանքից զուրս բերելու գլխավոր միջոցը համարելով ազգային կրթությունը՝ նա 1875-ին Քիլվար գյուղում (և մի շարք այլ գյուղերում) կազմակերպում է ծխական դպրոց, որը պահվել է տեղի բնակչության և Բաքվի մարդասիրական ընկերության միջոցներով։ Առաջին տարում այնտեղ սովորել են 21 երեխաներ։

Դպրոցի հաստատությունն ապահովվել է մարդասիրական ընկերության շնորհիվ։ 1884-ին «Մեղու Հայաստանի» լրագիրը գրել է, որ այդ ընկերությունը արդեն 10 տարի է, ինչ «թաթարաբնակ Քիլվար գյուղում» հայկական դպրոց է պահում։

1885-ին այս դպրոցը փակվել է՝ վերաբացվելով 8 տարի հետո, 1893-ին, որը և սխալմամբ համարվել է նրա բացման (հիմնադրման) թվականը։ 1896-ին ունեցել է 34 աշակերտ։ Նույն տարում էլ փակվել է։ Նորը 14 տարի փակ է մնացել՝ վերաբացվելով միայն 1910-ին։

«Արարատ», 1875, Ա. էջ 34; 1878, ԺԲ. էջ 455; «Մեղու Հայաստանի», 1884, № 49; ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 324; գ. 23, թ. 57; թ. 425; գ. 21, թ. 14; գ. 50, թ. 17—19; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17; գ. 422, գ. 1585, թ. 49։

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ԹԵՄ

(Այս թեմի մեջ մտնում էին Ելիզավետպոլի նահանգի Գանձակի և Ղազախի գավառները, Թիֆլիսի և Քութայիսի նահանգներն ամբողջությամբ, Բաթումի մարզը, Զահաբալայի և Սուխումի օկրուգները)

ԲԱԹՈՒՄԻ ՄԱՐԶ

ԱՐԴՎԻՆԻ ՕԿՐՈՒԳ

Արդանուշ (Արդանուշ) ավանի հայկական եկեղեցական ծխական դպրոց

Հիմնվել է 1880-ին։ Հետագա մի քանի տասնամյակների փաստաթղթերում չի երևում։ Գիտենք, որ 1911-ին գործել է՝ լինելով երկսեռ երկդասյան դպրոց և ունեցել է 4 ուսուցիչ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2918, թ. 230։
«Նոր դպրոց», 1911, № 9—10, էջ 32; № 21—22, էջ 35։

Արդանուշ ավանի հայ կաթոլիկական եկեղեցական ծխական դպրոց

Հիմնադրման թվականը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1914-ին Արդանուշ ավանում գործել է հայ կաթոլիկների եկեղեցական ծխական դպրոց, որը պահպանվել է հայ կաթոլիկների բարեգործական ընկերության միջոցներով։ Այդ թվականին ունեցել է 3 ուսուցիչ, 92 աշակերտ։

ԼՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 50։

Արդվին քաղաքի հայկական արական Վարդանյան ծխական դպրոց

Հիմնվել է 1881-ին։ Կոչվել է Ս. Սահակյան արական ուսումնարան։ 1884-ին բաղկացած է եղել երկու պատրաստական և երկու հիմնական դասարաններից։

1885-ին փակվել է, վերաբացվել՝ 1888-ին, որպես միդասյան դպրոց։

1895-ին եղել է երկսեռ դպրոց. հավանաբար սրան է միացել Արդվինի օրիորդաց դպրոցը։ 1897—98 թվականներին փակվել է, վերաբացվել՝ 1905-ին։ 1908—09 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ուր սո-

վորել են 73 տղա և 78 աղջիկ։ 1911—12 ուս. տարում եղել է քառամյա դպրոց՝ 3 դասարանով։

1914-ին ունեցել է 3 ուսուցիչ, 143 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 229; գ. 8717, թ. 3; ֆ. 12, գ. 865, թ. 73; ֆ.13, գ. 264, թ. 51;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 11—13; գ. 106; գ. 357, թ. 117; գ. 492, թ. 200; գ. 182, թ. 34;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 69;
Թեմական տեսուչ Հ. Տեր-Միրաքյանի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Արդվին քաղաքի իգական ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1884-ից առաջ գործել է, իսկ այդ թվականին փակվել՝ ուսուցիչ չունենալու պատճառով։ Վերաբացվել է 1888-ին, որպես միդասյան իգական դպրոց։ 1891-ին գործել է որպես առանձին իգական դպրոց, իսկ 1895-ին, հավանաբար, միացած է եղել արական դպրոցին։

Դպրոցի երկրորդ վերաբացումը տեղի է ունեցել 1905-ին, ուրեմն մինչև այդ այն փակված է եղել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, գ. 106; գ. 357, թ. 117;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 3;
«Циркуляр», 1888, № 11, էջ 453։

Արդվին քաղաքի հայ կաթոլիկական եկեղեցական ծխական դպրոց

Արդվին քաղաքի հայ կաթոլիկական ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ հայտնի չէ։

«Արձագանք» լրագրի մի հաղորդման համաձայն 1884-ին Արդվինում եղել են 500 տուն հռոմմեադավան և 160 տուն լուսավորչական հայեր։ Վերջիններիս դպրոցների մասին արդեն խոսվեց։ Այդ նույն հաղորդագրությունից կարելի է կարծել, որ այնտեղ այդ ժամանակ գործել է նաև կաթոլիկների դպրոց, այն էլ դուցե ոչ մեկը։

Հայ կաթոլիկների դպրոցի վերաբերյալ այլ նյութեր չունենք։ Հայտնի է միայն, որ 1914-ին այն եղել է ժամանակի խոշոր դպրոցներից մեկը։

Ունեցել է 6 ուսուցիչ, 269 աշակերտ։ Պահվել է հայ կաթոլիկների բարեգործական ընկերության միջոցներով։

«Արձագանք», 1884, 18 հոկտեմբերի, էջ 585։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 50։

Աբրոսակերտ (Օբրոբակերտ) գյուղի հայկական եկեղեցական ծխական դպրոց

«Մշակ»-ում տպագրված ճանապարհորդական նոթերում գրված է. «Օբրոբակերտն ունի մի եկեղեցի հնօրյա, Ս. Հովհաննես, և մի ուսումնարան, որ հիմնված է արդեն 1820 թվականին և նորոգված 1867-ին։

1884-ին գործել է՝ ունենալով 2 պատրաստական դասարան և 40 աշակերտ։ 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1890-ին՝ տեղի հայ բնակչության ընդհանուր որոշմամբ։ Այդ առթիվ ստացվել է նաև կաթողիկոսի կոնդակը։ Եղել է միդասյան արական դպրոց, որը 1896-ին նորից փակվել է։

Վերաբացման թվականը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1911—12 ուս. տարում գործել է որպես քառամյա դպրոց՝ ունենալով 3 դասարան, 2 դասատու։

1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, 83 աշակերտ։

«Մշակ», 1886, № 23.
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 11—13; գ. 241, թ. 63; գ. 357, թ. 119, գ. 199, թ. 17—23; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 1, գ. 865, թ. 72; ց. 7, գ. 865, թ. 17;, ֆ. 13, գ. 264, թ. 51։
Թեմական տեսուչ Հ. Տեր-Միրաքյանի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Տաճնոտ (Տանճոտ) գյուղի հայկական ծխական դպրոց

1884-ին գործել է՝ լինելով պատրաստական դասարանից կազմված արական ծխական դպրոց։ Ինչպես երևում է «Արձագանք» լրագրի մի հաղորդումից, այդ նույն թվականին էլ այն փակվել է՝ այնտեղի քահանայի մեղքով։ Ցույց է տրված նաև 1885-ին կառավարության կողմից փակված հայ դպրոցների ցուցակում։ Վերաբացվել է, հավանաբար, 1889-ից հետո (1888—89 ուս. տարվա տեղեկագրում չկա)։ Նշված է 1894-ի ցուցակներում, իսկ 1896-ին նորից է փակվել։ Վերաբացման թվականն անհայտ է։ 1908-ին գործել է։ 1909-ի ապրիլին տեղի է ունեցել այդ դպրոցի նորակառույց շենքի բացման հանդեսը։ 1911-ին գործել է, ունենալով 2 ուսուցիչ։ 1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, 61 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, ֆ. 13, գ. 264, թ. 57;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 11—13; գ. 199, թ. 17—23;
«Արձագանք», 1884, 18 հոկտեմբերի, էջ 585;
«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 84, 1909, № 5, էջ 83, 1911, № 9—10, էջ 32, 1914, № 21—22, էջ 35.

Օլշիբշի գյուղի ծխական դպրոց

Տեղեկատու աղբյուրներում մենք չգտանք Օլշիբշի անունով գյուղ Կովկասի բնակելի վայրերի շարքում։ Այդ գյուղը մեզ հանդիպել է միայն մի անգամ «Նոր դպրոց» ամսագրում, ուր նշված է, որ 1911-ի փետրվարի 17-ին այդ գյուղի ծխական դպրոցում տեղի է ունեցել դպրոցական հանդես։ Քանի որ այդ գյուղը նշված է Բաթումի մարզի Արդվինի օկրուգի Տանձոտ գյուղից հետո և Արդանուշ գյուղից առաջ, մենք ենթադրաբար Օլշիբշի գյուղը ևս դնում ենք Արդվինի օկրուգում։

«Նոր դպրոց», 1911, № 9—10, էջ 32։

Սաթլել-Բաբատ գյուղի ծխական դպրոց

1911-ի մարտից մինչև դեկտեմբեր երկարաձիգ գրագրություն է տեղի ունեցել Բաթումի մարզի Արդվինի օկրուգի Սաթլել հայաբնակ գյուղի ծխական դպրոցի «կիսավեր» շենքի վերանորոգման մասին։ Փոքրաթիվ բնակչություն ունեցող և ազքատ այդ գյուղը ցանկացել է այդ նպատակով հանգանակություն անցկացնել Թիֆլիսի, Երևանի և Բաթումի նահանգներում։

Այս հարցի առթիվ գրագրությունը ձգձգվել է, և մենք չգիտենք, թե ինչով է ավարտվել։ Միայն կարող ենք ասել, որ եթե ծխական դպրոցի շենքը կիսավեր է եղել, և վերականգնման անհրաժեշտություն է զգացվել, ապա տվյալ դպրոցը վաղուց է գոյություն ունեցել։ Համենայն դեպս, անցած դարի 90-ական թվականներից ոչ ուշ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 686, թ. 1—11։

ԲԱԹՈՒՄ ՔԱՂԱՔ

Բաթում քաղաքի հայկական արական ծխական դպրոց

Հիմնվել է 1879-ին՝ Ս. Աստվածածին եկեղեցուն կից։ 1884-ին փակվել է՝ ուսուցիչ չունենալու պատճառով։ 1887-ին վերաբացվել է։ 1888—89 ուս. տարում եղել է միդասյան արական դպրոց՝ 37 աշակերտով։ 1895-ի վերջերին եղել է երկսեռ դպրոց (հավանաբար նրան է միացել տեղի իգական դպրոցը)։ Թեև 1896-ի հայ դպրոցների ընդհանուր փակման ժամանակ այս դպրոցը թողնվել է հայ եկեղեցու իրավասության տակ, բայց 1—2 տարի հետո այն ևս փակվել է (1898-ի վերջերում այլևս հայ եկեղեցական ծխական ոչ մի դպրոց չի գործում)։

1907—08 ուս. տարում գործել է որպես երկսեռ երկդասյան դպրոց, ուր սովորել են 130 տղա, 115 աղջիկ։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 230; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 17;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 50, թ. 13; գ. 106; գ. 357, թ. 115; գ. 182, թ. 48;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 25; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 69, № 11, էջ 91—92;
Թեմական տեսուչ Հ. Տեր-Միրաքյանի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Բաթում քաղաքի հայկական իգական դպրոց

Հիմնվել է 1890-ին՝ որպես միդասյան իգական դպրոց։ 1892—93 ուս. տարում ցույց է տրված տեղի հայ եկեղեցուն կից։ Ունեցել է 35 աշակերտուհի։

Ամենայն հավանականությամբ, 1895-ին միացած է եղել տեղի տղաների դպրոցին։

1908—09 ուս տարում երկու դպրոցում սովորել են 95 աղջիկներ։

«Արարատ», 1890, № 12, էջ 697;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 106; գ. 357, թ. 115; գ. 11, թ. 1—23; գ. 182, թ. 48։
«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 91—92;
«Циркуляр», 1890, № 10, էջ 559։

Բաթումի հայկական արհեստագիտական դպրոց

Բացվել է 1909 թ. Կովկասի հայոց բարեգործական ընկերության Բաթումի ճյուղի միջոցով։ Առաջին տարին ունեցել է 14—16 աշակերտուհիներ՝ հայ աղջիկներից։

«Նոր դպրոց», 1909, № 2, էջ 93։

Բաթումի հայ կաթոլիկների դպրոց

Բաթում քաղաքում 1911-ին գործել է նաև հայ կաթոլիկների դպրոց, որի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Հետաքրքրական է, որ հաճախակի են կազմակերպվել տեղի հայ լուսավորչական և կաթոլիկ դպրոցների աշակերտների հանդիպումներ, միացյալ երեկույթներ և ներկայացումներ։

Հայ կաթոլիկների դպրոցը 1914-ին գործել է։

«Նոր դպրոց», 1911, № 11—12, էջ 35;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 49։

Բաթումի քաղաքային հայկական տարրական դպրոց

Բաթումի քաղաքային ինքնավարությունը 1908-ին հայ երեխաների համար բաց է արել տարրական դպրոց։ Այդ թվականի սեպտեմբերի 11-ին տեղի է ունեցել դպրոցի հանդիսավոր բացումն ու օրհնությունը։ Առաջին տարին ունեցել է 50-ից ավելի աշակերտ-աշակերտուհիներ։

«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 91—92։

ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳ

ԳԱՆՁԱԿԻ ԳԱՎԱՌ

Աբլահ գյուղի ծխական դպրոց

Արխիվային մի փաստաթղթում Աբլահ (Ապլահ) հայաբնակ գյուղի ծխական դպրոցի մասին ասված է.

«Ի 15-ն դեկտեմբերի 1906 ամի մենք՝ Գանձակու վիճակի Ապլահ գյուղի ծխականներս տեսնելով մեր շրջակա գյուղերի եկեղեցական ուսումնարանների վերաբացվելը, բարոյական պարտք համարեցինք մեզ՝ բաց անել և մեր գյուղում միդասյան ուսումնարան»։

Ցավոք այս դպրոցի մասին այլ տեղեկություններ չունենք։ Անկասկած, այն բացվել է, բայց մինչև ե՞րբ է պահպանել իր գոյությունը, դժվար է ասել։ 1915-ին գյուղն ունեցել է 371 բնակիչ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 216, թ. 2։

Արմավիր (Նոր) գյուղի ծխական դպրոց

Գանձակի գավառի Նոր Արմավիր գյուղի եկեղեցական ծխական դպրոցը 1908-ին գործել է՝ զգալի նպաստ ստանալով Կովկասի հայոց բարեգործական ընկերությունից։ Ինչպես երևում է, այդ դպրոցը հետագայում փակվել է և վերաբացվել 1914-ին, այդ առթիվ արժանանալով կաթողիկոսի օրհնության կոնդակին։

«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 84;
«Արարատ», 1914, № 1, էջ 6։

Բանանց գյուղի (Գանձակի վիճակ) ծխական դպրոց

Հիմնվել է 1874-ին (մի այլ փաստաթղթի համաձայն 1873-ին գործել է)՝ ունենալով 2 ուսուցիչ, 120 աշակերտ։ 1877—78 ուս. տարում

փակ է մնացել՝ ուսուցիչ չունենալու պատճառով։ 1878-ի աշնանը վերաբացվել է թեմական տեսուչ Հակոբ Տեր-Հովհաննիսյանի եռանդուն միջամտության շնորհիվ։ Ժողովուրդը մեծ ոգևորությամբ է ընդունել դպրոցը վերաբացելու մասին վերատեսչի առաջարկը և զգալի գումար է հատկացրել այդ նպատակի համար։ Ուսուցիչ է նշանակվել Վ. Եղիազարյանցը։ 1884-ին եղել է միդասյան արական դպրոց, 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1888-ին՝ ունենալով 60 աշակերտ, 1892-ին՝ 55 աշակերտ։ 1896-ին դարձյալ միդասյան արական դպրոց է եղել։ Նույն թվականին փակվել է՝ վերաբացվելով, հավանաբար, 1906-ին։

1907—08 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 100 տղա և 40 աղջիկ։ 1911—12 ուս. տարում եղել է 5-ամյա դպրոց՝ 4 դասարանով։

«Մանկ. թերթ», 1878, № 6, էջ 9—10, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 28; գ. 50, թ. 67; գ. 106, գ. 11, թ. 1—23; գ. 357, թ. 133; գ. 182, թ. 38; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3987, թ. 6; գ. 8717, թ. 9; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 28, Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ, Հ. Տեր-Միրզոյանի ֆոնդ; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 70, 1911, № 11—12, էջ 36։

Բարսում (Բուրսում) գյուղի (Գանձակի վիճակ) արական ծխական դպրոց

Հիմնվել է 1878-ի մարտին՝ թեմական տեսչի օգնական Մ. Եպիսկոպոսյանի ջանքերով։ Առաջին ուսուցիչն է եղել Մարտիրոս Բելուբեկյանը, որը լավ է իմացել իր ավանդած առարկաները, հատկապես հայոց և ռուսաց լեզուները։ Դպրոցն ունեցել է մոտ 30 աշակերտ։ 1882-ին աշակերտների թիվը եղել է նույնը՝ 30 հոգի։

Հետագա տարիների փաստաթղթերում այս դպրոցը չի հանդիպել։

«Մանկավարժական թերթ», 1878, № 2, էջ 63, № 6, էջ 14—15;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 49։

Բոյան գյուղի ծխական դպրոց

Գյուղական աշխի ընկնող դպրոցներից մեկն է եղել։ Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Նշված է հայ դպրոցների 1895-ի ցուցակներում, որպես երկդասյան (այլ փաստաթղթերում՝ 4-դասյան) դպրոց։

1896-ին փակվել է։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 42 և 73; գ. 1090, թ. 40; գ. 1086, թ. 84; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 199, թ. 17—23։

Բրաջուր (Պռաջուր) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1906 թվականին։ 1909-ին եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 21 տղա և 12 աղջիկ։

«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 84; 1909, № 6—7, էջ 141;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 38; ֆ. 35, ց. 1, գ. 216, թ. 1։

Գանձակի Կորյունևապատ քաղաքամասի եկեղեցական ծխական դպրոց

Այս դպրոցին մենք առաջին անգամ հանդիպում ենք 1908 թվականի մի տեղեկագրում։ 1909-ին այն եղել է բավականաչափ մեծաթիվ աշակերտություն (70 տղա և 50 աղջիկ) ունեցող դպրոց՝ 4 ուսուցչով։

Այս դպրոցը հիշատակված է նաև Վրաստանի թեմական տեսուչ Հ. Տեր-Միքաելյանի՝ 1911—12 ուս. տարվա կազմած տեղեկագրում, որպես եռամյա դպրոց։

Կարծում ենք, որ սա նույն Գանձակի Նորաշեն թաղի դպրոցն է, որը դեռևս 1871-ին գործել է, իսկ 1896-ի փակումից հետո այլևս այդ անունով չի հիշատակվել հետագա տարիների փաստաթղթերում։ Պահվել է ԿՀԲԸ-ի նպաստով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 25—43;
«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 84; 1910, № 2, էջ 85;
Մանկ. գիտ. ինստիտուտ—Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ։

Գանձակի Նորաշեն կամ Երևանցոց թաղի Ս. Աստվածածին եկեղեցու արական ծխական դպրոց

Մի փաստաթղթում այս դպրոցի հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1890-ը, սակայն դա ճիշտ չէ, քանի որ 1871-ին և 1877-ին այն գործել է՝ լինելով միգասյան արական դպրոց։ 1871-ին ունեցել է 30, 1873-ին՝ 22, 1877-ին՝ 46, 1881-ին՝ 20 աշակերտ։ Մինչև 1890-ը այս դպրոցին այլևս չենք հանդիպում։ Այդ թվականին կաթողիկոսի կոնդակով Գանձակի Նորաշեն թաղի Ս. Աստվածածին եղեկեցուն կից բացվել է եկեղեցական ծխական դպրոց (հավանաբար հենց դա էլ հիմք է ծառայել նրա հիմնադրման տարեթիվը 1890-ից հաշվելու համար)։ 1892-ին ունեցել է 30 աշակերտ։ 1895-ին եղել է միգասյան դպրոց՝ 3 բաժանմունքով։ 1896-ին նորից է փակվել։ Հետագա տարիների տեղեկագրերում այլևս չի հանդիպում։ Հնարավոր է, որ կոչված լինի այլ անունով։

«Արարատ», 1878, մթ, էջ 453; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 130; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3977, թ. 6; գ. 1585, թ. 49; ֆ. 12, գ. 365, թ. 42;, գ. 1086, թ. 84։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 28; գ. 106, գ. 199, թ. 17—23; գ. 357, թ. 120; գ. 241, թ. 39; գ. 11, թ. 1—23։

Գանձակի Ս. Լուսավորիչ եկեղեցու արական ծխական դպրոց

Հիմնվել է 1889-ի սեպտեմբերին՝ Գանձակի Ս. Լուսավորիչ եկեղեցու բակում՝ Գրիգորիս եպիսկոպոս Ադունյանցի ջանքերով։ Եղել է միգասյան արական դպրոց, ուր 1892—93 ուս. տարում սովորել են 106 տղաներ։

Երևանի և Ելիզավետպոլի ուսումնարանների դիրեկցիայի կողմից 1891-ին կազմված տեղեկագրում ցույց է տրված Գանձակի Ս. Գրիգոր Եկեղեցուն կից երկդասյան արական դպրոց։ Մեր կարծիքով, սա հենց Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արական դպրոցն է, իսկ նրա երկդասյան լինելու մասին ուսումնարանների դիրեկցիայի տեղեկությունը պետք է համարել թյուրիմացություն։ Բանն այն է, որ թեմական տեսչի 1891 և 1893 թվականներին կազմած տեղեկագրերում Ս. Լուսավորչի դպրոցը նշված է որպես միգասյան, իսկ Ս. Գրիգոր Եկեղեցու անունով դպրոց առհասարակ չի հիշատակվում ոչ այդ, ոչ էլ հետագա տարիների տեղեկագրերում։ Այս հանգամանքը ևս հաստատում է մեր կարծիքը, որ դա միևնույն դպրոցն է, այն մերթ կոչվել է Ս. Լուսավորչի, մերթ էլ Ս. Գրիգորի դպրոց։ Ճիշտ է, Գանձակում եղել է նաև Ս. Գևորգ եկեղեցի, բայց նրան կից դպրոց մենք ոչ մի տեղ չենք հանդիպել։

1896-ին փակվել է՝ վերաբացվելով 1906-ին։ Սրան միացել է նաև Լուսավորչի եկեղեցու իգական դպրոցը։

1908—09 ուս. տարում երկսեռ դպրոցն ունեցել է 62 աշակերտ, 58 աշակերտուհի։ 1911—12 ուս. տարում եղել է 5-ամյա դպրոց՝ 7 դասարանով։ 1914-ին ունեցել է 358 աշակերտ, 12 ուսուցիչ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 3, թ. 54; գ. 106, գ. 357, թ. 127; գ. 11, թ. 1—23; գ. 182, թ. 38; գ. 199, թ. 17—23;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 6; գ. 865, թ. 73; ֆ. 13, ց. 7, գ. 8717, թ. 9; ց. 11, գ. 264, թ. 61; Մանկ. գիտ. ինստիտուտ արխիվ, Տեր-Միքայելյանի ֆոնդ։

Գանձակի Ս. Լուսավորիչ եկեղեցու Մարիամյան իգական դպրոց

Հիմնվել է 1889-ին՝ նույն եկեղեցու արական դպրոցի հետ միաժամանակ։ Եղել է միգասյան իգական դպրոց։ 1892-ին ունեցել է 92 աշակերտուհի։

Երևանի և Ելիզավետպոլի ուսումնարանների դիրեկցիայի 1891-ի ցուցակում նշված է նաև աղջիկների եռդասյան դպրոցի գոյությունը Գանձակի Ս. Գրիգոր եկեղեցուն կից։ Ինչպես նշեցինք արական դպրոցի

կապակցությամբ, դիրեկցիայի այս տեղեկությունը ևս պետք է համարել թյուրիմացություն։

Գանձակում Ս. Լուսավորչի և Ս. Գրիգորի եկեղեցիների առանձին իգական դպրոցներ գոյություն չեն ունեցել։ Դա միևնույն դպրոցն է, որը այդ տարիներին, ինչպես ցույց են տալիս թեմական տեսչի 1891-ի և 1893-ի տեղեկագրերը, եղել է միդասյան և ոչ եռդասյան, որպեսզի ներկայացրել է ուսումնարանների դիրեկցիան։

Եվ, վերջապես, ինչպե՞ս կարող էր աղջիկների եռդասյան դպրոց լինել Գանձակի Ս. Գրիգոր (որ նույն Գրիգոր Լուսավորիչն է) եկեղեցուն կից և նախորդ տարիների ոչ մի տեղեկագրում չհիշատակվել։ Բացի այդ, Մ. Բարխուդարյանը ևս իր «Արցախ» գրքում Գանձակի Ս. Լուսավորիչ եկեղեցուն կից դպրոցը ցույց է տվել որպես միդասյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 90 տղա և 94 աղջիկ։ 1895-ին ևս միդասյան դպրոց էր։ 1896-ին փակվել է, վերաբացվելով 1906-ին՝ նույն եկեղեցու աղջիկների դպրոցի հետ միացած։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 106; գ. 357, թ. 127; գ. 11, թ. 1—23; գ. 199, թ. 17—23; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 6; գ. 865, թ. 73; ֆ. 12, գ. 1086, գ. 84; ֆ. 13, գ. 7, գ. 8717, թ. 9; գ. 11, գ. 264, թ. 61;
Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 46։

Գանձակի Ս. Հովհաննես եկեղեցու Մեսրոպյան արական դպրոց

Հիմնվել է 1863 թ. նոյեմբերի 21-ին (այլ տվյալներով՝ 1864-ին)՝ Գանձակ քաղաքի Ս. Հովհաննես եկեղեցու ծխականների նախաձեռնությամբ և միջոցներով։ 1871-ին ունեցել է 7 ուսուցիչ, 166 աշակերտ, 1873-ին՝ 6 ուսուցիչ, 134 աշակերտ, 1877-ին՝ 7 ուսուցիչ, 119 աշակերտ։ 1884-ին եղել է երկդասյան դպրոց։ 1885-ին փակվել է և 1886-ին վերաբացվել։ 1888-ին եղել է միդասյան, 191-ին՝ եռդասյան, 1892-ին իջել է երկդասյանի՝ ունենալով 135 աշակերտ (96 հոգի ուսման վարձով, 39 հոգի ձրիավարժ)։ Մի այլ տեղեկագրում այդ թվականին աշակերտների թիվը ցույց է տրված 114 հոգի։ Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքում ցույց է տրված, որ այս դպրոցը 1894-ին եղել է երկսեռ երկդասյան ուսումնարան, ուր սովորել են 140 տղա և 194 աղջիկ։

Թեև Կովկասի փոխարքայության արխիվում պահվող մի ցուցակում, ուր նշված են 1895-ին գոյություն ունեցած բոլոր հայ եկեղեցական ծխական դպրոցները, այս դպրոցի դիմաց գրված է, որ պետք է մնա հայ հոգևոր իշխանության իրավասության տակ, այնուամենայնիվ, 1896-ին այն ևս մտցվել է փակման ենթակա հայ դպրոցների ցանկում և նույն թվականին էլ փակվել է։ Վերաբացվել է 1906-ին։ 1907—08 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց՝ 307 աշակերտով (160 աղջիկ)։

1908—09 ուս. տարում այնտեղ սովորել են 180 տղա և 140 աղջիկ։ Ուսուցիչների թիվը իջել է 10-ի։ 1911—12 ուս. տարում եղել է 5-ամյա դպրոց՝ 7 դասարանով և 11 ուսուցչով։ 1912—13 ուս. տարում՝ 6-ամյա դպրոց՝ 202 աշակերտով (103 աղջիկ) և 12 ուսուցչով։ 1914-ին աշակերտների թիվը իջել է 190-ի, ուսուցիչներինը՝ 9-ի։ Այս դպրոցն աշխատել է երկդասյան դասընթացից քիչ ավելի ընդարձակ ծրագրով։ Այնտեղ դասավանդվել են նաև «հիգիենա» և «քաղաքացիական իրավունք» առարկաները, որոնք և ցարական իշխանության կենտրոնական մարմինների անհանգստության ու գրագրությունների առիթ են դարձել։

«Արարատ», 1878, ԺԲ, էջ 453; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 28; գ. 3, թ. 62; գ. 357, թ. 123; գ. 37, թ. 5; գ. 50, թ. 67; գ. 199, թ. 17—23; գ. 11, թ. 7; գ. 182, թ. 25—43; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 37; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 3997, թ. 6; ֆ. 12, գ. 86, թ. 73; ֆ. 13, գ. 8717, թ. 9; գ. 264, թ. 61; Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 44, «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 69; ՍՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 54, թ. 109։ Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ՝ Հ. Տեր-Միրզոյանի ֆոնդ։

Գանձակի Ս. Հովհաննես եկեղեցու Հռիփսիմյան միջնակարգ դպրոց

Հիմնվել է 1873-ին (մի այլ փաստաթղթով՝ 1874-ին)՝ Գանձակի Ս. Հովհաննես եկեղեցուն կից՝ ունենալով 22 աշակերտուհի։ 1877-ին ունեցել է 8 ուսուցիչ, 58 աշակերտուհի։ 1884-ին եռդասյան էր (միջնակարգ)։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է երկդասյան դպրոց՝ ունենալով 195 աշակերտուհի, 1891-ին՝ չորսդասյան (միջնակարգ), 1895-ին՝ դարձյալ երկդասյան՝ ունենալով 194 աշակերտուհի։ 1896-ին փակվել է։ 1906-ին վերաբացվել է՝ նույն եկեղեցու արական դպրոցի հետ միացած։ Այնտեղ 1907—08 ուս. տարում սովորել են 160 հայ աղջիկներ։

«Циркуляр кавказск. уч. округа», 1888, № 11, էջ 453 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 28; գ. 106, գ. 281, թ. 26; գ. 50, թ. 67; գ. 199, թ. 17—23; գ. 357, թ. 125; «Արարատ», 1878, ԺԲ, էջ 453; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 26; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 6; գ. 1585, թ. 52; ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 42; գ. 1082, թ. 84; Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 44։

Գանձակի հայկական գրագիտական դպրոց

ԿՀԲԸ-ի Գանձակի մասնաճյուղը իր հաշվին պահել է գրագիտական դպրոց մեծահասակների համար։ 1909 թ. այդ դպրոցն ունեցել է երկու բաժանմունք, ուրիշն պետք է բացված լիներ 1907-ից ոչ ուշ։ 1909-ին դպրոցն ունեցել է 3 ուսուցիչ-ուսուցչուհի և 118 աշակերտ (56 աղջիկ)։

Ընկերության 1912 թ. տեղեկագրում այդ դպրոցն այլևս ցույց չի տրված։ Չգիտենք, այն փակվե՞լ է, թե՞ պահվել է այլ միջոցներով։

ԿՀԲԸ-ի 1909 և 1912 թթ. տեղեկագրերը (էջ 32, էջ 30)։

Գառնայեր գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1905—1906 թթ. բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ Ըստ այդ ցուցակի, այն բացվել է 1906-ի նոյեմբերին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 50 աշակերտ (3 աղջիկ)։

1908—09 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 51 տղա և 11 աղջիկ, 1911—12 ուս. տարում եղել է միամյա դպրոց՝ 1 դասարանով։ 1915—16 ուս. տարում գործել է՝ նպաստ ստանալով Քեմի դպրոցական ընդհանուր ֆոնդից։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 9; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 40;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 70; «Արարատ», 1916, էջ 13;
Մանկ. գեղ. ինստիտուտի արխիվ՝ Հ. Տեր-Միրզայանի ֆոնդ։

Գետաբեկ (Ղազախլի) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1894-ին։ Եղել է միդասյան արական դպրոց։ 1895-ին նշված է հայ դպրոցների ընդհանուր ցուցակում։ 1896-ին փակվել է կառավարության կողմից։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 73; գ. 1086, թ. 84; գ. 1090, թ. 40;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 199, թ. 17—23; գ. 357, թ. 137։

Գետաշեն (Հայքենդ) գյուղի արական ծխական դպրոց

Տարբեր փաստաթղթերում և աղբյուրներում այս գյուղը ցույց է տրված Գետաշեն և Հայքենդ անուններով։ Եղել է Ելիզավետպոլի գավառի ամենախոշոր հայաբնակ գյուղը՝ 1914-ին ունենալով 5080 բնակիչ։ Գետաշենի կրթասեր հասարակությունը ծխական դպրոց է հիմնել դեռևս 1862 թվականին (մի այլ փաստաթղթում նշված է նույնիսկ 1860 թվականը)։ Ուրեմն այն եղել է գյուղական հնագույն դպրոցներից մեկը։

Գետաշենի հասարակության կրթասիրության վկայությունն է նաև այն փաստը, որ այդ գյուղը 1908-ին ունեցել է երեք դպրոց՝ հայկական արական, հայկական իգական և պետական (ռուսական)։ Երեք դպրոցներում միասին սովորել են 350 հոգի (նույնպես բացառիկ մի երևույթ այն ժամանակվա գյուղի համար)։

Արական ծխական միդասյան դպրոցը 1871-ին ունեցել է 50 աշակերտ։ 1873-ին և 1875-ին գործել է։ Այդ տարիներին այնտեղ բեղմնավոր աշխատանք է կատարել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ Մ. Բաղդասարյանը։ Նա լավ է կազմակերպել երեխաների ուսման գործը և արժանացել է գովասանքի։

1882-ին դպրոցն ունեցել է մի ուսուցիչ և 45 աշակերտ։ 1884-ին նույնպես եղել է միդասյան դպրոց։ 1885-ին հայ մյուս դպրոցների հետ միասին փակվել է կառավարության կողմից։ Վերաբացվել է 1888-ին՝ որպես միդասյան արական դպրոց։ 1891-ին գործել է, իսկ 1892-ին ունեցել է ընդամենը 28 աշակերտ։ 1896-ին երկրորդ անգամ փակվել է ցարական կառավարության կողմից։ Ամբողջ 10 տարի փակ է մնացել։ Վերաբացվել է, հավանաբար, 1906-ին։ 1908-ին ունեցել է 128 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1911—12 ուս. տարում ունեցել է եռամյա դասընթաց, իսկ 1914-ին՝ 2 ուսուցիչ և 140 աշակերտ։ Գործել է նաև հետապայում։ Դպրոցը որոշ նպաստ է ստացել Կովկասի հայոց բարեգործական ընկերությունից (օրինակ՝ 1908-ին՝ 200 ռ.)։

Բնորոշ ու հետաքրքիր է նաև հետևյալ փաստը։ «Նոր դպրոց» ամսագրի մի հաղորդումից երևում է, որ 1908-ին գործել է «բարվաքնակ գետաշենցի երիտասարդության «միությունն», որն իր հաշվով պահել է Գետաշենի հայկական երկու դպրոցներից մեկի ուսուցչին, վճարելով նրա տարեկան ամբողջ ռոճիկը։ Սա եզակի դեպքերից մեկն է, երբ այս կամ այն գյուղի օտարաբնակ երիտասարդները հատուկ բարեգործական ընկերություն են կազմել՝ իրենց գյուղի լուսավորության ու կուլտուրական զարգացման գործին օժանդակելու նպատակով։ Բացառված չէ նաև, որ բարեգործական «միությունն» անվան տակ գետաշենցի երիտասարդները ստեղծած լինեն քաղաքական, ազգային-ազատագրական նպատակներ հետապնդող մի կազմակերպություն։ Դա հավանական է մանավանդ, եթե նկատի ունենանք, որ 1905 թվականի հեղափոխական իրադարձությունների ազդեցության տակ ստեղծված այդպիսի «միություններ» ոչ միայն լուսավորական, այլև բաղարկված քաղաքական նպատակներ էին հետապնդում։ Դուցե այդ «միության» գործունեության հատուկ ուսումնասիրությունը կպարզի բուն իրողությունը։

«Արարատ», 1890, № 3, էջ 167, «Մանկավարժական թերթ», 1878, № 6, էջ 15—16;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22; գ. 3997, թ. 7; գ. 1555, թ. 49; ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 73; գ. 1086, թ. 84; գ. 1090, թ. 40; ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 61;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 67, գ. 11, թ. 1—23; գ. 43, թ. 24; գ. 199, թ. 17—23; գ. 357, թ. 125; գ. 132, թ. 38;
«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 84, 1909, № 1, էջ 90։

Գետաշեն գյուղի օրիորդաց ծխական դպրոց

Ինչպես արդեն նշել ենք, Գետաշեն գյուղում արական ծխական դպրոցից բացի, 1908-ին գործել է նաև հայկական օրիորդաց դպրոց։ Այդ առթիվ «Նոր դպրոց» ամսագրում կարդում ենք.

«Գետաշենը, որ Գանձակից 22 վերստ հեռավորության վրա է գտնվում և բաղկացած է 500—600 տնից, ունի երեք դպրոց՝ պետական՝ 2 ուսուցչով, ծխական՝ 2 ուսուցչով և օրիորդաց՝ մի վարժուհով։ Երեք դպրոցի աշակերտ-աշակերտուհիների թիվն է 350»։

Ցավոք, չի նշված, թե երբ է հիմնվել օրիորդաց դպրոցը։ Կարծում ենք, որ այն բացված պիտի լինի 1907—1908 ուս. տարվանից ոչ շուտ, քանի որ նախորդ տարիների աղբյուրներում ցույց է տրված միայն Գետաշենի արական ծխական դպրոցը։

«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 54, 1909, № 1, էջ 90։

Դաշքյասան գյուղի ծխական դպրոց

Գանձակի գավառի Դաշքյասան գյուղի հայկական ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է 1914-ին կազմված մի տեղեկագրում, որից իմանում ենք, որ այդ թվականին այն ունեցել է մի ուսուցիչ, 48 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61։

Ելենենդորֆ գաղութի հայկական ծխական դպրոց

Գանձակի գավառի Ելենենդորֆ գաղութի հիմնական բնակիչները գերմանացիներ էին, սակայն այնտեղ ապրել են նաև մեծ թվով հայեր։ Այնտեղ 1894-ին կաթողիկոսի կոնդակով բացվել է հայկական միդասյան ծխական դպրոց, որը ցույց է տրված նաև թեմի հայ դպրոցների 1895-ի ցուցակում։

Այս դպրոցին ևս վիճակված չի եղել երկար ապրել։ 1895-ի փետրվարի 24-ին կառավարական օրգանների կարգադրությամբ այն փակվել է, իսկ ուսուցիչը դատի է տրվել՝ «որպես գաղտնի մասնավոր դպրոց պահողի»։ Նահանգապետի դեմ բողոքել են Ելենենդորֆի հայ բնակիչները, դպրոցի հոգաբարձությունը, թեմական տեսուչը, թեմի հոգևոր առաջնորդը և ուրիշներ։ Բայց ապարդյուն։ Գանձակի նահանգապետը և Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուն հորինել են իրենց արարքը արդարացնող պատճառաբանություն։ Նրանք հայտնել են, որ այդ դպրոցի բացումը ապօրինի է, քանի որ Ելենենդորֆում հայ եկեղեցի չկա, մինչդեռ դպրոցը պետք է պահվի միայն եկեղեցական գումարներով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 11, ց. 1, գ. 326, թ. 1—5, գ. 297, թ. 27։

Զուռնաբաղ գյուղի ծխական դպրոց

Գանձակի գավառի Զուռնաբաղ գյուղի ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ 1891-ին այն գործել է՝ լինելով միդասյան արական դպրոց։

Հետագա տասնամյակների տեղեկագրերում չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 3997, թ. 7.

Էրքեջ (Էրքաջ) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1908-ին, որպես միդասյան արական դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 2 բաժանմունք և 52 աշակերտ (բոլորը տղաներ)։ 1914-ին ունեցել է 1 ուսուցիչ, 30 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 24;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61;
Մ. Թարխուդարյան, «Արցախ», էջ 250։

Խաչակապ գյուղի Ս. Թարգմանիչների վանքի դպրոց

«Արձագանք» լրագրի հոդվածներից մեկում նշվում է, որ Գանձակի նահանգի Ս. Թարգմանիչների վանքը հիմնվել է «5-րդ դարում նույն ինքն Ս. Մեսրոպի ներկայությամբ», որը հնուց կրթության միակ աղբյուրն է եղել մերձակա գյուղերի համար։ Ավելի նոր մտքով դպրոց ունեցել է այդ վանքը 1872 թվականից», ուր Թեոդորոս վանականի ղեկավարությամբ երեխաները սովորել են հայոց լեզու (աշխարհաբար և գրաբար), ժամերգություն, թվաբանություն և ռուսաց լեզու։

Այդ վանական դպրոցը 1873-ին և 1878-ին ունեցել է մոտ 30 աշակերտ (մեծ մասը, իհարկե, խաչակապ գյուղից)։ Գործել է մինչև 1884 թվականը, իսկ 1885-ին փակվել է կառավարության կողմից։ Տասնամյակներ շարունակ այս դպրոցին այլևս չենք հանդիպում։ Գիտենք միայն, որ 1911-ին գործել է՝ լինելով միայնա դպրոց, մեկ դասարանով։ Հավանաբար, այդ ժամանակ էլ վերաբացվել է։

«Արձագանք», 1884, № 4, «Մանկավարժական թերթ», 1878, № 6, էջ 10—12, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 28, գ. 205, գ. 50, թ. 68, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1583, թ. 49;
Հ. Տեր-Միրաքյանի ֆոնդ;
«Նոր դպրոց», 1911, № 15—16, էջ 33։

Կիրանց գյուղի դպրոց

Կիրանց գյուղի դպրոցը 1911-ին գործել է։ Այդ թվականին այնտեղ կազմակերպվել է բաց դաս՝ հարևան գյուղերի դպրոցների ուսուցիչների համար։ Ուրեմն պետք է բացված լինի ավելի վաղ։

«Նոր դպրոց», 1911, № 15—16, էջ 33։

Կովալենկա (Հայ) գյուղի ծխական դպրոց

Գանձակի գավառի Հայ Կովալենկա գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է նահանգական վարչության կողմից 1914-ի սկզբներին կազմված մի տեղեկագրում, ուր նշվում է, որ դպրոցը ունեցել է 3 ուսուցիչ, 75 աշակերտ (հասկանալի է, որ այսպիսի դպրոցը պետք է ավելի վաղ գոյություն ունեցած լինի)։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61։

Ղարաբուլաղ գյուղի ծխական դպրոց

Կովկասի հայոց բարեգործական ընկերության 1908, 1909 և 1912 թթ. տեղեկագրերում նշված է ընկերության Գանձակի ճյուղի նպաստով պահվող հայաբնակ Ղարաբուլաղ գյուղի ծխական դպրոցը։ Այն 1909-ին ունեցել է երկու բաժանմունք՝ 52 աշակերտով (15 աղջիկ), իսկ 1912-ին՝ երեք բաժանմունք, ընդամենը 33 աշակերտով (բոլորը տղաներ)։

Եթե 1909-ին այս դպրոցն ունեցել է երկու բաժանմունք, ուրեմն պետք է բացված լինի 1907-ից ոչ ուշ։

Կովկասի հայոց բարեգ. ընկ. 1909 և 1912 թթ. տեղեկագիր, (էջեր՝ 32 և 30),

«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 84։

Ղարադաղլու կամ Խանքյանդ գյուղի հայկական ծխական դպրոց

Մ. Բարխուդարյանն իր «Արցախ» գրքում ցույց է տալիս Ղարադաղլու կամ Խանքյանդ գյուղը՝ Գանձակի (Ելիզավետպոլի) գավառում և Խանքյանդ ավանը՝ Շուշու գավառում։ Տպագիր տեղեկատու աղբյուրներում հայաբնակ Ղարադաղլու գյուղ ցույց է տրվում միայն մեկը՝ Ելիզավետպոլի կամ Գանձակի գավառում (այդ անունով գյուղեր շատ են եղել, բայց ոչ հայաբնակ)։ Հայ եկեղեցիներ ունեցող բնակավայրերի ցուցակում ևս (1901 թիվ) Ղարադաղլու հայաբնակ գյուղ ցույց է տրված

Ելիզավետպոլի գավառում։ Սակայն հայ դպրոցները պետության ձեռքը վերցնելու կապակցությամբ 1895-ին կազմված մի շարք պաշտոնական փաստաթղթերում Ղարադաղլու գյուղը ցույց է տրված Ղազախի գավառում, մի բան, որ մեր կարծիքով, թյուրիմացություն է։ Դա առաջացել է այդ թվականին Ելիզավետպոլի նահանգապետի սառորագրությամբ Կովկասի կառավարչապետին ուղարկած մի գրությունից, որտեղ Ղարադաղլու գյուղը (և նրա դպրոցը) ցույց է տրված Ղազախի գավառում։

Համոզված լինելով, որ դա թյուրիմացություն է, մենք Ղարադաղլու գյուղի ծխական դպրոցը դնում ենք Գանձակի գավառի դպրոցների շարքում։

Ինչպես նշեցինք, Ղարադաղլու գյուղի հայկական ծխական դպրոցը մեզ առաջին անգամ հանդիպել է 1895-ի հունվարին Ելիզավետպոլի նահանգապետի կողմից Կովկասի գլխավոր կառավարչապետին ուղարկված հայ դպրոցների ցուցակում։ Այդ ցուցակից իմացվում է, որ այն եղել է տեղի Ս. Պետրոս եկեղեցուն կից, ունեցել է ընդամենը մի դասարան և պահվել է գյուղի հասարակության հատկացրած միջոցներով, եկեղեցու եկամուտներով ու սովորողների ուսման վարձով։ Այլ փաստաթղթերից իմանում ենք, որ այդ դպրոցը ևս մտցվել է փակման ենթակա դպրոցների շարքը։ Եվ, իհարկե, 1896-ին այն փակվել է։ Թե երբ է վերաբացվել, մենք չգիտենք, բայց հայտնի է, որ 1911-ին այն գործել է, գտնվելով բավականաչափ անհրապույր վիճակում։ Նրա այդ տխուր գրությունը նկարագրված է «Նոր դպրոց» ամսագրում։

Մ. Բարխուդարյան. «Արցախ», էջ 53; «Կովկասի կալենդար», 1915, էջ 134; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 42; թ. 73; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 199, թ. 17—23; «Նոր դպրոց», 1911, № 9—10, էջ 31։

Ղուշչի գյուղի ծխական դպրոց

Ղուշչի գյուղի ծխական դպրոցի բացման թվականը մենք չգիտենք։ Հայտնի է, որ 1914-ին այն գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 63 աշակերտ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 205։

Միրզիկ (նաև Միրզովկա՞) գյուղի ծխական դպրոց

Վրաստանի հայոց թեմի մեջ մտած Գանձակի գավառի Միրզիկ հայաբնակ գյուղի ծխական դպրոցն առաջին անգամ հանդիպում է 1905—06 թթ. բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ 1907—08 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց՝ 44 աշակերտով (6 աղ-

ջիկ)։ 1908—1909 ուս. տարում աշակերտների թիվն իջել է 25-ի (4 աղջիկ)։

Հետագա տարիների փաստաթղթերում Միրզիկ գյուղի դպրոցը մեզ չի հանդիպել։ «Արարատ» ամսագրի 1917 թ. հունիս-հուլիսի համարից մենք իմանում ենք, որ կաթողիկոսը այդ թվականի մայիսին թույլ է տվել Վրաստանի թեմի Միրզովկա գյուղում բաց անել հայոց ծխական դպրոց։ «Կավկազսկի կալենդարի» 1907 և 1915 թթ. գրքերում (որտեղում նշված են Կովկասի և Անդրկովկասի բոլոր բնակավայրերը) մենք չգտանք Միրզովկա գյուղը։ Մնում է ենթադրել, որ դա նույն թեմի մեջ մտնող Միրզիկ գյուղն է, որի դպրոցը, ինչպես ասացինք, 1908—1909 ուս. տարուց հետո այլևս չի երևում։ Եթե իրոք Միրզիկը և Միրզովկան նույն գյուղն են, ուրեմն նրանց դպրոցը 1909-ից հետո ինչ-ինչ պատճառներով փակվել և վերաբացվել է միայն 1917-ին։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 9; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 40; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 70; «Արարատ», 1917, № 6—7, էջ 417։

Մուրութ գյուղի ծխական դպրոց

Գանձակի գավառի Մուրութ հայաբնակ գյուղի ծխական դպրոցը ևս ցույց է տրված Բաքվի հայ մշակութային միության կողմից բացված և նրա միջոցներով պահված դպրոցների ցուցակում, որը հրապարակված է «Նոր դպրոց» ամսագրի 1908 թ. № 4-ում։ Ուրեմն այդ դպրոցը 1908-ին գործել է։ Բացման թվականը մեզ անհայտ է։ Նախորդ տարիների փաստաթղթերում այն չի հանդիպել։

«Նոր դպրոց», 1908, № 4, էջ 84։

Ոսկանապատ գյուղի արական ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը չգիտենք։ 1884-ին եղել է արական միդասյան դպրոց։ 1885-ին փակվել է կառավարության կողմից և, հավանաբար, այլևս չի վերաբացվել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 67։

Զալբլուղ գյուղի հայկական դպրոց

«Արարատ» ամսագրում նշված է, որ 1916-ի նոյեմբերին կաթողիկոսը թույլ է տվել Վրաստանի թեմի Զալբլուղ գյուղում բաց անել հայոց եկեղեցական ծխական դպրոց։

Տեղեկատու աղբյուրներում Զալբլուղ անունով գյուղ մենք չգտանք։

Ելիզավետպոլի (Գանձակի) գավառում հիշատակվում է Զալբուրուն գյուղը, բայց մենք չգիտենք, դա նույն Զալբլու՞ղն է արդյոք։

«Արարատ», 1917, № 1, էջ 9; «Կավկազսկի կալենդար», 1915, էջ 204։

Զարդախլու գյուղի արական ծխական դպրոց

Հիմնվել է 1878-ի մարտ ամսին (մի այլ տեղեկագրով՝ 1876-ին)՝ թեմական տեսչի օգնական Մ. Եպիսկոպոսյանի ջանքերով։ Առաջին ուսուցիչն է եղել Գանձակի հայկական դպրոցի շրջանավարտ Ստեփանոս Տեր-Միքայելյանը։ Ունեցել է մոտ 30 աշակերտ։ 1881-ին աշակերտների թիվը հասել է 60-ի։ 1883-ին փակվել է, 1886-ին (մի այլ փաստաթղթով՝ 1888-ին)՝ վերաբացվել։ 1888-ին ունեցել է 41 աշակերտ։ 1895-ին եղել է միդասյան դպրոց։ 1896-ին փակվել է։ Հետագա տարիների փաստաթղթերում այս դպրոցին այլևս չենք հանդիպել։ Հավանաբար նրա փոխարեն բացվել ու գործել է պետական դպրոց։ Միական դպրոցը վերաբացվել է 1913-ին։

«Մանկավարժական թերթ», 1878, № 2, էջ 63; № 6, էջ 14; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 67; գ. 199, թ. 17—23; գ. 357, թ. 138; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 28; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 7; գ. 1585, թ. 49; ֆ. 12, գ. 1090, թ. 40; գ. 1086, թ. 84; «Արարատ», 1913, № 4, էջ 302։

Զովդաղ (Հացհանգիստ) գյուղի ծխական դպրոց

Գանձակի գավառի Զովդաղ (Հացհանգիստ) գյուղի հայկական ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1914-ին այն ունեցել է 2 ուսուցիչ և 180 աշակերտ։ Այդպիսի խոշոր դպրոցը, անկասկած, պետք է բացված լինի ավելի վաղ, բայց չգիտենք, թե ինչու ցույց չի տրվել համապատասխան փաստաթղթերում։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 61; Մ. Թաքմազյան, «Արցախ», էջ 291։

Ռականց գյուղի արական ծխական դպրոց

1882-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 45 աշակերտ։ Հետագա տարիներին այս դպրոցի հետքերը չեն երևում։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 49։

Քարճատ (Վերին) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ նշվում է հայ դպրոցների 1908—1909 ուս. տարվա ցուցակում։ Եղել է արական դպրոց, թեև այդ ուսումնական տարում 70

աշակերտներից 4-ը եղել են աղջիկներ։ 1911—12 ուս. տարում եղել է 4-ամյա դպրոց՝ 3 դասարանով և 2 ուսուցչով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 38;
Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ, Հ. Տեր-Միրզոյանի ֆոնդ։

Փիր կամ Զագլիկ գյուղի Ս. Ստեփանոս եկեղեցական ծխական դպրոց

Որոշ տվյալների համաձայն այս դպրոցը հիմնվել է 1872-ին, բայց չգիտենք, թե ինչու չի նշված 1873-ի՝ հայկական դպրոցների ընդհանուր տեղեկագրում։

1878-ին այնտեղ ուսուցչություն է արել Հայոնի Ալեքսանդր Արարատյանը, որին ժողովուրդը շատ է սիրել և օգնել։ «Աշակերտաց թիվը հասնում է մինչև 90—95։ Մեծ հառաջադիմություն և զարգացումն տեսա մանուկների մեջ. գոքա զվարթ և ուրախ պատասխանում էին մեր ամեն մի առաջարկած հարցին, պատասխանում էին պարզ, անձերկյուղ, հասկանալով. այդ ամենը հայոնի կերպով ապացուցանում էր, թե ինչ ատոհանի բարեխղճությամբ վարում է վարժապետը յուրյան ստանձնած պաշտոնը»— գրում է թեմական տեսուչ Հակոբ Տեր-Հովհաննիսյանը («Մանկ. թերթ») 1878, № 6, էջ 12—13)։ Դպրոցն ունեցել է հարմար շենք՝ 4 դասասենյակից բաղկացած։ 1882-ին ունեցել է 2 ուսուցիչ, 65 աշակերտ։ 1885-ին փակվել է, 1887-ի՝ վերաբացվել։ 1888-ին ունեցել է 54 աշակերտ։ 1896-ի սկզբին դարձյալ միդասյան արական դպրոց է եղել։ Նույն թվականին փակվել է և վերաբացվել 1906-ին։ 1908—1909 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 61 տղա և 37 աղջիկ։ 1911—1912 ուս. տարում եղել է 5-ամյա դպրոց՝ 3 դասարանով և 2 ուսուցչով։ 1914-ին ունեցել է 2 ուսուցիչ և 75 աշակերտ։ 1916-ին մասնակի նպաստ է ստացել թեմի դպրոցական ֆոնդից։

«Մանկ. թերթ», 1878, № 6, էջ 12—13; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 28; գ. 50, թ. 67, գ. 196, գ. 11, թ. 1—23; գ. 357, թ. 143; գ. 182, թ. 40; գ. 199, թ. 17—23; ֆ. 22, թ. 86; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 5717, թ. 9; գ. 1585, թ. 49; գ. 3997, թ. 7; ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 73; ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 61; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 28;
Հ. Տեր-Միրզոյանի ֆոնդ; «Արարատ», 1888, էջ 129; 1916, էջ 13։

Ուլու-Կարաբեկ գյուղի (Ելիզավետպոլի նահանգ) ծխական դպրոց

Ելիզավետպոլի նահանգի Զիլանշիրի գավառի Ուլու-Կարաբեկ հայաբնակ գյուղում 1911-ին գործել է ծխական դպրոց, որի մասին, ցավոք, այլ տեղեկություններ չունենք։

«Նոր դպրոց», 1911, № 11—12, էջ 35։

ՂԱԶԱԽԻ ԳԱՎԱՌ (ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳ)

Աղդան (Վերին) գյուղի (այժմ՝ Գանձաքար, Իջևանի շրջ.) եկեղեցական ծխական դպրոց

Մեծ չէ Վերին Աղդան գյուղի ծխական դպրոցի պատմությունը, բայց անշափ հետաքրքիր է և հուզիչ։ Ներկա աշխատության բնույթը և ծավալը թույլ չեն տալիս այստեղ օգտագործել այդ դպրոցի բացման ու փակման վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած նյութերն ու փաստաթղթերը...

Եղած փաստաթղթերից իմանում ենք, որ Վերին Աղդան գյուղի եկեղեցական ծխական դպրոցը հիմնվել է 1896 թ. հունվար ամսին՝ տեղի բնակչության համախառն որոշմամբ և Ամենայն հայոց կաթողիկոս Երիմյան Հայրիկի հատուկ կարգադրությամբ։ Որոշվել է նաև, որ այն պետք է պահվի նույն գյուղի երկու եկեղեցիների ու նրա շրջակայքում եղած սրբավայրերի եկամուտներով։

Նույն թվականին էլ այդ դպրոցը փակվել է։

Մեծ դժվարություններ հաղթահարման գնով միայն հաջողվում է նորից բացել Վերին Աղդան գյուղի ծխական դպրոցը, բայց դարձյալ ոչ երկար ժամանակով։

1897-ի մայիսի 25-ին Վերին Աղդան գյուղի երկու եկեղեցիների երեցփոխները կաթողիկոս Երիմյանին գրել են, որ այժմ Լոռու, Շամշադինի և Ղազախի գավառների մեջ միակ բաց եկեղեցական ծխական դպրոցը իրենցն է, բայց նա էլ իր գոյությունը պահպանելու համար միջոցներ չունի, քանի որ իրենց եկեղեցիները զրկված են որևէ գումար տրամադրելու հնարավորությունից (հայ դպրոցները փակելիս, կառավարությունը սկզբում պատճառ է բռնում, որ այդ դպրոցները կոչվում են եկեղեցական ծխական, բայց պահվում են ոչ թե հայ եկեղեցիների, այլ ժողովրդի և նվիրատուների միջոցներով, ուստի և պետք է ենթարկվեն պետական դպրոցական իշխանություններին։ Հետո, երբ մի շարք վայրերում բացվեցին զուտ եկեղեցական գումարներով պահվող դպրոցներ, կառավարությունն այդ գումարները վերցնում էր պետական դպրոցներ հիմնելու և պահելու համար։

1897-ից հետո հայկական ծխական ոչ մի դպրոց այլևս չէր գործում, և, իհարկե, փակված էր նաև Վ. Աղդանի դպրոցը։

Այն վերաբացվել է 7—8 տարուց հետո, հավանաբար, 1906-ի աշնանը։ 1907—1908 ուսումնական տարում եղել է միդասյան երկսեռ դպրոց, ունենալով 2 ուսուցիչ և 66 աշակերտ (7 աղջիկ), 1908—1909 ուս. տարում սովորողների թիվը իջել է 59-ի (8 աղջիկ)։ 1911—12 ուս.

տարում եղել է 6-ամյա դպրոց։ Պահվել է հասարակության միջոցներով (տարեկան 600 ռ.) և ԿՀԲԸ-ի նպաստով։

1914-ին ունեցել է 4 ուսուցիչ, 80 աշակերտ։ 1883-ից Վ. Աղդան գյուղում գործել է պետական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 16; գ. 151, թ. 1; գ. 182, թ.40; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61; ֆ. 422, ց. 1, գ. 5452, թթ. 6, 10, 20—21, 24, 30, 40—41, 44, 49—54;

«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 70, 1911, № 31—32, էջ 29;

2. Տեր-Միրաքյանի կազմած տեղեկագիրը՝ «Վրաստանի թեմի ծխական դպրոցները 1911—12 թթ.»;

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 2018, թ. 30։

Աչաջուր (Աչասու) գյուղի (Իջևանի շրջան) ծխական դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագիրը 1873-ին գրել է, որ Թիֆլիս—Երևան ճանապարհից դեպի արևմուտք գտնվող «Հաչաջուր գյուղում չկա ոչ ծխական, ոչ մասնավոր ուսումնարան։ Մեղավորները քահանաներն են։ Արխիվային փաստաթղթերի համաձայն, այդ գյուղի դպրոցը հիմնվել է 1890-ին, եղել է միդասյան արական դպրոց՝ Ս. Աստվածածին եկեղեցուն կից։ 1892—93 ուս. տարում ունեցել է 39 աշակերտ։ 1896-ի սկզբին եղել է միդասյան երկսեռ դպրոց, նույն թվականին փակվել է։ Վերաբացվել է, հավանաբար, 1906-ին։ 1908—09 ուս. տարում ունեցել է 64 աշակերտ (12 աղջիկ), մի այլ փաստաթղթով՝ 40 աշակերտ (6 աղջիկ), 1914-ին՝ 2 ուսուցիչ, 68 աշակերտ։ Նպաստ է ստացել ԿՀԲԸ-ից։

«Մեղու Հայաստանի», 1873, № 34; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 106, թ. 1—23; գ. 199, թ. 17—23; գ. 357, գ. 241, թ. 52; գ. 102, թ. 40; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3397, թ. 6; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61; «Циркуляр», 1890, № 10, էջ 559; ԿՀԲԸ, 1909 թ. տեղեկագիրք, էջ 34։

Բարանա (այժմ՝ Նոյեմբերյան, Նոյեմբերյանի շրջան) գյուղի ծխական դպրոց

Ըստ թեմական տեսչի տեղեկագրի՝ այս դպրոցը բացվել է 1894-ին, եղել է արական միդասյան դպրոց։ 1895-ի հոկտեմբերին Ելիզավետպոլի նահանգապետը այդ և մի շարք այլ դպրոցների դոյության մասին իրազեկ է դարձրել Կովկասի գլխավոր կառավարչատին։ 1896-ին փակվել է և 1906-ին՝ վերաբացվել։ 1907—08 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 60 տղա և 20 աղջիկ։

1908—09 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 60-ի (15 աղջիկ)։ 1911—12 ուս. տարում եղել է քառամյա դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 141; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 41;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 70; № 3, էջ 84; 1909, № 6—7, էջ 141;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 9; ֆ. 12, գ. 1090, թ. 40;
Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ Հ. Տեր-Միրաքյանի ֆոնդ։

Բաշքենդ գյուղի (այժմ՝ Արծվաշեն, Կրասնոսելսկի շրջ.) դպրոց

Հիմնադրման թվականը մեզ անհայտ է։ Հավանաբար այն բացվել է որպես պետական դպրոց, իսկ հետո ազգայնացվել է։

1918—1919 ուս. տարում գործել է, լինելով միդասյան արական տարրական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 52։

Բերդ (Շամշադին, Թովուզդալա) գյուղի ծխական դպրոց

Արխիվային փաստաթղթերում այս գյուղը հիշատակվում է Շամշադին, Թովուզդալա և Բերդ անուններով (այժմ Բերդը Շամշադինի շրջանային կենտրոնն է)։

Թովուզդալա գյուղի անունով դպրոց է հիշատակվում 1849 թվականից (տես Մ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19-րդ դ. I կեսին», էջ 263)։

Մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերում Շամշադին գյուղի ծխական դպրոցը հանդիպում է 1870-ական թվականների սկզբներից։ 1871-ի մի տեղեկագրի համաձայն այս դպրոցն ունեցել է 1 ուսուցիչ, 30 աշակերտ։ Շամշադինի դպրոցը հիշատակված է նաև 1873-ի երկու այլ փաստաթղթերում, իսկ նույն թվականի մի ուրիշ տեղեկագրում նշված է Շամշադինի գավառակի Բերդ գյուղի դպրոցը (դարձյալ 1 ուսուցիչ և 30 աշակերտ)։

«Մեղու Հայաստանի» լրագիրը ևս խոսելով «Շամշադինի գավառակի» կրթական կյանքի մասին, 1873-ի իր համարներից մեկում գրել է. «Միայն Բերդ գյուղի Մովսես քահանան, յուր մոտ հավաքելով 30-ի չափ երեխա, սովորեցնում է գրել-կարդալ»։

Հետագա շատ տարիների ու տասնամյակների բազմաթիվ փաստաթղթերում ու տեղեկագրերում Բերդ գյուղի ծխական դպրոցն այլևս չի նշվում։ Ամենայն հավանականությամբ այն փակվել է և նրա փոխարեն բացվել է պետական դպրոց։ «Զանգակ» օրաթերթից իմանում ենք, որ 1907—08 ուս. տարում Շամշադինի վիճակում եղել է ընդամենը 5 դպրոց, որից «Ղուլալի, Ղրղի և Բերդ գյուղերում՝ մինիստերական և Թո-

վուզ ու Վերին Կարմիր Աղբյուր գյուղերում՝ եկեղեցական ծխական», այսինքն՝ հայկական։ Թովուղալա գյուղում 1918—19 ուս. տարում գործել է երկդասյան դպրոց։ Մեր կարծիքով դա հենց նախկին պետական դպրոցն է, որն այդ թվականներին արդեն ազգայնացվել էր։

Ինչպես երևում է, Բերդ գյուղում դեռևս 80-ական թվականներին գործել է նաև աղջիկների դպրոց։ Այսպես, «Արձագանք» լրագիրը 1885-ի համարներից մեկում տպագրված Ճանապարհորդական նոթերում գրել է, որ Բերդ գյուղի պարապում գտնվող և իրենից հնություն ներկայացնող շենքերից մեկը «ոմանք անվանում էին աղջկանց կրթարան...»։

ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 28; գ. 37, թ. 5; ֆ. 75/207, գ. 5, թ. 53; ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 19;

«Մեղու Հայաստանի», 1883, № 17, «Արձագանք», 1885, № 2, «Զանգակ», 1908, № 3։

Գոշավանք (այժմ՝ Գոշ, Դիլիջան քաղ.) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է հայ դպրոցների 1911—12 ուս. տարվա տեղեկագրում։ Ունեցել է 1 ուսուցիչ, 2 դասարան, 36 աշակերտ, 1914-ին՝ 2 ուսուցիչ, 37 աշակերտ։ 1916-ին նպաստ է ստացել «դպրոցի շենքն ավարտելու և դասավանդությունն սկսելու համար։ Մասամբ պահվել է ԿՀԲ ընկ. հաշվին։

ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 61; Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ; «Արարատ», 1916, էջ 629; ԿՀԲ ընկ. 1912 թ. տեղեկագիրը, էջ 22։

Դիլիջանի արական ծխական դպրոց

Հիմնադրման ճիշտ տարեթիվը մեզ անհայտ է։ Վրաստանի տեսչի մի տեղեկագրում նշված է 1876-ը, սակայն դա ճիշտ չէ, քանի որ այդ դպրոցը դեռևս 1871-ին և 1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 30 աշակերտ։ «Մեղու Հայաստանի» լրագիրը 1873 թ. գրել է, որ դեռևս երկու տարի առաջ Դիլիջանում կար մի ծխական ուսումնարան՝ 40 աշակերտով, բայց այն այժմ փակվել է շենքի պատճառով։

Դիլիջանի ծխական դպրոցին նվիրված իր հոդվածում («Նոր դպրոց», 1913, № 1, էջ 78—80) Հար. Մելքումյանը գրում է. «Դիլիջանի հայոց եկեղեցական ծխական դպրոցը հիմնվել է 60-ական թվականներին և հիմնադրման օրից եղել է խառը՝ երկու սեռի մանուկների համար։ Որ իրոք, այն 60-ական թվականներին պետք է բացված լինի, մենք ևս համաձայն ենք, բայց որ իրոք այդ դպրոցը «հիմնարկության օրից» երկսեռ դպրոց է եղել, իրականությանը չի համապատասխանում։ Տասնամյակներ շարունակ այն եղել է միայն արական դպրոց, և աղջիկ չի սովորել։ Այսպես, պաշտոնական տվյալներով 1877 և 1888 թթ. այն եղել է արական միդասյան դպրոց, ուր սովորել են համապատասխանաբար՝ 42 և 44 տղաներ (և ոչ մի աղջիկ)։ Նույնը նաև 1891-ին։

Ավանդվել են՝ հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն, գծագրություն, վայելչագրություն, երգեցողություն և կրոնագիտություն։

1896-ի սկզբներին այս դպրոցը եղել է երկսեռ երկդասյան դպրոց և նույն թվականին փակվել է (առաջին փակումը տեղի է ունեցել 1885-ին)։ Վերաբացվել է 1906-ին որպես երկսեռ դպրոց։ Զգիտենք, թե ինչու «Նոր դպրոց» ամսագիրը Վրաստանի թեմի հայ դպրոցների 1907—08 ուս. տարվա ցուցակում Դիլիջանը ցույց է տվել Գանձակի գավառում, մինչդեռ իրականում այն մտել է Ղազախի գավառի մեջ։ Այդ ուս. տարում եղել է միդասյան երկսեռ դպրոց՝ 164 աշակերտով (60 աղջիկ)։ 1908—09 ուս. տարում ունեցել է 118 տղա և 58 աղջիկ։ 1911—12 ուս. տարում եղել է 6-ամյա, իսկ 1918—19 ուս. տարում՝ երկդասյան դպրոց։ 1919—20 ուս. տարում վեր է ածվել գիմնազիայի։

«Մեղու Հայաստանի», 1872, № 33; ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 28; գ. 557, թ. 155; գ. 50, թ. 17—19; գ. 199, թ. 17—23; գ. 106, գ. 182, թ. 40; ֆ. 75/207, գ. 5, թ. 52—55; ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22; գ. 8717, թ. 6; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 70; 1913, № 1, էջ 78—80; «Արարատ», 1878, ժԱ, էջ 453; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 29; Տեղեկագիր Երևանի թեմի եկեղեցական ծխական դպրոցների, 1911—12 թթ.։

Դիլիջանի աղջիկների ծխական դպրոց

Վրաստանի թեմի առաջնորդը 1890-ի օգոստոսին մի հատուկ գրությամբ դիմում է կաթողիկոսին, հայտնելով, որ տիկիններ Կատարինե Հարությանցը և Մարիամ Կամսարականը, որոնք «ազնիվ, բարեպաշտ, ջերմեռանդ և միանգամայն վստահելի անձնավորություններ են», դիմել են թեմական տեսչությանը և խնդրել թույլ տալ իրենց խնամակալությամբ Դիլիջան գյուղում բաց անելու աղջիկների միդասյան դպրոց։ Նրանք խոստացել են այդ դպրոցը պահել թատերական ներկայացումներից ու պարահանդեսներից ստացված եկամուտներով, ամառանոցատնց հարուստ հայերից և աշակերտուհիներից գանձված գումարներով։

Կաթողիկոսի թույլտվությամբ Դիլիջանի աղջիկների դպրոցը բացվել է 1890-ի աշնանը՝ Ս. Աստվածածին եկեղեցու գավթում։

1892—93 ուս. տարում ունեցել է 26 աշակերտուհի, 1896-ի սկզբներին միացած է եղել տեղի արական դպրոցին, սրա հետ էլ նույն թվականին փակվել է կառավարության կողմից։

Վերաբացվել է 1905-ին՝ արական դպրոցի հետ միացած։

ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 56, գ. 241, թ. 23; գ. 106, թ. 24—46; գ. 11, թ. 1—23; գ. 357, թ. 155; գ. 199, թ. 17—23; «Արարատ», 1890, № 18, էջ 696։

Դովեղ (Դվեղ, Նոյեմբերյանի շրջան) գյուղի ծխական դպրոց

Նոյեմբերյանի շրջանի Դովեղ (Դվեղ) գյուղը նախկինում մտել է Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի մեջ։

1891-ին այս գյուղում գործել է միգասյան արական ծխական դպրոց, որի մասին հետագա տարիների արխիվային փաստաթղթերը տեղեկություններ չեն տալիս։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 3997, թ. 7;
Ս. Բարխուդարյան, «Արցախ», էջ 39;

Թաթլու (Հայ Թաթլի, Թաթլիքենդ) գյուղի ծխական դպրոց

Թաթլու (Թաթլիքենդ կամ Հայ Թաթլի) գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է Վրաստանի թեմի հայ դպրոցների 1908—1909 ուս. տարվա տեղեկագրում։ Հավանաբար 1908-ին էլ հիմնվել է, քանի որ նախորդ տարիների փաստաթղթերում չի երևում։ 1909-ին նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ 1911—12 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց՝ 34 աշակերտով (4 աղջիկ)։

«Նոր դպրոց» ամսագրի 1909 թ. № 6—7-ում Թաթլու գյուղը և նրա դպրոցը ցույց են տրված Թիֆլիսի նահանգում։ Դա, իհարկե, թյուրիմացություն է։ Թաթլիքենդը կամ Հայ Թաթլուն մտել է Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի մեջ, իսկ հետագայում բոլորովին դատարկվել է. նրա բնակիչները փոխադրվել են ներկա Շամշադինի շրջանի Պառավաքար գյուղը։ Բնական է, որ գյուղի հետ փոխադրվել է նաև դպրոցը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 43;
«Նոր դպրոց», 1909, № 6—7, էջ 141։

Թալա (Թալաքենդ) գյուղի (Իջևանի շրջան) ծխական դպրոց

Հայ հոգևոր իշխանությունները 1910 թ. Կովկասի քաղաքացիական իշխանություններին պաշտոնապես հայտնել են, որ այդ թվականի հոկտեմբեր ամսին Թալա գյուղում բացվել է հայկական եկեղեցական ծխական դպրոց։ 1912-ին եղել է եռամյա դպրոց՝ 34 աշակերտով (10 աղջիկ)։

1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, 40 աշակերտ։

Դպրոցը բացվել և պահվել է Բաքվի հայ մշակութային միության կողմից։ 1916-ին նպաստ է ստացել նաև թեմի դպրոցական ֆոնդից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17, թ. 11; գ. 264, թ. 61;
«Նոր դպրոց», 1910, № 12, էջ 109; «Արարատ», 1916, էջ 327։

Թովուզ (կամ Թուզքենդ) գյուղի ծխական դպրոց

Թեմական տեսչի մի տեղեկագրում նշված է, որ Թովուզ գյուղի դպրոցը բացվել է 1890-ին։ Դա հաստատվում է նաև նրանով, որ կաթողիկոսը նույն թվականին թույլ է տվել բացել այդ գյուղի ծխական դպրոցը և հաստատել է նրա հոգաբարձության կազմը։ 1892—93 ուս. տարում այն եղել է միգասյան արական դպրոց՝ Ս. Աստվածածին եկեղեցուն կից։ Սովորել են 17 հոգի։

Պետական օրգանների միջև տեղի ունեցած գրագրություններում (1894, 1896) այս դպրոցը հիշատակվում է Թուզքենդ գյուղի անունով, որ միևնույն Թովուզ գյուղն է։ Այսպես, օրինակ, փոխարքայի գրասենյակում գտնված հայ դպրոցների ընդհանուր ցուցակում, որտեղ նշումներ են կատարված, թե որ դպրոցները պետք է փակվեն և որոնք թողնվեն հայ հոգևոր իշխանությունների իրավասության տակ, հիշատակվում է Թուզքենդ գյուղի դպրոցը, որը փակման էր դատապարտված։ Բրոք, 1896-ի կեսերին այն փակվել է։ Վերաբացվել է 1906-ին։ 1907—08 ուս. տարում եղել է միգասյան արական դպրոց՝ 60 աշակերտով, 1909-ին ունեցել է 102 աշակերտ (7 աղջիկ)։ Սովորողների թիվը նույնն է եղել նաև 1914-ին։ Նպաստ է ստացել ԿՀԲ ընկերությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 106, գ. 241, թ. 50; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 40;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 42, և 73; ֆ. 13, գ. 264, թ. 61; ֆ. 422, գ. 8717, թ. 9; «Արարատ», 1890, № 12, էջ 696; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 70։

Խաչթառակ գյուղի ծխական դպրոց (Իջևանի շրջան)

Կովկասի փոխարքայությանը հայ հոգևոր իշխանությունների ուղարկած պաշտոնական տեղեկագրի համաձայն Խաչթառակ գյուղում 1910-ին բացվել է հայ եկեղեցական ծխական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17; ֆ. 35, ց. 1, գ. 634, թ. 1—3։

Կարմիրաղբյուր (Ներքին Ղալբուլաղ) գյուղի (Շամշադինի շրջան) ծխական դպրոց

1909-ին ունեցել է 3 բաժանմունք, ուրեմն պետք է բացված լինի 1906-ից ոչ ուշ։ Ունեցել է 48 աշակերտ, իսկ 1914-ին՝ 2 ուսուցիչ, 29 աշակերտ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61; ԿՀԻ բնկ. 1909 թ. տեղեկագիր, էջ 33։

Կարմիրաղբյուր (Վերին) գյուղի (Շամշադինի շրջան) ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է հայ դպրոցների 1908—1909 ուս. տարվա ցուցակում։ Եղել է արական դպրոց, ունենալով 1 ուսուցիչ և 45 աշակերտ։ «Ջանգակ» թերթի վկայությամբ այդ դպրոցը գործել է նաև 1907—1908 ուս. տարում։ 1909 թ. «Նոր դպրոցը» հաղորդել է, որ Վերին Կարմիրաղբյուր գյուղի դպրոցը սկսել է գործել կանոնավոր, աշակերտների թիվը հասել է 70-ի, հրավիրվել է երկրորդ ուսուցիչ։ Միաժամանակ ամփոփելը գրել է, որ դպրոցը եկամտի աղբյուրներ չունի. «ժողովուրդը անտեսապես ուժասպառ լինելով, իր միակ հույսը դրսի նպաստների վրա է դրել»։ Մասնակի նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 41; ՍՍՀՄ ԳԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 53; «Ջանգակ», 1908, № 3; «Նոր դպրոց», 1909, № 1, էջ 88; Մանկ. գիտ. թեսֆիսների արխիվ՝ Հ. Տեր-Միրաքյանի ֆոնդ։

Կոթի գյուղի (այժմ՝ Ճավարշավան, Նոյեմբերյանի շրջան) ծխական դպրոց

Թեմական տեսչի տեղեկագրի համաձայն այս գյուղի դպրոցը հիմնվել է 1893-ին։ Եղել է միդասյան արական դպրոց։ 1896-ի սկզբներին գործել է և նույն թվականին էլ փակվել կառավարության կողմից։ Հայ դպրոցների վերաբացումից (1905) հետո կազմված տեղեկագրերում չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 145։

Կողբ (Նոր Կողբ) գյուղի (Նոյեմբերյանի շրջան) ծխական դպրոց

Մ. Բարխուդարյանը գրում է, որ Նոր Կողբ գյուղի «բնակիչք տեղափոխված են Արարատյան նահանգի Կողբ գյուղիցն, վասն որո պատճառ են միևնույն գյուղանունը»։ Կողբ գյուղը կոչվել է նաև Կուլբի (ռուսական աղբյուրներում՝ Кульпи)։

Կողբի ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Վրաստանի Թեմի առաջնորդի կողմից 1896-ին կազմված մի տեղեկագրում նշված է, որ Կողբ գյուղի միդասյան արական դպրոցը բացվել է 1894-ին, սակայն մեր ձեռքի տակ եղած նյութերը լիովին հերքում են այդ բանը։

Մեզ հայտնի է, որ դեռևս 1873-ին գումարներ են հավաքվել այդ գյուղի դպրոցի համար շենք կառուցելու նպատակով։ Եթե նկատի ունենանք, որ այն ժամանակներում, որպես կանոն, դպրոցի համար շենք էին կառուցում միայն այն դեպքում, երբ այդ դպրոցը տարիներ շարունակ արդեն գործել էր, և գյուղացիները գիտակցել էին նրա օգտակարությունն ու անհրաժեշտությունը, ապա պետք է կարծել, որ Կողբի դպրոցը 1873-ից առաջ գոյություն է ունեցել։ Հաստատապես հայտնի է, որ այդ դպրոցը 1881-ին գործել է, ունենալով մեկ ուսուցիչ, 66 աշակերտ։ Գործել է նաև 1884-ին, իսկ 1885-ին փակվել է։ Վերաբացվել է, համանաբար, 1886-ի աշնանը։ 1888—1889 ուս. տարում ունեցել է երկու բաժանմունք՝ 30 աշակերտով։ 1892-ին դպրոցի համար կառուցվել է նոր շենք, ուրեմն այն ժամանակ ևս գործել է։ Շենքը կառուցել են տեղացի Տեր-Բարսեղյանց հայր և որդիները։ Հայ դպրոցների բռնագրավման կամ փակման կապակցությամբ 1895-ի հոկտեմբերին Կովկասի գլխավոր կառավարչապետի անունով ուղարկած իր գրության մեջ Ելիզավետպոլի նահանգապետը նշել է նաև Կուլբի (Кульпи) գյուղի դպրոցը։ 1896-ին եղել է միդասյան արական դպրոց։ Նույն թվականին էլ երկրորդ անգամ փակվել է կառավարության կողմից։ Անկասկած, նրա փոխարեն բացվել է պետական դպրոց։ Ահա թե ինչու ծխական դպրոցը չի երևում հետագա շատ տարիների տեղեկագրերում։

1918—19 ուս. տարում պետական դպրոցը ազգայնացվել է և եղել է հայկական երկդասյան դպրոց։

«Մեղու Հայաստանի», 1873, № 34; Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 484;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 65—68; գ. 199, թ. 17—23; գ. 357, թ. 139; ֆ. 75/207, գ. 5, թ. 5; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 1555, թ. 49; ֆ. 12, ց. 7, գ. 1090, թ. 39—40; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 30։

Հախում (այժմ՝ Վարագավան, Շամշադինի շրջ.) գյուղի դպրոց

Շամշադինի շրջանի Հախում գյուղում 1918—19 ուս. տարում գործել է միդասյան դպրոց, որի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է, քանի որ նախորդ տարիների ու տասնամյակների տեղեկագրերից և ոչ

մեկում այն չի հանդիպել։ Հնարավոր է, որ այնտեղ մինչ այդ գործած լինի պետական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, 75/207, գ. 5, թ. 52։

Ղազախի հայկական արական ծխական դպրոց

1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 57 աշակերտ։ Հետագա երեք ու կես տասնամյակների ընթացքում արխիվային փաստաթղթերն ու տեղեկագրերը այս դպրոցի մասին ոչ մի լուր չեն տալիս։ Հայտնի է միայն, որ 1907—08 ուս. տարում այն գործել է որպես միդասյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 16 տղա, 15 աղջիկ։ 1908—09 ուս. տարում տղաների թիվը դարձել է 33, աղջիկներինը՝ 25։ 1911—12 ուս. տարում ունեցել է քառամյա դասընթաց։ 1914-ին սովորողների ընդհանուր թիվը եղել է 37։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 5; գ. 182, թ. 40;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 70;
Մանկ. դիտ. ինստիտուտի արխիվ, Հ. Տեր-Միրզոյանի ֆոնդ;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61.

Ղազախի հայ աղջիկների ծխական դպրոց

1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցչուհի և 7 աշակերտուհի։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։ Հավանաբար չի գործել, քանի որ չի երևում ավելի քան 35 տարիների արխիվային փաստաթղթերում։

1907—08 ուս. տարում Ղազախում գործել է հայկական երկսեռ դպրոց, ուր սովորել են 15 հայ աղջիկներ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 5;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 70։

Ղալաչա (այժմ՝ Բերդավան, Նոյեմբերյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

1979-ին տոնվեց այս դպրոցի 100-ամյակը։ Ուրեմն այն պետք է հիմնված լինի անցյալ դարի 70-ական թվականներին։ Սակայն մեր ձեռքի տակ եղած բազմաթիվ պաշտոնական ու ոչ պաշտոնական տեղեկագրերում, ցուցակներում, այլևայլ փաստաթղթերում, ուսումնասիրած տպագիր աշխատություններում ու թերթերում այդ գյուղի դպրոցը 1870—1890-ական թվականներին ցույց չի տրված։ Կարելի է միայն ենթադրել, որ 1870-ական թվականներին այնտեղ կազմակերպվել է ոչ թե հայկական ծխական, այլ համայնքային-պետական դպրոց։

Հավատի է, որ 1879-ին ծխական դպրոց է կազմակերպվել ոչ թե ներկա Նոյեմբերյանի շրջանի Բերդավան (Ղալաչա) գյուղում, այլ նախկին Ապարանի հոգևոր վիճակի Ղալաչա (Ղալայշի) գյուղում։

Չկա՞ արդյոք որևէ թյուրիմացություն այս երկու նույնանուն գյուղերի դպրոցների հիմնադրման հարցում։ Մենք դժվարանում ենք ասել։

Նոյեմբերյանի շրջանի Ղալաչա գյուղի հայկական ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է 1905—1907 թվականներին բացված ու վերաբացված դպրոցների ցուցակում։ Եղել է երկսեռ դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 28 աշակերտ (5 աղջիկ), իսկ 1980—09 ուս. տարում՝ 50 աշակերտ (30 աղջիկ)։ 1911—12 ուս. տ. ունեցել է եռամյա դասընթաց, իսկ 1912—13 ուս. տարում ցույց է տրված որպես զուտ արական դպրոց՝ 35 աշակերտով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 9, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 40; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 70, № 3, էջ 84; ԿՀԲ ընկ. 1912 տեղեկագիր, էջ 31։

Ղոշղոբան (այժմ՝ Ոսկեվան, Նոյեմբերյանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Ղոշղոբան գյուղը մտել է նախկին Ղազախի գավառի (Ելիզավետպոլի նահանգ) մեջ և եղել է հայաբնակ խոշոր գյուղերից մեկը։ 1914-ին ունեցել է ավելի քան 1800 բնակիչ, բայց երկար ժամանակ չի ունեցել իր ազգային դպրոցը։ Այնտեղ ծխական դպրոց է բացվել 1908-ին։ Այդ թվականին «Նոր դպրոց» ամսագիրը հրատարակել է նոր բացված այն դպրոցների ցուցակը, որոնք նպաստ են ստացել Կովկասի հայոց բարեգործական ընկերությունից։ Նրանց թվում է նաև Ղոշղոբան գյուղի ծխական դպրոցը, որը սակայն չի երևում հետագա տարիների փաստաթղթերում։ Հնարավոր է, որ այն փակվել է կամ էլ վեր է ածվել պետական դպրոցի, քանի որ բարեգործական ընկերությունը 1909-ից նրան այլևս նպաստ չի տվել։ Այն չի նշված նաև հետագա տարիներին բարեգործականից նպաստ ստացած դպրոցների ցուցակներում։

«Կովկազսկի կալենդար», 1915, էջ 146, «Նոր դպրոց», 1908, № 3, էջ 84։

Ղրղի (Ղազախի գավառ, այժմ՝ Արծվարերդ, Ճամշադինի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հիշատակվում է 1905—1907 թթ. բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։

Այն բացվել է 1907-ին։ Սակայն ժամանակի օրաթերթերից մեկում նշվել է, որ 1907—1908 ուս. տարում Ղրղիում գոյություն է ունեցել ոչ թե հայկական եկեղեցական ծխական, այլ «մինիստերական» դպրոց։

այլական դպրոցը չի երևում նաև 1911—1919 թվականների տեղեկագրերում։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 9;
«Զանգակ», 1908, № 3։

Ղուլալի (այժմ Այգեձոր, Շամշադինի շրջ.) գյուղի դպրոց

Ղուլալի գյուղում 1907—1908 ուս. տարում գործել է այսպես կոչված «մինիստրական» դպրոց, որը հետագայում (հավանաբար 1918-ին) վեր է ածվել հայկականի։ Հաստատապես հայտնի է, որ 1918—1919 ուս. տարում Ղուլալիում գործել է ազգային միդասյան տարրական դպրոց։

«Զանգակ», 1908, № 3;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, թ.52։

Ճամբարակ (Ներքին) գյուղի (Կրասնոսելսկի շրջան) դպրոց

Ներքին Ճամբարակ գյուղի դպրոցը առաջին անգամ հանդիպում է 1918—1919 ուս. տարում գործած հայ դպրոցների ցուցակում։ Եղել է միդասյան տարրական դպրոց։

Հավանաբար մինչ այդ այնտեղ գործել է պետական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 52։

Ճամբարակ (Վերին) գյուղի ծխական դպրոց

Վերին Ճամբարակ գյուղի դպրոցը, ըստ թեմական առաջնորդի կազմած տեղեկագրի, հիմնվել է 1893-ին, լինելով միդասյան արական ծխական դպրոց։ Այն ցույց է տրված 1895-ին գործած հայ դպրոցների ցուցակում։ 1896-ին փակվել է կառավարության կողմից։ Վերաբացման վերաբերյալ արխիվային նյութերը տեղեկություն չեն տալիս։ Ըստ երևույթին, ծխական դպրոցի փոխարեն Վ. Ճամբարակում բացվել է պետական դպրոց, որը և 1918—19 ուս. տարում ազգայնացվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 157; գ. 338, թ. 19; գ. 139, թ. 17—23; գ. 75/207, գ. 5, թ. 53;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 42 և 73։

Մովսես (այժմ Մոսեսգեղ, Շամշադինի շրջ.) գյուղի դպրոց

Մովսես գյուղի անունով դպրոց է հիշվում 1859 թվականին Գանձակի գավառապետի կողմից կազմած մի փաստաթղթում, որի մասին խոսվում է պրոֆ. Սանթրոսյանի՝ մեզ արգեն ծանոթ աշխատության մեջ։ Այդ փաստաթղթում նշվում է, որ Մովսես (Մոսեսի) գյուղի դպրոցը «բացվել է դրանից 6 տարի առաջ», հետևաբար՝ 1853-ին։ Մի այլ վավերագրի հիման վրա պրոֆ. Սանթրոսյանը նշում է, որ «հիշյալ դպրոցը 1852 թ. սեպտեմբերի 13-ին բացել է նույն գյուղի քահանա Ս. Բագալյանցը» (էջ 263)։ Դժբախտաբար, հետագա տասնամյակների բազմաթիվ փաստաթղթերից և ոչ մեկում Մովսես գյուղի անունով դպրոցի մենք չենք հանդիպել։ Դիտենք միայն, որ 1918—19 ուս. տարում գործել է միդասյան տարրական դպրոց։ Մեր կարծիքով, այն եղել է պետական դպրոց, որը այդ թվականին ազգայնացվել է։

Մ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19 դարի ա. կեսին», էջ 263;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 52։

Նավուր գյուղի ծխական դպրոց

1909 թ. մարտի 1-ին Շամշադինի վիճակի Նավուր գյուղի հասարակությունը որոշել է իրենց գյուղում բաց անել ծխական դպրոց և ընտրել է 6 հոգուց բաղկացած հոգաբարձություն։ Վիճակի գործակալը թեմի առաջնորդին խնդրել է հաստատել դպրոցի բացումը և հոգաբարձության կազմը։ Թեմի առաջնորդը մարտի 19-ի գրությամբ, թույլ տալով բացել դպրոցը, միաժամանակ պահանջել է շտապ ներկայացնել նրա նախահաշիվը (թե ի՞նչ միջոցներով է պահվելու), ինչպես նաև տեղեկություններ ուսուցիչների մասին (ովքե՞ր են, որտե՞ղ են ավարտել, նախկինում աշխատե՞լ են դպրոցում, թե ոչ և այլն)։

Դպրոցն, իհարկե, բացվել է, բայց թե ինչու երկար տարիներ չի երևում թեմի ծխական դպրոցների ցուցակներում, ասել չենք կարող։ Նավուրի դպրոցը մեկ էլ հանդիպում է հայ դպրոցների 1918—19 ուս. տարվա ցուցակում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 465, թ. 1—3. ֆ. 75/207, գ. 5, թ. 52։

Նորաշեն գյուղի ծխական դպրոց

Շամշադինի շրջանի Նորաշեն գյուղի ծխական դպրոցին մենք չենք հանդիպել արխիվային և այլ աղբյուրներում։ Միակ տեղեկությունը այդ դպրոցի մասին մեզ տալիս է Մ. Բարխուդարյանի «Արցախ» գիրքը։

Ըստ այդ գրքի՝ 1890-ական թվականների առաջին տարիներին Նորաշեն գյուղում գործել է «միդասյան ծխական ուսումնարան», աշակերտք 40, թուշակառու 35, տարեկան ոսկիով վարժապետի 300 ռուբլի։

Զարմանալի է, թե ինչու այս դպրոցը ցույց չի տրված այլ աղբյուրներում։ Եթե իրոք այն գոյություն է ունեցել մինչև 1895—96 թվականները, ապա այդ թվականներին փակվել է ցարական կառավարության կողմից՝ մյուս հայ դպրոցների հետ միասին։ Նրա փոխարեն պետք է բացված լիներ պետական դպրոց, որի մասին մենք հավաստի տեղեկություն չունենք։

Մակար եպիսկոպոս Բարխուդարյան, «Արցախ», Բաքու, 1895, էջ 329։

Չինարլու (ա.ժմ՝ Չինարի, Շամշադինի շրջ.) գյուղի դպրոց

Չինարլու գյուղի դպրոցի մասին նույնը պետք է ասել, ինչ ասվեց Նավուր գյուղի դպրոցի մասին։ Այն ևս առաջին անգամ հանդիպում է 1918—19 ուս. տարում գործած հայ դպրոցների ցուցակում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 52։

Զորաթան (Շամշադինի շրջան) գյուղի դպրոց

Շամշադինի շրջանի Զորաթան գյուղի դպրոցը ևս առաջին անգամ հանդիպում է 1918—19 ուս. տարում գործած հայ դպրոցների ցուցակում։ Ենթադրում ենք, որ այն նույնպես գործել է որպես պետական դպրոց, իսկ 1918-ին ազգայնացվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 75/207, գ. 5, թ. 52։

Պողոս-Փիլիպա (1935-ից՝ Շամախյան, ա.ժմ՝ միացած Դիլիջան քաղաքին) ծխական դպրոց

Հիմնվել է 1890-ին։ Եղել է միդասյան արական դպրոց՝ տեղի Պողոս-Պետրոս (Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքում՝ Ս. Աստվածածին) եկեղեցուն կից։ 1892—93 ուս. տարում ունեցել է 35 աշակերտ։ 1896-ի սկզբին դարձյալ միդասյան արական դպրոց է եղել, նույն թվականին էլ փակվել է։ Վերաբացվել է, հավանաբար, 1906-ին։ 1907—08 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 60 տղա, 8 աղջիկ։ 1908—1909 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 50-ի (5 աղջիկ)։ 1914-ին ունեցել է 3 ուսուցիչ, 75 աշակերտ։

«Արարատ», 1890, II, էջ 53; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 106, գ. 11, թ. 1—23; գ. 357, թ. 159; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 41;

Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 361։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 1090, թ. 40; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 70; № 3, էջ 85։

Զարխեջ (Շարխաջ, Զարխաջ, ա.ժմ՝ Կույբիշև, Իջևանի շրջան) գյուղի արական ծխական դպրոց

Այս դպրոցին առաջին անգամ հանդիպում ենք հայ դպրոցների 1907—08 ուս. տարվա ցուցակում։ Հավանաբար, այդ ուս. տարում էլ հիմնվել է, ունենալով 1 ուսուցիչ և 31 աշակերտ (1 աղջիկ)։ 1908—09 ուս. տարում այնտեղ սովորել են 35 տղա։

1911—12 ուս. տարում ունեցել է 3-ամյա դասընթաց՝ 3 բաժանմունքով։ Նույնը նաև 1913-ին, բայց արդեն որպես երկսեռ դպրոց, ուր սովորել են 54 տղա և աղջիկ։ Ամբողջ դպրոցը տեղավորված է եղել մի խղճուկ ննջակում, ուր պարապել են բոլոր երեք բաժանմունքները միաժամանակ։

1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, 68 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 40; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 70; 1913, № 3, էջ 76—77;
Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ՝ Հ. Տեր-Միրզայանի ֆոնդ։

Ռևազլու (ա.ժմ՝ Դիտավան, Իջևանի շրջան) գյուղի ծխական դպրոց

Նախկին Ղազախի գավառի Ռևազլու գյուղի հայկական ծխական դպրոցը բացվել է 1916-ի վերջերին։ 1917-ի հունվարին հետևել է կաթողիկոսի թույլտվության և օրհնության կոնդակը՝ Վրաստանի թեմի առաջնորդի անունով։

«Արարատ», 1917, № 2, էջ 86։

Սևքար (Ղարաղաշ) գյուղի (Իջևանի շրջան) ծխական դպրոց

Վրաստանի թեմական առաջնորդի տեղեկագրի համաձայն այդ դպրոցը հիմնվել է 1890-ին։ Այդ թվականի խկութիւնը ճշտվում է նաև կաթողիկոսի 1890-ի մի կոնդակով, որով նա հավանություն է տվել Սևքար գյուղում ծխական դպրոցի բացման մասին տեղի հայ բնակչության որոշմանը և հաստատել է հոգաբարձության կազմը։ 1891-ին ցույց է տրված որպես միդասյան արական դպրոց։

1896-ի սկզբին եղել է միդասյան երկսեռ դպրոց, որը և նույն թվականին փակվել է։ Վերաբացվել է, հավանաբար, 1906-ին։

1907—08 ուս. տարում եղել է միդասյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 62 տղա, 8 աղջիկ։ Մի փաստաթղթում 1908—09 ուս. տարում հիշվում է որպես արական դպրոց՝ 40 աշակերտով, մինչդեռ ԿՀԲ ընկերության նույն տարվա տեղեկագրում նշված է, որ ունեցել է 68 աշակերտ և 16 աշակերտուհի։

1911—12 ուս. տարում եղել է 5-ամյա դպրոց։ 1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, 94 աշակերտ։

Հետաքրքրական է հետևյալ փաստը։ 1913-ին տեղացի մի կին՝ Սոնա Վարդանյանցը, նվիրել է ծխական դպրոցին 100 ռուբլի՝ պայմանով, եթե թույլ տրվի մեռնելուց հետո նրան թաղել գյուղի եկեղեցու գավթում։ Կաթողիկոսը տվել է այդ թույլտվությունը, կարգադրելով նրանից ստանալ խստացված 100 ռուբլին։ Դա ցույց է տալիս, թե դպրոցը ինչպիսի կարիքի մեջ է եղել։ Նպաստ է ստացել ԿՀԲԸ-ից։

«Արարատ», 1890, N 12, էջ 696; 1913, N 12, էջ 1084; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 106, գ. 357, թ. 147; գ. 241, թ. 99; գ. 182, թ. 40; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 7, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 61; «Նոր դպրոց», 1908, N 2, էջ 70. «Циркуляр». 1890, N 10, էջ 559; Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ՝ Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ; ԿՀԲԸ-ի 1909 թ. տեղեկագիրը (էջ 34)։

Սոիգեղի (Ղըլըջքենդ, այժմ՝ Սարիգյուղ, Իջևանի շրջան) ծխական դպրոց

Հիմնվել է 1910-ին։ Կովկասի հայոց բարեգործական ընկերության 1912 թ. տեղեկագրում ցույց է տրված որպես երեք բաժանմունքով երկսեռ տարրական դպրոց, որտեղ սովորել են 40 տղա և 12 աղջիկ։ 1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, 55 աշակերտ։

Գտնվել է վարձովի շենքում։ Մասամբ պահվել է վերոհիշյալ ընկերության Քարվանսարայի ճյուղի նպաստով։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 35, գ. 1, գ. 323, թ. 5;
«Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերության 1912 թ.», Թիֆլիս, 1913, էջ 32; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 13, գ. 6, գ. 17; գ. 11, գ. 264։

Ուզունթալա (այժմ՝ Այգեհովիտ, Իջևանի շրջ.) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1890-ին, որպես միդասյան արական ծխական դպրոց՝ տեղի ս. Աստվածածին եկեղեցուն կից։ 1892—93 ուս. տարում ունեցել է 70 աշակերտ։ 1896-ի սկզբին գործող միդասյան արական դպրոց էր, նույն թվականին էլ փակվել է։ Վերաբացվել է, հավանաբար, 1906-ին։

1907—08 ուս. տարում եղել է միդասյան արական դպրոց՝ 60 աշակերտով։ 1911—12 ուս. տարում ունեցել է քառամյա դասընթաց՝ 5 դասարանով։

1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, 50 աշակերտ։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 106, գ. 11, թ. 1—23; գ. 241, թ. 39; գ. 357, թ. 142; գ. 199, թ. 17—23; «Նոր դպրոց», 1908, N 2, էջ 70; ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 13, գ. 11, գ. 284, թ. 61; «Արարատ», 1896, N 12, էջ 696; Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ՝ Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ։

Քարվանսարա գյուղի (այժմ՝ քաղ. Իջևան) արական ծխական դպրոց

Քարվանսարա գյուղում երեխաների մասնավոր ուսուցում գոյություն է ունեցել վաղ ժամանակներից։ Սակայն այնտեղ ասոիճանաբար ձևավորվել է ուսումնարան, որը թիչ թե շատ կանոնավոր տեսք է ընդունել 1860 թվականից։ Այդ դպրոցի սկզբնավորման մասին մեզ տեղեկություններ է հաղորդում ժամանակի հայ մամուլը։ Այսպես, «Մեղու Հայաստանի» լրագիրը 1867-ի իր համարներից մեկում տպագրված «Ղազախու Քարվանսարա գյուղի ուսումնարանը» վերտառությամբ թղթակցության մեջ գրել է. «Ղազախու վիճակը յուր մեջ բովանդակում է 33 գյուղ, դոցա մեջ Քարվանսարա գյուղը լինելով Տփխիսի և Երևանի մեծ ճանապարհի վերա յուր տեղադրությամբը, օդի և ջրի առողջարարությամբը ավելի հարմարություն ունենալով մյուս հայաբնակ գյուղերիցը ուսումնառության կողմից, այդտեղ վաղ ժամանակից ժողովվել են թե՛ Քարվանսարայի և թե՛ մյուս գյուղերի երեխաները գրել, կարդալ սովորելու մի որ և իցե գրագետ դասատուից, ամսական թոշակ վճարելով նորան։ Իհարկե, սկզբումը այդ ուսմանը մասնակից են եղել միայն ավելի ունևոր մարդկերանց որդիքը, բայց երբ ուսման օգտակարությունը արժարժվել է նոցա մեջ..., ամեն մարդ, ով կարողացել է միայն յուր որդու ուսումնառության ժամանակը հաց տալ նորան, ուղարկել է յուր որդուն այդտեղը ուսանելու, և այդպես կազմվել է մի ուսումնարանի նման բան։

...Առաքել էդիլյանց պատվելի պարոնը յուր ծախքովը եկեղեցու մոտ շինեց մեկ սենյակ, որտեղ լինում էր գյուղացվոց աղջկերանց և ազերանց ուսումնառությունը միասին (բացառիկ երեսուն այն ժամանակների համար— Ս. Խ)։

... Երբ օրեցօր վերոհիշյալ իրական օգուտները բացեցին գյուղացվոց աչքերը, այնքան ուսանողների թիվը շատացավ, որ անհնարին եղավ երկու սեռի բոլոր աշակերտներին դասատվության ժամանակը հարմարավոր կերպով զետեղել այդ սենյակում։ Այս պատճառով Ղա-

դպրոց ներկա գործակատարի օգնական արժանապատիվ Սիմոնյանց Ղուկաս քահանայն, որ այդ ուսումնարանի հոգաբարձուներից մինն է, մտածեց այդ պակասությունը լցուցանել, ուստի ստորագրություն բացեց մի ավելի ընդարձակ ուսումնարանի շինության համար և շատ գժվարությունների հաղթելով կարողացավ թե Հայից, թե Ռուսից, Վրացուց և Թուրքից ժողոված նվերներից կազմել մի փոքրիկ գումար և տալ տոկոսայով շահեցնելու (այս ստորագրությունը շարունակվում է այժմ), որ այդ գումարովը և գյուղացվոց ջերմեռանդ ցանկությամբ պատրաստեն ուսումնարանի համար ամենայն նյութ՝ քար, փայտ, կիր և այլն, և շինեն մի ավելի ընդարձակ ուսումնարան մի քանի սենյակներից բաղկացած։

Անցյալ ամառ գյուղացիները յուրյանց ցանկությունը նոր ուսումնարանի շինության համար հայտնեցին տեղվույա առաջնորդ Մակար արքեպիսկոպոսին (հետագայում Ամենայն հայոց կաթողիկոս.— Ս. Խ.), որ հորդորեց նոցա շարունակել այդ նվիրական գումարը շատացնելու, այնպես, որ հնար լինի նոր ուսումնարանը շինելուց հետո պահպանել և նորա գոյությունը, իսկ Պ. Առաքել Էդիլյանցի շինած ուսումնարանը դարձնել օրիորդաց ուսումնարան» («Մեղու Հայաստանի», 1867, N 15)։ Նույն թերթի հաջորդ համարներից մի քանիսում տպագրված է այն վայրերի ցուցակը, որտեղից դրամական միջոցներ են ստացվել հօգուտ Քարվանսարայի դպրոցի կառուցման։ Նշվել են այդպիսի 43 բնակավայրեր, այդ թվում՝ Դիլիջանը, Ագուլիսը, Թելավը, Համամլուն, Նախիջևանը, Թիֆլիսը, Բաթումը և այլն։

Մակայն ինչ-ինչ պատճառներով տարիներ շարունակ դպրոցական նոր շենքի կառուցումը ձգձգվել է։ Այդ մասին մի հատուկ հոդված է տպագրված «Մշակ» թերթի 1875-ի մարտի 27-ի համարում, ուր նշված է նաև Քարվանսարայի ծխական դպրոցի հիմնադրման թվականը։ Այնտեղ ասված է. «Մոտ 1860 թվին գյուղիս հասակացող անձերից մինը, այն է հանգուցյալ Առաքել Էդիլյանցը, խղճալով այն երեխաներին, որոնք «գոմերի ծակում» ուսանում էին այրերենը, կառուցեց յուր սեփական տներին կից (Նախորդ հոդվածում՝ եկեղեցուն կից,— Ս. Խ.) մի սենյակ յուր բոլոր պարագաներով։ Մինչև հանգուցելը մահը ուսումնարանը գտնվում էր նախանձելի դրության մեջ» («Մշակ», 1875, N 12)։ Այնուհետև խոսվում է այդ դպրոցի շենքի կառուցման գործի ձախողման և եղած դպրոցի անմխիթարական վիճակի մեջ ընկնելու մասին։

Արխիվային որոշ փաստաթղթերում Քարվանսարայի ծխական դպրոցի հիմնադրման տարեթվեր են ցույց տրված 1878-ը, 1879-ը։ Սա, իհարկե, թյուրիմացություն է։ Բացի մամուլի վկայությունից, կան նաև պաշտոնական փաստաթղթեր, որոնք վկայում են Քարվանսարայի ծխական դպրոցի գոյությունը 1867, 1871 և 1873 թվականներին։ Վերջին տարում այն ունեցել է մեկ ուսուցիչ և 48 աշակերտ։ Այս դպրոցը մտել է նաև 1877-ին անցկացված վիճակագրության մեջ (տես՝ «Արարատ», 1878, ԺԲ, էջ 453)։ Ունեցել է մեկ ուսուցիչ, 63 աշակերտ։ 1881-ին և 1884-ին գործել է, իսկ 1885-ին՝ փակվել։ Վերաբացվել է, հավանաբար, 1886-ին, իսկ 1888-ին կոչվել է «Տղայոց միդասյան ուսումնարան». ունեցել է երեք բաժանմունք, որոնցում սովորել են 46 տղաներ (վահառականի որդիներ՝ 8, արհեստավորի՝ 1, երկրագործի՝ 37)։ 1892-ին ունեցել է 87 աշակերտ։ 1896-ի սկզբին եղել է երկսեռ դպրոց, նույն թվականին էլ երկրորդ անգամ փակվել է։ Վերաբացվել է 1906-ին՝ որպես երկսեռ դպրոց, ուր 1907—08 ուս. տարում սովորել են 100 տղա և 20 աղջիկ (ունեցել է 3 ուսուցիչ)։ 1908—09 ուս. տարում տղաների թիվը չի փոխվել, աղջիկներինը հասել է 30-ի։ 1911-ին կոչվել է Վարդանյան դպրոց, ունենալով 5 դասարանյան կազմ։ 1914-ին այնտեղ սովորել են 160 տղա և աղջիկ։

1918—19 ուս. տարում եղել է երկդասյան դպրոց, իսկ 1919—20 ուս. տարում վեր է ածվել հայկական գիմնազիայի։

Այժմ Իջևան քաղաքի N 1 միջնակարգ դպրոցը կրում է հայ նշանավոր մանկավարժ-գիտնական Դուրգեն Էդիլյանցի անունը։ Ճիշտ կլիներ, եթե նրա անվան կողքին դրվեր նաև այդ դպրոցի հիմնադիր Առաքել Էդիլյանցի անունը։

Մ. Մանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19 դարի ա. կեսին», էջ 264;

«Մեղու Հայաստանի», 1867, N 15, էջ 115—116; N 13, էջ 147—148, N 20, էջ 156; N 21, էջ 164; «Մշակ», 1875, N 12;

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 28; գ. 106, թ. 44; գ. 357, թ. 153; գ. 50, թ. 67; գ. 199, թ. 17—23; գ. 11, թ. 1—23; գ. 182, թ. 41; ֆ. 75/207, գ. 5; թ. 54; ֆ. 73, գ. 221, 225։

«Արարատ», 1898, ԺԲ. էջ 453, «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 29։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22; գ. 1585, թ. 49; գ. 3997, թ. 7; ֆ. 12, գ. 1090, թ. 40; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61։

«Նոր դպրոց», 1908, N 2, էջ 70։

Հ. Տեր-Միրաքյանի «Վրաստանի թեմի եկեղեցական ծխական դպրոցները 1911—12 թթ.»։

Քրդևան (Ճիրազ, այժմ՝ Ենոքավան, Իջևանի շրջան) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է հայ դպրոցների 1914-ի ցուցակում։ Ունեցել է 2 ուսուցիչ, 27 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 61; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 58։

Զաքաթալայի հայկական ս. Գեորգի Վարդանյան արական ծխական դպրոց

Հիմնվել է 1877-ին, ունենալով 1 ուսուցիչ և 32 աշակերտ։ 1879-ին աշակերտների թիվը հասել է 48-ի, 1881-ին՝ 50-ի, 1884-ին եղել է երկդասյան դպրոց, իսկ 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1886-ի սեպտեմբերին։ 1891-ին գործել է։ 1896-ի սկզբներին եղել է միդասյան երկսեռ դպրոց, նույն թվականին էլ փակվել է։ Վերաբացվել է 1906-ին։ 1908—09 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 75 տղա և 80 աղջիկ։ 1911-ին գործել է որպես քառամյա դպրոց՝ 5 դասարանով։ 1914-ին ունեցել է 4 ուսուցիչ, 181 աշակերտ։ Պահվել է Կովկասի հայ բարեգործական ընկերության Զաքաթալայի բաժանմունքի միջոցներով։

«Արարատ», 1878, ԺԱ—ԺԲ, էջ 454, «Մեղու Հայաստանի», 1879, № 77; «Մանկ. թերթ», 1878, № 2, էջ 63; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, գ 106, գ. 182, թ. 35, գ. 492, թ. 200; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48, գ. 2890, թ. 64, ֆ. 12, գ. 865, թ. 75, ֆ. 13, գ. 264, թ. 5—6, «Նոր դպրոց», 1911, № 9—10, էջ 32։

Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ։

Զաքաթալայի հայ աղջիկների դպրոց

Կաթողիկոս Երիմյանի թույլտվությամբ 1895-ի սկզբներին Զաքաթալա քաղաքում բացվել է հայ աղջիկների միդասյան ծխական դպրոց, որը սակայն, երկար կյանք չի ունեցել։ Ցարական կառավարության հրամանով այն փակվել է հաջորդ տարում։ Հավանաբար հետագայում չի վերաբացվել, քանի որ Զաքաթալայի տղաների դպրոցում սովորել են նաև աղջիկներ։

«Արարատ», 1895, էջ 105.

Կախ գյուղի հայկական ծխական դպրոց

Զաքաթալայի օկրուգի Կախ գյուղի հայկական ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1914-ին այն գործել է, ունենալով 4 ուսուցիչ, 55 աշակերտ։ Պահվել է Կովկասի հայ բարեգործական ընկերության Զաքաթալայի բաժանմունքի միջոցներով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 5—6.

ԱԽԱԼՑԽԱՅԻ ԳԱՎԱՌ

Աճղոր (Ազղոր, նաև Ացխուրի՞) գյուղի ծխական դպրոց

Արխիվային տարբեր փաստաթղթերում և մամուլում հրապարակված նյութերում հանդիպում ենք Ախալցխայի գավառի Աճղոր, Ազղոր և Ացխուրի անունով գյուղերի, որ, մեր կարծիքով, միևնույն գյուղն է։ Բնորոշ է նաև, որ միևնույն փաստաթղթում և՛ մեկ, և՛ մյուս գյուղը երբեք չեն հանդիպում, իսկ հայ եկեղեցիներ ունեցող գյուղերի ցուցակում (կազմված 1901-ին) Ախալցխայի գավառում ցույց է տրված միայն Աճղոր գյուղը (այս փաստերը ևս հաստատում են մեր ենթադրությունը)։

Ացխուրի գյուղի ծխական դպրոցը հիմնվել է 1878-ին, իսկ 1884-ին գործել է։ Այլ փաստաթղթերից հնարավոր չեղավ պարզել Աճղոր գյուղի դպրոցի հիմնադրման տարեթիվը, սակայն հայտնի է, որ այն 1882-ին ունեցել է 1 ուսուցիչ, 25 աշակերտ, 1884-ին ևս գործել է, որպես միդասյան դպրոց, ուր «տղայոց հետ սովորում են և աղջիկներ» («Արձագանք», 1885, № 4)։ 1885-ին փակվել է։

Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է, քանի որ չի երևում բազմաթիվ տարիների փաստաթղթերում։

Ենթադրում ենք, որ հայկական դպրոցի փոխարեն այդ գյուղում բացվել ու գործել է պետական դպրոց։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 198; գ. 1585, թ. 48;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 65;
«Արձագանք», 1885, № 4։

Աճղոր գյուղի իգական ծխական դպրոց

Ախալցխայի գավառի Աճղոր (Ացխուրի) գյուղում 1880-ից սկսած գործել է նաև հայ աղջիկների ծխական դպրոց, որը 1882-ի փետրվարին ունեցել է 1 ուսուցիչ և 25 աշակերտուհի։

Այս դպրոցը 1884-ին գործել է, բայց ինչպես երևում է նույն թվականին էլ միացվել է տեղի արական դպրոցին, քանի որ «Արձագանք» լրագրի 1885-ի մի հաղորդումից իմանում ենք, որ այդ գյուղի տղաների դպրոցում սովորել են նաև աղջիկներ։

Հետագա տարիների բազմաթիվ փաստաթղթերում այս դպրոցը այլևս չի երևում։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 51; գ. 2018, թ. 198;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66;
«Արծագանք», 1885, № 5։

Ախալցխայի Կարապետյան արական միջնակարգ դպրոց

Պրոֆ. Մ. Սանթրոսյանի աշխատության («Արևելահայ դպրոցը 19-րդ դարի ա. կեսին», էջ 253) մեջ այս դպրոցի սկզբնավորման թվականը նշված է 1830-ը։ Մեր ձեռքի տակ եղած պաշտոնական մի փաստաթուղթ հաստատում է այդ թվականը, իսկ այլ փաստաթղթերում նշված են 1838 և 1848 թվականները։ Մենք ավելի հավատի ենք համարում պրոֆ. Սանթրոսյանի նշած տարեթիվը։ 1873-ին ունեցել է 7 ուսուցիչ, 150 աշակերտ։

1877-ին եղել է արական միջնակարգ դպրոց և ունեցել է 10 ուսուցիչ, 193 աշակերտ, 1881-ին՝ 11 ուսուցիչ, 258 աշակերտ։ 1884-ին ունեցել է երեքդասյան կազմ, որը հավասար էր այն ժամանակվա միջնակարգին։ 1885-ին փակվել է, իսկ 1886-ին՝ վերաբացվել խիստ անշքացած։ Այն դարձել է սովորական երկդասյան ծխական դպրոց՝ երկու սեռի երեխաների համար (հավանաբար այս դպրոցին են միացել Ախալցխայում գոյություն ունեցած մյուս բոլոր արական ու իգական դպրոցները, շատ լանցած, նրանից անջատվել է Եղիսաբեթյան հայտնի դպրոցը)։

1888—89 ուս. տարում Կարապետյան երկդասյան դպրոցը ունեցել է 328 աշակերտ։ Այնտեղ ավանդվել են՝ կրոնագիտություն, հայոց լեզու, ռուսաց լեզու, հայոց պատմություն, ընդհանուր աշխարհագրություն, ռուսաց պատմություն և Ռուսաստանի աշխարհագրություն, բնագիտություն, թվաբանություն, գեղագրություն, գծագրություն, երգեցողություն և ձայնագրություն։ Եղիսաբեթյան աղջիկների դպրոցի հետ միասին նրա ուսուցիչների թիվը հասնում էր 18-ի։

1892-ին աշակերտների թիվը նվազել է, իջնելով 277-ի (108 ձրիավարժ, 169 թոշակառու)։

1896-ին նորից փակվել է։ Վերաբացվել է 1905-ին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 382, 1908—09 ուս. տարում՝ 317 աշակերտ։ 1911—12 ուս. տարում գործել է որպես 5-ամյա դպրոց։ 1914-ին աշակերտների թիվը իջել է 240-ի։

Մ. Հ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19 դարի ա. կեսին», էջ 253;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48; գ. 8717, թ. 41; գ. 3997, թ. 20; գ. 2018, թ. 198; ֆ. 13, գ. 264, թ. 42; «Աբրաու», 1878, № 12, էջ 452; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 42, թ. 23; գ. 50, թ. 66; գ. 182, թ. 46; գ. 559, թ. 5—8; գ. 198, թ. 17—23; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 12—13; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 67; 1911, № 9—10, էջ 31;
Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ, Հ. Տեր-Միրաքյանի կազմած 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Ախալցխայի Եղիսաբեթյան միջնակարգ դպրոց

Հայ աղջիկների համար բացված նշանավոր դպրոցներից է։ Այն հիմնվել է 1870 թ. մարտին. առաջին տարում ունեցել է միայն նախապատրաստական դասարան և անգավորված է եղել, ըստ երևույթին, մասնավոր շենքում։ 1871 թ. կեսերին նրա համար կառուցվել է նոր շենք։ Դա հնարավորություն է տվել այդ տարում բացելու առաջին, իսկ 1872 թ.՝ նաև երկրորդ դասարան։ Այդ թվականին ունեցել է 65 աշակերտուհի։

1877-ին եղել է միջնակարգ դպրոց, ունենալով 10 ուսուցիչ և 117 աշակերտուհի, 1881-ին՝ 16 ուսուցիչ, 216 աշակերտուհի։ 1884-ին ունեցել է երկդասարանյան կազմ։ 1885-ին փակվել է, 1888-ին՝ վերաբացվել, որպես երկդասյան իգական դպրոց։

1888—89 ուս. տարում ունեցել է 391 աշակերտուհի, հավանաբար իր մեջ առնելով Ախալցխայում եղած մյուս իգական դպրոցները։ 1891-ին գործել է։ 1896-ին գարձյալ փակվել է։ Վերաբացվել է 1905-ին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 500, 1908—09 ուս. տարում՝ 464 աշակերտուհի։ 1911—1912 ուս. տարում գործել է որպես 5-ամյա դպրոց, ունենալով 17 ուսուցիչ։ 1914-ին աշակերտուհիների թիվը խիստ նվազել է, իջնելով 380-ի։

«Մեղու Հայաստանի», 1873, № 5, էջ 2;
«Աբրաու», 1871, Ե. էջ 302—303; 1878, ԺԲ, էջ 452;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 23; գ. 50, թ. 66; գ. 199, թ. 17—23; գ. 187, թ. 46; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 12—13;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 51; գ. 8717, թ. 5; գ. 3997, թ. 20; ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 42;
«Царкуазр за 1888 г.», № 11, էջ 453; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 67;
Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ՝ Հ. Տեր-Միրաքյանի կազմած 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Ախալցխայի № 1 Եղիսաբեթյան իգական դպրոց

1884-ին կազմած մի պաշտոնական տեղեկագրի համաձայն Ախալցխայում եղել են հայ աղջիկների երեք դպրոցներ միևնույն անունով (մեկը՝ Եղիսաբեթյան, մյուսը՝ Եղիսաբեթյան № 1, երրորդը՝ Եղիսաբեթյան № 2)։

Եղիսաբեթյան № 1 դպրոցը հիմնվել է 1882-ին, 1884-ին գոյություն է ունեցել, բայց մեզ անհայտ պատճառներով չի մտել 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում։ Այս դպրոցի հետագա ճակատագրի մասին մեզ չլինել հայտնի չէ։ Կարծում ենք, որ այն միացած է եղել Եղիսաբեթյան երկդասյան դպրոցին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 198։

Ախալցխայի № 2 Եղիսաբեթյան իգական դպրոց

Եղիսաբեթյան № 1 դպրոցի մասին մեր գրածը լիովին վերաբերում է նաև այս դպրոցին։ Այն ևս հիմնվել է 1882-ին և ունեցել է միևնույն ճակատագիրը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 198։

Ախալցխայի «Նոր արշալույս» օրիորդաց դպրոց

Ախալցխա քաղաքում հայ աղջիկների համար եղած առաջին դպրոցը, ըստ Մ. Հ. Սանթրոսյանի արդեն նշված գրքի, բացվել է 1852-ին։ Այն եղել է մասնավոր դպրոց։

«Մեղու Հայաստանի» լրագիրը 1868 թ. գրել է, որ «ահա յոթ ամիս է, ինչ Ռափայել Սաղաթելյանը Ախալցխայում հիմնել է աղջկանց դպրոց, որը տեղում առաջինն է որպես այդպիսին»։

Արխիվային տվյալների և «Արարատ» ամսագրի համաձայն Ախալցխայի առաջին իգական դպրոցը բացվել է 1868 թ. հունվարի 1-ին (այս տվյալը համընկնում է նախորդի հետ)՝ «Նոր արշալույս» անունով՝ Ռ. Սաղաթելյանի ջանքերով ու միջոցներով։ 1873-ին ունեցել է 4 ուսուցիչ, 56 աշակերտուհի, 1881-ին՝ 6 ուսուցիչ, 85 աշակերտուհի։ Գործել է նաև 1884-ին, բայց չգիտենք, թե ինչպես է եղել, որ չի մտել 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում։ Նրա հետագա ճակատագրի մասին տեղեկություններ չունենք։ Ենթադրում ենք, որ այն միացել է տեղի Եղիսաբեթյան դպրոցին։

Մ. Հ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19 դ. ա. կեսին», էջ 253; «Մեղու Հայաստանի», 1868, № 33, էջ 252—253; «Արարատ», 1870, էջ 248; 1878, ԺԹ. էջ 451;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 51; գ. 2018, թ. 198;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 28, թ. 117; գ. 43, թ. 24։

Ախալցխայի Վարդանյան արական դպրոց

Հիմնվել է 1865-ին։ 1871-ին ունեցել է 3 դասարան, 5 ուսուցիչ և 90 աշակերտ, 1873-ի՝ 140 աշակերտ, իսկ 1877-ին՝ 4 ուսուցիչ, 152 աշակերտ։ 1884-ին փակվել է իր հիմնադիր Վ. Վարդանյանի կողմից։ Պատճառը մեզ անհայտ է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 23; «Մեղու Հայաստանի», 1884, № 61։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48; գ. 2018, թ. 198; «Արարատ», 1878, № 11, էջ 451։

Ախալցխայի Ս. Գրիգոր Լուսավորչի արական ծխական դպրոց

1881-ին գործել է, ունենալով 2 ուսուցիչ և 43 աշակերտ։ Մտել է նաև հայ դպրոցների 1882-ի ցուցակում։ Հետագա տարիների փաստաթղթերում այլևս չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 1585, թ. 48։

Ախալցխայի «Ս. Ստեփանոսյան» ծխական դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագրի 1873 թ. համարներից մեկում ասված է, որ Ախալցխայի «Ս. Ստեփանոսյան» ուսումնարանը հիմնվել է 1869-ին։

Այս դպրոցի մասին, սակայն, հետագա տարիների փաստաթղթերում չի հիշատակվում։ Դժվար թե այն այդպես շուտ փակված լինի, քանի որ դեռևս 1873 թ. նախատեսված է եղել այնտեղ բացել նոր՝ առաջին դասարան (մինչ այդ ունեցել է միայն նախապատրաստական դասարան՝ 20 աշակերտով)։ Ունեցել է կանոնավոր գրադարան, որի գրքերի մեծ մասը նվիրել են Պետերբուրգի հայ ուսանողները և ականավոր բանաստեղծ Մ. Միանսարյանցը։ Այս դպրոցը ցույց է տրված նաև հայ դպրոցների 1873-ի մի այլ տեղեկագրում։ Ունեցել է 3 ուսուցիչ։

«Մեղու Հայաստանի», 1873, № 33;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 24։

Ախալցխայի ժողովրդական դպրոց

Հիմնել է վարդապետ Սուքիաս Պարպյանը 1869 թվականին։ Այս դպրոցը եղել է մենահասակների համար և գործել է միայն կիրակի ու տոն օրերին, «որովհետև արհեստավորները միայն այս օրերումը ազատ են»— կարդում ենք «Մեղու Հայաստանի» լրագրում։

Թե մինչև ե՞րբ է պահպանել իր գոյությունը, չգիտենք։

«Մեղու Հայաստանի», 1869, № 34, էջ 267։

Ախալցխայի հին թաղի արական դպրոց

Հիմնվել է 1877-ին, ունենալով 1 ուսուցիչ, 28 աշակերտ։ Հետագա տարիների փաստաթղթերում չի հիշվում։ Հնարավոր է, որ ընդհանուր կապ լինի Ախալցխայի այս դպրոցի և Ս. Գրիգոր Լուսավորչի ու Ս. Սահականոս եկեղեցիների դպրոցների միջև։

«Արարատ», 1878, մթ. էջ 434; «Մանկ. թերթ», 1878, № 2, էջ 63։

Ախալցխայի ծխական մանկապարտեզ-դպրոց

Կազմակերպման տարեթիվը մեզ անհայտ է։ 1884-ին գործել է, ունենալով միայն մի խումբ։ Պահվել է Աղնավուրյան բարերարի միջոցներով։ 1885-ին փակվել է հայ բոլոր դպրոցների հետ միասին։

ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 65։

Ախալցխայի հայ կաթոլիկական դպրոցներ

1861 թվականի «Կավկազսկի կալենդարում» հրատարակված տվյալների համաձայն, 1860-ին Ախալցխայում գործել են հայ կաթոլիկական դավանության երկու ծխական դպրոց՝ 3 ուսուցչով և 135 աշակերտով։ Հավանաբար հետագայում այդ դպրոցները միացվել են, քանի որ 1891-ին Ախալցխայում ցույց է տրված միայն մի հայ կաթոլիկական դպրոց։ 1914-ին գործել է, ունենալով մի ուսուցիչ և 73 աշակերտ։

«Кавказскій календарь», 1861, 3-րդ բաժին, էջ 37; ՎՍԱ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 3997, թ. 20;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 521, գ. 150, գ. 283, թ. 68։

Ախալցխայի Մարտիրոս Մեծատունյանի ծխական դպրոց

Հայ դպրոցների 1873-ի ընդհանուր ցուցակում նշված է նաև Ախալցխայի հոգևորական Մարտիրոս Մեծատունյանի ծխական դպրոցը, որն ունեցել է 2 ուսուցիչ և 46 աշակերտ։ Մա հավանաբար եղել է այն ժամանակվա համար սովորական «մասնավոր կրթարաններից» մեկը, թեև վերոհիշյալ ցուցակում նշվում է, որ գտնվում է այդ հոգևորականի տանը՝ եկեղեցուն կից համապատասխան շենք չունենալու պատճառով։

Այս դպրոցը հետագա տարիների փաստաթղթերում այլևս չի հանդիպում։

ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 24։

Ախալցխայի Եղիշե Մեծատունյանի ծխական դպրոց

Հայ դպրոցների 1873-ի ցուցակում Ախալցխայում ցույց է տրված Մեծատունյանների երկու դպրոց, որոնցից մեկի մասին խոսվեց վերևում։

Մյուս դպրոցը պահել է տիրացու Եղիշե Մեծատունյանը։ Այն կրել է «Բուրաստան» անունը և ունեցել է 2 ուսուցիչ, 29 աշակերտ։

Այս դպրոցի մասին ևս նշված է, որ պահվում է հիշյալ տիրացուի տանը՝ եկեղեցուն կից շենք չունենալու պատճառով։

ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 24։

Մուղրուի գյուղի արական ծխական դպրոց

Ախալցխայի գավառի Մուղրուի հայաբնակ գյուղի ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը արխիվային փաստաթղթերում ցույց է տրված 1875-ը (նաև 1876-ը), սակայն դա ճիշտ չէ, քանի որ այդ գյուղում ծխական դպրոց է գործել դեռևս 1873-ին։ Այդ թվականի ամռանը «Մեղու Հայաստանի» լրագրերը գրել է, որ Մուղրուի գյուղի եկեղեցու գավթում կա ուսումնարան, «որտ բացման պատիվը պատկանում է գեր. Ս. Վ. վարդապետ Պարոյանին։ Աշակերտք պարապում են միայն ձմեռը, իսկ ամառը ծնողաց հետ գաշտում են»։

Այս դպրոցը 1881-ին ունեցել է մեկ ուսուցիչ, 39 աշակերտ, իսկ 1884-ին եղել է միդասյան արական դպրոց։ 1885-ին փակվել է կառավարության կողմից։ Վերաբացվել է 1888-ին։ Հավանաբար հետո նորից է փակվել և վերաբացվել 1895-ին։ Հաջորդ տարում նորից է փակվել կառավարության կողմից, վերաբացվելով 1905-ին։ 1908-ին գործել է որպես երկսեռ դպրոց, ուր սովորել են 56 տղա և 65 աղջիկ, 1911—12 ուս. տարվա տեղեկագրում ցույց է տրված որպես քառամյա դպրոց՝ միայն մի դասարանով (որը քիչ հավանական է)։ 1912—13 ուս. տ. ունեցել է երեք բաժանմունք և 50 աշակերտ (30 աղջիկ)։

«Մեղու Հայաստանի», 1873, № 32;
ՎՍԱ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 198; գ. 1585, թ. 48; գ. 8717, թ. 2;
ՀՍԱ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 66; գ. 182, թ. 47; գ. 338, թ. 19; գ. 357, թ. 92; գ. 492, թ. 200;
«Արծագանք», 1885, № 4;
«Նոր դարաշրջան», 1909, № 8—9, էջ 140;
«Циркуляр за 1888 г.», № 11, էջ 452;
Մանկ. գիտ. խնամատարի արխիվ, 2. Տեր-Միրզայանի կազմած 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը; ԿՀԻ քնկ. 1912 թ. տեղեկագիր, էջ 30։

Պամաճ (Մեծ) գյուղի (Ախալցխայի շրջան) դպրոց

Հիմնվել է 1909-ի աշնանը՝ Բաթվի հայոց մշակութային միության դրամական օժանդակությամբ։ 1917-ին գործել է։ Այդ թվականին նրա համար կառուցվել է նոր շենք։

«Նոր դպրոց», 1909, № 8—9, էջ 140; «Արարատ», 1917, № 4—5, էջ 282։

Պամաճ (Փոքր) գյուղի (Ախալցխայի շրջան) ծխական դպրոց

Բացվել է 1909-ի աշնանը՝ Բաթվի հայոց մշակութային միության դրամական օժանդակությամբ։ 1917-ին գործել է։

«Նոր դպրոց», 1909, № 8—9, էջ 140; «Արարատ», 1917, էջ 282։

Սազել գյուղի ծխական դպրոց

Ախալցխայի շրջանի Սազել (այլ փաստաթղթերում նաև՝ Սազղել, Սազրել) գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է 1908 թվականին՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերության կողմից նպաստ ստացած հայկական ծխական դպրոցների ցուցակում։ 1909-ին ունեցել է 3 բաժանմունք (45 աշակերտով), ուրեմն պետք է բացված լինի 1906-ից ոչ ուշ։

«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 85, 1909, № 8—9, էջ 140; ԿՀԲ ընկ. 1909 թ. տեղեկագիրք, էջ 33։

Տամալա գյուղի արական ծխական դպրոց

Հիմնվել է 1873-ին։ «Մեղու Հայաստանի» լրագիրը այդ թվականին գրել է, որ Թագեոս եպիսկոպոսի հորդորանքով տամալացիք «մի ուսումնարան հիմնելու ձեռնարկություն արին»։ 1874-ին այն գործել է, 1877-ին ունեցել է մի ուսուցիչ, 26 աշակերտ։ 1884-ին եղել է միդասյան ամառային դպրոց, 1885-ին փակվել է կառավարության կողմից։ Հետագա շատ տարիների փաստաթղթերում այս դպրոցն այլևս չի հանդիպում։ Միայն «Նոր դպրոց» ամսագրից իմանում ենք, որ ԿՀԲ ընկերությունը 1908 թ. սեպտեմբերին որոշել է նպաստ տալ Տամալա գյուղի ծխական դպրոցին։ Նույն ամսագիրը 1909-ին հաղորդել է, որ այդ տարում Տամալա գյուղում բացվելու է դպրոց։ Եվ, իրոք, այն բացվել է։

1911—12 ուս. տարում համարվել է քառամյա դպրոց, ունենալով սակայն միայն մի դասարան։ 1912—12 ուս. տարում ունեցել է 3 բաժանմունք՝ 40 աշակերտով (16 աղջիկ)։

«Մեղու Հայաստանի», 1873, № 13;
«Արարատ», 1878, ժթ. էջ 454;
«Արձագանք», 1885, № 4;
«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 85, 1909, № 8—9, էջ 140;
ԿՀԲ ընկ. 1912 թ. տեղեկագիրք, էջ 30.

ԱԽԱԼՔԱԼԱԿԻ ԳԱՎԱՌ

Ազավրեթ (Ըզավե՛տ) գյուղի արական ծխական դպրոց

1874-ին գործել է, 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 20 աշակերտ, 1881-ին՝ 25 աշակերտ։ Գործել է նաև 1884—85 ուս. տարում, բայց չգիտենք, թե ինչպես չի մտել 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում։ 1885-ի հուլիսին «Արձագանք» լրագիրը գրել է, որ Ազավրեթի 80 տուն հայերը «եկեղեցու գավթում ունին մի ծխական դպրոց, ուր ուսուցանում են մասնավոր ընթերցանություն»։ Հավանաբար, լրագրի այս տեղեկությունը ավելի վաղ ժամանակվա է վերաբերում, քանի որ 1885-ի գարնանը բոլոր հայ դպրոցները փակված էին, ուստի և Ազավրեթի դպրոցը բացառություն կազմել չէր կարող։

Հետագա ճակատագրի վերաբերյալ տեղեկություններ չկան։

«Արարատ», 1878, ժթ. էջ 454;
«Արձագանք», 1885, № 3;
ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Ալաթուրան գյուղի ծխական դպրոց

Ախալքալակի գավառի Ալաթուրան գյուղում 1881-ին գործել է հայկական ծխական դպրոց՝ 1 ուսուցչով և 20 աշակերտով։ Հետագա տարիների փաստաթղթերում այս դպրոցը մեզ այլևս չի հանդիպել։

ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Ախալքալակ քաղաքի Ս. Խաչ եկեղեցու Մեսրոպյան արական երկդասյան դպրոց

Հիմնվել է 1836-ին։ Ամենահին հայկական ծխական դպրոցներից մեկն է։ 1871-ին ունեցել է 7 ուսուցիչ, 173 աշակերտ։ 1873-ի ցու-

ցակում նշված է Սանասարյան անունով. ունեցել է 4 ուսուցիչ, 109 աշակերտ։ 1877-ին՝ 5 ուսուցիչ, 150 աշակերտ (մի այլ փաստաթղթում նշված է 7 ուսուցիչ, 170 աշակերտ)։ 1881-ին ունեցել է 8 ուսուցիչ, 127 աշակերտ։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին երկդասյան դպրոց էր՝ 130 աշակերտով։ 1896-ին նորից է փակվել։ Վերաբացվել է 1905-ին։

1906—07 ուս. տարում դարձյալ եղել է երկդասյան, օրիորդաց Սանդխտյան դպրոցի հետ միասին ունենալով մոտ 600 աշակերտ։ 1910-ին տոնվել է դպրոցի հիմնադրման 50-ամյակը, կնշանակի այն 1850-ական թվականներին փակ է եղել և նորից բացվել է միայն 1860-ին։ 1911—12 ուս. տարում եղել է քառամյա դպրոց՝ 10 դասարանով և 12 ուսուցչով։

1914-ին միացյալ երկսեռ դպրոցում ցույց է տրված 445 աշակերտ։ 1916-ին գտնվել է նյութական կարիքի մեջ և օգնություն է ստացել Ախալցխայի Ս. Խաչ. եկեղեցու եկամուտներից։

«Արարատ», 1878, ժԲ, էջ 453; 1916, էջ 22;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 25; գ. 106; գ. 50, թ. 66; գ. 199, թ. 17—23; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 11;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 4; գ. 1585, թ. 48;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 68; 1909, № 1, էջ 91; 1911, № 15—16, էջ 32։

Ախալքալակի Սանդխտյան օրիորդաց դպրոց

Հայ աղջիկների համար բացված ու գործած հնագույն ու նշանավոր դպրոցներից մեկն է։ Հիմնվել է 1871-ին։ 1874-ին ունեցել է 5 ուսուցիչ, 41 աշակերտուհի, 1877-ին՝ 5 ուսուցիչ, 51 աշակերտուհի։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։ 1888-ին եղել է երկդասյան դպրոց, ուր սովորել են 113 հայ աղջիկներ։ 1891-ին շարունակել է գործել որպես երկդասյան դպրոց, իսկ 1896-ին փակվել է երկրորդ անգամ։ Վերաբացվել է 1905-ին։ 1906—07 ուս. տարում եղել է երկդասյան դպրոց՝ միացած տեղի արական դպրոցին։ 1908—09 ուս. տարում երկսեռ դպրոցը ունեցել է 487 աշակերտ (254 աղջիկ)։

«Արարատ», 1871, ԺԱ, էջ 368; 1878, ժԲ, էջ 453; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 11;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 25; գ. 106; գ. 50, թ. 66; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 47;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 4; գ. 3997, թ. 20;
«Նոր դպրոց», 1909, № 1, էջ 91;

Ականա գյուղի արական ծխական դպրոց

1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 25 աշակերտ։ Հավանաբար հետագայում փակվել է։ 1884-ին դարձյալ գործել է, լինելով միդասյան արական ձմեռային դպրոց։ 1885-ին նորից փակվել է։ Հետագա տարիների փաստաթղթերում մեզ այլևս չի հանդիպել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 25; գ. 50, թ. 66։

Ապակ գյուղի ծխական դպրոց

Ախալքալակի գավառի Ապակ գյուղում 1881-ին գործել է հայկական ծխական դպրոց, ունենալով 25 աշակերտ։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Ապոլ (Աբուլ) գյուղի արական ծխական դպրոց

1873-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 40 աշակերտ։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 23 աշակերտ։ 1881-ին՝ 40 աշակերտ։ Հետագա տարիների փաստաթղթերում մեզ չի հանդիպել։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26;
«Արարատ», 1878, ժԲ, էջ 454;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48;

Արակել (Մեծ) գյուղի արական ծխական դպրոց

1873-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 17 աշակերտ։ 1877-ին՝ 1 ուսուցիչ, 20 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26;
«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129;
«Արարատ», 1878, ժԲ, էջ 454։

Արակել (Փոքր) գյուղի արական ծխական դպրոց

1873-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 15 աշակերտ։ 1877-ին՝ ունեցել է 1 ուսուցիչ, 21 աշակերտ։ 1880-ին եղել է միդասյան արական դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26;
«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129;
«Արարատ», 1878, ժԲ, էջ 454; 1889, № 4, էջ 171։

Արակովա (Արագվա) գյուղի արական ծխական դպրոց

1874-ին գործել է։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 27 աշակերտ, 1881-ին՝ 60 աշակերտ։

Գործել է նաև 1885-ին, իսկ հետագա տարիների ցուցակներում այլևս չի երևում (հավանաբար այն պատճառով, որ 80-ական թվականների կեսերից այստեղ գործել է արքունի գյուղական դպրոց)։

«Արարատ», 1878, ԺԲ. էջ 454;
«Արձագանք», 1885, N 3;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Բալխո գյուղի ծխական դպրոց

Ախալքալակի գավառի Բալխո գյուղի ծխական դպրոցը 1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 15 աշակերտ։ Գործել է նաև 1880-ին։

Հետագա ճակատագիրը անհայտ է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 25; «Արարատ», 1880, N 4, էջ 171։

Բարալեթ գյուղի ծխական դպրոց

Ախալքալակի գավառի Բարալեթ գյուղում 1881-ին գործել է հայկական ծխական դպրոց, ունենալով մի ուսուցիչ, 30 աշակերտ։ «Արձագանք» լրագիրը 1885-ի հուլիսին գրել է, որ Բարալեթ գյուղում, որ ապրում են 46 տուն հայեր և նույնքան էլ վրացիներ, բացված է շինական դպրոց։ Հավանաբար հենց այս «շինական», բայց փաստորեն պետական դպրոցի առկայությունն էլ խանգարել է հայկական դպրոցի հետագա գոյությանը։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48;
«Արձագանք», 1885, N 3։

Բեժանո գյուղի ծխական դպրոց

Ախալքալակի գավառի Բեժանո գյուղում ծխական դպրոց է գործել դեռևս 1873-ին, ունենալով 1 ուսուցիչ, 20 աշակերտ։ Գործել է նաև 1880-ին և 1896-ին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 25; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 180, թ. 109; «Արարատ», 1880, N 4, էջ 171։

Բուռնաշեթ գյուղի արական ծխական դպրոց

Բուռնաշեթ գյուղում 1874-ին գործել է արական ծխական դպրոց, որը 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ և 14 աշակերտ։ Գործել է նաև 1881-ին՝ 35 աշակերտով։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։ Հավանաբար, ինչ-ինչ պատճառներով այն փակվել է և այլևս չի վերաբացվել, քանի որ 80-ական թվականների կեսերից Ախալքալակի գավառի մի շարք գյուղերում բացվել ու գործել են արքունի դպրոցներ։

«Արարատ», 1878, ԺԲ, էջ 454;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48;
«Արձագանք», 1885, NN 2, 3, 4։

Գանձա գյուղի արական ծխական դպրոց

1873—1875 թվականներին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 45 աշակերտ։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 42 աշակերտ։ Գործել է նաև 1880-ին։

Հետագա տարիների ցուցակներում չի երևում (հավանաբար, այն պատճառով, որ 80-ական թվականներին այդ գյուղում բացվել ու գործել է պետական գյուղական դպրոց)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26;
«Դպրոց», 1875—1876, N 4, էջ 129;
«Արարատ», 1878, ԺԲ, էջ 454; 1880, N 4, էջ 171;
«Արձագանք», 1885, N 3։

Գեոնդուրե (Մեծ) գյուղի ծխական դպրոց

Այս գյուղում 1881-ին գործել է հայկական ծխական դպրոց, ունենալով մի ուսուցիչ և 30 աշակերտ։ Հետագա տարիներին այս դպրոցի հետքերը չեն երևում, հավանաբար այն պատճառով, որ 80-ական թվականների կեսերին այդ գյուղում կառուցվել և գործել է «արքունի շինական դպրոց»՝ հարևան գյուղերի «ընդհանուր ծախքերով»։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48;
«Արձագանք», 1885, N 3, էջ 39։

Գեոնդուրե (Փոքր) գյուղի արական ծխական դպրոց

1873-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 20 աշակերտ։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 20 աշակերտ, 1881-ին՝ 28 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26;
«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129;
«Արարատ», 1878, ժԲ. էջ 453;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Գյումբուրդ գյուղի արական ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը չգիտենք։ 1874-ին գործել է, իսկ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 49 աշակերտ, 1881-ին՝ 50 աշակերտ։

Հետագա շատ տարիների փաստաթղթերում այս դպրոցն այլևս չի հիշվում։ Կովկասի հայոց բարեգործական ընկերության 1909 թ. տեղեկագրից իմանում ենք, որ այդ թվականին Գյումբուրդի դպրոցն ունեցել է 3 բաժանմունք, ուրեմն պետք է վերաբացված լինի 1906-ից ոչ ուշ։ Այդ տարում ունեցել է 75, իսկ 1912-ին՝ 44 աշակերտ։ Մասամբ պահվել է Կովկասի հայկական բարեգործական ընկերության նպաստով։

1914-ին ունեցել է մի ուսուցիչ, 65 աշակերտ։

«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129;
«Արարատ», 1878, ժԲ. էջ 453։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42;
Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ, Հ. Տեր-Միրզոյանի կազմած 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը, ԿՀԲ ընկ. 1909 և 1912 թթ. տեղեկագիրը (էջ 32 և 30)։

Գոմ գյուղի արական ծխական դպրոց

1874-ին գործել է, 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 30 աշակերտ, 1881-ին՝ նա 30 աշակերտ։ 1884-ին եղել է միդասյան մեհեանային դպրոց, 1885-ին փակվել է և, ըստ երևույթին, այլևս չի վերաբացվել, քանի որ չի նշվում հետագա տարիների ցուցակներում ու փաստաթղթերում։ Հավանաբար նրա փոխարեն բացվել է արքունական դպրոց։

«Արարատ», 1878, ժԲ. էջ 454, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66;
«Արձագանք», 1885, № 3;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Դիլիսկա գյուղի ծխական դպրոց

Դիլիսկա գյուղի ծխական դպրոցը 1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 45 աշակերտ։ Գործել է նաև 1880-ին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 27; «Արարատ», 1880, №.4, էջ 171։

Դիլիֆ (Տելիֆ) գյուղի ծխական դպրոց

Դիլիֆ գյուղի ծխական դպրոցը 1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 20 աշակերտ, իսկ 1881-ին՝ 30 աշակերտ։

Այս դպրոցը մեկ էլ մեզ հանդիպում է 1908 թ. ԿՀԲ ընկերությունից նպաստ ստացած դպրոցների ցուցակում։ 1909-ին ունեցել է 3 բաժանմունք՝ 75 աշակերտով։ Ուրեմն՝ պետք է բացված լինի 1906-ին։ Նյութականի պատճառով 1912-ին սովորողների թիվը նվազել է, իջնելով 52-ի (2 աղջիկ)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 27;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48;
«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 85;
Թեմական տեսուչ Հ. Տեր-Միրզոյանի կազմած 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը, ՀԿԲ ընկ. 1909 և 1912 թթ. տեղեկագիրը։

Զակ գյուղի արական ծխական դպրոց

1874-ին գործել է, 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 21 աշակերտ։ 1881-ին՝ 27 աշակերտ։

«Արարատ», 1878, ժԲ. էջ 454;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Էխտելա (Իխտիլա, գյուղի արական ծխական դպրոց

1873-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 20 աշակերտ։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 18 աշակերտ, 1881-ին՝ 20 աշակերտ։ Այս դպրոցը մեկ էլ հանդիպում է 1908-ին ԿՀԲ ընկերությունից նպաստ ստացած դպրոցների ցուցակում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26;
«Արարատ», 1878, ժԲ. էջ 454;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48; «Նոր դպրոց», 1908, № 3, էջ 85։

Լոմադուր գյուղի արական ծխական դպրոց

1873-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 25 աշակերտ։ 1878-ին ունեցել է 1 ուսուցիչ, 16 աշակերտ, 1881-ին՝ 20 աշակերտ։ 1884-ին եղել է միդասյան արական դպրոց։ 1885-ին փակվել է կառավարության կողմից։

«Արարատ», 1878, ժԲ. էջ 454; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66; գ. 43, թ. 25;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Խանտո (Խանդո) գյուղի ծխական դպրոց

1881-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 60 աշակերտ։

1884-ին նույնպես գործել է, լինելով միդասյան ձմեռային դպրոց։ Հավանաբար երկար տարիներ փակ է եղել և վերաբացվել է միայն 1894-ին։ 2—3 տարի հետո փակվել է կառավարության կողմից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66; գ. 357, թ. 80;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Խենչելի (Մեծ) գյուղի արական ծխական դպրոց

1874-ին գործել է, իսկ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 62 աշակերտ, 1881-ին՝ 20 աշակերտ։

Հետագա շատ տարիների ցուցակներում այլևս չի երևում։

Ցույց է տրված 1906-ին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։

«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129;
«Արարատ», 1878, ժԲ. էջ 454;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 9; գ. 1585, թ. 48;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 200։

Խենչելի (Փոքր) գյուղի ծխական դպրոց

Էջմիածնի սինոդի մի տեղեկագրի համաձայն 1873-ին Փոքր Խենչելի գյուղում գործել է ծխական դպրոց, ունենալով 1 ուսուցիչ և 10 աշակերտ։ 1881-ին նույնպես գործել է, ունենալով 21 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 27;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Խոսպիա գյուղի արական ծխական դպրոց

Հիմնվել է 1874-ին, իսկ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 17 աշակերտ։ 1880-ին գործել է։

«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129;
«Արարատ», 1878, ժԲ. էջ 454; 1880, № 4, էջ 171։

Խորենի գյուղի ծխական դպրոց

Ախալքալակի գավառի Խորենի գյուղի ծխական դպրոցը 1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 25 աշակերտ։ Գործել է նաև 1880-ին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26; «Արարատ», 1880, № 4, էջ 171։

Կարգահ գյուղի միդասյան ծխական դպրոց

Կարգահ գյուղի հայկական ծխական դպրոցը 1873-ին գործել է, ունենալով մի ուսուցիչ, 35 աշակերտ։ 1881-ին՝ 2 ուսուցիչ, 60 աշակերտ։ 1885-ին կառավարության կողմից փակվել է։ Նրա փոխարեն բացվել է «արքունի շինական դպրոց» («Արձագանք», 1885, № 31)։ Հայկական դպրոցը վերաբացվել է 1894-ին, որը և սխալմամբ համարվել է նրա հիմնադրման տարեթիվը։

1896-ին նորից փակվել է կառավարության կողմից, վերաբացվելով 1905-ին։ 1911—12 ուս. տարում եղել է եռամյա դպրոց՝ միայն մի դասարանով։ 1914-ին ունեցել է մեկ ուսուցիչ, 54 աշակերտ։ 1916-ին նյութական օգնություն է ստացել Ախալցխայի ս. Խաչ եկեղեցու եկամուտներից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 78; գ. 43, թ. 27; գ. 492, թ. 200;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 1585, թ. 48; գ. 8717, թ. 4; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42;
«Արձագանք», 1885, № 3; «Արարատ», 1916, էջ 22;
Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ, Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ։

Կորխ գյուղի արական ծխական դպրոց

1873-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 40 աշակերտ։ Եկեղեցուն կից շենք չունենալու պատճառով տեղավորված է եղել ուսուցչի տանը։

1877-ին ունեցել է մի ուսուցիչ, 36 աշակերտ։ 1880-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 25;
«Արարատ», 1878, ժԲ. էջ 454; 1880, № 4, էջ 171։

Կուլչախ գյուղի ծխական դպրոց

«Արարատ» ամսագրի 1878 թ. ԺԲ համարում նշված է Կուլչախ գյուղի արական ծխական դպրոցը, որն ունեցել է մի ուսուցիչ և 56 աշակերտ։ Այս գյուղը և նրա դպրոցը այլևս երբեք չեն հանդիպում։ Կուլչախ անունով գյուղ ցույց չի տրված նույնիսկ եկեղեցի ունեցող հայ գյուղերի ցուցակում, ինչպես նաև Կովկասի բոլոր բնակավայրերի ընդհանուր ցուցակում («Կավկազսկի կալենդար», 1915 թ.)։ Այս բոլորը մեր մեջ տարակուսանք է առաջացնում այդ անունով գյուղի գոյության վերաբերյալ առհասարակ։ Բնորոշ է, որ «Արարատ» ամսագրի այդ համարում չի նշված Ախալքալակի գավառի ամենամեծ գյուղը՝ Կարվաթը, որի բնակիչների թիվը 1915-ին անցել է 3 հազարից։ Մինչդեռ նախորդ և հետա-

գա տարիների շատ փաստաթղթերում հիշատակվում է Կարգահի ծխական դպրոցը, բայց Կուլչախինը՝ երբեք։ Մեզ թվում է, որ Կուլչախը նույն Կարգահն է, բայց քանի որ հաստատապես ասել այդ չենք կարող, այստեղ Կուլչախի դպրոցը բերում ենք առանձին։

«Արարատ», 1878, ԺԲ. էջ 453։

Ղադոլար գյուղի արական ծխական դպրոց

1874-ին գործել է, 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 29 աշակերտ։ Գործել է նաև 1880-ին։

«Արարատ», 1878, ԺԲ. էջ 454; 1880, № 4. էջ 171։

Ղավուրմա գյուղի արական ծխական դպրոց

1874-ին գործել է, 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 15 աշակերտ։ Հավանաբար հետագայում փակվել է, քանի որ 1884-ին «Մշակը» գրել է Ղավուրմա գյուղում հայկական դպրոց բացելու անհրաժեշտության մասին։ Բայց բացվե՞լ է արդյոք այն, մենք չգիտենք։

«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129;
«Արարատ», 1878, ԺԲ. էջ 454; «Մշակ», 1884, № 21։

Ղոճաբեկ (նաև Զոճաբե՞կ) գյուղի ծխական դպրոց

Մի շարք փաստաթղթերում և մամուլում հրապարակված նյութերում մեզ հանդիպում է Ախալքալակի գավառի Ղոճաբեկ գյուղի դպրոցը, իսկ միայն մի ցուցակում («Արարատ», 1878, ԺԲ, էջ 454)՝ Զոճաբեկ գյուղի արական ծխական դպրոցը։ Զոճաբեկ գյուղը և նրա դպրոցը հետագա տարիների փաստաթղթերում այլևս չեն երևում։ Զոճաբեկ անունով գյուղ ցույց չի տրված նաև եկեղեցի ունեցող հայ գյուղերի ընդհանուր ցուցակում (1901 թ.)։ Ենթադրում ենք, որ դա Ղոճաբեկ գյուղն է, որը գուցե և թյուրիմացաբար «Արարատ» ամսագրում Զոճաբեկ է դարձել։

Ղոճաբեկ գյուղի դպրոցը 1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 30 աշակերտ։ Զոճաբեկ (*) գյուղի դպրոցը 1877-ին նույնպես ունեցել է 1 ուսուցիչ և 32 աշակերտ։ Ղոճաբեկի դպրոցը 1881-ին ունեցել է 35 աշակերտ։ Այս դպրոցը հետագա մի քանի տասնամյակների տեղեկագրերում այլևս չի երևում։ Միայն Թեմական տեսչի կազմած 1911—12 ուս. տարվա տեղեկագրից և «Նոր դպրոց» ամսագրից իմանում ենք, որ այն 1911-ին գործել է։ Հավանաբար այդ դպրոցը գործել է նաև նախորդ

տարիներին (1905-ից հետո), քանի որ ամսագրի հիշյալ հաղորդումից իմանում ենք, որ Ղոճաբեկի դպրոցը տարիներ առաջ ավարտած երիտասարդները 1912-ին որոշել են բարեկարգել իրենց դպրոցի աշակերտական գրադարանը և այն կոչել մեծանուն դրամատուրգ Դ. Սունդուկյանի անունով։

1914-ին ունեցել է 1 ուսուցիչ, 61 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 27; «Արարատ», 1878, ԺԲ, էջ 454; «Նոր դպրոց», 1912, № 17—18, էջ 52; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 1585, թ. 48, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42; Թեմական տեսուչ Հ. Տեր-Միքայելյանի կազմած 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Ճանճղա գյուղի արական ծխական դպրոց

1874-ին գործել է։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 45 աշակերտ։ 1881-ին՝ 34 աշակերտ։ Ըստ երևույթին, երկար տարիներ փակ է եղել։ Թեմական տեսչի տեղեկագրի համաձայն վերաբացվել է 1894-ին, իսկ հետո, իհարկե նորից փակվել է, այս անգամ արդեն կառավարության կողմից։ Հետագա շատ տարիների փաստաթղթերում այս դպրոցը չի երևում։ Հայտնի է միայն, որ 1917-ի օգոստոսին կաթողիկոսը թույլ է տվել Ճանճղա գյուղում բաց անել ծխական դպրոց։

«Արարատ», 1878, ԺԲ, էջ 454, 1917, էջ 677; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 82; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Մամզարա գյուղի ծխական դպրոց

1873—1874 թվականներին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 40 աշակերտ։ Գործել է նաև 1881-ին, ունենալով 40 աշակերտ։ Շատ տարիներ հետո հանդիպում է 1906-ին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ Եղել է արական դպրոց։ 1908—09 ուս. տարում գործել է որպես երկսեռ դպրոց, ուր սովորել են 57 տղա և 5 աղջիկ։ 1911—12 ուս. տարում եղել է քառամյա դպրոց՝ միայն մեկ դասարանով։ 1912—13 ուս. տ. ցույց է տրված 3 բաժանմունք՝ 44 աշակերտով։ 1914-ին ունեցել է մեկ ուսուցիչ, 53 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26; գ. 182, թ. 48; գ. 492, թ. 200;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 9; գ. 1585, թ. 48; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42; Հ. Տեր-Միքայելյանի կազմած 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Մաջադի գյուղի ծխական դպրոց

Ախալքալակի գավառի Մաջադի (մի այլ փաստաթղթում՝ Մեջադի) գյուղում 1881-ին գործել է հայկական ծխական դպրոց՝ 1 ուսուցչով, 42 աշակերտով։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Մերենա գյուղի արական ծխական դպրոց

1873 և 1874 թվականներին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 20 աշակերտ։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 24 աշակերտ, 1881-ին՝ 45 աշակերտ։ Գործել է նաև 1884—1885 թվականներին, սակայն հետագա տարիների ցուցակներում այլևս չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26;
«Արարատ», 1878, ԺԹ. էջ 454;
«Արձագանք», 1885, № 3;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 1585, թ. 48։

Զամտարա գյուղի արական ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը չգիտենք։ 1873-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 63 աշակերտ։ 1877-ին՝ 41 աշակերտ։ 1884-ին եղել է միդասյան ձմեռային դպրոց, իսկ 1885-ին փակվել է կառավարության կողմից։

«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129;
«Արարատ», 1878; ԺԹ. էջ 453; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 27; գ. 50, թ. 66,

Չիթլիկ (նաև Չիֆլի՞կ) գյուղի արական ծխական դպրոց

1873 և 1874 թվականներին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 25 աշակերտ։ 1877-ին՝ 1 ուսուցիչ, 30 աշակերտ։ 1880-ին գործել է։
Հետագա տարիների ցուցակներում չի երևում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 27;
«Արարատ», 1878, ԺԹ. էջ 453; 1880, № 4, էջ 171։

Չիգրաշեն գյուղի արական ծխական դպրոց

1873-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 50 աշակերտ։ 1877-ին՝ 1 ուսուցիչ, 50 աշակերտ։ 1881-ին՝ 42 աշակերտ, 1884-ին եղել է միդասյան ձմեռային դպրոց, 1885-ին փակվել է կառավարության

կողմից։ Մեկ էլ այս դպրոցին հանդիպում ենք 1915-ին, իմանալով, որ այդ թվականին այն նորից բացվել է, արժանանալով կաթողիկոսի օրհնության կոնդակին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 27, վ. 50, թ. 66;
«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129;
«Արարատ», 1878, ԺԹ. էջ 354; 1915, էջ 268; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, ց. 1, թ. 48։

Սամսար (Մեծ) գյուղի արական ծխական դպրոց

1873-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 20 աշակերտ։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 18 աշակերտ։ 1881-ի մի ցուցակում էխտով (Իխա՞ի) գյուղի դպրոցից բացի ցույց է տրված նաև էխտելա Սամսար գյուղի դպրոցը։ Մենք չգիտենք՝ դա Մեծ Սամսա՞րն է, թե՞ մի այլ գյուղ (գուցե և Փոքր Սամսարը)։

Մի այլ ցուցակում Ախալքալակում ցույց է տրված նաև Տոկ-Սամսար գյուղը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26;
«Արարատ», 1878, ԺԹ. էջ 454։

Սաթխա գյուղի ծխական դպրոց

Ախալքալակի գավառի Սաթխա գյուղի ծխական դպրոցը 1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 48 աշակերտ։ Գործել է նաև 1881-ին, ունենալով 1 ուսուցիչ, 82 աշակերտ։

Հետագա ճակատագիրը անհայտ է։ Հավանաբար այն այլևս չի գործել, քանի որ 80-ական թվականների կեսերին Սաթխա գյուղում բացվել ու գործել է «շինական արքունի դպրոց» («Արձագանք»)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48;
«Արձագանք», 1885, № 3։

Սուլդա գյուղի արական ծխական դպրոց

1873-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 40 աշակերտ։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 19 աշակերտ, 1881-ին՝ 34 աշակերտ։

Այս դպրոցը մեկ էլ հանդիպում է Վրաստանի և Իմերեթի թեմի 1911—12 ուս. տարվա տեղեկագրում։ Եղել է նոստյա դպրոց՝ 2 դասարանով։ 1914-ին ունեցել է երկու ուսուցիչ, 101 աշակերտ։ 1916-ին գոր-

ծել է, սակայն գտնվել է նյութական կարիքի մեջ։ Նպաստ է ստացել դպրոցական ընդհանուր ֆոնդից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 27;
«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129;
«Արարատ», 1878, ԺԲ. էջ 453; 1916, էջ 466 և 469;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42;
Հ. Տեր-Միքայելյանի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Վաչչան գյուղի արական ծխական դպրոց

1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 35 աշակերտ։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 32 աշակերտ, 1881-ին՝ 31 աշակերտ։ Հետագա տարիների ցուցակներում չի հիշվում (հավանաբար այն պատճառով, որ դեռևս 1880-ական թվականներից այստեղ գործել է պետական գյուղական դպրոց)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26;
«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129;
«Արարատ», 1878, ԺԲ. էջ 453;
«Արձագանք», 1885, №.3;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, ց. 1, թ. 48։

Տաղեշ (Դաղե՞շ) գյուղի արական ծխական դպրոց

1874-ին գործել է, իսկ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 20 աշակերտ։ Գործել է նաև 1880-ին։ Շատ տասնամյակների փաստաթղթերում այլևս չի հիշվում։ Հայտնի է, սակայն, որ այն 1916-ին գործել է, բայց գտնվել է նյութական կարիքի մեջ։

«Դպրոց», 1875—1876, № 4, էջ 129;
«Արարատ», 1878, ԺԲ. էջ 453; 1880, № 4, էջ 171; 1916, էջ 22։

Տիրկի (Տրկի՞ն) գյուղի ծխական դպրոց

Ախալքալակի գավառի Տիրկի (Թե՞ Տրկին) գյուղի դպրոցը 1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 10 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 25։

Տոկ Սամսար գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1916-ի նոյեմբերին։ Այդ կապակցությամբ էջմիածնից ուղարկվել է կաթողիկոսի օրհնության կոնդակը։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17;
«Արարատ», 1916, էջ 794։

Փոկ գյուղի ծխական դպրոց

Ախալքալակի գավառի Փոկ գյուղի արական ծխական դպրոցը 1873-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 40 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 26։

Օլավերդ գյուղի արական ծխական դպրոց

1873-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 45 աշակերտ։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 21 աշակերտ, 1881-ին՝ 60 աշակերտ։ 1884-ին եղել է միդասյան ձմեռային դպրոց, 1885-ին փակվել է։ Հավանաբար հետագայում նրա փոխարեն բացվել է պետական (ռուսական) դպրոց։

«Արարատ», 1878, ԺԲ. էջ 544;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66, գ. 43, թ. 26;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

Օրճա գյուղի արական ծխական դպրոց

1973-ին և 1874-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ և 40 աշակերտ։ 1877-ին ունեցել է 1 ուսուցիչ, 20 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 25;
«Արարատ», 1878, ԺԲ. էջ 454;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48։

ԲՈՐՉԱԼՈՒԻ ԳԱՎԱՌ

Ագարակ (Ստեփանավանի շրջան) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1884-ին՝ թեմական առաջնորդ Արիստակեսի ջանքերով։ Չգիտենք, թե ինչու չի մտել 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում։ Ենթադրում ենք, որ 1884-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին է կազմակերպվել և այդ պատճառով դուրս է մնացել ցարական կառավարական օրգանների կողմից նախապես կազմված ցուցակներից։ Սակայն չենք կասկածում, որ այս դպրոցը ևս հայ բոլոր դպրոցների հետ միասին փակվել է 1885-ին։

Նրա մասին այլ տեղեկություններ չենք գտել արխիվային ֆոնդերում։

«Արձագանք», 1884, 18 հոկտեմբերի։

Աթան գյուղի (Թումանյանի շրջան) ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1907—08 ուս. տարվա մի տեղեկագրում՝ տպագրված «Նոր դպրոց» ամսագրում։ Եղել է միդասյան երկսեռ դպրոց՝ 27 աշակերտով (7 աղջիկ)։

«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 68։

Աղքյորփա գյուղի (Բորչալուի գավառ) ծխական դպրոց

Կաթողիկոսի հատուկ կոնդակով Վրաստանի թեմի առաջնորդին թույլ է տրվել Բորչալուի գավառի Աղքյորփա գյուղում բաց անել միդասյան տրական ծխական դպրոց։ Դա եղել է 1890-ի կեսերին։ Նույն թվականին էլ դպրոցը բացվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 196; «Արարատ», 1890, № 10, էջ 583; «Циркуляр», 1890, № 10, էջ 559։

Այազմա գյուղի ծխական դպրոց

«Նոր դպրոց» ամսագիրը հաղորդել է, որ Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհուրդը 1908 թ. սեպտեմբերի 24-ի նիստում որոշել է նպաստ տալ նաև Մալկայի շրջանի Նարդևան և Այազմա գյուղերի ծխական դպրոցներին։ Ուրեմն կարելի է ենթադրել, որ Այազմա գյուղի դպրոցը բացվել է 1907-ին, կամ էլ 1908-ի սկզբին, քանի որ նախորդ տարիների փաստաթղթերում այն չի երևում։

Հիշյալ երկու գյուղերն էլ մտել են Բորչալուի գավառի մեջ։

«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 85։

Ակկաուրտ գյուղի (Բորչալուի գավառ) դպրոց

1893-ի հունիս ամսին Բորչալուի գավառի կալվածատեր իշխան Նիկոլայ Միքայելի Արղության-Դոլգորուկովը (Երկայնաբազուկ) դիմել է Թիֆլիսի Նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորին, խնդրելով նրան միջնորդել Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուի առաջ՝ թույլ տալու իր կալվածքում՝ Բորչալուի գավառի Ակկաուրտ գյուղում իր հաշվին բաց անելու գյուղական տարրական երկսեռ դպրոց՝ տղաների համար գյուղատնտեսական, աղջիկների համար ձեռագործի բաժանմունքներով։ Ըստ որում, տարրական դպրոցների համար սահմանված կանոնների ճշգրիտ պահպանման պատասխանատվությունը դրվել է Արղությանի կնոջ՝ Մարիամի (հայրական ազգանունը՝ Ճանչյան) վրա, որն ունեցել է տնային դաստիարակչական կոչում։

Թիֆլիսի նահանգապետից պաշտոնական տեղեկանք ստանալով այն մասին, որ իշխան Արղության-Դոլգորուկովը և նրա կինը «բարոյական և քաղաքական անհուսալիության մեջ չեն նկատվելու», ուսումնարանների դիրեկտորը հատուկ գրությամբ ուսումնական օկրուգի հոգաբարձուին խնդրում է Արղություններին թույլ տալ Ակկաուրտ գյուղում բաց անելու տարրական գյուղական դպրոց։

1893-ի հուլիսի 27-ին հոգաբարձուն տալիս է հիշյալ դպրոցը բացելու թույլտվությունը և, միաժամանակ, նահանգի ուսումնարանների դիրեկտորին հանձնարարում հետևել, որպեսզի այդ դպրոցն աշխատի «տեղական դպրոցի» համար սահմանված ուսումնական պլանով, և այնտեղ օգտագործվեն վերադաս օրգանների կողմից հավանության արժանացած դասագրքերը։

Իհարկե, կասկածից դուրս է, որ այդ դպրոցը բացվել և գործել է, բայց մինչև ե՞րբ, դժվարանում ենք ասել, քանի որ նրա մասին մեր ձեռքի տակ այլ նյութեր չկան։

Մենք չկարողացանք պարզել նաև Ակկաուրտ գյուղի անվան հարցը։ Ուսումնարանների դիրեկտորի գրության մեջ երկու անգամ նշված է Ակկաուրտ (Аккаурт) գյուղը, ուսումնական օկրուգի հոգաբարձուի գրության մեջ գործածվել երկու անգամ՝ Անաուրտ գյուղը, իսկ «Կավկազսկի կալենդարում» (1915 թ.) Բորչալուի գավառում ցույց են տրված Ակկաուրտ (Аккаурт) անունով երկու գյուղ, մեկը՝ հայկական՝ 289 բնակչով, մյուսը՝ ադրբեջանական՝ 183 բնակչով։ Մենք պահպանել ենք Ակկաուրտ անունը։

Հայտնի է, որ Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի (Լոռու) գյուղերը անցել են Սովետական Հայաստանին, սակայն Հայկական ՍՍՀ վարչատերիտորիալ բաժանման մասին հրատարակված մի շարք գրքերում, ինչպես նաև Զ. Կորկոտյանի «Խորհրդային Հայաստանի բնակչությունը» վիճակագրական աշխատության մեջ, ուր նշված են Հայաստանի բոլոր բնակավայրերը՝ 1831-ից մինչև 1931 թվականը, մենք Ակկաուրտ կամ Անաուրտ անունով գյուղ չգտանք։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 127, թ. 1—2; «Կավկազսկի կալենդար», 1915, էջ 85։

Այգեհատ (Դանուշավան, Թումանյանի շրջան) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1916-ի աշնանը՝ գյուղի համայնքի որոշմամբ և կաթողիկոսի թույլտվությամբ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17; «Արարատ», 1917, № 1, էջ 12։

Աշխալա գյուղի ծխական դպրոց

Աշխալան եղել է Բորչալուի գավառի Տրիոլեթի գավառակի (Ծալկայի վիճակի) խոշոր հայաբնակ գյուղերից մեկը։ 1915-ին ունեցել է 1885 բնակիչ։ Սակայն այդ գյուղի ծխական դպրոցը հիմնվել է բավականաչափ ուշացումով։ 1907 թ. հոկտեմբերի 8-ին գյուղի հասարակությունը որոշել է իրենց մոտ հիմնել ծխական դպրոց և 116 հոգու ստորագրությամբ համախոսական-դիմում է ուղարկել հայ հոգևոր վարչությանը։ Դպրոցը հիմնվել է և գործել, բայց, ինչպես երևում է, գտնվել է նյութական աննախանձելի դրության մեջ։ 1915-ի դեկտեմբերին կաթողիկոսը հատուկ կարգադրություն է արել էջմիածնի սինոդին՝ նպաստ տալու Վրաստանի թեմի մեջ մտնող Աշխալա (Աշղալա) գյուղի հայկական դպրոցին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 305, թ. 1—5;
«Արարատ», 1916, № 1—2, էջ 13։

Բոլնիս-Խաչեն գյուղի արական ծխական դպրոց

Տարբեր տարիների փաստաթղթերում Բոլնիս-Խաչեն գյուղը մեկ ցույց է տրված Թիֆլիսի գավառում, մեկ՝ Բորչալուի։ Մենք թողել ենք վերջինում։

Բոլնիս-Խաչենը հայ մեծանուն գրող ու մանկավարժ Ղազարոս Աղայանի ծննդավայրն է, որի ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը, ցավոք, մեզ հայտնի չէ։ Գիտենք, որ դեռևս անցած դարի քառասունական թվականներին Բոլնիս-Խաչենում գրել-կարդալ են սովորեցրել, և հենց Աղայանն էլ 5—6 տարեկան հասակում հայրենի գյուղում ծանոթացել է մեսրոպյան տառերին։ Բայց դա, իհարկե, դեռ դպրոցական ուսուցում չէր, քանի որ այդ ժամանակ այնտեղ դպրոց չի գործել։

Բոլնիս-Խաչենի ծխական դպրոցին առաջին անգամ հանդիպել ենք 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում։ Եվ քանի որ այն չի երևում 1871—1881 թվականների տեղեկագրերից ոչ մեկում, ապա կարելի է ենթադրել, որ այդ դպրոցը հիմնվել է 1882—1884 թվականների միջև ընկած ժամանակամիջոցում։ Համենայն դեպս հաստատապես հայտնի է, որ 1884-ին այն գործել է, որովհետև հենց այդ թվականին է կազմվել փակման ենթակա հայ դպրոցների ցուցակը։

Թեմական առաջնորդի կազմած տեղեկագրի համաձայն Բոլնիս-Խաչենի միդասյան արական ծխական դպրոցը վերաբացվել է մեծ ուշացումով՝ 1894—1895 ուս. տարում, իսկ 1896-ի առաջին կեսին գործել է։ Նույն թվականին էլ այն փակվել է երկրորդ անգամ և վերաբացվել 10—11 տարի հետո՝ 1907-ից ոչ շուտ։ 1908—09 ուս. տարում դարձյալ

եղել է միդասյան արական դպրոց՝ 1 ուսուցչով և 35 աշակերտով։ 1911-ին համարվել է եռամյա տարրական դպրոց, իսկ 1912-ին դարձել է քառամյա՝ թեմական տեսուչ Հ. Տեր-Միրաքյանի ջանքերով։ 1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, 88 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 65; գ. 357, թ. 74; գ. 182, թ. 46;
«Նոր դպրոց», 1912, № 15—16, էջ 49—50; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42; Հ. Տեր-Միրաքյան, «Վրաստանի թեմի եկեղեցական ծխական դպրոցները 1911—12 թթ.»; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 69։

Գյառգառ հայ (Հայ Գերգեր, այժմ՝ Գյառգյառ, Ստեփանավանի շրջան) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1878-ին (մի այլ փաստաթղթում նշված է 1879-ը)։ 1881-ին ունեցել է 25 աշակերտ։ 1884-ին գործել է, իսկ 1885-ին փակվել կառավարության կողմից։ 1888—89 ուս. տարում եղել է միդասյան դպրոց՝ 2 բաժանմունքով, որտեղում սովորել են 41 հոգի։ Ուսուցիչն է եղել հայանի հայ գրող ու հրապարակախոս Արշակ Չոպանյանը։

Այս դպրոցը 1891-ին գործել է, իսկ 1896-ին դարձյալ փակվել է կառավարության կողմից։ Վերաբացվել է 1905-ին։ 1911-ին ունեցել է 55 աշակերտ, 1914-ին՝ 2 ուսուցիչ, 96 աշակերտ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 197; գ. 1585, թ. 40; գ. 3997, թ. 20; գ. 8717, թ. 3; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 70; գ. 50, թ. 67; գ. 199, թ. 17—23; «Վիճ. ակդ. 1888—89 ուս. տարվա», էջ 20; «Նոր դպրոց», 1911, № 25—26, էջ 19։

Գյուլագարակ գյուղի (Ստեփանավանի շրջան) արական եկեղեցական ծխական դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագրի մի հաղորդումից իմանում ենք, որ Գյուլագարակ գյուղի ծխատեր քահանա Հակոբ Շահինյանը (Ներսիսյան դպրոցի շրջանավարտ) 60-ական թվականներից սկսած այդ գյուղում ուսուցչություն է արել։ Հավանաբար դա մասնավոր կարգի խայթյական մի դպրոց է եղել, քանի որ այլ փաստաթղթերի համաձայն Գյուլագարակի ծխական դպրոցը հիմնվել է 1882-ին։ Եղել է միդասյան դպրոց։ Երեք տարի հետո փակվել է կառավարության կողմից։ Վերաբացվել է 1890-ին, դարձյալ որպես միդասյան արական դպրոց։ 1892—93 ուս. տարում ունեցել է 42 սովորող։ 1896-ին նորից փակվել է և վերաբացվել 12 տարի հետո՝ 1908—09 ուս. տարում՝ Կովկասյան հայ բարեգործական ընկերության նպաստով և ժողովրդի միջոցներով։ Եղել է եռամյա դպրոց։ 1911—12 ուս. տարում ունեցել է 84 աշակերտ։

Ավագ ուսուցիչն է եղել Ներսիսյանավարտ, գրող Աղ. Վարդանյանը։ 1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, 75 աշակերտ։

Գյուղացիների չքավորության պատճառով երկար ժամանակ ձգձգվել է դպրոցի շենքի կառուցումը։ Ահա թե ինչու ամենայն Հայոց կաթողիկոսը ստիպված է եղել միջամտել այդ գործին և Վրաստանի Հայոց թեմի առաջնորդին հանձնարարել «որևէ կերպով ավարտել տալ Գյուլագարակ գյուղի ծխական դպրոցի կիսատ մնացած շինարարությունը» (1913 թ.)։

«Մեղու» Հայաստանի», 1886, № 53; «Արարատ», 1890, № 12, էջ 696, 1913, № 12, էջ 1085; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 197, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 67, գ. 357, թ. 72, գ. 199, թ. 17—23, գ. 11, թ. 1—23; «Նոր դպրոց», 1913, № 2, էջ 68—71; «Циркуляр», 1890, № 10, էջ 559։

Դամիա գյուղի ծխական դպրոց

«Արարատ» ամսագիրը նշել է, որ 1913-ի հոկտեմբերի 22-ի կոնդակով կաթողիկոսը թույլ է տվել Վրաստանի թեմի Դամիա գյուղի նկեղեցու գավթում բաց անելու ծխական դպրոց։ Անկասկած, այդ թվականին էլ այն բացվել է։

Տեղեկատու աղբյուրները Դամիա գյուղը ցույց են տալիս Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում։

«Արարատ», 1913, № 11, էջ 995։

Դաշբաշ գյուղի ծխական դպրոց

Վրաստանի և Իմերեթի թեմի Բորչալուի գավառի Դաշբաշ գյուղի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է այդ թեմի հայ դպրոցների 1911—1912 ուս. տարվա տեղեկագրերում։ Համարվել է քառամյա դպրոց, բայց ունեցել է միայն մի դասարան։ Այս դպրոցը մի քիչ այլ կերպ է ներկայացված ԿՀԲ ընկերության 1912 թ. տեղեկագրում։ Ըստ այդ տարեգրի Դաշբաշի դպրոցը 1912 թ. ունեցել է 3 բաժանմունք (31 աշակերտ), ուրեմն պետք է բացված լինի 1910-ից ոչ ուշ։ Պահվել է ԿՀԲ ընկ. նպաստով։

Տե՛ս Մանկավարժական գիտ. ինստիտուտի արխիվ՝ թեմատիկ տետր։ Հ. Տեր-Մինասյանի կազմած 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը, ԿՀԲ ընկ. 1912 թ. տեղեկագրում, էջ 32։

Դսեղ (Թումանյանի շրջան) գյուղի արական ծխական դպրոց

Հիմնվել է 1878-ին՝ որպես միդասյան ծխական դպրոց։ 1881-ին ունեցել է 1 ուսուցիչ և 28 աշակերտ։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։ 1888—89 ուս. տարում ունեցել է 25 աշակերտ և 1 ուսուցիչ։ Սակայն, ըստ երևույթին, ուսումնական տարին չավարտած այն փակվել է, քանի որ 1890-ին Դսեղի հասարակության որոշման հիման վրա կաթողիկոսը հատուկ կոնդակով թույլ է տվել «բանալ վերստին երկուց ամաց հետե փակեալ միդասյան զուսումնարանն տղայոց Դսեղ գեղջ Լոռուայ գավառի»։ Թեմական առաջնորդը իր միջնորդագրում հայտնել է կաթողիկոսին, որ դպրոցը փակված է եղել «վասն նվազության եկամտից նորան։ 1891-ին գործել է։ 1896-ին նորից փակվել է, այս անգամ արդեն կառավարության կողմից։ Վերաբացվել է 1906-ին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 120 աշակերտ (20 աղջիկ)։ 1908—09 ուս. տարում եղել է միդասյան դպրոց, ուր սովորել են 40 տղա և 30 աղջիկ, իսկ 1911-ին՝ 118 տղա և 50 աղջիկ։ Դասարանները չափազանց ծանրաբեռնված են եղել աշակերտներով։ Առաջին բաժանմունքում սովորել են 58, երկրորդում՝ 70 հոգի։

1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, 98 աշակերտ։

Ինչպես երևում է, Դսեղում գործել է նաև պետական դպրոց, որի համար 1912-ին կառուցված շենքը հասարակության որոշմամբ հատկացվել է ծխական դպրոցին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48; գ. 2018, թ. 197; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 72; ֆ. 13; ց. 11, գ. 264, թ. 42; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 50; գ. 182, թ. 25—43; գ. 241, թ. 46; «Վեհ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 13; «Արարատ», 1890, № 12, էջ 696; «Նոր դպրոց», 1911, № 25—26, էջ 17; 1912, № 15—16, էջ 50—51;

«Циркуляр», 1890, № 10, էջ 559։

Լեջան գյուղի (Ստեփանավանի շրջան) ծխական դպրոց

Լեջանը եղել է Բորչալուի գավառի հայաբնակ խոշոր գյուղերից մեկը։ Նրա ծխական դպրոցը հիմնվել է 1884-ին՝ Վրաստանի և Իմերեթի թեմական առաջնորդ Արիստակես արքեպիսկոպոսի ջանքերով։ Չգիտենք, թե ինչո՞ւ չի մտել 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում։ Գուցե նրա համար, որ տարեվերջին է կազմակերպվել և դուրս է մնացել կառավարության հաշվառման ցուցակներից։ Սակայն կասկածից վեր է, որ հայ դպրոցների ընդհանուր փակման ժամանակ (1885 թ.) այս դպրոցը ևս փակվել է։ Հետագա տարիների ու տասնամյակների փաստաթղթերում այլևս չի երևում։ Հավանաբար այնտեղ բացվել ու գործել է պետական ռուսական դպրոց։

«Кавказский календарь», 1915, էջ 151;

«Արձագանք», 1884, 10 հոկտեմբերի։

Խաչի գյուղի (Լոռու գավառ, այժմ՝ Դեբեդ, Գուգարքի շրջան) ծխական դպրոց

Հիմնվել է 1905-ի հոկտեմբերին՝ գյուղի հասարակության որոշմամբ։ 1908—09 ուս. տարում եղել է երկսեռ ծխական դպրոց, ուր սովորել են 44 տղա, 6 աղջիկ։ 1911-ին գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 38 աշակերտ և 3 աշակերտուհի։ Նույն թվականին էլ դպրոցի համար գյուղի հասարակությունը կառուցել է նոր շենք։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։

1914-ին ունեցել է 40 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 25—43; ֆ. 35, ց. 1, գ. 157, թ. 1—3; «Նոր դպրոց», 1911, № 25—26, էջ 18; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42։

Հաղպատ գյուղի (Թումանյանի շրջան) ծխական դպրոց

Հաղպատը հայտնի է որպես հայ դպրության հնագույն ու նշանավոր օջախներից մեկը, որը առանձնապես փայլել է 12—13-րդ դարերում՝ իր հռչակավոր դպրոցով և ուսուցիչներով։

«Արարատ» ամսագրի հաղորդման համաձայն, Հաղպատի արական ծխական դպրոցը բացվել է 1877—78 ուս. տարում, ունենալով 2 ուսուցիչ և 23 աշակերտ։ Ինչպես երևում է էջմիածնի սինոդի կողմից 1882-ի փետրվարին կազմված մի տեղեկագրից, այդ դպրոցը գործել է Հաղպատի վանքում (ունեցել է 1 ուսուցիչ և 31 աշակերտ)։ Ըստ երևույթին, 1885 թվականին չի գործել, քանի որ չի մտել այդ ժամանակ փակված հայ դպրոցների ցուցակում։

Այս դպրոցը երկար տարիներ այլևս չի հիշատակվում։ Նրան մեկ էլ հանդիպում ենք 1908—09 ուս. տարում գործած հայ դպրոցների ցուցակում։ Այդտեղից մենք իմանում ենք, որ այն եղել է երկսեռ ծխական դպրոց, ուր սովորել են 20 տղա և 15 աղջիկ։ 1909-ին նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ 1911-ին դպրոցի երեք բաժանմունքներում սովորել են 50 հոգի (26 աղջիկ)՝ մեկ ուսուցչի ղեկավարությամբ։

Ա. Այդոյանյան, «Պատմություն հայ դպրոցի», Ա հատոր, Կահիրե, 1946, էջ 228—236; Ա. Ա. Մովսիսյան, «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության», Երևան, 1958, էջ 225—238;

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 40; գ. 2018, թ. 196; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 40; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 51; «Նոր դպրոց», 1911, № 25—26, էջ 18։

Հայդարբեկ (այժմ՝ Սվերդլով, Ստեփանավանի շրջան) գյուղի արական ծխական դպրոց

Հայդարբեկ գյուղում 1881-ին գործել է ծխական դպրոց, ուր սովորել են 26 տղաներ։ Ըստ երևույթին, հետո փակվել է և 1884-ին՝ վերաբացվել՝ թեմական առաջնորդ Արստակեսի ջանքերով։ Եղել է միգասյան արական դպրոց, որը 1885-ին փակվել է կառավարության կողմից։

Հետագա տասնամյակների ցուցակներում այլևս չի երևում։ Հավանաբար նրա փոխարեն բացվել է պետական դպրոց։

«Արձագանք», 1884, 18 հոկտեմբերի։ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 60; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 40։

Հոբարձի գյուղի (Ստեփանավանի շրջան) ծխական դպրոց

1908-ի նոյեմբերի 9-ին Հոբարձի գյուղի հասարակությունը (51 հոգու ստորագրությամբ) որոշել է կառուցել դպրոցի սեփական շենք և ընտրել է հոգաբարձություն, խնդրելով հոգևոր վարչությանը հաստատել վերջինիս կազմը։ Հավանաբար այդ թվականին էլ Հոբարձիի դպրոցը հիմնվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 428, թ. 1—6։

Ղուշչի, Աշխալա և Դերև գյուղերի միացյալ կենտրոնական ծխական դպրոց (Բորչալուի գավառ)

Մակար կաթողիկոսը 1889 թ. հունիսի 3-ի № 240 կոնդակով Վրաստանի թեմի առաջնորդին իրավունք է տվել «բանալ ի Ղուշչի, յԱշղարայ և ի Դերէ գյուղորայս Ծալկայի՝ զեկեղեցական-ծխական միգասյան կեդրոնական տղայոց ուսումնարան» և հաստատել է այդ դպրոցի հոգաբարձության կազմը։

Անկասկած, այդ դպրոցը բացվել և գործել է հիշյալ գյուղերից որևէ մեկում, գուցե Ղուշչի գյուղում, որովհետև կաթողիկոսի կոնդակում այն նշված է առաջինը (առհասարակ մի քանի գյուղերի կենտրոնական դպրոց բացելիս առաջինը նշվել է այն գյուղի անունը, որտեղ պիտի տվյալ դպրոցը գործեր)։ Բացի այդ, հայտնի է, որ ավելի ուշ Աշխալա գյուղում բացվել է առանձին ծխական դպրոց։ Կենտրոնական դպրոցը սպասարկել է նաև հարևան գյուղի երեխաներին։

«Արարատ», 1889, ԺԲ. էջ 674։

Ղզլբիլիսա (այժմ՝ Ղզլդաշ, Կալինինոյի շրջան) գյուղի ծխական դպրոց

Թիֆլիսի նահանգի հայաբնակ Ղզլբիլիսա գյուղը եղել է Բորչալուի գավառի Տրիոլեթի (ռուսական ազբյուրներում՝ Տիոնեթի) գավառակի կամ Ծալկայի վիճակի խոշոր գյուղերից մեկը. 1914-ին ունեցել է 1130 բնակիչ։

Ղզլբիլիսա գյուղի եկեղեցական ծխական դպրոցը բացվել է 1895-ին, լինելով միգասյան արական դպրոց՝ 3 բաժանմունքով։

Շատ կարճ է եղել այս դպրոցի կյանքը։ 1895-ի նոյեմբերի 29-ին Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուն Կովկասի կառավարչապետին ուղղված նամակում նշել է, որ այդ և հայկական նորաբաց մի շարք այլ դպրոցներում «բոլոր առարկաների, այդ թվում նաև ռուսաց լեզվի, ուսուցիչներ են նշանակված այնպիսի անձեր, որոնց 1889 թվականի մարտի 22-ի բարձրագույն հրամանով արգելված է թույլ տալ ուսուցանելու»։

Այդ հիման վրա հոգաբարձուն պահանջել է կարգադրություն անել փակելու հայկական հիշյալ դպրոցները, կամ էլ նշված գյուղերի հասարակություններին առաջարկելու «բաց անել տարրական դպրոցներ ընդհանուր հիմունքներով», այսինքն՝ պետական։

Այլ դպրոցների հետ միասին փակվում է նաև Ղզլբիլիսա գյուղի նորաբաց ազգային դպրոցը, որի մասին տեղեկություններ այլևս չենք հանդիպել հետագա տարիների փաստաթղթերում։

ԼՈՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 339, թ. 19; գ. 357, թ. 94; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 1090, թ. 67։

Ճոճկան գյուղի (Թումանյանի շրջան) ծխական դպրոց

Ճոճկան գյուղի դպրոցը մեզ առաջին անգամ հանդիպել է 1909-ին Բաքվի հայ կուլտուրական միության կողմից նպաստ ստացած դպրոցների ցուցակում։ Հավանաբար, դրանից առաջ այն գոյություն է ունեցել, քանի որ 1911—12 ուս. տարվա հայ դպրոցների տեղեկագրի համաձայն եղել է թաքամյա դպրոց։

ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 52;

ՏՀՀ Թեմական տեսուչ Հ. Տեր-Միրաքյանի կազմած 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Մարց գյուղի (Թումանյանի շրջան) ծխական դպրոց

Բորչալուի գավառի (ներկա Թումանյանի շրջանի) Մարց գյուղի հոգաբարձությունը 1909-ի փետրվարի 14-ին կայացրել է այսպիսի որոշում. «Մենք «Մարց» գյուղի հոգաբարձությունս, ի նկատի ունենալով դպրոց ունենալու անհրաժեշտությունը, վճռեցինք ունենալ ուսուցիչ ու վարձեցինք պ. Տիգրան Մնացականյանին 120 մն. ռոճիկով, որը պիտի հավաքվի ժողովրդից։ Այժմ առաջարկում ենք միջնորդությամբ Լ. Գ. արժ. Ղ. Բ. Մարիկյանի, ի բարեհաճ հաստատության առաջնորդությամբ»։ Բերեմն փաստորեն դպրոցը բացվել է, ուսուցիչ էլ հրավիրել են, սակայն թեմական առաջնորդը, անտեսելով այդ ամենը, հնարավոր չի համարել ընդառաջել գյուղի հասարակությանը։ Փետրվարի 23-ին նա գրել է, որ «նախ անժամանակ է այժմ բացումն դպրոցի և հրավիրումն ուսուցչի ի պաշտոն։ Երկրորդ անհրաժեշտ է... նախապես առաջի առնել երկուս օրինակ նախահաշիվն դպրոցին և վավերական պատճեն վկայագրոյն հրավիրելիք ուսուցչին...»։

Իհարկե, սահմանված կարգի պահպանման տեսակետից թեմական առաջնորդը իրավացի էր։ Իրոք, անժամանակ էր բացվում դպրոցը, և կարևոր էր նաև պարզել, թե ի՞նչ միջոցներով է պահվելու այն, և ինչ կրթություն ունի հրավիրված ուսուցիչը։ Բայց միթե՞ չէր կարելի, այդքան չոր ու բյուրոկրատական պատասխան ուղարկելու փոխարեն, ողջունել ու խրախուսել գյուղի հասարակության որոշումը, հաստատել դպրոցի բացումը և միաժամանակ պահանջել, որ իրեն ներկայացվեն անհրաժեշտ տեղեկությունները։

Գյուղի հասարակությունը 1909-ի դեկտեմբերին մի նոր որոշում է ընդունել ծխական դպրոցը հաստատել տալու վերաբերյալ, բայց դարձյալ հանդիպել է թեմական առաջնորդի դիմադրությանը։ Վերջինս դեկտեմբերի 30-ին Լոռվա գործակալին գրել է, որ «ծխական ժողովը պարտ է նախորոշել, թե որո՞վ արդյամբ կառավարելու է բանալի դպրոցն Մարց գեղջ, և երկրորդ արդեն մերձ է վախճան ուսումնական ամի և թե այսօրիկ կարևոր տեղեկություն մարթն մատուցանել մեզ ի՛ մայիս ամսին ի՛ տնօրինել պարժան»։

Չնայած թեմական առաջնորդը դարձյալ իրավացի էր, բայց, ցավոք, այդ ձևականության հետևանքով, գուցե և այլ պատճառներով, հետագա տարիների փաստաթղթերում Մարց գյուղի ծխական դպրոցը մեզ այլևս չի հանդիպել։ Հնարավոր չեղավ պարզել, թե արդյոք կատարվել էն թեմի առաջնորդի պահանջները, և ի՞նչ ճակատագիր է ունեցել նորածին դպրոցը։

ԼՈՍՀ ՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 487, թ. 1—5։

Նարդևան գյուղի (Բորչալուի գավառ) ծխական դպրոց

«Արձագանք» լրագիրը դեռևս 1885-ի սկզբներին գրել է, որ Նարդիվան (Նարդևան) գյուղն ունի 45 տուն և «եկեղեցու գավթում մի սենյակից բաղկացած դպրոց»։

Հավանաբար, այս դպրոցը երկար տարիներ փակ է մնացել և վերաբացվել է միայն 1895-ին (ոմանք այդ թվականը համարել են նրա հիմնադրման տարեթիվը)։ Եղել է միդասյան արական դպրոց։ Անկասկած, 1896-ին կամ հաջորդ տարում այն ևս փակվել է, վերաբացվել է, հավանաբար, 1907-ին։ 1908-ին նպաստ է ստացել ԿՀԲ ընկերությունից։

«Արձագանք», 1885, № 2;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 338, թ. 19; գ. 357, թ. 96; «Նոր դպրոց», 1908, № 3, էջ 85։

Շահալի (այժմ՝ Վանագնի, Գուգարքի շրջան) ծխական դպրոց

Հիմնվել է 1884-ին՝ թեմական առաջնորդ Արստակեսի ջանքերով։ Եղել է միդասյան արական դպրոց, պահվել է աշակերտների թոշակագրամով։ 1885-ին փակվել է։ Վերաբացման և հետագա գործունեության մասին արխիվային փաստաթղթերում տեղեկություններ չկան։

Ինչպես երևում է, 90-ական թվականներին Շահալի գյուղում բացվել և գործել է պետական դպրոց։

«Արձագանք», 1884, 18 հոկտեմբերի։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 68։

Շնող (Շինիխ) գյուղի (Թումանյանի շրջան) ծխական դպրոց

Հայ եկեղեցիներ ունեցող գյուղերի ցուցակներում Շնող գյուղը ցույց է տրված Ղազախի գավառում։ 1906 թվականի մի տեղեկագրում Սղնախի գործակալությունում, «Նոր դպրոց» ամսագրի 1908-ի № 2-ում և «Կավկազսկի կալենդարում» (1915 թ.)՝ Բորչալուի գավառում։ Մենք հիմք ենք ընդունել վերջինը։

Շնողի ծխական դպրոցը առաջին անգամ հանդիպում է 1906-ին բացված ու վերաբացված դպրոցների ցուցակում։ 1907—08 ուս. տարում ունեցել է 57 աշակերտ (12 աղջիկ)։ 1909-ին նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։ 1911—12 ուս. տարում եղել է քառամյա դպրոց, ունենալով միայն մի դասարան։ 1914-ին ունեցել է 30 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 200; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 139, գ. 258, թ. 51; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 7; ֆ. 13, գ. 264, թ. 42; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 68; թեմական տեսուչ Հ. Տեր-Միքայելյանի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը՝ մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ։

Շուլավեր (Մեծ) գյուղի արական ծխական դպրոց

1858-ին արքեպիսկոպոս Սարգիս Ջալալյանը Մեծ Շուլավեր գյուղում սկսում է կառուցել ծխական դպրոցի շենք։ Շուլավերցի բժիշկ Ռոմանոս Նազիրյանը (Փարիզի Մուրացյան և Հայկազյան դպրոցների պատմության հրատարակիչ) այդ դպրոցի շենքի, ուսուցիչների վարձատրության և մյուս բոլոր ծախսերը իր վրա է վերցնում, պարտավորվելով այդ ծախսերը վճարել ամեն տարի։ Նույն թվականին էլ դպրոցը բացվել է։

1871-ին Շուլավերում ցույց է տրված երկու դպրոց, որոնցից մեկը, ինչպես երևում է, հետագայում փակվել է կամ միացել է մյուսին։ 1873-ին այնտեղ ցույց է տրված մի դպրոց՝ 3 ուսուցչով և 50 աշակերտով։ 1877-ին ունեցել է միայն մի ուսուցիչ և 40 աշակերտ։

«Արձագանք» լրագիրը 1884-ին գրել է, որ «Շուլավերում, որտեղ կան 550 տուն հայեր, գոյություն ունի տղայոց մի ծխական դպրոց»՝ երկդասյան դասընթացքով։ 1885-ին փակվել է, վերաբացվելով 1887-ին։ 1888-ին ունեցել է 133 աշակերտ, 5 ուսուցիչ։

1895-ին դարձյալ եղել է երկդասյան, իսկ 1896-ին նորից է փակվել։ Վերաբացվել է 1905-ին՝ որպես երկսեռ դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 510 աշակերտ (220 աղջիկ)։ 1909-ին ունեցել է վեցդասյան կազմ և 310 աշակերտ-աշակերտուհի։ Հետաքրքրական են հետևյալ տվյալները։ 1912—13 ուս. տարում 219 աշակերտից փոխադրվել են 106 հոգի կամ 48,5 %-ը, մնացել են 78 հոգի կամ 35,5 %-ը, վերաքննության են թողնվել 28 հոգի (12,5 %-ը) և դպրոցից հեռացվել են 7 հոգի (3,5 %-ը)։ Այս տվյալները խոսում են դպրոցի անբարեհաջող վիճակի մասին։ 1914-ին ունեցել է 8 ուսուցիչ, 400 աշակերտ։

«Մեղու Հայաստանի», 1858, № 27; № 36; 1859, № 38; 1873, № 9; «Արարատ», 1878, մթ, էջ 453; «Արձագանք», 1884, 28 հոկտեմբերի և 4 նոյեմբերի։ ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 196; գ. 8717, թ. 2; գ. 511, թ. 21—22; ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 42; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 15; գ. 43, թ. 23; գ. 50, թ. 66; գ. 357, թ. 62; գ. 199, թ. 17; գ. 182, թ. 30; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 18, «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 68; 1909, № 10, էջ 88; 1913, № 6, էջ 75; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 150, գ. 283, թ. 69։

Շուլավերի Գայանյան իգական դպրոց

Հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է, մինչև 1888 թվականը կազմված ցուցակներում չի նշված։ 1888—89 ուս. տարում եղել է միդասյան դպրոց, ունեցել է 37 աշակերտուհի։ Հավանաբար, ինչ-ինչ պատճառներով նորից փակվել է և վերաբացվել 1894-ին՝ տեղացի հարուստ Ս. Պատավյանի միջոցներով։ Վերջինիս կնոջ անունով էլ կոչվել է Գայանյան։ 1896-ին դարձյալ փակվել է, վերաբացվելով 1905-ին՝ տեղի արական դպրոցի հետ միասին։

«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 18; «Արարատ», 1894, № 4, էջ 13; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 199, թ. 17—23; գ. 357, թ. 64; գ. 182, թ. 25—43,

Շուլավերի կիրակնօրյա դպրոց

Կովկասում գործած առաջին կիրակնօրյա դպրոցներից մեկն է։ Այն բացվել է 1884-ի սկզբներին։ Այդ դպրոցում ձրիաբար պարապել են տեղի ծխական դպրոցի ուսուցիչները։

«Մեղու Հայաստանի», 1884, № 18։

Շուլավերի (Փոքր) գյուղի արական ծխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Ըստ պաշտոնական մի տեղեկագրի, 1871-ին գործել է, ունենալով 3 ուսուցիչ և 50 աշակերտ։ Մի այլ փաստաթղթում այդ նույն թվով ուսուցիչներ և աշակերտներ են ցույց տրված Մեծ Շուլավերի դպրոցում 1873-ին։ Այստեղ, անկասկած, ինչ-որ թյուրիմացություն կա։

1873-ի մի պաշտոնական տեղեկագրում ցույց է տրվում հայկական դպրոցների գոյությունը Մեծ Շուլավերում և Փոքր Շուլավերում առանձին-առանձին։ Բայց վերջինս այլևս չի պատահում 1885, 1888 և հաջորդ տարիների ու տասնամյակների տեղեկագրերում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 23;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 511, թ. 21—22։

Ջալալօղլու (այժմ՝ քաղաք Ստեփանավան) արական ծխական դպրոց

Որոշ տվյալների հիման վրա կարելի է ենթադրել, որ Ջալալօղլի գյուղում ծխական դպրոց է բացվել 1852-ին։ Սակայն, «Մեղու Հայաստանի» լրագրի մի հաղորդումից երևում է, որ այդ դպրոցը բացվել է 1858-ին՝ արքեպիսկոպոս Սարգիս Ջալալյանի կողմից՝ մեծգարաքիլիսեցի գրագրաստար Գևորգ և Միքայել խանդայանների միջոցներով։

Այս դպրոցը 1873-ին գործել է, հայ աշակերտների հետ միասին ունենալով նաև մի քանի հույն սովորողներ (վերջիններս սովորել են միայն ռուսաց լեզու)։ Ունեցել է 2 ուսուցիչ, 30 աշակերտ։

1877-ի վիճակագրական տեղեկագրում այդ դպրոցը չի նշված։ Հավանաբար, ինչ-ինչ պատճառներով այն փակվել է։ Պաշտոնական մի փաստաթղթում Ջալալօղլում արական ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը ցույց է տրված 1879-ը (իսկ «Նոր դպրոցում»՝ 1880-ը), սակայն դա ոչ թե նրա հիմնադրման, այլ վերբացման թվականն է։

1881-ին ունեցել է 7 ուսուցիչ, 88 աշակերտ (փաստորեն եղել է այն ժամանակվա խոշոր դպրոցներից մեկը)։ 1884-ին եղել է երկդասյան։ 1885-ին փակվել է։ Վերբացվել է 1888-ին՝ որպես միդասյան

դպրոց։ Ունեցել է 50 աշակերտ։ 1894-ին նորից եղել է երկդասյան դպրոց։

1896-ի սկզբներին ցույց է տրված որպես երկսեռ դպրոց։ Նույն թվականին էլ դարձյալ փակվել է։ Երրորդ վերբացումը տեղի է ունեցել 1905-ի աշնանը։ Եղել է երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 123 աշակերտ, 117 աշակերտուհի։ 1911-ին կազմված է եղել 4 բաժանմունքից, որոնցում սովորել են 139 տղա և 114 աղջիկ։ 1914-ին աշակերտների թիվը նվազել է, իջնելով 208-ի։

«Մեղու Հայաստանի», 1858, № 27, 1873, № 22, «Արարատ», 1871, ԺԲ, էջ 208; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 73; գ. 50, թ. 67; գ. 357, թ. 66; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 25—43; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48; գ. 3997, թ. 20; գ. 2018, թ. 196; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 19; «Արժագանգ», 1885, № 4; «Նոր դպրոց», 1911, № 21—22, էջ 14, «Циркуляр», 1888, № 114, էջ 453։

Ջալալօղլու (քաղ. Ստեփանավան) իգական եկեղեցական ծխական դպրոց

Հիմնվել է 1879-ին։ 1881-ին ունեցել է 7 ուսուցիչ, 42 աշակերտուհի։ 1882-ին կարճ ժամանակով փակվել է։ 1884-ին եղել է երկդասյան դպրոց։ 1885-ին նորից փակվել է։ Վերբացվել է 1888-ին՝ որպես միդասյան։ Ունեցել է 38 աշակերտուհի։ 1895-ին միացած է եղել տեղի տղաների դպրոցի հետ, իսկ 1896-ին նրա հետ էլ փակվել է։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 51; գ. 2018, թ. 196; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 59, թ. 67; գ. 357, թ. 56; «Մեղու Հայաստանի», 1882, № 134, «Циркуляр», 1888, № 134, էջ 452։

Սանահինի վանական (ծխական) դպրոց

19-րդ դարում Սանահինը մտնում էր Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեջ։ Հետում նրա վանքը եղել է հայոց կրթական նշանավոր օջախներից մեկը։ 1861-ին Սանահնում գործել է հոգևոր դպրոց՝ ունենալով 3 բաժանմունք և 21 աշակերտ։ Ինչպես երևում է, հետո փակվել է, քանի որ 1867 կամ 1868 թվականին էջմիածնի սինոդի որոշմամբ Սանահինի վանքում բացվում է ժառանգավորաց դպրոց, որը 1871-ին ունեցել է 2 ուսուցիչ և 30 աշակերտ։ Գործել է նաև 1874 և 1877 թվականներին։ 1881-ին ունեցել է 2 ուսուցիչ, 47 աշակերտ։ 1885-ին փակվել է։ Վերբացման թվականը մեզ անհայտ է։ Հայտնի է, սակայն, որ կաթողիկոսը 1894-ի ապրիլին հատուկ կոնդակով դիմել է Սանահինի և նրա շրջակա գյուղերի բնակիչներին, կոչ անելով օգնել Սանահինի դպրոցի շենքը կառուցելու համար։ Ուրեմն, դպրոցն այդ ժամանակ գործել

է։ 1896-ին փակվել է։ Վերաբացվել է 1907-ին՝ որպես Սանահին գյուղի ծխական դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 26 աշակերտ, 7 աշակերտուհի։ 1911-ին գործել է և ուսումնական գործում գտնվել է համեմատաբար բարվոք վիճակում։ Ունեցել է 1 ուսուցիչ և 1 ուսուցչուհի, 53 աշակերտ և 24 աշակերտուհի։ 1914-ին աշակերտների թիվը իջել է 46-ի։

«Լումա», 1896, Ա գիրք, էջ 356; «Մեղու Հայաստանի», 1868, № 26; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 199; «Արարատ», 1878, ԺԲ, էջ 453; 1894, № 7, էջ 227; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22; գ. 1585, թ. 48; գ. 8717, թ. 9; «Նոր դպրոց», 1911, № 21—22, էջ 35։

Վարդաբլուր գյուղի (Ստեփանավանի շրջան) ծխական դպրոց

1967 թվականին տոնվել է այս դպրոցի 75-ամյակը։

Ստացվում է, որ Վարդաբլուրի ծխական դպրոցը հիմնված է եղել 1891 կամ 1892 թվականներին։

Իրականում այդպես չէ։

«Արծագանք» լրագիրը դեռևս 1884-ի հոկտեմբերի 18-ի համարում տպագրել է Ջալալօղլուց ստացված մի նամակ, ուր ասված է, որ վիճակավոր առաջնորդ Արիստակեսը այցելել է Լոռի վիճակը և մի շարք գյուղերում հիմնել ծխական դպրոցներ։ «... ավելի բազմամարդ գյուղերում,— ասված է այդ նամակում,— հաշողեցավ նորան հաստատ հիմունքների վերա հիմնել ծխական ուսումնարաններ և եղածներն հիմնավոր կերպով հաստատել։ Նոր ուսումնարաններ հիմնարկեց Հայդարբեկ, Ուռուտ, Լեջան, Ագարակ, Վարդաբլուր և Շահալի գյուղերի մեջ. և առաջվանից եղածներն էին Ջալալօղլի, Գյառգյառ, Դյուլաբարակ, Դսեղ, Օձուն, Սանահին և Հաղպատ»։

Ուրեմն Վարդաբլուրի ծխական դպրոցը հիմնվել է 1884-ին, սակայն, ցավոք, երկար կյանք չի ունեցել։ 1885-ին հայ բոլոր դպրոցների հետ միասին փակվել է նաև այս դպրոցը, որի մասին հետագա տարիների ու տասնամյակների փաստաթղթերում ոչինչ չի ասվում։ Դրա պատճառն այն է, որ հայկական դպրոցի փոխարեն Վարդաբլուր գյուղում բացվել ու գործել է պետական դպրոց։

«Արծագանք», 1884, 18 հոկտեմբերի։
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 59, թ. 68։

Ուռուտ գյուղի (Ստեփանավանի շրջան) արական ծխական դպրոց

Հիմնվել է 1884-ին՝ թեմական առաջնորդ Արիստակեսի ջանքերով։ Եղել է միդասյան արական դպրոց։ 1885-ին փակվել է հայ բոլոր դպրոցների հետ միասին։

1890-ին կաթողիկոսը իր մի կոնդակով թույլ է տվել Ուռուտ գյուղում բաց անել եկեղեցական ծխական դպրոց և հաստատել է ժողովրդի կողմից ընտրված հոգաբարձության կազմը։ Սակայն այդ թվականը պետք է համարել ոչ թե դպրոցի բացման, այլ վերաբացման տարեթիվը։ 1896-ին նորից է փակվել։ Վերաբացման տարեթիվը մեզ անհայտ է։ 1911—12 ուս. տարում գործել է որպես եռամյա դպրոց՝ 2 դասարանով և 2 ուսուցչով։

1914-ին ունեցել է 50 աշակերտ։

«Արծագանք», 1884, 18 հոկտեմբերի; «Արարատ», 1890, № 12, էջ 696; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66; գ. 241, թ. 39; գ. 199, թ. 17—23; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 72; ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 42; «Циркуляр», 1890, № 10, էջ 559; Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ՝ 1911—12 ուս. տարի։

Օձուն (Ուզունլար) գյուղի (Թումանյանի շրջան) արական ծխական դպրոց

Օձուն գյուղի արական ծխական դպրոցը հիմնվել է 1860-ին։ «Արարատ» ամսագրի 1878-ի № 12-ում և «Մանկավարժական թերթի» 1878-ի № 2-ում նշված են Վրաստանի թեմի մի շարք հայ գյուղեր, որոնցում 1877—78 ուս. տարում բացվել են նոր ծխական դպրոցներ։ Դրանց թվում է նաև Օձուն գյուղի դպրոցը։ Դրանից կարելի է հետևցնել, որ 1860-ին բացված դպրոցը չի կարողացել պահպանել իր գոյությունը և փակվել է (հավանաբար նյութական միջոցների կամ էլ ուսուցիչ չունենալու պատճառով)։

Այս տողերը վաղուց արդեն գրված էին, երբ «Մշակ» թերթի 1878 թ. № 143-ում հանդիպեցինք մի թղթակցության, ուր Ուզունլար գյուղի դպրոցի մասին գրված է.

«Ուսումնարանը 1860 թ. շինել է Վարդան եպիսկոպոսը իր սեփական ծախսով, մասնավոր օգնությամբ ժողովրդից, բայց մի քանի տգետ անձանց շնորհիվ ամեն բանով պատրաստի ուսումնարանը իր հիմնարկության օրից մինչև 1877 թ. բոլորովին դուռը փակ սարդերին է ծառայելիս եղել։ Թեև Վարդան եպիսկոպոսը մի քանի անգամ խընդրել է գրավոր կերպով հոգևոր իշխանությունից ուսումնարանի մասին տնօրինություն, բայց նա, չգիտեմ ինչի հիման վրա, բոլորովին անտարբեր է մնացել և ուշք չի դարձրել օրըստօրև կործանվող ուսումնարանի վրա, չնայած որ Ուզունլարի եկեղեցին ունի սեփական կալվածներ, որոնցից տարեկան 400—500 ռ. մուտք կարելի է ունենալ»։

Եթե ուսումնարանի շենքը երկար տարիներ չի ավարտվել, այդ չի նշանակում, թե ինքը՝ ուսումնարանը ևս չի գործել։ «Մեղու Հայաստանի» լրագրի 1873 թ. համարներից մեկում խոսվում է այդ դպրոցի մա-

սին և նշվում է, որ այնտեղ ամանդվում են հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն և գրություններ։ Ուրեմն այն փակվել է 1873-ից հետո և վերաբացվել է 1877-ին։

Եղել է միդասյան դպրոց, 1881-ին ունենալով 35 աշակերտ։ 1885-ին փակվել է, վերաբացվել՝ 1886-ին։ 1888—89 և 1896 թվականների տեղեկագրերում ցույց է տրվում որպես միդասյան արական ծխական դպրոց։ 1896-ին փակվել է երկրորդ անգամ։ Վերաբացվել է 1905-ին։ 1906-ին դպրոցի համար կառուցվել է նոր շենք, այդ կապակցությամբ կաթողիկոսը շնորհակալություն է հայտնել Եպիսկոպոս Արովյանին։

1908—09 ուս. տարում եղել է խառը (երկսեռ) դպրոց, ուր սովորել են 90 տղա և 30 աղջիկ։ Ունեցել է մեկ ուսուցիչ։

1911-ին Օձուն գյուղում գործել են թե՛ ծխական, և թե՛ պետական դպրոցներ։ Մինականն ունեցել է 3 բաժանմունք, 2 ուսուցիչ, 119 աշակերտ և միայն 9 աշակերտուհի։ Դպրոցական տարին սկսվել է նոյեմբերի 10-ին և ավարտվել մարտի կեսերին։

1914-ին ունեցել է 70 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 68; գ. 50, թ. 68, գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 40; գ. 432, թ. 200; «Արարատ», 1878, ԺԹ, էջ 454; 1906, էջ 796; «Մեղու Հայաստանի», 1873, № 43; «Մանկավարժական թերթ», 1878, № 2, էջ 63; «Մշակ», 1878, № 143; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 2; գ. 3997, թ. 20; ֆ. 13, գ. 264, թ. 42; «Նոր դպրոց», 1911, № 25—26, էջ 17։

Օձուն (Ուզունլար) գյուղի օրիորդաց ծխական դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագրի 1873 թվականի № 15-ում Օձուն գյուղի մասին գրված է, որ մի քանի տարի է, ինչ այստեղ բացվել են «ուսումնարաններ՝ տղայոց և օրիորդաց»։ Նշանակում է, վերջինս պետք է գոյություն ունեցած լինի առնվազն 70-ական թվականների սկզբներից։ Այնտեղ սովորեցրել են «միայն հայերեն գրություն»։

Այս դպրոցը 1888-ին նորից է բացվել, ուրեմն այն երկար տարիներ փակ է մնացել։ 1888—89 ուս. տարում եղել է միդասյան իգական դպրոց։ Հետագայում փակվել է և վերաբացվել 1905-ին՝ տեղի արական դպրոցի հետ միասին։

«Մեղու Հայաստանի», 1878, № 15, «Циркуляр», 1888, էջ 453.

ԳՈՐԻԻ ԳԱՎԱՌ

Աթայ (Աթենի՞) գյուղի (Գորիի գավառ) հայկական ծխական դպրոց

Գորու գավառի Աթայ (Աթենի՞) գյուղի հայ բնակիչները 1895-ին որոշել են իրենց երեխաների համար բաց անել ազգային ծխական դպրոց և հոգալ նրա ծախսերը։ Մեկ տարի հետո՝ 1896-ին այն փակվել է հայ բոլոր դպրոցների հետ միասին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 314, թ. 35։

Ալ (Ալի) գյուղի ծխական դպրոց

Հիմնվել է 1895-ին, եղել է միդասյան երկսեռ դպրոց։

Տեղի բնակիչներից մեկը իր տունը ձրիաբար հատկացրել է դպրոցին, իսկ հայ բնակիչները որոշել են ապահովել այդ դպրոցի պահպանումը։ Սակայն նրանց ցանկությունը ի դերև է լինում, որովհետև մեկ տարի անց վրա է հասնում հայ դպրոցների ընդհանուր փակումը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 338, թ. 19; գ. 314, թ. 35, գ. 357, թ. 89։

Ախալքալակ գյուղի ծխական դպրոց

Ախալքալակ գյուղը չպետք է շփոթել նույնանուն քաղաքի հետ։ Այս գյուղը գտնվել է Գորիի նախկին գավառում։ Այնտեղ 1870-ին ապրել են մոտ 200 տուն հայեր՝ եկած Արցախի ու Գանձակի գավառներից։

Բնակիչները բոլորովին մոռացած են եղել իրենց մայրենի լեզուն և խոսել են օտար լեզվով։ Այս ցավալի երևույթի առաջն առնելու նպատակով ջանքեր է գործադրել Ներսիսյան դպրոցի նախկին շրջանավարտ Հովհաննես Գալստյանը, որը այդ գյուղը գալու օրվանից «... չկամեցավ իր բանավոր հոտին բարոյական հատուածոց վերայ անտարբեր աչք նայիլ, այլ զանազան արդելքներու յաղթելով և կանխակալ պաշարմանց դեմ մաքառելով, սկսավ գյուղական հայ օրիորդները և տղայքը ձրի դաստիարակությամբ և շատ անգամ ձրի մատեաններ (գաստագրքեր.— Ս. Խ.) բաշխելով կրթել ի հայ, ռուս և ի վրաց լեզուս»,— այսպես է գրում Մաղաք Պլուզյանը «Արարատ» ամսագրում (1870, էջ 73)։ Այնուհետև Պլուզյանի հաղորդումից իմանում ենք, որ 1870-ին այդ գյուղում կառուցվել է դպրոցական հատուկ շենք, իսկ կրթական կյանքն այնտեղ սկսվել է ավելի վաղ տարիներից։ Նշանակալից է, որ այդ խավար ժամանակում Ախալքալակ գյուղում իրականացվել է տղաների ու աղջիկների համատեղ ուսուցում։

1873-ին այդ դպրոցում սովորել են 52 տղա և աղջիկ։ Հայ մյուս դպրոցների նման այս դպրոցն էլ չի կարողացել երկար պահպանել իր գոյությունը։ Ինչ-ինչ պատճառներով այն փակվել է և վերաբացվել 1884-ին (մի փաստաթղթում այս թվականը նշված է որպես այդ դպրոցի հիմնադրման տարի)։ 1885-ին փակվել է, երկրորդ անգամ վերաբացվել 1886-ին (որը թյուրիմացաբար համարվել է նրա բացման տարեթիվը)։

1888-ին եղել է միդասյան արական դպրոց՝ 1 ուսուցչով և 34 աշակերտով։ Երրորդ անգամ փակվել է 1896-ին և վերաբացվել 1905-ին։ 1908—09 ուս. տարում ունեցել է 45 աշակերտ։

1912—13 ուս. տարում եղել է քառամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են 34 տղա և 22 աղջիկ։ 1914-ին ունեցել է 3 ուսուցիչ, 74 աշակերտ։

«Արարատ», 1870, թ. էջ 73—74; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ.56, գ. 43, թ. 23; գ. 196, թ. 182; թ. 25—43; գ. 357, թ. 56; գ. 50, թ. 65; գ. 199, թ. 18; գ. 299, թ. 44; գ. 492, թ. 200; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 16; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42։

Ախալքալակ գյուղի իգական ծխական դպրոց

Ամենայն Հայոց կաթողիկոսի թույլտվությամբ 1890-ի կեսերին Գոբիի գավառի Ախալքալակ գյուղում, հայկական արական դպրոցից բացի, հիմնվել է նաև հայ աղջիկների միդասյան ծխական դպրոց։ Այդ մասին նշված է նաև Կովկասյան ուսումնական օկրուգի փաստաթղթերում։ Դպրոցն ունեցել է իր խնամակալուհիները, որոնց թվում նաև Թիֆլիսից Ս. Սպանդարյանի մայրը։

1896-ին այս դպրոցը ևս փակվել է, վերաբացվելով 1905-ին՝ տղաների դպրոցի հետ միացած։

«Արարատ», 1890, № 10, էջ 582; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 106, գ. 357, թ. 56; գ. 199, թ. 17—23; «Циркуляр», 1890, № 10, էջ 559։

Բորժոմի հայկական եկեղեցական ծխական դպրոց

Թեմական տեսչի տեղեկագրի համաձայն Բորժոմի հայկական դպրոցը բացվել է 1895-ին։ Մենք դժվարանում ենք ասել՝ իրոք դա նրա բացման, թե՞ վերաբացման տարեթիվն է։ Եղել է միդասյան երկսեռ դպրոց։ Մեկ կամ երկու տարի հետո արժանացել է հայ մյուս դպրոցների ընդհանուր ճակատագրին, այսինքն՝ փակվել է կառավարության կողմից և վերաբացվել միայն 1905-ին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 58 աշակերտ (34 աղջիկ)։

1908—09 ուս. տարում եղել է միդասյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 27 տղա և 38 աղջիկ։ 1912—13 ուս. տարում աշակերտների թիվը եղել է 65 (36 աղջիկ)։ Նույնը նաև 1914-ին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 60; գ. 299, թ. 28; գ. 182, թ. 46; գ. 492, թ. 200; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 3; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 41; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 67; 1909, № 6—7, էջ 141։

Գորի քաղաքի հայկական հոգևոր ծխական դպրոց

Հիմնվել է 1858 թ. (մի այլ փաստաթղթով՝ 1854-ին), տեղի ս. Աստվածածին եկեղեցու գավթում։ 1861-ին դպրոցն ունեցել է երկու դասարան, 40 աշակերտ, 3 ուսուցիչ։ Ավանդվել են՝ հայերեն, ռուսերեն և վրացերեն, վանկագրություն հայոց և ռուսաց լեզուների, «հայերեն ընտանեկան խոսակցություն», քրիստոնեական վարդապետություն, սրբազան պատմություն, եկեղեցական երաժշտություն և թվաբանություն։

Դպրոցը 1870 թվականից հետո դտնվել է ոչ բարվոք վիճակում, այնտեղ աշխատել է մեկ ուսուցիչ, որն ավանդել է միայն հայոց լեզվի ընթերցանություն։ 1874-ին ունեցել է 3 ուսուցիչ, 45 աշակերտ։ Հետագայում դպրոցի վիճակը որոշ չափով բարելավվել է։ 1882-ին այն եղել է երկդասյան, ունեցել է 2 ուսուցիչ, 50 աշակերտ։ 1885-ին փակվել է և վերաբացվել 1886-ին։ 1888—89 ուս. տարում կոչվել է Գորի քաղաքի տղայոց երկդասյան ուսումնարան, ունենալով 5 բաժանմունք (Ա, Բ, Գ, Դ, Ե), 7 ուսուցիչ և 73 աշակերտ։ Ավանդվել են կրոնագիտություն, հայոց լեզու, ռուսաց լեզու, գծագրություն, Հայաստանի պատմություն և աշխարհագրություն, Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն, ռուսաց լեզվի գեղագրություն, թվաբանություն, գծագրություն, երգեցողություն, ընդհանուր աշխարհագրություն, բնագիտություն։

Ինչպես տեսնում ենք, դպրոցի ուսման ծավալը բավականաչափ ընդարձակ է եղել։

1891-ից սկսած եղել է միդասյան դպրոց։ 1895-ին եղել է երկսեռ դպրոց (Նրանց էր միացել տեղի հայկական իգական դպրոցը)։

Հայ դպրոցների փակման կապակցությամբ նախօրոք կազմված ցուցակի այն հարցին, թե տվյալ դպրոցը պե՞տք է արդյոք մնա եկեղեցական հաստատության իրավասության տակ, ինչ-որ բարձր աստիճանավորի ձեռքով Գորիի դպրոցի դիմաց գրված է՝ «հավանաբար պետք է»։

Այդ երկու բառի զորությամբ դպրոցը շարունակում է գոյություն ունենալ ևս 1—2 տարի, որից հետո այն նույնպես փակվում է, վերաբացվելով 1905-ի աշնանը, որպես խառը դպրոց (երկսեռ)։ 1908—09 ուս. տարում ունեցել է 6 ուսուցիչ, 60 աշակերտ և 86 աշակերտուհի։

1911—12 ուս. տարում եղել է 5-ամյա դպրոց։ Հաջորդ ուսումնական տարում աշակերտների թիվը իջել է 34-ի, աշակերտուհիներինը՝ 66-ի։ 1914-ին աշակերտների ընդհանուր թիվը եղել է 80։ 1916-ին գործել է։

«Կռունկ հայոց աշխարհին», 1861, Դ. էջ 305—309; «Դպրոց» 1875—76, № 4, էջ 128; «Արարատ», 1876, № 2, էջ 71—72; «Արձագանք», 1882, № 27, էջ 26; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 15; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 23; գ. 50, թ. 65—68; գ. 357, թ. 50; գ. 281, թ. 13; գ. 199, թ. 49; գ. 182, թ. 35; գ. 11, թ. 1—23; գ. 492, թ. 200; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 48; գ. 8717, թ. 2; գ. 3997, թ. 19;. ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 72; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42; «Արարատ», 1916, № 1—2, էջ 27; մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ՝ Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ։

Գորի քաղաքի հայ աղջիկների դպրոց

Գորիի Հայկական Մարիամյան դպրոցը հիմնվել է 1870-ին, ունենալով 4 ուսուցիչ, 40 աշակերտուհի։ Նախապես մշակվել է դպրոցի հատուկ կանոնադրություն, որը հաստատվել է կաթողիկոսի կողմից։

1871-ին գտնվել է բավականաչափ բարվոք վիճակում. աշակերտուհիների առաջադիմությունը առանձնապես լավ է եղել մայրենի լեզվից։ 1873-ին ունեցել է 3 ուսուցիչ, 50 աշակերտուհի, իսկ տարիներ հետո՝ 1882-ին, այդ թիվը խիստ նվազել է (1 ուսուցչուհի, 25 աշակերտուհի)։

1885-ին փակվել է, վերաբացվելով 1886-ին։ Այդ ժամանակ միդասյան իսկական դպրոց էր։ 1888—89 ուս. տարում ունեցել է 2 ուսուցչուհի, 54 աշակերտուհի։

1891-ին ցույց է տրված որպես երկդասյան, իսկ 1892—93 ուս. տարում՝ միդասյան դպրոց։ 1896-ին միացած է եղել տեղի արական դպրոցին, նրա հետ փակվել է, նրա հետ էլ 1905-ին վերաբացվել։

Հետագա տարիներին Գորիի երկսեռ դպրոցում աղջիկների թիվը պակասեցել է տղաների թվից։

«Արարատ», 1870, Ե, էջ 173; Ը. էջ 276—279; Է. էջ 407; «Արձագանք», 1882, № 27, էջ 426; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 37, թ. 5; գ. 281, թ. 13, գ. 50, թ. 65; գ. 11, թ. 1—23; գ. 43, թ. 23; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 15; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 72; ֆ. 422, գ. 1585, թ. 51; գ. 3997, թ. 19։

Գորի քաղաքի հայկական կիրակնօրյա դպրոց

Ուսուցիչ Մ. Պլուզյանը 1867 թ. Գորի քաղաքում բացել է հայկական կիրակնօրյա ուսումնարան, նպատակ ունենալով «հայ ազգի երեսուն

տարեկան[է] ցած վաճառականաց և արհեստավորաց հայոց լեզուն ուսուցանել ձրիաբար, նույնպես և դասական գրչանք ձրիաբար բաժանել»։

«Մեղու Հայաստանի», 1867, № 24, էջ 185—186։

Դենգվի (Ջեգվի) գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1916-ի աշնանը՝ տեղի հայ բնակչության որոշմամբ և կաթողիկոսի թույլտվությամբ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17; «Արարատ», 1917, № 1, էջ 10։

Զերթ գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1916-ի աշնանը՝ տեղի հայ բնակչության որոշմամբ և կաթողիկոսի թույլտվությամբ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17; «Արարատ», 1917, № 1, էջ 10։

Խոդի ծխական դպրոց

«Նոր դպրոց» ամսագրի 1909 թ. № 1-ում նշված է, որ «Խոդի դպրոցում դասավանդությունը հոկտեմբերի 18-ից է սկսվել. ունի 36 աշակերտ»։

Մեզ չհաջողվեց պարզել, թե ո՞ր Խոդի մասին է խոսքը, քանի որ այդ անունով գյուղեր են գոյություն ունեցել Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի մի քանի գավառներում։

Նշենք միայն, որ դա Թիֆլիսի Նահանգի Գորիի գավառի Խոդի գյուղն է։

«Նոր դպրոց», 1909, № 1, էջ 90։

Կասպ (Կասպի) գյուղի ծխական դպրոց

«Արարատ» ամսագիրը գրել է, որ 1913-ի հոկտեմբերի 14-ին կաթողիկոսը հատուկ կոնդակով թույլ է տվել Վրաստանի թեմի Կասպ գյուղի եկեղեցու գավթում բաց անելու ծխական դպրոց։

Տեղեկատու աղբյուրներում Կասպ գյուղը ցույց է տրված Թիֆլիսի Նահանգի Գորիի գավառում։ Մեր կարծիքով, հենց այս գյուղի ծխական դպրոցի բացման մասին է եղել կաթողիկոսի վերոհիշյալ կոնդակը։ 1907 թվականին Կասպի գյուղում ապրել են 295 հայեր և 268 վրացիներ։

«Արարատ», 1913, № 11, էջ 992;
«Кавказский календарь», 1907, էջ 281։

Կավտիսխև գյուղի (Գորիի գավառ) հայկական ծխական դպրոց

Գորիի հայ հոգևոր փոխանորդի հորդորանքով Կավտիսխև գյուղի հայ բնակչությունը 1895-ի աշնանը մի դումար է հավաքում իրենց ծխական դպրոցի համար, իսկ տեղի բնակիչներից մեկը իր տունը հատկացնում է այդ դպրոցին։ Ընտրում են հոգաբարձություն և հատուկ խնդրանքով դիմում կաթողիկոսին՝ դպրոցի բացման թույլտվություն ստանալու համար։

Չգիտենք, արդյոք բացվե՞լ է այդ դպրոցը, թե ոչ։ Եթե նույնիսկ բացվել է, ապա մեկ տարի անց՝ 1896-ին փակվել է՝ հայ մյուս դպրոցների հետ միասին։

Հայտնի է, որ Կավտիսխև գյուղում նորից հայկական դպրոց է բացվել 1916-ի հոկտեմբերին։ Այդ առթիվ ուղարկվել է կաթողիկոսի օրհնության կոնդակը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 314, թ. 35; ԵՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17; «Արարատ», 1916, էջ 788։

Կարալեթի գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1916-ի աշնանը՝ տեղի հայ բնակչության որոշմամբ և կաթողիկոսի թույլտվությամբ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17; «Արարատ», 1917, N.1, էջ 10։

Կարախաչ (Ղարաղաջ) գյուղի հայկական դպրոց

1916-ի նոյեմբերին կաթողիկոսը թույլ է տվել Գորու գավառի Ղարաղաջ գյուղում բաց անել հայկական եկեղեցական ծխական դպրոց։ Հայ հոգևոր իշխանությունները Կովկասի փոխարքայի գրասենյակին ուղղված մի գրության մեջ նշել են, որ 1916-ի աշնանը Ղարաղաջ (Կարախաչ) գյուղում բացվել է հայկական ծխական դպրոց։

«Արարատ», 1917, N 1, էջ 10; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17։

Սուրամի հայկական արական դպրոց

Վրաստանի և Իմերեթի թեմական տեսչի մի տեղեկագրում նշվում է, որ Սուրամի հայկական դպրոցը հիմնվել է մոտ 1855—56 թվականներին։ Այլ փաստաթղթերում նշված են 1863-ը և 1866-ը։

1913-ին տոնվել է այս դպրոցի 50-ամյակը, ուրեմն կարելի է եզրակացնել, որ այն հիմնված պետք է լինի 1862—63 թվականներին։

1873-ին ունեցել է 30, 1877-ին՝ 33 աշակերտ։ 1881-ին Սուրամի տղաների և աղջիկների դպրոցների համար մի նոր հոյակապ շենք է կառուցել տեղացի Ջիմշիր Ջաշիդյանը, որն արժանացել է կաթողիկոսի օրհնության կոնդակին։ Դպրոցի ուսուցիչներին տրվել է ձրի բնակարան, վառելիք և ծառա։ 1884-ին ունեցել է 44 աշակերտ։

Այս դպրոցը ևս 1885-ին փակվել է կառավարության կողմից, վերաբացվելով 1886-ին։

1888—89 ուսումնական տարում ունեցել է 3 բաժանմունք, ուր սովորել են 36 հոգի։ 1896-ին եղել է երկդասյան արական դպրոց։ Նույն թվականին փակված հայկական դպրոցների ցուցակում չկա, բայց դժվար է հավատալ, որ այն պահպանել է իր գոյությունը, երբ հայկական մյուս բոլոր դպրոցները փակվել են։ Մեր այս ենթադրությունը հաստատվում է նաև այն փաստով, որ այդ դպրոցը 1905-ին վերաբացվել է, ուրեմն մինչ այդ այն փակ է եղել։

1908—09 ուս. տարում ունեցել է 104 աշակերտ (50 աղջիկ)։

1912—13 ուս. տարում եղել է երկսեռ միդասյան դպրոց, ուր սովորել են 73 հայ տղաներ ու աղջիկներ։ 1913-ին դպրոցի 50-ամյակի տոնակատարությունը ավելի շատ նպաստակ է ունեցել միջոցներ հայթայթել դպրոցի հետագա գոյության համար։ 1916-ին նպաստ է ստացել դպրոցական ֆոնդից։

«Նոր դպրոց», 1913, N 5, էջ 78—79; «Արարատ», 1878, ԺԲ, էջ 451; 1913, N 6—7, էջ 524; 1916, էջ 628; «Մեղու Հայաստանի», 1868, N 27, 1884, N 53; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 52; գ. 50, թ. 66; գ. 199, թ. 17—23; գ. 43, թ. 23; գ. 182, թ. 34; գ. 299, թ. 23; գ. 492, թ. 200; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 17; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 2; գ. 1585, թ. 48; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42։

Սուրամի հայկական օրիորդաց դպրոց

«Մանկավարժական թերթ» ամսագրի 1878-ի մի հոդվածից կարելի է ենթադրել, որ այդ թվականին Սուրամում գոյություն է ունեցել աղջիկների դպրոց, որովհետև հոդվածում խոսվում է այդ դպրոցը նոր շենքում տեղավորելու մասին։ Մի այլ պաշտոնական փաստաթուղթ այդ դպրոցի հիմնադրման տարեթիվը ցույց է տալիս 1881-ը։ Այդ թվականին ունեցել է 4 ուսուցիչ, 25 աշակերտուհի, 1884-ին՝ 38 աշակերտուհի։ 1885-ին փակվել է, վերաբացվել՝ 1887-ին։ 1888—89 ուս. տարում միդասյան դպրոց էր՝ 3 բաժանմունքով, որտեղում սովորում էին 26 հայ աղջիկներ։ 1891-ին գործել է։ 1896-ին հայկական դպրոցների ցուցակում չկա, հետևաբար այն փակվել է ավելի առաջ։ 1905-ից հետո հավանաբար միացել է տղաների դպրոցին, քանի որ այդ դպրոցների 50-ամյա հոբելյանը 1913-ին տոնվել է միասին։

«Մանկավարժական թերթ», 1878, N 2, էջ 60; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585,

Բ. 51; գ. 2018, թ. 198; գ. 3997, թ. 20; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 56, թ. 66, գ. 199, թ. 17—23; գ. 357; «Վիհ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 17; «Մեղու Հայաստանի», 1884, № 53 և 81։

Վաղա գյուղի ծխական դպրոց

1895-ին Վաղա գյուղի հայ բնակչությունը որոշել է իրենց գյուղում բացել ծխական դպրոց, հոգալով նրա ծախսերը, իսկ հայ հարուստներից մեկը հատկացրել է նրան չորս սենյակից բաղկացած մի շենք։ Դպրոցը այդ թվականին էլ բացվել է, բայց և շուտով փակվել՝ հայ բոլոր դպրոցների հետ միասին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 338, թ. 19; գ. 328, թ. 35; գ. 357, թ. 100։

Ցխինվալի գյուղի արական ծխական դպրոց

Անցած դարում Ցխինվալին Վրաստանի հայաբնակ խոշոր գյուղերից մեկն էր։ Այնտեղ գործել են հայկական երկու դպրոց՝ արական և իգական։ Արական դպրոցը հիմնվել է 1868-ին։ 1873-ին գործել է, ունենալով 20 աշակերտ։ Նյութական սղության պատճառով, հավանաբար, երկար կյանք չի ունեցել։ «Արարատ» ամսագրում նշված է, որ 1877—78 ուս. տարում Ցխինվալի գյուղում բացվել է արական դպրոց։ Կնշանակի մինչ այդ այն փակ է եղել։ 1881-ին ունեցել է 2 ուսուցիչ, 35 աշակերտ։ Այս դպրոցը մեզ այլևս չի հանդիպում մինչև 1896-ի սկզբները, երբ թեմական տեսչի մի տեղեկագրից իմանում ենք, որ այդ ժամանակ Ցխինվալի գյուղում գոյություն է ունեցել տղաների և աղջիկների միացյալ դպրոց, որը և նույն թվականին փակվել է։ Վերաբացվել է 1905-ին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 60 աշակերտ (33 աղջիկ)։ 1912—13 ուս. տարում եղել է երկսեռ տարրական դպրոց, ուր սովորել են 8 տղա և 28 աղջիկ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 65, գ. 43, թ. 23; գ. 492, թ. 200; գ. 106; գ. 357, թ. 58; գ. 199, թ. 17—23; գ. 299, թ. 35; «Արարատ», 1878, ժԲ, էջ 454;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 1585, թ. 48։

Ցխինվալի Մարիամյան իգական դպրոց

Հիմնվել է 1881-ին։ Եղել է միդասյան տարրական դպրոց։ 1885-ին փակվել է, 1886-ին՝ վերաբացվել։

Հետաքրքրական է նշել, որ հայ դպրոցների վերաբացումից հետո Ցխինվալի գյուղում տղաների առանձին դպրոց չի եղել, մինչդեռ աղջիկների դպրոցը շարունակել է անընդմեջ գործել։ 1888-ին ունեցել է

22, 1892—93 ուս. տարում՝ 28 աշակերտուհի։ 1896-ին Ցխինվալում գոյություն է ունեցել երկսեռ դպրոց, որը և նույն թվականին փակվել է։ Վերաբացվել է 1905-ին։ 1908—1909 ուս. տարում ունեցել է 30 աշակերտ, 27 աշակերտուհի։

1911—12 ուս. տարում եղել է բառամյա դպրոց, 1914-ին ունեցել է 3 ուսուցիչ, 51 աշակերտ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 198; գ. 8717, թ. 4; գ. 2890, թ. 93; ֆ. 13, գ. 264, թ. 42; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66; գ. 199, թ. 17—23; գ. 11, թ. 1—23; գ. 357, թ. 58; գ. 182, թ. 25—43; Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ՝ Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ։

Քվախուրելի գյուղի ծխական դպրոց

Գորիի գավառի հայաբնակ Քվախուրելի (Քախուրելի) գյուղում ծխական դպրոց է բացվել 1907-ին։ 1908—09 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ունենալով 56 աշակերտ (28 աղջիկ)։ Դպրոցը, ըստ երևույթին, բարվոք վիճակում չի գտնվել, քանի որ 1912—13 ուս. տարում այնտեղ սովորել են ընդամենը 10 տղա և 10 աղջիկ։

1914-ին ունեցել է 28 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 299, թ. 31; գ. 182, թ. 46;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 69։

ԴՈՒՇԵԹԻ ԳԱՎԱՌ

Ախալգորի գյուղի իգական ծխական դպրոց

Հիմնվել է 1888-ին, որպես միդասյան իգական դպրոց։ 1888—89 ուս. տարում ունեցել է 41 աշակերտուհի, որոնցից 26 հոգի եղել են վաճառականների աղջիկներ, 4-ը՝ արհեստավորների, 10-ը՝ հողագործների, 1-ը՝ հոգևորականի։

Հավանաբար, հետագայում փակվել է, որովհետև թեմական առաջնորդի մի տեղեկագրում նշված է, որ այս դպրոցը բացվել է 1895-ին։ 1896-ին փակվել է կառավարության կողմից։ Դուցե նրա փոխարեն բացվել է պետական դպրոց։

«Циркуляр», 1888, № 11, էջ 453; «Վիհ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 17; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 46։

Անառուր գյուղի իգական ծխական դպրոց

Հետաքրքիր է այս գյուղի դպրոցի հիմնադրման պատմությունը։

Վրաստանի և Իմերեթիի թեմի հայ դպրոցների թեմական տեսչի հորդորանքով Դուշեթի գավառի Անառուր հայաբնակ գյուղի մի խումբ կանայք 1890-ի հոկտեմբերին հանձն են առնում կազմակերպել հանգանակություն՝ հօգուտ այնտեղ բացվելիք ազգային իգական դպրոցի և իրենց վրա վերցնել վերջինիս խնամակալությունը։ Գյուղի յոթ բնակիչներ գրավոր պարտավորություն են վերցնում իրենց յուրաքանչյուր աղջկա ուսման համար ամսական վճարել 1—4 ռուբլի (ըստ որում յոթն էլ այդ պարտավորագրի տակ ստորագրել են վրացերեն)։

Կաթողիկոս Մակարի մահվան պատճառով այդ դպրոցի (նաև այլ դպրոցների) բացումը ձգձգվում է (եղել է էջմիածնի սինոդի կարգադրությունը՝ «մինչև ազգիս նորընտիր հայրապետի ի գահ Ս. Լուսավորչի բարձրանալը նոր դպրոցներ չպետք է հիմնվեն»)։ Անցնում են տարիներ, և միայն Խրիմյան Հայրիկի կաթողիկոս ընտրվելուց հետո, 1893-ի հոկտեմբերին, հնարավոր է լինում բացել Անառուր գյուղի աղջիկների դպրոցը։ Ուսուցիչ է նշանակվել Հակոբ Սերեբրյակյանցը։

Դպրոցը 1895-ին գործել է, բայց երկար կյանք չի ունեցել։ 1896-ին փակվել է։ Եվ միայն 1910-ին կաթողիկոսի կարգադրությամբ Դուշեթի գավառի Անառուր գյուղի «վրացախոս հայ հասարակության համար» բացվել է հայկական երկսեռ ծխական նոր դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 22, ց. 1, գ. 114, թ. 1—10; «Արարատ»,1910, էջ 793։

Դուշեթ քաղաքի հայկական արական ծխական դպրոց

Հիմնվել է 1882-ին։ Եղել է միդասյան դպրոց։ 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1887-ին, դարձյալ որպես միդասյան արական դպրոց։

1896-ին նորից փակվել է։ Վերաբացվել է 1905-ին։ 1909-ին եղել է երկդասյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 13 տղա, 21 աղջիկ։ «Նոր դպրոցը» հաղորդել է, որ 1909-ի հոկտեմբերին Դուշեթ այցելած Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուն եղել է նաև հայկական դպրոցում։ «Հոգաբարձուն ուսուցիչներից քննել է աշակերտ-աշակերտուհիներին. վերջինները գոհացուցիչ պատասխաններ են տվել»։ 1911—12 ուս. տարում եղել է քառամյա դպրոց՝ 2 դասարանով։ 1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, 32 աշակերտ։ Նպաստ է ստացել ԿՀԲ ընկերությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 198; գ. 2890, թ. 93; գ. 8717, թ. 4; ֆ. 13, գ. 264, թ. 42; «Циркуляр», 1888, № 11, էջ 453; «Մուրճ», 1890, № 7, էջ 1023; «Նոր դպրոց», 1909, № 10, էջ 93; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 36, գ. 492, թ. 200; գ. 182, թ. 32; Հ. Տեր-Միրզայանի ֆոնդ։

Դուշեթ քաղաքի հայկական իգական ծխական դպրոց

Այս դպրոցը, ամենայն հավանականությամբ, բացվել է 1886-ին։ 1892—93 ուս. տարում եղել է միդասյան օրիորդաց դպրոց՝ տեղի ս. Աստվածածին եկեղեցու գավթում։ Ունեցել է 26 աշակերտուհի։ Կարելի է ենթադրել, որ այնտեղ սովորել են նաև տղաներ, որովհետև 1896-ին փակված հայկական դպրոցների ցուցակում Դուշեթի դպրոցի դիմաց չի գրված (ինչպես մյուս դպրոցներին է արված), թե ի՞նչ կարգի դպրոց է՝ տղաների՞, թե՞ աղջիկների։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 36, ց. 1, գ. 106, գ. 11, թ. 1—23; գ. 199, թ. 17—23։

Մծղեթ գյուղի հայկական ծխական դպրոց

«Մշակ» թերթի 1886 թ. մի հաղորդումից իմանում ենք, որ այդ թվականին Թիֆլիսի Նահանգի Դուշեթի գավառի Մծղեթ գյուղում ապրել են 62 տուն հայեր։

Թերթը գրել է. «Հայ ժողովուրդը հայերեն չգիտե։ Եկեղեցու գավթում կառուցված դպրոցը դատարկ է մնում, իսկ ուսումնարանի աթոռները գավթում թափված են»։

Ուրեմն այս դպրոցը 1885-ից առաջ գործել է։

«Մշակ», 1886, № 92։

Մուխրան գյուղի ծխական դպրոց

Դուշեթի գավառի Մուխրան գյուղի հայկական ծխական դպրոցը 1895-ին գործել է (այն մտցված է թեմի այդ թվականի հայ դպրոցների ցուցակում)։ 1896—97 թվականներին փակվել է։ Հավանաբար վերաբացվել է 1906-ին՝ պահվելով Կովկասի հայոց բարեգործական ընկերության և տեղի հայ բնակչության միջոցներով։ 1909-ին ունեցել է երեք բաժանմունք։ Եղել է երկսեռ դպրոց՝ 36 աշակերտով (25 աղջիկ)։ 1911-ին ունեցել է 4 բաժանմունք, 1914-ին՝ 45 աշակերտ-աշակերտուհի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 22, ց. 1, գ. 297, թ. 27, ֆ. 56, գ. 182, թ. 33;

«Նոր դպրոց», 1908, № 3, էջ 84; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42, ԿՀԲ ընկ. 1909 և 1912 թթ. տեղեկագրերը։

ԹԵԼԱՎԻ ԳԱՎԱՌ

Թելավ քաղաքի Վարդանյան արական ծխական դպրոց

Թելավը եղել է Վրաստանի հայաբնակ խոշոր բնակավայրերից մեկը։ «Մեղու Հայաստանի» լրագիրը 1861-ին գրել է, որ հայերը Թելավ են եկել ԺԳ (13-րդ) դարում։ «Բնակիչք քաղաքիս, բացի բանի մի հարյուր տանց վրաց, են ավելի քան զինն հարյուր տուն լուսավորչական Հայք, բնությամբ քաղաքավարի, օտարասեր, անենեց և ասովածապաշտ»։ «Արարատ» ամսագիրը 1874-ին նշել է, որ Թելավում հայերը կազմում են 800 տուն (ուրեմն նախորդ տասնամյակի համեմատ 100 տնով պակաս)։ «Բնակիչներից ոչ որ չգիտե հայերեն խոսել և գրել, բացի քահանայից», այլ «կխոսին ամենքեան վրացերեն, կգրին ամենքեան վրացերեն» (էջ 312)։ «Կավկազսկի կալենդարը» ևս 1914-ին Թելավի հիմնական բնակչությունը (9478 շունչ) ցույց է տվել հայեր։

Վերոհիշյալ թվականին «Մեղու Հայաստանին» հաղորդել է նաև, որ Թելավի հայերին օտարախոսությունից փրկելու նպատակով, տեղի ավագ քահանա Խաչատուր Սուքիասյանցը 1860 թ. հունիսի 4-ին այնտեղ հիմնել է ազգային վարժարան, արժանանալով Մատթեոս կաթողիկոսի օրհնության կոնդակին։ Այդ նույն տարում էլ Թելավի հայ հասարակության միջոցներով ու ակտիվ մասնակցությամբ կառուցվել է ազգային դպրոցի հարմարավետ շենք։ Մի այլ փաստաթղթում Թելավի հայկական դպրոցի հիմնումը ցույց է տրված 1858-ը։

Գոյություն ունեցող պայմաններում հայկական դպրոցի բացումը կարևոր նշանակություն է ունեցել։ Տեղի հայ բնակչությունը հետզհետե տիրապետել է հայերենին և հաղորդակից դարձել հայ մշակույթին, շփոփանալով, իհարկե, նաև վրացերենը։

Թելավի հայկական արական դպրոցը 1873-ին ունեցել է 54, 1877-ին՝ 66, 1884-ին՝ 55 աշակերտ։

1885-ին փակվել է, վերաբացվել՝ 1886-ին։ 1891-ին եղել է միդասյան արական ծխական դպրոց։ 1896-ին դարձյալ փակվել է։ Վերաբացվել է 10 տարի հետո՝ 1905-ին՝ տեղի հայ աղջիկների դպրոցի հետ միացած։ Կոչվել է Թելավի հայոց Վարդանյան-Գայանյան ծխական երկսեռ դպրոց։ 1907—08 ուս. տարում եղել է երկդասյան դպրոց, ուր սովորել են 58 տղա և 143 աղջիկ։ Հաջորդ՝ 1908—09 ուս. տարում աշակերտների թիվը նվազել է, իջնելով 172-ի (140 աղջիկ)։ 1911—12 ուս. տարում գործել է որպես 5-ամյա դպրոց՝ 5 դասարանով։ 1914-ին ունեցել է 5 ուսուցիչ և 168 աշակերտ։ Գործել է նաև հետագա տարիներին։

«Մեղու Հայաստանի», 1861 թ., № 21; «Արարատ», 1874, Ը. էջ 312—313, 1875, Ա. էջ 32; 1878, ԺԱ, էջ 452; «Կավկազսկի կալենդար», 1915, էջ 188; ՎՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 198, գ. 1505, թ. 48, գ. 3997, թ. 19, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42, ՀՍՍՀ ԳԿՊԱ ֆ. 56, գ. 357, թ. 48 գ. 50, թ. 65—68, գ. 37, թ. 5, գ. 199, թ. 17—23, գ. 182, թ. 30; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 20; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 68, 1909, № 6—7, էջ 135 և այլն։

Թելավի Գայանյան իգական ծխական դպրոց

Հիմնվել է 1863-ին և հանդիսանում է հայ աղջիկների համար բացված հնագույն դպրոցներից մեկը։ Համոզված լինելով, որ «հայերին խոսակցությունը բոլոր մեծի մասին և միանգամայն կարելի է իգական սեռի ձեռոք տարածել հասարակության մեջ» («Արարատ», 1874, Ը, էջ 313), տեղի ավագ քահանա Գեորգ Տեր-Սարգսյանցը և ուսուցչուհի Տասիա Մկրտումյանցը հատուկ ուշադրություն են դարձնում, որպեսզի «օրիորդաց ուսումնարանը բարեկարգ և անթերի ընթացք ունենա» (նույն տեղը)։ Աղջիկների դպրոցը եղել է ցերեկօթիկ։ Վճարելով ամսական 2 ռուբլի, նրանք, բացի հայոց լեզվի դասեր ստանալուց, զբաղվել են նաև ձեռագործությամբ, սնվել են դպրոցում և միայն երեկոյան 6-ին տուն են թողնվել։

Թելավի ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների դպրոցներում անց են կացվել հրապարակային քննություններ և հանդեսներ հասարակության ներկայությամբ։ Դրանք օգտագործվել են նաև հանգանակությունների և վիճակահանության միջոցով այդ դպրոցների նյութական դրությունը ամրացնելու համար։ Տեսնելով աշակերտության առաջադիմությունը հայոց լեզվի և ձեռագործի մեջ, Թելավի հայ հասարակությունը մեկ տարում հավաքում է մոտ 2300 ռ. հօգուտ այդ երկու դպրոցների։

1871-ին աղջիկների դպրոցում սովորել են 22, իսկ 1877-ին՝ 39 հոգի։ 1881-ին ունեցել է 4 ուսուցիչ, 70 աշակերտուհի։ 1884-ին այս դպրոցն արդեն երկդասյան էր։ 1885-ին այն ևս փակվում է, 1886-ին՝ վերաբացվում, 1888-ին սովորողների թիվը եղել է 44։ 1891-ին եղել է երկդասյան։ 1896-ին նորից է փակվել և վերաբացվել միայն 1905-ին՝ տղաների դպրոցի հետ միացած։ 1907—1908 ուս. տարում երկսեռ դպրոցում սովորել են 143 աղջիկ։

ՎՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 51; գ. 2018, թ. 198; գ. 8717, թ. 4; գ. 3997, թ. 19; «Արարատ», 1874, Ը. էջ 312—313; 1875, Ա. էջ 32—33; 1878, ԺԱ. էջ 452; ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 56, գ. 232, թ. 16; գ. 50, թ. 65—68; գ. 199, թ. 17—23; գ. 37, թ. 5; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 20—21; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 68։

Զվելգավալ ավանի օրիորդաց ծխական դպրոց

Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի 1895-ի մի հրամանով Թիֆլիսի թեմական թույլ է տրվել Թելավի քաղաքամասի Զվելգավալ ավանի Ս.

Գեորգ եկեղեցուն կից բաց անել օրիորդաց միդասյան դպրոց և անվանել այն Ս. Հռիփսիմի կույսի անունով։

Անկասկած այդ դպրոցը բացվել է, բայց շուտով էլ փակվել կառավարության կողմից՝ հայ մյուս բոլոր դպրոցների հետ միասին։

Այս ավանի օրիորդաց դպրոցի մասին այլ տեղեկություններ մեզ չեն հասնիպել։

«Արարատ», 1895, ԺԱ, էջ 444։

Ուրիաթուբանի գյուղի ծխական դպրոց

Թելավի գավառի Ուրիաթուբանի գյուղի հայկական ծխական դպրոցը բացվել է 1914-ին։ Այդ առթիվ նույն թվականին էջմիածնից ուղարկվել է կաթողիկոսի օրհնության ու թույլտվության կոնդակը։

«Արարատ», 1914, էջ 100։

ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔ

Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցու օրիորդաց Մարիամյան դպրոց և նախակրթարան

«Մեղու Հայաստանի» լրագրի հաղորդման համաձայն, դեռևս 1863-ին Թիֆլիսի Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցուն կից կազմակերպվել է օրիորդաց դպրոց։ Ուրեմն այն եղել է հայ աղջիկների համար բացված ամենաառաջին դպրոցներից մեկը։ Նույն լրագրի 1866-ի համարներից մեկում նշված է, որ Թիֆլիսի մեջ «հայոց օրիորդաց ուսումնարան անունով միայն Բեթղեհեմ եկեղեցու Մարիամյան օրիորդաց ուսումնարանն է, որի մեջ մոտ քառասուն հայոց հասարակության աղջկերք սովորում են»։

Հետագա շատ տարիների փաստաթղթերում Բեթղեհեմի եկեղեցու անունով դպրոցի մենք այլևս չենք հանդիպում։ Հայտնի է միայն, որ 1884-ին այդ եկեղեցուն կից գործել է մանկապարտեզ-նախակրթարան, որը և 1885-ին փակվել է հայ բոլոր դպրոցների հետ միասին։

Մի քանի փաստաթղթերում նշվում է Թիֆլիսի Ս. Աստվածածին եկեղեցու օրիորդական դպրոցը, առանց ցույց տալու, թե ո՞ր թաղամասում է գտնվում այդ եկեղեցին (չէ՞ որ Թիֆլիսում գործած 26 հայ եկեղեցիներից 11-ը կոչվել են Ս. Աստվածածնի անունով և իրարից տարբերվել են թաղամասերի հիշատակումով)։ Նկատի ունենալով, որ համանուն մյուս եկեղեցիների դպրոցները հիշատակված են մեր նշած

փաստաթղթերում (իսկ Բեթղեհեմինը՝ ոչ), մենք ենթադրում ենք, որ դա հենց Բեթղեհեմի եկեղեցու օրիորդական դպրոցն է։ Այդ ենթադրության համար հիմք է ծառայում նաև այն փաստը, որ այս դպրոցի հիմնադրման թվականը (1864) համարյա թե համընկնում է Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցու օրիորդական դպրոցի հիմնադրման թվականի (1863) հետ։ Հնարավոր է նաև, որ Բեթղեհեմի իգական դպրոցը հետագայում կոչված լինի այլ անունով, որ մենք չենք կարողացել պարզել։

Ս. Աստվածածնի օրիորդաց դպրոցը 1891-ին գործել է։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։

«Մեղու Հայաստանի», 1863, № 33, էջ 344; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66; գ. 106, թ. 24—46; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 195։

Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցու արական ծխական դպրոց

Վրաստանի և Իմերեթի թեմի հայկական ծխական դպրոցների 1891-ի ցուցակում նշված է նաև Թիֆլիսի Ս. Աստվածածին եկեղեցու արական դպրոցը (այստեղ ևս չի նշված, թե ո՞ր Ս. Աստվածածին եկեղեցու մասին է խոսքը)։ Մենք զարձյալ ենթադրում ենք, որ դա Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցու ծխական դպրոցն է, քանի որ այդ տեղեկագրում մյուս եկեղեցիները որոշակիորեն նշված են։

Հիշյալ տեղեկագրի համաձայն Ս. Աստվածածնի արական դպրոցը հիմնվել է 1858-ին։ Ինչպես երևում է, այն հետագայում փակվել է կամ վերածվել իգական դպրոցի։ Համենայն դեպս, Ներսիսյան դպրոցի տեսչի մի զեկուցագրից իմանում ենք, որ 1886-ին Բեթղեհեմի թաղում դրպրոց չի եղել։ Նշելով, որ այդ թաղում կան դպրոցահասակ շատ երեխաներ, որոնց միայն մի մասն է ընդունված Ներսիսյան դպրոցը, տեսուչը խնդիր է դրել այնտեղ բանալ ծխական դպրոց։ Հավանաբար այն բացվել է, որը և ցույց է տրված 1891-ի մատանշված տեղեկագրում։ Ս. Աստվածածնի (Բեթղեհեմի՞) դպրոցը 1895-ին թողնվել է հայ հոգևոր իշխանության իրավասության տակ, բայց, 1—2 տարի հետո այն ևս փակվել է (1897-ի վերջերից մինչև 1905 թվականը այլևս հայկական ծխական ոչ մի դպրոց չի գործել)։ Այս դպրոցը վերաբացվել է շատ ուշ՝ 1913-ին՝ կաթողիկոսի հատուկ կոնդակով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 106, թ. 24—46; ֆ. 2, ց. 1, գ. 153, թ. 26; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 72; «Արարատ», 1913, № 10, էջ 880։

Գայանյան օրիորդաց միջնակարգ դպրոց

Հայ նշանավոր դպրոցներից մեկն է, որը հիմնվել է 1869-ին՝ մի խումբ հայրենասերների նախաձեռնությամբ։ Դպրոցը հիմնվել և սկզբում պահվել է 36 բաժնեբաժինների հաճախացրած միջոցներով՝ Թիֆլիսի Մուղնու Ս. Գևորգ եկեղեցու գավթում։ Առաջին տեսուչն է եղել Զաքարիա Գրիգորյանը, առաջին ուսուցչուհին՝ օրիորդ Մարիամ Շարբարոնյանը (հետո՝ տիկին Մելիքյան)։ Այնտեղ ձրիաբար դասավանդել են՝ հայոց լեզու՝ Գրիգոր Տեր-Հարությունյանը, ռուսաց լեզու՝ Գևորգ Բարխուդարյանը, հայերեն և ֆրանսերեն՝ Ստեփանոս Պալասանյանը, ազգային և ընդհանուր պատմություն (աշխարհագրության հետ միասին)՝ «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիր Պետրոս Սիմոնյանը, թվաբանություն՝ Մարտիրոս Սիմոնյանը, բնական գիտություն՝ Զաքարիա Գրիգորյանը, ձեռագործ և պար՝ Մարիամ Շարբարոնյանը և ուրիշներ։ Այնտեղ ձրիաբար դասավանդել է նաև հայ ականավոր հրապարակախոս, կանանց կրթության եռանդուն պաշտպան ու պրոպագանդիստ Գրիգոր Արծրունին։

1873-ին ունեցել է 19 ուսուցիչ, 97 աշակերտուհի։

1875-ին Մուղնու եկեղեցու բակում դպրոցի համար կառուցվում է նոր շենք։ Այդ թվականից էլ այն վեր է ածվում միջնակարգի՝ 6 դասարանյան կազմով, ուներ 23 ուսուցիչ, 152 աշակերտուհի։ 1879-ին մեծ հանդիսավորությամբ նշվել է դպրոցի գոյության առաջին տասնամյակը։ Այդ տարիների ընթացքում դպրոցում ձրի ուսուցչություն են արել 44 հոգի, տեսչություն՝ 5 հոգի։ 1881-ին ունեցել է 34 դասատու, 280 աշակերտուհի։ 1884-ին ունեցել է 3 նախապատրաստական և 6 հիմնական դասարաններ, 300 աշակերտուհիներից 58 հոգի սովորել են ձրի։

1885-ին փակվել է, իսկ 1886-ին վերաբացվելուց հետո դարձել է երկդասյան, որ ավանդվել են՝ սրբազան պատմություն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, հայոց պատմություն և Հայաստանի աշխարհագրություն, ընդհանուր պատմություն, ձեռագործ։

Դպրոցի ավագ ուսուցչուհի Գայանե Քալանթարյանը 1892-ի իր զեկուցագրում թվարկելով տասնյակ անուններ, ավելացնում է. «Սոքա ամենքը հիմնած օրից իրենց մեջ բաժանած ունեին առարկաները և ձրիաբար վարում էին իրենց պաշտոնը 17 տարի շարունակ, մինչև որ դպրոցը կարողացավ միջոց ունենալ՝ ոռճկով վարձելու ուսուցիչներ»։

Զարմանալի նշանակալի երևույթ է. մարդիկ տասնյակ տարիներ անվճար պարապել են, որպեսզի կանգուն մնա հայ աղջիկների կրթության գլխավոր և նշանավոր օջախներից մեկը։

Գայանյան դպրոցը 1892-ին ունեցել է 5 բաժանմունք և 2 զուգընթաց։ Աշակերտուհիների թիվը եղել է 180, որից թոշակառու՝ 114, ձրիաբ-

վարժ՝ 66 հոգի։ 1896-ի ընդհանուր փակման ժամանակ առաջին հարվածը հասցվել է այս դպրոցին։ Երկրորդ վերաբացումը տեղի է ունեցել 1905-ին։ 1908—1909 ուս. տարում Գայանյան դպրոցն ունեցել է 4 ուսուցիչ, 5 ուսուցչուհի և 168 աշակերտուհի։ Այդ տարվա եկամուտը կազմել է 7600 ռուբլի։

1911-ին Թիֆլիսի հայ ծխական դպրոցների մեջ միակն է եղել միջնակարգի դասընթացով, այն էլ ոչ լրիվ, քանի որ չի ունեցել վերջին՝ 6-րդ դասարանը (ուսման 9-րդ տարին)։

1914-ին ունեցել է 23 ուսուցիչ, 372 աշակերտուհի։ Եղել է լրիվ միջնակարգ դպրոց։ 1917-ին և հետագա տարիներին գործել է։

«Տասնամյակ սուրբ Գայանյան հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանի», 1879, Թիֆլիս; «Արարատ», 1869, Գ. էջ 67—68; 1878, ԺԲ. էջ 452; 1917, էջ 620; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 3, թ. 51; գ. 43, թ. 20; գ. 50, թ. 65—68; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 25; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 1; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 50; գ. 8717, թ. 9; ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 41; «Մեղու Հայաստանի», 1884, № 75, «Նոր դպրոց», 1911, № 33—34, էջ 14; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, գ. 150, գ. 283, թ. 69։

Ս. Գևորգ Հաղթողի եկեղեցու ծխական դպրոց

Թիֆլիսի նահանգապետի գրասենյակի կողմից 1914-ին կազմած մի ցուցակում, որտեղ նշված են նահանգի հայկական բոլոր դպրոցները, ցույց է տրված նաև ծխական դպրոց՝ Ս. Գևորգ Հաղթողի (св. Георгия Победоносца) եկեղեցուն կից։ Թիֆլիսում այդպիսի եկեղեցու գոյությունը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1901-ին Թիֆլիսում եղած 27 հայ եկեղեցիներից 7-ը կրել են Ս. Գևորգ անունը, բայց Գևորգ Հաղթողի՝ ոչ մեկը։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 41; ՍՍՀՄ ՊԿՊԱ, Հնինկրաղ. ֆ. 821, գ. 150, գ. 283, թ. 69։

Եղիսաբեթ Հովհաննիսյանի և Աշխեն Դոլգյանի ուսումնարանները

Ինչպես երևում է «Մեղու Հայաստանի» լրագրի հաղորդումից՝ Թիֆլիսաբնակ օրիորդ Աշխեն Դոլգյանը 1868-ին քաղաքի հայկական վանքի թաղում բացել է օրիորդաց ուսումնարան, որը կազմել է տիկին Եղիսաբեթ Հովհաննիսյանի ունեցած Ս. Գևորգ անունով ուսումնարանի շարունակությունը։

Դոլգյանի ուսումնարանում ավանդվել են հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներ։

Հավանաբար այս դպրոցները երկար կյանք չեն ունեցել, քանի որ չեն հիշատակվում հետագա տարիների փաստաթղթերում։

«Մեղու Հայաստանի», 1868, № 38, էջ 29։

Զրկինյանց Ս. Կարապետ եկեղեցու արական ծխական դպրոց

Թիֆլիսում Ս. Կարապետի անունով գոյություն է ունեցել երկու եկեղեցի, մեկը՝ բուն քաղաքում (Գրիբոյեդովի փողոցի վրա), որը կոչվել է նաև Զրկինյանց, իսկ մյուսը՝ Հավլաբարում (Ս. Կարապետի փողոց)։

Զրկինյանց եկեղեցու դպրոցի մասին խոսք է եղել դեռևս 1850-ին, սակայն նշվել է, որ այն դեռ պատրաստ չէ (տես՝ Մ. Սանթրոսյանի գիրքը՝ էջ 250)։ Մենք չգիտենք, թե ե՞րբ է բացվել այդ դպրոցը։ Ստ. Մալխասյանը 1862-ին Թիֆլիսում գործած հայ ծխական դպրոցների շարքում նշում է նաև Ս. Կարապետ եկեղեցու դպրոցը, բայց մենք չգիտենք, թե խոսքը ո՞ր եկեղեցու մասին է։

1871-ին կազմված մի ցուցակում ևս նշված է ծխական դպրոց ս. Կարապետ եկեղեցուն կից։ Դարձյալ հայտնի չէ, թե դա ո՞ր եկեղեցին է՝ Գրիբոյեդովի փողոցի՞, թե՞ Հավլաբարի։

1871-ին այդ դպրոցն ունեցել է մի ուսուցիչ, 20 աշակերտ, իսկ 10 տարի հետո՝ 1881-ին՝ ավելի քիչ՝ 18 աշակերտ։

1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում հիշատակված են Զրկինյանց Ս. Գևորգ (*) եկեղեցու մանկական պարտեզն ու նախակրթարանը (կարծում ենք, որ այստեղ ինչ-որ թյուրիմացություն կա, քանի որ Զրկինյանց եկեղեցին գրեթե ամեն տեղ նշված է ս. Կարապետի անունով)։

Վերաբացվել է, հավանաբար, 1887-ի վերջերին։ 1888—89 ուս. տարում ունեցել է միայն Ա բաժանմունք, 3 ուսուցիչ և 28 աշակերտ։ 1896-ին թողնվել է հայ հոգևոր իշխանության իրավասության տակ, սակայն հաջորդ տարում այն ևս երկրորդ անգամ փակվել է կառավարության կողմից։ Վերաբացվել է 1907-ին՝ որպես երկսեռ դպրոց (նույն եկեղեցու իգական դպրոցի հետ միասին)։ 1907—08 ուս. տարում ունեցել է 33 աշակերտ (13 աղջիկ), իսկ հաջորդ ուս. տարում՝ 55 աշակերտ (21 աղջիկ)։

1911—12 ուս. տարում ունեցել է եռամյա դասընթաց, իսկ 1914-ին՝ 3 ուսուցիչ, 50 աշակերտ։

Մ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19-րդ դ. ա. կեսին», էջ 250;
Ստ. Մալխասյան, «Ներս. դպր. պատմություն», էջ 116;
«Արարատ», 1888, Ա. էջ 62;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 50, թ. 65; գ. 166, գ. 182; թ. 25;

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 8717, թ. 9; ֆ. 13, գ. 865, թ. 72; ֆ. 13, գ. 264, թ. 41;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 9;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65, 1911, № 33—34, էջ 11։

Զրկինյանց Ս. Կարապետ եկեղեցու Եղիսաբեթյան իգական դպրոց

Տարբեր տարիների փաստաթղթերում այս դպրոցը հիշատակվում է Զրկինյանց Ս. Հովհաննես, Զրկինյանց Ս. Կարապետ և Զրկինյանց Ս. Գևորգ եկեղեցիների անուններով, մինչդեռ իրականում դա միևնույն եկեղեցին է, որ տարբեր անուններով է կոչվել։

Եղիսաբեթյան իգական դպրոցը հայ աղջիկների համար բացված հնագույն դպրոցներից մեկն է։ Այն հիմնվել է 1866-ին։ 1871-ին գործել է։ 1873-ին ունեցել է 7 ուսուցիչ և 21 աշակերտուհի։ 1884-ին ունեցել է նաև իր մանկապարտեզը։ 1885-ին փակվել է։ 1887-ին միացած է եղել Ս. Կարապետ (միևնույնն է՝ Ս. Հովհաննես) եկեղեցու արական դպրոցի հետ։ Այնուհետև դարձել է ինքնուրույն դպրոց։ 1897-ին նորից է փակվել։ Վերաբացվել է 1906-ի վերջերին՝ Զրկինյանց արական դպրոցի հետ միացած։ Վերջինս 1908—09 ուս. տարում ունեցել է 34 աշակերտ, 21 աշակերտուհի։

«Մեղու Հայաստանի», 1866, № 39, էջ 288; 1867, № 49, էջ 417—418;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 22; գ. 50, թ. 65; գ. 357, թ. 26;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 72; ֆ. 422, գ. 8717, թ. 6։

Թիֆլիսաբնակ տիկին Տեր-Գրիգորյանի ծխական օրիորդաց դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագրի հաղորդումից երևում է, որ 1868-ին Թիֆլիսի հայոց Ս. Նշան եկեղեցու մոտ գործել է տիկին Տեր-Գրիգորյանի բացած ծխական օրիորդաց դպրոցը, ունենալով 65 աշակերտուհի։

Այս դպրոցը մինչև 1873 թվականը գործել է, իսկ նրա հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։ Գիտենք միայն, որ 1883-ին այս նույն եկեղեցու մոտ բացվել է հայ կանանց միության օրիորդաց նոր դպրոցը (տես)։

«Մեղու Հայաստանի», 1869, № 13, էջ 98—99; 1873, № 9։

Թիֆլիսի հայոց վանքի աղջիկների դպրոց

«Մեղու Հայաստանի» լրագիրը 1866-ի իր համարներից մեկում գրել է (քահանա Ս. Զմշկյանի հոդվածը). «Թիֆլիսի վանքի մոտ (համարյա դռանը կպած) մեկ հայոց օրիորդաց ուսումնարան կար,... բայց այն էլ այժմ վերջացել է բոլորովին Մամիկոնյանի մահից հետո»։

Այս դպրոցի մասին այլ տեղեկություններ չունենք։ Գիտենք, թե երբ է այն հիմնվել և երբ է փակվել։ Հայտնի է միայն, որ 1867 թ. սեպտեմբերին վանքի մոտ աղջիկների նոր դպրոց է բացել Թիֆլիսաբնակ Արտեմ Մարկոսյանը։

«Մեղու Հայաստանի», 1866, № 45, էջ 337—338; 1867, № 29, էջ 218։

Թիֆլիսի հայկական մասնավոր օրիորդաց գիմնազիան

1885-ին, հայ դպրոցները փակելուց հետո, Կովկասի իշխանությունները տիկին Միրիմյանցին թույլ են տվել բաց անել աղջիկների մասնավոր գիմնազիա, որտեղ ուսուցումը պետք է տարվեր հայոց լեզվով, բացի ռուսաց լեզվից, Ռուսաստանի աշխարհագրությունից և պատմությունից։

Այդ մասին հատուկ հաղորդագրություն է հրապարակել կառավարական օրգան «Կավկազ» լրագիրը, որից և արտատպել է «Մեղու Հայաստանին»։

Այդպիսի գիմնազիայի կազմակերպման թույլտվությունը, իհարկե, մի խաղ էր, որ իշխանությունները կազմակերպել էին հատուկ նպատակով։ Բանն այն է, որ, հրապարակելով 1884 թ. փետրվարի 16-ի կանոնները, որոնց համաձայն հայ դպրոցները փաստորեն անցնելու էին իշխանության հսկողության տակ։ Թույլ տալով առանձին մասնավոր դպրոցների բացումը, դպրոցներ, որոնցում սկզբնական շրջանում դասավանդումը տարվելու էր հայոց լեզվով, իշխանությունները ցանկանում էին հայերին ցույց տալ, որ նրանց դպրոցները իրենց ենթարկելով՝ իրենք բնավ էլ մտադիր չեն փոխելու նրանցում դասավանդման հիմնական լեզուն։

«Մեղու Հայաստանի», 1888, № 69։

Թիֆլիս քաղաքի հայ բարեգործական ընկերության դպրոցներ

Թիֆլիսի ժողովրդական դպրոցների դիրեկցիան ուսումնական օկրուգին ներկայացրած իր ցուցակում (1884 թ.) քաղաքի հայ բարեգործական ընկերության պահած դպրոցները ևս ցույց է տվել հայ եկեղեցական ծխական դպրոցներից անջատ։ Մենք էլ դրանք այստեղ նշում ենք առանձին, թեև չենք կասկածում, որ այդ դպրոցները նույնպես, վերջին հաշվով, ենթարկվել են հայ հոգևոր իշխանությանը, ինչպես հայ բարեգործական ընկերությունների կողմից բացված կամ նրանց նպաստով պահված մյուս բոլոր դպրոցներն առհասարակ։ Կասկածից դուրս է, որ Թիֆլիսի հայ բարեգործական ընկերության դպրոցները ղեկավարվել են եկեղեցական ծխական դպրոցների ուսումնական պլաններով ու ծրագրերով։

Այդ դպրոցները հետևյալներն են.

1. Բազարնայա Քաղի՝ հիմնված 1862-ին։
2. Կուկիա Քաղի՝ հիմնված 1862-ին։
3. Հավլաբարի՝ հիմնված 1862-ին։
4. Նավթլուղի՝ հիմնված 1871-ին։
5. Դավիդովի փողոցի՝ հիմնված 1866-ին։
6. Կար ու Ձևի՝ հիմնված 1883-ին։

Քանի որ վերոհիշյալ ցուցակը կազմված է 1884-ին, ուրեմն այս բոլոր դպրոցները այդ թվականին գործել են, բայց թե մինչև ե՞րբ են պահել իրենց գոյությունը և, առհասարակ, ի՞նչ ճակատագիր են ունեցել, մենք դժվարանում ենք ասել, որովհետև այլ փաստաթղթերում մենք դրանց չենք հանդիպել։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 195—196։

Թիֆլիս քաղաքի միջոցներով պահված հայ դպրոցներ

Ժողովրդական դպրոցների Թիֆլիսի դիրեկցիայի կողմից Կովկասի ուսումնական օկրուգին ներկայացված մի ցուցակում (1884 թ.) ցույց են տրված երեք կարգի հայ դպրոցներ. 1. քաղաքի միջոցներով պահվող. 2. Թիֆլիսի հայ բարեգործական ընկերության և 3. հայ-Գրիգորյան եկեղեցական ծխական։

Ըստ այդ ցուցակի, առաջին ու երկրորդ կարգի հայ դպրոցները չեն մտել եկեղեցական ծխական դպրոցների շարքը, թեև, մեր ունեցած տվյալների համաձայն, բոլոր հայ դպրոցներն անխտիր ղեկավարվել են հայ հոգևոր իշխանությունների հաստատած կանոնագրություններով, ծրագրերով ու դասագրքերով։

Այդ դպրոցների վարչական ու տնտեսական կառավարումը իրա-

կանացրել են քաղաքային կազմակերպությունները կամ էլ համապատասխան բարեգործական ընկերությունները։

Թիֆլիս քաղաքի միջոցներով 1884-ին պահված հայ դպրոցները հետևյալներն են.

1. Կուկիա թաղամասի դպրոցը, հիմնված 1880-ին։
2. Հավլաբարի դպրոցը, հիմնված 1880-ին։
3. Խարբուխ թաղամասի դպրոցը, հիմնված 1880-ին։
4. Քաթանչյանցի կիրակնօրյա դպրոցը, հիմնված 1881-ին։
5. Մանուկյանի առևտրական դասընթացները, հիմնված 1882-ին։

Եթե, իրոք, այս դպրոցներից առաջին երեքը Թիֆլիսում գործած ծխական դպրոցների հետ կապ չունեն և առանձին ուսումնական հաստատություն են եղել, ապա պետք է ենթադրել, որ դրանք ենթարկվել են ժողովրդական դպրոցների դիրեկցիային, իսկ ուսուցումը նրանցում տարվել է ոչ թե հայոց, այլ ռուսաց լեզվով (իհարկե, հայոց լեզուն, որպես առանձին առարկա, ավանդվել է)։

Այս դպրոցները իրենց գոյությունը շարունակել են նաև հետագայում։ Հայտնի է, որ 1907—08 ուս. տարում գործել են Թիֆլիս քաղաքի միջոցներով պահվող 6 հայկական և 2 հայ-վրացական դպրոցներ։

Թիֆլիսի հայկական առաջին մասնավոր գիմնազիան

Հենց սկզբից նշենք, որ այդ գիմնազիան հիմնելու փորձերը ձախողվել են, այսինքն՝ այն չի բացվել։ Սակայն այդ չբացված գիմնազիայի մասին այստեղ խոսելու առիթ ծառայից այն դիմումը, որը գրվել է փոխարքայի անունով և որը, մեր կարծիքով, շատ տեսակետներից առանձին հետաքրքրություն է ներկայացնում։

Այստեղ բերում ենք այդ դիմումը ամբողջությամբ՝ պահպանելով նրա ռուսերեն տեքստը։

Его сиятельству
господину наместнику его императорского величества на Кавказе.

Учредителя бухгалтерских курсов, состоящих в ведении Министерства финансов, Николая Восканович Абраамяна, живущего на Николаевской ул., в собств. доме № 22.

Прошение

Глубоко сознавая важность привития русской гражданственности среди инородцев, населяющих Кавказ, в частности — в сло-

ях армянского общества, которое, больше чем какая-нибудь другая нация, проявляет склонность приобщиться к русской культуре, тем более, что оно уже испытало благотворное влияние ее, сказавшееся на целом ряде молодых поколений, воспитанных на началах русской просветительной жизни, — я, в целях закрепления существующей нравственной связи с русским обществом и развития его гражданственности среди темных и непросвещенных слоев своих соотечественников, поставил себе задачей, если на то воспоследует ваше разрешение, открыть в Тифлисе учебное заведение и тем способствовать созданию новой рассадницы русской гражданственности.

В этих именно видах интересы подрастающего поколения подсказывают мне обратиться к вашему сиятельству с ходатайством о разрешении мне открыть в Тифлисе гимназию с правами правительственных гимназий, но в которой преподавание всех предметов, за исключением русского языка, истории и географии, велось бы на армянском языке и по программе, действующей в объеме гимназического курса Министерства народного просвещения. Предполагаемая гимназия должна именоваться: **«Тифлисская первая армянская частная мужская гимназия».**

Высокое общественное значение этого учебного заведения налагает на меня долг выдвинуть ответственным лицом указанной школы в качестве директора ее, человека, пользующегося заслуженной репутацией и добрым именем, Якова Амазаспович Манандяна, кончившего курс С.-Петербурского восточного факультета и доктора философии Иенского университета и в настоящее время состоящего преподавателем первой и второй местных гимназий, которого и представляю на благоусмотрение вашего сиятельства.

Исключительно же хозяйственной частью буду заведывать я, и на правах почетного попечителя; личный же состав преподавателей будет представлен на утверждение г. попечителя Кавказского учебного округа. При сем считаю не лишним присовокупить, что я заведываю бухгалтерскими курсами, состоящими в ведении Министерства финансов с 1902 года.

В заключение добавлю, что с открытием предполагаемой гимназии в августе текущего года откроются при ней лишь следующие классы: приготовительные первое и второе отделения, первый и второй классы.

Ввиду изложенного имею честь покорно просить ваше сиятель-

ство разрешить мне открыть в августе текущего года «Тифлисскую первую армянскую частную мужскую гимназию» по основаниям, изложенным выше. Николай Восканович Абраамян.

г. Тифлис
21-го января 1906 г.

Այսպիսով, Թիֆլիսաբնակ Նիկոլայ Աբրահամյանը 1906 թվականին փորձ է արել կազմակերպել առաջին հայկական գիմնազիան Անդրկովկասում և ողջ ռուսական կայսրության սահմաններում։

Նա իր դիմումի մեջ հավաստիացրել է, որ գիմնազիան դառնալու է հայերի մեջ ռուսական մշակույթի, լուսավորության ու քաղաքացիության տարածման մի նոր օջախ, որի նպատակն է լինելու ամրապնդել իր հայրենակիցների՝ «Ռուս հասարակության հետ գոյություն ունեցող բարոյական կապը»։ Գիտակցելով այդ ուսումնական հաստատության «բարձր հասարակական նշանակությունը», Աբրահամյանը հայկական գիմնազիան ղեկավարելու համար առաջարկել է նշանավոր գիմնական (հետագայում ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս) Հակոբ Համբարձումի Մանանդյանի թեկնածությունը։

Աբրահամյանը սակայն պայման է դրել, որ իր հաստատությունը պետք է կոչվի «Թիֆլիսի հայկական առաջին արական գիմնազիա», որտեղ բոլոր առարկաները, ռուսաց լեզվից, Ռուսաստանի պատմությունից և աշխարհագրությունից բացի, պետք է ավանդվեն հայոց լեզվով, իսկ գիմնազիան պետք է գործի կառավարական գիմնազիաների իրավունքներով։

Հավանաբար հենց սրանք են եղել գլխավոր պատճառները, որ նրան թույլ չի տրվել բաց անել հիշյալ գիմնազիան։

Փոխարքայի գրասենյակը Աբրահամյանի դիմումն ուղարկել է Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուին՝ «Փոխարքային զեկուցելու և հետագա կարգադրության համար»։ Աբրահամյանի դիմումը մերժվում է։

ՎՍՀՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 17207, թ. 1—3։
ՎՍՀՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 195; «Նոր դպրոց», 1909, № 2, էջ

«Խարբերդի» թաղի Ս. Սարգիս եկեղեցու (Ս. Սարգսի փողոց) արական ծխական դպրոց

Պետք է հիմնված լինի 1848-ին կամ 1849-ին։ 1850-ական թվականներին գործել է (տես պրոֆ. Մ. Սանթրոսյանի՝ նշված գիրքը, էջ

248—250)։ Ստ. Մալխասյանը այս դպրոցը ևս հիշատակում է 1862-ին Թիֆլիսում գործած 7 ծխական դպրոցների շարքում։ Ս. Սարգսի դպրոցը ցույց չի տրված 1870-ական թվականների տեղեկագրերում ու ցուցակներում։ Վերստին բացվել է 1880-ին, պահվել է քաղաքի հաշվին, բայց ենթարկվել է հայ հոգևոր վարչությանը։ 1882-ին ունեցել է 2 ուսուցիչ, 30 աշակերտ։ 1885-ին փակվել է, վերաբացվելով 1888-ին։ 1888—89 ուս. տարում այդ դպրոցի երկու բաժանմունքում սովորել են ընդամենը 17 հոգի։

1896-ին գործել է։ Հավանաբար հենց այդ թվականին էլ փակվել է կառավարության կողմից, վերաբացվելով 1906-ին։ 1907—08 ուս. տարում գործել է որպես երկսեռ դպրոց, ունեցել է 71 աշակերտ (27 աղջիկ)։ 1911-ին բաղկացած է եղել միայն 2-րդ և 4-րդ բաժանմունքներից (նյութական անապահովության պատճառով)։ 1913-ին Մեյդանի Ս. Գևորգ եկեղեցու դպրոցը միացվել է այս դպրոցին, որպեսզի հնարավոր լինի պահել 4 բաժանմունք ունեցող մի լիարժեք դպրոց։ 1914-ին ունեցել է 7 ուսուցիչ, 73 աշակերտ։

Մ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19 դարի ա. կեսին», էջ 248; Ստ. Մալխասյան, «Համառոտ պատմ. Ներսիսյան դպրոցի», էջ 116;

ՎՍՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 26; ՎՍՀՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 2018, թ. 195; գ. 8717, թ. 9; ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 283, թ. 69; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 11; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65; 1911, №33—34, էջ 17; 1913, № 10, էջ 72; «Циркуляр», 1888, № 11, էջ 452։

Կուկիայի Ս. Աստվածածին Նորաշեն եկեղեցու (Թանդոյան) արական դպրոց

Թիֆլիսի Կուկիա թաղում Ս. Աստվածածնի անունով գոյություն են ունեցել երկու հայկական եկեղեցի. մեկն ուղղակի կոչվել է Կուկիայի Ս. Աստվածածին (նաև Նորաշեն) եկեղեցի, իսկ մյուսը՝ Կուկիայի երկրորդ Ս. Աստվածածին Թանդոյան եկեղեցի։ Երկուսն էլ գտնվել են Միխայլովսկայա փողոցի վրա։

Տարբեր տարիների արխիվային փաստաթղթերում այդ երկու եկեղեցիների անունով էլ հիշատակվում են արական և իգական դպրոցներ։ Բայց որում՝ եթե մի փաստաթղթում հիշատակվում է Կուկիայի Ս. Աստվածածնի արական դպրոցը, ապա նույն փաստաթղթում չի հիշվում Կուկիայի Թանդոյան Ս. Աստվածածին եկեղեցու արական դպրոցը, և ընդհակառակը։ Նույնը նաև իգական (օրիորդական) դպրոցների նկատմամբ։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք միայն մի արական և մի իգական դպրոցի հետ։

Նկատելի է նաև, որ արական դպրոցը երկու-երեք փաստաթղթերից

բացի, գրեթե միշտ հիշատակվում է Կուկիայի Ս. Աստվածածին (Նոր-շեն) եկեղեցու անունով, իսկ իգականը, նույնպես մի-երկու դեպքից բացի, Թանդոյան Ս. Աստվածածին եկեղեցու անունով։

Պարզ է ուրեմն, որ այդ երկու եկեղեցիները միասին պահել են մեկ արական և մեկ իգական դպրոց՝ առաջինը հիմնականում Նորաշեն Ս. Աստվածածին եկեղեցու, իսկ երկրորդը՝ Թանդոյան Ս. Աստվածածին եկեղեցու միջոցներով։

Արխիվային ավյալների համաձայն՝ Թանդոյան արական դպրոցը հիմնվել է 1863-ին, թեև դեռևս 1850-ականի սկզբներին խոսք է եղել նրա բացման մասին (տես՝ պրոֆ. Սանթրոսյանի՝ հիշյալ գիրքը, էջ 250)։ Այլ փաստաթղթերում հիշատակվում են հիմնադրման ավելի ուշ թվականներ՝ 1869-ը և 1879-ը, որ, իհարկե, ճիշտ չեն։

Կուկիայի Ս. Աստվածածին եկեղեցու ծխական արական դպրոցը 1871-ին գործել է, իսկ 1873-ին ունեցել է 4 ուսուցիչ, 50 աշակերտ։ Կուկիայի Ս. Աստվածածին եկեղեցու Թանդոյան արական դպրոցը 1877-ին ունեցել է 3 ուսուցիչ, 45 աշակերտ։ Կուկիայի Նորաշեն Ս. Աստվածածին եկեղեցու արական դպրոցում 1882-ին սովորել են 85 հոգի։ Այդ դպրոցը ևս 1885-ին կառավարության կողմից փակվել է, վերաբացվելով 1886-ին։ 1888-ին այնտեղ սովորել են 88 հոգի, որոնցից հոգևորականների որդիներ՝ 2, ազնվականների՝ 2, աստիճանավորների՝ 2, վաճառականների՝ 39, արհեստավորների՝ 43 հոգի։ Ունեցել է 3 բաժանմունք։ Այդ թվականին փոխադրվել են 31, ավարտել են 12, մնացել և հեռացվել՝ 11 հոգի։

Մինչև 1896-ը շարունակել է գործել, իսկ այդ թվականին երկրորդ անգամ է փակվել կառավարության կողմից։ Վերաբացվել է 10 տարի հետո՝ 1905-ի վերջերին։ 1907—08 ուս. տարում եղել է երկսեռ միգասյան դպրոց, ուր սովորել են 87 տղա և 36 աղջիկ (Թանդոյան օրիորդական դպրոցը շարունակել է պահել իր ինքնուրույն գոյությունը)։

1911—12 ուս. տարում եղել է քառամյա տարրական դպրոց, իսկ 1914-ին ունեցել է 7 ուսուցիչ, 104 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 22; գ. 50, թ. 66; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 26;

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 2018, թ. 195; գ. 3997, թ. 19; գ. 8717, թ. 4; ֆ. 12, գ. 865, թ. 72; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 41;

«Արարատ», 1878, ԺԹ. էջ 452;

«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 7—8;

Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ՝ Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ;

«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65, 1911, № 33—34, էջ 11։

Կուկիայի Ս. Աստվածածին եկեղեցու Թանդոյան Ս. Շուշանիկյան օրիորդաց դպրոց

Հայ աղջիկների համար բացված հնագույն և աշքի ընկած դպրոցներից մեկն է։ Նրա մասին արխիվային մի գործում կարդում ենք. «Դպրոցը հիմնվել է 1870 թվին Կուկիոյ Սբ. Աստվածածնայ եկեղեցվոյ գավթում, հանգուցյալ Իսահակ Թանդոյանցի ձեռքով, որի անունով և կոչվում է Թանդոյան ս. Շուշանիկյան դպրոց» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 31)։

Այս դպրոցը 1871-ին գործել է, 1873-ին ունեցել է 4 ուսուցիչ, 30 աշակերտուհի, 1877-ին՝ 4 ուսուցիչ, 30 աշակերտուհի, 77-ին՝ նույնը, 1881-ին՝ 6 ուսուցիչ, 58 աշակերտուհի։ 1884-ին եղել է եռդասյան (համարյա միջնակարգ) դպրոց, ունեցել է նաև իրեն կից մանկապարտեզ, որը դպրոցի հետ միասին 1885-ին փակվել է, վերաբացվել՝ 1886-ին։ 1888—89 ուս. տարում եղել է երկդասյան օրիորդական դպրոց՝ ունենալով 9 դասատու և 135 աշակերտուհի։ 1892-ին ունեցել է 162 աշակերտուհի, որոնցից 102 հոգի՝ ձրիավարժ։

1896-ին նորից է փակվել՝ վերաբացվելով միայն 1905-ի վերջերին։ 1907—08 ուս. տարում եղել է երկդասյան իգական դպրոց՝ 228 սովորողներով։ Հաջորդ ուս. տարում ունեցել է 279 աշակերտուհի։ 1911—12 ուս. տարում եղել է 5-ամյա դպրոց։ 1914-ին աշակերտուհիների թիվն իջել է 210-ի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 30, թ. 31; գ. 32, թ. 16; գ. 43, թ. 22; գ. 50, թ. 65; գ. 199, թ. 17; գ. 182, թ. 26;

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 196; գ. 1585, թ. 50; գ. 2890, թ. 63; գ. 8717, թ. 4; գ. 3997, թ. 19; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 41;

«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 3—4;

«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65; 1911, № 33—34, էջ 10;

Հ. Տեր-Միքայելյանի «Վրաստանի թեմի եկեղեցական ծխական դպրոցները 1911—12 թթ.»։

Հայ կաթոլիկական երկսեռ դպրոց

«Մշակ» թերթի 1886 թ. համարներից մեկում գրված է. «Մինչև վերջին տարիներս Թիֆլիսի հայ կաթոլիկների եկեղեցու գավթում կար մի ծխական դպրոց, որտեղ երկու սեռի մանուկներին միասին սովորեցնում էին Վենետիկի Մխիթարյան միաբանությունից եկած հայ կաթոլիկ քահանաները թե մի քանի դպրոցական առարկաներ և թե մայրենի լեզուն...

Հետզհետե եկեղեցու կողքին շինեցին մի մեծ շինություն և այնտեղ օրիորդներին տեղավորեցին վերին հարկում, իսկ տղաներին՝ ստորին հարկում և նրանց մեջ ծավալում էին կրթությունը՝ գլխավորապես մայ-

ընեի լեզվով, բայց երբ Թիֆլիսի հայ կաթոլիկների մեջ մեծ կշիռ ունեցող հայր Զաքարիա Դուրգենյանցը տեղափոխվեց Ղրիմ, և նրա տեղը եկավ մի լատին պատեր, որը ծագումով հայ է, ուստի նարանի օրիորդաց բաժինը փակել տվեց, աղջիկների թիվը քչացրեց և, բացի դրանից, նրանց մայրենի լեզուն բոլորովին արտաքսեց դպրոցից։ Մանուկներին խիստ կերպով արգելում է մինչև անգամ հայերեն մի բառ արտասանելը, այլ ստիպում է միայն վրացերեն խոսել...»։

Թե երբ է հիմնվել այս դպրոցը, մենք չգիտենք։ Անհայտ է նաև նրա հետագա ճակատագիրը։

«Մշակ», 1886, № 59։

Հայուհիների կարուձևի դպրոց

Մենք արդեն տեսանք, որ դեռևս 1883-ին Թիֆլիսում հիմնված է եղել քաղաքի հայ բարեգործական ընկերության կարուձևի դպրոցը, որի հետագա ճակատագրի վերաբերյալ մեզ ոչինչ հայտնի չէ։ Դա, հավանաբար, եղել է հայ առաջին արհեստագիտական դպրոցներից մեկը։

1882-ին Թիֆլիսում կազմակերպվել է հայ կանանց բարեգործական ընկերություն, որը 1888-ին նույնպես ստեղծել է իր՝ հայուհիների կարուձևի դպրոցը։ Ուրեմն այդ երկու դպրոցներն իրար հետ չպետք է շփոթել։

Հայուհիների կարուձևի դպրոցը առաջին տարում ընդունել է 21 հոգի, իսկ 1889—90 թթ. դարձել է երկդասյան՝ պատրաստելով վարպետուհու օգնականներ։ 1891-ին ավելացվել է ևս մի դասարան՝ դպրոցի շրջանավարտներին իրենց արհեստի մեջ կատարելագործելու նպատակով։ Այնտեղ ընդունվել են 7 հոգի, որոնք և հանդիսացել են դպրոցի առաջին շրջանավարտները։ Նրանք 1892-ին հատուկ հանձնաժողովի առաջ քննություն են տվել և ստացել վարպետուհու կոչում։

Հայ դպրոցների երկրորդ փակումից հետո այս դպրոցը ևս 1899-ին կառավարության առաջարկով ստիպված է եղել ընդունել «կարուձևի արհեստանոցի կերպարանք», թեև պահպանել է իր 4-ամյա դասընթացը։ 1899-ին բացվել է նաև «լվացանոց» (լվացքատուն), իսկ 1901-ին՝ 5-րդ դասարան։

Պետք է ասել, որ սա եղել է այն ժամանակվա համար բավականաչափ բարեկարգ արհեստավորական դպրոց, որը պատրաստել է կարուձևի լավ մասնագետներ։ «Աշակերտուհիներն այժմ կարում են այնպիսի դժվար ու բարդ շորեր, որ մատչելի են միայն քաղաքիս լավագույն արհեստանոցներին»,— ասված է բարեգործական ընկերության 25-ամյակին նվիրված գրքում։

1888-ից մինչև 1907 թվականը դպրոցը տվել է 153 շրջանավարտ՝ վարպետուհու աստիճանով։

1905—06 թթ. դպրոցի ուսուցչական խումբը բաղկացած էր մի ավագ վարժուհուց և ուսուցչուհիներից,— ասված է նույն գրքում։

1892-ին դպրոցին կից ստեղծվել են նաև խոհարարական կուրսեր, որոնք գործել են մինչև 1897 թվականը՝ տալով 215 շրջանավարտ։

Դպրոցում առանց վարձատրության երկար տարիներ աշխատել են Վ. Ռոտինյանը, Ս. Բաբայանը, Դ. Սունդուկյանի աղջիկը և շատ ուրիշներ։ Սանուհիների բուժման գործը ձրիաբար իր վրա է վերցրել հայ ականավոր բժիշկ Վահան Արծրունին։

Դպրոցը պահվել է ընկերության անդամների մուծած գումարներով և զանազան անձանց նվիրատվություններով։

1907-ին ընկերությունն ունեցել է 3 պատվավոր, 50 մշտական, 46 հոգի միանվագ 100 ռ. վճարող և 683 իսկական անդամներ։ Նրա հինգ բաժանմունքներում սովորել են 128 աղջիկներ։

«Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերության քսանհինգամյակը՝ 1882—1907», Թիֆլիս, 1907, էջ 3—58; «Նոր դպրոց», 1909, № 4, էջ 106։

Հավլաբարի Ս. Կարապետ եկեղեցու արական ծխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման ճիշտ թվականը մեզ հայտնի չէ։ Ստ. Մալխասյանը դեռևս 1862-ին Թիֆլիսում գործած հայ դպրոցների շարքում նշում է նաև Ս. Կարապետ եկեղեցու ծխական դպրոցը, բայց դժվար է ասել՝ արդյոք խոսքը Հավլաբարի Ս. Կարապետ, թե՞ Զրկինյանց Ս. Կարապետ եկեղեցու մասին է։

Ստ. Մալխասյանը նշում է նաև, որ Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունը 1868-ի աշնանը որոշել է իր տեսչության տակ առնել Թիֆլիսի 6 ծխական դպրոցներ, որոնց թվում նաև Հավլաբարի Ս. Կարապետ եկեղեցու դպրոցը։ Այս փաստի հիման վրա կարելի է ենթադրել, որ 1862-ին նույնպես խոսքը Հավլաբարի Ս. Կարապետ եկեղեցու դպրոցի մասին է եղել։ Սակայն սա միայն ենթադրություն է։ 1877-ին նույնպես նշված է Ս. Կարապետի դպրոցը, բայց չի ասված, թե ո՞ր թաղամասի։ Ունեցել է ընդամենը 21 աշակերտ։

Ինչպես երևում է, Հավլաբարի Ս. Կարապետ եկեղեցու ծխական դպրոցը երկար տարիներ փակված է եղել և վերաբացվել է միայն 1887-ին, որը և համարվել է նրա բացման թվականը։ Ահա թե ինչ ենք կարդում նրա մասին արխիվային մի փաստաթղթում. «Սույն դպրոցը գտնվում է Տֆխիսի Հավլաբար քաղաքամասի Ս. Կարապետ եկեղեցու գավթում, հիմնված է նույն եկեղեցու ծխական ձեռնտվությամբ, բաց-

ված է 1887-ին և կոչվում է Ս. Կարապետ եկեղեցու միդասյան տղայոց ուսումնարան» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 3, թ. 49)։

1888—89 ուս. տարում ունեցել է 3 ուսուցիչ և 53 աշակերտ։ Դրանցից 16 հոգի վաճառականների և 37 հոգի արհեստավորների երեխաներ։ «Աշակերտներն աղքատ դասից լինելով՝ ուսումնավարձ չեն վճարում, այլ միայն 18 հոգի վճարում են ուսանողական պիտույից համար 2—6 ռուբ.»,— գրել է 1892-ի իր զեկուցագրում դպրոցի ավագ ուսուցիչը։

1896-ի՝ հայ դպրոցների ընդհանուր փակման ժամանակ թողնվել է հոգևոր իշխանության իրավասության տակ, սակայն 1—2 տարի հետո այն ևս փակվել է։ Վերաբացվել է 1906-ին։ 1908-ին եղել է երկսեռ դպրոց՝ 55 աշակերտով (14 աղջիկ)։ 1911-ին բաղկացած է եղել միայն I և IV բաժանմունքներից։ 1914-ին ունեցել է 5 ուսուցիչ և 91 աշակերտ։

Ստ. Մալխասյան, «Ներսիսյան դպր. համառոտ պատմ.», էջ 116 և 134;
«Արարատ», 1878, ԺԹ. էջ 452;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 3, թ. 49; գ. 182, թ. 26;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 10;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 72; ֆ. 13, ց. 11, գ 264, թ. 41;
«Նոր դպրոց», 1911, № 33—34, էջ 11; 1913, № 10, էջ 73։

Հավլաբարի Ս. Մինաս, ապա՝ Էջմիածնեցոց Ս. Գևորգ եկեղեցիների Մարիամյան օրիորդաց դպրոց

Այս դպրոցի մասին մենք խոսել ենք Թիֆլիսի Նորաշեն եկեղեցու Մարիամյան իգական դպրոցի կապակցությամբ (տես)։ Սկզբնական տարիներին այն հանդիսացել է Նորաշենի Մարիամյան դպրոցի մի բաժին։ 1873-ից այն արդեն ցույց է տրված որպես առանձին, ինքնուրույն իգական դպրոց՝ կոչվելով Հավլաբարի Ս. Մինաս եկեղեցու Մարիամյան օրիորդաց ուսումնարան։ Այդ թվականին ունեցել է 4 ուսուցիչ, 42 աշակերտուհի։ «Արարատ» ամսագրի 1878-ի № 12-ում տպագրված ցուցակում չի հիշատակվում, թե այս դպրոցը ո՞ր եկեղեցուն է կից, այլ ուղղակի նշված է՝ Հավլաբարի Մարիամյան օրիորդաց դպրոց (4 ուսուցիչ, 60 աշակերտուհի)։ Նույն ձևով է նշված նաև Էջմիածնի սինոդի կողմից 1882-ին կազմված և ուսումնական օկրուգին ներկայացված պաշտոնական մի ցուցակում (ունեցել է 6 ուսուցիչ, 60 աշակերտուհի)։ 1884 թվականին Հավլաբարի Էջմիածնեցոց Ս. Գևորգ եկեղեցու բակում կառուցվել է երկհարկանի շենք, ուր տեղափոխվել է Մարիամյան դպրոցը։ Այդ թվականից սկսած այն արդեն անվանվել է Հավլաբարի Էջմիածնեցոց Ս. Գևորգ եկեղեցու (Էջմիածնի փողոց) Մարիամյան օրիորդաց դպրոց։ Մինչև 1885 թվականը եղել է երկդասյան դպրոց։ Այդ

թվականին այն ևս փակվել է, վերաբացվելով 1886-ին։ 1888-ին եղել է արդեն երկդասյան դպրոց, ուր սովորել են 91 հայ աղջիկներ (հոգևորականների՝ 5, վաճառականների՝ 49, արհեստավորների՝ 37 հոգի)։ Թաղակ են տվել 79, ձրի են սովորել 12 հոգի։ Դպրոցն ավարտել են 9, հաջորդ դասարաններն են փոխադրվել 40, մնացել են 41 հոգի։

1892-ին ունեցել է 114 աշակերտուհի։ 1896-ին նորից է փակվել կառավարության հրամանով, վերաբացվելով 1905-ի վերջերին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 5 ուսուցիչ, 139 աշակերտուհի, իսկ հաջորդ ուսումնական տարում աշակերտուհիների թիվը պակասել է։

1911—1912 ուս. տարում եղել է եռամյա իգական դպրոց, իսկ 1914-ին ունեցել է 6 ուսուցիչ, 125 աշակերտուհի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 65—66; գ. 32, թ. 16; գ. 43, թ. 20; գ. 50, թ. 65; գ. 11, թ. 3; գ. 357, թ. 14; գ. 199, թ. 17; գ. 106, թ. 24; գ. 182, թ. 27;
«Մեղու Հայաստանի», 1884, №№ 66, 88։
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 51; գ. 2018, թ. 195; գ. 2890, թ. 85, գ. 8717; թ. 3; ֆ. 2, գ. 865, թ. 71; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 41;
«Արարատ», 1878, ԺԹ. էջ 452; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 7; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65, 1910, № 10, էջ 91, 1911, № 33—34, էջ 11, 1913, № 10, էջ 73։

Հավլաբարի Հռիփսիմյան (Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու) օրիորդաց դպրոց

Այս դպրոցի մասին մեր ունեցած տեղեկությունները աղքատիկ են։ «Մեղու Հայաստանի» լրագրի 1866 թ. № 45-ից իմանում ենք, որ այն հիմնվել է հենց այդ թվականին՝ տեղի քահանա Ս. Չմշկյանի ջանքերով։ Նույն թերթի 1884-ի մի հոդվածից իմանում ենք, որ այդ դպրոցը պահվել է Հավլաբարի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու միջոցներով, սակայն միշտ էլ գտնվել է նյութական նեղ պայմաններում։

«Մեղուն» շատ անգամ անդրադարձել է այդ դպրոցին և նշել, որ այն կանգնած է փակման վտանգի առաջ, որ նրա տեսուչը ցանկանում է այն միացնել տեղի Մարիամյան դպրոցի հետ և կազմել «Միացյալ ուսումնարան»։ Հավանաբար հենց այդպես էլ եղել է, քանի որ նշված դպրոցը հետագա տարիներում այլևս չի երևում։

Թիֆլիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու անունով օրիորդաց դպրոց մենք հանդիպել է արխիվային միայն մի փաստաթղթում, որտեղ նրա հիմնադրման թվականը նշված է 1882-ը։ Ինչպես երևում է, այդ դպրոցը նախկինում էլի է փակվել և վերաբացվել է 1882-ին, որը և թյուրիմացաբար նրա հիմնադրման թվականն է համարվել։

«Մեղու Հայաստանի» 1866, № 45, էջ 337—338, 1894, №№ 12, 95 և այլն;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422; գ. 2018, թ. 196։

Հավլաբարի Ս. Մինաս եկեղեցու (Ս. Մինասի փող.) Իզմիրյան արական ծխական դպրոց

Ծխական հնագույն դպրոցներից մեկն է, որը, ըստ պրոֆ. Մ. Սանթրոսյանի, դեռևս 1850-ին գործել է։ Հիմնվել է, հավանաբար, 1848-ի վերջերին կամ 1849-ին։ Ստ. Մալխասյանը 1862-ին Թիֆլիսում գործած 7 ծխական դպրոցների շարքում նշում է նաև Ս. Մինասի դպրոցը։ Մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերը նրա հիմնադրման տարեթիվը ցույց են տալիս 1860-ը, մի այլ փաստաթղթում նշված է նույնիսկ 1877-ը։ Իսկ «Մեղու Հայաստանի» լրագիրը 1873 թ. գրել է, որ այդ թվականի սեպտեմբերին Թիֆլիսի Հավլաբար թաղի Ս. Մինաս եկեղեցու դպրոցում բացվել է աղջիկների ծխական դպրոց։

Այս փաստերն ինքնին վկայում են, թե որքան անկայուն ու անապահով է եղել հայ դպրոցների վիճակը։ Նրանք մեծ դժվարությամբ են բացվել, բայց հեշտությամբ փակվել են։ Ինչպես երևում է, այս դպրոցն էլ նույն բախտին է արժանացել՝ ընդամենը 20—25 տարվա ընթացքում մի քանի անգամ փակվելով ու վերաբացվելով։

1873-ին ունեցել է 17 աշակերտ, 1877-ին՝ 4 ուսուցիչ, 40 աշակերտ, իսկ 1881-ին՝ 37 աշակերտ։ 1885-ին փակվել է, վերաբացվելով 1888-ին։ Եղել է միդասյան արական դպրոց՝ 36 աշակերտով։ 1892—93 ուս. տարում ունեցել է 43 աշակերտ։ 1897-ին փակվել է։ Վերաբացվել է 1905-ի վերջերին։ 1907—08 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց՝ 45 աշակերտով (18 աղջիկ)։ Գործել է նաև հաջորդ ուսումնական տարում։ 1910—1911 թվականներին փակված է եղել՝ նյութական սուղ պայմանների պատճառով։ 1913-ին նորից է գործել, գտնվելով առաջադիմ վիճակում։ «Նոր դպրոց»-ի հաղորդման համաձայն 1914-ին պետք է միացած լիներ Հավլաբարի հայկական դպրոցներից մեկին, սակայն այդ թվականին կազմված մի ցուցակում նշված է որպես առանձին դպրոց՝ 43 աշակերտով։

Ստ. Մալխասյան, «Համառոտ պատմ. Ներսիսյան դպրոցի», 1900, էջ 116;
Մ. Հ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19 դ. ա. կեսին», էջ 248—250;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 21; գ. 50, թ. 66; գ. 182, թ. 26; գ. 357, թ. 30; գ. 438, թ. 11;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 2018, թ. 196; գ. 8717, թ. 4; ֆ. 12, գ. 863, թ. 72; ֆ. 13, գ. 11, գ. 264, թ. 41;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 10;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65; 1911, № 13—14, էջ 24; № 33—34, էջ 11; 1913, № 10, էջ 72—73;
«Циркуляр», 1888, № 11, էջ 452։

Հավլաբարի Շամքորեցոց Ս. Գևորգ եկեղեցու (Շամխորի փող.) արական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման և հետագա զարգացման հարցերում նույնպես կան շատ անորոշություններ և անճշտություններ։

Հենվելով Ստ. Մալխասյանի «Համառոտ պատմ. Ներսիսյան հոգևոր դպրոցի» գրքի վրա, Հ. Տեր-Միրաքյանը ցույց է տալիս, որ Շամքորեցոց դպրոցը հիմնվել է 1861-ին։ Մակայն Մալխասյանը իր գրքում այդպիսի բան չի ասում։ Նա ասում է, որ Մատթեոս կաթողիկոսի հորդորանքով Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունը որոշել է իր վրա վերցնել Թիֆլիսի եկեղեցական ծխական դպրոցների կառավարումը և այդ նպատակով անհրաժեշտ տեղեկություններ է հավաքել նրանց մասին։ Պարզվել է, որ 1862-ին Թիֆլիսում գործել են ընդամենը 7 եկեղեցական ծխական դպրոցներ, որոնցից մեկը՝ Շամքորեցոց եկեղեցուն կից։ Հետևաբար, հիմք չկա ասելու, որ այն 1861-ին է հիմնվել։

Պրոֆ. Մ. Սանթրոսյանը հիշյալ 6—7 դպրոցների բացման թվականները ցույց է տալիս 1848—1850-ը, որը և մենք հավատում ենք համարում։

Ինչպես երևում է, դեռևս 1850-ից գործած Շամքորեցոց դպրոցը 1860-ական թվականների կեսերին փակված է եղել։ Այդ առթիվ Ստ. Մալխասյանը գրում է, որ Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունը, նպատակ ունենալով բարվոքել Թիֆլիսի ծխական դպրոցների վիճակը, 1868 թ. դեկտեմբերի 20-ի իր նիստում «որոշեց յուր տեսչության տակ առնել 6 ծխական ուսումնարան, այն է՝ Մուղնու, Կաթողիկե Ս. Գևորգի, Ավետյաց եկեղեցու, Հավլաբարի Ս. Կարապետի, Ս. Մինասի և Շամքորեցոց Ս. Աստվածածնի ծխական ուսումնարանները, որոնցից Ավետյանցը և Շամքորեցոցը նոր պետք է բացվեին» (նույն տեղը, էջ 134)։

1871-ին այս դպրոցը գործել է, ունենալով ընդամենը 1 ուսուցիչ և 15 աշակերտ։ Գործել է նաև 1877, 1881, 1884 թվականներին։ 1885-ին փակվել է կառավարության կողմից, վերաբացվելով 1886-ին։

Հետագայում, ինչպես երևում է, Շամքորեցոց եկեղեցու բակում տեղավորվել է Քամոյան Ս. Գևորգ եկեղեցու արական դպրոցը, որի մասին համապատասխան նշումներ կան 1891-ի, 1892-ի տեղեկագրերում։ Շամքորեցոց Եկեղեցու Քամոյան դպրոցը փակվել է 1897 կամ 1898 թվականներին։ 1906-ին վերաբացված հայ դպրոցների ցուցակում արդեն հիշատակվում է Շամքորեցոց Ս. Աստվածածին եկեղեցու դպրոցը (առանց Քամոյան անվան)։ Նույնը նաև 1907—08 և 1908—09 ուս. տարիների տեղեկագրերում։ Եղել է երկսեռ դպրոց՝ 28 աշակերտով (7 աղ-

չին)։ 1911-ին ունեցել է նոամյա դասընթաց։ 1914-ին աշակերտների թիվը հասել է 133-ի։

Մ. Հ. Սանթրոյան, «Արևելահայ դպրոցը 19 դարի ա. կեսին», էջ 250;
Սա. Մարքեսյան, «Համառոտ պատմություն ներսիսյան դպրոցի», էջ 116;
Հ. Տեր-Միրաքյանի արխիվ, գործ № 20; «Արարատ», 1878, ԺԲ. էջ 452;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 2018, թ. 195; գ. 2890, թ. 67; ֆ. 12, գ. 865; ֆ. 13, գ. 8717, թ. 15; գ. 264, թ. 41;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 11; գ. 32, թ. 16; գ. 50, թ. 66; գ. 106, գ. 182, թ. 27;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65, 1911, № 33—34, էջ 11, 1913, № 10, էջ 72—73։

Ջորբաշու Ս. Գևորգ եկեղեցու (Մետեխի բարձունք) ս.ս. դպրոց

1877-ին գործել է, ունենալով 2 ուսուցիչ, 22 աշակերտ։ 1882-ին աշակերտների թիվը հասել է 30-ի։ Հետագա տարիների փաստաթղթերից և ոչ մեկում այս դպրոցը այլևս չի հանդիպում։ Հնարավոր է, որ այն նշված լինի այլ անունով, որը սակայն մեզ անհայտ է։

«Արարատ», 1878, ԺԲ. էջ 452;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47։

Մայր տաճարի հոգևոր դպրոց

Թիֆլիսի հայոց Մայր տաճարի արական հոգևոր դպրոցը մեզ հանդիպել է 1871-ի և 1873-ի տեղեկագրերում։ 1873-ին ունեցել է 2 ուսուցիչ, 30 աշակերտ։ Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է, քանի որ համապատասխան տեղեկագրերում ու փաստաթղթերում այլևս չի երևում։ Հայտնի է, սակայն, որ 1877-ից վանաց ավագ եկեղեցուն (Մայր տաճարի՞ն) կից գործել է Մարկոսյան իգական դպրոցը (տես)։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 20։

Մարիամյան-Հովնանյան դպրոց

Հարուստ ու հետաքրքիր պատմություն ունի հայ աղջիկների համար Թիֆլիսում հիմնված այս նշանավոր դպրոցը։ Այն երբեմն, իհարկե, կգրվի, և հայ ընթերցողը հնարավորություն կունենա ավելի հանգամանորեն ծանոթանալու այդ ազգային դպրոցի ներքին կյանքին ու բնդունված գործունեությանը, նրա գլխով եկած ու անցած քաղաքական իրադարձություններին և այլն։

Այստեղ մենք սահմանափակվելու ենք միայն ամենահամառոտ տեղեկություններ հաղորդելով նրա մասին։ Ի դեպ, կցանկանայինք նշել

նաև, որ Մարիամյան-Հովնանյան դպրոցի վերաբերյալ հարուստ նյութեր են պահվում Երևանի, Թբիլիսիի և Լենինգրադի պատմական արխիվներում։

Նրա կազմակերպման համառոտ պատմությունը հետևյալն է։

Թիֆլիսի հայանի հարուստ, իսկական պետական խորհրդական Հովհաննես (Իվան) Ստեփանի Անանյանը (Անանով) կատարելով իր կնոջ՝ Մարիամի կամքը, 1876-ի հուլիսի 15-ին մի նամակով դիմել է ամենայն հայոց կաթողիկոսին՝ հայտնելով նրան, որ ինքը ցանկություն ունի Բերության փողոցի վրա գտնվող իր տունը նվիրել հայոց կուսատան Ս. Ստեփանոս վանքին՝ այնտեղ հայ աղջիկների համար դպրոց բացելու նպատակով։ Նա խոստացել է ապահովել նաև այդ դպրոցի գոյության նյութական միջոցները, բայց այն դեպքում, եթե պաշտոնապես ընդունվեն և պարտադիր կարգով պահպանվեն հետևյալ գլխավոր պայմանները.

1. Դպրոցը պետք է կոչվի հայ օրիորդաց Անանյան ուսումնարան։

2. Այնտեղ պետք է ընդունվեն բացառապես հայ աղջիկներ, առանձնապես չունևոր ընտանիքներից և որբերից։

3. Ուսումնարանը պետք է ենթարկվի հայ հոգևոր իշխանությանը և դեկավարվի Թիֆլիսի հայ բնակչության կողմից ընտրված հոգաբարձական խորհրդի միջոցով։ Դպրոցի տեսչին ընտրելու է հոգաբարձական խորհուրդը և հաստատելու է կաթողիկոսը։

4. Ուսումնարանի գլխավոր և պարտադիր առարկաների թվում պետք է լինեն հայոց կրոնը և հայ եկեղեցու պատմությունը, հայոց և ռուսաց լեզուները, իսկ առհասարակ բոլոր առարկաների ավանդումը պետք է տարվի հայոց լեզվով։

Առաջարկելով այս պայմանները, Անանյանը խնդրել է կաթողիկոսին դրանց հիման վրա դիմել կայսրին և ստանալ հիշյալ դպրոցը բացելու վերաբերյալ նրա թույլտվությունը։

Կաթողիկոսը հատուկ նամակով դիմել է Թագավորին՝ մանրամասն նշելով նաև Անանյանի առաջարկած պայմանները։ 1877-ի ապրիլի 18-ին հետևել է բարձրագույն թույլտվությունը, իսկ դրանից առաջ՝ Անանյանի առաջարկած պայմաններով հիշյալ դպրոցի բացման հարցը քննարկել է մինիստրների կոմիտեի հավանությանը։ Ներքին գործերի մինիստրությունը իր հերթին լրացուցիչ կերպով հաղորդել է կաթողիկոսին, որ Անանյանի առաջարկած պայմանները լիովին համապատասխանում են կառավարության նպատակներին և ընդունելի են, միայն թե հիշյալ դպրոցում Թուրատանի պատմությունը և աշխարհագրությունը նույնպես պետք է ավանդվեն ռուսաց լեզվով։

Ահա այս հիման վրա 1877-ի նոյեմբերի 18-ին բացվում է հայ աղջիկների Անանյան դպրոցը Թիֆլիսում։

Այդ դպրոցի գոյությունը հաստատուն դարձնելու համար Անանյանը 1878-ին նրան նվիրում է Թիֆլիսում ունեցած իր քարվանսարան՝ 400000 ռուբլու արժողությամբ։

1884-ին Անանյանը դիմում է և խնդրում իր հիմնած հայ օրիորդաց դպրոցը անվանել Մարիամյան-Հովնանյան (կնոջ և իր անունով), նորից կրկնելով այն պայմանները, որոնց հիման վրա այդ դպրոցը պետք է գոյություն ունենա։

1887-ի հունվարի 30-ին բարձրագույնս հաստատվում է Անանյանի խնդրի առթիվ մինիստրների կոմիտեի որոշումը, և այդ ժամանակից դպրոցը կոչվում է «Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսաստանին կից հայ օրիորդաց Մարիամյան-Հովնանյան ուսումնարան»։

1896-ին, հայ մյուս դպրոցների հետ միասին, փակվում է նա Մարիամյան-Հովնանյան դպրոցը, շնայած, ինչպես տեսանք, այն բացվել ու գործում էր Անանյանի առաջադրած ու բարձրագույնս հաստատված հատուկ պայմանների համաձայն։ Այդ առթիվ բողոք են գրում ինչպես դպրոցի հոգաբարձական խորհուրդը, այնպես էլ կաթողիկոս Խրիմյան Հայրիկը։ Այդ բողոք-դիմումների մեջ նրանք հանդամանորեն շարադրում են հիշյալ դպրոցի ստեղծման պատմությունը, ընդգծելով, որ այն գոյություն ունի հատուկ պայմանների համաձայն, և նրա վրա չեն կարող տարածվել դպրոցների փակման վերաբերյալ կառավարական որոշումներն ու կարգադրությունները։

Այս կապակցությամբ չափազանց աշխույժ և պատմական տեսակետից մեծ հետաքրքրություն ներկայացնող գրագրություն է սկսվում հայ հոգևոր իշխանության, Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր կառավարչության, ներքին գործերի ու լուսավորության մինիստրությունների, մինիստրների կոմիտեի ու կառավարական այլ օրգանների միջև։

Ինչպես երևում է, կաթողիկոսի, հոգաբարձական խորհրդի և Անանյանի ժառանգների վճռական բողոքները սկզբնական շրջանում որոշ շփոթություն են առաջացրել Պետերբուրգում։ Այդ են վկայում այնտեղից Թիֆլիս ուղարկված այսպիսի հեռագրերը՝ «Հայտնեք, թե ինչո՞ւ է փակ Անանյան ուսումնարանը»։ «Հայտնեք Անանյան ուսումնարանի բացման մասին» և այլն։ Սակայն Թիֆլիսում ոչ մի կարևորություն չեն տալիս այդ հեռագրերին ու հարցումներին։ Դպրոցը շարունակում է փակ մնալ, իսկ նրա վերաբերյալ գրագրությունն ընդունում է ավելի լուրջ ու տևական բնույթ։ Այդ ժամանակամիջոցում Կովկասի գլխավոր կառավարչապետ Գոլիցինը, Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձու Յանովսկու անմիջական թելադրանքով, խորհուրդներով ու աջակցությամբ կարողանում է ոչ միայն փոխել ներքին գործերի մինիստր Գորեմիկինի սկզբնական կարծիքը, այլև նրա հետ միացած համոզել լուսավորության մինիստր Բոգոլեպովին։

Այդ տեղի է ունեցել այսպես։

Կաթողիկոսի բողոքը ստանալուց հետո, ներքին գործոց մինիստր Գորեմիկինը 1897-ի մարտի 3-ին հայտնում է Գոլիցինին, որ Մարիամյան-Հովնանյան դպրոցի «փակումը տեղի է ունեցել լոկ թյուրիմացաբար և անհարկի», և որ ինքը հնարավոր է համարում այն նորից բացել։ Իսկ եթե, ավելացրել է նա, այդ դպրոցը դուրս է եկել սովորական ժամկետ դպրոցների ծրագրային սահմաններից, ապա կարելի է այն մասնավոր ուսումնարանների նման, ենթարկել ուսումնական (պետական) վարչության վերահսկողությանը։

Լուսավորության մինիստրությունը նույնպես գտել է, որ այդ դպրոցը չպետք է փակվեր և այն պետք է անհապաղ վերաբացվի։

Սակայն Գոլիցինը մնում է անսասան։ Զգձգելով գործը ավելի քան 9 ամիս, նա 1898-ի հունվարի կեսերին վերջապես գրում է բացատրագիր Գորեմիկինի անունով, աշխատելով համոզել նրան, որ Հովնանյան դպրոցի փակումը եղել է ճիշտ, և այն չպետք է վերաբացվի, քանի դեռ չեն ընդունվել մի շարք պայմաններ։ Կեսգծելով բացարձակ իրողությունը, նա գրում է, որ այդ դպրոցը մինչև այժմ չունի բարձրագույնս հաստատված կանոնադրություն, թե ընդունում է, որ դեռևս 70-ական թվականներին նրա հիմնադիրը և կաթողիկոսը ներկայացրած են եղել այդ կանոնադրության նախագիծը։ Նա նույնիսկ արհամարհում է այն փաստը, որ կայսեր կողմից երկու անգամ (1877-ին և 1887-ին) ընդունվել ու հաստատվել են Անանյանի կողմից առաջարկված պայմանները, որոնց հիման վրա էլ հենց բացվել է նրա անունը կրող դպրոցը։

Երկար ու բարակ բացատրություններից ու «հիմնավորումներից» հետո, Գոլիցինը շարադրում է իր ու Յանովսկու առաջարկները հիշյալ դպրոցը վերաբացելու պայմանների մասին։ Նրանք գտնում են, որ այն կարող է վերաբացվել միայն որպես մասնավոր դպրոց՝ լիովին ենթարկվելով ուսումնական վարչությանը, որ նրա տեսուչը և ուսուցիչները պետք է նշանակվեն ոչ թե հայ հոգևոր իշխանության, այլ պետական ուսումնական վարչության կողմից, որ դպրոցի հոգաբարձական խորհուրդը չպետք է ընտրվի հայ բնակչության կողմից և պետք է զրաղվի միայն ու միայն դպրոցի տնտեսական ապահովության գործով, չմասնակցելով ուսումնական գործին, որ, վերջապես, «Ուսուցումը ուսումնարանում, հայոց լեզվի և հայ Գրիգորյան եկեղեցու կրոնից բացի պետք է տարվի ոչ թե հայոց, այլ առաց լեզվով» (ՍՍՀՄ ԳԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, թ. 81)։

Իր գրության վերջում Գոլիցինը ավելացրել է, որ վերևում շարադրված կետերի համապատասխան Յանովսկին, իր հանձնարարությամբ, կազմել է Մարիամյան-Հովնանյան դպրոցի կանոնադրության նախագիծը, որը և ներկայացվում է հաստատման։

Անցնում է ևս 10 ամիս։ Հարցը դեռևս մնում է չլուծված։ Գոլիցինի առաջարկները հավանություն չեն գտնում լուսավորության մինիստրությունում, որը իր հերթին անում է իր առաջարկները։

Գոլիցինը 1898 թ. նոյեմբերի 5-ին նորից է դիմում Գորեմիկինին։ Իր նամակում նա նշում է, որ Մարիամյան-Հովնանյան դպրոցի վերաբացման պայմանների վերաբերյալ իր եզրակացությունները լուսավորության մինիստրության կողմից «հանդիպել են նոր ենթադրությունների, որոնց իրագործումը, իմ կարծիքով, չէր համապատասխանի ո՛չ գործի էությանը, ո՛չ էլ կառավարական նպատակներին» (նույն տեղը, թ. 37)։ Գոլիցինն ավելացնում է, որ եթե Բոգոլեպովը համաձայն չէ իր առաջարկներին, ապա թող բարի լինի հարցը մտցնել մինիստրների կոմիտեի քննարկմանը։

Վերջում դիմելով ներքին գործոց մինիստրին, Գոլիցինը ավելացնում է.

«Նկատի ունենալով քաղաքական հետևանքների տեսակետից ներկա գործի այս կամ այն ուղղության չափազանց կարևոր նշանակությունը, իմ պարտքն եմ համարում Ձերդ բարձր բարեհաճությանը խնդրել, թե արդյոք հնարավոր չէ՞ համարի Ձեր կողմից օժանդակել այս գործի լուծմանը իմ առաջարկների համաձայն...» (Նույն տեղը)։

Եվ, իրոք, Գոլիցինի այս ներշնչումները, հայկական մի դպրոցի փակման կամ բացման հարցի քաղաքական չափազանց կարևոր նշանակության ընդգծումը և մյուս պատճառաբանությունները իրենց որոշակի դերն են խաղում։ Նույն Գորեմիկինը, որ ընդամենը մեկ տարի առաջ «թյուրիմացությունն» էր համարում Մարիամյան-Հովնանյան դպրոցի փակումը, այժմ 180 աստիճանի շրջադարձ է կատարում։

Լուսավորության մինիստր Բոգոլեպովին ուղղված իր 1898 թ. դեկտեմբերի 8-ի գրության մեջ նա ինքն էր արդեն հիմնավորում իշխան Գոլիցինի «տեսակետները»։ Նա գրում էր, որ ճանաչելով Կովկասի գլխավոր կառավարչապետի «փաստարկները ամբողջովին հիմնավոր և դրա համար էլ լիովին միանալով նրա եզրակացություններ», ինքն իր հերթին անհրաժեշտ է համարում ավելացնել, որ հայ դպրոցները լուսավորության մինիստրությանը ենթարկելու վերաբերյալ կայսերական հրամանի «գլխավոր նպատակը հենց այն է, որպեսզի վերացվի հայ Գրիգորյան հոգևորականության և հայ բնակչության ներկայացուցիչների սմեն մի մասնակցություն հիշյալ դպրոցների կառավարման գործում»։

Այնուհետև նա ընդգծում է, որ «հայկական Մարիամյան-Հովնանյան ուսումնարանը հայ ինտելիգենցիայից որևէ կախման մեջ գտնվելը լիովին կհակասեր նշված օրինադրումներին, իսկ այն պատճառաբանությունը, թե հակառակ դեպքում Անանյանի ժառանգները կարող են նա պահանջել հիմնադրի կողմից արված զոհաբերությունները, նախ անհիմն է և ապա ոչ մի դեպքում «չպետք է հիմք հանդիսանա թույլ տալու, որպեսզի հայ ինտելիգենցիան մասնակցություն ունենա հայ պատանեկության կրթական գործի ղեկավարմանը, քանի որ, անկասկած, ավելի նպատակահարմար կլիներ քաղաքական նկատառումներով ավելի շատ թույլ տալ փակել հիշյալ ուսումնարանը, քան թե հանդուրժել սխալ, ո՛չ օրենքին, ո՛չ էլ կառավարական նպատակներին համապատասխանող կրթության գրվածքը նրանում, մանավանդ որ այդ ուսումնարանը հանդիսանում է հայ կանանց բարձրագույն կրթության միակ օջախը» (ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53 IV, թ. 44—45, ց. 150, գ. 272, թ. 95—97)։

Կարծեք թե ամեն ինչ ասված է պարզ ու որոշակի։

Եվ ինչպե՞ս կհամարձակվեր լուսավորության մինիստրը դիմադիր լինել նման ահավոր ներշնչմանը, որքան էլ նա համոզված լիներ, որ տեղի ունեցածը ապօրինություն է։ Եվ ինչո՞ւ պետք է նա դիմադիր լիներ, քանի որ ինքն էլ էր հանդիսանում հայ դպրոցների գլխավոր գերեզմանափորներից մեկը։

Եվ ահա, ի լրումն այդ ամենի՝ լուսավորության մինիստրը 1900 թ. հունվարի 9-ին հաստատում է Մարիամյան-Հովնանյան դպրոցի համար Յանովսկու ու Գոլիցինի մշակած կանոնադրությունը, նրանց իսկ առաջարկած սկզբունքներով, և կարգադրում այն գործի դնել։

Եվ գործի է դրվում։ Մարիամյան-Հովնանյան դպրոցը վերաբացվում է, բայց ոչ որպես հայկական դպրոց։ Այնտեղ պահպանվում է միայն հայ կրոնի և հայոց լեզվի ավանդումը, իսկ մնացած բոլոր առարկաները տարվում են ռուսաց լեզվով։ Այն ամբողջովին ենթարկվում է ուսումնական օկրուգի հոգաբարձուին և Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորին։

Ահա այսպես է ավարտվում Մարիամյան-Հովնանյան դպրոցի շուրջը ավելի քան 4 տարի տեղի ունեցած պայքարը, որը, ինչպես տեսանք, զուտ քաղաքական բնույթ է կրել։

Իհարկե, հայ ժողովուրդը և նրա առաջավոր ներկայացուցիչները ոչ մի դեպքում չեն հաշտվել ինչպես առհասարակ հայկական դպրոցների փակման, այնպես էլ նրանցից մի քանիսի (այդ թվում նաև Մարիամյան-Հովնանյան դպրոցի) վերասեռման փաստի հետ։ Նրանք շարունակել են իրենց համառ պայքարը և ի վերջով հասել են իրենց նպատակին։ 1905 թ. օգոստոսի 1-ին հրապարակվել է կայսերական «ուկազ» հայ դպրոցների վերաբացումը թույլատրելու մասին։ Այդ «ուկազը» ո՛չ միայն հայ ժողովրդի պայքարի, այլև հիմնականում 1905 թ. հեղափոխական շարժումների արգասիքն էր։

Սկսում են վերաբացվել հայկական դպրոցները՝ շուրջ 10 տարի փակ մնալուց հետո։ Վերաբացվում է նաև Մարիամյան-Հովնանյան դպրոցը՝ որպես ազգային ուսումնական հաստատություն։

Այժմ մի քանի համառոտ փաստական տեղեկություններ այդ դպրոցի մասին։

1881-ին դպրոցը ունեցել է 14 ուսուցիչ, 170 աշակերտուհի։ 1884-ին արդեն եղել է միջնակարգ դպրոց՝ 5 դասարանյան կազմով։ 1885-ին փակվել է հայ մյուս բոլոր դպրոցների հետ միասին։ Վերաբացվել է 1886-ին։ 1888—89 ուս. տարում եղել է երկդասյան դպրոց, ունենալով 246 աշակերտուհի։ Պետք է նշել, որ այդ ժամանակ չի համապատասխանել հիմնադրի առաջադրած գլխավոր պայմաններից մեկին, այն է, որպեսզի այնտեղ ուսանելու ընդունվեն գերազանցապես չքավոր ու որբ հայ աղջիկներ։ Նշված 246 հոգուց եղել են՝ հոգևորականների աղջիկներ՝ 6, ազնվականների՝ 4, ատենանավորների՝ 14, վաճառականների՝ 184 և արհեստավորների՝ 108 հոգի։ Դրանցից 43 հոգի թոշակ են վճարել, իսկ 203 հոգի սովորել են ձրի։ Այդ ուսումնական տարում դպրոցն ավարտել են ընդամենը 8 հոգի, հեռացվել են 13 և նույն դասարանում մնացել՝ 98 հոգի։

1889-ից այստեղ հայոց լեզու է ավանդել Մանուկ Աբեղյանը։

1892-ին ունեցել է 231 աշակերտուհի։ Ինչպես տեսանք, 1896-ին կրկին անգամ կառավարական ապօրինության զոհ է դարձել, վերաբացվելով 1900-ին ո՛չ որպես ազգային դպրոց։ 1905-ին այն անցնում է հայ հոգևոր իշխանությունների իրավասության տակ և նորից դառնում է հայկական ազգային դպրոց։

1906—07 ուս. տարում ունեցել է 3 նախապատրաստական, 4 հիմնական և մեկ զուգընթաց դասարաններ՝ 422 աշակերտուհիներով։

1907-ին փակ գաղտնի քվեարկությամբ միաձայն այս դպրոցի տեսուչ է ընտրվել հայ նշանավոր մանկավարժ Տիգրան Ռաշմաճյանը։ Նա աշխատել է մինչև 1909—10 ուս. տարվա վերջը։ Հաջորդ ուսումնական տարվանից տեսուչ է ընտրվել նշանավոր հայագետ Ստեփանոս Մալխասյանը։

1908—09 ուս. տարվանից դպրոցը նորից դարձել է միջնակարգ, ունենալով յոթ հիմնական դասարան՝ կամ տասը տարվա դասընթաց։ Հետաքրքրական է նշել, որ հայոց պատմությունը ավանդվել է 6 դասարաններում (3-րդից բացի), յուրաքանչյուրում շաբաթական 2-ական ժամ (ընդամենը 12 ժամ)։

1910—11 ուս. տարում ունեցել է 24 ուսուցիչ, 345 աշակերտուհի։

1912—13 ուս. տարվանից բացվել է նաև 8-րդ մանկավարժական դասարան՝ ուսուցչուհիներ պատրաստելու համար։ Այդ ուս. տարում

ունեցել է 430 աշակերտուհի, որոնցից փոխադրվել են 197, վերաքննություն են ստացել 117, մնացել են 79 և դպրոցից արձակվել են 12 հոգի։

1914—15 ուս. տարվանից դպրոցի տեսուչ է ընտրվել հայ նշանավոր մանկավարժ Հովհաննես Տեր-Միրաքյանը։ Պատերազմի պատճառով աշակերտուհիների թիվը նվազել է, հասնելով 397-ի։ Մնողազուրկ են եղել 94 հոգի։

1913 թ. դեկտեմբերին հիմնվել է Մարիամյան-Հովնանյան դպրոցի չքավոր աշակերտուհիներին օգնող ընկերություն, որը 1915-ին ունեցել է 16 պատվավոր և խնայական անդամներ, 106 մշտական անդամներ։ 1917-ին գործել է որպես միջնակարգ դպրոց։

Մարիամյան-Հովնանյան դպրոցում երկար տարիներ բեղմնավոր աշխատանք են կատարել նաև Մակար Եկմալյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Խաչիկ Հարությունյանը, Եալչատուր Կանայանը, Նիկողայոս Սարգսյանը, Տիգրան Մուշեղյանը, Սոֆյա Արղությանը և շատ ուրիշներ։

«Մանկավարժական թերթ», 1878, № 3, էջ 63;

ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 65; գ. 2, թ. 3—11; գ. 11, թ. 1; գ. 106, թ. 24; գ. 357, թ. 4; գ. 199, թ. 17; գ. 492, թ. 2—3; գ. 518, թ. 85—91; գ. 182, թ. 25;

ՎՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 422, գ. 1, գ. 1585, թ. 50; գ. 3997, թ. 19; գ. 3076, թ. 1—55; գ. 8717, թ. 4; ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 72;

ՍՍՀՄ ԳԿՊԱ, ֆ. 821, գ. 140, գ. 53, թ. 7—9; թ. 37; թ. 44—45; գ. 150, գ. 272, թ. 95—97; գ. 283, թ. 69;

«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 64; 1909, № 6—7, էջ 134; № 8—9, էջ 140; № 11, էջ 90;

«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 2;

«Տեղեկագիր 1909—10 ուս. ա. Մարիամյան-Հովնանյան օրիորդաց դպրոցի», 1911, Թիֆլիս։

«Տեղեկագիր... 1910—1911 ուս. տարվա», Թիֆլիս, 1912;

«Տեղեկագիր... 1912—13, 1913—14 և 1914—15 ուս. տարիներիս», Թիֆլիս, 1916 թ.;

«Արարատ», 1917, էջ 620։

Մետեխի բանտին կից հայկական դպրոց

«Նոր դպրոց» ամսագիրը իր 1909-ի 10-րդ համարում հաղորդել է, որ «Թիֆլիսի Մետեխի բանտին մոտ ժամանակներս բացվելու է անգրագետ հայ բանտարկյալներին գրագիտություն սովորեցնելու մի դպրոց...»։

Ամենայն հավանականությամբ այս դպրոցը բացվել է, բայց թե մինչև ե՞րբ է իր գոյությունը պահպանել և ի՞նչ ճակատագիր է ունեցել, մեզ անհայտ է։

«Նոր դպրոց», 1909, № 10, էջ 92։

Մեյդանի կաթողիկե Ս. Աստվածածին (Ս. Գեորգ) եկեղեցու արական դպրոց

Տարբեր տարիների փաստաթղթերում ու հրապարակված տեղեկագրերում հանդիպում ենք Թիֆլիս քաղաքի կաթողիկե Ս. Գեորգ, կաթողիկե Ս. Աստվածածին և Մեյդանի Ս. Գեորգ եկեղեցիների անունով արական դպրոցներին։ Ուսումնասիրությունների ընթացքում եկել ենք այն համոզման, որ գրանք տարբեր անուններով կոչվող միևնույն եկեղեցին և միևնույն դպրոցն են և ոչ առանձին գործող եկեղեցիներ ու դպրոցներ։

Այս դպրոցը Թիֆլիսի հայ եկեղեցական հնագույն դպրոցներից մեկն է, որը հիմնվել է 1854-ին։ 1862-ին գործել է, կոչվելով «Բերդի կաթողիկե Մեյդան թաղի եկեղեցու դպրոց», 1873-ին Մեյդան թաղի Ս. Գեորգ եկեղեցու արական ծխական դպրոց՝ 3 ուսուցչով և 70 աշակերտով։ 1877-ին ունեցել է 5 ուսուցիչ, 61 աշակերտ։ 1884-ին եղել է երկդասյան դպրոց, իսկ 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1886-ին՝ որպես միդասյան դպրոց։ 1888-ին ունեցել է 80 աշակերտ։ 1892—93 ուս. տարում դարձել է երկդասյան դպրոց, ունենալով 143 աշակերտ։

1896-ի տեղեկագրերում նշված է կաթողիկե Ս. Աստվածածին (Ս. Գեորգ) եկեղեցու անունով, որով հաստատվում է վերևում բերված մեր ենթադրությունը։

1896-ի փակումից փրկվել է, սակայն փակվել է 1—2 տարի հետո։ Վերաբացվել է 1905-ի վերջերին, որպես երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 6 ուսուցիչ, 66 աշակերտ և 48 աշակերտուհի։

1911—12 ուս. տարում ունեցել է ընդամենը եռամյա դասընթաց։ Գտնվել է նյութական սուր կարիքի մեջ։ Հենց այդ հանգամանք էլ պատճառ է դարձել, որ այս դպրոցը և Խարբուխի թաղի Ս. Սարգիս եկեղեցու դպրոցը 1913-ին միացվել են իրար։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 20; գ. 357, թ. 18; գ. 50, թ. 66; գ. 11, թ. 3; գ. 182, թ. 26; գ. 199, թ. 17—23;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 195; գ. 1555, թ. 47; գ. 2890, թ. 65; գ. 5717, թ. 2; ֆ. 12, գ. 865, թ. 71—78;
«Արարատ», 1878, ժԲ. էջ 452; «Վիճ. անդ. 1888—89 ուս. տարվա», էջ 8;
Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ՝ Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ;
«Նոր դպրոց», 1911, № 33—34, էջ 11, 1913, № 10, էջ 72։

Մեյդանի Ս. Գեորգ կաթողիկե եկեղեցու Սանդխտյան իգական դպրոց

Այս դպրոցը մեզ հանդիպել է միայն երկու անգամ. 1873-ի մի տեղեկագրում՝ «Մեյդանի Ս. Գեորգ եկեղեցու Սանդխտյան օրիորդական դպրոց» և 1878-ին՝ «Արարատ» ամսագրում՝ «Ս. Գեորգ կաթողիկե եկեղեցու օրիորդական դպրոց» անուններով։ 1873-ին ունեցել է 40 աշակերտուհի, իսկ 1877—78 ուս. տարում՝ 5 ուսուցիչ, 36 աշակերտուհի։

Հետագա տարիների փաստաթղթերում այլևս չի երևում։ Ենթադրում ենք, որ միացված լինի հարևան իգական դպրոցներից որևէ մեկին (ավելի հավանական է Գայանյան դպրոցին)։

1908-ին կաթողիկե Ս. Գեորգ եկեղեցուն կից գործել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 66 տղա, 48 աղջիկ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 20; գ. 182, թ. 25;
«Արարատ», 1878, ժԲ. էջ 452։

Մուղնու Ս. Գեորգ եկեղեցու (Մուղնու փող.) արական միջնակարգ դպրոց

Հայկական հնագույն և նշանավոր դպրոցներից մեկն է։ Պրոֆ. Սանթրոսյանի ասելով այս դպրոցը 1850-ին արդեն գործել է։ Այն, ըստ երևույթին, հիմնվել է 1849-ին։ Ստ. Մալխասյանը այս դպրոցը հիշատակում է 1862-ին Թիֆլիս քաղաքում գործած հայ եկեղեցական ծխական դպրոցների թվում։

1871-ին ունեցել է ընդամենը մեկ դասարան, 2 ուսուցիչ և 50 աշակերտ, 1873-ին՝ 70 աշակերտ։ 1877-ին եղել է միջնակարգ դպրոց, ունենալով 13 ուսուցիչ, 80 աշակերտ։ Չգիտենք, թե ինչու 1881-ին ուսուցիչների և աշակերտների թիվը նվազել է, առաջիններինը իջնելով 4-ի, երկրորդներինը՝ 72-ի։ 1884-ին գործել է։ 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում հանդիպում ենք Մուղնու Ս. Գեորգ եկեղեցու նախակրթարանին ու մանկապարտեզին. չենք կարծում, որ դա ընդամենը մի քանի տարի առաջ միջնակարգ դասընթաց ունեցած դպրոցն է։

Մուղնու Ս. Գեորգ եկեղեցու անունով արական դպրոցի մենք այլևս չենք հանդիպել հետագա մի քանի տասնամյակների փաստաթղթերում։ Միայն 1914-ի մի ցուցակում հիշատակված են նաև Մուղնու դպրոցը, որն ունեցել է 23 ուսուցիչ և 372 աշակերտ և Ս. Գեորգ եկեղեցու դպրոցը, որն ունեցել է 9 ուսուցիչ և 124 աշակերտ։ Անկասկած, սրանցից մեկը Մուղնու Ս. Գեորգ եկեղեցու արական դպրոցն է, իսկ մյուսը՝ նույն եկեղեցու հռչակավոր Գայանյան դպրոցը։

Որոշ տվյալների համեմատության հիման վրա մենք ենթադրում

ենք, որ Մուղնու Ս. Գևորգ եկեղեցու արական ծխական դպրոցը մի շարք տարիների փաստաթղթերում հիշատակված է այլ եկեղեցիների անուններով։

Մ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19 դ. ա. կեսին», էջ 249—250;
Ատ. Մալխասյան, «Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի լոթարական-հինգամյա գոյության (1824—1899)», Թիֆլիս, 1900, էջ 116;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 20; գ. 59, թ. 65;
«Արարատ», 1878, ԺԹ., էջ 452;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 41։

Մուղնու Ս. Գևորգ եկեղեցու մանկապարտեզ և նախակրթարան

Էջմիածնի սինոդի մի տեղեկագրի համաձայն այս մանկապարտեզը և նախակրթարանը (տարրական ծխական դպրոց) հիմնվել են 1880-ին՝ տիկին Բաբանայի կողմից։ Այս Բաբանան հայանի կին մանկավարժ, հայերի մատ նախադպրոցական գործի կազմակերպիչ Սոֆյա Բարայանն է։

1882-ին մանկապարտեզ-նախակրթարանում ընդգրկված են եղել 39 երեխա, այնտեղ աշխատել են 4 ուսուցիչ-դաստիարակ։

1885-ին փակվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 51; գ. 2018, թ. 195;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66։

Նավթլուղի Ս. Գևորգ եկեղեցու արական ծխական դպրոց

Հիմնվել է 1871-ին՝ Թիֆլիսի Հայ բարեգործական ընկերության կողմից։ Հավանաբար, երկար տարիներ չի գործել, քանի որ ցույց չի տրված համապատասխան ցուցակներում ու տեղեկագրերում։

Վերստին բացվել է 1888-ին, որպես միդասյան արական դպրոց, ուր սովորել են ընդամենը 17 տղաներ։ 1892—93 ուս. տարում ունեցել է 22 աշակերտ։ 1895-ին եղել է խառը դպրոց, 1896-ին փակվել է։ Վերբարացման տարեթիվը մեզ անհայտ է։ 1907—08 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց՝ 35 աշակերտով (13 աղջիկ)։ 1909—10 և 1911—12 ուս. տարիներում գործել է որպես եռամյա դպրոց։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 195; ֆ. 12, գ. 865, թ. 72;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 32; գ. 11, թ. 3;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 11, «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65; 1910, № 2, էջ 95—96;
Մանկ. գիտ. ինստիտուտի արխիվ, Հ. Տեր-Միրզայանի ֆոնդ։

Ներսիսյան դպրոց

Հայկական միջնակարգ դպրոցների մեջ ամենանշանավորն է և բացառիկ դեր է խաղացել հայ ժողովրդի կյանքում։ Ներսիսյան դպրոցից դուրս են եկել մեծ թվով հայ գրողներ, գիտնականներ, հասարակական-քաղաքական ու պետական գործիչներ, հայտնի մանկավարժներ և այլն։

Այս դպրոցը հիմնվել է 1824-ին՝ Ներսես Աշտարակեցու եռանդուն ջանքերով և նրա նախագծած ծրագրով։ Առաջին տեսուչն է եղել հայ ականավոր գրող և մանկավարժ Հարություն Ալամդարյանը։

Ներսիսյան դպրոցի հարուստ ու հետաքրքիր պատմությունը գրել են անվանի հայագետներ Ա. Երիցյանը և Ատ. Մալխասյանը։ Նրա մասին հանգամանորեն խոսվում է պրոֆ. Մ. Սանթրոսյանի «Արևելահայ դպրոցը 19 դ. ա. կեսին» մեծածավալ աշխատության մեջ և հայ մամուլի էջերում հրապարակված բազմաթիվ հոդվածներում, դպրոցի տարբեր տարեթվերի տեղեկագրերում և այլ աղբյուրներում։ Այդ դպրոցի վերջին տասնամյակների պատմության, նրա ուսուցիչների ու նշանավոր աշակերտների մասին հետաքրքիր հուշեր են հրապարակված նախկին սաների կողմից պատրաստված «Անմոռաց դեմքեր» և «Հայ մշակույթի օրրանը» հուշագրքերում, որոնք հրապարակվել են 1965 և 1971 թվականներին։ 1981 թ. լույս տեսավ Մ. Հ. Սանթրոսյանի «Ներսիսյան դպրոցի պատմություն» արժեքավոր աշխատությունը։

Չնայած այս ամենին, Ներսիսյան դպրոցի ամբողջական պատմությունը դեռևս կարոտ է լուսաբանման։

Հասկանալի է, որ մեր այս աշխատության բնույթը այլ է և ներկա դեպքում մենք չենք կարող մտնել այդ հռչակավոր դպրոցի պատմության մեջ, թեև նրա մասին մեր ձեռքի տակ ունենք բավականաչափ արխիվային նյութեր։ Այնտեղ մենք կբավարարվենք միայն նրա վերաբերյալ մի քանի փաստական տվյալների հաղորդմամբ։

Երիցյանի և Մալխասյանի գրքերից իմանում ենք, որ այն տարիներին, երբ Ներսես Աշտարակեցին գտնվում էր, այսպես կոչված, «ազատ աքսորում», այսինքն՝ ցարական իշխանությունների կամքով հեռացվել էր Թիֆլիսից և վարում էր Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմի առաջնորդի պաշտոնը, Ներսիսյան դպրոցը ենթարկվել էր մեծ փոփոխությունների և փաստորեն քիչ բանով էր տարբերվում սովորական ծխական դպրոցից, թեև համարվում էր թեմական սեմինարիա։

Ներսես Աշտարակեցին լավ իրազեկ էր այս ամենին. նա բազմիցս, դրավոր թե բանավոր, բողոքել էր Կովկասի իշխանությունների ու Կաթուղիկոսության գործողությունների դեմ, բայց ոչ մի արդյունքի չէր հասել։ Դպրոցը գնալով ավելի վատթար վիճակի մեջ էր ընկել, մեծ վիշտ պատճառելով իր հիմնադրին։ Ահա թե ինչու, կաթողիկոս դառնա-

լուց հետո էլ, Աշտարակեցին երկար ժամանակ չէր կարողանում մտնել իր դպրոցը և տեսնել նրա անկյալ վիճակը։ 1847-ին նա նույնիսկ կարգադրում է փակել այդ դպրոցը, նպատակ ունենալով այն վերաբացել իր ցանկացած հիմունքներով։

Դպրոցը փակ է մնում մեկ տարի, վերաբացվելով 1848-ի կեսերին։ Նրա ամբողջական գործունեությունը ղեկավարելու համար կաթողիկոսը նշանակում է երեք հոգուց բաղկացած մի հոգաբարձություն, իսկ տեսչական պաշտոնի է հրավիրում եվրոպական բարձրակրթության կրթություն ստացած և նոր մանկավարժությանը լավատեղյակ Պետրոս Շանչյանին։ Վերջինս իր տեսչության տարիներին մեծ փոփոխություններ է մտցրել դպրոցի կյանքում, չնայած այն կատաղի դիմադրությանը, որ նրան ցույց էր տրվում հետադիմական ուժերի կողմից։

1861-ին կազմվում և նորընտիր Մատթեոս կաթողիկոսի կողմից հաստատվում է Ներսիսյան դպրոցի նոր կանոնադրությունը, որի համաձայն մտցվում է դպրոցի հոգաբարձության ընտրության (և ոչ թե նշանակման, ինչպես առաջ էր) սկզբունքը։ Դպրոցի կյանքում մտած այս և մի շարք այլ փոփոխությունները, անկասկած, ժամանակի առաջադեմ ուժերի, հատկապես Նալբանդյանի, Նազարյանի ու նրանց համախոհների համառ պայքարի արդյունք էին։

Չնայած դրան, դպրոցի ուսումնական գործը 1860-ական թվականներին գտնվել է աննախանձելի դրության մեջ։ Բանը նույնիսկ հասել է այնտեղ, որ 1868-ին մանկավարժական ժողովը որոշել է բոլոր աշակերտներին թողնել նույն դասարաններում (տես՝ Մալխասյանի գիրքը, էջ 127—128)։

Դպրոցի դրությունը բարվոքելու համար տեսչական պաշտոնի է հրավիրվում «Հյուսիսափայլի» հռչակավոր խմբագիր Ստեփանոս Նազարյանցը։ Նա դպրոցի կյանքում մտցրել է մի շարք դրական փոփոխություններ, հատուկ ուշադրություն դարձնելով մայրենի լեզվի (աշխարհաբարի) ուսուցմանը, սակայն այստեղ ևս հանդիպելով իր գաղափարական հակառակորդների կատաղի դիմադրությանն ու վարկաբեկիչ վերաբերմունքին, հարկադրված է եղել 1871-ի կեսերին հրաժարվել իր պաշտոնից ու հեռանալ Թիֆլիսից։ Դպրոցի արխիվային ֆոնդում պահպանվում են Նազարյանցի գործունեությունը բնութագրող և հենց նաև նրա ձեռքով գրված մի շարք հետաքրքիր փաստաթղթեր։

Հետագա տարիներին Ներսիսյան դպրոցի տեսչի պաշտոնը վարել են, ի թիվս այլոց, նաև «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիր Պետրոս Սիմոնյանը, հայտնի մանկավարժներ Սեդրակ Մանդինյանը և Սարգիս Բեկնազարյանը, հայ առաջին դարվինիստ, բնագետ-մանկավարժ Սամվել Բալասյանը և այլն։

Մինչև 1876-ը դպրոցը մնացել է 5-դասարանյան կազմով, իսկ այդ

թվականին ավելացել է 2 (6-րդ) դասարանը։ Տեսուչ Ս. Մանդինյանի պահանջով 1877-ին բացվել է նաև է (7-րդ) դասարան, որին տրվել է մանկավարժական ուղղություն (ծխական դպրոցների համար թիչ թե շատ որակյալ ուսուցիչներ պատրաստելու նպատակով)։ Ցավն այն է, որ Մանդինյանի հեռանալով (1879-ի հունվար) փակվել է նաև այդ դասարանը, որովհետև այնտեղ մանկավարժական առարկաները կարդացող ուսուցիչ չի ճարվել (Տես. Մալխասյան, էջ 160—161)։

Մի տարի հետո այդ դասարանը նորից է բացվել, և այնտեղ պարապելու է հրավիրվել հայտնի մանկավարժ Առաքել Բահաթրյանը։ Սա էլ ընդամենը մի տարի է աշխատել այնտեղ, որից հետո մանկավարժական դասարանը փակվել է (նույն տեղը, էջ 169—170)։

Ըստ արխիվային տվյալների, դպրոցը 1873-ին ունեցել է 16 ուսուցիչ և 240 աշակերտ, 1882-ին՝ նույնքան ուսուցիչ, 442 աշակերտ։

1886-ին դպրոցը նորից ունեցել է 7 դասարանյան կազմ. նախակրթարան՝ 3 բաժանմունքով և առաջինից վեցերորդ դասարաններ, որոնցից մի քանիսը՝ իրենց զուգընթացներով։ Այդ տարում ուսուցիչների թիվը հասել է 27-ի, աշակերտներինը՝ 482-ի։ Գերակշռել են առևտրականների (227 հոգի) և հոգևորականների (65 հոգի) զավակները, թեև ձևականորեն հայտարարվում էր, որ դպրոց ընդունվում են բոլոր խավերի երեխաները։

Դարի վերջում դպրոցն ունեցել է 16 դասարան (երեք պատրաստական և 6 հիմնական՝ իրենց զուգընթացներով), որոնցում սովորել են 599 հոգի (փոխադրվել են հաջորդ դասարան 393 հոգի, մնացել են 191 հոգի)։

Հայ ծխական դպրոցների երկրորդ փակումից հետո ցարական իշխանությունները նախագծում են փակել նաև թեմական դպրոցները։ Նրանց ամենից ավելի անհանգստացնում էր Ներսիսյան դպրոցը, որը հանդիսանում էր հայերի կրթական գլխավոր օջախներից մեկը (փաստորեն Գևորգյան ճեմարանից հետո՝ երկրորդը)։

Բարեբախտաբար, այդ բանը նրանց չի հաջողվում, և Ներսիսյան դպրոցը շարունակում է գործել։

Հետաքրքիր են ներքոհիշյալ տվյալները, որ վերաբերում են 1906—07 և 1907—08 ուսումնական տարիներին։

1906—07 ուս. տարում դպրոցն ունեցել է երեք նախապատրաստական բաժանմունքներ (Ա, Բ, Գ) և 7 հիմնական դասարաններ, ինչպես նաև առանձին բաժանմունքներ Հավլաբարում և Սոլոլակում (վերջինս համարվել է վարժց 7-րդ մասնապիտակն դասարանի համար, որը նույնպես տեղավորված է եղել Սոլոլակի բաժանմունքի շենքում)։ Աշակերտների ընդհանուր թիվը հասել է 1071-ի, «Մայր դպրոցում» 638-ի։ Հիմնական դասարանների սովորողների մեծ մասը, բնականաբար, եղել

է Թիֆլիսից (247 հոգի) և Թիֆլիսի նահանգից (111 հոգի)։ Բայց այնտեղ սովորել են նաև Դանձակի նահանգից՝ 70, Երևանի նահանգից՝ 86, Բաքվի նահանգից՝ 12, Բաթումի և Քութայիսի նահանգից՝ 4, Կարսի շրջանից՝ 12, Հյուսիսային Կովկասից և Թուրքիայից՝ 15, Պարսկաստանից՝ 26 և Թուրքիայից՝ 46 հոգի։

Ներսիսյան դպրոցը փաստորեն համազգային ուսումնական հաստատություն էր՝ միջնակարգի լրիվ դասընթացով։

Ըստ սոցիալական դրության, «Մայր դպրոցի» 638 աշակերտները բաժանվել են այսպես. արհեստավորների որդիներ՝ 234, վաճառականների՝ 192, «սատրին ծառայողների»՝ 93, երկրագործների՝ 68, հոգևորականների՝ 52, ուսուցիչների՝ 8 հոգի (թվերի մեջ կա որոշ անհամապատասխանություն, բայց այդպես է բերված «Նոր դպրոցում»)։

Մայր դպրոցի 638 աշակերտներից փոխադրվել են հաջորդ դասարանները և ավարտել են 445 հոգի, մնացել են 193 հոգի (30,3 %)։

Մեկ անհայտ պատճառներով Մայր դպրոցի աշակերտների թիվը 1907—08 ուս. տարում խիստ նվազել է, իջնելով 356-ի։

1908-ին հիմնվել է Ներսիսյան դպրոցի շրջանի աշակերտներին օգնող ընկերություն։

1915-ին դպրոցն ունեցել է 29 դասատու, 525 սովորող։ Ներսիսյան դպրոցի ապահովության գործում մեծ դեր են կատարել գանձական կալվածները, որոնցով բավականաչափ խոշոր գումարներ են հատկացվել նրան։ 1918-ին կալվածքների ընդհանուր թիվը հասել է 35-ի, իսկ նրանց կտակած ընդհանուր գումարը եղել է 192.122 ռ. 68 կ., որից տարբեր տոկոսներ է ստացել մոտ 10000 ռուբլի։

Կարելի է ասել, որ Ներսիսյան դպրոցը ամենաապահովվածն է եղել հայ բոլոր դպրոցների մեջ։ Բավական է նշել, որ միայն 1917—18 ուս. տարում նա ունեցել է մուտք՝ 412 հազարից ավելի և ելք՝ մոտ 400 հազար։

Ծեր ցույց են տալիս նրա գործունեությունը 1921-ի վերջերին։ Այդ ժամանակ Ներսիսյան դպրոցը շարունակել է գործել Վրաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո։ Այսպես, մի շարք արխիվային գործանակ դպրոցի աշխատողները աշխատավարձ են ստացել Վրացական ՍՍՀ-ում Խորհրդային Հայաստանի կառավարության լիազորությունից։ Ներսիսյան դպրոցը արդեն վեր էր ածվել երկրորդ աստիճանի աշխատանքային դպրոցի, որի բովանդակությունը և ուսման ուղղությունը արմատապես փոխվել էին։

Ա. Երիցյան, «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիս (1824—1899)», Թիֆլիս, 1898;
Սա. Մալխասյան, «Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի», 1900, Թիֆլիս;
Մ. Հ. Սահակյան, «Արևելահայ դպրոցը 19 դ. առաջին կեսին», էջ 366—40;

«Կանանչ հայոց աշխարհ», 1861, 2. էջ 482—87;
«Փարա», 1880, № 2, էջ 128—143; №4, էջ 140—171; № 11, էջ 50—87; 1881, № 2, էջ 119—127 և այլն;
«Կանանագրություն Ներսիսյան դպրոցի», 1866 թ.;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 63; № 3, էջ 86—89; № 5, էջ 84 և այլն;
ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 2, գ. 7, թ. 9; թ. 13—14; գ. 45, թ. 1; թ. 5—23; գ. 42, թ. 1; գ. 143, թ. 56; գ. 620, թ. 1—140 և այլն, ֆ. 56, գ. 37, թ. 5; գ. 43, թ. 20; գ. 795, թ. 226 և այլն;
ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 511, թ. 22; գ. 1585, թ. 46—50 և այլն;
ՍՍՀՄ ԳԿԳԱ, ֆ. 821, գ. 140, գ. 53, թ. 11—19 և այլն;
«Արարատ», 1878, ԺԲ. էջ 453 և այլն; 1917, էջ 620.

Նորաշեն Ս. Աստվածածին եկեղեցու (Դվորյանսկայա փող.) Մարիամյան օրիորդաց դպրոց

Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ Թիֆլիսում գոյություն են ունեցել «Նորաշեն Ս. Աստվածածին» անունով երկու եկեղեցի։ Մեկը գտնվել է Դվորյանսկայա փողոցի վրա կամ քաղաքի Նորաշեն կոչվող թաղամասում, իսկ մյուսը՝ Միխայլովսկի պողոտայի վրա կամ Կուկիայի թաղամասում և «Նորաշենն» է անվանվել նույն պողոտայի վրա և նույն թաղամասում գտնվող Քանդոյան Ս. Աստվածածին եկեղեցուց տարբերվելու համար։

Թիֆլիսի Նորաշեն թաղի Դվորյանսկայա փողոցի Ս. Աստվածածին եկեղեցու Մարիամյան օրիորդաց դպրոցը հայ աղջիկների համար բացված հնագույն և նշանավոր դպրոցներից մեկն է։ Արխիվային փաստաթղթերում հանդիպում ենք նրա հիմնադրման տարբեր թվականների՝ 1866, 1867, 1868 և այլն։ Կարծում ենք ճիշտ է առաջինը։ Դպրոցը հիմնել է հայ ականավոր մանկավարժ Խորեն Ստեփաննն, որը և երեք տարի նրա տեսուչն է եղել։ Ինչ-ինչ պատճառներով Ստեփաննի և մի խումբ ուսուցիչների միջև տարաձայնություն է առաջացել, որի հետևանքով այդ ուսուցիչները թողել են դպրոցը, ուր պարապելիս են եղել Ղրիմ Հիշյալ ուսուցիչները նույն 1869 թվականին, հիմնել են Գայանյան դպրոցը։ Ստեփաննի ազատվելուց հետո, դպրոցի ուսուցիչների համախոհական-գիմումի համաձայն կաթողիկոսը 1871-ին այդ դպրոցի տեսուչ է նշանակել «Գիտնական գոկտոր Գրիգոր Արծրունուն», որը մինչ այդ էլ այնտեղ աշխարհագրություն է ավանդել։ Այդ կապակցությամբ կաթողիկոսի գրած կոնդակից երևում է, որ Մարիամյան դպրոցը ունեցել է երկու բաժին՝ առաջինը բուն քաղաքի Նորաշեն եկեղեցու բակում, իսկ երկրորդը՝ Հավլաբարի Ս. Մինաս եկեղեցու բակում։ Հետագայում այդ բաժինները դարձել են ինքնուրույն իսկական դպրոցներ և առանձին էլ հիշատակվում են հաջորդ տարիների փաստաթղթերում։

Այս դպրոցը 1873-ին ունեցել է 16 ուսուցիչ, 80 աշակերտուհի,

1877-ին՝ 9 ուսուցիչ, 42 աշակերտուհի, 1881-ին՝ 8 ուսուցիչ, 76 աշակերտուհի։ Ուսուցիչներից շատերը պարապել են առանց վարձի։

1884-ին եղել է երկդասյան դպրոց։ «Մեղու Հայաստանի» լրագիրը 1884-ի իր համարներից մեկում գրել է, որ նախկինում այս դպրոցում ուսումը ձրի էր, սակայն նրա կալվածքների եկամուտների նվազման հետևանքով աշակերտուհիներից ժամանակավորապես վերցվում էր ուսման վարձ։

Այժմ, գրել է թերթը, կալվածների եկամուտը ավելացել է, հետևաբար ուսման վարձ այլևս չի գանձվում։ 1885-ին փակվել է բոլոր հայ դպրոցների հետ միասին։ Վերաբացվել է 1886-ի սեպտեմբերին։ 1888-ին եղել է միդասյան դպրոց, ունենալով 90 աշակերտուհի (բոլորը ձրիավարժ)։ Դրանցից 5-ը եղել են հոգևորականների, 2-ը՝ ատենաբանների, 25-ը՝ վաճառականների և 58-ը՝ արհեստավորների աղջիկներ։

1896-ին նորից է փակվել, վերաբացվելով 1905-ի վերջերին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 6 ուսուցիչ, 99 աշակերտուհի, 1908—09 ուս. տարում՝ 104 աշակերտուհի։ 1911—12 ուս. տարում եղել է միդասյան դպրոց՝ նոստալգ դասընթացով (Նորմալ միդասյան դպրոցից մի դասարան պակաս)։

1914-ին ունեցել է 9 ուսուցիչ, 140 աշակերտուհի։ Եղել է լրիվ միդասյան դպրոց։ 1917-ին համարվել է միջնակարգ։

«Մեղու Հայաստանի», 1869, № 23; 1884, № 28;
ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 23, թ. 66—68; գ. 43, թ. 20; գ. 50, թ. 66; գ. 182, թ. 25; գ. 106, թ. 25; գ. 199, թ. 17;
ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, ց. 1, գ. 2890, թ. 61; գ. 2018, թ. 196; գ. 1585, թ. 50; գ. 5717, թ. 4; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 41;
«Արարատ», 1878, ԺԲ. էջ 542; 1917, էջ 620;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 4;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65; 1911, № 33—34, էջ 11;
Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ, գ. 20։

Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցու արական ծխական դպրոց

Էջմիածնի սինոդի կողմից 1873-ին կազմված մի տեղեկագրում արական դպրոց է ցույց տրված Նորաշեն Ս. Աստվածածին եկեղեցուն կից։ Այդ անունով արական դպրոց այլ փաստաթղթերում մեզ չի հանդիպել։ Կարելի էր ենթադրել, որ դա Կուկիայի «Նորաշեն» Ս. Աստվածածին եկեղեցու արական դպրոցն է, եթե վերջինս նույնպես ցույց տրված չլիներ 1873-ի այդ տեղեկագրում։

Մի քանի այլ ցուցակներում էլ հանդիպում ենք ուղղակի Ս. Աստվածածին եկեղեցու (առանց թաղը նշելու) արական դպրոցին։ Որոշ փաստերի համեմատության հիման վրա ենթադրում ենք, որ դա նույն Նորաշենի ս. Աստվածածին եկեղեցու դպրոցն է, որի հիմնադրման թվականներ են նշված 1858-ը և 1869-ը։

1873-ին ունեցել է 4 ուսուցիչ, 38 աշակերտ։ 1884-ին գործել է։ 1885-ին փակվել է, վերաբացվել՝ 1886-ին։ 1891-ին գործել է։ 1895-ին թողնվել է հայ հոգևոր իշխանությունների իրավասության տակ, բայց 1—2 տարի անց այն ևս փակվել է։

ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 43, թ. 220—274; գ. 166, թ. 24—26; գ. 357, թ. 24;
ՎՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 195; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 72։

Ս. Նշան եկեղեցու արական ծխական դպրոց

Պրոֆ. Մ. Սանթրոսյանը նշում է, որ Ներսես Աշտարակեցու 1848 թ. հունիսի 2-ի կոնդակ-հրամանի համաձայն Թիֆլիսի հայկական 6 եկեղեցիներին կից բացվել են ծխական դպրոցներ։ Դրանց թվում է եղել նաև Ս. Նշան եկեղեցու դպրոցը, որը, հավանաբար, բացվել է 1848-ի աշնանը կամ 1849-ին։ Համենայն դեպս, հաստատապես հայտնի է, որ 1850-ին այն գործել է։

Ս. Մալխասյանը այս դպրոցը հիշատակում է 1862-ին Թիֆլիսում գործած հայ դպրոցների շարքում։

Արխիվային նյութերից մեզ հայտնի է, որ Ս. Նշան եկեղեցու ծխական դպրոցը 1873-ին և 1875-ին ևս գործել է, ունենալով ընդամենը 18 աշակերտ։ Հետագա տարիների ու տասնամյակների փաստաթղթերում և հրապարակված նյութերում այս դպրոցը այլևս չի երևում։ Հայտնի է միայն, որ հետագայում Ս. Նշան եկեղեցուն կից բացվել է օրիորդական դպրոց։

Մ. Հ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19 դարի ա. կեսին», էջ 247—250;
Սա. Մալխասյան, «Համառոտ պատմ. Ներսիսյան դպրոցի», էջ 116;
ՀՍՍՀ ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 43, թ. 23։

Ս. Նշան եկեղեցու (Սերերբյանների փող.) օրիորդաց երկդասյան դպրոց

Բացվել է 1883-ին՝ Ս. Նշան եկեղեցու ծխականների ցանկությամբ և Թիֆլիսի Հայ կանանց բարեգործական ընկերության կողմից, պահվել է այդ ընկերության միջոցներով։ Ընդունվել են գերազանցապես չքավոր ընտանիքների աղջիկներ, որոնց համար ուսումը եղել է ձրի։ Նրանց ձրի տրվել են նաև դասագրքեր ու ձեռագործի պարագաներ, ինչպես նաև սնունդ։

Առաջին տարին ունեցել է երկու, իսկ հաջորդ՝ 1884—85 ուս. տա-

յում՝ 3 բաժանմունք։ 1885-ի հունվարին փակվել է, վերաբացվել՝ 1886-ին՝ Ս. Նշան եկեղեցու գավթում կառուցված նոր շենքում։ 1895—96 ուս. տարում ունեցել է 5 բաժանմունք, այսինքն՝ եղել է երկդասյան դպրոց, սակայն հենց նույն 1896-ին էլ երկրորդ անգամ փակվել է։ Մինչև 1907-ի կեսերը վերաբացված չի եղել, չնայած ընկերության գործ դրած ջանքերին։

Ինչպես երևում է, 1907—08 ուս. տարում Ս. Նշան և Քամոյան օրիորդաց դպրոցները բացվել են իրար հետ միացած, կոչվելով «Ս. Նշան և Քամոյանց» դպրոց։ Միացյալ իգական դպրոցը ունեցել է 145 աշակերտուհի, 7 դասատու։ 1908-ին ուսման գործի լավ դրվածքի համար դպրոցը գովասանքի է արժանացել «Նոր դպրոց» ամսագրում։ Հոգաբարձուների թվում են եղել նաև Ղ. Աղայանը և Հ. Տեր-Միքայելյանը։

1911-ին եղել է 5-ամյա երկդասյան դպրոց։

«Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերության քսանհինգամյակը 1882—1907», Թիֆլիս, 1907, էջ 13—18;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66; գ. 3, թ. 18; գ. 182, թ. 25 և այլն;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65; № 5, էջ 85—86։

Զուղուրեթ թաղի Ս. Աստվածածին եկեղեցու (Պանասևիչի փողոց) արական ծխական դպրոց

Հիմնվել է 1877-ին։ 1882-ին ունեցել է 1 ուսուցիչ, 30 աշակերտ։ Հետագա շատ տարիների վերաբերյալ տեղեկություններ չկան։ Հայտնի է միայն, որ Զուղուրեթի Ս. Աստվածածին եկեղեցու արական դպրոցը վերաբացվել է 1907-ի աշնանը։ 1907—08 ուս. տարում եղել է երկսեռ միդասյան դպրոց, ունենալով 46 աշակերտ (31 աղջիկ)։ 1908—09 ուս. տարում այնտեղ սովորել են 13 տղա և 19 աղջիկ։ 1910—11 ուս. տարում փակված է եղել՝ նյութական ծանր պայմանների պատճառով։

«Մանկ. Թերթ», 1878, № 2, էջ 63;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 8717, թ. 9;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 27; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65; 1911, № 13—14, էջ 24,

Զուղուրեթի Ս. Աստվածածին եկեղեցու իգական (ապա՝ երկսեռ) ծխական դպրոց

Այս դպրոցը մեզ հայտնի է միայն Էջմիածնի սինոդի կողմից 1881-ին կազմված և Կովկասի ուսումնական օկրուգին ներկայացված ցուցակից։ Ունեցել է մի ուսուցիչ և 30 աշակերտուհի։ Հետո ի՞նչ է եղել, մենք չգիտենք, քանի որ արխիվային փաստաթղթերը նրա մասին այլևս ոչինչ չեն ասում։ Հայտնի է միայն, որ 1908-ին Զուղուրեթի Ս. Աստվածածին եկեղեցուն կից գործել է երկսեռ ծխական դպրոց, ուր սովորել են 13 տղա և 19 աղջիկ։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 51; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 44—53։

Թիֆլիսի չքավոր հայ երեխաներին օգնող «Լույս» ընկերության դպրոց

Թիֆլիսի չքավոր հայ երեխաներին օգնելու նպատակով կազմակերպվել է հատուկ ընկերություն՝ «Լույս» անունով։ Տարբեր ձևի օգնություններից բացի (հագուստ, սնունդ, դասագրքեր, գրենական պիտույքներ և այլն), այս ընկերությունը 1907-ին հիմնել է նաև առանձին դպրոց, որտեղ ընդգրկված են եղել որոշ թվով չքավոր հայ երեխաներ։ Այդ դպրոցը գործել է նաև 1912, 1914 ու հետագա տարիներին՝ զգալի օգնություն ցույց տալով սակավագույն հայ երեխաներին։

«Լույս» ընկ. դպրոցի 15 սաներ ամեն տարի ձրի ճաշ են ստացել Կովկասի հայ բարեգործական ընկերության ճաշարանից (այդ ճաշարանը բացվել է 1904-ին, այնտեղ ամեն օր ճաշել են Թիֆլիս քաղաքի հայկական և պետական դպրոցների 200—300 հայ երեխաներ)։

«Տեղեկագիր հայ չքավոր երեխաներին օգնող «Լույս» ընկերության և նրա դպրոցի 1907—1911», Թիֆլիս, 1912;
«Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերության 1909 թ. գործունեության», նույնը 1922 թվականի;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 41։

Թիֆլիսի «Մեղու» ընկերության դպրոց

1909—1912 թվականներին և հետագա տարիներին Թիֆլիսում գործել է «Մեղու» ընկերության հայկական դպրոցը, որը մի քանի անգամ հիշատակվում է Կովկասի հայոց բարեգործական ընկերության տարբեր տարիների տեղեկագրերում (այդ դպրոցի որոշ թվով չքավոր աշակերտներ ևս ձրի սնունդ են ստացել բարեգործականի ճաշարանից)։

«Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերության 1909 թ. գործունեության», նույնը՝ 1912 թվականի և այլն։

Զգրաշեն թաղի (Հայկական բազար) Ս. Ավետյաց եկեղեցու արական ծխական դպրոց

Հիմնվել է 1868-ին՝ իշխանուհի Ս. Կիրեկյանի միջոցներով, նրա անունով էլ կոչվել է։ 1871-ին ունեցել է 3 ուսուցիչ, 25 աշակերտ, նույնը նաև 1877-ին, իսկ 1881-ին՝ 30 աշակերտ։ 1885-ին փակվել է,

1886-ին՝ վերաբացվել որպես միդասյան դպրոց։ 1888-ին ունեցել է 34, 1892-ին՝ 52 աշակերտ։ 1896-ին դուրս է մնացել ընդհանուր փակումից, սակայն նույն ճակատագրին է արժանացել 1—2 տարի հետո։ Վերաբացվել է 1905-ին՝ որպես երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 75 աշակերտ, 55 աշակերտուհի։ 1911—12 ուս. տարում եղել է 5-ամյա դպրոց (մի այլ տվյալով՝ 4-ամյա)։ 1914-ին ունեցել է 9 ուսուցիչ և 180 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 9, թ. 21; գ. 43, թ. 22; գ. 357, թ. 12; գ. 106, թ. 26; գ. 50, թ. 66; գ. 11, թ. 2; «Մեղու Հայաստանի», 1868, N 2, էջ 13; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 47; գ. 2018, թ. 196; գ. 2890, թ. 62; ֆ. 12, ց. 7, գ. 865, թ. 72; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 41; «Արարատ», 1878, ԺԲ, էջ 452; «Նոր դպրոց», 1908, N 2, էջ 65; 1911, N 33—34, էջ 11։

Ջգրաշեն թաղի Ս. Ավետյաց եկեղեցու Կիրեկյան աղջիկների ծխական դպրոց

Հիմնվել է 1870-ին՝ Թիֆլիսի «Հայոց» կոչվող փողոցի վրա։ Պահվել է իշխանուհի Սոֆյա Կիրեկյանի նվիրաբերած գումարներով, նրա անունով էլ կոչվել է։ 1873-ին ունեցել է 4 ուսուցիչ, 29 աշակերտուհի։ 1874-ին՝ 28 աշակերտուհի։ 1881-ին՝ 30 աշակերտուհի։ 1885-ին փակվել է, 1886-ին վերաբացվել է նույն եկեղեցու տղաների դպրոցի հետ միացած։ 1888-ին եղել է անջատ, ունենալով 56 աշակերտուհի։ 1892-ին աշակերտուհիների թիվը եղել է 85։ 1896-ին կաթողիկոսի կոնդակով վեր է ածվել երկդասյանի, բայց շուտով փակվել է կառավարության կողմից։

Այդ ժամանակից էլ դադարել է ինքնուրույն գոյություն ունենալուց, իսկ 1905-ի վերաբացումից հետո միացել է Ջգրաշենի տղաների դպրոցին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 9, թ. 2; գ. 43, թ. 20; գ. 357, թ. 12; գ. 106, թ. 26; գ. 281, թ. 7; գ. 50, թ. 66; գ. 199, թ. 17—23; գ. 11, թ. 2; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 50; գ. 2018, թ. 195; գ. 2890, թ. 62; ֆ. 12, ց. 1, գ. 865, թ. 72; «Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 5; «Արարատ», 1878, ԺԲ, էջ 452; 1896, էջ 142։

Սաբուրթալոյի (Թիֆլիսի արվարձան) հայկական ծխական դպրոց

Սաբուրթալոյի հայկական ծխական դպրոցի բացման թվականը մեզ անհայտ է։ Դիտենք, որ այն 1916-ին գործել է, քանի որ 1917-ի հունվարին հետևել է կաթողիկոսի օրհնության կոնդակը ոմն Ա. Զագանչյանի անունով՝ Սաբուրթալոյի «Հայոց ծխական դպրոցի պահպանության օգտին տասն և հինգ հազար ռուբլի նվիրաբերելու առթիվ»։

«Արարատ», 1917, N 2, էջ 93։

Թիֆլիսի Վ. Ա. Վերմիշյանի գեղարվեստական դպրոց

Այս բավականաչափ յուրօրինակ ու օգտակար դպրոցի մասին հետաքրքիր տեղեկություններ են հրապարակված «Նոր դպրոց» ամսագրի 1911 թ. 15—16 համարում։ Նշված է, որ այն բացվել է Թիֆլիսաբնակ տիկին Վ. Ա. Վերմիշյանի ջանքերով ու նրա շնորհիվ, և ահա մի քանի տարի է, ինչ գործում է հաջողությամբ, չնայած գտնվում է «նյութական անապահով վիճակի մեջ»։

«Այդ դպրոցում աշակերտում են 6—60 տարեկան ցանկացողներ-տղամարդիկ, ամենքն իրենց հասակի համեմատ աշխատանք կատարելով։ Դասավանդում են մոտ 12 հոգի՝ մեծ մասամբ մասնագետ և բարձր կրթության տեր անձինք։ Ավանդվում են՝ նկարչություն, նոր ձևի ասեղնագործություն, խանձանկարչություն, ծաղկագործություն, փորագրություն, զամբյուղագործություն, կավագործություն, կոշկագործություն և այլն...» (էջ 35)։

Ամսագիրն այնուհետև թվարկում է այդ առարկաներից յուրաքանչյուրի բովանդակությունը և այն ունակություններն ու հմտությունները, որ ձեռք են բերել դասընթացների ունկնդիրները ուսման ընթացքում։

Ինչ խոսք, որ այդ դպրոցը հիմնվել է հատկապես չքավորներին օգնած լինելու նպատակով։

«Նոր դպրոց», 1911, N 15—16, էջ 35—36։

Վանաց ավագ եկեղեցու Մարկոսյան օրիորդաց ծխական դպրոց

Հայ աղջիկների համար բացված հնագույն դպրոցներից մեկն է։ Հիմնվել է 1867-ին՝ Թիֆլիսաբնակ Արտեմ Մարկոսյանի տանը (Վանաց ավագ եկեղեցու մոտ) և պահվել նրա միջոցներով։ Դպրոցը 1871-ին ունեցել է 25 սանուհի, բոլորն էլ գրեթե որբեր։ Այնտեղ տրվել է «զուսումն մայրենի լեզուի և կրոնի և բարոյական դիտելեանց և կարևոր առարկայից և ձեռագործություն»,— գրել է Վանաց ավագ եկեղեցու քահանա Ս. Աղաջանյանը։ Իսկ Մարկոսյանի կինը՝ Կատարինեն, որի հոգաբարձությանն են հանձնված եղել աշակերտուհիները, «գրեթե որբուկ օրիորդաց բաշխե զսեր զորովագութ մայրության, և ավանդէ նոցա զանազանություն, քաղաքավարություն և համեստություն որք գովելի զարդք են իգական սերնդոյ»,— գրել է նույն Աղաջանյանը։

Այս դպրոցը 1877-ին ունեցել է 2 ուսուցիչ, 30 աշակերտուհի, 1881-ի՝ 20 աշակերտուհի։ 1884-ին եղել է միդասյան դպրոց, իսկ 1885-ին փակվել է հայկական բոլոր դպրոցների հետ միասին։ Նրա

հեղինակը հետագա տարիների փաստաթղթերում այլևս չեն երևում։ Մի՞թե իրոք չի վերաբացվել։

Հայտնի է միայն, որ 1911-ին Վանաց ավագ եկեղեցուն կից գործել է ծխական երկսեռ դպրոց։ Ունեցել է միայն 1-ին և 2-րդ բաժանմունքներ։ Գործել է նաև 1914-ին։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 70; գ. 50, թ. 65;
«Արարատ», 1878, ԺԲ. էջ 452;
ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1385, թ. 50; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 41;
Հ. Տեր-Մինասյանի ֆոնդ, գ. № 20;
«Նոր դպրոց», 1911, № 33—34, էջ 10—12.

Վանաց ավագ եկեղեցու նախակրթարան և մանկապարտեզ

Վանաց ավագ եկեղեցու Մարկոսյան իգական դպրոցից բացի, այդ եկեղեցուն կից գործել է նաև մանկապարտեզ և նախակրթարան։ Հիմնադրման տարեթիվը անհայտ է, բայց կարծում ենք, որ կազմակերպվել է 1880-ից ոչ վաղ։ 1884-ին գործել է, իսկ 1885-ին՝ փակվել՝ հայկական մյուս դպրոցների հետ միասին։

Հավանաբար հետագայում չի վերաբացվել, քանի որ հաջորդ տարիների ու տասնամյակների փաստաթղթերում չի հիշատակված։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 195;
ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 65.

Տափի թաղի Քամոյան Ս. Գևորգ եկեղեցու (Դվորցովայա փող.) արական ծխական դպրոց

Անասելի խառնաշփոթություն գոյություն ունի այս դպրոցի հարցում։ Շատ անորոշություններ կան նրա անվան, հիմնադրման թվականի, գտնվելու վայրի և այլ խնդիրներում։

Թիֆլիսի Տափի թաղի Քամոյան Ս. Գևորգ եկեղեցու անունով ծխական դպրոց է հիշատակվում 1885-ին փակված հայ դպրոցների ցուցակում (կազմված նույն թվականի հունվարին)։ Հետևաբար, այդ դպրոցը գեռևս 1884-ին (գուցե և գրանից էլ առաջ) գործել է։ Սակայն, չգիտենք, թե ինչո՞ւ Վրաստանի թեմի տեսչի և թեմական առաջնորդի կողմից 1891-ին և 1896-ին կազմված երկու տեղեկագրերում Քամոյան դպրոցի հիմնադրման թվականը ցույց է տրվում 1886-ը։ Կարծում ենք, որ դա թյուրիմացություն է։ 1886-ը ոչ թե նրա հիմնադրման, այլ վերաբացման թվականն է։ 1886-ին բացված դպրոցը 1888-ին չէր կարող երկդասյան լինել, ինչպես ցույց է տրված հայկական եկեղեցական ծխական դպրոցների 1888—89 ուս. տարվա վիճակագրական տեղեկագրերում (Վաղարշապատ, 1890, էջ 9)։ Այդ ուսումնական տարում այնտեղ սովորել են 106 հոգի, որոնցից հոգևորականների որդիներ՝ 6, աղնվականների՝ 3, առևտրականների՝ 1, վաճառականների՝ 44, արհեստավորների՝ 49, երկրագործների՝ 3։ Աշակերտների ընդհանուր թվից 65 հոգի փոխադրվել են հաջորդ դասարանները, 38 հոգի մնացել են և 3 հոգի հեռացվել են դպրոցից։

Մինչև 1890-ը եղել է երկդասյան դպրոց, իսկ թե ինչո՞ւ 1891-ից դարձել է միդասյան, մենք չգիտենք։

Այս դպրոցը, ինչպես երևում է, 1891-ից սկսած գտնվել է Հավլաբարի Շամքորեցոց Ս. Աստվածածին եկեղեցու գավթում գտնվող շենքում։ Այդ մասին համապատասխան նշում կա 1891-ին կազմված մի տեղեկագրում։ 1892-ի տեղեկագրում շատ ավելի որոշակիորեն է գրված. «Տափի թաղի Քամոյանց Ս. Գևորգ եկեղեցւոյ միդասյան ազայոց ուսումնարան ի գաւթի Շամքորեցւոց Ս. Աստվածածին եկեղեցւոյ Հավլաբարի» (ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ՝ 56, ց՝ 1, գ. 11, թ. 3)։ Այդ տարում ունեցել է 125 աշակերտ։

Շամքորեցոց եկեղեցու բակում գտնվելու պատճառը մեզ անհայտ է։ Գուցե նրա համար, որ 1889-ից Տափի թաղի Ս. Գևորգ եկեղեցու բակում կազմակերպվել է աղջիկների նոր դպրոց։

1895-ին հայ դպրոցների ընդհանուր փակման կապակցությամբ Քամոյան դպրոցը որոշվել է թողնել հայ հոգևոր իշխանության իրավասության տակ, բայց 1—2 տարի հետո այն ևս փակվել է։

Հետագայում մենք դարձյալ հանդիպում ենք Քամոյան Ս. Գևորգ եկեղեցու անունով դպրոցի, բայց, բատ երևույթին, դա ոչ թե նախկին արական դպրոցն է, այլ 1889-ից բացված իգականը (տես)։

ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 65; գ. 106, թ. 25; գ. 337, թ. 20; գ. 3, թ. 59; գ. 11, թ. 3; գ. 199, թ. 17;
ՀՍԱՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 3997, թ. 19; ֆ. 12, գ. 865, թ. 71;
«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 9;
«Մասիս», 189, № 7, էջ 1023; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65; 1911, № 33—34, էջ 1012.

Տափի թաղի Ս. Գևորգ և Ս. Սարգիս եկեղեցիների (Քամոյան) օրիորդաց դպրոց

Այս դպրոցը հիմնվել է 1889-ին՝ Մակար կաթողիկոսի կոնդակով։ Այն պահվել է Թափի թաղի Ս. Գևորգ եկեղեցու միջոցներով, նրա անունով էլ կոչվել է, բայց դանվել է Ս. Սարգիս եկեղեցու (ուխտատեղի) գավթում։ Այդ պատճառով էլ ավելի հաճախ հիշատակվել է Ս. Սարգիս եկեղեցու անունով։

Եղել է միհայլյան օրիորդական դպրոց, 1892—93 ուս. տարում ունենալով 77 աշակերտուհի (27-ը թոշակառու, 50-ը՝ ծրիավարժ)։ Մի շարք փաստաթղթերում նշվում է Քամոյան Ս. Գևորգ եկեղեցու օրիորդական դպրոցը, որը, մեր կարծիքով, նույն այս դպրոցն է։

Հետաքրքրական է նշել, որ ցարական իշխանությունները 1897-ի փետրվարին փակել են այս դպրոցը ևս, պատճառ բռնելով, որ այն կոչվում է մի եկեղեցու անունով, բայց գործում է մի այլ եկեղեցու գավթում (որպիսի՞ հանցագործություն)։

Ըստ երևույթին, վերաբացվել է 1906—07 ուս. տարում՝ Ս. Սարգիս եկեղեցու արական դպրոցի հետ միացած։ 1907—08 ուս. տարում այդ եկեղեցու երկսեռ դպրոցը ունեցել է 3 ուսուցիչ, 71 աշակերտ (27 աղջիկ)։ 1910—11 ուս. տարում գործել է որպես առանձին իգական դպրոց։

1914-ին այդ դպրոցում սովորել են 73 հոգի։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 3, թ. 59; գ. 371, թ. 22; գ. 182, թ. 26;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 11, գ. 264, թ. 41; գ. 3397, թ. 19; ֆ. 12, գ. 7, գ. 861, թ. 71;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 65; 1911, № 13—14, թ. 24։

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՎԱՌ

Աղբուլաղ (Բելի Կլյուչ) ավանի արական ծխական դպրոց

Թիֆլիսի գավառի Աղբուլաղ (Բելի Կլյուչ) ավանի հայկական արական ծխական դպրոցը 1871-ին գործել է, իսկ 1873-ի հունվարին ունեցել է մի ուսուցիչ և 13 աշակերտ։

Ըստ երևույթին, երկար կյանք չի ունեցել. այն ցույց չի տրված հայ դպրոցների 1875 թ. ցուցակներում։ 1881-ին գործել է, ունենալով 20 աշակերտ։ Երևում է նորից է փակվել, քանի որ «Արձագանք» լրագիրը 1884-ի հոկտեմբերին գրել է. «Աղբուլաղում՝ ըստ այժմու ռուս կոչման Բելի Կլյուչ, ապրում է մոտ 50 տուն հայ։ Հոգևոր ծխական դպրոցի պետքը զգալի է այստեղ։ Հասարակությունը խոստացել է տարեկան գումար հատկացնել այդ նպատակին»։ Սակայն հայ դպրոցների 1885 թվականի ընդհանուր փակման պատճառով այդ դպրոցը ևս չի վերաբացվել։ Միայն 1889-ին ավանի հայ բնակչությունը որոշել է վերաբացել այն։ Կաթողիկոսը 1889-ի սեպտեմբերի 20-ի № 487 կոնդակով Վրաստանի թեմի հայոց առաջնորդին իրավունք է տվել Աղբուլաղ ավանում բաց անելու եկեղեցական ծխական արական միհայլյան դպրոց։ 1893-ին այն գործել է, բայց, ինչպես երևում է, դարձյալ փակվել է, քանի որ չի մտել ցարական կառավարության կողմից 1895-ին կազմված

և հաջորդ տարում փակված հայ դպրոցների ընդհանուր ցուցակներում։ Վերաբացվել է 1905-ին։ 1907—08 ուս. տարում եղել է միհայլյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 28 տղա և 12 աղջիկ։ 1909-ին նորից է փակվել՝ նյութական միջոցներ չունենալու պատճառով։ Այդպես է եղել հայ դպրոցներից շատերի ճակատագիրն անցյալում։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21, գ. 1585, թ. 48, գ. 8717, թ. 4, ՀՍՍՀ ՊԿՊԱ, թ. 56, գ. 32, թ. 16, գ. 357, թ. 30, գ. 182, թ. 25—43, «Արձագանք», 1884; էջ 599; «Արարատ», 1889, ԺԲ. էջ 683; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 67։

Բոգվի գյուղի շինական դպրոց

«Արձագանք» լրագրի 1884-ի համարներից մեկում գրված է, որ Բոգվի գյուղում, որտեղ ապրում են 50 տուն հայեր, «կառուցվել է գյուղական շինական ուսումնարան»։

Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է։ Դուցե այդ «շինական ուսումնարանը» եղել է պետական դպրոց և այդ պատճառով էլ չի մտել հայ դպրոցների ցուցակներում։

«Արձագանք», 1884, 21 հոկտեմբերի։

Դաղեթ Մեծ (նաև՝ Դաղեթ-ԽաչեՆ) գյուղի արական ծխական դպրոց

Թիֆլիսի գավառի հայաբնակ Մեծ Դաղեթ գյուղում դեռևս 1871-ին գործել է արական ծխական դպրոց, որը 1873-ին ունեցել է ընդամենը մեկ ուսուցիչ, 10 աշակերտ։ 1881-ին նույնպես գործել է, ունենալով 20 աշակերտ։ Եթե մինչև հայ դպրոցների առաջին ընդհանուր փակումը գործել է, ապա, անկասկած, այն ևս 1885-ին փակվել է կառավարության կողմից։ Համենայն դեպս, երկար տարիներ այն չի գործել և վերաբացվել է միայն 1895-ին։ Եվ, իհարկե, 1896-ին նորից է փակվել կառավարության կողմից։

1905-ից հետո բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակներում այլևս չենք հանդիպում Մեծ Դաղեթ գյուղի դպրոցին։ Դրա փոխարեն մի շարք փաստաթղթերում հիշատակվում է Դաղեթ Խաչեն (Խաչին) գյուղի ծխական դպրոցը։ Անկասկած, դա միևնույն գյուղն է։ Դաղեթ Խաչեն գյուղում 1907—08 ուս. տարում եղել է միհայլյան երկսեռ դպրոց, որն ունեցել է երկու ուսուցիչ, 77 աշակերտ (11 աղջիկ)։

1908—09 ուս. տարում այնտեղ սովորել են 106 հոգի (20 աղջիկ)։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22; գ. 1585, թ. 48;

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 338, թ. 19; գ. 357, թ. 104; գ. 182, թ. 29;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 67;
ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 268, թ. 52;
«Կավկազսկի կալենդար», 1915, էջ 115։

Դուռնուկ գյուղի արական ծխական դպրոց

Թիֆլիսի գավառի Դուռնուկ գյուղի ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է։ Վրաստանի թեմական տեսչի տեղեկագրերից մեկում նշված է 1884-ը, սակայն դա ճիշտ չէ, քանի որ 1871-ին և 1872-ին Դուռնուկ գյուղի հայկական ծխական դպրոցը գործել է, ունենալով 1 ուսուցիչ, 15 աշակերտ։ Գործել է նաև 1873-ին։ 1885-ին փակվել է պետության կողմից։ Վերաբացվել է 1893-ին։ Պատահաբար չի մտել 1896-ին փակված հայ դպրոցների ցուցակում, բայց հաջորդ տարում այն ևս փակվել է։ Վերաբացման թվականը մեզ անհայտ է։ 1907—08 ուս. տարում եղել է միդասյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 15 տղա և 13 աղջիկ։ 1908—09 ուս. տարում աշակերտների թիվը հասել է 45 հոգու (21 աղջիկ)։ 1911—12 ուս. տարվա տեղեկագրում նշված է որպես քառամյա դպրոց՝ միայն մի դասարանով։ 1914-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22; գ. 1583, թ. 48; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 42;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 23; գ. 357, թ. 34; գ. 50, թ. 60; գ. 182, թ. 29;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 67;
2. Տեր-Միրզոյանի ֆոնդ՝ «Վրաստանի թեմի ծխական դպրոցները 1911—12 թթ.»։

Ծղնեթ գյուղի (Թիֆլիսի արվարձան) արական ծխական դպրոց

Հիմնվել է 1882-ին։ 1884-ին եղել է միդասյան ծխական դպրոց։ 1885-ին փակվել է կառավարության հրամանով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 67;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 196։

Թաբահմելա գյուղի ծխական դպրոց

Թիֆլիսի գավառի Թաբահմելա գյուղի հայկական ծխական դպրոցը բացվել է 1916-ի մարտին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17։

Թելեթի գյուղի ծխական դպրոց

1911—12 ուս. տարում գործել է որպես եռամյա տարրական դպրոց՝ մեկ դասարանով։ Հավանաբար հետո փակվել է, որովհետև մի փաստաթղթում ցույց է տրված, որ այդ գյուղի դպրոցը բացվել է 1916-ի մարտին։

2. Տեր-Միրզոյանի ֆոնդ, «Վրաստանի թեմի ծխական դպրոցները 1911—12 թթ.»։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17։

Կախեթ (Թիֆլիսի գավառ) գյուղի արական ծխական դպրոց

1884-ին գործել է, լինելով միդասյան արական ծխական դպրոց։ Պահվել է աշակերտների թվաքանակների հաշվին։ 1885-ին փակվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66։

Կոթի գյուղի ծխական դպրոց

Թիֆլիսի գավառի Կոթի (Կոգի) հայաբնակ գյուղի ծխական դպրոցը բացվել է 1913-ին՝ ամենայն հայոց կաթողիկոսի հատուկ կոնդակով։

«Արարատ», 1913, № 4, էջ 302։

Կոջոր գյուղի ծխական դպրոց

Կոջոր գյուղի հայկական ծխական դպրոցը բացվել է 1916-ի նոյեմբերին։ Պահվել է նվիրատվության միջոցներով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17; «Արարատ», 1917, էջ 9 և 12։

Կումիս գյուղի ծխական դպրոց

Կումիս գյուղը եղել է Թիֆլիսի գավառի հայաբնակ խոշոր գյուղերից մեկը։ 1915-ին ունեցել է 1819 բնակիչ։

Թե երբ է հիմնվել այս գյուղի դպրոցը, դժվարանում ենք ասել, բայց գիտենք, որ 1871-ին այն գործել է, ունենալով մի ուսուցիչ և 25 աշակերտ։ Աշակերտական նույն համակազմով գործել է նաև 1873-ին և 1875-ին։ Հավանաբար երկար կյանք չի ունեցել։ 1884-ին «Արձագանք» լրագիրը գրել է, որ Կումիս գյուղում կա 168 տուն հայ, բայց այնտեղ չկա դպրոց։

Հայտնի է նաև, որ Կումիս գյուղի հայ հասարակությունը 1895 թվա-

կանի նոյեմբերի 19-ին որոշել է իրենց գյուղում բաց անել միգասյան ծխական դպրոց։ Թեմի առաջնորդը հատուկ գրությամբ կաթողիկոսից խնդրել է հաստատել այդ որոշումը և դպրոցի հոգաբարձության կազմը։ Այդ ժամանակ ցարական կառավարությունն արգելն սկսել էր փակել հայ դպրոցները։ Ահա թե ինչու կաթողիկոսի դիվանապետը պատասխանել է, որ պետք է առաջին սպասել և կառավարական օրգաններին նորանոր դժգոհություններին ասիթ չտալ։

Այդպես էլ դպրոցի բացումը խափանվել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16, գ. 43, թ. 23, ֆ. 35, գ. 82, թ. 1; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21;

«Արձագանք», 1884, 21 հոկտեմբերի։

Ղարաթափա գյուղի հայկական դպրոց

1916-ի նոյեմբերին կաթողիկոսը թույլ է տվել Թիֆլիսի գավառի Ղարաթափա գյուղում բացել հայկական եկեղեցական ծխական դպրոց։ Արխիմանդրին մի փաստաթղթից երևում է, որ այդ թվականի վերջերին հիշյալ դպրոցը բացվել և գործել է։

«Արարատ», 1917, № 1, էջ 7; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, գ. 6, գ. 17։

Մանգլիսի հայկական ծխական դպրոց

Հիմնվել է 1890-ին, տեղի Ս. Գեորգ եկեղեցուն կից։ Եղել է միգասյան երկսեռ դպրոց։ Պահվել է մասնավոր նվիրատվություններով։ 1892—93 ուս. տարում ունեցել է ընդամենը 10 աշակերտ։

1896-ին փակվել է, վերաբացվելով 1907-ի սկզբին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 25 աշակերտ (19 աղջիկ)։ 1908—09 ուս. տարում աշակերտների թիվը իջել է 23-ի (15 աղջիկ)։

«Արարատ», 1890, № 10, էջ 584; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 38; գ. 199, թ. 17—23; գ. 11, թ. 1—23; գ. 182, թ. 25—43; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 72; գ. 422, թ. 8717, թ. 9; «Циркуляр», 1890, № 10, էջ 559; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 67։

Շամշուդա (նաև՝ Սամշվիլդո՞) գյուղի ծխական դպրոց

Մինչև ծխական դպրոցի հիմնադրումը Շամշուդա գյուղում գոյություն է ունեցել խալֆայական դպրոց, որի կարճատև, բայց ծանր ու դավեշտական պատմությանն է նվիրված հայ նշանավոր մանկավարժ Ալեքսանդր Արարատյանի «Գյուղական խալֆան» հետաքրքիր գիրքը։

Հենց նույն Արարատյանի միջոցով հիշյալ խալֆայական դպրոցը ուր սովորել են 60—70 երեխաներ, 1879-ին վեր է ածվել կանոնավոր ծխական դպրոցի։ Զգիտենք, թե ինչո՞ւ գնալով աշակերտների թիվը նվազել է։

1881 թվականի մի պաշտոնական փաստաթղթում ցույց է տրված ընդամենը 18 աշակերտ։ 1884-ին եղել է միգասյան դպրոց։ Պահվել է գյուղի ուխտատեղերի հասույթներով։ 1885-ին փակվել է կառավարության կողմից։ Երկար տարիներ մնացել է փակ։ 1895-ի վերջերին Վրաստանի թեմի առաջնորդը Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուին հաղորդել է, որ ինքը Թիֆլիսի Նահանգի Շամշուդա գյուղում բաց է արել եկեղեցական ծխական դպրոց, իսկ հոգաբարձուն հատուկ գրությամբ դիմել է Կովկասի գլխավոր վարչապետին՝ խնդրելով թույլ չտալ այդ դպրոցի բացումը, քանի որ նրա ուսուցիչը պահանջվող կրթական ցենզ չունի։ Նորաբաց դպրոցը դարձյալ փակվում է։ Վերաբացման թվականը մեզ անհայտ է։ 1908—09 ուս. տարում եղել է միգասյան երկսեռ դպրոց, ուր սովորել են 30 տղա և 5 աղջիկ։ Նպաստ է ստացել Բաքվի հայ մշակութային միությունից։

Թիֆլիսի Նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորը 1898 թ. սեպտեմբերի 4-ին գաղտնի գրությամբ Նահանգապետին հայտնել է, որ Թիֆլիսի գավառի Սամշվիլդա գյուղի բնակիչները որոշել են իրենց գյուղում բաց անել տարրական դպրոց՝ «Հայ-Դրիգորյան դավանության նախկին եկեղեցական ծխական դպրոցի փոխարեն»։ Քանի որ «կավկազսկի կալենդարում» Թիֆլիսի Նահանգում (նաև գավառում) ցույց է տրված Սամշվիլդա գյուղը, իսկ Շամշուդան՝ ոչ, ուստի մենք ենթադրում ենք, որ դա նույն գյուղն է։ Սակայն մեզ զարմացնում է, որ շատ փոքրաթիվ բնակչություն ունեցող գյուղը (1914-ին՝ ընդամենը 30 հայ բնակիչ), դեռևս անցած դարի 70-ական թվականներից ունեցել է իր ծխական դպրոցը, այն էլ 60—70 աշակերտներով։ Արդյո՞ք դրանք տարբեր գյուղեր են։

Ալեքսանդր Արարատյան, «Գյուղական խալֆան», 1883, Վաղարշապատ, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 196, գ. 1585, թ. 48, ֆ. 12, գ. 1, գ. 1090, թ. 96, ֆ. 17, գ. 1, գ. 3971, թ. 4; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 66, գ. 357, թ. 102, գ. 182, թ. 30; «Արձագանք», 1884, 21 հոկտեմբերի։

ՍԱՂՆԱԽԻ ԳԱՎԱՌ

Լազողեխ (Լազողաղ) ավանի հայկական ծխական դպրոց

Հիմնվել է 1893-ին, եղել է միգասյան երկսեռ դպրոց։ Անկասկած, 1896-ին փակվել է։ Հայտնի չէ, թե երբ է վերաբացվել։ 1907—08 ուս.

տարում եղել է երկսեռ ծխական դպրոց, ուր սովորել են 31 տղա և 17 աղջիկ։ 1911—12 ուս. տարում գործել է որպես եռամյա դպրոց՝ 2 դասարանով։ 1914-ին ունեցել է երկու ուսուցիչ, 42 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 44; գ. 182, թ. 31;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 68;
Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ (1911—12 ուս. տարի);
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 43։

Կակաբեթ գյուղի ծխական դպրոց

Սղնախի գավառի Կակաբեթ գյուղի հայկական ծխական դպրոցը բացվել է 1916-ի հոկտեմբերին։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17; «Արարատ», 1916, № 11—12, էջ 781։

Սղնախի Ս. Սահակյան տղայոց դպրոց

Հիմնվել է 1860-ին Մատթեոս կաթողիկոսի կոնդակով։ Պահվել է տեղի եկեղեցիների եկամուտներով, ժողովրդի միջոցներով և առանձին մարդկանց նվիրատվություններով։ Մինչև 70-ական թվականները գոնվել է շատ անբարեկարգ վիճակում՝ դպրոցի տեսչի և հոգաբարձուների անտարբեր ու հանցագործ վարմունքի հետևանքով։ Դպրոցի գումարները հափշտակվել են, ուսումնական գործը հախողվել է, իսկ աշակերտների կարգապահությունն ու առաջադիմությունը գոնվել են խիստ ցածր մակարդակի վրա։

Դպրոցն ունեցել է պատրաստական դասարան (երկու տարով) և առաջին դասարան (երեք տարով)։ Առաջին 10 տարիներում աշակերտների թիվը տատանվել է՝ պատրաստականում՝ 50—70, առաջինում՝ 8—9, երբեմն՝ 3—4 հոգի։

Կաթողիկոսի կարգադրությամբ կատարված ստուգումներից հետո դպրոցի դրությունը բարելավվել է։

1871-ին դպրոցն ունեցել է 72, 1873-ին՝ 90, 1877-ին՝ 55, 1881-ին՝ 60 աշակերտ, 5 ուսուցիչ։ 1884-ին երկդասյան դպրոց է եղել։ 1885-ին փակվել է, 1888-ին՝ վերաբացվել։ Կազմված է եղել 3 բաժանմունքից (միդասյան)։ 1896-ին նորից է փակվել, վերաբացվելով 1905-ին, որպես երկսեռ դպրոց։ 1908—09 ուս. տարում ունեցել է 166 աշակերտ, որոնցից 50 տղա, 116 աղջիկ։ 1911—12 ուս. տարում գործել է որպես 5-ամյա դպրոց՝ 4 դասարանով. 1914-ին ունեցել է 4 ուսուցիչ, 124 աշակերտ-աշակերտուհի։

«Մեղու Հայաստանի», 1860, № 36, էջ 283—285;
«Արարատ», 1868, 2. էջ 73; 1873, 9. էջ 111—114;

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 281, թ. 5; գ. 137, թ. 5; գ. 32, թ. 16; գ. 50, թ. 66; գ. 189, թ. 17—23; գ. 182, թ. 32;
«Վիճ. ակզ. 1888—89 ուս. տարվա», էջ 21;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 5; գ. 3997, թ. 19; գ. 1585, թ. 48; ֆ. 13, գ. 264, թ. 43;
Հ. Տեր-Միքայելյանի ֆոնդ;
«Циркуляр за 1888 г.», № 11, էջ 453։

Սղնախի հայ կանանց կար ու ձևի դպրոց

Կովկասի հայոց բարեգործական ընկերության Սղնախի մասնաճյուղը իր միջոցներով պահել է հայ կանանց կար ու ձևի դպրոց, որտեղ տրվել է նաև տարրական կրթություն։

1912 թ. մասնաճյուղը զգալի գումար է հատկացրել այդ դպրոցին։

«Կովկասի հայոց բարեգործական ընկերության 1912 թ. տեղեկագիր», Թիֆլիս, 1913, էջ 107։

Սղնախի հայկական Շուշանիկյան իգական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման տարբեր թվականներ են ցույց տրված արխիվային փաստաթղթերում։ Նշված են 1873-ը, 1874-ը և այլն։ Սակայն ճիշտը 1872-ն է, երբ կաթողիկոսի հատուկ կոնդակով թույլատրված է եղել և նույն թվին էլ բացվել է «Սղնախի օրիորդաց ուսումնարանը»։ Այն կրել է Շուշանիկյան անունը։ 1874-ին ունեցել է 5 ուսուցիչ, 42 աշակերտուհի։ 1884-ին եղել է բամբականաչափ լավ կազմակերպված երկդասյան դպրոց, իսկ 1885-ին փակվել է։ Վերաբացվել է 1886-ին։ 1888-ին ունեցել է 75, 1893-ին՝ 83 աշակերտուհի։ Կոչվել է նաև Լիանոզյան դպրոց։ 1896-ին դարձյալ փակվել է։ Վերաբացվել է 1905-ին՝ տեղի արական դպրոցի հետ միացած։ 1908—09 ուս. տարում այստեղ սովորած 176 աշակերտներից 112-ը աղջիկներ են եղել։

«Դպրոց», 1875, № 4, էջ 129;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 23, թ. 169; գ. 281, թ. 5; գ. 357; թ. 41; գ. 50, թ. 66; գ. 11, թ. 1—23; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 32;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2890, թ. 89; գ. 1585, թ. 51։

Վելիսցիխե գյուղի արական ծխական դպրոց

Որոշ փաստերի հիման վրա պրոֆ. Մ. Սանթրոսյանը ենթադրում է, որ Սղնախի գավառի Վելիսցիխե գյուղում 1853-ին բացվել է դպրոց (սկզբում մասնավոր, հետո ծխական), որն արդեն որոշակիորեն ցույց է տրված 1861-ի պաշտոնական մի ցուցակում։

Այդ գյուղի արական ծխական դպրոցը 1871-ին ունեցել է 1 ուսուցիչ, 31 աշակերտ, 1872-ին՝ 2 ուսուցիչ, 30 աշակերտ, 1877-ին՝ 33 աշակերտ։

Այս դպրոցը ևս 1885-ին փակվել է կառավարության կողմից և, ըստ երևույթին, վերաբացվել 1906-ին, իսկ 1912-ին եղել է երկսեռ դպրոց։ Մասնակի նպաստ է ստացել ԿՀԲ ընկերությունից։

Մ. Սանթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19 դարի ա. կեսին», էջ 258—259;
«Արարատ», 1878, ԺԲ. էջ 452;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 32, թ. 16; գ. 43, թ. 27; գ. 50, թ. 66; գ. 492, թ. 200;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 511, թ. 21—22; «Նոր դպրոց», 1908, № 3, էջ 84։

Վելիսցիխե գյուղի իգական ծխական դպրոց

Բացվել է 1888-ին։ Եղել է հայ աղջիկների միգասյան դպրոց։ 1891-ին գործել է, իսկ 1896-ին՝ փակվել։ Վերաբացվել է 1906-ին։ Նշված է նաև Վրաստանի Ռեմի հայ դպրոցների 1908—09 ուս. տարվա ցուցակում, որպես առանձին իգական դպրոց։ 1911—12 ուս. տարում գործել է, հավանաբար, որպես խառը դպրոց։ Ունեցել է եռամյա դասընթաց՝ 2 դասարանով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 106; գ. 492, թ. 200;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 72; ֆ. 422, գ. 3997, թ. 19; գ. 8717, թ. 7;
Հ. Տեր-Միրզոյանի ֆոնդ (1911—12 ուս. տարի);
«Циркуляр», 1888, № 11, էջ 452։

Ցարսկիե Կոլոդցի ավանի հայկական ծխական դպրոց

Հիմնվել է 1893-ին։ 1895-ին մտել է փակված հայ դպրոցների ցուցակում։ Վերաբացման թվականը մեզ անհայտ է։ Գիտենք, որ 1911—12 ուս. տարում գործել է որպես քառամյա դպրոց, ունենալով, սակայն, մի դասարան։ 1914-ին ունեցել է 2 ուսուցիչ, 16 աշակերտ։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 357, թ. 42;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, գ. 7, գ. 865, թ. 72; ֆ. 13, գ. 264, թ. 43;
«Նոր դպրոց», 1911, № 9—10, էջ 32;
Հ. Տեր-Միրզոյանի ֆոնդ (1911—12 ուս. տարի)։

Աթարա (Աձյուբջա) գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցը հավանաբար գոյություն է ունեցել դեռևս 19-րդ դարի 90-ական թվականներին և փակվել է հայկական բոլոր դպրոցների հետ միասին։ Համենայն դեպս, հայտնի է, որ հայ դպրոցների վերաբացումը քույլ տալուց հետո այս դպրոցը ևս սկսել է գործել, իսկ 1910-ին միդասյանից վեր է ածվել երկդասյանի։ Հասարակությունը դպրոցի համար կառուցել է նոր, հարմարավետ շենք։ 1911—12 ուս. տարում եղել է 5-ամյա դպրոց՝ 4 դասարանով և 3 ուսուցչով։

«Նոր դպրոց», 1911, № 27—28, էջ 15;
Թեմական տեսուչ Հ. Տեր-Միրզոյանի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Անուխա (Անուխվա) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1905-ին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ Այս փաստը վկայում է, որ այն գոյություն է ունեցել դեռևս հայ դպրոցների երկրորդ փակումից (1896 թ.) առաջ։ 1907—08 և 1908—09 ուս. տարիներին գործել է, լինելով միդասյան երկսեռ դպրոց։ Ունեցել է 70 աշակերտ (5 աղջիկ)։ 1911-ին նույնպես գործել է, որպես 5-ամյա դպրոց՝ 4 դասարանով և 3 ուսուցչով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 200; գ. 182, թ. 43;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 4;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 99; 1911, № 27—28, էջ 16;
Հ. Տեր-Միրզոյանի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Բուրջ գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1906-ին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ Եղել է արական դպրոց։ 1907—08 ուս. տարում ունեցել է 24 աշակերտ։

1908—09 ուս. տարում դարձել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 18 տղա և 9 աղջիկ։ 1911-ին և 1913-ին գործել է։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 492, թ. 200; գ. 182, թ. 42;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 9;
«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 69; 1911, № 33—34, էջ 34; 1913, № 8—9, էջ 39։

39 — 2521

Գերեբէօ գյուղի ծխական դպրոց

1911-ին գործել է։ Բացման թվականը անհայտ է։

«Նոր դպրոց», 1911, № 33—34, էջ 34։

Գյումուշ-Դիրե (Ներքին) գյուղի ծխական դպրոց

1907—08 ուս. տարում գործել է որպես միդասյան ծխական երկսեռ դպրոց։ Ունեցել է 31 աշակերտ, 9 աշակերտուհի և երկու ուսուցիչ։ 1911-ին ունեցել է մի դասարան՝ երեք միացյալ բաժանմունքներով։

«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 69; 1911, № 33—34, էջ 34։

Գյումուշ-Դիրե (Վերին) գյուղի դպրոց

Սուխումի օկրուգի Գյումուշ-Դիրե հայաբնակ գյուղում 1910-ին գործել է հայկական մասնավոր դպրոց, որը հետագայում, քան երևույթին, վեր է ածվել ծխականի, քանի որ այնտեղ աշխատել է թեմական վարչությունից նշանակված ուսուցիչ։

Թեմական տեսչի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագրում նշված է որպես եկեղեցական ծխական դպրոց՝ 3-ամյա դասընթացով։

«Նոր դպրոց», 1911, № 27—28, էջ 16;
Հ. Տեր-Միրաքյանի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Գորոդ գյուղի ծխական դպրոց

Գորոդ գյուղում 1911-ին գործել է հայկական միդասյան ծխական դպրոց, որն ունեցել է 2 ուսուցիչ և 3 բաժանմունք։

«Նոր դպրոց», 1911, № 27—28, էջ 16։

Դրանդա գյուղի ծխական դպրոց

Սուխումի օկրուգի Դրանդա հայաբնակ գյուղում 1910-ին գործել է միդասյան ծխական դպրոց՝ 2 ուսուցչով, իսկ 1911-ին՝ 4 բաժանմունքով և 3 ուսուցչով։

«Նոր դպրոց», 1911, № 27—28, էջ 16; № 33—34, էջ 34։

Զախարովկա գյուղի ծխական դպրոց

Այս դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է, սակայն «Նոր դպրոց» շաբաթաթերթի մի հաղորդումից կարելի է կարծել, որ

Զախարովկա գյուղում հայկական դպրոց է գործել շատ տարիներ առաջ։ Այդ շաբաթաթերթի 1911 թ. № 27—28-ում տպված է, որ «միայն Զախարովկա գյուղի դպրոցն է, որ վերջին 3—4 տարիները ունենում է թեմ. ուսուցիչ, մյուս բոլոր դպրոցներում (Թեբելդայի շրջանի—Ս. խ) պաշտոնավարում են թաքաթյարները (թերուս ուսուցիչներ, մեծ մասամբ տիբացուներ, որոնք գեռևս 80-ական թվականներից Սուխումի օկրուգի հայաբնակ գյուղերում երեխաների ուսուցման գործ են տարել)։ 1911-ին գործել է։

«Նոր դպրոց», 1911, № 27—28, էջ 15։

Զուրգով (Ցուրգով) գյուղի ծխական դպրոց

Հիմնադրման տարեթիվը անհայտ է։ 1911-ին գործել է, սակայն ինչ-ինչ պատճառներով փակվել է։ Վերաբացվել է 1916-ի մայիսին։

«Նոր դպրոց», 1911, № 33—34, էջ 34;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17։

Լեչկով (՞) գյուղի ծխական դպրոց

Վրաստանի թեմական տեսուչ Հ. Տեր-Միրաքյանի կազմած տեղեկագրում (1911—12 ուս. տարի) ցույց են տրված նաև Սուխումի օկրուգի Լեչկով գյուղի ծխական դպրոցը։ Տեղեկագիրը ձեռագիր վիճակում է և դժվար է ընթեռնել գյուղի անունը (կարելի է կարդալ նաև՝ Լիչկով, Լեզկով)։

Եղել է 5-ամյա դպրոց՝ 4 բաժանմունքով և 2 ուսուցչով։

Հ. Տեր-Միրաքյանի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Մերեկդա գյուղի ծխական դպրոց

Մերեկդան Սուխումի օկրուգի հայաշատ գյուղերից է։ Այնտեղ գեռևս անցած դարի 80-ական թվականներին բնակություն են հաստատել Տաճկաստանից գաղթած հայերը։ Այս գյուղի ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է, գիտենք, սակայն, որ 1905-ին այն վերաբացվել է. հետևաբար գոյություն է ունեցել հայկական դպրոցների երկրորդ փակումից (1896—97 թթ.) առաջ։ 1908—09 ուս. տարում ունեցել է 118 սովորող (10 աղջիկ)։

«Նոր դպրոց» շաբաթաթերթի 1911 թ. համարներից մեկում կարդում ենք. «Շրջանիս (Սուխումի—Ս. խ.) դպրոցներից ամենամեծը և ըստ երևույթին կանոնավորը պիտի համարել Մերեկդայի ծխական

դպրոցը։ Անցյալ, 1910—11 ուս. տարում դպրոցն ուներ 6 բաժանմունք 5 ուսուցչով՝ բոլորն էլ միշնակարգ կրթությամբ» (մի բան, որ այն ժամանակվա գյուղական դպրոցի համար հաղվագեպ երևույթ էր)։

Մեր ձեռքի տակ է մի այլ փաստաթուղթ, որի տվյալները հակասում են «նոր դպրոցի» գրածին։ Այդ փաստաթղթից իմանում ենք, որ Մերիկլար գյուղի դպրոցը 1912—13 ուս. տարում եղել է քառամյա երկսեռ դպրոց, ուր սովորել են ընդամենը 27 տղա և 15 աղջիկ։ Սակայն մենք ավելի հավատում ենք համարում «նոր դպրոցում» իրազեկ անձի կողմից գրված հոդվածի տվյալներին։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 4;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 299, թ. 29; գ. 492, թ. 200; գ. 182, թ. 43;
«նոր դպրոց», 1911, № 27—28, էջ 15։

Մերխաուլ գյուղի ծխական դպրոց

Սուխումի օկրուգի Մերխաուլ հայաբնակ գյուղի հասարակայնությունը 1910 թ. հունիսի 20-ին միաձայն որոշում է ընդունել և դիմել է Վրաստանի ու Իմերեթի թեմի առաջնորդին, խնդրելով «իրավունք տալ արխաղների, հունների ու մինգրելների գյուղերով շրջապատված մեր փոքրիկ հայաբնակ գյուղում ծխական երկսեռ դպրոց բանալու բստ օրինի, որպեսզի մեր մատաղ սերունդն էլ հնարավորություն ունենա ճաշակելու ժամանակակից գիտության սեղանից»։

Թեմական առաջնորդը հաստատել է հոգաբարձության կազմը և թույլ է տվել բացել դպրոցը։ Այն 1911-ին գործել է որպես եռամյա ծխական դպրոց՝ 2 ուսուցչով։ Թեմի դպրոցների 1911—12 ուս. տարվա տեղեկագրում ցույց է տրված որպես 5-ամյա դպրոց՝ 4 բաժանմունքով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 611, թ. 1—4; «նոր դպրոց», 1911, № 27—28, էջ 16; № 33—34, էջ 34։

Մծարա (Միցերա) գյուղի ծխական դպրոց

Մծարան եղել է Սուխումի օկրուգի հայաշատ գյուղերից մեկը, ուր 1880-ական թվականների սկզբներից գործել է հայկական եկեղեցական ծխական դպրոց։ Այս դպրոցի հիմնադրման ճիշտ թվականը մեզ հայտնի չէ, սակայն «նոր դպրոցից» իմանալով, որ Սուխումի օկրուգի այդ և մի շարք այլ գյուղերում (Մերկլդա, Աթարա, Անուխա, Գորոդ, Դրանդա, Մերխաուլ և այլն) հայերը բնակություն են հաստատել 1880-ական թվականներին՝ գաղթելով Տաճկաստանի Սամսուն, Սինոպ, Օրդու, Տրապիզոն և այլ վայրերից, կարելի է ասել, որ Մծարա գյուղի դպրոցը հիմնվել է այդտեղ հայերի վերաբնակեցման հետ համարյա միաժամանակ։ Համենայն դեպս, հաստատապես հայտնի է, որ այդ դպրոցը 1884-ին գործել է, իսկ 1885-ին փակվել է կառավարության կողմից։ Վերաբացվել է 1886-ի սեպտեմբերին։ 1888-ին եղել է միդասյան ծխական դպրոց՝ 3 բաժանմունքով։ Ունեցել է մեկ ուսուցիչ (Հակոբ Մուրադյան) և 70 աշակերտ։ 1895-ին գործել է, իսկ 1896-ին՝ նորից փակվել կառավարության հրամանով։ Երկրորդ անգամ վերաբացվել է 1905-ի վերջերին։ 1907—08 ուս. տարում եղել է ժամանակի գյուղական խոշոր դպրոցներից մեկը։ Ունեցել է 4 ուսուցիչ, 107 աշակերտ և 53 աշակերտուհի։ Հաջորդ ուսումնական տարում աշակերտների թիվը խիստ նվազել է, իջնելով 98-ի (30 աղջիկ)։ 1911-ին դարձյալ եղել է միդասյան դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 50, թ. 67; գ. 106; գ. 357, թ. 121; գ. 199, թ. 20; գ. 371, թ. 10; գ. 492, թ. 209; գ. 182, թ. 43;
«Վիճ. անգ. 1888—89 ուս. տարվա», էջ 26;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 4; գ. 3997, թ. 12; ֆ. 12, գ. 866, թ. 20;
«նոր դպրոց», 1908, № 2, էջ 69; 1911, № 27—28, էջ 15։

Կոդոր գյուղի ծխական դպրոց

1911-ին գործել է։ Բացման թվականը մեզ անհայտ է։

«նոր դպրոց», 1911, № 33—34, էջ 34։

Կրայնիչ գյուղի ծխական դպրոց

1911-ին գործել է։ Բացման թվականը մեզ անհայտ է։

«նոր դպրոց», 1911, № 33—34, էջ 34։

Կուրուղերև գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1905-ին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ 1907—08 ուս. տարում եղել է միդասյան արական դպրոց, որտեղ սակայն 37 սովորողներից 3-ը եղել են աղջիկ։ 1911-ին գործել է որպես եռամյա դպրոց։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 492, թ. 200;
ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 5;
«նոր դպրոց», 1908, № 2, էջ 69; 1911, № 33—34, էջ 34։

Ցաշարա գյուղի ծխական դպրոց

1911-ին գործել է։ Հավանաբար հետագայում փակվել է, քանի որ 1917-ի հունվարին հետևել է կաթողիկոսի թույլտվությունը՝ տեղի բնակչության որոշմամբ Ցաշարա գյուղում ծխական դպրոց բացելու մասին։

«Նոր դպրոց», 1911, № 33—34, էջ 90; «Արարատ», 1917, № 2, էջ 90։

Չալթուղ գյուղի ծխական դպրոց

Բացվել է 1916-ի նոյեմբերին։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 6, գ. 17,

Զեզլուղ գյուղի ծխական դպրոց

1911—12 ուս. տարում գործել է, ունենալով 2 բաժանմունք։ Ուրեմն պետք է հիմնված լինի 1909-ից ոչ ուշ։

«Նոր դպրոց», 1911, № 33—34, էջ 34։

Չիգերդ (Չիկերտե) գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է հայ դպրոցների 1907—08 ուս. տարվա ցուցակներում։ Եղել է միգասյան երկսեռ դպրոց՝ 58 աշակերտով (8 աղջիկ)։ Հաջորդ ուսումնական տարում սովորողների թիվը իջել է 38-ի (10 աղջիկ)։ 1911-ին ունեցել է մի դասարան՝ երեք միացյալ բաժանմունքներով։

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 42; «Նոր դպրոց», 1908, № 2, էջ 69; 1911, № 33—34, էջ 34։

Սուխումի քաղաքի հայկական ծխական դպրոց

Թե երբ է հիմնվել այս դպրոցը, մենք չգիտենք։ 19-րդ դարի երկրորդ կեսի հայ դպրոցների ցուցակներում չի երևում։ «Նոր դպրոց» ամսագրի հաղորդումից իմանում ենք, որ «բավական ժամանակ է՝ ինչ Սուխումում գոյություն ունի մի երկսեռ հայոց դպրոց», որ 1907-ին սովորել են 59, 1909-ին՝ 80, իսկ 1910-ին՝ 100 հայ տղաներ ու աղջիկներ։ Տեղի հայ բնակչության չքավորության պատճառով դպրոցը գտնվել է նյութական կարիքի մեջ։ 1910-ին գործել է, ունենալով 3 բաժանմունք և 4 ուսուցիչ, իսկ 1911-ին՝ 4 բաժանմունք և 3 ուսուցիչ։ Թեմական տեսչի 1911—12 ուս. տարվա տեղեկագրում ցույց է տրված որպես

5-ամյա դպրոց՝ 5 դասարանով, 1914-ին եղել է զուտ արական դպրոց՝ 80 աշակերտով։

«Նոր դպրոց», 1908, № 2, էջ 69; 1910, № 1, էջ 91; № 5, էջ 87; 1911, № 21—22, էջ 35; № 27—28, էջ 15; № 33—34, էջ 34;

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 41;

Թեմական տեսուչ Հ. Տեր-Միրզայանի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագիրք։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 8։

Փիսերցխա գյուղի ծխական դպրոց

Առաջին անգամ հանդիպում է 1906-ին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ Եղել է արական դպրոց։ Սուխումի շրջանի հայ դպրոցների 1911-ի ցուցակներում չի նշված. հավանաբար փակված է եղել։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 9; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 180, թ. 1; «Նոր դպրոց», 1911, № 33—34, էջ 34։

Փշափ գյուղի հայկական ծխական դպրոց

«Նոր դպրոց» ամսագրի հաղորդման համաձայն Սուխումի Փշափ գյուղը 1908-ին ունեցել է 25 տուն հայ բնակիչներ և մի հայկական ծխական դպրոց՝ 54 աշակերտ-աշակերտուհիներով։ Ունեցել է 2 ուսուցիչ։ Դպրոցը պահվել է տեղի հայ բնակիչների ծախսերով։

«Նոր դպրոց», 1909, № 1, էջ 90։

Փոթի քաղաքի հայկական դպրոց

Տարբեր փաստաթղթերում Փոթի քաղաքը մերթ ցույց է տրվում Սուխումի օկրուգում, մերթ Քութայիսի նահանգում։ Մենք թողել ենք առաջինում։

Փոթի քաղաքում հայկական դպրոց է բացվել, հավանաբար, 1907-ի վերջերին կամ էլ 1908-ի սկզբներին։ Առաջին անգամ ցույց է տրված 1908-ին բացված ու վերաբացված հայ դպրոցների ցուցակում։ 1908—09 ուս. տարում ունեցել է 30 աշակերտ (9 աղջիկ)։ 1911—12 ուս. տարում եղել է 5-ամյա տարրական դպրոց, ունենալով 2 ուսուցիչ։

1914-ին եղել է զուտ արական դպրոց՝ 25 աշակերտով։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 8717, թ. 9; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 8;
«Նոր դպրոց», 1911, № 9—10, էջ 32;
Հ. Տեր-Միրզայանի ֆոնդ;
ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 182, թ. 49։

Չխարի գյուղի (Քութայիսի նահանգի Շորապանի գավառ) հայկական ծխական դպրոց

Հիմնվել է 1881-ին։ Պահվել է Թիֆլիսի հայ բարեգործական ընկերության միջոցներով։ Եղել է երկսեռ դպրոց։ Փակվել է 1885-ին, վերաբացվել՝ 1888-ին։ Եղել է արական միդասյան դպրոց՝ 33 աշակերտով։ 1896-ի սկզբներին եղել է երկսեռ դպրոց, նույն թվականին էլ փակվել է։ Վերաբացվել է 1905-ին։ Այս թվականին Չխարի գյուղը ցույց է տրված Գորիի գավառում։

1908—09 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց՝ 59 աշակերտով (33 աղջիկ) 1911—12 ուս. տարում համարվել է եռամյա դպրոց, բայց ունեցել է միայն մի դասարան։ 1914-ին գործել է։ Պահվել է ԿՀԲԸ-ի նպաստով։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 229; գ. 8717, թ. 3; ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 8; ֆ. 12, ց. 7, գ. 866, թ. 20;

ՀՍՍՀ ԿԿՊԱ, ֆ. 56, գ. 56, թ. 66; գ. 199, թ. 17—23; գ. 182, թ. 40; գ. 357, թ. 113; գ. 192, թ. 200; ֆ. 35, ց. 1, գ. 82, թ. 1;

«Վիճ. տեղ. 1888—89 ուս. տարվա», էջ 24;

Հ. Տեր-Միրզոյանի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Սաչխերեթ (Սաչխերի) գյուղի (Քութայիսի նահանգի Շորապանի գավառ) հայկական եկեղեցական ծխական դպրոց

Հիմնվել է 1884-ին՝ Ալեքսանդր Մելիք-Հայկազյանի ծախսերով։ Եղել է երկսեռ դպրոց։ Առաջին տարին այնտեղ սովորել են 50 տղաներ և աղջիկներ։ 1885-ին փակվել է կառավարության կողմից, վերաբացվելով միայն 1893-ին։ 1895-ին նշված է, որ այն պահվում է Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերության միջոցներով։ 1896-ին նորից փակվել է։ Վերաբացվել՝ 1905-ին։ 1908—09 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 26 տղա, 36 աղջիկ։ 1911—12 ուս. տարում համարվել է եռամյա դպրոց, բայց ունեցել է միայն մի դասարան։

1914-ին գործել է։ 1916-ին նպաստ է ստացել դպրոցական ընդհանուր ֆոնդից։

«Մեղու Հայաստանի», 1884, №№ 66 և 67;

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 6, գ. 865, թ. 72; ֆ. 422, գ. 8717, թ. 4; ֆ. 13, գ. 264, թ. 8; «Արարատ», 1916, էջ 188;

ՀՍՍՀ ԿԿՊԱ, ֆ. 56, գ. 199, թ. 17—23; գ. 492, թ. 200; գ. 182, թ. 40;

Հ. Տեր-Միրզոյանի կազմած՝ 1911—12 ուս. տարվա տեղեկագիրը։

Քութայիսի Ս. Գեորգ եկեղեցու արական ծխական դպրոց

Հիմնվել է 1862-ին՝ Քութայիսի Ս. Գեորգ եկեղեցու գավթում՝ ավագ քահանա Լալայանցի ջանքերով։ 1873-ին ունեցել է 3 ուսուցիչ, 42 աշակերտ, 1877-ին՝ 4 ուսուցիչ, 40 աշակերտ, 1882-ին՝ 5 ուսուցիչ, 34 աշակերտ։ 1884-ին եղել է երկդասյան դպրոց, իսկ 1885-ին փակվել է կառավարության կողմից։ Վերաբացվել է 1886-ին։ 1888-ին նույնպես երկդասյան էր, ուներ 59 աշակերտ և 4 ուսուցիչ (աղջիկների դպրոցի հետ միասին)։ 1896-ին նորից է փակվել։ Վերաբացվել է 1906-ին։ 1907—08 ուս. տարում ունեցել է 50 աշակերտ (27 աղջիկ)։ 1908—09 ուս. տարում եղել է երկսեռ դպրոց, ուր սովորել են 25 տղա և 40 աղջիկ։ 1911-ին գործել է որպես եռամյա դպրոց։ 1914-ին ունեցել է ընդամենը 34 աշակերտ (16 աղջիկ)։

«Մեղու Հայաստանի», 1868, № 34, էջ 259—261; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 2018, թ. 229; գ. 1585, թ. 49; գ. 8717, թ. 2; գ. 3997, թ. 12; ֆ. 13, գ. 264, թ. 8; ՀՍՍՀ ԿԿՊԱ, ֆ. 56, գ. 3, թ. 45; գ. 43, թ. 9; գ. 357, թ. 107; գ. 50, թ. 68; գ. 182, թ. 40; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 128; «Արարատ», 1878, ԺԹ, էջ 453; «Նոր դպրոց», 1908, № 68, 1911, № 9—10, էջ 32։

Քութայիսի հայ օրիորդաց Մարիամյան դպրոց

Արխիվային մի փաստաթղթում նշված է, որ Քութայիսի Մարիամյան դպրոցը հիմնվել է 1875-ին՝ նույն Ս. Գեորգ եկեղեցու գավթում, դարձյալ Դավիթ Լալայանցի միջոցով։ Սակայն այս տեղեկությունը հավանաբար ճիշտ չէ, քանի որ 1873-ին գործած հայ դպրոցների ընդհանուր տեղեկագրում նշված է նաև Քութայիսի Մարիամյան իգական դպրոցը, որն ունեցել է 20 աշակերտուհի։ Կարծում ենք, որ նրա հիմնադրման տարեթիվը պետք է հաշվել 1873-ից ոչ ուշ։ 1877-ին ունեցել է 4 ուսուցիչ, 29 աշակերտուհի, 1881-ին՝ 5 ուսուցիչ, 60 աշակերտուհի։ 1884-ին երկդասյան դպրոց էր, որը 1885-ին փակվել է, վերաբացվել է 1886-ին։ 1888-ին նույնպես երկդասյան դպրոց է եղել՝ 34 սովորողներով։ 1896-ին նորից է փակվել։ Հավանաբար 1905-ին վերաբացվել է տեղի արական դպրոցի հետ միացած (վերջինում 1908—09 ուս. տարում սովորել են 40 հայ աղջիկներ)։

ՀՍՍՀ ԿԿՊԱ, ֆ. 56, գ. 43, թ. 9; գ. 3, թ. 45; գ. 357, թ. 109; գ. 50, թ. 68; գ. 182, թ. 40; «Դպրոց», 1875—1876, № 4, էջ 128; ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 51։

Ցեի գյուղի հայկական ծխական դպրոց

Քութայիսի նահանգապետի գրասենյակի կազմած մի տեղեկագրում (1914 թ.) նշված է նաև մի հայկական ծխական դպրոց այդ նահանգի Ռաչինսկի գավառում, բայց ցույց չի տրված, թե այն ո՞ր գյուղում է գործել։ Եղել է արական դպրոց՝ մեկ ուսուցչով և 18 աշակերտով։ Մեր կարծիքով տվյալ դեպքում խոսքը այդ գավառի Օնի գյուղի հայկական ծխական դպրոցի մասին է, սրն, իրոք, բացվել է 1914-ին։ Այդ առթիվ եղել է կաթողիկոսի հատուկ կոնդակը։ 1916-ին նպաստ է ստացել թեմի դպրոցական ֆոնդից։

ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 11, գ. 264, թ. 8; «Արարատ», 1914, էջ 100, 1916, էջ 5։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն . . . 3

Երևանի թեմ

(Երևանի նահանգ, Կաթոլիկ մարզ և Զանգեզուրի գավառ) . . . 17
Ալեքսանդրապոլի գավառ . . . 17
Երևանի գավառ . . . 77
Զանգեզուրի գավառ կամ Տաթևի վիճակ . . . 113
Էջմիածնի գավառ . . . 144
Կաթոլիկ մարզ . . . 174
Հին Նախիջևանի գավառ . . . 196
Նոր Բայազետի գավառ . . . 220
Շարուր-Դարալագյազի գավառ . . . 236
Սուրմալուի գավառ . . . 248

Ասորիքանի թեմ

(Ասորիքանի, Սեծոմյան (Կարսի), Սամբրոպոլի նահանգները, Անդրկովկասյան, Դաղստանի, Թիֆլիսյան և Քութայիսյան մարզերի և Սոչիի սկրույզ) . . . 308
Անդրկովկասյան մարզ . . . 308
Ասորիքանի նահանգ . . . 311
Դաղստանի մարզ . . . 316
Թիֆլիսյան (Տիֆլիսի) մարզ . . . 317
Քութայիսյան մարզ . . . 326
Սեծոմյան նահանգ . . . 327
Սոչիի սկրույզ . . . 335
Սամբրոպոլի նահանգ . . . 339

Ղարաբաղի թեմ

Նախիջևանի հայրապետություն (Արեշի, Կարյագինի և Նախիջևանի գավառներ) . . . 342
Շուշվա գավառ . . . 354

Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմ

(Եկատերինոսլավի, Տավրիկյան, Բեսարաբիայի և Խերսոնի նահանգները, Խարկով, Մոսկվա և Պետերբուրգ քաղաքները) . . . 393
Նոր Նախիջևանի վիճակ . . . 393
Ֆիշնևի վիճակ (Բեսարաբիայի նահանգ) . . . 438

Շամախու թեմ

(Բաքվի նահանգը և Դաղստանի մարզը) . . . 443

Վրաստանի և Իմերեթիի թեմ

(Ելիզավետպոլի նահանգի Գանձակի և Զաքաթալի գավառները, Թիֆլիսի և Քութայիսի նահանգները, Բաթումի մարզը, Զաքաթալայի և Սուխումիի սկրույզները) . . . 463
Բաթումի մարզ . . . 463
Ելիզավետպոլի նահանգ . . . 468
Գանձակի գավառ . . . 468
Զաքաթալայի գավառ . . . 482
Զաքաթալայի սկրույզ . . . 502
Թիֆլիսի նահանգ . . . 503
Ախալցխայի գավառ . . . 503
Ախալքալակի գավառ . . . 511
Բորչալուի գավառ . . . 526
Դորիի գավառ . . . 543
Դուշեթի գավառ . . . 551
Թելավի գավառ . . . 554
Թիֆլիս քաղաք . . . 556
Թիֆլիսի գավառ . . . 600
Ղազախի գավառ . . . 605
Քութայիսի նահանգ . . . 616

Սուրեն Կարապետի Խուդոյան

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ճավելյալ մանրամասներով
(1880—1920 թվականներ)

Խմբագիրներ՝ Ս. Հ. Ռաշիդյան, Ա. Շ. Դանիելյան
Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Ջուղաշվիլյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Խաչատրյան
Վերատեսող սրբագրիչ՝ Ա. Փ. Աբրահամյան

ՀԲ № 2795
Հանձնված է շարվածքի՝ 02. 12. 1987 թ.։
Ստորագրված է տպագրության՝ 25. 11. 1987 թ.։
ՎՖ 01230։ Չափը՝ 60×90 1/16։ Թուղթ՝ № 2։ Տառատեսակը՝ գրքի սովորական։ Տպագրություն՝ բարձր։ Տպ. 38,75 մամ., տպ. 38,75 գուն. թ. օտ., հրատ. 38,55 մամ.։ Տպաքանակ՝ 3000։ Պատվեր՝ 2521։ Գինը՝ 1 ռ. 50 կոպ.։
«Լույս» հրատարակչություն, Երևան—9, Կիրովի 19ա
Издательство «Луйс», Ереван-9, ул. Кирова, 19а.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան 65։
Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-10 ул. Алавердяна 65.